Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

Էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՆԻՒԹԵՐ

Հ. Յ. ԴՈՒՆԱՅԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Գ. ՀԱՏՈՐ

Բ. Տպագրութիւն
Պէյրութ - 2007

Այս հատորի Բ. տպագրութիւնը
կը կատարուի
Տէր եւ Տիկին
Գաբրիէլ եւ Անժէլ Չեմպերճեաններու
նուիրատուութեամբ
2007

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Չորրորդ Ընդհանուր ժողովը Հ. Յ. Դաշնակցութեան ամենէն կարեւոր եւ անկիւնադարձ կազմող համագումարներէն մէկն է:

Երրորդ Ընդհանուր ժողովին (1) յաջորդող եռամեակը Դաշնակցութեան գործունէութեան ամենաբեղուն շրջաններէն մէկը հանդիսացաւ, անժխտելիօրէն: Սասնոյ ապստամբութիւն, արշաւախումբեր, վասպուրականի եւ Լեռնապարի յեղափոխական-զինական կազմակերպում, Հայ Դատի ի նպաստ արտաքին քարոզչութեան ծաւալում, Զաւարեանի եւ Վարդանի շրջապտոյտ՝ Եգիպտոսէն Կիլիկիա, Սուլթանի մահափորձ եւ Իթթիհի դաւադրական ձեռնակ, մասնակցութիւն համառուսական յեղափոխական շարժման ու հայ-քաթարական կռիւներ, — թուած ըլլալու համար գլխաւոր խորագրերը միայն հայ ազատագրական շարժման ու յեղափոխութեան պատմութեան շէն այդ էջերուն:

Կովկասի մէջ էր, մասնաւորաբար, որ ռուս յեղափոխական շարժման բռնկումով, դէպքերը 1904-1906 եռամեակի ընթացքին զարգացան գահավէժ արագութեամբ: Ցարական բռնակալութեան դէմ պայքարը Դաշնակցութեան համար սկսած էր անշուշտ աւելի կանուխէն՝ հայ եկեղեցական կալուածներու գրաւման հրամանագրի օրերէն: Բայց զուտ ազգային այդ պայքարը 1904էն սկսեալ զուգահեռ գնաց համառուսական պոթքումի ընկերային-յեղափոխական առաջադրանքներուն հետ: Դաշնակցութեան կովկասեան մարմինները մասնակցեցան Ռուսաստանի կուսակցութեանց համաժողովներուն, կազմակերպչական ու դաւադրական աշխատանքներուն: Եւ անկասկած՝ շատ աւելի կարեւոր պիտի ըլլար Դաշնակցութեան մարտակա՛ն մասնակցութիւնը համառուսական յեղափոխութեան, եթէ 1905 Փետրուարին չսկսէին հայ-թաթարական կռիւները, որոնք մեր կազմակերպութեան գինեալ ուժերը պիտի գրաւեցնէին աւելի քան տարի մը:

Այս պայմաններուն մէջ հասկնալի է ուրեմն՝ որ 1904-1906 տարիները Դաշնակցութեան կովկասեան մարմիններուն համար յատկանշուած ըլլան թէ՛ ժողովական, կազմակերպչական, քարոզչական եւ մարտական տենդագին գործունէութեամբ մը, եւ թէ, միաժամանակ, գաղափարաբանական հետզհետէ շեշտուող զարգացումով մը՝ դէպի արտա-ազգային, ընկերային-դասակարգային առաջադրանքները (2): Արեւելեան Բիւրոն, կովկասեան մարմիններն ու յաջորդական Ռայոնական ժողովները պարտաւորութեան գրաւուիլ ծրագրային նոր պահանջներու եւ համապատասխան գործունէութեան եղանակներու ձեւակերպումով: Ընկերվարութեան ամբողջապէս յարելու կամ ցարական բռնակալութեան դէմ ծառացումը զուտ ազգային-ազատագրական պայքարի հունին մէջ պահելու հակառնեայ ձգտումները յաճախ քախեցան իրարու, ստեղծելով բուռն վէճեր (3):

Դաշնակցութեան խորհուրդն էր որ, 1905ի գարնան, բիւրեղացնելով արտայայտուած տրամադրութիւնները պիտի որոշէր՝ «Կովկասեան շարժման ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուռ յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական ժողովում արտայայտուած տրամադրութեան, ուղարկել կովկասեան դաշնակցական մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարութեան այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական մշակումը եւ հաստատումը առաջիկայ Ընդհանուր ժողովին»: Ու խորհուրդը պիտի կազմէր ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ (4):

Ծանօթ է որ ՆԱԽԱԳԻԾի հրատարակութիւնը ընդհանուր յուզում յառաջացուց երկրի եւ ընդհանրապէս՝ արեւմտահայ մարմիններուն եւ ընկերներուն մօտ: Կովկասեան գործունէութեան կարեւորութեամբ անդրադառնալով հանդերձ, երրորդ Ընդհանուր ժողովը բացայայտօրէն նախատեսած չէր ինքնապաշտպանու-

թեան շրջանէն հակացարական կազմակերպուած գործունէութեան անցնումը: Ուստի շատերու համար ՆԱԽԱԳԻԾԻ իրաւական արժէքի եւ խորհուրդի իրաւասութեան հարցը կը դրուէր շեշտակի կերպով: Տակաւին, թէեւ նորութիւն չէին ՆԱԽԱԳԻԾԻ բերած ընկերվարական շունչն ու գործնական կարգ մը առաջադրութիւնները, բաւի արդէն իսկ յստակօրէն մարբսիստ տրամադրութիւններ կային Դաշնակցութեան անդրանիկ Ծրագրին մէջ իսկ(5), սակայն տասնըհինգ տարիներու ազգային–ազատագրական կռիւը երկրորդական մակարդակի վրայ էր ներած, երբեմն նոյնիսկ մոռացութեան տուած. Հ. Յ. Դաշնակցութեան հիմնովին ընկերվարական սկզբնական գաղափարախօսութիւնը: Եւ ազատագրական համազգային պայքարի տեղին մէջ՝ դասակարգային կռուի կարգախօսները խորք կը հնչէին — հասկնալի կերպով — Դաշնակցութեան մարտիկ տարրին մօտ մասնաւորաբար, որուն համար, հիմնէ ի վեր, յեղափոխութեան էական ու միակ նպատակը սուլթանական բռնակալութենէն Թրքահայաստանի ազատագրութեան մէջ կը կայանար: Հիմնական գործունէութեան երկրորդ եւ ընդարձակ դաշտի մը, կռուի երկրորդ ճակատի մը այդ բացումը պատճառ պիտի դառնար, ըստ շատերու կարծիքին, երկրի գործունէութեան տկարացումին:

Ատկէ՝ տրամադրութեանց եւ տեսակէտներու ծանօթ քախուճը, որ յանգեցաւ դժբախտաբար ծայրայեղ կարգ մը կեցուածքներու: Այլամերժ «ազգայնականները» կը համախմբուէին խմբապետ Միհրանի շուրջ, ոչ միայն իրենք զիրենք անջատելով կազմակերպութենէն, այլ նաեւ, արտաքին դրդումներու իբրեւ հետեւանք, հակադրուելով պաշտօնական մարմիններուն եւ կազմելով «ժամանակաւոր Զինուորական խորհուրդ»: Իսկ ծայրայեղ «ձախակողմեանները», բաղկացած առաւելաբար կովկասահայ *ինտելիգենտ* երիտասարդութենէն, կ'իյնային հակադարձ չափազանցութեան մէջ, ուզելով բաժնուիլ «դասական» Դաշնակցութենէն եւ համառուսական ծիրին մէջ դասակարգային պայքարի ճետուիլ՝ նոր կուսակցութեան մը դրօշին տակ:

1906ի վերջերը, Զորրորդ Ընդհանուր ժողովի նախօրեակին, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը գտնուէր պառակտման վտանգին տակ: Հակամարտութիւնն ու պայքարը նոյնիսկ սուր չէին թերեւս որքան Մարտ–Ապրիլ ամիսներուն՝ Կովկասեան Ռայոնական ժողովի օրերուն, բայց Միհրանական շարժումը ջլատած էր կազմակերպական կարգ մը միաւորներ եւ, հակառակ Ռայոնական ժողովին մէջ «անջատման» կողմնակիցներու կրած պարտութեան — արդիւնք՝ Ռոստոմի, Զաւարեանի, խաժակի եւ Թափչեանի նման կեդրոնական դէմքերու հաւասարակշռուած եւ առողջ կեցուածքին(6), — ծայրայեղ «նախագծականները» վերջնականապէս հրաժարած չէին Կովկասի մէջ ընկերվարական առանձին «դաշնակցութիւն» մը հիմնելու իրենց առաջադրանքէն: Ընդհանուր ժողովը կրնար պայթումով աւարտիլ: Կրնար նաեւ — եւ ակնկալելի էր այդ բոլոր առողջ մտածող դաշնակցականներուն համար — վերջ դնել «այջ» թէ «ձախ» բոլոր ծայրայեղ ու վնասակար թեխումներուն, եւ կազմակերպութիւնը վերամիաւորել մէկ դրօշի տակ, վերանորոգուած Ծրագրով ու գործունէութեան ընդարձակուած դաշտի մը մէջ՝ զայն մղելու համար նորանոր խոյանքներու:

Այդպէս ալ պիտի ըլլար, բարեբախտաբար:

***

Համաձայն երրորդ Ընդհանուր ժողովի որոշման, Դաշնակցութեան Զորրորդ Համագումարը պէտք է բացուէր 1906 Դեկտեմբեր 1ին(7):

1905ի Խորհուրդը սակայն որոշած էր այդ թուականը կանխել մէկ տարիով, այն պատճառներով՝ որոնք տրուած են 20 Օգոստոս 1905ին երկու Բիւրոներուն կողմէ մարմիններուն ուղղուած հետեւեալ շրջաբերականով(8).—

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

Ընկերներ,

Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր ժողովի որոշմամբ առաջիկայ Ընդհանուր ժողովը պիտի գումարուէր 1906 տարուան Դեկտեմբերին: Սակայն «Դաշնակցութեան Խորհուրդը»՝ նկատի ունենալով Տաճկահայաստանի մէջ ակնկալուած ապագայ դէպքերէ վերջ տակտիքի հաւանական փոփոխութիւնը(9), Կովկասեան անցքերու արտակարգ բնաւորութիւնը(10) եւ «Խորհուրդ»ի մշտական Կովկասեան Նախագծի վաւերացման կարեւորութիւնը՝ որոշեց Ընդհանուր ժողով հրաւիրել ներկայ տարուան վերջը:

Հաղորդելով «Խորհուրդի» ներկայ որոշումը Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու մարմիններուն՝ կ'ապահովենք, կազմակերպական կանոններու 101 յօդուածի տրամադրութեան համաձայն, չուտով ուղարկել Արեւմտեան Բիւրոյին այն հարցերու ցանկը, որ կը փափաքիք Ժողովին քննութեան ենթարկել:

Կը խնդրենք ըստ կարելւոյն չուտ ձեռնարկել նախապատրաստական գործին, որպէսզի Արեւմտեան Բիւրոն հնարաւորութիւն ունենայ ժամանակին հաւաքել, կազմել հարցերու ամփոփ ցանկը եւ ուղարկել դաշնակցական մարմիններուն խնդիրներու օրակարգը:

Ընկերական բարեւներով՝

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

20 Օգ· 1905 թ·

Հայ–թաթարական կռիւներու ծաւալումը Արեւելեան Բիւրոն եւ կովկասեան բոլոր մարմինները ամէնօրեայ պայքարի բռնուրուին մէջ ամբողջապէս կլլուած ըլլալով, խորհուրդի այդ որոշման գործադրութիւնը հնարաւոր չեղաւ: Այդ բացատրութիւնը կը տրուի Արեւելեան Բիւրոյի կողմէ կեդրոնական Կոմիտէներուն ուղղուած շրջաբերականով մը, ճշդելով միաժամանակ՝ որ Ընդհանուր ժողովի նախօրօf որոշուած թուականը — Դեկտեմբեր 1906 — կը մնայ ուրեմն անփոփոխ: Շրջաբերականը(11) մարմիններուն կը փոխանցէ նաեւ օրակարգի նախագիծ մը.—

Հ. Յ. Դ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ

Ընկերնե՛ր·

Ինչպէս յայտնի է, Հ. Յ. Դ. III Ընդհանուր ժողովում որոշուած էր, որ հետեւեալ Ընդհանուր ժողովը տեղի ունենայ 1906 թ. վերջին: Սակայն նոր տակտիկայ մշակելու անհրաժեշտութիւնը տաճկահայ յեղափոխութեան վերաբերմամբ եւ կովկասեան գործունէութեան տիպողականութիւնը պատճառ դարձան, որ 1905 թ. գումարուած Հ. Յ. Դ. Խորհուրդը յարմար դատեց ընդհանուր ժողով հրաւիրել ժամանակից աւելի չուտ, նոյն թուի Դեկտեմբեր ամսուայ վերջին: Հայ–թուրքական ընդհարումները Կովկասում, որ անսպասելի կերպով չափազանց լայն ծաւալ առացան, բոլորովին անհնար դարձրին իրագործելու այդ մտադրութիւնը եւ այդպիսով Ընդհանուր ժողովի գումարման ժամանակը մնում է նոյնը, ինչ որոշուած էր սկզբից:

Ուղարկելով ներկայ հրաւէրը, առաջարկում ենք ձեզ միաժամանակ խնդիրների ցանկը, որ մեր կողմից անհրաժեշտ ենք համարում ւնել Ընդհանուր ժողովի քննութեան: Ինդրում ենք կազմել ձեր չրջանում ըստ կարելւոյն լայն խորհրդակցութիւններ, որով հնարաւորութիւն տրուի ամէն մի դաշնակցական խմբի լիովին արտայայտելու իր կարծիքները այն բոլոր խնդիրների վերաբերմամբ, որ նա իր ձեռնհասութեան սահմանի մէջ է համարում: Սրանից հետեւում է բնականաբար, որ ժողովին ներկայացող ամէն մի պատգամաւոր իւր հետ պիտի բերէ ոչ միայն իւր չրջանի մեծամասնութեան, այլ եւ փոքրամասնութեան կարծիքները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

I· Տեղեկագիր մարմինների·

1) *Ժողովրդի տնտեսական կացութիւնը եւ անդրադարձումը յեղափոխական չարժումների վրայ;*

2) *Ժողովրդի տրամադրութիւնը եւ նրա վերաբերմունքը դէպի մեր մարմինները:*

3) *Տեղական մարմինների կազմը եւ նրանց ծաւալը գանազան խաւերում;*

4) *Աչխատաւոր դասակարդի չահերի պաչտպանութեան համար առաջ եկած մարմինները, նրանց ծաւալը եւ գործունէութիւնը:*

5) *Կազմակերպութիւնից դուրս դտնուող խաւերի պահանջները դէպի կազմակերպութիւնը եւ նրանց ստանձնած պարտականութիւնները:*

6) *Ռուսահայ մարմինների վերաբերումը դէպի Տաճկահայ դատը· [Տաճկահայ եւ արտասահմանեան մարմինների վերաբերումը դէպի կովկասեան խնդիրը եւ դէպի ընդհանուր Ռուսական յեղափոխութիւնը (12)]:*

7) *Ամփոփ զեկուցում բոլոր դաչնակցական մարմինների գործունէութեան՝ յեղափոխական ձեռնարկներ, պրոպագանդա, ինքնապաչտպանութեան միջոցներ եւ ժողովրդի զինումն, յարաբերութիւններ եւ համերաչխ գործակցութիւնների այլ ազգային եւ յեղափոխական կուսակցութիւնների հետ:*

8) *Կազմակերպութեան եկամուտների աղբիւրները ներկայումս եւ ապագայում:*

9) *Հաչուետուութիւն դրամական եւ ռազմական:*

10) *Առաջիկայ բիւդջէ եւ մտից (ցանկալի է ներկայացնել այս տեղեկագիրը գրաւոր):*

II Տաճկահայ խնդիր:

1) *Երկրի դրութեան մէջ առաջ եկած փոփոխութիւնները:*

2) *Շարժումներ մահմեդական տարրերի մէջ: Հաւանական դաչնակցութիւն նրանց հետ (Երիտասարդ Թուրքեր, մակեդոնական կազմակերպութիւն եւ այլն):*

3) *Նոր քաղաքական պայմանները եւ նրանց հաւանական ազդեցութիւնը «հայկական դատի» վրայ:*

4) *Տաքտիկի քննութիւնը նոր պայմանների եւ պահանջների համաձայն, — ինքնապաչտպանութիւն, զինուորական համաձայն, — ինքնապաչտպանութիւն, զինուորական համաձայն, — ինքնապաչտպանութիւն, զինուորական

գային դիտակցութեան զարգացումը եւ դրանից բխող կանոչքէն առաջ եկած պահանջները: դ) համաուսական չարժումը եւ նրա անդրադարձումը կովկասահայերի վրայ:

2) Ինքնապաշտպանութեան գործը Կովկասում:

3) Մեր ուղղութիւնը եւ բռնելիք դիրքը ընդհանուր յեղափոխական չարժման մէջ, ինչպէս եւ մեր ունենալիք յարաբերութիւնները միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ:

4) Ազխատաւոր խաւերի կազմակերպութիւնը եւ մեր ստացած հետեւանքները:

5) Դաշնակցութեան դերը քաղաքական–հասարակական այլ առպարէզներում:

IV. 1) Տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների ներքին կապը գործունէութեան եւ կազմակերպական տեսակէտներից:

2) Հայկական զաղութների դերը Թուրքահայ եւ կովկասահայ խնդիրների վերաբերմամբ:

3) Դաշնակցական մարմինների զաղութներում ունեցած դերը տեղական քաղաքական–տնտեսական հարցերի նկատմամբ:

V. Խմբագրութիւն Հ. Յ. Դ. ծրագրի՝ համաձայն II, III ընդհանուր ժողովների յաւելումների ու բացատրութիւնների, Խորհուրդների ու Ռայոնական ժողովների առաջարկների, ինչպէս եւ կեանքի դրած լոյն պահանջների:

1) Նպատակ. ա) տեսական հիմնաւորում, բ) քաղաքական նպատակ, գ) տնտեսական նպատակ:

2) Միջոցներ այդ նպատակին հասնելու. ա) որ խաւերի վրայ յենուելու ենք մենք եւ այդ խաւերի կազմակերպումը համապատասխան մեր տաքտիկայի, բ) տաքտիկայի տեսական մասը, գ) տաքտիկայի գործնական մասը:

3) Կազմակերպական ձեւ ա) այլ եւ այլ մարմիններ եւ նրանց փոխադարձ յարաբերութիւնների ու կապը, բ) նրանց պատասխանութիւնների ու իրաւասութիւնները, գ) ղատաւորութիւն, կորզապահութիւն եւ կոնտրոլ:

4) Մեր ծրագրի իրագործումը Թուրքիայում, Ռուսաստանում, Բուլգարիայում, Ամերիկայում եւ այլ վայրերում, ուր կայ հայ մասսայ:

VI Պրոպագանդա

1) «Դրօշակ» եւ այլ կիսապաշտօնական թերթեր:

2) Կուսակցական այլ գրականութիւն:

3) Պրոպագանդան բանաւորական, դիւղացիական, ուսանողական խաւերում:

4) Արտասահմանեան պրոպագանդա:

VII Դրամական հարց:

1) Եկամուտներ:

2) Տեղական ծախքեր:

3) Ընդհանուր պէտքերի անհրաժեշտ գումարներ:

4) Բիւդջէ որոշած ճեռնարկները ապահովելու համար:

VIII. *Տեղեկագրերի քննութիւնից բխած կամ վերեւ չյիչուած հարցեր, որ մարմինները պատշաճ կը համարեն դնել Ընդհ. ժողովի առաջ:*

IX. *Այլ եւ այլ մարմինների ընտրութիւն:*

Ընկերական բարեւներով
Հ. Յ. Դ. Արեւելեան բիւրօ

Յ. Գ. IV հերթական ժողովը կը գումարուի ոչ ուշ քան 1906ի Դեկտեմբերի մէկը. ժողովի տեղի, ինչպէս եւ ճիշդ ժամանակի մասին, կը յայտնուի առանձին գրութեամբ:

Շրջաբերական–ճամակով մը, 1906 Յուլիս 31ին Արեւմտեան Բիւրոն մարմիններէն կը պահանջէ իրենց տեղեկագրերը, հաշիւները եւ այլ մատրամասնութիւններ(13):—

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ
(Շրջաբերական ճամակ)

ԸՆԿԵՐՆԵՐ.

Արդէն ձեռնարկած լինելով Ընդհանուր ժողովի գումարման պատրաստութեանը — տեղը եւ ժամանակը կը ծանուցուի ձեզ առանձին — խնդրում ենք չտապել ուղարկելու մեզ՝

ա) լրացուցիչ հարցեր եւ առաջարկներ, որ կը կամենայիք ենթարկել Ընդհանուր ժողովի քննութեան.

բ) Դրամական մանրամասն հաչիւ, վաւերացուած, մտցնելով նրա մէջ ելքն ու մուտքը, եթէ հնար է, մինչեւ 1906 թուի Սեպտեմբերի վերջը:

գ) Տեղեկագիր ձեր մարմնի եւ չրջանի գործունէութեան (եթէ արդէն ուղարկուած չէ):

դ) Ցուցակ–տեղեկատու այն ընկերներին, որոնք փափաք ունին իրենց դնել Ընդհ. ժողովի տրամադրութեան տակ, կոմմակերպութեան այլ եւ այլ ճեռնարկների համար:

ե) Մանրամասն տեղեկացոյց ձեր չրջանի մարմինների կազմի եւ անդամների քանակի մասին:

Շատ մօտիկ ապագայում ձեզ կ'ուղարկենք Ընդհանուր ժողովի մօտաւոր «Օրակարգը»:

Ընկերական բարեւներով
Հ. Յ. Դ.
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Սեպտեմբերին, վերջապէս, Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներուն կողմէ մարմիններուն ուղղուած շրջաբերական մը(14) վերջնական կերպով կը ճշդէ Ընդհանուր ժողովի Օրակարգի բոլոր մանրամասնութիւնները: Բացման համար նախատեսուած թուականը (1 Դեկտեմբեր 1906) կը մնայ անփոփոխ:

Մարմիններու համար

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

(ԿԱՑԱՆԱԼԻ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1906, . . . ՔԱՂԱՔԻ ՄԷՋ)

ա) Պատգամաւորներու լիազօրութեան վաւերացումը:

բ) Ժողովի կազմն ու բացումը: Օրակարգի հաստատումը:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ — ՉԵԿՈՒՑՈՒՄ (1904 – 1906)

1) Երկրի Մարմիններու՝

ա) Վասպուրական
բ) Սասուն–Մուշ
գ) Ցուցական Մարմին (Ոսկեհանքի հետ)
դ) Լեռնավայր:

2) Արեւմտեան Բիւրոյի՝

ա) Բիւրոյի ճեռնարկները, — կազմակերպական, դինական եւայլն: Շրջանի ընդհանուր պատկերը.
բ) «Դրօշակ», «Զրօ Արմէնիա» եւ ուրիշ հրատարակութիւններ (զանազան լեզուներով).
գ) Եւրոպական պրոպագանդ:

Տեղեկագիր՝
ա) Բալկանեան կեդր. կոմիտէի.
բ) Ամերիկայի կեդր. կոմիտէի.
գ) Չեկուցում եգիպտոսի չրջանի.
դ) Չեկուցում եւրոպայի Հայ Ուսանողական Մարմիններու մասին:

3) Արեւելեան Բիւրոյի՝

ա) կազմակերպական–պրոպագանդչային գործունէութիւն՝ կովկասի մէջ.
բ) Հայ–Թրքական ընդհարման խնդիրը.
գ) Զինական–մարտական ճեռնարկներ (երկիր եւ կովկասի մէջ)
դ) Գարբերական եւ այլ հրատարակութիւններ.
ե) Շրջանի կեդր. կոմիտէներու գործունէութիւնը:

Տեղեկագիր՝ վրէժի կեդր. կոմիտէի:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ

ա) Դրամական հաչուետուութիւն իւրաքանչիւր Մարմնի (1904–1906 տարեչրջանի):
բ) Ամբողջ կազմակերպութեան հաչիւներու եւ դրամական վիճակի պատկերացոյց:

Բ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻԿԱՑԻ ՄԷՋ

1) Թուրքիոյ մէջ՝

ա) Ժողովրդական ապստամբական ճեռնարկներ՝ (Շամ, Դուբան, Բաթբրաւանդակ, Արծուաբերդ).
բ) Թուրքիկ խմբերու կազմակերպումն՝ (Ս . . . , Տ . . . , Կ . . . եւայլն): Ինքնապաշտպանական գնդեր.
գ) Ցատուկ ճեռնարկներ Վէ. . . ի մէջ.
դ) Տեռոր.
ե) Ցուցական գործունէութեան նոր ծրագիր.
զ) Գործակալներ, ուսումնասիրողներ, դրսէն գացող մտաւորական եւ այլ ուժեր:

2) Կովկասի մէջ՝

ա) Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի Հայ–Թրքական կռիւը. Ծրագիր.
բ) Դաշնակցութեան դիրքը՝ Ռուսական ընդհանուր չարժման մէջ.
գ) Ցեղափոխական ակտիվ գործունէութիւն: Նախկին Ընդհանուր ժողովի որոշման քննութիւնը.
դ) Զինական–կազմակերպական ճեռնարկներու ծրագիր.
ե) Արեւմտեան Բիւրոյի հրատարակած «Նախագծի» քննութիւն (Սոցիալիստական ծրագիր) եւ այս մասին որոշում.
զ) Դաշնակցական ընդհանուր Ծրագրի մշակումն եւ վաւերացում:

3) Հայկական գաղութներ՝

ա) Բալկանեան չրջան
բ) Ամերիկայի չրջան
գ) Պարսկաստան
դ) Եգիպտոս
ե) Եւրոպա

ա) Այս գաղութներու համար որոշ ծրագիր՝ պրոպագանդի եւ կազմակերպելու։ Շրջիկներ.
բ) Դրամական միջոցներ. տուրքի հարց.
գ) Հրատարակչական ան գործունէութիւն (Լրագիր, բրոշիւր, թռուցիկ).
դ) Մարտիկ ուժերու պատրաստութիւն (Զինուորներ, ռմբահարներ, զինագործներ)։

Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ա) «Կազմակերպական կանոններու» վերաքննութիւն եւ լրացում.
բ) Հաստատում նոր կեդր. կոմիտէներու (Երկրի մէջ, Եգիպտոս, Պարսկաստան եւայլն).
գ) Դրամական-հաշուական սիստեմի վերաքննում եւ հիմնական կանոնաւորում.
դ) Նախորդ Ընդհ. Ժողովի եւ «Մորհրդի» որոշումը՝ բռնի հանգանակութեան մասին.
ե) Զինուորական Ընդհանուր Խորհուրդի հիմնում.
զ) Դրամական եւ կարգապահական պեղծումներու քննութիւն եւ որոշում (տես դռսիէ).
է) Զինա-պայթուցական դպրոցի հիմնարկութիւն։

Աղբարկներ՝
ա) Զանազան մարմիններու կողմէ (տես դռսիէ).
բ) Անհատ-ընկերներու կողմէն. » »

Դ. ՄԻՈՒԹԵԱՆ – ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑ

ա) Կազմակերպութեան վերաբերմունքը դէպի այլ հոսանկութիւնները՝ Կովկաս, Թուրքիոյ եւ Եւրոպայի մէջ։ Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի առաջարկը.
բ) Համերաշխ ձեռնարկներ՝ հայ, ռուս, վրացի, մակեդոնացի, Թուրք եւ այլ յեղափոխական մարմիններու կամ խմբերու հետ.
գ) Միկրուսակցային առեանի հաստատումը։

Ե. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՊՐՈՊԱԳԱՆԴ

ա) «Դրօշակ»ի հրատարակութիւնը. կովկաս կամ այլուր տեղափոխութիւնը.
բ) «Պրօ Արմէնիա» Պարիզի։ Լոնդոնի «Պրօ Արմէնիա»ի հարցը։ Պրոպագանդի օրգան զերմաններէն լեզուով.
գ) Պարբերական օրգաններ Կովկասի եւ այլ վայրերու մէջ.
դ) Գրքեր, բրոշիւրներ եւրոպական լեզուներով.
ե) Նոյնը՝ ռուսերէն, Թրքերէն, քրտերէն եւ վրացերէն.
զ) Հայկական դատը Պարլամենտներու մէջ.
է) Դիմում Լահէյի Ժողովին։

Զ. ՆԱԽԱՀԱՇԻՒ ԵՒ ԸՆԹՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա) Կազմակերպութեան առաջեան դրամական միջոցները.
բ) Մուտքի ապագայ աղբիւրները (տուրք, հանգանակութիւն եւայլն).
գ) Նախահաշիւ առաջիկայ ձեռնարկներու.
դ) Միջոցներ քաղաքական բանտարկեալներու օգտին։

Ընտրութիւններ՝
ա) Ընտրութիւն Գատաստանատու Մարմիններու.
բ) Ընտրութիւն Բիւրոներու.
գ) Նոր մարմիններ կազմելը.
դ) Որոշում՝ յաջորդ Ընդհ. Ժողովի տեղի եւ ժամանակի։

1906, Սեպտեմբեր
ԹԸՆԵՎ

Հ. Յ. Դ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Իսկ Հոկտեմբերին, «կազմակերպական ազդ»ով մը (15), Արեւմտեան Բիւրօ դարձեալ կը դիմէր դաշնակցական մարմիններուն եւ ընկերներուն.—

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ
(Կազմակերպական ազդ)

Հ. Յ. Դաշնակցութեան առաջիկայ Դ.րդ Ընդհանուր Ժողովի առիթով՝ նպատակայարմար դատեցաք պաշտօնական օրգանի միջոցով անել հետեւեալ յայտնութիւնը.

1) Ժողովի տեղի եւ ժամանակի մասին հարկաւոր տեղեկութիւնները կարելի է ստանալ կենտրոնական մարմիններից, կազմակերպական ճանապարհով։

2) Նոյն կենտրոնական մարմիններին է ուղարկուած «Օրակարգը», տարածելու ուր հարկն է։

3) «Օրակարգի» մէջ ցուցակագրուած բոլոր կէտերի վերաբերմամբ՝ մարմիններն ու խմբերը, համաձայն մեր «կանոնների», պէտք է տան իրենց ներկայացուցիչ-պատգամաւորներին մանրամասն ցուցմունք — հրահանգներ, չմոռանալով փոքրամասնութեան կարծիքներն եւս, որպէսզի կուսակցագործողի մէջ արտայայտուն՝ մեծամասնութեան տեսակէտների հետ միասին՝ նոյնպէս եւ փոքրամասնութեան հայեացքներն ու տրամադրութիւնները։

4) Բոլոր մարմինները հրաւիրուած են պատրաստել եւ ուղարկել լրացուցիչ դրամական հաշիւներ, որպէսզի կազմակերպութեան 1904–1906 թուականի դրամական վիճակը պատկերացուի անթերի, իր ամբողջութեամբ։

5) Ժողովի քննութեան առարկայ պիտի լինեն, «Օրակարգի» կէտերից դուրս, ինչպէս այլեւայլ մարմինների, այնպէս եւ անհատ-ընկերների առաջարկները։ Հետեւաբար նրանք, որոնք ունին այդպիսիները՝ պէտք է պատրաստեն վաղօրօք եւ ժամանակին առաջարկեն Բիւրոներին, Ընդհանուր Ժողովին ներկայացնելու համար։

6) Համաձայն «Օրակարգի» Գ.րդ յօդուածի, ընդհանուր ժողովը պիտի զբաղուի «կարգապահական եւ դրամական պեղծումների քննութեամբ»։ Այդ պատճառով՝ յատկապէս խնդրում ենք բոլոր մարմիններին, մանրամասնօրէն եւ անյապաղութեամբ արձանագրել ամէն տեսակ պեղծումները — դիսիպլինային, կազմակերպական, թէ դրամական — եւ Բիւրոների միջոցով ներկայացնել Ընդհանուր Ժողովին, որպէսզի կազմակերպութեան բարձր առեանի քննութիւնից չվրիպի ոչ մի դէպք, ոչ մի փաստ, որը կարող է վնասել կարգապահական գործին, կազմակերպութեան առաջիկայ գործունէութեան եւ յեղափոխական գաղափարին

1906, Հոկտեմբեր

Հ. Յ. Դ.
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Չորրորդ Ընդհանուր Ժողովին հետ կապուած ու գայն նախապատրաստող շրջանին պաշտօնական այլ փաստաթուղթեր չունինք մեր տրամադրութեան տակ։ Երկու-երեք ամսուան ետ ուշացումը հետեւանք էր հատուածաբար գործնական դժուարութիւններու։

⁂

Հ. Յ. Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովը կը բացուի վիեննա, ընկերվարական կուսակցութեան սրահին մէջ, 1907 Փետրուար 22ին։ Երկուական պատգամաւորներով կը մասնակցին Դուրան-Բարձրաւանդակը (Անդրանիկ եւ Մուրատ)(16), Վասպուրականը (Արամ եւ Սալմաս — Համազասպ Բաղէշցեան —) (17), Ամերիկան (Վահագն Տաթեւեան եւ Թովմաս Ճէլալեան)(18) եւ Պալքանները (Սարգիս Մինասեան եւ Ռուբէն Զարդարեան — Ապաս —)(19)։ Մէկական ներկայացուցիչով՝ Արեւմտեան (Ակնունի) եւ Արեւելեան (Ռոստոմ) Բիւրոները, Լեռնավայրի (Զաւարեան) եւ Ցուցական (Սափօ — Մարտիրոս Մարգարեան —)(20) Գատասխանատու Մարմինները, ինչպէս նաեւ Լեռնապարի (Իշխան), Երեւանի (բժ. Զաւրեան), Ալեքսանդրապոլի (Աւետիս Իսահակեան), Գանձակի (Ալեքսանդրը Մաշուրեան) Ղարաբաղի (Բարսեղեան), Կարսի (Աւետիս Ահարոնեան), Հիւսիսային Կովկասի (Ցուշիկ — Տիկ. Ժենիա Մելիք-Ֆալանքարեան), Նոր-Նախիջեւանի (Սիմոն Գրուզինեան-Վրացեան), Թիֆլիսի (Ներսէս Թոփչեան), Զաքումի (Միխայէլ Վարանդեան), Գաֆուի (Լեւոն Թադէոսեան — Գապաշ կամ Զոփուրեան) եւ Ատրպատականի (Ստեփան Ստեփանեան — Բալաջան —) Կեդրոնական Կոմիտէները, Զիփոնը (Ստեփան Տէր Մկրտչեան — Գագիկ —) եւ Ռուսաստանի (Աւետիք Շահխաթունեան) ու Եւրոպայի (Արշակ Խասահակեան — Զամպակեան—) դաշնակցական Ուսանողական Միութիւնները։ Ընդհանուր Ժողովը ձայնի իրաւունքով կը հրաւիրէ Արշակ Վռամեանը, Համօ Ohանջանեանը, Խանասորի Վարդանը (Մեհրապեան), Սեպուհը, Սեւրեանցի Սահոն, Տաճատ վարդապետը եւ Նիկոլ Դումանը (որ չի կրնար գալ Ժողովին) խորհրդակցական ձայնով, Տրապիզոնէն, կը մասնակցի Արսէնը։ Ժողովը ունի նշանակուած երկու բարտուղարներ՝ Երուանդ Ֆրանգեան եւ Մարդպետ(21), եւ երկու օգնական-բարտուղարներ՝ Մարտիրոս Ցարութիւնեան եւ Վլադ Վլադեան։

Առաջին օրերուն, Ժողովի տեւողութիւնը կը նախատեսուի մէկ ամիս։ Բայց կարգ մը պատգամաւորներու ակամայ ուշացումը (Զաւրեան, Ահարոնեան, Վարանդեան, Ստեփան Տէր Մկրտչեան, Ohանջանեան եւն.), ճճեղի հարցերու հիմնական նշանակութիւնը եւ ստեղծուած վիճաբանութիւնները ու յաճախ լարուած մթնոլորտը պատճառ կը դառնան, որ Ժողովի աշխատանքները երկարին ու տեւեն մինչեւ Մայիս 4։ Ընդհանուր Ժողովը կ'ունենայ 121 նիստեր։ Փակումէն ետք, եւ տակաւին մինչեւ Մայիս 29, Ժողովին կողմէ ընտրուած Խնճի ցանցախուզը (Ռոստոմ, Զաւարեան, Ակնունի, Վռամեան, Ohանջանեան, Միքնասեան, Թոփչեան, Շահխաթունեան եւ Ստ. Տէր Մկրտչեան) կը գրաւուի նոր Ծրագրի, կանոնագրի, Որոշումներու

Հ. Ջ. Դ. Տեղեկատուր Տոքսպէի
Տասնեակի պատասխանատուներից և վերակացուներ:
1907 թ.

1	Վանական-տեսուչ	
2	տասնօր - Աստուածատր - Աւետիսեան	
3	Տասնապետ	Ի. Աստ. Գ. Յովսեան.
4	Տասնապետ Ղևոնդ - Մարտիկ	Հրաժ.
5	Տասնապետ Գեորգ Գեորգեան	
6	Տասնապետ Գեորգ Գեորգեան	
7	Դաշտապահ Մարտիկ	Աստ.
8	Տասնապետ թ. տօմարում-	
9	Գրագիր «	
10	Պահ-պետ «	Ա. Գրիգորեան
11	Ասպետարանի «	Յարութիւն
12	Պահապետարանի «	Յովհաննէս:
13	Դասատուներ «	Ս. Երամեան
14	Ընթերցարան «	Ա. Պետրոսեան
15	Գործ «	Ա. Գրիգորեան
16	Դարձուած «	Տէր-Գրիգորեան
17	Ընդհանուր «	Տէր-Գրիգորեան
18	Գանձ «	Յարութ

19	Ատենադպիր թ տօմարում	Ա. Գրիգորեան
20	Ընդհանուր Մատեան	Յարութ.
21	Վերակաց թ. տօմարում	Ա. Աստուածատր.
22	Երգչապետ Հ. Յ. Դ. ուսումնարանին	Տիրուհիանեան
23	Ուսուցչուհի « «	Ջանիկեան.
24	Գիշերապահ Հաշուոյ	Աստ.
	Հրատարակուած հաշիւներու վերակացու	
25	Ջմեռ	Գրիգ
26	Աշուն	Աստ.
27	Ամառ	Աւետիք
28	Գարուն	Մանուկ.
29	Ընդհանուր	Յովհ.
30	Ընդհանուր	Ներսէսեան

Հանգուցեալ Հրաչեայ Գրիգորեանի
31 ընդհանրական Հաշուի վերակացու:

Հրատարակութեան Հաշիւներ
1. Ա. Գրիգ
2. Աստ
3. Տ. Յարութեան
4. Լուսաւոր

Ա.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. ՆԻՍՏ (22 Փետր., առաւօտ)

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ջորրորդ Ընդհանուր Ժողովը բացուեցաւ Վիեննա, Աւստրիական Սոցիալիստական Ընկերութեան սրահին մէջ, 1907 Թուի Փետրուար 22ին։

Ժողովին մասնակցելու հրաւիրուած են, ըստ կանոնադրութեան, 27 պատգամաւորներ, որոնց ցուցակը հետեւեալն է։

Մուշ – Սասուն — *Անդրանիկ, Մուրատ*
վասպուրական — *Սալման*
Լեռնապար [Ռշտունիք եւ Մոկս] — *Իշխան*
Շամ [Վան] — *Արամ*
Արեւելեան Բիւրօ — *Ռոստոմ*
Մրգաստանի Կ. Կոմիտէ [Երեւան] — *Բժ. Զաւրեան*
Ապառաժի Կ. Կոմիտէ [Ղարաքաղ] — *Բարսեղեան*
Այգեստանի Կ. Կոմիտէ [Գանձակ] — *Մաչուրեան*
Քարի Կ. Կոմիտէ [Ալեքսանդրապոլ] — *Աւ. Իսահակեան*
Ջրաբերդի Կ. Կոմիտէ [Կարս] — *Ղարիբ (Ահարոնեան)*
Ծլատի Կ. Կոմիտէ [Հիւս. Կովկաս] — *Տիկ. Ծուչիկ*
Նալբանդի Կ. Կոմիտէ [Նոր Նախիջեւան] — *Ս. Գրուղինեան (Սիպ)*
Մեծ Քաղաքի Կ. Կոմիտէ [Թիֆլիս] — *Ե. Թոփչեան*
Նաւահանգիստի Կ. Կոմիտէ [Պաքու] — *Վարանդեան (Ծովհաննէսեան)*
Ոսկանապատի Կ. Կոմիտէ [Պաֆու] — *Զոփուրեան*
Ռուսաստանի Դաշն. Ուսանող. [Միութիւն] — *Արթուր (Շահխաթունեան)*
Զինուոր. Մարմին — *Ս. Տէր Մկրտչեան (Գազիկ)*
Ատրպատականի Կ. Կոմիտէ — *Ս. Վրէժունի (Ստեփանեան)*
Արեւմտեան Բիւրօ — *Ակնունի (Մամուլեան)*
Լեռնավայրի Կ. Կոմիտէ [Կիլիկիա] — *Անտոն (Զաւարեան)*
Ցուցական Մարմին — *Սաֆօ*
Ամերիկայի Կ. Կոմիտէ — *Վահագն Տաթեւեան, Հայկ Արմէն (Զելալեան)*
Բալկանեան Կ. Կոմիտէ — *Ասլան (Զարդարեան), Արամ Աչոտ (Մինասեան)*
Եւրոպայի Դաշն. Ուսանողութիւն — *Ա. Իսահակեան(1)։*

Բացման նիստին ներկայ էին 18 պատգամաւոր[ներ]։

Բացակայ էին հետեւեալ պատգամաւորները.— Վասպուրական, Լեռնավայր, Շամ, Քար, Ջրաբերդ, Նալբանդ, Մեծ Քաղաք, Նաւահանգիստ եւ Զին. Մարմին։

Ներկայ եղողները 2/3ի օրինական մեծամասնութիւն կազմելով, ըստ կանոնադրի, Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը, ընկ. Մալումեան, երկու Բիւրոներու կողմէ ձեռնարկեց Ժողովի պաշտօնական բացման եւ հակիրճ ու յուզուած ճառի [մը] մէջ, խորին յարգանքով յիշատակումը րրաւ այն յեղափոխական ընկերներուն, որոնք իրենց նուիրական պարտականութեան համարն վրայ անմահացած էին, բարձր պահելով Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դրօշակը։ Յիշեց զոհուած ընկերները, որոնք նախորդ Ընդհ. Ժողովին ներկայ էին՝ Քրիստափոր, Երկաթ, Ծովհաննէս Վանեցի, Վարպետիկ, եւ ցոցս Թում եղուսրդ. այլեւ այն ընկերները, որոնք Սասունի եւ Բասենի կռիւներուն մէջ լինկած էին՝ Հրայր, Վահան, Թորգոմ, Երկաթ, Թոխմախ, Որսորդ Գէորգ, Գայլ Վահան, Բաքդէն, Փոքորիկ Խուժդր։ Ապա անցաւ անդրկովկասեան վերջին հայ-թաթարական բնդհարումներու ժամանակ զոհուած յեղափոխական ընկերներու՝ Ստեփանեան, Մոռա, Արտեմ, Մուշեղ Սվերցի, Ինուսցի Մուշեղ, Գալօ, Ասլան, Էլօ եւայլն։

Ժողովը ի յարգանս անձնազոհ ընկերներու անմոռաց յիշատակին՝ ոտքի կանգնեց։

Ատենապետը յանձնեց նոյնպէս յոնկարս պատուել Ռուսաստանի եւ Թուրքիոյ բոլոր աղգերուն պատկանող յեղափոխական զոհերու յիշատակը, որը Ժողովը կատարեց։

Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը Ժողովը բացուած յայտարարելով՝ առաջարկեց ընտրել ժամանակաւոր դիւան։ Նախագահ ընտրուեցաւ Ա. Մալումեան եւ քարտուղար՝ Ս. Մինասեան։

Նախաղահի առաջարկութեամբ, ժողովը ձայնի իրաւունքով ընդունեց ժողովատեղում գտնուող երկու ընկերները՝ Սեպուհ, եկած Կովկասէն, եւ Վռամեան՝ եկած Ամերիկայէն։

Ժողովը իւր առաջին նիստին մէջ ղրաղուեցաւ Ընդհ. Ժողովի պարապմունքներու համար նախապատրաստուած կանոնագրի յօդուածներու քննութեամբ, որն ընդունուեցաւ փոքր բարեփոխութիւններով։

Կանոնագրի յօդուածները քերթուած են ստորեւ։

Նիստը վերջանալէ առաջ երեք հոգիէ յանձնախումբ մը ընտրուեցաւ պատգամաւորներու mandat-ները առուգելու եւ Ժողովին տեղեկագրելու համար։ Ընտրեալներն են՝ Վահան, Մուրատեան եւ Վահագն։

Նիստը փակուեցաւ ժամը 1ին։

1· Ընդհ. Ժողովը կը բացուի, կանոնագրութեան համաձայն, երբ ներկայ են պատգամաւորներու 2/3 մասը։

2· Երկու Բիւրոներու ներկայացուցիչները կը կազմեն դէտեան, որուն կը յանձնուին Ժողովի բացման վերաբերեալ բոլոր նախապատրաստութիւնները։

3· Ժամանակաւոր Բիւրոն կը քննէ ներկայացուցած մանդատները եւ կը զեկուցանէ Ժողովին, որն իւր կարգին կ'ընտրէ յանձնախումբ մը երեք հոգիէ բաղկացած, առուգելու համար մանդատներու վաւերականութիւնը։ Ցանձնախումբին ընտրութեան կը մասնակցին միմիայն հաստատուպէս յառնի մանդատներ ունեցողները։ Վերջնական հաստատութիւնը կը պատկանի Ընդհանուր Ժողովին։

4· Ժողովը պաշտօնապէս բացուելէ յետոյ կը ձեռնարկէ դէտեան ընտրութեան, բաղկացած հինգ նախագահէ եւ վեց քարտուղարէ։ Դէտեանին վերապահուած է նախագահներու հերթապահութիւնը։ Եթէ կարելի է, դէտեն բերել տալ երկու քարտուղար, արձանագրելու համար օրուայ արձանագրութիւնները։

5· Ժողովները տեղի կ'ունենան առաւօտեան ճիշդ ժամը 9էն 1 եւ 3էն 7։ Ժողովականները, որոնք առանց բանաւոր պատճառի ժամանակին ներկայ չեն լինիր, ազդարարութիւն կը առնեան Ժողովէն։

6· Քուէարկութիւնները կը կատարուին բաց, բացի Մարմիններու ընտրութիւններէն։ Հարցերու որոշումը կը վճռուի ձայներու 2/3ի մեծամասնութեամբ, համաձայն կանոնագրութեան (յօդ. 113)։ Կրկնաքուէարկութիւն կարող է լինել, բայց այլ նիստի մէջ։ Կրկնաքուէարկութեան ժամանակը (ոչ նոյն օրը) եւ ահմանը կ'որոշէ Ընդհանուր Ժողովը։

7· Ժողովը իւր բացուէն յետոյ պէտք է անուէ առաւելն մէկ ամիս։

8· Տեղեկագրերու ընթերցանութեան համար ժամանակը չի սահմանափակուիր· բայց կը խնդրուի, ըստ կարելւոյն հակիրճ լինել։ Ցանկալի է որ տեղեկագրերը գրաւոր լինեն։

9· Բանախօսները նախօրօք պէտք է յայտնեն դէտեանին իրենց բանախօսութիւններու մասին։ Իւրաքանչիւր բանախօսի կը տրուի առաւելն կէս ժամ, զեկուցանելու համար։ Իսկ իւրաքանչիւր ընդդիմախօսի՝ 10 րոպէ։ Եզրակացութեան պատասխանի համար՝ 20 րոպէ։ Ամէն ոչ-զեկուցանող անդամ իրաւունք ունի այդ հարցի մասին եւ նոյն նիստի մէջ, խօսելու միայն երկու անգամ, երբ որ անգամին 5 րոպէ միայն։ Շերմեռանդ ներկայացուցիչներուն իրաւունք կը տրուի, ըստ կարգին, ուղղուխներ ընելու· ըստ կարգի խօսքերը պէտք է տեւեն 2 րոպէ։

10· Ժողովը կ'ընտրէ, եթէ կարելի լինի, յանձնաժողովներ, դրուած հարցերը մշակելու եւ Ժողովին զեկուցանելու համար։

11· Նկատելով «ծրագրային» եւ «տնտեսային» հարցերու կարեւորութիւնը, այդ հարցերու վիճաբանութեան մէջտեղին, բանախօսներուն տալ 45 րոպէ ժամանակ, իսկ ընդդիմախօսներուն 25 րոպէ։ Եզրակացութեան պատասխանի համար՝ 20 րոպէ։

12· Նախորդ Ժողովի արձանագրութիւնները յաջորդ օրուայ Ժողովին կարդալէ եւ վաւերացուելէ յետոյ միայն Ժողովը կարող է սկսիլ։ Առնինախօսները կարող են իրենց խօսածները գրաւոր ներկայացնել քարտուղարին, արձանագրութեան մէջ անջրպետելու համար, պայմանով որ մեկնելն օր եւս ներկայացնեն։ Արձանագրութիւնները պէտք է տան, ըստ կարելւոյն, Ժողովի մանրամասն եւ ճշդրիտ պատկերը։

13· Հրամայական մանդատի սկզբունքը չ'ընդունուիր համաձայն կանոնագրի 101րդ յօդուածի։

14· Նախագահին լիազօրութիւն կը տրուի վիճաբանութիւններու ընթացքին յատուկ եկած վերաբերմունքներու մասին խօսապահանջ լինել եւ անմիջական բաւարարութիւն տալ։ Սոյն հարցին մէջ նախագահի պահանջը պարտաւորիչ է։ Զհամաձայնի պարագային նախագահը կը դիմէ Ժողովին։ Վերաբերողը ձայնէ զրկելու կամ Ժողովէն հեռացնելու վերաբերմամբ, նախագահը կը դիմէ Ժողովին։ Նախագահը լիազօր է վիճաբանութիւնները վարելու դարձին մէջ։

15· Բոլոր բանաձեւերը, առաջարկները եւ բարեփոխութիւնները պէտք է գրաւոր ներկայ տրուին դէտեանին։

16· Ընդհանուր Ժողովի մեծամասնութեան որոշումները պարտաւորիչ են փոքրամասնութեան եւս, համաձայն Ընդհանուր Պարտքերն (երես՝ 14 եւ առ՝ 25)։

2ՐԴ ՆԻՍՏ (22 Փետր., երեկոյ)

Նախագահ Մալումեան ժողովը բացաւ ժամը 4ին։

Քննիչ Ցանձնախումբը հաւատարմագրերու քննութեանց արդիւնքը ներկայացուց Ժողովին։ Գալոյ Ծուցկան Մարմնին եւ Ռուսատանի Ուսանողութեան ներկայացուցիչներու մանդատները ինքնուս չլինելուն համար հարցում եղաւ։ Ռուսատանի Ուսանողութիւնը պաշտօնական կնիք չունենալուն, անոր մանդատը վաւերը համարուեցաւ։ Իսկ Ծուցկանի ներկայացուցիչը հաստատեց, որ իրենց կնիքը Արեւմտեան Բիւրոյի մօտ կը գտնուէր։

Ռոստով առաջարկեց, որ ընդ· Սաֆոյի վիկայականը, մէկի բացակայութեամբ, իւր ամբողջ ընկերներու համաձայն ատորագրութիւնը չկրելով, անօրինական պէտք է համարել, յայտնելով որ բացակայի ներկայացութիւնը կարող է ազդել ընտրութեան վրայ։ Ըստ նաեւ, թէ Ծուցկանի ներկայացուցիչը մեծամասնութեան կարծիքը կը ներկայացնէ, մինչդեռ հարկաւոր է նաեւ իմանալ փոքրամասնութեան կարծիքը։

Ծուցկան Մարմնի ներկայացուցիչը ի պատասխան յայտնեց, որ իրենք հետամուտ եղած էին իմանալ իրենց բացակայ ընկերոջ ուր լինելը, բայց անկարելի եղած էր եւ թէ ամէն պարագայի մէջ, իւր մարդատը ընկերներու մեծամասնութեան ատորագրութիւնը կը կրէ։ Նոյնպէս ատարկեց, որ ևթէ այդպէս խորհենք Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչն եւս պէտք է անվաւեր նկատուի, քանի որ բացի մէկէն, բոլոր միւս ընկերները բացակայ եղած են իրենց պաշտօնէն եւ նոյնիսկ կանոնագրութեամբ այդ պայմաններու մէջ Արեւմտեան Բիւրոն կազմուծուած պէտք է նկատուէր։

Ռոստով պնդեց իւր բողոքի վրայ եւ խնդրեց իւր բողոքը արձանագրել։

Նոյնը խնդրեց եւ ընկ· Սաֆոն։

Վռամեան հարց տուաւ, թէ պատգամաւորները կը ներկայացնէ՞ն օրինական ցնորը։ Դիտողութիւններ եղան, թէ կռվկասի կարդ մը կոմիտէներ կազմուծուած լինելով ցնորի օրինականութիւնը չունէին, հետեւաբար իրաւունք չունէին պատգամաւոր ղրկելու։

Դիտել տրուեցաւ, թէ կազմալուծումը առերեսոյթ եղած էր, կովկասի հայ-թաթար խնդիրներու պատճառով պահ մը կանգ առնելով կոմիտէներու նորմալ ընթացքը։

Ժողովը որոշեց ցնծի խնդրի քննութիւնը թողնել հետագային, երբ կենտրոնական կոմիտէներու տեղեկագիրը կը կարդացուէր։

Ըստ կանոնագրի, դրսէն ձայնատու եւ խորհրդատու ընկերներ հրաւիրելու համար՝ կազմուեցաւ ցուցակ մը այն ընկերներու, որոնք իրենց գործունէութեամբ, փորձառութեամբ եւ խորհուրդներով կարող էին գործ տալ Ժողովի որոշումներուն։

Ժողովը վերջացաւ երեկոյեան ժամը 7ին։

3ՐԴ ՆԻՍՏ (23 Փետր., առաւօտ)

Ժողովը բացուեցաւ ժամը 9½ին նախագահութեամբ ժամանակաւոր դիւանին, ի ներկայութեան 20 պատգամաւորներու։

Ժողովը միաձայն որոշեց շնորհաւորական դէր մը ուղարկել Վիէննայի Սոցիալիստական կուսակցութեան, այն մեծ յաղթանակին համար, որով ձեռք բերած էր ընդհանուր քուէարկութեան իրաւունք։ Նկատելով նաեւ որ կուսակցութիւնը ձրիարար Ժողովի տրամադրութեան տակ էր դրած իւր սրահը, Ժողովը ի նկատի առնելով սոցիալիստներու առաջնիկայ ընտրողական պայքարը, վճռեց 500 քրօնի նուէր մը յատկացնել կուսակցութեան, ի նպաստ այդ պայքարի։

Ահա այն նամակը, որ ղրկուեցաւ կուսակցութեան դեկավարներից մէկին՝ Ադլերին։

«Ճարպելի՛ քաղաքացի,

«Հ· Ը· Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը, գումարուած Վիէննա, Ձեր ընկերութեան դահլիճին մէջ, քսոյր պարտք կը համարի, իր ջերմ համակրանքը յայտնել Ձեր միջոցով, Աւստրիական Սոցիալիստական Կուսակցութեան, ինչպէս եւ իր անկեղծ բերկրանքը, այն յաղթանակի համար, որ նա տարաւ վերջերս, ընդհանուր ձայնատուութեան հարցին մէջ, որը պէտք է լինի զօրեղ միջոցներէն մէկը՝ կուսակցութեան ծրագիրը իրականացնելու հարցին մէջ։

«Թոյլ տուէք մեզ, յարգելի քաղաքացի, իրը ոմնէ արտայայտութիւն մեր համակրանքին, կցել այս նամակին 500 քրօնի համեստ գումարը, խնդրելով զործադրել զայն՝ յօգուտ մեր ընտրական պայքարին»։

Ընկերական բարեւներով՝

Քարտուղար՝ Ս. ՄԻՆԱՍԵԱՆ

Նախագահ՝ Ա. ԱԿՆՈՒՆԻ

Ժողովը քննեց հրաւիրելիք ընկերներու հարցը եւ եկաւ այն եզրակացութեան, թէ պէտք է սահմանափակել թէ՛ ձայնատու եւ թէ խորհրդատու ընկերները թիւը եւ որոշեց՝ պատգամաւորներու թուի 1/4է համեմատ ձայնատու ընկերներ հրաւիրել դրսէն, այն է՝ եօթը հոգի, իսկ խորհրդակցական ձայնով միայն 5 հոգի, մանաւանդ այն հարցերու քննութեան համար, որոնք իրենց ձեռնհասութեան սահմանին մէջ են։

Ձայներու մեծամասնութեամբ ընտրուեցան իրը ձայնատու, ընկերները՝ Դուման, Վարդան, Օհանջանեան, Գրիգորեանեան եւ Եուսուֆեան(2)։

Եթէ ասոնցմէ ոմանք հրամարուին կամ անկարող լինեն գալու, առանց նոր ընտրութեան ձեռնարկելու, պէտք է հրաւիրել յաջորդ մեծամասնութիւն ստացողները։

Խորհրդակցական ձայնով հրաւիրելու հարցին մեծամասնութիւն չհայտնուելով, ընտրութիւնը յետաձգուեցաւ։

4ՐԴ ՆԻՍՏ (23 Փետր., երեկոյ)

Ժողովը ղրաղեցաւ խորհրդակցական ձայնով ընկերներ ընտրելու խնդրով. կազմեց մի ցուցակ, 15 հոգուց բաղկացած, որը եւ ենթարկուեց քուէարկութեան· բայց կանոնագրով պահանջուած ձայներու մեծամասնութիւն չդոյանալով, յետաձգուեցաւ յաջորդ Ժողովին։

Սաֆո ղրաւոր բողոք ներկայացուց այդ 15 հոգու ցուցակի մէջ մտած Ս. Ֆաչաւրեանին, Ց· Դաւիթեանին, Շահրիկեանին եւ Ֆռանկի խորհրդակցական ձայնով կանչելու առաջարկին դէմ, վիրաւորական դանելով այդ որոշումը յիշեալներուն համար։

Ժողովը անցաւ օրակարգի հարցերուն։

Մովսէփ չրջանի ներկայացուցչի խնդիրը դրուեցաւ Ժողովին։ Մովսէփ չրջանը քիչ մըն քիչ կազմալուծուած է եւ ցնոյ չի ներկայացներ, ասկայն Ամ· Բիւրոն փափաքելով երկրի այդ չրջանի մասին լրիւ տեղեկութիւններ ստանալ, յայտնած էր Մովսէփ չրջանին, որ իրենց չրջանին ծանօթ մէկը ի նկատի ունենան, որը Ընդհ· Ժողովին կայ հարկաւոր տեղեկութիւնները տալու։ Ցիչեալ չրջանը պատգամաւոր ընտրած էր իրենց նախկին ընկերներէն Մանուկը, որ կովկասէն մեկնած եւ հասած էր Աթէնք եւ որուն հեռագրուած էր արդէն, որ ճամբայ ելլէ։ Առարկուեցաւ, որ Մանուկ երկար ատեն է իր չրջանէն բացակայ լինելով, անձնական հարկ եղած տեղեկութիւնը տալու։ Պատասխանուեցաւ, թէ իւր չրջանը անոր հարկ եղած տեղեկութիւնները տուած էր եւ թէ ինք իրր տեղացի անծանօթ չէ բոլորովին տրուող պայմաններուն։ Հարցը քուէի դրուելով որոշուեցաւ, որ Մովսէփ չրջանի ներկայացուցչ տասնեակ մը հրաւիրուի Ֆրօ Աբմենիայի խմբագրատան Քիյոր, Մակեդոնացի գործիչ՝ Սարաֆով եւ ընկ· Վ· Արարատեան (Լունկեվիչ)։

5ՐԴ ՆԻՍՏ (24 Փետր., երեկոյ)

Ժողովը բացուեցաւ ժամը 4ին, նախագահութեամբ առժամեայ դիւանին։

Կերակի լինելով այսօր մէկ նիստ միայն տեղի ունեցաւ։

Ներկայ պատգամաւորներուս քիչն էր 18։

Վրամեան առաջարկից հրաւիրել ընկ. Լորիս Մելիքեանին, որպէսզի իրրեւ պատասխանատու ներկայացուցիչ եւրոպական պրպտազանդի, հաշիւ եւ տեղեկութիւն տայ իր գործունէութեան եւ ծախքի ու նամակներ ստանալու համար։

Ժողովը յարմար դատեց անոր հրաւիրելու որոշումը յետաձգել մինչեւ տեղեկագրի ընթերցումը, որովհետեւ Լորիս Մելիքեան իր տեղեկագիրը ղրկած էր Արեւելեան Բիւրոյին։

Ժողովը ձեռնարկից մեայն դիւանի ընտրութեան եւ քանի կանոնագրի քուէի դրուելուն հինգ նախագահներու եւ վեց քարտուղարներու ընտրութիւնը։

Ձայներու մեծամասնութեամբ ընտրուեցան իրրեւ նախագահ՝ Ահարոնեան, Զաւարեան, Վրամեան, Հ. Օհանջանեան, իսկ հինգերորդի ընտրութիւնը համեմատականի մեթոդով՝ յետագային նոր ընտրութեան։

Ձայներու մեծամասնութեամբ ընտրուեցան իրրեւ քարտուղար՝ Ե. Թօփչեան, Լ. Թադէոսեան, Մ. Ճարուքիւնեան, Ար. Խաչահէեան, Տաճատ Վ. Մելքոնեան եւ Ս. Տէր Մկրտիչեան(4)։

Ընդմիջում

Վերաբանալով նիստը, նախագահը (Վրամեան) դիմեց կողմից իւր ներկայութիւնն է յայտնում ընտրութեան համար, խնդրում ժողովին՝ աշակցել դիւանին պարապմունքների կանոնաւորութեան կոչնակ, եւ առաջարկում է ընտրել հինգերորդ նախագահը։

Ժողովը միաձայն ընտրում է Մալումեանին։

Նախագահ.— Ցայսմում է, թէ հերթական հարցն է երկու Բիւրոներէ՝ Ընդհանուր ժողովի համար կազմած Օրակարգի քննութիւնը եւ հարց է դնում, թէ արդեօք ժողովը յարմա՞ր է դատում յետաձգել Օրակարգի քննութիւնը մինչեւ նորընտիր դիւանի բացակայ անդամների գալը, թէ հնարաւոր է համարում ընթերցել մի քանի հոգի, որոնք նեկայ անդամների հետ միասին քննութեան առնեն Օրակարգը, նոր առացուած առաջարկների համառօտ կարեւոր լրացումները մոգնեն նրա մէջ եւ ապա ներկայացնեն ժողովին։

Խսահակեան առաջարկում է Օրակարգը այժմ եւեթ ներկայել ժողովի քննութեանը, առաջիկայ թէ առանց օրակարգը կազմելու ոչ մի զրաղմունքի անցնել չէ կարելի։

Նախագահ.— Ճարկում է, թէ ժողովը համաձայն է, Օրակարգը ինչ ձեւ էլ ունենայ, նախ եւ առաջ դանօթանալ տեղեկագրերի հետ, հետեւաբար թողնելով դիւանին ընտրելիք մարդոց հետ Օրակարգի ամրողջական մշակումը, ժողովը կարող է անմիջապէս անցնել տեղեկագրերին։

Ժողովը համաձայնում է այդ կարծիքի հետ եւ Օրակարգի մշակութեան համար ընտրում է ընկերներ՝ Թոսոմին, Զարդարեանին եւ Շահխաթունեանին։

Նախագահը նկատում է, որ քան հերթի, տեղեկագիրը նախ պէտք է ներկայացնի Վասպուրականի չրջանը, ապա Սասուն-Մուշի չրջանը, այնուհետեւ Վիլայեթի Ցուցական Մարմինը։ Ցայտնում է, որ Վասպուրականի չրջանը չէ կարող իր տեղեկագիրը կարդալ, քանի որ ներկայացուցիչներից մէկը, որի մօտ է գտնուում տեղեկագրի մի մասը, դեռ չէ հկել։ Մուշ-Սասունի ներկայացուցիչներն էլ ներկայ չեն Ժողովին, ուստի առաջարկում է Ցուցական Մարմնի ներկայացուցիչ Սաֆոյին՝ կարդալ իր տեղեկագիրը։

Սաֆօ այս առաջարկին պատասխանում է, որ ծշմարիտ մի քանի լրացուցիչ արձանագրութիւններ ստացած չլինելով, չէ կարողացել պատրաստել իր տեղեկագիրը։

Մալումեան հաստատում է լրացուցիչ արձանագրութիւններէ հարցի դոյութիւնը։

Շահխաթունեան եւ Մաշտոցեան զարմանք են յայտնում, որ Սաֆոն այսքան ժամանակ հոգ չէ տարել այդ արձանագրութիւնները ստանալու. քանի որ Ընդհանուր Ժողովի պէտք է հկած լինել ոչ թէ տեղեկագիրը պատրաստելու, այլ պատրաստ տեղեկագրով։

Սաֆօ պատասխանում է, որ քանիցս դիմել է այդ առթիւ Ամ. Բիւրոյին, բայց թղթերը չէ ստացել, եւ թէ վերջերս միայն նամակ է ստացել Բիւրոյից, թէ Ժողովամասնում կը ստանայ. ապա մինչեւ այժմ Ամ. Բիւրոն իրեն չէ յանձնել հարկաւոր վաւերագրերը՝ տեղեկագիրը կազմելու։

Իշխան եւ Մաշտոցեան հարց են տալիս Ամ. Բիւրոյի ներկայացուցչին՝ յիշեալ արձանագրութիւնների յապաղման պատճառի մասին։

Մալումեան յայտնում է հետեւեալը.— Հենց որ Օտեասյից ստացուեց Սաֆոյի առաջին նամակը, Բիւրոն անմիջապէս պատասխանեց, թէ Ցուցական բոլոր թղթերը պատրաստուած են Ընդհանուր Ժողովին ուղարկելու, ուր եւ կարող է առանալ։ Միայն այստեղ Ժողովամասնում են յմացել Սաֆոյից, որ երկու արձանագրութիւններ պակասում են, ուստի եւ գրուած է այդ մասին ծրթեւ եւ ամէն րոպէ սպասում է պատասխանը։

Նախագահը առաջարկում է այս հարցի առթիւ գործնական առաջարկներ անել։

Խսահակեան առաջարկում է Սաֆոյին՝ պատրաստի փաստաթղթերի հիման վրայ ներկայացնել իր տեղեկագիրը, իսկ արձանագրութիւնների առանալուց՝ տալ լրացուցիչ տեղեկութիւններ։

Խոստում բացատրում է արձանագրութիւնների Սաֆոյին յանձնելու անկարելիութիւնը, վերջինիս դատի տակ լինելուն համար։

Սաֆօ ընդհատում է Թոսոմին, բացատրելով, որ ոչ թէ ինքն է դատի տակ, այլ ինքն է հրաւիրել դատի։

Նախագահը ընդհատում է այդ վէճը եւ առաջարկում խնդրից չէ՛նդուել։

Զարդարեան Խսահակեանի առաջարկը անյարմար է դանում եւ առաջարկում է, որ Սաֆոն բոլոր փաստաթղթերը առանայ եւ ամբողջական տեղեկագիր ներկայացնէ։

Շահխաթունեան համաձայնում է Խսահակեանի առաջարկին եւ դանում, որ տեղեկագրի փաստական մասը չի տուժի այն հանգամանքից, որ տեղեկագիրը մի մասը այժմ կարդացուի եւ միւսը յետոյ։

Ց. Զաւրեան.— Հարկաւոր փաստերը ամբողջապէս պէտք է տալ Սաֆոյին՝ տեղեկագիրը պատրաստելու համար. բայց այժմ եւեթ հարկ է որոշել տեղեկագիրը պատրաստելու ժամանակամիջոցը, թղթերը առանալուց յետոյ, որպէսզի դիւանը օրակարգի մէջ նրան պատշաճ տեղ յատկացնի։

Նախագահ.— Բանաձեւում է Խսահակեանի եւ Զաւրեանի առաջարկները եւ խնդրում այդ մասին դիտողութիւններ անել։

Սաֆօ բողոքում է Օրակարգը հաստատելուց առաջ, մանաւանդ իր տեղեկագրի վրայ այդքան երկար կանգ առնելուն դէմ։ Պատասխանում է, թէ նախապէս անկարող է որոշել տեղեկագրի պատրաստութեան ժամանակը։

Մալումեան.— Ժողովը պէտք է նախ Օրակարգը հաստատէ եւ ապա միայն անցնէր հերթական հարցերին. Օրակարգի նկատմամբ դիւանը հազիւ թէ կարողանայ կարեւոր փոփոխութիւն անել, քանի որ բիւրոներին յայտնի բոլոր առաջարկներն ու մանրամասնութիւնները մտել են նրա մէջ։

Խսահակեան.— Կարեւորը այս կամ այն մանրամասնութիւնը չէ, այլ այն թէ ի՞նչ դասաւորութիւն կ՛ընդունեն Օրակարգի մէջ եւ այս տեսակէտից Օրակարգի հաստատումը այնքան էլ հնչա չէ ինչպէս ընկ. Մալումեանն է կարծում։

Նախագահ.— Օրակարգի հարցը արդէն կարգաւորուած եւ քուէարկուած է. խնդրում է անցնել բա՛ւն հարցին՝ ընկերներ Խսահակեանի եւ Զաւրեանի առաջարկներին։

Զելալեան Հ. Ա.— Եթէ մի հարցի քննութիւնը եւ քուէարկութիւնը սխալ է կատարուած, կարելի է անոր նորէն վերադառնալ. յամառել սխալ որոշման մէջ, կրկնակի սխալ է։ Գալով Սաֆոյի տեղեկագրի խնդրին, յայտնում է, որ ինքը հակառակ է կիսատ տեղեկագրերուն, լինի այդ վասպուրականի թէ ծուցական Մարմնի կողմից։

Շահխաթունեան պնդում է նորից, որ ծուցական Մարմնի ներկայացուցչէը պէտք է կարդայ իւր տեղեկագրի պատրաստ մասը։

Սաֆօ.— Իսահակեանի առաջարկը առնուազն անհիմն է, քանի որ նա չդիտէ թէ ի՛նչ արձանագրութիւններ են պակասում, եւ թէ ի՞նչ կարեւորութիւն ունեն նրանք իւր տեղեկագիրը պատրաստելու համար։

Նախագահը քուէարկութեան է դնում երկու առաջարկն էլ, եւ Իսահակեանի առաջարկը առանում է 7 թէր եւ 6 դէմ ձայներ։

Նախագահ.— Զաւրեանի առաջարկը կարելի է հետկանել իրրեւ մի հարց, ուղղուած Սաֆոյին, այն մասին թէ նա ե՞րբ կը վերջացնի իւր տեղեկագիրը։

Սաֆօ դնում է այդ հարցը վիրաւորական իւր համար. — ելացնելով, որ առանց հարցին պատասխանելու դուրս կը գայ Ժողովից։

Մինասեան.— Ձպէտք է հարցը այդ ձեւով դնել՝ թէ Սաֆոն ե՞րբ կը վերջացնի իւր տեղեկագիրը, այլ թէ, որովհետեւ տեղեկագրերը պէտք է կարդացուին մեր զրաղումների առաջին չրջանում, պէտք է պարտաւորեցնել Սաֆոյին քան այնմ պատրաստել իւր տեղեկագիրը։

Սաֆօ պատրաստում է դուրս գալու Ժողովից։

Նախագահ.— Գտնում է որ Սաֆոն իրաւունք չունի Ժողովից հետանալու եւ նրա այդ վարմունքը կը նկատէ իրրեւ վիրաւորանք ամբողջ Ժողովին։

Սաֆօ.— Բողոքում է նախագահի դէմ, որ բռնութիւն է գործ դնում իւր վրայ. բողոքում է եւ Ժողովի դէմ, որ... (Վրամեան բացականչում է.«դուրս համարատու էք եւ իրաւունք չունէք Ժողովից դուրս գալու») ուզում է իւր դուրս գալը արգելել եւ ցանկութիւն յայտնելով, որ իւր բողոքները արձանագրուին, դուրս է գալիս Ժողովից։

Զաւրեան.— Բացատրում է, որ իւր առաջարկի մէջ ոչ մի վիրաւորական բան չկայ Սաֆոյին ուղղուած եւ որ ինքը միայն Օրակարգի կանոնաւորութեան համար է արել իւր առաջարկը։

Չելալեան.— Բողոքում է թէ՛ նախագահի եւ թէ Ժողովի դէմ, դնելով այս խնդրի մէջ Ժողովի բռնած դիրքը վիրաւորական թէ՛ Սաֆոյի եւ թէ Առեանի համար։

Զոփուրեան բացատրում է, որ թէ՛ Իսահակեանի եւ թէ Զաւրեանի առաջարկները վիրաւորական չեն Սաֆոյի համար։ Եւ եթէ Սաֆոն վիրաւորական էլ համարէր, իրաւունք չուներ մի այդպիսի վիրաւորական վարմունք ցոյց տալ դէպի ամբողջ Ժողովը, քանի որ Ժողովը եւ ոչ մի առաջարկ դեռ ընդունած չէր։

Նախագահը առաջարկում է Ժողովին, մի գործնական ելք ցոյց տալ այս անախորժ միջադէպը հարթելու համար։

Զոփուրեան.— Ժողովը պէտք է պարտաւորեցնէ արտայայտել Սաֆոյին՝ նրա այս ոգեղ եւ Ժողովի համար վիրաւորական վարմունքի համար։

Զելալեան պնդում է, որ մենք ենք բռնութիւն գործ դրել Սաֆոյի դէմ եւ բողոքում է պարտաւորեցնել մեզ դէմ։

Զարդարեան հակառակ է պարտաւորեցնել քուէին, որովհետեւ Ժողովի ընթացքը իսկապէս վիրաւորական էր Սաֆոյի համար։

Խսահակեան առաջարկում է հետեւեալ բանաձեւը. «Ժողովը հաստատում է որ Սաֆոն այդ վարմունքը իրեն քոյլ տուեց դրգռուած վիճակի մէջ եւ անցնում է հերթական հարցին»։

Մինասեան առաջարկում է ընդունել հետեւեալ բանաձեւը. «Ժողովը յայտարարելով, որ երբեք դիտաւորութիւն չէ ունեցել նրան վիրաւորելու՝ կը հրաւիրէ զայն չարունակել մասնակցելու Ժողովի նիստերուն եւ կ'անցնի օրակարգին»։

Զաւրեան առաջարկում է հետեւեալ բանաձեւը. «Ի նկատի ունենալով, որ առաջարկուած բանաձեւերում ոչ մի վիրաւորական բան չկայ, Ժողովը գտնում է որ ոչ մի վիրաւորական բան տեղի

չէ ունեցել Սաֆոյի նկատմամբ, ուստի եննթադրելով, որ նրա անքաւականութիւնը առաջացել է ներքին, իրենից ծագող պատճառներից, Ժողովը անցնում է հերթական հարցերին»։

Նախագահ.— Ցուցական Մարմնի անհրաժեշտ թուղթերը առանալուն պէս յայտնել Սաֆոյին եւ առաջարկել նրան՝ ըստ նկատի տեղեկագիրը ներկայացնելու համար անհրաժեշտ ժամանակը։

Վրամեան առաջարկում է հետեւեալ բանաձեւը. «Ժողովը դանելով որ ոչ մի վիրաւորիչ ընթացք չէ ունեցել Սաֆոյի նկատմամբ, կ'անցնի օրակարգին»։

Խսահակեան եւ Զաւրեան մի՛անում են վերջին բանաձեւին։

Նախագահ.— Քուէարկութեան է դնում Շահխաթունեանի, Վրամեանի բանաձեւերը. առաջինը առանում է 8, երկրորդը 2 եւ երրորդը 11 ձայն։

Մաշտոցեան առաջարկում է արձանագրութեան մէջ մտցնել հետեւեալը. «Յորապէս զգալով, որ ոչ թէ Ժողովն է վիրաւորել Սաֆոյին, որովհետեւ վիրաւորելու ոչ մի առիթ չէ տուել, այլ Սաֆոն է ծանր վիրաւորանք հասցրել Ժողովին այսպէս ցուցական կերպով հետանալով, այն ժամանակ երբ նախագահը նրան նախազգուշացնում է, թէ այդպիսի մի քայլ կը նկատուի իրրեւ Ժողովին ուղղուած վիրաւորանք՝ Ժողովը որոշում է առ այժմ արձանագրել փաստը, անցնել օրակարգի քննութեանը եւ յետագայ նիստին կողնել Սաֆոյի հետ վարուելու եղանակը որոշելը»։

Այս առաջարկը դրուեցաւ քննութեան։

Ժողովը փակուեցաւ ժամը 1½ին։

6ՐԴ ՆԻՍՏ (25 Փետր., առաւօտ)

Նիստը բացուեցաւ առաւօտեան ժամը 10ին։ Ներկայ էին 17 պատգամաւորներ. բացակայ էին Անդրանիկ, Սեպուհ եւ Սաֆօ։

Նախ կարդացուեցան նախկին հինգ նիստերի արձանագրութիւնները, որոնք որքագրութեան համաձայն նկատողութիւններին, որ արուեցան Ժողովականների կողմից եւ վաւերացուեցին։

Նախագահը Ժողովի ուշադրութեան առաջարկեց Ընդհանուր Ժողովի համար պատրաստուած Օրակարգը, հարց դնելով թէ արդեօք Ժողովը օրակարգը նոյնութեամբ պիտի ընդունի՞, թէ կարելւոր պիտի դատուի նրան որոշ փոփոխութիւններ եննթարկելուց յետոյ հաստատել։ Ժողովականների կողմից առաջարկութիւններ եղան նիւթերի դասաւորման առթիւ եւ առաջարկուեցան հետեւեալ բանաձեւերը։

Մալումեանի բանաձեւը. «Ենկատելով որ առաջիկայ ձեռնարկների որոշումը մեծ կապ ունի ընդհանուր տակիւկի հետ, իսկ վերջինը զօրեղապէս պէտք է չեզուի կազմակերպութեան հիմնական ծրագրի վրայ, հակասութիւններից եւ կրկնութիւններից խուսափելու համար, առաջարկում եմ նախքան էյատիկայ գործունէութեան անցնելը կանգ առնել ծրագրային հարցի վրայ եւ քննել նրա էական կէտերը»։

Խսահակեանի բանաձեւը. «Ի նկատի ունենալով, որ կուսակցութեան տակիւկը պէտք է բխի կամ առնուազն հակասութեան մէջ չպէտք է ընկնի կուսակցութեան հիմնական սկզբունքների հետ, Ժողովը որոշում է նախքան օրակարգի երկրորդ քաժինի «Առաջիկայ գործունէութեան» անցնելը, պարզել կուսակցութեան սկզբունքային ֆիզիոնոմիան» [դիմադիծը]։

Մաշտոցեանի բանաձեւը. «Վարչական քննութեան եննթարկել տեղեկագրերը եւ ապա իրերի դրութեան մասին ընդհանուր գաղափար կազմելուց յետոյ անցնել դեկավարող սկզբունքային, այսինքն ծրագրի ընդհանուր գծերով մշակման խնդրին»։

Այս բանաձեւերի առթիւ Ժողովականների մէջ մտքերի փոխանակութիւնից յետոյ, միաձայն ընդունուեց հետեւեալ որոշումը.— Օրակարգի առաջին բաժանմունքը «Ընդհանուր վիճակ» (տեղեկագիր-դեկուցում) ընդունել նոյնութեամբ։ Օրակարգի Բ. բա-

ժանմունքի մէջ մացնել հետեւեալ փոփոխութիւնը. «Գործունէութիւն առաջիկայի մէջ» վերնագիրը ընդլով, այդ բաժանմունքի հարցերը բացի երկրորդ պրակի (կովկասի մէջ) 6րդ կէտէն (Դաշնակցութեան Ընդհանուր Մրցարի մշակումն ու վաւերացումը) մանրամասն քննութեան առնել առանց որոշումներ կայացնելու. Ճեռով զբաղուել «Մրագրի» մշակման գործով, որից յետոյ միայն անցնել որոշումներին կամ ընդհանուր տակտիկայի խնդիրներին»։

Նիստը փակուեց ժամը 1ին։

7ՐԴ ՆԻՍՏ (25 Փետր., երեկոյ)

Ժողովը բացուեցաւ որոշուած ժամից մի ժամ ուշ։

Նախագահ.— Նախքան օրակարգի քննութեան անցնելը առաջարկում է հաստատել նախորդ նիստի արձանագրութիւնը։

Ժողովը գտնում է, որ արձանագրութեան մէջ, ժողովի որոշումները թէեւ լաւ են ձեւակերպուած, բայց արձանագրութեան սխեմայը լաւ չէ։ Այդ արձանագրութիւններից կարելի է հանգցողութիւն կազմել ժողովների որոշումների, բայց ոչ նրանց պատկերի մասին։

Նախագահը առաջարկում է ընտրել յանձնախումբ, որոնց յանձնուի զանազան հաշիւների եւ դատական գործերի մասին նախապատրաստական գործողութիւնները կատարել։

Ժողովը որոշում է առայժմ ընտրել միայն մի մարմին՝ Դատական Յանձնախումբ՝ 5 հոգուց բաղկացած։

Չելալեան առաջարկում է ընտրութիւնները գաղտնի կատարել։

Ժողովը որոշում է յարել այդ առաջարկութեանը։

Ջայմեր.— Դատական Մարմնի անդամ չի կարող լինել նա, որ այս կամ այն գատի մէջ շահագրգռուած է. իսկ որովհետեւ Բիւրոնները բոլոր գործերի հետ այս կամ այն առընչութեանը մէջ են, առաջարկում ենք Բիւրոյի անդամներին հենց սկզբից դուրս հանել Դատական Մարմնի քննութեան ցանկից։

Բիւրոնների ներկայացուցիչները գտնում են այս կէտը հիմնաւոր։

Ագրաճիկ.— Իւրաքանչիւր առանձին դէպքի համար պէտք է ընտրել առանձին մարմին, այնպիսի անհատներէ բաղկացած, որոնք քննելիք գործին իրազեկ են։

Զոփուբեան.— Ի՞նչ ֆունկցիաներ պէտք է ունենայ Դատական Մարմինը։

Նախագահ.— Քննել իրեն յանձնուած գործը եւ իւր եզրակացութիւնների հետ միասին, յանձնել Ընդհանուր Ժողովի հայեցողութեանը։

Սեդրակ.— Միանում եմ Ագրաճիկի առաջարկութեանը։

Բարսեղեան միանում է Ագրաճիկի առաջարկութեանը եւ աւելացնում, որ իւրաքանչիւր հարցի համար առաջարկում է ընտրել 3 հոգուց բաղկացած մի մարմին։

Մալումեան.— Ընդհանուր Ժողովը ունի մի շարք հարցեր, որոնց իւրաքանչիւրի համար եթէ առանձին յանձնաժողով ընտրել ուզենք, մեր անդամները չեն բաւականանայ։ Այս դժուարութիւններից դուրս գալու համար հարկաւոր է այդ հարցերը որոշ կատեգորիաների բաժանել եւ իւրաքանչիւրի համար առանձին մարմին առեղծել։ Այս տեսակէտից դատական բոլոր գործերը մի առանձին կատեգորիա [տեսակ, դասակարգ] են ներկայացնում, ուստի եւ կարիք չկայ եւ դժուար է դրա համար մի քանի մարմիններ կազմել։

Նախագահ.— Բանաձեւում է երկու առաջարկները ա) Ագրաճիկի առաջարկը եւ բ) մշտական դատական մարմին ունենալու առաջարկը եւ խնդրում է պարզել, Թէ հրապարակի վրայ առ այժմ ի՞նչ խնդիրներ կան։ Պարզուում է, որ առ այժմ երեք դատական խնդիր կայ, որոնցից մէկը կարեւոր (Բալկանի խնդիր), իսկ միւսները անկարեւոր են։

Ժողովը որոշում է առ այժմ ընտրել երկու դատական մարմին, մէկը բաղկացած հինգ հոգուց՝ Բալկանի գործի համար, իսկ միւսը երեք հոգուց՝ հրապարակի վրայ եղած մնացած գործերի համար։ Բաց քուէարկութեամբ ընտրուեցան Բալկանի գործի համար, իբրեւ Դատական Յանձնախումբի անդամներ՝ Ագրաճիկ, Չաւրեան, Զոփուբեան, Սեպուհ եւ Ստեփանեան։

Նախագահը կարդում է տասը ընկերների առաջարկը՝ ընկեր Գարոյին ձայնի իրաւունքով ժողովի հրաւիրելու։

Ժողովը յարգում է վերոյիշեալ առաջարկը եւ միաձայն որոշում է ժողովի հրաւիրել ընկեր Գարոյին, ձայնի իրաւունքով։

Նախագահ.— Անցնելով օրակարգին, առաջարկում է Վասպուրականի շրջանի ներկայացուցիչ ընկեր Իշխանին կարդալ իւր տեղեկագիրը։

Իշխան.— Գտնում է, որ կարդալը անյարմար է, որովհետեւ ժամանակը կարճ լինելով, քննութեան ժամանակ չի մնայ։

Ագրաճիկ.— Տեղեկագիրը այժմ եւեթ չէ կարելի կարդալ, պէտք է սպասել մինչեւ մնացած ընկերների գալը, որովհետեւ կան այնպիսի հարցեր այդ տեղեկագրի մէջ, որոնց մասին լաւ կը լինէր, որ մեր բոլոր ընկերները իրենց կարծիքը յայտնէին։

Իոաստոմ.— Ժողովը բացուած է եւ ոչ մի օրինական հիմք չկայ տեղեկագիրը չկարդալու. եթէ կան բանաւոր տեղեկագրեր, մենք այդ կը պահենք մինչեւ ընկերների գալը. իսկ գեւտրները հենց հիմա կարող ենք կարդալ, որովհետեւ նորեկները միշտ հնարաւորութիւն կ'ունենան այդ տեղեկագրերի հետ ծանօթանալու։

Ժողովը որոշում է տեղեկագրերի ընթերցումը սկսել վաղուանից. իսկ առ այժմ զբաղուել մի քանի ընթացիկ հարցերով։

Նախագահ.— Քննութեան է դնում Օրակարգի վերջնական մշակումը։

Ժողովը որոշում է Օրակարգի մնացած կէտերը անփոփոխ թողնել, վերապահելով ժողովին իրաւունք՝ ի հարկին համապատասխան փոփոխութիւններ մտցնել։

Մի քանի ընկերների կողմից առաջարկուում է հետեւեալ բանաձեւը. «Ի նկատի ունենալով, որ ժողովի պարապմունքների ընթացքում կարող են ծագել այնպիսի հարցեր, որոնք Օրակարգով նախատեսուած չեն, բայց որոնց քննութիւնը կարող է լուրջ նշանակութիւն ունենալ՝ ժողովը վերապահում է իրեն իրաւունք, պապայում եւս օրակարգի մէջ մտցնել այնպիսի հարցեր, որոնք կը նկատուեն իբրեւ անյետաձգելի կամ քննութեան ենթակայ»։

Նախագահ.— Այդ հարցը ինքնըստինքեան հասկանալի է եւ առանձին քննութեան կարիք չկայ։

Ագրաճիկ.— Իւրաքանչիւր ժողովական կարող է, համաձայն իւր խղճի, նոր հարցեր մտցնել Օրակարգի մէջ եւ մենք չպէտք է արգիլենք այդ բանը։

Մալումեան գտնում է, որ վերոյիշեալ բանաձեւը կարեւոր նշանակութիւն ունի եւ հարկաւոր է, որ ժողովը որոշ կերպով արտայայտէ իւր վերաբերմունքը դէպի այդ առաջարկը։

Իսահակեան.— Վերոյիշեալ բանաձեւին իւր համաձայնութիւնը տալով, հետեւեալ լրացումն է առաջարկում. «Իւրաքանչիւր այդպիսի մի հարց ժողովի առաջարկել միայն այն ժամանակ, երբ նա կրում է առ նուազն տասը հոգու ստորագրութիւն»։

Բարսեղեան հարցնում է նախագահին, արդեօք Թոյլատրելի՞ է որ պատգամաւորները ժողովի պարապմունքների մասին տեղեկութիւն տան դուրսը Թէ ոչ։

Իոաստոմ.— Երբեմն հարկաւոր է լինում ընկերների հետ խորհրդակցել այս կամ այն խնդրի մասին. դէմ եմ արգիլելուն։

Միհնասեան հակառակ է մինչեւ պարապմունքների վերջանալը դրսի հետ յարաբերութիւն ունենալուն։

Իշխան ի նկատի ունենալով, որ եթէ ինքը պարբերական տեղեկութիւններ չտայ իւր ընկերներին՝ Վասպուրական, կարող է պատահել, որ նրանք Ընդհանուր Ժողովի մասին ամենեւին տեղեկութիւն չստանան եւ կամ շատ ուշ ստանան, խնդրում է իրեն Թոյլատրել որոշ հարցերի մասին տեղեկագրել։

Զարդարեան *միանում է Իոաստոմի կարծիքին։*

Իսահակեան.— *Այս ժողովում երկու կարգի խնդիրներ կան՝ այնպիսիները, որոնք անպայման գաղտնի պէտք է մնան եւ այնպիսիները, որոնք վաղը եւեթ հրապարակ պէտք է գան. երբեմն մարդ կարիք է զգում այս կամ այն խնդրի մասին խորհրդակցելու ընկերների հետ. խնդրում եմ Թոյլ տալ այդ անելու։*

Միհնասեան.— *Խորհրդակցութիւնը ընկերների հետ ոչ մի նշանակութիւն չունի, որովհետեւ մինչեւ նրանցից պատասխան ստանալը՝ մենք արդէն հարցը սպառած կը լինենք։ Եւ ո՞վ է որոշողը Թէ ո՞ր հարցն է գաղտնի եւ որը ոչ։*

Չելալեան *միանում է Մինասեանի կարծիքին։*

Ագրաճիկ.— *Խորհրդակցութեան նպատակով գրելը ոչ մի գործնական նպատակ չունի, որովհետեւ մինչեւ պատասխան ստանալը հարցը կը լմնայ, իսկ բարեկամներին կամ այլ ծանօթներին գրելու մասին խօսք անգամ լինել չէ կարող։*

Իոաստոմ.— Կան հարցեր, որոնք այնքան երկար ժամանակ կը տեւեն, որ նրանց մասին մենք կարող ենք իսկապէս խորհրդակցել մեր ընկերների հետ, ժամանակը կարող է պատահել, որ մենք այստեղ տեղեկագրից այնպիսի նորութիւններ իմանանք, որ մեր հայեացքների վրայ այս կամ այն ազդեցութիւնը կարող է ունենալ եւ մենք կարիք կը զգանք խօսելու այդ մասին մեր ընկերների հետ։

Մուրատ.— Երկիր կարելի է հաղորդել, իսկ ուրիշ տեղեր ոչ։

Ագրաճիկ.— Երկիր կարելի է հաղորդել միայն այն լուրերը, որոնք տուեալ տեղին են վերաբերում։ Ես ընդհանրապէս հակառակ եմ տեղեկութիւններ տալուն։

Սեդրակ *կողմնակից է, որ իշխանը իւր պատասխանատուութեան տակ իւր տպաւորութիւնները երկիր հաղորդէ. մեացեալ տեղերի համար անհոյլատրելի է համարում։*

Մալումեան.— *Առաջարկում եմ ոչինչ չգրել։ Այս տարի Ընդհանուր Ժողովի որոշումները մենք պէտք է հրատարակենք Ժողովի փակուելուց մի ամիս յետոյ ամենաուշը, ուստի խնդրում եմ ընկերներին, որ այդքան ժամանակ համբերութիւն ունենան։*

Ժողովը որոշեց՝ Ընդհանուր Ժողովի մասին դուրսը տեղեկութիւն կարելի է տալ միայն երկրի մարմիններին, իսկ դրսի ընկերներին եւ մարմիններին՝ ոչ։

8ՐԴ ՆԻՍՏ (26 Փետր., առաւօտ)

Նախագահում է Վռամեան։

Ներկայ են 20 ժողովականներ։

Մալումեան *յայտնում է ժողովին, որ Սաֆոյի պահանջած թղթերը ստացուած են եւ առաջարկում է դիւանին կարգադրել այդ դոկումենտները [փաստաթուղթերը] յանձնել Սաֆոյին։*

Իշխան *կարդում է Լեռնապարի տեղեկագիրը։*

Ընկեր **Իշխանը** կարդում է Լեռնապարի տեղեկագիրը։ Սկսելում ընկերը կանգ է առնում տեղի աշխարհագրական դիրքի վրայ, ապա բաւական երկար ծանրանում է տեղի ապգաբնակութեան վրայ։ Հայերը մեծամասնութիւն են կազմում, զբաղւում են երկրագործութեամբ եւ շատ փոքր չափով՝ խաշնարածութեամբ։ Ժողովուրդը բաժանւում է դասակարգերի — ա) հողատէրերի, որոնց սեփականութիւնն է բոլոր հողը. բ) անհող եւ մշակութեան միջոցներ ունեցող գիւղացիներ, որոնք առաջիններից կապալով են վերցնում հողը եւ եկամուտի որոշ մասը նրանց տալիս եւ գ) հողից ու արդիւնաբերութեան այլ միջոցներից զրկուած գիւղացիներ, այսպէս կոչուած մարաբաներ (կամ միրաբաներ), որոնք հողատէրերի մօտ աշխատում են ամբողջ ընտանիքով՝ դրա փոխարէն ստանալով բնակարան, հագուստ եւ սննունդ, ուրիշ ոչինչ։ Հայերի մէջ խաշնարածութիւնը սահմանափակ է աշիրէթների պատճառած անհանգստութեան եւ անապահովութեան պատճառով։ Հայերը զբաղւում են նաեւ շալագործութեամբ եւ պանդխտում են մօտակայ քաղաքներ՝ աշխատանքի։ Քրտերի գլխաւոր զբաղմունքն է երկրագործութիւնը եւ խաշնարածութիւնը. պարապում են նաեւ փոխադրութեամբ։ Սրանց մէջ կան նոյն դասակարգերը, ինչ որ հայերի մէջ։ Սրանց մարաբաները աւելի թշուառ են, որովհետեւ ամբողջապէս կախուած են հողատէր ապնուականների քմահաճոյքից։ Աշիրէթների գլխաւորները՝ բէգերը երկրի հողատէր եւ արտօնեալ դասակարգն են, կառավարութեան կողմից հովանաւորուած։ Սրանք բռնութեամբ կամ դրամի ուժով տիրացել են հողերին։ Նստակեաց քիւրտերի յարաբերութիւնը լաւ է հայերի հետ, թէեւ երբեմն սրւում է արհեստական կերպով շնորհիւ նրանց հոգեւորականութեան, որը կառավարական ագէնտների դեր է կատարում։ Քրտերի ապրեցութիւնը սկսել է ուժեղանալ 1896 թուի դէպքերից յետոյ, երբ կառավարութիւնը նրանց միջոց տուեց անարգել ճնշումներ գործադրել։

Լքման եւ յուսահատութեան հասունացած այդ շրջանում մտնում է յեղափոխական գործը, որ մի նոր վերածնական շրջան է բաց անում Վասպուրականի հայութեան համար։ Սկսրում գործը ամփոփում է շատ նեղ շրջանակում. մի անգամ կոտորուած հայութեան համար ռիսկ էր դիմել յեղափոխութեան. սակայն սիստեմատիկ տնտեսական ու քաղաքական հալածանքները շուտով կերպարանափոխում են այդ բացասական ու հակառակ տրամադրութիւնը։ Գիսակի մի քանի տարիների անդուլ աշխատանքը իսկապէս չի տալիս սպասուած արդիւնքը, բայց նա ուժեղ կերպով կոտրում է րէակցիայի թափը եւ գործի հիմք դնում։ 1903 թուից սկսւում է Վասպուրականի յեղափոխական ներկայ գործի սկզբնաւորութիւնը։ Այդտեղ կար մի թոյլ Մարմին, որը ընթացք էր տալիս գործին. լոկ խօսքի, պրոպագանդի շրջան։ Գործը իւր սկզբնական շրջանում տարւում էր միմիայն ինքնապաշտպանութեան հիմքով, առանց ինքնօգնութեան գադափարի։ Սկզբում ժողովուրդը, որ տրամադիր էր կարծելու, թէ մենք միայն ժամանակաւոր հիւրեր ենք եւ մի երկու ամսից յետոյ կամ պիտի կոտորուենք կամ հեռանանք երկրից, առանց բացառութեան համակրում էր մեզ, մանաւանդ որ դեռեւս ոչ մի իրական գործ չկար։ Իսկ շատերն էլ կարծում էին, թէ Ռուսաստանից հսպարների բանակներ պիտի գան իրենց փրկելու։ Կար եւ մի ուրիշ խթան նրանց դէպի յեղափոխական գործը մղելու՝ **վախը**։ Բայց երբ, ի ցաւ բոլորի, յեղափոխական գործը երկարեց եւ տեսականից անցաւ նիւթական գործողութիւնների, այն ժամանակ մեր համայնական շարքերը սկսեցին նօսրանալ։ Ինքնապաշտպանութեան պրոպագանդը փոխուեց ինքնապաշտպանութեան ձեռնարկների, վինման հարցը մուտք գործեց ասպարէզ, իսկ պրոպագանդն էլ աւելի առաջ գնաց։ Զինման հետ զուգընթացաբար առաջ գնաց եւ ուրիշ՝ ինքնապաշտպանութեան մղող քարոզներ՝ խաղաղ կռիւ ընդդէմ հարբուտահարող դասակարգերի, ընդդէմ գիւղական «կուլակների»ի, վաշխառուների. դեռ էլ աւելի՝ ընդդէմ աւատապետների քմահաճոյքին. եւ այդ ժամանակ շատ նօթեր կիտուեցին (դիպուեցին?) եւ շատ քիթ ու մռութ ծըռմըռուեցին մեզանից։ Բայց այդ անբաւական տարրը ան-

կարող էր հեռանալ մեկանից. **վախը** կապում էր նրանց մեկ հետ: Կարող ուժերի բացակայութեան պատճառաւ, պրոպագանդը բնականաբար առաջ էր տարւում շատ թոյլ ու անգոյն, այդ պատճառով անհնար էր լինում ստեղծել զուտ յեղափոխական գործ: Հարստահարող դասակարգը առերես համակրանք էր ցոյց տալիս մեր հակավաշխառուական գործունէութեան, մտածելով մեկ ամփոփել իւր ձեռքերի մէջ եւ գործածել յօգուտ իւր շահերին: Դրա համար նրանք անում էին մեծ-մեծ կոմպրոմիսներ եւ մի ժամանակ մեր բանակների յոխորտացող մասն էին կազմում: Բայց երբ անվերջ փաստերը հիասթափեցրին նրանց, տեսան, որ մենք յօգուտ հարրըստահարուող տարրերի պատրաստ ենք անվերջ կըռւել նրանց հետ, նրանք սկսեցին կասկածանքի եւ անհանգստութեան նշաններ ցոյց տալ: Նրանց վերաբերմունքի հետ փոխուեց և աշխատաւոր ու հարստահարուած ժողովուրդի վերաբերմունքը, որքան հեռու էին զգում իրենց մեկանից հարստահարողները, այնքան աւելի մօտենում էին հարստահարուածները: Առաջինների մի մասը դիմաւորուեց արմենականութեամբ, մի մասը հեռաւոր համակրող հանդիսացաւ, իսկ միւս մասը համակուած վախով՝ մնաց մեր շարքերում, անբաւական մեկանից:

«Գործնական պրոպագանդը կոտրեց քիւրտ տիրապետութեան թափը: Դէպքից յետոյ հայ ժողովուրդի գըլխին ստեղծուած երկրորդ կառավարութիւնը իր լայնլայն պահանջներն էր ասպարէզ հանել, որոնց ենթարկըւում էին հայերը: Աղան հսկայական ապօրինի տուրքեր էր յօրինել. ամէն մի հայ պարտաւորւում էր իր տարեկան բերքից բաժին հանել աղային, սկսած ամենատարրականից մինչեւ ամենախոշորները: Բացի դրանից ամէն մի հայ պարտաւորւում էր տարեկան չորս իսլամական տօներին սկսած 50 ղրուշից մինչեւ 2 ոսկու նուէրով այցելել աղա-բէյին: Այդ բոլորից զատ, ամիսը մի գիւղ պարտաւորւում էր տարեկան 10-20 օր ձրի աշխատութեան գնալ եւ քառասնապատիկ թանգ գընով գիւղին պահապան վարձել աղայի ապգականին կամ նրա ցանկացած քրտին: Աղան խառնուում էր եւ ընտանեկան ներքին խնդիրներում. նրա ձեռքն էր ամփոփուած դատավարութիւնը, որի պատճառով նա հսկայական տուգանքներ էր քամում հայերից: Պրոպագանդը ինքնագիտակցութիւն կարթեցրեց հայերի մէջ, եւ խաղաղ կռուով կամաց-կամաց վերջ տրուեց դրանց. այդ բանում մանաւանդ հակահարուած հանդիսացաւ յեղափոխական դատարանները, որոնք համերաշխ հողի վըրայ արդարութեամբ վերջ էին տալիս բոլոր խնդիրներին, առանց թոյլ տալու շահագործուելու աղայից: Այդ կողմնակի տուրքերի, հարստահարութեան եւ կեղեքման վերանալը արդէն ուժեղ ապդակ եղաւ յեղափոխական տրամադրութեան կարթման եւ ժողովրդի բարեհաճ վերաբերմունքին դէպի մեզ: Չի կարելի ասել, որ այնտեղ մենք ունենք միանգամայն պատրաստուած յեղափոխական ժողովուրդ. բայց նա անցել է յեղափոխական նախապատրաստութեան ֆազը, եւ միայն ժամանակի ընթացքում պէտք է նրա յեղափոխական աշխարհահայեացքը ամրանայ եւ ստեղծուի իսկական յեղափոխական հասկացողութեամբ ժողովուրդ, որի վրայ ապագայ գործողութիւնների ժամանակ կարելի լինի վստահօրէն յենուել: Շատ քիչ է յեղափոխական կազմակերպութիւն եւ տրամադրութիւն ունենալը, անհրաժեշտ է եւ յեղափոխական աշխարհահայեացքը: Մեր կազմակերպութեան մէջ դեր է խաղում եւ **վախը**, եւ գուցէ աւելի ուժեղ դեր: Բայց դա առաջացել է կանոնական անակնկալներից եւ երեւոյթների թիւր ըմբռնումից. սա կամաց-կամաց կ'անհետանայ ի հարկէ. դա նրանից է որ մենք ստեղծել ենք յեղափոխական կառավարութիւն. բնականաբար եւ ակամայ տեղի են ունենում այնպիսի պատահարներ եւ դէպքեր, որ ծնեցնում են վախը: Վերջերս լուրջ կերպով Ռայոնական Ժողովը վբաղուեց Կուսակցութիւնը ոչ-յեղափոխական տարրերից մաքրելու խնդրով. որովհետեւ կարող էր այսպիսով Կազմակերպութիւնը մի օր ներսից պայթել. դրա համար միջոցներ ձեռք առնուեցին վերացնելու վախի կոշմարը, որով հնարաւորութիւն տրուի իրենց շահերով մեկ հակադիր տարրերին հեռանալու Կազմակերպութիւնից, եւ ոչ թէ վախից դրդուած մնալու նրա մէջ»:

Ապա ընկերը անցնում է նկարագրելու ինքնապաշտպանութեան գործի կազմակերպութիւնը, որի համար իբրեւ սկզբունք ընդունուած է՝ սկզբնական միջոցներով, իբրեւ համայնական սեփականութիւն, ձեռք բերել ինքնապաշտպանութեան միջոցներ, որոնք գտնուում են ղեկավարող մարմինների տրամադրութեան տակ, կարեւոր դէպքում ինքնապաշտպանական նպատակով գործադրելու համար: Ապա անցնելով զուտ կազմակերպչական մասի ընդհանուր նկարագրութեան, ընկերը յետոյ կանգ է առնում իւրաքանչիւր գաւառակի եւ շրջանակի գործունէութեան, կազմակերպական վիճակի եւ յեղափոխական մակերեւոյթի վրայ:

«Ժողովուրդի տրամադրութիւնը միանգամայն հաւասար է դէպի խաղաղ գործունէութիւնը, եւ միշտ մեկանից պահանջում են գործել այդ ուղղութեամբ. նրանք միանգամայն հակառակ են վաղահաս ձեռնարկների. նրանց տրամադրութիւնն է որքան կարելի է լաւ պատրաստուած ասպարէզ դուրս գալ: Մեր գործունէութիւնը բաւական կրթիչ ազդեցութիւն է ունեցել եւ քիւրտ խաղաղ տարրի վրայ: Հարստահարող աղաների, վաշխառուների հետ ունեցած մեր բախումը այնքան տպաւորիչ էր, որ նոյնիսկ մի քանի գիւղերից առաջարկներ ենք ստացել՝ իրենց մէջ գնալու եւ իրենց կազմակերպելու, սակայն այդ առաջարկը մեզ ոչ մի ապահովութիւն չի ներշնչել: Մասնաւոր յարաբերութիւններ ենք ունեցել մի քանի աղաների հետ. նրանք ձգտել են կամ հայ գիւղերում իրենց շահերը ապահովելու, կամ փէշքէշ ստանալու: Նրանք ձգտել են նաեւ մեր դաշնակցութեանը իրենց հակառակութիւնների մէջ՝ կառավարութեան դէմ, կամ այլ ընդհարումների դէպքում՝ իրենց հակառակորդներին խարապանելու մի ուժեղ ձեռք ունենալու նպատակով»:

5 րոպէ ընդմիջումից յետոյ սկսուում են խօսակցութիւնները:

Մաշտոց.— *Ինդրում եմ բացատրել թէ ի՛նչ դրութեան մէջ էր երկիրը կոտորածից առաջ եւ ի՛նչ փոփոխութիւն է կրել ներկայումս:*

Շահխաթունեան.— *Հողատէրերը քանի՞ տոկոս են կազմում, մարդագլուխ ի՞նչքան հող է գալիս. մարքանների համար՝ հող ձեռք բերելը հողատէրերի՞ց է կախուած. եւ կարո՞ղ են մարքանները անցնել հողատէրերի չարքը:*

Անդրանիկ.— *Ընդհանուր դրութիւնը ամէն տեղ մէկ մէկու նման չէ, Սասուն–Մուշ, Դիարբեքիր ու Բուլանուղ մարքանչ չկայ, ամէնքն ալ հող ունեցած են. եթէ հողերը ծախել են, այդ միայն հայերը իրար մէջ, բարեկամը բարեկամին. իսկ վասպուրականում հողագործներուն հողից զրկողը ես համարում եմ կառավարութիւնը, որ նեղել է հայերին որոնք տեղի են տուել, եւ հողերը գրաւել են հայդարանցիք, սիպկանցիք եւ ջալալցիք:*

Իշխան.— *Մինչեւ կոտորածները վասպուրականում հայերը բաւական բարեկեցիկ են եղել. եղել են տներ, որ 120–500 ոչխար են ունեցել: Դէպքերի ժամանակ քայքայուել են, մանաւանդ այն տեղերը, ուր կազմակերպութիւն չէ եղել. յեղափոխական գործը կենտրոնացած է եղել միայն Վան քաղաքում, արմենականների չնորհիւ: Մինչեւ դէպքերը քրտերը մեծ ազդեցութիւն չունէին, իսկ յետոյ խրախուսուած կառավարութիւնից, նրանք անարդել գրաւում են հայերից հողերը:*

Խահակեան.— *Ձկա՞ն ուրիշ պայմաններ, որ առաջ են բերում վաչխառութիւնը, բացի սովորական տուրքերից: Ի՞նչ դրութեան մէջ է վաճառականութիւնը:*

Ռոստոմ.— *Ի՞նչ փողի աղբիւրներ ունի Լեռնապարի ժողովուրդը:*

Իշխան.— *Վաճառականութիւն՝ բառի իմաստով Լեռնապարում չկայ, պարզ ապրանքների փոխանակութիւն. ներմուծութիւն չկայ. արտահանում են հում նիւթեր, ոչխար, բուրդ, դիւժ. տնայնագործութիւնը, որ առաջներում այնքան զարդացած էր եւ մի օգտաւէտ պարապմունք էր համարուում (ինչպէս չալ գործելը), չնորհիւ Դիարբեքիրից եկող վաճառականների, որ իրենց հետ բերին դրամը, քանկացաւ բուրդը, արտահանութիւնը ազդեց դների վրայ: Ներկայումս այդ արտահանութիւնը վաչխառութեան մի նոր ձեւն է. վաչխառուներից ժողովուրդը ձմեռը դրամ է վերցնում, ամառը բուրդով վճարելու պայմանով. Թէ՛ արտահանութիւնը եւ Թէ մթերքների փոխանակութիւնը ազդեցին տնայնագործութեան վրայ. պարապ ձեռքերը դիմում են պանդխտութեան, գործում են ինչ չափով միայն իրենց տնային պահանջներին բաւարարութիւն է տալիս: Իսկ կանանց հագուստները բերում են Դիարբեքիրից: Շատախցիները փող են ձեռք բերում ածխավաճառութիւնից, իսկ ծովեզերեայ տեղերում նաւավարութեամբ են զբաղուած, որը որոչ արդիւնք ունի: Մոկը զաղթականներ եւ պանդուխտներ շատ ունի Իզմիածին եւ Բաղու, որտեղից եւ ստանում են իրենց ապրուստի միջոցները. հող չատ քիչ ունեն եւ չեն օգտըւում. լեռնոտ տեղերում հողի պակասութեան պատճառով պարապում են անասնապահութեամբ, իսկ դաշտային տեղերում բաւական բարեկեցիկ են. իրենց բերքերի վաճառումից դրամ են ձեռք բերում:*

Սեպուհ.— *Համեմատելով կոտորածից առաջուայ միջակ հայ գիւղացիների կարողութեան հետ, այժմ չատ անմխիթար եմ գտնում:*

Զարդարեան.— *Կը խնդրենք Վասպուրականում տեղի ունեցող սովի մասին տեղեկութիւն տաք. ինչի՞ց առաջ կու գայ սովը:*

Իշխան.— *Սովը ընդհանրապէս, վերջին տարիներս քրոնիկական կերպարանք է առել լեռնային գաւառներում, որովհետեւ լեռնային գաւառները առաջներում ունէին չարժման լայն միջոցներ, նրանց համար համարեա բաց էին գոնէ նեբսի՝ Տաճկաստանի ներքին նահանգների աշխատանքի դռները, որոնք ներկայումս փակուած են: Տեղական աշխատանքը անկարող է լինում բաւարարութիւն տալ նրանց պահանջներին. իսկ դրա փոխարէն աւելանում են կառավարչական տուրքերը, որոնց բաւարարութիւն տալու համար նա ստիպուած է լինում սպառել իւր բոլոր ապրելու միջոցները. սրան մեծ զարկ է տալիս Տաճկաստանի յայտնի վաչխառուական մեթոդը — սարաֆութիւնը: Իսկ վերջին տարուայ սովը հետեւանք է անբերութեան:*

ՑՐԴ ՆԻՍՏ (26 Փետր., երեկոյ)

Նախագահում է Վահեան:

Ներկայ են 19 *ժողովական*:

Բացակայ է Սաֆո:

Վահեան.— *Մանուկներ քննող յանձնաժողովի կողմից զեկոյց ընդունուի պատգամաւոր Սիբական Բոյանճեանի պատգամաւորական իրաւունքի մասին՝ յանձնաժողովի քննութեան հետեւանքը, որ հետեւեալն է.*

«1.— 1906 *Թուի Օգոստոս 26ին Ալեքսանդրիոյ, Գահիրէի եւ* .....(5) *ենթակոմիտէներից չորքանչրեն ժողով են գումարել եգիպտոսի Կոմիտէ ընտրելու, այդ ժողովի մէջ էլ ընտրում են Ընդհանուր ժողովի պատգամաւոր. արձանագրութեան մէջ ընտրուածի անունը չէ յիշուած:*

2.— *Մի նամակով, Դեկտեմբեր 26, 1906ին Գահիրէի Կոմիտէն կը բողոքէ կոմիտէական ընտրութեան դէմ եւ չի ճանչնար Շրջանային ժողովի օրինականութիւնը:*

3.— *1907ի Յունուար 12ին եգիպտոսի Կոմիտէն պաշտօնական հրաժարական է տալիս:*

4.— *1906ի Փետրուար 2ին հրաժարուած կոմիտէի երկու անդամի ստորագրութեամբ, եգիպտոսի կոմիտէական բլանկի [ապագրուած պաշտօնաթուղթ] վրայ, վկայական կու տան Սիբական Բոյանճեանին, իբրեւ պատգամաւոր Ընդհանուր ժողովի:*

5.— *Եգիպտոսի Ծանօթ ընկեր եփրեմեանը (6) Յունուար 12ին Ալեքսանեան Բիւրոյին ուղղած մի նամակում խնդրում է Հ. Յ. Դաշնակցութեան պատիւը փրկելու համար յորդորել եգիպտոսում օրէնք դաշնակցական մարմնի գոյութիւն չունենալը:*

Քննելով այս փաստաթղթերը, եւ աչքի առաջ ունենալով նաեւ ցեղի վերաբերեալ Կանոնագրութեան կէտը՝ եւ անձամբ հարցափորձ անելով Սիբական Բոյանճեանը՝ եկանք այն եզրակացութեան, որ նա չէ կարող օրինական պատգամաւոր համարուել Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովին եգիպտոսի կողմից»:

Այդ հարցի առթիւ տեղի է ունենում կարծիքների փոխանակութիւն եւ ժողովը որոշում է Սիբականին չճանչել իբրեւ պատգամաւոր, այլ օգտուելով նրա ներկայութիւնից հրաւիրել տեղեկութիւններ տալու Լեռնավայրի մասին, միայն այն նիստում, երբ այդ հարցը կը դրուի քննութեան:

5 րոպէ ընդմիջումից յետոյ նիստը վերաբացուեց անցնելով Լեռնապարի տեղեկագրի քննութեան:

Շախաքունեան.— *Իսահակեանը հարց տուեց թէ ինչերի՞ց է առաջ դալիս վաչխառութիւնը. ես էլ կըրկնում եմ, աւելացնելով՝ եթէ կայ վաչխառութիւն դա մի անհրաժեշտութիւն է. եթէ կուզում էք նրա դէմ, ի՞նչ էք տալիս նրա փոխարէն. ուրիշ երկիրներում կան ընկերութիւններ եւ բանկեր. արհեստական միջոցներով դուք կարող էք ժամանակաւոր կերպով դադարեցնել եւ ոչ վերացնել:*

Մինասեան.— *Վասպուրականում կայ կառավարական բանկ [պանք, դրամատուն]. ժողովուրդը այլեւս կարող է թողնել վաչխառուին. նա այժմ դիմում է բանկին եւ 10%-ով կարողանում է վերցնել. այդ հանգամանքը նպաստեց եւ վաչխառուների տրամադրութեան վրայ աղդելով, որոնք պակասեցրին տոկոսները. ժողովուրդը անհրաժեշտ դէպքում դարձեալ դիմում է վաչխառուին, բայց վերցնում է պակաս տոկոսով:*

Զարդարեան.— *Մի՞թէ բանկը առանց անչարժ կալուածի գրաւականի դրամ կու տայ:*

Իշխան.— *Բանկը բաց է թողնում փողը անչարժ կալուածի գրաւականով. կառավարութիւնը կարող է գրաւել, եթէ ժամանակին չվճարուի պարտքը: Մենք աշխատել ենք ժողովուրդի միջոցներով մի այդպիսի բանկ կազմակերպել՝ բայց չէ յաջողուել: Մարաբաները անպամ կարողանում են բանկից դրամ վերցնել, հարեւանի հողը դրաւ դնելով. մենք հեշտացրինք այդ գործը. չէ պատահել, որ կառավարութիւնը գրաւէր այդ հողերը կամ ծախէր պարտքի տեղ:*

Անդրանիկ.— *Այո, վաչխառութիւն կայ երկրում, եւ դրանով շատ է ճնշուում ժողովուրդը. սակայն նըկատելու եմ, որ կան եւ շատ բարեհոգի քահանաներ, որոնք թէեւ անդրագէտ, բայց թէղբէհներով հաշուում են եւ մեղք են համարում գիւղացու կոպեկները սեփականացնել. այս բանը մոռանալու չենք:*

Իսահակեան.— *Հայ վաչխառուները ոչ հայ վաչխառուների քանի՞ տոկոսն են կազմում:*

Իշխան.— *Հայ վաչխառուները ոչ հայերի շատ քիչ տոկոսն են կազմում. նկատուում է, որ հայ ունեւոր դասակարգը քայքայւում է եւ դնում դէպի գաղթ, ինչպէս վերջերս լեռնային կողմերից դէպի Արաղայի դաշտը, ուր 15 տարի առաջ մեծ հայութիւն կար:*

Մինասեան.— *Ես կարծում եմ, կառավարութիւնը հայերին աշխատում է լեռնային ամուր դիրքերից հանել՝ վախենալով ապստամբութեան հեռանկարից եւ խրախուսում է գաղթը դէպի դաշտը:*

Իշխան.— *Ամենաէական պատճառը ես համարում եմ սակաւահողութիւնը եւ լեռնային քիւրտ աշիրաթների ճնշումները, որից հաւասարապէս մնասուում են ինչպէս հայերը, այնպէս էլ նոտակեաց խաղաղ քիւրտերը:*

Զարդարեան.— *Ձեր տեղեկագրի մէջ յիշած էիք, որ դասակարգային կռուի հնարաւորութիւն չկար, խնդրում եմ յայտնէք, որպիսի՞ տեղեկութիւններ էք հաւաքած, պատճառն ի՞նչ էր որ հնարաւորութիւն չկար, թէ կ'ուզէք ասել հո՞ղ չկար:*

Իշխան.— *Դասակարգային հողի վրայ պրոպականդ չէ եղել, իմ յիշածը միայն վաչխառութեան մասին է, դասակարգային պրոպականդի մասին մոռածելու ժամանակ չենք ունեցել, մեր նպատակն է եղել ժողովուրդին պատրաստել քաղաքական կռուի, տնտեսական կռուի համար մի դրական հող չէ եղել մշակուած եւ այդ ուղղութեամբ մի բան չէ ձեւակերպուած. օժանդակել ենք ինքնապաշտպանութեան գործին:*

Ռոստոմ.— *Մարաբաներն էլ մասնակցո՞ւ են, որեւէ ձեւով, զինման գործին:*

Իշխան.— *Այո, մարաբաներն էլ մասնակցել են 40 փարա տուրքով, որովհետեւ դա պարտադիր է եղել: Ինքնապաշտպանութեան գործում միացած են թէ մարաբա եւ թէ հողատէրը, — ինչպէս ասել եմ տեղեկացրում:*

Ռոստոմ.— *Հողատէրերն ու մարաբաները քանի՞ տոկոս են կազմում. կա՞ն այնպիսի դիւղեր որոնց եկամուտն ստանայ ամբողջ աշիրաթն, թէ ստանում է միայն ցեղապետը:*

Անդրանիկ.— *Դէրէբէյութեան ժամանակներից մընացած սովորութիւն է, որ բէկի ժառանգները մի մի տէրեր են իրրեւ ժառանգներ:*

Իշխան.— *Վասպուրականի դաշտային դաւառներում գիւղերի 70%-ը համայնքինն է, հողատէրեր՝ 20%, մարաբաներ՝ 10%. լեռներում՝ հողատէրեր 50%, այլ հողեր՝ 30%, մարաբաներ՝ 10%:*

Այն օրուանից (դէպքից յետոյ) երբ յեղափոխականները մուտք գործեցին, քիւրտ բէկերի ազդեցութիւնը ընկաւ եւ այժմ լեռնային տեղերում, հայերը քիւրտերի պերիչխանութիւնը չեն ճանաչում. քրտերի մէջ բնակած հայերը լաւ կազմակերպուած չեն, եւ այդ տեղերը նրանք ենթակայ են այս կամ այն քիւրտ աղային. շատ տեղեր հողային կախում ունեն, ինչպէս Գեաւաչի գաւառում: Իսկ Շատախում, դէպքից թէ առաջ եւ թէ յետոյ, որեւէ կախում չեն ունեցել քիւրտ աղաներից: Սպարկերտ, Խիզան տուրք են տալիս, չնորհիւ այն հանգամանքի, որ չրջապատուած են հոծ քրտական աղգաբնակութիւնով, այնու ամենայնիւ կազմակերպութիւնը այստեղ մուտք է գործել շատ զգալի կերպով: Լեռնային մասերում՝ Հայոց Ձոր, Թխմոր՝ հայերը աղքատ են եւ ոչ մի կախում չունեն այս ու այն բէկից:

Մինասեան.— *կրթական գործը ի՞նչ դրութեան մէջ է Լեռնապարում. հոգեւորականներն ու վանքերը, որ անցեալում մեծ դեր են խաղացել մեր կեանքում, ներկայումս ի՞նչ դեր են կատարում:*

Իշխան.— *կրօնականների եւ վանքերի դրութիւնը շատ ապահով է: Նրանք այժմ ոչ մի դեր չեն խաղում:*

Վանքերը բաւական հարուստ են. Աղթամարի կալուածները, որ առաջներում կամ վարդապետների ազգականներն են չահագործել կամ հողերի մեծ մասը այս ու այն քիւրան է վերցրել կապալով՝ յօդուտ վանահայրերի անձնական դրպանի, ներկայումս դաշնակցական ընկերների չնորհիւ կառավարում են ժողովուրդից ընտրուած հոգաբարձուներով. այդ եկամուտներով պահուում է փառաւոր դպրոց, որ վերջերս մեր ջանքերով չինուեցաւ Աղթամարում, որտեղ պատսպարուած են 60 որբեր: 7 ուսուցիչներ կառավարում են դպրոցը: Ամէն 30 տնից աւել դիւղում կայ դպրոց, ուր սովորում են հասարակ դրագիտութիւն. ուսուցիչները ստանում են 600 դրուշ: Ուսուցիչները սովորած են վանայ միսիոնարների դպրոցներում: Շատախում դըպրոց կայ՝ 400 սաներով, 110 ոսկի բիւտճէով: Մոկսում չորս քաղեր միացած պահում են մի ուսուցչարան: կարկառի մէջ կայ 2 դպրոց: Խիզանում, որի չրջանում դրպէտները մեծ տոկոս են կազմում առհասարակ, Ջանչեանի հաշուով պահուում էր որբանոց U. Խաչի վանքում: կարճկանում, Վանայ առաջնորդարանի եւ Աղթամարայ սուրբ հայրերի անհոգութեան պատճառով, դպրոցներին ուշք չէր դարձուած: վերջերս մեր ջանքերով Նարեկ եւ Աղթամար միացան եւ երկու վանեցի ուսուցիչ բերելով բացինք որբանոց 20 որբերի համար:

Զայիեր.— *կառավարութիւնը չէ՞ միջամտում դըպրոցական գործերին:*

Իշխան.— *Մինչեւ վերջերս կառավարութիւնը չէ միջամտել մեր դպրոցական գործերին, նոյնիսկ հայոց դպրոցներին տալիս է եղել քիւրքերէն լեզուի ուսուցիչ (խոջա), որ միայն ամսական կ'առնէր: Սակայն նոր օրէնքով, այսուհետեւ հայերը ուսումնարաններ չեն կարող բանալ: Ի լրումն այս բոլորի աւելացնեմ, որ մեր ջանքերով բացուել է մի գրադարան 3–400 կտոր գրքերով, ուր առացուում են նաեւ յեղափոխական թերթեր:*

Նիստը փակւում է:

10ՐԴ ՆԻՍՏ (27 Փետր., առաւօտ)

Ժողովը բացուեցաւ, նախագահութեամբ Վռամեանի եւ քարտուղարութեամբ Զարդարեանի: կարդացուեց 8րդ նիստի արձանագրութիւնը եւ հաստատուեց:

Նիստը բացման ատեն բացակայ էին ընկերներ՝ Սաֆօ, Վահագն եւ Մտեփան:

Օրակարգն էր՝ շարունակութիւն Լեռնապարի տեղեկագրի քննութեան:

Իսահակեան.— *Հայ հոգեւորականութիւնը Լեռնապարի մէջ պահպանո՞ւմ է արդեօք ներգործական ազդեցութիւն հասարակութեան վրայ, եւ ինչքա՞ն ուժեղ է ժողովրդի կրօնական եւ ազգային գիտակցութիւնը:*

Իշխան.— *կրօնական զգացումը այնքան ուժեղ չէ այլ մարդոց մէջ, մինչդեռ ընդհակառակն է կիներուն համար, որոնց մէջ վառ են տակաւին նոյնիսկ հեթանոսական չրջանի հաւատալիքները: Ամէն պարագայի՝ կրօնական զգացումը առհասարակ զօրաւոր է:*

Նախագահ.— *Ժողովուրդը ի՞նչ վերաբերում ունի դէպի կաթոլիկ կամ բողոքական միսիոնարները:*

Իշխան.— *Այս մարդոց վերաբերմունքը զուտ տնտեսական հաշիւների վրայ է հիմնուած. դէպքերէն եառ միսիոնարները նպաստներ բաշխեցին հայերու, այն օրէն, որ այդ նպաստը դադրած է, միսիոնարներն ալ կորսնցուցած են իրենց կարեւորութիւնը: Իսկ կիները չափազանց խորական են եւ ոչ մի համակրութիւն ցոյց տուած են միսիոնարներուն:*

Նախագահ.— *Արդեօք կաթոլիկութիւնը տարածո՞ւած է Լեռնապարի մէջ:*

Իշխան.— *Այո, դէպքերէն եառքը բաւական տարածուած էր ինչպէս ըսի, նպաստներու հետեւանքով, բայց չկրցաւ հիմ բռնել, հակառակ անոր որ կաթոլիկ վարժարաններ ալ բացին: Այսօր այլեւս ոչ մէկ ազդեցութիւն ունին: Գալով մեր հոգեւորականներու ներգործական դերին՝ ան աւելի քաղաքական հանգամանք ունի, քան կրօնական:*

Ջոփուրեան.— *կաթոլիկ վարժարանները քա՞ց են դեռ եւս եւ կը չարունակե՞ն արդեօք:*

Իշխան.— *Բաց են. բայց անոնց թիւը համեմատաբար քիչցած է, ինչպէս որ անոնց պարունակած հայ աշակերտներուն թիւն ալ չատ աննչան, որովհետեւ մեր վարժարանները արգելք են անոնց:*

Նախագահ.— *Բողոքականները վարժարան չունե՞ն Լեռնապարի մէջ:*

Իշխան.— *Բողոքական վարժարանները Վանի չըրջակաները ծաւալ ունեն, մեր կողմերը՝ ոչ:*

Իսահակեան.— *Լեռնապարի հայերու ազգային ըմբռնումը չէ՞ բացակայած:*

Իշխան.— *Ազգային զգացումը ուժեղ է, որովհետեւ չրջապատող օտար ցեղերու մշտական ընչաքաղցութիւնը, յոտնդր եւ հակառակութիւնները մղած են հայերը աւելի սերտ կերպով փարելու միմեանց:*

Զաւրեան.— *Տեղեկագրին մէջ ոչինչ ըսուած չէր հայերու եւ քիւրտերու ունեցած տնտեսական, քաղաքական եւ ընկերային յարաբերութեանց մասին:*

Ջոփուրեան.— *Այս հարցին անցնելէ առաջ՝ հասկանալ պէտք է, թէ քիւրտերու ազդեցութիւնը որքա՞ն զգալի է հայերու ընտանեկան եւ ազգային կեանքի վրայ:*

Իշխան.— *Ուր որ հայ բնակչութիւնը անխառն է, հոն քիւրտերու ազդեցութիւնը զգալի չէ, մինչ այն տեղերը, ուր հայը փոքրամասնութիւն կը կազմէ քրտական համայնքներու մէջ, օրինակ Շատախի եւ Մոկսի մէջ, հոն այդ ազդեցութիւնը զգալի է. միայն կրօնական ըմբռնումը ազատ է որեւէ ներգործութենէ:*

Վերջապէս, քիւրտերու մէջ փոքրամասնութիւն կազմող հայերու ազգային տրամադրութիւնը Թուլցած է:

Զոփուրեան.— Հայ լեզուն ալ նոյն ներգործութիւնը կրա՞ծ է:

Իշխան.— Լեռնապարի մէջ՝ ոչ:

Նախագահ.— Հայերն ալ քիւրտերու վրայ փոխադարձ ազդեցութիւն ունի՞ն:

Իշխան.— Ընդհանրապէս ոչ, որովհետեւ քիւրտը աւելի անկախ է եւ բնականաբար կրաւորական վիճակի հետու: Միմիայն այն վայրերը, ուր հայերը համեմատաբար հոծ մասը կը կազմեն բնակչութեան, հոն մասամբ հայերու ազդեցութիւնը զգալի է քիւրտերու վրայ:

Չելալեան.— Հայերու վրայ քրտական ներգործութիւնը բռնութեան հետեւանքո՞վ է, թէ ուրիշ պատճառներով:

Իշխան.— Տնտեսական եւ քաղաքական պատճառներով հաւասարապէս:

Նախագահ.— Ի՞նչ է հայերու եւ քիւրտերու համեմատական կուլտուրական մակարդակը:

Իշխան.— Քիւրտերը ոչ վարժարան ունին, ոչ զարգացում եւ ոչ մի կուլտուրական վիճակ. հայերը անհամեմատ բարձր են քիւրտերէն՝ կուլտուրապէս [մշակութապէս] եւ այլ տեսակէտով. կարելի չէ հայը քիւրտի հետ բաղդատութեան դնել:

Բժ. Զաւրեան.— Քիւրտերը որեւէ տրամադրութիւն ցոյց չե՞ն տար իրենց զաւակները հայ վարժարաններ ղրկելու:

Իշխան.— Ոչ մէկ տրամադրութիւն, հակառակ անոր որ կարգ մը ցեղապետներու առաջարկ իսկ եղած է այս մտքով:

Զարդարեան.— Բողոքական կամ կաթոլիկ միսիոնարները ի՞նչ վերաբերութիւն ունեցած են ղէպի ցեղափոխական գործը:

Իշխան.— Բացասական:

Բարսեղեան.— Քիւրտերու մէջ հայկական սովորութիւններու հետքեր չկա՞ն:

Իշխան.— Տիւնտէրի եւ Աչկանցի քիւրտերու մէջ կան հայկական սովորութիւններու մնացորդներ, ինչ որ կ'ապացուցանէ թէ հաւանականաբար այդ ցեղերը նախկին հայերու սերունդներ են:

Արթուր.— Ո՞ր թուականէն ի վեր քրտացած են արդեօք այդ ցեղերը: Մօտիկ ատեններու մէջ ալ ըբրտանալու այդպիսի դէպքեր կա՞ն:

Իշխան.— Այդ երկու ցեղերու քրտացման մասին ճշդրիտ թուական մը չկայ, միայն աւանդութիւններ կան հայ ծերունիներու մէջ՝ որոնք կը հաստատեն, թէ ատոնք նախապէս հայեր են եղած: Նոր ատեններու մէջ մասսայական քրտանալու դէպքեր չկան, բայց կը պատահի որ անհատներ, տնտեսական եւ քաղաքական պատճառներով քրտանան:

Միհրասեան.— Միսիոնարները քիւրտերու մէջ գործունէութիւն չունի՞ն:

Իշխան.— Ոչ մէկ, որովհետեւ կառավարութիւնն թոյլ չի տար արդէն:

Սպառած լինելով կուլտուրական հարցերը, Իշխան կը պատասխանէ քաղաքական խնդիրներու վերաբերեալ հարցերուն:

Իշխան.— Քիւրտերը կարելի է բաժնել երկու որոշ դասերու՝ աշիրէթ քիւրտերը եւ նստակեացները: Աշիրէթ կամ վաչկատուն քիւրտերը կազմակերպուած են Զէքի փաշայի կողմէ ի վնաս հայ ազգաբնակութեան. անոնց տրուած են կառավարչական զէնքեր. իսկամ հոգեւորականները կառավարական գաղտնի հրահանգներով կը ծառայեն իրենց գրգռիչ ազդակ այս աշիրէթներուն մէջ՝ դէպի հայերը, եւ անոնց ատելութիւնը եւ չարագործական բնազդները կը գրգռեն: Ուստի աշիրէթ քիւրտերու վերաբերումը հայերուն դէմ՝ թշնամական է. անոնք միմիայն պաշտպանութիւն ցոյց կու տան իրենց հայ մարաբաններու կամ հարկատու հայ գիւղերուն նկատմամբ՝ ընդդէմ այլ քիւրտ ցեղերու: աշիրէթներու գլխաւոր թշնամութիւնը հայերու դէմ չեշտուած է մասնաւորապէս սահմանագլուխին վրայ, ուր անոնց ձեռքը անցած ոչ մէկ հայ կ'ապատի մահէն:

Նստակեաց քիւրտերու վերաբերմունքը աւելի բարեկամական է հայերու նկատմամբ, գուցէ այն պատճառով, որ երկու ազգարնակութիւններն ալ մշտական յարաբերութեան մէջ են իրարու հետ եւ ստիպուած են դաշտային աշխատութեանց, ջուրի, հողի եւ այլ գործերու համար՝ հաշտ ապրիլ. կառավարութիւնը հետամուտ եղած է այս նստակեաց քիւրտերն ալ լարուած եւ անհաշտ պահել տալու հայերու դէմ, սակայն կառավարական այդ գրգռիչ խաղը ժամանակաւոր հետեւանքներ միայն տուած է եւ աւելութիւնը երկարատեւ չէ դարձած: Նստակեաց քիւրտ գիւղացին ոչ մէկ վախ կ'ազդէ հայուն, բացի աղաներէն, որոնք քաղաքական եւ տնտեսական ճնշումներով կը հարստահարեն հայութիւնը: Աւազակապետներն են միայն, որ սարսափ են հայ բնակչութեան, մինչ նստակեաց քիւրտ գիւղացիներ, ոչ թէ որեւէ վախ չեն ազդեր, այլ նոյնիսկ կ'արհամարհուին հայերէ:

Բժ. Զաւրեան.— Վաչկատուն քիւրտերը իրենց քոչի ատեն ինչպէ՞ս կը վերաբերուին հայերու հետ:

Իշխան.— Այն տեղերը ուր հայերը անզէն ու անպաշտպան են, կը կրեն յարձակումներ ու վնասներ. առաջները թալանի դէպքեր յաճախագէպ էին, բայց յորմէհետէ ժողովուրդը սկսաւ ինքնապաշտպանութեան համար զէնք առնել՝ նման դէպքերը նուազեցան:

Նախագահ.— Կառավարութեան դիրքն ի՞նչ է այս պարագաներուն:

Իշխան.— Կառավարութիւնը որեւէ վնաս չի հասցըներ ինքնապաշտպան հայերուն, այլ միայն կը հետապրքրուի, թէ հայը չիշխանո՞վ թէ ուրիչ արգիլուած զէնքով կատարած է դիմադրութիւնը: Ինքնապաշտպանութեանց պարագային՝ ժողովուրդը ինքն է որ ինքնաբերաբար զէնք կը վերցնէ, անշուշտ կազմակերպուած ըլլալուն չնորհիւ:

Նախագահ.— Քիւրտերու կողմէ հայ կիներու բռնաբարութիւններ տեղի կ'ունենա՞ն:

Իշխան.— Հազուադէպ. բայց յաճախ քիւրտերը հայ աղջիկ փախցուցած են ամուսնանալու համար:

Բժ. Զաւրեան.— Ցեղափոխական կազմակերպութիւնը ժողովուրդին մէջ սկսելէ յետոյ, քիւրտերու վերաբերութիւնը փոխուա՞ծ է, եւ ի՞նչ պատճառներով:

Իշխան.— Պատճառները չեմ դիտեր, բայց զգալի է վերաբերութեանց փոփոխութիւնը, որը դարձած է աւելի բարեկամական:

Բարսեղեան.— Կովկասի հայ-թրքական ընդհարումները ի՞նչ ներգործութիւն ունեցած են քիւրտերու վրայ:

Իշխան.— Առանձին ոչ մէկ ներգործութիւն:

Բժ. Զաւրեան.— Հայերը ջարդերէն ասդին տնտեսապէս ուժեղացա՞ծ են, թէ աւելի քայքայուած:

Իշխան.— Հայերու տնտեսական վիճակը չի լաւանար, որովհետեւ ժողովուրդը եթէ վաչխատուներէն կ'ապատի, միւս կողմէն կառավարական տուրքերը կը բազմապատկուին եւ զինման գործ ալ կայ, այնպէս որ ժողովուրդը տնտեսապէս երթալով կը քայքայուի:

Նախագահ.— Քիւրտ գիւղացիութիւնը արդեօք նոյն պայմաններուն մէ՞ջ է՝ ինչ որ հայ գիւղացիութիւնը:

Իշխան.— Քիւրտ հողատիրութիւնը կ'աւելնայ ազգայական մարմնին մէջ, մինչ քիւրտ գիւղացիութիւնը նոյն վիճակին ունի, նոյն հարստահարութեանց ենթական է աղաներու կողմէն, ինչ որ հայ գիւղացիները. այսպէս, կաւաչլի մէջ, մինչ մենք կրցած ենք վաչխատուներու ուժը կոտրել հայ գիւղացիին վերաբերմամբ, հոն քիւրտ գիւղացին կը կեղեքուի քիւրտ աղային, անոր փէչաչներ կու տայ եւ կը ճնշուի:

Նախագահ.— Քիւրտ գիւղացիութեան տնտեսական վիճակը աւելի բա՞րձր է հայէն, թէ ոչ:

Իշխան.— Համարեա թէ նոյնն է, միայն լեռնային գաւառներու մէջ անոր տնտեսական դրութիւնը համեմատաբար աւելի լաւ է:

Միհրասեան.— Քիւրտերուն մէջ արհեստով եւ առեւտուրով զբաղողներ կա՞ն:

Իշխան.— Քիւրտերու գլխաւոր արհեստը նոպատայութիւնն է, իսկ իսկական արհեստ երբեք գոյութիւն չունի անոնց մէջ, միայն որոշ չրջաններու մէջ ղորգաչինութիւնը կայ, որով կը զբաղին այլ եւ այլ քրտական համայնքներ: Արհեստները ամէնքն ալ հայերու ձեռքն են:

Բժ. Զաւրեան.— Ուրեմն նկատելի՞ է որ դաշտավայրեան հայութեան վիճակը տնտեսապէս աւելի կը բարձրանայ:

Իշխան.— Այո, չնորհիւ յեղափոխական կազմակերպութեան եւ վաչխատուները ապահարկելու ուղղութեամբ մղուած կռուին, հայերու տնտեսական վիճակը համեմատաբար լաւացած է:

Նախագահ.— Քիւրտերու հետ որեւէ ձեւով բարեկամական յարաբերութեանց մէջ մտա՞ծ էք, չէզոքացնելու համար անոնց թշնամական տրամադրութիւնը:

Իշխան.— Մեր ունեցած յարաբերութիւնը խիստ սեղմ եւ սահմանափակ եղած է: Մեզի հետ յարաբերութեան մտած են միայն այն աղաները, որ իրենց աշիրէթական հակառակութեանց կամ կառավարութեան դէմ ունեցած դժդոհութեան առիթներու պատճառով մեզ չահագործել ուզած են. ասոր համար որոշ յարաբերութիւն մշակած չենք: Միայն մէկ երկու աղաներու հետ, որ քիչ չատ զարգացած են եւ արտասահմանեան ազատ Թուրք Թերթերէն կը կարդան, մշակած ենք մասնաւոր բարեկամութիւն: Այս վերջիններէն կրցած ենք օգտուիլ, քանի որ անոնց յարաբերութեանց չարժառիթները աւելի դիտակցական են: Ստոյգ է, որ կարգ մը աղաներ՝ յեղափոխականներէն երկիւղ զգալով, չանացած են մեզի մօտենալ եւ չահագործել մեր բարեկամութիւնը, հետեւաբար մենք մշնացած ենք վերապահ եւ չենք ուզած անոնց հետ գործ ունենալ:

Մալումեան դիտել կու տայ, որ ժողովականներու այս հետաքրքրութիւնը իրաւ է Թէ պատիւ կը բերէ իրենց, բայց դըբած հարցերը չատ հետու կը տանին ժողովը եւ անօգուտ ժամանակ կը վատնեն, ուստի կ'առաջարկէ լսել նաեւ Սասուն-Մուշի տեղեկագիրը, եւ երկրի վերաբերեալ խնդիրներն ու բոլոր հարցերը որոշ մասերու բաժնելով, խնդրել որ անոնց նկատմամբ մեր ընկերները զեկուցումներ տան. այսպիսով կարելի կը լինի ճիշդ ուսումնասիրել էական խնդիրները եւ ճիշդ եզրակացութիւններ դուրս բերել:

Անգրանիկ կը կրկնէ մեւնոյն միտքը, աւելցնելով Թէ Սասուն-Մուշի տեղեկագրերով ժողովը կարող է լայնօրէն լուսաբանուիլ:

Նախագահը, համաձայն լինելով հանդերձ այս դիտողութեանց, դիտել կու տայ Թէ նախորդ Ընդհ. ժողովին մէջ ընկերները տեղեկութիւններ տուած են առաջադրուած իրենց հայեացքներով, ուստի նախկին ժողովը որոշած է եղեր՝ յանձնարարել Արմ. Բիւրոյին, որ այդ առթիւ հաւաքուած նիւթերէն օգտուելով յատուկ ծրագիր կազմէ ապագայ տեղեկագիրներու համար եւ ցրուէ մարմիններուն:

Բժ. Զաւրեան, պատասխանելով ընկ. Մալումեանին, կ'արարկէ որ պէտք չէ այս հետաքրքրութիւնը աւելորդ նկատել, որովհետեւ երկիրը բաւականաչափ ծանօթ չէ ժողովականներուն մեծ մասին եւ որպէսզի որոշումները տրուած պահուն՝ պատգամաւորները ձեռնհաս լինեն, անհրաժեշտ են այս հարց ու պատասխանները:

Նախագահը կ'առաջարկէ յանձնախումբ մը կազմել, որ պատրաստէ ծրագիր մը, անոր համաձայն զեկուցումներ տալու եւ լուսաբանելու ժողովը:

Այս առթիւ Արլ. Բիւրոյի ներկայացուցիչը ժողովին կը ներկայացնէ Բիւրոյի կազմած մէկ ծրագիրը:

Մալումեան կ'առաջարկէ, որ Իչխանը անցնի իւր չրջանի՝ Լեռնապարի կազմակերպական գործերին պատասխանելով արուած հարցումներին։

Իշխան, յայտարարելով թէ կազմակերպութեան մասին հարկ եղածը արդէն ըսուած է իւր տեղեկագրով, կ'անցնի պատասխանելու ընկ. Շահխաթունեանի հարցին՝ նոյն խնդրի վերաբերմամբ։

Իշխան։— Տաճկահայաստանի մէջ, առհասարակ, յեղափոխականների գործունէութիւնը կ'ունենայ դիմէներները, դաղտնապէս։ Գործիչները երկու դասի կը բաժնուին՝ տեղացիներ եւ դրսեցիներ։ Տեղացիները կարող են ցերեկը հաւաքումներ ընել, խօսիլ, կարգադրութիւններ կատարել, մինչ դուրսեցիները պարտաւորուած են միմիայն գիչերները ունենալ այդպիսի զբաղումներ։ Ուստի տեղացիներէն գործողներ ստեղծած ենք, որ փերեզակի եւ այլ արհեստաւորի հանգամանքով կը չրջին այլ եւ այլ վայրերը մեր չրջանին մէջ եւ կը զբաղին կազմակերպական գործով. որոշ է, թէ ասոնց պաչտօնը սահմանափակ է, որովհետեւ ձեռնհասութիւն չունին ամէն պարտականութիւն ստանձնելու։ Այս պատճառով ծանր պարտաւորութիւնները կ'իյնան դուրսեցի գործիչներու վրայ, որոնք ստիպուած են դիչերները մէկ դիւղէն միւսը անցնիլ գաղտնապէս, հաւաքել խումբերը եւ կատարել հարկաւոր գործերը։ Իսկ լեռնային անխառն բնակչութեանց մէջ դրսեցիներն ազատ են ցերեկն ալ չրջելու, ի բաց առեալ այն վայրերը՝ ուր քրտական բնակչութիւնը խառն է հայուն հետ. այս պարագային ալ նորէն կը մնայ դիչերը իրրեւ յարմարագոյն ժամանակ։ Գիչերային գործառնութեանց մէկ առաւելութիւնն ալ այն է, որ մարդիկ այդ ժամանակ դաչտային եւ տնտեսական այլ աչխատանքներէ զերծ կը լինեն եւ հետեւաբար կարող են համախմբուելու։

Շահխաթունի։— Կառավարութիւնը ո՞րքան կը հալածէ դրսեցի յեղափոխականները։

Իշխան։— Կառավարութիւնը միչտ կը հալածէ զանոնք, երբ տեղեկութիւն ունենայ, ուստի ստիպուած ենք մեր կողմից լրտեսական դրուքիւն մը ստեղծել, լրտեսելու համար կառավարչական չրջանակները եւ ըստ այնմ խուսափիլ հետապնդումներէ։ Ներքին կազմակերպութիւնը գաղտնի է կառավարութենէն, քէեւ նա չփոթ կերպով դիտէ, թէ յեղափոխականներ կան երկրին մէջ։

Սեպուհ։— Ժողովրդին վերաբերումը ի՞նչ է դէպի յեղափոխականները։

Իշխան։— Կազմակերպութենէն դուրս գտնուած մասը համակիր չէ, բայց հոն ուր ընկերներ կամ կազմակերպութիւն գոյութիւն ունի, վերաբերութիւնը սիրալիր է դէպի դրսեցի յեղափոխականը։ Ընդհանուր առումով, կարելի է ըսել թէ ընակչութեան մեծամասնութիւնը համակիր է։

Անդրանիկ դիտել կու տայ, թէ կազմակերպութեան գաղտնի դրութենէն եւ ժողովուրդի համակիր վերաբերութենէն աւելի, եթէ կառավարութիւնը Վանի չրջանին մէջ յարձակողական դիրք չէ բռնած մինչեւ հիմա, սա աւելի վերագրելու է կուսակալին լաւ տրամադրութեանը, հիւպատոսներու ներկայութեան եւ յարակից պարագաներու։

Իշխան։— Չի բաժներ Անդրանիկի այս հայեացքը, ընդունելով հանդերձ կուսակալի լաւ տրամադրութեան եւ հիւպատոսական ներկայութեան օգտակար հանգամանքը, բայց կը պնդէ, որ կառավարութիւնը միչտ ալ խուսարկութիւններ կատարած է, սակայն կազմակերպութեան նոյն դաղտնի հանգամանքին եւ հաստատուն հիմքին հետեւանքովն է որ մինչեւ հիմա յեղափոխական գործը վտանգուած չէ։

Շահխաթունեան։— Չէ՞ք կարծեր, որ յեղափոխական գործին մինչեւ հիմա չվտանգուելը քրտերու բարեկամական վերաբերմունքին արդիւնքն է։

Իշխան դիտել կու տայ, թէ մինչեւ այն տարին, երբ կարգ մը վաչխատուներ, կեղեքիչներ կը պտնուէին կազմակերպութեան մէջ, միչտ ներքին դաղտնիքներ դուրս կ'ելլէին, որովհետեւ նոքա լուր կու տային ադաներուն, որոնց հետ գործակցելու եւ կեղեքելու իրենց չահերն ունէին։ Բայց յորմէհետէ նոքա հեռացած են կազմակերպութենէն, գործը մնացած է աւելի գաղտնի։

Բժ. Զաւրեան կ'աւելցնէ, թէ արդեօք այս կառավարական լաւ վերաբերումին մէջ նկատելու չէ՞ նաեւ այն տեսակէտն ալ, որ կառավարութիւնը կը ջանայ հիմա աչխատիլ կոտրելու քիւրտերու աճած ազդեցութիւնը. իրրեւ փաստ կը յիչէ, թէ Կարինի մէջ լսած է, որ Թուրք սպաներ իսկ չատ դժգոհ էին քրտերից եւ կը զանգատէին անոնց ազդեցութեան դէմ։ Ուրիչ տեսակէտ մ'ալ, որ կառավարութեան տնտեսական հաչիւնեբուն հետ գործ ունի, — կառավարութիւնը տեսնելով, որ հայերը տնտեսապէս կը քայքայուին եւ քիւրտէն տուրք ու հարկ չի կրնար գանձել, արդեօք ասոր համար չէ՞ որ կուսակալներ մտածէին աչք գոցել յեղափոխականներուն, զանոնք իրրեւ ընդդիմադիր ուժ մը հակադրելով քիւրտերուն։ Բժիչկը կ'ենթադրէ նաեւ, որ Թուրքերուն մէջ կայ այն համոզումը, որ փետայիները կը բաժնուին երկուքի՝ մարտական փետայիներ եւ խաղաղ փետայիներ. առաջիններուն նպատակն է, իրենց կարծիքով, խռովութիւն եւ տակնուվրայութիւն առաջ բերել Երկրին մէջ եւ ընդհարուիլ տալ ռուս եւ Թուրք սահմանապահ զօրքերուն, մինչ խաղաղ փետայիները այս տեսակ նպատակներ չունին։ Հետեւաբար, կարելի է եղրակացնել, որ կուսակալներ կամ սպաներ աչք գոցեն խաղաղ յեղափոխականներու, զանոնք վրնասակար եւ վտանգաւոր տարր չհեպելով։

Ստեփանեան միջամտելով կը յայտնէ, որ իբր Քէ Վանի կուսակալը ըսած լինի Քէ. «Ես հայերը տնտեսապէս այնքան պիտի ճնշեմ, որ անոնք իրենց հրացանները քիւրտերուն ծախեն եւ ուտելու հաց գտնեն»։

Ուստի այլ պատճառներու մէջ պէտք է փնտռել հարցի լուծումը։

Իշխան։— Որոչակի բան մը չեմ կրնար ըսել բժիչկի առաջին հարցին, միայն երկու դէպքեր դիտեմ՝ կառավարութեան կողմէ քիւրտերու զինաթափման, բայց երեւոյթը չէ ընդհանրացած։ Գալով տնտեսական պատճառին, այս տեսակէտը աւելի հաւանական է, քանի որ կառավարութիւնը սկսած է ծանր հարկեր դնել քիւրտերուն վրայ եւ այս առիթով ալ ընդհարումներ տեղի ունեցած են քիւրտերու եւ զօրքերու միջեւ։ Իսկ անուրանալի է, որ առհասարակ փետայիին սարսափը մեծ է. քիւրտը կ'արհամարհէ պրոպագանդիստ յեղափոխականը, պայն չընդունելով իբրեւ փետայի, այլ «քեթաբչի», այսինքն անվնաս «ուսումնական»։

Ստեփան եւ Սեպուհ կը պնդեն, թէ Վանի կուսակալին լաւ տրամադրութեան վերագրելու է միայն կազմակերպութեան անվնաս մնալը, եւ ոչ ուրիչ պատճառներու։

Իշխան կ'ընդդիմախօսէ այս կարծիքներուն, աւելցնելով, թէ կուսակալին լաւ տրամադրութիւնը այնքան մեծ դեր չեն կրնար խաղալ, որովհետեւ քաղաքացի հայերը բաւական ազդեցութիւն ունին կուսակալին վրայ եւ կարող են որոչ չափով անոր տրամադրութիւնները հակակչռել։

Զարդարեան։— Տեղեկագրին մէջ պրոպագանդիստի նուազութիւնը յիչուած էր. ի՞նչ պատճառով կարելի եղած չէ դարմանել այդ պակասը։

Իշխան։— Մեր ունեցած տեղացի պրոպագանդիստները իրենց մտաւոր պատրաստութեամբ անբաւական են, իսկ դուրսէն չենք ունեցած, քէեւ կազմակերպութենէն միչտ պահանջած ենք։

Զարդարեան։— Կ. Կոմիտէն, որ կազմուած էր եօթը տնճերէ եւ այս պատճառով անբաւական էր չրջանի բոլոր գործերուն հասնելու, ինչո՞ւ յաւելման չէ ենթարկուած։

Իշխան։— Որովհետեւ տեղական ուժերուն մէջ բաւարարութիւն տեսողներ չկային եւ դուրսեցիներ ալ չենք ունեցած։

Զարդարեան։— Տիգրանակերտի կազմակերպութեան ի՞նչ մասնաւոր ծրագրով ձեռնարկուած է։

Իշխան։— Որոչ ծրագիր մը ունեցած չենք։ Տիգրանակերտ կազմակերպուած է պատահարար, երբ Սղերդի մեր ընկերներէն մէկը հոն երթալով, առիթէն օգտուած եւ խումբեր կազմած է, ուստի աչխատած ենք այդ խումբերուն պրոպագանդին համար թերթեր եւ գրքեր հայթայթել։

Վահագն։— Ինձ համար մութ մնաց, թէ ի՞նչ է դուրսէն գացած եւ տեղացի գործիչներու պաչտօնը։

Իշխան։— Տեղացի ընկերները չունին մտաւորական որոչ պատրաստութիւն, ուստի նոցա գործունէութիւնը սահմանափակ է, մինչ իլլեգալ գործիչներու պարտքն է ամբողջ չրջանին վրայ հսկել, անոնց յեղափոխական գործունէութիւնը առաջնորդել եւ կազմակերպական ընդհանուր ուղղութիւնը պահել հիմնաւոր հողի վրայ, կատարել պրոպագանդը եւ տեղափոխութիւնները, որովհետեւ այս պարտականութիւնները տեղացիներուն հնարաւորութենէն եւ կարողութենէն վեր են։ Տեղացի իւրաքանչիւր գործիչ իւր վայրին եւ չըրջանակին մէջ կը գործէ միայն. անոնց ընդհանուր օժանդակն են դուրսեցիները։

Անդրանիկ։— Գնուած զէնքերը լաւ ընտրուած կ'ըլլա՞ն։

Իշխան։— Զէնքեր գնող յանձնախումբին մէջ կան մասնագէտներ, որոնց խիստ պատուէրներ տրուած են լաւ զէնքեր միայն դնելու, քէեւ անհնարին եղած է զէնքերը ամբողջն ալ ընտիր ունենալ, այնպէս որ 20% կարելի է փճացած համարել։

Տիկ. Յուլիկ։— Դուրսի յեղափոխական մարմիններու աղդեցութիւնը որքա՞ն եղած է ներսի կազմակերպութեան վրայ, կամ ինչո՞վ կ'արտայայտուի Դաչնակցութեան դուրսի եւ երկրի մարմիններուն յարաբերութիւնը։

Իշխան։— Դուրսէն ոչ մէկ ազդեցութիւն գործ դրուած է մեր վրայ, բայց յաճախ խորհուրդներ հարցուցած ենք դուրսէն եւ ընկերաբար տրած ենք յարաբերութիւնները։

Վահագն։— Ինծի համար տակաւին անհասկանալի մնաց սա երկու կէտը. ներքին կազմակերպութեան մէջ կար դիմման գործը եւ պրոպագանդը։ Արդ, քանի որ այդ երկուքն ալ տեղական ընկերները կրնան տանիլ, ինչո՞ւ գործը ամբողջովին չյանձնուի տեղացի ընկերներուն. հնարաւորութիւն չկա՞յ ասկէ վերջը երկրի բոլոր գործունէութիւնը յանձնել ամբողջովին տեղացիներուն։

Իշխան։— Նախ որ պրոպագանդի համար, ինչպէս ըսի, լրիւ պատրաստութեամբ մարդիկ չկան. սակայն պէտք է ի նկատի ունենալ, որ կազմակերպական գործին մէջ կայ նաեւ տակտիկան, որը էական եւ ամենէն դժուար մասը կը կազմէ. ուստի որքան ալ մենք տեղացի ուժերը աչխատութեան քաչած ենք, բայց չենք կրցած բաւականութիւն ձեռք բերել. յետոյ՝ այդ ընկերները քիչ առնէն վտանգուելով՝ դարձած են փախստական։ Դուրսեցի ընկերներու պաչտօնն է զէնքերու գնումը, դինավարժութիւն, պրոպագանդա, փոխադրութիւն, յարաբերութեանց պահպանում եւ Քըղքանկցութիւն Քէ՛ արտասահմանի Քէ ներքին այլ վայրերու հետ։ Զէնքի գնման մէջ տեղացի ժողովուրդը միայն օժանդակ եղած է մեզի, բայց Քէ՛ գնման, Քէ՛ փոխադրութեան, Քէ՛ դինավարժութեան, Քէ՛ պրոպագանդի բոլոր ծանրութիւնը կը մնայ մեր վրայ։ Տեղացի ընկերները այդ բոլորին հասնելու բարոյական ուժ չունին եւ ստիպուած են միչտ սահմանափակելու իրենց գործունէութիւնը՝ անվտանգ մնալու համար։ Պէտք է աւելցնել, որ Վանեցի ինտելիգենտ ուժեր առ-

հասարակ տրամադրութիւն ցոյց չեն տար զաւառները պալու եւ պարտականութիւն ստանձնելու։

Անդրանիկ կը հարցնէ, *Քէ զինուած ժողովուրդը, իւր զէնքերը քանդելու եւ սարքելու վարժուա՞ծ է, նոյնպէս, կռուի առեն կամաւորներէն ո՞րքանը կարելի է երաչխաւորել, Քէ պիտի մասնակցութիւն ունենան։*

Իշխան կը հաստատէ, *որ կամաւորները վարժ են իրենց զէնքերը քանդելու եւ սարքելու, իսկ ինչ որ կը վերաբերի մեծ կռուի մը առեն անոնց մասնակցութեան չափին, ինքն եւս թերահաւատ է բոլորին համար, այս իսկ պատճառով վարժութիւններ կը լինէն՝ կռուի պատրաստելու խումբերը եւ դաստիարակելու պանոնք գործնական ճանապարհով։ Եղրակացնում է, որ կարելի է կամաւորներու 1/3ին վրայ միայն յոյս դնել։*

Վռամեան.— *Զինավարժութիւնը ի՞նչ կարգ ու կանոնով կը կատարուի եւ ո՞րքան կանոնաւոր է։*

Իշխան.— *Ունեցած ենք ենթասպաներ եւ զինուորականներ, որ աչքատած են բանակային զինավարժութեամբ մարդել խումբերը եւ լեռներուն մէջ հրացանաձգութիւն ընել տալ։ Զինավարժութեան բոլոր այս մարդանքները կը կատարուին հերթական կերպով, այնպէս որ մարդանքի իւրաքանչիւր տեւողութեան մէջ, ամէն մէկ խումբ երեք չորս օր կ'ունենայ իրեն համար տրամադրելի։*

Վռամեան.— *Պրոպագանդը ի՞նչ նիւթերով եւ ի՞նչ ձեւով տեղի կ'ունենայ։*

Իշխան.— *Հաւաքելով տեղացի պրոպագանդիստները, անոնց կու տանք նիւթերը, կը պարզաբանենք, որպէսզի անոնք ալ իրենց կարգին երթան քարոզելու։ Նիւթերն եղած են ինքնօդնութիւն, ինքնապաշտպանութիւն եւ ադդային այլ եւ այլ հարցեր։ Լսարանական ձեւով պրոպագանդ կատարուած չէ, միայն խումբերը հաւաքուած են դիչերները, որոնց խօսուած է եւ քերթեր ու ղրքեր կարդացուած։*

Չելալեան.— *Քանի որ արտասահմանեան քերթերը կր ստացուին երկրին մէջ եւ կը պարունակեն այլ եւ այլ ընկերական, հասարակական եւ կազմակերպական խնդիրներու վերաբերեալ յօդուածներ, անոնց մասին ի՞նչ վերաբերութիւն ցոյց կու տան տեղացիները։*

Իշխան.— *«Դրօշակն» է միայն, որ ժողովրդական բնոյթ ունի եւ կը տարածուի, մինչ միւս քերթերը սահմանափակ լինելով՝ կը մնան որոշ չրջանակներու մէջ եւ կր ղրկուին մի քանի դաւառներ։ Ժողովուրդը բուռն հետաքրքրութիւն ունի քաղաքական խնդիրներու մասին, մինչ տեղացի պրոպագանդիստները չեն կրնար պէտք եղած գոհացումը տալ։*

Սեպուհ.— *Կոմկասեան դասակարգային եւ ծրագրային վերջին խնդիրները ի՞նչ տպաւորութիւն կը թողնէին ժողովուրդին վրայ։*

Իշխան.— *Մինչեւ իմ մեկնելս այդ հարցերը դեռեւս արծարծուած չէին, բայց կ'իմանամ Քէ մեկնելէս ետքը լսուած են հոն, կազմուած է Շրջանային ժողով եւ կայացած անոնց մասին որոշումներ։ Իմ հոն եղած միջոցիս ալ Շրջանային ժողով գումարուեցաւ, բայց կառավարական խստութեանց պատճառով մնաց սահմանափակ։*

Վռամեան.— *Զէնքերու դրամը ո՞վ է տուած, ժողովո՞ւրդը Քէ դաշնակցական ընկերները։ Նոյն դրամէն զէնքէ դուրս ուրիչ նպատակներու ալ ծախսո՞ծ էք։*

Իշխան.— *Մեր ծախսերը առհասարակ ժողովուրդը կը հոգայ, մեզի տալով ուտելիք, խմելիք, եւն.։ Առաջներր տարին մէկ անգամ ժողովուրդին կողմէ հանգանակութիւն կը լինէր մեզի համար, բայց 906ին, նկատի առնելով ժողովուրդի տնտեսական խեղճ դրութիւնը, արդիլեցինք այդ հանդանակութիւնը։ Զէնքերու դրամը ժողովուրդը ինքը հայթայթած է, կովկասի կազմակերպութիւնը ժողովուրդի զինման համար ոչ մէկ օգնութիւն չէ ըրած։ իրաւ է Քէ զէնքեր ստացած ենք կազմակերպութենէն, բայց անոնք յատկացուցած ենք խումբերուն, ոչ Քէ ժողովուրդին։*

Անդրանիկ.— *Գործիչներն ու զինուորները ի՞նչ միջոցով կ'ապրին։*

Իշխան.— *Մեր չրջանին մէջ ժողովուրդը ինք կը պահէ մեզ, իսկ վանի մէջ կազմակերպութեան ծախսով կ'ապրին գործիչներն ու զինուորները։ իւրաքանչիւր զինուոր իւր բնակած տան կը վճարէ 100 փարա օրողչէք իւր ապրուստին համար։*

Վռամեան.— *Կիներ ի՞նչ դեր ունին յեղափոխական գործին մէջ։*

Իշխան.— *Կիները որեւէ դեր չունին, միայն մեղի համար կերակուր կ'եփեն, իսկ քաղաքին մէջ փոխադրութեանց կը մասնակցին երբեմն. անոնց մէջ կազմակերպութիւն չէ եղած. խումբեր կազմակերպուած չեն անոնցմէ։*

Լեռնապարի հարցը սպառած լինելով ժողովը կը փակուի։

10ՐԴ ՆԻՍՏ (27 Փետր., երեկոյ)

Նիստը կը բացուի ժամը 4ին։ Բացման պահուն բացակայ են ընկերներ Իսահակեան եւ Մաշուրեան։

Ժողովը կ'անցնի օրակարգի յաջորդ հարցին, այն է՝ Սասունմուշի տեղեկագրի ընթերցման։ Ընթերցումը կը կատարէ Սեպուհը։

Տեղեկագիրը կարդում է ընկեր **Սեպուհը։** Ընթերցումը տեւում է երկու եւ կէս նիստ։ Տեղեկագիրը սկըզբում կանգ է առնում ժողովրդի վիճակի նկարագրութեան վրայ, մանրամասն պատկերացնելով Թիւրքիայի ֆինանսական քաղաքականութիւնը, որ արտացոլուում է նրա յոռի հարկային սիստեմի մէջ։ Մանրամասն նկարագրելով հարկերի տեսակները եւ դրանցից իւրաքանչիւրի աստիճանական վարգացումը եւ ներգործութիւնը ժողովրդական տնտեսութեան վրայ, տեղեկագիրը անցնում է հողատիրական յարաբերութիւնների նկարագրութեան եւ (ճշդում) կառավարութեան դիրքը դրա մէջ, որը յանգում է սիստեմաթիկ ձգտման՝ հողազրկել հայութիւնը եւ հողատէր դարձնել մահմետական տարրերին։ Ապա նկարագրելով քրտերի խաղացած դերը տաճիկ կառավարութեան եւ հայ յեղափոխութեան յարաբերութիւնների մէջ, տեղեկագիրը անցնում է յեղափոխական շարժման պատմութեան այդ շրջանում։ Սկսելով 1890–91 թուերից, ժամանակագրական կարգով յիշատակուում են բոլոր գործիչները, խմբերը, դէպքերը, շարժումները, կառավարութեան աւերումները եւն. մինչեւ մեր օրերը։ Իր շարունակութեան մէջ տեղեկագիրը տալիս է շրջանի մանրամասն վիճակագրութիւնը՝ գիւղերի անունները, ազգաբնակութեան քանակը, պարապմունքները, կանոնաւոր ապգութիւնների թիւը եւ այլն։

Այս ընդհանուր տեղեկութիւններից յետոյ տեղեկագիրը անցնում է բուն կազմակերպական գործունէութեան.–

«Վերեւ յիշուածներից կարելի է եզրակացնել, թէ հայ տարրը տնտեսական ինչ նեղ պայմաններում է ապրում. բնական է, որ այդ դժոխային պայմանները, ապրելու, իր գոյութիւնը պահպանելու ամենատարրական միջոցներից զուրկ լինելը պէտք էր ժողովրդի մէջ, առանց նոյնիսկ արտաքին դրդումների, վարգացնէին մի բուռն ատելութիւն դէպի իր տպրուկ հարեւանները, որոնք նրա արիւն-քրտինքով ապրում են հանգիստ ու խաղաղ։ Ժողովուրդի ատելութիւնը բուռն է, որին սընունդ է տալիս նրա տնտեսական նեղ վիճակը՝ սովը, որից նա ելք է գտնում կամ գաղթականութեամբ դէպի օտար, աւելի անդորր նահանգներ, կամ յարելով յեղափոխութեան։ Դուրան-Բարձրաւանդակի ժողովուրդը յեղափոխական է, եւ յեղափոխական է, որովհետեւ սոված է։ Շատ սխալ կը լինէր, եթէ յեղափոխութեան հիմնաքարը հաշուէինք գաղափարական ձգտումներ. դա գոնէ այստեղի սոված ժողովուրդի համար մի անմիտ ցնորք կը լինէր, եւ դժուար կը լինէր մի սոված հարստահարուած «ֆլահ» դասակարգից սպասել կանապան ապգային ձգտումներ. նրա ձգտումը գլխաւորապէս ուղղուած է ձեռք բերել տնտեսական ապատութիւն եւ, չգիտենք դրժբախտաբար թէ բարեբախտաբար, այստեղի յեղափոխական կազմակերպութեան հիմնաքարը դասակարգային-տնտեսական ապատութեան մի ձգտում է՝ գունաւորուած ապգային ապատութեան փայլուն ներկերով։ Այդ պատճառով կարծում ենք, որ այստեղի կազմակերպութիւնը շատ հաստատուն է եւ անհնար է նրան արմատախիլ անել, քանի գոյութիւն ունեն այս հարստահարութիւնները, քանի այսպիսի տնտեսական նեղ վիճակի մէջ է ժողովուրդը։ Սխալ է թէ կազմակերպութիւնը արհեստականապէս՝ քարոչչութեամբ ժողովրդին խելացնոր է արել. կազմակերպութիւնը առաջ է բերում տաճիկ բըռնակալութիւնը ինքը։ Առաջին կազմակերպողները սուլթանական ռեժիմն ու սովն են, իսկ երկրորդը՝ ժողովուրդից ծնունդ առած յեղափոխականները։ Այդ հանգամանքը պէտք է պարզ լինի։ Սա մի լոկ ապգային անջատման կռիւ չէ, յեղափոխականների գլխից ծնուած, կամ պանապան աւանտիւրիստների մի ցնորական գործ, այլ մի ժողովրդական յուսահատ շարժում բխած սոսկալի բռնութիւնից։ Ճիշդ է այս շարժմանը վարկ են տալիս եւ հայի ապգային ու կրօնական արհամարհուած ստորադաս վիճակը, անկախութեան ձգտումները եւ այլն, բայց այս բոլորը շաղախուում են տնտեսական բացառիկ դրութեան հետ եւ կորցուում նրա մէջ։ Սխալ չէր լինի ասել, որ հայը, մանաւանդ գիւղացի հայը, մի դասակարգ է, բանուորական դասակարգի պէս, որի աշխատանքը լափում են կառավարութիւնն ու պաշտօնեաները, թուրքն ու քիւրտը, միայն այն տարբերութեամբ, որ հայ դասակարգի ցաւերը աւելի մեծ են, վէրքերը աւելի խոր։ Հայը նախկին հէլոտն է. արդէն այստեղի օտար տարրը ըմբռնելով այդ, նրան տալիս է «ֆլահ» (հէլոտ) անունը։ Եւ քսաներորդ դարի այդ դժբախտ հէլոտը զգալով իր դրութիւնը, իր սուրբ իրաւունքների բռնաբարուելը, կապմակերպուում է ինքնաբերաբար, յօժարակամ։ Մի գիտակցական, բայց անհաւասար կռիւ է թոյլի եւ ուժեղի մէջ. եւ չնայելով, որ հայը երկար ու ձիգ տարիների ընթացքում տեսել է իր արիւնոտ կռիւները անհետեւանք, սրբագործել է իր իրաւունքները կախաղաններով, նահատակներով, տնտեսական քայքայումով, բայց այդ բոլորը միայն կպղուրել, վերակապմել են նրա ռազմական հոգին, նրա գիտակցութիւնը։ Յուսահատութիւն չկայ. անյաջողութիւնները գրգռել, կապմակերպել են թշնամիներին։ Ակամայ մարդ յիշում է եղիչէի խօսքերը.– «եւ արջք օրհասականք հկօրագոյնս կռուին»։ Ապա տեղեկագրում թուած են մի շարք դէպքեր, երբ կանապան տեղեր, չնայած այսքան կրած վըրկանքներին, դիմադրութիւն են ցոյց տալիս կառավարութեան՝ մի տեղ հարկահաւաքներին գիւղից դուրս հանելով, մի այլ տեղ կօրանոցի վինուորները տփելով, մի երրորդ տեղ թշնամիներից մարդիկ գողանալով եւայլն։ «Շատ երկար կը լինէր այս ցաւոտ ժողովրդի աննկուն-նութեան, հերոսութեան փաստեր բերելը։ Նա տեսնում է իր ըմբոստութեան դառն հետեւանքը, բայց շարունակում է ու շարունակում, որովհետեւ անհնարին է չշարունակել։ Ժողովուրդը վգում է իր թուլութիւնը, որը-նում է մինին օգնական, եւ յանձին յեղափոխականի գտնում է այն հաւատարիմ նեցուկը, որին լիովին կարող է վստահանալ։ Դրանով կարելի է բացատրել միայն՝ այս դժոխային պայմաններում մեր գոյութեան պահպանուելը»։

Ժողովուրդի աչքում յեղափոխութիւնը արդարութեան, ադէլաթի պաշտպան է, որի համար նա վոհաբերում է իր անձը։ Ցանձին յեղափոխականների՝ նա տեսնում է մի հսկայական ուժ, որ վաղ թէ ուշ պէտք է ձեռք բերէ ժողովուրդի իրաւունքները։ Զանապան ձեռնարկների անյաջող ելքը չեն գցել յեղափոխականի վարկը. ժողովուրդը այդ անյաջողութիւնները բացատրում է եւ արդարացնում յեղափոխականին՝ պատճառները գտնելով տարուայ եղանակի, այս կամ այն անձի մեղքի մէջ եւ այլն։ Ժողովուրդը չափապանց հաւատում է յեղափոխականին, եւ բոլոր երեւոյթները նպաստաւոր կերպով բացատրում՝ իրեն հաւատքի առարկայ յեղափոխական կազմակերպութեան համար։ Այդ է պատճառը, որ չնայած շատ գիւղերի քրտախառն վիճակին, շատ գիւղերում կառավարական ագէնտների եւ վօրքերի ներկայութեան եւ յաճախակի տեղի ունեցող, երբեմն մեծ ծաւալ կրող խուզարկութիւններին, յեղափոխականները մեծ մասամբ են մնում կառավարութեան ձեռքերից։ 24 անգամ տեղի ունեցած խուզարկութիւնների ժամանակ միայն մի դէպքում, այն էլ իր անվգուշութեան պատճառով, բռնուել է մի վինուոր։ Ժողովուրդի գուրգուրալի վերաբերմունքը դէպի յեղափոխականը ոչ միայն նրա համար է որ նա սպասում է նրանից իր ապագայ ապատագրութիւնը, այլ եւ այն պատճառով, որ նրա ներկայ

կեանքում, առօրեայ յարաբերութիւնների մէջ էլ յեղափոխականը նրա համար մի անհրաժեշտութիւն է. իր առօրեայ ցաւերին վերջ տալու համար նա դադարել է դիմելուց օրինական կառավարութեան. եւ չնայած այն բանին, որ յեղափոխականները որոշել են սահմանափակել ժողովուրդի լէգալ կեանքի մէջ միջամտելու դէպքերը, բայց հնարաւորութիւն չի լինում, որովհետեւ ժողովուրդը ասում է «վերը Աստուած, վարը դուք, էլ նո՛ր պէտք է ճանչնանք կառավարութեան»:

«Ժողովուրդի պահանջն է, որ մենք իրեն ղեկավարենք եւ առաջնորդենք դէպի երջանիկ ապագան: Նա պահանջ է զգում կռուելու. եւ կռիւ, սոսկալի կռիւ, Արամազդի եւ Ահրիմանի կռիւ: Մի ստիպողական, անխուսափելի մրցում, մաքառում է՝ բղխած ժողովուրդի գիտակցութիւնից եւ կառավարական ոէժիմից: Երանի թէ հայերը գիտակցող չլինէին...»:

Այնուհետեւ տեղեկագիրը անցնում է նկարագրելու այն ձեւերը, որի մէջ ամփոփուած է կազմակերպութիւնը այդ շրջանում եւ ապա Կուսակցութեան որոշումը, թէ ինչ դիրք պիտի բռնել դէպի լէգալ հաստատութիւնները, այսինքն ձգտել բուն ժողովուրդի ձայնը ապահովել այդ հաստատութիւնների մէջ: Այստեղ եւս հակայեղափոխական տարրը ներկայացնում է ունեւոր վաշխառու դասակարգը, որի ճանկերից եւ հոգեսաւորութիւնից ձգտում են ապատել աշխատաւոր ժողովուրդին:

Տակտիկային եւ ապագայ գործունէութեան համար իրենց առաջարկին անցնելուց առաջ, ընկերները փորձում են տեղեկագրում ցոյց տալ այն պատճառները, որոնք վիժեցրին մօտաւոր անցեալի ձեռնարկները: Նրանց կարծիքով պատճառը այն անհամաչափութիւնն էր, որ գոյութիւն ունէր մի կողմից ժողովրդի վարձնած գիտակցութեան, նրա կռուի պատրաստակամութեան եւ Երկրի լաւ եւ ուժեղ կազմակերպութեան, իսկ միւս կողմից այդ մեծութեան չհամապատասխանող եւ անբաւարար նիւթական--ռազմական միջոցների մէջ: Ինտէլիգէնտ ղեկավար ուժերի կարիքը շեշտելիս, ընկերները յիշեցնում են, որ ուղարկուելիք ինտէլիգէնտ գործիչները պիտի լինեն «առողջակամ», որովհետեւ մի օր հանգիստ չկայ. շատ անգամ պէտք է բաց մնան անձրեւի եւ ձիւնի տակ, զիշերները անքուն, ցերեկները կիսաքուն: Եթէ մի քիչ առողջակամ չլինեն, աւելի ծանրութիւն կը դառնան մեզ, քան օգտաւէտ կը լինեն: Ապա պատկերացնում են կազմակերպութեան տրամադրելի ուժը իրենց շրջանում եւ ապա կանգ առնում այն ռազմական պահանջների վրայ, որ նրանք անում են դրսի եւ ներսի ընկերներից առաջիկայ գործի յաջողութիւնը ապահովելու համար: Այնուհետեւ տեղեկագիրը տալիս է 1904ից մինչեւ 1906ի հաշիւը, եւ անցնում է խօսելու գործունէութեան մասին քիւրտ եւ թուրք շրջաններում:

«Քիւրտ եւ թուրք տարրը կազմելով ազգաբնակութեան փոքրամասնութիւնը, հանդիսանում է մեծ մասին իշխող եւ ղեկավարող տարրը: Քիւրտ եւ թուրք նշանակում է մի տպրուկ, որ իւր զոյութիւնը ապահովում է հայի աշխատանքով եւ արիւնով, այնպէս որ հայի և քիւրտ-թուրքի տնտեսական շահերը իրար հակառակ են. ուստի դժուար թէ կարելի լինի Դուրանում հայկական կազմակերպութեան կից մի կազմակերպութիւն ունենալ նրանցից: Ի հարկէ մեր խօսքը վերաբերում է մեծամասնութեան. քիւրտերի եւ թուրքերի մէջ կայ մի փոքր դասակարգ, «ռայա» դասը, որը համարեա նոյն չափով նեղւում է, որչափ հայը: Բայց մեր նրանց անմիջական կապակերպելը շատ դժուարութիւնների է բախւում ցեղական, զաբիլսահաբական կապակցութեան պատճառով: Քիւրտը իրեն հաշուում է մի ցեղի, մի աշիրէթի մասնիկը, նա շարժուելու է այնպէս, ինչպէս իր ցեղը, իսկ ցեղը պիտի շարժուի այնպէս, ինչպէս հրամայեց ցեղապետը: Այնպէս որ այդ դասի մէջ տգիտութեան, ընտանեկան աւանդութիւնների պատճառով, անհատական դատողութիւնը, ինքնուրոյն շարժումը պակասում է, թէեւ իրենք զգում են մեր պահանջների իրաւացի լինելը եւ իրենց անտանելի դրութիւնը: Դեռ շատ երկար ժամանակ է հարկաւոր՝ ցրելու նրա սնոտի հայեացքները, ցոյց տալու նրան ճշմարտութիւնը, եւ նրանց կոհողութիւնների վարժեցնելը, որ պահանջում է յեղափոխութիւնը: Այդ դասակարգի գրաւումը թէեւ ցանկալի է, բայց առայժմ անհնարին է ցածից վերեւ քարոզչութիւնը, նրանց տգիտութեան պատճառով: Կայ մի դասակարգ եւս, բարձր դասակարգը, որը չնայելով տնտեսական հրամայողական պատճառների բացակայութեան, զանազան հանգամանքներից դրդուած յարում է հայ յեղափոխութեան: Դրանցից ոմանք թուրք կալուածատէրեր են, որոնք օգտուում են հայկական գիւղերից, եւ վախենալով՝ հակուում դէպի մեզ: Այդպիսի բարեկամներ ունենք Դուրանի շատ գիւղերում, որոնք հայ խեղճուկ գիւղացիների խարխուլ խրճիթների մէջ կանգնեցրած ունեն իրենց գեղեցիկ քօշքերը: Երկրորդ տեսակի բարեկամները քիւրտ հալածուած ցեղապետներն են, որոնց տնտեսականը թէեւ լաւ է, բայց հնուց ապատութեան սովոր լինելով, այժմս ճնշուում են կառավարութիւնից: Դրանք կիսանկախ բէգերն ու ցեղապետներն են, որոնք թէեւ ոսկով առատ, բայց իրենց նեղն են զգում կառավարական ցանցերում: Այդ տեսակի մարդիկ մեզ աւելի դիւրամատչելի են եւ դրանց վրայ կարելի է յուսալ: Երրորդ՝ մի փոքրիկ շերտ եւս կրթուածների. տաճիկ եւ քիւրտ փինուորականներ են եւ դրանցից շատ քչերն են համակրում մեզ եւ օգնում: Եթէ մի ուժեղ տաճիկ ընկեր ունենանք, հնարաւոր կը լինի այդ խաւի միջոցով մի հիմնաւոր գործ ձեռնարկել: Հայ--տաճիկ--քիւրտ համերաշխութեան համար չի խնայուում ոչ մի միջոց, եւ պէտք է ասել, որ անուանական մեծ քանակութեամբ բարեկամներ ձարուել են... բայց դրանց բարեկամութիւնը կարելի է միայն նուէրներով պահպանել, որ մենք չենք ուզում: Մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է ընտրութիւն անել համակրութիւն ցոյց տուողների մէջ 1) ընտրել այնպիսիներին, որոնք իրենց շահով կապուած են մեզ հետ. 2) չընտրել այնպիսիներին, որոնք յեղափոխական գիտակցութիւն չունենալով, ինչ-ինչ դիտումներով մտնում են մեր շարքերը. 3) ընտրել միայն այնպիսիներին, որոնք յեղափոխական են համոզմունքով եւ նրանց յեղափոխական լինելուն լուրջ շարժառիթներ կան. եւ 4) բացառութիւն կազմել այն օտարների վերաբերմամբ, որոնց նոյնիսկ առերես բարեկամութիւնը անհրաժեշտ է մեր գոյութիւնը պահպանելու եւ սուրհանդակային գործի համար: Մեր այժմեան բարեկամներից աչքի են ընկնում ..... (5):

«Մեր կարծիքը Կովկասեան Խնդրի վերաբերմամբ.- մենք տեսնում ենք, որ Կովկասեան Խնդիրն եւս չինծու եւ արհեստական մի երեւոյթ չէ, այլ ունի իր լուրջ շարժառիթները: Եւ մենք կարծում ենք, որ կովկասեան գործը, եթէ նոյնիսկ մեզ եւ Ռուսաստանի կանապան մարմիններին ցանկալի էլ չլինի, անհնարին է կանգնեցնել. մեր կարծիքով այդպիսի շարժումը ունի իւր ստիպողական պահանջը, ուրեմն եւ հարկաւոր է: Բայց միեւնոյն ժամանակ ցոյց տուինք անցողակի կերպով, որ այստեղ եւս յեղափոխութիւնը ունի իր լուրջ պատճառները, անհրաժեշտ է [շեշտել?] որ նա խելացնոր մարդկանց գիտացիա չէ, այլ մի բնական երեւոյթ, որ առաջ է եկել տագկական ծանր ու անտանելի ոեժիմից: Բացի դրանից այստեղինը մի նոր երեւոյթ չէ, այլ ունի իւր անցեալը ներկուած հարիւր հազարների արիւնով, սրբագործուած հազար ու հազար նահատակների ձեռքով. մի դաւաճանութիւն կը լինէր, թէ՛ մեր եւ թէ ձեր կողմից չճանաչել երկուսի էլ՝ Կովկասի եւ Տաճկաստանի գործունէութիւնը: Իսկ եթէ ճանաչուեց, պարտաւոր է ուժերը թոյլին օգնել: Այստեղ կայ Հայկական Հարց. իսկ եթէ «հայկականը» դուր չի գալիս, հաշուեցէք մի հէլոտ դասակարգի հարց, որին պարտական են օգնել, եթէ ոչ հայը, այլ գոնէ իսկական մարդը, որը թէկուզ ազգային գաղափարներն էլ ընդունելու չլինի:

«Վերջացնելով մեր խօսքը, մնում է մեզ ցանկալ Ձեզ, որ արիւնով ժողովրդի բախտը տնօրինելու մեծ ու պատասխանատու գործի հետ չխաղաք. յաջողութի՛ւն, որ կարողանաք մարդկային առողջ դատողութեան ամբողջ թափով՝ ծրագրել եւ հարթել դէպի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան իտէալը առաջնորդող ուղին»:

11ՐԴ ՆԻՍՏ (28 Փետր., առաւօտ)

Նախագահում է Վռամեան:

Բացակայ են՝ Սաֆօ եւ Մալումեան (վերջինս հիւանդութեան պատճառով):

Կարդացւում է Սասուն-Մուշ շրջանի զեկուցման չարունակութիւնը:

Քննութեան են ենթարկւում հետեւեալ կէտերը՝ քրտերի խնդիրը, զինման հարցը եւ յեղափոխական գործունէութեան խնդիրը: Այս վերջինի վերաբերմամբ Անդրանիկի եւ ուրիշների կողմից նկատողութիւններ են լինում, որ յեղափոխական գործերի մասին զեկուցագրողի տեղեկութիւնները պակասաւոր են եւ տեղ-տեղ կան նոյնիսկ սխալներ: Տեղեկագրի առաջին տեղը կարդացւում է մինչեւ վերջը, երկրորդ տերտրակը, որի մէջ աշխարհագրական եւ վիճակագրական տեղեկութիւնները էին զետեղուած, յանձնւում է ընկ. Ռոստոմին, որ հաշուէ քերերը եւ մի ամփոփ զեկուցում տայ ժողովին այդ շրջանի ժողովրդի վիճակագրական ընդհանուր դրութեան մասին:

Տեղեկագրի առաջին մասի ընթերցումից յետոյ տեղի են ունենում մի շարք լրացուցիչ հարցեր եւ ուղղումներ, որից յետոյ ժողովը փակւում է ժամը 1ին:

12ՐԴ ՆԻՍՏ (28 Փետր., երեկոյ)

Կարդացւում է Սասուն-Մուշի շրջանի տեղեկագրի չարունակութիւնը՝ կազմակերպական եւ դրամական մասը:

Նախագահ.— Ի նկատի ունենալով որ շրջանի ժողովուրդի տնտեսական դրութիւնը մեզ առանձնապէս հետաքրքրում է, առաջարկում եմ այդ հարցի շուրջը խօսել մանրամասնօրէն:

Ռոստոմ.— Առաջարկում եմ՝ անսխալեմ վիճաբանութեան ու հարցերին վերջ տալու համար, այժմ եւեթ պրաղուիլ այդ բաղմաթիւ հարցերին մօտենալու համար որոշ սխալեմ մշակելու խնդրով:

Ստեփանեան.— Ծանձնենք մի յանձնախումբի, պարտաւորեցնելով, որ որ նա վաստպւրականի, Սասունի եւ Մուշի տեղեկագրերի հիման վրայ՝ ընդհանուր զեկուցում ներկայացնէ ժողովին:

Խահակեան.— Ինչո՞ւ քրտերը հայ դիւղացու ամբողջ կալքն ու գոյքը չեն իւրացնում, քանի որ նրանք այնքան ամենազօր են:

Սեպուհ.— Սրանից 40–50 տարի առաջ տաճիկ կառավարութիւնը համարեա թէ գոյութիւն չունէր. ներքին պատուհների, մանաւանդ Մուշի, Բաղէշի կուսակալութեանց մէջ, ժողովուրդը կառավարւում էր տէրէյներով եւ քիւրտ աղաներով: Իւրաքանչիւր աղա ունէր մի քանի հայ դիւղեր. նա հայ դիւղացու դլխի տէրն էր, հայից չարունակ տուռնում էր նրա արմտիքի տասանորդը եւ բաժինը ամէն մի եկամուտէն, ինչպէս բուրդ, ղառ եւն. հայը նոյնիսկ իւր աղջիկը ամուսնացընելու համար՝ մինչեւ աղայի կամքը չառնէր, իրաւունք չունէր որեւէ դրական քայլ առնելու: Աղան ուզած ժամանակը կարող էր իւր հային ծախել: Եթէ մի ուրիշ ցեղի քիւրտ աղայի հային կեղեքէր կամ թալանէր, սրա աղան ալ անմիջապէս կը դնար եւ թալանող քրտի հային կը թալանէր փոխադարձաբար: Այս վիճակը չարունակւում էր մինչեւ յեղափոխութեան օրերը. այժմ էլ տեղ տեղ կատարւում է այդ բանը. օրինակ բայազետցի աչերը Սասնոյ սարերը բարձրանալիս, սարի տտորտում դտնուած հայ դիւղերից իւր փախերութիւնն է տտանում:

Ռոստոմ.— Ընկ. Խահակեանի դրած հարցը պարզելու համար, հարկ եմ համարում յիշեցնել, որ Տաճկահայաստանը առաջներում կառավարւում էր խոշոր տէրէյէյների՝ աւատական իշխանների ձեռքով: Կենտրոնական իշխանութիւնը գոհանում էր միայն որոշ տուրք վերցնելով տէրէյէյներից, թողնելով երկրի ներքին կառավարութիւնը ամբողջապէս նրանց վերայ: Եթէ չեմ սխալւում, 40ական թուականներից կենտրոնական իշխանութիւնը կռիւ յայտարարեց տէրէյէյներին, եւ օգտուելով նրանց ներքին հակառակութիւններից, յաջողեց ընկճել վերջիններէ ղօրութիւնը: Այժմեան քիւրտ ցեղապետները, որոնց ձեռքին են դտնւում այս կամ այն շրջանի հայ դիւղերը, բեկորներ են նախկին աւատական իշխանութեան: Նրանք, ինչպէս եւ իրենց նախնիքը, պաշտպանում էին իրենց շրջանի հայերին, մխւների յարձակումներից եւ իբր փոխարինութիւն՝ հովանաւորութեան համար կեղեքում էին նրանց աշխատանքը: Ուրեմն իրենց սեփական շահերի համար՝ եկամուտի յարաճուն աղբիւրը նրանք պէտք է պահպանեն եւ ոչ թէ ոչնչացնեն միանգամից:

Ժողովը բազմաթիւ հարցեր յարոյց Տարօնի ժողո-

վերջի տնտեսական վիճակի, յեղափոխական ոգու եւ կազմակերպական–ռազմական դրութեան մասին: Բոլոր հարցումներին պատասխանում էին դլխաւորաբար Անդրանիկը եւ մասամբ Սեպուհն ու Մուրատը: Ընդհանուր առմամբ, թէ՛ տեղեկագրի եւ թէ Անդրանիկի տուած տեղեկութիւնների հիման վրայ, ժողովը ամբողջական գաղափար է կազմում Սասուն–Մուշի չբրջանի Դաշնակցութեան կազմի դործերի վերաբերմամբ:

13ՐԴ ՆԻՍՏ (1 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Ներկայ են պատգամաւորը:

Բացակայ են՝ Ստեփանեան, ...(5):

Ընկ. Ստեփանեանի բացակայութեան պատճառով՝ նախանցեալ ժողովի արձանագրութիւնները չեն կարդացւում եւ ժողովը անցնում է ընկ. Զարդարեանի կազմած արձանագրութեան, որը հաստատւում է մի քանի ուղղումներով:

Ռոստոմ.— Նախորդ ժողովներում դանազան անձիւդ արտայայտութիւններ են եղել Արեւելեան Բիւրոյի գործունէութեան մասին, որ եւ անցել է արձանագրութեանց մէջ: Ինդրում եմ արձանագրել, որ Բիւրոյի ներկայացուցիչը այդ արտայայտութիւններին խոկոյն եւեթ բացատրութիւնը չէ տալիս այն պատճառով՝ որ այդ հարցերի քննութիւնը համարում է վաղաժամ:

Նախագահ.— Օրակարդին անցնելուց առաջ կարդում է այն նամակը, որ համաձայն Ընդհանուր ժողովի առաջին նիստում կայացած որոշման՝ ուղղուած էր Աւստրիական Սոցիալիստական Դուսակցութեանը՝ արտայայտելու ժողովի համակրանքը աւստրիական ընկերներին եւ առաջարկելու նրանց 500 քրօն, ընտրողական ադիտացիայի համար:

Ժողովը հաւանութիւն է տալիս նամակին:

Նախագահը կարդում է մի հեռագիր Բալկանի կենտրոնական կոմիտէից, որով նրանք խնդրում են անմիջապէս ուղարկել 5000 ֆրանկ, զինուորական դպրոցի գործի համար:

Անդրանիկ բացատրում է այդ փողը ուղարկելու կարեւորութիւնը: Ըստ երեւոյթին տաճիկ կառավարութիւնը բողոքներ է յարուցել դպրոցի դէմ եւ բուլղարական կառավարութիւնը խնդրը ծածկելու համար ստիպում է դպրոցը տեղափոխել մի այլ տեղ:

Ռոստոմ առաջարկում է հարցի քննութիւնը յանձնել մի յանձնաժողովի:

Զաւրեան եւ Մաշուր, նկատելով խնդրի կարեւորութիւնը, առաջարկում են խնդրի քննութեամբ զբաղուել հենց այստեղ:

Մինասեան.— Այդ հարցի կարգադրութիւնը պէտք է թողնել Արեւմտեան Բիւրոյի եւ Բալկանեան կ. կոմիտէի ներկայացուցիչներին: Հարցը անյետաձգելի կարեւորութիւն ունի, եւ եթէ այդ հարցը թողնենք Ընդհանուր ժողովի երկարաձիգ քննութեանը՝ դպրոցի գործը կարող է վտանգուել:

Վռամեան.— Ընդհանուր ժողովի գումարելուց յետոյ, բոլոր մարմինները լուծուած են. չկայ Արեւմտեան Բիւրոն եւ այլ մարմիններ, հետեւաբար այդ հարցի քննութեան համար Ընդհանուր ժողովը պէտք է ընտրէ մի ժամանակաւոր Գործադիր Մարմին՝ որ կ'ացնի գործի քննութեան:

Նախագահը հերքում է Վռամեանի տեսակէտը, առարկելով, որ եթէ Բիւրոները՝ Ընդհանուր ժողովի գումարած առնը լուծուած համարուեն, պէտք էր լուծուած համարուէին օրինակ եւ կ. կոմիտէները, որ կը նշանակէր կանգնեցնել ամբողջ կազմակերպութեան գործերը:

Զարդարեան, առարկելով նախագահին՝ յայտնում է, թէ Բիւրոների եւ կ. կոմիտէների մէջ տարբերութիւն կայ. Բիւրոները ընտրւում են Ընդհանուր ժողովից, իսկ կ. կոմիտէները՝ իրենց չրջաններից, հետեւաբար Ընդհանուր ժողովի գումարման առնն կ. կոմիտէները լուծելու մասին խօսք անգամ լինել չէ կարող:

Ռոստոմ հերքում է Վռամեանի տեսակէտը եւ առաջարկում պործի քննութիւնը թողնել համապատասխան մարմիններին:

Զոփուրեան.— Այդ հարցը Ընդհանուր ժողովում քննութեան ենթարկուել կարող է միայն ըստ էութեան, եւ այդ դէպքում կարող է հարց յարել առհասարակ զինուորական դպրոց ունենալու կարեւորութեան մասին: Բայց որովհետեւ հարցը այս ձեւով չէ դնւում՝ ապա քննութիւնն էլ դուրս պէտք է հանել մեր այսօրուայ գրաղմունքից:

Սեպուհ.— Արդէն Արեւմտեան Բիւրոն եւ Բալկանեան կենտրոնական կոմիտէն մի ձեռնարկ են արել, որ 45–48 հազար ծախք է նատել, եւ այսօր այդ դպրոցը պահանջում է 5000 ֆրանկ. Թող ձեռնարկող մարմինները իրենց պատասխանատուութեամբ այդ դրամը տան: Ըստ էութեան գործի մասին կը խօսենք այն ժամանակ, երբ Բալկանեան կ. կոմիտէն այդ մասին իր դեկուցումը կը կարդայ:

Վռամեան պնդում է իր նախկին կարծիքի վրայ:

Չելալեան միանում է Վռամեանի կարծիքին եւ առաջարկում է ընթացիկ կարեւոր գործերի համար ընտրել Ընդհանուր ժողովի կողմից լիազօրութիւն ունեցող մի յանձնաժողով:

Ժողովը մերժում է ընկ. Վռամեանի առաջարկը. բացի դրանից, որոշում է, որ դրամի հարցի քննութիւնը պէտք է դուրս հանել ժողովի այսօրուայ գբաղմունքներից:

Նախագահ.— Անցնում ենք օրակարգին, Սասուն–Մուշի տեղեկագրի քննութեան:

Վռամեան խնդրում է ընկ. Անդրանիկին հանգամանօրէն բացատրել հայ–քրտական յարաբերութիւնները, Մուշ–Սասունի չրջանում:

Շահխաթունեան.— Կարելի՞ է արդեօք ենթադրել, որ Մուշ–Սասունի չրջանում դրութիւնը այնպիսին է, որ եթէ կազմակերպութիւնը չուղեներ էլ ընդհարում յառաջացնել՝ այդ ընդհարումները կը յառաջանան:

Իսահակեան խնդրում է բացատրել քիւրտ աչիրէթների եւ ցեղերի ներքին սորուկտուրան [կառոյցը] եւ իրաւական յարաբերութիւնները:

Ռոստոմ ուզում է իմանալ, թէ ի՞նչպէս է Սասունի չրջանի դրութիւնը ռազմական տեսակէտից:

Նախագահը դասաւորում է հարցերը՝ առաջարկելով ընկ. Անդրանիկին պատասխանել:

Անդրանիկ.— Զանազան բարեկամ աղաներ, որոնց իւրաքանչիւրը մի քանի հազար հրացանաւոր ունի, ասել են, թէ իրենք ստիպուած՝ առերես պէտք է դուրս գան հայերի դէմ. սակայն հրացան կ'արձակեն դէպի հայերը առանց դնդակների: Այդ առաջարկը ռազմական նկատումներով չէ ընդունուել: Ինքը երբեք հաւատ չունի քիւրտերի վրայ՝ իբրեւ բարեկամների: Նրանց ամենատկարութեան եւս չէ հաւատում: Նրանց մերձեցման փորձերը համարում է իբրեւ վախի արտայայտութիւն եւ մի միջոց, որ հայերը նրանց ճանապարհները չկտրեն: Անհատ քրտեր կան, որոնք, իբրեւ, օգնում են, բայց այդ օգնութիւնը միայն վարձատրութիւնից է կախուած: Իւր ճանչցած քիւրտ ցեղերի մէջ (Տիգրանակերտից մինչեւ Վարակատանի սահմանը գտնուող քրտերի մէջ) 150 հազարի չափ զէնք կրողներ կը լինեն, որոնց մէջ 30 հազարը համիտիէ են: Քրտերից զինական պարագաներ առնուել են վարձատրութեամբ: Քրտերը իւր դէմ դաւադրութիւն են կազմել, դաւադիրները պատժուել են. սրանց գլխաւորը ոչնչացուած է, իսկ մնացեալները գիւղից դուրս են արուել: Դրանք մեր ամենալաւ բարեկամներն են եղել...: Բարեկամութիւնը միմիայն մեր ուժի, մեր ազդած վախի ազդեցութեան տակ է եղել: Դրանց հետ բարեկամութիւն երբեք չէ կարելի: Վերջին ժամանակները Մուսա Բէգի տղայ Ալի Բէգ անունով մի քիւրտ ցանկացել է գնալ Սասուն պատապարուելու, սակայն այդ առաջարկը վայելուչ պատրուակներով մերժուել է: Նրա ազգականն էլ այժմ Գէորգ Չաւուշի հետ է, բայց ինքը չէ հաւատում այդ բարեկամութեան: Այդպէս է կազմակերպութեան եւ քրտերի յարաբերութիւնը: Գալով երկու ժողովուրդի յարաբերութեանը, գտնում եմ այն՝ անբարեացակամ. չկայ ոչ ցեղական եւ ոչ կրօնական մերձեցում. իսկ տնտեսական–քաղաքական հողի վրայ՝ այդ մերձեցումը անհնարին է ներկայ կառավարական ուժգիմի տակ: Երբ նրանք կարող են ազատ քալել, սպաննել, առեւանգել՝ ինչո՞ւ պէտք է միանան իրենց գոհերի հետ: Համերաշխութեան պրոպագանդը այդպիսի պայմաններում մի կարեւոր ազդակ չէ հանդիսանում, որովհետեւ դրան հակադրւում է կառավարութեան պրոպագանդը: Քրտերը մեզ ասում են. «Դուք ասում էք, թէ ձեր գործը բոլորի համար է, բոլորի բարեկեցութիւնը աչքի առաջ ունէք, իսկ կառավարութիւնը ասում է, թէ դուք ուզում էք բոլոր հողերը ձեռք ձգել եւ ձեր իշխանութիւնը հաստատել»: Եթէ կառավարութիւնը փոքր ինչ սանձահարէ քրտերին՝ նրանց տրամադրութիւնը դէպի մեզ անպայման կր բարելաւուի, որովհետեւ կրօնական հակառակութիւնը ինքնըստինքեան կարեւոր գործօն չէ մեր յարաբերութիւնների մէջ. քրտերը չատ էլ կրօնամոլ մահմետականն չեն եւ չատ էլ բան չեն հասկանում այդ կրօնից:

Ռոստոմ.— Մենք քրտերին վստահել չենք կարող, իբրեւ լիակատար բարեկամների. բայց եթէ հարկաւոր ուժը ունենանք, ի՞նչ չափով մենք կարող ենք յոյս ունենալ քրտերի ակիւտ [գործօն] աջակցութեան կամ պասիւ [կրաւորական] ձեռնպահութեան վրայ:

Անդրանիկ.— Վստահօրէն այդ հարցին պատասխանել չէ կարելի. փաստը այն է, որ երբ կառավարութեան կողմից Սասունի վրայ գալու հրաւէրը եղաւ, մեզ վրայ ոչ միայն հեռաւոր քրտերը եկան, որոնց մենք բնաւ չէինք ճանաչում, եւ որոնց հետ յարաբերութիւն չէինք ունեցել, այլեւ մեր երէկուայ գինակիրն ու օգնողը: Եթէ հնար լինի մեր քարուքանդ ժողովուրդին պահպանել եւ նրա ներկայ թշուառութիւնները փոքր ինչ մոռցել եւ յեղափոխական գործը կանոնաւոր հիմքերի վրայ դնել, այն ժամանակ դուցէ կարելի լինի որեւէ դրական հետեւանքի հասնել: Ապա Անդրանիկը բացատրում է, թէ ի՞նչ սիստեմով է տարուել Տաճկահայաստան հայդուկները ուղարկելը եւ թէ որքա՞ն կորստաբեր է եղել այդ սիստեմը կազմակերպութեան համար: Նրա կարծիքով պէտք էր մեծ ուժեր կենտրոնացնել մի վայրում եւ ոչ թէ այդքան փոքրիկ փոքրիկ խմբակներ (Խան, Վաղարչակ, Երկաթ, Նեբրուզ, Գայլ Վահան, Միհրան եւն.) կորստեան մատնել:

Նախագահը նկատում է, որ բանախօսը ներքից չեղուում է:

Անդրանիկ.— Գալով Շահխաթունեանի եւ Ռոստոմի հարցին, պէտք է ասեմ, որ ընդհարումները վրէժի կամ տնտեսական հողի վրայ անխուսափելի են եւ անխափանելի: Ընդհարում՝ 1904ի մարտով չէ կարող առաջանալ այն պարզ պատճառով, որ ներքինական ուժ չկայ ժողովուրդի մէջ: Այնուհետեւ անցնելով 904ի կռիւների չարժառիթներին, հանդամանօրէն բացատրում է զօրանոցների չինութեան պատմութիւնը եւ կառավարութեան բռնած բացարձակ պրովոկատորական [դրգռիչ] ընթացքը: Պատասխանելով յատկապէս զօրանոցի վերաբերեալ հարցերին, նա բացատրում է, որ Սասնոյ չրջանի քրտերից չատերը իրենք հակառակ էին Սասնոյ զօրանոցների կառուցմանը, որովհետեւ վախենում էին, որ զօրքերի կենտրոնացումը Սասունում կարող էր վատ անդրադառնալ իրենց ազատութեան վրայ. զօրքը կարող է մի կերպ տեղի իրենց ցեղական խըռպռիններին եւն.:

Վահագն.— Հնարաւոր չէ՞ արդեօք քրտերին որեւէ միջոցով դրդռել կառավարութեան դէմ:

Սեպուհ.— Քիւրտերը բաժանւում են աչիրէթների եւ ոտյաների. աչիրէթների հետ հաստատուն բարեկամութիւններ անհնարին է. մինչեւ նրանք կառավարութենէն դիմաթափ չլինեն կամ չհալածուեն, նրանց կառավարութեան դէմ գրգռել չէ կարելի:

Անդրանիկ.— Եթէ որեւէ միջոցով հնարաւորութիւն էլ լինի, այս կամ այն քիւրտ ցեղը գրգռել կառավարութեան դէմ, դա գործնական նշանակութիւն ունենալ չէ կարող մեզ համար, որովհետեւ այդ գըրգռումը ընդհանուր նշանակութիւն չէ կարող ունենալ՝ քրտերի ցեղական թշնամութիւնների պատճառով. կառավարութեան դէմ եղած մի քիւրտ ցեղի դէմ կը միանան կառավարութեան հետ այդ ցեղի թշնամի ցեղերը եւ նրա ըմբոստացումը կ'անդամալուծեն:

Բարսեղեան.— Արդեօք երկրագործ քիւրտերի բարեկամութե՞ն եւս չենք կարող վստահ լինել:

Անդրանիկ.— Ամենավատ եւ մեզ թշնամի քրտերը հենց դաշտի մէջ գտնուած երկրագործ քրտերն են:

Չելալեան.— Եթէ հայերը իրենց բոլոր ոյժը այժմ դարձնեն ոչ թէ կառավարութեան, այլ հենց այդ քըր-

տերի դէմ, որոնք ամէն տեղ մեզ քշնամի տարբ են հանդիսանում, ի՞նչ կը լինի դրա հետեւանքը եւ ի՞նչպէս կ'անդրադառնայ այդ բանը կառավարութեան դէմ մեզ ունեցած քաղաքականութեան վրայ:

Անդրանիկ.— *Մինչեւ այժմ էլ մեր կուսակցի 20%ը քրտերի դէմ է եղել. առաջ կուսակցութիւնն էլ նրանց օգնութեան է հասել: Եթէ մենք այսօր արդէն պաշտօնապէս դարձնենք մեր դէնքերը դէպի քիւրտերը, մեր դատը կը կորցնէ իւր քաղաքական բնոյթը, կը նկատուի իբրեւ ցեղական կուիւ եւ միւս կողմից էլ կառավարութիւնից ոչինչ չենք չահիր, ինչպէս եւ մինչեւ հիմա չենք չահեր, երբ անուղղակի ստիպուած ենք եղել քրտերի հետ բնդհարուածքների:*

Մուրատ.— *Շահխաթունեանի այն հարցին, որ եթէ յեղափոխական ձեռնարկներ չանենք Տաճկահայաստանում, արդեօք այնտեղ խաղաղութիւնը կը վերականգնի՞ թէ ոչ՝ կը պատասխանեմ ահա թէ ինչ: Անցեալներում քիւրտը միշտ յեղափոխականներից կամ այն վայրերից ուր յեղափոխականներ են եղել՝ խոյս է տուել: Միւս կողմից էլ ժողովուրդը, եթէ վճռենք էլ բռնի ձեռնարկները դադրեցնել, չի հաշտուելու, որովհետեւ արդէն դանակը ոսկրին է հասել: Դառնալով Ռոստոմի այն հարցին, թէ կարելի՞ է վստահել մեր ժողովուրդի տրամադրութեանը՝ նոր ձեռնարկներ անելու, պատասխանում եմ, որ անպայման կարելի է, եթէ գործը խելացի հիմունքների վրայ դրուի եւ եթէ գործի գլուխ անցնեն այնպիսի մարդիկ, որոնք Երկրի տեղական պայմաններին եւ ժողովուրդի հոգեբանութեան ծանօթ են:*

Ժողովը օրակարգի Ա. մասի Բ. կէտը ապառած է համարում:

Նիստը փակւում է:

14ՐԴ ՆԻՍՏ (1 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:
Ներկայ են պատգամաւորներ:

Նախագահը Ժողովի հայեցողութեան է ենթարկում մի քանի ընթացիկ հարցեր. 1) Ստացած տեղեկութիւնների հիման վրայ, առանց նախնական հրաւէրի ճանապարհ է ընկել ընկ. Սաքոն: Նախագահը խնդրում է Ժողովում նրան ընդունելու մասին որոշում կայացնել:

Զաւրեան.— *Ժողովը մի անգամ որոշել է, որ մեզ յայն 7 ընկերներ կարելի է հրաւիրել յայտնի [ձայնի ?] իրաւունքով. այդ որոշումը մեզ արժել է մի քանի ժամ. նորից դրան դառնալ չէ կարելի: Միակ ելքն այն է, որ այժմ եւեթ կազմենք խորհրդատու ձայնով հրաւիրելիք ընկերների ցուցակը եւ նրա մէջ անցկացնենք ընկերոջ:*

Ռոստոմ.— *Եթէ Սաքոն այստեղ գալիս է ոչ իբրեւ պատգամաւոր, ապա մենք նրան կ'ընդունենք իբրեւ ընկեր՝ ձայնի իրաւունքով:*

Զաւրեան.— *Բողոքում եմ Ռոստոմի առաջարկի դէմ:*

Վռամեան.— *Օրակարգից դուրս դառնալը իւրաքանչիւր առաջարկ կարող է Ժողովը քննութեան առնել միայն այն ժամանակ, երբ այդ առաջարկը առորագրուած է առնուազն 10 ընկերոջ կողմից: Ներկայ առաջարկը՝ Սաքոյին Ժողովում ձայն տալու մասին, ըստ ձեւի զարտուղութիւն է:*

Անդրանիկ.— *Այդ հարցը այժմ դնելը աւելորդ է, պէտք է սպասել մինչեւ գալը կամ հրաւիրուած ընկերներից պատասխան առանալը:*

Զելալեան.— *Այժմ եւեթ պէտք է որոշ դիրք բռնել դէպի Սաքոն, իբրեւ ընկերոջ՝ որ առանց Ժողովի հրաւէրին գալիս է այստեղ. այլապէս մենք ապագային չատ անախորժ դրութեան մէջ կ'ընկնենք:*

Մաշուր.— *Բաւական է որքան դաշնակցական ժողովներին ընտանեկան բնաւորութիւն տուինք: Անձնաւորութիւնների մասին չխօսենք եւ ոչ էլ զգացումներ յարուցանելու տեղիք կայ: Ինչ որ մի անգամ որոշած է, պէտք է այնպէս էլ մնայ. այլապէս մենք դադարում ենք լուրջ Ժողով լինելուց:*

Սեպուհ.— *Սաքոյին պէտք է ընդունել ձայնի իրաւունքով, իբրեւ մեր վաստակաւոր ընկերոջը: Այդ պէտք է անենք Քէկուզ հենց նրան յարգելու համար:*

Նախագահը խօսելով Սեպուհի դէմ, չէշտում է, թէ չպէտք է սկզբունքն ու կանոնաւորութիւնը առորդասել, որքան [ալ որ] հարցի ենթակայ ընկերները յարգելի լինեն:

Անդրանիկ պնդում է դարձեալ, թէ այսօր այդ հարցը դնելն աւելորդ է, քանի որ նա՝ Սաքոն, դեռ չէ եկել եւ դեռ չգիտենք էլ, թէ արդեօք նա իրբեւ պատգամաւո՞ր է գալիս թէ ոչ:

Խսահակեան մխանում է նախագահի կարծիքին եւ գտնում, որ ընկ. Սաքոյին համակրանք յայտնել կարելի է շատ ձեւերով, բայց ոչ կազմակերպական առատունները [կանոնագրութիւնը] խախտելով:

Սեպուհ.— *Ես չեմ ուզում իմ խօսքերով ընկերներն զգացմունքը չարժել. կանոնները հաստատողը մենք ենք եւ համաձայն կանոնների կարող ենք 10 հոգու առորագրութեամբ այդ առաջարկը մուցնել օրակարգի մէջ, քննութեան համար:*

Մուրատ սկզբունքով համաձայն է Մալումեանին եւ ուրիշների հետ, սակայն գտնում է, որ Սաքոյի համար պէտք է բացառութիւն կազմել:

Զաւրեան.— *Սաքոն եթէ գայ ոչ իբրեւ պատգամաւոր, ընդունել նրան խորհրդատու ձայնով եւ եթէ մեր հրաւիրած ընկերներից մէկն ու մէկը չգայ՝ ընդունել Սաքոյին չեկողի տեղը, ձայնի իրաւունքով:*

Անդրանիկ, Շահխաթունեան առաջարկում են յետաձգել հարցի քննութիւնը մինչեւ Սաքոյի գալը:

Ժողովը մերժում է երկու առաջարկներն էլ եւ հարցը քողնում է առկախ:

Նախագահը քննութեան է առաջարկում խորհրդատու ձայնով ընկերներ հրաւիրելու հարցը:

Խսահակեան.— *Խորհրդակցական ձայնով ընկերներ հրաւիրելու հարցը պէտք է հերթից հանել եւ այդ մասին որոշումներ կայացնել միայն իւրաքանչիւր կոնկրէտ [չօշափելի, յատակ] հարցի առիթով:*

Շահխաթունեան, Զոփուրեան անյարմար են գտնում Իսահակեանի առաջարկը, պատճառաբանելով որ հրաւիրելիք ընկերները հնում են եւ պէտք է այժմ եւեթ նրանց հրաւիրել, որպէսզի նըրանք ժամանակին հասնեն:

Ռոստոմ, Զոփուրեան առաջարկում են սպասել մինչեւ հրաւիրուած ընկերների գալը:

Անդրանիկ իւր րողոքն է յայտնում, որ դիւանը ոչ մի որոշում չէ կայացնում չնայած պատգամաւորներին հրաւիրելու համար: — *Մեր այս խառնակ պայմաններում Ընդհանուր Ժողովը իւր այս պակասաւոր կազմի պատճառով՝ պէտք է ամէն կողմից յարձակման ենթարկուի:*

Նախագահը բացատրում է, որ պատգամաւորների չգալուն համար պատասխանատու են իրենք պատգամաւորները, քանի որ դիւանը արել է ինչ որ կարող էր անել եւ ինչ որ պարտաւոր էր անել:

Ժողովը այս հարցը եւս առկախ քողուց:

Նախագահը առաջարկում է քնարել յանձնախումբը ա) հաշիւները քննելու, բ) Սասունի համար տեղեկագիր-տախտակ կազմելու, գ) Վասպուրականի համար տեղեկագիր-տախտակ կազմելու, հիմնուած տեղեկագրերի վերջնական տեղեկութիւնների վրայ:

Անդրանիկ *առաջարկում է, որ իւրաքանչիւր մարմին հաշիւները քննելու համար ընտրուած յանձնախումբի մէջ մտնեն նոյն մարմնի ներկայացուցիչները:*

Ժողովը որոշում է, որ հաշուական յանձնախումբի մէջ մտնեն կազմակերպական չրջանների ներկայացուցիչները եւ ընտրում է այդ յանձնախումբի համար հետեւեալ անձերին՝ Սահակեան, Անդրանիկ, Իլիան, Գրիգորեանց(7), Զելալեան, Մինասեան:

Նիստը փակւում է:

15ՐԴ ՆԻՍՏ (2 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Վռամեան:
Ներկայ են Ժողովական:
Բացակայ են՝ Սաֆօ, Իլիան, Վահագն, Սահակեան:

Նախագահը առաջարկեց ի նկատ ունենալ նախորդ Ժողովների որոշումների համաձայն՝ Մոլափի եւ Լեռնավայրի ներկայացուցիչների խնդիրը:

Կարծիքների փոխանակութենից յետոյ, որոշուեց Մոլափի ներկայացուցչին տալ միայն խորհրդակցական ձայն, մինչեւ նրա տեղեկագրի մասին յանձնաժողովը կը հաղորդէր քննութեան արդիւնքը, իսկ Լեռնավայրի ներկայացուցչին յայտնել, որ նա իւր քաղքերը ներկայացնէ դիւանին:

Ապա Ժողովը անցաւ օրակարգի: Ընկ. Մալումեան ներկայացրեց Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը (1904–1906):

Մալումեան նախապէս ցոյց տալով մի այսպիսի բարդ եւ պատասխանատու գործի հետ կապուած ահագին դժուարութիւնները, անցաւ տեղեկագրի էական կէտերին:

ա) **Արեւմտեան Բիւրոյի եւ Խմբագրական կազմը.**— Բիւրոյի Ընդհանուր Ժողովից ընտրուած անդամներն էին՝ Ահարոնեան, Ռոստոմ եւ Մալումեան [Ակնունի]: Եւրոպական պրոպագանդի համար ընտրուած էին՝ Մ. Յովհաննէսեան [Վարանդեան] եւ Յ. Լորիս Մելիքեան: Դրամական հաշուապահական գործերի համար հրաւիրուեց, 1904ին, Գալֆայեան(8): Մարը(9) սկսեց աշխատել 1905 թուի Մայիսից: Սրանցից Ահարոնեան, Ռոստոմ (1905 Սեպ.), Յովհաննիսեան (1906 Մարտին) գնացին Կովկաս, այնտեղի խմբագրական եւ վինական գործերի համար: Իսկ Լորիս Մելիքեան հեռացաւ Պետերբուրգ (1905 Փետ.), անձնական գործերով: Այսպիսով Բիւրո-Խմբագրութեան մէջ մնացին միայն երեք հոգի: Գործը աւելի յաջողութեամբ յառաջ տանելու համար՝ մի քանի անգամ դիմում եղաւ Արեւելեան Բիւրոյին, նոր ընկերների համար. բայց տրամադրելի ուժերի չգոյութեան պատճառով արդիւնք չունեցաւ:

բ) **Բիւրոյի գործողութիւնները** խիստ բազմատեսակ են.— Մարմինների հետ, յարաբերութիւն արտաքին աշխարհի հետ, շրջաբերականներ Մարմիններին, Ընդհանուր Ժողովի որոշումների իրագործումը, կազմակերպական եւ հաշուական կնճռոտ խնդիրներ, Երկրի մարմինների հետ մշտական յարաբերութեան պահպանումը, Բիւրոյի եւ Խմբագրութեանը ներքին գործերը՝ կազմակերպական ձեռնարկներ, տպագրական--հրատարակչական գործեր, պրոպագանդ եւն.:

գ) **«Դրօշակ»ի հրատարակութիւնը.**— Խմբագրութիւնն աշխատել է գործը կանոնաւորել: Աւելի արդիւնաւոր դարձնելու համար, չնայելով աշխատող անձերի սակաւութեան, որոշուեց «Դրօշակ»ը ամիսը երկու անգամ հրատարակել, սկսած 1905ի Նոյեմբերից: Դրա նպատակն էր աւելի յաճախ յարաբերութեան մէջ լինել ընթերցող խաւերի հետ եւ կարկ տալ յեղափոխական գաղափարների տարածման: Սակայն Հոկտեմբերեան Մանիֆէսթը թոյլ տուեց Կովկասի ընկերներին այնտեղ մի թերթ հիմնելու, որը իր վրայ էր առնում կովկասեան հարցերի ուսումնասիրութիւնը և այդ հիմք տուեց «Դրօշակ»ը նորից ամսական դարձնելու: «Դրօշակ»ի բովանդակութեան վերաբերմամբ՝ Խմբագրութիւնը մնաց խիստ հաւատարիմ Ընդհանուր Ժողովի որոշումներին և չմտաւ վիճեալ խնդիրների մէջ, կազմակերպական շարքերում նոր բարդութիւններ չառաջացնելու համար: Այդ դիրքը, ինչպէս երեւում է, ընդունուեց ընդհանուր գոհունակութեամբ կազմակերպութեան շրջաններում: «Դրօշակ»ը 1904ին տպւում էր 3000 օրինակ, 1906ին այդ թիւը արդէն հասնում էր 12.500ի: «Դրօշակ»ին մասնակցել են, բացի ընկերներից, եւրոպացի մի խումբ բարեկամներ, արտայայտելով իրենց կարծիքները Հայոց Հարցի մասին, ինչպէս Պրէսանսէ, Միլհօ, Քիար, Լօրիա, Ֆրապան, Լօմբրօզօ, Րակկա, Բօլհօ եւն.: Խմբագրութիւնը վճռական կերպով դէմ է եղել օրգանի էջերում պոլեմիկ [բանավէճ] սկսել, եւ ստացուեց դրա համար ընկերների ջերմ հաւանութիւնը:

դ) **Հրատարակութիւններ.**— Գիրքերը եւ բրոշիւրները, որոնք լոյս են տեսել Երրորդ Ընդհանուր Ժողովից յետոյ (հայերէն, թուրքերէն եւ ֆրանսերէն լեզուներով) հետեւեալներն են. 1) Հայրենիքի գաղափարը, Մ. Վարանդեան. 2) Կազմակերպական կանոններ. 3) Դէպի կռիւ, Է. Ակնունի. 4) Յեղափոխականներ, Ս. Նիրվանեան. 5) Նախագիծ Կովկասեան գործունէութեան. 6) «Փատվիլի ցարիկմա» [ռուսերէն զըրուած], Վ. Արարատսկի. 7) Les tueries de Bakou [Պաքուի ջարդերը], Ա. Արապի. 8) Յեղափոխական Դաշն. 9) Հ. Յ. Դ. Երրորդ Ընդհանուր Ժողովի Ատենագրութիւնը. 10) Կոչ Մահմետականներին (թուրքերէն). 11) Les Plaies du Caucase [Կովկասեան վէրքերը], Է. Ակնունի. 12) Ապատութեան ճանապարհին, Ղարիբ, դ. գրքոյկ. 13) Մեծ մարդասպանի դէմ (դատավարութիւն). 14) Վիտոշի Բապէն, Վտարանդի. 15) Յեղափոխականի մտքերը, Քր. Միքայէլեան. 16) Հայորդիները, Սիամանթօ. 17) Սասուն--Մուշի կռիւները. 18) Հայկական տանջանքները և Եւրոպան, Բերնշտէյն. 19) Մարտական հրահանգներ, Անդրանիկ. 20) Միացեք. կոչ Թուրքիայի բոլոր ապգերին (թուրքերէն). 21)

Թիւրքական բանտերը, Մար. 22) Քաղաքական կուսակցութիւնները Ռուսաստանում, Արարատսկի. 23) Հայաստանը եւ Եւրոպան, Գ. Բրանդէս:

Պատրաստւում է մեր յեղափոխական հերոսների եւ գործողների կենսագրականը «Դէպի պանդէոն» անունով, ինչպէս մի աշխատութիւն կովկասեան վերջին դէպքերի մասին, նաեւ օտար յեղափոխականների կենսագրականները՝ բրոշիւրային ձեւով հրատարակելու համար: Տարածուած գրքերի եւ բրոշիւրների քանակը հասնում է 80 հազարի: Եւրոպական լեզուներով բրոշիւրներ՝ մօտ 20 հազար («Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» հրատարակութիւն). հրատարակուած են մեծ քանակութեամբ հերոսների պատկերներ եւ յեղափոխական նկարներ: «Pro Armenia»ն խմբագրելով հանրածանօթ հայասէր ֆրանսիացիների ձեռքով, այդ օրգանը մատուցանում է գնահատելի ծառայութիւն մեր դատին: Համաձայն Խորհուրդի որոշման, ձեռնարկուեց նոյնպէս մի թերթի հրատարակութեան Լոնդոնում, անգլերէն լեզուով, որի մի համարը միայն լոյս տեսաւ: Ցիշեալ քաղաքում հիմնուեցաւ մի «օֆիս» պրոպագանդի գործին նպաստելու համար. տարաբախտաբար գործը տեւողական չեղաւ (սրա մանրամասնութիւնները թողնուեց Եւրոպական Պրոպագանդի տեղեկագրին): Հռովմում լոյս տեսնող իտալերէն «L'Italia all Estero» թերթի մէջ կարեւոր տեղ պիտի գրաւէ Հայկական Հարցը: Այդ օրգանը նպաստի դիմում է արել Արեւմտեան Բիւրոյին:

ե) **Պրոպագանդա.**-- Գործը մամուլից դուրս եկաւ և դրուեց աւելի լայն հողի վրայ, հասնելով պարլամենտներին, միջ-պարլամենտական կոնգրէսներին [խորհրդաժողովներ, համագումարներ]: Հայոց Հարցը Լահէի Ժողովի առաջ տանելու համար դիմումներ են եղել Ռուվվելթին եւ եւրոպական մի քանի երկիրների կառավարութիւններին: Տեղեկութիւններ կան, որ Միացեալ Նահանգների նախագահը, հակառակ իւր ձեւական բացասութեան, մտադիր է մեր հարցով զբաղուել: Ցիշատակուեցաւ թէ ինչպէս Հռովմի ամերիկեան հիւպատոսը եւ մի ամերիկացի խմբագիր, Ժընեւ գալով, յայտնել են Բիւրոյին, թէ նախագահը տրամադիր է քայլեր առնել եւ հարկաւոր է միայն ապդեցիկ բարեկամի միջոցով ապդել: Բերուած տեղեկութիւններից երեւաց, որ Ամերիկայի նախագահը յանձնարարել է Պոլսոյ դեսպանին մի տեղեկագիր պատրաստել Հայոց Հարցի մասին, մանրամասն կերպով: Այդ տեղեկագիրը երեւի պիտի ծառայէ իբր նիւթ Լահէի դիմումին: Առաջ բերելով Պարիզ եւ Լոնդոն եղած դիմումները եւ կաբինետներին [դահլիճներ] ուղարկուած մեմորանդումները [յուշագրեր], վեկուցանողը յայտնում է թէ Հայկական Խնդիրը շատ արծարծուած է, նպաստաւոր հող ունի եւ միայն յարմար մոմենտի [պահի] է սպասում, նոր քայլեր առնելու համար:

զ) **Միջ-կուսակցային համերաշխութեան խնդիր.**-- Բիւրոն այդ մտքով կարեւոր քայլեր է արել: Յարաբերութիւններ մշակելով սոցիալիստ-յեղափոխականների և ֆինլանդացիների հետ՝ նրանց հետ միասին յաջողել է կազմակերպել միջկուսակցային մի կոնգրէս Պարիզում (1904), կազմուած 12 կուսակցութիւնների ներկայացուցիչներից, եւ մի երկրորդը՝ Ժընեւում, 1905ին: Այս երկու կոնգրէսների որոշումները տպուած են «Դրօշակ»ում (№ 12/1904 եւ 5/1905): Ցիշում է նմանապէս որ կազմուեց Միջկուսակցային Բիւրօ, Ժընեւի մէջ, հայ, ֆին, լեհ P.P.S. եւ վրացիների կուսակցութիւններից, որոնք ապա իրենց գործունէութիւնը փոխադրեցին Ռուսաստան: Այդ ուղղութեամբ գործելը եղել է Խմբագրութեան գլխաւոր տեսակէտներից մէկը:

է) **Համերաշխութեան առաջարկներ.**-- Հայ յեղափոխական կուսակցութիւնների եւ վանական խմբերի անընդհատ եւ վնասակար կռիւներին վերջ տալու անհրաժեշտութիւնը՝ յառաջ է բերել համերաշխութեան որոշ տրամադրութիւն շրջանների մէջ, Ամերիկա, Բալկան, Պարսկաստան եւն.: Այդ համերաշխութեան գործին Արեւմտեան Բիւրոն վարկ է տուել իւր շրջաբերականներով եւ արած քայլերով: Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնի կողմից պաշտօնական դիմում է եղել Բիւրոյին՝ համերաշխ գործունէութեան համար: Դիմումի լրջութեան երաշխաւորութիւն կարելի է համարել նրա ներկայի վարիչ Մուրատի անունը: Այդ դիմումին Բիւրոն պատասխանել է սկզբունքային համաձայնութեամբ, եւ մասնաւոր վայրերի համերաշխ գործունէութեան կոչով, որի արդիւնաւոր հետեւութիւնն է Պարսկաստանում կայացած մասնակի հաշտութիւնը: Բայց ի նկատի ունենալով Երրորդ Ընդհանուր Ժողովի որոշումը հնչակեանների նկատմամբ, այս խնդրին վերջնական լուծումը ըստ պատսում է ներկայ Ընդհանուր Ժողովից:

ը) **Օսմանեան կառավարութեան դէմ կռուող տարրերի** միջեւ համերաշխութիւն մտցնելու համար, փորձեր եղած են հայ, թուրք, մակեդոնացի, բուլղար, սերբ եւ հերսեգովնացի խմբերի շրջանում: Այդ նպատակով ժողովներ են տեղի ունեցել «Դրօշակ»ի խմբագրութեան նախաձեռնութեամբ եւ երկար վիճաբանութիւններից յետոյ, որոշուել է այդ գործին հիմք դնել՝ կպմելով միտինգ Ժընեւում եւ Պարիզում: Համերաշխութեան գործում մի քանի որոշումներ են եղել, -- բողոքել ապգային ներքին թշնամութիւնների դէմ, միատեղ կռիւ սկսել՝ ընդդէմ ռեժիմի [վարչակարգ], պահանջել ինքնավար դրութիւն Հայաստանի եւ Մակեդոնիայի համար եւ պարլամենտական ռեժիմ՝ օսմանեան բոլոր տարրերի օգտին: Բանակցութիւններ են սկսուած մահմետական գործողների հետ: Յաջողուել է գտնել անհատ թուրքեր, որոնք Դաշնակցութեան դրօշի տակ մտնելով, գործելու պատրաստականութիւն են յայտնել: Ցիշատակուեց փաստեր:

թ) **Ձէնքի գործը.**-- Բիւրոն ամէն հնարաւոր միջոց գործ է դրել Կովկասին զէնքեր հայթայթելու: Այդ նպատակով Բրուսել են գնացել ընկերներ՝ Անդրանիկ, Յովնան եւ Վահրամ, Պարիզ՝ ընկեր Խաչատուրը: Գնել են 239 ատրճանակ (Մաւզեր եւ Պարաբելում) եւ 58.000 փամփուշտ: Ընկեր Գարոյի միջոցով գնուել է 240 հազար փամփուշտի գնդակի պատեան: Առաքումը կատարուած է գլխաւորապէս ծովային գծով, գաղտնի ճանապարհներով: Ցիշում է նմանապէս կանապան առեւտրական տների եւ յեղափոխական կուսակցութիւնների առաջարկները՝ զէնք անց կացնելու Բալկանի, Պարսից ծոցի եւ Սեւ ծովի նաւահանգիստների վրայով: Զեկուցանողը յիշում է պայթուցիկ--հրանիւթի քանակը, որ պատրաստի գտնւում է (մօտ 300 կիլօ) Սոֆիայում եւ Աթէնքի պահեստում:

ժ) **Վասպուրականին նոր տեսակի զէնք** հայթայթելու համար, ծրագրուած է, Անդրանիկի առաջարկով, 150.000 ֆրանքի մի գնում, բաժանելով գումարը Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների ու Ամերիկայի Կ. Կոմիտէի վրայ: Ձեռք է բերուած թրքական նոր հրացանի մոտելը: Այդ ծրագրի մանրամասները առաջարկւում է Ժողովի յատուկ ուշադրութեան: Այդ առիթով վեկուցանողը յիշատակում է եւ այն՝ որ Բիւրոն ի նկատի առնելով Անդրանիկի առաջարկը, համաձայնութեան է գալիս հիմնելու վինավարժական դպրոց, Բուլղարիայում (որի մանրամասնութիւններին կարելի է ծանօթանալ Բալկանեան Կ. Կոմիտէի տեղեկագրից):

ժա) **Երկիրը ուսումնասիրելու** համար, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման, որոշ քայլեր արուեց. Բիւրոն այդ նպատակով բանակցութեան մէջ մտաւ Պրօֆէսսոր Րակկայի հետ Թրքահայաստան ճանապարհորդելու համար, հայթայթելով ամբողջ ծախքը, սակայն այդ ձեռնարկը չյաջողուեց: 1905ին, Կովկասեան ընդհարումների միջոցին, այնտեղ ուղարկուեց մի յատուկ եւրոպացի թղթակից, Բերդրան, յանձնարարուած Ժորեսի կողմից, նրա վրայ պարտք դնելով Եւրոպային ներկայացնել հայկական դէպքերի իսկական պատկերը: Նրա աշխատութիւնը դեռ լոյս չէ տեսել: Զեկուցանողը յայտնեց, որ Բերդրան չարդարացրեց իր վրայ դրած յոյսերը: Ցիշատակելով մի քանի այլ դիմումներ, Թիւրքաց Հայաստան թղթակից ուսումնասիրող ուղարկելու մասին, զեկուցանողը կանգ առաւ այն տեսակցութեան վրայ, որ տեղի ունեցաւ Ժընեւում, Խմբագրութեան անդամների եւ Վասպուրականի ծանօթ միսիոնար Ռայնոլտսի միջեւ: Ռայնոլտսը յայտնեց, թէ՛ իր եւ թէ հանրածանօթ Ջէյմս Բրայսի կողմից, թէ հայկական յեղափոխութիւնը կորստաբեր կարող է լինել հայերի համար, որովհետեւ Եւրոպան այժմ անկարող է օգնել, ուստի պէտք է շարժումը առ այժմս կանգնեցնել: Այն հարցին թէ «կարո՞ղ էք երաշխաւորել որ ժողովուրդի դրութիւնը չի վատթարանայ, եթէ յեղափոխութիւնը կանգ առնէ», Ռայնոլտս պատասխանում է թէ «անկարող է պատասխանել այդ հարցին եւ թէ դրութիւնը կարող է հաւանօրէն աւելի վատանալ»: Ռայնոլտսը իւր խօսակցութեան մէջ, ի միջի այլոց յայտնում է, որ հայ յեղափոխութիւնը Երկրում ունեցել է բարոյակրթական մեծ ազդեցութիւն եւ չնայելով ժողովրդեան թշուառ ու ճնշուած դրութեան, յեղափոխական գործը պահում է նրանց աչքում իւր հերոսամարտ եւ մեծ ազդեցութիւն ունի ժողովրդական խաւերի վրայ: Զէյմս Բրայս Ռայնոլտսին յանձնարարել է մանրամասն տեղեկութիւն պատրաստել Հայաստանի մասին եւ ուղարկել իրեն, իբրեւ նիւթ Անգլիոյ ապագայ միջամտութեան համար:

ժբ) **Երկրի հետ յարաբերութիւն** պահպանելու խնդրում Արեւմտեան Բիւրոն նպաստաւոր դրութեան մէջ չէ, բայց եւ այնպէս Բիւրոն կարողացել է յարաբերութիւն պահպանել Վասպուրականի, Սասուն--Մուշի, Տրապիզոնի, Պոլսի հետ: Սեբաստիոյ հետ չէ կարողացել պահպանել մարմին չլինելու պատճառով: Զեկուցման մէջ յիշատակուած էին Երկրի կարիքների մանրամասները: Նպաստներ ուղարկուած էին, Երկիր՝ մօտ 35.000 ֆրանք, ֆրանսական հիւպատոսների միջոցով, Շամի եւ Սասուն--Մուշի ընկերներին 3 նուագ՝ 10.000 ֆր., Աքիայի բանտարկեալներին՝ 1000 ֆրանք. վճռուած էր 8000 ֆր. ուղարկել ի նպաստ բանտարկեալների, բայց ճանապարհների փակ լինելու պատճառով մնում է անկատար: Նպաստներ տրուած են նմանապէս այլ կուսակցութիւնների եւ անձանց, -- 1000 ֆրանք՝ ռուս սոց. դեմոկրատների Ժընեւի օրգան «Իսկրա»յի խմբագրութեան՝ փոխարինաբար, 1000 ֆր.՝ «Պոտեմկին»ի կոհերին, 200 ֆր. լեհացիներին, 1000 ֆր. «Humanité» թերթին, Ցուցական Մարմնի որոշման համաձայն՝ բանտարկուած Ժորեսի քրոջը՝ ապրուստ երկու տարի, 500 ֆր. Ժորեսին եւ այլն:

ժգ) **Փոխադրութեան գործը.**-- Թէ՛ հրատարակութիւնների եւ թէ զէնքի փոխադրութեան գործը դրուած է բաւական կանոնաւորութեան մէջ, փոխադրելով ծրարները, Մարսէյլից, Բաթումի վրայով Կովկաս. փորձուած է ուղարկել նաեւ Օդեսայի վրայով, բայց մեծ մասամբ անյաջող: Առաջարկել են գիծ բանալ Աւստրիայի վրայով, բայց սա էլ ունի իր դժուարութիւնները: Պարսից կառավարութեան յարուցած արգելքը՝ «Դրօշակ»ի եւ մեր այլ հրատարակութիւնների դէմ, մեծամեծ դժուարութիւններ է յառաջ բերում: Զեկուցանողը հաղորդեց թէ ի՛նչ դիմումներ են եղել պարսից կառավարութեան այդ անտեղի արգելքը վերացնելու համար:

ժդ) **Ինտելիգենտ [մտաւորական] ուժերի խնդիրը,** համաձայն վերջին Ընդհանուր Ժողովի յայտնած ցանկութեան, ուշադրութեան է առնուած Բիւրոյի կողմից: Տարաբախտաբար տաճկահայ ոեւէ ընկեր յանձն չի առել Երկիր գնալ: Հայ--թրքական ընդհարումների ընթացքում՝ Բիւրոյի ջանքերով եւ հաշուով մօտ 10--12 երիտասարդ ուղարկուած է Կովկաս իբր պրոպագանդիստ եւ իբրեւ ղեկավար ուժեր: Նրանց մի քանիսը իբրեւ ուսանողներ վերադարձան, անախորժ տպաւորութիւն թողնելով ուսանողութեան վրայ: Զեկուցման մէջ յիշուեցին գնացողների անունները:

ժե) **Հաշուական--դրամական.**-- Չնայելով Բիւրոյի յաճախակի դիմումներին եւ շրջաբերականներին, որ Մարմինները կանոնաւոր հաշիւ ուղարկեն, նրանց մեծագոյն մասը այդ չէ արել եւ այդ պատճառով՝ Բիւրոն անկարող է եղել պատրաստել Կեդրոնական հաշուական--դրամական ընդհանուր պատկերը: Այդ փաստի վրայ է հրաւիրում Ժողովի յատուկ ուշադրութիւնը: Բիւրո--Խմբագրութեան հաշիւները պահուած են բաւարար կերպով, կանոնաւոր մատեանների մէջ, յատկապէս դրա համար հրաւիրուած գանձապահ--հաշուապահի ձեռքով: Բիւրոյի երեք տարուայ հաշիւները (1904--1906) տպագրուած են, եւ դրա հետ՝ երեք տարուայ հաշուեկշիռը առանձին: Տպագրուած տախտակները ներկայացւում են Ժողովին, ծանօթանալու համար մանրամասնութիւններին: Կարդացւում է երեք տարուայ հաշուեկշիռը մանրամասն: Զեկուցանողը Ժողովի ուշքն է հրաւիրում այն փաստի վրայ, որ «Դրօշակ»ի բաժնեգինը շատ քիչ մուտք է տուել եւ այդ այն պատճառով, որ Մարմինները չեն ուղարկում հաւաքած գումարները: Միայն «Դրօշակ»ը պիտի տար Խմբագրութեան աւելի քան 30 հազար ֆրանք (12.600 օրինակ, Յական ֆրանք) մինչդեռ չէ ստացուել դրա տասներորդ մասն անգամ:

ժզ) **Միջազգային Սոցիալիստական Բիւրօ.**-- Մի քանի խօսքով շեշտելով սրա կարեւորութիւնը, վեկուցանողը յայտնեց հետեւեալը.-- Ցիշեալ բիւրոն 1905ի Յունիսին դիմեց «Դրօշակ»ի Խմբագրութեան մի նամակով, որը տպուած է «Դրօշակ»ի այդ ամսի համարում, հարցնելով թէ Դաշնակցութիւնը յարե՞լ է արդեօք Սոցիալիստական Միջազգային Կոնգրէսի որոշումներին, որին պատասխանուեց համաձայնութեամբ. պատասխանը տպուած է «Դրօշակ»ի նոյն համարում: Սոցիալիստական Բիւրոյի վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը շատ նպաստաւոր է. պահպանում է մշտական յարաբերութիւն եւ հարկաւոր ժամանակը բողոք է բարձրացնում հայերի դէմ եղած ճնշումների առիթով, համաձայն մեր դիմումներին: Այս առիթով վեկուցանողը յիշատակեց մի տգեղ վարմունք որ իրենց թոյլ են տուել «հայ սոցիալիստ» անունը կրող մի քանի անձինք: Նրանք մի նամակով դիմում են Բրիւսելի Բիւրոյին եւ յայտնելով թէ

Դաշնակցութիւնը սոցիալիստական մարմին չէ, խնդրում են չլսել նրա դիմումներին եւ բողոք չբարձրացնել նրա անունից, ինչպէս այդ եղաւ Բագուի առաջին կոտորածի առիթով: Այդ անվայել վարմունքի հեղինակները յոյս են ունեցել, որ եղած նամակները գաղտնի կը մնան: Բայց Սոցիալիստական Բիւրոն հրապարակ հանեց այդ, խիստ յանդիմանութեամբ:

ժէ) **Ճվէյցարիայի վերաբերմունքը.**— Հայկական շարժման նկատմամբ, նոյնիսկ կառավարական շրջաններում գոյութիւն ունի մեծ համակրութիւն, որի իբր շօշափելի ապացոյց կարող է ծառայել Սուլթանի մահափորձի առթիւ ճվէյցարական կառավարութեան ցոյց տրուած վերաբերմունքը: Սուլթանի կողմից դիմում է եղել Ճվէյցարիային՝ հեռացնել Ժընեւից հայ յեղափոխականներին, եւ «Դրօշակ»ը դադրեցնել: Այդ դիմումը մերժուել է շնորհիւ մեր մի քանի ապդեցիկ բարեկամների եւ այն հանգամանքի, որ Հելվետիան Հանրապետութեան մէջ դէպի հայերը եղած համակրանքը շատ կօրեղ է:

ժը) **Խմբագրատան մասին.**— Յիշուեց խմբագրատան աշխատողների քանակը եւ նրանց վբաղմունքը. յիշատակուեց ի միջի այլոց եւ ծախսուած գումարը: Բիւրոյի եւ Խմբագրութեան անդամները ստանում են կապմակերպութեան միջոցներից ամսական 150 ֆրանք: Խմբագրատունը ունի իր գրաշարները եւ տպարան, ինչպէս եւ էքսպեդիսիոնը [առաքման սպասարկութիւն]:

Թողնելով մանրամասները վիճաբանութիւններին, ընկեր Մալումեան վերջացրեց իր տեղեկագիրը, շեշտելով որ մեր Հարցի պրոպագանդը Եւրոպայում դրուած է հաստատ հողի վրայ, որ Հայ Յեղ. Դաշնակցութեան յարաբերութիւնները թէ՛ մամուլի, թէ՛ պարլամենտական եւ թէ սոցիալիստական գործողների հետ բարեկամական է ու սերտ, եւ մեր ժողովուրդի շարժումը նկատուած է իբրեւ մարդկային եւ միջազգային մի արդար եւ կենդանի դատ: «Եթէ մենք, Արեւմտեան Բիւրոյի շրջանում գործող ընկերներս, անկարող եղանք աւելին անելու, այդ չպէտք է վերագրել սիստեմի սխալին, այլ մեր անձնական թուլութեան: Եւ եօթ տարուայ աշխատանքից յետոյ՝ վճռած լինելով հեռանալ Արեւմտեան Բիւրոյից եւ «Դրօշակ»ի Խմբագրութիւնից, ես խորապես համոզուած եմ, որ մեզանից յետոյ եկող ընկերները շատ աւելի կ'անեն, քանի որ հողը պատրաստ է, եթէ դնեն գործի մէջ կամք եւ աշխատանք»:

Նախագահը կարդաց Աւստրիայի Սոցիալ-Դեմոկրատական Բանուորական Կուսակցութեան պատասխանը, որ հետեւեալն է.

Վիեննա 2/3, 07

Հ. Յ. Դաշնակցութեան Կոմիտէին

«Թանկագին ընկերներ,

«Շնորհակալութեամբ հաստատում ենք, որ ընտրողական ֆոնդի համար ստացել ենք 500 քրոնը եւ օրագին անդրադարձնում ենք հայոց պրոլետարիատի եղբայրական ողջոյնները: Միեւնոյն ժամանակ ցանկանում ենք Ձեր գործունէութեան եւ հայ պրոլետարիատի անձնազոհ ազատագրական ձգտումներին՝ ամենագեղեցիկ յաջողութիւն»:

Ընկերական բարեւներով՝
(Ստորագրութիւն)

16ՐԴ ՆԻՍՏ (2 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Վռամեան:
Ներկայ են 19 ժողովական:

Կարդացւում է նախորդ նիստի արձանագրութիւնը եւ ընդունւում է որոշ փոփոխութիւններով: Ապա անցնում են օրակարգին, որ է Արեւմտեան Բիւրոյի տեղեկագրի առթիւ վիճաբանութիւնները:

Նախագահը առաջարկում է ընկ. Մալումեանին, տեղեկագրի նիւթը, որոշ մասերի բաժանել, որպէսզի կարելի լինի այդ կարգով մօտենալ խնդիրներին:

Մալումեան առաջ է բերում տեղեկագրի բովանդակութեան կարգը եւ պատրաստակամութիւն յայտնում լսել առարկութիւնները եւ տալ հարկ եղած պարզաբանութիւնները:

ա) Բիւրոյի եւ Խմբագրութեան կազմը.

Մաշուր.— Ի՞նչպէս է որ խմբագրական-բիւրոյական կողմից հեռանում են մի քանի կարեւոր ուժեր եւ դործը էլի լաւ է դնում, ինչպէս նկարագրում է ընկ. Մալումեան:

Զարդարեան.— Քանի որ Արեւմտեան Բիւրոյի կազմը քայքայուած էր, բնական է, թէ բողոքել կը րող էին այդ մասին շրջանային մարմինները, ուստի լաւ չէ՞ր լինի, որ Բիւրոն դիմէր մարմիններու խորհրդակցութեանը:

Զելալեան.— Երբ Ժընեւի մէջ Բիւրոյի անդամները մնացել էր մի միայն մէկը, արդեօք Պատասխանատու Մարմինները եւ Արեւելեան Բիւրոն ի՞նչ խորհեցան անել: Ռոստոմը եւ Մ. Յովհաննէսեանը անդամ լինելով Բիւրոյի կազմին, ինչո՞ւ կ'ներքան Կովկաս մասնակցելու կիսապաշտօնական օրգանին՝ կազմուածելով Արեւելեան Բիւրոն:

Վռամեան.— Տեղեկագրերը դոհացուցիչ կարելի է համարել, բայց Արեւմտեան Բիւրոն իբրեւ ընդարձակ իրաւունքի եւ պարտքի սահմաններով օժտուած մարմին, մի մեծ սխալ է դործել, երբ անոր մի մասը թողել է իրեն յանձնուած պատասխանատու գործը եւ անցել Կովկաս՝ այլ դործի մասնակցելու: Այս ընթացքը կը հակասէ Կանոնագրութեան 90րդ յօդուածին(10). ուստի պէտք էր նախ կազմը ամբողջացնել դործի կանոնաւորութեան համար: Անոնց այս ընթացքին իբր արդիւնք մի քանի շրջաններ անկազմ կը մնան, ինչպէս Կիլիկիա, Եդիպտոս: Մի քանի կարեւոր գործեր անփութութեան են մատնուած, ինչպէս ԱԲՆՅի հրանիւթերու խնդիրը, Բալկանեան շրջանը իւր հանրածանօթ Վարդոյի խնդրով: Ծանցաւոր անհոգութիւն է երկրի դործերը երեսի վրայ թողած՝ Կովկաս երթալ. նախ պէտք էր կազմը լրացնել:

Մալումեան.— Ճշմարիտ է եւ անհերքելի, որ մի այդպիսի պատասխանատու գործ վարելու համար աւելի մեծ թուով մարդիկ էին հարկաւոր: Ընկերները Կովկաս գնալով մի արդարացումն ունէն, — այնտեղ կային ստիպողական պահանջներ: (Յօսքը ուղղելով Զելալեանին եւ Վռամեանին) Ձեզ էլ ձեր առարկութիւնները. նկատի ունէիք միայն, որ բացառիկ հանդամանքներ ստիպեցին մեր ընկերներին թողնել Ժընեւը եւ գնալ մի ուրիշ շրջան: Երբ վճռուեց Կովկասում մի օրգան հիմնել, Ահարոնեանը գնաց այնտեղ. դինական եւ այլ դործերի համար Ռոստոմը գնաց Կովկաս: Ապա Թիֆլիսի ընկերները կարիք ունեցան Մ. Յովհաննէսեանին կանչելու: Մեղ մնում էր յոյսը դնել մըննացեալների հաւաքական ուժի վրայ եւ առաջ տանել դործը՝ նրանց հետ միասին: Գանասը լրացնելը խնդիրս չատ ցանկալի էր, բայց անիրականալի: Ճեղափոխական կեանքի մէջ անխուսափելի են այդօրինակ հանդամանքներ. նոյն երեւոյթը տեղի է ունեցել 1898ին եւ 1903ին, երբ Բիւրոների մէջ մնացել էին մէկ կամ երկու հոգի: Բիւրոյի վերակազմութեան ցանկութիւնը պարզապէս ունայն ցանկութիւն էր, քանի որ տրամադրելի ընկերներ չկային եւ մեր շրջանային մարմինները (Բալկան, Ամերիկա) իրենք էլ մեղանից էին մարդիկ խնդրում դործելու համար: Տեղի ունեցան կովկասեան ընդհարումները, եւ այդ հանգամանքը բնականաբար առաջ պիտի բերէր դործողների տեղափոխութիւն:

Զելալեան.— Երբ Արեւմտեան Բիւրոյի անդամները, բացի ընկ. Մալումեանէն, Կովկաս կ'երթան այս ու այն դործին, եւ մասնաւորապէս Ահարոնեան եւ Յովհաննէսեան Թերթի մը խմբագրութեան դործը ստանձնելու, եւ այդպիսով կը կազմալուծեն Բիւրոն, որը խոչոր եւ ծանր պարտականութիւններ ունէր, օրինակ՝ Եւրոպական պրոպադանդան, «Դրօշակ»ը եւ չրջանի ամբողջ դործերը, կը հարցնեմ, — արդեօք «Դրօշակ» մը «Ալիք»ին քով երկրորդակա՞ն տեղ մը կը բռնէ, քանի որ առաջինը արդէն կազմակերպութեան պաշտօնական օրգանն է, եւ կամ եւրոպական պրոպադանդան աւելի փո՞քր դործ մըն է քան «Ալիք»ը: Եւ երբ, այսպէս թէ այնպէս, առանց անսալու իրենց պաշտօնին ու պարտականութեանը, որ Ընդհանուր Ժողովը տուել էր, Կովկաս գնացին, ինչո՞ւ արդեօք իր ժամանակին չտեղեկագրեցան չրջանի մարմիններուն ի դիտութիւն, կամ Պատասխանատու Մարմիններուն, որպէսզի պակասը լրացուէր: Եւ եթէ գոյութիւն ունեցել դարձած էին նոյնպէս եւ Պատասխանատու Մարմինները, ինչո՞ւ չհետեւեցան Արեւելեան Բիւրոյի չբրջանի ձեւին, որ անոր կազմալուծուած պահուն Ռոստոմեան Ժողով կը դումարեն եւ կ'ընտրեն նորը: Արդ, եթէ կեանքը այսինչ կամ այնինչ դործի համար նոր հանդամանքներ կը ստեղծէ, իրաւական չէ՞ր որ Արեւմտեան Բիւրոն, առանց արհամարհելու իր չրջանը, դիմէր եւ իրողութիւնները պարզելով՝ հրաւիրէր որ հարկ եղածը կարգադրեն: Արդ, կ'առաջարկեմ որ Ժողովը նոր օրէնք անցընէ եւ իրաւունք տայ նաեւ Արեւմտեան Բիւրոյի չրջանին, որ այսուհետեւ, ինչպէս Արեւելեանը ի հարկին կ'ընտրէ իւր Բիւրոն, նոյնը ընէ եւ Արեւմտեանը:

Զարդարեան.— Մարմինները ինքնաբերաբար տեղեկութիւն չէին կարող ստանալ իրերու այդ դրութեան մասին, այլ Բիւրոյէն պէտք է տեղեկանային եւ հրաւիրուէին գործը կազմակերպելու:

Միճուսեան.— Արեւմտեան Բիւրոյի մարմինը կազմուած է իւր չրջանի եւ եւրոպական պրոպականդայի կարիքներուն համեմատ. նրանց դերը որոշ էր, որի համար ընտրուած էին. ուստի մեղադրելի է անոնց հեռացումը, որովհետեւ ուրիչներուն հրաւիրումը այդ դործին համար անհամապատասխան կարող էր լինել, գործը աւելի կանոնաւոր կարելի էր տանել միմիայն այդ պաշտօնին համար ընտրուած մարդոց միջոցաւ: Այդ մարդոց պահանջը այդտեղ եւ ոչ թէ Կովկասում դրալի էր: Եւրոպայում ընդարձակ պահանջ կար գործելու: Այս ամէնը պէտք է ի նկատի առնել՝ ապագային նորանոր թերութիւններու մէջ չընկնելու համար:

Զաւրեան.— Արեւմտեան Բիւրոն ըստ էութեան եւ տարածութեան համապատասխանո՞ւմ է Արեւելեան Բիւրոյին եւ ո՞րն է նրա սահմանը:

Նախագահ եւ Մալումեան յիշեցնում են Բիւրոնեբի իրաւասութեան եւ աշխարհագրական սահմանները՝ կանոնագրի համաձայն:

Զաւրեան.— Ընտրողները ո՞վքեր են:

Ռոստոմ.— Թէ՛ Արեւելեան եւ թէ Արեւմտեան Բիւրոնների անդամները կ'ընտրուեն Ընդհանուր Ժողովից: (Յօսելով իր մասին եղած մեղադրանքի մասին ասում է). Համամիտ եմ որ Ընդհանուր Ժողովի դրած պարտականութիւնները՝ պարտաւորական են ինչպէս ամէնքին, այնպէս եւ ինձ համար. բայց այս երեւոյթը առաջին անդամը չէ որ տեղի է ունենում: 1898ին ընտրուած Բիւրոյի անդամները, հանդամանքների բերումով, համարեա բոլորն էլ հեռացան գանագան դործերով. այս ամէնը թէեւ անկանոն, բայց ոչ բոլորովին մեղադրելի պէտք է համարել: Ընդհակառակն ես առաւելութիւն եմ համարում Դաշնակցութեան այս անբիւրոկրատական [ոչ-գրասենեակային] ոգին, երբ ստիպիչ, անակնկալ հանդամանքների դրդդմամբ՝ դործող ուժերը առանց կանոնի տաւերին կապուելու, փոխադրուում են այնտեղ, ուր պէտք կայ: Ճակատագրական դործերը երբեմն փոփոխում են վճիռները. Հայ-Թրքական ընդհարումները եւ կովկասեան կարեւոր դործերը չատերին խախտելով իրենց տեղերից՝ տարան գործի նոր վայրը:

Միճուսեան.— Ուր վտանգ կայ, պէտք է դիմել այնտեղ, բայց Բիւրօ մը իբր պատասխանատու, մանաւանդ եւրոպական ամենակարեւոր դործունէութեան համար, ստիպողաբար պիտի մնար իր վայրում: Այսպիսի մի գործ չէր կարելի մէկին թողնել եւ հեռանալ, սա անարդարանալի է: Եւրոպայում սկսուած է

եւ չարունակուած է մի լայն պործունէութիւն, զադարեցնել այս պործունէութիւնը եւ ապագային նորից սկսելը չատ դժուարութիւնների հետ է կապուած:

Մուրատ.— Թոստոմի դրութիւնը Կովկասում չատ ծանր էր. ուրանալ այդ անկարելի է: «Ճառագ»ի խմբագրատանը չատ մարդիկ կային, ուստի հարկ չկար Արեւմտեան Բիւրոյից մարդիկ քաշել Կովկաս. եղած զրական ուժերը բաւական չատ էին, որոնցմէ կարելի էր օգտուիլ Կովկասի պործունէութեան համար:

Անդրանիկ.— Երբ ընկեր Սիմոն եկաւ Եղիստոս, Արեւելեան Բիւրոյին նամակ եկաւ անոր Աթէնքի զործերը կարպապրելու համար, բայց նա չգնաց այնտեղ: Չէ կարելի արդարացնել Արեւմտեան Բիւրոն քայքայելով՝ Կովկաս գալը: Մեղադրելի է եւ այն, որ մտածուեցաւ «Դրօշակ»ը Կովկաս փոխադրել, որը նոյնիսկ Գարիզինը փոխադրելը անկարելի էր ըստ կանոնադրութեան: Կովկասում հրատարակուած «Ճառագ» թերթին մօտ 30·000 րուբլի է յատկացուած, չնայելով որ «Դրօշակ»ը գոյութիւն ունէր:

Զոփուրեան.— Ընկերների կողմից արտայայտուած մտքերը, թէ Արեւմտեան Բիւրոյի ընկերները մեղաւոր են իրենց պասչօնակատարից հեռանալով, ես զտնում եմ բոլորովին անարդարանալի. կազմակերպութիւնը, իւր Բիւրոներով եւ բոլոր միւս Մարմիններով՝ ժողովրդի համար է եւ ոչ ընդհակառակը: Այն միջոցին երբ Արեւմտեան Բիւրոյի ընկերները, ամէն օր լուրեր են առնում մէկը միւսից սոսկալի թէ որտեղ ժողովուրդը կոտորւում է, հրդեհւում է, նրանք չէին կարող հանդիստ սրտով նստել Թիֆլիզում եւ նամակագրութեամբ կամ արեւմտեան պրոպագանդայով զբաղուել: Ընդհակառակը, նրանց պէտք էր նկատողութիւն անել այն դէպքում, եթէ նրանք այդ սոսկալի ժամանակը չէլային Կովկաս: Ես կ'ասեմ, որ մենք պէտք է չնորհակալութիւն յայտնենք Արեւմտեան Բիւրոյի ընկերներին, որ նրանք չտապեցին այնտեղ ուր կենդանի գործը կաղում էր եւ ոչ թէ նրանց նկատողութիւններ անել:

Ստեփանեան.— Ընկերների մի մասը դնացել է գործի անհրաժեչտութիւնից ստիպուած, իսկ դրանցից մինը, Գարիզինը՝ իւր սեփական գործով(11), ուստի պէտք է դրանց իրարից որոշել եւ մեղադրելի համարել այն մէկին:

Սեպուհ.— Ճիշդ է որ Կովկասի հրատապ խնդիրները պատճառ եղան այդ հեռացումին, սակայն Երկիրը դարձեալ նոյն դժոխքն էր. պէտք էր Երկրի գործով էլ զբաղուել: Ընդունում եմ, որ Թոստոմը Կովկասում իւր ուժերին վեր է գործել. ես մեղադրում եմ միւս հեռացողներին:

Զաւրեան.— Զարմանում եմ, որ Դաչնակցութեան Ընդհանուր Ժողովի մէջ այսպիսի խօսակցութիւններ են տեղի ունենում: Ուժերը պէտք է դիմեն այնտեղ՝ ուր պէտք կայ, ինչպէս այդ պատահեց Սասունի դէպքերի առթիւ: Տիւր օրերին, եթէ թուրքերի չարժումները չզգուէին, Կովկասն էլ մի Հայաստան կը դառնար: Զպէտք է մոռնալ, որ Կովկասը Հայաստանի նկատմամբ՝ իւր ունեցած աչխարհագրական դիրքով եւ գործի համար պրամ եւ ուժեր հայթայթելու առումեւտրականութեամբը՝ կարեւոր նչանակութիւն ունի, եւ եթէ թուլանար, գործը կարող էր քայքայուել: Այս պատճառով այդ առարկութիւնները անտեղի են: Գալով զրական ուժերի Կովկաս փոխադրութեան, պէտք է ասեմ, որ Մուրատը, Սեպուհը եւ ուրիչները թէեւ լաւ կըռուող ուժեր են, բայց ինչպէս նրանք, նոյնպէս ես եւ չատ ուրիշները, չենք կարող պնահատել դրա իսկական կարիքը: Ապագայ՝ որ թիֆլիզում յաճախ լուսում է թէ զրական ուժերի պակասը զգալի է խմբագրութեան մէջ:

Անդրանիկ.— Վիրաւորական է երկրի համար Կովկասի տուած ուժերի եւ զրամի յիշեցնելը այսպէս յաճախակի:

Նախագահ.— Բժիչկը զրանով վիրաւորել չուզեց:

Մուրատ.— Մենք Արեւմտեան Բիւրոյին չենք դատապարտում. Բիւրոները մեզ համար ծնողներ են եղել. բայց այս նկատողութիւնները անում ենք, որ ապագային աւելի ենթարկուեն տիսցիպլինային [կարգապահութեան]:

Զաւրեան.— Ես իմ խօսքերով, ոչ օգնի, մասնաւորապէս Անդրանիկին վիրաւորել չեմ ցանկացել եւ ինդրում եմ ժողովականներից, որ հայերէնի մէջ ունեցած անհմտութիւնից ծագելիք հնարաւոր թիւրիմացութիւններից ազատ մնալու համար՝ թոյլ տրուի ինձ սրանից վերջը ռուսերէն խօսել:

Ժամանակը լրացած լինելով, նախագահը նիստը փակում է:

17ՐԴ ՆԻՍՏ (4 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Վռամեան:

Ներկայ են ժողովական:

Նախագահը զեկուցանում է, որ եկել են ընկեր Մանուկ, Մոլվափի չրջանից եւ քարտուղարութեան համար հրաւիրուած ընկերներից՝ Ալան եւ Վալադ, նաեւ ընկ. Տաճատ(12):

Վիճաբանութեան առարկայ է դառնում ընկ. Տաճատի խնդիրը, թէ արդեօք նա հրաւիրուած է իրրեւ քարտուղար, խորհրդակցական՞ն թէ վճռական ձայնով: Եւ որովհետեւ այդ մասին նախկին արձանագրութիւններում որոչակի բան չկար, ուստի խընդիրը դառնում է վիճաբանութեան եւ քուէարկութեան առարկայ:

Շահխաթունեան.— Մենք վճռական ձայնի իրաւունքով հրաւիրել ենք 7 հոգի, որոնց մէջ ընկեր Տաճատը չկայ, իսկ եթէ այժմ հարց է բարձրանում նրան ձայն տալու մասին, ես առաջարկում եմ նրան ձայն տալու խնդիրը կապել քարտուղարների ձայն տալու խնդրի հետ եւ ձայն տալ բոլոր քարտուղարներին:

Մանուկ.— *Քարտուղարների ձայն տալու խնդիրը պէտք է ոչ թէ այդպէս ընդհանուր կերպով դնել, այլ նայած նրանց յեզափոխական անցեալին. եւ եթէ նրանք Դաչնակցութեան համար որեւէ կարեւոր գործ կատարել են, այդ դէպքում միայն նրանց ձայն պիտի տալ:*

Միճաուեան.— *Ամէն անգամ նոր նոր առաջարկներ են լինում, որոնք փոփոխում են ժողովի որոչումները: Քարտուղարների խընդիրը տարբեր է եւ դուրս է ժողովի զբաղումներից. իսկ Տաճատի հարցը այլ բան է եւ սրա վերաբերմամբ պիտի յատուկ որոչում անել:*

Իսահակեան.— *Ես հիմք չեմ դնում, որ քարտուղարներին քուէի իրաւունք տրուի, ուստի եւ այդ մասին չեմ խօսում, բայց հիմք էլ չկայ նրանց խորհրդակցական ձայնի իրաւունքից զրկելու. նրանք մօտիկ ընկերներ են, ուստի պէտք է խօսեն եւ իրենց կարծիքները յայտնեն:*

Մուրատ.— *Ընկերները իրենք իրենց հակասում են. ընկ. Սաքոյի մասին խօսելիս, մենք որոչեցինք ոչ օգի ձայն չտալ. իսկ այժմ նորից խնդիրներ են յարուցանում զանազան մարդկանց ձայն տալու: Իմ կարծիքով ոչ օգի ձայն չպէտք է տալ, ոչ քարտուղարներին եւ ոչ ուրիչի, լինի այդ խորհրդակցական թէ քուէի:*

Անդրանիկ.— *Տաճատին հրաւիրելիս՝ նրա համաձայնութիւնը առնուած չէ քարտուղարութեան կամ այլ գործի համար. նա եկել է ձայն ունենալու իրաւունքի յոյսով. ուստի եւ նա, իրրեւ ընկեր, ձայն պիտի ունենայ:*

Մալումեան.— *Մեր հրաւիրած 7 ընկերներից 5ը դեռ չկան. այն օրը երբ մենք կը համոզուենք, որ այդ հնգից մէկն ու մէկը չի գալիս, նրա ձայնը կը տանք Տաճատին. իսկ այժմ նրան հրաւիրել ժողովի, իրրեւ քարտուղար, խորհրդակցական ձայնով:*

Չելալեան.— *Ես դէմ եմ ընկ. Տաճատին խորհրդակցական ձայն տալու, քանի որ մենք նրան յատկապէս հեռագրով կանչել ենք, իրրեւ մեզ հաւասար ընկեր. նա կարող է վիրաւորուել, եթէ նրան ընդունենք միայն խորհրդատու, ուստի ես առաջարկում եմ նրան հրաւիրել քուէի իրաւունքով:*

Նախագահը քուէարկութեան է դնում՝

ա. Շահխաթունեանի առաջարկը. «Տաճատի ձայն տալու հարցը դնել բոլոր միւս ընկերների հարցի հետ, որոնց հրաւիրելու ենք խորհրդակցական ձայնով»: Ստացուում է 3 ձայն:

բ. Թոստոմի առաջարկը. «Տաճատը հրաւիրուած է խորհրդակցական ձայնով, իսկ նրան ձայն տալու խնդիրը թողնել ապագային»: Ստացուում է 10 ձայն:

գ. «Տաճատին ձայն տալու հարցը կապել քարտուղարներին ձայն տալու հարցի հետ»: Ստացուում է 4 ձայն:

Մալումեան դիւանի կողմից ներկայացնում է ընկ. Վալադի քարտուղարութեան հրաւիրելու մանրամասները: Ընկ. Վալադ ստանալով նախապատրաստական ժողովի հրաւէրը, միւս երկու քարտուղարների նման անմիջապէս հեռագրով յայտնել է իր համաձայնութիւնը, բայց հեռագիրը, որ ուղարկուած էր Օրդուխանի հասցէին «Գօստի» հիւրանոց, իր ժամանակին չէ հասել, որովհետեւ իր բնակարանը փոխել էր վերջերս. հեռագիրը այսչափ ուշանալուց վերջը երեկ է միայն ստացուել: Վալադը, տեսնելով որ իրեն չեն պատասխանում, այն ինչ իւր հետ հրաւիրուածները պատասխան ստանալով արդէն ճանապարհուել են, կարծել է թէ մի թիւրիմացութիւն է պատահել, ճանապարհուել է առանց հրաւէր ստանալու: Բայց այս հանգամանքը թող չեզնէ ժողովականներին, որովհետեւ Վալադը պատրաստ է վերադառնալ իւր տեղը, եթէ ժողովը աւելորդ կը գտնի նրա ներկայութիւնը:

Մաքերի կարճ փոխանակութիւնից յետոյ, նախագահը յայտնելով թէ երկու քարտուղար անկարող են գործը կանոնաւոր տանել, ուստի մի երրորդի պէտք զգալի է, առաջարկում է ժողովին, դրանից հրաւիրուած քարտուղարների թիւը բարձրացնել 2ից 3ի, եւ քուէարկութեամբ Վալադեանը ընդունուում է իբրեւ երրորդ քարտուղար:

Հինդ րոպէ ընդմիջում:

Կարդացուում են նախկին նիստերի արձանագրութիւնները:

Նախագահ.— *Օրակարգի նիւթն է՝ Արեւմտեան Բիւրոյի տեղեկագրի վերաբերեալ հարցումները եւ Բիւրոյի ներկայացուցիչի պատասխանը:*

Իսահակեան.— *Մի քանի ընկերներ նկատում են, իրրեւ նչան մեր անտարբերութեան դէպի տաճկահայկական զատը, երբ մենք իսնդիր չենք բարձրացնում, թէ ինչո՞ւ Արեւմտեան Բիւրոյի անդամները հեռացան Կովկաս, այնտեղ գործելու համար: Սա անտարբեր վերաբերմունքի նչան չէ, այլ ապացոյց, որ այնտեղի դէպքերը հրատապ էին եւ կարիքը այնքան մեծ, որ ընկերների Կովկաս գալը իսիստ կարեւոր էր: Նրանց դործունէութիւնը Կովկասում մեծ նչանակութիւն ունէր նոյնիսկ Տաճկահայաստանի գործի համար: Բայց բանը նրանում է, թէ ինչո՞ւ գնացողները իրենց չփոխարինեցին ուրիչներով, մինչ՞ մեր Կանոնադրութեան մէջ այդ մասին որեւէ բան չկայ ասած:*

Անդրանիկ.— *Եթէ մենք մի այդպիսի սիստեմ մտցնենք, որ ամէն մէկը կարողանայ հեռանալ իւր գործից եւ իրեն մի ուրիչով փոխարինել եւ այս բանը կազմակերպական կանոններով ալ հաստատենք, դա կը լինի վտանգաւոր բան, որովհետեւ այդ դէպքում ոչ միայն մեր Բիւրոները, այլեւ Կ. Կոմիտէներն ու այլ մարմինները հաստատուն կերպարանք չեն կարող ունենալ եւ չարունակ փոփոխութեան կ'ենթարկուեն:*

Մաշուր.— *Կարդում է կազմակերպական կանոնների այն յօդուածը, որով Բիւրոյի անդամները՝ հեռանալու դէպքում պարտաւոր են կազմը լրացնել հրաւիրուած ընկերներով:*

Զարդարեան.— *Ընդունելով հանդերձ, որ կովկասեան գործերը չատ կարեւոր էին եւ պահանջում էին ընկերների ներկայութիւնը այնտեղ, միեւնոյն ժամանակ ընդունում եմ, որ Արեւմտեան Բիւրոյի բոլոր գործերը մի անդամի վրայ ծանրացնելը ունեցել է իւր պակասաւոր հետեւանքները, ուստի ես մեր չրջանի կողմից բողոքում եմ դրա դէմ եւ առաջարկում, որ Ժողովը միջոցներու ձեռնարկէ, որպէսզի ապագայում չկրկնուեն նոյնպիսի երեւոյթներ:*

Սեպուհ.— *Ինձ համար Իսահակեան չատ ճիշդ կերպով նկատեց, թէ կովկասեան գործերը չատ կարեւոր էին նոյնիսկ տաճկահայ զատի համար: Ես զարմանում եմ թէ ընկերները ինչո՞ւ չխօսեցին այդ հարցի մասին. այո՛, կովկասեան գործերը կարեւոր էին եւ ընկերները պէտք է գնային. բայց նրանք Կովկասում ամբողջապէս տեղական գործերով զբաղուեցին եւ Երկրի գործերը անուշադիր թողին: Ես բողոքում եմ:*

Մաշուր.— *Երբ կշիռը մի կողմի վրայ է թեքւում, այնտեղ պէտք է կենտրոնացնել ուժերը: Ներկայ դէպքում ամենահրատապ պահանջը Կովկասումն*

էր. ուստի անհրաժեշտ էր ուժերը կենտրոնացնել կովկասում. բայց ինչո՞ւ ընկերները չկործանացին կազմակերպական կանոնների այդ կէտը, իրենց փոխարէն ուրիշներին թողնելով:

Ստեփանեան.— Ինչո՞ւ ձեզ ժողովը զբաղեցնում այդպիսի դատարկ խնդիրներով. քանի՞ անգամ նոյն հարցերը կրկնւում են եւ ժեղանից աւելորդ տեղ ժամեր խլում: Ես հաշուել եմ որ իւրաքանչիւր ժողովը մեր վրայ նստում է օրական 200 քրօն եւ ամսական 240 ժամ: Աւում են Թէ ի՞նչու Արեւմտեան Բիւրոյի հեռացող անդամները չփոխարինեցին ուրիշներով. պարզ է, որովհետեւ ուրիշ ընկերներ չկային: Եթէ ընկերներ լինէին, արդէն նրանք կը փոխարինէին Բիւրոյի անդամներին կովկասում եւ կարիք չէր լինիլ ժրնեւից գալուն:

Վահագն.— Ես կարծում եմ, որ հարցը պարզ է, Բիւրոյի անդամները կովկաս գնալով, օրինական սխալ են գործել. բայց միեւնոյն ժամանակ նրանց գընալը կարեւոր էր. եթէ արեւելեան չրջանի հայութիւնը թուլանար, դրանով կը վտանգուէր եւ երկրի գործը: Սակայն նրանք պարտաւոր էին գնալուց առաջ կազմը լրացնել: Ես առաջարկում եմ յայտնել մեր զոհունակութիւնը ընկեր Մալումեանին, որ միակ իր վրայ է առել եւ տարել Արեւմտեան Բիւրոյի գործերը եւ խնդրում եմ այս առաջարկը մտցնել արձանագրութեան մէջ:

Վռամեան.— Ես չեմ մեղադրեր Արեւմտեան Բիւրոյի անդամներուն, որ նրանք կովկաս են գնացել աւելի լաւ գործեր կատարելու համար. բայց նրանք այդ անելիս պիտի նկատի ունենային, որ մի կողմը ուժեղացնելով, միւս ճակատը չպէտք է թուլացնել: Ռոստոմը ինձ մեղադրեց, ասելով որ ես էլ, Թէեւ Արեւմտեան Բիւրոյի անդամ էի, բայց գնացի Ամերիկա գործելու. բայց ես գնացել եմ միայն երեք ամսով եւ այնպիսի ժամանակ, երբ Արեւմտեան Բիւրոյում մնում էին դեռ չատերը: Իսկ երբ իմ ժամանակս լրացաւ, ինձ գրեցին որ այլեւս կարիք չկայ վերադառնալու: Մեր ընկերներից պիտի գնային միայն այնպիսիները, որոնց գնալը անհրաժեշտ էր. օրինակ Ռոստոմի գնալը անհրաժեշտ էր, բայց Սիմէոնը կարող էր չգնալ: Չէ՞ որ արեւմտեան չրջանումն էլ կարեւոր գործեր կային, որոնք եւս վրայ մնացին ընկերների բացակայութեան պատճառով: Շատ գործեր կային Թուլքիայում. բացի այդ՝ Լոնտոնի մէջ կար Pro Armeniaի խնդիրը, հարկաւոր էր դիւանագէտներին գիտակ պահել անցած գործածի վերաբերմամբ, եւ սա այնպէս անբաւարար կերպով էր կատարւում, որ երկու ամիս յետոյ հազիւ էին տեղ հասնում հնացած տեղեկութիւններ: Մի՞թէ Կովկասը աւելի կը վտանգուէր, եթէ Միքայէլը, Սիմէոնը եւ Ռոստոմը այնտեղ գնացած չլինէին: Երեք մարդու գործը ի՞նչ նշանակութիւն ունէր: Ես ցաւում եմ որ մեր ընկերները օգտուել են կանոնագրութեան մէջ եղած կէտի էլաստիկ լինելուց եւ չեն կատարել իրենց պարտականութիւնը Արեւմտեան Բիւրոյի կազմը լրացնելու գործում: Դուք չատ անգամ զանազան մարմիններ էք կազմել, ինչպէս «Զիֆօն» եւ ուրիշներ, կարող էիք այդ էլ կազմել: Մեր Կանոնագրութեան մէջ մի պակասութիւն կայ, որը Քայլ չի տալիս մեր արեւմտեան չրջանի տեղական ուժերից օգտուել եւ նրանք մեծ մասամբ անգործ են մնում. հակառակ դէպքում տեղացի ընկերները կարող էին այդ պակասը լրացնել: Պէտք է ի նկատի ունենալ, որ ապագայում մեր Կանոնագրութիւնը կենսունակ լինի:

Նախագահ.— Հարցումները սպառուած են եւ ես խօսքը տալիս եմ Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչին:

Մալումեան.— Շատ անախորժ է լսել միեւնոյն հարցի մասին կրկնութիւններ եւ նոյնքան անախորժ է, դրանց կրկնութիւններով պատասխանելը: Անցեալ ժողովում այդ բոլոր հարցերին արդէն պատասխանուեցին: Շատ համակրելի է ընկեր Վռամեանի առաջարկը եւ ես ի բոլոր սրտէ, ինչպէս ֆրանսացիք են ասում, դրան ի հանդէպ եմ դնում: Բայց Կովկաս գնալու հարցը, ինչպէս չեչոտել է այստեղ, պահանջ էր եւ ժողովրդի կենսական չահերը այդ էին թելադրում: Անցեալ ժողովներում չատ քչերն էին ընդունում Կովկաս գնալու կարեւորութիւնը, իսկ այժմ ես նկատում եմ, որ բոլորի վրայ այդ միտքը սուսանում է, դա ուրախալի է: Ես պիտի լինեմ խոսափէս բողոքողը, որ ընկերները հեռացան եւ ամբողջ ծանրութիւնը մեր վրայ թողին. բայց ես այդ բանը չեմ անում, դիտակցելով խնդրի կարեւորութեանը: Եւ եթէ մեզ ծրնեւ մնացողներիս համար կար մի մխիթարութիւն, այդ այն էր, որ մեր նալով հեռու Կովկասից, եւ ամբողջ ծանրութիւնը մեր վրայ առնելով, մենք հնար տուինք մեր ընկերներին գնալու եւ նուիրուելու գործին: Ոմանք ասում են, որ Ծովհաննէսեանի եւ Ահարոնեանի ներկայութիւնը Կովկասում պահանջ չէր. բայց ես, իրրեւ գրական գործին քիչ չատ ծանօթ, կ'ասեմ, որ նրանց ներկայութիւնը ոչ միայն անհրաժեշտ էր Թիֆլիսում, այլ որ մեր այնտեղի օրգանի գործը լաւ տանելու համար դեռ ուժերի պակասութիւն է զգացւում: Այդ նոյնն են նըկատում մեր ընկերները: Դառնում եմ միւս խնդրին. Բիւրոյի կազմը լրացնելը յետաձգուեց, ահա Թէ ինչու: Ոչ ոք չէր սպասում, որ Ընդհանուր ժողովը 1906ի վերջին է լինելու. առաջ նա նշանակուած էր 1905ին եւ մենք սպասում էինք, որ ժողովը ինքը ընտրէ նոր կազմ: Եթէ մենք պիտայինք Թէ ժողովը այսքան ուշանալու է, անյուշտ միջոցներ ձեռք կ'առնէինք հարցը կազմակերպական մարմինների առաջ դնելու: Այս պայմաններում, բանակցացանք երկու ընկերներով, Մար եւ Գալֆայեան, որոնք Թէեւ պաշտօնական կերպով ընտրուած չէին, բայց միշտ մասնակցել են բիւրոյական աշխատանքների մէջ եւ նպաստել գործին:

Այդ պաշտօնական չլինելը, յեղափոխական գործում, առանձին կարեւորութիւն չունի: Ընկեր Վռամեան պիտի յիշէ, որ Ամերիկա գնալիս, Բիւրոյում մնացածներս բոլորն էլ պաշտօնական անդամներ չէինք. յիշել պէտք է եւ այն, որ երբ Քրիստափորը կովկաս գնաց, ժողովից ընտրուած ընկերներից Բիւրոյում ոչ ոք չմընաց: Այժմ, Ամերիկայի եւ Բալկանի պատգամաւորները ասում են, որ նրանք մեզ ընկերներ կը տային, սակայն, ցաւելով պիտի ասեմ, որ դա իրականութիւնից չատ հեռու է, նրանք ոչ մի մարդ չէին կարող տալ. սա փաստ է: Դառնում եմ ընկեր Զարըպարեանին. միթէ՞ նա հնարաւոր է գտնում, որ մենք ղրազուէինք այն հարցով, Թէ արդեօք մի վարպետ, ճանաչում է Բիւրոն կամ ոչ, նրա կազմի պակասաւոր լինելուն պատճառով: Մեզ համար ոչ մի նշանակութիւն չունի վարդապետի կամ նման մի ուրիշի կարծիքը, երբ կենսական անհրաժեշտութիւն ունեցող խնդիրներ կան մեր առաջը, եւ պահանջում են ուժեր եւ տեղափոխութիւն: Ամերիկայի ընկերների յարուցած հարցերի մասին՝ Pro Armeniaի, Ռուզվելտի եւ այլոց վերաբերմամբ չեմ խօսում. եթէ դրա նպատակը այն է, որ ապագայում այդպիսի երեւոյթներ չկրկնուին, լաւ, ոչինչ չունեմ դրա դէմ. իսկ եթէ դրանով ուզում են ասել, որ ընկերները à tout prix [ամէն դնով] ժրնեւ պիտի մնային, սխալւում են:

Ռոստոմ.— Մենք աշխատել ենք երբեք կանոնագրութիւնից դուրս չգալ: Արեւմտեան Բիւրոն իւր ամբողջ կազմով կար քանի դեռ Լեոնալայրի եւ Ցուցականի գործը մէջտեղ էր. բայց երբ զգացինք որ աշխատանքը արեւմուտքում թեթեւանում է, իսկ արեւելքում՝ ծանրանում, ընկերներ ճանապարհուեցին կովկաս: Պէտք է խոստովանել, որ կովկասի գործը կովկաս: Պէտք է խոստովանել, որ կովկասի գործը չատ աւելի կարեւոր է հենց տաճկահայ գործի համար: Նախկին Ընդհանուր ժողովը չէր կարող նախատեսել այն խոր դէպքերը կովկասում, որոնք պիտի գային այդ օրէնքները քանդելու: Նոյնպիսի դէպք կարող է պատահել հակառակ ձեւով, եւ դուցէ այս ժողովի պատահել հակառակ ձեւով, եւ դուցէ այս ժողովի ընտրած Մարմինը Արեւելքի համար, ստիպուած լինի քանդուել, եթէ Տաճկահայաստանում մի կարեւոր դէպք տեղի ունենայ: Մենք աշխատել ենք լրացնել կազմը. Մարը եւ Գալֆայեանը արդէն կային. բացի այդ՝ մենք դիմել եւ հրաւիրել ենք Եուսուֆեանին, Ծոմնանին, Ահարոնեանին. բայց ոչ ոք չէ եկել: Գործ այնքան չատ էր կովկասում, որ այնտեղի Մարմինները էլ իրենց կազմով չէին կարողանում բաւարարութիւն տալ պահանջին, եւ միշտ նորանոր ընկերներ էին պահանջում: Արեւելեան Բիւրոն, յաճախ, իւր ամբողջ կազմով տեղում չէ եղել, երբեմն մի հոգի է միայն եղել, որովհետեւ բոլորն էլ չարունակ զանազան տեղեր են գնացել գործով: Ամէն տեղ մարդիկ էին պահանջում: Աչքաբեղճութիւն է երբ մեզ մեղադրում են, Թէ ինչո՞ւ արեւելեան չրջանն ենք անցել գործելու համար. ի դէպ ընկեր Միհրանեանին էլ ենք հրաւիրել՝ Արեւմտեան Բիւրոյում գործելու, բայց նա հրաժարուեց:

Բարսեղեան.— Ես կարող եմ յիշեցնել, որ մինչեւ անգամ Անդրանիկը առաջարկել էր գալ Կովկաս կռուելու, բայց մենք չէինք համաձայնել:

Միհնասեան.— Ռոստոմը սխալւում է իմ վերաբերմամբ. ճիշդ է, ինձ հրաւիրել էին «Դրօշակի» Խմբագրութեան մէջ մտնելու, բայց որովհետեւ այն ժամանակ արդէն հինգ հոգի կային, ես չընդունեցի, որպէսզի չասեն Թէ գնում է ամսական ստանալու. իսկ յետոյ երբ երկու հոգի էին մնացել, ես զարձեալ չգնացի, որովհետեւ ես չէի կարող մտնել Խմբագրութեան մէջ, այն պատճառով՝ որ գործունէութեան մարմնին մէջ, այն պատճառով՝ որ գործունէութեան նոր ստեղծած բարդ ուղղութիւնը կը պահանջէր բարդ պատասխանատուութիւններ. ուստի ես հրաժարուեցի այդպիսի ծանր պատասխանատու դերի մէջ մտնելուց:

Ժողովի վերջում խօսք է վերցնում ընկ. Սաֆոն եւ առաջարկում ծուցակների տեղեկագրի ընթերցումը յետաձգել, մինչեւ կովկասից սպասելիք ընկերները գան: Առաջարկը ընդունւում է:

Մալումեան.— Առաջարկում եմ ընկ. Տաճատին հրաւիրել խորհրդակցական ձայնով:

Առաջարկը քուէարկութեամբ ընդունւում է 14 ձայնով:

18ՐԴ ՆԻՍՏ (5 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Վռամեան:
Ներկայ են ԺողովականՀ:
Բացակայ են՝ Սաֆօ, Զաւրեան, Մանուկ, Իշխան:

Շարունակութիւն նախորդ նիստի օրակարգի՝ Արեւմտեան Բիւրոյի տեղեկագրի [քննութիւն]:

Մուրատ.— Ինդրում եմ ընկեր Մալումեանից բացատրել, Թէ ինչո՞ւ դադարեց Լոնտոնում հրատարակուել անգլերէն Pro Armeniaն եւ ի՞նչ արդիւնքի յանգաւ այն 35·000 ֆրանկի գումարը, որ Բիւրոն ներկեր ուղարկեց ֆրանսական հիւպատոսի միջոցով:

Մալումեան.— Պատրաստ եմ վերջին հարցի պատասխանը՝ հերթին, եւ անցնում եմ առաջին հարցին: Թէեւ Ընդհանուր ժողովը վճռել էր բաւականանալ Գարիզի Pro Armeniaով, բայց Դաշնակցութեան Կորհուրդը ի նկատի ունենալով քաղաքական որոշ պարագաներ, որոչեց Քայլ տալ սկսելու Լոնտոնի Pro Armeniaի հրատարակութիւնը, սակայն հաղիւ կարողացաւ լոյս տեսնել Թերթի առաջին համարը. Թէ ինչո՞ւ հրատարակութիւնը Մայիսին չսկսեց, այլ միայն 905ի Նոյեմբերին, բացատրութիւնը կարելի է գտնել Լորիսի տուած զեկուցագրի մէջ: Երբ գործը այդքան ուշացաւ, Բիւրոն պնդում էր որ այլեւս հարկաւոր չէր Թերթը սկսել. բայց Լորիսը յամառում էր ասելով, Թէ գործն արդէն կիսով չափ աւարտած է, յետ կանգնել

չէր կարելի։ Թուում է, թէ այդ դէպքում Լորիսը զեկավարում էր անհատական տեսակէտով։ Բիւրոն ըստիպուած զգաց իրեն համաձայնել նրա հետ եւ թերթը լոյս տեսաւ, բայց, ինչպէս ասացի, միայն մէկ համար, այն էլ թոյլ եւ անգոյն։ Գործը դժուար էր չբունակել, քանի որ Ստեփը (որդին) որը խոստացել էր վարել թերթի քաղաքական բաժինը, Լորիսի խօսքերին նայելով, հրաժարուեց իր ստանձնած գործից, պատճառաբանելով թէ անգլօ–ռուսական յարաբերութիւնները փոխուել են, եւ ինքը աննպատակայարմար է համարում ու անկարող է քննական դիւրք բռնել դէպի ռուսաց կառավարութիւնը։ Pro Armeniaի գործման պատճառը, ուրեմն, երբէք գրամական չէ եղել։ Ցաւալի էր ի հարկէ, որ կազմակերպութեան անունով սկսած մի թերթ այդպիսի տխուր կեանք ունեցաւ, մանաւանդ որ, դրա հետ միասին կազմուել էր և մի Մարմին, որը բաւական ծանօթ է նաեւ կազմակերպութեան, եւ որը պէտք է տեղեկութիւններ մատակարարէր անգլիական մամուլին՝ Հայոց Խնդրի մասին։ Թերթի գաղարումից քիչ յետոյ գաղարեց նաեւ այդ Մարմնի գործունէութիւնը։ Անհաւարակ այդ ամրողջ գործը գրուած է եղել չատ խախուտ հիմքերի վրայ։

Ռոստոմ.— Լրացնելու համար ընկեր Մալումեանի ասածները, աւելացնում եմ, թէ մենք սկզբից արդէն մեծ յոյս չենք ունեցել, որ Լոնտոնի Pro Armeniaն յաջողութիւն կ'ունենայ, որովհետեւ Ստեփ միշտ ասել է, թէ չէ կարող գրել Ռուսաստանի դէմ։

Վռամեան.— Իսկապէս, միթէ՞ Ստեփը ինքը չգիտէր, որ անկարող է հակառուսական պրոպագանդայով զբաղելու։

Մինասեան.— Այդ հարցն աւելի պարզարանելու համար կարեւոր է կարդալ ընկեր Լորիսի տեղեկագիրը, եթէ ոչ խոկոյն, գոնէ յետոյ։ Իսկ այժմ ես կ'անցնեմ այն ինդրին, թէ ո՞ր տեսակէտից նպատակայարմար էր բովանդակութիւն ունեն վերջերս հրատարակուած բրոշիւրները։ Պէտք է ասեմ, որ բացակայում է ամէն մի նպատակայարմարութիւն։ Երկրից ստացուած տեղեկութիւնները հենց այնպէս էլ մնացել են Ամբաղրութեան մէջ։ այդ տեղեկագրերն են, որոնցմով միայն միշտ կարելի է հիւրդ գաղափար կազմել երկրի տնտեսական–քաղաքական կացութեան մասին։ Բոլորովին չէ օգտուած ստացուած տեղեկութիւններից, մինչդեռ նրանց լոյս ընծայումն անհամեմատ աւելի կարեւոր պէտք է լինէր, քան զանազան բրոշիւրների հրատարակումը։ Այս հանգամանքը ես մեծ սխալ եմ համարում եւ յոյս եմ յայտնում, որ գոնէ այսուհետեւ այդօրինակ սխալներից խոյս կը տանք։

Բարսեղեան համաձայն է, որ հրատարակուած բրոշիւրները աղքատ են բովանդակութեամբ։

Զարդարեան.— Վերջին չրջանում «Դրօշակ»ը չատ աղքատ է երկրի մասին եղած տեղեկութիւններով, թերեւս այն պատճառով, որ տեղեկատու մարդկանց պակասութիւն կայ։ Այս դէպքում հարկաւոր է մշտական թղթակիցներ ձեռք բերել, վարձատրութեամբ, որոնք երկրի զանազան կէտերից, չարունակաբար լուրեր հաղորդեն պաշտօնական օրգանին։ Այլեւ պէտք է տալ մնայուն նկերը, ընդարձակ ուսումնասիրութիւններ։

Խահակեան.— Ես չեմ տեսել ոչ մի յեղափոխական օրգան այնքան անբովանդակ, որքան «Դրօշակ»ը։ Նրա էջերում չկայ ոչ մի ուսումնասիրութիւն դիտական բնաւորութիւն կրող։ այս է պատճառը որ թերթը այսօր հալածւում է կովկասում։

Վռամեան.— Մի ժամանակ, երբ թերթի պակասութիւն էինք զգում, «Դրօշակ»ը մեզի համար խոշոր նշանակութիւն ունէր, որպէս միակ եւ պիտաւոր տեղեկատու։ Այսօր, սակայն, նրա այդ նշանակութիւնը թուլացել է, քանի որ հրապարակի վրայ կան ուրիշ չատ թերթեր։ բոլոր հայախօս վայրերում օրլանններ ունենք, որոնք ժամանակին հաղորդում են հասարակութեանը մեր առօրեայ կեանքը յուզող հրատապ հարցերի մասին։ Օրինակ, այս կամ այն դէպքի մասին «Մշակ»ից աւելի չուտ եւ պուցէ աւելի մանրամասն տեղեկութիւններ ենք ստանում, քան «Դրօշակ»ից։ Ես կարծում եմ, որ «Դրօշակ»ին այսուհետեւ հարկաւոր է յատկացնել որոշ դեր, տալով նրան յատուկ ծրագիր, դարձնելով ամսագիր։ Ես էլ եմ չեչտում, որ թիւրքահայի կեանքը քիչ տեղ է գրաւում թերթում եւ ես էլ իրաւունք եմ համարում կրկնելու, որ աւելի ուշադրութիւն դարձնի այդ կեանքի վրայ։ Պարիզի Pro Armeniaն ես չեմ դնում իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած, նախ հենց այն պատճառով, որ Կլեմանսօ, Ժորես, Պրէսանսէ եւ ուրիշները բոլորովին չեն մասնակցում թերթին եւ միայն նրանց անուններն են արձանագրւում թերթի ճակատին։ յօդուածներ բոլորովին չունեն։ Միայն անունները բաւական չեն, չմիթարուննք սոսկ դրանցով։ այնպէս պէտք է անել, որ այդ անունները պատրուկ հնչիւններ չմնան մեզ համար։ Իսկ Լոնտոնում բոլորովին միտք չկար թերթ հրատարակելու, այն էլ աղակցութեամբ մի այնպիսի ռուսամոլ մարդու, որպիսին է Ստեփը։ միտք չկար եւ չպէտք էր հրատարակուէր։ իսկ եթէ այնուամենայնիւ հրատարակուեց, դա էլ շնորհիւ մեր չրջանում գոյութիւն ունեցող անհատական ինքնագլխութեան։ այսինքն, իւրաքանչիւրը ոք ինքնագլուխ քայլեր է անում, ինչպէս օրինակ, ընկեր Լորիսը, որ նոյնիսկ մտնուազ նամակ է գրել Ամերիկա, թէ քանի օրինակ պէտք կը լինի ուղարկել Լոնտոնում հրատարակուելիք Pro Armeniaից։ Այս նամակը ինձ միանգամայն ապշեցրեց, չէ՞ որ Ընդհանուր Ժողովը որոշել էր չհրատարակել։

Մաշուր.— Անմիջական ապացոյցներ բերել չեմ կարող նիւթերի ցանկը ձեռքի տակ չունենալու պատճառով, ես ասում եմ, բայց եւ այնպէս, որ «Դրօշակ»ը ամենաանբովանդակ թերթն է եղել։ Ցեղափոխական օրլերին, երբ կեանքն այնպէս ալեկոծուել է եւ ժողովրդի պահանջները չատացել, «Դրօշակ»ը իւր աղքատ բովանդակութեամբ չէ համապատասխանում ժամանակի ոգուն։ Ո՞վ է կարդում թերթը, առնուազն Ապատաժի չրջանում այլեւս չեն հետաքրքրւում, կարդում ենք միայն մենք, այն էլ ի պաշտօնէ։

Շահխաթունեան.— Ես չեմ ուզում ընկեր Մաշուրի նման խիստ լինել եւ պնդել թէ թերթը չէ կարդացւում։ կարդացւում է, բայց դլխաւորապէս միայն գիւղերում, որտեղ առհասարակ ամէն մի տպագրական խօսք հետաքրքրութիւն է չարժում։ Բայց ես կ'ասեմ այն՝ որ «Դրօշակ»ը կուսակցութեան կենտրոնական օրգանը լինելով, պէտք է չարունակ արծարծէր ծրագրային հարցեր։ պէտք էր միջոց տրուէր հասարակութեան, ծանօթանալու Դաշնակցութեան սկզբունքների, աչխարհահայեացքների հետ։ այս ուղղութեամբ է, որ մենք ոչինչ չենք արել, պոնէ վերջին հինդ տարուայ ընթացքում։ 1892ի ծրագիրը պարունակում է իւր մէջ որոչ սկզբունքներ, որոնք անկասկած, արդիւնք եղած են որոչ մտածողութեան, բայց այդ ծրագիրը մնացել է առանց չարունակութեան։ Հարկաւոր է չարունակ գրել ծրագրում ամփոփուած սկզբունքային խնդիրների մասին եւ այդպէս վարուած չլինելու մէջ պէտք է որոնել պատճառը, թէ ինչո՞ւ մեր կուսակցութեան նոյնիսկ կենտրոնական մարմիններում կան մարդիկ, որոնք գաղափար չունեն կուսակցութեան սկզբունքների մասին։ Ինչո՞ւ անփոյթ ենք դառնում։ Ընկեր Մաշուրեան հաղորդեց, որ Ամբաղրութիւնը աչխատել է խոյս տալ «Դրօշակ»ի էջերում պոլեմիկայից [քանակէճ]։ բայց նա վերցնում է պոլեմիկա հակացողութեան մասին վատ կողմը։ խօսել ծրագրի մասին, դեռ չէ նչանակում պոլեմիկա մըղել ուրիշ կուսակցութիւնների հետ։ Ոչ, ինձ թուում է, մի այլ պատճառ է լինելու։ Հետաքրքիր է, թէ ի՞նչպէս կովկասի մի ընկեր հետեւեալ բացատրութիւնն է տուել։ «դիտմամբ լռում ենք, որովհետեւ Դաշնակցութեան ուժը հենց ծրագրային այս մթութեան մէջն է»։ Զգիտեմ, որքան իրաւացի է այս խօսքը։ Ինչևիցէ, մեր առաջը կայ խոշոր մի թիւրիմացութիւն, որը հարկաւոր է պարզել, առանց յետաձգման։

Բարսեղեան.— Ընկեր Մաշուրեանի կարծիքը թէ «Դրօշակ»ը չէ կարդացւում, չափազանցութիւն է։ կարդացւում է, բայց ոչ այն չափով, ինչպէս ցանկալի է։ Գլխաւոր պակասութիւնը «Դրօշակ»ի այն է, որ նա չէ հանդիսանում կուսակցութեան դեկավարող, տուն [բանող] տուող օրգան, ինչպէս պէտք է լինէր Դաշնակցութեան կենտրոնական պաշտօնական օրգանը։

Չելալեան.— Այդ բոլոր նկատողութիւնները «Դրօշակ»ի մասին, թուում են աւելի անձնական աչխարհահայեացողութիւններից։ Եթէ թերթը չէ կարդացւում, պատճառն այն է, որ ժողովուրդը կարդում է օրին նիւթեր տուող թերթեր, մինչդեռ «Դրօշակ»ը, իբրեւ կուսակցութեան պաշտօնական օրգան, այդպիսի պահանջներին բաւարարութիւն տալ չէ կարող։ Հետեւաբար է ասել թէ «Դրօշակ»ը իւր բարձրութեան վրայ չէ։

Մաշուր (մի փաստ է բերում, «Դրօշակ»ի մի համարը, իւր ասածն ապացուցանելու համար)։ Այս համարում չկայ ոչ մի ինքնուրոյն նիւթ։ նոյնիսկ Շուշան [Շուչիի] վերաբերեալ տեղեկութիւնները պակասաւոր են։

Տաճատ.— Համաձայն եմ այն կարծիքների հետ, որ «Դրօշակ»ն այսուհետեւ նոր ուղղութեամբ պէտք է առաջ տանել։ Բայց չեմ կարող ասել, որ «Դրօշակ»ն իւր դոյութեան սկզբից եղել է անբովանդակ։ Այսօր, այո, կովկասում «Դրօշակ»ը բաւարարութիւն տալ չէ կարողանում, որովհետեւ հասարակութիւնն այնտեղ այլ միջոցներով է գոհացում տալիս իւր կարիքներին։ բայց կրկնում եմ, որ 15 տարի չարունակ «Դրօշակ»ը եղել է անբովանդակ։ Այսպիսի քննադատութիւններ անելիս, չպէտք է վերցնել միայն երեւոյթը ինչպէս կայ, այլ հարկաւոր է ուշադրութեան առնել եւ այդ երեւոյթի պատճառները։

Խահակեան.— Այսօր, երբ մեր յեղափոխութիւնը հասունացել է, այլեւս անբաւարար է դարձել մեզ համար «Դրօշակ»ի բովանդակութիւնը։ Զկայ ոչ մի տեսութիւն մեր դաւանած սկզբունքների մասին։ Ֆեդերալիստ [դաշնակցութեան] սկզբունքն ենք դաւանում, բայց ե՞րբ ենք բացատրել «Դրօշակ»ի էջերում այդ ֆեդերալիստի էութիւնը։ Նոյնպէս եւ ազգութեան դաղափարը, մնացել է անուշադիր, անմշակ։ Մինչեւ այժմ մենք միշտ ասել ենք թէ պարծնական մարդիկ ենք, կարիք չունենք տեսական լուսաբանութիւնների եւ միշտ էլ պարծնականի վրայ ծանրանալով «Դրօշակ»ը չէ տուել մեզ ոչ մի լողունգ [բառարան, նչանաբան], որով կարող լինէինք առաջնորդուել։

Չելալեան.— Մեզ ապացոյց տուէք, որ հայ ժողովուրդը [վերջին] 2–3 տարին այնքան է պարզացել, որ «Դրօշակ»ը այլեւս բաւարարութիւն չէ տալիս նրա պահանջներին։ Ես կ'ասեմ, որ ատոնք խօսքեր են միայն. մեր ժողովուրդը դեռ այնքան չէ հասունացել. մի քանի ուսանողներ են միայն, որ կարծում են թէ ժողովուրդն էլ իրենց պէս է մտածում։ Այս տեսակէտումն էր, երբ ես ասացի թէ բոլոր դիտողութիւնները անձնական հայեացքներէ են բխում։

Ռոստոմ, ցանկութիւն յայտնելով որ նկատողութիւնները սահմանափակուեն, չարունակում է.— պէտք է աչքի առաջ ունենալ այն թէ՛ արտաքին եւ թէ ներքին պայմանները, որոնց մէջ հրատարակուել է «Դրօշակ»ը։

Անդրանիկ.— Ճաճախ նկատում են թէ 15 տարի չարունակ «Դրօշակ»ը այսպէս է եղել, այնպէս է եղել։ «Դրօշակ»ը պէտք է քննադատեն նրանք, որոնք սկզբից ի վեր եղել են կուսակցութեան մէջ։

Շահխաթունեան.— Ես համաձայն չեմ թէ ժողո-

վուրդը չէ յառաջադիմել: ԵԹԷ նա դեռ զարկացման խոչոր քայլեր չէ արել, բայց մԹնոլորտն արդէն յեղափոխական է. ժողովուրդի առաջ դրուած են հարցեր, որոնց հարկաւոր է պատասխանել: Գոնէ ժողովրդի համար դրուէին ծրագրային յօդուածներ, ժողովրդին մատչելի լեզուով, ինչպէս օրինակ այդ անում են ուրիշ կուսակցութիւնները. կրկնում եմ, ծրագրային պրականութեան բացակայութեան պատճառով, շատ շատերը մեզանում ծանօթ չեն Դաշնակցութեան հիմնական սկզբունքների հետ. զգալիօր չուենն նոյնիսկ 1892ի ծրագրի էութեան մասին. եւ երբ կարդում էք, չատեր կկղծուած են համարում: Այստեղ ասում են, իբր մեզնէն լսելով է դրսի ընկերների վրայ, որոնք չեն ԹղԹակցել, եւն.: Բայց չէ՞ որ Խմբագրութեան մէջ եղել են պատրաստուած մարդիկ, որոնք կարող էին պատրաստել ծրագրային հարցերի մասին:

Թորչեան.— «Դրօշակի» մասին խօսելիս պէտք է աչքի առաջ ունենալ միայն նրա վերջին շրջանը: Առաջ Թերթն ունէր իր որոշ մխսխան [առաքելութիւնը]. այն ժամանակ Թերթի վրայ նայում էին իրրեւ տեղեկատուի վրայ: Բայց երբ եկան յեղափոխութեան օրերն, «Դրօշակն» յանկարծակիի եկաւ: Ինձ թւում է, որ Խմբագրութիւնը կորցրեց իւր ճանապարհը, չվերանալով Թէ ո՞ր կողմը պէտք է գնալ: Այսօր, «Դրօշակը», կովկասում մամուլին տրուած ազատութեան պատճառով, կորցնում է իւր հետաքրքրութիւնը, նրա տուած նիւԹերը հին են լինում:

Զոփուրեան.— Մեզ մօտ, Ոսկանապատի շրջանում եւս, «Դրօշակը» իւր բովանդակութեան տեսակէտից շատ անգամ խօսակցութեան առարկայ է եղել. ես չեմ կամենում կրկնել այդ ամԹիւ ընկերներից մի քանիսի արած նկատողութիւնները, որոնք մեծ մասամբ իրաւացի են: Մեր շրջանի վերաբերմամբ այսքանը միայն կ'ասեմ, որ ատատիստիկական [վիճակագրական] տեղեկութիւնները ցոյց են տուիս որ «Դրօշակի» պահանջը մեր շրջանում 1904–5 թուին աւելի էր, քան 1906 թուին. եւ այդ պահանջի նուազումը աւելի նկատելի է բանուորական խմբերում, քան դասում: Կանգը փոխուել է եւ առաջադրել շատ նոր խնդիրներ, որոնք առաջ չկային հրապարակի վրայ: Այդ պատճառով էլ «Դրօշակը» ներկայումս չէ կարող տարուել այն ձեւով, ինչպէս առաջ. ուստի անպայման կարեւոր է նրան փոխել՝ ներկայի պահանջների համաձայն:

Թոփչեան.— Ընդհակառակն ես փաստեր ունեմ, որ Թիֆլիսի բանուորների շրջանում «Դրօշակի» պահանջ կայ: Նախ, որովհետեւ «Դրօշակը» նրանց կուսակցութեան կենտրոնական օրգանն է եւ ապա նրանք՝ բանուորները՝ տրադիցիական [աւանդութիւն դարձած] կապերով կապուած են «Դրօշակի» հետ. մանաւանդ որ դրա մէջ ոգով է, որ կարդանում են լուրեր ստանալ Տաճկահայաստանից:

Զարդարեան.— Շատ խօսուեց «Դրօշակի» մասին, բայց ոչինչ Pro Armeniaի վերաբերմամբ. միայն ընկեր Վռամեանը յիշատակեց, Թէ Պարիզի մեր օրգանը անհամապատասխան է իւր կոչմանը:

Մալումեան.— Թող ներուի ինձ ասել, որ եզած նկատողութիւնների մէջ չկայ հիմնաւորումն եւ դրանք մեծ մասամբ զուրկ էին եւ լրջութիւնից: Ընկեր Մինասեան սխալւում է, ասելով, Թէ Խմբագրութիւնը չէ հրատարակել երկրի կացութիւնը նկարագրող տեղեկագրեր: Նա մոռացաւ մի տարրական բան — հրատարակելու համար պէտք էր նախ ունենալ այդ տեղեկագրերը: Մեր «ԹղԹակիցներ»ը շատ ազգատ են եղել եւ առացուածներն էլ լոյս են ընծայուել «Դրօշակ»ում. երկրի մարմիններից ոչինչ չստանալով, մենք ստիպուած ենք եղել Պատրիարքարանի տեղեկագրերից օգտուել: Ուրեմն, որտե՞ղ են ձեր ասած ընդարձակ նիւԹերը: Առաջին անգամն է, որ այս ժողովում ստանում ենք քիչ շատ մշակուած տեղեկագրեր Սասունի ու Վանի շրջանից ու մենք ուրախութեամբ արձանագրում ենք այս բանը: Մեղ ասում են, Թէ երկրից եկող նամակները պէտք է տպէինք. տարօրինակ է այդքան միամիտ բաներ լսել կուսակցական ժողովում. բայց գոյց տուէք՝ ե՞րբ են նամակներ ուղարկել եւ անտիպ մնացել: Խմբագրութիւնը ինքը չէր կարող նամակներ ստեղծել: Թէ ինչո՞ւ չկային ձեր եւ մեր ցանկացած նամակները, այս հարցին պատասխան Թող տան նոքա, որոնք այստեղ երկրէն են ներկայացնում, կամ ոքնք եկել են Կովկասից: Մի միջոց միայն կայ այդ պակասը լրացնելու, այն է՝ պահել յատուկ ԹղԹակիցներ, — մի խնդիր, որ պէտք է քննուի եւ լուծուի այս ժողովում: Ապա, ես մեղադրում եմ ընկերներ Վռամեանին եւ Զարդարեանին, քանի որ իրենք են եղել (ինչպէս նաեւ «երկիր»ի խմբագրութիւնը), որ մի անսոյոր եռանդով աշխատել են երկրից եկող նամակները դէպի իրենց Թերթերը քաշել: Հասկանալի է, ի հարկէ, ընկերների այդ եռանդը դէպի իրենց Թերթերը, բայց անպատճառացուցիչ է կուսակցութեան օրգանի տեսակէտից: Ինչ վերաբերում է ընկեր Վռամեանի այն կարծիքին Թէ Pro Armeniaն կանգնած չէ իւր բարձրութեան վրայ, ես այդ համարում եմ սխալ, վիրաւորական Պիարի անուանը, դուցէ եւ մի Ֆրազ՝ արտասանուած հենց այնպէս: Pro Armeniaն, իր մի քանի Թերութիւններով հանդերձ, հանդիսանում է մեր Դատի հիմնական օրգան, լուրջ տեղեկատու, եւ նրա տուած լուրերն այնքան ճիշդ են նկատուած, որ մինչեւ անգամ Ֆրանսիական մինիստր Դիլկասսէն ստիպուած էր հրապարակով խոստովանել այդ, պարլամենտի մէջ: Իսկ Թէ նրա մէջի տեղեկութիւններն առատ չեն եղել, մեղաւորը այստեղ ոչ ինքը Թերթն է, ոչ Պիարը եւ ոչ մենք: Մեղքի ամբողջ ծանրութիւնն ընկնում է մեր Մարմինների վրայ: Վերջին վեց տարուայ ընթացքում՝ Pro Armeniaին կանոնաւոր տեղեկութիւններ

մատակարարելու համար «Դրօշակի» Խմբագրութիւնը հազար ու մի նեղութիւններ է կրել եւ հազար ու մի դիմումներ արել Թէ՛ երկրի եւ Թէ կովկասի ընկերներին, մեծ մասամբ ապարդիւն: Գալով «Դրօշակ»ին, իմ կրութիւնը փափուկ է դառնում, քանի որ ստիպուած եմ պաշտպանել մի Մարմին, որի մի անդամը ես ինքս եմ եղել: Այստեղ յիշատակուած փաստերը ճիշդ չեն: Ապացոյցները պէտք է հիմնուեն Թուերի վրայ, եւ այս տեսակէտով՝ ես ոչ մի հիմք չեմ տեսնում ասելու, Թէ «Դրօշակի» պահանջ չի դոյացում: 1903ից 1906՝ «Դրօշակի» քանակը 3000ից բարձրացել է 12·000 օրինակի: ԵԹԷ մէկից ունենայինք մեր օրգանը անխափան կովկաս եւ Պարսկաստան մտցնելու, էլ չեմ ասում Թուրքիա, այն ժամանակ հաւանական է 25·000 օրինակ ապահովելու կարիք զգացուէր: Խմբագրութիւնը անգլալար պահանջներ է ստանում Գանձակից, Շուշուց, Երեւանից, Բաղուից, Թիւսաստանի հայ գաղութներից, Սալմաստից եւայլն: ԵԹԷ պահանջ չլինէր, պէտք էր որ մեր մարմինները մեղ յայտնէին այդ մասին, մինչդեռ իրականութեան մէջ բոլորովին հակառակն է պատահում: Օրգանի խմբագրական մասի վերաբերմամբ՝ երկար կանգ չեմ առնել: Վերջին 5–6 տարիները նա խմբել է ընկերներ, որոնց ձեռնհասութիւնը չէ կարելի չընդունել: Քրիստափորը՝ «Ամբոխային տրամաբանութեան» հեղինակը, Վարանդեանը, Ղարիբը, Ալինանեան, եղել են բուն կռւղի մէջ: Ապա «Դրօշակի» մէջ երեւան են եկել երիտասարդ բանասէրներ՝ Դուման, ՍիամանԹօ, Վտարանդի: Վերջերս մի չնորհալի պրող՝ Արտաւազդ եւ ուրիշները: Այդ բոլորը միասին կազմակերպութեան օրգանին տուին այն կշիռը, որի մասին յաճախ վկայել են մեր մարմինները: Թերթի հմայքը բարձրացնելու նպատակով՝ մենք աշխատել ենք ղէպի մեզ գրաւել նշանաւոր եւրոպացիներ, որոնք այսօր յօդուածներ են գրում յատկապէս «Դրօշակի» համար եւ որոնց անուններդ ձեզ բոլորիդ քաջ ծանօթ են: Այս բոլորից յետոյ, գալով իսահակեանի եւ Մաշուրի ասածներին — առնուազն պիտի համարել լրջութիւնից զուրկ: Նրանք ծանօթ չեն կուսակցական օրգաններին եւ այն դժուարանքը, որ նրանք տալիս են ռուսաց կուսակցական մի քանի Թերթերին, դրա ապացոյցն է: Վերցրէք դուք այն ընդհանուր համակրութիւնը, որ վայելում է «Դրօշակը», Թէ՛ երկրում եւ Թէ երկրից դուրս, եւ այդ համակրանքի կողքին դրէք այդ տեսակ նկատողութիւնները — կը տեսնէք, որ համեմատութիւն անգամ չէ կարող լինել: Ես չեմ հասկանում խմաստը այդ տեսակ քննադատութեան — արդեօք սուրեկեան [ենԹակայական] հայեացքներն ու հակումնե՞րն են այստեղ խօսում, Թէ կայ մի այլ Թիւրիմացութիւն: Իսկ այն հանգամանքը, որ «Դրօշակը» հեռու է մնացել պոլեմիկայից, գոհունակութիւն է յարուցել մեր բոլոր ընկերների շրջաններում: Եւ ի՞նչ իրաւունքով մենք կարող էինք բանալ «Դրօշակի» էջերում, քանի որ Ընդհանուր ժողովը նախապնել է որոշ ուղղութիւն եւ մենք պարտաւոր ենք համարել՝ մնալ այդ սահմաններում: Խմբագրութեանը չնորհակալութիւն պէտք է յայտնել, որ նա այդքան կորեկտ [ուղիղ, պարկեշտ] է վարել իր պաշտօնը: Գալով Շահխաթունեանի կարծիքին, որ էական է, պիտի յայտնեմ, որ մենք չէինք կարող խօսել ծրագրային հարցերի մասին, այն պատճառով, որ այդ դէպքում պէտք է խօսէինք նաեւ «նախագիծ»ի մասին. ուրիշ խօսքով, պէտք է պաշտպանէինք մի բան, որ ոստիկ փոքրիկ էր բարձրացնելու կազմակերպութեան չարքերում: Մենք խուսափել ենք դրանից, եւ ինչպէս ապացուցանում են այս ժողովի մէջ արտայայտուղ տրամադրութիւնները, շատ լաւ ենք վարուել: «Դրօշակի» այո՛, ունի Թերութիւններ, բայց ոչ այն, ինչի մասին ոմանք խօսեցին: Հարկաւոր է մեծացնել ինչի մասին ոմանք խօսեցին: Հարկաւոր է մեծացնել օրգանը, յոռնալ հրատարակել, մտցնել նրա էջերի մէջ ընթացիկ սոցիալական [ընկերային] հարցերի քննութիւն, եւ այդ բոլորի համար հարկաւոր է այս պատուէրը, եւ այդ բոլորի համար հարկաւոր է այս ժողովի Թոյլտուութիւնը: Թող ժողովը, վերջապէս, կարծիք յայտնէ այդ բոլորի մասին:

Միջկուսակցային համերաշխութիւն խնդրի մասին եղած հարցապնդումները:

Մինասեան.— Ժընեւի մէջ տարբեր կոնֆերանս [համաժողով, խորհրդաժողով] քաղաքական սխալ էր մեր կողմից: Պիտի ասեմ եւ այն խնդրի մասին, Թէ որքա՞ն կարող էր Դաշնակցութիւնը կռիւ վարել միաժամանակ և Ռուսաստանի դէմ: Դաշնակցութիւնը նախ իր ծրագրի հիման վրայ՝ չպէտք է սկսէր հակառուսական ուրեէ կռիւ: Ապա, զործնական տեսակէտից նայելով, մի այդպիսի կռիւ չէինք կարող յաջողութեամբ տանել, մէկ ձեռքով երկու ճմերուկ բռնել անկարելի էր: Դաշնակցութիւնը չպէտք է կռուի Ռուսաստանի դէմ. նա կովմնակի կերպով իրաւունք ունէր հակառուսական տրամադրութիւն նախապատրաստելու: Եւ ի՞նչ միտք կայ օրինակ համերաշխութեան կապերով միանալու ֆինլանդացիների հետ, քանի որ սրանք բնաւ նպատակ չունէին կռիւ մղելու Տաճկաստանի դէմ: Ես վերադառնում եմ կրկին կոնֆերանսի խնդրին, — ԵԹԷ այդ միտինգը սարքուէր մասնաւոր կերպով, այն ժամանակ, ի հարկէ, ոչինչ չէինք ունենայ առարկելու, բայց նա ուսացել էր կուսակցական բնաւորութիւն, մինչդեռ այդպիսի բնաւորութիւն չպէտք է տալ այդպիսի ձեռնարկներին, որովհետեւ նրանք վիժում են, ինչպէս եւ վիժեց նաեւ Ժընեւինը: Այդպիսով միայն ձգում ենք կուսակցութեան վարկը:

Ռոստոմ.— Ժընեւի մեր ընկերները հակադաշնակցական գործ չեն կատարել հրաւիրելով ընդհանուր կոնֆերանս Ժընեւում գտնուղ տերբերին, բուլղար-

ներին, յոյներին, բոնախպիններին, ինչպէս նաեւ ձըզտելով համերաշխութիւն հաստատելու Ռուսաստանի մէջ գործող կուսակցութիւնների հետ: Դա կատարուած է նախորդ Ընդհանուր ժողովի յատուկ հրահանգով (կարդում է ժողովի արձանագրութիւնը, 25–26րդ էջ): Հարկ եմ համարում աւելցնել մի քանի խօսք մի քանի կուսակցային խորհրդաժողովներում կայացրած որոշումների մասին, որոնց յիշատակութիւնն եղաւ Արեւմտեան Բիւրօյի տեղեկագրի մէջ: Առաջին խորհրդաժողովը կազմուեց Գարիզում, ֆինլանդացիների նախաձեռնութեամբ: Հրաւիրուած էին Ռուսաստանում գործող բոլոր կուսակցութիւնները, նոյնիսկ ռուս ազատամիտ [ազատական?] կուսակցութիւնը: Չնայած որ սկզբում բոլորն էլ խօսք էին տուել մասնակցել ժողովին, սակայն վերջին րոպէին սոցիալ-դեմոկրատները հրաժարուեցին: Համաժողովի որոշումներից մէկը եղաւ այն, որ համաձայնութիւն կայացաւ, ունենալ Գաեերբուրգում մի միջկուսակցային բիւրօ, որը պիտի կապ պահպանէր բոլոր կազմակերպութիւնների հետ, առանձին իւրաքանչիւրից ընդհանուր գործին վերաբերեալ կարեւոր տեղեկագրերը եւ հաղորդէր հարկ եղածը բոլորին: Նա պիտի լինէր ճիշդ այնպիսի բիւրօ, ինչպիսին ծրագրուած էր 1892 թուին Դաշնակցութեան կանոնադրութեան մէջ: Բիւրօն չկազմակերպուեց, որովհետեւ կեանքի մէջ այդպիսի մեծ կարիք չզգացուեց, որպէսզի գործող կուսակցութիւնները մի մի անդամ յատկացնէին նրան: Իսկ ղրկան հետեւանքը եղաւ այն, որ կուսակցութիւնները ճանաչեցին իրար, ծանօթացան մօտաւորապէս իւրաքանչիւրի դիրքին, կեանքին, ձգտումներին, ուժին հետ եւ կազմեցին պահանջների ցանկ: Երկրորդ համաժողովը կայացաւ ծըննդեան Գագրնի մասնակցութեամբ: Նախնական խորհրդակցութիւնը կայացաւ Սոցիալ Յեղափոխականների, Լեհ Սոցիալիստական կուսակցութեան եւ Դաշնակցութեան մասնակցութեամբ: Փոխադարձ ծանօթութիւններից յետոյ, որոշեց հրաւիրել այս անգամ միայն յեղափոխական կուսակցութիւններին: Գագրնը, որ վարում էր բանակցութիւնը, հաստատեց, որ այս անգամ բոլոր կուսակցութիւնները եւ նրանց ըստ ամենայնի սոցիալ-դեմոկրատները համաձայն են մասնակցելու ժողովին: Հենց այստեղ էլ մենք պարզեցինք մեր բռնելիք դիրքը, ցոյց տուինք, թէ մինչեւ ո՛ր աստիճան միւս կուսակցութիւնները կարող են յոյս դնել մեր ուժերի վրայ: Մենք յայտնեցինք որ Դաշնակցութեան մեծագոյն ուժը դործադրուել է տանձկահայկական դաշտին համար, երկրորդ՝ աչքի առաջ ունենալով քուրքերի հարեւանութիւնը, ստիպուած կը լիներ մնացած ուժերի մի մասը պահել ինքնապաշտպանութեան համար, երրորդ՝ այդ բոլորի պատճառով՝ համառուսական ակտիւ չարժման մենք կարող ենք տալ մեր ուժերի չնչին մասը միայն: Ներառեցինք կատարել անհատական առաջարկներ, եւ յարձակումներ զէնքի պատահի վրայ: Միաժամանակ համաձայնութեան դալով Լեհ Սոցիալիստ կուսակցութեան ներկայացուցչի հետ, յայտարարեցինք, որ ընդհանուր ապստամբական չարժմանը կը դիմենք միմիայն այն դէպքում, երբ բուն ռուսական ներքին նահանգներում պայթած կը լինի լուրջ, հիմնական ապստամբութիւն, զօրքերի մասնակցութեամբ: Եւ այս, այն նպատակով, որպէսզի բուն ռուս ժողովուրդը նկատի մեր չարժումները իբրեւ օժանդակ ոյդակներ եւ ոչ իբրեւ ապստամբական անջատական բնոյթ կրող: Խորհրդաժողովը կայացաւ քիչ յետոյ Ժընեւում: Սոց.-դեմոկրատները թէեւ ներկայացան, բայց հենց սկզբից մի պատրուակ բռնելով, հեռացան: Մեր մասնակի նախնական որոշումը վերայինչեալ տակտիկայի վերաբերեալ, անց կացաւ խորհրդաժողովում: Գարիզում ծրագրուած միջկուսակցային բիւրօյի խնդիրը դրուեց նորից, բայց աչքի առաջ ունենալով գործնական անյարմարութիւնները, առժամեայ կերպով կազմուեցաւ մի արտասահմանեան կոմիտէ՝ սեկրետարիատ [քարտուղարութիւն], որը պիտի կատարէր նոյն բիւրօյի դերը: Սեկրետարիատը կազմում էին Ժընեւում գտնուող կուսակցութիւնների՝ Դաշնակցութեան եւ Սոց.-յեղափոխականների ներկայացուցիչները: Ներառեցինք նաեւ, մեր կողմից ամէն տեսակ աջակցութիւն բոլոր կուսակցութիւններին զէնք ձեռք բերելու գործի մէջ, ինչպէս նաեւ մեր ռումբերից: Խորհրդաժողովի միւս որոշումների մասին, մի այլ առթիւ:

Վռամեան.— Քանի որ Բիւրօն այդքան փուքոտ գտնուած էր համերաշխութիւն կապելու օտարների հետ, չէ՞ր կարող արդեօք փորձ անել կապեր հաստատելու եւ ուրիշ հայ յեղափոխական կուսակցութիւնների հետ, եթէ ոչ պաշտօնական, գոնէ կիսապաշտօն յարաբերութիւնների մէջ մտնելու միջոցներ ստեղծել:

Անդրանիկ.— Այն մարդիկ, ուսանող թէ յեղափոխական, որոնք չարունակ աղմուկ են հանում համերաշխութեան գաղափարի չուրջը, ղէտե՞ն արդեօք թէ երկրում կարելի է իրականացնել այդ թէ ոչ: Այսքան տարի է ոչ մի հարեւան ազգ չէ ուզել հաշտ լինել մեզ հետ: Քրտերն անգամ, որոնք իրր թէ կրօնամոլ չեն եւ որոնք մեզ տեղ տեղ ոազմամթերք են հասցուցել, դարձ եւս արշաւել են մեր վրայ, երբ ընդհանուր հրաւէր են ստացել կառավարութեան կողմից: Մեր հարեւաններից ոչ մէկը մեզի բարեկամ չէ: Օրինակ, ես երբեք վրացիները բարեկամ չեմ ճանչնար մեզի:

Ստեփանեան.— Բիւրօյի թելադրութեամբ Առըրպատականում համերաշխութեան փորձեր եղել են հնչակեանների հետ, բայց չէ յարատեւել, որովհետեւ դրժել են:

Ջելալեան.— Ընկեր Ստեփանեան այդպէս չպիտք է մտածէ, մենք միշտ պիտք է փորձենք առանց յուսահատուելու. Բիւրոն էլ այս բանի մէջ թերացած է. ինչո՞ւ հայ տարրերի հետ չփորձել մխանալու, իսկ օտարներու հետ անել:

Նախաբանեան ցոյց է տալիս Գ. Ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, ուր յատկապէս ասուած է թէ հնչակեանների հետ համերաշխութիւն կարելի չէ կայացնել: Դաշնակցութիւնը օտար որեւէ կուսակցութեան հետ համերաշխ լինելով, ժողովուրդի հետ չէ որ համերաշխ է. այլ է կուսակցութիւնների եւ այլ՝ ազգութիւնների համերաշխութիւնը. կուսակցութիւնը ազգի մի որոշ մասն է:

Տաճատ խնդրում է լաւ ծանօթացնել օտար տարրերի խնդրի հետ եւ ապա քանաձեւ կազմել:

Նախագահը յայտնում է, որ դա առաջիկայի խընդիր է եւ ոչ այս ժողովի:

Ջելալեան.— Հակասութիւններ կան երկկի եւ այսօրուայ դատողութիւնների եղանակների մէջ. ոմանք երբեմն, հարկ լինելիս, դիմում են ծրագրի յօդուածների տառերուն, իսկ երբեմն հանգամանքներին կը յայտարեն:

Վիճաբանութիւնների չարունակութիւնը թողնելով յաջորդ ժողովին, նիստը փակուեց:

19ՐԴ ՆԻՍՏ (5 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Վամպեան:
Ներկայ են 23 ժողովական:
Բացակայ՝ Սեպուհ(13), Աղբրանիկ, Ջաւեան:

Նախագահ.— Օրակարգին անցնելուց [առաջ], պիտ յայտնեմ, որ ընկ. Սաքոն գովկասից եկել է եւ ինչպէս տեղեկացանք, առանց պատգամաւոր լինելու մասնակցում է ժողովականներին որոշել, թէ ժողովը ինչ դիրք պիտք է բռնէ դէպի եկած ընկերը:

Մալումեան.— Սաքոյի վերաբերմամբ երկու մտքոց կայ, կամ նրան առժամանակ ընդունել խորհրդակցական ձայնով եւ սպասել մինչեւ որ պարզուի, թէ հրաւիրուած հինգ ընկերներից ո՞րը չէ գալիս, եւ վերջինի փոխարէն նրան քուէի ձայն տալ. եւ կամ նկատի ունենալով, որ գովկասից նոր եկած ընկերները հաստատապէս ասում են, որ Դումանը չէ գալու, այդ ձայնը այժմ եւեթ տալ Սաքոյին:

Ջելալեան.— Սաքոն հրաւիրուածներու թուի մէջ չէ, սակայն մեր մէջ բանաձեւ դարձաւ, որ չեկող ընկերոջ փոխարէն նրա ձայնը ուրիշին կու տանք. եւ եթէ այսպէս է, այն ժամանակ մենք պիտի կարդ պահենք եւ առաջնութիւնը տանք Տաճատին, որ Սաքոյէն առաջ է եկել:

Զոփուրեան.— Թէեւ Դումանի մասին մասնաւոր տեղեկութիւն կայ, բայց աւելի լաւ է սպասել Ոսկեհատպոցից պատշաճան դրութեան, ապա Դումանի չգալը հաստատ համարել:

Ծուշիկ.— Առաջարկում եմ Սաքոյին ընդունել խորհրդակցական ձայնով:

Սեպուհ.— Քանի որ 7 ընկեր հրաւիրելու կանոնադրքը մենք ինքներս ենք կազմել եւ Սաքոն, իրրեւ մեր կարեւոր ընկերներից մին, եկել է, մենք կարող ենք մեր կազմած կանոնադրքը փոխել եւ փոխանակ 7ի, հրաւիրել 8ը կամ 9ը:

Մալումեան.— Հաստատապէս յայտնի է, որ Դումանը չէ գալու, ուստի պաշտօնական նամակի սպասելը աւելորդ է: Սխալ է այն կարծիքը, որ Տաճատը առաջին քննեցաւ է. ես առաջարկում եմ Սաքոյին տալ Դումանի ձայնը:

Քուէարկութեան է դրուում առաջարկը՝ Սաքոն քուէի իրաւունքով հրաւիրելը ընդունում է 12 ձայնով:

Ժողովը անցնում է օրակարգին:

Նախագահը.— Խօսքը պատկանում է ընկեր Մալումեանին, իրեն եղած հարցերուն պատասխանելու համար:

Մալումեան.— Ընկեր Զարդարեանի հարցը, թէ ինչո՞ւ բոնախպիններն ու հերսէքովինացիները հրաւիրուած էին Ժընեւի խորհրդաժողովին, հետեւանք է այն բաւական տարածուած հայեացքին, թէ քանի աւելնայ մեր Քշնամիների թիւը, այնքան կը դժուարանայ մեր Դատի լուծումը: Ներկայ դէպքում, Աւլիտորիան, իրրեւ հովանաւոր Հերսէքովինայի, կարող է քշնամանալ հայերին, քանի որ նրանք մասնակցել են մեր խորհրդաժողովին: Բայց այդ կարծիքը սխալ է. սխալ է մանաւանդ այն պատճառով, որ հերսէքովինացիները առաջարկում էին իրենց մտցնել Թուրքիայի եւ ոչ Աւստրիայի դէմ բողոքողների մէջ. բացի դրանից, նրանք ուրախութեամբ համաձայնում էին յարել բալկանեան դաշնակցութեան պաղտփարին եւ իրօք այդ վերջին քայլաքակական մեծ ծրագիրն է, որ դառնում է հիմնակէտը այդ տարրերի մերձեցման: Ընկեր Մինասեանի խօսքերին ես չեմ պատասխանում, բաւականանալով Ռոստոմի տուած բացատրութիւններով: Բայց նորա ասածների երկրորդ կէտի մասին Թոյլ կը տամ ինձ մի քանի խօսք ասել. նա պնդում է թէ Ժընեւի վերջին ձեռնարկը չհաճեցաւ մեր գործի համար. չատ տարօրինակ է մի այդպիսի բան պնդել: Ժընեւը հանդիսանում է մի տեսակ կենտրոնատեղի, ոչ միայն բոլոր յեղափոխական կուսակցութիւնների համար, այլ նաեւ բալկանեան ազգերի երիտասարդութեան: Մենք չէինք կարող ի նկատի չառնել այդ երիտասարդութիւնը, մանաւանդ, որ դրանից չատերը վերադառնալով իրենց երկիրները՝ հանդիսանում են իրրեւ կարեւոր գործողներ: Բալկանեան ազգերի ուսանողութեան մէջ պատրաստել հակաուլթանական չարժում — դա մի չատ կարեւոր գործ է, ահա թէ ինչու մենք կանչեցինք խորհուրդի ե՛ւ ուսանողներ ե՛ւ ոչ-ուսանողներ: Ընդդիրը չատ մեծ դժուարութիւններ է ներկայացնում, որովհետեւ յոյների եւ բուլղարների մէջ անհամաձայնութիւնը այնքան ուժգնէ է, որ նրանց Թոյլ չէ տալիս մի որեւէ խնդրի չուրջը խմբուելու. մինչեւ անգամ նրանք դժուարանում էին մի սենեակում գումարուել. բայց չնորհիւ այն վատահութեան, որ նրանք տածում

էին դէպի մեր կուսակցութիւնը, բոլորն էլ համաձայնուեցին ժողովին մասնակցել եւ միասին դրծել: Այդ ժողովի հետեւանքը եղաւ այն բնակուլցիան [վճիռ, որոշում], որի մասին ես խօսեցի: Մեր ձեռք առած մի-ջոցներով՝ ժրնեւի մամուլը այդ մասին լռեց, որպէսզի խորհրդաժողովի լուրը չատ չտարածուի. բայց Վիեննայի մամուլում, ինչպէս լսեցինք, խնդիրը քննութեան առարկայ է դարձել, կարեւոր նշանակութիւն տալով այդ նորարարող չարժման: Ժընեւի մեր բարեկամ մի քանի պրոֆէսօրներ այդ համախմբումը նկատում են իրրեւ մի պատմական կարեւոր դէպք, բալկանի եւ Փոքր Ասիայի համար: Ժորէս ուրախութեամբ յանձն կ'առնէ մասնակցել այդ ժողովին եւ յատուկ հեռագրով յայտնեց իր համակրանքը: Ոչ մի կասկած չկայ, որ նա ապագայում կ'անցնի այդ դրծի գլուխ եւ իր տապանի յատուկ ձեւով մեծ դերկ կր տայ գրան: Անդրանիկր կարծում է, որ այդ համերաշխութեան քայլերը իրական նշանակութիւն չունեն երկրի դրծունէութեան համար: Սակայն մոռանում է նա, որ ինչքան էլ որ օրէնք յեղափոխական պայմարը սկզբում փոքր լինի, ժամանակի ընթացքում նա աճում է եւ ընդարձակւում: Մի՞թէ նոյնիսկ հայկական յեղափոխութեան պայմարը այդ կերպարանքը չէ ունեցել: Ինչպէս Թուրքաստանում մեղ յայդուել է համերաշխութիւն հաստատել մի քանի կուսակցութիւնների հետ, այնպէս էլ կր յայդուի Թուրքիայում: Ջարս տարի առաջ, ոչ ոք չէր հաւատում թէ Թուրքերից մեղ յարդներ կր լինեն, բայց այժմ մենք տեսնում ենք, որ «Օտտոմանեան Գործօն Կոմիտէն» պատրաստ է մեղ ձեռք մեկնելու. նրանք ոտքի էին մեր առաջարկութեամբ, Թուրքերէն բրոշիւրներ, սկսել են լոյս պրպայնդ: Դրանց չրջանից նոյնիսկ մի մարդ դուրս եկաւ, Զէրքէզր, որ իրեն դրեց մեր կազմակերպութեան տրամադրութեան տակ, դնաց Երկիր եւ պատրաստ է այնտեղ Թուրքերից խմբեր կազմակերպել եւ ի հարկին միանալ մեզ: Սա ապացոյց է, որ մենք մեր մատը դրել ենք վէրքի վրայ եւ ապագայում համերաշխութեան գործր աւելի հաստատուն քայլեր պիտի անէ:

Ալդրանիկ.— Ես երբէք օտարների, անհատ րնկերների ազդեցութիւնր եւ ծառայութիւնները չեմ ուրանում եւ չենց այդպիսի օրինակներ ես էլ եմ տեսել, բայց Երկրում դրանք անհետեւանք են մնում, քանի որ դէպքի ժամանակ բաւական ճանաչուածների կամ խումբր չենց ինքն է յարձակում մեր վրայ:

Մալումեան լրացնում է տեղեկագրի այն կէտերը, որոնք վերաբերում են եւրոպական կառավարութիւններին եւ պարլամենտական խմբերին եղած դիմումներին:

Վահագն.— Արդեօք Բիւրոն իւր դիմումները եւրոպական պետութիւններուն անելիս՝ ո՛ւմ անունով էր անում, Բիւրոյի՞ Թէ Համրագրութեան, եւ կամ ինչ ձեւով:

Մալումեան.— «Արեւմտեան Բիւրօ» խօսքը ֆրանսերէն Թարգմանութեամբ անիմաստ բան է դուրս գալիս, ուստի դիմումները լինում են Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական օրգանի վարչութեան կողմից, մանաւանդ որ «Դրօշակ»ը Եւրոպայում արդէն բաւական ծանօթ է:

Զաւրեան.— Ի՞նչ յարաբերութիւններ ունի Բիւրան Անգլիայի հետ եւ ի՞նչ միջոցով: Ես ինչպէս Տաճկաստանում լսեցի, Անգլիան ոչ Թէ մեր բարեկամն է, այլ չատ կասկածելի դիրք բռնող: Թուրք եւ ռուս օֆիցէրները [սպաները] ինձ պատմեցին, որ անգլիական միսիոներներ տեղեկացրել է Թէ՛ տաճկի եւ Թէ ռուս կառավարութիւններին, որ իբր Թէ հայերը ռուս գինուորի չորով ուզում են յարձակուել սահմանագլխի Թուրքերի վրայ եւ Թուրքական չորերով՝ ռուսների վրայ, որպէսզի ընդհարում առաջ բերեն երկուքի մէջ:

Մալումեան.— Դժուարանում եմ որոշ պատասխան տալ քաղաքական այդօրինակ հարցերին. տրամադիր եմ կարծելու որ Անգլիան ամէն միջոց գործ կը դնէ, որ ուրիթ չտայ Ռուսաստանին միջամտելու Թուրքիոյ եւ Պարսկաստանի սահմանագլխային գործերին, բայց Լոնտոնի միսիոներներ փաստեր է տուել, որ նա Թշնամի չէ մեր հարցին. նրանք օրինակ, խոստացել են, որ մեր փոքերը իրենց միջոցով ուղարկեն Երկիր, մեր պէտքերի համար: Ֆրանսական մեր բարեկամները, որոնք ցանկութիւն ունեն մեր Դատի չուրջը համախմբել Ֆրանսիան, Անգլիան եւ Իտալիան, համարում են այդ ծրագիրը չատ հնարաւոր, վատահ անգլիական բարեկամութեան վրայ:

Զաւրեան.— Ես ծանօթ էի էրզրումի եւ Բաղէշի անգլիական հիւպատոսների հետ: Երկուքն էլ հայատեաց էին եւ ասում էին որ Հայկական Հարց չկայ, ոբովհետեւ այդ երկիրը Քրիստոնեայ է: Ի հարկէ հայերը կը ցանկան այնտեղ ինքնավարութիւն ձեռք բերել եւ իշխել մեսո ազգերի վրայ, բայց այդ բանը անկարելի է, մենք չենք Թոյլ տայ: Եթէ հայերը իրենց վիճակը ուզում են բարելաւել, պէտք է բողոքական դառնան, ասում են նրանք: Մենք յարաբերութիւն ունենք կառավարութիւնների հետ եւ ոչ Թէ ուղղակի կերպով, այլ կոմիտակի մարդկանց միջոցով, ուստի եւ ծանօթ չենք նրանց իսկական տրամադրութիւններին:

Շահխաթունեան.— Ընկեր Մալումեան յիշեց, որ մի եւրոպացի էր եկել «Դրօշակի» Խմբագրատուն եւ խորհուրդ էր տալիս դադարեցնել յեղափոխութիւնը. ի՞նչպէս կարողացաւ իմանալ Խմբագրութիւնը Թէ նա որեւէ կառավարութեան տրամադրութիւնն էր արդարացնում, ինչպէս ասուեցաւ:

Մալումեան բերում է մի չարք օրինակներ, որոնցով ցոյց է տալիս Թէ ինչպէ՛ս եւրոպական որեւէ կառավարութիւն անյարմար գտնելով իր պաշտօնեաների միջոցով ուղղակի դիմումներ անել յեղափոխական մարմնին, տուհասարակ անուղղակի միջոցների են դիմում՝ իրենց տեսակէտները յայտնելու եւ ազդելու համար: Ապա հաղորդեց ժողովին մի կարեւոր դիմումի փաստը, այն է Թէ ինչպէ՛ս ռուս-ճապոնական պատերազմի սկզբում ճապոնական կառավարութեան կողմից, դեսպանական կցորդի միջոցով, դիմում եղաւ Արեւմտեան Բիւրոյին. առաջարկեցին որ մենք յեղափոխական կուսակցութիւնների հետ միասին, Ռուսաստանում տեղական ապստամբական չարժումներ առաջ բերենք: Ճապոնական կառավարութեան ցանկութիւնն էր, ներքին խռովութիւնների միջոցով հարուած տալ ցարիզմին ներքուստ եւս եւ Ռուսաստանում առաջ բերել պարլամենտական կառավարութիւն, որի հաստատման ճապոնիան չերմ կոզմնակից է իր ապահովութեան համար: «Եթէ Պետերբուրգում չարունակէ իշխել նոյն պինուրական, միապետական ուժը, ասում են նրանք, նա, մի քանի տարուց յետոյ, կրկին պատերազմ կր յայտարարէ, մչտական վտանգ սպառնալով խաղաղութեան»: Չեկուցանողը հաղորդեց այս դիմումի մանրամասնութիւնները եւ այն վերապահ պատասխանը, որ տուել էր Արեւմտեան Բիւրոն:

Մուրատ պատմում է դէպքերը 1903ի Սասնոյ դէպքերի ժամանակից, երբ անգլիական եւ ֆրանսիական հիւպատոսները իրենց աջակցութիւնն էին ցոյց տալիս եւ խնդրում էին իրենց անմիջապէս տեղեկացնել երբ քրտների կողմից յարձակում լինէր:

Ժողովը անցաւ զինական խնդրին:

Խահակեան.— Արեւմտեան Բիւրոն ինչպէ՞ս իր վրայ առաւ Զինուորական Դպրոց հիմնելու պատասխանատուութիւնը. արդեօք նրան այդ մասին որեւէ տեղից լիազօրութիւն տրուա՞ծ էր:

Մալումեան յայտնում է, որ այդ դպրոցի հիմնման նախաձեռնութիւնը միայն Արեւմտեան Բիւրոյին չէ պատկանում, այլեւ րնկեր Անդրանիկին, ու Բալկանեան կ. կոմիտէին:

Մանուկ հարցնում է Թէ ո՞վ էր դէնքերի փոխադրութեան համար պատասխանատու մարմինը:

Մալումեան.— Փոխադրողները եղել են արեւմտեան չրջանի զանազան ընկերներ, Բիւրոյի ընդհանուր վերահսկողութեամբ:

Զինուորական Դպրոցի խնդիրը յետաձգուեց օրակարգի պատչառ կէտին:

Երկրի ուսումնասիրութիւնը եւրոպացիների ձեռքով անցաւ առանց վիճաբանութեան:

Դրամական եպաստներ զանազան կուսակցութիւնների.

Բարսեղեան հարցնում է Թէ ինչո՞ւ 1000 ֆրանկ տրուած է «Uckpa»ի Խմբագրութեան եւ աւելացնում, Թէ հարկաւոր է յետ պահանջել:

Մուրատ.— Արեւմտեան Բիւրոն իրրեւ դասախօս ուղարկել է Կովկաս այնպիսի անձնաւորութիւններ, որոնցից մի քանիսի համար, չէր արժէր որ կազմակերպութիւնը փող ծախէր: Օրինակ՝ Կրպոն, Արտաչէսը, Հայկազունին այնպիսի անձնաւորութիւններ են, որոնց նմանները Կովկասում միչտ կարող էին գտնուել:

Մալումեան.— Ուղարկուած 10–12 րնկերները, բոլորն էլ իրրեւ պրոպագանդիստ չեն ուղարկուած. նրանցից մի քանիսը ունեցել են այլ միսիա, ոմանք էլ ուղարկուել են իրրեւ պինուրական ուժ: Թէ ինչպէս են կատարել նրանք իրենց գործը՝ այդ մասին Արեւելեան Բիւրոն միայն կարող է տեղեկութիւն տալ:

Վահագն.— Մի՞թէ կարելի է ամէն մի ցանկացողի գործ յանձնել. նախապէս պիտի քննել մարդոց կարողութիւնը, Թէ արդեօք նրանք ընդունա՞կ են իրենց վրայ դրուած գործը կատարել: Պրոպագանդիստներից ոմանք նոյնիսկ գործին մնասել են իրենց նոր ուղղութեան պրոպագանդայով: Նրանք նկատի չեն ունեցել իրենց ունկնդիրների հայեացքները եւ միանդամից սկսել են նրանց մտքին բոլորովին խորթ բաներ խօսել եւ երբեմն այնպիսի ծուռ ճանապարհով են տարել իրենց պրոպագանդը, որ բաժանողների վկայութեամբ, օրինակ, պատճառ են դարձել գործադրանների փակման եւ չատերի անգործ մնալուն:

Շահխաթունեան.— Ես պարտաւոր եմ զղում ինձ՝ պաշտպանել Բիւրոյի արած քայլը. Բիւրոն չէր կարող իբ ուղարկած մարդկանց սկզբից այնպէս ճանաչել, որ նրանց ապագայ արածների համար պատասխանատու համարուէր: Շատ վիրաւորական է երբ ուղարկուած ընկերների մասին այդպիսի քննադատութիւններ են անում, առանց ծանօթ լինելու նրանց գործունէութեանը:

Չելալեան.— Ընդհանուր սոմորութիւն մը կայ կազմակերպութեան մէջ, որ նախքան ընկեր մը գործի վայրը ղրկելը, կը քննեն, կը հասկանան ընկերոջ մտքի մակարդակը եւ գործի ձեռնհասութեան տեսակէտը: կը միանամ ընկեր Վահագնին. ես առանց ճանչցած ըլլալու անձերը, իրենց անուններով, կը յիշեմ մէկը որ ժողովի մը մէջ խօսեցաւ, ուր հրաւիրուած էր նաեւ ընկեր Թուխման ընդդիմախօսելու: Այդ ընկերը այն միտքը կը յայտնէր, Թէ կովկասեան հարցը բաժանելու էր տեսակցայ դառէն:

Շահխաթունեան.— Ես խօսելու եմ ըստ կարգի եւ ըստ էութեան: Կրպոյին, իրրեւ պրոպագանդիստի, Արեւմտեան Բիւրոն չէ ուղարկել, այլ նա այնտեղ գործել է Արեւելեան Բիւրոյի յանձնարարութեամբ: Ես պահանջում եմ, որ բոլոր այն ընկերները, որոնք այժմ պտնւում են Դաշնակցութեան մէջ, համարուեն դաշնակցականներ, առանց ուշադրութիւն դարձնելու Թէ դրանց մէջ կարծիքների տարբերութիւններ կան: Ես պահանջում եմ, որ այստեղ քննադատութիւններ չլինեն այս կամ այն ընկերոջ հարազատ դաշնակցական լինելու մասին. եթէ ոչ, ես ստիպուած կը լինեմ ա-

սէլ, որ չատերը որոնք համարում են իրենց դաշնակցական, ամենաէին դաշնակցական չեն, նոյնիսկ այն պիսիները, որոնք այս ժողովումն են գտնւում. ես այս բանը փաստերով կ'ապացուցանեմ: Ես յոյս ունեմ, որ Թոփչեան, ինքը խօսք կ'առնէ եւ ցոյց կու տայ, որ այն ժողովում, որի մասին խօսում է Զելալեանը, հարցը բոլորովին այդպէս չէ եղել եւ Զելալեանը սխալւում է:

Խահակեան.— Նախ ասեմ, որ քանդելը դեռեւս վնասել չէ նշանակում, կայ քանդել որ չինելուց աւելի օգտակար է: Նկատում են որ Բիւրոն լաւ չէ ճանաչել իւր ուղարկած երիտասարդներին: Բիւրոն չէր կարող այդ անել, քանի որ, թէ՛ ծրագրի եւ թէ՛ նախագծի վերաբերմամբ կուսակցութեան մէջ տարբեր կարծիքներ կան եւ ուղարկուածներից չատերը, իրենց դիրքը այդ հարցերի վերաբերմամբ կովկասում են որոշել:

Սեպուհ եւ Մուրատ պահանջում են, որ Շահխաթունեանը ապացուցանէ ժողովում գտնուածներից չատերի ոչ-դաշնակցական լինելը:

Զելալեան միանում է նրանց կարծիքին:

Բարձրանում է աղմուկ եւ սկսում է բուռն վիճաբանութիւն: Սեպուհը վրդովուած հեռանում է ժողովից:

Նախագահը ընդհատում է նիստը, որպէսզի մոքերը հանդստանան:

Նիստը վերսկսում է 10 րոպէից:

Թոփչեան.— Ես չեմ կարող խօսել այն հարցի մասին, որի համար ձայն էի խնդրել: Ինչպիսի մեծ յոյսերով ես ճանապարհւում էի այս ժողովի համար, որի վրայ են յառել իրենց աչքերը, ոչ միայն բոլոր դաշնակցականները, այլեւ ամբողջ հայ ժողովուրդը: Մենք կովկասում չատ ժողովներ ենք ունեցել հակառակորդ կուսակցութիւնների հետ, բայց ես չեմ տեսել այն փոխադարձ անվստահութիւնը, նոյնիսկ հակառակ կուսակցութիւնների մէջ, ինչ որ տիրում է այստեղ, ընկերների մէջ: Իրաքանչիւրը, միւսի խօսքերի տակ, կարծես, մի յետին միտք է ուզում տեսնել: Մենք այս կերպով չենք կարող հեռուն գնալ: Մենք այստեղ եկել ենք իբրեւ ներկայացուցիչներ, որքան էլ մեզնից իւրաքանչիւրը թերութիւններ ունենայ, ժողովը սակայն իրեն բարձր պիտի պահէ: Ես չեմ կարող խօսել բան էութեան, մինչեւ փոխադարձ վստահութիւն չլինի: Մի փաստացի նկատողութիւն. ընկեր Զելալեանի յիշած պրոպագանդիստը Արեւմտեան Բիւրոյի հետ կապ չունի եւ խօսակցութիւնն էլ բոլորովին այն բնաւորութիւնը չէ ունեցել, ինչ որ նրան ուզում են տալ:

Նախագահ.— Ցաւում եմ, որ խօսողները զգուշաւոր չեն իրենց արտայայտութիւնների մէջ եւ տեղի են տալիս ցաւալի թիւրիմացութիւնների: Եթէ ընկեր Սեպուհ սխալ է գործում ժողովը թողնելով, սխալւում է նաեւ ընկեր Շահխաթունեան, երբ խնդիր է յարուցանում ժողովականների, ո՞ւմ եւ ո՞ր աստիճանի դաշնակցական լինելու մասին: Այստեղ գտնուողները բոլորը դաշնակցական են, ցորչափ խնդիրը վիճաբանութեան դրուած եւ լուսաբանուած չէ:

Մալումեան.— Ընկերների առաքումը եղել է համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման, իսկ Բիւրոն այն է արել, որ ուղարկել է վեցից աւելի ընկերներ, որովհետեւ կովկասի տնտեսապէս վիճակը չատ ուժեր էր պահանջում: Կարող է պատահել, որ մեր ուղարկած ընկերներից ոմանք անհամապատասխան են եղել իրենց դերին. բայց դա չէ հերքում ուժեր ուղարկելու անհրաժեշտութիւնը. չարժեր զրաղեցնել ժողովը զանազան մարդկանց այս կամ այն դասախօսութեամբ: Եթէ Արտաչէսը կամ մի ուրիշը պրոպագանդի յարմար չէր, քող տեղական մարմինը նրան այլ գործի դնէր: Այդպիսի դէպքեր կարող են ուրիշ տեղեր էլ պատահել. օրինակ՝ Ամերիկան մի խումբ երիտասարդներ է ուղարկել Զինուորական Դպրոցը. եթէ դրանցից ոմանք, այլ մթնոլորտի ենթարկուելով, մեր հակառակորդներն իսկ դառնան, ես ինձ թոյլ չեմ տայ Ամերիկայի ընկերներին մեղադրել եւ նրանց քայլը սխալ համարել:

Դիմումն Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին. Մալումեան մանրամասն յիշատակում է Բիւրոյի Սոց. Բիւրոյի դիմումը, որ արել է «Դրօշակի» Խմբագրութեան եւ վերջինի պատասխանը (երկու գրութիւններն էլ տպուած են «Դրօշակում», № 6, 1906):

Ժողովը ծանօթանալով խնդրին, վճռեց այդ մասին որոշումն կայացնել, օրակարգի հերթին:

Ապա, ժողովականներին բաժանում են Արեւմտեան Բիւրոյի երեք տարուայ տպած հաշիւը (1904–1906), որպէսզի ընկերները ծանօթանան եւ այդ մասին հարցումներ ուղղեն: Որոչւում է հաշիւները յանձնել հաշուական յատուկ յանձնաժողովի, ժողովին զեկուցում անելու համար:

Նախագահը խնդրում է տեղեկութիւն տալ, թէ ինչո՛ւ ուշացաւ Ընդհանուր Ժողովը:

Մալումեան.— Անցեալ Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն, այս Ընդհանուր Ժողովը պիտի հրաւիրուէր 1906ի Դեկտ. 1ին, քանի որ Նորհուրդին իրաւունք էր տրուած բացառիկ դէպքերում չտապեցնել Ընդհանուր Ժողովը: 1905ի Նորհուրդը, նկատելով հայ-թուրքական յարաբերութիւնների լարուելը կովկասում եւ Ռուսաստանի յեղափոխական չարժման զարգանալը, որոշեց չտապեցնել եւ նշանակեց Ընդհանուր Ժողովը 1905 Թ. Դեկտ. 1ին: Այս մասին դրուեց մարմիններին: Սակայն վրայ հասան կովկասեան խոշոր դէպքերը եւ Թոյլ չտուին ժամանակին ժողով գումարելու: Ապա Բիւրոները ուզեցին գումարել 1906ի աշնանը, Արեւելեան Բիւրոն պատասխանեց, որ դա անհնարին է, ի նկատի առնելով կովկասեան իրականութիւնը: Եւ ահա այդ պատճառով ուշացաւ էլի 3 ամսով: Դուք տեսնում էք, որ կովկասի ընկերներից ոմանք մինչեւ այժմ էլ չեն եկել, չնայած որ ժողովը սկսուած է Փետր. 22ին: Այս յապաղումը եղել է պայմանների ստիպմամբ, հակառակ մարմինների բուռն ցանկութեան:

20ՐԴ ՆԻՍՏ (6 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Բացակայ են՝ Սեպուհ, Անդրանիկ, Զաւրեան:

Ընկերը Զարդարեան կարդում է Բալկանեան չրջանի տեղեկագիրը, որը քննութեան առնելու համար բաժնում է չորս կէտի:

1) *Գաղութ եւ կազմակերպական ընդհանուր պատկեր:*
2) *Պրոպագանդա (թերթ, գործիչներ, դասախօսութիւններ եւն.):*
3) *Դրամական հաշիւ:*
4) *Զինուորական Դպրոցի խնդիրը:*

Տեղեկագիրը տալիս է սկզբում շրջանի ընդհանուր վիճակը, մատնանշելով, որ ինչպէս ամէն տեղ Հ. Յ. Դաշնակցութեան արագ ծաւալումը աչքի է ընկնում վերջին 3--4 տարուայ մէջ, նոյն երեւոյթը նկատւում է նաեւ Բալկանի շրջանում. այստեղ այդ հանգամանքին մղիչ են հանդիսանում Սասունի ցնցող կռիւները, Սուլթանի մահափորձը եւայլն: Կուսակցութեան ձեռք բերած հմայքը աչքի է ընկնում նաեւ այն հանգամանքի շնորհիւ, որ չէզոք տարրեր, եթէ ցանկանում են իրենց լուման տալ հայ ապատագրութեան, բոլոր գոյութիւն ունեցող կուսակցութիւններից նախընտրում են Դաշնակցութիւնը: Կազմակերպութեան ծաւալումին եւ վարկի բարձրացման նուազ չեն նպաստած նաեւ այն կարգ մը ձեռնարկներն ու հաստատութիւնները, որոնք գոյութիւն ունին գրեթէ Պուլկարիայի քանի մը քաղաքներուն մէջ, ուր թարմ երիտասարդութիւն մը կայ. այդ հաստատութիւնները ամէնքն ալ արդիւնք են անհատական--ընկերական ճիգերու: Այդ ապրակներն են՝ երգեցիկ--թատերասէրներ, ընթերցարաններ, մարմնամարզական, կարմիր խաչի, փինաւարժական եւ ուրիշ համանման խումբեր: Այս խումբերը իրենց առաջադրած աշխատութիւններով մէկ կողմէ ընկերներու ինքնակրթացման, ինքնապատրաստութեան գործին է որ կը սատարեն, միւս կողմէ ժողովրդեան մէջ վառ կը պահեն հայրենիքի գաղափարը ու զայն կը հետաքրքրեն հայ ցաւով: Այդ խումբերը եւ ընկերութիւնները կազմուած են առհասարակ մեր ընկերներէն, իրենց ունեցած գոյքերը հայթայթած են անհատական միջոցներով՝ Կազմակերպութեան մնալու որոշումով սակայն: Համապատասխան միջոցներ ստեղծած են եւ Ռումանիոյ մեր ընկերները, առհասարակ հայաստանցիներ: Անոնք ալ տեղ-տեղ հաստատած են սրճարաններ, որոնք տարեկան 4--5000 ֆրանկի բացառիկ հասոյթ մը կը ստեղծեն մեր շրջանի կազմակերպութեան սնտուկին: Համեմատական չափով ուժեղացել են եւ Կազմակերպութեան եկամուտները. այսպէս օրինակ՝ Պալքանեան շրջանը ունեցած է հետեւեալ մուտքի ընդհանուր գումարները. 1904էն 1905՝ Վարդոյի օրով, տարուան մը ընթացքին մէջ՝ 17.944, 72 ֆր., 1905--1906 տարուան մը ընթացքին մէջ՝ 31.895, իսկ վերջին վեց ամսուան ընթացքին մէջ՝ 23.993 ֆրանկ»: Այս եկամուտները գոյանում են պարտադիր ամսավճարներից գատ, նաեւ բացառիկ հասոյթներից՝ հանդէս, ներկայացում, վիճակախաղ, հանգանակութիւն. վերջինիս մասնակցում են հասարակութեան բոլոր խաւերից գատ նաեւ ընկերները, համաձայն վերջին Շրջանային Ժողովի որոշման: Նոյնիսկ Ռումանիայի Մարմինները, չնայած որ թիւով շատ պակաս են եւ այնտեղ բացակայում է երիտասարդութիւնը, կարճ ժամանակում իրենց եկող մուտքը հասցրին նախկին տարիների քառապատիկին:

Ապա տեղեկագիրը անցնում է կազմակերպութիւնը եւ պրոպագանդի վիճակը նկարագրելու: Գրեթէ առանց արտաքին օգնութեան, շրջանը իր ուժերով կազմակերպուել է, բայց գործիչների անբաւարար թուի պատճառով «ընկերներու յեղափոխական դաստիարակութեան, մտաւորական կարգացման եւ ինքնագիտակցութեանը անկարելի եղած է հոգ տանիլ եւ դարձնել կանոնք առհասարակ կազմակերպութեան եւ իրենց կոչումին աւելի գիտակից անդամներ»: Իբրեւ պրոպագանդի միջոց ծառայել է «Ռազմիկ»ը, որը թէեւ բաժնետիրական սկզբունքներով հիմնուած էր, բայց վնասները ծածկելու համար 2500 ֆրանկի փոխառութիւն արեց կազմակերպութիւնից. բայց այժմ հաշիւները ցոյց են տալիս, որ առաջին տարին նա կարող է ծածկել իր ծախսերը եւ գուցէ եւ պարտքն էլ վճարել: Ընկեր Ռոստոմի հիմնած դպրոցը ծառայել է իբրեւ հաւաքատեղի, բայց այժմ միջոցներից զուրկ լինելով ստիպուած պիտի դադարի այլեւս իր դերը խաղալուց: 1904ից այս կողմը եղել են 3 Շրջանային Ժողովներ: Շրջանում տեղի ունեցած մի քանի վեղծումների մէջ ուշագրաւ է առանձնապէս Վարդոյի խնդիրը: «Վարդոն մերժած է կազմակերպութեան դրամը տալ Շրջանային Ժողովի կողմէ նշանակուած ընկերոջ, յանձնելով անոր պատասխան մը, որ իր դատավճիռն իսկ է: Կ. Կոմիտէի եւ Վարդոյի բանակցութիւններէն ետքը, Կ. Կոմիտէն կայն Կազմակերպական Կանոնների 127րդ յօդուածի տրամադրութեան համաձայն Պալքանեան շրջանի ընկերական շարքերէն դուրս կ'ընէ եւ այս բանը կ'իմացնէ ընկերներուն, միաժամանակ խնդիրը իսկոյն տեղեկացնելով Արեւմտեան Բիւրոյին, որպէսզի այս վերջինը Խորհուրդի քննութեան ենթարկէ, որ այդ ատեն արդէն կը շարունակէր իր նիստերը: Բիւրոն Կազմակերպական Կանոններու 129րդ եւ յարակից յօդուածները ցոյց կու տայ եւ կը յանձնարարէ նոր Շրջանային Ժողով գումարել, մեղադրեալը կանչել՝ անոր բացատրութիւնները լսելու համար եւ անկէ ետքը այդ խնդիրը կա՛մ ժողովի որոշումը ենթարկել Խորհուրդի որոշման կա՛մ վաւերացման: Որովհետեւ պատգամաւորները դեռ նոր ցրուած, մէկ-երկուքը նոյն իսկ տեղ հասած չէին, ու կապմն ալ Վարդոյի Կ. Կոմիտէի օրով տեղի ունեցած անհոգութիւններէն թուլցած [էր], անկարելի կ'ըլլայ կրկին անգամ անմիջապէս Շրջ. Ժողով գումարել, հետեւաբար խնդիրը կը մնայ յաջորդ ժողովին, որուն որոշումները արդէն առանձին ղրկած ենք: Ինչպէս յայտնի է Բիւրոյի կողմէ «Դրօշակ»ով եղած յայտարարութիւնն ալ անհետեւանք կը մնայ. մենք գոնէ չենք ալ գիտեր, թէ Բիւրոն ի՞նչ մտադրութեամբ իր յայտարարութեան մէջ եւ հրապարակով պայմանաժամ տուաւ Վարդոյին, երբ այդ պայմանաժամէն ասդին կարծենք տարին ալ անցաւ»:

«Յանձնելով Վարդոյի խնդիրը եւ այդ առթիւ կայացած որոշումներն ու գոյութիւն ունեցող բոլոր դոկիւմանտները [փաստաթուղթերը] Ժողովիդ ուշադրութեան, կը պահանջենք խիստ եւ կտրուկ որոշում»:

Ապա տեղեկագիրը յիշելով իրենց շրջանի կատարած դերը փոխադրութեան հարցում, իրենցից խլած ուժերի քանակը, յարաբերութիւնը Երկրի հետ, Երկիր ղրկած ուժերը, վերջացնում է հրաւիրելով ընկերների ուշադրութիւնը՝ իրենց Շրջանային Ժողովի որոշումների վրայ:

Ստեփանեան.— *Ինչո՞ւ Ռումանիայում սրճարանների կահկարասիքը կուսակցութեան միջոցներով է գնում:*

Զարդարեան.— *Որովհետեւ ռումանական կառավարութիւնը խիստ է դէպի հայ յեղափոխութիւնը ընդհանրապէս, ուստի մերոնք ժողովուելու ուրիշ ոչ մի աւելի յարմար տեղ չունեն, քան սրճարանները, եւ իրենք միջոցներ չունենալով սրճարանների համար պէտք եղած կահկարասիները ձեռք բերելու, ընկերներն օգնութեան են հասնում այդպիսի պարագաներում: Եւ եթէ երբեմն մի որեւէ սրճարան փակւում է, նրա առաջուց անցնում է նորին կուսակցութեան:*

Ստեփանեան.— *Ինձ ցանկալի է գիտնալ, թէ ի՞նչ սխեմայով էք կազմում խումբերը. արդեօք կուսակցութեան մէջ մտնող մարդկանց դասերի՞ էք բաժանում. օրինակ՝ արհեստաւորներին եւն. առանձի՞ն էք կազմակերպում:*

Զարդարեան.— *Մենք դասերի եւ արհեստների բաժանում չենք մտցնում. մեր կազմակերպած խմբերը բոլորն էլ ընդերական միութիւններ են, իրար հաւասար:*

Մաշուր.— *Բացի Դաշնակցութիւնից ուրիշ ի՞նչ կուսակցութիւններ են գործում Բալկանի չրջանում:*

Զարդարեան.— *Ուրիշ կուսակցութիւններ միայն անուանական գոյութիւն ունեն, ինչպէս, օրինակ՝ հնչակեաններ. սոսկ անուանականութեան մի ապացոյցն այն է, որ գործել կամեցող մարդիկ հնչակեանների չրջանից անցնում են Դաշնակցութեան կողմը. չանցնողներն էլ՝ իրենց անձնական հաչիւներից դրդուած կուսում են մեր դէմ: Հնչակեանները թերթ չունեն. եղած «Իրաւունք» լրագիրը չէ հանդիսանում (ինչպէս հաւատացնում էին) վերակազմեալներու պաշտօնական օրգան. այնքան միայն ճիշդ է, որ նրանք սկզբում նպատակ են ունեցել այդ թերթին՝ իրենց կուսակցութեան ծառայեցրած լինելու նպատակով:*

Ռոստոմ.— *Ռումանիայի բնիկ հայերը, արդեօք արեւէ մասնակցութիւն ունե՞ն յեղափոխական գործի մէջ:*

Զարդարեան.— *Ոչ մի մասնակցութիւն: Բնիկներն այնքան ապրատասիրուել են, որ սկսել են նոյնիսկ կորցնել իրենց ազգային դէմքը: Նրանք այսօր միայն կրօնով են հայ, իսկ լեզուով, կրթութեամբ, աշխարհահայեացքով՝ աւելի ռումանացի են դարձել: Բացի այս բոլորից, նրանք առհասարակ վատ դաղափար ունեն հայերի մասին եւ սա հասկանալի է, քանի որ նրանց տեսած հայերը ղլխաւորապէս գործիականներ են, որոնք նրանց համար վատ մարդիկ են: Նոր-նոր միայն խմորում է սկսուել բուքրէշի հայութեան որոշ չրջաններում, մի քանի երիտասարդների չնորհիւ. այնտեղ այժմ հայկական գործոց կայ (թէեւ ոչ ամբողջապէս յեղափոխական) · բացուել է նաեւ մի մանկապարտէզ:*

Թոփչեան.— *Երբ այնտեղ խմբեր էք կազմակերպում, ո՞րն է ձեր վարձաքարը՝ սրան կամ նրան կուսակցութեան անդամների չարքն առնելիս. արդեօք միայն նրանցից էք մասնակցողներ ու արհեստաւորներ ընդհանուր թուի նկատմամբ: Եթէ միջակապրանքային տեղեկութիւններ ունէք, լաւ կը լինէր որ ասէիք ամէն մի դասակարգի համեմատական չափը:*

Զարդարեան.— *Մենք անցեալ տարուայ վերաբերմամբ կարող կը լինենք տեղեկութիւն տալ. բայց գործնականապէս, կազմուած վիճակագրութիւնը ներկայումս մօտս չէ: Իսկ, 1906ի վերաբերմամբ, ճիշդ հաչիւ տալ չեմ կարող: Մօտաւոր թիւեր միայն յատկապէս կը բերեմ. ունինք 3 կոմիտէ, մօտ 10–13 ենթակոմիտէ, բոլոր անդամների ընդհանուր թիւն է՝ 1000–1200:*

Զոփուրեան.— *Խմբերի ամասվճարներն ամրողջ ե՞ր կամուտի ո՞ր մասն են կազմում:*

Զարդարեան.— *Եկամուտի մեծագոյն մասը՝ կողմնակի աղբիւրներն են կազմում:*

Ստեփանեան.— *Ինչո՞վ է առաջնորդուել ձեր չրջանը՝ երկու պատգամաւոր այստեղ ուղարկելիս:*

Զարդարեան.— *Երկու մարդ ուղարկելիս մենք չենք հիմնուել մեր քանակի վրայ, այլ աչքի առաջ ենք ունեցել ղրամական խնդիրը: Իսկ եթէ ժողովի կողմից չընդունուեն եկած երկու պատգամաւորները քուէի իրաւունքով, այն ժամանակ ընկեր Մինասեանին թող տրուի խորհրդակցական ձայն. այսպէս է ասուած նաեւ մեզ յանձնուած մանդատի [լիազօրագրի] մէջ:*

Նախապատիւ երկու պատգամաւորների հարցը թողնում է այլ ժողովի:

Տաճատ.— *Համաձայն չեմ Զարդարեանի տուած զեկուցման հետ: Բուլղարիայի 13·000 հայ ազգաբնակութեան մէջ մենք ունենք հաղիւ 1000 դաչնակցական: Այդ 1000 հոգուն էլ ցրուած են դէս ու դէն, տեղ-տեղ էլ ներքին պառակտումներ են առաջ եկել: Վառնայի դաչնակցականներն, օրինակ, երկու մասի են բաժանուած, որոնցից մէկը բոլորովին չէ ուզում հպատակուել Շրջանային վերջին ժողովի վճիռներին: Ես չատ տեղերում եմ եղել, բայց եւ ոչ մի տեղ չդտայ կազմակերպուած մարմիններ, որոշակի կանոններով առաջնորդուող խմբեր: Խմբերի միակ դեկավար սկզբունքն է՝ փող տալ (ամսավճար), սրանից դուրս ուրիշ ոչնչով չեն հետաքրքրւում. կան եւ այնպիսիները, ի հարկէ, որոնք ունեն եւ այն դաղափարը թէ՝ Դաշնակցութեան մէջ մտնողը պէտք է կարիք եղած դէպքերում Երկիր անցնի: Թէ ո՛ր աստիճանի չեն հետաքրքրւում Դաշնակցութեան էութեամբ, ապացոյց՝ որ միանգամայն խորչում են այն դաշնակցականներից, որոնք կովկասահայ խնդրով են զբաղւում: «Կովկասեան վէրքերը» որ մի ժամանակ առանձին ուշադրութիւն էր վաստակել, այսօր այլեւս չեն ուզում կարդալ, իբրեւ կովկասեան դատին վերաբերուող: Նոյն այս վիճակին է ակընկալել ենթարկուել նաեւ «Դրօշակը»:*

Վահագն.— *Ընկեր Զարդարեանի բացատրութիւնը գոհացուցիչ չդտայ, բայց ընկեր Տաճատն էլ չատ սեւ գոյներով նկարագրեց Բալկանը: Տասը տարի առաջ ես այնտեղ եմ եղել. դա այն ժամանակն էր, երբ յեղափոխութեան չնորհիւ միայն կարելի եղաւ արդէն կորչելու մօտ հայութիւնը սթափեցնել վերստին: Իսկ թէ այսօր պակասաւոր կազմակերպութիւն ունենք այնտեղ, պատճառն այն է, որ հրապարակի վրայ չկայ մի մնայուն գործիչ, մարդ չկայ, Բուլղարիայի հայութեան ղլխով փոթորիկներ են անցել մարդ չլինելու համար: Բալկանում երիտասարդներ կան ներկայումս, որոնք կարող են խոչոր ուժեր դառնալ ապագայում, եթէ միայն մի կազմակերպող մարդ լինի այնտեղ:*

Սաֆօ.— *Տաճատի պատճառաբանութիւններն անհիմն եմ դտնում: Եթէ Սոֆիայում դաշնակցականներն «Մշակ» են կարդում եւ ոչ «Երկիր» (մի փաստ որ նա յիչատակեց), սա դեռ չէ նշանակում, որ նրանք դաշնակցական չեն: Բուլղարիայում այսօր գործող Ջինուորական Դպրոցն ինքնին ապացոյց է, որ կացութիւնն այդքան անմխիթարական չէ այնտեղ:*

Մինասեան.— *Ընկեր Տաճատը չատ յոռետես նկարագրութիւն տուեց, բայց նա ինքներեն հակասեց. մի կողմից ասաց թէ կիսակցութիւնն է պակասում բալկանի դաչնակցականների մօտ, մեւս կողմից սակայն աւելացնում է թէ՝ փող են տալիս եւ պատրաստ են երկիր մտնել: Երկիր գնալու փափաքն ալդէն յեղափոխականութեան ապացոյց է: Իսկ որ եղած 1000 հոգին ցրուած են ամէն կողմ՝ ճիշդ է:*

Զարդարեան ամփոփում է ընկեր Տաճատին հակառողների ասածները եւ չեշտում նորից, որ մնայուն չրջիկի մեծ կարիք է զդացւում:

Ընդմիջում

2) Գրոպազանդա (դասախօսութիւններ, թերթ, գործիչներ եւն.).

Թոփչեան.— *Ի՞նչ բնաւորութիւն են կրում կարդացուող դասախօսութիւնները. ի՞նչ նիւթերի մասին է խօսում խմբի հետ: Միայն ղրամական՞ հարցն է ալծալծւում չարունակ. ի՞նչ դիրք է բռնում դէպի այլ հրատապ խնդիրներ՝ օտար երկիրներ կատարուող յեղափոխական չարժումներ, հայ-թուրքական ընդհարումներ եւն.:*

Զարդարեան.— *Իւրաքանչիւր խմբապետի հայեցողութեան ենք թողել թէ ի՞նչ նիւթերի մասին պէտք է խօսել խմբի հետ: Գլխաւորապէս ընթացիկ հարցերն են զրաղեցնում խմբերին. սկզբունքային խնդիրներ սակաւ են ալծարձակւում, քանի որ իրենք խմբապետներն անձեռնհաս են այդ բանին:*

«Թերթ»ի հարց.

Մալումեան.— *Նախքան վիճաբանութեան սկսելը, պէտք է ասեմ որ Բիւրոն որոշել էր Քոյլ չտալ Քերքերի հրատարակել կազմակերպութեան անունից, եւ այդէն «Ռազմիկը չէր կարող պաշտօնական օրգան համարուել:*

Զարդարեան.— *Այո, դա մի մասնաւոր գործ էր, մի ակցիոնէրական [արժեթուղթերով գործող] ձեռնարկութիւն, միայն թէ մարմնի կողմից ընտրուած մարդկանցով պէտք էր վարել թերթը: Դժբախտաբար, գործին նիւթապէս մասնակցել խոստացածներից համարեա ոչ ոք չկատարեց իր խօսքը, ուստի խմբագրութիւնը ստիպուած եղաւ փոխառութեան դիմելու (Բալկանի կենտրոնական Մարմնէն) 2500 ֆր. բացը ծածկել կարողանալու (1500 ֆր.՝ անցեալ տարի, 1000 ֆր.՝ այս տարի):*

Նախագահ.— *Ցանկալի կը լինէր խմանալ, կոմիտէի կամ խմբագրութեան մէջ կա՞ն մարդիկ, որոնք վարձուած են այս կամ այն պաշտօնը վարելու համար:*

Զարդարեան.— *Միայն մէկը, — քարտուղարը — այս տարի է նշանակուած:*

Մուրատ·— *Ի՞նչ նպատակով սկսեցին քերթը, ի՞նչ լուրջ հիմքեր կային հրատարակելու*։

Զարդարեան·— *Ես բոլորովին չէի, երբ արդէն ցանկութիւն է եղել անվախան քերթ ունենալու*· «*Շարժում*»*ն ուելի իր խմբագրի անձնական հայեացքներին էր ծառայում, քան թէ արտայայտիչ էր կուսակցութեան ձգտումներին*։

3) Դրամական հաշուի հարցը·

Այս խնդիրը քողնւում է յանձնաժողովին։

4) Դպրոցի խնդիրը·

Ռուստոմ առաջարկում է Զինուորական Դպրոցի խնդիրը քննել բնկեր Անդրանիկի ներկայութեամբ։

Տաճատ *պնդում է, որ բնկեր Անդրանիկի ներկայութիւնը այնքան էլ կարեւոր չէ, որովհետեւ դպրոց ասելով չպէտք է հասկանալ միայն Զինուորական Դպրոցը*· *կայ նաեւ մասնաւոր դպրոցի խնդիրը*։

Ժողովը որոշում է խօսել միայն մասնաւոր դպրոցի մասին, Զինուորական Դպրոցի հարցը այլ անգամի քողնելով։

Զարդարեան·— *Ֆիլիպէում հիմնուել է մի վարժարան, որը ամէն նիւթական պակասութեան պատճառաւ այսօր կարող է փակուել եւ ես ժողովի ուշադրութիւնն եմ այս պարագայի վրայ հրաւիրում*։

Տաճատ·— *Ի՞նչ կապ ունի այդ դպրոցը կազմակերպութեան հետ*։

Զարդարեան·— *Դպրոցը մեր բնկերների համար հանդիսանում է որպէս հանդիպատեղի*։

Նախագահ·— *Կ'ուզենայի փակել այդ հարցը· Ժողովը չէ կարող զբաղուել ոչ-կազմակերպական մի գործով, որպիսին է այդ դպրոցի խնդիրը· Քուէարկութեան չեմ դնում հարցը*։

Չելեբեան·— *Ինչո՞ւ չքուէարկել· պէտք է իմանալ՝ արդեօք Դաշնակցութեան փողերից ծախսուե՞լ է այդ դպրոցի համար*։

Մի քանի ձայներ նոյն հարցն են դնում։

Զարդարեան·— *Բալկանեան չրջանը փող չէ տուել դպրոցին, միայն Արեւմտեան Բիւրոյից առացուել է մի անգամ, բնկ· Ռուստոմի միջոցով, 1100 ֆր*։·

Ռուստոմ *յայտնում է որ այդ գումարը վերցրել է ինքը իր անձնական պատասխանատուութեամբ, իբր փոխառութիւն*։

Տաճատ·— *Ես լսել եմ, որ Բալկանեան չրջանի կազմակերպութեան փողերից դպրոցին տրուած է 4600 ֆր*·։

Այս յայտարարութիւնը նիւթ է դառնում երկար վիճաբանութիւնների· Առաջարկւում է հաշիւների քննութիւնը քողնել հաշուական յանձնաժողովին։

Ստեփաեան·— *Ինչո՞ւ Բալկանն ուզարկել է երկու պատգամաւոր*։

Սաֆօ·— *Մանդատներ քննող յանձնաժողովն արդէն պէտք է որոշած լինի, թէ արդեօք եկած պատգամաւորները ցենզ ունե՞ն թէ ոչ*։

Թոփչեան·— *Եթէ ցենզի յանձնաժողովն այսօր բացատրութիւն չտայ մանդատների վերաբերմամբ, ես չեմ կարող յանձնկնել նիստերին*։

Նախագահ·— *Յանձնաժողովն արդէն քննել է մանդատները ու բոլորը ճիշդ գտել*։

Ձայներ·— *Ընդհանուր ժողովը չէ հաստատել*։

Բարսեղեան·— *Ինչո՞ւ մի կենտրոնական կոմիտէ երկու ձայնի իրաւունք է ստացել*։

Նախագահ·— *Համաձայն ժողովի մշակած կանոնագրի, խնդրում եմ, որ ընկ· Թոփչեանը իւր առաջարկը գրաւոր տայ, որպէսզի ժողովի քննութեան ենթարկենք*։

21ՐԴ ՆԻՍՏ (6 Մարտ, երեկոյ)

Նախագահում է ընկեր Մալումեան։

Բացակայ են՝ Ար· Խաչակեան, Սեպուհ, Մաքս, Ա· Խաչակեան, Սաֆօ, Զաւրեան։

Ամերիկայի Կ· Կոմիտէի պատգամաւոր Ջելալեան (Հայկ-Ամէն) կարդում է իրենց չրջանի տեղեկագիրը։

Տեղեկագիրը սկսւում կանգ է առնում հայ պանդղխտութեան պատճառների վրայ ընդհանրապէս, որոնք են թուրք կառավարութեան եւ դէրէբէյիների հարստահարութիւնները. այն պատճառով, որ Պոլիսը փակւում է հայ պանդուխտների համար, դրանց հոսանքը ուղղւում է դէպի արտասահման։ Իսկ Ամերիկա պանդխտելու հողը պատրաստել են միսիոնարները։

«Հայ պանդուխտները խմբուած են գլխաւորապէս East-ի (արեւելք) կողմերը, մեծագոյն հատուած մըն ալ West-ի (արեւմուտք) նահանգները՝ Շիքագօ եւ Ֆըրեզնօ։ Միացեալ նահանգներու հայոց թիւը ճշդուած չէ, ամենէն հաւանական թիւը կը կարծուի մօտ 35,000։ Զբաղումով՝ 95% գործաւոր են, որոնք կը գործեն երկաթի, կօշիկի, բրդեղէն-բամպակեղէնի եւ ուրիշ վանական գործարաններու մէջ։ Անձնական գործով զբաղուողներու թիւը կը կազմէ 5%։ Անձնական գործով զբաղուողներն են վաճառականներ (Պոլսէն եւ Իւմիրէն), որոնք գործի առեւտուր կ'ընեն։ Կան փոքր առեւտրականներ, որոնք գործաւոր դասակարգէն ելնելով մտած են ապատ ասպարէզը, -- հացագործ, նպարավաճառ, ճաշարանատէր, ծխավաճառ, եւն. կան նաեւ բանի մը գործարանատէրեր։ Գործաւորներու վիճակը այսօր նոյնը չէ, ինչ որ էր տասը տարի առաջ. արհեստներու հետ քիչ շատ ծանօթանալով՝ շաբաթական վճարը աւելի գոհացուցիչ դարձած է. Ճէն 30 տոլար ստացողներ կան. միջին հաշուով շաբաթական տասը տոլար։ Union-ներու (գործաւորական միութիւններ) չեն անդամակցիր ընդհանրապէս. նախ՝ որ շատ պէտքը չեն կգար. երկրորդ՝ որ դժբախտութեան պարագային օտար գործաւորներէն աւելի ապահով են՝ իրենց խնայողութիւններով եւ փոխադարձ օգնութիւնովը, երրորդ՝ չեն ուզեր վտանգի ենթարկել իրենց կանոնաւոր ապրուստը՝ միանալով գործադուլներուն, քանի որ ամերիկեան օրէնքը հաւասարապէս կը պաշտպանէ երկու կողմն ալ. եւ չորրորդ՝ ամերիկահայուն պիւտճէին չափազանց բեռնաւորուած է, գործադուլի հետեւանքով առաջ եկած անյաջողութիւն մը անոր տնտեսական պէտքերը աւելի կը խաթարէ. յետոյ այդ միութիւնները սահմանափակ ըլլալով օտարներու շահը ապահով չէ եւ խտրութիւն կը դնեն. ուրիշ պատճառ մըն ալ այն՝ որ հայերը պահանջուած չափով լեզուին ծանօթ չեն։ Հայերը անցեալին մէջ մասնակցած եւ աւրած են գործադուլները, բայց վերջին տարիները հապուադէպ եղած են այդ կարգի դէպքերը շնորհիւ այն բանին, որ տեղին պայմաններուն ու կեանքին ծանօթացան, հին օրերու դժբախտութիւններուն այլեւս ենթակայ չեն եւ գործաւորական պատուախնդրութիւնը աւելի վարգացած է հիմա։

«Հայ պանդխտութեան ստուար մէկ մասը անգրագէտ կու գայ Միացեալ Նահանգները, մանաւանդ գիւղացի տարրը. շատերը Ամերիկայի մէջ կարդալ գրել կը սորվին, բայց հետաքրքրութիւնը շատ առաջ չ'երթար. կառավարութեան յատկացուցած գիշերուան ձրի դպրոցները յաճախողներ քիչ կան, եւս աւելի քիչ է ինքնաշխատութեամբ անգլերէն լեզուն կամ ուրիշ արհեստ մը սորվելու բուռն հետեւողականութիւնը։ Պատճառները՝ 1) Գործաւորական 10 ժամուան կեանքը չափազանց յոգնեցուցիչ է. 2) Մտաւոր տեւական ճիգի անվարժ են. 3) Ցոյս ունին որ այսօր կամ վաղը հայրենիք պիտի վերադառնան, հետեւապէս արդէն գիտցածը կամ աւելորդ կամ իրենց պէտքին համար բաւական կը սեպեն հայրենիքին մէջ շահագործելու համար. անոնց մեծ մասը արդէն տուն, այգի պարտէզ եւ հողային կալուածներ ունին»։

Ապա տեղեկագիրը շեշտելով հայերի ընդունակութիւնը դպրոցների մէջ եւ նրանց ստացած օգուտը ամերիկեան կեանքից, անցնում է շեշտելու, որ կրօնական ազդեցութիւնը շատ թուլցած է այնտեղ եւ եկեղեցականութիւնը կորցրել է իր նշանակութիւնը։ Դոյութիւն ունին բազմաթիւ ուսումնասիրաց ընկերութիւններ, որոնք կազմուած են իրենց նստավայրի դպրոցական գործին աջակցելու համար. դրանց գումարները որ պահւում են այնտեղի բանկերում, հասնում են մինչեւ 200,000 տոլարի։ Ունին գրադարաններ եւ ստանում են հայերէն թերթեր։

«Յեղափոխական պրոպագանդը առաջի օրէն իսկ պատրաստ հող գտած է ամերիկահայ գաղութին մէջ. կարելի է ըսել, որ ամերիկեան բարձր ու ապատ կեանքը եւ միւս կողմէն ալ վայելած ապատութիւնները ու իրենց մայր օճախին անլուր ցաւերը տեսակ մը նախանձի որդը ձգած են երիտասարդութեան մէջ։ Հնչակեան եւ ապա դաշնակցական պրոպագանդը թէեւ բաւական երկար գոյութիւն ունեցած են, բայց անկարող եղած են ժողովըրդային հանգամանք մը տալու հայ յեղափոխական գործին. այսօր հազիւ 8% յեղափոխական են՝ տրուած ըլլալով 1) Երկրի գործին հեռաւորութիւնը, 2) եկեղեցականներու եւ խաւարամիտ հին աղաներու հակառակութիւնը, 3) հնչակեան վեղծումները, որոնք որեւէ տեղէ աւելի խորունկ ապդեցութիւն ձգած են հոս, 4) Երկրի գործերուն աւելի բացասակա՛նը նիւթ կազմած ըլլալով արտասահմանեան հակայեղափոխական մամուլին, ան եւս որոշ դեր խաղացած է»։

«Հայ մամուլը Ամերիկայում սկսուած է դեռ15 տարի առաջ. այժմ կան բազմաթիւ հայ թերթեր։ Դաշնակցական ընկերները անհատապէս, առանց դպչելու Կազմակերպութեան սնտուկին, անձնական վոհողութիւններով հիմնեցին «Հայրենիք»ը եւ ան յատկացուցին Դաշնակցութեան պրոպագանդի գործին։ Բայց ընկերների պակասը հնարաւոր չէ դարձրել լայն պրոպագանդը եւ շատ շրջաններ այդ պատճառաւ մնում են առանց կազմակերպելու։ Չնայած, որ Ամերիկան տուել է բազմաթիւ ընկերներ յեղափոխութեան գործին»։ Ապա տեղեկագիրը կանգ է առնում կազմակերպական սիստեմի վրայ այնտեղ. իւրաքանչիւր քաղաքի ընկերները միասին կազմում են մի կոմիտէ, խմբական սիստեմ բացակայում է. կայ 50 կոմիտէ, 1200 կազմակերպուած ընկերներով, որոնք տալիս են Դաշնակցութեան տարեկան 15,000 տոլար, չհաշուած կանոնական յատուկ նպատակներով հանգանակութիւնները։ Հանգանակուած գումարներուն մէջ 10% ոչ-կուսակցականներու մասնակցութիւնը կայ։ Իւրաքանչիւր դաշնակցական տարին կը վճարէ նուագագոյնը 16 տոլար, ոմանք ալ՝ 50-100 տոլար։ Սասունի կռիւներէն եւ անոր անկումէն յետոյ ժողովրդական շարքերուն մէջ բնական հակազդեցութիւն մը առաջ եկաւ, իրենց յեղափոխական անգիտակցութեան պատճառաւ, որուն նպաստեց որոշ չափով հակառակորդներու պրոպագանդան. Բայց դաշնակցական շարքերը մնացին իրենց հաւատքին վրայ, գիտակից իրենց կոչումին, եւ գործի բոլոր պարագաները համարեցին յեղափոխական կեանքի անհրաժեշտութիւններ։ Պոլսի Սուլթանի մահափորձը, Իւմիրը եւ Կովկասի կռիւները անգամ մըն ալ մեծապէս նպաստեցին եւ փարատեցին այն անվստահելիութիւնը, որ սերմանուած էր հակառակորդ տարրերէն, եւ Դաշնակցութիւնը ստացաւ մեծ ժողովրդականութիւն։ Կարելի է ըսել, որ Դաշնակցութիւնը բարոյապէս եւ նիւթապէս միակ հզօր կազմակերպութիւնը կը նկատուի, եւ հասարակութիւնը կ'ակնկալէ Դաշնակցութենէն աւելի՛ եւս իրական ու հիմնական գործ եւ միջոցներ հայկական ազատութեան գործը հիմնաւորելու ուղղութեամբ։

Տեղեկագիրը շեշտում է այն, որ Դաշնակցութեան յաջողութիւնները սկզբում մասամբ էլ պայմանաւորուած են եղել նրանով, որ նա իրեն հեռու է պահել միւս ընդհանրական հիմնարկութիւններից, այդ թողնելով ժողովուրդին՝ իրեն։ Բայց այժմ երթալով, քանի ազդեցութիւնը մեծանում է, այնքան նա սկսել է հանրային գործերին էլ ձեռնարկել։ Թէ ինչ վիճակուած է մեկի ընել այսուհետեւ հանրային գործերու նկատմամբ, ապագան թող խօսի։ Մինակ մտահոգիչ գործը, որ մեր վրայ կը ծանրանայ սուր կերպով, այդ գաղութը հայ պահելու միջոցներու մասին լուրջ խորհիլն է, եւ այդ խոշոր մասով մըն ալ կ'իյնայ ընդհանուր Դաշնակցութեան վրայ, քանի որ ոչ մէկ ազդակ համարուած գործ, անկարող է հայութիւնը հայ պահել Ամերիկայի մէջ, բացի յեղափոխական պրոպագանդէն եւ փրկութեան վառ յոյսերէն։

Այնուհետեւ տեղեկագիրը անցնում է իրենց յարաբերութեան ուրիշ հայ կազմակերպութիւնների հետ, որ առհասարակ բարեկամական լինելուց շատ հեռու է։ Եղել են փորձեր հնչակեանների հետ համերաշխ գործունէութեան որոշ խնդիրներում, որոնք մեծագոյն մասամբ անյաջողութեան են հանդիպել։ Հակառակորդ է եւ հին հնչակեան կուսակցութիւնը, որը սակայն աննշան ուժի պատճառով ուշադրութիւն չի գրաւում։ Ապա տեղեկագիրը անցնում է իրենց յարաբերութիւններին դաշնակցական միւս մարմինների հետ, իրենց աջակցութեանը Զինուորական Դպրոցին, իրենց յարաբերութիւնների հետ. փորձեր են արել կազմակերպել Երկրի վանական կէտեր, նպաստել են ինքնապաշտպանութեան եւ բանտարկեալ ընկերներին։ Չնայած որ Արեւմտեան Բիւրոյից քաջալերութիւն չեն ստացել Ամերիկայում Հայկական Հարցի համար պրոպագանդ անելու, բայց այնուամենայնիւ իրենք որոշ գործ կատարել են այդ ուղղութեամբ։

«Ամփոփելով մեր խօսքը, ժողովի ուշադրութեանը կը հրաւիրենք հետեւեալ գլխաւոր կետերուն վրայ.

Հայ գաղութը կը ստուարանայ եւ կարեւոր դեր մը կը ստանձնէ հոն տարուէ տարի. հետեւաբար աշխատելու է, որ այդ առողջ, կենսունակ գիւղացի տարրը ոչ միայն չձուլուի բնիկին հետ, ինչ որ անխուսափելի է երկու սերունդ ետքը, այլ եւ չկորսուի հայրենիքին համար։ Այդ գաղութը կրնայ օգնել մեկի երեք տեսակէտէ.

1) Կազմակերպող եւ վինական ուժեր հայթայթել Երկրին. 2) Դրամական կանոնաւոր նպաստ տալ Երկրի գործին. 3) Ամերիկեան հպատակութեան մէջ հայանըպաստ պրոպագանդը արդիւնաւոր ընել, աւելի քան որեւէ արտասահմանեան գաղութի մէջ։

Այդ երեք նպատակներուն հասնելու համար պէտք է անհրաժեշտաբար, 1) Կարող գործիչներ ղրկել Ամերիկա, ոչ միայն կազմակերպելու, այլեւ ժողովուրդի մշա-

կութային գործերով զբաղելու. 2) Ամերիկեան եւ արտասահմանի գաղութները Արեւմտեան Բիւրոյի հետ միացնել իրարու՝ արեւմտեան շրջանի մը մէջ, ուր այդ մարմինները գործունէութեան ընդհանուր ծրագիր մը ունենան, փոխադարձ պարտականութիւններով եւ իրաւունքներով կապուած»:

Տեղեկագրի ընթերցումէ յետոյ, նախագահը տեղեկացուց բաժանում է հետեւեալ մասերին եւ առաջարկում է իւրաքանչիւր մասի վերաբերմամբ հարցումներ անել պատգամաւորին:

ա) Ամերիկահայ գաղութի պահպանումը ձուլումից:

բ) Կազմակերպական վիճակը:

գ) Դրամական վիճակը:

դ) Պրոպագանդան եւ թերթը:

ե) Ամերիկայի Կ. Կոմիտէի յարաբերութիւնը երկրի գանազան գեղերի եւ մարմինների հետ:

Ռուստոմ.— *Ինչո՞վ բացատրել, որ Ամերիկայում գաղթականների թիւը այնքան չնչին է, ընդամէնը հայութեան 4%ը (35000ից՝ 1200 հոգի). այնտեղի մարմինը ի՞նչ միջոցներ է ձեռք առել աւելի շատ տարրեր միացնելու համար Դաշնակցութեան հետ:*

Թոփչեան.— *Ի՞նչ խաւերից են կազմուած այդ 1200 գաղթականները եւ ի՞նչ դիրք են բռնում դէպի մեզ հայութեան մնացած խաւերը:*

Չելալեան.— *Մեր ընկերները ընդհանրապէս պատկանում են գործաւոր դասին, եւ մասամբ ալ միջին խաւերին: Իսկ բարձր կոչուած դասակարգը՝ հարուստները՝ ընդհանրապէս հեռու են մեզմէ: Սակայն վերջին ժամանակներս նկատելի է համակրութիւն նաեւ հարուստներու կողմէ: Մեզ մօտ կազմակերպական սիստեմը խմբական չէ, այլ մի որեւէ քաղաքի բոլոր գաղթականները 100—120 եւ աւելի, միասին կը կազմեն մի կոմիտէ (խումբ) եւ միասին ժողովներ կ'ընեն: Հարուստները չեն ուզեր մտնել այդքան բազմութեան մէջ եւ ժողովներ ունենալ. ահա այդ պատճառով է, որ մենք, ինչպէս տեղեկագրի մէջ ալ ըսուած էր, որոշել ենք կազմակերպութիւնը վերածել խմբական սիստեմի, որպէսզի բարձր դասակարգն ալ միջոց ունենայ կազմակերպուելու:*

Բարսեղեան.— *Արդեօք հոգեպործութեամբ պարապող հայեր էլ կա՞ն Ամերիկայում:*

Չելալեան.— *Քալիֆորնիայում եւ Հիւսիսային նահանգներում կան մօտ 2000ի չափ հայեր, որոնք պարապում են հողագործութեամբ, այդեղործութեամբ, բանջարանոցապահութեամբ եւն.:*

Արամ.— *Ի՞նչ է պատճառը որ վերջին ժամանակներս հարուստների համակրութիւնը դէպի մեզ է դարձել, ի՞նչ դրդապատճառներ կան. արդեօք նրանք մեր տակտիկայի՞ն են հաւանում, թէ իրենց համոզումը մեր մասին փոխել են:*

Չելալեան.— *Մեր հակառակորդների պրոպագանդը մեր դէմ եւ հնչակեանների կատարած գեղծումները մի տեսակ անվստահութիւն էին ներշնչել թէ՛ մասնաւորապէս դէպի մեզ եւ թէ ընդհանրապէս դէպի յեղափոխութիւնը: Նրանք ոչ մի զանազանութիւն չէին դնում մեր եւ հնչակեանների միջեւ: Բայց վերջին դնում մեր եւ հնչակեանների միջեւ: Բայց վերջին ժամանակների փաստերը պատճառ դարձան նրանց կարծիքի փոխելու մեր մասին: Ամերիկայում մենք ունենք պաշնակցականներ, որոնք գործում են այս կամ այն ձեւով եւ հասարակութիւն՝ որին հրաւիրում ենք ժողովների, պրոպագանդա անելու նպատակով: Այդ ժողովների, պրոպագանդա անելու նպատակով: Այդ ժողովներում լինում են ազատ վիճաբանութիւններ, հարցումներում լինում են ազատ վիճաբանութիւններ, հարցումներ նաեւ այլ կուսակցականների կողմից, որոնց ժամանակ մենք պարզում ենք մեր գործունէութիւնը եւ այսպիսով համակրողներ գրաւում:*

Միհասեան.— *Այդ բարձր դասակարգը, որոնց դուք բուրժուա էք անուանում, մեծ մասամբ գործի հարուստ վաճառականներ են, որոնք ընդհանրապէս չեն համակրում յեղափոխութեանը: Բայց երբ վերջին ժամանակներս նկատեցին որ Դաշնակցութիւնը ձգտում է յուզել քաղաքական չրջանները եւ այդ յուզումը հասաւ մինչեւ Ամերիկա եւ Ռուզվելտի նման անձը սկսեց նաեւ հետաքրքրուել մեր գործով, հետաքրքրուեցին նաեւ հարուստները, որոնք ընդհանրապէս ամենից շատ Դաշնակցութեան քաղաքական գործունէութեամբ են հետաքրքրուում:*

Թոփչեան.— *Արդեօք բուրժուաները աւելի հնչակեաններին չե՞ն համակրում եւ իրենց օգնութիւնը նրանց տալիս:*

Վռամեան.— *Մինասեանի եւ Չելալեանի բացատրութիւնների մէջ մի քիչ պակաս մնաց: Հարուստների համակրանքը դլխաւորապէս կախուած է մեր գործակերպից: Վերջին ժամանակներս դէպքերը եկան նրանց կարծիքը մեր մասին փոխելու: Սուլթանի մահափորձ եւ յատկապէս կովկասեան կռիւները համոզեցին նրանց, որ Դաշնակցութիւնը մի լուրջ կազմակերպութիւն է, ունի դէնք եւ այլ միջոցներ եւ ի պահանջել հարկին կարող է ոչ միայն դիմադրել, այլ եւ ուրիշներին ջարդել, փոխադարձ յարձակումներով: Ինչ վերաբերում է հնչակեաններին, պէտք է ասել, որ եթէ հարուստները մեզ չեն օգնել, նրանց աւելի՛ եւս: Բուրժուաները հնչակեաններին փող են տուել միայն րոպէի ուժից հարկադրուած. Աբդէլ Ռնիլեանի սպանութիւնը Պոլսում վերջնականապէս դգեց նրանց վարկը եւ ամերիկեան ոստիկանութիւնը այժմ նրանց վրայ նայում է իբրեւ մի մաֆիայի վրայ, եւ երբ որեւէ նման դէպք է պատահում, աչքը ուղղում է դէպի հնչակեանների չէֆերը:*

Արամ.— *Ո՞վ է Ամերիկայում դաշնակցական համարւում. որեւէ ցենզ կա՞յ, նիւթական կամ բարոյական. մեր ամերիկեան ընկերները ուրա՞խ են, որ հարուստները յարում են մեզ. ի՞նչ են կարծում, ի՞նչ պիտի լինի դրանց դերը մեր կազմակերպութեան մէջ:*

Ստեփանեան.— *Տեղական կոմիտէներին ո՞վ է ընտրում:*

Վահագն.— *Ամերիկայի պաշնակցական կազմակերպութիւնը ունենում է հրապարակային ժողովներ, որտեղ խօսում են յեղափոխական սկզբունքների մասին, երկրի պահանջների մասին, որ ի՞նչ ճանապարհներով կարելի է մեզ համար ազատութիւն ձեռք բերել եւն.: Եթէ այդ ժողովների ժամանակ լինում են մարդիկ, որոնք համոզւում են եւ մեզ հետ ուզում են մնալ, պահանջում ենք, որ նա պիտի գործէ ի նպաստ Դաշնակցութեան, տարածէ նրա սկզբունքները. հետաքրքրւում ենք նրա բարոյական մաքրութեամբ եւ ապա ընդունում ենք նրան մեր մէջ, պահանջելով նմանապէս, որ ըրամապէս օգնէ, քարոզէ իր չրջաններում. ի պահանջել հարկին, եթէ կարող է զնայ Երկիր:*

Արամ.— *Արդեօք բոլոր դաշնակցականները միակ՞րոյ են, թէ կան իսկական անդամներ եւ համակրողներ:*

Միհասեան.— *Համակրողները նրանք են, որ յաճախում են մեր ժողովներին, մենք նրանց պրոպագանդ ենք անում եւ եթէ համոզւում են, միանում են:*

Վահագն.— *Պահանջում ենք տուրք տալ, ժողովներին յաճախել եւ մեր սկզբունքները տարածել. եւ եթէ նա իւր պարտականութիւնները կատարում է, նա պատնում է մեզ հաւասար ընկեր եւ այդպիսով մեզ հետ միասին մասնակցում է կոմիտէի ընտրութեան:*

Ստեփանեան.— *Ամերիկայի տեղեկագրում յիշուած էին մի չարք ընկերների անունները, որոնք այնտեղից դուրս գալով դնացել են այլ տեղեր գործելու. արդեօք այդտեղից դուրս եկած եւ չատ անգամ իւր անձնական գործով հեռացողների՞ն էլ համարում են երկիր ուղարկած գործիչներ:*

Վահագն.— *Ամերիկայի կեդր. կոմիտէն այնտեղից հեռացողներին տուել է վկայականներ. ընկեր Ստեփանեանը նկատի ունի մի ընկերոջ, որ մեզնից վկայական չէ վերցրել. բայց հենց Ստեփանեանի վկայութեամբ այդ ընկերը չատ լաւ դաշնակցական գործիչ է իրենց չրջանում:*

Չելալեան.— *Խօսում են ակտիւ գործի մասին: Ամերիկայում ակտիւ գործի խօսք չէ կարող լինել. մեր գործը եղել է այն 35000 ժողովուրդը հայ պահել, դա ես ակտիւ գործ եմ համարում: Վաղուց այդ ժողովուրդը ձուլուած կը լինէր, եթէ յեղափոխականներ չլինէին: Մեր դաստիարակութեանց նիւթը քաղաքական խնդիրներ են, ինչպէս նաեւ մեր եւ հնչակեանների միջեւ կազմակերպական տարբերութիւնները, կենտրոնացման եւ ապակենտրոնացման հարցը եւն.: Մենք ծանօթացնում ենք մեր ունկնդիրներին զանազան յեղափոխական դէպքերի պատմութեան, զանազան յեղափոխական ընկերների կենսագրութեան հետ, ցոյց ենք տալիս մտքական լսատերներով գործիչների պատկերները: Մենք պատկարգային հարցերով չենք վրազուել, որովհետեւ այնտեղ պէտքը չենք զգացել: Ընտանեկան»ի մասին մենք հետաքրքրուել ենք մեր Ընդհանուր Պատգամաւորական ժողովում, վիճել ենք այդ առթիւ ժամերով, օրերով, եւ ունենք այդ առթիւ մեր որոշումը. դա անհատների կարծիքը չէ, այլ բոլոր մարմինների ներկայացուցիչների: Մենք աշխատում ենք ոչ միայն գրամական լայն նպաստող չրջաններ ստեղծել, այլեւ ձգտում ենք նրանց գիտակցութեան մէջ մտցնել յեղափոխութեան անհրաժեշտ պահանջները. բացի այս, մենք ձեռնարկել ենք երկրում կազմակերպական գործ սկսել: Սա է մեր արածը եւ սրանից աւելի էլ չէր կարելի անել:*

Մուրատ.— *Լաւ կը լինէր, որ մտքական լսատերներով պատկերներ ցոյց տալը վերջացնէինք այդտեղ եւ կը խնդրեմ ինձի բացատրէք, թէ ինչ է այդ ակտիւ գործը:*

Չելալեան.— *Ամէն կիրակի չրջել քաղաքէ քաղաք, քարոզել, կազմակերպել, նպաստներ հաւաքել, նիւթական օգնութիւն ստանալ: Ամերիկան չատ հեռու է երկրից, մենք ուրիշ բան չենք կարող անել: 10ի, 20ի չափ ընկերներ ի վիճակի են եղել երկիր մտնելու, բայց մերժուել են: Այնում ենք զինուորական վարժութիւններ, ինքնապաշտպանութեան գործին ժողովուրդը նախապատրաստելու համար:*

Նիստը փակուեց ժամը 7ին:

22ՐԴ ՆԻՍՏ (7 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Բացակայ են՝ Իչխան, Սեպուհ:

Այս ժողովը սկզբից մինչեւ վերջ անցնում է ազգակալի եւ չղային դրութեան մէջ. նախագահը յաճախակի ստիպուած էր նկատողութիւններ անել ժողովականներին եւ մինչեւ իսկ երկու անդամ ընդհատումներ արեց, որպէսզի յուզմունքը դադարի: Ժողովի էական բովանդակութիւնը, առանց մինչդեռների, հետեւեալն է:

Նախագահը խօսք է տալիս Ամերիկայի պատգամաւոր Չելալեանին, որը համառօտակի կերպով կըրկնում է նախկին ժողովում ասածները իրենց պրոպագանդի ձեւի եւ բովանդակութեան մասին եւ յայտնում է, որ աւելացնելու այլեւս բան չունի:

Ստեփանեան.— *Ամերիկայի Կ. Կոմիտէի յարաբերութիւնների մասին դէպի այլ մարմինները, պիտի ասեմ, որ Ատրպատականի Կ. Կոմիտէն թուլութեամբ չէ վերաբերուել դէպի նրանց նամակները, այլ մեր Շրջանային ժողովը որոշեց յարաբերութիւնները դադարեցնել Ամերիկայի Մարմնի հետ, նկատի ունենալով այն անվստահութիւնը, որ նրանք տածում են դէպի ընկեր-*

նները: Ամէն մի մարմին, որ իւր սահմաններից դուրս է պալիս եւ գործեր է կատարում այլ չրջաններում, դրանով դէմ է գնում մեր կազմակերպական կանոններին: Ամերիկայից ուղարկուած ընկերները ուղում են պատասխանատու լինել միայն իրենց Մարմնի առաջ, չնայած, որ գործում են այլ չրջանում: Մանաւանդ մի դէպք այդ կողմից աչքի է ընկնում: Ամերիկայից փող կր բերեն Թաւրիզ, Երկիր ուղարկելու համար, եւ կը վերադարձնեն յետ, իբր թէ վստահելի մարդ չկար, որին հանձնային: Ապահենորոնացումը՝ մեր ընկերները սխալ են հասկանում: Իրենց սահմաններից դուրս գալու այս դէպքերը մենք վերագրում ենք նրանց արտակարգ եռանդին եւ այդ պատճառով էլ յոռի ենք: Ամերիկայի մեր ընկերները մի գործիչ են ուղարկել Գրի կազմակերպելու համար, որը ինքնագլուխ կերպով իւր ստացած դրամները գործադրել է ինչպէս ուզել է: Ինքնագլուխ գործունէութեան դէպքեր նկատւում են եւ այլ տեղեր: Ընկեր Տաճատր պատմեց, որ Բուլղարիայի մէջ մի քանի խմբեր բաժանուել են. դրանք մեզ դիմել էին յայտնելով, որ իրենց դրամով մենք պէնք առնենք եւ ուղարկենք Երկիր: Մենք որոշեցինք նրանց մանաւանդ կերպով գրել եւ խորհուրդ տալ, որ նրանք իրաւունք չունեն այդպէս վարուելու: Կ. Կամիտէների վրայ կարող է պատասխանութիւններ դնել միայն Ընդհանուր Ժողովը. եթէ այլ Կ. Կոմիտէներ եւ մարմիններ նոյնպիսի պատասխանութիւններ են ուղում դնել, դա նշանակում է իրաւունքների սահմանից դուրս գալ:

Վռամեան.— Ի՞նչ գործերում է միջամտել Ամերիկայի Մարմինը եւ ի՞նչ դրամ է որ ուղարկուել է եւ յետ պահանջել Ամերիկա:

Ստեփանեան.— Պէտք էր բերել Երկիր ուղարկելու, կարօտեալներին բաժանելու համար, բայց դէս ու դէն բամբասում էր, թէ վստահելի մարդ չի գտնուել Ասրպատականում եւ ո՛չ էլ Թիֆլիս, որ դրամը յանձնուէր: Երկրում գործող մարմիններ կան, դուք նրանց փող էք ուղարկում եւ դրում էք, որ մենք անպատճառ դէնք առնենք եւ ուղարկենք: Ի՞նչպէս առնենք, երբ պայմանները նպաստաւոր չեն: Այս տեղեկագրից իմացայ, որ Ամերիկայում 5000 տոլար մնացորդ է եղել: Ինչո՞ւ դումարի մասին չեն յայտնել, որ Կորհուրդը կազմելիս դա էլ նկատի ունենար, չէ՞ որ կազմակերպական կանոններով տեղական ծախսերը հանած, աւելորդ դումարը պիտի կենտրոն ուղարկել ընդհանուր պէտքերի համար:

Բարսեղեան.— Երբ Ամերիկան դրամ էր ուղարկում ու մարմիններ կազմում Գրիում, արդեօք նա Բիւրոների համաձայնութիւնը ստացե՞լ էր:

Բիւրոյի ներկայացուցիչը պատասխանում է, որ Գրի գնացողը անցել է Ժրնեւից, բայց յարաբերութիւնները եղել են առանց Արեւմտեան Բիւրոյի, նոյնպէս եւ առանց Արեւելեան Բիւրոյի գիտութեան:

Բարսեղեան.— Ինչո՞ւ Բէյրութ դրամ էք ուղարկել:

Չելալեան.— Բէյրութ դրամ չէ ուղարկուած, այլ պրոպագանդայի համար գիրքեր եւ թերթեր. իսկ դրամ ուղարկուած է կիլիկիայում գործիչ ընկերոջ, որի վերաբերմամբ մենք մեր բարոյական պարտքն ենք կատարել, չթողնելով ընկերոջը դրամական անձկութեան մէջ:

Բարսեղեան.— Արդեօք տեղական մարմինը դիտէ՞ր դա եւ համաձա՞յն էր:

Չելալեան.— Այո, դիտէր եւ համաձայն էր. Գրի է որ 100 ոսկի է ուղարկուած:

Բարսեղեան.— Սերաստիայում, ո՞ւմ համաձայնութեամբ է գործ կատարուել:

Ստեփանեան.— Ամերիկայի տեղեկագրից իմացանք, որ բանտարկեալներին այնտեղից դրամ է ուղարկուած: Արդեօք ամէն մի կենտրոնական կոմիտէ իրաւունք ունի՞ ինքնագլուխ այդպէս գործելու: Ես այս Հարցը յարուցանում եմ, որ իմանանք, թէ ապագայում էլ նոյնը չարունակելո՞ւ է Ամերիկան, քանի որ նրանց տեղեկագրում աւուած էր, որ ապագայում էլ գործելու են նոյն ուղղութեամբ:

Չելալեան.— Ստեփանեանի յիշած դրամը, որ Գարսկաստան է եկել ու յետ դարձել առանց ընկերներին յանձնուելու, Ալէօնի բերած դրամն է: 1903ին երբ Սասունը պաշարուած էր, Բիւրոյից նամակ ստացանք, որ հարկաւոր է այնտեղ օգնութիւն հասցնել: Սասունի վիճակը մեր սրտին մօտիկ համարելով, մենք պրոպագանդ արինք ոչ միայն հայերի, այլեւ ամերիկացիների մէջ, նկարագրելով հայերի վիճակը Երկրում, յուսալով որ նրանք մարդասիրական օգնութիւն կարող էին ցոյց տալ Հայաստանին: Ամերիկայում կազմուեց մի յանձնախումբ՝ հայերից եւ ամերիկացիներից, որը հաւաքեց 500 տոլար: Բայց որովհետեւ հակառակորդները սկսեցին լուրեր տարածել, որ այդ դումարը հաւաքում է ոչ թէ տառապեալներին օգնելու համար, այլ այդ պատրուակով կամենում են Դաշնակցութեան համար դրամ ժողովել, ուստի մենք մի միջոց ունէինք հաստատելու համար, թէ յեղափոխութիւնը լոկ խօսք չէ այլ իրականութիւն է: Մենք Ալէօնին ասացինք, որ կարող է Գարսկաստանի մեր ընկերների հետ տեսնուել եւ համոզուել, որ Երկրում կռուողներ կան. եւ եթէ համոզուի, կարող է դրամը յանձնել նրանց: Դժբախտաբար Ալէօնը Մարմնի հետ չհամաձայնուելով, վերադարձաւ, դրամը յետ բերեց եւ մեզ դիտողութիւններ ըրաւ: Գրի ընկերը գնացել էր այնտեղ, գործել, պատրաստ մարմին էր գտել եւ մեզանից դրամ էր ուզում: Մենք պատասխանեցինք եւ ցոյց տուինք Դաշնակցութեան օրէնքը, որով իւրաքանչիւր մարմին իւր մօտիկ պիտի հաստատուի [?], եւ խնդրեցինք, որ մեզ

տեղեկութիւններ հաղորդէք: Վերջերս ստացած նամակներից իմացանք, որ լաւերի միջոցով նրանք կապ են 8 ոսկուով ղէնք առնել եւ արդէն առել էին պարտքով, մեր վրայ 100 ոսկու չէք էին ղրկել այդ առթիւ եւ խնդրել՝ վճարել. մենք էլ պարտաւորուեցինք վճարել: Սերաստիայի մասին աւելի լաւ տեղեկութիւններ կարող է տալ ընկեր Վռամեանը:

Սաֆօ.— Ալէօնը 1903ին Գարսկաստանից եկաւ ինձ մօտ, պատմեց որ փող է բերել, որով պիտի ղէնք առնուի Անդրանիկի համար: Ես նրան ծանօթացրի ընկ. Արմէն Գարոյի հետ, ցոյց տուի Անդրանիկի եւ ընկերների նամակները. նա խոստացաւ գնալ տանից դրամ բերելու, բայց ձգձգեց ու չբերեց: Վերջը պատահել էր մի հրաշքով ու ասել էր, որ իրեն ցոյց տուած նամակները կեղծ են: Ես վրդովուեցի եւ վճռեցինք այդ մասին գրել Վռամեանին:

Ստեփանեան.— Ջէնքի համար ժողովուած դրամներից Ամերիկայում պահել են 5000 տոլար, որը պիտի Երկրի բիւղէի մէջ մտնէր. բայց այդ փողը չէ մտել Երկրի բիւղէի մէջ: Ինչո՞ւ են այդ փողը պահել եւ Բիւրոներին չեն յայտնել:

Վռամեան.— Կը զարմանամ Ատրպատականի պատգամաւորի խօսելու եղանակի մասին. իբր թէ անվըստահութիւն կայ, որի մասին նոր եմ իմանում: Մենք երբէք նրանց գործերին չենք խառնուել, մենք միայն պահանջել ենք, որ մեր ուղարկած դրամները միայն ղէնքի համար գործածուին: Երբ Թիւրքմացութիւնը պարպուեց, դրամները Ալէօնից առանք եւ նորից Գարսկաստանի ընկերներին ուղարկեցինք: Մենք միայն պահանջել ենք, որ Թաւրիզի ընկերները մեղնից դրամ առնելիս, անմիջապէս ստացական ուղարկեն, որը մենք ցոյց տանք տուողներին եւ հանգստացնենք: Մենք ցանկացել ենք, որ մեր ուղարկած դրամը միայն ղէնքի համար ծախսուի, իսկ փոխադրութիւնը Թող հոգացուի ընդհանուր Դաշնակցութեան հաշուից: Բանտարկեալներից՝ մենք Գիսակին ենք դրամ ուղարկել: Ընկ. Ստեփանան ասաց, որ Գրիի դրամը վատնուել է, բայց դուք այդ մասին տեղեկութիւն չունէք, դուք հաշիւ պահանջեցէք: Այնտեղ կան մարդիկ, որոնց անունները չենք տալիս, բայց կարող ընկերներ են եւ որոնք ղէնք են առել եւ ցոյց են տուել երաշխաւորութիւն: Ասում են, թէ ի՞նչ իրաւունք ունի Ամերիկան ձեռք զարնելու Գրիին եւ Սերաստիային: Ինչո՞ւ ուրիշները չեն արած մինչեւ հիմա, եթէ կարող էք դուք այնտեղ գործել, գործեցէք, եթէ ոչ՝ մենք կ'անենք: Այնտեղ, ուր որոշում կայ ինքնապաշտպանութեան համար եւ ուրիշները չեն անում՝ մենք ենք անում: Որոշուած է ուսումնասիրողներ ուղարկել Երկիր, բայց մարդ չէ ուղարկուած, իսկ մենք ուղարկել ենք: Մենք Կարբերդում մարմին հաստատեցինք եւ կապեցինք Կիլիկիայի հետ: Այո, մենք ունենք ապագայի գործունէութեան համար ծրագիր եւ պիտի առաջարկենք: Սերաստիայի համար 5 տարի է, որ Բիւրոյում գրագրութիւն կայ. բայց այս տարի միայն մեզ յաջողուեց այնտեղի հետ յարաբերութիւն հաստատել: Բէյրութի հետ ունեցած յարաբերութիւնը, մի պարզ յարաբերութիւն է, թերթ են ուզել՝ ուղարկել ենք, մի ընկեր դրամի կարիք է ունեցել՝ ուղարկել ենք:

Ռուստամ.— Վահարի խօսածը ամբողջապէս մի թիւրիմացութիւն է. ոչ ոք չէ կարող նրանց մեղադրել, թէ ինչո՞ւ են գանգատ տեղեր կազմակերպում. բայց նրանք կազմակերպած տեղերը պիտի կապէին մեւս մարմինների հետ: Գրիի մասին մեզանում էլ բացասական տեղեկութիւն կայ:

Վռամեան.— Մենք ղրել ենք Արեւմտեան Բիւրոյին, որ Գրին կապի կարնոյ հետ:

Ռուստամ.— (չարունակելով) Ամերիկայի Կ. Կոմիտէն պիտի պրէր նաեւ Արեւելեան Բիւրոյին եւ ցոյց տար թէ ի՞նչպէս կապենք: Երկիրը ղինելը, կամ նրա այլ պէտքերին օգնութիւն հասցնելը գովելի բան է, բայց վահարը մոռանում է եւ գործի մեւս կողմը: Ամէն մի անկին օգնութեան է կարօտ, բայց մենք պիտի կանոնաւորենք կազմակերպութեան միջոցները, մի սիստեմ պիտի ստեղծենք, որ միջոցները դնան այնտեղ, ուր որ կարիքը մեծ է: 1898ի Ընդհանուր Ժողովը որոշ կենտրոնացման վայրեր էր հաստատել: Ջէնքի գնման համար Կովկասում հաստատուած որոշ մարմին կար, որ ռեպուլատոր [կանոնաւորիչ] էր հանդիսանում բոլոր տեղերի համար եւ Ամերիկան առնուազն պիտի դիմէր այդ Մարմնին՝ Արեւելեան Բիւրոյին: Ես չեմ կանգնում ընկ. Ստեփանեանի տեսակէտի վրայ, ամէն մի չրջան աւելի հետաքրքրուում է այն գործով, որին մասնակցում է: Ամերիկային գործելու ասպարէզ տալու համար, մենք մինչեւ անգամ կիլիկեան կապեցինք նրա հետ: Բայց Ամերիկայի հետաքրքրութիւնն երբեմն սահմանից անցնում է եւ դառնում կոմիկական: Իւրաքանչիւր չրջան իրաւունք ունի, ի հարկէ, պահանջելու, որ իւր դրամը գործադրուի այն բանի վրայ, որի համար հաւաքուած է: Մի փաստ. 1903ից Սասունից բաղմաթիւ նամակներ էինք ստանում, որոնցով օգնութիւն էին խնդրում: Մենք դրամապէս չատ նեղ վիճակի մէջ էինք: Իմացանք որ Ամերիկան փող ունի, բայց այդ փողը ուղում են ուղարկել Գարսկաստանով, այն ինչ մենք չատ լաւ կապ ունէինք արդէն հաստատած Սասունի հետ:

Ապա, սկսւում են երկար վիճաբանութիւններ այն առիթով, որ Ամերիկայի Կ. Կոմիտէի տեղեկագրի մէջ անվստահութիւն է արտայայտուած դէպի Վասպուրականի Մարմինը: Այս վիճաբանութիւններից պարզուում է, որ Ամերիկան Թիւրիմացութեան մէջ է Վասպուրականի մասին: Ցետոյ փոխադարձ համաձայնութեամբ որոչւում է, որ սրան առիթ տուող հատուածը, ուր

արտայայտուած էր Ամերիկայի կ. կոմիտէի անվստահութիւնը դէպի վասպուրականի կ. կոմիտէն՝ ընդել եւ հանել տեղեկագրից եւ արձանագրել։

23ՐԴ ՆԻՍՏ (7 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան։

Բացակայ են՝ Թոփչեան, Մուբատ, Սեպուհ։

Քննութեան է դրւում Զինուորական Դպրոցի հարցը, որն անցեալ անգամ յետաձգուել էր ընդ. Անդրանիկի բացակայութեան պատճառով։

Զարդարեան։— *Բացատրութիւն է տալիս Դպրոցի վերաբերմամբ։ Դա սկզբում մի փոքրիկ, սահմանափակ ձեռնարկ էր Սոֆիայի կոմիտէի կողմից, պայծուկիկ նիւթեր պատրաստելու նպատակով։ Ամերիկայի կ. կոմիտէի կողմից՝ խորհուրդ էր տուացուել այդ ուղղութեամբ, այս խորհուրդը ընդունուեց մեր Շրջանային Ժողովի կողմից։ Իսկ երբ 1905ի Մարտին Ժընեւից Բուլղարիա եկաւ ընդ. Անդրանիկը՝ գործն աւելի լայն չափեր ստացաւ։ Մեր ծրագրի մասին յայտնեցինք Արեւմտեան Բիւրոյին, որ եւ իւր համաձայնութիւնը տալով, իւր հերթին տեղեկագրեց Արեւելեան Բիւրոյին. վերջինս դրա դէմ ոչինչ չունեցաւ, ուստի մենք էլ անմիջապէս գործի անցանք։ Մենագետլի մասին Անդրանիկին ինքը անձամբ դէկուցում կը տայ։*

Անդրանիկ։— *Ժընեւից անցայ Բուլղարիա. Արեւմտեան Բիւրոյից ինձ յանձնարարուած էր պէնք դնել ու կոփկռտ ուղարկել։ Այստեղ ինձ յայտնում են, որ ցանկութիւն կայ մի դինուորական դպրոց հիմնելու՝ 12 հոգու համար։ Բայց չգիտէին թէ ի՞նչպէս կը վերաբերուի այդ խնդրին բուլղար կառավարութիւնը. այս առթիւ ես տեսակցութիւն ունեցայ մի բուլղար բարձրաստիճան պաշտօնեայի հետ. այս պաշտօնեան, որ նոյնիսկ իշխանի անունից խօսելով, մի տեսակ թարգման էր հանդիսանում՝ բուլղար քաղաքական շրջանների տրամադրութեան դէպի տաճիկ կառավարութիւնը, ոչ միայն ոչինչ չունեցաւ դրա դէմ, այլեւ խոստացաւ՝ այս կամ այն ձեւակերպութիւնը ցոյց տալու մեզ, եթէ մենք, բուլղար-թուրքական պատերազմի դէպքում՝ ապստամբութիւն սկսէինք Երկրում։ Առաջին ձեռնարկն այն էր լինելու, որ 400 հայ տղաք պէտք է մտցուէին բուլղար դինուորների շարքերը՝ դէնքի վարժուելու նպատակով։ Ես այս մասին դրեցի ընդ. Մալումեանին, Ժընեւ, որը համակրանք յայտնելով ձեռնարկին սկզբունքով, կասկած յայտնեց սակայն, թէ մինիստրութիւնը կը փոխուի եւ այդպիսով կարող կը լինի թերեւս փոխուել նաեւ կառավարութեան քաղաքականութիւնը դէպի Տաճկաստանը, այնպէս որ գործ պէտք է դադուչուեամբ տանել. բայց մենք առանձին կարեւորութիւն չտուինք կասկածին, քանի որ վերջինիս պաշտօնեան միանդամայն տեղեակ էր՝ բարձրը չրջաններում տիրող հակատաճկական ձգտումներին։ Եւ Դպրոցը լոցինք անցեալ Նոյեմբերին։*

Թոփչեան։— *Ո՞րքան ժամանակ է տեւում դասընթացքը։ Ի՞նչ դիտութիւններ են ուսանւում։ Բացի դործնականից, տեսական ի՞նչ հարցեր են արծարծւում Դպրոցում։ Հարկաւոր է աշակերտների ներչնչել նաեւ յեղափոխական ոգի, պիտակցութեան բերել նրանց, որպէսզի Դպրոցն աւարտելուց յետոյ ծառային խակապէս մեր առաջադրած նպատակին։*

Զարդարեան։— 10 *ամսուան դասընթացք է։ Տեսական հարցերով աշակերտներն իրենք են հետաքրքրւում եւ ուղում, որպէսզի դրանց մասին խօսուի Դպրոցում։*

Անդրանիկ։— *Դպրոցն ունի 50 աշակերտ. իւրաքանչիւրի վրայ ծախսւում է ամսական մօտաւորապէս 100 ֆրանք, բոլորի վրայ ուրեմն, դասընթացքի 10 ամսուայ ընթացքում, ծախսուելու է 50000 ֆրանք. արտակարգ ծախսերն ի հարկին դատ դումար են կազմելու։ Պատրաստուածները տեւելու են մինչեւ Սեպտեմբեր. մինչեւ Մայիս լինելու են տեսական պարապմունքները, այնուհետեւ արդէն կը սկսուեն գործնական պարապմունքները՝ լեռներում։*

Նախագահը Դպրոցի հարցը բաժանում է 4 կէտերի՝ 1) իրաւասութեան խնդիր, 2) հաշուական խնդիր, 3) Դպրոցի ներքին կազմի խնդիր, եւ 4) Դպրոցի փակման խնդիր։

1) Իրաւասութեան խնդիրը.

Անդրանիկ։— *Ընդհանուր Ժողովի որոշմամբ չէր որ Դպրոց բացինք. սա ձեռնարկութիւն է իմ, Արեւմտեան Բիւրոյի եւ Բալկանի կողմից։*

Մալումեան։— *Մենք ուզում էինք Դպրոցի բացման հարցը թողնել Ընդհ. Ժողովին, բայց վերջինը, դժբախտաբար, չատ ուշ պէտք է կայանար. միւս կողմից էլ՝ բուլկար կառավարութեան առաջարկները չատ էին եւ անյետաձգելի ու կոնկրէտ (չօչափելի), այնպէս որ մենք ինքներս գործի ձեռնարկեցինք։*

Անդրանիկ։— *Երկիր դնացած դինուորներից 90%ը դէնքի վարժ եղած չեն. չատերը նրանցից նոյնիսկ չեն դիտցել հրացանի «դատւօրը» հանել ու տեղը դնել։ կրակելիս բնաւ չեն ուզեցել հետեւել՝ որ կողմն է դընում գնդակը։ Այս տեսակէտից՝ Զինուորական Դպրոցը կարեւոր էր մեզ համար։ Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ի՞նչ տեսական խնդիրներ են չօչափւում Դպրոցում, չգիտեմ. այսքանը միայն յայտնի է, որ աշակերտները ստորագրութիւն են տուել իրենց վրայ դրուած պարտականութիւնը լ կատար ածելու։*

Մաշուր (դրաւոր)։— *Մեր առաջ դրուած հարցը մի չատ բնորոշ եւ առանձնայատուկ բնոյթ է կրում եւ պերճախօս օրինակ է նա, ցոյց տալու համար, թէ այդ Զինուորական Դպրոցի գործի [նման] ձեռնարկները, որքան հեռու են կեանքի հրամայական պահանջներից։ Ո՞վ է այդ ձեռնարկի հեղինակը, այդ գործը մի կոլլեկտի՞վ (հաւաքական) մարմնի, թէ մի հեղինակաւոր անձի է պատկանում, այս միեւնոյնն է մեզ համար. յեղափոխական կոչուած մարմնի մէջ, մի յեղափոխական գործ քննելու ժամանակ, միշտ առաջնորդւում են որոշ տեսակէտներով եւ թէ կ'ուզէք, ինչպէս այստեղ սիրում են չարունակ կրկնել, միշտ ի նկատի ունենալով ժողովուրդի չահը։ Այս ես ձեզ հարցնում եմ, ո՞վ հաւատաց, որ ժողովրդի չահը պահանջում է՝ ներկայ դինուորական կարգերով՝ դինուորական մի Դպրոցի հիմնարկումը, այն մի բուռը ժողովուրդի համար, որ «երկիր» կոչուած գժոխքում, սովի ու կղզեքման ճանկերում, մահամերձի ճիգերի մէջն է, որի մասին ամենից աւելի լաւատեղեակ են այդ ձեռնարկող ընկերները, որոնք այստեղ այնքան բուռն կերպով ձայն են բարձրացնում, նրա մասին մտածելու, նրան փրկելու համար։ Մինչդեռ նոյն այդ լաւատեղեակ ընկերները տասնեակ հազարներ են ծախսում՝ ինչպէս Զինուորական Դպրոցի համար։ Ա՛յս է պատասխանը մեռնող, դինուորականութիւնից ճնշուած ժողովուրդի հրամայողական պահանջի, եւ այդպէ՞ս պէտք է հասկանալ՝ պահանջին համապատասխան գործունէութիւնը։ Սակայն այս առաջին կէտը այնքան կարեւոր չէ, որա մասին ապագայում չատ կը խօսենք։ Ընկերները, կարեւորն ու հետաքրքիրն հետեւեալն է։ Ինձ թւում է, թէ այս խնդիրը մէջ է բերուած մի թիւրիմացութեան չնորհիւ, այլապէս ինձ միանդամայն անհասկանալի է թւում, այդ ի՞նչպէս է կատարուել, որ Ընդհանուր Ժողովից մի ամիս առաջ միայն, այսինքն հենց այն ժամանակ, երբ պէտք է վերաքննուին մեր բոլոր արժէքները, մեր անցեալ ու ներկայ գործերը, նոր ճանապարհներ հարթելու, կամ ո՞վ գիտէ, դուցէ դարձեալ նախկին ճանապարհներով ընթանալու համար — հիմնւում է մի Զինուորական Դպրոց՝ կապուած հսկայական գումարների հետ, որը կարող է միանգամայն չհամապատասխանել Ընդհանուր Ժողովում վճռուելիք դեկավարող սկզբունքներին։ Եթէ հարկաւոր էր ուսումնարան հիմնել, պէտք էր հիմնել 1904ին, 1905ին, որպէսզի նա այստեղ գնահատութեան ենթարկուէր՝ իր արդիւնքներով. իսկ այժմ մեր առաջ խոշոր գործի միայն սկզբնաւորութիւնն է 60–70·000 ֆրանքի ծախսով։ Անհասկանալի է, մի՞թէ նրա ձեռնարկողները այնքան յատկնութիւն են ունեցել, որ մարգարէացել են Ընդհանուր Ժողովի ապագայ որոշումները։ Եթէ անհնարին է ենթադրել նրանց մարդարէ լինելը, ապա թոյլ տուէք հարցնելու, մի՞թէ նրանք կամեցել են, իրենց կատարուած փաստ, կապուած մեծ ծախսերի հետ, փաթաթել Ընդհանուր Ժողովի վիզը (ներեցէք արտայայտութեանս համար)։ Ինչո՞ւ նրանք չեն սպասել Ընդհանուր Ժողովին, գուցէ նրա կազմակերպողները կարծում են, որ Զինուորական Դպրոցը Ընդհ. Ժողովի քննութեան ենթակայ չէ. եթէ այդ էլ չէ կարելի ենթադրել, այն ժամանակ բոլոր ասածներիցս եզրակացնում եմ, որ մեր առաջ դրուած գործի դեկավարները ոչ մի բարոյական իրաւունք չունէին Ընդհանուր Ժողովից մի քանի ամիս առաջ տակտիկական ու դեկավարող սկզբունքային խոշոր խնդիրներ սկսելու։ Ինչո՞ւ նրանք չեն ենթադրել, որ Ընդհանուր Ժողովը կարող է չհաշտուել իրենց որոշումների հետ եւ սկզբնական մեծաքանակ ծախսերը, այնքան դժուարութեամբ դանձուած ժողովրդական փողերը, կարող են աննպատակ կորչել, մի բան որ պարտաւոր էին անպայման ենթադրել։ Զինուորական Դպրոցը հիմնողները պէտք է ենթադրէին, որ Ընդհանուր Ժողովը եկել է այստեղ՝ Դաշնակցութեան ապագայ անելիքի մասին խորհելու, դեկավարող ճանապարհներ հարթելու եւ ըստ այնմ՝ այս կամ այն գործը հաստատելու կամ ժխտելու եւ ոչ թէ այդպիսի բնաւորութիւն կլոր դեկուցում լսելու, հաշտուելու կատարուած փաստերի հետ։ Եզրակացնում եմ, կատարուել է մի անտակտ [անփափկանկատ, սխալ, չմտածուած] գործ, որը մենք այժմ չպէտք է քննենք ըստ էութեան, մինչեւ չպարզենք մեր ծրագրային հիմքերը։*

Խահակեան։— *Այո, ես համաձայն եմ ընդ. Մալումեի հետ, որ նախքան մեր նոր ծրագիրն որոշելը՝ մենք ձեռնարկել ենք մի պատասխանատու գործի։ Ես էլ եմ համարում այդ քայլը Բալկանեան կ. կոմիտէի կողմից մի անտակտութիւն։ Կոմիտէն իրաւունք չունէր դպրոց հիմնելու, այս Ժողովը կարող է բացատական որոշում կայացնել դրա վերաբերմամբ։*

Արամ։— *Մալումը այնպէս խօսեց, կարծես թէ ձեռնարկութիւնը չէ համապատասխանում մեր ունեցած սկզբունքներին։ Բայց մի՞թէ Երկրի կացութիւնը չէ պահանջում մի այդպիսի գործ։ Ձեռնարկող ընկերներն ի նկատի են ունեցել բացառապէս տաճկահայ իրականութիւնը. իսկ այդ իրականութեան տեսակէտից՝ կարեւոր է ունենալ մի Զինուորական Դպրոց։ Ուրեմն սկզբունքից ելլելով, մեր ընկերների արածը՝ ճիշդ է։ Մալումը մի համեմատութիւն առաջ բերեց, թէ Երկրում սով է տիրում, իսկ մենք տեսանք հազարներ ենք ծախսում աննպատակ գործերի համար։ Բայց չէ՞ որ Երկրում տիրող սովին վերջ տալու արմատական միջոցը քաղաքական կուսի է, իսկ այս կուսի համար հարկաւոր է եւ զէնք։*

Ես թէեւ սկզբունքով կտնում եմ, որ այդպիսի ձեռնարկութիւնները օգտակար կարող են լինել, պէտք է սակայն նկատեմ, որ աննպատակ եմ համարում 50·000ից աւելի մի պատկառելի գումար ծախսել այնպիսիների վրայ, որոնցից ո՞վ գիտէ քանիսն են արտայայտելու [արդարացնելու ?] մեր յոյսերը։ Այո, մեզ հարկաւոր են զինուորական ուժեր, բայց կարիք չկայ

առանձին դպրոց հիմնելու, աղաներով, ծառաներով եւն., եւն.: Մենք կարող ենք այս ու այն երկրի բանակներից օգտուել· օրինակ մտնել ռուսական զօրքի մէջ, պէտք եղած փորձառութիւնը ձեռք բերել եւ ապա անցնել երկիր: Նոյնը կարելի է ասել նաեւ ամերիկեան ու բուլղարական զօրքերի վերաբերմամբ: Եւ ես համաձայն չեմ, որ Դպրոցը չարունակուի գոյութիւն ունենալ· նրա հիմնուելն արդէն ներկայ ձեւով սխալ պէտք է համարել:

Սափօ [արդեօ՞ք Սafo] ·— կարծում եմ, որ ընդհակառակն, պէտք է չնորհակալ լինէինք մեր ընկերներից, իրենց սկսած գործի համար: Մեզ հարկաւոր են դիւանագիտական ինստրուկտորներ [ուսուցանողներ]· Ընդհանուր Ժողովը ինքը հրահանգել է, որ իւրաքանչիւր կ. կոմիտէի տրամադրութեան տակ այդպիսիներից ղտնուեն՝ առնուազն երկու, երեք, հինգ, նոյնիսկ տասն հոգի: Իսկ ինչ վերաբերում է սկզբունքային տեսակէտին, արդէն 16 տարուց ի վեր մենք ունենք սկզբունքներ, որոնց հիման վրայ՝ բալկանը լիովին իրաւունք է ունեցել գործը սկսելու: Դեռ աւելին կ'ասեմ, այդ կարգի դպրոցներ պէտք է ունենանք, որքան կարելի է չատ: Եւ պէտք է ունենալ սեփական դպրոցներ, այն՝ քէ ռուսական եւ այլ բանակներում պատրաստուածները կ'անցնեն երկիր՝ խախուտ յոյսեր են· մինչեւ այժմ ոչ մէկը ունեցեր աֆիցեր [ենթասպայ] դառնալով, չէ համաձայնուել կազմակերպութեան տրամադրութեան տակ դրուելու: Այսպիսով, իրաւասութեան մասին ոչ մի հարց չէ կարող լինել:

Ռոստոմ (ղողջում է Մաչուրի եւ Իսահակեանի պատճառաբանութիւնների դէմ).— Եթէ ընկերները ծանօթ լինէին յեղափոխական դործի հետ, այդպիսի բան չէին ասիլ, քէ սպասեցէք մինչեւ Ընդհանուր Ժողովը: Այդ Դպրոցը մեր ամբողջ տակտիկայի մի արտայայտութիւնն է· սպա չպէտք է կարծել, իբր թէ Դպրոցի դաղափարը Ընդհանուր Ժողովից միայն քիչ առաջ է յարուցուել, այս մասին խօսուել է նաեւ այլ անդամներ:

Թոփչեան·— Իւրաքանչիւր յեղափոխական մարմին կարիք ունի պատրաստի ուժերի, հետեւաբար, այստեղ ոչ մի վիճաբանութիւն չէ կարող լինել Զինուորական Դպրոցի օգտակարութեան հարցի չուրջը:

Վռամեան·— Դպրոցը մի կարեւոր միջոց է Ընդհանուր Ժողովի որոշումներն իրագործելու համար: Ժողովը հրահանգել է, որ իւրաքանչիւր կ. կոմիտէ առնուազն 50 կռուող պատրաստի տարին· միայն մի այդպիսի Զինուորական Դպրոցի օգնութեամբ կարելի կը լինի այդ պահանջին բաւարարութիւն տալ: Սկզբունքային հարցերի մասին խօսք չէ կարող լինել: Բայց եթէ այդ ձեռնարկութիւնը հակառակ է Ընդհ. Ժողովի ոգուն, եւս առաւել պէտք է համարուի նաեւ «Խափիծ»ը, եթէ ընդհանուր կանոններից չեղուելու մասին է խօսքը· Արեւելեան չրջանն աւելի չատախ է չեղումներ արել, ինչպէս, օրինակ՝ 20·000 ռուբլի «ծառայելին տրուած [լինելու] խնդիրը:

Նախագահ·— Ես չէի ուզենայ այդ հարցը այստեղ դնել· նրա քննութիւնը չատ ժամանակ կը խլի մեզանից, աւելի լաւ է Քաղենք դիւանին, որ կարգադրի:

Միմասեան·— Այդ խնդիրը պէտք է պարզաբանել հենց այստեղ, քանի որ Շահխաթունեանի նկատողութիւնը՝ ամբողջ Ժողովին է վերաբերում· սա անհատական բան չէ, որ կարելի լինի մանուլը կերպով կարգադրել:

Նախագահ·— Ես չեմ ուզենայ այդ հարցը այստեղ դնել· նրա քննութիւնը չատ ժամանակ կը խլի մեզանից, աւելի լաւ է Քաղենք դիւանին, որ կարգադրի:

Միմասեան·— Այդ խնդիրը պէտք է պարզաբանել հենց այստեղ, քանի որ Շահխաթունեանի նկատողութիւնը՝ ամբողջ Ժողովին է վերաբերում· սա անհատական բան չէ, որ կարելի լինի մանուլը կերպով կարգադրել:

Զաւրեան·— Անձնական քիւրմացութիւններից դրդուած, մեր մի քանի ընկերները քողնում են Ժողովը եւ հեռանում· այս երեւոյթը վիրաւորական է Ժողովի համար· այսպէս չէ կարելի չարունակել:

Նախագահ·— Կրկնում եմ, որ այդ հարցը պէտք է Քողնել դիւանին· իսկ եթէ դիւանը չկարողանայ լուծել, այն ժամանակ կ'ենթարկենք Ժողովի քննութեան:

Անցնում են հերթական հարցերին:

Նախագահ·— Քննութեան ենթակայ է Զինուորական Դպրոցի հարցը· առաջարկում եմ կա՛մ մի բանաձեւ կազմել այդ հարցի վերաբերմամբ կամ Քողնել, բաւական համարելով երէկուան վճարանութիւնները:

Զելալեան·— Պէտք է փակել այդ հարցը, պարզաբանելու այլեւս ոչինչ կայ:

Նախագահը քուէարկում է իւր առաջարկութեան երկրորդ կէսը:

Նախագահը յայտնում է, որ ընկ. Դումանը, նայած տեղեկութիւններին, Ժողովին չպիտի կարողանայ գալ· նա ուղարկել է մի պաշտօնական դրութիւն, որով նա յայտնում է իւր կարծիքները այլեւայլ խնդիրների մասին: Նախագահը ապա նկատում է, որ ժողովների ընթացքը դանդաղում է եւ գանում է, որ այդտեղ մեղաւոր են մասամբ յանձնաժողովները:

Վռամեան·— Բայց ինչո՞ւ են յանձնախումբերը դանդաղում· եթէ տեխնիկական դժուարութիւններ կան՝ ասացէք, մենք կ'օգնենք ձեզ:

Ստեփանեան·— Մեզ ժամանակ ու տեղ տուէք, որպէսզի մենք միջոց ունենանք մեր պարապմունքները կանոնաւոր կերպով յառաջ տանելու:

Անդրանիկ հրաժարում է հաշուական յանձնաժողովի անդամութիւնից, պատճառաբանելով, որ ինքը քոյլ է հաշուական հարցերում եւ անկարող այդպիսի պատասխանատու գործ յանձն առնելու:

Նախագահը խնդրում է մնալ յանձնաժողովի մէջ եւ նա համակերպում է:

Նախագահը առաջարկում է հաշուական յանձնաժողովի մէջ մտցնել ընկ. Թոփչեանին՝ Գրիգորեանցանեան փոխարէն, մինչեւ վերջինս տեղ հասնի (առաջարկն ընդունւում է):

Զոփուրեան խնդրում է հինգ օր ազատուն իրեն յանձնաժողովների պարապմունքներից, որն ընդունւում է:

Ռոստոմ դրաւոր առաջարկ է անում խորհրդակցական ձայն տալ քարտուղարներին:

Ժողովը այդ խնդիրը Քողնում է հետագայ նիստին, քարտուղարների բացակայութեամբ քննելու համար:

Նախագահ·— Օրակարգում, բացի տակտիկական հարցերից, կան նաեւ այլ հարցեր, որոնց հարկաւոր է լրիւ քութեամբ վերաբերուել· չէ կարելի նրանց մասին խօսել պատահարար: Եւ ես առաջարկում եմ, որ այդ հարցերը առանձին ուսումնասիրութեան նիւթ դարձուեն· ով որ համաձայն է դրանց մասին զեկուցում տալ՝ մինչեւ երեկոյեքի յայտնի գիւանին:

Ռոստոմ·— Ժողովների ընթացքն արագացնելու նպատակաւ, լաւ կը լինէր, որ կարգացուող տեղեկագրերի հետ այսուհետեւ ծանօթանայ միայն փաստերէն, քննադատութիւնները Քողնելով այլ անգամների:

Նախագահ·— Անկարող եմ այդ անել· ինչպէս որ սկսել ենք, այնպէս էլ կը չարունակենք:

Ժողովն անցնում է Ամերիկայի տեղեկագրի վերջին կէտին՝ Ամերիկայի կ. կոմիտէի յարաբերութիւնները դրսի մարմինների հետ:

Մալումեան·— Ամերիկայի ընկերները իրաւունք համարեցին չէչտելու, քէ Բիւրոները անկարեւոր են դտել պատասխանելու իրենց դիմումներին· քէ իրենք են առաջինը կապեր սկսել այս կամ այն վայրի հետ: Այդ կարծիքը անհիմն է, նրանք այո, եռանդ են ցոյց տուել իրենց դործունէութեան մէջ, բայց այդ դործունէութեան սիստեմը սխալ է եղել· նրանք ձգտել են խառնուել ուրիչ մարմինների դործունէութեան եւ հենց դրանով անախորժութիւնների առիթ տուել: Ամերիկայի պատգամաւորը ասաց, որ Արեւմտեան Բիւրոն արհամարհանք է ցոյց տուել դէպի Ամերիկան· դա սխալ է, արհամարհանքի մասին ոչ մի խօսք չէ կարող լինել· ընդհակառակն, մեր յարաբերութիւնների մէջ եղել ենք աւելի քան քնքոյշ եւ մենք միայն մեղմ կերպով նկատողութիւններ ենք արել այնտեղի մեր ընկերներին այս ու այն խնդիրների վերաբերմամբ եւ մեր այս խաղաղասիրութեան չնորհիւ է, որ մեր եւ նրանց մէջ ընդհարումներ տեղի չեն ունեցել: Իսկ որ ամերիկեան ընկերների այս տեսակ գործելակերպը դժգոհութիւնների տեղիք է տուել, դրա համար փաստեր չատ կան: Նախանցեալ տարի նրանք Բիւրոյից տեղեկութիւններ ուղեցին Սանոյ վերջին դէպքերի վերաբերմամբ, հրապարակային պրոպայանդա անելու համար, այն ժամանակ՝ երբ դեռ չատ բան հարկաւոր էր գաղտնի պահել: Մենք մերժեցինք այն պատճառով, որ կազմակերպութեան ձեռնարկը կարող էր վտանգի ենթարկուել· ոեւէ մարմին գործի պատմիչքը չպէտք է դրհէ՝ արտաքին պրոպագանդայի չահերին: Եւ այս եղաւ Ամերիկայի ընկերների դժգոհութեան պատճառ· ուրիչ փաստ էլ՝ Ամերիկայի ընկերները, առանց Բիւրոյին յայտնելու, գրում են Լոս Անջելոսին(15)՝ անցնել Լեոնավայր· [մինչդեռ] նա պատասխանատու Մարմնի դժգոհութիւնը չարուցած լինելով, չէր կարող անցնել այդ չրջանը, եւ այդ մտքով էլ հրահանգուած էր: Այդ ինքնագլուխ կարգադրութիւնը նոր դժգոհութիւնների առիթ եղաւ: Մի այլ դէպք՝ Սարհատի դէպքը: Լեոնավայրի կողմից առաջարկ կար դատի ենթարկելու Սարհատին, որ հեռացած ԱՔՏնդից՝ գնացել է Եգիպտոս, իբրեւ մանանաւոր մարդ· այնտեղից յարաբերութեան մէջ մտնելով Ամերիկայի հետ, փող է ստացել վերջինս կ. կոմիտէից եւ այս բոլորը առանց Բիւրոյի դիտութեան: Մենք

Ժողովն անցնում է Ամերիկայի տեղեկագրի վերջին կէտին՝ Ամերիկայի կ. կոմիտէի յարաբերութիւնները դրսի մարմինների հետ:

Մալումեան·— Ամերիկայի ընկերները իրաւունք համարեցին չէչտելու, քէ Բիւրոները անկարեւոր են դտել պատասխանելու իրենց դիմումներին· քէ իրենք են առաջինը կապեր սկսել այս կամ այն վայրի հետ: Այդ կարծիքը անհիմն է, նրանք այո, եռանդ են ցոյց տուել իրենց դործունէութեան մէջ, բայց այդ դործունէութեան սիստեմը սխալ է եղել· նրանք ձգտել են խառնուել ուրիչ մարմինների դործունէութեան եւ հենց դրանով անախորժութիւնների առիթ տուել: Ամերիկայի պատգամաւորը ասաց, որ Արեւմտեան Բիւրոն արհամարհանք է ցոյց տուել դէպի Ամերիկան· դա սխալ է, արհամարհանքի մասին ոչ մի խօսք չէ կարող լինել· ընդհակառակն, մեր յարաբերութիւնների մէջ եղել ենք աւելի քան քնքոյշ եւ մենք միայն մեղմ կերպով նկատողութիւններ ենք արել այնտեղի մեր ընկերներին այս ու այն խնդիրների վերաբերմամբ եւ մեր այս խաղաղասիրութեան չնորհիւ է, որ մեր եւ նրանց մէջ ընդհարումներ տեղի չեն ունեցել: Իսկ որ ամերիկեան ընկերների այս տեսակ գործելակերպը դժգոհութիւնների տեղիք է տուել, դրա համար փաստեր չատ կան: Նախանցեալ տարի նրանք Բիւրոյից տեղեկութիւններ ուղեցին Սանոյ վերջին դէպքերի վերաբերմամբ, հրապարակային պրոպայանդա անելու համար, այն ժամանակ՝ երբ դեռ չատ բան հարկաւոր էր գաղտնի պահել: Մենք մերժեցինք այն պատճառով, որ կազմակերպութեան ձեռնարկը կարող էր վտանգի ենթարկուել· ոեւէ մարմին գործի պատմիչքը չպէտք է դրհէ՝ արտաքին պրոպագանդայի չահերին: Եւ այս եղաւ Ամերիկայի ընկերների դժգոհութեան պատճառ· ուրիչ փաստ էլ՝ Ամերիկայի ընկերները, առանց Բիւրոյին յայտնելու, գրում են Լոս Անջելոսին(15)՝ անցնել Լեոնավայր· [մինչդեռ] նա պատասխանատու Մարմնի դժգոհութիւնը չարուցած լինելով, չէր կարող անցնել այդ չրջանը, եւ այդ մտքով էլ հրահանգուած էր: Այդ ինքնագլուխ կարգադրութիւնը նոր դժգոհութիւնների առիթ եղաւ: Մի այլ դէպք՝ Սարհատի դէպքը: Լեոնավայրի կողմից առաջարկ կար դատի ենթարկելու Սարհատին, որ հեռացած ԱՔՏնդից՝ գնացել է Եգիպտոս, իբրեւ մանանաւոր մարդ· այնտեղից յարաբերութեան մէջ մտնելով Ամերիկայի հետ, փող է ստացել վերջինս կ. կոմիտէից եւ այս բոլորը առանց Բիւրոյի դիտութեան: Մենք

ի հարկէ դէմ չենք, որ Ամերիկայի ընկերները կապեր են հաստատում սրա նրա հետ. բայց միայն պարտաւոր են նախօրօք յայտնել Բիւրոյին, հարցնելով թէ արդեօք մենք ի՞նչ կարծիք ունենք այն մարդկանց մասին, որոնց հետ նրանք դործ են սկսում: Այս չեն անում. եւ մեր ցանկութիւնը՝ համոզել նրանց, որպէսզի Թողնեն դործելու այդ սխալ սիստեմը՝ անցաւ ապարդիւն: Դարձեալ մի փաստ. Քղիում ամերիկացիները արժանաւոր ընկերներ են դտել, նոյնիսկ մարմին՝ կնիքով, մինչդեռ Արեւելեան Բիւրոն այդ մասին լուր չունի: Եւ լուր չունի այն պարզ պատճառով, որ այդպիսի մարմին այնտեղ դոյութիւն չունի: Եւ ահա Քղիից 100 լիրայի պահանջ է լինում կնքուած մի Թղթով, մինչդեռ Արեւելեան Բիւրոն բնաւ ոչ մի տեղեկութիւն չի ունեցել այդ կնիքների մասին, որ զարկուած են եղել Քղիից ստացուած Թղթի վրայ, եւ հետեւաբար նրանք կեղծ պիտի համարուեն: Այստեղ այս դէպքի առիթով, ես յիշեցնում եմ ընկ. Վռամեանի այն իսօքը՝ Թէ «մարմիններ չկան, կնիքները չահագործւում են»: Երբ մենք դրեցինք Ամերիկա, Թէ մենք տեղեկութիւն չունենք Քղիի մասին, այն ժամանակ այնտեղի Կ. Կոմիտէն իրեն Թոյլ տուեց մի չրջաբերական հրատարակել, որի մէջ մեղադրում է Բիւրոյին՝ Քղիի մարմինը չճանաչելու համար. սա մի անբացատրելի քայլ է կուսակցական դիսցիպլինայի [կարդապահութեան] տեսակէտից: Էլի մի փաստ. Ամերիկան Թոյլ տուեց իրեն՝ ուղարկելու մեղի մի ամերիկահայ ընկեր, յանձնարարելով Գոլիս մտնել, Սուլթանի դէմ մահափորձ կատարելու: Ապշեցուցիչ է այս կարդադրութիւնը: Նրա մասին մենք ոչ մի դաղափար չունէինք եւ բնականաբար դժուարացանք այդօրինակ պատասխանատու դործ յանձնել նրան. բայց քանի որ ծախք էր արել, Ամերիկայից ծրագիր եկել, մենք փորձեցինք ընտրել երկու չարիքից փոքրագոյնը եւ առաջարկեցինք նրան Թողնել մահափորձի «ծրագիր»ը եւ վիչապ դնալ միայն մի նպատակով — մինչեւ Ընդհանուր ժողովը մի դեկուցում կազմէր եւ ներկայացնէր ժողովին: Տեսորի գործը իրեն յանձնել անկարող էինք, որովհետեւ այդ մարդը նոյնիսկ զէնքի վարժ չէր. զինավարժութիւն սովորելու համար ուղարկեցինք նրան Բուլղարիա՝ Անդրանիկի մօտ: Այնտեղից դնացել էր Կիպրոս, որտեղ նա ձերբակալուած է առանց գործ անել կարողանալու: Ամերիկայի ընկերների եռանդը գովելի է, բայց եռանդի գործադրութեան սիստեմը սխալ է, պէտք է այդ սիստեմը միանգամայն ուղղել:

Մուրատ.— Դիսցիպլինայի տեսակէտից, ի հարկէ Ամերիկայի Կոմիտէն սխալներ է արել. բայց միւս կողմից ես արդարացնում եմ նրա ինքնագլուխ գործունէութիւնը Քղիում կամ այլ տեղերում, քանի որ այլ մարմինների Թուլութեան պատճառով գործ չէ սկսուել այդ վայրերում:

Անդրանիկ.— Այո, դիսցիպլինայից դուրս բան է, երբ Ամերիկան գործում է ինքն իրեն... ես տեսայ այն մարդուն, որը յանձնարարուած էր Ամերիկայի կողմից՝ Գոլիս մտնելու. ծիծաղս էր դալիս, մի՞Թէ դա ընդունակ էր լինելու՝ մի հսկայական դործ կատարելու:

Իշխան.— Ամերիկայի կողմից սիստեմ է եղել ուրիշների գործունէութեան միջամտելու: Վաստուրականի կոնոնաւոր մարմին ունի այսօր, բայց եւ այնպէս Ամերիկան կարիք է համարում Թելդրումներ անելու մեզ: Ապացոյց այն, որ դուք մեզ անդամալ ամառ դրել էք հետեւեալը. «ինչպէս մինչեւ այժմ Թելդրումներ ենք արել ձեզ, նոյնպէս կը վարուենք եւ այսուհետեւ»:

Արամ.— ճիշդ է, Ամերիկան մեզ Թելդրումներ է անում: Վանի կոտորածի տասնամեակի առԹիւ մենք մի Թռուցիկ արձակեցինք, որից եւ ուղարկեցինք Ամերիկա՝ «Հայրենիք»ին: Այնտեղից մեզ պատասխանում են, Թէ «Թելադրում ենք զդոյշ լինել: չդրդռել կառավարութիւնը». երբ մենք դրեցինք այնտեղի ընկերներին, որ մենք ինքներս աւելի լաւ ծանօթ լինելով Երկրի կացութեանը, դիտենք, Թէ ինչ է հարկաւոր անել.— մեզ մի նոր սիւրպրիզ [անակնկալ] արին ամերիկացիք. «Այո, դուք երկրումն էք, բայց մենք եւս դուրսը լինելով, հետեւում ենք քաղաքական կեանքին. ուստի նորից խորհուրդ ենք տալիս ձեզ՝ զդոյշ լինել»:

Զելալեան.— Ինդիրն այն է, որ Վաստուրականի ընկերները մեր «Թելադրում» բառը այլ մտքով են հասկացել, քան մենք ենք դործածել. մեզ մօտ «Թելադրել» նշանակում է «խորհուրդ տալ». նոյնիսկ աւելի մեղմ նշանակութիւն ունի: Այս իմաստով էլ մենք դրել ենք Վաստուրականի ընկերներին՝ մեր նամակը. ուստի սըբանք վիրաւորուած չէինք է դան իրենց:

Միհասեան.— Արամի բացատրութիւնը աւելի եւս արդարացրեց Ամերիկայի ընկերների ընթացքը: Սըբանց տրուած խորհուրդները եղել են արտայայտութիւն այն ընդհանուր ցանկութեան, որ ունէր այն ժամանակ ամբողջ հայութիւնը: Արեւմտեան Բիւրոն չափալանցում է մեղադրելով Ամերիկայի մարմինը ինքնագլուխ գործունէութեան մէջ: Իւրաքանչիւր մարմին դործին նախանձախնդիր լինելով, կարող է ինքը ձեռնարկել այս կամ այն բանին:

Վռամեան (դրաւոր).— Բացարձակապէս կը բողոքեմ այն կարդ մը բառերու դէմ, որոնք գործածուեցան Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչի կողմէն, բացատրելու ատեն մեր յարաբերութիւնները այդ Բիւրոյի եւ միւս մարմիններու միջեւ: Նախ եւ առաջ՝ ես կը պնդեմ, որ Ամերիկայի Կ. Կոմիտէն չարժան է ոչ միայն իր պարտականութիւններու, այլեւ իրաւունքներու սահմաններուն մէջ: Վերջին Ընդհանուր Ժողովը յանձնարարած էր «կազմակերպութեան Թէ՛ դրսի եւ Թէ ներսի իրաւասու մարմիններուն՝ չսահմանափակել իրենց դործողութիւնը իրենց չրջանով միայն, այլ մէն ջանք Թափել կազմակերպելու նաեւ նոր վայրեր մանաւանդ Մեծ Հայքի եւ Փոքր Ասիոյ զանազան կէտերու վրայ» (տես քաղուածքներ Գ. Ընդհանուր Ժողովի Արձանադրութիւններէն, երես 22): (Ընդմիջում մը ոմանց կողմէ.— «Իրաւասու մարմիններու համար ըսուած է սա»): Ես կը դարմանամ, որ այդպիսի առարկութիւն կ'ընեն. Թէ Ամերիկայի կենտրոնական Կոմիտէն իրաւասու չէ, ի՞նչ դործ ունի հապա կազմակերպական դերագոյն մարմնի մէջ ներկայացուցիչ ունենալու է, որ տարիներէ ի վեր չէչտուած էր կազմակերպելու պէտքը, 1898ի Ժողովին կողմէ մասնաւոր որոշում մը իսկ անցած էր, նորէն ի դուր: Եթէ կայ ուշադրութեան առնելու կէտ մը, սա պէտք էր լինէր, Թէ Ամերիկայի Կ. Կոմիտէի ջանքերը ուժէ կերպով ընդհարուած են ուրիշ Կ. Կոմիտէներու դործունէութեան Թէ ոչ: Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը ջանաց ապացուցանել, Թէ չարիք ծնած է ատկէ, եւ ի հաստատումն բերաւ կարդ մը իրողութիւններ: Արդ, ես պիտի ապացուցանեմ անմիջապէս, որ բոլորովին միամիտ կողմանի լուսաբանութիւն մը տրուեցաւ այդ փաստերուն: Էդուարդը(15) ծանօթ էր մեզ մօտ 10 տարիներէ ի վեր, իբրեւ գործիչ Գոլսի եւ Իզմիրի: Երբ իմացանք, Թէ Ֆիլիպպէ կը գտնուի ան, անգործ վիճակի մէջ, խորհեցանք առաջարկել անոր, որ անցնի Լեռնավայրի չրջանը, ուրկէ հեռացած էին Գատասխանատու Մարմիններու անդամները եւ ուր .....(5) մինակ եւ յուսահատ դրութեան մը մէջ կը գտնուի: Մենք բընաւ տեղեկութիւն չունէինք, որ էդուարդը ամբաստանութեան տակ կը գտնուի. մեր փափաքն էր քիչ չատ փորձառու գործիչները չթողնել, որ արտասահմանի մէջ դեգերեն. երեւոյթ մը, որ սովորական եղած էր վերջին տարիները. էդուարդը պատասխանեց մեղի, որ ինքը պատրաստ է անցնելու Լեռնավայր, Թէ մենք կը համաձայնենք իւր ծրագրին: Այդպիսի պատասխան չէինք ակնկալեր, ուստի անմիջապէս իմացուցինք ա-նոր, Թէ մենք սրեւէ ծրագիր չենք կրնար ընդունիլ կամ պաշտպանել Գատասխանատու Մարմնի ընդունած ծրագրէն զատ եւ Թէ ինք կը յօժարի երԹալ Լեռնավայր, իրեն կը մնայ համաձայնիլ Արեւմտեան Բիւրոյին և Գատասխանատու Մարմնին կամ անոր փոխարինող ուժէ մարմնի հետ: Այսպէս ալ վերջացաւ այդ խնդիրը: Սարհատի խնդիրը չատ աւելի պարզ է. այդ անձը Լեռնավայրի դործերուն մասնակցել է առաջ. մէկ երկու տարի բնակած էր Ամերիկայի մէջ եւ հոն քաղաքացի եղած: Անոր եւ Կ. Կոմիտէի մէջեւ որեւէ յարաբերութիւն չկար լինքնին. արդէն Սարհատի մեկնումը եղած էր առանց եւ մասամբ հակառակ Ամերիկայի Կ. Կոմիտէին. վերջինս պիտէր միայն, Թէ Սարհատ կը դործէը Լեռնավայրի չրջանին մէջ: Եւ ահա յանկարծ օր մը հեռագիր մը կը ստացուի անկէ, եգիպտոսէն, Թէ լինք վտանդուած է, ձերբակալութեան վիճակին մէջ, Թէ հիւպատոսը չ'ուղեր պաշտպանել իրեն: Ինչպէս ուրիշ պարագաներու մէջ ըրած էինք ամերիկեան քաղաքացի ընկերներու նկատմամբ, նոյնը պատրաստ էինք ընել նաեւ անոր համար, ցորչափ Սարհատ մեղ չայտնի էր իբրեւ դործին մասնակցող անձ մը: Մենք անմիջապէս դիմեցինք ամերիկեան կառավարութեան, փաստաբանի ձեռքով. մեղ խորհուրդ տրուեցաւ, որ անոր ճամբու ծախս տրուի եգիպտոսէն հանելու համար. այդպէս ալ իրնինք, 75 տոլար տրամադրելի ընելով: Ճիշդ այդ միջոցին է միայն, որ անուղղակի ազբիւրներէ կ'իմանայինք, որ Սարհատը հեռացած է Լեռնավայրի չրջանէն եւ Թէ դիւտուրութիւն կար դինք դատի ենթարկելու. Ամերիկայի Կ. Կոմիտէն անմիջապէս կարգադրեց դրամը եւս առնել եւ խզել իր յարաբերութիւնները Սարհատի հետ: Ինչպէս կը տեսնէք, Թէ՛ էդուարդի եւ Թէ Սարհատի մէջ այդ փակուած են, Ամերիկայի Կ. Կոմիտէի կողմէն, ճիշդ պատշաճ պահուն: Գամ հիմա Քղիի կնիքով եղած դրամի պահանջի խնդրին: Նորէն Թիւրիմացութիւն եւ բաւական մեծ: 1906ին էր կարծեմ, որ կարինէն նամակ մը ստացանք դրամի պահանջով: Խորհուրդի կոմիտէի կնիքով խնդրուած էր Ամերիկայի Կ. Կոմիտէէն՝ 200 ոսկի, զէնքի գնման համար, եւ այդ պատճառաբանութիւնը վաւերացուած էր բարձրերդի Կ. Կոմիտէի կնիքով: Այդ նամակին հետ, միաժամանակ, մեզ կը հաղորդուի նաեւ հասցէ մը այդ

պլսոմը ղրկելու համար։ Մեղ ծանօթ չէին երկու կնիքները ալ։ Մեր ուշադրութիւնը գրաւեց նաեւ այն պարագան, որ Խորաճորի կնիքին մէջ «Խորաճոր» բառը ձեռքով գրուած էր, նախկին ջնջուած անունի մը վրան։ Ամերիկայի Կ. Կոմիտէն այդ նամակը անմիջապէս ղրկեց Արեւմտեան Բիւրոյին, իմանալ, թէ գոյութիւն ունի՞ն այդպիսի մարմիններ։ Ամիսներ անցնելէ ետքը միայն մեզ պատասխանուեցաւ, թէ Արեւելեան Բիւրոն տեղեկութիւն չունի այդպիսի մարմիններու գոյութեան մասին։ Ահա իրողութիւնը։ Ինչո՞վ յանգաւոր ենք մենք, որ այդ կնիքները դործածուած են այդպիսի մարդկանց կողմէ, որոնք ծանօթ իսկ չեն Արեւելեան Բիւրոյին։ Մենք առանց հետեւանքի քողուցինք այդ նամակը եւ խնդիրը փակուեցաւ։ Այս դէպքը փայլուն ապացոյց մ'է մեր կորբևկո [ուղիղ, պարկեշտ] ըլլալուն։ Գալով Ընդհանուր Պատդամաւորական Ժողովի վերաբացման առթիւ Ամերիկայի կենտր. Կոմիտէի հանած չրջաբերականին՝ մենք կը պարմանք, որ Բիւրոն հակընդդէական կը նկատէ, կամ հրնչակեան բարքերու նման։ Պնդիրը բացայայտ է. Ընդհ. Ժողովի դումարումը չարունակ կը յետաձդուէր, այն ինչ գործերը անկերպարան վիճակի մը մատնուած էին, ոչ միայն Փոքր Ասիոյ մէջ, այլ նոյնիսկ Կիլիկիոյ մէջ եւ գործունէութեան միւս կէտերուն վրայ, բացառութեամբ միայն վասպուրականի չրջանին։ Կարնոյ Կ. Կոմիտէի մասին պատմած միջադէպս բաւական համոզիչ ապացոյց մ'է այդպիսի կարեւոր չրջանի մը նկատմամբ Բիւրոներու ցոյց տուած անհոդութեան կամ այդ չրջանի մէջ դործելու անկարողութեան։ Ամերիկայի Կ. Կոմիտէն 1904ին Սասունեան դէպքերէն, ինչպէս նաեւ մահափորձի վիժումէն ետք տարտամ վիճակի մէջ էր դործունէութեան նկատմամբ, տրուած լինելով մանաւանդ անոր գրեթէ կատարեալ անդիտութիւնը երկրի եւ արտաստհմանի դործերի մասին։ Այս պարագաներու տակ Ամերիկայի Կ. Կոմիտէն, իբրեւ իրաւասու մարմին մը, պարտաւոր էր հոդածու լինել Ընդհանուր Ժողովի դումարում ապահովելու։ Որքան Բիւրոն իրաւունք ունի հսկելու ատոր, նոյնքան նաեւ Կ. Կոմիտէները, իբրեւ պատասխանատու Դաշնակցութեան գործունէութեան կանոնաւոր ընթացքին։ Խօսք մը եւս վիճապ ղրկուած ընկերոջ մը մասին, որ իբրեւ թէ կ'երթար մահափորձի նոր ձեռնարկի մը համար։ Այդ ընկերը ինքլինքը դրաւ կազմակերպութեան տրամադրութեան տակ, յայտարարելով, որ ինքը դիւրութիւններ ունի հաւատափոխ լինելու, կատարելու տեռորական կամ լրտեսական պաչտօններ Վիչապի մէջ։ Ամերիկայի Կ. Կոմիտէն յանձնարարեց այդ ընկերոջը Արեւմտեան Բիւրոյին, խնդրելով, որ ծանօթացնէ ան Վիչապի Մարմնին, հարկ դատած կերպով անկէ օգտուելու համար։ Ամերիկայի Կ. Կոմիտէն պարզապէս օգտուեցաւ առիթէն, կազմակերպական ուժ մը տալու համար, քանի որ իրրեւ իրաւասու մարմին պարտական է տարեկան որոչ քանակով կռուող, կազմակերպող, ռազմագէտ եւն. ընկերներ պատրաստելու։ Եթէ կան կարծողներ, թէ այդ ընկերը ենթագրուած ձեռնհասութիւնը չունի, խնդիրը չի փոխուիր ատով։ Խօսքը ընկերներ դտնելու կամ հայթայթելու իրաւասութեան մասին է։ Եւ ես ապացուցի, որ անոր առաքումն ալ ինքնագլուխ չէ եղած, քանի որ Արեւմտեան Բիւրոյին գրուեցաւ, վիչապի Մարմնին յանձնարարելու համար ան։ Ինչպէս կը տեսնէ Ժողովը, իրաւազանցութիւն մը տեղի ունեցած չէ Ամերիկայի Կ. Կոմիտէի կողմէ. պատահած են անտեղութիւններ, որոնց պատճառը աւելի չուտ Արեւմլեան Բիւրոյի քով պէտք էր փնտռել։ Եւ արդարեւ, այդ ամէնը հետեւանք է այն բանին, որ Կ. Կոմիտէները անտեղեակ կը մնան, երբեմն նոյնիսկ, երկրորդական խնդիրներու մասին։ Ծանօթ է, թէ Ամերիկան ո'րքան չահադրդռուած է Լեռնավայրի չրջանի դործունէութեամբ, որը նկատի առնելով՝ 1898ի Ընդհանուր Ժողովը մասնաւոր որոչում մը իսկ անցուցած էր։ Արդ՝ մենք կ'րսենք, որ ոչ Սարհատի եւ ոչ ալ Էդուարդի դէպքերը կրնային պատահիլ, եթէ Արեւմտեան Բիւրոն բարի դտնուէր ժամանակին իմացնելու այդ երկուքի նկատմամբ եղած կարդադրութիւնները։ Նոյն անհոդութիւնը կը նկատուի, երբ երկու ուրիչներ՝ Շատիկեան եւ Ռահվեր, որոնք հեռացուած էին Լեռնավայրի չրջանէն, կու դան կը հաստատուին Ամերիկա, մտքեր պղտորելու, իսկ մեղ որեւէ լուր չի տրուիր անոնց նկատմամբ։ Գալով Խորաճորի խնդրին, Արեւելեան Բիւրոյի ներկայացուցիչը մէկ յանգանք մը դտաւ, թէ այդ վայրը կազմակերպելէ ետք, պէտք էր որ միացնէինք ան իւր չրջանին։ Հոդ ալ կը սխալին, մենք ոչ միայն մեր պործիչը յանձնարարեցինք Արեւմտեան Բիւրոյին, որ կրնար անոր հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել ու տեղեակ մնալ դործերուն, այլեւ Արեւմտեան միջոցով Արեւելեան Բիւրոյի ուշադրութիւնը հրաւիրեցինք կանխաւ հոն դտնուող ընկերներու վրայ, որոնց դոյութիւնն իսկ կ'անգիտանար Արեւելեանը, ինչպէս քիչ մը առաջ ցոյց տուի։ Արեւելեանը գանդատելու պատճառ մը չունի իրեն ուղղակի գրած չլինելու համար, քանի որ այդ մարմինը հարկ չտեսաւ մեզ տող մ'իսկ գրելու վերջին երկու տարուան չրջանին մէջ, թէեւ չրջաբերական ու նամակ ուղղած ենք անոր։ Եթէ մէկ դիտողութիւն մը կրնայ ըլլալ մեզ՝ հարիւր ոսկու նպաստն է, որ տուած ենք Խորաճորի Մարմնին, սակայն կը կարծեմ, որ չատ ալ մեծ դանցառութիւն մը չէ, եթէ Արեւմտեանը կրնայ հազարաւոր ֆրանքներ նուիրել այս ու այն օտար մարմիններու, առանց պատչաճ ստուգութեան, մենք 100 ոսկի նուիրելով Ժողովրդի դինման գործին ըստ էութեան, սխալ մը դործած չենք ըլլար։ Այդ դէնքերը այսօր ալ մեր տրամադրութեան տակն են եւ յետոյ մեր ուզած պահուն կրնանք այդ դումարը դանձել Խորաճորի ամերիկեան հայրենակիցներէն, որոնք իրենց յօժարութիւնը յայտնած են իրենց բնադաւառի դինման համար խոչոր նպաստ մը տալու։ Ատրպատականի պատդամաւորը ուղեց իմանալ, թէ ի՞նչ հիման վրայ երկու պատդամաւոր ղրկուած էին մեր չրջանէն։ «Նուազագոյն գահանջներու տրամադրութեան համաձայն, երբ Կ. Կոմիտէի դրչան մը չ'ուղեր երկուքի բաժնուիլ, կրնայ երկու ձայն ունենալ Ընդհանուր Ժողովին, եթէ տարեկան դէպքեր կարմակերպիչ ուժեր կրնայ տալ դործին։ Արդ, Ամերիկան ալ, թէեւ քանի մ'անդամ խնդիր եղած է, սակայն հակառակ եղած է բաժնուելու երկու չրջանի, պատճէուքէնէն օդտուած է այն հասկացողութեամբ, թէ նոյնը պիտի ընէին բոլոր այն Կ. Կոմիտէները, որոնք այդ նուազագոյն պահանջները կատարած էին։ Եթէ մենք իմանայինք, թէ միւս Կ. Կոմիտէները, որոնցմէ ոմանք այնքան արդիւնաւոր ու փայլուն դործունէութիւն մը ցոյց տուած են, չպիտի ուղէին օդտուիլ այդ արտօնութենէն — չատ բնական է, որ Ամերիկան ալ պիտի դադրչանար երկու պատդամաւոր ղրկելէ։ Ամէն պարադայի մէջ Բիւրոները կրնային կանխել մեղ, քանի որ մեր պատդամաւորները մօտ վեց ամիս առաջ մեկնեցան. հետեւաբար Կ. Կոմիտէն չօթութեամբ կրնար լսել այդ մասին որեւէ ընկերական դիտողութիւն ու ետ կանչել իր պատդամաւորներէն մէկը։ Միակ խնդիրը, որ կրնայ ընել հիմա, ատուդելն է, թէ Ամերիկան դոհացում տուա՞ծ է իրապէս «Նուազագոյն Պահանջներու» տրամադրութեան, թէ ոչ։

Վերջացնելով խօսքս, կը յայտարարեմ վերստին, թէ որեւէ անկարդապահ ընթացք մը, իրաւազանցութիւն մը ունեցած չէ Ամերիկայի Կ. Կոմիտէն։ Ու եթէ մինչեւ իսկ ունեցած ըլլար, Ժողովը նկատի առնելու էր այն մեծ արդիւնքը, որ տուած է Ամերիկայի Կ. Կոմիտէի եռանդուն դործունէութիւնը, որ հակառակ իր հեռաւորութեան եւ աննպաստ պայմաններուն, բաղդատաբար չատ աւելի դործ ըրած է քան կրնան ըրած ըլլալ ուրիչ մարմիններ։

Անդրանիկ.— Սկդրում միայն Բիւրոյի ներկայացուցչի ասածներն ի նկատի ունենալով, ես նկատեցի, որ Ամերիկայի մարմինը դիսցիպլինայից դուրս է եկել։ Բայց Վռամեանի բացատրութիւններից յետոյ ես իմ խօսքը ետ եմ վերցնում։

Մալումեան.— Ես այնդում եմ իմ ասածների վրայ։ Իմ յիչածները փաստեր են, արձանադրուած Բիւրոյի պաչտօնական դրագրութեան մէջ։ Վռամեանի բացատրութիւնները ոչինչ չհերքեցին։

Նախագահ.— Աւելի կը պարզուի երբ կը կարդացուի Արեւելեան Բիւրոյի տեղեկագիրը։

Հարցը փակւում է։

Նախագահը քարտուղարներից խնդրում է Թողնել Ժողովը, որպէսզի նրանց բացակայութեամբ քննուի նրանց խորհրդակցական ձայն տալու առաջարկը։

Շարունակութիւնը նոյն նիստէ։

Նախագահը Ժողովի հայեցողութեան է ենթարկում հրաւիրուած երեք քարտուղարներին խորհրդակցական ձայն տալու խնդիրը եւ առաջարկում է Ժողովականներին, որ քարտուղարները դուրս համարուեն խորհրդակցական ձայնով հրաւիրուելիք հինդ ընկերների ցանկից։

Ժողովը մոգերի կարճ փոխանակութիւնից յետոյ, ընդունում է առաջարկի վերջին մասը եւ որոչում է քննութեան ենթարկել հարցը ըստ էութեան։

Մուրատ.— Պէտք է քարտուղարներին խորհրդակցական ձայն տալ, որովհետեւ անարդար բան է նրանց ներկայութեամբ քննութեան ենթարկել այնքան կարեւոր խնդիրներ, առանց նրանց հնարաւորութիւն տալու արտայայտուելու։

Զելալեան.— Որպէսզի օրակարգը կազմող հերթական քարտուղարը ուշադրութիւնը չցրուէ՝ նրան չպէտք է ձայն տալ, իսկ միւսներին, իմ կարծիքով էլ պէտք է ձայն տալ։

Ռուստամ.— Թողնելով արձանադրութիւնների կանոնաւորութիւնը երեք քարտուղարների պատասխանատուութեանը, առաջարկում եմ երեքին էլ խորհրդակցական ձայն տալ։

Վռամեան եւ Ստեփանեան միանում են նոյն կարծիքին։

Սափօ.— Եթէ արձանադրողը կարծիքների փոխանակութեան մէջ անմիջական մասնակցութիւն ունենայ, նա չէ կարող բաւարար ճշդութեամբ առաջ տանել արձանագրութիւնը. հետեւաբար լաւ կը լինի արձանագրող ընկերոջը ազատ պահել վիճաբանութիւններին խառնուելուց։

Շահխաթունեան, Մաշուր.— Եթէ մենք նրանց բարեհաճութեան ենք Թողնում արձանագրութիւնները վարելը՝ միանգամայն աւելորդ է, որեւէ առհմանափակում անելը։

Ժողովը միաձայնութեամբ որոչեց քարտուղարներին տալ խորհրդակցական ձայնի իրաւունք։

Քննութեան դրուեցին մի քանի ընթացիկ հարցեր։

Նախագահ.— Ի նկատի ունենալով, որ ձայնի իրաւունքով հրաւիրուած ընկ. Իւսուֆեանը անկարող է դալ Ժողովի, ինչպէս յայտնում են կովկասից եկած ընկերները, դիւանի կողմից առաջարկում եմ Իւսուֆեանի փոխարէն վճռական ձայնի իրաւունք տալ ընկ. Տաճատին, որին պահանջում է քոմ հերթին այդ իրաւունքը։

Ժողովը միաձայն որոչեց տալ ընկ. Տաճատին վճռական ձայնի իրաւունք։

Նախագահը Ժողովի հայեցողութեան է դնում ընկ. Շահխաթունեանի եւ Բարեդեանի հետեւեալ առաջարկը.

«Աչքի առաջ ունենալով, որ Ընդհանուր Ժողովի համար յատկացրած մի ամբո ժամանակից բաւական [մասը] անցել է, այն ինչ Ժողովի դլխաւոր աչխատանքները դեռ եւս կատարուած չեն, առաջարկում ենք ամէն մի մնացած հարցին յատկացնել որոչ ժամանակ, համաձայն նրանց կարեւորութեան»։

Ժողովը որոչեց առաջարկել յիչեալ երկու ընկերներին, մի մանրամասն յատկագիծ կազմել պատդամաւորները պատրաստելու համար եւ ներկայացնել դիւանին։

Նախագահ.— *Ժողովի քննութեանն եմ ենթարկում ընկ. Քոստոմի մի առաջարկը, որ հետեւեալն է.*

«Ընկ. Սեպուհը իրեն վիրաւորուած համարելով այն հանգամանքից՝ որ ընկ. Շահխաթունեանը Ժողովի ժամանակ ասել է, թէ Ընդհանուր Ժողովում կան մարդիկ, որոնք դաշնակցական չեն, չի գալիս Ժողովի: Առաջարկւում է հարթել այս միջադէպը»:

Շահխաթունեան.— *Եթէ վիրաւորանքը վերաբերում էր ամբողջ Ժողովին, ապա ուրեմն ընկ. Սեպուհը հիմք չունէր առանձնապէս ինքը հետանալու Ժողովից: Ես ոչ ոքի վիրաւորելու ցանկութիւն չեմ ունեցել. ինչ վերաբերում է այն հարցին, թէ այստեղ կան ոչ դաշնակցականներ, դա ես ասել եմ, ինչպէս եւ նկատում ընկ. Քոստոմը, զուտ պայմանական մտքով: Ես դեռ մի քանի օր առաջ ասիթ ունեցայ նկատելու, որ եթէ իմ եւ մի շարք դաշնակցական անհատների, մի որոշ նոր հոսանքին պատկանելը այստեղ, մի քանի պատգամաւորների կողմից համարւում է հիմք՝ համարելու մեզ ոչ իսկական դաշնակցականներ, ինչ որ արտայայտուեց ընկերներից մի քանիսի ճառերի մէջ, ես էլ կարող եմ բերել նոյնպէս փաստեր, որոնք ցոյց կը տան, թէ այստեղ կան մարդիկ, որ նոյնքան հետաւորութեան վրայ են գտնւում Դաշնակցութեան ծրագրից, որքան եւ մենք: Բայց ես համարում եմ դաշնակցական թէ՛ մեզ եւ թէ մեր ընկերներին, այն հասարակ պատճառով, որ ես Դաշնակցութեան վրայ այնպէս չեմ նայում ինչպէս պէտք է նայել մի որոշ գոյն ունեցող կուսակցութեան վրայ. դաշնակցական են բոլոր նրանք, որոնք իրենց յայտարարում են դաշնակցական»:*

Ժողովը լսելով Շահխաթունեանի բացատրութիւնը, ընդունեց ընկ. Վռամեանի հետեւեալ բանաձեւը.

«Ժողովը լսելով ընկ. Շահխաթունեանի բացատրութիւնները, թէ ինք երբեք մտադրութիւն ունեցած չէ վիրաւորելու Ժողովականներից ոեւէ մէկը եւ թէ ինք երբեք չի տարակուսեր ոեւէ Ժողովականի դաշնակցական լինելուն մասին, կը գոհանայ այդ բացատրութեամբ, կ'որոշէ հաղորդել այդ մասին ընկ. Սեպուհին եւ կ'անցնի իր օրակարգին»:

Նիստը փակուեց ժամը 1ին:

25ՐԴ ՆԻՍՏ (8 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:

Բացակայ է Սեպուհ:

Ժողովի սկզբում խօսք է առնում Վասպուրականի պատգամաւոր Արամը եւ յայտարարում, որ ինքը Ամերիկայի պատգամաւորների հետ մասնաւոր խորհրդակցութիւններ եւ բացատրութիւններ ունեցել է. իրենք Ընդհանուր Ժողովում տեղի ունեցած վէճի առիթով եկել են հետեւեալ համաձայնութեան, Վասպուրականի ց. կոմիտէի վերաբերմամբ: Ամերիկայի ընկերները լսելով արտասահմանի բացատրութիւնները եւ ի նկատի ունենալով, որ 1904 թուից է վեր Վասպուրական են մտել եւ գործել ընկերներ՝ Իչխան, Կոմս, Վարդան, Տիգրան, Արամ, Սարգիս, Ռուբէն եւ Մալխաս՝ իրենց վստահութեան քուէն են տալիս 1904 թուից այս կողմ եղած մարմնին. նրանց անվստահութիւնը զուտ վերաբերում է անհատ ընկերներին:

Նախագահը խօսքը տալիս է Ծուցկանի ներկայացուցիչ Սաֆոյին, որ կարդայ իւր տեղեկագիրը Ծուցկան Մարմնի գործունէութեան մասին:

Սաֆօ.— *Նախքան տեղեկագրի ընթերցումն սկսելը, թոյլ եմ թոյլ տուած մի քանի խօսք ասել: Ես գտնում եմ այս Ժողովի մէջ իմ գրութիւնը չատ բացառիկ. Ժողովականներից մի մասը սկզբից եւեթ որոշ սրամտութեան է ենթ եւ ես նկատում եմ մի որոշ սրամտութիւն դէպի Ծուցկան Մարմինը, մանաւանդ դէպ ինձ. այդ բանը նկատելի էր առաջին իսկ օրուանից: Թէ ինչո՞ւ է այդպէս, այդ մասին ես չեմ խօսում. անշուշտ որոշ ձեռքեր, որոշ ուղղութեամբ լուսաբանել են գործը:*

Զարմանալի բաղդատում է խօսելու այդ ձեւի դէմ եւ կարծում է, որ նախագահը չպիտի թոյլ տայ, որ այդպիսի խօսքեր արտասանուեն Ժողովում:

Նախագահը դժուում է, որ ճառախօսը այնպիսի բան չասեց, որի համար ինքն իրաւունք համարէր արդիլել նրան:

Սաֆօ (*չարունակելով իւր խօսքերը*).— *Այսօր ճաչից առաջ մի կննդանի դէպք տեղի ունեցաւ, որ այնքան զզացրեց ինձ, որ ես ուզում եմ յիշեցնել: Երբ Անդրանիկը իւր արած մեզադրանքների դիմաց բացատրութիւններ լսեց եւ նկատեց, որ ինքը սխալուած է, նա հրապարակով յայտնեց, որ յետ է առնում իւր խօսքը. դա մի քաղաքացիական պարտականութիւն էր, որ նա կատարեց: Ես յոյս ունեմ, որ Ժողովը պիտի պարտաւորւի իւր վերաբերմունքը փոխել իմ տեղեկագիրը լսելուց յետոյ, եթէ ինչը այնքան խորը չէ թափանցել, որ արդիլէ այդ անելու:*

Ապա նա սկսում է կարդալ իւր տեղեկագիրը, որ տեւում է մինչեւ նիստի վերջը: Ժամը 7ին նիստը փակւում է եւ տեղեկագրի վերաբերեալ հարցերը մնում են յաջորդ նիստին:

26ՐԴ ՆԻՍՏ (9 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Բացակայ են՝ Իչխան, Թոփչեան, Արամ, Մտեփանեան, Սեպուհ, Աւ. Խաչահկեան:

Շարունակութիւն եւ վերջ Ծուցկան Մարմնի տեղեկագրի (16):

Սաֆօ.— (*Առարկելով Անդրանիկին*) *Զարհւի վերկայութեամբ կտրքը կանգնել է ոչ պէտք եղած տեղում: Այս հանգամանքն էլ ուրեմն, եթէ միայն այդ այդպէս է եղել, երկրորդ պատճառն է մեր անյաջողութեան: Բայց ես չեմ կարծում, որ մեր կտրքը մեր նշանակած տեղը կանգնած չլինի. Ռուբինեան ոչ մի դէպքում չէր համաձայնի:*

Նախագահը քննութեան համար տեղեկագիրը բաժանում է հետեւեալ կէտերի.

1. *Ծուցկան Մարմնի կազմին վերաբերեալ խընդիրներ:*
2. *Դէպքեր իւր բոլոր մանրամասնութիւններով:*
3. *Մրագիրն ու նրա գործադրութիւնը:*
4. *Թուրք երեխայի հարցը (Իսահակեանի առաջարկը):*
5. *Դէպքի անյաջողութեան պատճառները (ա. անդամների ցոյց տուած [?] վերաբերմամբ եւ բ. պատգամները):*

Զաւրեան.— *Հարկաւոր է գիտենալ, թէ ընկ. Սաֆոյի ներկայացրած տեղեկագիրը կազմուած է դոկումենտների՞ [փաստաթուղթերու] հիման վրայ, թէ միայն յիշողութիւնների վրայ: Անկասկած դոկումենտները պէտք է լինեն եւ ես կարեւոր եմ գտնում, որ այդ դոկումենտները դրուեն այս ժողովի առաջ:*

Արամ.— *Հետաքրքիր է իմանալ նախ, թէ տեղեկագիրը Ծուցկան Մարմնի բոլոր անդամների կողմի՞ց է. երկրորդ՝ ցոյցի բոպէին քանի՞ մարդ կար դործի վայրում եւ երրորդ՝ ինչո՞ւ ընկերներից մի քանիսը, որոնք յանձնառու էին եղել գործին մասնակցելու, դուրս մնացին գործէն:*

Սաֆօ.— *Սկզբից հենց ուզում են մեզանից իմանալ, թէ ի՞նչ աղբիւրներից է կազմուած այս տեղեկագիրը. անտեղի ցանկութիւն է. պէտք է քննել այն ինչ որ այստեղ ներկայացուում է. երբ կը դտնէք, որ կարդացուած տեղեկագիրը չէ համապատասխանում իրականութեանը, այն ժամանակ միայն բացատրութիւն պահանջեցէք աղբիւրների վերաբերմամբ եւ հարկ եղած դէպքում կարող էք դատի ենթարկել: Իմ կարդացած տեղեկագիրը ներկ ստորագրութիւն է կրում՝ Թորգոմ, Քրիս եւ Սաֆօ: Պէտք է յայտնել, որ Ռուբինեան հակառակ է եղել իմ այստեղ գալուն:*

Թոփչեան.— *Թող ընկ. Սաֆոն սխալ չհասկանայ մեզ: Մենք դոկումենտներն ենք ուզում, քանի որ դէպքն ինքնըստինքեան խոչոր դէպք է. մենք բոլորովին միտք չունենք նրան վիրաւորելու: Ընդհակառակն, գործի հետաքրքրութեան տեսակէտից դոկումենտները կարեւոր պէտք է համարել: Ես առաջարկում եմ յանձնաժողով նշանակել, տեղեկագիրն ու դոկումենտները քննելու:*

Միհրասեան.— *Մենք պէտք է վիճաբանենք մեղի ներկայացուած տեղեկագրի հիման վրայ: Այս տեղեկագիրը կանխապէս կատարեալների ենթարկելը, Ժողովի ոգուն հակառակ պէտք է համարել:*

Նախագահ.— *Եթէ ընկ. Թոփչեանի առաջարկը Ժողովի կողմից ընդունուի իբրեւ անվստահութիւն դէպի ընկ. Սաֆոյի ներկայացրած տեղեկագիրը, այս դէպքում ես առաջարկում եմ Թոփչեանին, յետ վերցնել իւր առաջարկը:*

Շահխաթունեան.— *Ոչ, չպէտք է ետ վերցնել:*

Սաֆօ.— *Մի այդպիսի առաջարկ, ոչ միայն վիրաւորական, այլ աւելի քան վիրաւորական է: Ինչո՞ւ իմ վերաբերմամբ բացատրութիւն էք անում:*

Թոփչեան.— *Ես իմ առաջարկը յետ չեմ վերցնի, սա մի սովորական երեւոյթ է պարլամենտական [խորհրդարանական] կեանքում: Կրկնում եմ, ես բոլորովին չեմ ուզում այդպիսով վիրաւորել ընկ. Սաֆոյին:*

Շահխաթունեան.— *Այստեղ բացատրութեան մասին խօսք լինել չէ կարող. բոլորս էլ դոկումենտներ ենք ունեցել:*

Իսահակեան.— *կրկնում է նոյնը:*

Սեպուհ.— *Միանում եմ Թոփչեանի առաջարկին:*

Զարդարեան.— *Սկզբունքով հակառակ չեմ, որ դոկումենտները ներկայացուեն. բայց Քող քննուի ինքը տեղեկագիրը, եւ եթէ մութ պարագաներ մնան, այն ժամանակ միայն մի յանձնաժողով նշանակուի, կարեւոր պարզաբանութիւններ անելու համար:*

Ժողովը որոշում է առայժմ կանգ առնել տեղեկագրի վրայ, քննելով յաջորդաբար նրա վերոյիշեալ կէտերը:

1. Ծուցկան Մարմնի կազմին վերաբերեալ խընդիր.

Մուրատ.— *Ինչո՞ւ է ընկ. Ծուխնակը իւր ընտանեքով հրաժարուել գործին մասնակցելուց: Ինչո՞ւ Վասպրականում Մարմիններէ [անձերից ?] մի քանիսը չեն ուզել երկար մնալ:*

Անդրանիկ.— *Ընդհանուր Ժողովի որոշած մարդկանցից, որո՞նք են հրաժարուել եւ ինչո՞ւ:*

Սաֆօ.— *Հրաժարուել են, որովհետեւ ձեռնարկութիւնը չատ ծանր էր. ուրիշ բան է նստել Ժողովում ու խօսել եւ ուրիշ բան՝ գործ կատարել: Իսկ որ երկար գնացողների քիւը չատ քիչ է, այս երեւոյթն այնքան հասկանալի է, որ կարիք չեմ գտնում այդ մասին խօսելու: Իրողութիւն է, որ իւրաքանչիւր Ընդհ. Ժողովում հարց է դրուել՝ պարտաւորեցնել պատգամաւորներին, որպէսզի նրանք ենթարկուեն Ժողովի որոշումներին, այս կամ այն գործը կատարելու, թողնելով որ Ժողովն ինքը որոշէ, թէ ա՛ս կամ նա որքան ձեռնհաս է այսինչ գործի: Բայց հարցը միշտ էլ տապալուել է մի քանի ձայնով, եւ ես կարծում եմ, որ նոյնը կը պատահի եւ այս Ժողովին: Ծուխնակը հրաժարուեց, որովհետեւ նրա կինը հիւանդ էր, թէեւ ինքը համաձայն էր մնալ:*

Արամ.— *Այս բացատրութիւնները կապ չունեն Ծուցկան Մարմնի հետ:*

Նախագահ.— *փակում է առաջին կէտին վերաբերեալ վիճաբանութիւնները:*

2.— Դէպքի իւր բոլոր մանրամասնութիւններով:

Մուրատ.— *Ես ուզում եմ իմանալ, թէ ինչո՞ւ Լեւոն Գիւլումեանը զանազան դժուարութիւններ ցանկացաւ յարուցանել՝ ձեռնարկութիւնն ի կատար չածելու նպատակով:*

Սաֆօ.— *Լեւոնը գոլով անցնելիս, նաեւ վրայ մի ամբողջ օր լրտեսներով չրջապատուած դպաց իրեն. այդպիսի պարագաներում գործն անկարելի համարելով, նա առաջարկեց Թողնել Ծովը եւ գոլիս մտնել ցամաքով՝ Մակեդոնիայով: Մենք դէմ գնացինք նրա այդ ծրագրին եւ իրան էլ հետացրինք. վերջը ասկայն նրան առաջարկեցինք Ոսկեհանք գնալ, որովհետեւ նա անկեղծօրէն ներողութիւն խնդրեց այն մասին, որ ինքը չէ ուզել ենթարկուել ընդհանուր որոշմանը:*

Զարդարեան.— *Երբ Գիւլումեանին կազմակերպութեան մէջից հեռացրիք, այդ դէպքում ինչո՞ւ Ոսկեհանք ուղարկուեց:*

Սաֆօ.— *Որովհետեւ ուզում էր ինչպէս էլ լինի «մեռնել որեւէ գործի համար», ինչպէս դրել էր իւր նամակում, եւ մենք նրան ուղարկեցինք Ոսկեհանք: Գոլսում Թողնել նրան չէր կարելի, քանի որ նա բացառիկ իրաւունքներ էր պահանջում իրեն համար, չէր ուզում գործել Քրիստափորի հետ միասին:*

Ժողովականների կողմից մի չարք հարցեր են առաջարկուում.

Ի՞նչպէս որոշուեց տեղի հեռաւորութիւնն ու մեքենայի պայթման ժամանակը: Ի՞նչպէս է պատրաստուած եղել սնուցիկը: Ո՞ւր ծակ ունէր նա, ի՞նչպէս է մելինիտը լցուել նրա մէջ: Ո՞վ էր արգելք լինում գործի չարունակութեանը: Ե՞րբ է գնալու խնդրի վերաբերմամբ քուէարկութիւն եղել. վճռուե՞լ էր արդեօք, որ դնացողը պատրաստ պէտք է լինէր օդը ցնդելու դոհերի հետ: Միջոցներ ձեռք առնուա՞ծ էին որպէսզի պայթման րոպէին դազանը սնուցիկի միջի ամբողջ նիւթը: Այն վաճառականը, որ փորձերի ժամանակ լաւ տեսակի նիւթ է տալիս եղել, ի՞նչ չափով վստահելի էր: Այդ նիւթը որ ներկայացուած է այստեղ, դրանով փորձեր արուե՞լ են. այդ ճիշդ այն նիւթի՞ն է, որ գործածուել է մեքենայի համար: Քանի՞ քայլ էր կառքից մինչեւ մկրիչը, քանի՞ քայլիցն են նկատւում Սուլքանի կառքի ձիերի ոլորները: Կառքի դիմացը գտնուած պատի բարձրութիւնը ո՞րքան է, որ գտնւում է 10 մետր հեռաւորութեան վրայ: Ո՞րչափ էր սնուցկի երկարութիւնը, լայնութիւնը, խորութիւնը, պատերի հաստութիւնը, կրակ տուած տեղը, կենտրոնն ու եզերքը, սնուցկի ծանրութիւնը առանց մելինիտի, նրա կորութիւնը:

Սափօ պատասխանում է հարցերին:

Զաւրեան.— Զորս հոգու մէջից ո՞վ էր ղեկավար հանդիսանում, իրրեւ գործին աւելի տեղեակ:

Սափօ.— Ոչ մէկը մեզանից մասնագէտ չէր. մենք չարունակ փորձեր ենք արել, սոսկ իրրեւ սիրողներ:

Զաւրեան.— Ինդրում եմ արձանագրել ընկ. Սաֆոյի վերջին խօսքերը:

Սափօ.— Այո, Թող մանի արձանագրութեան մէջ, որ մենք մասնագէտներ չենք եղած. առնուազն եւեկտրականութեան մէջ սիրողներ էինք:

Զաւրեան.— Ո՞րտեղից իմացաք, թէ քանի կապսիւլ էր հարկաւոր:

Սափօ.— Մենք նախ զանազան դրքերից էինք օգտւում. ինչպէս օրինակ «մինինոյէ ծէլօ» [? ռուս.], ապա խորհուրդ ենք առել քիմիկոս Ռուբանովիչից՝ Պարիզում:

Զաւրեան.— Ասացէք խնդրեմ, ի՞նչպէս իմացաք, թէ պայթման համար ի՞նչ քանակութեամբ բռնկիչ նիւթիկ է հարկաւոր:

Սափօ.— Ռուբանովիչի ասելով՝ 350 գրամը բաւական էր լինելու, մենք էլ վերցրինք աւելի, մօտ 1200 գրամ:

Զաւրեան.— Հարցրե՞լ էք դուք որեւէ մասնագէտից, թէ կարելի՞ էր արդեօք այդքան նիւթիկ գործածել:

Սափօ.— Ոչ, աւելորդ գտանք հարցնելը. բայց կարծում էինք, թէ որքան աւելի նիւթիկ գործածէինք, այնքան աւելի լաւ կը լինէր:

Անդրանիկ.— Ինչո՞ւ բոլոր կապսիւլները նոյնի կենտրոնում էին տեղաւորել, բայց ոչ զանազան կէտերում:

Սափօ.— Որովհետեւ գիտութեան մէջ յայտնի է, որ կապսիւլները կենտրոնում պէտք է դարսուեն: Սա աքսիոմա է:

Տրւում են նոր հարցեր. Ծուցակների ներկայացուցիչը նամում է, որ բացատրութիւնները մասնագիտական բնաւորութիւն են կրում:

Ժամը 1ը լինելով, նախագահը առաջարկում է կամ չարունակել վիճաբանութիւնները յաջորդ ժողովում, կամ խնդիրը Թողնել մի առանձին մասնաժողովի:

Անդրանիկ.— *Սաֆոն մասնագէտ չէ. բայց մասնաժողովը այնքան իրազեկ կը լինի՞, որ կարողանայ [հասկանալ] Սաֆոյի ու ընկերների ասելիքը, ո՛չ:*

Ռոստոմ.— *Բայց մասնաժողովը ոչ թէ քննադատելու է, այլ լինելու է մէյն մէկից՝ վիճաբանութիւններին աւելի հեշտութիւն տալու:*

Սափօ.— Գոհում է, որ հարցերի լուսաբանումը մասնաժողովին Թողնելը հակապրոլետարական քայլ է:

Ժողովը որոշում է 17 ձայնով մասնաժողով նշանակել:

Ժողովը փակւում է ժամը 1ին:

27ՐԴ ՆԻՍՏ (10 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Բացակայում են՝ Վահագն, Զարդարեան:

Ժողովի գլխաւոր նիւթն են լինելու Ծուցական Մարմնին ուղղուելիք հարցումները եւ տեղեկագրի բացատրութիւնները:

Նախագահը Ժողովը բանալով, դիմում է ժողովականներին եւ հարցնում նրանց կարծիքը այն մասին, թէ հարցումները այստեղ հրապարակո՞վ լինեն, թէ յանձնուեն յանձնաժողովին, որ բոլոր բացատրութիւնները ստանալով զեկուցանէ ժողովին:

Սափօ յարմար է դատում, որ հարցումները լինեն բոլորի ներկայութեամբ, որպէսզի պատասխաններն էլ բոլորը լսեն եւ քիւրիմացութիւններ ու մթութիւններ չմնան ոչ ոքի համար:

Ռոստոմ կարծում է, որ այս բանին կարիք չկայ, քանի որ դա միայն կ'երկարացնի գործը. յանձնաժողովը բոլոր հարցումները կոպրտորելով եւ դրանց պատասխանները ստանալով կը դնէ ժողովի առաջ. իսկ ժողովը իրաւունք ունի նորից քննելու ամէն մի կէտը:

Նախագահը առաջարկում է ընդհանուր բնաւորութեամբ հարցումները հրապարակով տալ:

Վռամեան.— *Անյաջողութիւնը ո՞րքան կապ ունի մեր լինիերների մասնագիտական (տեխնիկական) անգիտութեան հետ, Թէ՞ դա ընդհանուր կազմակերպութեան պակասութիւնն էր:*

Ստեփանեան.— *Արդեօք Քրիստափորի մահը չազդե՞ց այդ ձեռնարկի անյաջողութեան վրայ. ի՞նչպէս եղաւ, որ նրան չփոխարինեցին մի նոյնպիսի ուժով:*

Ռոստոմ.— *Մինչեւ հիմա տրուած հարցերը վերաբերում են խնդրի տեխնիկական կողմին, լրացնելու համար հարկաւոր է այդ չրջանից մի քիչ դուրս գալ. Ստեփանեանը մասամբ արդէն դուրս եկաւ այդ չրջանից իր հարցով: Օրինակ՝ ծանօթանալ Ծուցական Մարմնի արձանագրութիւնների, որը կարծում եմ մեծ լոյս կը սփռէ գործի վրայ:*

Սեպուհ.— *Եթէ մեր ընտրած մասնաժողովը ձեռնհաս չէ ինքը քննելու նիւթը եւ որոշելու սնուցկի կազմուածքի դերը այդ գործում, Թող հրաւիրէ մասնագէտներ եւ քննութիւնը յանձնէ նրանց:*

Սափօ.— *Որովհետեւ երէկ խօսելու ժամանակ մի-նը բացատրեցինք, Թէ ինչպէ՞ս իմանան, որ իմ ներկայացրած նիւթը իսկականն է, ուստի այդ կասկածը փարատելու համար, առաջարկում եմ դրել վճռնա, ուր այդ նիւթերը մեծ քանակութեամբ կան, եւ բերել տալ այստեղ ու յանձնել մասնագէտների քննութեան:*

Ռոստոմ.— *Խնդրում եմ, որ Ընդհանուր ժողովը ապացուցուած համարէ, որ մեր ունեցած նիւթը մելինիտ չէր. Ես այդ մասին կարող եմ տեղեկութիւն տալ. Ես այս ասում եմ գործը հեշտացնելու համար:*

Սափօ.— *Ես պահանջում եմ կամ անպատճառ նիւթը բերել տալ եւ վերլուծութեան ենթարկել կամ արձանագրութեան մէջ անցընել, որ նիւթը կեղծուած է եղել:*

Ռոստոմ.— *Թող մտնի արձանագրութեան մէջ:*

Իսահակեան.— *Այն ընկերները, որոնց յանձնուած էր այդ գործի կատարումը, ո՞րքան վստահելի էին յեղափոխական տեսակէտից. Թող յանձնաժողովը մեղ համար պարզէ այդ բանը:*

Չէյլաեան.— *Ինդրում եմ աւելցնել, որ նիւթը ստացուելուց եւ քննելուց յետոյ, պատասխանատուութեան կանչուեն նրա պակասութեան մէջ մեղաւորները:*

Միհասեան.— *Ռուբինայի ներկայութիւնը չատ կարեւոր խնդիր է այդ գործում. ո՞վ է պատճառը մի այդպիսի ղշային օրիորդի մի այդպիսի պատասխանատու գործի մէջ մտցնելուց. նա մի օրիորդ էր, որ իւր կրիզով (նոպա, տապնապ) ամէն մի րոպէ կարող էր գործը վտանգել:*

Սեպուհ.— *Արդեօք Ռուբինայի եւ Զարեհի կառքից հեռանալը չնպաստե՞ց գործի անյաջողութեանը:*

Զաւրեան.— *Որովհետեւ զուգահեռաբար քննութիւն չունենք իսկական մելինիտի եւ մեր ունեցածի, աւելի լաւ կը լինէր, որ նիւթը ուղարկուէր մի այլ տեղ, ուր մասնագէտներ կան եւ քննել տրուէր: Ես պնդում եմ, որ անպատճառ հարկաւոր է ուղարկել, առանց սպասելու յանձնաժողովի որոշմանը, որպէսզի ապագայում իրաւունք չունենան ասելու, որ եթէ նիւթը քննուէր, դուցէ այլ բաներ պարզուէին:*

Մուրատ.— *Այս նիւթի մասին ծանօթութիւններ ունեցող եթէ մի քանի մարդ կայ, դրանից մէկը Ռոստոմն է: Եթէ նա հաստատում է նիւթի կեղծ լինելը, դրանով կարող ենք բաւականանալ:*

Սափօ.— Նիւթի կեղծուած լինելը միակ բացատրութիւնն է, որովհետեւ մենք այնքան աչքատած էինք այդ գործի համար եւ չահագրգռուած գործի յաջողութեամբ, որ անպատճառ կ'աչքատէինք եղած նիւթերից ամենաուժեղը դնել,— մանաւանդ որ դրա համար մեղ դրամ չէր պակասում:

Անդրանիկ.— Հարցը պարզելու համար ես հարցընում եմ, Թէ ի՞նչ էր այդ փորձի նպատակը.— մզկիթը փլցնել եւ նրա փլատակների տակ նրան սպանե՞լ, Թէ դուրս գալու ժամանակ օդի հարուածով մեռցնել: Եթէ ձիերի գլուխները երեւալիս պիտի պայթիւնը յառաջ գար, ապա ուրեմն պարզ է, որ անյաջողութիւնը նրանից է եղել, որ սնուցկի պատերու բարակութիւնը եւ բաղմաթիւ կապսիւլները չէն Թոյլ տուել, որ գազը ամփոփուի. իսկ իսկական անյաջողութիւններից մինն էլ երկու պատերի ներկայութիւնն էր, որոնք արգիլել են որ ուժը այն կողմը տարածուի:

Նախագահը դադարեցնում է հարցումները եւ մի անգամ էլ թւում է բոլոր առաջարկուած հարցերը եւ առաջարկում է գործը յանձնել մի մասնաժողովի քննութեան, աւելացնելով որ ով ցանկանում է Թող իւր հարցումները գրաւոր կերպով յանձնաժողովին ներկայացնէ:

Քուէարկութեան դրուելով 14 ձայնով որոշւում է յանձնաժողով ընտրել ոչ Թէ երեք այլ հինգ հոգուց:

Սափօ.— Ես վստահ եմ, որ եթէ այստեղ կան մարդիկ որոնք անձնական վատ յարաբերութիւններ ունեն Ծուցական Մարմնի անդամների հետ, իրենց հեռու կը պահեն այդ յանձնաժողովի մէջ մտնելուց:

Զաւրեան.— Սա դատաստանական յանձնաժողով չէ, որ մարդկանց յարաբերութիւնները նկատի առնենք, այլ մի քննիչ յանձնաժողով. Ընդհակառակն, գործի չափը պահանջում է, որ յանձնաժողովի մէջ մտնեն այնպիսիները, որոնք քննադատաբար են վերաբերւում դէպի Ծուցական Մարմինը, որպէսզի նպատակն իրագործուելու լաւ պարզաբանուելուն. ուստի այդպիսի առաջարկը ես աջակցում եմ կամ եմ:

Սափօ.— Ես ասացի, որ վստահ եմ, որ նրանք չեն մտնի այդ յանձնաժողովի մէջ, բայց ես հակառակ չեմ. Թող մտնեն, բայց ոչ իրրեւ քննիչ, այլ իրրեւ վկայ:

Ռոստոմ.— Եթէ Ծուցական Մարմնի ներկայացուցիչը կասկած ունի որոշ մարդկանց վրայ, Թող նրանց անունները ասյ. այդպիսի անորոշ ակնարկներ անել չէ կարելի:

Շահխաթունեան.— Այդպիսի պայման չէ կարելի ընդունել. գործի պարզաբանութեան համար անհրաժեշտ է, որ այնպիսի մարդիկ մտնեն յանձնաժողովի մէջ, որոնք ծանօթ են գործին, առանց ուշադրութիւն դարձնելու, Թէ նրանք ի՞նչ յարաբերութիւններ մէջ են Ծուցական Մարմնի անդամների հետ:

Նախագահը առաջարկում է քննիչների անունները տալ. յիշւում են անուններ, որոնց մի քանին հրաժարւում են. մնում են հետեւեալները՝ Թոփչեան, Վարդան, Վռամեան, Տաճատ, Սարգիս, Զաւրեան, Մուրատ, Մաշուր:

Սրանցից գազանի քուէարկութեամբ ընտրւում են՝ Թոփչեան, 19 ձայնով, Վռամեան 19 ձայնով, Վարդան 17 ձայնով, Մրամ 14 ձայնով. հինգերորդը ձայների պահանջուած Թուից պակաս ստացած լինելով, կրկնաքուէարկութեան, որի ժամանակ ընտրուեց հինգերորդ անդամ՝ Զաւրեան 15 ձայնով:

Ընտրութիւնից յետոյ նախագահը խօսքը տուաւ Վասպուրականի պատգամաւորին. ժամը 11ին սկսուեց վերջին տեղեկագրի ընթերցումը, որ տեւեց մինչեւ նիստի վերջը (17):

28ՐԴ ՆԻՍՏ (11 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան։

Ներկայ են 27 ժողովական։

Նախագահ։— Առաջարկում եմ Ոսկեհանքի ընկերների եւ ընկեր Լորիսի տեղեկագրի զեկուցումը թողնել մի ժամանակով, քանի որ հեղինակները անժամ ներկայ չեն։ կարդալ ժողովի առաջ անցուդարձնական է, չատ են երկար։ ժամանակը կ'որոշէ թէ ի՞նչ ձեւով այդ զեկուցագրերը ներկայացնեն ժողովին։ Առաջարկում եմ նոյնպէս, վաստուրականից յետոյ, անցնել նախ Ազգերպատակաի տեղեկագրին, ապա ուսանողական մարմիններուն եւ Արեւելեան Բիւրոյի տեղեկագրերին, քանի որ վերջինը պատրաստ չէ։

Զելալեան։— Նախքան Արեւելեան հրշանին դառնալը, հարկաւոր է վերջացնել Արեւմուտքի դործը։ չգիտէ է հարցի քննութիւնը ընդհատել։ այս տեսակէտից ես կարեւոր եմ դանում, որ ընդ։ Լորիսի տեղեկագիրը կարդացուի հենց այստեղ։

Ռոստոմ։— Ես էլ կարծում եմ, որ Լորիսի տեղեկագիրը լաւ կը լինի որ այստեղ կարդացուի։

Սափօ։— Ինձ թւում է, որ ընդ։ Զելալեանը իրաւացի նկատողութիւն արեց, թէ չգիտէ է ընդհատել մի չրջանի հարցերը, նախքան վերջնականապէս քննուին։ Տեղեկագիրը [հարկ է] կարդալ։ ժամանակ տնտեսելու տեսակէտը սխալ է։ քանի օր ենք դրել մեր արամադրութեան տակ, Քող 40 օր տեւեն նիստերը, միայն թէ բոլոր խնդիրները հիմնովին լուսաբանուեն։

Նախագահ։— Գիտէ է, կրկնում եմ, յանձնաժողովի յանձնել տեղեկագիրը, քանի որ դրանց հեղինակ–ընկերները այստեղ ներկայ չեն, որպէսզի հարկ եղած բացատրութիւնները տան։

Վահամեան։— Ես նոյնպէս առաջարկում եմ ժամանակ յանձնել, մանաւանդ որ Լորիսն ամրոստանում է, պահանջ կը լինի չատ հարցերի լուսաբանութեան։

Նախագահը քուէարկութեան է դնում հարցը. ա) տեղեկագրերի յանձնաժողովի յանձնումը ընդունում է 16 ձայնով. բ) տեղեկագրերի ժողովում ընթերցումը [տանում է] 9 ձայն։ Ընդրուում է մի յանձնաժողով երկու անդամից՝ Զարդարեան եւ Իսահակեան։

Նախագահը կարդում է Ոսկեհանքից սացուած մի հեռագիր, որով Ոսկեհանքն իւր ձայնը տալիս է ընդ։ Զարդարեանին. այս հեռագիրը պատասխանն է այն դիմումին, որ դիւանը արել էր Ոսկեհանքի Մարմնին այդ առթիւ, պատգամաւորի նոր ընտրութիւն կայացնելու։

Ստեփանեան։— Չմիանալով այդ պատասխանը՝ այնտեղ չընչանային ժողովի կողմ է դալիս, թէ 5–6 հոգու։

Նախագահ։— Մանդատները քննող յանձնաժողովը զեկուցում կը տայ այդ մասին. իսկ մինչ այդ մենք պէտք է հաւատանք հեռագրին։

Մաճուկ։— Ոսկեհանքի Պատասխանատու Մարմնի անդամ Աղբանիկի պատգամաւորութիւնը չընդունուեց, որովհետեւ նա երկու պաշտօնի մէջ է գտնուում. այս դէպքում չգիտէ է ընդունուի նաեւ Զարդարեանի երկրակի մանդատը։

Նախագահը այդ հարցը թողնում է յաջորդ նիստին։

Ժողովն անցնում է Վաստուրականի խնդրին։

Արամ խնդրում է կարդալ մի նամակ, որ սացել է Թիֆլիզից՝ Ընդհանուր ժողովի անունով, որ վերաբերում է Վասպուրականին (խնդիրը յայտնելով, կարդում է նամակը)։

Առաջարկում է կարդալ մի այլ նամակ՝ Վասպուրականի կազմակերպութեան գործունէութեան մասին։

Նախագահը դնում է, որ նամակների ընթերցումը անխոտ բան է։ Որոշւում է երկրորդ նամակը ամրոդովին չկարդալ ժողովի առաջ։

Թոփչեան, Վամամեան առաջարկում են, որ իրանք մանուր կերպով կարդան նամակը եւ համառօտ զեկուցում տան նրա բովանդակութեան մասին, եթէ ժողովը չանկանայ։

Առաջարկ է լինում թէ՝ նամակը եւ թէ վասպուրականին վերաբերող ուրիշ քղթեր՝ յանձնել մի յատուկ մանախմբի։

Ռոստոմ։— Նամակը քող կարդացուի, եւ ապա որոշում կայացուի այստեղ՝ որ առհասարակ մանուր նամակներ այլեւս չկարդացուեն ժողովում, այլ յանձնուեն դիւանին։

Թոփչեան, Վամամեան գոհում են, որ նամակը ամբաստանիչ լինելով վասպուրականի կ. կոմիտէի դէմ, պէտք է քողնուի Դատական Մարմնին։ Նամակը ստորագրել են 10 հոգի, մեծ մասը նախկին զինուորներ։

Նախագահ առաջարկում է մի նոր մարմին նշանակել այդ նամակը եւ առհասարակ այդպիսի մներ խնդիրներ քննելու եւ զեկուցանելու համար։

Ժողովը ընդունում է առաջարկը եւ մասնախումբի անդամներ ընտրւում են՝ Ճանճաս, Վահագն, Շահխաթունեան։

Վասպուրականի տեղեկագրի չարունակութիւնը։

Իսահակեան։— Ի՞նչպէս պէտք է հասկանալ ընկ. Արամի այն միտքը, թէ «պատասում յեղափոխական դործն աւելի բարեկեցիկ վիճակի մէջ է գտնուում չնորհիւ այն հանդամանքի, որ այնտեղ դինուորական դիկտատուրա չէ եղել»։

Ռոստոմ։— Ճանկալի է իմանալ, թէ տեղական տարրերն ի՞նչ չափով են չէզոքացուում։ Որքան դիտեմ՝ տնղական տարրերը տեղ չեն գտնում կազմակերպութեան մէջ։ Կորհուրդը որոշել էր չրջանը բաժանել երկու կ. կոմիտէների, որպէսզի այդպիսով առաջն առնուի միմիայն քաղաքում տեղի ունեցող ուժերի կենտրոնացման եւ ծանրութեան կենտրոնն անցնի նաեւ գաւառները։ Ցետոյ, ի՞նչն է ստիպում ձեզ՝ գատասխանատու Մարմնի իրաւասութեան սահմանները տարածել ե՛ւ հեռաւոր վայրերի վրայ։ Ապա, ո՞րքան կարեւորութիւն էք տալիս պրոֆեսիոնալ [արհեստակցական] միութիւններին, չէ՞ր կարելի, որ կուսակցութեան անունով չկազմուէին դրանք։ Ի՞նչ քնաւորութիւն են կրում այնտեղի աշակերտական միութիւնները իրենց դործադուլներով։

Տաճատ։— Ո՞ր մարմիններն են ընտրում եւ որո՞նք նշանակում։

Սեպուհ։— Փորձուած պինուորներին հեռացնում են կազմակերպութիւնից։ Ի՞նչ է պատճառը։

Զաւրեան։— Գիւղերում խմբեր կազմակերպելիս, ի՞նչ կարդի տարրեր են ընդունւում։ Ի՞նչ միջոցներ են ձեռք առնւում ժողովրդի տնտեսական կացութիւնը բարձրացնելու, վաչխառութեան ու կալուածատէրերի հետ կռուելուց պատ։

Արամ (*պատասխանում է հարցերին*)։— Տեղացիներին չէզոքացնելը մի նկատողութիւն է, որը աւելի քան վիրաւորական է մեզ համար։ Նախ՝ «տեղացին» եւ «ոչ–տեղացին» ասելով մենք չենք հասկանում «տաճկահայ» եւ «ռուսահայ»։ օրինակ՝ Վարդգէսը՝ թէեւ տաճկահայ, վանի համար ոչ–տեղացի էր։ Ապա հարց է դալիս, թէ ինչո՞ւ ենք չէզոքացնում տեղացիներին, արդեօք այստեղ մեր անձնական կապրիզնե՞րն [քմայքները] են դեր խաղում։ Մի՞թէ մենք այնքան անազնիւ ենք, որ մեր կապրիզները մեզ դեկավարէին։ Այսպիսի բան չէ կարող լինել։ Այլ է պատճառը. ռեակցիայի [տեղատուութեան] օրերին, ասպարէզի վրայ էին մղուել միայն այն մարդիկ, որոնք կուռորածից աղատ դուրս դալով, հեռու էին փախչում, սոսկում էին յեղափոխութիւնից։ դժուար էր դրանց մէջ աջակցող դտնել։ Վարդգէսը վան գալով, չկարողացաւ գտնել անձնուէր մէկին։ միակ մարդը նրա նախկին ընկերներից՝ ուսուցիչ, որի վրայ նա կարող էր որեւէ յոյս ունենալ, դա էլ հեռու մնաց Վարդգէսից։ Վարդգէսն անպայման կարիք ունէր տեղացի ուժերի, բայց չկային։ Այնուհետեւ երբ տեղացիներն սկսեցին կամաց կամաց մօտենալ դործին, դրանցից չատերն այդ քայլն անում էին փաստօրութիւնից դրդուած, ուզում էին փափուկ պաչտօններ ստանալ։ եւ մի՞թէ այդ պայմաններում դրանց կարելի էր դործ տալ։ Ուրեմն զրպարտութիւն է (եթէ Քոյլ կը տրուի ինձ այդ խօսքն ասելու) երբ մեզ մեղադրում են տեղացիներին չէզոքացնելու [յանցանքով]։ Ցետոյ, մենք չէինք դործ յանձնի այնպիսի անփորձ ուժերի, որոնք յեղափոխական անցեալ չեն ունեցել։ Միայն, ժամանակի ընթացքում, երբ նոր մարդիկ հրապարակ եկան, այդպիսիներին առաջ քաչեցինք, եւ այսօր Վանի կ. կոմիտէի անդամներից հինդը տաճկահայեր են, նմանապէս քաղաքի կոմիտէի չորս անդամները։ Եւ պէտք է չեչտել, որ կազմակերպութեան գործը իւր յաջողութեամբ պարտական է տեղացիներին։ Ժընեւ գումարուած Կորհուրդը որոշել էր մեր չրջանը երկու մասի բաժանել. նախքան այդ որոչումը սակայն, մենք էլ նոյն ցանկութիւնն ենք արտայայտած եղել եւ այդ մասին տեղեկացրել էինք Կորհուրդին։ Հարցնում են, թէ չէ՞ր կարելի Վանի պրոֆեսիոնալ միութիւնները կազմակերպել ոչ կուսակցութեան դրօշի տակ.— այդպէս էլ է՛։ Արհեստաւորները միացել են ինքնաբերաբար առանց կուսակցութեան դրդման կամ ղեկավարութեան։ Վանը արհեստաւորական քաղաք է եւ արհեստաւորները կարիք են դգացել համախմբուելու իրենց ընդհանուր չահերի չուրջը, կազմելու արհեստակցական միութիւններ, որոնք աւելի չուտ համքերութիւններ են։ Երբ արդէն միութիւնները երեւան են եկել, այն ժամանակ միայն կուսակցութիւնը միջամտել է դործին աւելի կանոնաւոր եւ յաջող ընթացք տալու համար։ Նոյնը պէտք է ասել նաեւ աշակերտական միութիւնների վերաբերմամբ.— այստեղ էլ կովկասահայ աշակերտական չարժման տակ, աշակերտները դործադուլ են անում եւ պահանջներ դնում վարչութեան առաջ. մենք ոչ մի պաղպաղար չենք ունեցել այդ մասին։ Երբ միայն վարչութիւնը փորձեց խիստ միջոցների դիմել եւ այդ առթիւ ծնողական ժողով կայացաւ, կազմակերպութիւնը միջամտեց, հենց վարչութեան խնդրանօք եւ եղած պահանջներն արդարացի գտնելով, մեր կողմից խրախուսեցինք աչակերտներին, որից սրանք ոգեւորուած՝ իրենց սեփական միութիւնը կազմեցին։ Շարժումը սկսեց կենտրոնական Դպրոցից եւ անցաւ միւսները։ Ինչ վերաբերում է կազմակերպական մարմնի անդամների ընտրովի կամ նշանակովի լինելուն, պէտք է ասեմ, որ բոլորը ընդհանրապէս նշանակովի են եւ այս սխտեմը աւելի նպատակայարմար է այն տեսակէտից, որ մարմինների անդամները մեծամասնութեանը անյայտ լինելով՝ զերծ են մնում վտանգներից։ Վերջերս երիտասարդութեան մի մասը կառավարութեան ներկայ քուլուքիւնից խրախուսուած, ուզում են ընտրովական սխտեմը մրցընել։ Այստեղ նկատեցին, թէ ժողովուրդը լուռ է եւ չի համաձայնում խօսել իր վրայ ծանրացած բռնութեան չնորհիւ։ Միչտ փափաքել ենք ժողովուրդի ձըգտումներին բաւարարութիւն տալ. տեղեկագիրը կազմելիս, մենք աչխատել ենք, որպէսզի նրա մէջ արտայայտուի լիովին ժողովուրդի տրամադրութիւնները։ Մի դիւղում հետեւեալ դէպքն է տեղի ունեցել.— չրջիկը իւր տասնեակով դնում է դիւղ, ուր ներքին կռիւ կար երկու հակառակորդ կողմերի միջեւ, կռուողներին հաչտեցնելու նպատակով. երբ սրանցից մէկի դուռը թակում են, քանի հրացան յանկարծ որոտում են չրջիկի եւ նրա դինուորների վրայ. վերջինները քողնում հեռանում են, բայց դեռ կէս ժամ չարունակ նրանց եւ տեւից դնդակներ են տեղում։ Այս եւ նման դէպքեր երկու կերպ կարելի է բացատրել. ժողովուրդը կամ համքերութիւնը կտրած է եղել բռնութիւնների հանդէպ, կամ թէ նա չատ է չոյութիւնը։ Ապա դինուորներն իրանք բռնութիւններ են գործ դնում, ընդհանրապէս առանց տասնապետի գիտութեան. օրինակ, դինուորը դնում է դիւղ եւ զանազան պահանջներ է դնում՝ հաւ, դուլպայ եւն.. դիւղացիներն էլ տեղ տեղ ձանձրացած այդպիսիներից՝ ջարդել են դրանց գլուխները։

Իշխան հաստատում է Արամի ասածը։

Անդրանիկ։— Ջարմանում եմ, որ դինուորի վրայ ժողովուրդը ձեռք է բարձրացնում. ոչ ոք իրաւունք չունի այդպիսի բան անելու. եթէ դինուորը կամայականութիւն է անում, այդ մասին պէտք է յայտնուի իւր տասնապետին կամ խմբապետին. մեղաւորին սրանք պէտք է պատժեն։ Չպէտք է դինուորին վարկաբեկ անել։

Արամ։— Հասկանալի է, որ ժողովուրդն երբ այլեւս անկարող է լինում բռնութիւնը տանելու՝ իւր ձեռքով է դատաստանը տեսնում։ Սեպուհն ասում է, որ փորձուած դինուորական ուժեր հեռացւում են մեր չըր–

ջանից. մենք այդպէս ենք վարւում մեր մի ընկերական տակտիկի հիման վրայ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կառավարութիւնը իւր ուշադրութիւնը դիմաւորապէս դարձնում է դինուորների վրայ. մենք ստիպուած ենք դանուել նրանց հետու պահել չրջանից, փութալուծ լինեն թէ անիծրմ: Մենք ուզում ենք, որ դինուորական ուժեր մնան [?] մեզ մօտ, — ունենք միայն մէկ դինուոր եւ այդ թիւը բաւական ենք համարում: Այսօր մենք խաղալ աչխատանքով ենք զբաղուած, վաղը եթէ դէպքեր տեղի ունենան, այն ժամանակ ասպարէզը կը թողնենք կռուողներին: (Պատասխանելով Իսահակեանի հարցին) Այն չրջանները, որոնք կազմակերպուած են դինուորական կամ կոպիտ ուժերի դեկավարութեամբ, հասկանալի է, թէ դրանք ի՛նչ միջոցներ են կիրարկում գործ ստեղծելու համար, նրանք գործել են հրացանի, ծեծի եւ նման ձեւերով: Համոզել ժողովուրդին, դիտակցութեան բերել նրանց, զարգացնել նրա ինքնագործունէութեան ոգին, այդ նրանք չեն կարող անել. իսկ թէ այդպիսի պարագաներում ժողովուրդն ի՛նչ վիճակի մէջ կը լինի եւ գործը որքան չյող՝ դա պարզ է: Մինչդեռ վերոյիչեալ չրջանը զատ է մնացել այդպիսի սիւրպրիզներից. նա կազմակերպուել է եւ մինչեւ վերջը դեկավարուել է մի կեսաինտելիգենտ ընկերոջ ձեռքով: Արդիւնքի մասին տեղեկացրի մէջ կար. նրանք ինքնապաչտպանութեան համար աւելի զոհողութիւններ են արել քան աւելի հըզօր կազմակերպուած չրջանները: Անգործ դինուորի վիճակն անտանելի է. նոր դինուոր ընդունել չենք կարող, աւելորդ բեռ չդարձնելու համար:

Զաւրեան.— Ժողովրդի տնտեսականը բարելաւելու համար, կազմակերպութիւնն ի՞նչ միջոցների է դիմում:

Արամ.— Գիտական կերպով բարելաւման մասին խօսք լինել չէ կարող, այլ միայն ժողովուրդն ապահովւում է այս կամ այն չարիքից. քրտական արչաւանքներն, օրինակ, դադար են առել, վաչխատուները չեն համարձակւում կեղեքել: Վանքապատկան հողեր տրւում են չքաւոր դիւղացիներին՝ ձրի վարելու համար եւ այլն:

Շահխաթունեան.— Քանի ձեր չրջանում դինուորներ չեն պահւում, էլ ի՞նչպէս կարելի է ասել, թէ դինուորները բռնութիւններ են գործ դնում, կամայականութիւններ են անում. դուցէ այնպիսինե՞րը, որոնք տարիներ առաջ միայն դինուոր են եղած: Այս տեսակէտից, ցանկալի է պարզել, թէ որո՞նք են այնտեղ պաշտօնապէս «դաշնակցական» համարւում եւ որո՞նք ոչ:

Սեպուհ.— Գոհ չեմ ընկ. Արամի տուած պատասխան–բացատրութիւնից: 1905ին երբ ես Պարսկաստան էի, այնտեղ չարունակ մարդիկ էին ուղարկւում Վասպուրականից եւ բոլորն էլ որպէս աքսորուածներ, եւ մենք բնաւ չենք կարող ենթադրել, որ այդ «աքսորուած» կոչուողները վիճակի խաղաղ լինելու պատճառով է, որ Երկրից դուրս են ուղարկուել:

Արամ (պատասխանելով Շահխաթունեանին).— Երբ մի դինուորի դինաթափ ենք անում, իրաւականօրէն նա դեռ չարունակւում է մեր դինուորը հաչուուել. դրանց տալիս ենք ծպտեալ մականունը. այդպիսիներն են, որ դլխաւորապէս անախորժութիւնների տեղիք են տալիս: Միեւնոյն ժամանակ բռնութիւններ գործել են եւ՛ մեր դինուորները, ի մեծ ցաւ մեզ եւ ի մեծ նախատինք խմբապետների:

Միմասեան.— Ծպտեալները ի՞նչ միջոցներով են ապրում, կազմակերպութե՞ան թէ դիւղի:

Արամ.— Ծպտեալները մեզ չատ են տանջում. նրբանք 60 հոգի են, իսկ մենք միայն վեց: Ինչի՞ցն է, ոչ թէ ամբողջ դինուորականութիւնն է զեղծումներ արել, այլ միայն անհատ–դինուորները: Ինչ վերաբերում է այն խնդրին, թէ արդեօք ներկայումս եղած սակաւաթիւ ուժերը կարո՞ղ կը լինեն վտանգի դէպքում դործել, սրա մասին կը խօսենք, երբ կը դանք տակտիկայի հարցերին:

2) Պրոպագանդա.

Ժողովը հարցնում է՝ ի՞նչպէս է կատարւում պրոպագանդը, տարուայ ո՞ր եղանակներին է լինում, հոդային խնդիրը ի՞նչ կերպ է արծարծւում:

Արամ.— Բանաւոր պրոպագանդան այնքան լայն չափեր չունի մեզ մօտ, ինչպէս հարկաւոր է, որովհետեւ դործնականով չատ ենք զբաղուած: Պրոպագանդի լաւ ժամանակը ձմեռն է: Հողային հարցը արծարծւում է այն չափով, ինչ չափով կայ մեր հիմնական ծրագրի մէջ:

Շահխաթունեան.— Ի՞նչպէս է նկարագրւում ապագան, պրոպագանդի ժամանակ:

Արամ.— Մօտակայ նպատակն է՝ կեանքի եւ գոյքի ապահովութիւն:

3) Զէնքի խնդիր.

Զոփուրեան.— Տեղեկագրի մէջ ասուած է, որ 40·000 ռուբլու զէնք է գնուել. դումարի մի մասն էլ տուել է ժողովուրդը. հետաքրքիր է իմանալ, ժողովրդի տուած փողի ո՞ր մասն է բռնի կերպով վերցուած, եւ ո՞ր մասն է՝ ժողովուրդը իր յօժար կամքով տուել, առանց կազմակերպութեան ճնշման:

Շահխաթունեան.— Ինչո՞վ է բացատրւում, որ դիւղերը, չնայելով տիրող աղքատութեան եւ հարկերի ծանրութեան, դեռ կարողանում են այդքան հսկայական գումարներ տալ: Թէ՞ տնտեսական դրութիւնը այնքան էլ կրիտիկական չէ, ինչպէս մենք ենք կարծում:

Արամ.— Զէնքի համար դրամ հաւաքելու ձեւը՝ 1904ից կանոնաւորուել է: Պրոպագանդայի աղղեցութեան տակ, մի քանի երիտասարդներ ոգեւորուած ինքնագլուխ զէնքեր սկսեցին հաւաքել. այնուհետեւ անցան դիւղերը, ուր բացատրում էին ինքնապաչտպանութեան անհրաժեչտութիւնը, կազմում էին ցուցակներ, թէ դիւղացիներից ո՛վ որքան կարողութիւն ունի եւ ըստ այնմ կալկադրում զէնք գնել: Հարուստները սըրանց դէմ էին եւ այստեղ բռնի ուժ է գործադրուել: Ժողովուրդը այսօր լինքն աւելի է կանոնաւորել զէնքի համար նպաստներ տալու հարցը. գիւղերում փողը հաւաքւում եւ բերւում է քաղաք, իրենց՝ գիւղացիների ձեռքով:

Միմասեան.— Մի դուցէ պրոպագանդի միջոցին ժողովուրդին գանազան խոստումներ են տրւում ծառայելու ապագայի վերաբերմամբ, որոնցից եւ դրդուած՝ ժողովուրդը զէնքի փող է տալիս:

Արամ.— Մենք ոչ մի խոստում կամ յոյս չենք տալիս, մենք գլխաւորապէս չեչտում ենք ինքնապաչտպանութեան հարցը:

Վիճաբանութիւնները փակւում են:

Նախագահ. յայտնում է ժողովին, որ արդէն տեղ է հասել ընկ. Վարդանը կովկասից, որին ժողովը հրաւիրել էր քուէի իրաւունքով, իբրեւ ձեռնհաս ընկերոջ:

29ՐԴ ՆԻՍՏ (11 Մարտ, երեկոյ)

Նախագահւում է Մալումեան:

Բացակայ են՝ Միմասեան, Իսահակեան, Թոփչեան, Մաչուր, Մուրատ, Զելալեան, Սաֆո:

Վաստուրականի տեղեկագրի քննութեան չարունակութիւնը.

4) Ցարագրութիւնները՝ թուրքերի, քրտերի, ասորիների հետ:

Վռամեան.— Պրոպագանդը քիւրտ աղաների չըրջանում ի՞նչ ուղղութեամբ պէտք է առաջ տանել, որպէսզի նրանց կարելի լինի չահագրգռել մեր գործով:

Շահխաթունեան.— Քրտերը գիտե՞ն, որ ներկայ կարգերը փոխուելուց յետոյ, դալիք փոփոխութիւնները տեղի պէտք է ունենան հայ յեղափոխութեան միջոցով:

Արամ.— Քիւրտ աղաներին ի հարկէ դժուար է մեր ծրագրով ոգեւորելը, քանի որ վերջինս նրանց չահերին հակառակ չատ կէտեր ունի իւր մէջ. օրինակ՝ մեր տնտեսական ծրագրի հետ նրանք երբեք չեն կարողանայ հաչտուել: Եւ այդ մասին էլ բոլորովին չենք խօսում նրանց առաջ, այլ ծանրանում ենք բացառապէս քաղաքական ծրագրի վրայ: Մենք աչխատում ենք դրդռել քիւրտ աղաներին կառավարութեան դէմ, համոզելով՝ որ կառավարութիւն իրենց թչնամին է: Անկասկած, դժուար թէ քիւրտերն այն աստիճան թչնամանան կառավարութեան, որպէսզի մեր ապստամբութեան ժամանակ միանան մեզ հետ, բայց յոյս կայ, որ չէղոք դիրք կը բռնեն, գոնէ այդպէս են ասում աղաներից չատերը. անմիջական օգնութիւն ցոյց տալ մեզ չեն կարող. եթէ օգնեն եւ այնուամենայնիւ կառավարութիւնն յաղթող հանդիսանայ, այս դէպքում նրանք աւելի են տուժելու, քան մենք: Քրտերը բացառապէս հայ յեղափոխականների վրայ չեն մատնացոյց անում, որ սրանք պէտք է փոփոխութիւն մտցնեն երկրի մէջ. նրանք ազդուել են առհասարակ եւ՛ ռուսական չարժումներից, եւ՛ տաճկական վերջին ցոյցերից, եւ՛ պարսկական չարժումներից, եւ՛ Գոլսի մահափորձից:

Ստեփանեան.— Այդ մահափորձը ի՞նչ տպաւորութիւն թողեց թուրք եւ քիւրտ ազգաբնակութեան վրայ:

Արամ.— Դատավարութիւնից յետոյ միայն իմացուեց, որ հայերն են եղած փորձը կատարողները եւ մեր հարեւանները չատ ափսոսացին, որ ձեռնարկութիւնն անյաջող էր անցել: Փորձը խորը տպաւորութիւն թողեց, կազմակերպութեան հմայքը բարձրացնելու [տեսակէտից]:

Վռամեան.— Ինչպէս ասում են, քրտին քիրվայ դարձնելու համար, նախ եւ առաջ հարկաւոր է նրան տիրել: Այս տեսակէտից, հետաքրքիր է դիտնալ, — արդեօք միայն այն քրտե՞րն են մեզ բարեկամ, որոնք արդէն մեր հարուածներն են առել:

Արամ.— Մենք համոզուած ենք, որ համերաչխութեան դործը առանց հարուածների պէտք է առաջ տանել. մենք պրոպագանդային ենք աւելի ուժ տալիս եւ յոյս ունենք, որ այդ ուղղութեամբ աւելի չուտ իրականացած կը լինենք մեր գանկութիւնը: Մանաւանդ ներկայումս միանգամայն անկարելի է հարուածներ տալ քրտերին:

Վարդան.— Քրտերի հետ կապ հաստատելիս, ի՞նչպէս էք վարւում բանակցութիւնները:

Արամ.— Իւրաքանչիւր աչիրէթի մարմնացումն է աղան եւ մենք յարաբերութիւն ունենք աղաների հետ, որոնք իրանք են դալիս քաղաք՝ մեզ մօտ:

Սեպուհ.— Զարմանալի է, որ աղաները կարողանում են ոդեւորուել մեր «ազատագործ»՝ արդարութեամբ. ինչո՞վ բացատրել այս երեւոյթը:

Արամ.— Կառավարութիւնը սկսել է սանձահարել աղաների աւազակութիւնները, միւս կողմից էլ տուրքերն է ծանրացնում. այստեղ աղաներն կարծում են, որ կառավարութիւնն այլեւս չարիք է դառնում իրենց համար: Աղաները «ազատագործ»ի գաղափարը միայն այդ տեսակէտով են հասկանում:

Գուսան [Աւետիք Իսահակեան].— Ինչպէս են վերաբերւում ռայա քրտերը դէպի համիտիէները:

Արամ.— Համիտիէների վրայ դէչ աչքով են նայում, որովհետեւ նրանք ճնշումներ են գործ դնում. ապա՝ համիտիէները լեռնական քրտերի առելութիւնն են վաստակում նրանով եւս, որ փոխում են իրենց արտաքին կերպարանքը: Իսկ այն հարցին, թէ արդեօք «Քրտիստանի գաղափարը ուժա՞ղ է քրտերի մէջ» պէտք է ասեմ, որ [ուժեղ է] միայն Բոտանի կողմերում:

Հարցերը սպառւում են:

Նախագահը առաջարկում է վատպուբականի տեղեկագրի մէջից հանել Մարմնի պրած առաջարկները՝ 10 կէտից բաղկացած եւ յանձնել դիւանին:

Համաձայնութիւն:

Ընդմիջում

Նախագահը յայտնում է, որ առացուած են՝ Ոսկեհանքի Ծուցական Մարմնի տեղեկագիրը եւ 166 կտոր թուղթ, Արեւմտեան Բիւրոյից ներգուած:

Այդ ամէնը յանձնուեց դիւանին:

Ստեփանեան կարդում է Առրպատականի գ. կոմիտէի տեղեկագիրը:

Զարդարեան.— Տեռորների մասին հարկաւոր է աւելի ընդարձակ զեկուցում տալ, կարեւոր խնդիր է: Մանաւանդ Մհերի սպանութեան գործը պէտք ունի աւելի հիմնաւոր պատճառաբանութեան:

Խաճակեան նոյնն է ասում՝ Մհերի վերաբերմամբ:

Սեպուհ.— Անանիային ներում էր տրուել, բայց ինչո՞ւ այնուամենայնիւ տեռորի ենթարկեցիք նրան:

Արամ առաջարկում է Մհերի գործը յանձնել մի մասնաժողովի, որպէսզի թէ՛ հարցն աւելի պարզաբանուի եւ թէ ժողովից աւելորդ ժամանակ չխլուի:

Վռամեան.— Ես այդ առաջարկը կ'անէի ընդհանրապէս. պէտք է ունենալ մի առանձին անկախ մարմին, որը զբաղուի յատկապէս տեռորական հարցերով. այսինքն՝ կատարուող բոլոր տեռորների մասին տեղեկութիւններ հաւաքի:

Զոհրաբեան.— Մհերի հարցը բարդ չէ, կարծում եմ, նրա քննութիւնը երկար չէ տեւելու, հետեւապէս կարիք չկայ մի առանձին յանձնաժողով նշանակելու դրա համար. քննենք հենց այստեղ:

Արամ պարզաբանում է իւր առաջարկը, աւելացնելով վրան մի կէտ եւս, հնչնանակութիւնը մասնաժողովի մէջ մտցնել երկու ղինուորական ընկեր, որոնք տեղեակ լինեն տեռորական գործին»:

Նախագահը քուէարկում է Արամի առաջարկը, որ ընդունւում է մեծամասնութեան կողմից: Ընդունւում է մի մասնախումբ՝ բաղկացած 3 հոգուց, որոնք են՝ Սաքօ, Մուրատ, Բարսեղեան:

Վռամեան մանրամասն տեղեկութիւն է խնդրում Սալմաստի եւն. «դաշնակցական տների» մասին:

Արամ.— «Դաշնակցական տներից» ո՞րն է աւելի օգտակար երկրի համար: Ժողովը պէտք է որոչէ, թէ այդ տները պէտք է չարունակուե՞ն գոյութիւն ունենալ թէ ոչ:

Ստեփանեան.— Մհերի եւ այլ տեռորների վերաբերմամբ մանրամասն բացատրութիւն կը տամ յանձնաժողովին: Ծակորի տեռորը վճռուած էր դեռ արշաւանքից անմիջապէս յետոյ. նրա մասնակցութեան հետեւանքով էր, որ տեղի ունեցաւ մեր 9 ընկերների նահատակութիւնը: Այն ժամանակուայ Կ. Կոմիտէն վճռեց տեռորի ենթարկել դաւադրութեան մասնակիցներից 5 հոգու. երեքին յաջողուեց սպանել: Անանիան փախաւ, իսկ Ծակորի վերաբերմամբ՝ ժամանակն անյարմար էր (նա տանկաց հիւպատոսի նայիբն էր). գործը յետաձգուեց: 1899ի փորձն անյաջող անցաւ: Վերջերս նա նորից յարաբերութեան մէջ էր մտել Ջոյի տանկական հիւպատոսի հետ, մի բան՝ որ մեզ լաւ ոչինչ չէր գուշակում: Ի հարկէ այս կամ այն ծառայութեան չնորհիւ նա կարող կը լինէր իր ուզած պաշտօնը ստանալ. այնպէս որ մենք ստիպուած եղանք կուսակցական չահերի տեսակէտից, չտապեցնել տեռորը, քանի դեռ նա վերատին չէր հաստատուել իւր պաշտօնում: Եւ կատարուած տեռորը մեծ տպաւորութիւն թողեց ընդհանուր ազգաբնակութեան վրայ, որովհետեւ Ծակորն իւր դիրքին օգտուելով՝ անխնայ կեղեքում էր բոլորին անխտիր: Ինչպէս ասացի, Անանիան տեռորի էր ենթարկուած 9 ընկերների սպանութեան պատճառով. նա փախել էր սակայն Ուրմի եւ ինը տարի մնացել էր այնտեղ. վերջը ինքը դիմեց մեր Շրջանային Ժողովին, ներումն խնդրելով. Շրջանային Ժողովն էլ ի նկատի ունենալով, որ արդէն 9 տարի անցել է մահուան վճիռը տալու օրից, եւ որ այդ ժամանակուայ ընթացքում Անանիան ղղջացել էր, որոշեց ներել նրան, մանաւանդ որ նրան էր Ծողնուած իւր եղբօր ընտանիքը խնամելու ծանրութիւնը. այդ եղբայրը, որ սպանուեց քրոջ ձեռքով, մեր գործի համար բաւական աշխատել էր(18):

Կազմակերպական տներն ու նրանց մատուցած ծառայութիւնը.

Ստեփանեան.— Դեռ Գեղոյի ժամանակից Սալմաստն է եղել այն վայրը, որտեղից Երկիր են մտցուել ռազմամթերք եւ անցել անհատ գործիչներն ու խմբերը: Այդտեղ անհրաժեշտ էր ունենալ մի ընկեր, որ յարաբերութիւն պահպանէր Երկրի ու դրսի մարմինների հետ: 1898ից յետոյ, այնտեղ գտնուող ընկերներից կային եւ ուսուցչութիւն անողներ. բայց երբ հետզհետէ գործը լայն չափեր սկսեց ստանալ, ստիպուեցինք ընկերներին մասնաւոր պարապմունքներից ազատել: Սալմաստը (Մինարէքը) դարձաւ կենտրոն՝ Երկիր գնացող ու վերադարձող ընկերների համար. այս տեսակէտից տունը մեծ նշանակութիւն է ունեցել եւ պէտք է ունենայ այսուհետեւ: Աւարայրի (Ջոյի) տունը հիմնուեց 1903ի վերջը, Սարուստանից Մենաւորի գծով ուղղուած ապրանքների համար, ինչպէս եւ այդ գծով Երկրից վերադարձող ընկերների եւ փոխադրողների համար: Այստեղից փոխադրուած ռազմամթերքի մասին տեղեկութիւն կը տամ քննիչ յանձնաժողովին: Մենաւորն էլ միակ կէտն է, Սարուստանից եւ Վրէժից Երկիր մտնող ապրանքների ու գործիչների համար:

Այդ տեղով վերջին երեք տարուան ընթացքում անցել են 660 մարդ:

Արամ.— Երեք տներից ո՞րն է աւելի օգտակար եղել Երկրի համար:

Ստեփանեան.— Երեքն էլ կարեւոր կէտեր են Երկրի համար:

Զարդարեան.— Այդ տներում իջեւանող զինուորներն ի՞նչ միջոցներով են ապրում:

Ստեփանեան.— Կազմակերպութեա՛ն: Սկզբում զինուորները ղեկղացիների հաշուին էին ապրում եւ այդպիսով անախորժութիւնների առիթ դառնում: Բայց այժմ այդ սիստեմը վերացուած է. ոչ մի զինուոր իրաւունք չունի այլեւս գիւղացիներից որեւէ պահանջ անելու. ամէն ինչ կազմակերպութիւնն է հոգում:

Զարդարեան.— Նպաստը միանուա՞գ էք տալիս, թէ իւրաքանչիւրին առանձինն:

Ստեփանեան.— Ոչ, ծախսը բոլորի համար ընդհանուր է:

Զարդարեան.— Հնչակեանների թուի մասին ոչինչ չասուեց տեղեկագրի մէջ:

Ստեփանեան.— Շատ քիչ հետեւորդներ ունեն. Թաւրիզում 30–35 մարդ հազիւ լինեն: Նրանց միակ ղեկավարական գործը՝ «Երկիր Հայաստան» տարածելն է:

Զարդարեան.— Պարսիկ ազատականների հետ ի՞նչ յարաբերութիւններ ունէք:

Ստեփանեան.— Ոչ մի. վերջին չարժումներից մենք միանդամայն հեռու ենք մնացել:

Զարդարեան.— Ասորիներին կազմակերպելիս, ի՞նչ ուղղութեամբ էք նրանց պրոպագանդա անում:

Ստեփանեան.— Պրոպագանդա դեռ չենք արել. այստեղից պէտք է հրահանգներ տանել այդ հարցի վերաբերմամբ: Բայց ասորիները իրենք են խնդրում, որ կազմակերպենք նրանց: Առաջարկում են իրենց ծառայութիւնը իրրեւ մարտական խմբեր: Ի հարկէ չենք վստահում նրանց ուժերի վրայ, բայց դրանից չենք էլ ուղում հաւատ ընծայել նրանց: Բայց եւ նրանք առաջին բաւական օգուտներ են տալիս մեզ:

Ժողովը փակւում է ժամը 8ին:

30ՐԴ ՆԻՍԱՆ (12 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Ներկայ են՝ 24 ժողովական:

Բացակայ են՝ Մանուկ, Սաֆօ, Խաչէն, Սաֆօ:

Նախագահը բանալով նիստը, յիշեցնում է, որ երէկուան նիստին ընկերներից բացակայ էին 6 հոգի, որոնց վերաբերմամբ ոչ մի արդարացուցիչ պատճառ չկայ. բացակայութեան համար, միակ արդարացուցիչ պատճառը հիւանդութիւնը կարող է լինել. եւ յայտ է յայտնում, որ այս տեսակ վերաբերմունքը վերջինը կը լինի:

Այս նիստում պէտք ներկայացուէր Թիֆլիսի կ. կոմիտէի զեկուցումը, բայց պատգամաւորի հիւանդութեան պատճառով հնարաւոր չեղաւ այդ անել: Ուստնդրական պատգամաւորների տեղեկագրերն էլ, որոնք հերթական էին, պարապատ չէին:

Դիւանի կողմից հարց է արուում, թէ ժամանակի խնայողութեան համար լաւ չէ՞ր լիներ, որ Արեւելեան Բիւրոյի չրջանի մարմինները փոխանակ զան-զան տեղեկագրեր ներկայացնելու, նկատի ունենալով այդ չրջանների գործունէութեան միակերպութիւնը, միացնէին իրենց տեղեկագրերը մի ամփոփ զեկուցման մէջ եւ միանգամից ներկայացնէին ժողովին:

Միճասեան եւ Զելալեան հակառակ են այս միտին, մի քանի նկատումներով. նախ, որ տեղեկագրերը պէտք է տեղերում կազմուած եւ բերուած լինէին եւ ոչ թէ այստեղ նոր կազմուէին. երկրորդ, որ տեղեկագրերը նոր կազմուելով, իրենց վրայ կը կրէին ժողովի ընթացքի տպաւորութիւնը. այնինչ, պատգամաւորները նկատելով ժողովի տրամադրութիւնը, ակամայից կ'զգուշեն դրանից եւ դա կ'արտայայտուի այստեղ կազմուած տեղեկագրի վրայ:

Այս խնդրի մասին որոշ եզրակացութեան չգալով՝ ժողովը այնուամենայնիւ դադրեցնում է նիստը՝ վճռելով նիստ չանել եւ այդ ամրողջ օրը հետաւորութիւն տալ յանձնաժողովներին իրենց աշխատանքները կատարելու:

Նիստը փակւում է ժամը 10½ին եւ անմիջապէս սկսւում են յանձնաժողովների զբաղմունքները:

31ՐԴ ՆԻՍԱՆ (13 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Բացակայ են՝ Մանուկ, Սաֆօ:

Նախագահը խօսքը տալիս է Թիֆլիսի կ. կոմիտէի պատգամաւորին, որը կարդում է իւր չրջանի տեղեկագիրը: Ընթերցումը տեւում է 1½ ժամ:

Նախագահ.— Հարցերին անցնելուց առաջ պիտի խնդրեմ ընկերներից, որ այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են կովկասեան ընդհանուր գործունէութեան, այժմ չչարունակեն, այլ սպասեն մինչեւ Արեւելեան Բիւրոյի տեղեկագիրը, հետեւաբար հարցումներ անելիս կանոն պիտի առնել միայն Թիֆլիսի վերաբերելու խնդիրների վրայ:

Ռոստոմ.— Մեր մէջ աչխատանքի խիստ բաժանում չի եղել. գործերը վարել են ընդհանուր կերպով՝ Արեւելեան Բիւրոն, կ. կոմիտէն եւ այլ ընկերներ, բայց Թիֆլիսի կ. կոմիտէի անունից: Տեղեկագրում չչուած խնդիրներից մեծ մասը վերաբերում է Թիֆլիսին, եւ որովհետեւ արդէն չօչափուեցին, Ռոստոմ այժմ եւեթ դրանց մասին խօսուի:

Արամ.— Առաջարկում եմ՝ վիճաբանութիւնները կենտրոն Թիֆլիսի տեղեկագրից անմիջապէս յետոյ, որովհետեւ չօչափուած խնդիրը ընդհանուր կովկասին է վերաբերում. սպասենք մինչեւ կովկասեան բոլոր տեղեկագրերը կարդացուին եւ կովկասից սպասուած ընկերները գան, ապա խօսինք այդ մասին:

Իսահակեան.— Ճիշդ է, հարցերից ոմանք ընդհանուր կովկասին են վերաբերում, բայց կան խնդիրներ էլ, որոնք սպեցիֆիկ [յատկապէս] բնաւորութիւն ունեն: Դրանցից մէկն է Թիֆլիսի ռեզոլիւցիան [որոշում,

բանաձեւ] անկատման խնդրի մասին։ Հետաքրքիր է, թէ Թիֆլիսի բանուորութիւնը ի՞նչ բովանդակութիւն է դնում ֆեդերատիւ [դաշնակցային] կապի մէջ։

Նախագահ։— Այստեղ միայն հարցումների խնդիր կայ. կրկնութիւնից խուսափելու համար, ստիպուած ենք ընդհանուր բնոյթ ունեցող հարցումները թողնել։ Ես բաժանում եմ հարցումները մի քանի կէտերի՝

ա) կազմակերպական վիճակը.

բ) Նիւթական վիճակը.

գ) Գործունէութիւնը.

1) Պրոպագանդա.

2) Զինավարժութիւն եւ ինքնապաշտպանութիւն։

Զարդարեան։— Ինչի՞ն վերաբերել, որ արհեստակցական միութիւնները տարուէ տարի աճել են. եւ ի՞նչ արդիւնք են տուել նրանք։ Այդ ամման պատճառների մասին տեղեկագրում ոչինչ ասուած էր։

Շահխաթունեան։— Ի՞նչ կազմակերպական փուլեր են անցել պրոֆեսիոնալ [արհեստակցական] միութիւնները. արդեօք դրանց պէտք է համարել կուսակցական կազմակերպական աստիճանների՞ր, թէ դրանք զուտ տրեւեական միութիւններ են։ Հետաքրքիր է, թէ դրանք ինչպէ՞ս էին վերջումը։ Ընկերը մոռացաւ ասել, որ արհեստակցական միութիւններ կազմելուց առաջ մենք զուտ բանուորական խմբեր չենք ունեցել։

Խաչատրեան։— Արդեօք կոմիտէն չէ՞ ուղում ցրուել մեր առաջուայ կազմակերպութիւնից մնացած խառն խմբերը։ Տեղեկագրում ասած էր, որ դիւղերում այժմ զուտ է յառաջ գալիս, ի՞նչպէս է լինում դա, ինքներո՞ն, թէ կազմակերպութիւնը ղեկավարում է այդ զուտը եւ եթէ այո՛, ազա ուրեմն ի՞նչ չափ է տրուած, որը պիտի աչքի առաջ ունենալ, զուտը առնելիս։

Շահխաթունեան։— Տեղեկագրում ասուած էր, որ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, ամբողջ դիւղեր իրենց դաշնակցական էին յայտարարում. բայց այդպէս է եղել ընդհարումներից առաջ էլ։ Արդեօք այդ երեւոյթի պատճառը հայ-թուրքական ընդհարումնե՞րն են, թէ դա մի կազմակերպական սիստեմ է եղել։ Ես լիչում եմ, թէ ինչպէս մի Ռայոնական ժողովում Երեւանի եւ Կարսի պատգամաւորները վիճում էին, թէ ի՞նչպէս պիտի կազմակերպել դիւղերը, ամբողջ դիւղը համայնակէ՞ս թէ խմբերով։

Չելալեան։— Երբ որեւէ գործարանում զանազան ազգութեան բանուորներ կան, գործադուլ անելիս արդեօք բոլո՞րն էլ դիմում են կազմակերպութեան, թէ միայն հայերը։ Ի՞նչպէս էք անում միւս ազգութեան բանուորների հետ. ի՞նչ է Ախալցխայի մէջ կազմուած երկու հոսանքը։

Վռամեան։— Արհեստակցական միութիւնների մէջ կա՞ն արդեօք ոչ հայեր։

Թոփչեան։— Կան չատ քիչ անհատներ, — վրացի կանայք, ասորիներ, ռուսներ, Թուրքեր եւն.։

Վռամեան (չարունակելով)։— Ինչպէ՞ս են մասնակցում միութիւնները Դաշնակցութեան ընդհանուր գործերին։ Նրանք աչխատում են միայն իրե՞նց գործերի համար, թէ նաեւ Դաշնակցութեան ընդհանուր սկզբունքները տարածելու։ Ո՞րքան դրամ են տալիս դրանք կազմակերպութեանը. իբր թէ իրենց եկամտից դրանք 50% պիտի տան Դաշնակցութեան. ի՞նչքան դումար է անում այդ տուրքը։

Չելալեան։— Քանի որ գործադուլաւորները բացառապէս հայեր էին [չէին ?], ի՞նչպէս էք նրանց կազմակերպում, որ սոց.-դեմոկրատների հետ բախումներ չունենաք։ Առանց օտարների մասնակցութեան գործադուլները չէի՞ն կարող յաղողութիւն ունենալ։

Բարսեղեան։— Ո՞ր չրջանի դիւղերն են, որ դուրս են մնացել կազմակերպութիւնից եւ ինչո՞ւ։

Զարդարեան։— Եթէ օտարները ուղեն մտնել արհեստակցական միութիւնների մէջ, պիտի ընդունէ՞ք։ Իսկ եթէ ընդունէք, չէ՞ որ նրանք մասնակցելով կազմակերպական գործերին, կ'իմանան նաեւ մեր գաղտնիքները։

Տաճատ.։— Ի՞նչ չարժառիթներից դրդուած Դաշնակցութիւնը ընդունեց բանուորական եւ գիւղացիական միութիւններ կազմելը։

Մուրատ։— Արդեօք բանուորները իրա՞նք են դործադուլ անում, թէ կազմակերպութիւնն է նրանց դրդում անելու։

Սեպուհ։— Ագրարային [հողային, դիւղացիական] չարժումների մասին ի՞նչպիսի պրոպագանդա է լինում։ Տեղեկագրում ասուած էր, որ Ախալքալաքի կազմակերպութեան մասնակցութեամբ հողաբաժանութիւն է եղել։ Ի՞նչ հողեր են դրանք, — բէկակա՞ն են թէ պետական։

*Թոփչեան։— Ընկեր Զարդարեանի հարցը՝ բանուորական կազմակերպութիւնների աճման պատճառների մասին, — Դաշնակցութիւնը արձագանգ տալով չրջապատող պայմաններին, սկսում է պաշտպանել նաեւ աչխատաւորների չահերը։ Մեր բանուորները սկսում են համոզուել, որ Դաշնակցութիւնը սոց.-դեմոկրատների ասածի նման միայն «Հայաստան» չէ ասում եւ Կովկասի իրականութիւնը աչքից բաց Թողնում, այլ նաեւ պաչտպանում է նաեւ ժողովրդի տնտեսական չահերը եւ իրաւունքները։ Երկրորդ պատճառը՝ ընդհանրապէս Դաշնակցութեան անցեալն է. կալուածական հարցի ժամանակ բնականօրէն մասսաները աւելի չատ համակրանք զգացին դէպի Դաշնակցութիւնը եւ աւելի նրա հետ կապուեցին։ Երրորդ պատճառը այն է, որ բանուորները Դաշնակցութեան մէջ տեսնում են, ոչ միայն մի սոցիալիստական կուսակցութիւն, որ միայն բանուորների չահերն է պաչտպանում, այլ նաեւ մի ազգային կուսակցութիւն, որ ազգային իրաւունքների հաւասարութիւն է պահանջում։ Շատ ղէպքերում սոց.-դեմոկրատները աւելի կտրուկ եւ վճռողական կերպով էին պաչտպանում բանուորութեան տնտեսական չահերը, բայց մեր բանուորութիւնը այն կողմը չէր անցնում, որովհետեւ այնտեղ ազգային իրաւունքներին բաւարարութիւն չէր տրւում։ Ինչ վերաբերում է ենթակոմիտէների եւ արհեստակցական միութիւնների յարաբերութիւններին, պիտի ասեմ, որ բոլոր մարմինները դնուում են զոման չրջանի մէջ։ Սուում էին՝ եթէ արհեստակցական միութիւնները կան, ուրեմն եւ ենթակոմիտէները աւելորդ են եւ դա կխօսի չափ գործադուլած է։ Այնտեղ ուր ուենք արհեստակցական միութիւններ, այլեւս ենթակոմիտէներ չկան։ Իսկ խառն խմբեր եղած տեղում, ենթակոմիտէներ կան, բայց իրականապէս չեն գործում, և խմբերի ներկայացուցիչներն են կառավարում գործերը։ Գիւղացիների չարքերի դումարը կատարւում է ինքնուրոյն, — քէ՛ Թուղթիկներով եւ քէ ժողովներում յաճախ խօսում ենք հողային հարցի մասին եւ սովորեցնում ենք, թէ ի՞նչպէս պիտի կատարել հողի համար։ Հարուստները տեսնում են, որ սա իրենց ձեռընտու չէ, նրանց մէջ կասկած է ծագում եւ կամաց կամաց հեռանում են մեզանից եւ աչխատում են քանդել մեր կազմակերպութիւնը։ Օրինակ՝ Ախալքալաքի մի գիւղում, ուր հարուստները գիւղի լաւ հողերին տիրել էին եւ կառավարական պաչտօնեաների միջոցով միչտ խանգարում էին հողաբաժանութիւնը, երբ Դաշնակցութեան չանքերով պիտի հողաբաժանութիւն լինէր, հարուստների կողմից մինչեւ անգամ կիսամահութիւն եղաւ։ Բայց այդ ժամանակն էլ գիւղացիներին յետ չկանգնեցրեց. գիւղացիները իսկոյն վազել են քաղաք՝ կոմիտէին լուր տալու. մի երկուսը մինչեւ անգամ եկան Թիֆլիս, այդ մասին խօսելու. դրանց մենք քաջալերեցինք, յուսադրեցինք եւ վերադարձուցինք։ Ճիշտ է, գիւղերը առաջ էլ համայնապէս եղել են Դաշնակցութեան մէջ, բայց այն ժամանակ այնպիսի լայն ժողովներ չէին լինում, այլ միայն անդամավճարներ էին տալիս. օրինակ՝ առաջ հարուստները տհաստարակ հակառակ էին մեզ, իսկ աղքատները վախվխելով իրանց դաշնակցական համարում։ Իսկ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ բոլորն էլ ասում էին, որ ուղղակի դաշնակցական են։ Բայց երբ այժմ վտանգը անցել է, կրկին սկսում է զումը։ Ախալցխայի երկու հոսանքները զուտ տեղական Թաֆիայական բնաւորութիւն ունին եւ կապ չունին բաժանման խնդրի հետ. մի խումբ մարդիկ ուղում են կուսակցութեան անունից օգտուել իրենց անձնական հաչիւների համար, զպրոցական-տեսչական խնդիրներում. դաշնակցական կոմիտէի ժողովները զրաղեցնում էին զպրոցական-հոգաբարձական խնդիրներով եւ ոչ Թէ ծրագրային եւ կազմակերպական։ Մենք այդ կոմիտէն լուծուած յայտարարեցինք եւ այդ վճիռը հաստատեց Շրջանային եւ յետոյ Ռայոնական ժողովը։ Դրանցից մի խումբը սեփականացրել էր կազմակերպական դէնքերը եւ էէր տալիս, նոյնպէս հալածուում էր հաչիւները տալուց, ուղարկնգինք զինուորական ուժեր, որ դրանցից դէնքերն ու հաչիւները առանան։ Մեր արհեստակցական միութիւնները ունէին վարչութիւններ, որոնց անդամները դերբրը բաժանում են իրենց մէջ եւ կապ են պահպանում կազմակերպութեան հետ։ Այդ վարչութիւնների հետ մենք յաճախ ժողովներ ենք ունենում, որոնց ժամանակ յայտնում ենք նրանց այն ինչ որ Դաշնակցութիւնը մըտադրւել է անել։ Վարչութիւնները ժողովում են միութիւնները եւ նրանց բացատրում խնդրի էութիւնը։ Թէ ի՞նչպէս ենք մենք միմիայն հայերին կազմակերպում.— երբ սրեւէ գործադուլում խառն ազգութիւններից կազմուած բանուորները, դժգոհ իրենց տնտեսական դրութիւնից, ցանկանում են կազմակերպուել կամ դործադուլ յայտարարել, նրանք սովորաբար վիճում են իրար հետ, թէ ո՞ր կուսակցութեան դիմեն։ Այդպիսի տեղերում մենք սովորաբար ունենում ենք, եթէ ոչ դաշնակցականներ, գոնէ մեզ համակրողներ, որոնք մեզ այդ մասին լուր են տալիս, եւ մենք անմիջապէս մեզ այդ մասին լուր ենք ուղարկում։ Շատ անգամ գալիս են նաեւ սոց.-դեմոկրատներ, տեղի են ունենում վիճաբանութիւններ, չատ անգամ սուր խօսքեր, բայց երկու կողմից էլ մեծ ջանք ենք գործ դնում, որ կուսակցական կռիւները բանուորական մասսաների մէջ չմտնեն կոպիտ ձեւերով։ Բնականաբար հայերը ամբողջովին անցնում են կամ մեծ մասամբ յարում են Դաշնակցութեան կողմը։ Դէպքեր չեն եղել որ այլ ազգութիւններ էլ մեզ հետ միանալ ցանկանան, եղել են միայն բացառութիւններ։ Շատ ենք ւիճել այդ մասին, թէ ի՞նչպէս վերաբերուենք երբ այլ ազգութիւններ ուղում են միանալ մեզ. բայց հարցը բաց է մնացել։ Կան անչուչտ վրացի եւ Թուրք անհատներ, որոնք դաշնակցական միութիւնների մէջ են գտնուում. կազմակերպական գաղտնիքները նրանք չեն իմանում, քանի որ մասաների առաջ խօսում ենք միայն իրենց գործադուլների եւ տնտեսական պահանջների մասին։ Մենք մինչեւ անգամ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ էլ դրանց բացատրում էինք, որ լինելով ազգային կուսակցութիւն, մենք ամենեւին չենք ձգտում մեր աղատութիւնը ձեռք բերել ի հաչիւ այլ ազգութիւնների ստրկութեան, մեր ազգային տեսակէտը մենք ընդունում ենք նաեւ ուրիչ ազգերի իրաւունքների վերաբերմամբ։ Զկազմակերպուած գիւղեր կան մի քանի տեղ՝ Ախալցխայի չրջանում, եւ այն՝ չնորհիւ այնտեղի կոմիտէի անկանոն ընթացքի. կան նաեւ Լօռիում մի քանի գիւղեր, որոնք սոց.-դեմոկրատների աղեցութեան տակ են՝ 3-4 գիւղ։ Իսկ վերջերս սոցիալ-դեմոկրատները չատ մեծ եռանդ էին գործ դնում մեր դէմ։ Միհրանականները չրջում էին գիւղերը, եւ մեզ հակառակ խօսում. սրանց հետեւից գնում էին նաեւ սոցիալ-դեմոկրատները եւ ասում՝

որ կուսակցութիւնը քանդուում է, ահա՛ այս երկու հոսանքները պիտի սկսին իրար հետ կռուիլ եւ ժամանակ չեն ունենալ ձեր չահերը պաշտպանելու, ուստի միացէ՛ք մեզ հետ: Նոյն բանը անում էին նաեւ քաղաքում, ասելով, որ իբր թէ Դաշնակցութիւնը ուժ չունի բանուորներին պաշտպանելու. Միհրանականների բռնութեան դէմ: Կան նաեւ վրացասէաս հայ գիւղեր, չկազմակերպուած, որովհետեւ պրոպագանդի յարմարութիւն չունինք: Մի քանի դիւղերում, Ախալքալաքի շրջանում, եղել են սոց.-դեմոկրատ հայեր եւ տուել են դիւղացիներին, որ իսկական պաշտպանները դիւղացու չահերի՝ իրանք են. նրանք նկարագրել են իրենց պահանջները եւ դիւղացիք համաձուել են նրանց հետեւելու, բայց վերջերս այս դիւղերն էլ թուլացել են: Գիւղացիական եւ բանուորական միութիւնները մենք առաջ բերինք, որովհետեւ երբ ամէն մի կուսակցութիւն սկսել էր իւր շարքերը լայնացնել, Դաշնակցութիւնը չէր կարող այլ կերպ վարուել, եթէ ուզում էր ապրել: Եթէ մեր այդ գործունէութիւնը չլինէր, դուցէ մենք Թիֆլիսի չրջանում հաղիւ միայն քան խումբ ունենայինք: Մասսաներում պահանջ կար այդպիսի դործունէութեան, չրջապատող պայմանները նպաստաւոր էին այդ տեսակէտից, եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ ուչխատաւորական մի կուսակցութիւն, չէր կարող անտարբեր մնալ: Գործադուլ անել՝ բանուորներ իրե՛նք էին պահանջում: Մի գործարան հետեւում էր միւսին, մի արհեստանոցը միւսին, տեսնելով դանապան պահանջների իրագործումը. օրինակ՝ 8 ժամեայ բանուորական օրը, կտորով աչխատանքի վերացումը. այս պահանջների վերաբերմամբ մինը միւսին վարակում էր եւ կուսակցութիւնը մասսաների պահանջներին ընդառաջ էր դնում, որովհետեւ այդ պահանջները իրաւացի էին: Լինում էին երբեմն եւ ուելորդ պահանջներ, չափազանցութիւններ, որ մենք կրճատում էինք եւ իրագործելի դարձնում: Օրինակ՝ քիսակիների գործադուլի դէպքում.— դրանց մեծ մասը պատկանում էին մեզ. երբ գործադուլների չրջանը սկսուեց, նրանք ասացին մեր պրոպագանդիստին՝ որ երեք տարի չբուռնակ խաղէրները նրանց ստացած փողից 20% յետ էին դնում զանազան իրեղէնների համար, որ այժմ արդէն մի քանի հազար բուբլու է հասնում. նրանք պահանջում էինք այդ դումարը, 8 ժամեայ բանուորական օր, աչխատավարձի աւելացում եւն.: Մենք քննեցինք, տեսանք որ այդ բոլոր պահանջներին չէ կարելի բաւարարութիւն տալ, փորձեցինք համոզել, որ գոնէ գումարի կէսը պահանջեն. բայց սոց.-դեմոկրատները ասում էին, որ իրանք ամբողջ գումարը կ'առնեն. եւ բանուորների տրամադրութիւնները փոխուեց դէպի սոց.-դեմոկրատները: Մենք հրաժարուեցինք միջամտել այդ գործադուլին, յայտնելով, որ չենք կարող քիսակիների պահանջները ամբողջապէս առանձ: Սոց.-դեմոկրատները պնդում էին թէ կ'առնեն, մի ուսմբ կը նետեն եւ խաղէրները ստիպուած բաւարարութիւն կը տան. իսկ մենք ասում էինք, որ տնտեսականն պահանջների համար ռումբ չենք գործածեր: Քիսակիների դործադուլը տեւեց մի ամիս, եւ վերջում նրանք ստիպուեցան ընդունել մեր պահանջները: Գործադուլի ժամանակ մենք ստիպուեցանք ստեղծել մի կոմիտէ, որ կարգադրէր գործադուլը, որովհետեւ ամէն մի կուսակցութիւն սկսել էր իւր շարքերը լայնացնել, Դաշնակցութիւնը չէր կարող այլ կերպ վարուել, եթէ ուզում էր ապրել: Եթէ մեր այդ գործունէութիւնը չլինէր, դուցէ մենք Թիֆլիսի չրջանում հաղիւ միայն քան խումբ ունենայինք: Մասսաներում պահանջ կար այդպիսի դործունէութեան, չրջապատող պայմանները նպաստաւոր էին այդ տեսակէտից, եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ ուչխատաւորական մի կուսակցութիւն, չէր կարող անտարբեր մնալ: Գործադուլ անել՝ բանուորներ իրե՛նք էին պահանջում: Մի գործարան հետեւում էր միւսին, մի արհեստանոցը միւսին, տեսնելով դանապան պահանջների իրագործումը. օրինակ՝ 8 ժամեայ բանուորական օրը, կտորով աչխատանքի վերացումը. այս պահանջների վերաբերմամբ մինը միւսին վարակում էր եւ կուսակցութիւնը մասսաների պահանջներին ընդառաջ էր դնում, որովհետեւ այդ պահանջները իրաւացի էին: Լինում էին երբեմն եւ ուելորդ պահանջներ, չափազանցութիւններ, որ մենք կրճատում էինք եւ իրագործելի դարձնում: Օրինակ՝ քիսակիների գործադուլի դէպքում.— դրանց մեծ մասը պատկանում էին մեզ. երբ գործադուլների չրջանը սկսուեց, նրանք ասացին մեր պրոպագանդիստին՝ որ երեք տարի չբուռնակ խաղէրները նրանց ստացած փողից 20% յետ էին դնում զանազան իրեղէնների համար, որ այժմ արդէն մի քանի հազար բուբլու է հասնում. նրանք պահանջում էինք այդ դումարը, 8 ժամեայ բանուորական օր, աչխատավարձի աւելացում եւն.: Մենք քննեցինք, տեսանք որ այդ բոլոր պահանջներին չէ կարելի բաւարարութիւն տալ, փորձեցինք համոզել, որ գոնէ գումարի կէսը պահանջեն. բայց սոց.-դեմոկրատները ասում էին, որ իրանք ամբողջ գումարը կ'առնեն. եւ բանուորների տրամադրութիւնները փոխուեց դէպի սոց.-դեմոկրատները: Մենք հրաժարուեցինք միջամտել այդ գործադուլին, յայտնելով, որ չենք կարող քիսակիների պահանջները ամբողջապէս առանձ: Սոց.-դեմոկրատները պնդում էին թէ կ'առնեն, մի ուսմբ կը նետեն եւ խաղէրները ստիպուած բաւարարութիւն կը տան. իսկ մենք ասում էինք, որ տնտեսականն պահանջների համար ռումբ չենք գործածեր: Քիսակիների գ

կուսակցութիւն է հենց իւր հիմնական ծրագրի համաձայն, եւ առիթը ներկայացուած դէպքում, մենք աշխատել ենք ցոյց տալ, որ այդպիսի կուսակցութիւն ենք: Օրինակ Թիֆլիսի մօտ կան մեծ կալուածներ, որոնց տէրերը մեծամեծ տուրքեր են առնում իրենց գիւղացիներից, որը չատ ծանրաբեռնում է նրանց: Եւ որովհետեւ այդ կալուածատէրերը ապրում են Թիֆլիսում, մենք դիմել ենք նրանց եւ գիւղացիների վիճակի թեթեւութիւնը պահանջել: Ընկ. Տաճատի ասելով, իբր թէ ակամայից պիտի ընդունին Տաճկահայկական հարցը. մեր արհեստակցական միութիւնները զանազանւում են միւսներից նրանով, որ նրանք կուսակցական են, պիտի մասնակցին նաեւ քաղաքական հարցերին եւ ոչ թէ միայն տնտեսականին: Մենք բանուորներին ասում ենք, որ մենք ընդունում ենք բացի ստամոքսի պահանջից նաեւ գաղափարական պահանջը: Ասում են, որ իբր թէ ակամայից են ընդունելու, միութեան անդամները, մեր ծրագիրը: Բայց սա սխալ է. կան արհեստանոցներ, ուր բանուորութիւնը դաշնակցական է, կան միայն մի քանի սոց.-դեմոկրատներ. բայց նրանք ամենուրեք ակամայից մեզ չեն միանում, այլ կա՛մ առանձին են կազմակերպւում, կամ միանում են մի այլ արհեստանոցի հետ: Մուրատի ասածը ճիշդ է, որ մեր մասսան այնքան գիտակից չէ եւ չատ անգամ Դաշնակցութեան ուժի վրայ չենուած է գործադրել անում: Իսկ ինչ վերաբերում է կուսակցութեան դերին գործադրելի մէջ, ինչքան էլ որ կուսակցութիւնը պրոպագանդա անի, բայց այնուամենայնիւ վերջին խօսքը պատկանում է մասսային: Գործադրել անելու հարցը մասսան է վճռում եւ ոչ թէ մարմինները, որովհետեւ գործադրելը բանուորների կաշուն է վերաբերում:

Ժողովը փակուեց ժամը 1ին, վիճաբանութիւնների չարունակութիւնը թողնելով երեկոյեան նիստին:

32ՐԴ ՆԻՍՏ (13 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:
Բացակայ են՝ Ռոստոմ, Մանուկ, Սաֆօ:

Շարունակութիւն առաւօտեան նիստի,
Դրամական վիճակ (Մեծ Ռաղաֆի):

Մուրատ.— Արդեօք արհեստակցական միութիւններից գուտ ո՞րքան դրամ է մտել Դաշնակցութեան գանձարանը եւ ի՞նչ ստացականով:

Շահխաթունեան.— Տեղեկագրում յիշուած հաշիւը արդեօք արհեստակցական միութիւնների ամբողջ եկամո՞ւտն է պատկերացնում, որի 50%ը մնում է իրենց եւ 50% մտնում կազմակերպական գանձարանը, թէ դա միայն կազմակերպութեան գանձարանը մտած 50%ն է:

Թոփչեան.— Արհեստակցական միութիւններից մի քանիսը ունեն իրենց վարչութիւնը եւ կնիքը. մարմնի կողմից նրանց ստացագրեր են տրւում հաշուով, եւ հաշուով էլ պահանջւում են: Ստացագրերի մի մասը տրուած է Կ. Կոմիտէի կնիքով, երբ գործը դեռ խառն էր եւ յատուկ դրքոյկներ չկային: Վերջերումս նկատեցինք որ կոմիտէի կնիքով ստացականներ տալը անյարմար է, նախ որ արհեստակցական միութիւնները կարող են չատ հեշտութեամբ լեզալ հաստատութիւններ դառնալ եւ իրրեւ այդպիսին գործել, ուստի եւ նրանց ստացականները անյարմար է որ Կ. Կոմիտէի կնիքը կրեն, միւս կողմից կոմիտէի կնիքը, այդքան յաճախ գործածուելով, կը կորցնէր իւր արժէքը: Ուստի յարմար դատուեց, որ արհեստակցութիւնները ունենան իրենց կնիքը. իսկ մի մասն էլ ուղղակի թերթիկների վրայ հաւաքում էր ամսավճարները: Գանձապահը յանձնում էր կազմակերպութեան եւ մի ընդհանուր ստացական ստանալով, ցոյց էր տալիս բոլորին: Արհեստակցութիւնների կնիքը ձուաձեւ է, մանիչակագոյն թանաքով վրան գրուած օրինակ՝ «Դաշնակցական կօշկակարների արհեստակցական միութեան վարչութիւն», առանց զինանիշի, եւ ոչ մի նմանութիւն չունի կուսակցութեան կնիքին հետ: Անդամավճարները, արհեստակցական միութիւնների հաշիւները կենտրոնանում էին տեղական կոմիտէի մօտ, որ հրաժարուեց: Այս 10·000 ռուբլու մեծ մասը տուել են միութիւնները եւ բանուորական խմբերը. խառն խմբերը թուով քիչ են: Այս հաշիւների մէջ մտնում են միութիւնների մի մասի ամբողջ եկամուտը, իսկ մնացած մասի, օրինակ գործակատարների եկամուտի՝ մի մասը միայն: Այսպիսով ընդհանուր դաշնակցական եկամուտը աւելի է քան այս ցոյց տուած հաշիւը. օրինակ՝ գործակատարները բանկում ունեն մօտ 700 ռուբլի:

Մուրատ հարցնում է, թէ իւրաքանչիւր բանուոր ո՞րքան դրամ է տալիս եւ պատասխան է ստանում՝ եկամտի 2%ը:

Ստեփանեան.— Արհեստակցական միութիւնների կնիքները արդեօք բիւրոների գիտութե՞մբ են չինուած, թէ ինքնագլուխ:

Թոփչեան.— Թէեւ ամբողջ աշխարհում այդպէս է, որ արհեստակցական միութիւնները իրենց կնիքները ունին, բայց մեզանում այդ դեռ չկար: Վերջը երբ դրա կարիքը զգացուեց, մենք ոչ միայն կնիք ունենալու որոշում տալը տեղական կոմիտէին չթողնինք, այլ նոյնիսկ կեդր. կոմիտէն իւր իրաւասութեան սահմաններից վեր համարեց այդ խնդիրը լուծել, ուստի մենք խառն ժողով կազմեցինք բիւրոյի հետ եւ այդ որոշումն այնտեղ տուինք:

Նախագահը.— Մեր կանոններով՝ կնիք պատրաստելու իրաւունքը պատկանում է միայն Արեւմտեան Բիւրոյին. մինչեւ անդամ Արեւմտեան Բիւրոն էլ այդ իրաւունքը չունի: Կնիքների վրայ չէ դրուած «Դաշնակցութիւն» ինչպէս մեր պաշտօնական կնիքների մէջ, այլ «դաշնակցական եւն.». ուստի այդ իրաւունքը կարելի է տալ Արեւելեան Բիւրոյին: Եթէ կնիքի մասին եղած հարցումները իրաւունքի խնդիրներ են յարուցանում, այն ժամանակ Դիւանը այս հարցը կը դնի առանձին:

Նախագահը համարում է հարցը սպառուած եւ առաջարկում է անցնիլ Մեծ Ռաղաքի շրջանի գործունեութեան միւս կողմերին՝ պրոպագանդային եւ ընդհանուր ինդիրներին:

Ջինավարժութեան խնդիր

Վարդան.— Ի՞նչ ձեւով էր կատարւում զինավարժութիւնը եւ ո՞վ էր ղեկավարում:

Սեպուհ.— Ի՞նչ արդիւնքներ էք ունեցել մինչեւ այժմ:

Միհասեան.— Այդ վինավարժութիւնը ինքնապաշտպանութե՞ան նպատակով էր, թէ այլ նպատակներով:

Թոփչեան.— Ինչպէս տեղեկագրում յիշուած էր, բանուորների մէջ լուրեր էին տարածում, որ երբ ինքնաշ արհեստակցական դառնան, այլեւս իրաւունք չունեն զինուոր դառնալու եւ մեզ չարունակ հարցնում էին, թէ ճշմարի՞տ է այդ բանը: Այդ լուրերի առաջն առնելու համար, նաեւ որ[ովհետեւ] միլիցիան պէտք էր նախապատրաստել, մենք պարտաւորեցնում էինք, որ ամէն մարդ ինքը պիտի պարտաւորի իւր տունը, ընտանիքը պաշտպանել եւ ոչ թէ յոյսը յատուկ զինուորների վրայ դնել. ուստի պարտաւոր է զէնքի վարժուիլ: Կազմեցինք խմբեր, որոնց հետ թէ՛ բանաուոր եւ թէ գործնական կերպով պարապում էին: Ինքնաց տրամադրութեան տակ հրացաններ էին դրուած, գրօսանքներ էին կատարում եւ վարժութիւններ անում:

Շահխաթունեան.— Լրացնում եմ ընկ. Թոփչեանի ասածը. գործարաններում չատ ցանկացողներ կային. կառավարական զօրքում ծառայած զինուորների ղեկավարութեամբ մասերի էին բաժանուել, մաս-մաս գնում էին մօտակայ գիւղերը փոխն ի փոխ եւ վարժւում: Հենց Թիֆլիսի մէջ երկու մեծ սենեակ էր վարձուած, ուր նոյնպէս վարժութիւններ էին անում:

Մուրատ.— Ի՞նչ բան են այդ մարտական խմբերը, միլիցիա՞ թէ միայն բանուորների համար:

Թոփչեան.— Վարժութիւնները միայն կուսակցութեան անդամների համար չէին, այլ նաեւ ժողովրդի համար. իսկ մարտական խմբերի նպատակը այն էր, որ իսկական քաղաքական յեղափոխական ակտեր անելու համար չէ կարելի ամէն զինուորի ամէն գործի համար ղրկել. հարկաւոր էր ունենալ վարժ եւ վստահելի խմբակներ, որոնց կարելի լինէր յանձնել կարեւոր ակտերը իրագործելը. դրանք են մարտական խմբերը, որոնց քիւը պիտի քիչ լինէր. բայց սա դժուար եղաւ իրագործել:

Պրոպագանդա

Վարդան.— Արդեօք արհեստակցական միութիւններ կազմելիս բանուորներին միայն կովկասեան նախագիծն էր բացատրւում թէ ծանօթացնում էիք նաեւ տաճկահայկական հարցի հետ: Ասում էք որ բանուորները իրենց սրտին մօտ են համարում Քրքահայ դատը եւ ցանկանում են, որ Դաշնակցութիւնը երկուսն էլ միասին տանի: Բայց արդեօք, բանուորները որի՞ն են առաւելութիւն տալիս:

Վռամեան.— Ճանկալի էր մի քիչ աւելի տեղեկութիւններ Թիֆլիսի կոմիտէի հրաժարականի եւ երիտասարդական չարժման մասին:

Զարդարեան.— Դպրոցական խնդիրներին միջամըտելը ի՞նչ օգուտ կամ վնաս տուեց կազմակերպութեանը:

Զոփուրեան.— Արդեօք մարմինները կոնտրոլ ունե՞լ են պրոպագանդայի վերաբերմամբ, որ սա մի ուղղութեամբ տարուի, քա՛ղաքում եւ քա՛ղդրում:

Մուրատ.— Ասում էք որ 30 պրոպագանդիստ ունէին եւ պատրաստւում. արդեօք իւրաքանչիւրին ի՞նչ ռոճիկ է տրուել եւ քանի՞ պրոպագանդիստ էք ունեցել:

Վահագն.— Բողոքող երիտասարդները ուսանողնե՞ր են թէ այդ պատրաստուած պրոպագանդիստներից էլ կան:

Զոփուրեան.— Ինդրում եմ նաեւ դասընթացքի մասին տեղեկութիւններ տալ:

Անդրանիկ.— Այդ մօտ 30 պրոպագանդիստները, որ զանազան տեղեր իրար յաջորդում են, ո՞վ է դրանց խօսածին ուղղութիւն տալիս եւ ի՞նչ հիման վրայ:

Տաճատ.— Նոյն հարցերը ես ուզում էի դնել նաեւ պիւղերի վերաբերմամբ:

Միհասեան.— Նաեւ մամուլի պրոպագանդի մասին տեղեկութիւններ թող տրուին:

Մաշուր.— Այս երեք տարուան ընթացքում պրոպագանդան ի՞նչ չրջաններով է անցել. այդ մասին ցանկալի է, որ մի տեսութիւն տրուէր:

Թոփչեան.— Տաճկահայկական դատի համար արդէն տեղեկագրում ասուած էր, որ մինչեւ Ռուսաստանի յեղափոխական չարժումը սկսուելը՝ պրոպագանդի մեծ մասը տաճկահայկական դատի չուրջ էր պտտւում: Իսկ երբ սկսեց Ռուսաստանի յեղափոխական

չարժումը, մի քանի ամիս այլեւս տաճկահայկական դատի մասին չէր խօսւում, այլ ընթացիկ հրատապ խնդիրների մասին, իսկ տաճկահայկական դատի մասին՝ միջանկեալ կերպով: Իսկ վերջերս, նորից, այդ մասին լինում են դասախօսութիւններ, երբեմն մի քանի խմբեր միանում են եւ մարդ են հրաւիրում եւ խընդրում տաճկահայկական դատի մասին խօսել: Զկայ մի խումբ, որ չուզէ ջերմ կերպով աջակցել տաճկահայ դատին, բայց չկայ նաեւ մի խումբ, որ ուզենայ քըրքջահայ դատին օգնել, առանց մասնակցելու կովկասեան գործունէութեան: Ինչո՞ւ խմբերի ներկայացուցիչների ժողովներում գալիս էին նաեւ Միհրանականները, որոնք ասում էին, որ մենք հակառակ չենք կովկասեան գործունէութեան, բայց թող այդ գործունէութիւնը ինքնապաշտպանութեան սահմաններից չանցնի. բայց ինքնապաշտպանութիւն նրանք հասկանում են միայն հայ–քրքական ընդհարումների մէջ. այն ինչ՝ առաջ, 1903ից, մեր ինքնապաշտպանութիւնը կուիւ էր կառավարութեան դէմ: Բայց երբ մենք նրանց բացատրում էինք խնդրի էութիւնը, նրանք համաձայնում էին, ասելով որ իրենց այլ կերպ են հասկացրել: Ընդհանուր ժողովի որոշումների մասին կովկասեան գործունէութեան վերաբերմամբ՝ մեր մասնան զգալիպար չէ ունեցել: Այդ որոշումի արձանագրութիւնները յետոյ են հրապարակ եկել. և մասամբ այդ է պատճառը Նախագծի վերաբերմամբ եղած չփոթութեան: Տեղական կոմիտէի հրաժարումը եղել է այն պատճառով, որ սա իւր մեծամասնութեամբ անջատման կողմնակից էր եւ ուզում էր այդ մասին պրոպագանդ անել նաեւ խմբերում:

Նախագահ.— Այս հարցը վերցուում է մէջտեղից:

Թոփչեան.— (չարունակելով) Ընդհանուր ժողովի մասին վաղուց արդէն խօսւում էր եւ հարցերը պիտի չլինէին քննուէին: Ընկերներից մի քանիսը այն կարծիքին էին, որ զանազան դիտումներով, Դաշնակցութիւնը պիտի բաժանուի երկուսի: Առաջարկ եղաւ, որ այդ մասին խօսուի նաեւ մասնաներում: Ի հարկէ տեղական մարմինը պիտի ղեկավարուէր Դաշնակցութեան Ծրագրով, որը բաժանման հարց չունէր իւր մէջ, եւ հրաւիրուած պրոպագանդիստներն էլ դաշնակցականներ էին և պարտաւոր էին ղեկավարուել Ծրագրով. բաժանման խնդիրը մասնաների առաջ դնելու մասին տարբեր կարծիքներ յայտնուեցին. ի մէջի այլոց, թէ կարելի՞ է արդեօք դաշնակցական լինելով բաժանման մասին խօսել: Մի չարք ժողովներում, Բիւրոյի եւ այլ ընկերների հետ միասին, մենք քննում էինք այդ խընդիրը: (Միջանկեալ ասեմ, որ պրոպագանդիստների ռոճիկների մասին զանազան առասպելներ են տարածուած. պրոպագանդիստների 9/10ը ձրի է կատարել իւր պաշտօնը, միայն երկու հոգի են եղել, որ ամսական 30–35 ռուբլի ապրուստի փող են ստացել): Տեղական մարմինը ուզում էր, որ պրոպագանդիստները բաժանման մասին խօսելու: Երկար վիճաբանութիւններից յետոյ, որոշուեց որ երիտասարդները բաժանման մասին կարող են խօսել մասնաների առաջ, միայն այն պայմանով, որ հակառակ կարծիքի ներկայացուցիչներ եւս ներկայ լինեն ժողովի ժամանակ. դրանով մարմինների միջի կոնֆլիկտը [բախում, անհամաձայնութիւն] վերացաւ եւ սկսուեցին այդ ուղղութեամբ ժողովներ. երբ մինը ժողովի էր գնում, իմաց էր տալիս նաեւ հակառակ կարծիքի ներկայացուցիչին: Հետզհետէ այդպիսի ժողովները լայնացան, բանաձեւեր քուէարկուեցին եւ մեծամասնութեամբ ընդունուում էին ոչ–բաժանման մասին եղած բանաձեւերը. բաժանման կողմնակիցները չնչին թուով էին: Գաւառներում պրոպագանդիստների պակասութիւն է զգացուել միշտ. երբեմն ոմանք չորկիկի նման անցել են, մի քանի դասախօսութիւններ արել. իսկ գաւառներում տեղական մարմինները պրոպագանդիստների վրայ էին հսկում: Պրոպագանդիստների դասընթացքը առանց ծախսի է եղել, ճրիաբար, ընկերական սկզբունքով. ընկերները իրենց ազատ ժամերին դասախօսել են: Դասախօսութիւնները լայն ծրագրով էին տարուում, բայց մասնակցել են միայն Թիֆլիսի պրոպագանդիստները: Մեր տեղական պրոպագանդիստների գլխաւոր մասը այդ թուից անցել է: Պրոպագանդիստներ եղել են ուսանողներից, Ներսիսեան դպրոցի աւարտածներից: Պրոպագանդիստների դպրոցում առաջին տարին դասախօսել են երկու հոգի, — Ինձ եւ ես. երկրորդ տարին՝ 4 հոգի.— Սիմոնը, ես, Լիպարիտը եւ Տէր Յակոբեանը. իսկ այս տարի, երրորդ չրջանում՝ Միքայէլը, Ինձակը, ես, Սիմոնը, Համոն, Լ. Բաբայեանը: Այս տարի հնարաւոր չեղաւ ցանկալի չափով իրագործել, որովհետեւ պրոպագանդիստների մի մասը սպասում էին Ընդհանուր ժողովի որոշումներին եւ դասախօսների մի մասն էլ չրջանից հեռացած էին կամ զբաղուած: Այժմեան ունկնդիրներ են՝ Ներսիսեան դպրոցի Զ. եւ Ե. դասարանի աշակերտներից, գործակատարներից, բանուորներից եւ այլ գիտակից անհատներից: Այս ընտրողական պայքարում սրանք ղեկավարող դեր են կատարել:

Վռամեան յիշեցնում է իւր հարցը թէ պրոպագանդայի դպրոց անցածներից էլ կայի՞ն մարդիկ, որոնք հրաժարուել էին պրոպագանդա անելուց:

Թոփչեան.— Դրանցից կային 2–3 հոգի:

Մուրատ.— Պրոպագանդիստները ուղարկուում էին կենտրոնից. սկզբում նրանց մասին չէր կարելի ասել, թէ տաճկահայ դատը մոռանում էին: Բայց մի քանի չրջաններում նրանք սկսել էին խիստ խօսել, որ տաճկահայերը յեղափոխութիւն չեն ընդունում, ուզում են Թուրքերի հետ հաշտ ապրել: Ապա երբ նրանք մտնում էին կազմակերպուած խմբերի մէջ, ասում էին, որ եւ կ հետ դործ չունենք: Ինֆիալեանի, Բողարեանի, Ադելեանովի եւ .....(5) գործարանից եկել էին եւ լալով գանգատւում, որ իրենց չեն խօսում Երկրի մասին:

Թոփչեան.— Դրանք բոլորը թիւրիմացութիւններ են: Ճիշդ է, պրոպագանդիստները ասում էին, որ բաժանուի, բայց այդպիսի կոպիտ պատասխան չեն տըւած լինել: Երեւի ընթացիկ խնդիրների մասին դասախօսելիս, հարցում արած կը լինին Թուրքիայի մասին եւ պրոպագանդիստը պատասխանած կը լինի, որ այժմ այդ խնդրի մասին չենք խօսում:

Մաշուր.— Իւր տուած հարցին բաւարարութիւն ստացած չլինելով, ինքն է սկսում բացատրել իւր միտքը եւ պրոպագանդան բաժանում է երեք չրջանի, ա) 1904ից անմիջապէս յետոյ՝ երբ պրոպագանդը ուղղուած էր կազմակերպելու [ազգային ?] հարցի կողմը, ոտցիալիստական մասը տեղ չէր բռնում. երկրորդ չրջանը՝ յեղափոխութեան ժամանակ, երբ խօսւում էր կառավարութեան մասին եւ յեղափոխական ակտերի չուրջը. երրորդ չրջանը՝ 1905ից, երբ սկսում է սոցիալիստական պրոպագանդը եւ զանազան հոսանքների յարաբերացումը:

Թոփչեան.— Մեզ մի անգամ լուր տուին, թէ Միհրանը գնացել է Ադելխանովի գործարանը եւ այնտեղ բանուորների առաջ խօսել է, թէ մի՞թէ դուք մեր ազրիւնտ երկրի դատը ուզում էք մոռանալ, եւն.: Եւ ամբողջ գործարանը իբր թէ միհրանական է դարձել: Մենք գնացինք գործարան, բացատրեցինք խնդրի էութիւնը: Ոմանք, միհրանականներից, այժմ մեր արհեստակցական մրութիւնների անդամ են դարձել եւ անձամբ համոզուում են, որ դրանք այնպիսի հրէշաւոր բաներ չեն, ինչպէս նրանց նկարագրել են:

Նախագահը փակում է հարցերի ցանկը եւ յայտարարում է 5 րոպէ ընդմիջում:

Նախագահը խօսք է տալիս Ռուսաստանի եւ Եւրոպայի ուսանողութիւնների պատգամաւորներին, որոնք կարդում են իրենց տեղեկագրերը: Ռուսաստանի ուսանողութեան պատգամաւորը, Շահխաթունեան, իւր տեղեկագրի երկրորդ կէսը բերանացի է անում. իսկ Եւրոպայի դաշնակցական հայ ուսանողութեան պատգամաւոր Իսահակեանը՝ իւր տեղեկագրի մի մասը: Ժողովը պարտաւորացնում է նրանց, իրենց տեղեկագրերը լրացնել եւ գրաւոր տալ: Նրանք խօսք են տալիս:

Հարցումները նախ տրւում են Ռուսաստանի դաշնակցական ուսանողութեան պատգամաւորին:

Վահագն.— Կարմիր Ինձը քանի՞ տարի է գոյութիւն ունի, ո՞րքան է եղել նրա մուտքը եւ ի՞նչ գործ է կատարել: Ո՞րչափ է դաշնակցական ուսանողութեան Քիւրը, դրամական մուտքն ու ելքը մօտաւորապէս: Պրոպագանդը ի՞նչ նիւթերի մասին է եղել. ուսանողութիւնը ուժեր տուե՞լ է, որոնք տրամադրելի լինէին կազմակերպութեան մէջ գործելու, կամ Երկիր գնալու:

Չելալեան.— Ասում էք որ Զիֆոնին աջակցել էք. ի՞նչ չափով է եղել այդ աջակցութիւնը: Ի՞նչ բանի համար է դաշնակցական զինուորական խմբակը Մոսկուայում:

Զարդարեան.— Եթէ ներկայացուցչական ժողովը յանգի Մոսկուայի ռեղոլուցիայի [բանաձեւին] հակառակ որոշման, ի՞նչ է մտածում անել ուսանողութիւնը:

Բարսեղեան.— Ի՞նչ յարաբերութիւնների մէջ էք այլ կուսակցութիւնների հետ. ի՞նչ դասախօսութիւններ են տրուել Դաշնակցութեան վերաբերմամբ. Վորոնէժում դտնուած հայերը ի՞նչ տարրերից են: Նաեւ կարմիր Ինձի մասին տեղեկութիւն տուէք:

Վռամեան.— Ռուսաստանի ուսանողութիւնը ի՞նչ ուժեր է տուել Դաշնակցութեան եւ քանի՞ տոկոս մօտաւորապէս, արդեօք ուսանող գործիչները միայն ա՞մն են զբաղուել դաշնակցական գործերով, թէ մըւնայն են եղել:

Շահխաթունեան.— Կարմիր Ինձը, որքան ծանօթ եմ, 2½ տարի է, որ կազմուած է. նա կազմուած է երկու տեսակ տարրերից, երիտասարդներից եւ բաւական դիրքով տիկիններից, որոնք ուզում են իրենց ղեկավարութեան տակ դնել այդ գործը եւ վիճում են երիտասարդների մասին, թէ նրանք հիւրե՞ր պէտք է լինեն կարմիր Ինձի մէջ, թէ հաւասար ձայն պէտք է ունենան: Տիկինները չեն ուզում կոմիտէի հետ յարաբերութիւն ունենալ, նրանց մէջ նոյն տրամադրութիւնն է տիրում, ինչ որ դաղութի մէջ առհասարակ: Աւելի լաւ կը լինէր՝ կարմիր Ինձը տիկիններից կազմուած լինէր: Հայ ուսանողների Քիւը չատ է, մօտ 800, գուցէ եւ աւելի: Մինչեւ այս տարի, եղած ուսանողութեան խոշոր տոկոսը դաշնակցական էր, սա իմացւում էր ժողովներից, ուր եկած ուսանողների մեծ մասը դաշնակական էր: Ամբողջ Ռուսաստանում կը լինի մօտաւորապէս 150 հոգի դաշնակցական ուսանողներ, աւելացրած վրան մի 50 հոգի Օտեսայից: Այս տարի ուսանողութիւնը բոլորովին մուտք չէ ունեցել, որովհետեւ համալսարանը փակ է եղել եւ ուսանողութեան ակամրտի գլխաւոր աղբիւրը, հայկական երեկոյքը, չէ տրուել: Պրոպագանդայի բովանդակութիւնը եղել է դասախօսութիւններ Դաշնակցութեան եւ Սոց.–դեմոկրատիայի մասին, հրապարակային ժողովներում, ուր եկել են նաեւ այլ կուսակցութիւնների ուսանողներ, երբ վիճաբանութիւնների նիւթը եղել է ծրագրային հարցի չուրջը: Այս տարի սոց.–դեմոկրատները վճռել են մի չարք դասախօսութիւններ [տալ] սիստեմատիկ կերպով, մեր դէմ, ռուսերէն լեզուով, որին հրաւիր-

ւում էին նաեւ ռուս սոց.-դեմոկրատ ուսանողներ: Մենք էլ տանում էինք մեզ հետ մեր ռուս ընկեր ուսանողներին, որոնք մեր կողմն էին պաշտպանում իբրեւ սոցիալ-ռեւոլուցիոնէրներ [ընկերվարական յեղափոխականներ]:

Անդրանիկ.— 1904-5-6 թուերի մասին տեղեկագրի մէջ ոչ մի հաշուեցուցակ չկայ: (Աւելում է, որ դրանց հաշիւը կը տայ Արեւելեան Բիւրոն): Արդեօք ուսանողութիւնը ուժեր տուե՞լ է կուսակցութեան:

Շահխաթունեան.— Այդ հարցը ինձ համար պարզ չէ, չատերը աւարտել են եւ այժմ իրբեւ դաշնակցական գործում են, արդեօք սրա՞նց պէտք է ուսանողութեան տուած ուժեր համարել: 1904 թուի համագումարից յետոյ չատ ուսանողներ գնացել են Կովկաս, ուր ամառները գործում էին: Ջիմինին մեր տուած օգնութիւնը եղել է մի քանի անգամ: Մոսկուայի զինուած խմբակը ի հարկէ հայ-Թրքական ընդհարումների համար չէ եղել. նա կարող էր միայն ծառայել յեղափոխութեան (Մոսկուայի): Հոկտեմբերեան մանիֆեստից յետոյ, մի չարք խուլիգանական ջարդեր եղան, դրա համար զինուում էինք, որ այդ ջարդերի դէմ զինուած ուժ ներկայացնէինք. բայց չյաջողուեց խմբակը կազմելը: Դա պիտի լինէր մի անկախ խմբակ եւ գործէր ըստ ցանկութեան: Վորոնէժում մեծ եւ մանր վաճառականներ են եւ մօտ են Դաշնակցութեան: Թէ ի՞նչ կ'անի ուսանողութիւնը Ընդհանուր ժողովից յետոյ, դա կախուած է Ընդհանուր ժողովի վճիռներից: Նոյն հարցը կարելի է տալ եւ Թուիչեանի ռեզոլուցիայի [բանաձեւի] առիթով, Թէ ի՞նչ կ'անի Թիֆլիսը, երբ Ընդհանուր ժողով այնպէս չվճռի: Մեր յարաբերութիւնները այլ կուսակցութիւնների հետ՝ մենք այնտեղ իրբեւ կուսակցութիւն չատ քիչ դէպքերում ենք դուրս եկել. օրինակ բաւմանի թաղման ժամանակ, եւ այլ յարաբերութիւններ եղել են միայն զինական խնդրի համար: Սոց.-դեմոկրատները, օրինակ, մեզ առաջարկին դնել 30 մարդ, եւն.: Ուսանողական կուսակցութիւնները մարմիններ չունեն, այլ ունեն համալսարանական ֆրակցիաներ:

Մուրատ հարցնում է Թէ արդեօք Ռուսաստանի ուսանողութի՞ւնն էլ արտասահմանեան նման ֆեդերատիւ [դաշնակցային] կապը իրբեւ ժամանակաւոր միջոց է ընդունում, որպէսզի ապագայում աւելի լաւ բաժանեն, գտնելով որ այժմ բաժանելը վնասակար է: Պատասխան է ստանում, որ այդպէս մտածող մի հոգի կար այստեղ:

Չելալեան.— Դաշնակցական ուսանողութիւնը միւս մարմինների հետ, պարտքի եւ իրաւունքի ի՞նչ աստիճաններով եւ ի՞նչպէս է կապուած:

Նախագահ.— Ուսանողութիւնը կոմիտէական կազմակերպութիւն չէ: Եւրոպայի եւ Ռուսաստանի ուսանողութիւններին ձայն է տրուած, որպէսզի մեր մասնակցութիւնը կապուի կազմակերպական երիտասարդութիւնը կապուի կազմակերպութեան հետ:

Ջաւրեան.— Ես կարող եմ տեղեկութիւններ հաղորդել մանաւորապէս Պետերբուրգի ուսանողութեան մասին: Անցեալ տարի Պետերբուրգում ուսանողական ժողովներ էին լինում, ուր հաւաքւում էին սոց.-դեմոկրատ եւ դաշնակցական ուսանողներ: Այնտեղ նախատելի էր որ բոլոր զարգացած ուսանողները սոց.-դեմոկրատներ էին. իսկ ով որ զարգացում չունէր եւ միայն սրտով էր խօսում՝ դաշնակցական էր: Այնտեղ կային մօտ 130 ուսանող, նրանցից միայն 20ը դաշնակցական էին, իսկ մնացած ուսանողներն ու ուսանողուհիները բոլորը սոց.-դեմոկրատ էին եւ խիստ հակառակորդներ էին Դաշնակցութեան: Այս տարի միայն կարծեմ մէկն է մնացել դաշնակցական: Կան մօտ 30 հոգի, որոնք խիստ պահանջում են, որ բաժանում լինի: Դրանց մէջ չկան չատ տատանուող երիտասարդներ, ուստի հաւանական է, որ մեծ մասը դուրս կը գայ Դաշնակցութիւնից եւ կը մտնի այլ կուսակցութիւնների մէջ:

Միմսաեան.— Այդ ուսանողները ուզում են միայն Ռուսաստանի՞ չարժմամբ զբաղուել եւ բոլորովին ուրանո՞ւմ են երկրի դատը:

Ջաւրեան.— Սոց.-դեմոկրատները արդէն հակազգային են, իսկ դաշնակցականները չատ համակրում են ազգային դատին: Բայց որովհետեւ Դաշնակցութիւնը զբաղւում է նաեւ Թրքահայկական դատով, նրանք կարծում են, որ նա չէ կարող ազատուել այն տարրերից, որոնք ոչ-սոցիալիստներ են: Բայց ես կարծում եմ, որ եթէ Նախագիծը գործադրուի կեանքում, նրանք դուրս չեն գալ այլ կը մնան:

Սրանով վերջանում են Ռուսաստանի դաշնակցական ուսանողութեան մասին եղած վիճաբանութիւնները:

Նախագահը, յայտնելով որ ընտրուած նախագահներից միայն երկուսն են ներկայ եւ նրանք էլ չատ են ծանրաբեռնուում գործերով, առաջարկում է մի նախագահ էլ ընտրել:

Ժողովը միաձայն ընտրեց ընկ. Թուիչեանին: Նիստը փակուեց ժամը 6ին:

33ՐԴ ՆԻՍՏ (14 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:
Բացակայ է Սաֆօ:

«Եւրոպայի հայ ուսանողութեան» շուրջը (չարունակութիւն)

Մուրատ.— Ուսանողների մեծամասնութիւնը՝ երկու դասերի միացման սկզբունքի կողմնակից է, բայց ինչպէս երեւում է մի յետին նպատակով՝ որոշ ժամանակից յետոյ անջատուելու եւ մասսաներին իրենց կողմը քաշելու: Իրօք գոյութիւն ունի՞ մի այդպիսի նպատակ:

Վալադեան.— Այն կարծիքը, Թէ դաշնակցական ուսանողները մտաւոր զարգացման մէջ յետ են մնացել կուսակցութեան անփոյթ վերաբերմունքի հետեւանքով դէպի տեսական հարցերը՝ ճիշդ չէ. որովհետեւ ոչ միայն դաշնակցականները, այլ բոլոր միւս ուսանողներն անպատրաստ են. բոլորն էլ մի առանձին աշխատասիրութիւն չեն ցոյց տալիս, առնուազն Գերմանիայում:

Ստեփանեան.— Ո՞րքան տաճկահայ ուսանող ունիք. նրանք հետաքրքրո՞ւմ են մեր գործով: Այս հարցը ես տալիս եմ մանաւանդ այն տեսակէտով, որ ինձ հրահանգ է տրուած՝ տաճկահայ ընկերներին առաւելութիւնը տալու: Ապա ուսանողական ինչ որ օրգան էր սկսուել հրատարակուել Պարիզում, որի մասին սակայն ուսանողութեան ներկայացուցիչը տեղեկութիւն անգամ չի ունեցել:

Ջաւրեան.— Ուսումն աւարտելուց յետոյ, տաճկահայ ուսանողները մտնո՞ւմ են արդեօք Երկիր:

Խահակեան (գրաւոր).— Երկ Ստեփանեանը հարցնում էր Եւրոպայի դաշնակցական ուսանողների Թուի մասին: Դժբախտաբար այդ հարցին ճիշդ պատասխան տալ չեմ կարող, մօտաւորապէս 90ի չափ դաշնակցական ուսանողներ կը լինին որոնց մօտ 70ը պատգամաւորի ընտրութեանը մասնակցել են: Հարցնում են տաճկահայ ուսանողութեան հասարակական ֆիլիոնոմիայի [դիմագծութեան] մասին. պէտք է ասեմ՝ դա չատ էլ մխիթարական չէ: Ընդհանրապէս նըկատելի է որ տաճկահայ ուսանողութիւնը [անդորձն] է դէպի հասարակական եւ մասնաւորապէս մեր յեղափոխական հարցերը: Գերմանիայում տաճկահայ ուսանողներ չատ քիչ կան, նրանք մեծ մասամբ գտնւում են Ֆրանսիայում եւ զգալապէս խտացած են Պարիզում: Վերջիններիս մասին ժեննեւի ուսանողութիւնը չատ անմխիթարական տպաւորութիւն ունէր. ինձ ասացին, որ պատգամաւորի ընտրութեան համար գոնէ անհնար է եղել նրանց համախմբել, այնքան նրանք իրար հետ գժտուած եւ իրենց անձնական գործերով կլանուած են: Ստեփանեան հարցնում է Պարիզում հրատարակուած ինչ որ Թերթի մասին, որ կրում էր իւր ճակատին՝ «Օրգան դաշնակցական ուսանողութեան» խօսքերը: Այդ Թերթի մասին խօսելու պաշտօնական հրահանգ չունեմ. սակայն անձնապէս այդքանը կ'ասեմ, որ այդ Թերթի վարչութիւնը ինձ եւս դիմել էր Թերթին աշխատակցելու. բայց Թերթում այնքան վայրիվերոյ մտքեր կային սոցիալիզմի հասցէին, որ ես այնտեղ աշխատակցելու առաջարկը չէի կարող ընդունել: Մուրատը հարցնում է.— ճի՞շդ է որ կան ուսանողներ, որոնք ֆեդերատիւ կապը կուսակցութեան երկու մասերի մէջ իրրեւ մի հիմնական սկզբունք չեն նկատում, այլ դա համարում են իրբեւ ժամանակաւոր միջոց՝ չատ մասսա քարշ տալու իրենց յետեւից: Այս բանը նա կատակով որակեց «խորամանկութիւն» բառով: Սակայն այն ինչ որ ոմանց «խորամանկութիւն» է Թւում՝ ուրիշներին եւ յատկապէս այդ ժամանակաւոր ֆեդերացիայի կողմնակիցներին կարող է Թուալ եւ Թւում է իրրեւ կուսակցական խելացիութիւն եւ յեղափոխական տակտ: Հարցն այդպէս է. վերոյիշեալ տեսակէտի վրայ կանգնած մարդիկը համոզուած են որ տաճկահայ դատը եւ կովկասահայ Դաշնակցութիւնը միեւնոյն կուսակցութեան մէջ մնալ չեն կարող. այդ երկու հարցերը անհրաժեշտաբար պէտք է բաժանուեն իրարից: Թէ ինչո՞ւ են նրանք այդ տեսակէտի վրայ կանգնած՝ սա այլ հարց է, որի մասին իւր հերթին կը խօսենք: Բաժանման հարցը միանգամ ընդ միշտ ընդունելուց յետոյ՝ նրանց համար ամբողջ խնդիրը չանգում է հետեւեալ հարցին. ի՞նչպէս անել որ այդ բաժանումը խելացի կերպով, առանց անախորժութիւնների տեղի ունենայ. իսկ այդ խելացիութեան մաչտարը [աստիճանաչափը] հետեւեալն է. պէտք է բաժանումը այնպէս առաջ տանել, որ մի կողմից՝ պառակտում եւ անախորժութիւն չծագի այդ երկու դատերի միջեւ. իսկ միւս կողմից՝ պառակտում չընկնի մեր կովկասեան կազմակերպուած մասսաների չարքերի մէջ: Վերոյիշեալ տեսակէտի ներկայացուցիչները ասում են, — քանի որ բաժանումը անհրաժեշտ է, քանի որ ամենակարճ միջոցում հենց իրենք տաճկահայերը պէտք է պահանջեն այդ բաժանումը, տեսնելով որ մեր միութիւնը, ոչ միայն որեւէ օգուտ չէ տալիս, այլեւ վնասում է տաճկահայ դատին՝ ի՞նչ կարիք կայ հենց այժմ եւեթ կտրուկ ձեւով այդ հարցը դնել եւ ի զուր աղմուկ հանել: Այսպէս ուրեմն նրանց ասածը հետեւեալն է.— սպասել մի առժամանակ մինչեւ երկու կողմի համար էլ կը պարզուի բաժանման անհրաժեշտութիւնը, որից յետոյ բաժանումը ինքն իրեն, առանց ցնցումների ու անախորժութիւնների, տեղի կ'ունենայ: Ահա այս է նրանց տակտիկը, որը ոմանց խորամանկութիւն կարող է Թուալ, իսկ ոմանց էլ Թւում է իրրեւ կուսակցական խոհեմութիւն եւ յեղափոխական տակտ: Երկէկ ես ասացի, որ 15 տարի չարունակ մենք կարեւորութիւն չենք տուել մեր Ծրագրի, մեր հիմնական սկզբունքների ուսումնասիրութեանը. այնպիսի հիմնական սկզբունքներ մինչեւ անգամ, որոնց վրայ մենք միշտ կռթնել ենք ուրիշ կուսակցութիւնների հետ ընդհարուելիս. ինչպէս օրինակ՝ կազմակերպական ապակենտրոնացում եւ քաղաքական ֆեդերացիա, այսպիսի էական հարցերի գոնէ լուսաբանութեան հոգ չէ տարուած: Կուսակցութեան ամբողջ կեանքը պատել է չարունակ մի չարք գործնական ձեռնարկների չուրջը, որոնցով

Ա. Ջ. — Ինչպե՞ս եք դուք պատկերացնում ապագա հարցախույզը։

Ա. Ա. — Ես կարծում եմ, որ հարցերը պետք է լինեն ավելի կոնկրետ, քան մենք ունենք հիմա։ Ներկայիս հարցերը շատ ընդհանրական են։ Ես կարծում եմ, որ հարցերը պետք է ավելի կենտրոնանան կոնկրետ խնդիրների վրա։ Ընդհանուր հարցերը ոչ մի օգուտ չեն տալիս։ Ես կարծում եմ, որ հարցերը պետք է ավելի կենտրոնանան կոնկրետ խնդիրների վրա։ Ընդհանուր հարցերը ոչ մի օգուտ չեն տալիս։

Ա. Ջ. — Ինչպե՞ս եք դուք պատկերացնում ապագա հարցախույզը։

Ա. Ա. — Ես կարծում եմ, որ հարցերը պետք է լինեն ավելի կոնկրետ, քան մենք ունենք հիմա։ Ներկայիս հարցերը շատ ընդհանրական են։ Ես կարծում եմ, որ հարցերը պետք է ավելի կենտրոնանան կոնկրետ խնդիրների վրա։ Ընդհանուր հարցերը ոչ մի օգուտ չեն տալիս։

Ա. Ջ. — Ինչպե՞ս եք դուք պատկերացնում ապագա հարցախույզը։

Ա. Ա. — Ես կարծում եմ, որ հարցերը պետք է լինեն ավելի կոնկրետ, քան մենք ունենք հիմա։ Ներկայիս հարցերը շատ ընդհանրական են։ Ես կարծում եմ, որ հարցերը պետք է ավելի կենտրոնանան կոնկրետ խնդիրների վրա։ Ընդհանուր հարցերը ոչ մի օգուտ չեն տալիս։

Ա. Ջ. — Ինչպե՞ս եք դուք պատկերացնում ապագա հարցախույզը։

Ա. Ա. — Ես կարծում եմ, որ հարցերը պետք է լինեն ավելի կոնկրետ, քան մենք ունենք հիմա։ Ներկայիս հարցերը շատ ընդհանրական են։ Ես կարծում եմ, որ հարցերը պետք է ավելի կենտրոնանան կոնկրետ խնդիրների վրա։ Ընդհանուր հարցերը ոչ մի օգուտ չեն տալիս։

Ա. Ջ. — Ինչպե՞ս եք դուք պատկերացնում ապագա հարցախույզը։

Ա. Ա. — Ես կարծում եմ, որ հարցերը պետք է լինեն ավելի կոնկրետ, քան մենք ունենք հիմա։ Ներկայիս հարցերը շատ ընդհանրական են։ Ես կարծում եմ, որ հարցերը պետք է ավելի կենտրոնանան կոնկրետ խնդիրների վրա։ Ընդհանուր հարցերը ոչ մի օգուտ չեն տալիս։

Ա. Ջ. — Ինչպե՞ս եք դուք պատկերացնում ապագա հարցախույզը։

Ա. Ա. — Ես կարծում եմ, որ հարցերը պետք է լինեն ավելի կոնկրետ, քան մենք ունենք հիմա։ Ներկայիս հարցերը շատ ընդհանրական են։ Ես կարծում եմ, որ հարցերը պետք է ավելի կենտրոնանան կոնկրետ խնդիրների վրա։ Ընդհանուր հարցերը ոչ մի օգուտ չեն տալիս։

տաճկահայ եւ ռուսահայ ուսանողների մէջ հասկացողութեան անդունդ կայ· որովհետեւ այդ երկուքի կազմը[ւ]ածքը տարբեր է· տաճկահայի դաղափարը կեանքի դառնութեան արդիւնքն է, իսկ ռուսահայինը՝ ոչ: Ճշտոյ, դուք ի՞նչ իրաւունքով էք պահանջում, օրինակ Պարիզի տաճկահայ ուսանողութիւնից, որ սա գործի հայրենիքի համար· չէ՞ որ նա գլխաւորապէս հարուստներից է բաղկացած: Երկրի նե՛րսը նայինք, այնտեղ է ուր ուսանողները գործում են· ես գիտեմ մի ուսանող, որ իւր ուսումը թողած, Բէյրութում ջորեպան էր դարձել ու զէնք փոխադրում· ապա պատրիարքի վրայ ատրճանակ պարպողը եւս մի ուսանող էր: Պարիզը չպէտք է նոյնացնել երկրին:

Զաւրեան·— Ես զարմանում եմ, որ ուսանողութեան մասին եղած խօսակցութիւնը այսպիսի օրիգինալ [ինքնատիպ] բնաւորութիւն ստացաւ: Մէկ կողմից ուզում են արհամարհել ուսանողներին, որոնք դեռ չեն կազմակերպուած որպէս հասարակական ուժ, միւս կողմից՝ ընկ· նախագահն օրինակ այնքան լաւատես է ուսանողութեան վերաբերմամբ, որ քնաւ չէ նկատել նրա մութ կողմերը: Խօսելով ուսանողական համագումարների մասին ընկ· Մալումեան չէ՛տում է, որ դաշնակցականները աւելի պատրաստուած են եղել· բայց նա վերցնում է 1902–1905ի շրջանը, — մի ժամանակ, երբ Եւրոպայի հայ ուսանողութեան չարքերում զօրեղ չարժում կար յօգուտ Դաշնակցութեան: Այդ այն ժամանակն էր, երբ Դաշնակցութիւնն ընդարձակ գործունէութիւն ունէր կովկասում: Երբ սակայն, այնուամենայնիւ, Ռուսաստանում նոր օրեր եկան, ուսանողութիւնը տեսաւ, որ Դաշնակցութիւնը չունի խէլներ, աւելի ճիշդը, հիմքեր՝ ունեցած խէլները բացատրելու: Ես յիշեցնում եմ այն ուսանողական ժողովները, որ մենք ունեցել ենք Գեոերբուրգում· այդտեղ մի կողմից՝ պատրաստուած մեծամասնութիւնը ոչ-դաշնակցական, միւս կողմից դաշնակցականների մի աննշան խմբակ: — Ուսանողութիւնը չպէտք է արհամարհել, քանի որ նա այն աղբիւրն է, որից մենք ստանում ենք մեր բոլոր մտաւոր ուժերը: Ասել թէ «ուսանողութիւնից քիչ յեղափոխականներ են դուրս գալիս», սխալ կը լինի այն տեսակէտից, որ ուրիշ դասերն եւս խոշոր թուով յեղափոխականներ չեն տալիս:

Թոփչեան·— Իսահակեան, ուսանողների կողմից յայտարարում է, որ եթէ ժողովը չընդունի նրանց աշխարհահայեցողութիւնը՝ կը հեռանան· եւ այդ տեսակէտը ցաւակցութիւնն է յայտնում: Ես գալիս եմ սակայն ապացուցանելու, որ նրա ցաւակցութիւնը աւելորդ է: Իւրաքանչիւր կուսակցութեան մէջ, մտաւոր ուժեր առաջ են գալիս ոչ թէ ուսանողութեան մէջից, այլ հենց կեանքի միջից· եթէ մի կուսակցութիւն raison d'être [գոյութեան իմաստ] *ունի, ուժեր միշտ էլ հրապարակ կը գան առանց ուսանողութեան· ուժերը մի՛թէ բոլորը համալսարանական պէտք է լինեն: Մասսաների միջից չատ անգամ անհատներ են դուրս գալիս, որոնք աւելի առողջ միտք ունեն հասարակական խնդիրներ ըմբռնելու համար, քան չատ համալսարանականներ: Մտաւորական ուժերը մեզանում, մեր կուսակցութեան մէջին կրթութիւն ունեցողների չարքերից են դուրս գալիս:*

Ռոստոմ·— Երբ մենք խօսում ենք տաճկահայ ուսանողների մասին, մեր ընկերները քասիբի խնդիրներ են հանում: Ընկերների յառաջ բերած պատճառաբանութիւնները, թէ ինչո՞ւ տաճկահայ ուսանողները չեն հետաքրքրւում գործով, չհերքեցին իրականութիւնը· փաստը մնում է փաստ, որ տաճկահայ ուսանողութիւնը չատ քիչ է հետաքրքրւում յեղափոխութեամբ:

Շահխաթունեան·— Վամեան ասում է թէ ուսանողը դեռ ուսանելու կարիք ունի: Եթէ խօսքը կուսակցութեան սկզբունքների մասին է, այս դէպքում՝ ներկայ եղողներից չատերը կարիք ունին ուսանելու: Ուսանողութիւնը դրել է հարց, որ Ընդհանուր ժողովը տայ իրեն մի որոշ ծրագիր· եւ նրանց այս քայլը, կրկնում եմ, չատ հասկանալի է:

Զելալեան·— Ռոստոմը գտնում է, որ տաճկահայ ուսանողները քիչ են հետաքրքրւում յեղափոխական յեղափոխական գործով: Դաշնակցութիւնից զատ կայ նաեւ այլ կուսակցութիւն, որի մէջ կան չատ ինտելիգենտ ուժեր· ասել է թէ տաճկահայ ինտելիգենցիան դործի չուրջն է հաւաքուած, թէեւ մենք նրանց յեղափոխական չենք համարում:

Սեպուհ·— Ուսանողութիւնը ուլտիմատումներ [վերջնագրեր] է դնում ժողովի առաջ: Բայց արդեօք նա ծանօ՞թ է հայ իրականութեան հետ:

Խահակեան·— Ոչ ոք չէ ասել մեզ, որ մենք կըտրական ուլտիմատում [վերջնագիր] դնենք, մենք միայն մեր ցանկութիւնն ենք յայտնում: Մալումեանն ասում է, որ ուսանողութիւնն անչարժ է· զարմանալի է, որ այդ անչարժութիւնն աչքի է ընկնում ճիշդ այն ժամանակ, երբ երկիրը տակնուվրայ է լինում: Դաշնակցական ուսանողները, Մալումեանի ասելով, աւելի պատրաստուած են եղել քան սոցիալ-դեմոկրատ հայ ընկերները· այդ ճիշդ է երբ մենք գործ ունենք այնպիսի տափակ դեմոկրատների հետ, որոնք պնդում են, թէ տաճկահայ դատը բուրժուական գործ է· կամ երբ խօսքը վերաբերում է կովկասեան ինքնապաշտպանութեան խնդրին, այդտեղ նրանք իրօք յիմա՛ր դրութեան մէջ են ընկնում մեզ հետ վիճելիս· սակայն երբ հարցը վերաբերում է քէորիական [տեսական] խնդրի՝ իսկոյն երեւում է դաշնակցական ուսանողին անպատրաստութիւնը: Ընկ· Ռոստոմ ասում է՝ ինտելիգենցիան հետզհետէ կորցնում է իւր յատուկ նշանակութիւնը· այդ ճիշդ է միայն այնտեղ, որտեղ երկիրը կուլտուրական բարձր աստիճանի վրայ է կանգնած, կեանքը

հակադիր զօրեղ հոսանքների է բաժանուած՝ դասակարգային կռուի պատճառով: Մենք, սակայն դեռ ինտելիգենցիայի առանձին կարիքն ունենք: Ես համաձայն եմ Վամեանի հետ, — տաճկահայ ինտելիգենցիան [մտաւորականութիւնը] գործում է երկրում· բայց իմ խօսքը Եւրոպայի ուսանողութեան մասին է, եւ ես դարձեալ կ'ասեմ, որ Եւրոպայում տաճկահայ ուսանողութիւնը իներտ [անգործօն] է դէպի հասարակական գործունէութիւնը:

Նիստը փակւում է:

34ՐԴ ՆԻՍՏ (14 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:

Բացակայ են՝ Իչխան, Մուրատ, Աւ. Իսահակեան, Սաֆօ:

Ապառաժի պատգամաւոր Բարսեղեանը կարդում է չրջանի տեղեկագիրը, որի վերջանալուց յետոյ՝ նախագահը հարցումները բաժանում է խմբերի·—

ա.) Կազմակերպական· բ.) Հաչուական· գ.) Ընդհարումներին վերաբերեալ խնդիրներ· դ.) Պրոպագանդա եւ ե.) Տեռորական:

Թոփչեան·— Հետաքրքիր է թէ ո՞րքան է զուտ կազմակերպական բիւդճէն:

Ստեփանեան·— Արդեօք Ապառաժը իւր բիւդճէից երկրին տուե՞լ է որեւէ բան, դրամով կամ զէնքով:

Բարսեղեան·— Զուտ կազմակերպական բիւդճէն չեմ կարող հանել այս հաչուից, դա կարող է հաչուական յանձնախումբը անել: Այս երեք տարուայ ընթացքում անմիջականօրէն Երկրին փող չէ յատկացուել· 1904ին ուղարկուած է Բիւրոյին՝ 2000 ռուբլի:

Զոփուրեան·— Բարսեղեան տուաւ բաւական խոշոր թուեր զէնքի եւ ռազմամթերքի, որ գտնւում են ժողովուրդի ձեռքում· արդեօք բոլոր այդ զէնքերը կռուի համար պէտքակա՞ն են կամ դրանց ո՞ր մասը անպէտք է:

Վռամեան·— Ո՞րքան է կազմակերպութեան զէնքերի թիւը:

Զոփուրեան·— Մեր կողմերում չատ են խօսում, որ նոյնիսկ դաշնակցական զինուորները մանակցել են Թալաններին: Արդեօք ճի՞շդ են սրանք եւ ո՞ր դէպքում: Կռիւների ժամանակ եղած Թալաններին ի՞նչ գործադրութիւն է տրուած: Ի՞նչ տոկոս էին կազմում դրանցի զինուորները եւ ի՞նչ տեղական կամաւորները:

Անդրանիկ·— Ի՞նչքան է կազմակերպական զէնքերի Թիւը: Կռիւների ժամանակ մեծաքանակ Թալան է եղել ոչխարի եւ տաւարի· արդեօք այդ Թալանը ժողովուրդի՞ն է բաժանուած, Թէ կազմակերպական զինուորները իրենց են յատկացրել: Վերադարձած Թալանները որի՞նն են եղել, հայերի՞նը Թէ Թուրքերինը:

Շահխաթունեան·— Ես էլ եմ դնում ընկ· Զոփուրեանի տուած հարցը· բացի այդ, Թող ցոյց տրուի այն պիծը, որ տարուում է կազմակերպական գործերի եւ կոմունակի մարդկանց կամ ամբոխային գործողութիւնների մէջ, որ իմանանք, Թէ ո՞ր գործի համար ո՞վ է պատասխանատուն:

Սեպուհ·— Երկու տարի է, որ Դաշնակցութիւնը ղեկավարում էր կռիւները եւ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը: Այժմ կուսակցութիւնը հեռանալով գործը Թողել է ժողովուրդին: Արդեօք, եթէ որեւէ դէպք պատահի, ժողովուրդը կարո՞ղ է ինքնուրոյն կերպով պաշտպանուել:

Վարդան (պատասխանում է այս հարցերին, իբրեւ գործին աւելի մօտիկից ծանօթ)·— Ժողովրդի մօտ եղած զէնքերից, ինչպէս ես եմ հասկանում, եթէ լաւերը ընտրելու լինենք, կարելի է հարիւրից 30ը զէնգգել: Բայց կան զէնքեր, որոնք Թէեւ լաւերը չեն, բայց կարելի է գործածել եւ գործածողին մնաս չեն տալ· եւ եթէ դրանք էլ հաչուենք, անպէտքները կը լինեն 20–25%: Զէնքերի քանակը՝ Զիւանչիրում կար մօտ 50–60 հրացան· բայց ծախուել են ժողովրդին, այժմ կը լինին 25ի չափ մոսինեներ· Ալաչկերտում կայ մօտ 15–18 մոսին· Վարանդայում՝ 15 հատ· Դիլաքում, հաստատ չգիտեմ, գուցէ 12 հատ· Զանգեզուրում՝ 30–40 եւ գուցէ աւելի· քաղաքում կայ մօտաւորապէս 150, Թէ՛ բերդան եւ Թէ մոսին, իւրաքանչիւրից կէս առ կէս· մաուզեր ատրճանակ՝ գուցէ 20, հասարակ ատրճանակ՝ 20–30· իսկ քաղաքի ժողովրդի մօտ ամէն տեսակից միասին մօտ 300 հրացան, իսկ ատրճանակ չատ աւելի: Գալով Թալանի հարցին՝ քաղաքում 1905ին հրդեհի պատճառով հայկական մասը ենթարկուեց Թալանի· երբ ժողովուրդը փախչում էր ամէն բան Թողած, այն ժամանակ Թալանում էին, ով ինչ կարող էր՝ տանում էր իւր հետ, սակայն Թէ միեւնոյնն է, պիտի այրուի: Թալանին մասնակցել է ամբողջ քաղաքը եւ՛ քաղաքացի, եւ՛ զինուոր եւ՛ կամաւոր: Մենք ուզեցինք Թալանողներին պատժել, բայց տեսանք, որ ստիպուած ենք ամբողջ քաղաքը պատժել: Թալանած ապրանքներից մեր հաւաքածի դումարը, մօտաւորապէս հասնում էր 150,000ի· այդ բոլորը հաւաքել ենք տեղեկութիւն ստանալով, լրտեսելով, խուզարկելով· մինչեւ անգամ գիւղերից գտել ենք Թալանուած ապրանքից: Ապա հաւաքել ենք ժողովուրդին եւ ստուգելով վկաների միջոցով, իւրաքանչիւրի ապրանքը տուել ենք իրեն: Թալանը չատ մեծ էր, մեծ կորստածը չենք հաչուում: 1905ին զինուորների Թիւը քիչ էր· (ապա պատմում է համառօտակի կռուի ընթացքը եւ հայկական մասի այրուիլը՝ քամու պատճառով): Եթէ Թուրքերը վախկոտ եւ Թուլամորթ չլինէին, կարող էին չատ հեշտութեամբ ներս խուժել: Իսկ

1906ին աւելի լաւ էր կազմակերպուած· դրսից եկած զինուորների թիւը չատ քիչ էր՝ 15–20· գաւառներից չատ մարդ կար, որոնց մի մասը աւելորդ էր: Կռիւը յաջող է անցել· ոչ մի թալան չէ եղել· քաղաքացիք խաղաղ չարունակում էին իրենց առուտուրը, իսկ սահմանների վրայ չարունակում էր կռիւը: Ունէինք 120 ռոճիկաւոր կռուող· բոլոր կրակած փամփուշտների կէսը զուր տեղն է կրակուած եղել: Միայն Դաշնակցութեան պահեստից 100·000ի չափ դուրս է եկել, չհաշուած ժողովրդի կրակածը: Մի անգամ ընդ միշտ պիտի ասել, որ սպանուած Թուրքերի թիւը երբեք չէ կարելի ճշդութեամբ իմանալ: Մեր կարծիքով, նրանց սպանուածների թիւը, այս կռւում, 100ից աւելի է· նրանք ասում են որ 30 է: Մեզնից սպանուած է 27 մարդ, ունենք 100ի չափ վիրաւորուածներ, մեծ մասամբ թեթեւ: Մենք չատ աւելի բարեյաջող պայմաններում ենք կռուել, քան Թուրքերը· մենք ունէինք մանր ու խոշոր թնդանօթներ, ռումբ, հրթիռ, լաւ հրացաններ: Այս բոլորը աչքի առաջ ունենալով Թուրք սպանուածների թիւը չատ պիտի լինի: Թուրք բժիշկ Մեհմանդարովը պատմում էր, որ սաստիկ յոգնած է վիրաւորներին նայելուց, նրա ասելով վիրաւորներ չատ կային: Գաւառներում թալանը եղել է ամէն տեղ· յարձակւում էին Թուրքական գիւղերի վրայ, այրում, ձեռին ընկածը սպանում եւ ապրանքը թալանում: Թալանի մի մասը սեփականացուել է, օրինակ ոչխարներ, ձիեր, դրուել են կազմակերպութեան տրամադրութեան տակ: Կազմակերպութիւնը այդ բոլորը ծախել է ժողովուրդին, երբեմն չատ էժան· պատահել է, որ 50 կոպեկով ոչխար ենք ծախել: Փողը յանձնուել է կազմակերպութեան, որով զինուորներին ռոճիկ է տրուած, զէնք, ձի ենք գնել եւ առհասարակ ծախսել ենք ինքնապաշտպանութեան համար: Այդ մուտքերը նշանակուած են հաչիւներում: Թալաններին մասնակցել են ե՛ւ զինուորները եւ բոլորը: Այն հարցը, թէ արդեօք ժողովուրդը ընդունո՞ւմ է ինքնիրեն պաշտպանելու առանց կազմակերպութեան ղեկավարութեան՝ Թուում է, թէ առանց ղեկավար մարդկանց ժողովուրդը հազիւ թէ կարողանայ ինքն իրեն պաշտպանել: Մենք այդ ժողովուրդին բռնի ենք պաշտպանել· այժմ բողոքում են մեր արած բռնութիւնների դէմ· այո՛, բռնութիւններ եղել են, բայց յօգուտ այդ նոյն ժողովուրդի: Երբ հարկաւոր էր՝ դիրք դուրս չեն եկել, զէնք չեն գնել, ահա սրանց համար բռնութիւններ են եղել: Շուշում բողոքողներին ես ասում էի· «Դուք ինչքան ուզում էք բողոքեցէք, բայց մենք ձեզ զօրով պիտի պաշտպանենք քանի վտանգ կայ»· իսկ երբ վտանգը անցաւ եւ խաղաղուեց, ամէն բան տուինք իրենց:

Անդրանիկ.— Եթէ այժմ անսպասելի կերպով նորից հայ-Քրդական ընդհարումները կրկնուին կամ, անհաւատալի կերպով, ստիպուի ժողովուրդը օրինակ վրացու դէմ կռուել կամ կառավարութեան դէմ, արդեօք ռազմական տեսակէտից այդ ժողովուրդը կարողութիւն ունի՞ կռուելու:

Վարդան.— Ժողովուրդը վախենում է միայն կառավարութիւնից: Բացի կառավարութիւնից ամէնքի դէմ էլ կարող է կռուել· նա կը կռուի նոյնիսկ կառավարութեան դէմ, եթէ Թուրքերը չէզոք մնան եւ չմիանան կառավարութեան, չնորհիւ անառիկ դիրքերի յարմարութեան:

Անդրանիկ.— կառավարութեան ծառայած զինուորներից եւ սպաներից գտնուեցա՞ն այնպիսիները, որոնք կռիւների ժամանակ օգնէին իրենց մասնակցութեամբ:

Վարդան.— Զինուորներ եղել են, բայց սպաներ մեր կողմում գոնէ ոչ մէկը չէ եղել: Ապառաժը իւր աշխարհագրական դիրքով, ամենաանյարմար դրութեան մէջ է եղել կռուելու համար: Միակ ելևմտի ճանապարհը փակուած էր, եւ ժողովուրդը ստիպուած է եղել 5–6 օր ճանապարհ գնալ: Պիտի ասեմ, որ մեր կողմերում պետական զինուորների եւ սպաների համակրանքը ընդհանրապէս մեր կողմն է եղել:

Սեպուհ.— Ինդրում եմ տեղեկութիւններ տալ Թուրքիկ Գէորգի դէպքի մասին:

Վարդան.— Այդտեղ մի Թիւրիմացութիւն է տեղի ունեցել· Գէորգը իւր նախաձեռնութեամբ մի քանի զինուոր է ուղարկում, մեծ ճանապարհի վրայ պտտելու, որ տեսնեն Թէ ի՞նչ կայ, ի՞նչ չկայ: Կարգադրուած էր ամէն միջոց գործ դնել, որ խուսափին մեծ ճանապարհի վրայ ընդհարման առիթներ տալուց: Գնացողները տեսնում են սայլապաններ իրենց սայլերով անցնելիս, դրանց բռնում եւ բերում են Գէորգի մօտ, որը մտածելով, որ եթէ դրանց բաց Թողնեն, նրանք լուր կը տան դէպքի մասին եւ կը վտանգեն գիւղը, ուստի հրամայում է դրանց կոտորել: Մեզ յայտնում են այդ մասին: Դատարկ սայլերը առանց տէրերի, ուշադրութիւն են գրաւում եւ հետքը բռնելով գալիս են մինչեւ հայ գիւղը· կառավարութիւնը պահանջում է սայլապաններին, ոմբակոծում է գիւղը, ահագին տանջանքներ է տալիս մարդկանց եւ պահանջում է դիակները· բայց դիակները վաղուց անյայտացրած էին: Ես գնացի գիւղ, բացատրութիւն պահանջեցի Գէորգից, ղինաթափ արի զինուորներին եւ Գէորգին հեռացրի չրջանից:

Վռամեան.— Ո՞րքան գիւղ է աւերուած հայերի ձեռքով եւ ո՞րքան Թուրքերի· որքա՞ն է իւրաքանչիւր կողմի մնասը:

Վարդան.— Աւերուած է 70–80 Թուրք գիւղ, որոնցից ամենամեծը 800 տուն էր: Եթէ ամբողջ Ապառաժի չրջանը վերցնենք եւ մանր գիւղերն էլ հաշուենք, գուցէ աւերուած Թուրք գիւղերի Թիւը 90ից էլ աւելի լինի, մինչեւ Թերեւս 100: Դրանց մի մասը ամբողջապէս այրուած է· մի մասը կիսով չափ է այրուած· մի մասը բնակիչները փախել են եւ գիւղը Թալանուել: Բայց յետոյ համարեա բոլորը, չատ քիչ բացառութեամբ, վերադարձել են իրենց տեղերը եւ կրկին հաստատուել: Չեն վերադարձել նրանք միայն, որոնք ոչինչ չեն ունեցել նորից հաստատուելու համար: Նիւթական մնասի մասին հաստատ Թուեր չեմ կարող ասել, բայց այսքանը գիտեմ, որ Թուրքերի նիւթական մնասը անհամեմատ աւելի չատ է քան հայերինը· մարդկային զոհերի Թիւը՝ նմանապէս Թուրքերինը 3–4 անգամ աւելի է: Հայկական գիւղերից վնասուած է 10–13 գիւղ:

Անդրանիկ.— Այդ չրջանում ժողովրդի զանազան դասակարգերից, վաճառական, կալուածատէր, խանութպան եւ արհեստաւոր, իւրաքանչիւրը ո՞րքան դրամ է տուել ինքնապաշտպանութեան համար:

Արամ.— Ես դրան կ'աւելցնեմ, Թէ ո՛ր դասակարգը ի՞նչպէս է տուել· բռնութիւն որի՞ վրայ է գործադրուած:

Վարդան.— Բռնութիւն եղել է ունեւորների վրայ: Դրամը տուել է ժողովուրդը ըստ կարողութեան:

Պրոպագանդա

Տաճատ.— Տեղեկագրում ասուած էր, որ մարմինները ընտրուել են գիւղի ազդեցիկ մարդկանցից, այսինքն հարուստներից, աղաներից: Իսկապէս ուզում եմ իմանալ, Թէ պրոպագանդը ի՞նչպէս է եղել գիւղերում, երբ մարմինների անդամները ունեւոր մարդիկ էին:

Չոփուրեան.— Ասուած էր, որ աշակերտութիւնը մի ժամանակ դաշնակցական է եղել եւ մեծ օժանդակութիւն է արել կազմակերպութեան: Ուզում եմ իմանալ, Թէ ինչի՞ մէջ է արտայայտուել այդ օժանդակութիւնը: Ցիշուած գործարանները ո՞ւմ են պատկանում, քանի՞սը հայի եւ քանի՞սը Թուրքի, եւ բանուորներից քանի՞սն են հայ եւ քանի՞սը Թուրք:

Ասլան.— Ինչո՞ւ է կոմիտէն կարաբէգեանին պաշտօնական Թուղթ դրել· ի՞նչպէս է բացատրում այն, որ դպրոցական հարցի չուրջը եղած պրոպագանդի համար կոմիտէն կազմակերպութեան կնիքով Թուղթ է գրում կարաբէգեանին:

Նահապետեան.— Եթէ կարաբէգեանի պրոպագանդը անձնական է եղել մի դաշնակցականի դէմ, ինչո՞ւ էր կոմիտէն դրա համար պաշտօնական Թուղթ գրում:

Բարսեղեան.— Թէ այն տեղերում, ուր ենթակոմիտէն ազդեցիկ մարդկանցից է եղել կազմուած, պրոպագանդը ի՞նչ հետեւանքներ է ունեցել, դրա համար կոնկրէտ դէպքեր չեն եղել, որ արտայայտուէր: Բէկերից մարմինների մէջ ոչ ոք չէ եղել: Աշակերտները եղել են պրոպագանդիստներ, կուսղներ (ռէալական դպրոցի 6րդ դասարանը սոց.–դեմոկրատ է, 5րդի կէսը սոց.–դեմոկրատ, կէսը՝ դաշնակցական: 4րդը դաշնակցական է: Թեմական դպրոցը՝ դաշնակցական):

Մաշուրեան յայտնում է որ դործարաններում 1500 չկազմակերպուած բանուոր կայ:

Նահխաթունեան.— Տեղեկագրում ոչինչ ասուած չկայ կազմակերպական դործի համար· այնտեղ արհեստակցական միութիւններ կան, որոնց մասին չէ յիշուած: Պրոպագանդիստների ի՞նչ քանակ եւ որակ կայ այնտեղ: Արդեօք ընդհարումների ընթացքում կամ առաջ չէ՞ եղել որեւէ դործնական քայլ կազմակերպութեան կողմից:

Չարդարեան.— Սոց.–դեմոկրատները ո՞րքան կազմակերպուած մարդիկ ունին եւ մեզ հետ ի՞նչպէս են մրցում:

Բարսեղեան.— կան մի քանի սոց.–դեմոկրատներ, որոնք ոչ մի խումբ չունին: 40 հոգի այակերտներից ունին: Գործարաններում չկան սոց.–դեմոկրատներ· իսկ դաւառներում ոչինչ չունին: Հնչակեաններն էլ խումբ չունին· սրանք ունէին 40–50 գիւղ, որ անցել են մեր կողմը· Զանգեզուրում ունին մի երկու գիւղ:

Մաշուր.— Դաշնակցութեան դործունէութեան հետեւո՞ղն է, որ սոց.–դեմոկրատները յաջողութիւն չունին:

Բարսեղեան.— Արհեստակցական միութիւններ 2–3 ամիս է որ կազմուած են· դործնական քայլեր չեն արուած, որովհետեւ Թուրք–հայկական ընդհարումները այդ չէին Թոյլ տալիս· իսկ 1904ին արհեստակցական միութիւններ չեն եղել:

Տեռորական

Անդրանիկը յիչում է որ տեղեկագրում տուած 10–15 տեռորների մէջ կար մէկը, առանձին ուշադրութեան արժանի· — տեռորի է ենթարկուած մի մարդ իր կնոջ սպանուած լինելու պատճառով· կը խնդրէ այդ մասին բացատրութիւն:

Չոփուրեան հարցնում է Թէ տեռորներից քանի՞սն է յայտարարուած:

Նախագահը յայտնում է, Թէ ով որ տեռորների մասին հարցում ունի, Թող ներկայացնէ տեռորական յանձնաժողովին, որը այդ խնդրի մասին մանրամասն զեկուցում է պատրաստում:

Նիստը փակուելուց առաջ նախագահը դիւանի կողմից առաջարկեց ընկեր Վարդանին, իբր Լեռնավարչի պատասխանատու Մարմնի նախկին անդամի (12), տեսնելու Սիրականի եւ Սարհատի հետ (եկած Եգիպտոսից) եւ իմանալ Թէ Սարհատը ի՞նչ միտքով է եկել եւ նրանց Թղթերը առանալով, զեկուցանել ժողովին:

35ՐԴ ՆԻՍՏ (15 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Թոփչեան։

Բացակայ են՝ Քոփուրեան, Մաշուր, Մինասեան, Մանուկ, Ոսկօ, Ջաւրեան։

Կարգացւում է 24րդ նիստի արձանագրութիւնը։ Վամեան՝ այդ նիստին արտասանած պատասխանը գրի էր առել եւ յանձնել քարտուղարին, վերջնոյ խնդրանօք, արձանագրութեան մէջ անցընելու համար։

Մալումեան։— Ես դէմ չեմ որ իւրաքանչիւր ընկեր իր խօսածը գրաւոր տայ արձանագրութեան մէջ անցընելու. սակայն Վամեան ի չարն է գործ գնում այդ իրաւունքը եւ քարտուղարին յանձնած իր գրաւոր ճառի մէջ, ուելցրել է խօսքեր, որոնք չկային իր բերանացի բացատրութեան մէջ։ Ես բողոքում եմ մի այդպիսի վարմունքի դէմ եւ խնդրում եմ այս նկատողութիւնը մտցնել արձանագրութեան մէջ։ Եւ որովհետեւ ես պնդում եմ իմ ներկայացրած փաստերի ճշդութեան վրայ, սոխուած եմ այդ փաստերից մէկը, ջղի կէզ կիսի խնդիրը ներկայացնել գաղտնի յանձնաժողովին՝ քննելու համար։

Վռամեան բողոքում է։

Իսահակեան։— Արձանագրութիւնների այդ կէտը կարելի չէ կարելի. իւրաքանչիւրը գնում է տուն եւ այնտեղ գրելով այն, ինչ որ ինքն է ուզում, բերում է եւ մտցնել տալիս արձանագրութեան մէջ։ Գէշ է գրել այն ինչ որ խօսուել է այստեղ, առանց ուելացնելու։

Վռամեան։— Ցո՛, չպէտք է ուելացնել. բայց քարտուղարներն իրենք են մեղաւոր, որ չեն կարողանում ժողովում խօսուածը լրիւ արձանագրել։

Ռուստոմ։— Կան հարցեր որոնց վերաբերմամբ երկու կարծիք լինել չէ կարող. այդպիսի հարցերի վերաբերմամբ եղած ճառերը կարող են գրաւոր արուիլ, իսկ ուելի փափուկ հարցերին հարկաւոր է զգուշութեամբ վերաբերուել։

Բարսեղեան։— Վաղուց որոշուած է, որ խօսողները կարող են գրի անցկացնել իրենց ասածները — բան էութեան, ի հարկէ։

Նախագահ։— Մէկ գրաւորները նոյն օրը չյանձնուին քարտուղարին, այլ ժամանակ վերջնոյ է թողնւում արձանագրել ինչպէս ինքն է կարողացել։

Ժողովը որոշում է նոյն օրը միայն գրաւոր ներկայացնել խօսածները եւ ճշդութեան համար պատասխանատու ճանաչել քարտուղարներին։

Ռուստոմ կարդում է Ալեւելեան Բիւրոյի տեղեկագրի մի կէտը. հայ–թուրքական ընդհարումները։ Սկսում են հարցերը։

Վռամեան։— Ի՞նչ չափով առաջիկ կառավարութիւնը մտանակից է հայ–թուրքական ընդհարումներին եւ ի՞նչ ապացոյցներ կան մտանակցութեան փաստը հաստատելու համար։ Որքա՞ն լուրջ բնաւորութիւն է կրում թուրքերի մէջ յայտնուած նոր հոսանքը. ի՞նչ չափով յոյս կարելի է դնել նրա վրայ։ Ի՞նչ դիրք բռնեց Դաշնակցութիւնը՝ Թիֆլիսի փետրուարեան հայ–թրքական համագումարի վերաբերմամբ։

Գուսան։— Ռուստոմը ասում է թէ վրացիները ներդործուել են հայկական չարժումներից. ի՞նչպէս։

Ստեփանեան։— Ինչո՞վ բացատրել, որ հայատեաց պաշտօնեաներից չատերը վրացի են եղել. օրինակ Նակաշիձէն, Տակայչուլին, Աւալիանին, Միքելաձէն եւն։ Գանիսլամիզմի գաղափարը ի՞նչ չափով գոյութիւն է ունեցել հայ–թրքական ընդհարումների չրջանում։

Իսահակեան։— Ինչո՞ւ Դաշնակցութիւնը, որպէս ռազմական ոյժ, վտանգաւոր էր համարւում կառավարութեան աչքին, եւելի քան միւս կուսակցութիւնները։ Ռուստոմի ասածների մէջ մի հակասութիւն կայ. նրա ասելով՝ կառավարութիւնը նախ փորձել է բէկերի ու հոգեւորականութեան միջոցով ստեղծել ընդհարումը, բայց յետոյ դիմել է թուրք խուլիգանների ազակցութեան։ Չէ՞ որ, սակայն, Ռուստոմի ասելով, բէկերը բաւական ոյժ ունին եւ կարող էին կառավարութեան ծրագիրն իրագործող հանդիսանալ։

Անդրանիկ։— Թուրք ամբոխն ի՞նչ միջոցներով է զինուել։

Վռամեան։— Ապառաժի չրջանում քանդուած 60–70 թուրք գիւղերից քանի՞ն են ռազմագիտական անհրաժեշտութիւնից ստիպուած քանդել։

Ռուստոմ։— Տաճիկ կառավարութեան մտանակից լինելու մասին դժուար է մի ճիշդ բան ասել. չօշափելի փաստեր չկան։ Բայց կասկած չկայ, որ նա, տաճիկ կառավարութիւնը, այսպէս թէ այնպէս մտանակցութիւն ունեցել է։ Ցամենայն դէպս, զէնքի համար կազմըւած խոշոր ֆոնտը ապացոյց է, որ մի կողմնակի ոյժ աջակցութիւն է անելիս եղել թուրքերին. այդ ֆոնտը հաղիւ թէ թագիւեի փողերով միայն այնքան հարստացնար. կարծում եմ թագիւեն այդպիսի մեծ զոհաբերութիւն չէր անի։ Իսկ թուրք ժողովուրդը՝ առհասարակ դժուար է փող տալիս, թէկուզ բռնութիւն բանեցուի վրան։ Համխալամութեան մասին նոյնպէս, փաստացի իմանալ դժուար է։

Վռամեան։— Հապա այն փա՞ստը, որի մասին արձանագրուեց «Դրօշակ»ում, թէ տաճկական զօրքեր պատրաստ են եղել ներս խուժելու Կովկաս։

Ռուստոմ։— Դա պրովոքացիա [գրգռութիւն] է եղել կառավարութեան կողմից՝ կատարուած մի քանի սպաների ձեռքով։

Թոփչեան այդ իրողութեան մասին աւելի մանրամասն տեղեկութիւն է տալիս, թէ՝ մենք ստացանք առաջին լուրը մի հայ սպայի միջոցով, որ սահմանագլխի վրայ են խմբուում տաճիկ զօրքեր, եւ ապա Կրիմ–Գիրէյ ինքը յայտնեց այդ մասին հայ պատգամաւորութեան թէ՝ կասրսափելի է, մենք ինքներս չդիտենք թէ ի՞նչ անենք, 20·000 զօրք է կանգնած սահմանագլխի վրայ»։ — Վերջը պարզուեց, որ ոչ միայն այդ ամէնը ստուտ է եղել, այլ խմացուեց եւ ա՛յն, որ Կրիմ–Գիրէյն ինքը, իր մարդկանց միջոցով, պրոպագանդա է անելիս եղել Սուրմալուի քրդերի մէջ՝ հայերի դէմ չարժուելու։

Ստեփանեան։— Սահմանագլխի վրայ զօրքերի կենտրոնացումը կապ չէ՞ ունեցել արդիօք այն հեռագրի հետ, որ Բադուի դէպքից յետոյ, Աղաեան ուղարկել է Սուլթանին։

Թոփչեան։— Հայ պատգամաւորները Թիֆլիսի հայ–թրքական համագումարում նկատեցին, որ գոլոից կովկաս են եկել տաճիկ պրոպագանդիստներ, որոնք բագու, Բալախանի՝ հիմնում են մի այսպէս կոչուած «համխալամական կոմիտէ», որը կապ է հաստատում գոլոսում գոյութիւն ունեցող ինչ որ մարմնի հետ։ Ազաեը չկարողացաւ հերքել այդ փաստը, այլ խոստովանեց, որ «այո՛, մենք կապ ունենք գոլոսի հետ, բայց մեր յարաբերութիւնները բնաւ քաղաքական բնաւորութիւն չեն կրում»։

Մուրատ։— Ես չեմ կարող հաւատալ, որ տաճիկ կառավարութիւնը անմիջական դեր է խաղացել ընդհարումների ժամանակ. ինչո՞ւ առաջինը եւ միայն չհայները չարժուեցին, իսկ սիւննիները՝ ոչ։

Ռուստոմ։— Որովհետեւ սիւննիները պրդէն կազմակերպուել–պատրաստուել էին, հարկաւոր էր պատրաստել նաեւ չհայերին, եւ մինչ այդ՝ սիւննիները սպասողական դրութեան մէջն էին։ Սիւննիները կը չարժուէին միայն այն ժամանակ, երբ քաղաքական մեծ բարդութիւն ծագէր, ինչպէս պատերազմը Տաճկաստանի հետ, եւ նրանց չարժումը ուղղուած կը լինէր ընդհանրապէս քրիստոնեաների դէմ, որոնց մէջ աւելի նըշանակութիւն կը տուէին գուցէ հայերը քան ռուսները եւ վրացիները։ Բացի այդ՝ կան եւ այլ հանդամանքներ. սիւննիները աւելի խորն են ատում ռուս կառավարութեան եւ այդ պատճառով դիւրութեամբ չեն ենթարկուի նրա պրովոկացիային [գրգռութիւններուն]։ Բացի այդ, սիւննիների մէջ չէ նկատւում բուրժուազիայի զարգացումը. այդ տեսակէտից նրանք չեն կարող մրցակից համարուել հայ վաճառականներին, արհեստաւորներին, մի հանգամանք, որ ինչպէս մենք ասել էինք մեր դեկուցման մէջ՝ դեր է խաղացել հայ–թրքական ընդհարումների ծաւալման մէջ։ — Փետրուարեան համագումարին մենք չմասնակցեցինք, քանի որ նա միայն եւ միայն՝ քոչի հարցը լուծելու նպատակով էր հրաւիրուել։ — Թուրք երիտասարդութեան մէջ յայտնուած նոր հոսանքը՝ ուժեղ չէ։ Ցեմ կարծում, որ այդ նոր հոսանքը կատարած լինի Գօլօչէապովի տեղերը։ — Մեր չարժումը ներգործել է վրացիների վրայ այն տեսակէտից, որ սրանց մէջ գործող սոցիալ–դեմոկրատական կուսակցութիւնը գործին մասնակցական բնաւորութիւն տուեց. մեզանից օրինակ առնելով էր նաեւ, որ

նրանք գործադրեցին մանր տեռորների սկզբունքը. նոյնպէս եւ դատարանական սիստեմը։ Վրաց պաշտօնեաների չարքերում եղել են հայատեացներ, բայց եղել են նաեւ ոչ այդպիսիներ. ուստի չէ կարելի ասել, որ բոլոր վրացի պաշտօնեաները դէմ են եղել հայերին։ — Թուրք բէկերի չահերը թէեւ չաղկապուած են եղել կառավարութեան յղացած ծրագրի հետ, բայց չէին համարձակւում՝ իրենք առաջին հարուածը տալու. այդ արին խուլիգանական տարրերը։ Ինչո՞ւ միայն Դաշնակցութիւնն է վտանգաւոր եղել կառավարութեան համար. որովհետեւ վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում, լեհական վերջին ապստամբութիւնից (1863) յետոյ, ոչ մի հպատակ ժողովուրդ այնպէս ուժեղ կերպով չէ ըմբոստացել ռուս կառավարութեան դէմ, ինչպէս հայերը 1903ին. նոյնիսկ ֆինլանդացիք, որոնք համեմատաբար նպաստաւոր պայմանների մէջ են ապրում, չեն կարողացել այդ քայլն առնել։ Դաշնակցութեան յաջող տեռորների՝ խորը տպաւորութիւն թողին բոլորի վրայ։ Այդ տեսակէտից կառավարութիւնն ակնածել է Դաշնակցութիւնից։ Փոխարքայի կայացած մի զինուորական խորհրդի ժամանակ, զինուորականների մեծամասնութիւնը դէմ է եղել՝ Դաշնակցութեան դէմ կորուի միջոցների դիմելու ծրագրին, ասելով, թէ Դաշնակցութիւնը Գուրիա չէ։ Ընդհարումներից առաջ թուրքերը չատ տեղերում լաւ չեն [էին ?] տրամադրուած դէպի հայերը. բագուում՝ կալուածները գրաւելու առթիւ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ՝ թուրքերը հայերին փամփուչտներ են հասցրել։ Մանաւանդ դաղստանցիք՝ լաւ յարաբերութիւնների մէջ են եղել Դաշնակցութեան հետ. նրանք խնդրել են մեր ծրագիրը (ռուսերէն)։ Դաղստանում մենք բաւական գործ ունենք կատարելու։

Սեպուհ։— Այդեօք որոշ քաղաքականութիւնից դրդուած չէ՞ եղել, որ կառավարութիւնը չէ ուզեցել դայչել Դաշնակցութեանը։ Իմ կարծիքով՝ այո՛, քանի որ ռուս–ազգական պատերազմի հաւանականութիւն կար, կառավարութիւնը ղգոյչ է վերաբերուել Դաշնակցութեան [նկատմամբ], ապագայում նրանից օգտուելու հեռաւոր նպատակով։

Ռուստոմ։— Ճիշդ է, կառավարութիւնը յոյս է ունեցել, որ պատերազմի դէպքում մենք նրա կողմը կ'անցնենք։ Գուրիացիների (աւտոնոմիստների) վերաբերմամբ, երկիւղ կար, որ նրանք կ'անցնեն տաճիկ կառավարութեան կողմը, քանի որ վերջինս ռազմամթերք է հասցնելիս եղել նրանց։

Վերջում Ռուստոմն առաջարկում է՝ մի ընդհանուր գրաւոր զեկուցում կազմել տեղի ունեցած բոլոր կռիւների մասին եւ մի առանձին տեռութիւն ընդհարումների պատճառների մասին։

Ժողովը համաձայնութիւն է տալիս եւ այդ նպատակով մի յանձնախումբ է ընտրում, բաղկացած հինգ հոգուց, որոնք են՝ Մաշուր, Մուրատ, Ռուստոմ, Սաքօ, Վարդան։

Նիստը փակւում է ժամը 1ին։

36ՐԴ ՆԻՍՏ (16 Մարտ, առաւօտ)

Նախագահում է՝ Թոփչեան։

Բացակայ են՝ Վահագն, Շահխաթունեան, Գուսան, Զաւրեան, Սաֆօ։

Գանձակի պատգամաւոր ընկ. Մաշուր կարդում է իրենց չրջանի տեղեկագիրը, որից յետոյ հարցեր են տրւում։

Սեպուհ գտնում է, որ տեղեկագրերը միակողմանի են կազմուած. օրինակ, յիշում է Գանձակում զինուորական դրութեան բացասական կողմերը. եւ [որ] չեն բերուած այն պատճառները, որոնք զինուորական վիճակ ստեղծեցին։ Պատճառը իրականութիւնն է. որի մասին չեն յիշում։

Խահակեան։— Ես ուզում եմ մի քանի ուղղումներ մտցնել։ Մաշուր սխալւում է ասելով, որ տեռորների չրջանում կառավարութիւնը դլուխը կորցրել էր, որովհետեւ մանչուրական պատերազմում ստացած հարուածները նրան չչմեցրել էին։ Թէեւ վերջինս ճիշդ է, բայց դա չէր արդիլում, որ որեւէ տեռորից յետոյ բանտերը լեցուէին։ Ինքնապաշտպանութիւնից առաջ իսկապէս շատ էր խօսւում տաճկահայկական խնդրի մասին, մանաւանդ Սասունի դէպքերի ժամանակ՝ ոչ մի տեռորած տրամադրութիւն էր տիրում։ Բայց ինքնապաշտպանութիւնը եւ Ռուսաստանի չարժումները բոլոր ուշադրութիւնը կլանեցին։ Որ մեր այժմեան գործունէութիւնը նախկինի օրգանական չարունակութիւն չէ եղել, կարող է իբր պերճախօս փաստ ծառայել այն, որ կայսրանի եւ էլենենտորֆի բանուորները անխիղճ կերպով հարստահարւում էին օրական 14 ժամ աչխատելով, բայց մենք դրանց մասին չէինք մտածում. սա ապացուցանում է, որ մենք աչխատաւորական կուսակցութիւն չենք եղել։ Մենք չարունակ ձգտել ենք դէպի հարուստները, որովհետեւ մեղ փող է հարկաւոր եղել։

Մուրատ։— Որքան կազմակերպուած բանուորներ կան. ի՞նչ է եղել բանուորական Բիւրոյի գործունէութիւնը։ Սեդրակը ինչո՞ւ հեռացուեց կազմակերպութիւնից, ինչո՞ւ յետոյ ընդունուեց եւ սպանուեց։ Ռեդոլուցիան [բանաձեւ] պատրաստողները, ո՞րքան ծանօթ են եղել Տաճկահայաստանի դրութեան։ Արդեօք ժողովո՞ւրդն էլ է այդպէս մտածում, թէ մի քանի անհատներ են։

Մանուկ։— Ի՞նչպէս վերաբերուեց տեղական կազմակերպութիւնը, երբ Ռաչիտը պրոպագանդիստներին հեռացրել էր, ասելով, որ իրենց հարկաւոր չեն։

Միհնասեան։— Ի՞նչպէս են հայ-թրքական յարաբերութիւնները այժմ Գանձակում։

Զարդարեան։— Տեռորներ եղո՞ղ են։ Կազմակերպութիւնը ի՞նչ մասնակցութիւն է ունեցել հասարակական գործերում։

Վռամեան։— Սարով գիւղի դէպքը եզակի՞ է, թէ կան նոյնանման այլ դէպքեր։

Մաշուր։— Ոչ ոք դիւղացիներին չէ մեղադրում, որ նրանք չեն կազմակերպուած, ես միայն փաստն եմ ասում։ Անխուսափելի պայմանների բերումով կուսակցութիւնը կորցրեց իր յեղափոխական բնոյթը, իսկ այլ պատճառները իմ գործը չեն։— Տեռորները մեծ ժողովրդական արհաւիրքներ չէին առաջ բերում. թէեւ բանուորկութիւններ լինում էին, բայց ոմբակոծումներ, մասսայական պատիժներ, տուգանքներ եւ էկզեկուցիաներ չէին լինում դրանց հետեւանքը։ — կազմակերպուած բանուորների թիւը մօտ 500 է։ Այժմ երբ ինքնապաշտպանութեան գործը տրւում է ժողովուրդին, բանուորական խմբերից աչխատում ենք կազմել մարտական խմբեր։ — Բանուորական Բիւրոն այս ամառ է կազմուել, չնորհիւ մի քանի երիտասարդ ընկերների գործունէութեան. մուտք եւ ելք չէ ունեցել։ Բանուորական Բիւրոն կազմուած է արհեստակցական միութիւնների ներկայացուցիչներից։ — Ռաչիտի այդ կարդադրութեան ժամանակ կոմիտէ չէ եղել, որովհետեւ վիճակն այնպէս է եղել, որ ամէն բան զինուորականների ասածոյն էր լինում։

Մարդպետ։— Ռաչիտը չրջիկներին վերացրել է, պատճառաբանելով թէ զինուորների ներկայութիւնը ինքնին պրոպագանդա է։

Ռուստոմ։— Ռաչիտը զինուորական դրութիւն ասելով հասկանում էր մի այնպիսի վիճակ, երբ ամէն մարմին լուծուած է եւ միայն ինքն է բոլոր գործերը դեկավարում։ Նա անկարող լինելով նոյնիսկ մի այլ իրա հաւատար ընկերի ներկայութիւնը տանել, հեռացաւ։

Մաշուր։— Հայ-թրքական յարաբերութիւնները լարուած էին, թուրքերը բոյկոտ էին անում հայերին։ Այժմ սկսուել են նորից յարաբերութիւնները։

Մարդպետ։— Բոյկոտի ամենախիստ ժամանակ էլ զաղտնի կերպով յարաբերութիւններ եղել են. չնայած արտաքին՝ թուրքերը զաղտնի ցորեն էին ծախում հայ գիւղացիներին։

Մաշուր։— Թրքացած հայեր կային, որոնք մատնութիւններ էին անում։ Տեռորներ եղել են (կարդում է տեռորի ենթարկուածների ցուցակը)։ — Հասարակական գործերին կազմակերպութիւնը միչտ մասնակցել է. եւ այժմ ձգտում է բոլոր դպրոցները իւր ձեռքին առնել։ — Միայն կենտրոնական համագումարի համար չկարողացաւ պատգամաւոր անցկացնել։ Սարովի դէպքի նման այլ դէպքեր չեն եղել։ Թէեւ թուրքերն էլ չատ տեղեր հեռացել էին հողերից, բայց կառավարութիւնը ամէն ջանք գործ դրեց եւ նրանց վերադարձրեց իրենց տեղերը. իսկ սարովցիներին մի քանի ասեց, որ վերադառնան եւ լռեց։

Վարդան։— Սարովցիները նոր հող գնելով, իրենց վերջնականապէս չեն թողել եւ ապագայում էլի ուղում են օգտուել։

Խահակեան։— 3000 րուբլու տուգանքը հետեւանք էր միամտաբար կատարուած մատնութեան, որին զոհ գնացին չատերը. երբ մահուան պատիժը փոխարինուեց տուգանքով։

Նախագահ։— Ցայտարարում է հարցումները վերջացած եւ ուղում է նիստը փակել։

Վարդանը մի ազդու ճառով ժողովի ուչադրութիւնն է հրաւիրում այն բանի համար, որ ընտրուած յանձնաժողովները մինչեւ այժմ գործ չեն արել եւ դեռ ոչ մի զեկուցում չեն ներկայացրել, որովհետեւ յանձնաժողովների անդամները նիստերին զբաղուած լինելով ժամանակ չունին յանձնաժողովներում էլ գրաղուելու։ Առաջարկում է յանձնաժողովների թիւը աւելացնել, օրական մի նիստ ունենալ, որպէսզի յանձնաժողովները զբաղին իրենց գործերով։ Ընդհանուր ժողովում տրուելիք չատ խնդիրներ յանձնել յանձնաժողովներին, որ մչակած ներկայացնեն ժողովին՝ ժամանակի խնայողութեան համար։ Ապա յիչելով որ 23 օր է ինչ ժողովը սկսուած է, բայց դեռ տեղեկագրերը չեն վերջացել, նկատելով որ այդքան ձգձգուելու պատճառը այն է, որ ընկերները չատ մանր հարցեր են տալիս եւ ժամանակ կորզնցնում դրանց վրայ, ուստի կոչ է անում ընկերներին խստապահանջ լինել թէ՛ դէպի յանձնաժողովները եւ թէ դէպի իրենց եւ նպատակ աչխատանքների կատարման։

Նախագահը նիստը փակուած է համարում։

37ՐԴ ՆԻՍՏ (16 Մարտ, երեկոյ)

Նախագահում է՝ Թոփչեան։

Բացակայ են՝ Վահագն, Շահխաթունեան, Աւ. Իսահակեան, Զաւրեան, Սաֆօ։

Տիկին Ցուշիկ կարդում է իւր չրջանի՝ Ծլատ կենտրոնական կոմիտէի տեղեկագիրը։

Վռամեան։— Ինդրում եմ աւելի մանրամասն տեղեկութիւն տալ «Վսերօսիսքի վայեննօ-սոյուզ»ի մասին։

Մուրատ։— Ինչո՞ւ էք ուղում կենտրոնական կոմիտէութիւնը վերացնել եւ չրջանը միացնել Նալբանդին։ Այդ որոշումը կայացնող չրջանային ժողովը քանի՞ ձայն ունէր։

Միհնասեան։— Օսերի հետ ի՞նչ յարաբերութիւն ունիք։

Ցուշիկ։— «Վսերօսիսքի վայեննօ-սոյուզ»ը [ռուսերէն գրուած] զինուորական անկուսակցական կազմակերպութիւն է։ Սա ունի ծրագիր՝ որի մէջ ամփոփուած են պահանջներ ամենատարրական իրաւունքներից։ Ի նկատի ունենալով, որ Ծլատ քաղաքում մենք հեչտութեամբ կարող էինք ենթարկուել խուլիգանների, որոչեցինք նպատակ հասցնել այդ հասոյութեան [միութեան], սկզբում միանուագ 150 ռուբլի եւ այնուհետեւ ամսական 50 ռուբլի։ Ներկայումս սակայն այդ կազմակերպութիւնը գոյութիւն չունի։ — Օսերը նոր են սկսել զարթնել. նրանք մօտ 200·000 հոգի են, մի մասը քրիստոնեայ, միւսը՝ մահմեդական. մենք յարաբերութիւն ունենք քրիստոնեայ մասի հետ։ Օսերը խնդրեցին մեր ծրագիրը, ընդօրինակելու համար։ Նրանք մեզ օգնութիւն են հասցնում՝ զէնք փոխադրելով։ Մեր չրջանային ժողովին ներկայ են եղել 6 պատգամաւոր. երկուսը գրաւոր կերպով են յայտնել իրենց կարծիքը. բացակայ է եղել միայն մէկը։ Բայց առաջին անդամը չէ որ կենտրոնական կոմիտէն վերացնելու հարցն է դրւում. արդէն վաղուց խօսւում էր այդ մասին, որովհետեւ մեր չրջանը ոչ այնքան յեղափոխական, որքան կուլտուրական [մչակութային] գործունէութեան կարիք ունի։

Վռամեան։— Ինչո՞ւ չրջանի խմբերը քայքայւում են։

Ցուշիկ։— Որովհետեւ նրանք կապւում են մեզ հետ ոչ ըստ էութեան. այլ հետեւում են սոսկ հոսանքին. բաւական է որ պրոպագանդիստը հեռանայ, անմիջապէս կազմուած խմբերը ցրւում են՝ զաղափարի պակասութեան պատճառով։

Սեպուհ։— Ինքնապաշտպանութեան համար այսօր եւս զէնքեր կա՞ն ձեր չրջանում։

Ցուշիկ։— Այո՛։

Մուրատ։— Ժողովուրդը այլասերուած է, լեզուն մոռացուած. բայց այնտե՛ղ է հենց որ չպէտք է վերացնել կենտրոնական կոմիտէութիւնը։ Հարկաւոր է յեղափոխութեան միջոցով այլասերման առաջն առնել։

Զոփուրեան կարդում է Ոսկանապատի չրջանի տեղեկագիրը։

Նիստը փակւում է, վիճաբանութիւնները թողնելով յաջորդ նիստին։

38ՐԴ ՆԻՍՏ (17 Մարտ, երեկոյ)

Նախագահում է՝ Թոփչեան։

Բացակայ են՝ Խահակեան, Մաշուր, Անդրանիկ, Զաւրեան, Վարդան, Սաֆօ։

Ժողովի գրասէն նիւթն է լինելու Ոսկանապատի պատգամաւորին ուղղուելիք հարցումները, նրա տեղեկագրի առիթով։

Զբաղումներին անցնելուց առաջ ընկեր Մանուկը ներկայացնում է Սաֆոյի կողմից ծուցակների վերաբերեալ հաչիւները եւ մի գրուածք ուղղուած Ընդհանուր ժողովին։ Նախագահը կարդում է գրուածքը։ Դրա մասին խօսելը թողնելով այլ անգամուայ, ժողովը անցնում է Օրակարգին։

Մուրատ։— Ի՞նչ փաստ ունին օտար ֆիրմաները, որ հայերին չեն ընդունում, իբրեւ բանուոր։ Վերա-

դարձող բանուորները իրենց վնասները ստացան միայն հայ ֆիրմաների՞ց, թէ նաեւ օտարներից։ 400 զինուորը՝ կազմակերպութեա՞ն թէ քաղաքացիների հաշուով էր պահւում։

Զարդարեան։— *Ինչո՞ւ է լուծուել երկու կոմիտէն։ Ի՞նչպէս է որ մինչեւ այժմ Ոսկանապատի մարմնի մէջ դեռեւս կան բուրժուա եւ կղերական դասին պատկանող մարդիկ եւ դրանց մինչեւ հիմա չէք հեռացրել։ Օտար ֆիրմաները չեն ընդունում հայ բանուորներին, իսկ հայերն էլ ուզում են իրենց գործերը ծախել օտարներին. ի՞նչ է մտածում այդ մասին կազմակերպութիւնը։ Ո՞րքան զէնք կայ հայ ժողովրդի ձեռքին։ Երբ հրուստները ուղեցին կազմակերպութեան դրամ տալ ինքնապաշտպանութեան համար եւ պայման առաջադրեցին ի միջի այլոց, որ այդ դրամով գնուած զէնքերը չգործադրուին իրանց դէմ՝ ի՞նչ է նշանակում սա. ի՞նչպէս կարելի էր զէնքը գործածել նրանց դէմ։*

Մանուկ։— *Ինչո՞ւ մի անդամի պատճառով ամբողջ կոմիտէն հրաժարուեց։ Չիֆոնի համար եղած հանգանակութեանը՝ բուրժուաները էլ մասնակցեցին։ Ինչո՞ւ պահանջուած գրամները լրիւ չվճարուեցին։ Նուիրուայ գիւղերը պաշտպանելու համար ուղարկուած զինուորները ի՞նչ զէնքեր ունէին եւ ո՞վ էր դրանց խմբապետը։ Ի՞նչպէս եղաւ որ հիւանդանոցի մէջ ապաստանած զինուորներից միայն 40 հոգի դուրս եկան։*

Զելալեան։— *Լուրջ կերպով պահանջուած դրամը՝ պաշտօնական նամակով, ինչո՞ւ լրիւ չստացուեց։*

Զոփուրեան։— *Օտար ֆիրմաները հալածում են հայերին, որովհետեւ նրանց են համարում ընդհարումների պատճառը. իսկ հայ բանուորներին համարում են ամենալմբռաստ տարրը. այդ ֆիրմաները վարձում են համշարիները, որովհետեւ սրանք խաղաղ եւ հնազանդ տարր են, եւ ուռներ՝ որոնք լաւ արհեստաւորներ են։ — Դէպքերից յետոյ օտար ֆիրմաներում ծառայող հայ բանուորներն էլ բաւարարութիւն ստացան։ — Զինուորները պահւում էին քաղաքի ինքնապաշտպանութեան համար հաւաքուած գումարով, որը քաղաքացիք իրանք էին հանգանակած։ Իսկ վերջում գումարները այնպէս խառնուել էին, որ չէր կարելի որոշել թէ ի՛նչ փողով էին ապրում զինուորները. բայց քաղաքը այնքան չէր տուել որ բաւականանար զինուորների ապրուստի համար։ — Հրաժարուած կոմիտէներից մինը Բիբիէյբաթի ենթակոմիտէն էր, որի ներկայացուցիչներից մէկին Ոսկանապատի Շրջանային ժողովը չընդունեց իբրեւ պատգամաւոր եւ որոշեց նոր ընտրութիւն կատարել։ Բիբիէյբաթի ենթակոմիտէն չկամեցաւ ենթարկուել այդ որոշման։ Շրջանային մարմինների ընկերներից կազմուեց դատական մարմին, որը քննեց գործը եւ միւս երկուսին էլ մեղաւոր ճանաչեց։ Այդ պատճառով կենտ. կոմիտէն ստիպուած էր կազմալուծուած յայտարարել այդ մարմինը։ Քաղաքային կոմիտէի գանձապահի հաշիւներում գտանք դրամական զեղծում եւ կորուսած դրամի համար պատասխանատու համարեցինք ամբողջ կոմիտէն։ Քննութիւնը պարզեց, որ գանձապահն է միայն մեղաւոր։ Դատական մարմինը նրան ժամանակ տուեց, որ գումարը վերադարձնի. հակառակ պարագային՝ կը դիմէ միջոցի։ Հրաժարուեցին եւ միւսները, որովհետեւ անյարմար համարեցին դրանից յետոյ մնալ։ — Ամբերի քայքայուելու պատճառը պրոպագանդիստների պակասութիւնն է։ Ջահելների մի մասը տատանւում է, մըննացածը անջատական է. պարապող չկայ եւ խմբերը անտէր, քայքայուղ վիճակի մէջ են։ Հայ ֆիրմաների տարածած այն լուրը, որ իբր թէ ուզում են ծախել իրենց գործերը, մի մանէօվր էր բանուորների վրայ ազդելու համար։ — Ժողովրդի մօտ գնուած զէնքերի քանակի մասին վիճակագրութիւն չունենք։ — Նուխուայ գիւղերի պահպանութեան համար ուղարկուած էր տասը զինուոր, իրենց խմբապետով. սրանց մի քանի անտակտ քայլերի պատճառով, ստիպուեցինք նրանց յետ կոչել։ Նոյն դրութիւնը ստեղծուեց եւ Շամախի ու Գէօգչայ. ժողովուրդը փող չէր ուզում տալ։ — Հիւանդանոցում հաւաքուած էին մօտ 1500 մարդ, որոնց մօտ կար 3–400 զէնք. երբ ժողովուրդը որոշում է զէնքերը յանձնել, 40 հոգի, որոնց մեծ մասը մեր տղաներից էին, հրաժարում են տալ եւ դուրս են գալիս, խորհրդակցելով Բալախանիի կոմիտէի երկու անդամի եւ կ. կոմիտէի մի անդամի հետ, որոնք ներկայ էին։ Սբրանք դուրս են գալիս, որ միանան մի այլ ֆիրմայում եղած հայերի հետ, բայց տեսնելով որ կարիք չկայ՝ դնում են քաղաք։ — Պաշտօնական նամակներով պահանջուած դրամի մեծ մասը ստացել ենք. իսկ մնացածների վերաբերմամբ, չուզելով խիստ միջոցների դիմել, չենք էլ ուզում հեչտութեամբ զիջում անել, դրա համար էլ այդպէս մնացել է։ Բուրժուա եւ կղերականներին չենք հեռացրել մարմիններից, որովհետեւ նրանց ընտրել են տեղական խմբերից մի տարով. նոր ընտրութիւնները անելու ենք Ընդհանուր ժողովից յետոյ. Թէ ի՛նչ հետեւանք կ՚ունենայ, այդ կը տեսնենք չուտով։

Ալաճ։— *Ընկ. Զարդարեանի հարցը հիմնուած է Թիւրիմացութեան վրայ։ Մի՞թէ պիտի մարմնից հեռացնել մէկին, որովհետեւ նա հոգեւորական է կամ իր ծագմամբ ու հասարակական դիրքով բուրժուա դասակարգին է պատկանում։ Շատերը կարող են այդպէս լինել, բայց իրենց աշխարհահայեացքով մեր կուսակցութեան պատկանել։*

Վարդան։— *Ես կ՚ուզեցնեմ տեղեկագրին, որ խոսկապէս հայ ֆիրմաներում աւելի են գործադուլներ եղել, քան օտար ֆիրմաներում, նոյնիսկ այնպիսի դէպքում, երբ հայ ֆիրմաներում ամսականները աւելի բարձր են եղել։ — Մեր ընկերներից ոմանք ինձ ասացին, որ դա մանէօվր չէ, այլ իսկապէ՛ս եղել է մտադրութիւն ծախելու։*

Ասլան։— *Բացատրում է, որ ոչ մի տարի, նաւթը այնպիսի բարձր գին չէ ունեցել, ինչպէս վերջերս (28 կ.) եւ նաւթարդիւնաբերողները երբեք այնպիսի դիվիդենտ [եկամտային չահաբաժին] չեն ունեցել ինչպէս այժմ, ուստի չէ կարելի հաւատալ այդպիսի լուրերին, որ իբր թէ հայերը ցանկացել են իրենց ֆիրմաները ծախել։*

Զոփուրեան։— *Կ. կոմիտէն միշտ ուշադիր է եղել այդ լուրերին եւ տեղեկութիւններ է հաւաքել։ Ճի՛շդ է, գործադուլ աւելի շատ հայ ֆիրմաներում է եղել. բայց դրա պատճառն այն է եղել, որ շատ ֆիրմաներ չեն կատարել «դեկտեմբերեան համաձայնութեան որոշումները»։ Թէեւ Նորբէլը աւելի քիչ ռոճիկ է տալիս, քան հայ ֆիրմաներից մի երկուսը, բայց Նորբէլի մէս պայմանները շատ աւելի բարձր են հայ ֆիրմաներում եղածներից։ Կոմիտէն բանուորների չափազանց պահանջները աչքատել է կանոնաւորել։ Ճաճախ բանուորները խիստ չափազանց պահանջներ են դնում այն նպատակով, որ գոնէ մի մասը ստանան։ Ինչպէս այս վերջին գործադուլի ժամանակ, մի հայ ֆիրմայում, բանուորները «պարգեւ» են ուզեցել ստանալ օգուտի 60%ը, որպէսզի 15–20% գոնէ կարողանան ստանալ։*

Ժողովը անցնում է «Քարի» տեղեկագրին, որը ներկայացրեց Չրլանի պատգամաւոր Գուսաքը։ Ապա սկսում են հարցերը։

Ընկերների ոմանց կողմից զարմանք է արտայայտւում, որ Քարը այժմ Նախագծի կողմնակից է հանդիսանում, քանի որ վաղուց չէ ինչ շատ զօրեղ ձայներ էին հնչում Նախագծի հակառակ. բազմաստորագիր բողոքներ էին գալիս, թէ Դաշնակցութիւնը փոխանակ զբաղուելու իր միակ գործով, որ է Թրքահայաստանի դատը, չեղուել է Մրագրից։

Գուսաք։ *բացատրում է, որ այդ բոլորը 6–12 ամիս առաջ էր. այժմ Դաշնակցութիւնը դատած է բուրժուական տարրերից եւ եղած խմբերը ու արհեստակցական միութիւնները իրեն հրահանգել են՝ պաշտպանել Նախագիծը։ Այժմ Քարում կան մօտաւորապէս 2000 դաշնակցականներ։*

Շահխաթ-ուլճեան։ *իր սեփական փորձից պատմում է, որ թէեւ Ռոստոմը Քարում նոր մարմին ընտրելու խոստում է առել մարմնի անդամներից, որ սրանք Նախագծին հակառակ լինելով հանդերձ չեն խանգարի Նախագծով գործողներին, բայց այնուամենայնիւ սբրանք չպահեցին իրենց խոստումը եւ ամէն կերպ արգելքներ էին յարուցանում Նախագծով գործողների դէմ։ Կ. կոմիտէի մի անդամը գործադուլաբեկ եղաւ*

բանկի [դրամատան] գործադուլի ժամանակ. իսկ զինեվաճառների գործադուլի պահանջները բոլորը կատարեցին, բացի Կ. կոմիտէի անդամներից մէկը, որը զինեվաճառ էր եւ չէր ընդունում առաջարկուած պայմանները։

Չելալեան։— *Քարում ինչո՞ւ դաշնակցականները քիւր են այդքան պակասել է. ինձ ասել էին թէ այնտեղ 10·000 դաշնակցական կայ։*

Թոփչեան։ *բացատրում է, որ դա անշուշտ այն ժամանակ էր, երբ Քարում բոլորը դաշնակցական էին մեծից մինչեւ փոքրը. իսկ այժմ շարքերը զտուել են։*

Փոքր ընդմիջումից յետոյ Երեւանի պատգամաւոր Զաւրեան ներկայացնում է իւր չրջանի տեղեկագիրը։ Եւ սկսում են հարցերը։

Զարդարեան։— *Տեղեկագրում ասուած էր թէ խմբերը քայքայուած են. ուրեմն ի՞նչպէս կազմուեց Շերքանային ժողովը։*

Տաճատ։— *Քայքայման պատճառների մասին տրած տեսութեան համար, փաստերը վերցրած են Շերքանային ժողովի արձանագրութիւնների՞ց, թէ պատգամաւորի կարծիքն է։*

Բարսեղեան։— *Արդեօք կոմիտէն զէնքի համար վերջ ի վերջոյ բաւարարութիւն տուե՞ց ժողովրդին։ Գիւղերից ինչո՞ւ համար են հեռացրել պրոպագանդիստներին եւ ի՞նչ նիւթի մասին էին սրանք խօսում։ Արդեօք յիշուած տեղերից ժողովուրդը ընդմի՞շտ է գաղթում թէ ժամանակաւորապէս։*

Անդրանիկ։— *Ցաւում եմ, որ պատգամաւորներից չատերը, ոչ թէ Շերքանային ժողովների կարծիքն են յայտնում, այլ իրենց անձնականը. իսկ ոմանք նոյնիսկ ծանօթ չեն իրենց չրջանի հետ։ Այնուամենայնիւ հարցընում եմ, թէ արդեօք այլ չրջաններումն էլ կատարուե՞լ են այնպիսի բռնութիւններ, զինուորների կողմից, թէ միայն Երեւանի չրջանումն է։ Ի՞նչպէս է որ խմբապետները գիւղերում հարուստների տանն էին իջեւանում։ Ինչո՞ւ զէնքի պահանջին բաւարարութիւն չէ տրուած։*

Մուրատ։— *Զինուորների կատարած ապօրինի վարմունքների դէմ խմբապետները եւ մարմինները միջոցներ ձեռք չե՞ն առել։*

Զաւրեան։— *Մեր չրջանը ունի 21 կոմիտէ եւ դրանց կողմից էլ պատգամաւորներ կային Ժողովին եկած։ — Ինչքան էլ որ խմբերը քայքայուած էին, այնուամենայնիւ կային մարմիններ, որոնք եւ ուղարկել էին պատգամաւորներ. իսկ երկու տեղում յայտնուել էր մինչեւ անգամ գիւղացիների ժողովներ անել, որոնց կողմից կային պատգամաւորներ։ Կոմիտէի պատգամաւորը բերել էր կոմիտէի կարծիքը, իսկ գիւղացինե-*

րինը՝ գիւղացիների կարծիքը: — Պատմուած բոլոր փաստերը կային արձանագրութեան մէջ. բայց արձանագրութիւն չկար կազմած, որովհետեւ ժողովների ծրդ օրը ոստկանութիւնը մտաւ ժողովատեղին եւ մինչ բոլոր թերթերը պատռեցինք: Միւս օրը հաւաքուելով յիշողութեամբ կազմեցինք արձանագրութիւնը որը ես թերել եմ: — Կազմակերպութիւնը զէնքերի խնդրին կից սով չափ բաւարարութիւն տուեց. շատ տեղերում կազմակերպութիւնը փողը վերադարձրեց, շատ տեղերում էլ չկարողացաւ: Պրոպագանդիստներին գիւղերից հեռացնելը միայն երբեմն է եղել: Սրանք մեծ մասամբ անպատրաստ մարդիկ (չրջիկներ) էին: — Որ խմբապետները գիւղերում հարուստների տունն են իջել՝ շատ բնական էր. բոլորը ուրախութեամբ ընդունում էին խմբապետին, որովհետեւ սա եկել էր գիւղը պաշտպանելու: Իսկ եթէ հարուստը որեւէ անախորժ բան է արել, կամ զէնք գնելու համար գիւղացու ծախած անասունը սա է գնել, ժողովուրդը այս իրողութիւնը կապում էր խմբապետի նրա տանը իջեւանելուն հետ եւ բամբասում էր: — Զինուորները, բռնութիւնների մէջ միշտ իրենք մեղաւոր չէին. նրանց ոստիկանական գործեր էին յանձնում դատական մարմինները եւ կոմիտէները եւ սրանից յառաջանում էին բռնութիւններ: Կազմակերպութիւնը սակայն միշտ քննել է այսպիսի բռնութիւնները: — Գաղթում են ընդհանրապէս ընտանեքով, չվերադառնալու համար. Քէ որքան են գաղթել չդիտեմ, բայց մի գիւղից, օրինակ, որ 200 տուն ունէր, 430 մարդ գաղթել են, ապրելու միջոց չունենալով:

Զոփուրեան.— Ամենածաղկեալ ժամանակը չրջնում քանի՞ կազմակերպուած գիւղեր են եղել. ի՞նչ է հայ եւ թուրք ազգաբնակութեան համեմատական թիւը Մրզաստանի Կ. կոմիտէի չրջնում. սէկցիական կազմի օգտակարութեան մասին գործը ի՞նչ է ցոյց տուել: Երեւանում քանի՞ զինուոր կար: Ռոճիկո՞վ էին արդեօք զինուորները եւ ո՞ւմ հաշուով էին ապրում: Զէնքի արհեստանոցում պատրաստուած զէնքերը ո՞րչափ օգտակար են եղել. եւ ապագայի համար ո՞րչափ նշանակութիւն կարող է ունենալ այդ արհեստանոցը:

Տաճատ յիշում է մի քանի դէպքեր, Քէ ի՛նչպէս երեւանում զէնքի հայթայթման գործում անյաջողութիւններ եղան: — Զինուորների բռնութիւնները միայն վերջի չրջնումն են տեղի ունեցել. կատարողները մի խումբ էին, որոնց ոչ մի կերպ հակազդել չէր կարելի: — Շուայլ ծախսերի մէջ ոչ Քէ զինուորներն են մեղաւոր, այլ խանութպանները, որոնք օգտուելով ապատրիկ լինելու հանգամանքից, զինուորների պահանջները ցոյց էին տալիս աւելացրած հաշիւներով եւ փողերը գանձում: — Պատմում է նաեւ այլ դէպքեր, ուր զինուորներն են մեղաւոր: — Պրոպագանդի մարմինը վերջերս կանգնած է եղել իւր կոչման բարձրութեան վրայ եւ կազմուած է եղել ուսանողներից, իսկ ընկ. Զաւրեանի յիշածը չրջիկների մասին է: Պատմում է դէպքեր պրոպագանդայի ծայրայեղ եւ միակողմանի եղանակի մասին, որն ստիպել է հեռացնել պրոպագանդիստին. ինչպէս օրինակ էջմիածնում, պրոպագանդիստը քարոզել է, որ փող չտան Դաշնակցութեան, որովհետեւ սա անօգուտ ծախսում է Թրքահայ դատի համար: Գոհունակութիւն է յայտնում Երեւանի պրոպագանդայի մարմնին, որի անդամներին ոչ ոք չէ վնռտել: — Սէկցիական գործունէութիւնը չպիղ էր գնում: — Շրջանի ամենալաւ ժամանակը եղել է 1904ը երբ 25 կոմիտէ կար: Հնչակեանները միայն մի քանի գիւղ ունէին: Կարելի է ասել, Քէ Երեւանի ամբողջ նահանգը դաշնակցական էր: Սոց.-դեմոկրատները չատ քիչ են: — Մի բան, որ կը ցանկայի Ընդհանուր ժողովը իմանար եւ որի մասին չէ խօսուել՝ դա մարդագողութիւնն է, որը մեծ ծաւալ ստացաւ չնորհիւ այն կարգադրութեան, որ տրամադրում էր Թուրքերի գողացած ամէն մի հայի փոխարէն 5 Թուրք գողանալ: Մի գիւղ 35 Թուրք էր գողացել: — Ուլիի Թալանը եղել է կոմիտէի կարգադրութեամբ, երբ մինչեւ անգամ մի երեխայ են սպանել Թալանի հետքը կորսնցնելու համար:

Ռոստոմ.— Թիւրիմացութիւնների առաջն առնելու համար ասեմ, որ Երեւանի չրջնում համեմատաբար միայն կազմալուծուած է. այժմ այնքան կազմակերպուած խմբեր կան, որ նա իւր ցեղով կարող էր մինչեւ անգամ մի քանի պատգամաւոր ուղարկել: 1905ին, Ժողովին ներկայացրած տեղեկագրի համաձայն, այդ չրջնում եղել է 27 կոմիտէ, 180 ենթակոմիտէ, 2398 խումբ:

Զաւրեան յայտնում է, որ Տաճատը հաստատեց միայն այն ամէնը, ինչ որ տեղեկագրում ասուած էր:

Նիստը փակուեց ժամը 7ին:

39ՐԴ ՆԻՍՏ (18 Մարտ, երեկոյ)

Նախագահում է՝ Թոփչեան:
Ներկայ են 23 ժողովական:
Բացակայ են՝ Իչխան, Տաճատ, Զաքրտրեան, Սաֆօ:

Նիստի սկզբում, հարց է բարձրանում ի՞նչ հարցով զբաղուելու մասին: Օրակարգի, քննութեան պէտք է առնուի վճռաբեկ գործունէութեան հարցը. սրա համար նախագահն առաջարկում է՝ ընտրել մի յանձնախումբ, այդ հարցի առաջին կէսի մասին (<Գործունէութիւն Թուրքիայում>) զեկուցում տալու:

Ժողովականներից առարկում են, Քէ քանի որ դեռ որոշած չենք մեր ծրագիրը՝ անկարող ենք ընտրել մեր ապագայ գործունէութեան ուղին:

Սեպուհ.— Մենք նախ պէտք է կանգ առնենք մեր ծրագրի վրայ, որը որոշուց յետոյ միայն մենք կ'ունենանք անցնել տակտիկական հարցերին: Նախ պէտք է որոշել ծրագիրը այն պարզ պատճառով, որ այստեղ գոյութիւն ունեն տարբեր տեսակէտներ ծրագրի էութեան վերաբերմամբ: Դիցուք յանձնախումբը անհրաժեշտ է դառնում, որ ապատամբութիւն յառաջ բերուի երբ որում. կազմուելիք ծրագիրը, ասկայն, յանկարծ կարող է սկզբունքով դէմ լինել այդօրինակ ձեռնարկութիւններին:

Մաշուր.— Սկզբից արդէն խօսուել է, որ տեղեկագրերից յետոյ՝ անցնելու ենք ծրագրի մշակման խնդրին:

Շահխաթունեան.— Ծրագիրն ինքն ըստ ինքեան բարդ բան է, չի՛ կարելի առանց այլեւայլութեան անմիջապէս անցնել նրան: Նախ հարկաւոր է ծանօթանալ բոլոր չրջանների հայեացքների հետ՝ կուսակցութեան ապագայ գործունէութեան մասին եւ այդպէսով միայն գործնականից դիմել դէպի տեսականը:

Իսահակեան.— Առաջարկում եմ կարդալ այժմ միայն մարմինների առաջարկները, յետոյ ընտրել մի յանձնախումբ՝ ընդհանուր ծրագրային նախագիծ ներկայացնելու համար ժողովին:

Նախագահ.— Ժողովը արդէն որոշել է 6րդ նիստում, որ տեղեկագրերին յաջորդելու է տակտիկայի հարցը:

Միհանեան.— Օրակարգի վերաբերմամբ եղած այդ որոշումը մենք կարող ենք փոխել: Եւ պէտք է փոխենք, որպէսզի մինչեց տուն մենք քննելու նախ ծրագիրը: Երբ կ'որոշենք ծրագրային սահմանները, ըստ այնմ էլ կ'որոշենք եւ մեր ապագայ գործունէութեան տակտիկան:

Շահխաթունեան.— Այժմ մենք անցնենք մարմինների առաջարկներին. սրանց չուրջը տեղի ունենալիք վիճաբանութիւնների ժամանակ կը ձեռնարկենք ծրագրին:

Նախագահ.— Ինձ մօտ եմ պատգամաւորներից, իւրաքանչիւրը իւր տեղեկագրի մէջից հանէ այն կէտը, որ վերաբերում է ծրագրին, առանձնապէս պատգամաւորանի այդ կէտը եւ ներկայացնի մեզ՝ քննելու համար:

Ժողովը ընդունում է այս առաջարկի ընդդէմ 2ի:

Նախագահ (չարունակելով).— Միեւնոյն ժամանակ ընտրենք մի յանձնախումբ՝ ընդհանուր զեկուցում տալու համար:

Մալումեան.— Մրագրին վերաբերուող կէտերը՝ տեղեկագրերի մէջ, անշուշտ պատճառաբանուած պէտք է լինին, քանի որ 5–6 ամիս առաջ Օրակարգը ուղարկուած է եղել բոլոր մարմիններին որպէսզի սրանք իրենց կարծիքը ասեն. ուստի այդ կարծիքները կարող ենք քննութեան առնել անմիջապէս. լինելիք վիճաբանութիւնները կը մտցուին արձանագրութեան մէջ, որպէս արտայայտութիւն՝ տիրող տրամադրութեան եւ մենք, առանց որոշումներ կայացնելու, ժառնգած կը լինենք ծրագրային հարցին:

Նախագահ.— Անյարմար է անմիջապէս անցնել մարմինների առաջարկների քննութեանը. քանի որ պատգամաւորներին ժամանակ է հարկաւոր՝ պէտք եղած բանաձեւը պատրաստելու համար:

Ռոստոմ.— Առաջարկում եմ յանձնարարել մի քանիսին, իրենց համաձայնութեամբ առանձին զեկուցումներ կազմելու այս կամ այն կէտի մասին:

Բաբախեանց մխանում է Ռոստոմի առաջարկին:

Ազգրացիկ.— Լիոնավաբեր, Ոսկեհանքի, Արեւելեան Բիւրոյի եւն. տեղեկագրերը չկարդացուած՝ ի՞նչպէս կարող ենք անցնել ծրագրային հարցին. չէ կարելի ակած հարցը կիսատ թողնել:

Մալումեան.— Ճանկալի է որ վերջացրած լինենք բոլոր տեղեկագրերն էլ, բայց այդի առաջ պէտք է ունենանք՝ ժողովի ընդհանուր տրամադրութիւնը. ժողովականները մեկնելով նեւերից յոգնում են, ուստի հարկաւոր է զանազանակերպութիւնն մտցնել զրոյցների մէջ. բացի դրանից՝ պատգամաւորներից մի քանիսը չէ՞ որ չեն եկել, որպէսզի մեզ հետաքրքրութիւն արթնէ ծանօթանալու նրանց չրջաններէ տեղեկագրերի հետ: Ի նկատի ունենալով այս բոլորը, առաջարկում եմ, այսուհետեւ մեր աշխատանքները բաժանել երկու մասի՝ առաւօտները զբաղուենք տակտիկական եւ այլ խնդիրներով. իսկ երեկոները նուիրենք մնացած տեղեկագրերի ընթերցման:

Ժողովը հարցի վերջնական որոշումը թողնում է հետեւեալ նիստերին:

Վռամեան պատրաստակամութիւն է յայտնում վաղուայ նիստին ներկայացնել մի զեկուցում <ինքնապաշտպանութեան> մասին <Դուրքիայում>: (Տես Օրակարգ Բ. <Գործունէութիւն ապատրի մէջ> 1· Թուրքիոյ մէջ):

Սեպուհ առաջարկում է հեռագրել Արեւելեան Բիւրոյին, որ կա՛մ նաւահանգստի եւ Զարեբերդի պատգամաւորները անմիջապէս ճանապարհ ընկնեն, կամ կարդադրուի որ նրանց փոխարէն նոր ընտրութիւններ նշանակուեն:

Ժողովը առաջարկն ընդունում է մեծամասնութեամբ ընդդէմ 4ի:

Զարդարեան խնդրում է պարզել վերջնականապէս, Քէ արդեօք ինքը երկո՞ւ ձայնով է լինելու ներկայ ժողովին Քէ ո՛չ (խօսքը վերաբերում է այն ժամանակին, որ նա մի չաբաթ առաջ հեռագրով առաջել է Ոսկեհանքից):

Զաւրեան.— Մեզ համար կարեւոր է, որ Ոսկեհանքի ներկայացուցիչը այստեղ բացատրէր մեզ, Քէ ի՞նչ պատճառներով վիճաբանութիւնները իրենցից դուրս չեն գնում. եւ եթէ ընկ. Զարդարեան իրազեկ է այդ խնդրին, եւ ոչինչ չեմ ունենայ նրա պատգամաւորութեան դէմ:

Զարդարեան պատասխանում է, որ ինքը ուրբ ամէն ապրել է Ոսկեհանքում եւ հետացել է այնտեղից հազիւ ուրբ օր դէպքից առաջ. ուրեմն ինքը ծանօթ է չրջնի կացութեան:

Ստեփանեան.— Եթէ Զարդարեան դէպքի պատասխանատուութիւնն իւր վրայ առնէ, մենք կ'ընդունենք նրա պատգամաւորութիւնը: Այլապէս պէտք է ապատենք, մինչեւ որ ասացուն Ոսկեհանքի Շրջնային ժողովի որոշումները, որպէսզի ո՛չ ժողովը եւ ոչ Զարդարեանը ինքը անյարմար դրութեան մէջ չընկնեն:

Վահազ.— Պատասխանատուութեան մասին խօսք չէ կարող լինել. այստեղից հեռագրելու ժամանակ մենք ասել ենք արդէն, որ Ծուցական մարմինը պէտք է գտնել տեղական մարմնից, որ տեղական մարմինը իւր կոկ պատգամաւորն ունենայ ժողովում:

Զարդարեան.— Եթէ տեղական մարմնի կողմից մարդ գար այստեղ, նա եւս չէր կարողանար լրիւ տեղեկութիւններ տալ դէպքի մասին. քանի որ միայն Ծուցական մարմինն էր, որ տեղեակ էր գործին:

Ժողովը հաւանութիւն է տալիս, որ Զարդարեան պատգամաւոր համարուի Ե՛ւ Ոսկեհանքի չրջնի:

Նիստը փակուում է ժամը 7ին:

40ՐԴ ՆԻՍՏ (19 Մարտ, առաւօտ)

Նախագահում է՝ Մալումեան:
Բացակայ է՝ Սաֆօ:

Նախագահը յայտնում է, որ երէկուայ որոշման համաձայն, հեռագրուել Կովկասից ապատուղ ընկերներին, որ եթէ չեն կարող գալ, ընտրել ասն իրենց փոխարէն ուրիշներին եւ չատպեցնեն: Հեռագրուեց, որ ճանապարհուեն Նոյնպէս Զէքմեի ներկայացուցիչը եւ ընկ. Գարոն: Այս յայտնում է դիւանի կողմից, որ պատգամաւորները իրենց բերած առաջարկները տեղեկագրից արտագրեն եւ տարագրած յանձնեն դիւանին:

Վռամեան մի զեկուցում է անում <Երկրի մէջ ինքնապաշտպանութեան> մասին, որ տեւում է ¾ ժամ:

Զեկուցման հետեւող վիճաբանութիւնների վերաբերմամբ հարց է առաջ գալիս, Քէ ի՞նչ նշանակութիւն ունեն այդպիսի զեկուցումները եւ նրանց առիթով եղած վիճաբանութիւնները, քանի որ ծրագրային հարցերը դեռ չեն լուծուած: Որոշուում է՝ եղած առաջարկների մասին ունենալ կարծիքների փոխանակու-

թիւն, քուէարկել միայն տրամադրութիւնների իմանալու համար, բայց որոշումները յետաձգել ծրագրային հարցերի լուծումից յետոյ: Սկսում են վիճաբանութիւնները:

Ռոստոմ.— Վահանեանի ասելով, որոշ պարտականութիւններ չեն դրուել մարմինների վրայ, որ նրանք երկիրը զինելու պատասխանատու լինին: Մենք ոչ միայն այդ արել ենք, այլ մինչեւ անգամ յատուկ մարմիններ ենք ունեցել: Բայց այդ գործի յաջողութեան համար դա բաւական չէ. հարկաւոր են նաեւ գործնական պայմաններ: Յեղափոխական մարմինների վրայ մենք միշտ դրել ենք նաեւ ինքնապաշտպանութեան պարտաւորութիւնները: Զինելը եւ կազմակերպուելը սկսել է դեռ 1890 թուից: Բայց զինելու գործը կազմակերպելը, զէնք տեղափոխելը եւն., բաւական չեն գործի յաջողութեան համար: Այն ժամանակ երկրից գալիս էին ուխտներ [?] եւ ուզում էին, որ իրենց զէնք տանք. բայց զէնքը տանում էին եւ ձեռնտու գնով ծախում էին քրտերին, որովհետեւ կեանքը դեռ պահանջ չէր առաջ բերել: Յետոյ այդ ձեւը փոխուեց, որոշուեց զէնքը ուղղակի ժողովուրդին տալ եւ այդ նպատակով երեւանից մօտ 400 զէնք ուղարկուեց Ալաշկերտ, բայց դրանից հազիւ 70ը մնաց ժողովրդի ձեռքին. մնացածը ծախեց ժողովուրդը: Ուրեմն բաւական չէ յատուկ օրգան ունենալ, որ զէնք մատակարարի, հարկաւոր է նաեւ յեղափոխական պատրաստութիւն: Վասպուրականի այժմեան օրինակը տարիների աշխատանքի հետեւանք է. դրան նպաստել են այն բոլոր յեղափոխական ակտերը, որ տարիների ընթացքում կատարուել են: Դա վաղուց սկսուած գործ էր, բայց նպաստող պայմաններ չկային: Նոյնը եւ Կովկասում, թէեւ վտանգը աւելի յայտնի էր, բայց զինումը յաճախ բռնութեամբ է կատարուել եւ մենք դեռ վստահ չենք, թէ անդորրութիւնը տիրելուց յետոյ ժողովուրդը իր զէնքերի մի մասը չէ ծախել: Շատ նշանակութիւն չպիտի տալ յատուկ օրգան ստեղծելուն: Ինքնապաշտպանութիւնը չէ կարելի կազմակերպել ուրիշ մարմինների միջոցով, այլ ուր դաշնակցական մարմիններ կան, գործը պիտի յանձնել տեղական մարմիններին, իսկ ուր չկան, այնտեղ մարմիններ առաջ բերել: Զզատել ինքնապաշտպանութիւնը յեղափոխութիւնից: Միայն դրամ հանգանակելով մեծ յաջողութիւն չենք ունենայ: Արտասահմանում պիտի մարմնամարզական պարապմունքներ ունենանք, ինչպէս այդ անում են ուրիշ ժողովուրդներ: Մարմնամարզական վարժութիւններով մենք ձեռք կը բերենք նաեւ զինավարժութիւն եւ կ'ունենանք զինուորական-ներ եւ պատրաստի բանակ՝ ինքնապաշտպանութեան համար: Ուրեմն իմ առաջարկս է, որ դրսի մարմինները ոչ միայն դրամ հաւաքելով պիտի բաւականանան, այլեւ գործնական պատրաստութիւններ պիտի տեսնեն:

Անդրանիկ Թումանեան.— Ինչ վերաբերում է զէնքի գնելուն, ես կարծում եմ, որ ինքնապաշտպանութեան գործը պէտք է կատարուի ոչ թէ գնելով, այլ ինքնաստեղծ միջոցներով: Ես ինքս եղել եմ Ալաշկերտում եւ տեսել եմ, որ ժողովուրդը ինքն է ստեղծել զէնքը: Ես ինքս ունեցել եմ 3 հրացան եւ 2 ատրճանակ, որոնք ես ստեղծել եմ ինքնուրոյն կերպով

բին, որովհետեւ ժողովուրդը յեղափոխական գիտակցութիւն չէ ունեցել. հետաքրքրական է իմանալ, թէ մինչեւ հիմա Դաշնակցութիւնը ի՞նչ է արել յեղափոխական դիտակցութիւնը բարձրացնելու համար:

Անդրանիկ.— Ընկ. Վռամեանը, Կովկասի օրինակը նկատի առնելով, ասում է, թէ ինչո՞ւ Տաճկաստանում էլ ժողովուրդը չպիտի կարողանայ պաշտպանուել: Բայց մեր ժողովուրդը 20 տարի է, որ ոչ մի պատրաստութիւն չունի. դրա համար մենք նոր պիտի սկսենք: Գանձակի եւ Շուշուայ կամ այլ տեղերի ժողովուրդը վաղուց ի վեր զէնքի սովոր է, նրանք ստիպուած էին դիմադրել 4000 թաթարի, որն այնչափ էլ ժուռ չէր. իսկ եթէ կառավարութիւնը դար այդ տեղերի վրայ թնդանօթներով եւ մեծ զօրութեամբ, հայերը չէին կարող դիմադրել: Կովկասում հայերի աշխարհագրական դիրքը նպաստաւոր է. նոքա այնտեղ հոծ բազմութիւն են կազմում եւ կենտրոնները իրար մօտիկ են: Տաճկահայաստանում կուռ հրապարակը շատ մեծ է եւ հայաբնակ վայրերը իրարից հեռու. կառավարութիւնն էլ չէզոք չէ մնում: Մշոյ ժողովուրդը 15 տարուայ մէջ շատ առիթներ ունէր համոզուելու, որ ինքնապաշտպանութիւնը կարեւոր է. բայց նա չկարողացաւ մեր կռիւների ժամանակ մեզ օգնութեան դալ, մանաւանդ որ ունեցած զէնքերն էլ շատ չնչին էին եւ փամփուշտները կէզծ: Վասպուրականի դրութիւնը շատ պայծառ պատկերացրին մեզ, ես էլ հաստատում եմ: Բայց այնտեղի խաղաղութիւնը այն է, որ տնտեսական ճնշումով ստիպեցին հրացանը ծախել: Երբ կառավարութեան զօրքերը եւ քրտերը յարձակւում են մեր վրայ, դիւղերը չեն կարող իրար օգնութեան դալ: Ընդհարումները լինում են 100ին 90ը քիւրտերի հետ. իսկ 100ին 10ն էլ մատնութեամբ. շատ անգամ մատնում են նոյնիսկ առանց տանջանքների ենթարկուելու: Մենք չենք կարողացել եւրոպայի ուշադրութիւնը գրաւել, որովհետեւ մեր զէնքը ուղղել ենք միայն կառավարութեան եւ քրտերի դէմ, մենք չենք վնասել եւրոպացիների չահերին. դրանց դէմ պիտի ուղղենք այժմ մեր զէնքը:

Ստեփանեան. գտնում է, որ այս դրուած հարցը քննադատելու հարց չէ, դա ինքն ըստ ինքեան հասկանալի է. դա պիտի թողնել երկրի ընկերներին, որ իրենք անեն: Իսկ մենք այստեղ պիտի լուրջ ձեռնարկների վրայ մտածենք: Մի մշակուած միջոց չեն առաջարկում, որ հիմնուած լինի տեղական ծանօթութեան վրայ, հայութեան թուի վրայ եւն: Մի տեղ ուր կառավարութիւնը եւ բոլոր ժողովուրդները մեր թշնամիներն են, չեն ասում, թէ մենք ի՞նչ կերպ պիտի դործենք եւ ի՞նչ բանի պիտի ձեռնարկենք:

Բարսեղեան.— Մեր կազմակերպութեան նպատակը եղել է, ինչպէս ես հասկանում եմ, ոչ թէ հովանաւորել ամէն հայի կամ խումբի, կամ հատուածի, բաւական է որ նա հայ է, այլ հայ ազգի այն տարրերը, որոնք կազմում են հայ ազգը բնորոշող կոմպակտ մասսան [միակտուր դանդուածը]. ահա թէ ինչո՞ւ առաջարկում եմ՝ ինքնապաշտպանութեան դործը կազմակերպել ոչ թէ բոլոր վայրերում, այլ այն վայրերում միայն, որոնք նշանակութիւն կարող են ունենալ իբրեւ ապագայ ընդհանուր յեղափոխական չարժման աղբիւրներ եւ նեցուկներ, եւ այդ դործը կապել անպայման Դաշնակցութեան մարմինների հետ: Այն վայրերում, ուր մարմիններ չկան, առաջ ստեղծել այդպիսիները եւ յետոյ նոքա կը ձեռնարկեն ինքնապաշտպանութեան դործին. ինչ վերաբերում է մարմնամարզական խմբակցութիւններին, դոքա երկրորդական դաստիարակիչ նշանակութիւն կարող են ունենալ:

Մուրատ.— Թէեւ Դաշնակցութեան սկզբունքն է եղել ինքնապաշտպանութեան համար զինելը, բայց դա առանց դրսի օգնութեան անկարելի էր. զէնք, ինտելիգենտ ուժեր եւ ռազմիկներ միշտ պակսել են: Դրանք դրսից պիտի դան:

Արամ.— Հարցը պարզ է, իմ կարծիքով ինքնապաշտպանութիւնը պիտի կազմակերպութեան ձեռնեղեցութեամբ լինի: Տաճատի ասելով մենք գնում ենք դէպի արմենականութիւն: Իսկ ես ասում եմ, որ բռնի յեղափոխութիւնը մեր վերջնական նպատակն է, եւ մենք այդ բանը պիտի դնենք նպաստաւոր հողի վրայ: Իսկ եթէ արմենականները լաւ օրինակներ են տուել, ինչո՞ւ չօգտուենք: Ինքնապաշտպանութիւնը պիտի ձեռնարկներին նպաստող լինի: Մենք ունեցել ենք ձեռնարկներ Սասուն, Վան. սրանք համայք են ունեցել. մեր մամուլն ու գրականութիւնն էլ միշտ դէպի այդ կողմն են կոչ արել. իսկ Վասպուրականի գործունէութիւնը խաղաղ կերպով է տարուում եւ շատերը կարծում են թէ այնտեղ գործ չկայ եւ չեն գալիս այն կողմերը: Այժմ պիտի երիտասարդութիւնը [լծուի] այս նոր ձեռնարկներին, եւ ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու համար պիտի դնայ ամէն կողմ. եւ ոչ թէ ընկ. Բարսեղեանի ասածի նման կենտրոնանայ միայն մի քանի տեղ: — Տեղական գոհողութիւնը զէնքի համար պիտի լինի. դրամը՝ տեղական ժողովուրդը պիտի տայ. իսկ ղեկավարը՝ ի հարկէ, եթէ տեղացի չկայ, դրսից պիտի դայ, եւ ով ձեռնհաս է՝ նա պիտի ղեկավարէ:

Նիստը փակւում է ժամը 1ին, վիճաբանութեան չարունակութիւնը եւ ընկ. Վռամեանի պատասխանը թողնելով երեկոյեան նիստին:

41ՐԴ ՆԻՍՏ (19 Մարտ, երեկոյ)

Նախագահում է՝ Մալումեան:
Ներկայ են 23 պատգամաւոր:
Բացակայ են՝ Արշակ, Զաւրեան, Ճուչիկ, Սաֆո:

Ինքնապաշտպանութեան հարցը

(շարունակութիւն նախորդ նիստի)

Սեպուհ.— Ամէն չանք պէտք է թափել, որպէսզի ժողովուրդն ամէնուրեք զինուած լինի, եւ ընդհանուր զինման տեսակէտից է որ պէտք է հասկանալ ինքնապաշտպանութեան նշանակութիւնը. ժողովուրդը պէտք է պատրաստ լինի՝ հարկաւոր դէպքում միահամուռ ուժերով ոտքի կանգնելու համար. երբ մի կէտում ապրստամբութիւն է պայթում, միւս վայրերն, արդէն նախօրօք պատրաստուած, պէտք է իսկոյն արձագանգ տան:

Մալումեան.— Ընկ. Վռամեանի հայեցակէտը հասկասում է այն խնդրին, որ դրուած է մեր Օրակարգի մէջ. այնտեղ խօսւում է ինքնապաշտպանութեան գընդերի մասին, իսկ Վռամեան խօսեց ընդհանրապէս ինքնապաշտպանութեան մասին: Նախ պէտք է ասել, որ ինքնապաշտպանութեան գաղափարը նոր չէ մեզանում. իսկ եթէ այդ գաղափարը մինչեւ այժմ չէ իրագործուել՝ պէտք է դրա պատճառը փնտռել ուրիշ հանգամանքների մէջ: Վռամեան աշխատել է լայն կերպարանք տալ իւր ծրագրին՝ մի երեւոյթ, որը շատ բնորոշ է եղել մեր բոլոր ժողովների զբաղմունքներին եւ որին ես կը տայի ախտաւոր անունը: Ախտաւոր՝ որովհետեւ մենք չենք ուզում մեր դործունէութիւնը սահմանափակել որոշ սահմաններով, այլ միշտ ընդարձակում եւ ծաւացնում ենք: Անկարելի է կազմակերպել ամբողջ երկիրը, եւ այդ՝ 24 ամսուայ ընթացքում, ինչպէս կարծում է Վռամեանը. մի այդպիսի գործ կատարել մենք անկարող ենք նոյնիսկ 5 տարուայ ընթացքում, եթէ պայմանները մնան նոյնը: Ի՞նչպէս կարող ենք այդ անել, երբ 15 տարուայ ընթացքում երկիր ենք մտցրել շատ չնչին քանակութեամբ զէնք. ես չեմ խօսում այն զէնքերի մասին, որոնք գտնուելիս են եղել ժողովրդի ձեռքին, այլ այն զէնքերի մասին, որոնք կազմակերպութեան տրամադրութեան տակ են եղել: Կազմակերպութեան հրացաններից Սասունը վերջին ապստամբութեան միջոցին ունեցել է, ինչպէս ընկ. Անդրանիկն է ասում, միայն 173 [հատ]: Վասպուրականը ստացել է սկզբից մինչեւ այսօր ընդամէնը՝ 5–600 հրացան: — Արդ, եթէ մի կազմակերպութիւն կարողացել է միայն այդքան չնչին թուով զէնք հասցնել 15 տարուայ ընթացքում, նա երբեք չի կարող երկու տարուայ ընթացքում զինել ամբողջ ժողովուրդը: Այսքանը քանակի մասին: Ինչ վերաբերում է սիստեմին՝ պէտք է փոխել: Ես լիովին համաձայն եմ ընկ. Բարսեղեանի մտքի հետ, որ նախքան մի չրջան հիմնովին կազմակերպելը՝ չպէտք է այլ չրջաններ անցնենք. մինչեւ երզրում, Վան եւն. չկազմակերպուին վերջնականապէս՝ կարիք չկայ դիմելու կենտրոնից չատ հեռու այլ վայրերին: Քաղաքական տեսակէտից սխալ է՝ վազել դէպի ամէն մի անկիւն ուր մի խումբ հայ կայ. մենք արել ենք այդ սխալը, ձգտել ենք կազմակերպել հեռաւոր դաղութներ՝ Եդիպտոսը, Ռումանիան, նոյնիսկ Հնդկաստանը եւն., եւ այդպիսով մենք միայն վնասել ենք մեր գործին, փոքր, երկրորդական վայրերի պատճառով՝ կենտրոնները չաճախ անուչադրութեան մատնելով: Հարկաւոր չէ զբաղիլ բոլոր վայրերի հայերով միայն այն պատճառով, որ նրանք մեր ազգութեան ու կրօնին են պատկանում: Պէտք է կազմակերպել միայն այն վայրերը, որոնք անմիջական մասնակցութիւն կարող են ցոյց տալ մեր քաղաքական դործին, որտեղ ուժերը կարող են կենտրոնանալ եւ նպաստել հայ համայնքի քաղաքական չարժման: Գործունէութեան այս ընդլայնման սիստեմը ես համարում եմ հիմնովին սխալ: Մեր գործունէութեանը պէտք է սահմաններ դնել: Ինքնապաշտպանութեան գործի համար մի առանձին մարմին հաստատելու կարիք չկայ. կազմակերպութիւնն ինքը կը հոգայ այդ մասին: Ի վերջոյ ես կարծում եմ, որ աւելի յարմար կը լինէր, խնդրի իմաստի տեսակէտից «ինքնապաշտպանութեան» փոխարէն ասէինք՝ «ժողովրդի զինման գործ»:

Արամ.— Անցեալ գործողութիւնները տեղի են ունեցել բացառիկ պարագաներում. այդ պարագաների փոփոխուելուլը առայ են եկել դիւրութիւններ՝ աւելի յարող գործողութիւններ կատարելու համար. օրինակ միայն այս տարուայ ընթացքում մենք կարողացել ենք աւելի ռազմամթերք փոխադրել երկիր, քան ամբողջ 15 տարուայ ընթացքում: Ուրեմն ներկայի գործողութիւնները չենք կարող հիմնել անցեալի բացառիկ հանգամանքների վրայ:

Մալումեան.— Ես համաձայն եմ ընկ. Արամի հետ, որ անցեալը չատ խնդիրներում չէ կարող չափ հանդիսանալ ապագայի համար. բայց դա վերաբերում է կամ սկզբունքային հարցերին կամ նոր ձեռնարկներին. երբ սակայն խնդիրը գործի տեխնիկային է վերաբերում, այս դէպքում անհրաժեչտ է ուչադրութեան առնել անցեալը: Եթէ վերջին մէկ տարում Վասպուրականը կարողացել է աւելի ռազմամթերք ստանալ, քան բոլոր նախկին տարիների ընթացքում, պատճառն այն է, նախ, որ կազմակերպութիւնը 15 տարուայ փորձառութեան բովուին է անցել. առանց այդ փորձառութեան այսօր անհնարին կը լինէր, Արամի ասած քանակութեամբ զինամթերք մտցնել Վասպուրական: Բացի դրանից չպէտք է մոռանալ, որ նոր անակնկալ հանգամանքների չնորհիւ, ինչպէս օրինակ հայ–քրքական ընդհարումները Կովկասում, հեչտութեամբ կարող է դժուարանալ զէնքի փոխադրութեան գործը:

Ստեփանեան.— Ամբողջ երկիրը զինելը դժուար է: Վասպուրականը այո՛, միջոց կ'ունենայ իւր աչխարհագրական դիրքի չնորհիւ զէնք ստանալու, քանի որ գտնուում է Ռուսաստանի եւ Պարսկաստանի սահման-

ներին կից: Բայց հարց է, արդեօք ուրիշ վայրերն էլ, ինչպէս՝ Տարօն, Տիգրանակերտ եւն, կարո՞ղ են վաստակաւոր զէնք ձեռք բերել:

Չելալեան.— Երբ Վռամեան խօսեց ինքնապաշտպանութեան մասին, նա որոշ պարագայ ունէր աչքի առաջ: Այսօր հազարաւոր երիտասարդներ կան Ամերիկայում, որոնք բաղձանք ունեն, որ ինքնապաշտպանութեան գաղափարը իրագործուի երկրի մէջ: Նրանք այդ բանի համար պատրաստ են ամէն տեսակ զոհողութեան, միայն թէ գործի դլուխն անցնէր Դաշնակցութիւնը: Եւ մենք պէտք է անյուշտ, ղեկավար հանդիսանանք այս դէպքում: Ստեփանեան ասում է, թէ հեռաւոր գաւառներ անկարող կը լինեն զէնք ստանալ: Բայց ինչպէ՞ս է եղել, որ Կովկասին զէնք է հասցուել, նոյնիսկ Մոսկուայից. եթէ ռուս կառավարութիւնը, որ աւելի զօրեղ է տաճիկ կառավարութիւնից, այսպէս թէ այնպէս միջոց է տալիս զէնք փոխադրելու, մենք եւս Տաճկաստանում կարող կը լինենք միջոցներ ունենալ. եթէ կարելի է կաշառել ռուս չինովնիկներին, նոյնը կարելի է անել եւ տաճիկ պաշտօնեաներին:

Ռոստոմ.— Գանդուխտ գաւառացիները, ինչպէս Չելալեանն ասաց, ուզում են իրենց երկրի համար որեւէ գործ կատարած լինել: Այս ձգտումը յաճախ երեւան է գալիս նաեւ Կովկասում, իւրաքանչիւրն ուզում է օգնել միայն իր սեփական գաւառին, խմբեր են կազմում ու զէնք հայթայթում յատկապէս այս կամ այն գաւառի համար: Ես կարծում եմ, որ Կուսակցութիւնը պէտք է քաջալերէ այսպիսի ձգտումներին:

Մուրատ.— Ընկ. Մալումեանն ասում է, որ Դաշնակցութիւնն անկարող է ամբողջ երկիրը զինել եւ որ 15 տարուայ ընթացքում շատ չնչին քանակութեամբ զէնք է մտցրել երկիր: Ինչո՞ւ, որովհետեւ ես կարծում եմ այդ տակտիկան եղել է պակասաւոր.— մենք ունեցել ենք գործողներ անընդհատ մի որոշ չրջանում. երբ եղած գործիչը հեռանում է, չէ գտնուել մի ուրիշը որ սկսած գործը չարունակէ այնտեղ:

Վարդան.— Այստեղ խօսուեց մի հարցի մասին, որը չափազանց լուրջ է. ուստի արժէ նրա վրայ կանգ առնել: Դաշնակցութիւնը գործել է 15–16 տարի եւ ձեռք է բերել որոշ փորձառութիւն, որից պէտք է օգտուել այժմ: Առաջ կարծւում էր, թէ 10–12 հոգով կարելի էր ազատել Հայաստանը. երբ մենք 12 հոգով երկիր մտանք, 18 հրացանով, ո՛րքան վստահ էինք մեր այդ ուժի վրայ, մեծամեծ գործեր կատարելու յոյս ունէինք: Երկրորդ անգամ երկիր մտանք 22 հոգով, 33 հրացանով.— այլեւս ո՞վ կարող էր մեզ դիմադրել: Այդ ժամանակ ոչ թէ զգացմունքը, այլ խորը համոզումն էր մեր մէջ տիրողը, թէ այսպիսով կը լուծենք Հայկական Հարցը: Այսօր սակայն մենք այլեւս չունենք այդ նախկին հաւատքը: Սասունն ապստամբուեց, վաստակաւոր կուսակիցները տեղի ունեցան, Գոլիքը չարժուեց, — բայց այդ բոլորից յետոյ, ո՛չ մի դրական արդիւնք չունեցանք, որպէսզի կարողանայինք գործը չարունակել նոյն եռանդով: Ոգեւորուած էինք ռամկավարութեան [ժողովրդավարութեան], սոցիալիզմի գաղափարներով, առանց մտածելու, որ դեռ երկրում չկայ նոյնիսկ կեանքի եւ գոյքի ապահովութիւն. բայց յետոյ համարեա թէ լքուեցինք. մեր ընկերներից շատերը ընկան, — ի զո՞ւր: — Առաջ ինքներս մարդիկ էինք պահանջում՝ նորանոր կուիւներ մղելու համար, համոզուած որ, որքան աւելի մարդ ունենանք այնքան աւելի չուտ կը հասնենք մեր նպատակին: Բայց մի չարք փորձերից յետոյ, մի տեսակ ընկճուեցինք. երբ մեզ հարցնում էին երկրի մասին, մենք այլեւս չէինք կարողանում պատասխան տալ: Հասկանալի է սակայն, որ մեր այդ նախկին տակտիկան ժամանակի բնական արդիւնքն էր. աչքի առաջ ունէինք Բուլղարիան, Կրետէն եւն, որոնք կռուով, ապստամբութեամբ ձեռք բերին ազատութիւնը. մենք էլ նոյնպէս պէտք է վարուէինք՝ մեր խորին համոզմամբ: Մենք պէտք է կռուէինք անպայման, քանի որ մեզ էր վիճակուել կռուելը, մեր հայրերը մեզ համար հող չեն պատրաստած եղել, որպէսզի մենք այլեւս տակտիկայով չարունակէինք սկսուած գործը: Բայց այսուհետեւ էլ նոյն ճանապարհով ընթանալ՝ անկարելի է այլեւս: Ցեղափոխութեան պատճառով ժողովուրդը կոտորւում է. ի հարկէ պէտք է կոտորուէր, քանի որ իւրաքանչիւր յեղափոխական չարժում զոհեր է պահանջում. բայց կոտորուելուն էլ չափ ու սահման է հարկաւոր դնել. անվերջ կոտորուելը հերոսութիւն չէ: Գոնէ մենք էլ փոխադարձաբար կոտորելու միջոց ունենայինք, դեռ էլի կարելի էր հաշտուել իրականութեան հետ, ինչպէս օրինակ Կովկասում, կոտորուելու հետ միասին նաեւ կոտորում ենք: Բայց երկրում, միայն կոտորուում ենք. եթէ մի 10 քիւրտ ենք սպանում, փոխարէնը ամբողջ գիւղեր են ոչնչացնում: Մինչեւ ե՞րբ: — Պէտք է փոխենք մեր ճանապարհը: Սարսափելի է տաճկահայ իրականութիւնը: Օգտուենք մեր անցեալից. մենք պէտք է մեղմենք նաեւ մեր ձգտումները: Մենք այլեւս չենք ուզում անկախութիւն, ինչպէս առաջ. բաւական է, որ մեզ տան միայն կեանքի ու գոյքի ապահովութիւն, որ առնուազն մարդ լինելու իրաւունքն ունենանք: Լեզալ ուժեր պէտք է մտցնել երկիր, որոնց մեծ կարիք կայ այնտեղ: Նրանց գործունէութիւնը անհրաժեշտ է, օրինակ, Կիլիկիայում: Երբ ես երկու տարի առաջ գնացի Կիլիկիա, ժողովուրդը միանգամայն անպատրաստ գտայ յեղափոխական գործի համար: Այնտեղ չգիտեն նոյնիսկ մայրենի լեզուն, զաղափար չունին բնաւ թէ ինչե՛ր են կատարւում Սասունում կամ այլ տեղերում: Եկ ու այդպիսի մարդկանց քարոզիր, որ նրանք զինուեն: Նախքան զէնքը, նրանց պէտք է գիտակցութեան բերել: Այս պատճառով լեզալ գործիչներ են հարկաւոր այնտեղ:

Պէտք է աշխատել, որ փախստական մարդիկ քիչ լինին որքան կարելի է: Եթէ դրսից մի քանի մարդիկ անցնեն կիլիկիա, որպէս լեզալ գործիչներ, նրանք անհամեմատ աւելի օգտակար կը լինեն: Ապա միայն դրսից սպասելի զէնքի վրայ յոյս դնել չէ կարելի, դրսի օգնութիւնը բաւականանում է միայն առժամանակ, եւ նրանով բացառապէս ապահովել ժողովուրդը՝ մենք չենք կարող: Դրսից հրացաններ են ստացւում, բայց դրանցից իւրաքանչիւրը քանի՞ փամփուշտ է ունենում, — շատ քիչ, այնքան որ նրանով կարելի է կռուել հազիւ մէկ–երկու օր: Ներսում հենց հարկաւոր է միջոցներ ստեղծել զէնք ձեռք բերելու համար: Ներսում պէտք է ունենանք զինուորական ինստրուկտորներ [դասատուներ]. քաղ տղաներ շատ կան, բայց զէնք բանեցրնել չգիտեն, որովհետեւ սովորեցնողներ չեն ունեցել: Այս բոլորը պէտք է ստեղծել ներսում: Միեւնոյն ժամանակ դրսից եկած ուժերի ներկայութիւնը անհրաժեշտ է. ընդհանրապէս դրսեցին հատուկ է ներշնչում ժողովրդին եւ սրա ակնածութիւնը ձեռք բերում: Ինքնապաշտպանութիւնը զատել յեղափոխական գործունէութիւնից՝ չէ կարելի, սրանք իրարից անբաժանելի են:

Սաֆօ.— Ոչ մի գործիչ, դրսեցի թէ ներսեցի, չէ կարող լեզալ գործել, որովհետեւ խակոյն գրաւում է կառավարութեան ուշադրութիւնը: Հրայրն անգամ անկարող եղաւ լեզալ մնալ:

Վռամեան.— Ես կ'ուզէի, որ այս խնդիրը աւելի չատ վիճաբանութեան նիւթ դառնար: Եղած պատասխանների մէջ ես գտայ շատ իրաւացի դիտողութիւններ, նաեւ շատ թիւրիմացութիւններ: Իմ հիմնական միտքս էր այն, որ ինքնապաշտպանութեան հողի վրայ պէտք է կազմակերպել եւ զինել այն հայրենակ վայրերը, որոնք մինչեւ այժմ դուրս են մնացել մեր ռազմական կէտերից: Այդ այն վեց վիլայէթներն են, որոնց հետ 61րդ յօդուածի հիման վրայ կապուած է Հայկական Հարցի լուծման խնդիրը. իմ խօսքն այդ վայրերի մասին է, ուստի ես չեմ ուզել աչքի առաջ ունենալ այն բոլոր կէտերը ուր հայ կայ: Այստեղ ասացին, որ ինքնապաշտպանութիւնը, ինքնըստինքեան, մի պահպանողական երեւոյթ է. բայց որովհետեւ դա մինչեւ այժմ գոյութիւն չէ ունեցել ժողովրդի մէջ, նրա երեւան գալն արդէն պէտք է մի յառաջադիմական քայլ համարել: Շատ տեղերում ժողովուրդը զուրկ է զէնքի գիտակցութիւնից եւ այդպիսի վայրերում մեզ հարկաւոր է սկսել ուղղակի այբբենից. պէտք է այդ սիստեմով գործել: Ընկերներից մէկը նկատեց, թէ իմ այսօրուայ զեկուցումը միակողմանի է. բայց այդ նկատողութիւնն ինքնին անհիմն է, քանի որ ես խօսում եմ մեր յեղափոխական ամբողջ ծրագրի միայն մէկ կէտի մասին. միւս կէտերին կը վերադառնամ հետագայում:

Անդրանիկը յոյս չունի, թէ միայն ինքնապաշտպանութեան միջոցով կարելի կը լինի յաղող կռիւ մղել կառավարական զօրքերի դէմ. օրինակ բերեց Շուշին.— եթէ զօրքերը չարժուէին, հայկական ոչ մի ինքնապաշտպանութիւն այժ չէր ունենայ դիմադրելու: Բայց ես ասում եմ, որ ինքնապաշտպանութիւնը խաղաղ ժամանակների համար է. միթէ անպատճառ եւ միշտ զօրքի՞ հետ է, որ պէտք է դործ ունենանք. չէ՞ որ կարող է յանկարծ մի այնպիսի օր գալ, երբ հրապարակի վրայ զօրք թերեւս բոլորովին էլ չլինի: Հարցի էութիւնը նրանումն է, որ ժողովուրդը ձեռքին զէնք ունենայ պատրաստ: Մալումեան ախտաւոր կոչեց մեր ընդլայնման սիստեմը: Սակայն ինչպէս արդէն վերեւում նկատեցի, ես չեմ ասում, թէ մեր գործունէութիւնը պէտք է տարածել ամէնուրեք: Ոչ էլ կարծում եմ, որ 24 ամսուայ ընթացքում կարող ենք ամբողջ երկիրը զինել. խօսքս՝ գործի մեխանիզմը կազմելու մասին է, մի բան՝ որի համար ասածս երկու տարին՝ բաւական է լինելու: Ստեփանեանը զուր է կասկածում, թէ վաստակաւորներից զատ միւս չրջանները դժուարութեամբ են զէնք ստանալու. եթէ վաստակաւորները նպաստաւոր պայմաններ ունի, նոյնը կարող են ունենալ եւ միւս գաւառները. իւրաքանչիւր վայր ունի իւր տեղական ուրոյն յարմարութիւնները: Եթէ միայն փորձուած մարդիկ լինեն, բոլոր չրջաններին կարելի է զէնք հասցընել: Լեզալ ուժերն անհրաժեշտ են. իլլեզալ գործիչներ հալածւում են, իւրաքանչիւրը հազիւ երկու տարի կարողանում է ապրել. բայց բաւական է, որ իւրաքանչիւրը դրանից հերթով չորս հինգ ամիս մնայ կամ չրջի մի չրջանում, ահագին գործ կատարած կը լինեն այդպիսով: Ես համաձայն չեմ, որ մեր ամբողջ դործունէութիւնը կենտրոնանայ միայն որոշ չրջանում: Տաճկահայաստանը միայն Վասպուրականն–Սասունով սահմանափակել չէ կարելի. բոլոր հայրենակ վայրերն էլ պէտք է մասնակցեն գալիք ընդհանուր ապստամբութեան. որովհետեւ, երբ միայն Սասունն է ոտքի կանգնում, նրա պարտութիւնը լքում է առաջ բերում միւս վայրերի մէջ: Մէկ կէտի վրայ չպէտք է կապել ժողովրդի յոյսերը. կազմակերպենք մնացած վայրերը, Սեբաստիան, Տիգրանակերտը եւն. ոչ ոք չէ ուզել ուշադրութիւն դարձնել նրանց վրայ. այսօր ժամանակն է վերջապէս որոշելու, թէ ո՞վ է լինելու պատասխանատուն այդ տեղերի համար:

Նախագահը փակում է վիճաբանութիւնները եւ հարց դնում, թէ մի քանձե՞ւ կազմել քննուած հարցի վերաբերմամբ, թէ ընտրել մի յանձնախումբ, այդ մասին զեկուցում տալու համար:

Բանաձեւեր են առաջարկում՝

1. Ռոստոմ (բանաձեւ 1.).— Յանձնարարում է Տաճկահայաստանում գոյութիւն ունեցող բոլոր մաք-

միններէն կազմել ժողովրդական ֆոնդ, կազմակերպութեան եկամուտներից դուրս, յատկապէս ժողովրդի ղինման համար։ Գործադրելնել բոլոր կ. կոմիտէներին ամէն ջանք թափել վստահելի ընկերների միջոցով կազմակերպութիւններ յառաջ բերել այն վայրերում, ուր հիմա չկայ, յանձնելով նրանց եւ ղինման գործը։ Դրանից օգնութիւն հասցնել միմիայն այն դէպքում, երբ կազմակերպական գործը ներսում ապացոյցներ տուած կը լինի իր ձեռնհասութեան։ Եւ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինքնապաշտպանութեան յաղթութիւնը կախուած է ոչ այնքան զէնքի, ռազմամթերքի քանակից, որքան ղինուորժութեան կարողութիւնից եւ ուժերը կազմակերպելուց ու ղեկավարելուց, անհրաժեշտ է ներսում ինքնապաշտպանութեան գործը դնել մեր մարմինների ղեկավարութեան տակ։

2· Վռամեան (*բանաձեւ 2·*).— *Ժողովը կ'ընդունի, որ Դաշնակցութիւնը աւելի հետեւողականութեամբ պարտաւոր է զբաղիլ՝ կազմակերպելու ղինման գործը ինքնապաշտպանութեան հողի վրայ, նաեւ այն չորս հայկական նահանգներուն մէջ, որոնք դուրս մնացած էին Պատասխանատու Մարմիններու չրջաններէն։ Ուստի յանձնախումբ մը կ'ընտրուի, որ օգտուելով Ամերիկայի ու Վասպուրականի նախագծերէն, ու այդ առթիւ կատարուած վիճաբանութիւններէն, կը պատրաստէ ծրագիր մը եւ կազմական կանոնագիր մը այդ վայրերու կազմակերպական գործի համար։*

3· Արամ (*բանաձեւ 3·*).— *Ժողովը լսելով Վռամեանի ղեկուցումը ինքնապաշտպանութեան մասին՝ որոշեց, թէ հայ ժողովրդեան ինքնապաշտպանութեան կամ ղինման հարցը մեր կազմակերպութեան ձեռնարկներից մէկն է։ Ներկայ պարագաներում, քանի որ ժողովուրդը հասունութեան է եկել, եւ պատրաստակամութիւն է ցոյց տալիս, պիտի անմիջապէս դիմել գործի, ստեղծելով կազմակերպուած վայրերից դուրս, ժողովրդական կազմակերպութիւն, տանելով լայն պրոպագանդա, եւ դրան անմիջական հետեւանք, տեղական ղոհողութիւններով ու չովկաններով՝ լայն ինքնապաշտպանութիւն։ Վերջնի նպատակն է լինելու, նպաստել մեր ձեռնարկներին, եւ դէպքերի կամ խաղաղ ժամանակ պաշտպանել ինքզինքը։*

4· Մալումեան (*բանաձեւ 4·*).— *Ժողովը լսելով Քրքահայ ժողովուրդի ղինման եւ ինքնապաշտպանութեան մասին եղած ղեկուցումը (Ամերիկայի եւ Վասպուրականի ընկերների) եւ այդ առթիւով տեղի ունեցած վիճաբանութիւնները, եւ ընդունելով ժողովրդական միջոցներով ղինելու սկզբունքը, — որոշեց՝ ընտրել մի յանձնաժողով, բաղկացած երկրին ծանօթ երեք ընկերներից, յանձնելով նրան, տրուած նիւթերի հիման վրայ, մշակել մի նախագիծ եւ ներկայացնել ժողովին՝ յարուցուած խնդիրները կարգադրելու համար։*

Ասլան.— *Յանձնախումբին պէտք է տրուին որոշ ցուցմունքներ, թէ ի՛նչ ուղղութեամբ պէտք է մշակել ներկայացուելիք ծրագիրը։*

Նախագահ.— *Մենք որոշումներ չենք կայացնում, որպէսզի յանձնախմբին վճռական հրահանգներ տալու կարիքը լինի։*

Քուէարկւում են Ռոստոմի, Արամի եւ Մալումեանի բանաձեւերը։ Մալումեանի բանաձեւը անցնում է 18 ձայնով, ընդդէմ 4ի։

Վռամեանի բանաձեւը ստանում է 2 ձայն։

Ընդունուած բանաձեւի հիման վրայ ընտրւում է մի յանձնախումբ, բաղկացած հետեւեալ ընկերներից՝ Ռոստոմ, Մաքօ, Վռամեան եւ Արամ (վերջին երկուքը իբրեւ զեկուցանողներ)։

Նախքան նիստը փակելը, նախագահը յիշեցնում է, որ այսօր Քրիստափորի եւ Էդուարդի մահուան երկրորդ տարելիցն է։ «Ուղղի երկու տարի առաջ, Սոֆիայի դերեզմանատանը, մի քանի ընկերներ կանգնած էինք երկու արտասուալոր դերեզմանի առաջ։ Այդ օրը մենք մեր վերջին հրաժեշտն էինք տալիս մեր երկու ընկերներին, որոնք իրարից հետու ծնուած, մէկը պոլսեցի, միւսը կովկասցի, ժողովրդի վշտի ու տանջանքի դաշափարով սակայն, կապուել էին միմեանց հետ, Քրիստափորն ու Էդուարդը։ Մեզանից մէկը որ դամբանականը խօսեց, այն յոյսը յայտնեց ներկայ գտնուող բուլղար ընկերներին, թէ մի օր էլ կը գանք այստեղ, մեր այս ընկերների աճիւնները տեղափոխելու համար, բայց կը գանք ոչ իրրեւ փախստականներ, ինչպէս մինչեւ հիմա, այլ իրրեւ ազատ քաղաքացիներ։ Իսկ մինչ այդ պահպանեցէք մեր այս քանկագին դերեզմանները»։ Եւ իսկապէս երկրի դրութիւնը փոխուեց գահավէժ արագութեամբ։ այսօր մենք կարող ենք մեր փափաքն իրագործել։ Այստեղ ի հարկէ ես չեմ խօսիր Քրիստափորի մասին։ իւրաքանչիւրը ձեզանից դիտէ նրան եւ յարգում է նրա յիշատակը։

Ժողովականները յոտնկայս յարգում են նրա յիշատակը։

Նախագահը խնդրում է ցաւակցութեան հեռագիր ուղղել Քրիստափորի այրուին։ Ապա առաջարկում է Քրիստափորի դիակը տեղափոխել Կովկաս, յիշելով Էդուարդի մարմնի Գալիս փոխադրելու անհնարաւորութիւնը։

Ժողովը համաձայնւում է։

Առաջարկ է լինում Զարդարեանի կողմից՝ Էդուարդի մարմինն էլ Կովկաս փոխադրել, որը նմանապէս ընդունւում է։

Նախագահ.— Տեղափոխման խնդրի տեխնիկական կողմի մասին առանձին ղեկուցում կ'անի դիւանը։

Քրիստափորի այրուին ուղղուած հետեւեալ պատճէնը հետեւալն է.—

Ծքնեւ, Խմբագրութիւն Դրօշակի

Տիկին Մէքայէլեանին։

Անմոռանալի ընկ. Քրիստափորի մահուան երկրորդ տարելիցի օրը, Ժողովը յարգելով յոտնկայս նրա քանկագին յիշատակը, որոշեց նրա աճիւնը տեղափոխել օտար հողերից հայրենի կովկասը, եւ յայտնել ձեզ իր խորին յարգանքները եւ սրտաբուխ ցաւակցութիւնը անփոխարինելի կորստի առթիւ։

Դաշնակցութեան Ընդհ. Ժողով։

Նիստը փակւում է։

42ՐԴ ՆԻՍՏ (20 Մարտ, առաւօտ)

Նախագահում է՝ Թոփչեան։
Ներկայ են 26 պատգամաւոր։
Բացակայ է Սաֆօ։

«Զեկուցում ապստամբական ձեռնարկների մասին» Ռոստոմի կողմից։ Զեկուցումից յետոյ տեղի են ունենում հարցումներ։

Սարգիս կարծում է, որ ապստամբական յաղող ծրագիր կազմելը ամենաառաջին պայմանն է, ինչպէս պատերազմական ծրագիր կազմելը պատերազմի համար։ Թէեւ ժողովուրդը մի տեսակ վհատութեան մէջ է, բայց ինքնապաշտպանութեան բախտը նրան կը մղի գործի անցնելու։ Մեր շարժումների առաջին չրջանը խենթութիւն էր, որը սակայն ունեցաւ իւր օգուտները։ Մենք պիտի աշխատենք այդ երկրում հայութիւնը պահպանել։ Եթէ հայութիւնը այնտեղ մինչեւ մուժի [նուազագոյնի] հասնի, այն ժամանակ քաղաքական դաշնագրերը մեռած տառ կը մնան արխիւների մէջ, արիւնով գրուած։ Մենք թէեւ այժմ շատ տեղերում փոքրամասնութիւն ենք, բայց իրաւունք ունենք ասելու, որ մեծամասնութիւն ենք։ Ես համաձայն եմ, որ Զէյթունի ապստամբութիւնը միայն մասնակի բնաւորութիւն կ'ունենար, բայց այլ բան է Սասունը, որը կուռում էր յանուն յեղափոխութեան։ որու յաղթութիւնը կարող էր Հայկական Դատի համար նշանակութիւն ունենալ։ Ես համաձայն չեմ, որ եւրոպական պետութիւնները անուշադիր են Թողնում մեր դատը։ հիւպատոսները իրենք շատ անգամ խաբւում են եւ նրանց զեկուցումները իրենց ներգործութիւնը չեն ունենար։ Դիզկասէն ասել էր, որ դժբախտաբար հայկական չարժումները շատ կարճ են տեւում։ Մի այլ վտանգ կայ, դա տաճիկ կառավարութեան հայթայթնդ քաղաքականութիւնն է, որի դիմաց մենք էլ պիտի քաղաքականութիւն անենք։ Մենք իբրեւ մի իլլեգալ [ոչ–օրինական, ընդյատակեայ, անպաշտօն] կառավարութիւն՝ պիտի ունենանք մեր քաղաքականութիւնը։ Ֆրանսիան եւ Անգլիան հետեւում են մեր չարժումներին, նրանք մեզ ընդունում են մի կարեւոր ազդակ արեւելեան հարցում։ Մենք պիտի չրջահայեաց լինինք մեր դրացիների եւ օտարների վերաբերմամբ։ Այս Ժողովը եւ ծրագիրը պիտի վճռեն մեր ճակատագիրը, ուստի մենք պիտի նաեւ առնենք մեր եւրոպացի բարեկամների կարծիքները եւ իմանանք քաղաքական չրջանների տրամադրութիւնները, մանաւանդ որ մենք այժմ ձեռք ենք բերել մի նպաստաւոր տրամադրութիւն դէպի մեր դատը։ Ապստամբական չարժմամբ մենք մեր դէմ ենք հանել Երկրում բոլոր տարրերը։ Բայց կարող էինք օգտուել եւ մեր թշնամու դէմ թշնամիներ յարուցանել, մենք այդ չենք արել Տաճկաստանում, որովհետեւ փողի պակասը խանգարել է մեզ։ Մենք պիտի մի մեծ ֆոնդ ունենանք. մենք թէեւ մեզ համար օրինակ ենք առել այլ ապստամբական չարժումներ, բայց ֆոնդ չենք ունեցել նրանց նման։ Ի՞նչ պէտք է անել, որ մեր ապստամբական չարժումը արդիւնաւէտ դարձնենք, մի տարածութեան վրայ, ինչպիսին է Վասպուրականը իւր չրջականերով, որ ունի մօտ 45000 քառակուսի կիլոմէթր մակերեսոյթ։ Նախ հարկաւոր է երկրում այլ թշնամիներ յարուցանել կառավարութեան դէմ. ունենալ խոշոր ֆոնդ, որից 200·000 ծախսել եւ դինել Տերսիմը կառավարութեան դէմ։ Այս Ընդհանուր Ժողովից յետոյ կազմել մի կոնգրէ [համաժողով, խորհրդաժողով] Տաճկաստանի բոլոր դժգոհ տարրերէն, որով կը ստեղծենք մեզ համար նպաստաւոր պայմաններ։

Նախագահը ընդհատում է ճառախօսին, որովհետեւ նշանակած 10 րոպէից նա դեռ 5 րոպէ էլ աւելի էր խօսել, խոստանալով նրան ձայն տալ երկրորդ անգամ։

Մալումեան.— Ռոստոմի յառաջաբանի մէջ կար մի կէտ, որի հետ ես համաձայն չեմ. նա ուզում է մեր ամբողջ անցեալ գործունէութեանը մի տեսակ արդարացում տալ, ասելով, որ ոչ թէ միայն եղածները պիտի լինէին, այլեւ այլ կերպ չէին էլ կարող լինել։ Այդպէս խօսելը դուցէ կարելի լինէր արդարացնել կուսակցական պրոպագանդի տեսակէտից, բայց Ընդհանուր Ժողովում մենք պիտի խոստովանենք, որ եղել են խոշոր սխալներ, որոնք չպէտք է լինէին։ Բայց որ մեր այն ժամանակուայ ընկերները իրենց անելիքը այլ կերպ չէին կարող հասկանալ, համաձայն իրենց ունեցած ծանօթութիւնների եւ փորձառութեան՝ դա այլ բան է։ Տեղի են ունեցել սխալներ, որոնցից այժմ մենք պիտի օգտուենք։ — Մի կէտ ճիշդ է, այն՝ որ Սասունի եւ Զէյթունի չարժումները երբեք չէին կարող ընդհանուր հայկական նշանակութիւն ունենալ։ Հակառակ այդ հանդամանքի, սկզբնական չրջանում մեր գործունէութիւնը պիտի անպատճառ կենտրոնանար Սասունում եւ Զէյթունում. որովհետեւ դրանց համար մեր գրականութեան մէջ եւ մեր համարեա բոլոր չրջաններում մի համայն էր ստեղծուել։ Ապստամբական մեր մեթոդների սխալը պէտք է համարել այսպիսի մեր ունեցած սխալ ծանօթութիւններին։ Օրինակ, եթէ հայերի թուի մասին ճիշդ տեղեկութիւններ ունենայինք, եթէ դեռ 15 տարի առաջ գիտակցական լինէր հայ տարրը, որ գտնուում էր 6 վիլայէթներում, ուր մի քանիսի մէջ ընդամէնը ազգաբնակութեան 24%ը, իսկ վանի չրջանում է որ 60–64% են կազմում, մենք կը հասկանայի՞նք, որ ընդհանուր Հայաստանի ապստամբութեան մասին խօսք չէր կարող լինել։ Ապստամբական ձեռնարկների այդ տեսչը, մանաւանդ, քաղաքական–տնտեսական ներկայ պայմաններում, պիտի համարել վերացական ծրագիր։ Զինման գործում պիտի կանգ առնել մի կէտի վրայ եւ ոչ թէ ծրագիրը տարածել ամբողջ Հայաստանի վրայ։

Բայց ինչո՞ւ պատրաստութեան, դինման չրջանի մէջ մոցուեց նաեւ էրզրումը, — քանի որ սա գտնուում է Կովկասի մօտիկ, քաղաքականապէս բաւական հասուն հայութիւն ունի, եւ յարմարութիւն՝ զինուելու եւ չարժուելու: Այստեղ Թրքական չարժումը բաւական խոչոր քայլեր է անում եւ հենց համերաչխութեան[?] համար պիտի էրզրումն ալ մոցնենք մեր դինման չըրջանի մէջ, ստեղծելով այնտեղ կազմակերպական մարմիններ: — Ուրեմն Ապաստամբական վայրի կենտրոնը պիտի լինի Վասպուրականը կցուած Բիթլիսի եւ էրզրումի վիլայէթների մի մի մասի հետ. իսկ այլ ապըստամբական ձեռնարկներով չզրաղուենք: Ընդհանուր ժողովը պիտի հրահանգէ չանել որեւէ ապստամբական ձեռնարկ, նախքան որոշ պատրաստութիւն ունենալը. սա բխում է մեր 15 տարուայ դառն փորձերից: Զինել կուեւելու ընդունակ ժողովրդի մինչեւ 50%ը, ապա միայն ձեռնարկել չարժման: Իմ առաջարկը ամփոփում եմ երեք գլխաւոր կէտերում: 1) Կանգ առնել միայն մի ոյանի [չրջանի] վրայ. 2) Որեւէ ապստամբական չարժում չլինի մինչեւ առաջիկայ Ընդհանուր ժողովը. 3) Պատասխանել զինել զէնք կրելու կարող ժողովրդի 50%ը, անմիջական ձեռնարկներ սկսելուց առաջ:

Ստեփանեան.— Լաւ կը լինէր, որ նոր ձեռնարկ անելուց առաջ, անցեալ սխալները լաւ պարզուէին: Մի ապստամբական յաջող ձեռնարկ կազմելու համար, հարկաւոր է իմանալ տաճիկների ներքին չարժումների բնոյթը, որպէսզի հասկանանք, թէ նրանցից ո՞րքան կարող ենք օգտուել, որ մեր դատը իւր ինքնուրոյնութիւնը չկորցնի: Ո՞րքան պիտի լինեն մեր յոյսերը դիւանագիտութեան [դիւանագիտութեան] վրայ: Որեւէ չարժում անելու համար, ես կարծում եմ, պիտի սպասել մինչեւ ռուս-տաճկական պատերազմը, որը ես համարում եմ մեզ համար ամենանպաստաւոր մոմենտը [պահը]. հարկաւոր է այս խնդիրները բոլորը ուսումնասիրել, եւ ապա միայն գործի ձեռնարկել: Եթէ մենք այժմ էլ սկսենք միայն Վասպուրականում կենտրոնացընել մեր ուժերը, ինչպէս առաջ Սասունում էինք անում, այժմ էլ թուրքը կը սկսի իր ուժերը կենտրոնացընել այնտեղ, ուր մենք ենք կենտրոնացնում, եւ մի օր ամէն բան կը խլի մեր ձեռքից: Սրա առաջն առնելու համար պիտի մի միջոց մտածել, որ մեր ամբարածը թուրքը չտանի:

Արամ.— Ես կարծում էի, որ մեր բոլոր անցեալ անյաջողութիւնները նկատի առնելով, Ընդհանուր ժողովը ոչ թէ պիտի նորից ապստամբական ծրագիր կազմէր, այլ մեզ մի բան ասէր, որ մեր գործելակերպը անցեալում աննպատակայարմար է եղել: Ներկայումս մենք ոչ թէ պիտի նոր ձեռնարկների մասին մըտածենք, այլ պիտի աչխատենք մի նպատակայարմար տակտիկա ընդունել, որից կը բխեն նոր ձեռնարկները: Հին մեթոդը չարունակելով մենք նոյն հին սխալները կ'անենք: Ռուստոմի առաջարկած ծրագրի իրագործելու ծանրութեան կենտրոնը տեղափոխում է արտասահման. նա խօսում է, այնպիսի խնդիրների մասին, որոնք կարող են խօսուել արտասահմանում: Այն ինչ ապստամբութեան կարելիութիւնը պիտի զատել երկրի տեսակէտից. բայց նա ներսում լինելիք նախապատրաստական ձեռնարկների մասին ոչինչ չէ ասում: Այդ կողմից շատ է կաղում զեկուցումը. ես ուզում եմ այդ կէտի վրայ կանգ առնել: — Ռուստոմը խօսում էր այն մասին, թէ պէտք է չարժումը փոխանակ մի գաւառակով սահմանափակելու, ընդհանուր դարձնել: Նա յիշում է ռազմական, տեխնիկական և քաղաքական նպատակներ, բայց որոնք երկրի հետ կապ չունեն: Մեր պակասութիւնը հենց այդ է եղել, որ ապըստամբութեան ֆունդամենտը [հիմքը, էականը, պատուանդանը] փոխանակ ներսից կազմելու, դուրս ենք տարել: Օրինակ, Սասունի չարժումների ժամանակ, Ընդհանուր ժողովի որոշման համաձայն պիտի նրանց օղնէին դրսից եկած խմբերով. բայց խմբեր սկսել են ուղարկել միայն այն ժամանակ, երբ արդէն Սասունը վաղուց ընկճուած էր: Մենք այնպէս չենք արել, որ Երկրի դործողութիւնների հրահանգը հենց Երկրից բխի. մենք միշտ ծանրութեան կենտրոնը տեղափոխել ենք արտասահման: Վասպուրականի մեր ընկերները առաջարկել են, որ Ընդհանուր ժողովը ոչ մի ձեռնարկ չնախագծի: Այլ պիտի ստեղծել Երկրում ուժեղ կազմակերպութիւն, ժողովուրդը զինել: Տաճկաստանում ներկայիս դաչնակցական դործունէութեան վրայ նայել լոկ իբրեւ ինքնապաչտպանութեան վրայ: Իսկ երբ Երկրի մէջ ստեղծուած կը լինի ուժեղ մարմին եւ կը հաւաքի կարեւոր տեղեկութիւնները, այն ժամանակ միայն առաջիկայ Ընդհանուր ժողովը կարող է ապըստամբութեան որեւէ ծրագիր մշակել:

Չելալեան.— Խօսել ապստամբութեան մասին, նըշանակում է խօսել այն մասին, թէ յեղափոխութիւնը կա՛մ դադարեցնել կամ չարունակել: Այնինչ ապստամբութիւնը մեր գլխաւոր գործն է, դրա մասին չէ, որ մենք պիտի խօսենք, այլ տակտիկի մասին. ո՞րտեղ եւ ի՞նչպէս անել ապստամբութիւնը: Միանում եմ այն կարծիքին, որ ապստամբավայրը պիտի լինի յարմարութիւն ունեցող վայր, ուր կայ հոծ հայութիւն եւ կապեր ունի արտասահմանի հետ: Ճիշդ է, որ վասպուրականը եւ Մուշ-Սասունը պիտի կենտրոն լինին. իսկ էրզրումը դրան չպիտի կցուած լինի: Մենք այնտեղի Թուրքերի հետ կարող ենք դաչնակցական [?] կապեր ունենալ եւ այդ չարժմանը որոշ ընթացք տալ. էրզրումում մենք պիտի միայն ինքնապաչտպանութեան գործով զբաղինք եւ նպատակ ենք Թուրք յեղափոխութեանը, եթէ միայն դա գոյութիւն ունի: Պէտք է միաժամանակ ընդունել նաեւ ցուցական գործունէութիւնը, կապուած ապստամբական գործողութիւնների հետ: Թէ ե՞րբ անել ապստամբութիւնը, մեր ընկերների մէջ եւս կարծիքների տարբերութիւն կայ. ոմանք ասում են, թէ առաջ պէտք է լաւ ուժ ստեղծել, իսկ ոմանք ասում են, թէ դրանից աւելի պիտի նչանակութիւն տալ յարմար մոմենտին: — Շատ ուժ ունենալը ի հարկէ լաւ բան է: Բայց Սասունի օրինակը մեզ ցոյց տուեց, որ թոյլ չեն տալիս պատրաստուելու: Ես առաջարկում եմ, անմիջապէս սկսել շատ ուժ պատրաստելը, մանաւանդ որ այժմ դրա համար պատրաստ հող ունենք, եւ յարմար մոմենտը ձեռքից բաց չթողնել: Սուլթանի մահը, մակեդոնական չարժումները, ռուս-Թրքական պատերազմը, սրանք յարմար մոմենտներ են: Տաճկաստանի հայութիւնը, նոյնիսկ ամենահոծ բազմութիւն եղած տեղում, չէ կարող քսան տարի եւս դիմանալ. ծանր հարկերը, գաղթը, ծննդաբերութեան դադարելը, այնպիսի բաներ են, որ սպառում են հայ ազգաբնակութիւնը երկրում. երկար չէ կարելի սպասել: Լուրջ կերպով պիտի այդ մասին խորհել:

Զարդարեան.— Ասում են, որ մեր այժմեան դրութիւնը այն է, ինչ որ մի կառավարութեանը, որ պատերազմի առաջ է կանգնած: Բայց մի կառավարութիւն իւր ձեռքի տակ ունի այն բոլոր պայմանները, որոնք նրան հարկաւոր են պատերազմի պատրաստուելու համար: Իսկ մենք այդ չունենք, եւ այդ է պատճառը, որ մեր ձեռնարկները վիժել են: Ուստի մենք պիտի աչքի առաջ ունենանք յաջողութեան եւ անյաջողութեան բոլոր պայմանները: Անյաջողութեան պարագաները աւելի զօրաւոր են մեզ համար: — Ի՞նչ երաչխաւորութիւն կայ, որ կառավարութիւնը գծուած չրջանը կամ մեր ուժը չէնչացնի հարստահարութեամբ եւ խուզարկութեամբ: Ինչպէս Սասունը, կառավարութիւնը կարող է նաեւ վասպուրականը վիժեցնել: Բայց մենք այդ մասին չպիտի խօսենք: Միեւնոյնն է, ժողովուրդը խաղաղ ժամանակ էլ նոյն հարստահարութիւնը ու վնասը պիտի կրէ ինչ որ ապստամբութեան ժամանակ: — Մենք պիտի ունենանք երկու ծրագիր, մէկը այն դէպքի համար, երբ կառավարութիւնը ուզում է ոչնչացընել մեր ուժը, չսպասելով, որ մենք բաւական ուժ հաւաքենք. այդ դէպքում ընկերները չպիտի հանդուրժեն եւ պիտի ապստամբեն: Դրանով մենք կը չահենք այն, որ փոխանակ մեր ուժերը վատնելու, որոշ հարուածտուած կը լինենք: Սրանք անյաջողութեան ազդակներ են: — Իսկ երբ մենք ապստամբելու վիճակում լինենք, ի՞նչ յաջողութեան ազդակներ կան: Դրանք երկու տեսակ են՝ արտաքին եւ ներքին: Արտաքին յաջողութեան ազդակներն են՝ եւրոպական դիւանագիտութեան նըպաստաւոր դիրքը եւ յարմար րոպէները. իսկ ներքի-

նը՝ Թուրք ներքին խռովութիւնները եւ Սուլթանի մահը: Համոզուած ենք, որ Սուլթանի մահով նոր Թուրքիայում. Թուրք չարժման մասին ես մեծ հաւատք չունեմ ապագայում. բայց պալատական դաւադրութիւնները մեծ դեր պիտի խաղան: Այդ ժամանակից մենք կարող ենք օգտուել: Գուլկարիայի պատերազմը Թուրքիայի հետ գրեթէ անխուսափելի է. դուցէ դա սկսուի Սուլթանի մահի հետ միաժամանակ: Մենք պիտի այդ մոմենտները աչքի առաջ ունենանք եւ մեր ծրագիրը դրանց հետ յարմարեցնենք: — Ասում են, որ եւրոպական դիւանագիտութիւնը չօչափելի արդիւնք չէ տուել: Բայց նա կը տար եթէ մենք ապստամբութիւն սրած լինէինք. մինչեւ այժմ մենք միայն ցոյցեր ենք արել եւ ոչ ապըստամբութիւն: Միայն տեւական ապստամբութեան դէպքում դիւանագիտութիւնը կը միջամտէ: — Ես առաջարկում եմ կազմել երկու ծրագիր. 1.) Պատահականութեան համար, եթէ կառավարութիւնը չուզենայ թոյլ տալ, որ մենք մեր պատրաստութիւնները վերջացընենք: 2.) Երբ մենք մեր ծրագրած քանակութեամբ կը կարողանանք ուժ կենտրոնացնել Երկրում:

Աճդրանիկ.— Շարունակ յիշում են, թէ անցեալում մեծ սխալներ ենք արել իբր թէ: Բայց պիտի նըկատի ունենալ, որ գնացած խմբերից 90% զէնք բաներ չեն իմացել: Խմբերը ճանապարհ են ընկել, տեղին անծանօթ, միայն վարդի յուսով. պատահել է, որ մինչեւ անգամ խմբապետը չէ իմացել զէնք գործածել: Եթէ այս սիստեմով պիտի փորձենք, Երկրի 50%ը զինելը երազ է: Միթէ եղած գործողութիւնները, որ այժմ սխալ ենք համարում, օգուտ չե՞ն ունեցել: Սասունը 1894ին՝ հրացանով է կռուել միայն, բայց այն ժամանակ նա աւելի արձագանգ տուեց, քան 904ին: 94ից անմիջապէս յետոյ մենք ենք մտել Սասուն, ապա եկել են եւ ուրիշները, կառավարութիւնը այդ նկատել է. 903ին մի ձիաւոր խումբ է եկել, որ նոյնպէս կառավարութիւնը իմացաւ: Մենք այն ժամանակ կարող էինք չարժումը սկսել, թէեւ մենք պատրաստութիւն չունէինք, երկու օր միայն կարող էինք դիմանալ: Բայց մենք սպասեցինք, որ յաջորդ տարին նոր ուժ կ'աւելանայ մեզ համար. եթէ յաջորդ տարին էլ յաջող անցնէր, մենք 904ի աչնանը պիտի անէինք: Այժմ ասում են՝ այդքան տարածութեան վրայ կազմակերպել ժողովուրդը. բայց կառավարութիւնը մեզ թոյլ կը տա՞յ այդ անելու. ես չեմ կարող վստահեցնել: Դա միայն խօսք չմնա՛յ: Մենք պիտի Զարդարեանի ասածի նման երկու ծրագիր ունենանք: Մեր անցեալ գործերը սխալ չէին, ով էլ որ լինէր այդպէս պիտի գործէր, այլ կերպ չէր կարող: Մենք եթէ երեք ամիս էլ կարողանանք դիմանալ, ոչ մէկ երաչխաւորութիւն չկայ թէ եւրոպացիք կը միջամտեն, քանի որ մենք նրանց քիթն անգամ

չենք արիւնել: Եթէ մենք ուզում ենք եւրոպացիների միջամտութիւնը առաջ բերել, պիտի երկրում, ամէն տեղ նրանց չհեռերին հարուածենք:

Զոփուրեան.— Ինչ որ ես ուզում էի ասել, արդէն միւս բնկերները ասացին. ես կ'ուզեմ միայն երկու հարց դնել ժողովի առաջ: 1.) Կարելի՞ է սպասել մի դրական հետեւանք ապստամբութիւնից, յիշեալ գաւառներում, այն պարագային, երբ տեղական միւս ժողովուրդները հայերի այդ ձեռնարկին թշնամաբար են վերաբերում, կամ տնուազն անտարբեր են. կամ ուրիշ խօսքով, հնարաւո՞ր է յուսալ, որ վասպուրականը իւր չրջակայքով ձեռք բերէ ազատութիւն, երբ չրջապատող թուրք, քիւրտ եւ միւս ժողովուրդները պիտի մնան նախկին բռնակալ ռեժիմի տակ: 2.) Հարկաւոր չէ՞ հայերի ազատագրման գործը կապել տաճկահպատակ դրացի ժողովուրդների չարժման հետ եւ ուրեմն մեր ապստամբական նախապատրաստութիւնների հետ միաժամանակ աչքատել նոյն չարժումը եւ նոյն թըշնամութիւնը առաջ բերել դէպի կառավարութիւնը ե'ւ այդ ժողովուրդների մէջ:

Իշխան.— Հարցը այդ ձեւով դնելով, մենք մեծ դժուարութիւնների ենք հանդիպում: Աստ ենք ապրատամրութիւն կազմակերպենք. բայց ապստամբութիւնը պիտի չափել միջավայրի եւ տիրող քաղաքական պայմանների վրայ: Յաջողութիւն ունենալու համար հարկաւոր է ամենից առաջ ծանօթանալ, թէ ի՞նչ դրութիւն է ներկայացնում միջավայրը, որքա՞ն նա նպաստաւոր է մի այդպիսի բանի համար: — Եթէ մենք կովկասում դիւրութիւններ ունենք զէնք ձեռք բերելու եւ տեղափոխելու, դա չի նշանակում, որ դա կ'ազդէ նաեւ Երկրի վրայ: Նկարագրուած վայրը ի հարկէ ամենայարմարն է ապստամբութեան համար: Բայց եթէ բոլոր այդ տեղերն էլ վասպուրականով էք չափում, սխալւում էք: Վասպուրականը յեղափոխական տեսակէտով առաջ է դնացել, այդ պատճառով էլ նա երկար ապագայ չունի: Եւ Վասպուրականի հետ չէ կարելի կապել յեղափոխական տեսակէտից անպատրաստ տեղեր, ինչպէս էրզրումը, Մուշը եւն: Ռոստոմի վերցրած երեք չրջանները իրար չեն համապատասխանում. Վասպուրականը հասուն է. Մուշը մնտեսապէս քայքայուած, իսկ էրզրումը բոլորովին անպատրաստ է: Դեռ ուզում ենք այդ ամբողջ չրջանի ժողովրդի 50%ը զինենք: Բայց պէտք է նկատի ունենանք, որ Տաճկաստանում, երբ մի մասը յեղափոխականապէս հասունացած է, նա իւր հետ բերում է եւ իւր վախճանը: Ես կրկնում եմ Արամի առաջարկը եւ ասում եմ որ չորս ենք ապստամբութեան ձեռնարկ, մինչեւ որ դրա հիմքերին մանրամասն չծանօթանանք:

Տաճատ.— Իշխանը լաւ սկսեց, բայց չխօսեց բոլոր պայմանների մասին: Աստունը այժմ գիւղացիութիւն չունի, որովհետեւ Մշոյ գիւղացիութիւնը գոյութիւն չունի: Մշոյ դաշտեցին սոված է, ուրեմն Աստունը քանդուած է: Վանեցին էլ է սոված, որովհետեւ Վանի գիւղացիութիւնը քարուքանդ է եղած: Գաղթականութիւնը ընդհանուր է. բացի դրսի գաղթականութիւնից կայ նաեւ ներսի գաղթականութիւն. աչխատաւոր գիւղացիութեան հարուստ տարրերը հեռանում են գիւղերից եւ գնում դէպի քաղաքները: Արդիւնաւէտ գիւղերը դրաւում են օտարները, անասնապահութեան յարմար մասն էլ վերցրել են քրտերը: Ուրեմն երկրագործութիւն եւ անասնապահութիւն կորցրել ենք, առեւտուրն էլ մեր ձեռքից խլում են: Քիւրտերը հետզհետէ կենտրոնանում են սահմանների վրայ՝ հողով եւ կրողութեամբ: Մեղ համար կարեւոր տեղերում կառավարութիւնը աւելացնում է իւր զինուորական ուժը, Աստունում արդէն զօրանոցներ են չինուած, իսկ Վանում ուր 10 տարի առաջ 500 զինուոր կար, այժմ ամէն մի փողոցի դլխին զինուորական պահականոցներ կան: Թուրք կառավարութիւնը աչխատում է իւր ուժերը կենտրոնացնել Փոքր Ասիայում [?]: Թրքական յեղափոխական չարժումները մնասակար են հայութեան իրականութեան տեսակէտից. Թուրք յեղափոխականները, իրենց հրատարակութիւնների մէջ պարզապէս հակառակ են մեր չարժման: Արտաքին եւ ներքին հանգամանքները կարծես այնպէս են, որ քայքայեն ժողովուրդը: Աստունցին առաջուայ պէս գոյութիւն չունի. 600 ռազմիկ երիտասարդներ դուրս են գալիս երկրից. մնում են այնպիսի տարրերը, որոնք անպէտք են ապստամբութեան համար: Մնունդը կրճատւում է. իսկ երիտասարդութիւնը ամուսնանում է մեծ մասամբ դրսում: — Երկրում հայութեան գոյութիւնը օրաւուր վտանգւում է. մենք պէտք է մի բան անենք, եթէ ոչ հայութեան տականքն է մնում ներսում, պէտքական մասը կա՛մ հեռանում է, կամ փչանում է տեղն ու տեղը: Ես համաձայն եմ, որ ապստամբութեան համար պիտի սպասել ամենայարմար ժամանակի: Մենք պիտի ծրագրենք որչափ կարելի է չուտ փրկել ժողովուրդը ապստամբութեան միջոցով: Մենք պիտի մտածենք նաեւ, թէ ի՛նչ միջոցի ձեռնարկենք, եթէ վիժէ մեր ծրագիրը: Վանի կուսակալը այժմեանից արդէն միջոցներ է ձեռնարկում, որ զսպի յեղափոխականներին: Մենք պիտի նաեւ միջոցներ մտածենք, որ մեր ամբարած զէնքը Երկրում չկորչի, կամ կառավարութեան ձեռքը չանցնի:

Նիստը փակելուց առաջ՝

Վռամեան առաջարկում է, որ ընկերները պատրաստեն զեկուցումներ նոյն թնդրի մասին, եթէ կարելի է՝ տրամագծօրէն հակառակ առաջարկուած նախագծին:

Նիստը փակւում է ժամը 1ին վիճաբանութիւնների չարունակութիւնը ձգելով յաջորդ նիստին:

43ՐԴ ՆԻՍՏ (21 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Վռամեան:

Ներկայ են 19 պատգամաւոր:

Բացակայ են՝ Վահագն, Իսահակեան, Մաշուր, Տաճատ, Մանուկ, Ստեփանեան, Զարդարեան, Զաբեան:

(Շարունակութիւն նախորդ զեկուցման ճիւնութեան)

Ռոստոմ (պատասխանում է նախընթաց նիստի իր դեկուցման առթիւ եղած ընդդիմախօսութիւններին).— Ես չեմ արդարացնում, ինչպէս ընկ. Մալումեանն է կարծում, մեր անցեալը. բայց ես կ'ասեմ դարձեալ, որ այլ կերպ գործել մենք անկարող էինք: Ինչ տեսակի ծրագրեր էլ որ կազմած լինէինք, մեծ խնամքով ու խելացութեամբ, միեւնոյն արդիւնքին պիտի հասնէինք: — Ասացի, որ Վասպուրականը իւր չրջակայքով, կենտրոն պէտք է դարձնել մեր գործունէութեան համար. այս միտքը նոր չէ, նոր է լինելու միայն նրա իրագործումը: Նոր ենք ուզում իրագործել այդ միտքը, որովհետեւ ներկայումս աւելի նպաստաւոր պայմաններ ունենք մեր տրամադրութեան տակ: Ես կանգ եմ առնում Վանի–Բազէշի վրայ, եւ այն հանգամանքի նկատի առնելով, որ այդ կողմերում կառավարութիւնը ռազմական քիչ ուժեր ունի: Մինչդեռ էրզրումը՝ ընդհակառակը. վերջինս զօրեղ բազա է [զին. խրիսխ] եւ այդ տեղ կենտրոնացած են մեծ քանակութեամբ զօրքեր. ապա հեռու չէ նաեւ Երզնկան, որտեղից անյապաղ օգնութիւն կը հասցուի էրզրումին: Զինել հայ ազգաբնակութեան 50%ը, ինչպէս ցանկանում է Մալումեանը, անկարելի է:

Մալումեան.— Ինձ սխալ էք հասկացել. ես չեմ ասում, թէ բովանդակ ազգաբնակութեան 50%ը զինուի, այլ զէնք բռնելու ընդունակների 50%ը:

Ռոստոմ.— Ապստամբութեան մասին խօսելով, մենք ուշադրութիւն պէտք է դարձնենք ոչ այնքան զէնքի քանակի վրայ, որքան մոմենտի [պահ] վրայ. այս է եղել զեկուցման հիմնական միտքը: Կարելի է քիչ զէնք ունենալ, բայց յարմար մոմենտին ասպարէզ եւ նելով՝ աւելի յաջողութիւն գտնել քան թէ անյարմար մոմենտին, թէկուզ խոշոր ուժերով: Ես ասում եմ, եթէ Սասունն ապստամբէր 1903ին եւ ոչ թէ մի տարի յետոյ, գուցէ որեւէ արիւնք ստացուէր, քանի որ այդ թուականը յարմար մոմենտն էր ներկայացնում: Սըխալւում է Անդրանիկը ասելով, թէ 1903ին չէ ուզեցել չարժուել այն պատճառով միայն, որ արճճի պակասութիւն էր ունեցել. սպասել է, որ արճճի ու մարդկանց պակասը լրացուի եւ ապա միայն կռուի դուրս գայ. բայց չէ՞ որ միեւնոյն ժամանակ Խ'ւ կառավարութիւնն է աչխատելիս եղել՝ նորանոր ուժեր քաչելու դէպի Սասուն: Կրկնում եմ, մեզ համար նշանակութիւն ունի մոմենտը: Եթէ մենք զէնքի քանակը աւելցնելու հոգսով միայն տարուենք՝ յաջողութիւն քիչ կ'ունենանք: Ապառաժի չրջանում, հայ–թրքական ընդհարումների ժամանակ, մենք սկզբում քիչ զէնք ունէինք, բայց եւ այնպէս չարժուեցինք եւ ինքներս առաջինը նախայարձակ եղանք՝ մոմենտի պահանջի հետեւելով: Մեր յարձակումով, մենք չփոթեցրինք թուրքերին եւ թոյլ չտուինք, որ նրանք ոյժ կենտրոնացընեն: Ես հակառակ եմ որեւէ ապստամբական ձեռնարկի՝ ներկայ նորմալ պայմաններում. ո'չ մի ձեռնարկ, ոչ միայն մինչեւ առաջիկայ Ընդհանուր Ժողովը, այլ թէկուզ տասն այդպիսի ժողովներ: Ընդհանուր Ժողովը մեղ համար սահման չէ կարող լինել: Ի հարկէ, եթէ մինչեւ Ընդհանուր Ժողովը յարմար մոմենտ ներկայանայ — հարկաւոր է անմիջապէս գործի անցնել, առանց սպասելու, թէ ի՞նչ կ'որոչէ Ժողովը: Ես դառնում եմ հիմնական մտքին, որ Վասպուրականը չրջակայ մի քանի դաւառներով պէտք է կենտրոնավայր հանդիսանայ մեզ համար, որովհետեւ Վասպուրականը նպաստաւոր պայմաններ ունի գործի յաջողութեան տեսակէտից: Այդ դաւառներն, ի հարկէ, տարբեր են միմեանցից, իրենց տնտեսական կացութեամբ եւն., եւ նրանց մի ընդհանուր յայտարարի բերել, մենք չենք կարող. բայց եւ բոլորին կարելի է մի ձեռնարկի չուրջը համախմբել: Ես հակառակ եմ Զարդարեանի յայտնած այն մտքին, որ պէտք է չարժուել, եթէ կառավարութիւնը դրգռէ մեզ այդ ուղղութեամբ. մենք ոչ մի դէպքում զոհ չպիտի գնանք կառավարական պրովոկացիային [դրդռութիւններուն]: Կառավարութիւնը կ'աչխատի դրդռել մեզ, որպէսզի մենք ստիպուած հրապարակ հանենք մեր ուժերը: Բայց համաձայն եմ նրա երկրորդ մտքի հետ, թէ հարկաւոր է ձեռքի տակ ունենալ երկու ծրագիրներ, մէկը խաղաղ ժամանակի համար, միւսը՝ անակնկալների: Ես աւելին կ'ասեմ, ոչ թէ երկու այլ հարկաւոր է ունենալ մի քանի այդպիսի ծրագիրներ, որոնցից իւրաքանչիւրը կը գործադրենք՝ փոխուած հանգամանքներին համեմատ: — Անդրանիկն ուզում է հարուածել ուղղակի եւրոպական չահերը. այո', բայց ես կարծում եմ, որ այդ չահերը երկու տեսակի են բաժանւում — «եւրոպացիների» չահեր եւ «եւրոպական» չահեր: Այս մասին ես կը խօսեմ այլ անգամ: — Իշխանը յոյնեաս հայերեն յայտնեց, թէ Վասպուրական ապագայ չունի: Անկասկած, եթէ մենք միջոցներ ձեռք չառնենք՝ մանաւանդ չարժումները յետ կանգնեցնելու, ժողովուրդը կը քայքայուի:

Նոյն «ապստամբական ձեռնարկների» հարցի մասին զեկուցում է անում ընկ. Թոփչեան: Զեկուցանողը

համառօտակի յիշեցնում է սերպերի, յոյների, բուլղարների ապստամբական օրինակները, հայ ժողովրդի տրամադրութիւնն ու վարդապոյն յոյսերը, ապա շեշտում է երկրի տնտեսական, սոցիալական [ընկերային], քաղաքական պայմանների փոփոխուիլը եւ վերջը կէտ առ կէտ քննում է ապստամբութեան հակադիր ուժերը — (կառավարութիւնը, զօրքը, մահմեդական մասսան)։ Մեր ուժերը՝ վիճակագրական տեղեկութիւններ հայերի թուի մասին, մեր յեղափոխական ուժերի մեծանալը, լաւ ռազմական որակի հասնելը։ Մեր դաշնակիցները՝ երկրի ներսում նպաստաւոր պայմաններ, դժգոհ տարրեր եւն. եւրոպական պետութիւններ, դիպլոմատիա եւ նրա ղեկավար սկզբունքը։ Զեկուցանողը այդ բոլորի վերլուծումից դուրս է բերում այն եզրակացութիւնը, թէ ներկայ պայմաններում, մինչեւ հետեւեալ Ընդհանուր Ժողովը, աննպատակայարմար, կորստաբեր է ապստամբական ձեռնարկներ ծրագրելը։ Մեր անմիջական գործը պիտի լինի· 1·) Լայն պրոպագանդա ոչ միայն զուտ ազգային, այլեւ դասակարգային ուղիով, որպէսզի հայ աշխատաւոր մասսան գիտակից, որ իր դժբախտութեան պատճառը Թուրք մասսան չէ, որը կոյր գործիք է չհագործող ու բռնակալ տարրերի ձեռքին, որ մենք պիտի ջանանք այդ մասսայի գիտակցութեան արթնանալուն նպաստել։ 2·) Լայն մասսայական կազմակերպումն հայ յեղափոխական տարրերի։ 3·) Ռազմական լայն պատրաստութիւններ։ 4·) Մերձեցումն մահմեդական աշխատաւոր ու յեղափոխական տարրերի հետ։ Ահա այդ լայն նախապատրաստութիւններն են, որ ժողովուրդի պատրաստակամ տրամադրութեան եւ չբնապատող այլ նըպաստաւոր պայմանների հետ միացած, պիտի առաջացնեն իսկական ապստամբութիւնը, որ եւ կարող է փրկարար լինել։ Իսկ առանց այդ բոլորի հենց այժմ ապստամբական ձեռնարկների մասին ծրագրեր կազմել՝ կը նշանակէ ապստամբութեան մի արիւնոտ ծաղրանկար ստեղծել։ Պէտք է մեր ժողովը զգուշանայ դրանից։ — Զեկուցումից յետոյ տեղի են ունենում վիճաբանութիւններ։

Միհրսահակ։— Ընկ. Թոփչեան յուսախաբուած թոնով սկսեց իր զեկուցումը, թէ մեր ունեցած ապստամբական ձեռնարկներն ապարդիւն են անցել. բայց վերջը եկաւ դարձեալ կանգ առաւ ապստամբութեան վրայ. հասկանալի է, քանի որ խնդիրը բարդ է։ Բայց նորէն ապստամբութեան դառնալը չպէտք է կարողանայ՝ զեկուցման սկզբի միտքն արդարացնել։ Մենք ունենք մեր ծրագիրը, որի հիման վրայ մենք գործելու ենք։ — Ես կարծում եմ, որ մեր անցեալ ամբողջ գործունէութեան վրայ մեղադրանքներ բարդելը՝ սխալ է։ Սխալ չէ եղել մեր ձգտումը՝ եւրոպայի միջամտութիւն առաջ բերելու. այսօր եւս մենք պէտք է չարունակենք այդ նոյն տակտիկան, որովհետեւ՝ նախ մեր հարցը միջազգային հարց է, եւ երկրորդ, եւրոպան բարեացակամ է դէպի մեզ։ Նա երբեք չէ ուզել մեր արիւնը չհագործել, ինչպէս նոր չեչտեցին այստեղ։ այս բացատական հայեցակէտը՝ կովկասից է գալիս։ Բուլղարիան, Կրետէն, Լիբանանը՝ սրանք բոլորն ազատուել են եւրոպայի օգնութեամբ։ Իսկ եթէ մենք եւս դեռ չենք ազատուել, պատճառը Թերեւս մեր՝ տարբեր պայմանների մէջ գտնուելն է։ Եւրոպական պետութիւնները բարեկամ են եղել մեզ, եթէ ոչ Լոբանովը չէր չտապեցնի Սուլթանին՝ Թէ «կոտորի՛ր հայերին, քանի լաւ ժամանակն է»։ Մենք դժգոհ ենք եւրոպայից, բայց ե՞րբ ենք մի ազդու ժեստ արել, մի ուժգին չարժում առաջացրել, որպէսզի եւրոպան ուշադրութիւն դարձնէր մեզ վրայ։ Ոչինչ չենք արել։ Մենք խոչոր՝ տեւող կուիներ։ Եւրոպան այն ժամանակ կ'օգնէ մեզ։ Թուիչեանի առաջ բերած վիճակագրական տեղեկութիւնների ընդունում եմ, Թէեւ դրա հաղիւ Թէ քսորդովին ճիշդ լինին եւ այս հանգամանքը, որ ճիշդ Թուեր պակասում են հայ ազգաբնակութեան քանակի վերաբերմամբ, մեզ համար մի դժբախտ բարեբախտութիւն է [?], որովհետեւ չատ հայասէր եւրոպացիներ մի տեսակ խորչում են մեր ջչութեան երեւոյթի հանդէպ, կասկածելով՝ արդեօք կարո՞ղ է մի ինքնուրոյն հայկական հարց լինել։ Բայց խնդիրը ընդհանուր ազգաբնակութեան (տաճիկ, քիւրտ, եւն.) փոքր տոկոսը կազմելու մէջը չէ։ մենք մեր սեփական ազգային հարցն ունենք։ Եւ այս տեսակէտից, մենք չենք կարող ապասել, մինչեւ որ ընդհանուր տաճկական չարժում ստեղծուի։

Շահխաթ-ունեան։— Հայ ազգաբնակութեան Թուական մեծութիւնը չպէտք է որոշել՝ վիլայէթների պաշտօնական բաժանումների հիման վրայ, ինչպէս անում է Թուիչեան։ Ճետոյ սխալւում է Թուիչեանը, կարծելով Թէ՝ յեղափոխութիւն ասելով մենք պէտք է հասկանանք յաղթական կուիւ կառավարչական զօրքերի դէմ։ Ճեղափոխութիւնը կազմակերպուած բանակ չէ երբեք, որպէսզի միջոց ունենայ կառավարութեան զինուորական զօրութիւնը հարուածելու։ Այլ նա աչխատում է քայքայել այդ կառավարութիւնը սիստեմատիկաբար։ — Դանք այն հարցին Թէ ե՞րբեօք Դաշնակցութիւնը Թուրքիայում պէտք է ունենայ մի առանձին Հայկական Դատ, Թէ՞ հայկական հարցը հարկաւոր է լուծել տաճկական ընդհանուր չարժման մէջ, ինչպէս այդ արուել է Կովկասում, ուր հայկական չարժումը մի մասն է կազմում ընդհանուր ռուսական յեղափոխութեան։ Դաշնակցութիւնը Տաճկաստանում՝ հայկական ինքնուրոյն չարժում ստեղծելով, ունեցել է այն որոշ հայեցակէտը, Թէ Թուրքիան պէտք է տարրալուծուի. իսկ մենք՝ որ պէտք է տարրալուծուի, այլեւս խօսք չէ կարող լինել նրա վերականգնման մասին։ յոյս դնել Թրքական յեղափոխութեան վրայ, դժուար է, որովհետեւ նախ ներկայ չարժումները Թոյլ են եւ ապա դլխաւորը իմ կարծիքով՝ այն է, որ եւրոպան արդելք կը հանդիսանայ Թուրքիայի վերածնութեանը։ Թուրքիայի գալիք տարրալուծման տեսակէտից, Դաշնակցութիւնը միանգամայն հիմք է ունեցել՝ դնելով Հայկական Դատի խնդիրը եւ այսօր այստեղ պէտք է կանգնենք այդ տեսակէտի վրայ. որովհետեւ առանձին յոյսեր տածել Թուրք չարժման հանդէպ — դեռ չենք կարող եւ երկար ժամանակ էլ չենք կարողանայ. եթէ լինի էլ Թրքական չարժում՝ չի լինի յամենայն դէպս Թուրքիայի վերականգնում։

Անդրանիկ։— Առաջին Թէ բուլղար կառավարութիւնը ուղում է մեզ գործիք դարձնել՝ բուլղար-տաճկական կռիւների դէպքում։ Ի հարկէ Բուլղարիան չէ կարող յատկապէս մեր դատի համար Թշնամանալ Թուրքիայի հետ։ Նա իւր սեփական չահերն է փընտռում։ Բայց մենք էլ ունենք մեր չահերը, որոնք սակայն, չեն վնասուի այն պատճառով, որ Բուլղարիան հայկական հարցով չէ զբաղուելու։ — Այստեղ ցանկութիւն է յայտնում, որ մենք աչխատենք [գիտակցութեան ?] բերել Թուրքերին։ Դեղեցի՛կ, բայց մենք դեռ չենք կարողացել մեր իսկ հայերի գիտակցութիւնը զարթեցնել, — կարող կը լինե՞նք արդեօք, Թուրքերի մէջ յաջողութիւն ունենալ։ Ձենք կարող զուր է կարծում Թուիչեանը, Թէ Թուրքերը կը միանան մեզ՝ կառավարութեան դէմ ընդհանուր ուժերով կռուելու համար։ զուր է, որովհետեւ ինքը Թուիչեանն է ասում, Թէ Թուրքի մէջ ատելութիւնը դէպի քրիստոնեաները՝ դեռ զօրեղ է եւ կարող է ամէն րոպէ պայթել։ Նոյնը եւ քրտերի վերաբերմամբ։ ի հարկէ, լաւ է որ քրտերը մեզ հետ գործեն։ բայց այդ չեն անի։ Մի խօսքով, մենք պէտք է մեր նախկին ճանապարհը չարունակենք, յետ դառնալու տեղ չունենք։

Սեպուհ (կարդում է 1892ի ծրագրից մի կտոր ապստամբութեան մասին)։— 17 տարուայ պատմութիւն ունենք մեր յետեւում, որի արդիւնքն են այսօր սակայն՝ սուլը, դիակները, կրօնափոխութիւնը··· ի՞նչ է սրա պատճառը։ Որովհետեւ մենք չենք ունեցել եւ ո՛չ մի ապստամբութիւն այնքան խոշոր, որպէսզի գրաւէինք եւրոպայի ուշադրութիւնը։ Ես չեմ հաւատում եւրոպայի մարդասիրութեանը. բայց գիտեմ, որ եթէ մենք կորուկ քայլեր անենք, նոյն այդ եւրոպան ստիպուած միջամտելու է։ Երկու-երեք հրացան պայթեցնելը՝ ապստամբութիւն չէ. հաղիւ մեր այս կամ այն չարժման մասին լուր է հասնում եւրոպա՝ եւ ահա արդէն կուիը վերջացած է լինում։ Փոխենք մեր դիրքը։ Մինչեւ այժմ աղերսել ենք եւրոպային որպէսզի մեզ օգնէ, այսուհետեւ ուղղակի պահանջներ դնենք։ — Թուրքերի հետ միանալ՝ անկարելի է։ այո՛, նրանց հետ գործենք ձեռք ձեռքի տուած, բայց միայն՝ մենք մեր սեփական դատը պէտք է ունենանք անպայման։

Զելալեան։— Սուլթանը փոխել է իւր քաղաքականութիւնը, եթէ առաջ բացարձակ կոտորածներ էր անում, այսօր ընդհակառակը, ոյժ է տալիս ճերմակ տեռորին, որը եւ գործ է դնում անընդհատ, օր ու գիչեր։ Դրութիւնը յուսահատական է։ զէնքը վար չպէտք է դնել։

Խսահակեան, անդրադառնալով Շահխաթունեանի այն մտքին՝ Թէ Թուրքիայի տարրալուծման տեսակէտից հարկաւոր է վարել հայկական առանձին դատ, ասում է։— Սխալւում է Շահխաթունեանը, Թէ եւրոպան արդելք է հանդիսանալու Թուրքիայի վերածնմանը։ եթէ եւրոպան իսկապէս դէմ լինէր այդ վերածընմանը, երբեք չէր համաձայնի, որ Բուլղարիան ազատուի։ չէր ուզեր նաեւ որ Ֆարսկաստանը վերանորոգուէր ներքուստ։ Շահխաթունեանը առարկեց Թուիչեանին, որ սա չփոթել է «յեղափոխութիւն» եւ «ապստամբութիւն» հասկացողութիւնները, ինքն էլ, սակայն նոյպիսի չփոթման մէջ ընկաւ. այո՛ յեղափոխութիւնը քայքայում է կառավարութեան չէնքը։ բայց իւրաքանչիւր յեղափոխութիւն պէտք է լինի միաժամանակ եւ ապստամբութիւն։— առանց զօրքի դէմ կռիւ մղելու եւ յաղթանակը տանելու՝ ոչ մի յեղափոխութիւն չէ հասնում իւր նպատակին։ Ես համաձայն եմ Թուիչեանի առաջի հետ, որ այսուհետեւ ձեռնարկուելիք մեր ապստամբական չարժումները պէտք է տեղի ունենան որոշ պայմաններում. եւ որ նախքան ապստամբութիւը՝ հարկաւոր է նախապատրաստուել։

Վարդան։— Եւրոպան մեզ խոստումներ չատ է արել։ Ճիշտ եմ ի՞նչպէս Վանի անգլիական հիւպատոսը կոտորածից առաջ մեզ խրախուսանքներ էր տալիս, Թէ պէտք է աւելի մեծ ուժերով դուրս գալ, որպէսզի աւելի չուտ գրաւենք եւրոպայի ուշադրութիւնը։ Նոյն այդ հիւպատոսն էր սակայն, որ կռուի ժամանակ, գըլխին տաճկական Ֆէս դրած, կարգադրութիւններ էր անում զօրքերին՝ Քրդանօթները մեր չինութեան դէմ ուղղելու։ Մեր ուժերով ազատութիւն ձեռք բերել չենք կարող, ինչպէս մինչեւ այժմ չենք կարողացել։ Առաջ մեծ վստահութիւն ունէինք մեր ուժերի վրայ, հաւատացած լինելով, որ ժողովուրդը պատրաստ է կռուի։ Ժողովուրդի տրամադրութիւնը չատ վարդագոյն կերպով էինք նկարագրում։ Ինքնախաբէութիւն էր··· Ի հարկէ, գիտակցաբար չենք խաբել Թէ՛ մեզ եւ Թէ ուրիշներին. այդտեղ մեր համոզմունքն է խօսել։ Այժմ մենք մեր սխալները չպէտք է Թագցնենք, պէտք է բաց անենք մեր անցեալի ու ներկայի բոլոր վէրքերը այս Ընդհանուր Ժողովի առաջ։ Նախ Թողնենք մեր այն միամիտ յոյսերը, Թէ քանի որ Լիբանանը, Կրետէն եւն. ազատուեցան, մենք եւս կարող ենք ազատութիւն ձեռք բերել։ Չպէտք է մոռանալ, որ Լիբանանը եւ միւնեթրը բոլորովին այլ պայմաններում են գտնուել քան Թէ մենք։ Ապա մենք ունենանք, Թէ ո՞ր ատրճանի մեր ժո-

ղովուրդը դիտակից է եղել անցեալում եւ դիտակից է այսօր. այս հանգամանքը մեծ նշանակութիւն ունի մեր ամբողջ գործի համար: Ժողովուրդը դժբախտաբար չունի յեղափոխական դիտակցութիւնը եւ մենք պէտք է ջանանք, ամենից առաջ այդ դիտակցութիւնը ստեղծել. իսկ դրա համար ժողովուրդին հարկաւոր է խաղաղ կեանք, որն աւելի տանելի է քան կռիւները: Գործները լաւ բան են, ի հարկէ, բայց միայն՝ երբ յայտ են լինում: — Թրքական շարժումների վրայ ես մի առանձին յոյս չեմ ուզում դնել. ես նոյնիսկ երկիւղ եմ կրում, որ Թուրք յեղափոխականների հետ գործելը, մեզ կը վնասէ, երբ Թուրքիայում էլ ոչխակցիա [հակազդեցութիւն, հակայեղափոխութիւն] տիրապետէ: Ռէակցիան յաղթանակեց Ռուսաստանում, կը յաղթանակէ Թերեւս եւ Տաճկաստանում: Միայն զգալի աջակցութիւն ցոյց տանք Թուրքերին, բայց բացարձակորէն չմխանանք նրանց հետ: Մենք ընդհանրապէս, աւելի պահպանողական դիրք պէտք է բռնենք, նոյնիսկ բուլղարա-տաճկական պատերազմի դէպքում, որն իբր թէ մեզ նպաստաւոր է լինելու. մենք կուռի չպէտք է դուրս գանք, որովհետեւ կառավարութիւնը, որքան էլ զբաղուած լինի Բուլղարիայով, օյժ կ'ունենայ մեր ապստամբութիւնը հեշտութեամբ խեղդելու: Մեր կուռը գոյութեան կռիւ է: Յեղափոխութիւնը լաւ բան է, բայց արդի՞նքը: Մենք շատ էինք ուզում ղէնք բարձրացնել Վարանդայի տխրահռչակ հերոսների դէմ. բայց տխրացած էինք լուել: Մեզ նախատեցին, հակայեղափոխական կոչեցին... ուրիշ կերպ վարուել, սակայն, անկարող էինք. եթէ մի կողակի անգամ դիպչէինք, ամբողջ Վարանդան տակնուվրայ կ'անէին: — Ես չեմ ուզում, ի հարկէ, ասել, որ ամէն ինչ ճակատագրի տնօրինութեանը պէտք է թողնել եւ գործը այդպէսով մեռցնել. ո՛չ, միայն թէ այսուհետեւ հարկաւոր է աւելի խաղաղ ճանապարհով չարունակել մեր ընթացքը: Թող կառավարութեան լուռութիւնը, օրինակ վասպուրականում, մեզ չթեւաւորէ, իբր նա բոլորովին զաղափար չունի մեր գործունէութեան մասին. լինենք աւելի զգոյշ եւ չասրուենք ապստամբութեան երազներով: Այն վայրերում, ուր ժողովուրդը անդիտակից է, նախքան ապստամբութիւնը, հարկաւոր է կուլտուրական աշխատանք՝ ժողովրդին գիտակցութեան բերելու համար. որքան աւելի գիտակից լինի ժողովուրդը, այնքան աւելի կը հասկանայ նա յեղափոխութեան նշանակութիւնը: Գիտակից ժողովուրդը միայն զնահատում է զէնքը:

Զարդարեան.— Ես հաւատացած եմ, որ Թուրքիան անկարող է վերածնուել. այս տեսակէտով մենք պէտք է ուրոյն չարժում ունենանք: Բայց հարկաւոր է նախապատրաստուել. ժամանակ նշանակել, թէ այս ինչ օրը ապստամբենք՝ անկարելի է, մենք պէտք է աչքի առաջ ունենանք, ինչպէս Ռուսաստան ասաց, յարմար մոմենտը: Իսկ եթէ կառավարութիւնը մեզ ուղղակի ստիպէ, որ մենք հրապարակ ելնենք, պէտք է ապստամբուել:

Նիստը փակւում է, վիճաբանութիւնների չարունակութիւնը թողնելով յաջորդ նիստին:

ԿԱՐԳ ՆԻՍՏ (21 Մարտ, երեկոյ)

Նախագահում է՝ Վռամեան:

Ներկայ են 22 պատգամաւոր:

Բացակայ են՝ Ռոստոմ, Մանուկ, Գուսան, Մաֆօ, Վարդան:

Ժողովի նիւթն է՝ «Ապստամբական շարժումների մասին»:

Եղած քննադատութիւններին պատասխանում է՝

Թոփչեան.— Ընդդիմախօսները բոլորը համաձայն, իրենց ասածը ուղղում էին այնպիսի բաների դէմ, որ ես չեմ ասել: Ասելիս, ոմանք իրար էին խառնում ծրագիրն ու տակտիկան եւ ասում էին թէ ինչ որ Դաշնակցութեան ծրագրի մէջ կայ մենք չենք կարող փոխել: Ոչ ոք չի էլ ուզում փոխել, այլ միայն խօսում ենք, թէ ի՞նչպէս աւելի նպատակայարմար կերպով իրագործենք այն, ինչ որ ծրագրով որոշուած է: Մինասեանն ասում է, թէ Տաճկահայաստանում կան զանազան ազգութիւններ, որոնք ունեն իրենց ազգային հարցը: Ճիշդ է, բայց դրա հետ միասին կայ նաեւ ամէն երկրում տնտեսական-սոցիալական հարց, որ բոլոր ազգերի համար էլ նոյնն է. բոլոր ազգերի համար էլ գոյութիւն ունեն նոյն տնտեսական-սոցիալական պայմանները, որոնցից բոլորն էլ տառապում են: Ասել թէ Թուրքիայում պայմանները չեն փոխուել, նոյնն են մնացել, կը նշանակէ ասել, որ այդտեղ կեանքը կանգնած է եղել. ոչ, դա սխալ է. թէեւ քիչ, բայց փոխուած են: Շատ վարդապետ յոյսեր ունի նա դէպի Եւրոպայի օգնութիւնը եւ ասում է որ Եւրոպան մեզ օգնել է: Եթէ մենք դրանք օգնութիւն համարենք, այն ժամանակ իրաւունք ունենք ասելու, որ Սուլթանն էլ է հայերին օգնել, որովհետեւ նա էլ խոստումներ է արել եւ երբեմն հայեր է ազատել բանտից: Օգնութիւնը Դեկտեմբերի եւ այլ պետական մարդկանց խօսքերի մէջ չպիտի փնտռել, այլ նրանց գործի մէջ. իսկ նրանք գործ չեն արել: Դրականապէս Եւրոպան մեզ չէ օգնել: Ասում են, արդեօք հայկական հարցի լուծումը Թուրքիայից դո՞ւրս է լինելու թէ Թուրքիոյ մէջ, որ դա մենք աւելի պիտի սպասենք Թուրքիոյ ներքին քայքայումից եւ ոչ թէ Եւրոպայի օգնութիւնից: Ես կարծում եմ, որ մեր հարցի լուծումը երկու տեղից էլ սպասում ենք, եւ՛ Թուրքիայից, եւ՛ Եւրոպայից: Մեր հարցը թէեւ ուրոյն է, բայց մենք այնուամենայնիւ պիտի համաթուրքական չարժումներին էլ մասնակցենք: Դաշնակցութեան գործելակերպը ինչ էլ որ եղել է մինչեւ այժմ, այժմեան դրութեան մէջ ուրիշ ձեւեր է պահանջում: Ապստամբութիւնը այժմ պիտի լուրջ լինի եւ ոչ թէ առաջուայ նման մանանակի: Ընկեր Անդրանիկը ասում է, որ Թուրքերի չարժումը միայն Սուլթանի դէմ է: Եթէ այդպէս լինէր, նա կարող էր եւ հեշտութեամբ դադարել մի ուրեւորիչ քարոզով կամ մի այլ ձեւով: Աւելի լաւ, որ նա տնտեսական է. դա մեզ համար աւելի նպաստաւոր է: Գիտենք Թուրք ժողովուրդը ճնշուի, նա այնքան աւելի պիտի դիմադրէ: Անդրանիկն ասում է, որ երիտասարդութիւնը գաղթում է եւ երկրից հեռանում. ճիշդ է այդ, բայց եթէ մենք չտապկենք եւ արհեստական կերպով ապստամբութիւն առաջացնենք, դրանից արդեօք օգուտ կը լինի՞: Ընկ. Ջելալեան ասում է, որ պիտակ տեռորը աւերում է երկիրը. ճիշդ է, մենք պիտի աշխատենք, որ դա նուազի, բայց աւելի սոսկալին կարմիր տեռորն է: — Զարդարեանի առաջարկը անպատկանելի վերաբերմամբ վտանգաւոր է. այդպիսի որոշումով մենք կարող ենք դիւրութեամբ ենթարկուել կառավարական մի պրովոկացիայի: Նոյնիսկ ռուս յեղափոխականները, որ մեզանից շատ աւելի լաւ էին կազմակերպուած, չկարողացան դիմադրել կառավարական պրովոկացիային. Մոսկուայի ապստամբութիւնը դրա հետեւանքն էր: Թէեւ Մոսկուայի ապստամբութիւնը մի գեղեցիկ յեղափոխական ժեստ էր, բայց դրա անյաջող ելքն էր պատճառ, որ իր հետեւից ռէակցիան ամբողջ երկրում սկսեց տիրել: Մուրատը ասում է, որ յեղափոխական ոգին մտել է ժողովրդի մէջ եւ մենք չենք կարող նրան դիմադրել: Բայց ես կ'ասեմ, որ մի կուսակցութիւն ոչ թէ պիտի ամբոխ յետեւից գնայ, այլ ամբոխի չարժմանը պիտի ուղղութիւն տայ: — Ապստամբութեան ձեռնարկ չանել, չէ նշանակում յեղափոխութիւն չանել: Այժմ հնարաւորութիւն չունենք ապստամբելու, սպասենք եւ անենք այն ժամանակ երբ վստահ ենք, թէ մեր արածն հաստատուն կը լինի: — Իմ եղրակացութիւնս այս է: — Ապստամբութեան ձեռնարկելը մեր գլխաւոր նպատակներից մէկն է, բայց պէտք է բոպէն եւ պայմանները աչքի առաջ ունենանք: Այս Ընդհանուր Ժողովը, չըլնապատող պայմանները աչքի առաջ ունենալով չէ կարող մի այդպիսի ձեռնարկ որոշել: Պէտք է լայն չափով պրոպագանդ անել, մասսայապէս կազմակերպել ժողովրդին: Ռազմական ընդարձակ պատրաստութիւն, համերաշխութիւն եւ մերձեցումն Թուրք յեղափոխական հոսանքին: Այս բոլորը անտես ընելն եւ հապճեպ կերպով ապստամբական ձեռնարկներ ծրագրելը կորստաբեր է: Առաջարկում են վասպուրականը դարձնել ապստամբական ձեռնարկի կենտրոնավայր: Դա կատարեալ անհեռատեսութիւն է: Միայն վասպուրականն է մնացել երկրում մի քիչ մխիթարական վիճակի մէջ յեղափոխական տեսակէտից, այն էլ չվտանգե՛նք: Ռուսաց ապստամբական ձեռնարկների էլ մենք չափազանց շատ գործ ունենք անելու. Թողնենք այդպիսի մեծադղորդ եւ անիրագործելի ձեռնարկները եւ լայն ու իրական նախապատրաստութեամբ առաջ տանենք մեր գործելակերպը, մեր դրօշակը:

«Ապստամբական ձեռնարկի մասին» զեկուցում կ. Մինասեանի: —

Արամ.— Երկու օր է խօսում ենք ապստամբութեան մասին եւ մի եզրակացութեան չենք գալիս: Այսօրուայ խօսուածների տպաւորութիւնն այն է, որ կարծես թէ պաշտպանում ենք մեր հին գործելակերպը: Մենք քննադատում ենք մեր հին գործելակերպը այն չափով, որ նրա սխալները սրբագրենք: Աւելի լաւ է խօսենք ներկայացրած չրջանակի յեղափոխական ձեռնարկների մասին, որոնք կարողանան ստիպել տաճիկ կառավարութիւնը եւ եւրոպական դիպլոմատիան՝ լուծել մեր հարցը: Մեր ձեռնարկներն ու ապստամբութեան նպատակը լինին երկրում անիշխանութիւն ստեղծել, վնասել տաճիկ կառավարութեան եւ եւրոպացիների չահերին, որ սրանք ուզեն չուզեն ուշադրութիւն դարձնեն մեր վրայ: Մենք թէեւ անցեալում ուզել ենք այդ անել, բայց նպատակի չենք հասել. մենք այժմ ասում ենք, որ մեր անցեալ գործունէութեան լաւ կողմերը վերցնենք, իսկ վատերը մի կողմ վանենք: Ոչ ոք հակառակ չէ Ռոստոմի առաջարկին, բայց մենք չենք կարող վաղուանից այդ իրագործել: Ապստամբական ձեռնարկը յաջողցնելու համար, մենք պիտի գնանք այն չրջանը, ուր լինելու է ապստամբութիւնը: Շատ ուզելը թ՞նչ օգուտ կը բերի, ներսում թ՞նչ պարագաներ ունենք դրա համար: Ինձ համար, ամենից բարձր նշանակութիւն ունի այն միքնոլորտը [միջավայրը ?] ուր պիտի ապստամբութիւնը առաջ գայ. իսկ այդ չրջանը, մենք պիտի ուսումնասիրենք ռազմական տեսակէտից: Մենք առհասարակ ներսը չենք ուսումնասիրում, դրսում ենք ծրագիր մշակել եւ դրանից են անյաջողութիւնները յառաջ գալիս: Ուստի ես առաջարկում եմ, որ այս Ընդհանուր Ժողովում միայն առաջարկութիւններ լինին եւ դրանց մասին մտքերի փոխանակութիւն տեղի ունենան: — Տաճիկ կառավարութիւնը յեղափոխութիւնը ճնշելու համար անպատճառ մասսայական կոտորածներ չէ սարքում: Տաճիկ կառավարութեան վերաբերմունքը դէպի Սասունը մեծ մասամբ կապուած էր ընկ. Անդրանիկի անձնաւորութեան հետ. նա ներա դլուխն էր օրից օր թանգացնում: Նա թէեւ ընկերներին, ղեկավարներին կը բռնէ, բայց ժողովրդին չի դպչէ: Մենք ուզում ենք ժողովրդական ուժերը չպայթեցնել, որ ժողովուրդը չվնասուի. բայց կը սուժեն անհատներ: Բոլորս էլ հաստատ հաւատացած էինք, որ Սուլթանի մահափորձից յետոյ կոտորած յառաջ կը գայ, բայց այդ բանը չեղաւ. որովհետեւ քաղաքական պարագաները դրան նպաստաւոր չէին: Ներա-

թիւնը ուզում է այժմ ոչ թէ կոտորածներով, այլ սրընտեսապէս քայքայել ժողովրդին. այդ պատճառով էլ հնարաւոր է խաղաղ գործունէութիւնը զինուորական ոչ անուանի ընկերների եւ ինտելիգենտների ձեռքով:

— Այժմ մեր պահանջները շատ համեստ են լինելու, — կեանքի եւ գոյքի ապահովութիւն. սրա համար մեզ կարող են մխիթարել եւ այլ տարրեր: — Ուրեմն խաղաղ ճանապարհով ազգամաքրքրք մտցնել երկիր, դրսից տանել մասնագէտ ընկերներ, պատրաստուել, ապա ռէալ ծրագիր կազմել եւ յարմար մոմենտին իրագործել: Յարմար մոմենտ ասելով ես հասկանում եմ ներքին անարխիան [անիշխանութիւնը] եւ արտաքին պատերազմը, որոնց ժամանակ ապստամբելը երեքք դատճանութիւն չի լինի: Մենք պիտի բարձրանանք [?] միայն անարխիա ստեղծելու համար:

Անդրանիկ.— *Երկրից եկած մարդիկ կան, որոնք երկիրը չեն ուսումնասիրել, սենեակներում նստած են եղել ամբողջ ժամանակը: Իսկ դրսի եղածներն էլ քարտէսով են ծանօթ երկրին: Սասունի մասին ասում են, որ կոտորուել է առանց արդիւնք տալու: Դա նախատինք է, որ չարունակ կոտորուէն են յիշում, եւ չեն ասում, որ նոյնպէս եւ կոտորե՛լ ենք: Կուսակցներին չեն կարողացել կոտորել, այլ խաղաղ ժողովրդին, որ արտում աշխատելիս է եղել: Մենք կուսակցներս թշնամուց երկու անգամ աւելի ենք ոգեմարթերք խլել, քան նրանք մեզանից: Ջնայած, որ մեր մարդքը շատ պակաս է եղել, բայց այնուամենայնիւ մենք միայն չենք կոտորուել: Մեր դէմ եկողը հազարապատիկ էր: Մենք միայն սուտ անուններով 7000 հոգի սպաննուած ցոյց տուինք, որ հիւպատոսներին ներկայացնեն: Մենք կարողացանք ժողովուրդը այն նեղ պայմաններումն էլ զինել. բայց ի՞նչ օգուտ, որ կառավարութիւնը եկաւ բոլորը հաւաքեց: Այժմ թող Ընդհանուր ժողովը մեզ ապահովէնք, որ երկրում եղած զէնքը չէ անցնելու կառավարութեան ձեռքը: Երկրից տարեկան 50 հազարի չափ մարդ է պակասում: Մենք պիտի չտապեցնե՛նք ինչ որ անելու ենք, չենք կարող երկար սպասել: Այն ինչ որ 4 տարուայ մէջ կարելի է անել, մենք պիտի աշխատենք մի տարուայ մէջ անել: Մեր ամենամեծ խոչընդոտը քիւրան է. եթէ նրան մեզ կարողանանք միացնել, այն ժամանակ ինչքան կ'ուզէ թող կառավարութիւնը գայ մեր վրայ:*

Նիստը փակւում է ժամը 6ին:

45ՐԴ ՆԻՍՏ (22 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեանը:
Ներկայ են՝ պատգամաւորը:

Նախագահը նիստը բանալով հետեւեալ է այն անախորժ երեւոյթի վրայ, որ պատգամաւորներից մի քանիսը յաճախ բացակայում են ժողովից, եւ խնդրում է այլեւս չբացակայել: Ապա կարդում է Հնչակեան կուսակցութեան Գարբիդի Ն. Կոմիտէի նամակը՝ ուղղուած Ընդհանուր Ժողովին:

Ժողովը որոշում է, որ Դիւանը պատասխանէ, թէ նամակը առացել է. իսկ նամակի մէջի չօշափած հարցերի քննութիւնը թողնում է հետագային, երբ ժողովը կ'անցնի «Միջկուսակցական յարաբերութիւններ» խնդրին:

Հաղորդւում է, թ դիւանութիւն ժողովի, Վասպուրականի Ն. Կոմիտէի «Ադդ» (մահը խմբերի երկիր մտնելու հարցի վերաբերմամբ):

Արամը, իբրեւ Վասպուրականի պատգամաւոր, յայտնում է, թէ այդ ազդը ուղղուած է դիւանապէս հնչակեաններէ դէմ, որովհետեւ որանք ուղեցել են խմբեր անցկացնել երկիր:

Զարդարեան ներկայացնում է Ռոկհեանքից առացուած մի պաշտօնական դրութիւն, որով հաստատւում է իւր այդ չբլնի պատգամաւորութիւնը:

Նախագահը յայտնում է, որ Թիֆլիսից Մուշեղ առորգրութեամբ քողք է առացուել՝ Թիֆլիսում կազմուած «Դաշնակցութեան ժամանակաւոր Զինուորական Կոմիտէի» գործած ապօրինութիւնների դէմ:

Ժողովը վճռում է այդ քողքը եւ նրան կցուած մի քանի վաւերագրեր վերադրել ապօրինութիւնների՝ յանձնել դատական յանձնաժողովին:

Վռամեան ներկայացնում է մի լրացուցիչ զեկուցում նոյն հարցի մասին (տես Օրակարգ՝ Բ.—1, ա.):

Զեկուցման չուրջը տեղի են ունենում վիճաբանութիւններ:

Մալումեան.— Իմ կարծիքով, այս Ընդհանուր Ժողովը, ինչպէս եւ նախորդը, կրկնում է մի հիմնական սխալ. այն է, որ հարցեր ուսումնասիրելիս տարում ենք վերացական ծրագրերով: Յայտնում ենք զեղեցիկ ցանկութիւններ, առանց մտածելու, թէ ի՞նչ կերպ պէտք է իրագործուին: Ընկ. Միհրանեանն, օրինակ, ե՛րկ ցանկութիւն յայտնեց, թէ հարկաւոր է 10 միլիոն ֆրանք հաւաքել՝ անյապաղ ապստամբութիւն առաջ բերելու համար: Մի այսպիսի ցանկութիւն կարելի է զուցէ յայտնել մի պատահական պրոպագանդային ժողովում, բայց ոչ երբէք՝ կազմակերպութեան Ընդհանուր Ժողովում: Նոյնը այսօր անում է ընկ. Վռամեանը: Գեղեցիկ են ցանկութիւնները երկու ընկերների, բայց միայն մէջոց ցոյց տուէք, թէ ի՛նչ ձեւով մենք պէտք է իրականացնենք այդ ամէնը. ահա՛ խնդիրը:

Միհրանեան.— Մենք մէջոցների մասին չենք խօսել, մենք միայն սկզբունքային տեսակէտի վրայ ենք կանգ առել:

Մալումեան (չարունակելով).— Ընկ. Զարդարեանը նոյնիսկ առաջարկում է՝ Սուլթանի մօտ ելոյթ ունենալ՝ ապստամբեցնել ժողովուրդը. բայց եթէ հազիւ մի քանի ամիս անց տեղի ունենայ այդ մարը, որ հաւանական է, արդեօ՞ք կարող կը լինենք որեւէ ապստամբական շարժում յառաջ բերել: Ապստամբութեան մասին խօսք չէ կարող լինել մինչեւ յայտը Ընդհանուր Ժողովը. որովհետեւ մենք դեռ զինման պատրաստութիւն անգամ չունենք: Ռուստոմը յարմար մոմենտի վրայ է չեչտում, սակայն արդեօք, օրինակ բուլղար-տաճկական պատերազմի դէպքում, մենք կարող կը լինե՞նք մեր ապստամբութեամբ գէթ 50·000անոց մի թուրք բանակ զբաղեցնել թուրքիայում: Դրա համար հարկաւոր է լաւ պատրաստուած լինել, մինչդեռ ժողովրդի տնտեսական դրութիւնը չատ է ծանրը, որպէսզի մենք կարողանանք ուժգին կերպով պատրաստուել: Մեր են պայմանները եւ այդ պայմանները թելադրում են ասել, որ ապստամբական ոչ մի ձեռնարկ, մինչեւ ապագայ Ընդհանուր Ժողովը, մինչեւ ապագայ Ընդհանուր Ժողովը, միւսներն էլ խորհուրդ են տալիս պատրաստութիւններ տեսնել: Պատրաստուել, այո՛. բայց արդեօք առաջուայ պէս դանդաղ քայլերո՞վ պէտք է վարենք մեր պատրաստութիւնները: Վտանգն աճում է եւ մենք պարտաւոր ենք ենք աշխատել, որպէսզի ապստամբութեան պատրաստութիւնները որքան կարելի է արագ կատարուին: Արտաքին ուժերի դոյութիւնը համարում եմ անհրաժեշտ:

Խահակեան.— Ընկ. Ռուստոմը հարցնում է, յաղողութեան ի՞նչ չանսեր ենք ապատում մենք կայ մի կամ մի քանի տարիներից, որ ասում ենք, թէ ապստամբական գործի համար որոշում կայացնելը յետաձգում ենք մինչեւ յաջորդ Ընդհանուր Ժողովը: Մենք միայն ասում ենք, մենք այս ժողովում որոշում չենք կայացնում ապստամբութեան համար. իսկ թէ ի՞նչ կը լինի ապագայում, այդ հենց ապագան էլ ցոյց կը տայ: Գալով ընկ. Ռուստոմի այն հարցին, թէ ապստամբութիւնը յետաձգելու դէպքում ինչպիսի՛ նախապայմաններ կարող են լինել, որոնք ապստամբութեան համար նպաստաւոր կարող են լինել՝ ահա մի քանիսը այդ պայմաններից.— մենք զինուած կը լինենք հարկաւոր չափով. կարող է պատահել, որ թուրքիայի յեղափոխական շարժումները լուրջ կերպարանք առանան, կարող է թուրքիայի եւ որեւէ պետութեան միջեւ պատերազմ ծագել, կարող է Սուլթանը մեռնել եւ այդ առթիւ գահակալական կռիւներ ծագել եւ այլ այսպիսի պայմաններ, որոնց մենք այժմ չենք կարող կանխատեսել եւ որոնք կարող են դրդիչ լինել ապստամբութեան համար:— Ընկ. Վռամեանի զեկուցումը ապստամբութեան մասին մտքերի այնպիսի շփոթ էր ներկայացնում, որ ես նրանից որոշ եզրակացութեան չեկայ: Մի կողմից նա պնդում է, որ մենք պէտք է զինուենք, մէս կողմից մեր ամբողջ ձեռնարկը զուգադիպեցնում է «խելօք խնդիրների» հետ կապակցութեան մէջ է դնում, որոնք ամէն ժամանակ կարող են իրենց խելօք խնդիրներով ոչ միայն մեր ձեռնարկները վտանգել, այլեւ ժողովուրդը սրածութիւնների ենթարկել: Ես պնդում են, որ մեր կազմակերպութիւնը մեր զինական եւ զինուորական պատրաստութիւններին յարաբերա-

նականկալների տեղի ունենայ: Իւրաքանչիւր ապստամբութիւն արդիւնք է չբլնապատող պայմանների: Իսկ անակնկալների համար, ցոյցեր կան: Վտամեանը մեծ նշանակութիւն է տալիս դրսում (օրինակ Կովկասում) պատրաստուած ուժերին, որոնք պէտք եղած րոպէին մտնելու են երկիր: Բայց անցեալի փորձերը ցոյց են տալիս, որ խմբերը չաճախ չարիք են դառնում ժողովրդի համար: Դրսից օգնութիւն հասցնելը եւս համարում են կորստաբեր տակտիկա, որը պէտք է փոխել անպայման:

Միհրանեան.— Այստեղ հակառակ չենք ապստամբութեան, բայց, ոմանք ուզում են գործը յետաձգել մինչեւ ապագայ Ընդհանուր Ժողովը, միւսներն էլ խորհուրդ են տալիս պատրաստութիւններ տեսնել: Պատրաստուել, այո՛. բայց արդեօք առաջուայ պէս դանդաղ քայլերո՞վ պէտք է վարենք մեր պատրաստութիւնները: Վտանգն աճում է եւ մենք պարտաւոր ենք ենք աշխատել, որպէսզի ապստամբութեան պատրաստութիւնները որքան կարելի է արագ կատարուին: Արտաքին ուժերի դոյութիւնը համարում եմ անհրաժեշտ:

Խահակեան.— Ընկ. Ռուստոմը հարցնում է, յաղողութեան ի՞նչ չանսեր ենք ապատում մենք կայ մի կամ մի քանի տարիներից, որ ասում ենք, թէ ապստամբական գործի համար որոշում կայացնելը յետաձգում ենք մինչեւ յաջորդ Ընդհանուր Ժողովը: Մենք միայն ասում ենք, մենք այս ժողովում որոշում չենք կայացնում ապստամբութեան համար. իսկ թէ ի՞նչ կը լինի ապագայում, այդ հենց ապագան էլ ցոյց կը տայ: Գալով ընկ. Ռուստոմի այն հարցին, թէ ապստամբութիւնը յետաձգելու դէպքում ինչպիսի՛ նախապայմաններ կարող են լինել, որոնք ապստամբութեան համար նպաստաւոր կարող են լինել՝ ահա մի քանիսը այդ պայմաններից.— մենք զինուած կը լինենք հարկաւոր չափով. կարող է պատահել, որ թուրքիայի յեղափոխական շարժումները լուրջ կերպարանք առանան, կարող է թուրքիայի եւ որեւէ պետութեան միջեւ պատերազմ ծագել, կարող է Սուլթանը մեռնել եւ այդ առթիւ գահակալական կռիւներ ծագել եւ այլ այսպիսի պայմաններ, որոնց մենք այժմ չենք կարող կանխատեսել եւ որոնք կարող են դրդիչ լինել ապստամբութեան համար:— Ընկ. Վռամեանի զեկուցումը ապստամբութեան մասին մտքերի այնպիսի շփոթ էր ներկայացնում, որ ես նրանից որոշ եզրակացութեան չեկայ: Մի կողմից նա պնդում է, որ մենք պէտք է զինուենք, մէս կողմից մեր ամբողջ ձեռնարկը զուգադիպեցնում «խելօք խնդիրների» հետ կապակցութեան մէջ է դնում, որոնք ամէն ժամանակ կարող են իրենց խելօք խնդիրներով ոչ միայն մեր ձեռնարկները վտանգել, այլեւ ժողովուրդը սրածութիւնների ենթարկել: Ես պնդում են, որ մեր կազմակերպութիւնը մեր զինական եւ զինուորական պատրաստութիւններին յարաբերա-

կան պէտք է լինի: Մենք պէտք է կազմակերպօրէն այնքան զօրեղ լինենք, որ կարողանանք պատահական նուիրեալներից վեր բարձրանալ: Ընկ. Վռամեանը ասում է, թէ մենք չենք կարող հասարակ պրովոկացիան տարբերել կառավարութեան այնպիսի գործողութիւններից, որոնք նպատակ ունեն մեր ժողովրդի ընդհանուր զինաթափութիւնը, մեր յեղափոխական պատրաստութիւնների ոչնչացումը եւ որոնք պէտք է որ ապստամբութիւն առաջացնեն: Սխալ է այս. կազմակերպութիւնը երբէք զօրեղ եղաւ, նա կարող է շատ լաւ դիտել կառավարութեան ընթացքը. Դաշնակցութիւնը կովկասում ձեռքն էր առել ամբողջ կառավարութիւնը եւ տաճիկ պաշտօնեաները այն խէժալական պաշտօնեաները չեն, որոնք ոչ մի բանի առաջ չեն խոնարհւում. հասարակ պրովոկացիայի չպէտք է ենթարկուել, եթէ դրա համար հարկաւոր լինի զէնքն էլ յանձնել, անձնատուր էլ լինել: Ասում են՝ եթէ զինուորը այդպիսի բան անէ, նրան կ'անուանեն «ինչու նահապետ»: Թող անուանեն, շատ դէպքերում այդ իշու նահապետութիւնը ամենալաւ հերոսութիւն է քան գիւղի մէջ մի երկու հոգով թշնամու դէմ դուրս գալը եւ, գիւղը աւերի մատնելը:

Մուրատ·— Ջեմ հասկանում, ո՞րն է լինելու յարմար մոմենտը մեր ապստամբութեան համար. որոշակի ասել, թէ ա՛ս է, չենք կարող: Մենք միայն պէտք է ամէն վերպ զինենք ժողովուրդը, մանաւանդ հիմա, երբ կոնստիտուցիոնը զօրեղ է:

Տաճատ·— Ես միանգամայն հակառակ եմ ապստամբութեան: Մեր փափաքը պէտք է լինի, պահպանել մեր կեանքը: Մենք ուզում ենք մնալ մեր հողի վրայ, ապահովել մեր իրական գոյութիւնը: Իսկ երբ ձեռնամուխ լինեն մեզ, այն ժամանակ չխոնարհուել ոչ մի արգելքի առաջ:

Սեպուհ·— Ապստամբութեան համար ժամանակ չպէտք է սահմանել: Յեղափոխութիւն է ապստամբութեան ձեռնարկներ ծրագրել, երբ Երկրում միլիոններ չկան՝ ուժեր հաւաքելու համար: Այս ժողովը պէտք է միայն հրահանգներ տայ՝ ժողովուրդը կոնսոլաւոր կերպով կազմակերպելու եւ զինելու:

Զաւրեանց·— Եւ ոչինչ չեմ ասի, թէ արդեօք հարկաւոր է Երկրում ապստամբութիւն առաջացնել կամ ոչ: Ես միայն կանդ կ'առնեմ՝ ապստամբութեան թէորիայի [տեսութեան] վրայ՝ ե՞րբ պէտք է առհասարակ ապստամբել: Ապստամբութեան համար առաջին եւ գլխաւոր պայմանն է, որ ժողովուրդը ինքը արտահայտութիւն ունենայ ապստամբելու: Չի կարելի զէնք տալ ձեռքը եւ ասել ապստամբի՛ր: Մի պատմական փաստ բերեմ, — Մոսկուայի ապստամբութիւնը: Կռիւներից առաջ Պետերբուրգում եւ յետոյ Վիբորգում յեղափոխական ժողովներ տեղի ունեցան, որտեղ ապստամբելու հարցը դրուեց, թէ պէ՛տք է ապա ցըրնել ժողովուրդը... Եւ բոլոր ժողովներում յայտնակում էր այն հանգամանքը թէ ժողովուրդը պատրաստ է, ուզում է չարժուել, թէ հասել է ապստամբութեան վճռական րոպէն: Ինքս անձամբ, սակայն, որ փորձառութիւն էի ձեռք բերել հայկական չարժումների ելքից՝ չէի կարծում, որ ծրագրուող ապստամբութիւնը յաջողութեան յանգէր, այդպէս էլ եղաւ. 2–300 հրայան–ատրճանակներով անկարելի էր կառավարութեան ուժը կոտրել: Մոսկուայի չարժումը վիժեց. որովհետեւ ժողովուրդը բնաւ ցանկութիւն ցոյց չտուեց՝ կռուի դուրս գալու. եւ այսօր ռուս յեղափոխականները մի կողմ են դրել ապստամբութիւն առաջ բերելու ծրագիրները: Ոչ մի խոշոր չարժում չէ կարող կենտրոնից դէպի չրջապատն անցնել, այսինքն՝ որ յեղափոխական մարմինները տան ժողովրդին ուղի կանգնելու ապղանչանը. այլ ընդհակառակը...: Տեսականապէս, ոչինչ չենք կարող ունենալ ապստամբութեան դէմ, միայն թէ իրականութեան մէջ մենք պատրաստ ենք դործել՝ մեր գործունէութեան վայրի հանգամանքներն ի նկատի ունենալով: Ես միանում եմ ընկ. Վռամեանի առաջարկի հետ, որպէսզի Երկրում կազմուի մի կենտրոն՝ ապստամբութեան–չապստամբութեան հարցի որոշման համար. իսկ այս ժողովը չպէտք է որեւէ որոշում կայացնի:

Անդրանիկ·— Այո՛, պատասխանատու մարմինը պէտք է լինի որոշումներ կայացնողը. երբ մենք ասում ենք, թէ դրսի մարդիկը չպէտք է խառնուեն մեր գործերին, մենք ի նկատի ունենք այն պարագան, որ քաջ ուժերով անկարելի է առհասարակ ծանօթանալ իրականութեան հետ: Եթէ ընկերները կ'երաշխաւորեն, որ Երկիր հասած զէնքերը եւ ուժերը անմնաս կը մնան կառավարութեան կողմից, այս դէպքում մենք պատրաստ ենք ապահովել, մինչեւ որ դուք յարմար գտնէք ապստամբութիւնը:

46ՐԴ ՆԻՍՏ (22 Մարտ, երեկոյ)

Նիստը բացւում է ժամը 4½ին:
Նախագահում է՝ Մալումեան:
Ներկայ են 23 պատգամաւոր:
Բացակայ են՝ Իշխան, Ազամ, Սաֆօ, Վարդան:

Այս նիստին պէտք է քուէարկութեան դրուեն առաջարկուած քանաձեւերը ապստամբական ձեռնարկների մասին:

Վիճաբանութեան է ենթարկւում նախ Զաւրեանի քանաձեւ առաջարկը:

Ռոստոմ·— Այդ առաջարկը տեղիք չունի ներկայ հարցի վերաբերմամբ, քանի որ մենք չենք կարող յոյս ունենալ, որ Երկրի նորմալ վիճակում կարելի է մի բան անել. ապստամբութիւնն անհնարին է մի վիճակում, երբ կառավարութիւնը իր բոլոր ուժերը կարող է ուղղել մեր դէմ. մեր յոյսը պիտի կապուած լինի անպատճառ արտակարգ պայմանների հետ: Ուսումնասիրելուն դէմ չեմ, բայց պիտի աչքի առաջ ունենալ, որ մենք ձեռնարկի իրագործելը եւ սկսելու մոմենտը Բողնում ենք ներքին զօրեղ Մարմնին. եւ ոչ ոք վիճակի փափկութիւնը այնպէս չէ կարող հասկանալ, ինչպէս ներքին Մարմինը, որը պիտի ղեկավարէ եւ նախաձեռնէ չարժումը:

Անդրանիկ·— Ինդրում եմ իմ կարծիքը առանձնապէս արձանագրել·— անհրաժեշտ է երկրում մի Մարմին, որը պատասխանատու լինի անձամբ, եթէ զէնքերը երկրում հողի տակ փճանան կամ թուրքի ձեռք ընկնեն: Որքան իմ փորձառութիւնս թոյլ է տալիս ինձ, ես կարծում եմ, որ կառավարութիւնը պիտի աշխատի խլել մեր զէնքերը եւ եթէ երկրում զինուորական ուժեր չլինեն, ինչպէս ոմանք ցանկանում են, այն ժամանակ ոչ ոք չէ կարող դիմադրել եւ ապահովել զէնքերը, որոնք անպատճառ պիտի ընկնեն կառավարութեան ձեռքը:

Շահխաթ–ունեանը, կարծելով որ ժողովականներից ոմանք ճիշդ չեն ըմբռնում Զաւրեանի միտքը, բացատրեց, որ նրա ասելով՝ առանձին հայկական ապստամբութիւն եւ յեղափոխութիւն չէ կարող լինել Թուրքիայում, որովհետեւ Տաճկաստանը բաւական զօրեղ է, ընկճել կարողանալու համար ամէն մի ազգային ապըստամբութիւն. հայկական ապստամբութիւն կարող է լինել միայն ուրիշ ազգերի հետ միասին: Սա է Զաւրեանի կարծիքը:

Վռամեանը պնդում է իւր միտքը, որ անակնկալները կարող են ստիպել չարժումներ առաջ բերելու, հակառակ մեր կամքին:

Մանուկ կարծում է, թէ ապստամբութեան մասին խօսելն աւելորդ է. 15 տարուայ մէջ մենք միայն դրա հիմքն ենք պատրաստել. աչխատենք միւս հարկաւոր առաղձն էլ տալ, որ ամբողջ չէնքը կառուցուի:

Սեպուհ·— Մենք պիտի զուտ ազգային հայկական ապստամբութիւն առաջ բերենք. Զաւրեանի ասածը լաւ է, բայց ծովը ընկնողը անձրեւից չի վախենար. եթէ այսօր չենք կարող կռուել, պատրաստուենք՝ յարմար մոմենտին սպասելով:

Մուրատը միանում է այդ կարծիքին, որ մենք չենք կարող Թուրքերի հետ միանալ, որովհետեւ դա վաղաժամ է, հետեւաբար պիտի չարունակենք միայն հայկական ապստամբութիւն առաջ բերել, եւ առաջարկում է, որ ով այլ կերպ է մտածում, ցանկալի է որ հեռանայ Դաշնակցութիւնից:

Մուրատի այս խօսքերը բողոք եւ դժգոհութիւն են յառաջացնում, որը դադարում է, երբ բացատրւում է Զաւրեանի առաջարկի իսկական իմաստը:

Մաշուրը յայտնում է, որ ստիպուած է այդ հարցում միչտ ձեռնպահ մնալ, մինչեւ վերաքննութեան ենթարկուի Դաշնակցութեան անցեալը եւ մանրամասն չուսումնասիրուի երկրի բոլոր մասերի դրութիւնը: Իսկ այժմ պէտք է ոչ թէ զինման կարեւորութեան մասին խօսել, որ ինքն ըստ ինքեան հասկանալի է, այլ կոնկրէտ միջոցներ առաջարկել, թէ ի՞նչպէս իրագործել դա:

Ժողովը անցնում է բանաձեւերի քուէարկութեան:

ա) Ռոստոմ – Զարդարեան – Տաճատի բանաձեւը ստանում է 9 ձայն:

բ) Թովչեան – Սեպուհ – Մալումեանի բանաձեւը ստանում է 6 ձայն:

գ) Վռամեան – Անդրանիկի բանաձեւը ստանում է 2 ձայն:

դ) Մինասեանի բանաձեւը ստանում է 1 ձայն:

ե) Զաւրեանի բանաձեւը ստանում է 4 ձայն: (Զաւրեան, Իսահակեան, Շահխաթունեան, Մաշուր):

Ընկերը Մալումեան խնդրում է իւր առանձին բանաձեւը մտցնել արձանագրութեան մէջ, այն տեսակետով, որ իւր բանաձեւում կայ յատուկ մի կէտ, որ չկայ ուրիշներում:

Նիստը փակւում է ժամը 8ին:

Ահա բանաձեւերը.

Ա.— *Զարդարեան – Ռոստոմ – Տաճատի բանաձեւը.*

Ընդհանուր ժողովը լսելով ապստամբական ձեռնարկներու մասին եղած վիճաբանութիւնները եւ կարծիքի փոխանակութիւնները՝ նկատ ունենալ եզրակացութեամբ.

ա) Նկատելով որ Բարթրաւանդակ – վասպուրականը ապըստամբական շարժման մէջ դնելու համար անհրաժեշտ է կազմակերպական հիմնաւորումն եւ ամենալայն չափերով զինաւորում [զինում],

բ) Նկատելով որ Բարթրաւանդակ – վասպուրականի ապըստամբական արտայայտութիւնը կապուած է մէկ կողմէն արտաքին ու ներքին բարեյաջող մտնեմութիւններու, միւս կողմէն մեր կամքէն անկախ պատահարներու եւ հաթկեցուցիչ ստիպողականութեանց հետ՝

ժողովը որոշեց.

1) Ամէն կարելի զգուշաւորութեամբ եւ ամենալայն չափերով յառաջ տանիլ Բարթրաւանդակ – վասպուրականի զինաւորումը, ձեռնհասելով զէնի, ռազմամթերքի եւ այլ հարկաւոր ռազմական պիտոյքներ՝ տրամադրելի ըլլալով դրամական մեծ միջոցներ եւ գործիչ ուժեր:

2) Ստեղծել ձեռնհաս Մարմին մը Երկրի մէջ՝ օժտուած զէնքերու պահպանման ու գործադրութեան տարաժերժ պատահականութեամբ [?], ստանձնելով բոլոր այս պատրաստութեանց եւ առնոց յարակից գործողութեանց գլուխ, ձերբին կամ արտաքին խոշոր փոփոխութիւններու եւ ռազմական դէպքերու միջոցին՝ ծախքան գործօն էապէրու դիմելը, խորհրդակցելով միւս ձեռնհաս մարմիններուն հետ. իսկ հնարաւոր եղած ատեն՝ հրաւիրելով ձոյնիսկ Դաշնակցութեան ընդհանուր ժողովին:

3) Ցանկանարել ձոյն Մարմնին՝ Երկրի լայն ռազմական ուսումնասիրութիւն, պատրաստի ունենալ այլեւայլ ռազմական ծրագիրներ՝ այս կամ այն հատուածական պատահականութեանց համար:

ʀ.— Թոքչեան – Սիպուհ – Մայրումեանի բանաձեւը.

Ընդհանուր ժողովը լսելով ընդհանուր ապստամբական ձեռնարկների մասին եղած զեկուցումները եւ այդ խնդրի շուրջը տեղի ունեցած մանրամասն փոխադարձ տեղեկութիւնները ու նկատելով՝

1· որ երկրի տնտեսական եւ քաղաքական այժմեան անառարկելի ծանր վիճակը պահանջում է բացառիկ ժամանակ եւ աշխատանք՝ ժողովուրդը ապստամբական վիճակի մէջ դնելու համար,

2· որ մեր հարեւան տարրերը կատարելապէս անպատրաստ հող են ներկայացնում այդպիսի ձեռնարկի համար,

3· որ այսօրինակ պատասխանատու շարժման անյաջողութիւնը, ցնտի ունենալով բուրբ կառավարութեան հայաջինջ քաղաքականութիւնը, մահացու հարուած կը տայ մեր Դատին եւ յետագային,

Որոշեց՝

ա) Կտրական կերպով բելլադեր երկրի մարմիններին եւ քննիչներին, ամէն կերպ խուսափել ապստամբական ընդհանուր շարժումներից, մինչեւ յատկապէս Ընդհանուր Ժողովի ծոր որոշումը,

բ) Անմիջապէս եւ բոլոր ուժերով, դրամական եւ ռազմական, ձեռնարկել ժողովրդի լայն զինման գործին, ընդունելով Շամ-Դուրացը իբրեւ կենտրոնավայր, կապելով դրա հետ էրզրումի եւ Բիթլիսի յարակից շրջանները,

գ) Կազմել երկրի մէջ այդ նպատակով յատուկ գնդակավար Մարմին,

դ) Անհրաժեշտների դէպքում եւ քաղաքական պատուաւոր մտածումներին՝ ամէն յեղափոխական ակտիւ ֆայլեր, Դաշնակցութեան Խորհրդի համաձայնութեամբ:

Ե.— Վռամեան – Անգրաեիկի բանաձեւը.

Երկրի կացութեան եւ ապստամբական ձեռնարկներու մասին բոլոր բերուած տեղեկութիւնները լսելէ ետք՝

Ժողովը որոշեց

1) Փութով եւ անյապաղ առաջ տանել Տարօն–Վասպուրականի զինումը, յատկացնելով առաջնական եւ դրամական բացառիկ միջոցներ, խոյս տալով սակայն բոլոր այն երեւոյթներէն, որոնք գրգռելով կառավարութիւնը, կրնան վաղաժամ վիժեցնել զինման գործը եւ ապիտակեր ըլլալ ժողովրդին:

2) Կազմակերպել եւ ժողովրդական միջոցներով զինել Տարօն – Վասպուրականի սահմանակից հայաթափ վիլայէթները, ոչ միայն ժողովուրդը չարդելու պատահականութեան միջոցին անպատրաստ չբռնուելու, այլեւ անոնցմէ կառուլ ուժեր հայ–պայքարի համար առժամեայ վայրի:

3) Չարդերու, ընդհանուր զինաթափութեան կամ յոգեւոր–կան չնախատեսուած պատահարներու առեւ անպատրաստ չգտնուելու համար նրկրէն դուրս պատրաստ ուժեր կազմակերպուած ունենալ, որոնք շարժումի մէջ կը դրուին երկրի ներքին ուժերուն օգնելու:

4) Ժողովը Տարօն–Վասպուրականի զինման ու կազմակերպութեան գործը կը վստահի մէկ լիազօր Գաստախտանու Մարմնի մը, բաղկացած ձեռնհաս եւ հեղինակաւոր ընկերներու զօրեղ խմբէ մը, որ լիազօր կը կառավարէ զինման, կազմակերպման եւ ներքին բոլոր ձեռնարկները, միշեւ յատուկ Ընդհանուր Ժողովը:

Զ.— Քիւրտեան բանաձեւը.

«Նկատելով որ բուրբ կառավարութիւնը ամէն գծով հին եւ ապօրինի միջոցներով եւ բռնարարքով կը ձգտի Հայաստանի մէջ հայ ժողովուրդը բոլորովին ոչնչացնել, ապահովելով այսպէս ամէն դատին եւ գոյութեան մասնակցութիւն ունեցած մը տալ·

Նկատելով որ յեղափոխութիւնը իր տարիներու գործունէութիւնը բոլորած է այդ հողին վրայ եւ իր raison d'être հիմնուած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի գոյութեանը վրայ, ապագայ բռնարարական եւ տնտեսական ազատագրութեան ձգտումով,

Նկատելով ակներեւ «ազգային վտանգը», որ օրէ օր մահացու եւ ծանր կերպով զգալի կ'ըլլայ եւ կը սպառնայ,

Նկատելով որ ներքին եւ արտաքին նորանոր հանգամանքներ եւ առտարներ ուշ կամ կանուխ կարող են ազդել մեր դատի ճակատագրին վրայ,

Նկատելով հայ ժողովրդի օրհասական եւ գահավէժ դրութիւնը, որուն միակ փրկութիւնը զօրեղ եւ լուրջ ապստամբական շարժումով մը կարելի է ձեռք բերել,

Ընդհանուր ժողովը կը վճռէ, որ Դաշնակցութիւնը, հատուտարիմ իւր սկզբունքին, իր գլխաւոր ուշադրութիւնը կենտրոնացընէ այդ կենսական կէտի վրայ եւ *կարուկ, անյապաղ* ու *ամէն–ջնական* կերպով ձեռնարկէ լրիւ, լուրջ եւ հզօր պատրաստութեան, չնայելով ոչ մէկ զոհողութիւն մօտալուտ կամ հեռաւոր ռ՛րեւէ պատահականութեան առջեւ յանկարծակիի չգալու համար. երկրորդ՝ երբ իմիզիմը պատրաստ կը զգայ ռրեւէ յարդ հարուած մը ընելու, օգտուելի ներքին կամ արտաքին ռրեւէ յարմար եւ ձեռնպաստաւոր րոպէներէ, ապստամբական–յարձակողական դիրք բռնելու համար»:

Ե.— Զաւրեանի կարծիք–բանաձեւը.

Վերջին տարիներում Թրքահայաստանում տեղի ունեցած դէպքերը, այնտեղ տիրող լիակատար տնտեսական ճգնաժամը, սովը եւ նրան յաջորդող մահացութիւնները, ամբողջ ընտանիքների բոլի գաղթերը կամ տղամարդկանց պաշտպանութիւնը օրուայ պարէնը հայթայթելու համար: Հայութիւնը Տաճկահայաստանում տարեց–տարի սպառում է եւ այդ սպառումը այնքան էլ դանդաղութեամբ չէ կատարում, ինչպէս այդ թուում է քննիչներից մէնչ: Ստացուել է բոլորովին հակառակը այն բանի, ինչ որ սպառում էր կուսակցութիւնը իւր գործունէութիւնից: Այս բոլորը տեսիլում են խիստ ճնշադատութեամբ վերաբերուել անցեալ տեսնելիկին: Եւ երբ ամէնքը չեն եղել այն խոր համոզմամբ, որ պէտք է այդ տեսիլը փոխել, յամենայն դէպս նրա հիմնական վերաճնութիւնը պատմական անհրաժեշտութիւն է դառել:

Մեր տեսիլի խնդիրը շատ հին է չօշափուած կուսակցութեան գրականութեան մէջ եւ շատ պարզուած չէ հենց այստեղ ներկայ գտնուող անդամներին: Այս խնդիրը չսխազմից լուրջ է, մանաւանդ ի ճնտի ունենալով Տաճկաստանի ժողովուրդների յեղափոխական շարժումը, որը չէ կարելի հաշուի չառնել: Այդ շարժումը կարող է հայերի համար թէ՛ շատ օգտակար եւ թէ ընդհակառակը շատ վնասակար հետեւանքներ ունենալ: Մեր անցեալ սխալների կամ յաջողութիւնների մասին մի որոշ գաղափար կազմելու համար մեզ չունենք զեկուցումներ, որոնք ընդգծէին բոլոր դէպքերը:

Այն օրից ի՛ր կուսակցութիւնը երբեմն է եղել Տաճկահայաստանում՝ ցուցմունքներ չունի այն մասին, թէ ինչո՞վ են զեկավարուել Ընդհանուր ժողովները ապագայի համար գործունէութեան եղանակ որոշելիս, ինչպիսի՞ հէքեաթներ [մտերիմ, գաղափարներ] եւ յոյսեր են դրանք կազել այդ գործունէութեան եղանակի հետ եւ թէ ինչո՞ւ մեր գործը յաճախ անյաջողութիւնների եւ պոգրոմների [չարդ, կոտորած]: Արդեօք մեր այս ապստամբութիւնների պատճառները այնպիսի անակնկալներ էին, որոնց չէր կարելի կանխատեսել, թէ՞ դրանց պատճառները այնքան սխալներ են, որոնք ծագում են մտածելու չհամակերպումից, տեղական պայմանների անգիտութիւնից. կամ գուցէ մեր անյաջողութեանց մէջ ընկնում է առաջին անհատների կամ խմբերի վրայ: Առանց մեր 16 տարուայ գործունէութեան վրայ մի յետադարձ պատմական հայեացք ձգելու չէ կարելի որեւէ որոշում կայացնել՝ առանց մեր սխալների մէջ ընկնելու: Կուսակցութիւնը թերեւս գտնելու է մի տեսակ պատմական գործունէութիւնից միւսին անցնելու շրջանում, այդ պատճառով նախեան նրանց ճնշութեան առնելը, իսկ որ գլխաւորն է՝ նախեան որեւէ նոր որոշում կայացնելը, հարկաւոր է նաեւ լուրջ ուսումնասիրել հայոց հարցի դրութիւնը թէ՛ Հայաստանում, թէ՛ Հայաստանից դուրս — Եւրոպայում, համաձայն այն ծրագրի, որ մենք այստեղ մշակելու ենք: Մինչեւ այսօր թէկուեւ մենք գործել ենք որոշ ուղղութեամբ, սակայն մեր գործողութիւնները եղել են սիմպտոմատիկական [ախտանշանական], սպրադիական [պատահական]: Այսպես այլեւս շարունակել չէ կարելի: Այս պատճառով էլ, գիտակցելով այն պատասխանատուութիւնը, որ ընկնում է պատգամաւորների վրայ հետագայ օրհասական դէպքերի համար, Ընդհանուր ժողովը իր խղճի մաքրութեան համար պէտք է յետաձգի այս խնդրի ընդունելութիւնը միեւնոյն յաջորդ Ընդհանուր ժողովը: Նոր Ընդհանուր ժողովը պէտք է լինի արտակարգ եւ ներքրուած բացառապէս այս հարցին եւ այնտեղ պէտք է մասնակցին հնարաւորին չափ շատ թուով տեղեկացուցիչներ՝ եկած հեռու երկրի ներսից:

Այժմ Ընդհանուր ժողովը պէտք է իսկոյն եւեթ ընտրէ երկու յանձնաժողով ճակատ առ ճակատ հարցերից, որոնք պէտք է ներկայացնեն արտակարգ Ընդհանուր ժողովին տպագրած զեկուցագրեր:

Առաջին յանձնաժողովը պէտք է մշակէ հետեւեալը՝

Կուսակցական բոլոր ձեռնարկների մշակութիւնը.

1· *Գաղափարական մասը.*— կուսակցական ձեռնարկների եւ դէպքերի ներարկման ժամանակագրական կարգով եւ նրանց պատճառական լուսաբանութիւնը:

2· *Ժողովրդի զինումը.*— Ի՞նչպէս է եղել զինումը, ո՞րտեղից է եկել զէնքը եւ ո՞րքան, ո՞րտեղից է փող ստացուել եւ ի՞նչքան, ի՞նչպէս է եղել ժողովրդի վերաբերմունքը դէպի զէնքը վերջին 16 տարուայ ընթացքում եւ ի՞նչպէս է այդ վերաբերմունքը ներկայումս:

3· *Թուրք կառավարութեան ձեռք առած միջոցները.*

4· *Ներպախոական գործունէութիւն.*— Ի՞նչ ազատակներ եւ իդէալներ են անցկացրել ժողովրդի մէջ կուսակցական գործունէութեան սկզբին: — Ներպախոական ձեռնարկներ, նրանց նպատակը: Հիմնական իդէալները եւ հետեւանքները: — Ի՞նչ է իւր անյաջողութեան պատճառը: — Ո՞վ է պատասխանատուն, որ Ընդհանուր ժողովի ծրագրով այս կամ այն ձեռնարկը չէ իրականացել·— առաջին անհատնի՞ն են պատասխանատուն, ժողովրդի տրամադրութի՞ւնը, զաղափարական հանգամանքնե՞րը, թէ՞ որեւէ այլ բաղադրիչ:

5· Ի՞նչպէս պէտք է հասկանալ հայ ժողովրդի յեղափոխական լինելը եւ ի՞նչ ուղղութեամբ ճա կարող է եւ պէտք է երեւան գայ:

6· *Եւրոպայի եւ հայ ժողովրդի հարեւան ազգերի վերաբերմունքը դէպի մեր չարերը.* Եւրոպայի անտարբերութեան եւ մահմեդական–ների բշնամութեան պատճառները: Արդեօք կուսակցութեան գործունէութեան մէջ սխալներ չե՞ն եղել, որոնք կարող–ացին ուրիշների մտքի եւ զգացմունքի այդ ուղղութեան համար աւելի լինել·— կարելի՞ է դրանից որոշել որեւէ ձեռնարկի բնաւորութիւնը կամ մտածելը, եթէ միեւնոյն ժամանակ այդ մտածելը համապատասխանաբար, եթէ միայն ժողովուրդը պատրաստ չէ այդ ձեռնարկի համար եւ թէ՛ չէ ընդունում դէպի այդ ձեռնարկը:

Երկրորդ ճանաչնաժողովը պէտք է կազմէ զեկուցում Տաճկահայաստանում ապրող ժողովուրդների տնտեսական դրութեան մասին, նրանց փոխադարձ յարաբերութեան եւ փոխադարձ ներգործութեան մասին՝ տնտեսական, բաղաքական եւ փիզիքական ուժի կնատումներով: Նա պէտք է մշակէ հարցարձերը երկրի կարեւոր կազմերը ուղղելու համար, որպէսզի այնտեղից ստացուի հարկաւոր տեղեկութիւնները՝ ոչ միայն հայ ժողովրդի մասին, այլ հնարաւոր եղածին չափ ճաեւ հարեւան մահմեդական ժողովուրդների մասին:

Ազգարական [հողային] հարցի ճնութիւնը:

Ազգարական հողի վրայ եղած կռիւները զանազան ազգութեանց պատկանող գիւղացիների միջեւ մի կողմից եւ գիւղացիների ու կալուածատէրերի միջեւ միւս կողմից:

Կառավարութեան դերը այս խնդրում:

Հայերի հարեւան ժողովուրդների դերը ընդհանուր յեղափոխութեան մէջ:

Կ՛ը արդեօք միջոցներ մտածելու բոլոր ժողովուրդներին կառավարութեան դէմ, թէ ոչ:

Կուսակցութեան տակտիկը առաջիկայում եւ հեռաւոր ապագայում:

Անհրաժեշտ է, որ արտակարգ Ընդհանուր ժողովի համար կուսակցութեան գրականութիւնը որճան կարելի է մանրամասնօրէն զբաղուի այս խնդիրներով, որպէսզի կուսակցութեան անդամները խորը կերպով ուսումնասիրեն այդ հարցերը: Յանկալի է այնպէս, որ առաջին յանձնաժողովին չպատկանող անհատներ եւս տպագրութեան տալին իրենց կշռադատութիւնները եւ անհրաժեշտ է, որ Ընդհանուր ժողովից երկու ամիս առաջ այդ բոլոր զեկուցումները ու միւրերը ուղարկեն պատգամաւորներին:

Մեր Ընդհանուր ժողովի համար, անկասկած է՛ որ սովը եւ սարսափելի տնտեսական դրութիւնը ոչնչացնում են այժմ հայերին. ինչ յեղափոխական ձեռնարկներ էլ վճռէ ժողովը հիմա, ներքան չեն կարող այժմ իրագործուել, երբ ժողովուրդը այդպիսի դրութեան մէջ է· այդ պատճառով էլ ամենից առաջ պէտք է մտածել այն մասին, թէ ինչպէս փրկենք ժողովուրդը այժմ վերջնական ֆայլայումից: Սրա համար էլ Ընդհանուր ժողովը պէտք է վճռէ, մենք ոնր ժողովը ոչ մի ակտիւ ձեռնարկ չանել եւ պէտք է յատկացնէ 500 հազար ռուբլի ժողովրդի տնտեսական կացութիւնը բարելաւելու համար միջոցներ ձեռք առնելու: Այս բանը կարելի է մի այլ կողմից եւս: Դա կ՛ամրապնդէ տաճկահայերի եւ կովկասահայերի կապը: Ինչ վերաբերում է հիմնադաշտագործութեան համար պատրաստուելու՝ պէտք է բոլոր միջոցները գործ դնել, որպէսզի ժողովրդի զինումը առաջ գայ յաջողութեամբ եւ գիտակցուած՝ ժողովրդի կողմից:

Այս Ընդհանուր ժողովում ընտրել Տաճկահայաստանի համար առանձին Կ· կոմիտէ, որը եւ պէտք է վարէ բոլոր տեղական գործերը:

47ՐԴ ՆԻՍՏ (23 Մարտ, ւսուսւօս)

Ներկայ են 25 ժողովական:
Նախագահում է՝ Թոքչեան:

Օրակարգն է (Սեբաստիայում) «բոռուցիկ խմբերը» կազմակերպելու մասին, որ զեկուցանում է՝ ընկ. Անդրանիկը:

Անդրանիկ.— *Սեբաստիայում կայ 280·000 հայ բնակչութիւն: Վաճառականութիւնը զարգացած է եւ ժողովուրդը տնտեսապէս բարւօք վիճակի մէջ է գտնուում. կարողանում է այնքան գէնք ձեռք բերել, որ պատրաստ է դիմադրել Թշնամուն (ինչպէս դիմադրեց կոտորածների ժամանակ): Սեբաստիայի չրջանում այ-*

ժըմ ժողովրդի ձեռքին լինի Թերեւս 4–500 հրացան. Շապին Գարահիսարում միայն կը գտնուի՝ մօտ 100 այնպէս, 200 ատրճանակ: Բայց չորքանը կազմակերպուած չէ, անուշադիր է Թողուած մեր կողմից: 17 տարուայ ընթացքում, Դաշնակցութիւնը մնայուն գործ չէ ունեցել այնտեղ. ուղարկուել են միայն հատ ու կտոր Թղթակիցներ: — Հարկաւոր է մարդիկ ուղարկել. 8 հոգի (որոնցից 6ը լինելու են լեզուի գործիչներ): Այդ մարդիկ կը մտնեն Սեբաստիա եւ կ'աշխատին մի կողմից ժողովրդի գիտակցութիւնը զարգացնել, միւս կողմից Թուրքիկ խմբեր կազմել: Թուրքիկ խմբերը չատ կարեւոր են եւ պէտք է կազմուին յատկապէս տեղական ուժերից: — 3 հոգի արդէն պատրաստակամութիւն են յայտնել՝ Սեբաստիա գնալ, միայն Թէ 800 ոսկի պէտք է տրուի նրանց՝ նախնական անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Տեղական լաւ ուժեր չատ կան, բայց փորձուած չեն. նրանց հարկաւոր է ղեկավարներ տալ: — Թուրքիկ խմբերը խաղաղ ժամանակ՝ կը զբաղուին իրենց առօրեայ գործերով. իսկ պէտք եղած դէպքում կազմ եւ պատրաստ դուրս կը գան՝ կարգադրութեան համաձայն:

Մանուկ (չէչոում է, որ անհրաժեշտ է կազմակերպել Սեբաստիան) — Մենք չատ նպաստաւոր պայմաններ ունենք այնտեղ գործելու. ժողովուրդը հարուստ է եւ սիրով նպաստներ է հասցնում գործող կազմակերպութեանը: Հնչակեաններն, օրինակ, այդ շրջանից առացել են 40·000 ոսկի:

Հարց է բարձրանում, որ հարկաւոր է կազմակերպել Ե՛ւ Դերսիմը, որը կից է Սեբաստիային:

Ջաւրեան — Ես համաձայն եմ, որ գուսակցութեան գործունէութիւնը տարածուի Ե՛ւ դէպի Դերսիմ, բայց մենք դեռ գազափար չունենք այդ շրջանի մասին. եղած պակասաւոր տեղեկութիւնները բաւական չեն, որպէսզի նրանց հիման վրայ մենք այսօրուայ որոշումներ կայացնենք: Իմ կարծիքով, նախ եւ առաջ հարկաւոր է ուղարկել Դերսիմ՝ միայն ուսումնասիրելու:

Ռոստոմ — Սեբաստիայում գործող խմբերը պէտք է աշխատեն ցոյց տալ տեղական մահմեդական տարրերին, որ մեր շարժումը ուղղուած է, ոչ Թէ իրենց դէմ, այլ կառավարութեան դէմ: Թուրքիկ խմբերը նպատակայարմար են այն առումիվ, որ նրանք կը ջլատեն՝ երկնկայում բնակող Թուրք զօրքի ուժերը. Թէ, օրինակ, վաղուրկանում ապստամբութիւն ծագի, երկնկայից պէտք է զօրք ուղարկուի: Բայց քանի որ Սեբաստիայի Թուրքիկ խմբերը միւս կողմից ցոյցեր են անելու, — զօրքը բաժնուելու է երկու մասի եւ այդպիսով վաղուրկանի վրայ գնացող ուժերը որոշ չափով կը Թուլանան:

Միհեռեան, Մալումեան եւ Վահագն չեչոում են, որ Սեբաստիայում պէտք է կազմակերպութիւն առաջ բերել:

Վարդան — Ասաք չկայ, մենք ուզում ենք, որ բոլոր հայաբնակ վայրերը կազմակերպուած լինեն: Բայց արդեօք միշտ կ'ունենա՞նք՝ Սեբաստիայում եւս լայն գործունէութիւն սկսելու: Մենք պէտք է սահմանափակենք մեր գործունէութեան ասպարէզը, մեր ունեցած ուժերին համապատասխան, այսպիսով գուցէ աւելի չուտ հասնինք որեւէ դրական արդիւնքի: Ոչ ոք հատակ չէ, որ Սեբաստիայում կազմակերպենք ժողովուրդը, բայց աչքի առաջ ունենալով մեր նիւթականի սղութիւնը՝ մենք հաղիւ Թէ կարողանանք այդ անել: Եթէ, սակայն, բացառապէս տեղական միջոցներով կարելի լինի գործը առաջ տանել, դէմ ոչինչ չունեմ:

Մաշուր — Ես խնդրում եմ ժողովից, առանձին ուշադրութիւն դարձնել վարդանի առաջարկների վրայ: Մենք պէտք է միանգամ ընդ միշտ ձեռք քաշենք այն աւանդական ձգտումներից, որ վերջին տարիներս ունեցել է Դաշնակցութիւնը, այն է՝ ընդլայնել իւր գործունէութիւնը: Մեր հատուկտոր ուժերով ուզում ենք ամէնուրեք գործ սկսել, որը եւ մեռում է կիսատ պռատ. մենք միշտ վերեւից ենք սկսում կազմակերպել եւ ոչ Թէ հետեւում ենք կեանքի պահանջներին:

Բանաձեւեր են առաջարկում Վարդան, Վահագն, Մալումեան եւ Թոփչեան:

Ջայներն մեծամասնութեամբ անցնում է Վարդանի բանաձեւը, որ հետեւեալն է.

«Ի նկատի ունենալով ընկ. Անդրանիկի առաջարկը եւ հարցի որոշումը, դրսէն ընկերներ ուղարկել Սեբաստիայ շրջանը, դիւրութիւններ տալով ճոպան (համապարհածախս եւն.) տեղական կազմակերպութիւն առաջ բերելու. յետոյ մարտական խմբեր կազմակերպել եւ զինել տեղական միջոցներով»:

Թոփչեանի բանաձեւը, որ առաջում է 15 ձայն, հետեւեալն է.

«Ընդհանուր ժողովը, լսելով ընկ. Անդրանիկի զեկուցումը Սեբաստիայ շրջանում կազմակերպութիւն եւ ինքնապաշտպանութեան խմբեր առաջ բերելու մասին, միեւնոյն ժամանակ աչի առած ունենալով ձայն խնդրի առթիւ հարիւրի կայացրած որոշումը, որ տակտիկ գործադրուած չէ, կարծիքների փոխանակութենից յետոյ որոշեց՝

1. Ճառուկ ընկերներ ուղարկել ցանկալի պրոպագանդ մղելու, կազմակերպութիւն եւ ինքնապաշտպանական խմբեր առաջ բերելու համար մեր ծրագրի համաձայն, առանց որեւէ ակնթարթ ձայի իրաւից կազմից:

2. Մեր գործունէութիւնը այդ վայրում առնչի ընդհայնելու անասկնից ուսումնասիրի տեղական պայմաններից, հետեւելով ընդհանուր ծրագրին ներկայացնելու համար:

3. Այդ վայրերում վտանգաւորութիւն ներշնչող կազմակերպութիւն առաջ գալուց յետոյ, երբ զինման գործը ամբողջապէս կազմուի, կատարելագործութիւնը պէտք է օգնութեան անհրաժեշտութիւն զգալուի, կատարելագործութիւնը պէտք է օգնութեան հասնի փոխադարձաբար մի գումար տալով»:

Վահագնի բանաձեւը առաջում է 10 ձայն, եւ հետեւեալն է.—

«1. Դաշնակցութիւնը պարտաւոր է միջոցներ ձեռք առնել կազմակերպիչներ գրկելու Սեբաստիայ նահանգը, ինքնապաշտպանութեան հարի վրայ, պատրաստելու համար այդ նահանգի հայ ժողովուրդը:

2. Դաշնակցութիւնը որոշ գումար տրամադրելի պիտի ըլլէ փոխառութեամբ ձեւով, օգնելու համար զինման գործին:

3. Այդ կազմակերպիչներուն կը տրուի որոշ յատակագիծ մը, ուսումնասիրելու համար այդ գաւառներու յեղափոխական դերը ապագայ գործունէութեան մէջ, ներկայացնելու առաջիկայ Ընդհանուր ժողովին:

4. Այդ նահանգի կազմակերպական իրաւասութեան խնդիրը կը լուծուի, երբ գոհունի կազմակերպութեան ընդհանուր ձեւը»:

Մալումեանի բանաձեւը չէ քուէարկուած, Թողնուելով հետագային, երբ կը լինի հարց առհասարակ «Թուրքիկների խնդրի» մասին: Ահա՝ բանաձեւը.

«Ընդհանուր ժողովը ընդունելով Սեբաստիայի շրջանում թուրքիկ խմբեր ունենալու մասին եղած զեկուցումը, որոշեց՝

ա) Սկզբունքով ընդունել թուրքիկ խմբերի օգտակարութիւնը այդ շրջանում, կազմուած տեղացի ուժերից, ընդատակ ունենալով յեղափոխական գիտակցութեամբ բերել այդ շրջանի բանակած խոշոր հայ ազգաբնակութիւնը, զինել նրան եւ պաշտպանել հալածուած ժողովուրդը տմէն տեսակ բռնութիւնների դէմ.

բ) Հրահանգել, որ այդ խմբերը, իրրեւ հիմնական գործունէութեամբ, ընդատնի տեղական բոլոր ազգերի մերձեցման, ուղղելով իրենց հարուածները գլխաւորապէս կառավարութեան պաշտօնեաների եւ ամէնտիր բոլոր ժողովուրդների թշնամի տարրերի դէմ.

գ) Ցանձնել վայրի ուսումնասիրութեան եւ կոմիտէի կազմի գործը այնտեղ հաստատուելիք տեղացի կազմակերպիչ ընկերներին.

դ) Ցատկացնել այդ գործին կազմակերպութեան միջոցներից 10 հազար ֆրանկ»:

48ՐԴ ՆԻՍՏ (24 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Վահանեան:

Ներկայ են՝ 18 պատգամաւոր:

Բացակայ են՝ Իսահակեան, Մաշուր, Միհեռեան, Մանուկ, Սահիմեան, Սաքօ, Գուսան, Վարդան:

Ժողովականները չատ զանգատ են հաւաքւում, այնպէս որ հարկ. ժամը 12½ին հնարաւոր է լինում նիստը բանալ: Բացակայ են 8 ընկերներ:

Նախորդ բանաձեւերի վերլուծական քուէարկութիւնը յետաձգւում է մինչեւ երկրի ընկերները կարողանան իրենց կարծիքը յայտնել այդ մասին:

Ընկ. Մաշուրեան զեկուցում է անում Տեռորի մասին: Ահա մի քանի համառօտ քաղուածքներ զեկուցումից:

«Ռուսական յեղափոխութեան փայլուն դէմքերից մէկը Ժելեաբով, 1881ի դատավարութեան միջոցին՝ դիմեց դատաւորներին հետեւեալ խօսքերով.— «Եթէ դուք, պ. պ. դատաւորներ, նայէք մեր յեղափոխութեան տարեգրութեան, կը տեսնէք, որ մենք միշտ չենք եղել ռումբի կողմնակիցներ. մենք էլ ունեցել ենք մեր պատանեկութիւնը, լի վարդագոյն երազներով, մարդասիրութեամբ, սակայն այդ օրերը անցան գնացին եւ մեղաւորը մենք չենք...»: Ես ակամայ այս խօսքերն եմ յիշում տեսնելով մեր իրականութիւնը: Սրանից երկու տարի առաջ, մեր լաւագոյն ընկերներից մէկը, Մինքայէլեան, երբեմն գիւղական խաղաղ ուսուցիչ, հեզահամբոյր, սիրահար մեղմութեան, օժտուած փափուկ, սիրող սրտով, ղոհ գնաց ռումբին, պայքարելիկ վտանգաւոր փորձերի ժամանակ: Եւ եթէ այսօր ես էլ, մէկը ձեր այն ընկերներից, որոնք ցայժմ յեղափոխութեանը ծառայել են գլխաւորապէս գրչով, դարձ եմ առաջարկելու տեռորական ծրագիր, դա պիտի համարել բնորոշ մի արտայայտութիւնը մեր բացարձակ իրականութեան, արձագանգ այն մարտական հոգեբանութեան, որ տիրում է մեր ամբողջ կեանքի վրայ»:

Ապա զեկուցանողը անցաւ տեռորի մեկնաբանութեանը, համաձայնելով մեկնեց նրա փիլիսոփայական կողմը, բացատրեց այլեւայլ քաղաքական կուսակցութիւնների հայեցակէտերը եւ կանգ առաւ այն տեղի վրայ, որ քաղաքական արդի պայմաններում դրուած է տեռորական գործունէութեան: «Այդ դերը, որ մինիմումի է հասել արեւմտեան երկրներում, ուր հաստատուած է իրաւակարգ, դեռ չատ խոշոր է, տարաբախտաբար, բռնապետութեան եղբայրակայ երկրների մէջ, ինչպէս է ցարական Ռուսաստանը եւ աւելի՛ն թուրքիան, մանաւանդ որ մասնայական ըմբռնումների գաղափարը այդ երկրներում դեռ սահմանափակ է, եւ հետեւաբար, այն ինչ պէտք է իրագործուէր համայնօրէն, պիտի արուի անհատների, ջոկ-ջոկ ըմբռնումների ձեռքով: Մենք ամէնքս կը ցանկանայինք

49ՐԴ ՆԻՍՏ (24 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Վահանեան:

Ներկայ են՝ 24 պատգամաւոր:

Բացակայ են՝ Շահխաթունեան, Անդրանիկ (հիւանդ):

Նախորդ բանաձեւերի վերլուծական քուէարկութիւնը յետաձգւում է մինչեւ երկրի ընկերները կարողանան իրենց կարծիքը յայտնել այդ մասին:

Ընկ. Մաշուրեան զեկուցում է անում Տեռորի մասին: Ահա մի քանի համառօտ քաղուածքներ զեկուցումից:

«Ռուսական յեղափոխութեան փայլուն դէմքերից մէկը Ժելեաբով, 1881ի դատավարութեան միջոցին՝ դիմեց դատաւորներին հետեւեալ խօսքերով.— «Եթէ դուք, պ. պ. դատաւորներ, նայէք մեր յեղափոխութեան տարեգրութեան, կը տեսնէք, որ մենք միշտ չենք եղել ռումբի կողմնակիցներ. մենք էլ ունեցել ենք մեր պատանեկութիւնը, լի վարդագոյն երազներով, մարդասիրութեամբ, սակայն այդ օրերը անցան գնացին եւ մեղաւորը մենք չենք...»: Ես ակամայ այս խօսքերն եմ յիշում տեսնելով մեր իրականութիւնը: Սրանից երկու տարի առաջ, մեր լաւագոյն ընկերներից մէկը, Մինքայէլեան, երբեմն գիւղական խաղաղ ուսուցիչ, հեզահամբոյր, սիրահար մեղմութեան, օժտուած փափուկ, սիրող սրտով, ղոհ գնաց ռումբին, պայքարելիկ վտանգաւոր փորձերի ժամանակ: Եւ եթէ այսօր ես էլ, մէկը ձեր այն ընկերներից, որոնք ցայժմ յեղափոխութեանը ծառայել են գլխաւորապէս գրչով, դարձ եմ առաջարկելու տեռորական ծրագիր, դա պիտի համարել բնորոշ մի արտայայտութիւնը մեր բացարձակ իրականութեան, արձագանգ այն մարտական հոգեբանութեան, որ տիրում է մեր ամբողջ կեանքի վրայ»:

Ապա զեկուցանողը անցաւ տեռորի մեկնաբանութեանը, համաձայնելով մեկնեց նրա փիլիսոփայական կողմը, բացատրեց այլեւայլ քաղաքական կուսակցութիւնների հայեցակէտերը եւ կանգ առաւ այն տեղի վրայ, որ քաղաքական արդի պայմաններում դրուած է տեռորական գործունէութեան: «Այդ դերը, որ մինիմումի է հասել արեւմտեան երկրներում, ուր հաստատուած է իրաւակարգ, դեռ չատ խոշոր է, տարաբախտաբար, բռնապետութեան եղբայրակայ երկրների մէջ, ինչպէս է ցարական Ռուսաստանը եւ աւելի՛ն թուրքիան, մանաւանդ որ մասնայական ըմբռնումների գաղափարը այդ երկրներում դեռ սահմանափակ է, եւ հետեւաբար, այն ինչ պէտք է իրագործուէր համայնօրէն, պիտի արուի անհատների, ջոկ-ջոկ ըմբռնումների ձեռքով: Մենք ամէնքս կը ցանկանայինք

տեսնել Սուլթանին կախաղան բարձրացած, արտայայտուելիքը մասսայական հատուցման, սակայն քանի որ այդ չկայ, նա պիտի մեռնի գնդակից, — արտայայտուելիքն անհատական հատուցման»:

Ուրուագծելով տեռորական չարժումը Ռուսաստանում, եւ ցոյց տալով այն խոշոր ազդեցութիւնը, որ ունեցան Ստեպնեակ — 1878, Ժելուբովին — 1880, Ժելեաբով — 1881, Կեորովակայա — 1881, Կարպովիչ — 1901, Բալմաշեւ — 1902, Կալեայեւ — 1905 եւ տեռորական ուրիշ հերոսներ, դեկուցանողը անցաւ ահաբեկչական գործողութիւններին՝ հայկական քաղաքական չարժման, յատկապէս Դաշնակցութեան մէջ՝ ըէ՛ կովկասում եւ ըէ՛ Թուրքիայում: «Մեր տեռորական գործողութիւնները չեն ունեցել քաղաքական սիստեմատիկ բնոյթ, հիմնուած որոչ տեսակէտի վրայ. նրանց մեծ մասը ուղղուած են եղել մանր մասնիչների, լրտեսների եւ չաճախ վաչխառուների դէմ, եւ միայն վերջին տարիներս կովկասում եւս ունեցան ազդեցիկ արտայայտութիւն, գլորելով այնպիսի պաշտօնեաներ, ինչպէս՝ Նակաչիձէ, Անդրէեւ, Բոգոլեպովի, Սախարով, Բրկով»:

Զեկուցման մէջ բերուած էր տեռորի մի փոքրիկ հաշիւ, որ վերաբերում էր 1904–1906 թուին: Այդ հաշուից երեւաց, որ տեռորի դէպքեր եղել են Շուշուայ չրջանում՝ 20, Բագու՝ 8, Գանձակ՝ 11, Թիֆլիս՝ 5, Ալեքսանդրապոլ՝ 7, Կարս՝ 8, Երեւան՝ 15, Ռոստով՝ 2, Վլատիկաւկաս՝ 4, Բաթում՝ 2, Աստրախանական՝ 3, Վասպուրական՝ 12, Սասուն–Մուշ՝ 17:

Բացատրելով մանրամասն կերպով յեղափոխական այն խոշոր արդիւնքը, որ պիտի ունենայ քաղաքական սիստեմատիկ տեռորը Թուրքիայում, զեկուցանողը՝ ներկայացրեց մի նախագիծ, որի էական կէտերը հետեւեալներն են. 1) Կազմել տեռորիստական կենտրոնական գործօն կոմիտէ, 2) ընդունել իբրեւ կենտրոնատեղի՝ Վոլիսը եւ գործունէութեան վայր՝ Թուրքիայի ծովեզերեայ չրջանը, մայրաքաղաքը, եւ ի հարկին՝ Եւրոպան, 3) Տալ այդ գործին միջազգային բնոյթ, չաղկապելով այդ ձեւնարկի մէջ օսմանեան ռեժիմից դժգոհ բոլոր տարրերի ներկայացուցիչներին, 4) Ընտրել մի նախապատրաստական մարմին, թէ՛ գործի մանրամասները մշակելու եւ թէ կոմիտէն ստեղծելու համար:

Ապա սկսեցին հարցումներ ու վիճաբանութիւն:

Միհանեան.— Տեռորը անխուսափելի է մեր յեղափոխական գործունէութեան մէջ, բայց դժբախտաբար մինչեւ այժմ մեր տեռորը ուղղուած է եղել ազգային-ների [ազգակիցների ?] դէմ, մենք սպանել ենք լրտեսներ, դաւաճաններ եւայլն, մանաւանդ եղել են եւ տեռորներ դրամի պատճառով: Այդ պատճառով մեր ժողովրդի մէջ տարածուած է այն կարծիքը, որ մենք միայն հայեր ենք սպանում: Տաճկահայաստանում մենք չէինք կարող տեռորներ սկսել կառավարչական պաշտօնեաների դէմ, դա ցեղական բնաւորութիւն կը ստանար եւ կոտորած առաջ կը բերէր. նրանք եւս կարող էին, Ռուսաստանի պէս, սեւ հարիւրեակ հանել մեր դէմ: — Եւրոպայում էլ տեռորը աննպատակ է: Թէեւ ռուսները Եւրոպայում տեռորները արին, որի դէմ եւրոպական հասարակական կարծիքը չդողջեց, բայց տեռորի ենթարկուածները այնպիսի մարդիկ էին՝ որոնք անպաչտօն կերպով անցել էին Եւրոպա: Իսկ եթէ մենք տեռորը ուղղենք Եւրոպայում եղած տաճիկ դեսպանների դէմ, դրանով մենք մեր դէմ կը հանենք այն կառավարութիւնը, որի մօտ այդ դեսպանը ուղարկուած էր: Իւրաքանչիւր կառավարութիւն պատասխանատու է իր մօտ ուղարկուած դեսպանի համար: — Տաճիկը մահից վախեցող է. եթէ մենք մի քանիսին տեռորի ենթարկած լինէինք, միւսները սարսափած իրենց հարուածը կ'ուղղէին դէպի ընդհանուրը, որովհետեւ չդիտէին թէ ո՞րտեղից պիտի դայ իրենց վրայ յարձակումը: Մենք կարող ենք դրան միջազգային բնաւորութիւն տալ, բայց դրանով էլ մեր դատի ազգային բնաւորութիւնը կ'ոչնչանայ: Ուստի, մենք կարող ենք տաճիկ յեղափոխականներին զէնք եւ ռումբ տալ եւ քաջալերել. նրանց սպանած մարդիկ մեծ մասամբ մեզ համար էլ վնասակար են: Տեռորիզմը Տաճկաստանում յաղթող հանդիսացնելու համար, պիտի կազմակերպուի մի գաղտնի զօրեղ մարմնի ձեռքով. մարմնի գաղտնի լինելն է, որ ապահովեցնելու է կառավարութեանը: Պէտք է աշխատել, որ այդ մարմնի մէջ տաճիկներ լինեն:

Արամ.— Կ'ուզէի ընկ. Մալումեանի առաջարկած ծրագրի միջազգային բնաւորութեան անհրաժեչտութիւնը չեչտելու համար՝ մի քանի տեղեկութիւններ տալ գաւառի մասին: Գաւառներում տեռորները վերջացել են միչտ համայնական պատասխանատուութեամբ եւ ոչ թէ անհատական. մենք միչտ վախեցել ենք որեւէ տեռոր անելու, կարծելով, որ կոտորած առաջ կը գայ, թէ չէ մեզ ո՛չ տեռորիստներ են պակասել, եւ ոչ տեռորի ենթարկելու արժանի մարդիկ: Մասսաների վրայ ազդելու համար ամենալաւ միջոցը տեռորն է. միւս կողմից՝ դա ահաբեկում է տաճիկ պաշտօնեաներին եւ օրքին: Սխալ է, որ ասում են, թէ տաճիկները վախկոտ են. ընդհակառակը. նրանք չունին այն հաստատմական զգացմունքը դէպի կառավարութիւնը, ինչ որ եւրոպացի պաշտօնեաները: Միւս կողմից տաճիկ պաշտօնեաների եւ զօրքի մէջ ներկայ ռեժիմը այնպիսի զզուանք է առաջ բերել, որ նրանք այժմ հենց յանուն իրենց հայրենիքի չեն աչխատի պահպանել այդ ռեժիմը, ուստի եւ նրանց ահաբեկելը աւելի հեչտ է. այդ պատճառով էլ տեռորական գործողութիւնը Տաճկաստանում աւելի յաջողութիւն պիտի ունենայ եւ մեզ համար էլ լաւ հետեւանքներ: Պաշտօնէութիւնը Տաճկաստանում միչտ վախենում է յեղափոխականներից. նրանք կարծում են, որ յեղափոխութիւնը միչտ դամոկլեան սրի պէս կախուած է նրանց գլխին եւ անպատճառ պատժելու է իրանց. այդ է պատճառը, որ երբ մի տեղ յեղափոխութիւնը զօրեղանում է, դրանք սկսում են մեզ մօտենալ եւ ջնդել: Մենք պիտի աչխատենք տեռորը համայնական պատասխանատուութիւնից փոխադրել անհատականի. իսկ դա կը լինի, երբ տեռորական գործի ազգային բնաւորութիւնը դարձնենք միջազգային: Ես ոչինչ դէմ չունեմ, եթէ մեր արած տեռորը իրենց վերագրեն Թուրք յեղափոխականները, եւ Թուրքիկներ բաց Թողնեն այդ մասին: — Իմ առաջարկն է, առաջնութիւնը տալ Թուրք յեղափոխականներին: Երիտասարդ Թուրքեր ինձ ասել են, որ մենք երբեք առանձին չարժումներ չանենք, որովհետեւ ժողովուրդը տգէտ է եւ կարծում է, թէ մեղաւորը ամէն դովուրդը տգէտ է եւ կարծում է, թէ մեղաւորը ամէն դովուրդը տգէտ է եւ կարծում է, թէ մեղաւորը ամէն Սուլթանն է եւ ոչ թէ ռեժիմը: Երիտասարդ Թուրքերը ցանկանում են, որ մենք վարագոյրի յետեւից նրանց օգնենք, բայց մենք առանձին դուրս չգանք: Լաւ է որ մենք տեռորի կազմակերպման գործին միջազգային բնաւորութիւն տանք, նոյնիսկ գաւառներում:

Ռոստամ.— Ռուսաստանի քաղաքներում մեծ մասամբ ազգաբնակութիւնը խառն է, ուստի եւ կարելի է տեռոր անել եւ յարմարութիւն կայ Թագնուելու. իսկ Տաճկաստանում պաշտօնեան այնքան մատչելի չէ եւ չէ կարելի այնպէս հեչտութեամբ Թագնուել, ինչպէս դա այժմ լինում է Կովկասում: Ինչո՞ւ համար է յատուկ Տեռորական Մարմինը: Կովկասում, դա հասկանալի է, քանի որ այնտեղ արդէն կազմակերպութիւնը յայտնուել է, հետեւաբար յատուկ, գաղտնի մարմին անհրաժեչտ է: Իսկ Թուրքիայում դա կարեւոր չէ, քանի որ մեր մարմինները գաղտնի են եւ գործողութիւնների մի մարմնում միացած լինելը անհրաժեչտ է. ուստի այնտեղ առանձին Տեռորական Մարմին չպէտք է լինի, այլ գործը պէտք է մեր կազմակերպութիւնների ձեռքը լինի: Զարդերի սիստեմը կառավարութիւնը գործ է դնում նաեւ խմբական ընդհարումների դէպքում. սա ցոյց է տալիս, որ նա չկարողանալով յեղափոխականներին պատժել, կոտորում է անմեղներին: Այդ նոյն բանը արւում է այժմ Ռուսաստանում. երբ մի փողոցում մէկը սպանուում է, կառավարութիւնը ամբակոծում է ամբողջ Թաղը: — Զարդի վտանգը Թուրքիայում այժմ մի քիչ փոխուած է, մենք կարող ենք մի քիչ աւելի համարձակութեամբ դիմել տեռորի: Տաճիկ կառավարութիւնը այժմ գտնուում է մի վիճակում, երբ ամբողջ ժողովուրդը խօսում է ռեժիմի փոփոխութեան մասին: Եւ տեռորները այժմ կարող են արագացնել ռեժիմի փոփոխութիւնը, ինչպէս դա եղաւ Ռուսաստանում:

Զարեհան.— Ընդգծում եմ, որ Թուրքիայում չէ կարելի միայն իբրեւ հայ դուրս գալ եւ տեռոր անել. դա պիտի լինի միջազգային: Սկզբում, առժամանակ Թող մինչեւ անգամ հայ չմասնակցի տեռորներին, այլ լինին միայն օգնողներ: Եթէ տեռորները միայն հայերի կողմից լինին, դրանք կը կորցնեն իրենց քաղաքական նչանակութիւնը:

Մաշուր.— Երկրի դրութեան հետ լաւ ծանօթ չլինելով, չեմ կարող ոչինչ ասել տեռորական ձեռնարկների մասին Թուրքիայում: Բայց ես կ'ուզէի մի քանի խօսք ասել տեռորի էութեան մասին: Ընկեր Մալումեանը չատ անյաջող կերպով համեմատեց սոցիալիստ-յեղափոխականների տեռորական ակտերը, դաչնակցական տեռորական ակտերի հետ: Պէտք է այդ երկու տեսակի ակտերի ողն ու ծուծը չօչափել: Պատասխանատուութիւնը մեզանում ընդհանուր է դառնում, որովհետեւ տեռորիստը իւր գործը կատարում է, ոչ թէ համարձակ, ակնյայտնի կերպով, այլ Թաքուն, եւ չի բռնւում: Իսկ կառավարութիւնը իմանում է նրա ով լինելը, որ կուսակցութեան կամ ազգի պատկանելը եւ հնարաւորութիւն չունենալով տեռորիստին բռնելու, վրէժը առնում է անմեղներից: Այլ բան է Ռուսաստանում: Այնտեղ տեռոր կատարողը այնքան յեղափոխականացած է, այնքան գիտակից, որ ինքզինքը զոհում է եւ կառավարութիւնը նրան հնարաւորութիւն ունենալով պատժելու, այլեւս ընդհանուր պատասխանատուութեան չէ ենթարկում ժողովրդին: Իսկ մեր մէջ մէկը չեղաւ, որ խփէր եւ կանգնէր, որպէսզի մասսան պատասխանատու չմնար: Վարանդեայ դէպքերից յետոյ, օրինակ, մէկը չգտնուեց, որ համաձայնէր տեռորի ենթարկել էրմաեւին եւ միւսներին:

Սեպուհ.— 1895 թուին Խնուսում երկու քիւրտ տեռորի ենթարկուեցին՝ մէկը Հալի Հայտար չէյխը, իսկ միւսը՝ Օղոյի լամուկը: Թէեւ հաստատ իմացուեց, որ դրանց սպանողները հայեր են, բայց դրա պատճառով հայկական կոտորած չեղաւ: Վերջը միայն, երբ կոտորածները սկսուեցին, ոմանք կապում էին սա այն դէպքի հետ: Մշոյ դաշտում եօթերի եւ Անդրանիկի կատարած տեռորներից յետոյ կազմուեց սեւ հարիւրեակ եւ յարձակուեց փիւղի վրայ, բայց ընդհանուր ջարդ չեղաւ: Եթէ մենք ծովեզերեայ քաղաքներում օտարների հետ միացած տեռորներ անենք, դա չատ նըպատակայարմար է: Թող պաշտօնեաները դրանով լաւ իմանան, որ յեղափոխականի սուրը միչտ կախուած է իրանց գլխի վրայ: Դրանք այդ քաղաքներով են անցնում իրենց պաշտօնատեղին գալիս եւ գնալիս. նրանք կը զգուչանան եւ իրենց լաւ կը պահեն գաւառներում:

Խահակեան (գրաւոր).— Ինչպէս երեւում է, տեռորի սկզբունքային հիմնաւորման մասին այստեղ խօսելու կարիք չկայ. կուսակցութիւնը իւր ծագման օրից եղել է այն քաղաքական պատմական աչխարհա-

հայեացքի ազդեցութեան տակ, որն ասում է, թէ պատմական հասարակական էւոլուցիան [հոլովոյթը] կոյր տարերային ուժերի շարժում չէ. այլ որ այդ էւոլուցիայի մէջ անհատների կամքն ու տրամադրութիւնը խոշոր տեղ ունի: Այստեղ այս պատմահայեցողութեան դէմ հիմնական առարկութիւններ չեն լինում, հետեւաբար տեռորի սկզբունքային հիմնաւորման համար մի առանձին կարիք չէ ծագում: Միայն կ'ուզէի մի ուղղում մտցնել ընկ. Մալումեանի այն արտայայտութեան առթիւ, թէ տեռորը հարկաւոր է միայն այն երկրներում, ուր քաղաքական իրաւակարգ չկայ. իսկ այն երկրներում, ընդհակառակը, ուր իրաւակարգ կայ՝ այնտեղ տեռորը անպէտք է: Այս տեսակէտը սըխալ է. տեռորի նշանակութիւնը հետզհետէ չեչտւում է եւրոպական յեղափոխական շարժման մէջ, քանի որ այնտեղ եւս մարդիկ կամայ ակամայ զալիս են այն համոզման, որ յաճախ հնարաւոր չէ լինում տարբերել անհատը սիստեմից, այնքան զօրեղ է լինում անհատների ազդեցութիւնը ընդհանուր սիստեմի վրայ: Եւ եթէ այս համոզումը կոնկրէտ [չօշափելի] ներպով չէ արտայայտւում, դրա պատճառը այն է, որ եւրոպական հասարակութիւնը բացարձակ վատ է տրամադրըւած արիւնահեղութեան դէմ: Վերջին 3–4 տասնամեակում եւրոպական ժողովուրդները արիւն չեն տեսել եւ մի տեսակ զարշանքով են վերաբերւում դէպի սպանութիւնները: Հենց այս տեսակէտից, ես չեմ կարող համաձայնել ընկ. Մալումեանի այն կարծիքին, թէ եւրոպայում եւս պէտք է տեռորներ կատարել. վըստահօրէն կարելի է ասել, որ արիւն չսիրող հասարակութեան համակրանքը մեր կողմը չի լինի, եթէ մենք այդպիսի ձեռնարկներ սկսենք: Եւ շատ իրաւացի կերպով մեր եւրոպացի բարեկամները խորհուրդ չեն տալիս մեզ այդպիսի քայլեր անելու, ինչպէս այդ յայտնում է ընկ. Մալումեանը: Բացի հասարակական կարծիքից, մեզ համար կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ հենց եւրոպական կառավարութիւնները էլ, չեն կարող բարեկամաբար վերաբերուել դէպի մեզ, եթէ մենք նրանց սահմաններում այդպիսի քայլեր կատարենք: Մեզ համար մի ուրիշ կարեւոր հանգամանք էլ այն է, որ եթէ մենք Եւրոպայում սկսենք այդպիսի ակտիւ քայլեր անել, դա աւելի կը չեչտէ մեր մասին տարածուած այն կարծիքը, թէ հայ յեղափոխութիւնը ժողովրդական չարժում չէ, այլ Եւրոպայում նստած մի խումբ մարդկանց գործ: Համաձայն չեմ նաեւ ընկ. Մալումեանի այն առաջարկի հետ, որ պէտք է մի առանձին Տեռորական Մարմին ստեղծել: Այդպիսի առանձին մարմին ստեղծելու կարիք կը լինէր այն ժամանակ, երբ մեր կուսակցութիւնը հետզհետէ ջրի երեսը անէր. իսկ այս դէպքում, հասկանալի է, որ կազմակերպութիւնը չէր կարող տեռոր կատարել, որովհետեւ տեռորը նկատւում է քրէական յանցանք, եւ կապրիւ կը լինէր առանձին հիմնարկութեան: Սակայն մեր կազմակերպութիւնը բարեբախտաբար թէ դժբախտաբար դեռ ջրի երեսը չէ անում եւ տեռորը նրանից բաժանելու կարիք չկայ: Ստեղծել մի առանձին մարմին, որի նպատակը լինի փնտռել թէ ինչ պաշտօնեաներ են վնասակար եւ ի՞նչ չափով՝ անգործնական բան է. վնասակար կազմակերպութեանց հետ մեր կենտրոնական մարմիններն են ընդհաւում. ամենից առաջ նրանք գիտեն, թէ այս կամ այն պաշտօնեան ի՛նչ չափով է վնասակար: Բացի դրանից՝ միայն այդ մարմինները կարող են այդ վնասակար պաշտօնեաների վերացնելու հարկը համաձայնութեան մէջ դնել իրենց չրջանի տրամադրութեան եւ գործի ընթացքի հետ: Այնպէս որ առանձին մարմին ստեղծելու կարիք չկայ. այդ գործը պէտք է թողնել մեր իրաւասու մարմիններին: Ընկ. Մաչուրի խօսքը ես հասկացայ այն մտքով, որ եթէ մեր տեռորիստները ցանկալի դիտակցութիւնը ունենան՝ նրանք իրենց գործը կատարելուց յետոյ խոյս չեն տայ՝ եւ այդպէսով կը վերանայ համայնական պատասխանատուութեան հարցը, որի մասին չատերը խօսում են: Այդ տեսակէտը անկասկած հերոսական է եւ եթէ չեմ սխալւում, մեր ընդհանուր ժողովներից մէկում Արամ Արամեանցը(19) այդպիսի առաջարկ արել է: Սակայն ինձ թւում է, թէ մեր տեռորիստի այդպիսի հերոսականութիւնն էլ չէ կարող առնել չարիքի առաջը: Կառավարութիւնը ռեպրէսիաների [զսպումի հակազարձ միջոցներու] է դիմում, ոչ թէ որովհետեւ իսկական յանցագործին չէ գտնում, այլ որովհետեւ ուզում է սարսափ տարածել ժողովուրդի վրայ: Իսկ եթէ նրա նպատակը այս է, տեռորիստը անձնատուր լինելու պէտք չունի, որովհետեւ նա [կառավարութիւնը] միշտ առիթներ կը ստեղծէ ընդհանուր ռեպրէսիաներ առաջացնելու համար:

Զաւդարեան.— Տեռորի քաղաքական նշանակութիւնը չատ լաւ բացատրեց ընկ. Մալումեանը. բայց թող նա մեզ որոշ կերպով ասէ, թէ առաջիկայում ի՞նչ դիրք պիտի բռնենք տեռորի տեսակէտից, Կովկասում եւ Թուրքիայում: Սկզբունքով ես կատարելապէս համաձայն եմ, որ Թուրքիայում տեռորը պիտի միջազգային կերպով կազմակերպել. բայց ես կարծում եմ, որ դա ունի գործնական անյարմարութիւններ: Ի հարկէ, այդ Տեռորական Կոմիտէին մասնակցողները պիտի լինեն ոչ թէ զանազան ազդութեան պատկանող անհատներ, այլ յեղափոխական կազմակերպութիւններ: Բայց պիտի գիտենալ, որ ուրիշ կազմակերպութիւններ էլ մեր տեսակէտի՞ն են այդ նկատմամբ: Մակեդոնացիների համար կարող եմ վստահել, սերբերի դիրքը դեռ պարզ չէ մեզի, նրանք կարող են եւ չմիանալ մեզ հետ: Իսկ Թուրքերը բոլորովին կազմակերպութիւն չունին: կամ թէ զանազան կազմակերպութիւններ կարո՞ղ են միեւնոյն անձի վրայ համաձայնութեան գալ — մի պաշտօնեայ, որ մեր ժողովուրդի համար չատ վնասակար է եղել, իսկ մի ուրիշի համար անվնաս. սրա վրայ կարող են կազմակերպութիւնները չհամաձայնել: Ասում էք մարմին լինի Պոլսում կամ Ծովեզերեայ քաղաքներում. բայց չէ՞ որ մեզ համար ամենավնասակար մարդիկ հայաբնակ գաւառներում են գտնւում: Ուրեմն մենք պիտի սպասենք, որ նա տարիներով հարստահարէ ժողովուրդը, որ յետոյ որեւէ Ծովափնեայ քաղաքից անցնելիս նրան սպանե՞նք: Կարեւոր է նաեւ իմանալ, թէ Տեռորական Մարմնի ազդեցութիւնը պիտի ներքի՞ն հանգամանք ունենայ թէ արտաքին եւս: Ինձ թւում է, թէ արտաքին-քաղաքական: Տեռորական Մարմնի առանձին կազմակերպութիւն լինելը կարեւոր չէ, նա պիտի կապեր պահպանէ մեր մարմինների հետ: Բայց երբ այդ կոմիտէն նաեւ օտարներից է կազմուած, պիտի կարողանա՞նք վստահել դրանց ծանօթացնել մեր մարմինների հետ: Կրկնում եմ, սկզբունքով դէմ չեմ այդ ձեւ կազմակերպելուն, բայց թւում է թէ գործնականում պիտի անյարմարութիւնների հանդիպենք:

Իշխան.— Տեռորի հետեւանքներից մենք չարունակ այնքան ենք վախեցել, որ դա դարձել է արդէն մտավախութիւն: Մենք միշտ կարծել ենք, թէ որքան նշանաւոր լինի տեռորի ենթարկուած մարդը, այնքան աւելի օրհեղ կերպով ժողովուրդը կ'ենթարկուի պատասխանատուութեան: Միջազգային Տեռորիստական Մարմինը լաւ է միայն այն վայրերում, ուր յեղափոխական չարժումն էլ միջազգային է լինելու: Իսկ այն վայրերում, ուր յեղափոխութիւնը միայն հայկական է, միջազգային կերպով կազմակերպած տեռորը միեւնոյն է, միջազգային կերպով կազմակերպած տեռորը միեւնոյն է, որովհետեւ այդ չեն անգամ վնասակար է լինելու, որովհետեւ այդ մարմնի բոլոր արածները վերագրելու են միայն հայերին եւ նրանցից են միայն վրէժ առնելու:

Մուրատ.— Տեռորը այժմ Դաշնակցութեան ամենաչաչքի ընկնող գործերից մէկը պիտի լինի, ոչ թէ ինչպէս մինչեւ այժմ եղել է: Ընդունում եմ տեռորի միջազգային կազմակերպումը, բայց նա լաւ պիտի կազմակերպուած լինի, պիտի հարուածէ նշանաւոր մարդկանց եւ տեռորիստը պիտի պահուելու տեղ ունենայ. երբ այս բոլորը լաւ է կազմակերպուած, այն ժամանակ է, որ տեռորը օրհեղ ազդեցութիւն է անում: Մշում եղած տեռորների հետեւանքը թէեւ ջարդեր չեղան, բայց կառավարութիւնը բանտարկութեամբ եւ ծածուկ սպանութիւններով բազմաթիւ հայեր կոտրեց: Բայց սրանք ոչինչ, եթէ մենք այնպիսի մարդկանց, ինչպէս օրինակ Զերքէզ Ալայ Բէկի համար, մինչեւ անգամ 30 հայ կորցնենք:

Թոփչեան.— Ռուսաստանի մասին սխալ տեղեկութիւններ տուին. ես ուզում եմ ուղղել: Երկու տեսակ մասսայական հետեւանք կայ, մինը՝ երբ կառավարութիւնը ինքը ուղղակի վրէժ է առնում կամ պատժում է, եւ միւսը՝ երբ դա կատարում է խուլիգանական տարրերի միջոցով. եւ այսպիսի դէպքեր եղել են Կովկասում, ինչպէս Տփխիսի Սալդատաքի բազարի դէպքը: Թուրքիայում մասսայական պատասխանատուութիւնը չատ աւելի վնասակար կը լինի, եթէ այնտեղ տեռորը միջազգային կազմակերպութիւն չունենայ: Տեռորի միջազգային ձեւով կազմակերպելը նաեւ ունի այն նշանակութիւնը, որ դա մերձեցման առաջին քայլն է միւս ժողովուրդների հետ: Կը կազմուեն Քուրդիկներ զանազան ազգութիւնների կողմից եւ դա կ'ազդէ Քուրդ մասսայի վրայ: — Ես առաջարկում եմ հայկական նահանգներում կատարել տեռորներ անպայման միջազգային բնաւորութիւն է ընդունում: Մենք ի՞նչպէս կարող ենք մօտենալ մի յեղափոխական կազմակերպութեան, որին չենք ճանաչում, որի հետ մինչեւ անգամ ծրագրով եւ տակտիկով հակառակ ենք: Ես հակառակ չեմ դրան, բայց աւելի լաւ է, որ ուրիշ կողմից սկսենք. ամենից առաջ հարկաւոր է մի զեկուցում, որ մեզ ծանօթացնէ այդ կազմակերպութիւնների հետ, որ գիտենանք թէ ո՛ւմ հետ գործ ունենք:

Միհրանեան.— Թոփչեան ուզում է այն բանից, որ մենք ուզում ենք տեռորը միջազգային կերպով կազմակերպել, հետեւցնել միջազգային համերաշխութիւն: Բայց դա կը լինի միայն այն ժամանակ, երբ տանձիկ եւ այլ կազմակերպութիւններն էլ մեր կարծիքին գան: Միջազգայնօրէն կազմակերպուած տեռորը լաւ է եւ այն տեսակէտից, որ տեռորիստները թագստի յարմարութիւն կ'ունենան: Սխալ է ընկ. Իսահակեանի առածը, թէ Եւրոպան արիւնից խորշում է: Եւրոպական

հարիւրեակների միջոցով. եւ այսպիսի դէպքեր եղել են Կովկասում, ինչպէս Տփխիսի Սալդատաքի բազարի դէպքը: Թուրքիայում մասսայական պատասխանատուութիւնը չատ աւելի վնասակար կը լինի, եթէ այնտեղ տեռորը միջազգային կազմակերպութիւն չունենայ: Տեռորի միջազգային ձեւով կազմակերպելը նաեւ ունի այն նշանակութիւնը, որ դա մերձեցման առաջին քայլն է միւս ժողովուրդների հետ: Կը կազմուեն Քուրդիկներ զանազան ազգութիւնների կողմից եւ դա կ'ազդէ Քուրդ մասսայի վրայ: — Ես առաջարկում եմ հայկական նահանգներում կատարել տեռորներ անպայման միջազգային բնաւորութիւն է ընդունում: Մենք ի՞նչպէս կարող ենք մօտենալ մի յեղափոխական կազմակերպութեան, որին չենք ճանաչում, որի հետ մինչեւ անգամ ծրագրով եւ տակտիկով հակառակ ենք: Ես հակառակ չեմ դրան, բայց աւելի լաւ է, որ ուրիշ կողմից սկսենք. ամենից առաջ հարկաւոր է մի զեկուցում, որ մեզ ծանօթացնէ այդ կազմակերպութիւնների հետ, որ գիտենանք թէ ո՛ւմ հետ գործ ունենք:

Միհրանեան.— Թոփչեան ուզում է այն բանից, որ մենք ուզում ենք տեռորը միջազգային կերպով կազմակերպել, հետեւցնել միջազգային համերաշխութիւն: Բայց դա կը լինի միայն այն ժամանակ, երբ տանձիկ եւ այլ կազմակերպութիւններն էլ մեր կարծիքին գան: Միջազգայնօրէն կազմակերպուած տեռորը լաւ է եւ այն տեսակէտից, որ տեռորիստները թագստի յարմարութիւն կ'ունենան: Սխալ է ընկ. Իսահակեանի առածը, թէ Եւրոպան արիւնից խորշում է: Եւրոպական

լրագրերում ամէն օր արիւնի մասին ենք կարդում: Եւրոպական քաղաքական դաւադրութիւնների եւ սպանութիւնների բոյն է եղել միշտ, նա արքայասպանութեան հայրենիք է կոչւում: Եւրոպական հասարակական կարծիքը երբեք չէ բողոքում, երբ տեռորի է ենթարկւում որեւէ մէկը, որ արժանի էր դրան: Հանրային կարծիքը երբեք չպախարակեց ռուս յեղափոխականների մի քանի փորձերը Եւրոպայում: Եւ նա մեր դէմ էլ չի բողոքի, եթէ մեր արածը քաղաքականապէս պատճառաբանուած լինի: Ամփոփեմ ասածներս.— չէ կարելի սպանանել տաճիկ պաշտօնական անձեր, եթէ նոքա եւրոպական պետութիւնների մօտ դեսպան են. իսկ այն ոճրագործներին, որոնք անպաշտօն կերպով Եւրոպայումն են գտնւում, միշտ կարող ենք եւ պէտք է տեռորի ենթարկենք:

Ռոստամ.— Տեռորը ծոլափնեայ քաղաքներում կենտրոնացնելով մենք կը չահինք նաեւ այն, որ կառավարութեան ուշադրութիւնը այդ կողմը գրաւելով, կարող ենք կենտրոնացման վայրերում մեր գործը առաջ տանել:

Վռամեան.— Մի հոգեբանական կէտ կայ, որ մենք թուրքիայում ի նկատի պիտի առնենք. մենք պէտք է բաժանենք տաճիկ պաշտօնեաներին՝ ժողովրդից: Պաշտօնեաները հայթայթւում են ոլոխից, դրանք փչացած տարրեր են եւ հետեւում են միայն իրենց անձնական շահին. դրանց միակ նպատակն է փող շահել եւ ոլիս վերադառնալ ժպտելու համար: Եթէ դրանց մենք մի տեղում ժախեցնենք, դա կ'ազդէ եւ այլ տեղերի քաղաքականութեան վրայ: Իզմիրում եթէ մեր ընկերները սպանական նամակ չգրէին դատախազին, դատապարտուածներից չատերը բանտից չէին ազատուելու. դա էր պատճառը, որ ոչ ոք մերոնցից մահուան չդատապարտուեց, թէեւ յանցանքները այնպէս էին, որ մահուան պատիժ պիտի տրուէր: Սակայն փաշան իմանալով, որ իր դէմ տեռորի ծրագիր կայ, փոխեց իւր ընթացքը: Եթէ մենք հարուածենք պաշտօնեաներին, այն ժամանակ Սուլթանը այլեւս դրանց չէ կարող իւր ձեռքին գործիք դարձնել: Ընկերները ասում են, որ Թուրքիայում մինչեւ հիմա այդպիսի տեռորներ չեն եղել: 94–5 թուին մենք ոլոսում ծրագրեցինք մի քանի պաշտօնեաներ տեռորի ենթարկել, բայց չկարողացանք իրագործել, որովհետեւ չէինք ուզում դրանց համար ռումբ գործածել, այլ ատրճանակ եւ դաշոյն. իսկ այդ անհնարին էր. ռումբերը մենք պահում էինք Բանկ-Օտտոմանի ցոյցի համար եւ դրանից առաջ չէինք ուզում ռումբերը մէկտեղ հաննել: Ոլոսում համայնական պատասխանատուութիւն չէ կարող լինել, եւ որովհետեւ գաւառների պաշտօնեաները վերջ ի վերջոյ դալիս են ոլիս, ուստի եթէ սրանց ոլոսում պատժենք, միւսներն էլ կը համոզուեն, որ ուր էլ գնան պատժից չեն ազատուելու: Սխալ չէ նաեւ դրանց Եւրոպայի մէջ հետապնդելը. այդ դէպքում եւրոպական հասարակական կարծիքը մեզ չի դատապարտեր: 95 թուին ոմանք առաջարկում էին մինչեւ անգամ սպանութեան փորձ կազմակերպել Սոլզբիւրիի դէմ, որը խոստացաւ, որ Անգլիան կ'օգնէ, բայց երբ տեղը եկաւ նա պատասխանեց, որ անգլիական նաւերը չեն կարող Տաւրոսի վրայ բարձրանալ: Պատրաստ էր տեռորիստը. միայն պիտի անգլերէն մի թուղթ գրուէր, որ նա կատարելուց յետոյ, թուղթը տար ուր հարկն է, որ իմանային, թէ ինչո՛ւ է սրել: Ոլոսում կան մի քանի փաշաներ, որոնց եթէ սպաննենք՝ ձեռք կը բերենք թուրք ժողովուրդի համակրանքը եւս, որովհետեւ դրանք ծծում են ժողովուրդի արիւնը: Ես համաձայն չեմ, որ միջազգային տեռորական կոմիտէ կազմակերպելիս մենք գործ չունենանք այլ կազմակերպութիւնների հետ պաշտօնապէս, այլ անհատների հետ: Այդ կոմիտէն չպիտի բաժանենք մեր կազմակերպութիւնից, եթէ ոչ կարող է ընդհարում առաջ գալ կազմակերպութեան եւ դրանց մէջ. կայ նաեւ մի այլ վտանգ, որ ո՞վ գիտէ, Տեռորական կոմիտէի գործունէութիւնը կարող է նաեւ խուլիգանական բնաւորութիւն ստանալ: Եզրակացութիւն՝ անհրաժեշտ է թուրք պաշտօնեաների դէմ տեռորը իրեւ ազդու միջոց. նրանք հայրենասիրութիւն չունեն, չուտ կ'ահաբեկուեն:

Մաղումեան.— Իմ նախագծած Տեռորական Մարմինը պիտի միայն քաղաքական տեռորներով զբաղուի. նրան չէ կարելի յանձնել մի հայ մատնիչի սպանութիւնը, հենց այն պարզ պատճառով, որ նա միջազգային է: Մինասեանի պատճառաբանութիւնը անհիմն է, թէ պաշտօնեաների սպանութիւնը կարող է ցեղական բնաւորութիւն ստանալ եւ նրանք մեր դէմ սեւ հարիւրեակներ կը հանեն: Եթէ այդ մարմինը կարողանայ սարսափ տարածել, հարիւրեակները անվտանգ կը դառնան, որովհետեւ դրանք կախուած են պաշտօնեաներից: Մենք կարող ենք մինչեւ անգամ թուրք կառավարութեան պաշտօնեաներին եւրոպայում էլ պատժել եւ հասարակական կարծիքը մեր դէմ չի լինի, եթէ այդ պաշտօնեան երկրում ամէն տեսակ ոճիրներ կատարել է եւ արժանի է պատժի: — Ասում են այն մասին, թէ արդեօք այդ մարմինը անկա՞խ պիտի լինի: Եթէ այդ մարմնի նպատակն է գործ կատարել եւ դադարնի մնալ, նա պիտի անպատճառ անկախ լինի: Ոլոսի մեր կոմիտէն չէ կարող դրան փոխարինել, քանի որ այդ մարմինը միջազգային պիտի լինի: Եթէ մենք կարիք զգացինք մի որոշ ձեռնարկի համար Ոլոսում յատուկ մարմին կազմել եւ նրան անկախութիւն տալ, ապա ուրեմն ի՞նչպէս կարող է մի այսպիսի մարմին անկախութիւն չունենալ: Ի հարկէ Տեռորական Կոմիտէի եւ մեր մարմնի մէջ որոշ կապ պիտի լինի, որպէսզի կազմակերպական գործունէութիւնը հակառակութիւնների չենթարկուի: Իսկ երկրի ներսում, հայկական գաւառներում, տեռորիստական գործողութիւնները անպատճառ պիտի լինեն տեղական մեր մարմինների միջոցով եւ համաձայնութեամբ: Ես համաձայն չեմ ընկ. Զաբրեանի կարծիքին, քանի որ այդ դէպքում մենք պէտք է չաղանակները կրակից հանենք ուրիշի ձեռքով: Դաշնակցութիւնը իբրեւ ամենափորձուած կազմակերպութիւնը՝ պիտի ղեկավարի այդ գործը եւ լաւագոյն ուժերը մեր միջից պիտի դուրս գան: Մաշուրի կարծիքին ես համաձայն չեմ: Ես խոնարհւում եմ ռուս ընկերների անձնազոհութեան առաջ եւ դրա հետ միասին համոզուած եմ, որ մեր մէջ էլ կան այնպիսի մարդիկ, որոնք պատրաստ են իրենց զոհելու: Դաշնակցութիւնը տուել հերոսների մի չարք, որոնց մասին ռուս ընկերները խօսում են մեծ հիացմունքով: Այն խմբերը, որոնք գնում եւ զոհւում էին, Արամ Արամեան, Պետրոս Սեմերջեան եւ ուրիշներ, որոնք կախաղանի վրայից անդամ ասում էին ժողովրդին, որ չվհատին, եւ ներքողներ էին կարդում ազատութեան, ապացոյց են, որ մենք անձնազոհ ընկերների պակասութիւն չենք զգալ: — Սեպուհի հետ միանգամայն համաձայն եմ: Իսահակեան ասածը ճիշդ է, Եւրոպայում արեան կուլտը [պաշտամունքը] մեռնում է. դա նրանց մտաւոր եւ բարոյական բարձրացման նշաններից մէկն է: Այս է պատճառը, որ վատերվէլտ եւ ուրիշները կարծում են, որ այն երկրներում՝ ուր իրաւակարգ կայ, տեռորով գործելը աւելորդ է: Մեր տեռորները, որոնց Եւրոպայում կատարելուն դէմ է եւ Թուխչեանը, կապ չունեն արեան պաշտամունքի հետ: Ֆրանսայում, օրինակ, անարխիստները անգամ չեն համակրում չատ սպանութիւնների. բայց այլ է նրանց կարծիքը Ռուսաստանի եւ Թուրքիայի վերաբերմամբ: Հասարակական կարծիքը ոչ միայն չի բողոքի մեր դէմ մեր արած արդարացի տեռորների համար, այլ ընդհակառակը, նա կ'արդարացնի մեզ: Վռամեանը յիշեց Սոլզբիւրիի մասին եղած միտքը. ես կ'ասեմ, որ մեր ընկերներից ոմանք առարկում են նաեւ տեռոր մի եւրոպական քաղաքի դէմ, որը սիստեմատիկաբար խոչընդոտ է լինում մեր դատին: Զարդարեանի հարցը այն մասին, թէ արդեօք միւս կազմակերպութիւնները էլ մեզ հետ համերաշխ կը լինե՞ն այս կամ այն պաշտօնէի վերաբերմամբ, — պիտի ասեմ, որ կազմակերպութիւնների մասին խօսք չպիտի լինի: Պիտի խօսենք խմբերի եւ մանաւանդ անհատների մասին, որոնք կան, եւ դա չի փոխի մեր գործի միջազգային արժէքը: Երբ մի տեռորական մարմնում կը լինին ինտելիգենտ անդամներ, նրանք չեն կարող մոցնել այն հարցերի մէջ թէ ո՛ր ազգից է սպանուողը, կամ ի՞նչ կրօնի է պատկանում: Բաւական է որ նա յանցաւոր է: Համաձայն եմ Մուրատի եւ Իչխանի ասածին: Տաճատը ասում է, որ մենք չենք ճանաչում այն կուսակցութիւնները, որոնց հետ միասին ուզում ենք գործել, ուստի հարկաւոր է մի զեկուցում այդ մասին: Եթէ խօսքը երիտասարդ Թուրքերին է վերաբերում, ես էլ նրանց մասին վատ կարծիք ունեմ. դրանց մասին չէ խօսքը: Մեր ասածները վերաբերում են աւելի վատահելի խմբերի, որոնցից մէկի հետ մեր Մարմինը յարաբերութեան մէջ է: — Վռամեանի ասածների հետ նոյնպէս համաձայն եմ, բացի այն մտքից, թէ կոմիտէն միջազգային չպիտի լինի: Վերջացնում եմ խօսքս նկատելով, որ կարծիքների նմանութիւնը տեռորի եւ նրա միջազգային բնաւորութեան մասին՝ չատ խրախուսիչ է: Այս բոլորը ցոյց են տալիս, որ չնայած այն ծանր հարուածներին, որ կրել ենք մեր յեղափոխական գործի ընթացքում, այնուամենայնիւ ամուր է այն համոզմունքը, թէ կռիւը պիտի չարունակել աւելի ուժեղ թափով: Մեր յեղափոխական ընկերները, անցած տարիների փորձի բովով, կարող են նուիրուել գործին մեծ փորձառութեամբ: Ի հարկէ տեռորը չպիտի լինի փոխարինող մեր մասսայական գործունէութեան, այլ մի լրացուցիչ միջոց դրա համար:

Ժողովի վերջում ընկ. Մալումեան կարդում է Ընդհանուր ժողովին ուղղուած մի նամակ, գրուած Հանդուցեալ Բրխոսափոր Միքայէլեանի ամուսնուց, ի պատասխան այն հեռագրի, որով ժողովը իւր ցաւակցութիւնն էր յայտնել նրան Բրխոսափորի մահուան տարելից առիթով եւ իր որոշումը՝ փոխադրել Բրխոսափորի մարմինը Կովկաս: Նամակագիրը յայտնելով ժողովին խորին շնորհակալութիւն իւր եւ իւր որդու կողմից, արտայայտում է նաեւ խորին գոհունակութիւն այն որոշման համար, որի համաձայն Բրխոսափորի մարմինը պիտի տեղափոխուի օտար երկրից դէպի այն ժողովուրդի դերկիը, որին նա այնքան սիրում էր եւ որի համար նա զոհուեցից իւր կեանքը:

Նիստը փակուեց ժամը 7½-ին:

50ՐԴ ՆԻՍՏ (25 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Ներկայ են 20 պատգամաւոր:

Բացակայ են՝ Իսահակեան, Մաշուր, Մինասեան, Մանուկ, Ստեփանեան, Սաքօ, Վարդան:

«Ուսումնասիրողներ, գործակալներ եւ դրսից եկող մտաւոր [ական] ուժեր»: Զեկուցում ընկ. Արամի:

Վռամեան.— Ես համաձայն եմ Արամի այն յուշեցս նկատողութեան հետ, որ մարդիկ չեն գնում երկիր, ուսումնասիրելու համար: Թղթակիցներ ուղարկելու խնդրի մասին արդէն խօսուել է անցեալ Ընդհանուր ժողովում, կազմուել են հարցերի ցուցակներ եւ ուղարկուել երկիր. բայց անհետեւանք, որովհետեւ երկրի գործիչները իրենք մասամբ չեն հոգացել այդ մասին: Տեղեկագիր քիչ ենք ստանում: Վերջին տարի մասին անգամ չենք ստացել պաշտօնական ո՛չ մի զեկուցում: Մինչդեռ հարկաւոր են մանրամասն տեղեկա-

դրեր, նախ Եւրոպայի համար. հարկաւոր է նաեւ մասնաւոր տեղեկագրերը ամփոփել մէկ ընդհանուր տեղեկագրի մէջ՝ ինչպէս արել են մակեդոնացիք: Մի այդպիսի ընդհանուր տեսութիւն յանձն կ'առնէ կազմել Փիյարը, եթէ միայն նրան պէտք եղած նիւթերը տրուին: Օտար ուսումնասիրողներ ուղարկելու առաջարկի հետ համաձայն եմ: Ինչ վերաբերում է մեր սեփական ուսումնասիրողներին, սրանք նախ եւ առաջ պէտք է պատրաստուին ձեռք բերած լինեն, այսինքն՝ պէտք է ճշգրիտ ծանօթութիւն ունենան երկրի մասին. այս նպատակով կարեւոր եմ գտնում, որպէսզի դասընթացքներ հիմնուեն՝ յատկապէս ուսումնասիրողներ պատրաստելու համար:

Ռոստամ փաստեր է բերում, թէ ինչպիսի թիւր տեղեկութիւններ են ստանալիս եղել՝ կոտորածների ժամանակ զոհ գնացածների թուի մասին:

Զաւրեան.— Անհաւատալի դժուար է ճիշդ գաղափար կազմել երկրի ուղղաբնակութեան թուի մասին, որովհետեւ ոչ միայն այնտեղից եկողները պակասաւոր տեղեկութիւններ են հաղորդում, այլեւ երկրի մէջ իսկ, տեղն ու տեղը անկարելի է լինում ծանօթանալ դրութեան հետ: Երկրում չրջագայած մէկոյին ես գիւղերում այնքան սխալ տեղեկութիւններ էի ստանում, որ վերջը ստիպուած եղայ այլեւս չհաւատալ գիւղացիներին: Բայց ես չեմ կարող համաձայնել Ռոստոմի հետ, իբրեւ թէ կոտորածները նիւթական եւ մարդկային վնասներ չեն տուել այն չափով, ինչ չափով մենք ենք կարծել մինչեւ այսօր: Բայց բաւական է տեսնել օրինակ Մշոյ դաշտը, եւ իրականութիւնը կը պատկերանայ ձեզ իր անմխիթար կերպարանքով. դաշտն ամբողջովին անցայ ես եւ այդ լայնարձակ տարածութեան վրայ՝ վարած հող քիչ գտայ, որովհետեւ հայ գիւղացին միջոց չունի վարելու: Էրզրումում, մի քանի թուրք սպաներ, որոնք խմացել էին մեր Մուշ գնալու մասդրութեան մասին, ասացին մեզ, թէ «երբեմն ծաղկած Մուշը՝ այժմ աւերակներ է ներկայացնում»: Աւելի լրջութեամբ մօտենանք հարցին եւ զգուշութեամբ վերաբերուենք մեզ հասնող տեղեկութիւններին: Եթէ մէկ կողմից Տատրակը(21) որոշ պոլիտիկա է բանեցնում մէջտեղում, միւս կողմից էլ գինուորականներն են, որ վարդագոյն կերպով են մեզ պատկերացնում չարունակ՝ ժողովրդի դրութիւնն ու տրամադրութիւնը: Գէորգ Զաւուշը, օրինակ, մեզ չարունակ գրել է, թէ ժողովուրդը առանց իրեն թշուառ կը զգայ ինքներան, բայց Մուշի համաբեա՝ իւրաքանչիւր գիւղում ես բողոքներ եմ լսել Գէորգ Զաւուշի գործած բռնութիւնների դէմ. չգիտեմ՝ գուցէ այս բռնութիւնները անհրաժեշտ են եղել. սխալուր փաստն եմ ուզում միայն արձանագրել, որ եղել են մարդիկ որ նրան նոյնիսկ ուղեցել են թունաւորել:

Մուրատ.— Համաձայն եմ Աբամի հետ, որ հարկաւոր է ուսումնասիրել երկիրը: Ձեմ կարծում, սակայն, որ օտարները կարողանան լիովին բաւարարութիւն տալ այդ պահանջին, քանի որ նրանք իրենց ուսումնասիրութիւնը կ'անեն ո՛չ դաշնակցական տեսակէտից: Աւելի լաւ է, որ հայերից լինեն երկիր ուղարկուելիք ուսումնասիրողները:

Խահակեան.— Մեր ժողովուրդը անվստահութեամբ կը վերաբերուի օտար ուսումնասիրողներին, քանի որ անվստահութիւն է տածել ե՛ւ հայերի վերաբերմամբ: Այս տեսակէտից, ես աւելի նպատակայարմար եմ գտնում, եթէ մեր ուղած վիճակագրական տեղեկութիւնները պատրիարքարանի միջոցով ստանանք:

Ռոստամ.— Մանրամասն ու ճշգրիտ ուսումնասիրութիւն կատարելը՝ առանձին անհատների գործ չէ, դրա համար հարկաւոր է ունենալ մի ամբողջ մարմին, հակառակ դէպքում, ուսումնասիրութիւնները կը լինեն ոչ բաւմակողմանի: Ճիշդ է նկատում Մուրատը, որ օտարները չեն կարող ուսումնասիրել՝ մեր կուսակցական տեսակէտից ելնելով. բայց նրանք կարող են յամենայն դէպս, մեզ տալ մի ընդհանուր յատկագիծ, որի հիման վրայ արդէն՝ մենք կը վարենք մեր գործը: — Երկրի ռազմագիտական սկզբնական ուսումնասիրութեան համար մենք կարող ենք օգտուել ռուսական չտաբի կազմած քարտէսներից. կովկասում մենք միջոցներ ունենք պէտք եղած նիւթերը ձեռք բերելու:

Սաֆօ.— Օտար ուսումնասիրողները մեզ օգտակար կը լինեն միայն այն դէպքում, եթէ նրանք կաշառուող անձնաւորութիւններ չլինեն. կառավարութիւնը աչխատում է կաշառքի միջոցով, յետ դարձնել ամէն մի եւրոպացու, որը ցանկութիւն է ունենում երկիրն ուսումնասիրելու:

Գուսսաֆ.— Մենք կարող ենք ձեռք բերել ռուսական չտաբի ուսումնասիրութիւնները, քարտէսներ եւն: Ֆարի եւ Զրաբերդի մի քանի ռուս գինուորականներ մեզ գաղտնի առաջարկ են արել այդ ամէնը տալու, եթէ միայն մենք 300 ռուբլի դնենք նրանց տրամադրութեան տակ. տեղական կոմիտէները, սակայն, անհամբերութեամբ վերաբերուեցին այդ բանին, չուտին խնդրեցած 300 ռուբլին:

Թոփչեան.— Այստեղ այնպէս խօսեցին, որպէս թէ ընդհանրապէս գոյութիւն չունի ո՛չ մի ուսումնասիրութիւն եւ թէ մենք պէտք է սկզբից սկսենք գործը մեր փոքրիկ ուժերով: Նախ օգտուենք եղածներից: Ռուսական չտաբն առատ նիւթ է մատակարարում: Գեներալ Զելէնովի ընդարձակ տեղեկութիւններ է տալիս: Ես անհրաժեշտ չեմ գտնում, որ յատուկ ռազմադէտ-ուսումնասիրողներ ուղարկենք Երկիր. դեռ պէտք է օգտուենք չտաբում գտնուող նիւթերից: — Ինչ վերաբերում է տնտեսական վիճակին՝ կարելի է մեր եւրոպացի բարեկամների միջոցով գիտական սրչաւանքներ կազմել, նոյնիսկ Գերմանիայի եւ Ֆրանսիայի հովանաւորութեան տակ. այդ արշաւախմբերի մէջ կը լինեն ե՛ւ հայեր:

Մարդպետ.— Նպատակայարմար եմ համարում իւահակեանի առաջարկը՝ պատրիարքարանի միջոցաւ տեղեկութիւններ հաւաքելը: Իւրաքանչիւր տարի Աղթամարի, Սսոյ կաթողիկոսարանները, զանազան վանքերից եւն. նուիրակներ են ուղարկուում ամէն կողմ՝ հասոյքներ հաւաքելու. սրանցից եւ այս պատրուակով ուղարկուած որոշ անձնաւորութիւններից կարելի է օգտուել ըստ մեր նպատակի:

Մալումեան.— Բոլոր այս առաջարկները լաւ են, անկասկած, բայց միայն հարց է, թէ ի՞նչպէս պէտք է իրագործել այդ ամէնը: Արդէն քանի՛ քանի անգամ դիմել ենք մեր բարեկամներին եւրոպայում, որպէսզի ուսումնասիրողներ գտնեն մեզ համար: Մեր փորձերը յաջողութեամբ չեն պսակուել անցեալ տարի. մի խոստացի պրոֆէսօր միայն յանձնառու եղաւ երկիր մտնելու. նա բանակցութիւններ ունեցաւ մեզ հետ, վերջը սակայն ստիպուած եղաւ հրաժարուել, որովհետեւ թուրքիա մտնելու եւ ճամբորդելու համար հարկաւոր պայմաններ չեղան: Ֆրանսական կառավարութիւնը չտուեց անհրաժեշտ յանձնարարականը: Կովկասի համար միայն մի եւրոպացի ուսումնասիրող (Բերդրան) մեզ յաջողուեց գտնել, որի մասին տեղեկութիւն տուի Արեւմտեան Բիւրոյի տեղեկագրի մէջ: Որհուրդը մըտադիր էր մի եւրոպացի ռազմագէտ գտնել՝ Երկիրը զուտ ռազմագիտական տեսակէտից ուսումնասիրելու համար եւ այս նպատակին նոյնիսկ 15·000 ֆրանք յատկացրեց, բայց այդպիսին չգտնուեց: Ինչ վերաբերում է ռուսական չտաբում գտնուող նիւթերին, այո՛, այնտեղ կան մեծ քանակութեամբ տեղեկութիւններ. ռուսական չտաբի ուսումնասիրութիւնը կատարուել է մանրամասն կերպով՝ գերմանական չտաբի սրած մի գաղտնի ուսումնասիրութեան հիման վրայ. նրա մէջ կան կարեւոր նիւթեր:

Մուրատ.— Ես կարծում եմ, որ ռուս-ճապոնական պատերազմին մասնակցած հայ գինուորականների մէջից՝ փորձառուներին կարելի է ուղարկել Երկիր՝ ռազմագիտական ուսումնասիրութեան նպատակով:

Նախագահ.— Գտնելով որ ժողովը սկզբունքով ընդունում է ընկ. Աբամի զեկուցումը՝ առաջարկում է ներկայացնել բանաձեւեր:

Մալումեան առաջարկում է հետեւեալ բանաձեւը՝

«Ընդհանուր ժողովը, լսելով վասպուրականի ներկայացուցչի զեկուցումը՝ նրկիրը ուսումնասիրելու եւ այնտեղ ուսումնասիրողներ ուղարկելու մասին, եւ կատարելով այդ առիթով մտերիր փոխանակութիւն, յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան՝

1· Դնել այդ ուսումնասիրութիւնը, գլխաւորապէս վիճակագրական եւ ռազմական-յետախոյզական տեսակէտից՝ առնելի լայն եւ գիտական հիմքերի վրայ:

2· Կատարուել մի հարցաթուղթ եւ ուղարկել նրկրի տարիճներին եւ քնկերներին՝ վիճակագրական, ազգագրական, տնտեսագիտական եւ բազմական ուսումնասիրութիւններ անելու համար:

3· Գտնել հայ եւ օտար ձեռնհաս տեղիներ, յանձնելով [?] նրանց կազմակերպութեան հաշուով նրկիր մտնել (մեր ընկերների ուղեկցութեամբ) ռազմական ու բազմական ուսումնասիրութիւններ անելու նպատակով:

4· Բոլոր միջոցներով նպաստել մտաւորական քնկերներէ առելի մեծ թուով նրկիր մտնելուն, նախօրօք պատրաստելով նրանց այդ աշխատանքի համար:

5· Անհրաժեշտօրէն պատրաստել հայկական գաւառների մանրամասն եւ մեծադիր քարտէսը:

6· Կազմել մի յատուկ մարմին Ուսումնասիրող Մարմին անունով, այդ ամբողջ գործը կարգադրելու համար, հիմնուած վերի որոշումների վրայ»:

Այս բանաձեւի առթիւ վիճաբանութիւններ են տեղի ունենում:

Վռամեան.— *Առաջարկում եմ բանաձեւի մէջ մըտցնել հետեւեալ կէտը՝ «ուսումնասիրողներ պատրաստելու համար դպրոց ունենալ»:*

Նախագահ.— *Այդ հարցը դրէք առանձին, երբ կը խօսենք պրոպագանդայի մասին:*

Վարդան.— *Ոչ ոք չի վիճի, ի հարկէ, որ գիտական ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է: Բայց արդեօք եւրոպացին կարող կը լինի՞ տալ մեզ մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ. ես կարծում եմ, չէ կարող, քանի որ նա այդ տեղեկութիւնները լրիւ ձեռք բերելու համար, ինչն անձամբ պէտք է մէկիկ-մէկիկ այցելէ ամէն մի հայ գիւղ — մի բան, որ նա հազիւ թէ անէ: Ես առաջարկում եմ, ընկ. Զաւարեանի կազմած սիստեմով, հարցեր ուղղենք գիւղական ուսուցիչներին, եւ սրանք կը պատասխանեն մեզ:*

Խահակեան.— *Միանում եմ այդ առաջարկին, որովհետեւ դա ամենագործնականն է:*

Ռոստամ.— *Առաջարկում եմ ուսումնասիրութեան գործի համար առանձին մարմին ընտրելու խնդիրը թողնել Բիւրոներին. այս դէպքում ես այն հանգամանքն ունեմ աչքի առաջ, որ այդ մարմնի մէջ մտնել ցանկացող մի քանի անձնաւորութիւններ ուզում են անյայտ մնալ, նոյնիսկ Ընդհանուր Ժողովին:*

Աբամ.— *Ո՛չ, առաջարկում եմ ընտրել մի մասնախումբ երեք հոգուց բաղկացած, որին յանձնուի գործը կազմակերպել:*

Քուէարկուում է այս առաջարկը եւ ստանում մեծամասնութեան համաձայնութիւնը:

Ընկ. Մալումեանի առաջարկած վերեւի բանաձեւը ընդունուեց Ժողովի կողմից:

Մի փոքր ընդմիջումից յետոյ, ընկ. Մինասեան կարդում է մի զեկուցում «Ծուցական գործունէութեան մասին» (տես Օրակարգ՝ բ.— 1· բ.):

Վիճաբանութիւնները թողնուում են յաջորդ նիստին:

51ՐԴ ԵՒ 52ՐԴ ՆԻՍՏԵՐ (22)
(26 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Թումչեան։

Ներկայ են 22 պատգամաւոր։

Բացակայ են՝ Զարդարեան, Զաւրեան, Վարդան, Անդրանիկ (հիւանդ)։

Օրակարգն է՝ «Ցուցական ձեռնարկների մասին» *տրուած զեկուցման առթիւ վիճաբանութիւնները։*

Մուրատ.— *Մինասեանի ասածներից ես համաձայն չեմ միայն այն կէտին՝ որ ցոյցերը պիտի լինեն ապստամբութեան լրացուցիչ. իմ կարծիքով ընդհակառակն։ Ցուցական գործը այնպիսի ձեռնարկ է, որ ապահովից եւ երկար նախապատրաստուելուց կարող է վիժել, ցուցական ձեռնարկներ մենք չպարունակ պիտի կրկնենք, որ Եւրոպայի ականջին հնչեցնենք մեր ըղձքը։*

Ռոստոմ.— *Տեառրը եւ ցուցական ձեռնարկները սերտ կապ ունեն իրար հետ։ Տեառրները մենք որոշեցինք միջազգային կոմիտէի ձեռքով կազմակերպել. ցուցական ձեռնարկներում պիտի այդ հանգամանքը աչքի առաջ ունենանք։ — Ցոյցերը այսուհետեւ պիտի ազիտացիական [քարոզչական, խռովարարական] բնաւորութիւն ունենան, որ զարթեցնեն այն տեղերի ժողովուրդներին, որոնք մինչեւ այժմ յեղափոխութեան վերաբերմամբ անտարբեր են մնացել։ Եթէ այդպէս է, ապա հակասութիւն կը լինի եթէ ցոյցերը կապենք մեր ապստամբական չարժումների հետ։ Ցոյցերը կ'ունենան նաեւ այն բնաւորութիւնը, որ կը հեռացնեն կառավարութեան ուշադրութիւնը մեր կենտրոնացման վայրերից։*

Մադումեան.— *Ցուցական ծրագիրը մեր գործունէութեան մէջ եղել է ամենանորոշ կէտերից մէկը, թէեւ հակառակը պէտք է լինէր։ Ընկ. Մինասեանի առաջարկած ծրագրում որոշ ձեռնարկի հարց չկայ։ Այն բոլոր բարի ցանկութիւնները, որ նա յայտնեց, կը մընան միայն արձանագրութիւնների մէջ։ Թող նա մեր առաջ դնէ որոշ առաջարկ՝ ի՞նչ ցոյց, ի՞նչպէս եւ ո՞րտեղ անել։ Այս նիստում մենք դա պիտի որոշենք, թէ ո՞րտեղ մենք կարող ենք մի բան անել։ Տարաբախտաբար Պոլսում եւ Զմիւռնիայում մենք պիտի բախենք մեծ դժուարութիւնների, այն բոլորից յետոյ, ինչ որ այնտեղ կատարուել է։ Հարկաւոր են որոշ նոր ձեռնարկներ։*

Վռամեան.— *Ես չեմ հաւատում, որ ապստամբութիւնը եւ ցոյցը իրար հետ գնան. մինը դրանցից մեր կամքից կախուած է շատ քիչ։ ցոյց կարող է ամէն րոպէ պայթել, այն ինչ ապստամբութիւնը կապուած է շատ պայմանների հետ։ Այս Ընդհանուր Ժողովը պիտի իրրեւ սկզբունք ընդունէ, որ ցոյցը չկապուի ապստամբութեան հետ. ցոյցը միայն թէ չպիտի վնասէ ապստամբութեան. ան պիտի արթնացնէ թուրքերին, քիւրտերին եւ եւրոպական միջամտութիւն առաջ բերէ։ Ցոյցը պիտի լինի ազատ եւ անկախ գործունէութիւն եւ նպատակ պիտի ունենայ վնասելու եւրոպացի տնտեսական եւ քաղաքական չահերին։ Միայն [զուտ] տնտեսական չահերին տուած վնասները մենք չատ անդամ ստիպուած ենք վճարել մեր գրպաններից։ Մենք պիտի նաեւ նկատի ունենանք քաղաքական չահերը. պիտի ստիպենք Եւրոպային՝ միջամտել որեւէ տեղ։ Բանկ-Օտտոմանի ցոյցի նպատակն էր, ոչ այնքան այն, որ եւրոպացիներին մի քանի միլիոն վնաս տանք, այլ անարիւն առաջ բերենք, որ միջամտութիւն լինի։ Մենք պիտի Թոյլ չտանք, որ եւրոպական չահերը ծաղկին, այլ մեր ձեռնարկներով չարունակ պիտի վտանգենք։ Ուրեմն եւ ցոյցը պիտի լինի մեր եւրոպական պրոպագանդին լրացուցիչ. Pro Armenia՚ն քիչ է։ Մեր ներքին նահանգների վիճակը մենք չարունակ պիտի ներկայացնենք մեր մարմինների միջոցով եւ ոչ թէ միայն «Դրօշակի»։ Ցոյցը կը կապուի սրա հետ։ Մենք նաեւ պիտի օգտուենք Թուրքերի տրամադրութիւնից, մեր մամուլում ունենանք Թրքերէնի բաժին։ — Տեառրը եւ ցոյցը չէ կարելի իրարից բաժանել. կան տեառրներ, որոնք ինքնըստինքեան ցոյց են։ Ցոյցը չպիտի չուտով մարի, նա պիտի լինի յաջորդական. դրա համար Ցուցական Մարմնի մէջ պիտի մտցնել նաեւ միջազգային տարրեր, ոչ թէ մարմիններ։ Ցուցական Մարմինը պիտի լինի բաժիններով, որ եթէ մի խումբը վտանգուեց, նրա տեղը անմիջապէս անցնի միւսը։*

Մաշուր.— *Նկատում է, որ Ժողովը սկսում է այնպիսի խնդիրների անցնել, որոնց մասին մենք դեռ սկզբունքային որոշում չենք առել։ Օրինակ խօսում են եւրոպական միջամտութեան մասին, առանց խօսած եւ որոշած լինելու, թէ ո՞րքան մենք, այսուհետեւ, եւրոպայի միջամտութեան վրայ յոյսեր պիտի ունենանք եւ ըստ այնմ անենք մեր չարժումները։ Ես դարձեալ կրկնում եմ, որ մեր ընդունած Օրակարգը սխալ է, որ մենք առաջ ծրագրի հարցը պիտի որոշենք եւ ապա անցնենք ձեռնարկների մշակման։*

Ժողովը մտքերի կարճ փոխանակութիւնից յետոյ որոշում է չարունակել արդէն մի անգամ ընդունած Օրակարգը։

Սեպուհ.— *Մենք ընդունեցինք, որ տեառրը միջազգային խմբի ձեռքով կազմակերպուի, այժմ ասում են, որ ցոյցն էլ միջազգային անենք։ Մեր յեղափոխութիւնը զուտ հայկական գործ է, ի՞նչպէս կարող ենք մեր ցոյցերը միջազգային անել, կամ ի՞նչպէս կարելի է ցոյցը կապել ապստամբութեան հետ։ Ապստամբութեան նախապատրաստութիւնները կարող են չատ երկար տեւել, իսկ ցոյցը պիտի յաճախակի հնչեցնէ մեր ըղձքը եւ Երկրում անարխիա [անիշխանութիւն] առաջ բերէ։ Ի հարկէ, ճիշդ է որ զգոյշ պէտք է լինենք, որ կոտորածներ առաջ չգան մեր ցոյցերի պատճառով, բայց եւ առանց արիւնի ոչինչ չի լինի։*

Ստեփանեան.— *Դեռ անցեալ Ընդհանուր Ժողովին է որոշուած եղել, որ ցոյցեր կազմակերպենք. այժմ նորից այդ հարցին ենք գալիս բայց չենք ասում, թէ ի՞նչ անենք եւ ո՞րտեղ կազմակերպենք։ Որոշ կերպով դրէք ցոյցի յատակագիծը, որ կարողանանք իմանալ, թէ մենք միայնակ կարո՞ղ ենք կազմակերպել դա, թէ պէտք է միջազգային անենք։ Չէ կարելի, որ տեառրը միջազգային լինի, իսկ ցոյցը հայկական։ Ի՞նչպէս վնասենք եւրոպական չահերին։ Եթէ պետութիւններից մէկի չահերին դիպչենք, դրանով օգնած ենք լինում միւսի չահերին եւ նրա ձեռքին գործիք դարձած։ Պէտք է պարզ ասէք, որ իմանանք, թէ պետութիւններից որի՞ դէմ ցոյց պիտի լինի եւ որի՞ց պէտք է օգնութեան յոյս ունենանք։*

Զաւրեան.— *Ես ցաւելով նկատում եմ, որ մեր 16 տարուայ գործունէութիւնը մեզ չէ ուղղել, եւ մենք դեռեւս տարուում ենք նոյն ցնորքներով, որ մենք իբր թէ կարող ենք որեւէ վնաս տալ եւրոպական չահերին։ Եթէ մենք մինչեւ անգամ Բանկ-Օտտոմանը օդը ցնդեցընենք, մի՞թէ դրանով վնասած կը լինենք եւրոպացիների չահերին, թէ՞ ընդհակառակն, նրանք իրենց ուժը աւելի մեր դէմ կ'ուղղեն, որ մեզ Թոյլ չտան նոյնանման քայլեր անելով իրենց խանգարել։ Գամ եթէ մենք մի երկաթուղային կամուրջ պայթեցնենք, որը կարելի է երկու օրում վերաշինել, մի՞թէ դրանով վնասած կը լինենք եւրոպացիներին։ Որտեղի՞ց է մեզ այդքան ինամիտ [ուժանակ], այդպիսի փորձեր անելու համար։ Միթէ բաւական չէ՞ թափուած արիւնը, որ եթէ միջամտութիւն հնարաւոր լինէր, արդէն տեղի կ'ունենար։ — Ես ասում եմ, որ ամենից առաջ մեր ծրագիրը պիտի վերաքննել, ապա միայն նոր ձեռնարկներ նախագծել։*

Շահխաթունեան.— *Ես նկատում եմ մի խոչոր հակասութիւն։ Տեառրի մասին մեծամասնութիւնը մտածում էր, թէ նա միջազգային պիտի կազմակերպուի. հիմա ասում են, որ ցուցական գործողութիւնն էլ պէտք է դրուի միջազգային հողի վրայ։ Եթէ մեր ցուցական գործողութիւնները ուղղուած պէտք է լինեն միայն Թուրք կառավարութեան դէմ, այդ դէպքում կարիք չկայ դրանց տարբերել տեառրից։ Իսկ եթէ դրանք միջպետական նշանակութիւն պիտի ունենան, եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու համար, ի՞նչպէս կարող է այդ դէպքում Թուրք յեղափոխութիւնը միանալ այդ ցոյցերին. ինչո՞ւ նա պիտի ցանկայ եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրել Թուրքիայի վրայ։ Դրանց դասը ներքին է, ուղղուած է իբրեւ կառավարութեան դէմ։ Ես դարձեալ պնդում եմ, որ թէ՛ տեառրը եւ թէ ցուցական գործունէութիւնը պիտի միանգամից պարզել, — արդեօք դրանք զուտ հայկական յեղափոխութեա՞ն համար են, թէ ամբողջ Թուրքիայի։ Պէտք է վճռել, թէ ի՞նչ է Հայկական Դատը, — զուտ հայկակա՞ն, թէ Թուրքիայի դատ։*

Խահիկեան.— *Ես չհասկացայ ընկ. Մինասեանի ռեֆերատի [զեկուցման] իմաստը։ Ցուցական գործունէութեան մասին խօսելիս, նրան կամ պէտք է քէօրիապէս [տեսականապէս] հիմնաւորել կամ կոնկրէտ [չօշափելի] առաջարկներ անել։ Նա դրանից ոչ մինը չարեց։ Նրա ռեֆերատում մի աչքի ընկնող պակասութիւնն այն էր, որ նա կանգ չառաւ մեր ցուցական անցեալ գործողութիւնների վրայ եւ չգնահատեց նրանց արժէքը։ Նա ասում է. մենք պիտի վնասենք եւրոպական չահերին, բայց նա ամենից առաջ մեր առջեւ պիտի դնէր այդ չահերի ամբողջութիւնը։ Որո՞նց չահերին պիտի վնասենք, բոլո՞ր պետութիւնների թէ դրանցից մէկին կամ միւսին, եւ ի՞նչ կը լինի դրա հետեւանքը։ Ցոյցը պիտի լինի, ասում է, ընդհանուր ապստամբական ձեռնարկների հետ. բայց դա ընդհանուր խօսք է եւ գործնական ոչինչ չէ պարունակում։ Ապա ուզում եմ լրացնել Զաւրեանի խօսքը — մեր դիւանը լաւ տեսնում է, որ այս կերպ աչխատանքը չարունակելը անպատուղ է, բայց այնուամենայնիւ չենք փոխում մեր Օրակարգը։*

Վահագն.— *Եթէ մենք անպատճառ եւրոպական միջամտութիւն պիտի առաջ բերենք, դա կը լինի միայն նրանց չահերը վնասելով։ Հենց այն պատճառով, որ հայ ժողովուրդը քանի գնում՝ Թուով պակասում է, մենք խստ միջոցների պիտի դիմենք, Թող դրանից վնասուին բոլոր եւրոպացիների չահերը. մենք կ'այրենք մաքսատներում եղած բոլոր ապրանքները, նրանց նաւերը կը պայթեցնենք. Թող նրանք հասկանան, որ երկրի անկարգութիւնից նրանք էլ են վնասւում։ Պէտք է նրանց հասկացնենք, որ չենք Թոյլ տայ, որ մի չտ մեր արիւնը չահագործեն։ Մենք ամէն միջոց պէտք է անխնայ ի գործ դնենք։ Չենք կարող երկար սպասել, որովհետեւ, միեւնոյն է, մի քանի տարի յետոյ երկիրը մոխիր պիտի դառնայ։ Երկիրը պարպւում է երիտասարդութիւնից։ Ցոյցերը չենք կարող կապել ապստամբութեան հետ։ Ցոյցը փափուկ [?] գործ է, օրինակ մի ական, մի դատաստութիւն եւն. հեշտութեամբ կարող է վիժել։ Մենք այժմ այդ մասին պիտի մտածենք, Թէ ի՞նչ անենք, որ եւրոպական միջամտութիւն յառաջ գայ։*

Սեպուհ.— *Մեր բնաբանը պիտի լինի չխնայել նրանց, որոնք կարող են հայ ժողովուրդի բախտը փոխել եւ չեն ուզում փոխել։ Երկրում ժողովուրդը ապստում է, ճիշդ է, բայց դա նոր չէ սկսուել, 500 տարի է։ Մենք պէտք է ցոյցեր անենք չարունակ, որ դրանով մեր բողոքի ձայնը բարձր հնչէ։*

Տաճատ.— *Մեզ առաջարկում են ցոյցեր կազմակերպել, եւրոպացիների չահերին վնասելու համար։*

Բայց մենք չգիտենք, Թէ այդ տեղերում, ուր ուզում ենք ցոյցեր կազմակերպել, արդեօք ունե՞նք կազմակերպութիւն. մենք տեղեկութիւն չունենք Թէ ի՞նչ եւրոպական չհեր կան ծովափնեայ քաղաքներում: ԵԹէ մենք այդ վայրերը չուսումնասիրած ցոյցերի ձեռնարկենք, մենք ոչ Թէ եւրոպական, այլ մեր չհերին կը վնասենք:

Թուիչեան.— *կարծես Թէ Դաշնակցութեան ամբողջ անցեալը պատկերանում է այս Ընդհանուր ժողովում: Ամէն մի ժողովում խօսուել է եւրոպացիների չհերի մասին, եւ միշտ ասել ենք «ԵԹէ Եւրոպան ուզենայ»: Բայց ԵԹէ մենք այդ վնասները տանք, դրանով նպատակի կը հասնե՞նք: Եւրոպացւոց նաւերը կը գան, իրենց վնասները կը ստանան եւ յետ կը դնան: Այդպիսով մենք աւելի նպաստում ենք եւրոպացւոց չհերին եւ ոչ Թէ վնասում: Շահեր ասելով, մենք չատ աւելի խորը պիտի հասկանանք: ԵԹէ այժմ էլ նոյնպիսի ցոյցեր անենք, ինչպէս Բանկ-Օտտոմանեանն էր, էլի հեռագիրները կը դղրդան ամէն կողմ, բայց ոչինչ չենք շահի. եւրոպացիք կը պան, իրենց ուզած կոնցեսիաները [դիջումներ, յատուկ արտօնութիւններ] կը ստանան եւ յետ կը դնան: Ասաջարկս է.— ծոյց ասելով մենք պիտի հասկանանք խոշոր մասսայական տեռորներ: Աւելի մեծ նշանակութիւն ունի 10 փուչա սպանները, քան 100 նաւ պայթեցնելը: Մի կիղեքչի տեռորի տալը աւելի կ'ազդէ, քան 20 միլիոնի եւրոպական ապրանք այրելը: Ծուցական ձեռնարկներ այն ձեւով, ինչպէս հասկանում են, չպիտի անենք, այլ՝ տեռորներ: — Մենք աչքի առաջ պիտի ունենանք Թուրք մասսայի վերաբերմունքը, որովհետեւ երբ եւրոպայի մի 10 նաւ դայ Գոլիս, Թուրք ամբոխի չարժումը կարող է ուղղուել մեր դէմ եւ ոչ Թէ Մինասեանի ցանկացած ձեւով այդ չարժումը յօդուտ մեզ կը լինի:*

Զեքպեան.— *Երբ այս առաջարկած հարցերի լուծման մէջ դժուարութիւնների ենք հանդիպում, պատճառը աչխարհահայեացքների տարբերութիւնն է, որովհետեւ մենք այժմ ունենք մի Դաշնակցութիւն եւ երկու աչխարհահայեացք: ԵԹէ այս Ընդհանուր ժողովը ուզում է մի լաւ բան անել, նա պիտի կարեւորութիւն տայ ընկերների կարծիքին, երբ նրանք խօսում են Տաճկահայաստանի եւ կովկասի դործունէութեան մասին: — Տաճկահայաստանի համար կարող ենք ասել, որ «արլչ օրհասականք հզօրագոյնս կռուեն»: ԵԹէ կան բաներ, որ ընկերներից ոմանց տարօրինակ են Թուում, դա նրա համար է, որովհետեւ Տաճկաստանը այնպիսի վիճակի մէջ է, որ այնտեղ միշտ հակազդեցութիւն կը լինի: Կոտորածն ու ոչնչացումը միշտ կան, մինչեւ անգամ ամենախաղաղ ժամանակ: Այնպէս որ լաւ է երկու օր առաջ մեռնել, քան բազմաթիւ չարչարանքներ կրելուց յետոյ: Բանկ Օտտոմանի ցոյցով մենք եւրոպացիների չհերը չվնասեցինք. մենք օդը չհանեցինք Բանկը: Մենք այդ պիտի արած լինէինք, որ կարողանայինք ասել, Թէ եւրոպացիք կը միջամտե՞ն, Թէ ոչ: Քանի որ Թուրքիան եւրոպական կոնտրոլի տակ է, այդ պատճառով է, որ մենք ասում ենք, Թէ եւրոպացիների դէմ պիտի ուղղենք ցոյցերը: — Մինչեւ անգամ պէտք է այս ժողովը որոչէ վեց պետութեանց դեսպանները սպաննել, — այսպիսով միայն կը լինի միջամտութիւն: Ռէժի, Բանկ, դեսպաններ, մեծ քաղաքացիներ, գերմանական երկաթուղին, ամերիկեան կոլէջները, եւն., ամէնը ինչ որ վահագն ասեց, պիտի մնասուն մեր ցուցական գործունէութիւնից: ԵԹէ դրանից յետոյ էլ մի հետեւանք չեղաւ, այն ժամանակ միայն իրաւունք ունենք ասելու, որ եւրոպան չէ միջամտում: Իսկ այժմ քանի մենք դեռ այդ չենք արել իրաւունք չունենք հակառակը պնդելու: Մենք պէտք է հիւանդին տանք վերջին դեղը, որը նրան կա՛մ կը փրկէ կամ կը մեռցնէ:*

Վռամեան.— *Ոմանք ցաւ են յայտնում, որ եւրոպական միջամտութիւն չէ եղել եւ առաջարկում են, որ այլեւս դա նկատի չունենանք: Բայց այդ կապ ունի 1898ի Ընդհանուր ժողովի հետ, որ աչխատած է ձգտել եւրոպական միջամտութիւն առաջ բերելու: Քանի դեռ այդ որոչումը չէ փոխուած, մենք պիտի ձրդենի դեռ այդ ուղղութեամբ: — Ընկերները խօսեցին Բանկ Օտտոմանի ցոյցի մասին, որի հետեւանքների մասին տեղեկութիւն չունին: Բանկ Օտտոմանի դէպքը քաղաքական միջամտութեան տեսակէտից ունեցաւ իր հետեւանքը, որը մթութեան մէջ է, չատերին անծանօթ, բայց ես ուսումնասիրել եմ: Դրա հետեւանքները եղան 1) Ֆրանսական դեսպանը որոչել էր ղրահանաւեր բերել տալ, եԹէ մի երկրորդ դէպք էլ կրկնուէր, 2) կար մի մեծ ծրագիր, որ Գոլսի դեսպանները սկսան կազմել 1896ին, իրենց դաղտնի ժողովում, ուր քարտուղարներն էլ չէին մասնակցում, ուր բարենորոգումների մի ծրագիր էր մչակուել, որը ու. 1897ին ստորագրուեց: Այդ մասին հրատարակուեց «Թայմզ»ի մէջ, 3) Սոլզբերիին մի ընդարձակ տեղեկագիր կազմեց, ուր ասում է, որ պէտք է Թուրքիայի մասին մի որոչում անել: Բայց ռուսները հակառակեցին: Ուրեմն Բանկ Օտտոմանից յետոյ եղել են դիւանագիտական դաղտնի որոչումներ եւ դրանք անմիջապէս իրականացած կը լինէին, եԹէ չլիներ Կրետէի ապստամբութիւնը, Վենեուելլայի խնդիրը եւ չին-ճապոնական պատերազմը: ԵԹէ մենք այնուհետեւ էլ մի դործ անէինք, համոզուած պիտի լինէինք, որ միջամտութիւն կը լինէր. միայն Թէ դա չղուդիպէր մի այլ դէպքի, որ գրաւել էր եւրոպայի բոլոր ուչադրութիւնը: Ինչպէս մակեդոնացիների դէմ քայլեր չարեց Եւրոպան, երբ նրանք Միսս Ստոնը առեւանգեցին եւ երկաթուղիները վնասեցին, նոյնպէս եւ մեր դէմ չի լինի, եԹէ մենք նրանց հարուածենք: Համօմանեան յեղափոխութիւն կարող է լինել, բայց դա այնքան հեռու ապադայի խնդիր է, որ մենք տաճկահայերս չենք կարող չբռնել դաշնադրերից եւ*

մեր առանձին հայկական Հարցը չպահանջել: Մենք մեր իրաւունքները պիտի պահանջենք ամէն միջոցներով. մեզ համար աւելի լաւ է, որ մի հազար մարդ էլ կորցընենք, քան կամաց-կամաց քայքայուենք: Ուրեմն մենք նկատի պիտի ունենանք քաղաքական չհերը եւ մեր ցոյցերը տեւական անենք:

Ռոստամ.— *Ծուցական որեւէ գործի վրայ մենք կարող ենք տարբեր տեսակէտներից համաձայնել.— մինը կարող է մի որեւէ կոնկրէտ ձեռնարկի վրայ նայել զուտ հայկական տեսակէտից, իսկ մի ուրիշը՝ համաթուրքական: Մեր այդպիսի ձեռնարկներին կարող են մասնակցել Թուրքերն էլ: 96ի դէպքից յետոյ տաճիկ յեղափոխականները մեզ մօտեցան եւ ցաւում էին, որ մեր դրած պահանջները միայն հայկական էին: Երիտասարդ տաճիկները արդէն համոզուել են, որ ուզեն չուզեն՝ Եւրոպան պիտի միջամտի. բայց նրանց մի մասը ասում է՝ Քող եւրոպացիք մեզ ազատութիւն տան, եւ սպա հեռանան ու այլեւս չմիջամտեն մեր գործերին: Մինչեւ անգամ Ահմէտ Ռիզան էլ ասում է, որ եւրոպական միջամտութիւնը պիտի լինի, բայց Միդհատ փաչայի սահմանադրութիւնը իրագործելու համար: ԵԹէ մինչեւ անգամ մենք համոզուենք որ առանց համաթուրքական չարժման չենք կարող մեր դործը տանել, այնուամենայնիւ մենք չենք ձուլուելու Թուրքերի մէջ: Մենք այնուամենայնիւ պիտի յենուենք մի որոչ տարրի վրայ: Մինչեւ անգամ ԵԹէ մենք ինքնավարութիւն ունենանք, մենք պիտի ձգտենք, որ համաթուրքական յեղափոխութիւն լինի, որպէսզի մեր ձեռք բերածը ապահովուի: Ֆինլանդիան մեզ օրինակ, որը համարեա ինքնավար էր, բայց չկարողացաւ այդ վիճակը պահել, որովհետեւ ամբողջ պետութեան մէջ իչխում էր բռնակալութիւնը. կամ հայկական Սահմանադրութիւնը Թուրքիայում, որ ոչնչացաւ, որովհետեւ Թուրքիան ինքը՝ դեռեւս չատ յետ էր այդպիսի կարգերից: Դաշնակցութիւնը, իբրեւ հայ ժողովուրդի յեղափոխական ձգտումների արտայայտիչ, պիտի յենուած լինի հայերի վրայ, բայց եւ պիտի ձգտի, որ առաջ գայ համաթուրքական յեղափոխութիւն: Թէեւ 96ին մենք դրինք միայն հայկական պահանջներ, բայց հետեւանքը եղաւ ընդհանուր Տաճկաստանի ռեֆորմների խնդիր եւ ոչ միայն հայկական: Բուն հայկական գաւառներից դուրս եղած ցոյցերը անպատճառ պիտի ընդհանուր բնաւորութիւն կրեն: Մենք պիտի ցուցական գործունէութեան այդ բնաւորութիւնը տանք, որպէսզի չարժենք անտարբեր մասսաներին: Իսկ հայկական գաւառներում, ցոյցերը հայկական պիտի լինին:*

Զաւրեան.— *Ընկ. Վռամեան չատ լաւ պատկերացրեց, Թէ ինչ ազդեցութիւն է ունեցել Բանկի դէպքը եւրոպայի վրայ: Բայց երբ հարցը եկաւ գործնականապէս օգնելուն, այն ժամանակ իմացանք որ անգլիական նաւերը չեն կարող բարձրանալ հայկական լեռների վրայ: Ռուսաց կայսրը, Վիեննայում եղած ժամանակ, ասում է՝ Թէ յայտնեցէ՛ք Սուլթանին, որ այդ հայերը ինձ էլ չատ են ձանձրացրել: Վիլհելմ կայսրը ասում է՝ Հայաստան չկայ: Մենք իրականութեան մէջ այս ուղղութիւնն ենք տեսնում միայն: Աաել Թէ, «աւելի լաւ է երկու օր առաջ մեռնել, քան այսքան տանջուել» — սա միայն զեղեցիկ խօսք է. հարցրէք ժողովուրդին, Թէ նա էլ ուզո՞ւմ է երկու օր առաջ մեռնել:*

Շահխաթ-ուլեան.— *Ես չեմ կարող կանգնել ընկ. Զելալեանի տեսակէտի վրայ, Թէ փորձենք, մի անգամ մնասենք եւրոպայի չհերը, տեսնենք նա կը միջամտո՞ Թէ ոչ. դա նշանակում է գործողութիւնների դնահատութիւն չանել: Վռամեանի պատմածները չեն ապացուցանում, Թէ այն ամէնը ինչ որ ծրագրւում էր Բանկի դէպքից յետոյ, արդեօք յօգուտ մե՞ր էր լինելու, Թէ՞ պետութիւնները ծրագրում էին ուժեղացնել Օսմանեան կայսրութիւնը, որ զսպէ անարխիստներին [անիչխանականները, յեղափոխականները]: — Ռոստոմն ասում է, որ մի կողմից սպասենք Հայկական Դատի լուծումը եւրոպայից, իսկ միւս կողմից ուժ տանք Թուրքիայի յեղափոխական չարժմանը: Թէեւ մենք կազմակերպական մտքով հայկական կուսակցութիւն ենք, բայց դա չէ նշանակում, որ մենք երկու ճանապարհով էլ պիտի ձգտենք մեր նպատակին հասնել: Հենց այն՝ որ մենք Թուրքիայում հայկական կուսակցութիւն ենք, դա այլ բան է, քան Ռուսաստանում: Թուրքիայում Հայկական Դատը ունեցել է իւր ուրոյն ծագումը եւ ընթացքը, իսկ Ռուսաստանում նա մի մասն է Ռուսաստանի յեղափոխութեան:*

Միմասեան.— *Ծոյցի մասին խօսելով մենք հայկական ցոյց նկատի ունենք: Մենք Թուրքերի հետ կը միանանք, երբ նրանք կ'ընդունեն մեր ազգային ուրոյն պահանջները: Դրա համար է, որ մենք ընդհանուր օսմանեան յեղափոխական մարմինների կոնդրէ [համաժողով] պիտի կազմենք, որ Թուրքերը իրենց դղալով միւս ազգութիւնների դէմ աց, պատրաստուեն կատարել նրանց ազգայնական պահանջները: — Տեռորը կապ չունի ցոյցի հետ: Ծոյցը պիտի նպաստէ ապստամբական չարժման եւ ոչ Թէ նպատակ ունենայ Թմրած տարրերը զարԹեցնելու: Մեր ցոյցերին կարող են հակառակ լինել երիտասարդ Թուրքերը, որոնք չեն ուզում, որ մենք առանձին իրաւունքներ ունենանք. Թուրքերի միայն Թոյլ մասն է, որ ցանկանում է եւրոպայի միջամտութիւն յառաջ բերել. իսկ մեծ մասը ազգայնական հակումներ ունի եւ դէմ է դրան: Մինչեւ անդամ Սաբահէդդինը համոզուած է, որ եւրոպական միջամտութիւնը մնասակար է Թուրքիայի համար: — Ասում են, որ ես կոնգրէս առաջարկ չարի: Ի՞նչ լինէր այդ առաջարկը: — Դա գերմանական մտքի աղդեցութեան հետեւանք է, որ պահանջում է մտածողութեան մէջ միշտ հետեւողական լինել, Թէկուզ հակառակ ի-*

բական փաստերին: Խոահակիանը չփոթում է տակտիկը ընդհանուր խնդրի հետ: Տակտիկը իմ բանս չէ, ես միայն դնում եմ ցոյցի քաղաքական կարեւորութիւնը, եւ ես նշանակեցի չորս քաղաքներ, որտեղ իմ կարծիքով պէտք է ցոյց անել, դա կարծեմ կոնկրէտ է: Տակտիկի մասին չեմ խօսում, քանի մենք դեռ չենք խօսել մեր ընդհանուր կազմակերպութեան մասին: — Ապստամբութիւնը անհրաժեշտ է ցոյցի համար. երբ ապստամբութիւնը վիժեց, ցոյցը պիտի մէկտեղ գայ. ապստամբութիւնը մի կռուան է: Տաճկաստանը նկատուած է եւրոպական չահերի հրապարակ, եւ նա [Եւրոպան] ամէն մի դէպքում ստիպուած է միջամտել: Օրինակ՝ բանկի ցոյցի ժամանակ թղթերի արժէքները կան. կարծիք կար, որ եթէ 5 օր ցոյցը չարունակուէր, հայկական հարցը լուծուած էր. բայց ի՛նչ արած, որ նա ընդամէնը մի օր տեւեց: — Թոփչեանը միշտ կըրկնում է, թէ եւրոպան հայկական հարցին չմիջամտեց: Բայց մի դար չարունակ եւրոպան Տաճկաստանի ժողովուրդներին ազատել է, նա այժմ ուզում է մեր հարցին միջամտել. Անգլիան անկեղծ էր իւր քայլերի մէջ եւ Սուլթանը նամակ գրեց Սոլզբիւրիին եւ խոստացաւ բարենորոգումներ անել. Սոլզբիւրին այդ նամակը կարդաց պարլամենտում: — Իրը թէ եւրոպան ազգերին խաղացնում է իւր ձեռքին. դա սխալ չէ: Եւրոպան ուզում է իւր չահերը եւ որոշ պետութիւնների համար մեր ազատութիւնը ձեռնտու է: Անգլիա ամէն մի անցքի հետեւում է մանրամասն եւ արձանագրում, որպէսզի ամէն մի դէպքում կարողանայ ասել, որ իր պարտականութիւնը կատարել է եւ միջամտել: — Մեր անյաջողութեան միակ պատճառը այն է, որ մեր չարժումները յարատեւութիւն չունեն, նրանք վաղանցուկ են: Եթէ մեր չարժումները երկար տեւեն, եւրոպան անմիջապէս առիթ կ'ունենայ միջամտելու: Ես համամիտ եմ, որ միշտ պիտի ցոյցեր անենք, որ ուշադրութիւն դրաւենք: Բայց դրանք չարունակ քայքայում են երկիրը. եթէ մենք չունենանք զօրեղ կռուան՝ ինչպէս ապստամբութիւնը, միայն ցոյցերը կը քայքայեն մեզ:

Հինգ րոպէ ընդմիջումից յետոյ ընկ. Բարսեղեան Տեսուչի յանձնաժողովի կողմից ներկայացնում է բոլոր անդորների ամփոփումը: Ժողովը նկատում է, որ այդ ամփոփումը դեռ պակասում է, ուստի յանձնարարում է պակաս տեղեկութիւնները էլ առնել եւ ամփոփ ու լրիւ դարձնել:

53ՐԴ ՆԻՍՏ (27 Մարտ, առաւօտ)

Նախագահում է՝ Թոփչեան:
Ներկայ են 24 ժողովական:
Բացակայ են՝ Սեպուհ, Ամբարեկ (հիւանդ):

Նախագահը քուէարկութեան է դնում ապստամբական ձեռնարկների բանաձեւերը:

1) *Թոփչեան – Մալումեան – Զրամի բանաձեւը առանում է 10 ձայն Թէր, 3 դէմ, 8 ձեռնպահ:*

2) *Զարդարեան – Ռոստոմի բանաձեւը առանում է 5 ձայն Թէր, 8 դէմ, 8 ձեռնպահ:*

Նախագահը յայտնում է, որ բանաձեւերից ոչ մէկը ձայների 2/3-ի մեծամասնութիւն չէ առացել, ուստի եւ չեն կարող ընդունուած համարուել:

Ռոստոմ առաջարկում է բանաձեւերը քուէարկութեան դնել մաս մաս, որովհետեւ կան չառերը, որ որեւէ բանաձեւի ձայն չեն տալիս, որովհետեւ մի կէսի հետ համաձայն չեն: Ապա ձայների մեծամասնութեամբ անցած մասերը միացնել եւ կազմել մի բանաձեւ:

Մալումեան առաջարկում է չառ ձայն առացած, այսինքն առաջին բանաձեւի վրայ համաձայնութեան գալ, նրան մի քանի փոփոխութիւնների ենթարկելով:

Ռոստոմ առաջարկում է ամենից առաջ քուէարկել յատկապէս սկզբունքային հարցը, թէ ո՞ւմ են յանձնում որոշել՝ թէ այսինչ մամլոնին ապստամբութիւն կարեւոր է, երկրի Գատասխանատու Մարմի՞ն, թէ Ընդհանուր Ժողովին կամ Խորհրդին:

Նախագահը քուէարկութեան է դնում հետեւեալը.

«Ժողովը գտնում է, որ մինչեւ յառաջիկայ Ընդհանուր Ժողովը ոչ մի ապստամբական ձեռնարկ չէ կարելի սկսել Թրքահայաստանում: — Այս առանում է 13 ձայն Թէր, 9 դէմ, 1 ձեռնպահ:

Նկատելով որ այս էլ չանցաւ ձայների մեծամասնութեամբ, ոմանք ժողովականներից ձայն են բարձրացնում, թէ հարցը մութ է, Թոյլ տրուի ըստ էութեան խօսելու:

Քուէարկւում է այս առաջարկը եւ ձայների մեծամասնութեամբ վճռւում է չարունակել վիճաբանութիւնները ըստ էութեան:

Մադումեան.— Երբ երկրում իրերի դրութիւնը նորմալ է եւ հարց է դրւում, թէ պէ՞տք է ապստամբութիւն անել. այդ դէպքում, մենք ասում ենք՝ ոչ, պէտք է սպասել մինչեւ յառաջիկայ Ընդհանուր Ժողովը, որ կը լինի երկու տարի յետոյ, գուցէ եւ մի տարի յետոյ: — Ես առաջարկում եմ քուէարկել հետեւեալը.— «Ընդհանուր Ժողովը թոյլ չէ տալիս ապստամբական չարժում անել մինչեւ յառաջիկայ Ընդհանուր Ժողովը»: Եթէ այս անցաւ, ապա կը դնենք քուէարկութեան «անակնկալ դէպքերի» խնդիրը: Վերջին դէպքում պիտի խորհրդակցել Խորհրդի հետ, եւ չսպասել Ընդհանուր Ժողովին:

Միհնասեան.— Մենք ձեռնպահ մնացինք, որովհետեւ մենք ընդունում ենք ապստամբութեան հարցը իբր raison d'être [գոյութեան իմաստ] մեր յեղափոխութեան: Մենք նկատի ունենք երկրի երկիւղալի պայմանները եւ մենք ասում ենք, որ սկսենք անյապաղ կերպով պատրաստուել այդ ապստամբութեան գործին. իսկ եթէ անակնկալներ կը լինեն, որոնք կը վիժեցնեն գործը, աւելի լաւ է այն ժամանակ մի բան անել: Ապագայ Ընդհանուր Ժողովի անունը չյիշենք մեր բանաձեւերի մէջ. դա կը լինի մի անվստահութիւն դէպի այս Ժողովը: Ապա մենք դեռ չենք խօսել Գատասխանատու Մարմնի մասին, թէ նա ո՞ւրան է լինելու եթէ ներսը:

Ստեփանեան.— Գատասխանատու Մարմինների մասին մենք դեռ չենք խօսել, թէ ո՞ւմ առաջ են նրանք պատասխանատու, ո՞րն է նրանց պատասխանատուութեան սահմանը, ո՞րն է անակնկալը: Մենք ասում ենք, որ մինչեւ Ընդհանուր Ժողովը մենք իրաւասու չլինենք ապստամբական չարժում յառաջ բերելու, իսկ յետոյ Թող վճռի Ընդհանուր Ժողովը:

Վարդան.— Առաջին կէտը պարզ է, որ երբ երկիրը նորմալ վիճակի մէջ է՝ ապստամբութիւն չպիտի լինի. իսկ երկրորդը պարզ չէ, — որո՞նք են անակնկալները, Թող Թուեն:

Զաւրեան.— Կարծում եմ, որ կան մի քանի քիւրիմացութիւններ. առաջին բանաձեւում, օրինակ, ասուած էր, որ ապստամբութիւնը պիտի լինի այն ժամանակ, երբ ժողովուրդը իրեն պատրաստ զգայ: Իսկ մանակ, երբ ժողովուրդը իրեն պատրաստ զգայ: Իսկ միւսները, որ առաջարկում են անակնկալների դէպքում ապստամբութիւն առաջ բերել, դրանով բոլորովին փոխում է առհասարակ հայեացքը ապստամբութեան վրայ:

Արամ.— Ապստամբութեան մասին խօսելիս, պիտի չէշտել, որ այսուհետեւ ապստամբութիւնը ընդհանուր լինի եւ ժողովրդական: Եթէ այսպէս է, ապա ուրեմն հարկաւոր է ժամանակ եւ պարագայ ապստամբելու համար: Եւ եթէ մենք ասում ենք, որ սպասենք մինչեւ յառաջիկայ Ընդհանուր Ժողովը, դա այն նպատակն ունի, որ պատրաստուենք. քանի որ պատրաստութիւն չունենք, պիտի չչարժուենք. իսկ երբ կ'ունենանք, այն ժամանակ կարելի է որոշել ժամանակը:

Վռամեան.— Ապստամբութիւն ասելով անպատճառ չպիտի հասկանանք, թէ պիտի սպասենք մինչեւ մենք պատրաստ լինենք: Թէ երբ պատրաստ կը լինենք, դա յայտնի չէ, դա կախուած է ոչ թէ միայն մեզնից, այլ նաեւ մեր դիմացինից: — Անակնկալները են, օրինակ, Սուլթանի մահով առաջ գալիք խառնակութիւնները, Թուրք-պարսկական պատերազմը եւն: Մենք չենք կարող ասել, թէ ինչքան է մեզ հարկաւոր, որ ասենք թէ պատրաստ ենք: Անակնկալների դէպքում մենք չենք ասում, թէ անպատճառ ապստամբենք, այլ որեւէ ակտիւ քայլ անենք: Մինչեւ յառաջիկայ Ժողովը սպասելու բանաձեւին ես հակառակ եմ, որովհետեւ դրանով մենք դէմ դնացած կը լինենք, մեր այն որոշման, թէ դինուենք եւ պատրաստուենք: Սա հոգեբանական երեւոյթ է, երբ մարդիկ պիտին, որ մինչեւ յառաջիկայ Ընդհանուր Ժողովը չպիտի չարժին, միշտ դանդաղում են իրենց պատրաստութեանց մէջ, ասելով որ դեռ ժամանակ կայ: Մենք այն ժամանակ չենք մտածի վաղուան անակնկալների մասին: Համամիտ եմ, որ նորմալ պարագաներում ապստամբութիւն չանենք: Բայց պատրաստութեան չահը պահանջում է, որ այդպիսի տարտամ սահմանափակումներ չմտցնենք:

Թոփչեան.— Մենք կարծես արհեստական կերպով ուզում ենք մեզ հարկադրել, որ աչքաթենք. կարծես Թէ գիտակցաբար չպիտի պատրաստուենք: Ապստամբութիւնը պիտի անել միայն այն ժամանակ, երբ լայն մասսաները կարող են մասնակցել եւ ոչ Թէ միայն մի խումբ ջանֆեդաներ: Անակնկալները կարող են հասկացուել օրինակ՝ մէկի համար անակնկալ է, երբ մի գիւղի վրայ յարձակւում են եւ մի քանի մարդ սպանում. մի ուրիշի համար խոշոր դէպքերն էլ անակնկալներ չեն: Անակնկալ ասելով պիտի հասկանանք միայն քաղաքական կարեւորութիւն ունեցող երեւոյթներ, իսկ մնացած դէպքերում պիտի սահմանափակել ձեռնարկները:

Ռոստոմ.— Իմ զեկուցման մէջ կար նաեւ մի կարեւոր կէտ, այն՝ որ մենք նորմալ պայմաններում ոչ մի դէպքում հնարաւորութիւն չենք ունենայ ապստամբելու: Այդ պիտի ի նկատի առնել: Կովկասում, օրինակ, մենք փորձեցինք Թէ ի՞նչ է նշանակում գործող մարմինների ձեռքերը կապել դանազան որոշումներով: Այնտեղ որոշուած էր մնալ ինքնապաշտպանութեան սահմաններում. բայց ռուս-եապոնական պատերազմը, որ փոխեց մեր գործունէութիւնը այնտեղ, մի անակնկալ էր, որը մենք երբեք չէինք կարող նախատեսել: Նոյնպէս եւ այժմ մենք չենք կարող անակնկալները նախատեսել: Անակնկալներ նշանակում են՝ խոշոր քաղաքական դէպքեր, օրինակ ներքին խլրտումներ, եւրոպական կոնտրոլ. այս բոլոր դէպքերում պիտի երկրի Գատասխանատու Մարմնին իրաւունք տալ, որ կարողանայ մի որոշ դիրք բռնել:

Մադումեան.— Մենք չենք ուզում կաչկանդել մեր երկրի ընկերների գործունէութիւնը. մենք ուզում ենք միայն մեր ընկերների մանր չարժումներ անելու ձգտմանը սահման դնել. մոցնենք այդ խօսքը, իբրեւ զըսպանակ, բանաձեւի մէջ, որ ընկերները անզգոյշ քայլեր չանեն մինչեւ Ընդհանուր Ժողովը եւ փոքրիկ ապրիմներից դրդուած չարժումներ յառաջ չբերեն:

Միհնասեան.— Անհոհեմ քայլերի դէմ չարունակ մենք ենք եղել բողոքողը. մենք միշտ ասել ենք՝ լրիւ պատրաստուել: Բայց կարող են լինել անակնկալներ, ինչպէս՝ քրտական խլրտումներ, եւ սրանք կոչ անեն միանալու իրենց: Անակնկալներ միշտ կարող են պատահել, որոնց դէպքում ստիպուած պիտի լիննենք չարժուելու: Այժմ ասում ենք, ձեռնարկենք պատրաստուելու, զօրեղ, գաղտնի եւ անյապաղ:

Մուրատ.— Երկրում գտնուող մարմինները, դեկավարելու կարողութիւն չունեն. նրանք շատ անգամ իրենց անփորձութեամբ շատ սխալներ են արել: Թող ուղարկեն երկիր խելացի, կարող ընկերներ, որոնք հսկեան կարեւոր դէպքերի նշանակութիւնը եւ կողմնորոշեն գործը:

Արամ.— Մինչեւ հիմա երկրից եկող ընկերները եղել են միշտ լաւատես. ես շատ ուրախ եմ, որ այս անգամ Ընդհանուր Ժողովը ունի երկրից եկած մի ընկեր

կեր, որ յոռետես է: Դաշնակցութիւնը միշտ եղել է գործի կուսակցութիւն, նա միշտ գործել է, երբ ան-հրաժեշտութիւն է զգացել: Օրինակ, չնայած Ցորհրդի որոշման, որ Երկրում կենտրոնացման գործը դադարեցնենք եւ սկսենք ուսումնասիրել, երբ հնարաւորութիւն ունեցանք՝ ուղարկեցինք Երկրի համար 300 հազար ռուբլի, ապրանքով եւ փողով: Գիտի նկատի ունենալ նաեւ այն՝ որ Երկրի ընկերը չէ կարող որոշել ճշդօրէն յարմար մոմենտը. չարունակ փակ կեանքը նրան ջղային է դարձնում եւ նա չատ անգամ հասարակ դէպքին չափազանցուած նշանակութիւն է տալիս: Երկրի ընկերների այս հոգեբանութիւնը պիտի նկատի ունենանք, որը կարող է արագացնել ապստամբութիւնը, եթէ որոշողը միայն իրենք լինեն: Այս պատճառով է որ ես ուզում եմ, որ Պատասխանատու Մարմինը Ցորհրդի հետ միասին որոշէ որեւէ քայլի դիմելը:

Բանաձեւերի քուէարկութիւնը Քողնում է յաջորդ նիստին:

54ՐԴ ՆԻՍՏ (27 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:
Ներկայ են 23 պատգամաւոր:
Բացակայ են Թոփչեան, Մուրատ, Աճէմեանի (Հիւանդ):

Այս նիստում ժողովը դրաււում է երկու հարցերի վերաբերեալ բանաձեւերի քուէարկութեամբ:

Քուէարկութեան են դրւում՝ ապստամբական ձեռնարկների խնդրի վերաբերմամբ առաջարկուած (նախորդ նիստերին) բանաձեւերը: Արամ – Մալումեան – Թոփչեանի բանաձեւը եւ Ռոստոմ-Զաքդարեանի բանաձեւը, փոխադարձ համաձայնութեամբ, ենթարկւում են մի քանի փոփոխութեանց եւ խմբագրւում հետեւեալ ձեւով՝

«Ընդհանուր ժողովը լսելով զեկուցումները ապստամբական ձեռնարկների մասին եւ մանրամասն բննարկելով շօշափած հարցը եկաւ այն եզրակացութեան՝ ա) որ ապստամբութիւն կարող է առաջ գալ միայն ժողովրդի լայն մասսաների մասնակցութեամբ՝ կենսական անհրաժեշտութիւնից բխած. բ) որ տոհմական-կրօնական ներկայ տնտեսական – սոցիալական եւ քաղաքական պայմանները հնարաւորութիւն չեն ներկայացնում մօտ ապագայում ընդհանուր ապստամբական ձեռնարկ իրագործելու. ուստի եւ այդպիսի ձեռնարկ ծրագրելը բոզոքելով մինչեւ վերջին պայմանների առաջ գալը, դաշնակցութիւնը իր անմիջական ու ստիպողական պարտականութիւնը պիտի համարի ծրագրի համեմատ լայն պրոպագանդ մղելով՝ 1) երկրում համապատասխան կազմակերպութիւններ առաջ բերել, զինել ժողովուրդը, առաջ բերել ռազմական կազմակերպիչ ուժեր, մեծ ջանասիրութեամբ ռազմամթերք ու հարկաւոր դրամական օժանդակութիւնը ուղարկել: 2) Գործունէութեան գլխաւոր վայրերում (բացի Վասպուրականից, Մուշ–Սասունից, Ռաչ էրզրումի, Խնուսի շրջաններում) առաջացնել կազմակերպութիւններ, նրանց շուրջը ժողովրդական լայն խաւեր համախմբելով, եւ յատուկ Գատասխանատու Մարմին այդ ամբողջ վայրի համար, որ իւր շրջանի բոլոր գործերի տէր եւ տնօրէնն է: 3) Ցանձնել նոյն Մարմնին երկրի լայն ռազմական ուսումնասիրութիւնը անել եւ պատրաստել ռազմական ծրագիրներ՝ այս կամ այն պատահականութեան համար: 4) Անհրաժեշտ պատահարների դէպքում (այսինքն ներիին բարդութիւններ, ամարխիա եւն.), յիշեալ վայրերում Գատասխանատու Մարմինը կարող է դիմել ակտիւ ձեռնարկների, նախօրօք առնելով Դաշնակցութեան Կարիքդի համաձայնութիւնը»:*

Այս բանաձեւերն տուին են 18 ձայն Քէր, մէկ ձայն դէմ. ձեռնպահ են մնում 6 հոգի:

Ապա քուէարկութեան է դրւում մի այլ բանաձեւ՝ տեռորի հարցի վերաբերմամբ, որ ներկայացրեց ընկ. Մալումեան: Բանաձեւը հետեւեալն է՝

«Ընդհանուր ժողովը լսելով տեռորի մասին եղած զեկուցումը եւ այդ առթիւ եղած մանրամասն եւ բազմակողմանի վիճաբանութիւնը, որոշեց՝

ա) Կազմակերպել Թուրքիայում հաղաքական սիստեմատիկ տեռոր, ուղղուած կառավարութեան կարեւոր ներկայացուցիչների դէմ (թուրք եւ տարագրի), ընդունելով ներկայ պայմաններում ձեռ ունեցիկիչ խոշոր հետեւանքները:

բ) Տալ տեռորին «միջազգային բնաւորութիւն», գործի մէջ մտցնելով օսմանեան այժմեան ռեժիմից դժգոհ զանազան տարրերի ներկայացուցիչներին (հայ, մակեդոնացի, բուլղար, թուրք, պրոտեացի, յոյն եւն.):

գ) Ընդունել գործունէութեան վայր կ. Պոլիսը, ծովեզերեայ հաղաքները եւ ի հարկին ցոյնիկ Եւրոպան, հայկական ճահիճներում այդ գործը յանձնելով տեղական դաշնակցական մարմինների դեկավարութեան, համաձայնութեամբ միւս տարրերի հետ:

դ) Հաստատել կ. Պոլսում «Տեռորական Գործօն Կոմիտէ», 5 հոգուց, միջազգային կազմով, պահպանելով գլխաւոր դեկը ինքպէս եւ ճախաձեռնութիւնը մեր կազմակերպութեան ձեռքում:

ե) Ընտրել մի ճախապատրաստական կոմիտէ, բաղկացած 3 ընկերներից, այդ գործի բոլոր ճախապատրաստութիւնները անելու եւ Գործօն կոմիտէն ստեղծելու համար:

զ) Ընտրել մի մասնաժողով, բաղկացած 3 հոգուց, ներքին կառնգոցքերը մշակելու եւ ժողովի հաստատութեան ներկայացնելու համար»:

Բանաձեւը անցնում է միաձայն (1 ձեռնպահ.): Վատմեան առաջարկում է մոցնել հետեւեալ կէտը. «Տեռորական Մարմինը պէտք է ենթարկուի Ցուցական Մարմնին»:

Այս առաջարկը քուէարկւում է եւ առանում 2 ձայն:

Տեռորական խնդրի վերաբերմամբ ընդունուած բանաձեւի հետեւանքով ընտրւում է մի յանձնախումբ (բաղկացած՝ ընկերներ Վատմեան, Մալումեան եւ Մինասեանից) յանձնելով նրան մշակել մի ներքին կանոնագիր եւ ներկայացնել ժողովին:

Ժողովը փակւում է ժամը 6ին:

55ՐԴ ՆԻՍՏ (28 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Վատմեան:
Ներկայ են 19 պատգամաւոր:
Բացակայ են՝ Մուրատ, Մինասեան (հիւանդ), Սահակեան, Սկպուհ, Աղբրանիկ (հիւանդ), Զաւրեան, Վարդան:

Մեզանի վրայ են ցուցական գործունէութեան վերաբերեալ բանաձեւերը: Քուէարկութեան է դրւում մեռցած՝

1· Ռոստոմ – Մալումեան – Զաքդարեանի բանաձեւը, որ առանում է 17 ձայն Քէր, 2 դէմ, 4 ձեռնպահ:

2· Մինասեանի բանաձեւը առանում է 1 ձայն, 2 ձեռնպահ:

3· Մուշուր – Իսահակեան – Գրուզինեան(23) բանաձեւը ընդունելութեան չէ դնում ժողովը, որովհետեւ գտնում է, որ դա վերաբերում է եւրոպական մի քաղաքականութեանը, որի մասին պիտի առանձին խօսուի:

Ահա բանաձեւերը՝

1· Ռոստոմ – Մալումեան – Զաքդարեանի բանաձեւը:

Ժողովը լսելով ցուցական գործունէութեան վերաբերեալ զեկուցումները ու վիճաբանութիւնները եւ նկատելով՝

ա. Այն մեծ նշանակութիւնը, որ ունի ցուցական գործունէութիւնը՝ տանիկ բռնակալ ռեժիմը տատանելու, նրա հեղինակութիւնը կոտրելու տեսակէտից,

բ. որ ցուցական գործունէութիւնը աւելի բացորոշ կերպով է շարժման մէջ դնում Տաճկաստանի խճամակալ պետութիւնների հաղաքական եւ տնտեսական ընդհանուր եւ հակոտնեայ շահերը,

գ. որ ճիշդ դիւրութիւններ է ներկայացնում աւելի ազդու կերպով արտայայտելու բողոքող տարրերի ձգտումները եւ այդպիսով ներկայանում է ագիտատորական [խարոզչական] մեծ ազդակ ցրելու համար եւ՛ մահմետական մասսան,

դ. որ ճիշ հարկաւոր է շեղելու համար կառավարութեան ուշադրութիւնը բուն հայկական ճահիճներում ձեռնարկուած նախապատրաստութիւններից,

Ժողովը որոշեց՝

1· Ընդունել ցուցական գործունէութիւնը շարունակելու ամենաժշտութիւնը կազմակերպութեան առաջիկայ տակտիկի մէջ.

2· կենտրոնացնել ցուցական գործունէութիւնները Թուրքիայի մայրաքաղաքում եւ այն ճատահանգիստներում, որոնք կապ ունին եւ կարող են ազդել կառավարական եւ եւրոպական շահերի վրայ.

3· կախման մէջ չդնել այդ տեսակի ձեռնարկները Երկրի ապստամբական շարժումներից, եւ օգտուել հաղաքական ներքին կամ արտաքին յարմար մոմենտներից.

4· Զգտել ապահովել Թուրքիայի ոչ–հայ դժգոհ տարրերի գործակցութիւնը.

5· Ցուցական մարմնի կազմը, տրամադրելի դրամական միջոցների սահմանները եւ իրաւասութեան հիմնական կէտերը որոշել Ընդհանուր ժողովում:

2· Մինասեանի բանաձեւը:

Ցուցական գործողութիւնները, հայկական յեղափոխութեան բնաւորութենէն բխող իրր անհրաժեշտութիւն, պէտք է ուղղուած լինի մասնաւորապէս Թուրքիոյ մէջ եւրոպական շահերուն դէմ, որոնք վերջին ժամանակները լայնծաւալ հանգամանքի առած եւ ստեղծած են մեծ պետութիւններու մէջ լարուած մրցութիւն մը:

Տնտեսական շահերուն ամիջապէս կից՝ Թուրքիոյ մէջ բռնադատական գնտումներով մեծ բաժին ունենալով, Արեւելեան Հարցի միջազգային հատասարակշռութեան տեսակէտով, որեւէ զօրեղ խլրտում, կարող է ստիպել Եւրոպան միջամտել իր շահերու պաշտպանութեան եւ իրերու դրութեան վերջ դնելու համար, ինչպէս ցոյց կու տայ Թուրքիոյ վերջին դարու պատմութիւնը:

Հետեւաբար, հայ յեղափոխութիւնը ներքին ապստամբութեան, ուժեղ պրոպագանդի եւ կազմակերպութեան հետ զուգընթաց, պէտք է Թուրքիոյ ծովեզերեայ վաճառաշատ հաղաքներուն մէջ, ուր Եւրոպական շահերը գերակշիռ են, ճախապատրաստէ ցուցական գործողութիւններ, ապստամբութեան շարժման իրր օժանդակ ուժ եւ արժագանգ, ցնտի առնելով հետեւեալ հանգամանքները.—

Ցոյց ընել, երբ ճախկին ուժեղ ապստամբական շարժումը չի տար սպասուած արդիւնքը, կամ երբ մեր ապստամբական պատրաստութիւնը կը վհեի անյոյս կերպով՝ իր ընդատակին չհասած:

Երբ Եւրոպան ներքին եւ միջազգային հրատապ հարցերով զբաղած չէրլլալով, հոգեբանական յարմարագոյն բոպէն կը ներկայացայ:

Ջգնել ցոյց, երբ Թուրքիան արտաքին պատերազմի մէջ է, ազիտացիոն հետեւանքներէ զգուշանալու համար: Նկատի առնել նաեւ Թուրք ժողովրդի զարթնումը եւ նոր տրամադրութիւնը:

Ցուցական գործողութիւնը, զուտ հայկական բնաւորութիւն կրելով, պէտք է ըլլայ ոչ կարճատեւ բռնկում մը, այլ յաջորդական վիճակ մը, որ ստեղծելով երկարատեւ ամիշխանական եւ ապստամբ դրութիւն մը, ամէնուսաքելիօրէն առաջ կը բերէ դիւանագիտական միջամտութիւն:

Ցուցական համար կազմել աճկախ եւ պատասխանատու մարմին մը, ձեռնհաս եւ փարձառու ուժերէ, որ որոշ կապեր պահէ տեռորական հայ բաժնին հետ:

3· Մաշուր – Իսահակեան – Գրուզինեան(23) բանաձեւը, եւրոպական միջամտութեան մասին:

Նկատելով

1· Որ Եւրոպան մինչեւ այժմ ձեռնպահ վերաբերմունք է ցոյց տուել հայոց հարցի լուծման համար որեւէ ակտիւ եւ արժէքաւոր քայլ ասելու,

2· Որ այդ ձեռնպահութիւնը պատահական երեւոյթ չէ այլ իւր հիմքը գտնում է այն հակադիր տնտեսական–հաղաքական շահերի մէջ, որ եւրոպական պետութիւնները ունեն Փոքր Ասիայի վերաբերմամբ,

3· Որ հայկական շարժումը շատ բայլ փակտոր [ազդակ] է եւրոպական շահերը այնպէս ցնցելու, որ նա իւր շահերը ապահովելու համար միջամտէ յատկապէս մեր հարցը լուծելու եւ մեր շարժումներին վերջ տալու համար՝

Ժողովը հետեւեալ տեսակէտն է ընդունում այս խնդրում:

Եւրոպան իւր շահերի ապահովութեան համար կարող է հիմնօրէն միջամտել Տաճկաստանի գործերում եւ այդ միջամտութիւնը երկու ճպատակ կարող է ունենալ, — կամ այդ երկիրը բաժան–բաժան անելու եւ կամ այնտեղ իրաւակարգ հաստատելու: Երկու դէպքում եւս միջամտութեան հարցը կարող է վերաբերել ամբողջ Տաճկաստանին եւ ոչ թէ միայն հայկական ճահիճներին:

Ապա Օրակարգով առաջ է գալիս ընկ. Բարսեղեանի զեկուցումը — «Դաշնակցութեան դիրքը Ռուսաստանի յեղափոխական շարժման մէջ եւ ակտիւ քայլեր»:

Վէճ է սկսւում, թէ կարելի՞ է արդեօք անցնել Ռուսաստանի գործունէութեան, քանի դեռ չէ վերջացած Թրքահայկական բոլոր տեղեկագրերի վերաբերմամբ առաջարկուած բանաձեւերի քննութիւնը:

Ժողովը որոշում է լսել ընկ. Բարսեղեանի զեկուցումը:

Ապա նորից վէճ է սկսւում, թէ զեկուցման մէջ եղած առանձնաքները կարելի է քննել միայն ա՛յն ժամանակ, երբ ժողովը լրացած կը լինի Արեւելեան Բիւրոյի տեղեկագիրը: Այդ հիման վրայ զեկուցման վերաբերեալ վիճաբանութիւնը յետաձգւում է:

Թոփչեան խնդրում է արձանագրել իր բողոքը, որ հակառակ Օրակարգի չէն Քոյլ տալիս խօսել եղած զեկուցման մասին:

Ժողովը ընդունելով ընկ. Ռոստոմի բացատրութիւնը այն մասին, Քէ նա Արեւելեան Բիւրոյի տեղեկագիրը չէ ներկայացնում, որովհետեւ ուշացած ընկերները դեռ պիտի բերեն անհրաժեշտ Քուներ՝ որոշում է յաջորդ նիստին լսել ընկ. Ռոստոմի տեղեկագիրը առանց Քուերի:

Նիստը փակւում է ժամը 1ին:

56ՐԴ ՆԻՍՏ (29 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:
Ներկայ են՝ 21 ժողովական:
Բացակայ են՝ Մուրատ (յորդելի), Մինասեան (հիւանդ), Սահակեան (յորդելի), Աղբրանիկ (հիւանդ), Վարդան:

Ռոստոմ զեկուցանում է Արեւելեան Բիւրոյի գործունէութեան մասին:

Զեկուցումը լսելուց յետոյ՝ կովկասում տեղի ունեցած զեղծումների («Մի հրանտական» կողմից «Զինուորական Ցորհուրդ»,

եւն.) քննութեան համար ժողովը մի առանձին դատական յանձնաժողով ընտրեց: Գաղտնի քուէարկութեամբ յանձնաժողովի անդամներ ընտրուեցին ընկերներ՝ Արամ (21 ձայն), Տաճատ (18 ձայն), Մուրատ (17 ձայն) եւ Թեկնածուներ՝ Զարդարեան (16 ձայն) եւ Վռամեան (13 ձայն):

57ՐԴ ՆԻՍՏ (29 Մարտ, երեկոյ)

Նախագահում է՝ Մալումեան:

Ներկայ են 22 ժողովական:

Բացակայ են՝ Իշխան, Թաստամ, Թոփչեան, Մինասեան (հիւանդ), Անդրանիկ (հիւանդ):

Օրակարգն էր՝ 1) Մանդատներ քննող յանձնաժողովի եզրակացութիւնը Լեռնավայրի պատգամաւոր Սարհատի(24) իրաւունքի մասին. 2) Վարդանի եւ Սաքոյի զեկուցումը «Զինուկան-հիմնապաշտպանական գործի մասին կովկասում»:

Ստեփաննան, իբրեւ քննող յանձնաժողովի անդամ, յայտնում է՝

1· Սարհատը(24) ներկայացրել է մի յանձնարարական Ծոցի(25) «Հնչակի» խմբից, հինգ հոգու ստորագրութեամբ եւ առանց կնիքի, հետեւաբար չէ կարելի համարել նրան Լեռնավայրի պատգամաւոր, համաձայն մեր կազմակերպական կանոնադրի:

2· Լեռնավայրում «Հնչակի» խմբի գոյութիւնը ծանօթ չէ Բիւրոյի ներկայացուցչին, ինչպէս նաեւ ընկ. Վարդանին, որ Լեռնավայրի պատգամաւոր Մարմնի անդամ է եղել:

3· Արեւմտեան Բիւրոն ժամանակին յարաբերութեան մէջ է եղել Լեռնավայրի ընկերների հետ ընկ. Մարքինի(26) միջոցաւ, որ այժմ բանտում է, եւ զրել է Լեռնավայրի ընկերներին՝ առաջարկելով ընտրել տեղական պայմաններին ծանօթ մի ընկեր եւ ապաստել, ճանապարհ հելնելու համար, Ընդհանուր ժողովի վերջնական կարգադրութեան, իբրեւ տեղեկաբեր՝ համաձայնութեամբ պատգամաւոր Մարմնի անդամի: Սակայն նրանք առանց սպասելու այդ կարգադրութեան չտապել են եւ ուղարկել 1905ին մի տեղեկաբեր, բայց ժողովի ուշանալու պատճառով նա մեկնել է Ամերիկա: Ներկայումս Սարհատի(24)՝ այդ չբլանի կողմից իբրեւ պատգամաւոր ներկայանալը, մեզ առիթ է տալիս վերապահութեամբ վերաբերուելու Սարհատի լիազոր պատգամաւորութեանը:

4) Սարհատը Լեռնավայրից չէր կարող պատգամաւոր ընտրուել առանց այնտեղի Գաւառախնամու Մարմնի գիտութեան:

Նկատի ունենալով վերոյիշեալները, մանդատորդը եկաւ այն եզրակացութեան, որ Սարհատը, համաձայն մեր կազմակերպական կանոնների, չէ կարող համարուել Լեռնավայրի կողմից պատգամաւոր ներկայ ժողովին:

Սարհատը չէ կարող ներկայանալ ժողովին իբրեւ տեղեկատու իսկ, հետեւեալ պատճառներով՝

1) Նա չէ եղել Լեռնավայրի չրջանում, հետեւաբար չէ կարող ծանօթ լինել ներկայ պայմաններին, մանաւանդ որ այս բանի համար որոշում է եղել նախորդ նիստերից մէկում՝ հրաւիրել ընկ. Սիրականին իբրեւ տեղեկաբերի, երբ կը կարդացուի Լեռնավայրի Գաւառախնամու Մարմնի տեղեկագիրը:

2) Համաձայն Բիւրոյից առացուած տեղեկութեան, Սարհատը ենթակայ է պատասխանատուութեան Լեռնավայրի Գաւառախնամու Մարմնի կողմից:

Օգտուելով առիթից առաջարկում ենք (որ նա ներկայ լինելով այստեղ) հրաւիրել Աքէնեի քննիչ մարմնին բացատրութիւններ տալու այնտեղի գործերի մասին:

Ցանձնաժողովի զեկուցումից յետոյ քուէարկութեան է դրւում թէ՝

1) Մի՞ թէ համաձայն մանդատորդի եզրակացութեան, որ Սարհատը Լեռնավայրի մանդատի իրաւունքը չունի: Դէմ՝ 3 ձայն:

2) Ժողովը ընդունո՞ւմ է, որ Սարհատը մնայ այստեղ, մինչեւ Լեռնավայրի գաւառախնամու Մարմնի անդամը գայ եւ այն ժամանակ նրա մասին որոշում առնենք: Համաձայն՝ 2 ձայն:

Հետեւաբար Սարհատը այսօրուանից ազատ է եւ կարող է գնալ:

Իրրեւ առաջարկ նախագահը դնում է, օգտուել Սարհատի ներկայութիւնից եւ տեղեկութիւններ առանալ նրանից Աքէնէի դործերի մասին, որին նա լաւ ծանօթ է: Ժողովը ընդունում է:

Հինգ րոպէ ընդմիջումից յետոյ Վարդանը կարդում է վերեւում յիշուած զեկուցումը:

Սկզբում հարցումները պտտուում են այն բանի չուրջը, թէ ի՞նչ նպատակ ունեն մարտական խմբերը եւ թէ դրանք քրիստոնեական դատի համար էլ պիտի գործե՞ն թէ ոչ· որին Վարդանը պատասխանում է, որ կուսակցութիւնը իւր բոլոր յեղափոխական ձեռնարկների համար պիտի օգտուի իւր մարտական խմբերից: Ապա վիճաբանութիւնը կանդ է առնում այն բանի վրայ, թէ հնարաւո՞ր է, որ Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան գործը յանձնէ ժողովրդին եւ է՛լ ինքը երթէ չմիջամտէ այդ գործին:

Սեպուհ·— Ես ասում եմ, որ ժողովուրդը իւր ինքնապաշտպանութիւնը չէ կարող [առանձին] տանել: Մենք խոստովանում ենք, որ մեր բոլոր ընկերները, թէ՛ դրսի եւ թէ մարտիկ, զբաղուած էին ինքնապաշտպանութեամբ, ամէն քաղաք, ամէն կայարան մենք մարդիկ ունէինք եւ հազիւ կարողացանք յաղողութիւն ունենալ: Եթէ Դաշնակցութիւնը ժողովրդի գլխին չլինի, եթէ կռւի ժամանակ ամէն մարդ իւր գաւառից չտեղափոխուի ուրիշ գաւառ, ըստ պահանջի, կռուելու համար, ինքնապաշտպանութեան գործը չէ կարող յաջող անցնել: Թէեւ ամէն տեղ ունենք իսկական դաշնակցական ընկերներ, բայց դրանք չէին կարող ոչինչ անել, եթէ կազմակերպութիւնը նրանց աջակցութիւն ցոյց չտար:

Թոստամ(27)·— Ես մտադիր եմ առաջարկել, որ կազմուի յատուկ սեկցիա [բաժանմունք], որ ունենայ իւր կասսան [դանձը, դրամարկղը] եւ զբաղուի ինքնապաշտպանութեան կազմակերպութեամբ: Ես նոյնպէս կարծում եմ, որ Դաշնակցութիւնը պէտք է կազմակերպէ ինքնապաշտպանութիւնը եւ ժողովրդական դործնէ:

Մաշուր·— Դաշնակցութեան վրայ եղած բոլոր յարձակումները եղել են ինքնապաշտպանութեան պատճառով· մենք պէտք է օգտուենք մեր անցեալ փորձերից: Դաշնակցութիւնը արդէն մի մեծ ծառայութիւն է արել ժողովրդին· նա տուել ժողովրդին զէնքի պատմունքը: Մեր ժողովուրդը այլեւս իւր զէնքը չի ծախում, կամ, ծայրայեղ դէպքում, կը ծախէ իւր հրեան հային: Ես կարծում եմ, որ զինուերը իրենք կարող են պաշտպանուել առանց մեզ, իսկ քաղաքներն են, որ պիտի կազմակերպենք: Իսկ այդտեղ մեր զինակից ընկերներից կազմուած մարտական խմբերը դարձեալ կը գան օգնութեան:

Խահակեան·— Ես համաձայն եմ Սեպուհի հետ, որ մեր ժողովուրդը դեռեւս անկարող է իրեն պաշտպանել: Մենք նշանակութիւն չպիտի տանք բուրժուաների յարձակմանը մեր վրայ եւ գործը հեռացնենք մեզանից: Եթէ մենք գործը կարող ենք յանձնել մի ուրիշի, դա պիտի լինի մի կազմակերպութիւն, որ վայելէ ժողովրդեան վստահութիւնը, որպիսին եղել է եւ է՛ Դաշնակցութիւնը, եւ որ կարողանայ զանազան զաւառներ իրար հետ կապել· եւ ոչ թէ պիտի տանք ժողովրդին:

Մուրատ·— Զպիտի մոռանանք, որ կան գիւղեր, հեռու հայկական կենտրոններից, ընկած բազմաթիւ թուրքերի մէջ· դրանք չեն կարող պաշտպանուել եւ թուրքերի մէջ· դրանք չեն կարող պաշտպանուել եւ քնաջինջ կը լինեն: Մենք վիրաւորուելով մեր վրայ եղած յարձակումներից՝ ուզում ենք յետ քաշուել, այդ պարագայում այդպիսի գիւղերը կ'ոչնչանան եւ մեր խիղճը մեզ կը տանջէ: Թուրքերը մեծ ոյժ ունեն եւ կարող են յարձակումներ անել: Ինքնապաշտպանութեան համար հարկաւոր է մի զեկավարող մարմին:

Շահխաթունեան·— «Ժողովրդին յանձնել» խօսքը այնպէս չէ հասկացւում, ինչպէս պէտք է: Ինքնապաշտպանութիւնը ժողովրդին յանձնել նշանակում է ստանալ ժողովրդի սանկցիան [համաձայնութիւնը, վաւերացումը]: Ժողովուրդը ինքնապաշտպանութեան մարմիններ ընտրելիս, կարող է ընտրել դաշնակցականներին կամ որոշ տեղերում ամբողջ գործը յանձնել Դաշնակցութեան: Դրանով Դաշնակցութիւնը ստացած կը լինի ժողովրդի սանկցիան: Ինքնապաշտպանութեան մէջ մենք այնպէս պիտի չեչտենք մեր եւ միւսների զանազանութիւնը, որ ինքնապաշտպանութեան անունով մարդիկ չմտնեն մեր շարքերը եւ քանդեն:

Ֆրանգեան(28)·— Սա մի սկզբունքային հարց է, արդեօք Դաշնակցութեան ոգուց իմնէ է բխում·— միլիցիա կազմել եւ գործը յանձնել ժողովրդի՞ն, թէ առաջուայ նման չարունակել ինքնապաշտպանութիւնը տանելը: Ես կարծում եմ, որ Դաշնակցութեան ոգուց բխում է միլիցիան: Գուցէ սկիզբներում լինեն անյաղող մոմենտներ, բայց դա չէ նշանակում որ չպիտի ձգտենք կազմել միլիցիա: Ժողովուրդը ինքը պիտի լինի ծանրութեան կենտրոնը: Դաշնակցութիւնը իրրեւ մի յեղափոխական-սոցիալիստական կուսակցութիւն, իւր կուսակցական չահերի տեսակէտից չպիտի իւր վրայ վերցնէ ինքնապաշտպանութիւնը: Ժողովրդին չպէտք է զրկենք ինիցիատիւի [նախաձեռնութեան] ոգուց:

Արամ·— Ինքնապաշտպանութեան վրայ եղած յարձակումները, մեզ մոռացնել են տալիս մեր կուսակցական պարտականութիւնները: Ի՞նչպէս կարող է մի քաղաքական կուսակցութիւն իւր մասսաների ֆիզիքական դոյութեան մասին չհոգալ·— Թող լինի աշխատանքի բաժանում, եւ այդ գործը յանձնուի մի յատուկ մարմնի: Ես համաձայն եմ Շահխաթունեանի հետ, որ ինքնապաշտպանութիւնը մի բլուկ է եւ իւր չարքերը չպիտի խառնի:

Բարսեղեան·— Կարծում եմ, որ ինքնապաշտպանութեան հարցին Դաշնակցութիւնը պիտի վերաբերի, ինչպէս կուլտուրական հարցերին, որոնք վերաբերում են ամբողջ ժողովրդին:

Սիզ(23) դնում է, որ ինքնապաշտպանութիւնը չէ կարող լինել մի կուսակցութեան ձեռքին, այլ պէտք է լինի ժողովրդի բոլոր խաւերի ձեռքին: Մեր գործը պիտի լինի մտածել, թէ ինչպէս պէտք է դնել ինքնապաշտպանութիւնը, որ ժողովուրդը կարողանայ պաշտպանել ինքնիրան:

Վռամեան·— Մենք չպիտի մոռանանք, որ թէեւ քաղաքական կուսակցութիւն ենք, բայց կուսակցութիւն ենք մի ժողովրդի, որը վտանգի վիճակի մէջ է, որի ֆիզիքական գոյութիւնը եւս մենք պիտի ապահովենք: Աչխատաւոր մասսա ասածը ես հասկանում եմ մեր ժողովրդի մեծամասնութիւնը, մենք դրան պիտի պաշտպաննենք, որի դէմ դինուել են Բրքութիւնը եւ կառավարութիւնը: Ինդիրը այն է, որ ինքնապաշտպանութիւնը կազմակերպուած լինի, մի տեղը միւսի հետ կապուած, գործէ մի ընդհանուր հիմքի վրայ: Մեր յաղողութիւնը կովկասում այն էր, որ մենք կազմակերպուած էինք: Մենք պիտի նպատակ ընդունենք միլիցիան, բայց այնպէս կազմակերպենք, որ իրաւ մեր չարքերը չլցուին թափթփուկներով: Առաջարկս այս է՝ 1) Դաշնակցութիւնը պիտի զեկավարէ ինքնապաշտպանութիւնը: 2) Նա պիտի ունենայ ընդհանուր ծրագիր: 3) Իրագործել միլիցիա եւ մեր չարքերը չխառնել:

Խահակեան·— Համաձայն եմ, որ մեր կազմակերպութեան իդէալը պիտի լինի միլիցիան· բայց դա չէ հակասում այն բանին, որ դրա զեկավարողը պիտի լինի մի կազմակերպութիւն, որը պիտի այդ միլիցիան չարժման մէջ դնէ: Այժմ երբ մենք ծրագիր կ'ունենանք, այլեւս դաշնակցականն ու ոչ-դաշնակցականը չեն խառնուիր իրարու: Մեր ինքնապաշտպանութիւնը յաղողեց, որովհետեւ նրա մէջ կար գաղափարական կողմը, որով հեռուոր վայրերից գալիս պաշտպանում էին թոյլերին: Համաձայն եմ, որ միլիցիա պիտի կազմել, բայց քանի դեռ չկայ մի մարմին որ զեկավարէ, Դաշնակցութիւնը պիտի լինի զեկավարը:

Զելալեան·— Ինձ համար շատ կարեւոր է ժողովուրդը· եթէ մենք դասակարգային կուսակցութիւն էլ լինենք, այնուամենայնիւ նրա ֆիզիքական գոյութիւնը պարտաւոր ենք պաշտպանել: Թէեւ միլիցիա պիտի կազմել եւ ինքնապաշտպանութիւնը յանձնել ժողովրդին, բայց հարկաւոր է մի մարմին, որ կոնտրոլ ընէ:

Զուիցերիայում, օրինակ, կայ միլիցիա, բայց հարկ եղած ժամանակ կառավարութիւնն է որ հրահանգներ է տալիս. մեր մէջ այս մարմինը պիտի լինի Դաշնակցութիւնը: Եթէ մենք այդ գործը ամբողջապէս յանձնենք ժողովրդին, այն ժամանակ կան այլ մարմիններ, որոնք այդ գործը կ'առնեն իրենց ձեռքը եւ կը վնասեն Դաշնակցութեան:

Շահխաթունեան *պարզում է իւր միտքը, թէ հակ չէ, որ Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան մասնակից, բայց դա պիտի լինի ժողովուրդի սանկցիայով. Թող ժողովուրդը ինքը ընտրէ իւր համար ղեկավարող մի մարմին. եթէ նա ընտրեց Դաշնակցութիւնը, աւելի' լաւ:*

Թոփչեան.— *Զելալեանը կարծում է, որ բուրժուաները կարող են ինքնապաշտպանութիւնը իրենց ձեռքը առնել: Բայց փորձը ցոյց տուեց, ինչպէս Շուշում, որ բուրժուաները սիրում են միայն ընտրուել եւ բազմել աթոռների վրայ. իսկ գործ անելու անընդունակ են: — Ով որ ծանօթ է մեր ինքնապաշտպանութեան գործին, նա գիտէ, թէ որքան վտանգաւոր է այդ գործը նոյն ձեւով տանել. դա կը քանդի Դաշնակցութիւնը: Ինչո՞ւ ժողովրդեան վերաբերմամբ այդքան յոռետես ենք. չէ՞ որ նոյն ժողովրդից է առաջ եկել Դաշնակցութիւնը: Ի հարկէ մի մարմին պիտի լինի, որ կապ պահպանէ զանազան տեղերի հետ եւ ղեկավարէ:*

Ստեփանեան.— *Ասում էք գործը յանձնենք ժողովրդին. ի՞նչպէս կարող ենք մենք զէնքը յանձնել ժողովրդին, քանի որ նա կազմակերպուած չէ: Թաւրիզում պնդում էին, որ զէնքերը յանձնէինք ժողովրդի ներկայացուցիչներին, բայց իմացանք որ նրանք ուզում են զէնքերը ծախել յօգուտ դպրոցի: Թող ժողովուրդը հասունանայ, կազմակերպուի, այն ժամանակ կը յանձնենք:*

Զոփուրեան.— *Իմ անձնական կարծիքս ամբողջապէս պարունակուում է Ոսկանապատի որոշման մէջ, որ հետեւեալն է՝ «Դաշնակցութիւնը իւր վերայ վերցնելով ինքնապաշտպանութեան գործը, իւր շարքերի մէջ ստիպուած եղաւ ընդունել ամէն տեսակի տարրեր, որոնք կուսակցութեան մէջ յառաջ բերին մի շարք բացասական երեւոյթներ. բայց չնայելով դրան, Դաշնակցութիւնը իւր միջամտութեամբ մի ահագին գործ կատարեց հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին մէջ: Սակայն ապագայի նկատմամբ անհրաժեշտ է հոգալ, որ ինքնապաշտպանութեան գործը փոքր առ փոքր յանձնուի ժողովրդին. իրաւ է, նա այս րոպէին այնքան պատրաստ չէ, որ վաղն եւեթ կարելի լինի ամբողջ գործը յանձնելով ժողովրդին՝ միանգամայն ձեռնպահ մնալ, բայց հարկաւոր է ձգտել մօտիկ ապագայում դրան հասնելու»:*

Տաճատ.— *վարդանն անցեալ անգամ խօսելիս ասեց, որ երբ Շուշում ժողովուրդը պահանջում էր, որ ինքնապաշտպանութիւնը իրեն յանձնենք, ինքը պատասխանել է թէ «քանի վտանգ կայ՝ մենք հակառակ ձեր ցանկութեան էլ պիտի ձեզ պաշտպանենք»: «Ռոնա»ի հրատարակած «Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները» գրքում նոյնպէս ասուած է, որ ժողովուրդը դեռ պատրաստ չէ, եւ մենք դեռ պիտի չարունակենք ինքնապաշտպանութիւնը: Մենք ինքնապաշտպանութեամբ կրթել ենք ժողովուրդը եւ դա հակասական գործ չէ եղել: Մենք չենք ուզում մշտական զինուորական մարմին ունենալ, բայց ինչ արած, որ դա մի ճակատագրական չարիք է:*

Վ.ոամեան.— *Ես ցանկանում եմ մի բան ճշդել: Այդ ժողովրդական սանկցիա ասուածը ինձ համար անըմբռնելի է: Մենք ժողովրդից սանկցիա չենք պահանջում, երբ էքսպրոպրիացիա [ապատեփականացում] ենք անում կամ երբ դասակարգային պայքար ենք սկսում: Ի՞նչ է, մենք ամէն մի ձեռնարկի համար ժողովրդից սանկցիա՞ պիտի ուզենք. իմ կարծիքով, եթէ կարծում ենք, որ դա մի յեղափոխական ակտ է, մենք կարիք չունենք ժողովրդի սանկցիային: Դաշնակցութեան գործերի դրական կողմերը այնքան շատ են, որ մի քանի բացասական կողմի պատճառով մենք նրան չպիտի նախատենք: Այս գործին, Դաշնակցութիւնը ո՛չ թէ պիտի սկզբունքով նայէ, այլ թոյլ չպիտի տայ, որ ժողովրդի զինուորական ուժերը ուրիշի ձեռքը անցնեն եւ գործիք դառնան մեր դէմ կռուելու համար: Մենք դրանով պիտի զրաղեցնենք մեր զինուորական ընկերներին, որոնք չեն կարող գործել պրոֆեսիոնալ [արհեստակցական] միութիւնների մէջ: Դաշնակցութիւնը ոչ միայն պիտի բաւականանայ իւր մարտական խմբերով, այլ նա պիտի նկատի ունենայ ուժեր պատրաստել նաեւ տաճկահայ դատի համար: Ինքնապաշտպանութեան գործից հրաժարուել, նշանակում է վնասել տաճկահայ գործին:*

Վարդան.— *Զեկուցման մէջ ես արդէն ասացի, որ ինքնապաշտպանութիւն ասելով, մենք նկատի ունենք Թուրքերին, որոնց վտանգը դեռ բոլորովին անցած չէ. իսկ յեղափոխական նպատակների համար պիտի ծառայեն մեր մարտական խմբերը: Ով որ կռիւների ընթացքում եղել է ինքնապաշտպանութեան գործում եւ իւր կաշու վրայ փորձել, նա կը գիտենայ թէ ի՞նչ ծանր բան է դա, բայց մենք դարձեալ մեր պարտքը կատարեցինք: Այնքան ժամանակ մենք տեսել էինք, որ չարունակ Թուրքը մեզ ծեծել էր, այժմ տեսանք, որ Դաշնակցութեան չնորհիւ, ո՛չ միայն չծեծուեցինք, այլեւ կարողացանք ծեծող լինել: — Ճիշդ է, ես ասել եմ, որ մենք ձեզ զօռով պիտի պաշտպանենք, բայց դա եղել է այն ժամանակ, երբ օրեցօր սպասւում էր յարձակում. մենք այդ ասել ենք ստիպուած: Մենք ստիպուած ենք եղել մինչեւ անգամ Թուրք կանայք ու երեխաներ սպաննել, որպէսզի Թուրքերին համոզենք, որ եթէ իրենք այդպէս են անում, մենք էլ կարող ենք անել, իրենց վրայ ազ-*

դելու համար: Մենք երկրում տաճիկ զաթիէ էինք սպաննում եւ նրա գրպանին ձեռք չէինք տալիս, որ երբ նրա դիակը տանեն, տեսնեն որ մենք փողի համար չենք սպաննում: Ով եղել է ինքնապաշտպանութեան մէջ, նա տեսած կը լինի, որ մենք ստիպուած ենք եղել անել այնպիսի գործեր, որոնք ոչնչո՛վ չեն հաշտուում մեր սկզբունքների հետ, բայց մենք հարկադրուած էինք. մենք միայն աշխատել ենք, որ դա սիստեմ չդառնայ մեր մէջ: Ես ասում եմ, որ ինքնապաշտպանութիւնը յանձնենք ժողովրդին, որովհետեւ դա յեղափոխական գործ չէ: Բնականաբար ժողովրդի ձեռքում նա այնպէս լաւ չէ կարող տարուել, ինչպէս Դաշնակցութեան ձեռքում, բայց այդ ոչինչ, ինչ գնով էլ լինի պիտի յանձնենք: Մի դիւղ, որ Դաշնակցութեան ղեկավարութեամբ կռուէր 5 ղոհ կը տար, Թող այժմ 7ը տայ, բայց Թող ինքնապաշտպանութիւնը ի՛նքը տանի: Թող հրամանները, բանտարկութիւնը, Թալանը եւն. ժողովուրդը ինքը անէ եւ ոչ թէ Դաշնակցութիւնը: Ի հարկէ Դաշնակցութիւնը ձեռնպահ չի մնայ, այլ որքան հնարաւոր է կ'օգնէ, թէ՛ մարդով եւ թէ այլ կերպ: Ինքնապաշտպանութեան մէջ չպիտի լինի Դաշնակցութեան անունը, բայց ժողովուրդը Թող ընտրէ Դաշնակցութեան մարդկանց, եթէ ուզում է: Թող մեր ընկերները չանհանգստանան, թէ ուժը կ'ընկնի մեր հակառակորդների ձեռքը: Ուր էլ որ դառնան, դարձեալ պիտի ընտրեն դաշնակցականներին, որովհետեւ միակ կուսակցութիւնը, որ կարող է այդ գործը տանել, Դաշնակցութիւնն է: Կուլտուրական ընկերութիւն կայ, որ ցորեն է բաժանում դաւառները, բժիշկներ եւ ֆելդշերներ է ուղարկում, չնայած որ դրանք մեր բարեկամները չեն, բայց առանց կարմրելու, ստիպուեցին դարձեալ մեզ դիմելու եւ մեր աջակցութիւնը ուզելու: Ժողովուրդը շատ լաւ զգում է, որ միակ կարողը Դաշնակցութիւնն է, բայց չէ կարողանում իր զգացածը արտայայտել: Ժամանակ է ժողովրդին ազատելու խնամակալութիւնից, եթէ ոչ նա յոյսը դրած Դաշնակցութեան վրայ ինքը ոչինչ չի անի: Եթէ ժողովուրդը կարմիր յոյսեր չունենայ Դաշնակցութեան վրայ, ինքը շատ բան կարող է անել: Այս անգամ էլ շատերը կարծում էին, թէ մեր արածը մանէվր է, որ մենք չենք ուզում ինքնապաշտպանութիւնից հրաժարուել. ուստի սկզբում չէին յանձն առնում, բայց երբ համոզուեցին, որ մենք անկեղծ ենք՝ համաձայնեցին: Ամփոփեմ ասածս՝ ժողովրդի մէջ որոշ չափով գիտակցութիւն կայ, նա այնքան էլ անփորձ չէ, կան անհատ քաջ տղաներ, որոնք կարող են անել: Քանի մենք կանք, նրանք առաջ չեն գալիս: Պէտք է Դաշնակցութեան ղեկավարութեամբ ինքնապաշտպանութեան մարմիններ առաջ բերել, դրանց որոշ ուղղութիւն տալ, ապա գործը յանձնել ժողովրդին:

Ժողովը փակուեց ժամը 7ին:

58ՐԴ ՆԻՍՏ (30 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Թոփչեան:

Ներկայ են 23 ժողովական:

Բացակայ են՝ Մինասեան (Հիւանդ) Սեպուհ, Անդրանիկ (Հիւանդ):

Ընկ. Մալումեան զեկուցում է անում, իբրեւ Ա-րեւմեան Բիւրոյի ներկայացուցիչ, այն հարցի մասին, թէ ո՞ր ատիճանի իրաւասութիւն ունէր Խորհուրդը «Կովկասեան Գործունէութեան Նախագիծը» հրատարակելու, ուրիշ խօսքով «Նախագծի» իրաւասութեան մասին:

Մալումեան (գրաւոր).— *«Նախագծի հրատարակութեան հարցը պէտք է քննուի երկու տեսակէտից, ըստ իրաւասութեան եւ ըստ էութեան: Թողնելով առայժմ վերջինը, ես կանգ կ'առնեմ առաջինի, այն է՝ իրաւասութեան հարցի վրայ, որովհետեւ չատ անգամ եւ չատ ընկերների կողմից — էլ չենք խօսում հակառակորդների մասին — այն կարծիքն է յայտնուած, թէ Խորհուրդը իրաւունք չունէր հրատարակելու «Նախագիծը», եւ որ նա դրանով գործել է անիրաւական մի քայլ՝ հակառակ իւր ձեռնհասութեան: Այդ մեղադրանքը անհիմն է, եթէ ի նկատի ունենանք նախ՝ կովկասեան գործունէութեան մասին երրորդ Ընդհանուր ժողովի կայացրած վճիռը, այն որոշումները, որ դուրս են բերել Կովկասեան Ռայոնական ժողովները, յետոյ Ընդհանուր ժողովի վճռի վրայ, եւ այն իրաւասութիւնը, որ ունի Դաշնակցութեան Խորհուրդը, համաձայն ժողովից հաստատուած կազմակերպական կանոնագրին»:*

Զեկուցանողը առաջ բերեց 1904 Թուի Ընդհանուր ժողովի որոշումը կովկասեան գործունէութեան մասին, քաղուած պաշտօնական արձանագրութիւններից եւ ցոյց տուեց, որ ժողովը ընդունել է 1) Դաշնակցութեան գործունէութիւնը տարածել Կովկասի վրայ. 2) Կռուի համար դիմել ժողովրդական ցոյցերի, տեռորի, զինուած դիմադրութեան, գործադուլների եւն. 3) Թոյլ տալ Ռայոնական ժողովին՝ մանրամասնօրէն մշակել տակտիկը եւ 4) Արտօնել Խորհրդին՝ քաղաքական տալնապների ժամանակ ծրագրել նոր ձեռնարկներ: Ահա այս բոլորի հիման վրայ 1905 Թուի Խորհուրդը մշակեց եւ հրատարակեց «Նախագիծը», Թողնելով ներկայ ժողովին նրա վերջնական մշակումը եւ հաստատումը:

Դա խնդրի միայն մի կողմն է, աւելացրեց զեկուցանողը: Մեր հիմնական Ծրագիրը, հրատարակուած 1892ին, իւր ոգով ու դրած քաղաքական եւ տնտեսական պահանջներով, ընդունում է սոցիալիստական գաղափարների սկզբունքը. եւ հետեւաբար Նախագծի սոցիալիստական պահանջները չեն հակասում մեր Ծրագրին, այլ միայն լրացնում այն, մանաւանդ, որ կովկասեան այժմեան իրականութեան մէջ այդ պահանջ-

ները կարող են եւ պէտք է լինեն աւելի չեչտուած, աւելի լայն եւ աւելի խորը: Զեկուցանողը իւր նիւթն հիմնաւորելու համար, առաջ բերեց Նախագծի պահանջների 8–9 կէտերը եւ ցոյց տուեց, որ դրանք ըստ էութեան նման են Ծրագրի համապատասխան պահանջներին:

Ապա յիշեց այն փաստը, թէ ինչպէս 1890 թուին, Դաշնակցութեան հիմնարկութեան տարին, երբ պէտք էր մի թուղթիկ տարածուէր էջմիածնում, միւռոնօրհնութեան ժամանակ, այն ժամանակուայ ղեկավար մարմինը առանձին խնամքով չեչտեց Դաշնակցութեան տնտեսական պահանջները. յիշատակեց 1896ին Լոնդոնի սոցիալիստական միջազգային կոնգրէսին «Դրօշակ»ի ներկայացուցած դիմումի բովանդակութիւնը, 1905ին Բրիւսէլի Սոցիալիստական Միջազգային Բիւրոյին «Դրօշակ»ի խմբագրութեան կողմից տրուած պաշտօնական պատասխանը, — որոնք բոլորն էլ այն միտքն էին յայտնում, որ կազմակերպութիւնը իր Ծրագրի մէջ ընդունում է սոցիալիզմը:

Յօսելով դրանից յետոյ կովկասեան վերջին դէպքերի բնոյթի, ինչպէս եւ Նախագծի առիթով ծագած դժգոհութիւնների մասին, զեկուցանողը չեչտեց, որ այդ դժգոհութիւնները — եթէ չհաշուենք քիչ բացառութիւնները տեղական ընկերների չրջանում — հետեւանք են դանապան անհատների անձնական դժգոհութեան եւ կամ այն հանգամանքի, որ մեր ժողովրդական մասսաները, յաճախ նոյնիսկ անգրագէտ, չեն կարդացել, չեն ծանօթացել Նախագծին եւ զոհ են գնացել դժգոհ անհատների կամ խմբերի գրգռումներին եւ չարամիտ մեկնաբանութիւններին: Իրրեւ ապացոյց, ընկ. Մալումեան առաջ բերեց այն կարեւոր եւ նշանակալից փաստը, որ դաշնակական 24 կենտրոնական մարմիններից, թէ՛ երկրի, թէ՛ Կովկասի եւ թէ արտասահմանի, որոնք ներկայացուած են այս ժողովում, 21ը ընդունում են Նախագիծը եւ միայն երկուսն են դէմ (Բալկանը եւ Ամերիկան): Մեկի կարծիքն էլ յայտնի չէ դեռ (Ջրաբերդինը): Աւելի նշանակալից է այն, որ նոյնիսկ երկրի մարմիններից, օրինակ Վասպուրականը ամբողջովին կողմնակից է Նախագծին, իսկ Սասուն–Մուշի ընկերները դէմ չեն Կովկասի գործունէութեան:

Այս բոլորի հիման վրայ՝ զեկուցանողը, իրրեւ եզրակացութիւն, առաջարկեց ժողովին՝ վաւերացնել Յորհրդի արած քայլը, ճանաչել նրա իրաւասութիւնը, եւ դրանով վերջ տալ այդ հարցին չուրջ ծագած աղմուկներին:

Դեռ վիճաբանութիւններին չանցած՝

Զաւրեան նկատում է, թէ Նախագծի հրատարակման իրաւասութեան մասին խօսք չպէտք է լինի, քանի որ այդ արդէն կատարուած իրողութիւն է:

Ռոստոմ միանում է Զաւրեանի նկատողութեանը:

Նախագահը մատնացոյց է անում այն հանգամանքի վրայ, որ զեկուցման էութիւնը՝ հենց այդ իրաւասութեան խնդիրն է. հետեւապէս պէտք է խօսել այդ մասին եւ եզրակացնել:

Մալումեան բաժանում է զեկուցումը երկու մասի 1) Յորհուրդը հրատարակել է Նախագիծը, հիմնուած երրորդ Ընդհանուր Ժողովի որոշման վրայ: 2) Նախագիծը բխում է կուսակցութեան 1892ի ընդհանուր Ծրագրի ոգուց:

Սկսում են վիճաբանութիւնները:

Մուրատ.— Գտնում եմ, որ Ծրագիրն ու Նախագիծը համապատասխան չեն իրար: Ո՛վ դիտէ, գուցէ ես չեմ կարողանում լաւ հասկանալ երկուսի էլ իմաստը, բայց կրկնում եմ, որ դոքա ինձ համար տարբեր բաներ են: Ժողովը դրել է կովկասեան գործունէութիւնը ինքնապաշտպանութեան սահմաններում. նա հրահանգել է դիմադրել ռուս կառավարութեան ոտնձգութիւններին, բայց ոչ երբեք յարձակողական դիրք բռնել նրա վերաբերմամբ: Եւ յետոյ Յորհուրդը իրաւունք չունէր հրատարակել Նախագիծը, քանի որ այդ խնդրին մասնակցած չեն եղել Գատաստանատու Մարմինների, մանաւանդ Երկրի ներկայացուցիչները: Անդրանիկն, այո՛, այդ միջոցին Ժընեւում, մասնակցել է, բայց նա բոլորովին տեղեկութիւն չէ ունեցել՝ հրատարակուելիք Նախագծի մասին: — Սխալ է նաեւ Մալումեանի տուած այն տեղեկութիւնը՝ իբր թէ Քարում [Ալեքսանդրապոլ] գումարուած տաճկահայերի ժողովը ընդունել է Նախագիծը:

Շահխաթունեան.— Առաջարկում եմ ամենեւին չխօսել Նախագծի ոգու մասին, քանի որ այդ ոգին՝ սոցիալիստական սկզբունքները՝ չեչտուած է Ե՛ւ Ծրագրում, աւելի ուժեղ կերպով, քան կարծում է ընկ. Մալումեանը: Վիճաբանութիւն չպէտք է լինի, թէ Դաշնակցութեան Ծրագիրը դասակարգային է. նա դասակարգային է՛, եւ եթէ այստեղ ոեւէ մէկը փորձէ հակառակը պնդել, այն ժամանակ ես կը թողնեմ ժողովը: Հարցը պէտք է այսպէս դնել, թէ իրաւացի՞ քայլ արեց Դաշնակցութիւնը, իրրեւ մի դասակարգային կուսակցութիւն, գործ սկսելով նաեւ Կովկասում:

Զարդարեան.— Նախագծի հրատարակումը իրաւական տեսակէտից արդարացնելու համար, Մալումեանը մատնացոյց արեց կազմակերպական կանոնագրի 6րդ կէտը(29): Բայց Ծրագրի հիմնական փոփոխման եւ այստեղ ասուած «ձեռնարկի» հասկացողութիւնների մէջ՝ մեծ տարբերութիւն կայ: «Ձեռնարկ»ը ես հասկանում եմ չատ աւելի սահմանափակ մտքով: Ինքնապաշտպանութիւն եւ յարձակողական կռիւ նոյն բաները չեն. Յորհուրդը չեղուել է Ընդհանուր Ժողովի որոշումներից՝ ինքնապաշտպանողականից անցնելով յարձակողական: Եւ այսպիսով, Յորհուրդը վնասել է կուսակցութեան հիմնական սկզբունքներին:

Նախագահ.— Ի՞նչպէս է վնասել:

Զարդարեան.— Կովկասում գործելն արդէն ինքնըստինքեան վնասակար է Դաշնակցութեան հիմնական խնդրին՝ տաճկահայ դատին: Գոնէ այսպէս են համոզուած տաճկահայերը:

Նախագահ.— Բայց ինչո՞վ է կովկասեան գործունէութիւնը վնասակար Քրքահայ դատին:

Զարդարեան.— Որովհետեւ այդ դատը՝ զուտ քաղաքական կռիւ լինելուց զատ, նաեւ յանձնուած է վեց մեծ պետութիւնների խնամակալութեանը: Մինչդեռ այսօր դասակարգային – տնտեսական պայքարի սկզբունքն է չեչտւում մեր կուսակցութեան մէջ:

Նախագահ.— Բայց չէ՞ որ 1892ի Ծրագրի մէջ է չեչտուած այդ սկզբունքը:

Զարդարեան.— Այո՛, մինչեւ հիմա, սակայն, մենք մղել ենք բացառապէս քաղաքական եւ ոչ թէ տնտեսական կռիւ:

Սիգ (կանգնում է Ռոստոմի տեսակէտի վրայ, թէ Նախագծի իրաւասութեան խնդրի վրայ չպէտք է ծանրանալ).— Օրինականութեան տեսակէտից, Յորհուրդն իրաւունք չպէտք է ունենար հրատարակելու Նախագիծը. բայց մենք այսօր չենք կարող դատապարտել նրա այդ «յանդգնութիւն» քայլը, քանի որ Նախագիծը կեանքի պահանջ է եղել եւ մենք դեռ պէտք է շնորհակալութիւն յայտնենք Յորհուրդին, որ հասկացել է այդ պահանջի հրամայողականութիւնը եւ նրան բաւարարութիւն տուել:

Ռոստոմ.— Փաստացի ուղղումներ եմ ուզում անել Մուրատի այն յայտարարութեանը, թէ Յորհրդին մասնակից չեն եղել Գատաստանատու Մարմինների եւ երկրի ներկայացուցիչները: Նախ որ Կովկասն ունեցաւ իւր պաշտօնական ներկայացուցիչը՝ Մուսը: Ապա Տաճկաստանի կողմից եւս մարդիկ կային, Վիչապի ծուցական Մարմնի կողմից ներկայ է եղել Սաֆոն, Լեռնավարի Գատ. Մարմնի կողմից ընկ. Վարդան եւ Գալֆայեան: Այստեղ պէտք է ասել, որ Լեռնավարի չըբջանը մեր դիմումին՝ ներկայացուցիչ ուղարկելու՝ պատասխանեց, թէ այնտեղ գոյութիւն չունի տեղական մարմին, որպէսզի կարելի լինէր մեր հրաւէրն ընդունել: Բայց քանի որ Յորհրդում քննելիք Նախագծի հարցը նշանակութիւն էր ունենալու եւ Տաճկաստանի համար, — Արեւմտեան Բիւրոն Լեռնավարի ձայնը տուեց Գատաստանատու Մարմնի վերոյիշեալ անդամին: — Բարձրաւանդակի կողմից ներկայ էր Անդրանիկը, — թէեւ այդ միջոցին այլեւս գոյութիւն չունէր Բարձրաւանդակի Գատաստանատու Մարմինը, անդամները սպանուել էին, մենք Բարձրաւանդակի ձայնը տուինք Անդրանիկին՝ Գատաստանատու Մարմնի ողջ մնացած միակ անդամին: — Շամը, թէեւ սա իրաւունք չունէր ներկայացուցիչ ունենալու, բայց եւ այնպէս մենք ձայն տուինք նրան եւս: Անսպասելի հանգամանքների պատճառով ընտրուած պատգամաւորը անկարող եղաւ տեղ հասնել: — Այսպէսով այլեւս պէտք է հերքուած համարել Մուրատի արած նկատողութիւնը: Գանք Նախագծի հրատարակման խնդրին: Ընդհանուր ժողովը մեզ լայն սահմաններ տուեց՝ կովկասում գործունէութիւն սկսելու համար, եւ այդ այնքան լայն, որ երբ նախքան Յորհուրդի գումարումը, մենք ուզեցինք հարցնել մեր բոլոր մարմինների կարծիքները քննութեան խնդրի վերաբերմամբ՝ Քրիստափորը այդ աւելորդ համարեց, ասելով թէ «մենք միանգամայն իրաւունք ունենք յեղափոխական բուռն կռիւ սկսելու Կովկասում»: Եւ մենք հրատարակեցինք Նախագիծը՝ հիմնուելով մեր ընդհանուր սկզբունքների վրայ: Սըխալուում է Զարդարեանը, որպէս թէ մենք մինչեւ այսօր չենք ունեցել սոցիալիստական գործունէութիւն. մեր Ծրագիրը կանգնած է եղել խիստ դասակարգային հողի վրայ եւ մենք Տաճկաստանում չենք վարել զուտ քաղաքական կռիւ, այլեւ տնտեսական. օրինակ, վերցրէք Անդրանիկի խմբագրած պահանջները Առաքելոց վանքում, ուղղուած հիւպատոսներին. դոքա ղիւսաւորապէս տնտեսական բնաւորութիւն ունին:

Խսահակեան.— Ի՞նչպէս պէտք է հասկանալ «ինքնապաշտպանութիւն» բառի իմաստը, այս է ահա, որ կենտրոնական տեղ է բռնում մեր վիճաբանութեան մէջ: Ես չեմ հասկանում այդ բառը այն սահմանափակ իմաստով, թէ սպասիր, մինչեւ որ քեզ զարնեն, եւ ապա միայն պաշտպանուիր: Ո՛չ, ինքնապաշտպանութիւնը չպէտք է այդպէս հասկանալ: Նրա նշանակութիւնը անհամեմատ աւելի մեծ է եւ բնաւ չէ հակասում Նախագծում չեչտուած յարձակողական տակտիկային: Ընդհանուր Ժողովը «ինքնապաշտպանութիւն» տերմինն է գործածել իբրեւ մի սանձահարող միջոց, որպէսզի մենք անտեղի ու անմտածած քայլերի չդիմենք կովկասում: Ես օրինական եմ գտնում Նախագիծը իրաւաչափութեան տեսակէտից: Իսկ ըստ էութեան նա մեր հին Ծրագիրն է. վերջնս մէջ այնքան բացորոշութեամբ են չեչտուած դասակարգային կռուի սկզբունքները, որ եթէ Նախագիծը ապօրինի համարուի, այս դէպքում մեր ամբողջ գործունէութիւնն եւս պէտք է համարել ապօրինի: «Ծրամաբանօրէն ապօրինի», քանի որ այդ գործունէութիւնը չէ կրել սոցիալիստական բնոյթ:

Չելալեան.— Մեր նպատակն է եղել սկզբից մինչեւ այսօր Տաճկահայաստանի քաղաքական աղատութիւնը եւ «Դաշնակցութիւն» ասելով մենք միշտ էլ հասկացել ենք բացառապէս տաճկահայ դատի նուիրուած մի կուսակցութիւն: Դաշնակցութիւնը ճիւղեր է ունեցել Կովկասում, Ամերիկայում, Եգիպտոսում, եւ բոլոր այդ վայրերի գործունէութիւնը ուղղուած է եղել դէպի Տաճկաստան: Դաշնակցութիւնը տաճկահայերի սեփականութիւնն է, եւ ոչ ոք իրաւունք չունի այդ սեփականութեանը ձեռնամուխ լինելու: Ուստի, նախքան Կովկասում եւս տեղական մի առանձին գործ սկսելը, կովկասահայ պատգամաւորները պէտք է հար-

ցընէին Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին, թէ արդեօք վերջինս կարեւո՞ր է գտնում կովկասեան գործունէութիւնը:

Նախագահ.— Այստեղ չպէտք է խօսք լինի տաճկահայի եւ կովկասահայի մասին, այլ միայն դաշնակցականների մասին:

Չելպաեան.— Մենք տաճկահայերս, ի հարկէ, չենք ուզում, որ կովկասահայ դատը ջուրն ընկնի, բայց հարցը նրանում է. արդեօք չէ՞ն խանգարի իրար՝ տաճկահայ եւ կովկասահայ դատերը, չէ՞ն հակասի միմեանց այդ երկուսը:

Գուսան (կրկնում է Չելալեանի վերջին հարցը).— Այստեղ է խնդրի էութիւնը: Տաճկահայերը բողոքում են ո՛չ Նախագծի ապօրինի հրատարակման դէմ. եթէ Ընդհանուր Ժողովն իսկ լինէր հրատարակողը, դժգոհութեան չէր կարելի վերջ տալ:

Վռամեան.— Դասակարգային պայքարի գաղափարը չեչտուած է մեր Մրագրում եւ մենք մեր գործունէութեան մէջ ենք մտցրել ընկերվարութեան սկզբունքներ: Միայն թէ այդ ամէնը ծայրէ ի ծայր եղել է բացառապէս Տաճկահայաստանի համար, ո՛չ մի խօսք կովկասի մասին: Ընդհանուր Ժողովն իրաւունք չունէր դուրս դալու մի անգամ ընդգծուած սահմաններից. հակառակ դէպքում, նա պէտք է կոչուէր ոչ սոսկ Ընդհանուր Ժողով, այլ «Սահմանադիր Ժողով»: Երբորդ Ընդհանուր Ժողովը, սակայն, դուրս եկաւ սահմաններից՝ կուսակցութեան գործունէութիւնը տարածելով նաեւ կովկասի վրայ: Ես բողոքեցի Ժողովի ընդունած այդ ընթացքի դէմ եւ իմ բողոքը մտցուեց արձանագրութեան մէջ: Ցամենայն դէպս Ժողովը ինքնապաշտպանութեան վրայ կանգ առաւ, բայց ո՛չ երբեք յարձակողական տակտիկայի, ինչպէս վարուել է Որոհուրդը: Որոհուրդը իրաւունք չունէր յարձակողականի անցնելու: Ընդհանուր Ժողովը, այո՛, այս կամ այն «ձեռնարկը» կատարելու իրաւունքը տուեց. կովկասեան գործունէութիւնը, սակայն, մի մասնաւոր ձեռնարկ չէ, այլ մի ամբողջ քաղաքականութիւն: Որոհուրդը իրաւասու չէր նոր քաղաքականութիւն սկսելու: Ա՛յս է էականը: Բայց իրողութիւնը արդէն կատարուած է, — Նախագիծը հրատարակուած. այլեւս չխօսենք այդ մասին, այլ հաշտուենք Ռոստոմի տասծի հետ, որ Դաշնակցութիւնը կեանքից բխած մի կուսակցութիւն լինելով, անկարող էր Նախագիծը չհրատարակել, քանի որ կեանքն է այդպէս պահանջել:

Թոփչեան.— Բողոքում եմ Չելալեանի նկատողութեան դէմ. այստեղ բնակավայրի խորութիւն չպէտք է լինի, չկայ ոչ տաճկահայ եւ ոչ կովկասահայ, այլ դաշնակցական: Կան կովկասահայեր՝ որոնք աւելի ջերմ կերպով են նուիրուած տաճկահայ դատին քան տաճկահայերն իրենք, եւ ընդհակառակն: Վռամեանը լաւ նկատեց, որ կովկասահայ գործունէութիւնը կեանքի պահանջ է եղել: Կեանքի պահանջ է, այո՛, որ Դաշնակցութիւնը ուշս կառավարութեան դէմ կռուի ելաւ դեռ այն ժամանակ, երբ Ընդհանուր Ժողովը ոչ մի որոշում չէր կայացրել ինքնապաշտպանութեան մասին: Հետաքրքիր է, ինչո՞ւ հենց այն ժամանակ ոչ մի բողոք չլսուեց: Տաճկահայ դատի տեսակէտից հենց, անհրաժեշտ էր, որ Դաշնակցութիւնը սկսէր ե՛ւ կովկասեան գործունէութիւնը. առանց այս վերջինի Դաշնակցութիւնը իւր այսօրուայ ուժը չէր ունենայ երբեք: Կովկասումն էր, որ Դաշնակցութիւնը զօրեղացրեց իւր բանակը, խտացրեց իւր գաղափարակիցների չարքերը, անցաւ կռիւների բովով...: Եւ Կովկասում ձեռք բերած ուժն ու փորձառութիւնը, ռազմական եւ նիւթական տեսակէտից, խոշոր օգուտ են տալու տաճկահայ դատին: Կրկնում եմ, կեանքի պահանջ է եղել կովկասեան գործունէութիւնը եւ ամենից առաջ նախորդ Ընդհանուր Ժողովը ի՛նքը հասկացել է այդ պահանջը: Ասում են՝ Ժողովը դրել է ինքնապաշտպանութեան սահմաններ, բայց չէ՞ որ նոյն Ժողովը արձանագրել է, որ Հ. Ց. Դաշնակցութիւնը կովկասում պէտք է մասնակցի քաղաքական ցոյցերին, բանուորական գործադուլներին, պէտք է համերաշխութիւն հաստատէ ուրիշ քաղաքական կուսակցութիւնների եւ առանձնապէս սոցիալիստ-յեղափոխականների հետ: Ասացէք խնդրեմ, մի՞թէ մեր գործունէութիւնը անցել է սահմաններից. երբէ՛ք: Մենք դուրս ենք եկել կարմիր դրօշակներով քաղաքական ցոյցի, որպէսզի մեր բողոքն յայտնենք բռնակալութեան դէմ, մեր իրաւունքները պաշտպանենք. մենք մասնակցել ենք գործադուլներին, որպէսզի մեր ընկեր բանուորների դառն քրտինքը պաշտպանենք ընդդէմ չհագործողների: Այո՛, ընկերներ, մեր գործունէութիւնը կովկասում եղել է ե՛ւ իրաւական եւ օգտակար: Զգակենք աչքերս իրականութեան առաջ. թողնենք մանր հարցերը, սեղմուենք իրար եւ առաջ գնանք մէկ ընդհանուր դրօշի տակ — եթէ միայն չենք ուզում ամրացնել մեր հակառակորդ կուսակցութիւնների ոտքի տակի հողը:

Մաղումեան.— Համաձայն չեմ այն ընկերների հետ, որոնք Նախագծի հրատարակման հարցի իրաւական կողմը ուզում են մի կողմ թողնել բոլորովին: Ներկայ դէպքում այդ ընկերները սուբյեկտիւ [ենթակայական] կերպով են մտածում: Դուրսը կայ ահագին բազմութիւն, որի համար էական նշանակութիւն ունի իրաւասութեան հարցը: Այդ իսկ պատճառով կարեւոր է, որ Ընդհանուր Ժողովը իր կարծիքը յայտնէ, թէ որքա՛ն իրաւունք ենք ունեցել մենք Նախագիծը հրատարակելու. կուսակցութեան դիսցիպլինան [կարգապահութիւնը] եւս այդ է պահանջում: Եւ քանի որ Որոհուրդը օրինական հողի վրայ է կանգնած եղել, յայտնեմ, որ Ժողովն իւր վստահութեան քուէն կը տայ Որհրդին: Վռամեանի առարկութիւնը, թէ Ընդհանուր Ժողովը միայն ձեռնարկներ կատարելու իրաւունքն է տուել Որհրդին, հերքւում է ինքնըստինքեան, քանի որ Նախագիծն եւս ձեռնարկ անելու նպատակ ունի: Գալով արուած հակաճառութիւններին, որոնց մէջ առաջնահերթաւորը համարում եմ Զարդարեանինը, թէ կովկասեան գործունէութիւնը վնասելու է տաճկահայ դատին, բարեբախտաբար այդ երկիւղը անցած պիտի համարել. փաստերը այժմ ցոյց են տալիս, որ կովկասեան դատը, ընդհակառակն, աւելի զարկ է հաղորդում տաճկահայ շարժմանը. այդ երկուսը շաղկապուած են իրար հետ շատ բանով եւ մէկի դադարումը վնասակար կարող է լինել միւսի համար: Վերջին երկու տարուայ փաստերը, որ ձեզ ծանօթ են, ապացոյց են իմ այդ մտքի:

Ռոստոմ (բողոքում է Չելալեանի դէմ).— Ինձ վերայ ծանր տպաւորութիւն թողին Չելալեանի «տաճկահայ» եւ «կովկասահայ» բառերը. մէկ անգամ ընդմիշտ պէտք է վերջ տրուին այդօրինակ մտքերի:

Չելալեան.— Ես չեմ ուզել խորութիւն դնել. խնդրում եմ ինձ սխալ չհասկանալ:

Մաղումեան.— կարդում է այն բանաձեւը, որ խմբագրուել է Ալեքսանդրապոլի մէջ գումարուած տաճկահայերի ժողովում: Այդ բանաձեւը հետեւեալն է՝

«Հ. Ց. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյի հրաւիրմամբ գումարուած կովկասաբնակ դաշնակցական տաճկահայերի համագումարը, քննելով Նախագծի չորրը ծագած տարաձայնութիւնները, անկախ չորքանից բերած մանդատներից, եկաւ այն եզրակացութեան, որ նա համապատասխան է Հ. Ց. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովի դրած սկզբունքներին, եւ որ կովկասեան գործունէութիւնը կեանքի հրամայողական պահանջ է: Իսկ Նախագծի վերջնական ընդունելութիւնը եւ գործադրութեան չափը թողնւում է առաջիկայ Ընդհանուր Ժողովին»:

Ինչպէս տեսնում էք այս բանաձեւը ընդունում է Նախագիծը. ուրեմն սխալ է Մուրատի վերոյիշեալ նկատողութիւնը, թէ Քարի Ժողովը դէմ է եղել Նախագծին:

Չելալեան.— Այդ բանաձեւի բովանդակութիւնը սխալ եմ գտնում:

Մուրատ.— Քարի Ժողովին մասնակցած պատգամաւորներից ոչ ոք անկեղծ կողմնակից չէ եղել Նախագծին. իսկ եթէ այնուամենայնիւ ստորագրել են այդ բանաձեւը, այդ եղել է, որովհետեւ նրանց վրայ բռնոյական ճնշում է գործ դրուել:

Վահագն.— Ես ներկայ էի այդ Ժողովին. սխալ է, ոչ մի ճնշում չէ գործ դրուել: Ճիշդ է, 22 չրջաններից եկած պատգամաւորների մանդատների մեծ մասը հականախագծական բնաւորութիւն է ունեցել, բայց իրե՛նք, պատգամաւորները Ժողովի ընթացքում փոխեցին իրենց հայեացքները Նախագծի վերաբերմամբ, երբ նրանց բացատրուեց վերջնիս էութիւնը: Պատգամաւորները իրենց ունեցած մանդատներից անկախ, ընդունեցին Նախագիծը եւ յօժար կամքով ստորագրեցին այդ բանաձեւը: Իսկ թէ Ժողովից յետոյ նրանք նորից հականախագծական են դարձել՝ չգիտեմ:

Վիճաբանութիւնների չարունակութիւնը թողնւում է յաջորդ նիստին:

59ՐԴ ՆԻՍՏ (30 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Թոփչեան:
Ներկայ են 26 ժողովական:
Բացակայ են՝ Մուրատ, Անդրանիկ (Հիւանդ):

Օրակարգ՝ Վարդանի եւ Սիրականի զեկուցումները Լեռնավայրի մասին եւ Մալումեանի լրացուցիչ զեկուցման չուրջը յարուցած վիճաբանութեան չարունակութիւնը:

Նախքան օրակարգին անցնելը Ժողովը լսեց նախորդ 2 նիստի արձանագրութիւնները, եւ հաստատեց:

Նախագահ.— Այսօր եկան բաթումի ներկայացուցիչ Մ. Ճովհաննիսեան (Վարանդեան) եւ Հ. Օհանեան. ուստի յանձնարարւում է մանդատները ստուգող յանձնաժողովին՝ քննել պաշտօնական գրութիւնները: Այժմ անցնենք օրակարգին. խօսքը Վարդանինն է:

Վարդան.— Ես մի քանի խոշոր գծերով կը ներկայացնեմ Լեռնավայրի դրութիւնը եւ կ'անցնեմ գրաւոր տեղեկագրին, որը շատ մանրամասն է: Մանաւանդ իմ նպատակն է առանձնապէս կանգ առնել մի երկու կէտի վրայ, որոնք անձամբ տեսել եմ: Այն ժամանակ որոշուած էր չորս ընկերներով անցնել Լեռնավայր: Բայց այս չորսից միայն ես եւ Սիմոնը անցանք, իսկ միւսները չգիտեմ ինչո՞ւ ներս չմտան, թէեւ դիմումներ յաճախ եղել են: Ես գացի Աբէնք, տեսայ Սարդսին [Սարհատին ?], կարգադրեցի այնտեղ եղած 100 հրացանները եւ փամփուշտները ուղարկել, բայց չատ ապաշխեցինք ու չստացանք: Ճետոյ անցայ Բէյրութ, Հալէբ, Քիլիսի վրայով գնացի Այնթապ, ամէն տեղ էլ դրութիւնը անմխիթար էր, ամէն տեղ էլ հանդիպեցի նոյն անկերպարան վիճակին: Զկային պաշտօնական մարմիններ, այլ միայն անհատներ, այն էլ ոչ նուիրուած գործին: Հալէբում, թէ՛ մարմին եւ թէ՛ ամէն ինչ՝ Ռահվերն էր(26): Գործ չեն կատարում, իսկ խոստումներ՝ անթիւ ու առատ: Բայց սխալ կը լինի եթէ ասեմ թէ Լեռնավայրում մարդիկ չկան. ո՛չ, կան եւ բիւրասարդներ, որոնք դուրս են գալիս կուլէյից, բայց չատ անտարբեր են: Բացի այդ՝ Ժողովուրդը գիտակից եւ պատրաստուած չէ. նա չափազանց չահասէր է. եւ բնորոշ է այն երեւոյթը, որ եթէ դրամ կայ՝ բարեւ էլ

կայ· աչքերը անկել են փողին: Եւ թէեւ ահագին փող է ծախսուել — Սիմոնն էլ մեծ գումար էր բերել իւր հետ — բայց դրա համեմատ չատ աննշան բան է արուած: Մեր ընկերներն էլ չատ անխնայ, անխիղճ կերպով են վերաբերուել ղրկուած փողերի հետ: Ծախսել են չատ լայն չափերով: Ժողովուրդը յեղափոխութեան մասին գաղափար չունի, յեղափոխութիւնից նա փախչում է: Կայ նաեւ մի բնորոշ հանգամանք, որ իրար մօտ խմբուած հայ դիւղերը չկան· Զէյթունն է միայն բացառութիւն կազմում: Դրանք առանձնացած են եւ չրջապատուած մահմետականներով: Այդ չրջանի ամբողջ հայ ազգաբնակութիւնը կարելի է հաշուել ոչ աւելի քան 100–130 հազար: Մխակ վստահելին է Զէյթունը: Նրանք յեղափոխական տեմպերամենտ չունեն, այլ միայն արկածախնդիր բնաւորութեան տէր են· գաղափարական ոչինչ չկայ: Ալշարհագրական դիրքը լաւ է եւ նպաստաւոր, ինչպէս ծովափնեայ տեղերը, անառիկ դիրքերը, բայց նշանակալի ապստամբութիւն առաջացնել անհնարին է ուղղակի: Մենք ոչինչ չենք արել, հետեւապէս բան էլ չպիտի սպասենք: Այժմ հարկաւոր է երկի՛ր ուղարկել ճեռնհաս գաղափարական մարդիկ, որպէսզի պատրաստեն մտքեր, առաջ տանեն կազմակերպչական գործը: Տարիների անդուլ, անդադրում գործ է հարկաւոր ցանկալի եւ յաջող ապստամբութեան համար: Իսկ Կիլիկիայում, դա իմ անհատական կարծիքս է, ապստամբութիւնը միանգամայն անկարելի է, իսկ ցուցական կռիւներ կարելի է յառաջացնել· եւ քանի որ եւրոպական նաւերը մօտիկ կանգնած են, դուցէ Եւրոպայի միջամտութիւնը առաջացնեն: Կ՛ուզէի եւ այն հանգամանքի վրայ չեչտել, որ անհրաժեշտ է երկրի մարդիկ [տեղացիներ ?] մըտնեն Լեռնավայր, քանի որ նրանք ազատ կարող են ապրել, չրջել եւ ոչ թէ ինձ նմանները, որոնք անկարող են երկար մնալ եւ թաքուն գործել: Ուրեմն գործը առայժմ դնել կուլտուրական հողի վրայ, բայց դրա հետ նաեւ զուգընթացաբար յառաջ տանել զինման գործը: Սրանով վերջացնում եմ իմ դիտողութիւնը եւ դառնում դրաւոր տեղեկագրին, եթէ Ժողովը կարեւոր դատի նրա ընթերցումը:

Նախագահ·— Այդ դրաւոր տեղեկագիրը յետոյ կը լսենք, այժմ խօսքը ընկ· Սիրականինն է:

Սիրական·— Ես այժմ անկարող եմ զեկուցանել, կ՛ուզէի վաղը աւելի լրացուցած ներկայացնել· չպէտք է աճապարել:

Նախագահ·— Մենք անկարող ենք դրանով վաղն էլ զբաղուելու, ես առաջարկում եմ այժմ կարդալ զեկուցումը:

Ռոստոմ·— Ես կարծում եմ, որ ընկ· Սիրականը պատրաստի զեկուցում ունի, նորը պատրաստելու պէտք չունի, քանի որ նա այսօր պիտի զեկուցանէր առանց Վարդանի էլ, իսկ վրիպող կէտերը կարող են նաեւ միւս ընկերները լրացնել:

Նախագահ·— Ես նորէն պնդում եմ, որ ընկ· Սիրական այսօր պիտի կարդայ, մենք չենք կարող վաղը նորէն վերադառնալ նոյն հարցին:

Սիրական·— Ես կրկնում եմ, որ անկարող եմ այսօր կարդալ· ես կը տամ դրաւոր զեկուցում:

Նախագահ·— Մենք սրանով փակուած ենք համարում այս հարցը: Նա կը տայ իւր զեկուցումը դիւանին· եթէ վերջինս յարմար դատէ, կը դնէ Օրակարգի մէջ:

Ժողովը համաձայնում է վերջին կէտին: 5 րոպէ ընդմիջում:

Նախագահ·— Վերսկսելով Ժողովը· ես դնում եմ վարդանի դրաւոր զեկուցման խնդիրը, արդեօք կարդա՞լ այդ տեղեկագիրը թէ ոչ:

Ժողովը համաձայնում է լսել ընթերցումը:

Վարդան·— Այս տեղեկագիրը, որ կարդալու եմ, կազմուած է մօտ երկու տարի առաջ եւ այժմ մեր կարծիքը մի յայտնի չափով փոխուած է դրա վերաբերմամբ:

Ձայներ·— Դէպի լա՞ւը թէ վատը:

Վարդան·— Իմ կարծիքով դէպի վատը:

Ընկեր Վարդանը կարդում է այդ զեկուցումը, որի ընթերցումը տեւում է 20 րոպէ:

Նախագահ·— Այժմ անցնենք հարցումներին եւ որոշ կէտերի լուսաբանութեան:

Վռամեան·— Ես կ՛ուզէի գիտնալ ա) Ընկ· Սիմոնի եւ Վարդանի կարծիքը մեր առաջիկայ գործունէութեան մասին կիլիկիայում· բ) Ովքե՞ր էին Պատասխանատու Մարմնի միւս անդամները եւ ինչո՞ւ չանցան երկիր· գ) Նոր անդամներ ընտրուեցա՞ն նրանց փոխարէն եւ դ) ինչո՞ւ Սիմոնը եւ Վարդանը հեռացան երկրից:

Վարդան·— Իմ, ինչպէս նաեւ Սիմոնի խորին համոզմունքն է, որ այժմ Զէյթունի ապստամբութեան մասին երազել անգամ անհնար է: Մեր կարծիքով այժմ միայն դիտակից, նուիրուած ընկերներ պէտք է մտցնել երկիր, խաղաղ միջոցներով պատրաստել մըտքեր, կազմակերպել ժողովրդին լինի դա խօսքի պրոպագանդայով, գրքով, թերթերով, բայց ոչ զէնքով· կարող են, ի հարկէ, ինչպէս ասացի, զուգընթացաբար զինման համար էլ հոգալ: Գլխաւորն է՝ կազմակերպել, գիտակցութիւն առաջացնել: Պէտք է կշիռ տալ տեղական ուժերին, տաճկահայ ինտելիգենտ ընկերներին· այդ բանը դրսեցիների գործը չէ: — Իսկ թէ ովքե՞ր են եղել Պատասխանատու Մարմնի 2 անդամները եւ ինչո՞ւ չեն դնացել՝ հաստատ չգիտեմ, նրանց չեմ էլ տեսել· գուցէ Ռոստոմը գիտէ:

Ռոստոմ·— Դրանք Աղասէրն ու Առաքսարն(26) էին· բայց թէ ինչո՞ւ չմտան երկիր, իսկական չարժառիթը չգիտեմ: Հիմնական պատճառ էլ չկար: Առում են ոմանք, թէ առանց նրանց համաձայնութիւնը առնելու են ընտրել:

Մալումեան·— Նրանք հենց սկզբից տրամադրութիւն ցոյց չէին տալիս գործի մէջ մտնելու:

Մաւնուկ·— Ես որքան գիտեմ, նրանք ընտրուել են մի պայմանով, որ Եուսուֆեանն էլ անցնի երկիր· բայց վերջինս հրաժարուել է, հետեւապէս Աղասէրն ու Առաքսարն էլ չեն կանգնել որոշումից:

Վարդան·— Գալով ընկ· Վռամեանի երրորդ հարցին, պիտի ասեմ, որ ի նկատի ունէինք միայն Աւետին, ուրիշ ընկերներ ուղղակի չկային· իսկ Աւետն էլ դրամական ոյժ չատ թոյլ էր: Նա վերցրել էր 50 ոսկի վճառական կողմէ չատ թոյլ էր: Նա վերցրել էր 50 ոսկի վճառական կողմէ չատ թոյլ էր: Նա կարող էր ուսուցիչ լինել եւ կազմակերպութեան գործ էլ վարել, առանց ծանրանալու կազմակերպութեան վրայ· բայց նա չէր ցանկանում եւ ուզում էր առեւտուր անել: Իսկ չորրորդ հարցին գալով, կարող եմ իմ մասին ևել: Իսկ չորրորդ հարցին գալով, կարող եմ իմ մասին նել· Սարհատը(24) եւ Մարտինը(26) պիտի միայն ասել·— Սարհատը(24) եւ Մարտինը(26) պիտի մնային երկիր, այդ որոշուած էր, բաւականին դրամ էր ծախսուած, զէնքեր գնուած, եւն·: Բայց նրանք չէին ուզում տեղերից չարժուել: Ես եւ Սիմոնը խորհրդակցեցինք եւ յարմար գտանք, որ ես անցնեմ Աթէնք, նրանց գործերը քննելու եւ երկիր չմտնելու պատճառները իմանալու, վերջապէս՝ ամբողջ անցած դարձածը պարզելու: Գնացի Աթէնք եւ քննեցի· նրանք աւելի քան անբարեխիղճ էին վերաբերուել կազմակերպութեան դրամների հետ· ամսական ծախսել էին 350–400 ֆրանք· այն ինչ, ես նոյն տեղում ապրելով ծախսել եմ միայն 150 ֆրանք: Ես կտրուկ եւ որոշ կերպով դրի երկիր անցնելու հարցը: Նրանք համաձայնեցին, բայց խիստ դրամական պահանջներ առաջադրելով: Իմ վերջին խօսքն էր՝ կա՛մ մտնել երկիր, միանուագ 15 ոսկի ստանալով, եւ կա՛մ պատասխանատու [նկատուել] ծախսած փողի համար, աւելացնելով, որ դրամը կը ստանաք ա՛յն ժամանակ, երբ կը մտնէք երկիր: Այս դրութեան մէջ էր գործը, երբ ես անցայ Թէհրան:

Վռամեան·— Ովքե՞ր են եղել կազմակերպութեան փողերը ծախսողները եւ ի՞նչ միջոցներ են ձեռք առնուած դրա դէմ: Բացի այդ, ի՞նչ եղան 100 հրացանները:

Վարդան·— Մի չարք մարդիկ, օրինակ՝ Մարտին, Սարհատ, Ռահվեր եւ Աչոտ Լեւոն: Ասում են, որ վերջինս սիրուն մի տուն է չինել: Զգիտեմ ծախսուած դրամի իսկական քանակը: Իսկ այդ զէնքերը մինչեւ այժմ էլ մնում են Աթէնք, Թողնուած են մի վստահական մօտ, երբ ուզենք կարող ենք առնել· բայց նա ասում է, որ Սարդարը [Սարհատը ?] պարտք ունի, հետեւապէս առանց պարտքը վճարուելու չէ կարող զէնքերը յանձնել:

Մալումեան·— Զէնքերի այս հարցը չուտափոյթ կարգադրութեան է կարօտ: Այդ մթերքի առաջարկները դնուում է Բիւրոյի Թղթերի մէջ: Յատուկ մարդ է ուղարկուած եղել կարգադրելու այդ հարցը: Վերջերս Բիւրոյում, յոյն փաստաբանից ստացած Թղթերին նայելով, մենք նորէն պիտի վճարենք 3500 ֆր· զէնքերը յետ ստանալու համար: Աւելի ձգձգել այս խնդիրը անկարելի է· քանի որ Սարհատը այստեղ է, պիտի օգտուել այդ առիթից, եւ որոշ բացատրութիւն պահանջել նրանից Աթէնքի գործերի համար: Ինդրում եմ մասնաժողովին այդ կէտը ի նկատի ունենալ:

Վռամեան·— Ես չեչտում եմ, որ դա մէկն է կարեւորագոյն հարցերից, որի լուծումը իսկոյն պէտք է տալ: Դա մասնաժողովի պարտականութիւնն է: Կը խնդրէի մի վերջին հարցման էլ պատասխանել, Թէ արդեօք ո՞րքան է ծախսուած Լեռնավայրում այդ երեք տարուայ ընթացքում:

Մալումեան·— Ինչպէս տեսաք տպած հաշուից՝ 26,164 ֆր· է ուղարկուած: Այդ գումարի մի մասը մնում է Եգիպտոս:

Զարդարեան·— Քանի որ Մարտինը վստահելի չէր, հապա ի՞նչպէս առաջարկում էիք երկիր մտնել:

Վարդան·— Սիմոնը լաւ զեկուցում արաւ նրա մասին· Նա միայն յետոյ է ազդուել ընկերներից: Մենք դա նրա համար իբր ապաչխարանք էինք դիտում· միւս կողմից՝ ուրիշ մարդիկ չկային:

Սեպուհ·— Մի հարց չատ Թեթեւ կերպով չօշափուեց եւ անցաւ, դա Պատասխանատու Մարմնի երկրից հեռանալու հարցն է: Ես չատ էլ բանաւոր եւ պատճառաբանուած չեմ տեսնում դրա մասին լուսած բացատրութիւնները: Դա կարեւոր հարց է եւ պիտի երկար խօսել:

Նախագահ·— Մենք խօսում ենք ընդհանրապէս տեղեկագրի մասին եւ յետոյ կը լուսաբանուի այդ հարցը իր հերթին եւ տեղին: Դրա վրայ այժմ երկար չպիտի կանգ առնել:

Համօ·— Ես միանում եմ Սեպուհի դրած հարցին եւ գտնում դիտողութիւնը իրաւացի: Այդպիսի ընդհանուր խօսակցութիւնների, դիտողութիւնների միջոցին էլ պիտի նման խնդիրներ խորհրդակցութեան նիւթ դարձնել:

Մալումեան·— Ձիշդ գտնելով ընկ· Համոյի կարծիքը, հակառակ եմ, որ հարցը այժմ երկար վիճաբանութիւնների նիւթ դարձուի: Անհրաժեշտ է Սիմոնի ներկայութիւնը, քանի որ նա աւելի ուշ է դուրս եկել երկրից քան Վարդանը: Բացի այդ՝ նոր զեկուցում ունենք (Սիրականինը), — մի առիթ՝ հարցը լուսաբանելու համար, երբ կը վերադառնանք Լեռնավայրին:

Տաճատ·— Ցանկալի է, որ Սիրականի զեկուցումը յետաձգուի մինչեւ Սիմոնի գալը:

Հինգ րոպէ ընդմիջումից յետոյ վերաբացւում է Ժողովը:

Նախագահ·— Օրակարգի առաջին կէտը փակուած

համաբելով, այժմ դառնում ենք ընկ. Մալումեանի զեկուցման քննութեան չարունակութեանը: Ինձորում եմ կենտրոնական զեկուցման գլխաւոր կէտի, այսինքն Ռորհրդի իրաւասութեան կողմի վրայ:

Մալումեան.— Եթէ հակաճառողներ չկան, մենք կարող ենք անցնել բանաձեւերին: Ուրախալի է եւ այն, որ Բաթումն էլ, ինչպէս ընկ. Յովհաննիսեանն է ասում, դրական ձայն է տուել Նախագծին: Ուրեմն պաշտօնական մարմինների ճնշող մեծամասնութիւնը, այն է 24 մարմիններից 21ը համաձայն են, 2ը հակառակ, իսկ մէկն էլ անորոշ է(կարս):

Համօ.— Ես որքան գիտեմ՝ կարսն էլ հակառակ չէ:

Սեպուհ.— Ասում են բողոքողներ չկան, դա աւելի քան չափազանցութիւն է, առնուազն ինքնախաբութիւն: Հապա մամուլը, որ երկար ժամանակ այդ էր դարձրած տենդոտ պայքարի նիւթը. մի՞թէ սա բողոքի ձայն չէ: Ժողովուրդի լայն շերտեր բողոքում են դրա դէմ: Մենք շատ էլ չոգեւորուինք պաշտօնական մարմիններով: Այդտեղ կասկածի տեղիք կայ: Գանձակից ընտրուել է ընկ. Մաշուրեանը, բայց ի՞նչպէս է ընտրուել, ո՞րքան է օրինաւոր եւ մի՞թէ կարծում էք բոլորն էլ Նախագծի համար պայքարողներ են... Մենք պէտք է լուրջ վերաբերուենք այդ հարցին:

Մաշուրեան.— Եթէ Սեպուհի պէս մտածենք, այն ժամանակ կուզէ ոչ մի չրջանից այստեղ պատգամաւոր չպէտք է ընդունելի համարուի, որովհետեւ մենք այնպիսի ժամանակ ենք Չրջանային ժողով գումարել, երբ քայքայուած էին, ինքնապաշտպանութեան հետեւանքով, բոլոր մեր նախկին մարմինները. մի բան՝ որ ամէն չրջանում է տեղի ունեցել, սկսած Արեւմտեան Բիւրոյից: Մեր Չրջանային ժողովում ներկայ էին բոլոր այդ ժամանակ գոյութիւն ունեցող մարմինների ներկայացուցիչները եւ նրանք, որոնք ցենզի իրաւունք է տուել տեղական մարմինը: Սեպուհի պէս եթէ մտածենք, պիտի ամբողջ ժողովուրդից ընտրուած լինէինք, որովհետեւ Չրջանային ժողովից զատ առաջ ամբողջ ժողովուրդը — բոլոր գիւղերը — դաշնակցական էին համարւում: Այստեղ 30 պատգամաւորների առաջ Մուրատը վեր կացաւ ու յայտարարեց Ընդհանուր ժողովի առաջ, թէ Նախագծի չնորհիւ Դաշնակցութիւնը բաժանուել է 4 մասի, 4 մասից մէկն էլ ինքն է, եւ առայժմ 100աւոր զոհերի պատճառ պիտի դառնան: Այսպիսի յայտարարութիւն անելու համար մի բարձր ժողովում, պէտք է նա իւր խօսքերը հիմնէր այսօր տեղի ունեցող փաստերի վրայ. իսկ եթէ այդ այդպէս չէ, այն ժամանակ, նա՝ Մուրատը՝ լռելեայն լսող Ընդհանուր ժողովի առաջ կոտորածի սպառնալիք է անում, 100աւորների արիւնի մասին է յիշում: Ես բողոքում եմ այդպիսի սեւ խօսքեր ժողովում արտայայտուելուն համար:

Նախագահ.— Ես թոյլ չեմ տայ մանդատների մասին վէճ յարուցանելու, քանի որ դա ստուգուած է, եւ եթէ ապօրինութիւն կայ, առաջ պիտի բողոքէին:

Համօ.— Անհրաժեշտ էր մի յանձնաժողով, որը քննէր մանդատները, որպէսզի այժմ ժողովի իրաւասութեան մասին խօսք եւ կասկած չյարուցուէր:

Նախագահ.— Յանձնաժողով ընտրուած է ժամանակին եւ մանդատները ստուգուած. ուստի ոչ մի խօսք այդ մասին:

Համօ.— Սեպուհի ասածների մէջ ճիշդ է այն, որ Դաշնակցութեան մէջ, իբր մի ժողովրդական կուսակցութիւն, տիրում են այժմ երկու հակադիր տեսակէտներ, երկու հոսանքներ: Այդ իրական փաստ է: Եւ մի կողմը, այսպէս ասած Միհրանականները, համարում են Նախագիծը ապօրինի վիժուածք: Այժմ հասել է ժամանակը, որ Դաշնակցութեան Բարձրագոյն Մարմինը, նրա կամքը ներկայացնող ներկայացուցչութիւնը ասէ իւր հեղինակաւոր խօսքը այդ կնճռոտ հարցի մասին: Գուցէ ոմանք նկատեն եւ առարկեն, թէ չ'արժէ դրանով զբաղուել, բայց ես բոլորովին հակառակ տեսակէտի վրայ եմ կանգնած: Անհրաժեշտ է այդ մանրամասն լուսաբանել: «Ինքնապաշտպանութիւն» հասկացողութիւնը այդ խմբակի մօտ ըմբռնւում է չատ նեղ եւ սահմանափակ: Նրանց տեսակէտով այդ զաղափարի տակ պիտի հասկացուի միայն կռիւ թուրք ազգաբնակութեան դէմ: Դա, ասել է, խելքի սնանկութիւն է: Ամէն մի յարձակում մեր դէմ, որը վտանգում է մեր իրաւունքները, մեր գոյքը եւ ստացուածքը, լինի դա թուրքերի թէ կառավարութեան կողմից, յասալ է բերում ինքնապաշտպանութիւն: Ռուսաց ներկայ ռէակցիոնէր կառավարութեան ամէն մի քայլը, ամէն մի ձեռնարկը հարկադրում են ինքնապաշտպանութեան դիմելու: Դեռ աւելին. նրա գոյութեան ամէն մի օրը, ամէն մի ժամը թոյն է մեզ, ինչպէս նաեւ ամէն մի հպատակ ժողովուրդի համար: Ուրեմն կեանքի հրամայողական թելադրութիւնն է, կռուել ռուսաց կառավարութեան ամէն մի ձեռնարկի դէմ եւ պայքարել այնքան, մինչեւ որ ստեղծենք իրաւական պետութեան կարգեր: Սա էլ ինքնապաշտպանութիւն է, որը չեն ուզում ընդունել մեր ընկերներից ոմանք: Այսպէս է հասկացուել այդ 1904 Թուի Յայտնական [Ընդհանուր ?] ժողովում եւ ըստ այնմ ընդգծուել մեր գործելակերպը կառավարութեան դէմ: Դա կեանքի անհրաժեշտութիւն էր: Եւ եթէ չտայինք այդ ծրագիրը, Դաշնակցութիւնը գոյութիւն չէր ունենայ. դա ամենահետաքրքրականն էր:

Զարդարեան.— Ես կ'ուզէի որ հենց այդպէս էլ դրուէր հարցը. այն, որ այդ ակտը եղել է կեանքի հրամայողական անհրաժեշտութիւն. իսկ իրաւական տեսակէտը մի կողմ թողնել, քանի որ վերջինս աւելի քան թոյլ է պատճառաբանուած եւ հիմք էլ չունի:

Ռոստոմ.— Մի քնորոշ հանգամանք, որ արժէ չէջտել, այն է՝ որ մինչեւ այժմ պաշտօնական մարմիններից չատերն անգամ չէին ուզում ճանաչել Նախագիծը. իսկ այժմ, տալիս են իրենց դրական ձայնը: Այդ է բնորոշ կողմը: Այդ ասելով, չեմ հակաճառում այն բանի դէմ, որ ժողովրդի մէջ խոշոր թուով հակառակորդներ կան:

Ջելալեան.— Ընկ. Համօն Նախագծի հակառակորդներին քնորոշեց Միհրանական անունով: Ամերիկան եւ Բալկանն էլ հակառակ են...:

Ջաներ.— Համօն այդպէս չէ ձեւակերպել, սխալ է:

Ջելալեան.— Լա'ւ. կան անչուշտ մարմիններ, որ հակառակ են եղել. բայց ափսոս, կարծիքները չեն բերուած: Մենք, կ'ուզէի չեչտել, Միհրանական չենք կարող լինել, քանի որ Դաշնակցութեան դէմ չենք կարող լինել: Բայց մեզ համար ցանկալի էր երկու կողմերի տեսակէտները եւ լուսաբանութիւնները լսել: Մենք լսում ենք միայն մի կողմինը: Չէ կարելի ուրանալ, որ անգամ ինտելիգենտ [մտաւորական] ընկերների մէջ տիրում է երկու ըմբռնում:

Նախագահ.— Ընկ. Ջելալեան մոռանում է, որ տեղեկագրերի մէջ յիչուած են բոլոր թերթ ու դէմ կարծիքները, նաեւ այն հականախագծական դաշնակցականների կարծիքը, որոնք Դաշնակցութեան մէջ են: Ինձորում եմ կանգ չառնել դրա վրայ:

Վռամեան.— Ի զուր է ջանալ հերքել այն բանը, որ իրօք Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան հողի վրայ չէ կանգնել, այլ անցել է զուտ մարտական յեղափոխութեան: Սխալ է նաեւ, պնդել 21 մարմինների վրայ յենուելով, թէ Նախագիծը իրաւական մի ձեռնարկ է: Այդ մարմինների դիմաց կանգնած է ապատ մասսա, որ ոչինչ չգիտէ այդ մասին եւ չէ էլ ուզում լսել: Հարցը չպէտք է դնել այս հողի վրայ, այլ ասել, որ նա կեանքի գործն է, նրա իրական թելադրութիւնը: Ահա գլխաւորը: Ռորհուրդը, որ անցել է իր իրաւունքի սահմաններից, դա անվիճելի է ինձ համար: Նման բնոյթ էր կրում նաեւ Դաշնակցութեան 1904 Թուի [1903 ?] ռուսաց կառավարութեան դէմ մղած կռիւը: Առանց իրաւասութեան հարց բարձրացնելու, այդ իբր կեանքի հրամայողական թելադրութիւն ընդունելով, Ընդհանուր ժողովը միայն ծափահարութեամբ ընդունեց: Ուրեմն ես եզրակացնում եմ, Դաշնակցութիւնը ըմբռնել է իրական կեանքի թելադրութիւնը, քաղաքական մոմենտի արժէքը եւ արձագանգ տուել: Իրական հարցերի առաջ չպիտի ելնել: Թողնենք այդ բոլորը, սեղմենք մեր շարքերը, համերաչխ դիմենք մեր առաջ դրուած գործնական հարցերին. մեր Բէնամիների ուրախութեան համար մի փոքրիկ առիթ անգամ չտանք, որոնք աչքերը անկած Ընդհանուր ժողովի վրայ, սպասում են երկպառակութեան ձայներին:

Մաղումեան.— Ես խնդրում եմ իրաւական կողմը դուրս չհանել եւ կենտրոնանալ այդ կէտի վրայ:

Միք. Յովհաննիսեան (Վարանդեան).— Ընկ. Սեպուհը մեզ յիչեցրեց մի իրական փաստ, մանդատների համեմատութիւնը այնքան էլ չի համապատասխանում իրականութեանը: Ճիշդ է որ չատ վայրերում ընտրութիւնները կայացել են 3ը 2ի դէմ: Կարծիքների խիստ տարբերութիւն կայ նաեւ իմ չրջանում, թէեւ նախագծական են ընտրել: Ուրեմն լուրջ պիտի մօտենալ հարցին: Գալով Նախագծի իրաւական կողմին, պիտի ասեմ, որ ընկ. Վռամեանի դիտողութիւնը անհիմն է եւ խախտուն: Ընդհանուր ժողովի որոշումների թելադրութեան վրայ յենուելով մարմինները իրաւասութիւն ունէին դիմելու յարձակողական քաղաքականութեան: Մի՞թէ յարձակում չեն տեսորը, որ միչտ կատարել է Դաշնակցութիւնը, գործածուները, քաղաքական ցոյցերը. ընկ. Համօն ասում է, թէ Դաշնակցութիւնը քայքայուելու վախից դիմեց այդ գործին: Ո'չ, այդ կեանքի պահանջն է, իսկ Դաշնակցութիւնը, իբր կենսունակ կեանքի կուսակցութիւն, ըմբռնեց րոպէն եւ եկաւ իւր Նախագծով դրան արձագանգ տալու:

Միհնասեան.— Ես պնդում եմ որ ընդունել Ռորհուրդի իրաւասութեան սահմանները, որպէսզի նման հակասութիւնների առաջը միանգամ ընդմիչտ փակենք: Դա Ռորհրդի իրաւասութիւնից դուրս էր հենց այն պարզ պատճառով, որ Դաշնակցութեան մինչեւ այժմ վարած գործը՝ տաճկահայկական դատը, մի համազգային հարց էր իսկ Նախագծով բացուած գործունէութիւնը մի տեղական, մի համայնքի գործ է. ու դա գալիս է վնասելու համազգային գործին:

Համօ.— Ես չատ ցաւում եմ, որ ընկ. Ջելալեան, ինձ սխալ հասկացաւ, կարծելով, որ ես իբր թէ բոլոր հականախագծականներին «Միհրանական» անուանեցի: Իրական կողմին գալով, ես կ'ասեմ, որ Դաշնակցութիւնը իրրեւ մի յեղափոխական կուսակցութիւն, ուրիչ դիրք էլ չէր կարող բռնել նման պահանջների հանդէպ: Մենք չպէտք է չատ էլ հետեւենք բառերին: Մենք չենք կարող մի կէտ ցոյց տալ, որ Դաշնակցութեան հակառակ լինի: Գ. Ընդհանուր ժողովի ոգին թելադրում է նոյնիսկ քաղաքական յարող րոպէներին միանալ ուրիչ յեղափոխական կուսակցութիւնների հետ, եւ միացած ուժերով մղել պայքարը: Յովհաննիսեանն ասում է այն ինչ՝ որ սոցիալ-դեմոկրատներն (են ասում). ես չեմ ասում, որ Դաշնակցութեան քայքայումի վախից է որ ձեռնարկել ենք նման գործունէութեան, այլ այն, որ դա պահանջ էր եւ եթէ մենք արձագանգ չտայինք այդ պահանջին, ուղղակի կը քայքայուէինք:

Ստեփանեան.— Իմ կարծիքով մեզ մնում է միայն մեր վստահութեան քուէն տալ Ռորհուրդին եւ անցնել բանաձեւերին:

Ռոստոմ.— Կ'ուզէի մի քնորոշ հանգամանք չեչտել. Երրորդ Ընդհանուր ժողովի որոշումները դրել են այնպիսի օրէնք, որ ամէն մէկը իր տեսակէտով կարող է բացատրել, իր իրաւական հողն ունենալ: Եւ

դա արդիւնք է անորոշութեան։ Ուրեմն եթէ օրինաւորութեան խօսք կայ, պիտի Ընդհանուր Ժողովին պատասխանատուութեան կանչել, քանի որ մեզ՝ նման անորոշ դրութեան մէջ է դրել։ Բայց ես ընդունում եմ, որ Խորհուրդը իրաւունք ունէր սանկցիա [վաւերացում] տալ Ռայոնական Ժողովին։

Մալումեան։— Որ իրականութեան մէջ բաւական թուով հականախագծական մարդիկ կան, այդ ես ընդունում եմ, բայց չեմ սխալւում, յենուելով պաշտօնական մարմինների տուած վաւերական թղթերի վրայ, եղրակացնելու, որ ճնշող մեծամասնութիւնը, 21ը 3ի դէմ, համաձայն է Նախագծին։ Ի դուր են մի քանի ընկերներ նկատում, որ մենք իբր թէ հակառակ կարծիքներ չունենք. ո՛չ, մենք ունենք այդ եւ իր ժամանակի դիւանը կը ներկայացնէ Ժողովին։ Ընկ. Զելալեանը սխալւում է, երբ ասում է, որ իրենք իբր թէ տեղեկութիւն չեն ունեցել։ Մի՞թէ կովկասում յարուցած այն աղմկալի կռիւը ձեզ անծանօթ է մնացել։ Եթէ այդ ճիշդ է, մեզ մնում է միայն ցաւել։ Եւ զարմանալին այն է, որ դուք դացիք կովկաս, տեսաք ամէն ինչ տեղն ու տեղը եւ էլի հականախագծական վերադարձաք։ Ուրեմն փաստն այն է, որ դուք ոչ թէ անտեղեակ էք եղել, այլ չէք ուզեցել։ Նախագիծը կեանքի պահանջ էր, որը գեղեցիկ կերպով բացատրեց ընկ. Վռամեանը։ Կովկասեան մեր թերթերը այդ մասին երկար եւ մանրամասն գրել են. «Դրօշակ»ը, իբր պաշտօնական օրգան, տարաբախտաբար լիազօրութիւն չունէր այդ խնդրի լուսաբանութեամբ զբաղուելու։ Ընկ. Վռամեան ասում է, որ անցեալ Ժողովում ընկերները ծափահարութեամբ ընդունեցին եկեղեցական կալուածների առթիւ ռուսաց կառավարութեան դէմ մղած գործունէութիւնը։ Իսկ ինչո՞ւ այժմ նման ծափահարութեամբ չեն դիմաւորում նման մի ուրիշ ձեռնարկ, մի ամբողջ գործունէութիւն՝ բխած մեր դառն իրականութիւնից։ Չէ՞ որ այդ երկուքն էլ կեանքի նման պահանջների արձագանգներ էին։ Համաձայն չեմ նաեւ այն կարծիքի հետ, որ իբր թէ ժամանակին չէ քարոզուել, մտքեր չեն պատրաստուել եւ Նախագիծը տրածուել։

Տաճատ։— Ես ընդունում եմ Նախագիծը, օրինակ, յենուելով երեք հանգամանքի վրայ. ա) որ դա 1892ի Մրագրի ոգուց է բխած. բ) յետոյ եղած ժողովների, եւ գ) նա կեանքի պահանջ էր։ Բայց ես չեմ ուզում սրա վրայ երկար կանգ առնել։ Ես չեչտում եմ ուրիշ բան. արդեօք դաշնակցական մարմինները աչխատե՞լ են Նախագիծը դարձնել ժողովրդի սեփականութիւն, արդեօք բաւարար կերպով զբաղուե՞լ է դրանով, եւ մղուե՞լ է պրոպագանդա։ Ես դրականապէս կ'ասեմ, մղուե՞լ է պրոպագանդա։ Ես դրականապէս կ'ասեմ, ո՛չ։ Ես, ինչպէս Խաչակեան, Քէհէ պաշտօնական մարդիկ ենք, բայց չատ յետոյ ենք իմացել։ Եթէ որոշ տարրեր Կովկասում, Բալկանը, Ամերիկան հականակ են Նախագծին, միայն այն պատճառով է որ անծանօթ են այդ հարցին եւ չգիտեն նրա մէջ զարգացած մտքերը։

Վահագն։— Իբր փաստ կարող եմ յիշատակել, որ 1904ի Ընդհանուր Ժողովի տեղեկագիրը միայն մի տարի յետոյ է մեզ հասել, այն էլ չատ սակաւ օրինակներ։ Նոյնը եւ Նախագիծը։ Եւ մենք ստիպուած եղանք յատուկ մարդիկ ղրկել Կովկաս, ուսումնասիրելու համար այդ։

Զելալեան։— Ես ճանաչուած եմ հականախագծական, իսկ վահաղնը՝ նախագծական։ Բայց այն ժամանակից ի վեր երբ պաշտօնական Ժողովում բազմակողմանի կերպով պարզուել է այդ հարցը, ես ոչ մի բան չեմ ասել Նախագծի դէմ, եւ ոչ էլ կ'ասեմ։ Բայց կայ ատուար մաս մը, որը խիստ հականախագծական է։ Այդ չէ կարելի ջրել։ Իմ խօսքը Կովկասի մասին է։ Ի՞նչ տպաւորութիւն կարող էի ստանալ, երբ պաշտօնական մարմինները ուրիշ տեսակէտ ունէին, իսկ դրսի ընկերները՝ տարբեր։ Մեր ամերիկական մամուլը չէ զբաղուել, չէր էլ կարող զբաղուել այդ հարցով։ Բայց այժմ ձեզ հետ չփուելով, ասելի ու ասելի պարզում է մեզ համար հարցը։

Համօ։— Ես եւս ընդունում եմ, որ Արեւելեան Բիւրոն տեղեկութիւն հաղորդելու իր պարտականութեան վրայ չէ կանգնել։

Նախագահ։— Ես էլ միանում եմ Տաճատի հետ. մասան դուրս է մնացել եւ անտեղեակ է Մրագրին։ Վիճաբանութիւնը կարծում եմ սպառուած է եւ կարող ենք անցնել բանաձեւերին։

Ռոստոմ։— Պիտի թողնել բանաձեւերի առաջարկը։ Ես էլ համամիտ եմ այն արտայայտուած կարծիքին, որ Բիւրոները մեղաւոր են, բայց Արեւմտեան Բիւրոն՝ աւելի, մանաւանդ՝ «Դրօշակ»ի խմբագրութիւնը։ Լաւ է որ ընկ. Մալումեանն է զեկուցանողը։ Եթէ իրաւական է եղել Խորհրդի որոշումը, ինչո՞ւ պաշտօնական օրգանը մանրամասն լուսաբանութեան առարկայ չէ դարձրել Նախագիծը։

Մալումեան։— Շատ պարզ պատճառով. «Դրօշակ»ը այդ չէր կարող անել եւ այդ մասին ես արդէն խօսել եմ Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը ներկայացնելիս։

Վահագն։— Ես էլ կարծում եմ, որ բանաձեւերի հարցը պիտի յետաձգել, քանի որ երկու կարեւոր չբոջանների ներկայացուցիչներ՝ Անդրանիկ եւ Մուրատ՝ բացակայում են։ Ցանկալի է, որ բանաձեւերը քուէարկելիս Ընդհանուր Ժողովի ամբողջ կազմը ներկայ լինի։

Ժողովը փակուեց ժամը 7½ին։

6ՕՐԴ ՆԻՍ (1 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Վռամեան։
Ներկայ են՝ 28 ժողովական։
Բացակայ է՝ Անդրանիկ (հիւանդ)։

Շարունակութիւն՝ Մալումեանի զեկուցման առթիւ եղած վիճաբանութիւնների (Խորհրդի իրաւասութեան խնդիր)։

Սեդրակ։— Կարդում է կանոնագրութեան 119րդ յօդուածը(30).— Այս յօդուածի հիման վրայ, Խորհուրդը՝ Դաշնակցութեան գործունէութիւնը դուրս չպէտք է բերէր Տաճկահայաստանի սահմաններից։

Ռոստոմ։— Գ. Ընդհանուր Ժողովը ինքը որոշեց՝ դործել եւ կովկասում։ Այդ 119րդ յօդուածը կանոնագրութեան մէջ է մտել կովկասեան գործունէութեան մասին որոշում կայացնելուց յետոյ։

Միհրասեան։— Նախագիծը՝ ես համարում եմ հակառակ Դաշնակցութեան ոգուն, որովհետեւ Դաշնակցութիւնը, յատկապէս Տաճկահայաստանի համար ստեղծուած՝ տաճկահայ դատից դուրս չպէտք է սկսէր ոչ մի ուրիշ դատ։ Դաշնակցութիւնը համազգային կազմակերպութիւն չէ, որպէսզի յանձն առնէ վարել թէ՛ կովկասի եւ թէ բոլոր միւս հայերի դատերը։ Եթէ յանկարծ վաղը բուլղարաբնակ հայերի մի դատ ապարդիլ գայ, արդեօք Դաշնակցութիւնը պէ՞տք է անցնի չարժման գլուխը։ Իսկ եթէ Դաշնակցութիւնը համազգային էք ուզում համարել, այս դէպքում կովկասում պարտաւոր էք չմղել ոչ մի դասակարգային պայքար։ Կալուածների գրաւման հարցը համազգային հարց էր եւ Դաշնակցութիւնն իր վրայ առաւ այդ հարցի լուծման գործը. բայց երբ այսօր նոյն Դաշնակցութիւնը դասակարգային սկզբունքներով է ձգտում ղեկավարուել — նա այլեւս կորցնում է իր համազգային բնոյթը...։ Ո՛չ, Դաշնակցութիւնը չպէտք է ունենայ կովկասահայ դատ, ի նկատի ունենալով այն հանգամանքն եւս, որ տաճկահայ դատի լուծման տեսակէտից անհրաժեշտ է Եւրոպայի միջամտութիւնը, մինչդեռ Եւրոպան չի խառնուի կովկասեան գործերի մէջ։ Ի վերջոյ ես մի տեսակ դուալիզմ [երկուութիւն] եմ գտնում՝ Ընդհանուր Ժողովի եւ Խորհուրդի գործունէութեան մէջ. դուալիզմ՝ որովհետեւ Խորհուրդը, հրատարակելով Նախագիծը, մտել է Ընդհանուր Ժողովի իրաւասութեան սահմանների մէջ, կատարել է նրա դերը... Հապա այլեւս ի՞նչ նշանակութիւն ունի Ընդհանուր Ժողովը, եթէ Խորհուրդն է, որ գործում է միեւնոյն իրաւունքներով։

Մուրատ։— Խորհուրդն իրաւունք չունէր Նախագիծն հրատարակելու, բայց եւ այնպէս ես ոչինչ դէմ չեմ ունենայ, եթէ այսօր Խորհուրդն ինքը խոստովանի իւր քայլի սպօրինի լինելը։ սա կուսակցական դիսցիպլինի պահանջն է։ Թող Խորհուրդն արտայայտէ այստեղ, որ ինքը իրաւունք չէ ունեցել, միայն թէ հանգամանքներից ստիպուած է հրատարակել Նախագիծը։ Նախագիծը ես համարում եմ վտանգաւոր, դա մի սխալ է, որը մենք ապագայում քաւելու ենք՝ հարիւրաւոր զոհերի արիւնով։ Այդ չարաբաստիկ Նախագծի չնորհիւ է, որ Դաշնակցութեան մէջ այսօր չորս հոսանք գոյութիւն ունի. ճիշդ չէ սակայն, իբր թէ բոլոր այդ հոսանքները բնական են ու անխուսափելի. ո՛չ, նրանք արհեստական են։ Եւ յետոյ Թող ընկ. Մալումեանը կարդալ – դրել չգիտնալուն չվերագրի, որ մենք դէմ ենք Նախագծին։ — կարդացած ենք ու հետեւաբար հասկացած։

Նահապետեան։— Եթէ ընկ. Մինասեան պնդում է, որ իւր այսօրուայ ասածները մտցուեն արձանագրութեան մէջ, այս դէպքում ես ստիպուած եմ քննադատել նրա արտայայտած մտքերը, քանի որ սրանք բոլորովին չեն համապատասխանում Դաշնակցութեան ոգուն։ Ընկ՛ր Մինասեան, Դաշնակցութիւնը, կալուածների գրաւման պատճառով կռիւ յայտարարեց ռուս կառավարութեանը ո՛չ երբեք մեր եկեղեցու ու հոգեւոր պետի իրաւունքները պաշտպանած լինելու նպատակով. ընդհակառակն, մեր կուսակցութիւնը իւր սկզբունքներով, խիստ կերպով պայքարում է եկեղեցականութեան դէմ։ Եւ եթէ դուք կը պնդէք ձեր այդ հայեացքի վրայ, Դաշնակցութեան մասին, ես կ'ասեմ, որ դուք միայն թիւրիմացութեամբ էք «դաշնակցական» համարւում։ Եւ ես կ'ուզէի, որ Ժողովը ցոյց տար ձեզ, թէ ձեր այդօրինակ կարծիքը, ձեր անհատական կարծիքն է, այլ ոչ կուսակցական։

Մալումեան։— (Պատասխանելով Մուրատին)։— Հականախագծականների չարժումը ես բացատրում եմ երկու կերպ. առաջին, որ զանազան մարդիկ, դժգոհ կազմակերպութիւնից, անձնական հաչիւներից դրդուած, իրենց անհատական դժգոհութեանը տուել են սկզբունքային բնաւորութիւն. եւ երկրորդ, որ մեր ամբոխային խաւերը կարդալ չկարողանալով, ո՛չ մի գաղափար չունեն Նախագծի մասին, եւ իրենց այդ անգիտութեան պատճառաւ, հետեւում են վերոյիշեալ մարդկանց։ Իմ խօսքը դաշնակցական ընկերներին չէ վերաբերում, հարկաւ.— Ինչ վերաբերում է Մուրատի ասած դիսցիպլինային, այո՛, Ժողովը պէտք է իւր կարծիքը յայտնի, թէ որքան ապօրինի է եղած Խորհուրդի քայլը։ Եթէ ապօրինութիւն է կատարուել, Թող Ժողովը դատապարտի Խորհրդին։

Զելալեան։— Խորհրդի իրաւասութեան սահմանների մասին ընդհանրապէս չեմ խօսի։ Ես միայն ուզում եմ ասել, որ Խորհրդի գումարման միջոցին՝ Երկրի Պատասխանատու Մարմիններից չատերը չեն ունեցել իրաւական գոյութիւն, որպէսզի կարող լինէին մասնակցել Խորհրդին, եւ քանի որ այսուամենայնիւ մասնակցել են, այս դէպքում Խորհուրդն այլեւս ո՛չ օրինական պէտք է համարել։ Պատասխանատու Մարմինների կողմից երկու հոգի են մասնակցել, սրանցից մէկը՝ Անդրանիկը, սակաւ է ներկայ գտնուել նիստերին (հիւանդութեան պատճառով), իսկ միւսը, Վիշապի

ցուցական Մարմնի ներկայացուցիչը, առարկութիւն է արած եղել Խորհրդի դէմ։ (Այս մասին ինձ բացատրութիւն է տուել ցուցականի անդամներից մէկը)։

Ռոստոմ.— Ես նոր եմ իմանում, որ ցուցական Մարմնի անդամը հակառակ է եղել Նախագծին։ Խորհուրդը գումարելուց առաջ մենք դիմել ենք այդ մարմնին եւ հարցրել նրա կարծիքը քննութիւնը հարցի վերաբերմամբ. պատասխան ստացանք թէ մարմինը համաձայն է, արձանագրութեան մէջ իսկ մտցուել է համաձայնութեան որոշումը։ Երբ մարմնի ներկայացուցիչը ժընեւ եկաւ, նա եւս չեշտել նորից որ հակառակ չեն Նախագծին։ Այս բոլորի հիման վրայ ցուցական Մարմնի համաձայնութիւնը պէտք է համարել օրինական. Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմինը գոյութիւն չունէր այլեւս, բայց մի՞թէ մենք իրաւունք չունէինք այդ մարմնի ողջ մնացած անդամին՝ Անդրանիկին, Բարձրաւանդակի օրինական ներկայացուցիչ համարելու. թէ՞ այս դէպքում մենք կապուելու էինք ձեւականութեան կաշկանդիչ չղթաներով... Ո՛չ, մենք բարոյական իրաւունք ունէինք՝ Անդրանիկին տալու Բարձրաւանդակի ձայնը։ Իսկ թէ Անդրանիկը հիւանդութեան պատճառով չէ մասնակցել Խորհրդի նիստերին, այս դեռ չէ նշանակում, որ Բարձրաւանդակը ներկայացուցիչ չէ ունեցել։ Միջանկեալ սակայն հարկաւոր է նկատել, որ Անդրանիկը այնքան էլ հիւանդ չէր, գալիս էր նիստերին։ — Մենք դեռ աւելին արինք, հրաւէր ուղարկեցինք նաեւ Շամին, թէեւ իրաւունք չունէինք, քանի որ այնտեղ այն ժամանակ չկար այսօրուան Պատասխանատու Մարմինը. հրաւիրեցինք Շամին, որպէսզի Երկրի ձայները այդպէսով աւելցրած լինէինք։ Օրինական է եւ Լեռնավայրի ներկայացուցչութիւնը, ինչպէս արդէն պարզել եմ անցեալ նիստերում։ (Պատասխանելով Մինասեանին) — Սխալ է, իբր թէ կալուածների գրաւման պատճառով միայն՝ Դաշնակցութիւնը կուիւ յայտարարեց ռուս կառավարութեանը. կալուածական հարցից չատ առաջ, ուրիշ հարցեր արդէն հակակառավարչական տրամադրութիւն էին առեղծել կովկասում գործող դաշնակցականների մէջ, որոնք սակայն, միշտ էլ աշխատել են յետ պահել իրենց՝ ակտիւ քայլ անելուց։ Եկեղեցական կալուածների գրաւումը, մի սոսկ առիթ էր, որ եկաւ ու վերջապէս կտրեց մեր համբերութիւնը եւ Դաշնակցութիւնը, իբր յեղափոխական կուսակցութիւն, ասպարէզ ելաւ այնպիսի պահանջներով, որոնք բնաւ չէին կարող պարփակուել զուտ եկեղեցական հարցի նեղ սահմաններում։

Կարմ.— խնդիրը կոնկրետ կերպով դնենք. Դաշնակցութիւնը միանգամայն իրաւունք է ունեցել յեղափոխական գործունէութիւն սկսելու եւ Տաճկահայաստանից դուրս։ Ընդհանուր Ժողովը ինքը խախտեց նախկին սահմանները։

Համօ.— Ասում են, թէ Խորհուրդը Նախագիծ հրատարակելով՝ օրէնսդրական դուալիզմ է մտցրել մեր գործունէութեան մէջ։ Այս կարծիքը հետեւանք է այն բանին, որ մեր կանոնագրութեան ոգին չէ հասկացուել։ Դուալիզմ կը լինէր այն ժամանակ, երբ Խորհուրդը ինքնագլուխ այդպիսի մի քայլ անէր եւ այդ դէպքում Խորհրդի վարմունքը կը նկատուէր իրրեւ ապօրինութիւն։ Սակայն հարցն այն է, որ Երրորդ Ընդհանուր Ժողովը ընդունել է, որ մենք գործունէութեան մի նոր ճիւղ պէտք է սկսենք։ Այս փաստը աչքի առաջ ունենալուց յետոյ, ամբողջ իրաւասութեան հարցը յանգում է հետեւեալին, — արդեօք Ընդհանուր Ժողովի տրամադրութեան համաձա՞յն է վարուել իւր Նախագիծը հրատարակելով, թէ ոչ։ Ինքը՝ հռետորը գտնում է, որ Նախագիծը միանգամայն համապատասխանում է թէ՛ մեր հիմնական Ծրագրին եւ թէ Գ. Ընդհանուր Ժողովի տրամադրութեանը, հետեւաբար օրէնսդրական դուալիզմի կամ Խորհրդի անիրաւասութեան կամ ապօրինութեան մասին խօսք լինել չէ կարող։

Թոփչեան.— Նախ քան բուն հարցին անցնելս, հարկաւոր եմ համարում երկու խօսք ասել ընկ. Մուրատի կարծիքի մասին։ Նա չատ չեշտակի կերպով յայտնեց, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը այժմ մի կուսակցութիւն չէ, այլ չորս. դա աւելի քան տարօրինակ կարծիք է եւ անհիմն։ Ճիշդ է, գոյութիւն ունի դաշնակցական անունը չհագցրծող մի խուլիգանական հոսանք, բայց նա կուսակցութիւն չէ եւ չէ էլ կարող լինել։ Այդ երեւոյթին չպէտք է խոշոր նշանակութիւն տալ։ Իսկ եթէ բացի դրանից մեր շարքերում էլ կարծիքների տարբերութիւն կայ, դա դեռ կուսակցութիւն չէ նշանակում։ Իսկ ի՞նչ կը լինի ապագայում, այդ դեռ վաղաժամ է գուշակել։ Ներկայումս մենք միայն մի պարտք ունենք, այն է՝ ամէն կերպ աշխատել ուղղելու մեր թերութիւնները, պարզելու, հիմնաւորելու մեր աշխարհհայեացքը — ծրագիրը, — որպէսզի ապագայում աւելի յարող, աւելի մեծ թափով առաջ տանենք մեր գործունէութիւնը յօգուտ տաճկահայկական ազատագրութեան եւ աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան։

Ինձ վրայ ճնշող, անախորժ տպաւորութիւն թողեց ընկ. Մուրատի նաեւ այն բացականչութիւնը, թէ մօտ ապագայում Դաշնակցութեան չուրջը 100աւոր մարդասպանութիւններ, արիւնահեղութիւն պէտք է լինին։ Դա ի՞նչ գուշակութիւն է։ Մենք, այստեղ գումարուած դաշնակցականներս, մեզ ուղարկող շրջանների ու լայն մասսաների անունից միայն զղուանք ու զայրոյթ կարող ենք յայտնել բոլոր նրանց, որոնք արիւնահեղութեան են ձգտում։ Մենք պիտի աշխատենք Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակը երբեք չարատաւորել անտեղի արիւնով։

Այժմ Նախագծի իրաւական կողմի մասին։ Այստեղ ընկերներից ոմանք վիճում են, թէ Խորհուրդը իրաւունք ունէ՞ր Նախագիծը հրատարակելու։ Բայց մոռանում են որ Նախագիծը իսկապէս ոչ թէ Խորհրդի հե-

ղինակութիւնն է, այլ կովկասեան Հայոնական Ժողովների։ 1904ի Ընդհանուր Ժողովը սկզբունքով ընդունելով կովկասեան գործունէութիւնը — (ցոյց, տեռոր, զինուած դիմադրութիւն, գործադուլ եւն.) — մեր կուսակցութեան ապակենտրոնական սկզբունքի համաձայն, «կովկասեան Հայոնական Ժողովին է վերապահում տակտիկի մանրամասն ծրագիրը որոշել եւ մշակելը»։ Հայոնական Ժողովը կատարել է այդ, երկու անգամ մանրամասնօրէն քննել է կովկասեան դաշնակցական մասսաների պահանջներն ու տնտեսական քաղաքական կարիքները եւ իւր իրաւասութեան համաձայն մշակել է Նախագծի կէտերը, վերջ ի վերջոյ ուղարկելով այն Խորհրդին։ Մի՞թէ Խորհուրդը կարող էր հակառակել այդ պահանջին՝ Նախագիծը չհրատարակել։ Երբեք. նա պարտաւոր էր այդ անել։ Ընկերներ, հարցի վրայ աւելի խոր նայեցէք։ Նախագիծը կովկասեան դաշնակցական մասսաների կարիքների ու պահանջների արձագանգն է. այն մասսաների, որ Հ. Յ. Դաշնակցութեան բարոյական, նիւթական ու նո՛յնիսկ ռազմիկ ուժերի գրեթէ ¾ն են ներկայացնում։ Լաւ ներ են. այո՛, Միհրանը, Տիգրանը իսկապէ՛ս խուլիգաններ են. բայց նրանց մէջ կան եւ չատ այնպիսինները, որոնք միաժամանակ կազմակերպուել են Սաքոյի իսկ ձեռքով։ Մաշուրը Թող սխալ չհասկանայ ինձ. ո՛չ, ես ո՛չ մի ապատնալիք չեմ անում, միայն թէ չեմ ուզում աչքերս փակել իրականութեան առաջ։ Ես դարձեալ ասում եմ, որ արիւն պիտի թափուի, մի մոռանաք, որ Միհրանի հետեւից 2–3000 հոգի է գնում։

Բարսեղեան, Թոփչեան.— Սխալ է, հազարներ չկան, այլ միայն մի քանի հարիւր։

Մուրատ (չարունակելով).— Բայց եւ այնպէս, ես կը պնդեմ, որ միհրանականների թիւը ահագին է։ Ինչ վերաբերում է իմ ասած «չորրորդ հոսանքին», այսքանը միայն կ'ասեմ, որ ես դրանով հասկանում եմ հետեւեալը — «դուրս չգալ Գ. Ընդհանուր Ժողովի ընդգծած սահմանագիծից»։ Առ այժմ չեմ ուզում իմ այս միտքն աւելի ընդարձակօրէն բացատրել։

Խաչիկեան.— Ժողովը համաձայն է, որ բարոյական–իրաւական տեսակէտից՝ Խորհուրդը իրաւասու է եղել Նախագիծը հրատարակելու, քանի որ կեանքն էր պահանջել այդ։ Միեւնոյն ժամանակ հարկաւոր էր պարզել, թէ արդեօ՞ք նոյն իրաւունքն է ունեցել Խորհուրդը եւ կազմակերպական–իրաւական տեսակէտից։ Ես գտնում եմ որ, այո՛, այդ երկրորդ տեսակէտից եւս։ Չէ՞ որ Գ. Ընդհանուր Ժողովը լայն սահմաններ է գծել կովկասեան գործունէութեան համար. այս պատճառով էլ, Խորհուրդը լայն իմաստով է հասկացել «ինքնապաշտպանութեան» նշանակութիւնը։ Այս Ժողովին մնում է միայն չեշտել Խորհրդի իրաւասութիւնը՝ կազմակերպական–իրաւական տեսակէտից։

Մանուկ (խօսում է Խորհրդի ոչ–օրինական լինելու մասին).— Լեռնավայրի Պատասխանատու Մարմի-

նր կազմալուծուած էր, հետեւապէս իրաւունք չունէր ներկայացուցիչ ուղարկելու։

Նախագահը ընդհատում է, այդ հարցը արդէն որոշուած համարելով։

Համօ.— Ձեմ հասկանում, ո՞ւր են տանում մեր այս վիճաբանութիւնները՝ Ժորհրդի օրինականութեան մասին։ Երեւակայեցէք մի րոպէ, որ Պատասխանատու Մարմիններից ո՛չ մէկն այլեւս գոյութիւն չունի. արդեօք չպէ՞տք է գումարուի Ժորհուրդ...։ Ձընկնենք ձեւականութեան, բառերի ետեւից։ Բառերի իրաւականութիւն՝ գոյութիւն չպէտք է ունենայ մեր կուսակցութեան մէջ, ոչ մի յեղափոխական կազմակերպութիւն չպէտք է կանգնի ձեւականութեան հողի վրայ։

Ռոստոմ.— Հռոմէական մի զօրավարի որդին, առանց հօր գիտութեան, ինքնագլուխ կերպով, մենամարտի է հրաւիրում թշնամի բանակի զօրավարին եւ սպանում։ Ձնայելով որ փայլուն յաղթանակ է տանում, զօրավար հայրն այնուամենայնիւ մահուան է պատապարտում որդուն, որովհետեւ սա խախտել էր դինուորական տիսցիպլինան։ Մենք սակայն հին հռոմէական օրերում չենք ապրում, որպէսզի պատժենք Ժորհուրդը։ Չէ կարելի մեղադրեալի աթոռի վրայ նըստեցնել ամբողջ Ռայոնական Ժողովը (Կովկասի)։ Ես բաժանում եմ Մուրատի երկիւղը, որ արիւնահեղութիւն է տեղի ունենալու, որովհետեւ բուրժուազիան, մեր անհաշտ թշնամին դառնալով, մեր դէմ կը հանէ մեր զինուորներին, եթէ ոչ հազարին, գոնէ հարիւրին, տասին(30)։

Մաշուր.— Ես իմ գոհունակութիւնն եմ յայտնում, որ Համոն յեղափոխական մտածողութիւն մտցրեց մեր վիճաբանութեան մէջ։ Իսկապէս, մենք չենք կարող մեր գործունէութիւնը հիմնել բացառապէս կէտերի վրայ, միայն «կանոններով» [?]ղեկավարուել։ Այս դէպքում մենք ինչո՞վ ենք դանազանուելու բիւրոկրատիայից։ Մի գործ կատարելով մենք չպէտք է կանդնենք ու քննադատենք, թէ արդեօք օրէնքների վրա՞յ ենք հիմնուել թէ ոչ։ Ես ուղղակի քիւրիմացութիւն եմ համարում ընկ. Մալումեանի դրած հարցը՝ Նախագծի հրատարակութեան իրաւասութեան մասին. առանց այդօրինակ խնդիրների, մենք անմիջապէս պէտք է մեր կարծիքը յայտնէինք, որ Նախագիծը կեանքի անհրաժեշտ պահանջ է եղել եւ ուրիշ ոչինչ։

Շահխաթունեան.— Ժողովականների մի մասը այն եզրակացութեան է եկել, որ Նախագիծը իրաւական տեսակէտից՝ ապօրինի է, բայց միեւնոյն ժամանակ աւելացնում է՝ իսկ բարոյական տեսակէտից՝ արդարացի։ Մի րոպէ մտածենք սակայն, արդեօք կազմակերպութիւնը կեանքի հրամայական պահանջի հանդէպ՝ կարո՞ղ պէտք է լինէր սահմանափակուել իրաւաբանութեան չրջանակներով։ Ենթադրենք որ Ժորհուրդը մերձաւոր այդ չրջանակում, — հետաքրքիր է ի՞նչ կ'անէիք հապա ինքներդ։ Ընդհանուր Ժողովը «ինքնապաշտպանութիւն» բառի մէջ չէ դրել այն անձուկ բովանդակութիւնը, ինչպէս չատերն են հասկանում, քանի որ դործադուլների մասին անգամ խօսւում է։ Ժորհուրդը իրաւունք է ունեցել՝ ամէն տեսակ եղրակացութեան դուրս բերել «ինքնապաշտպանութիւն» դարձուածքից։

Չիլալեան.— Գաո՛ւ կովկասին, ի հարկէ, որ նա հասկացել է կեանքի հրամայական պահանջը։ Եթէ մենք այնուամենայնիւ իրաւասութեան հարցն ենք բարձրացնում, այս անում ենք՝ որով պարագայ աչքի առաջ ունենալով այն, որ Ժորհուրդի ոչ–օրինական լինելու փաստը կարող է չուկէտ դառնալ՝ ապագայում եւս նորէն ոչ–օրինական գումարումներ կայացնելու։ Ինչեւիցէ. Ժորհրդի որոշումներն այստեղ չպէտք է ներկայացուն իբրեւ օրէնքներ։ Ժողովն ինքը միայն կը մշակէ հարկաւոր օրէնքները։

Սեպուհ.— Մի րոպէ ընդունենք որ Ժորհուրդն իրաւասու չէ եղել, բայց թէ կովկասեան իրականութիւնը ստիպել է նրան նախագիծը հրատարակելու։ — Թողնենք սակայն բոլոր այս վիճաբանութիւնները. Ժողովուրդը մեզ սպասում է դրսում, թէ ի՛նչ կ'ասէ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը։ Ձվախենանք ոչ միհրանական չարժումից, ոչ միւս հակառակորդնեերից։ Միասին ընդունենք Նախագիծը եւ մեր բոլոր թշնամիները կը լռեն... (Մափահարութիւններ)։

Մալումեան.— Ես միանգամայն համաձայն եմ ընկ. Համոյի մտածողութեան հետ, որ մենք մեր գործունէութիւնը չպէտք է կաչկանդենք օրինականութեան մեռած տառերով, մեր կազմակերպութիւնը ոստիկանական հաստատութիւն չէ։ Այս չէ նշանակում, սակայն, որ մենք կարող ենք միանգամայն անուշադիր թողնել իրաւասութեան հարցը՝ Նախագծի հրատարակման դործում. մենք ունենք կանոններ մեր ձեռքով իսկ մշակուած, որոնցով մենք պարտաւոր ենք ղեկավարուել, մէկ Ընդհանուր Ժողովից մինչեւ յաջորդը։ Ի վերջոյ, ես միանում եմ Սեպուհի առաջարկին եւ յանկութիւն յայտնում, որ Ժողովը իր միաբերան վրատհութիւնը տայ Նախագծի հրատարակմանը. ներկայ դէպքում միաձայնութիւնը ցանկալի է ո՛չ այն պատճառով, որ ընդհանրապէս միաձայն որոշումը լաւ բան է, այլ որովհետեւ հարկաւոր է ուժգին կերպով վերջ տալ Նախագծի դէմ ուղղուած խուլիգանական չարժմանը, որին մասնակցում են նաեւ ոչ–խուլիգանական տարրերը։ Եւ որպէս զի դադարեն բողոքները կազմակերպութեան դէմ, Ժողովը պէտք է միաձայն հաւանութիւն տայ Ժորհրդի որոշման։

Վիճաբանութիւնները վերջանում են։ Բանաձեւեր են առաջարկւում՝ Ջարդարեանի, Թումչեանի, Մալումեանի, Տաճատի, Չիլալեանի եւ մի խումբ այլ ընկերների կողմից։ Բանաձեւերի ընթերցումը եւ քուէարկութիւնը թողնւում է յաջորդ նիստին։

61ՐԴ ՆԻՍՏ (1 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է՝ Վռամեան։
Ներկայ են 25 Ժողովական։
Բացակայ են Մուրատ, Անդրանիկ (հիւանդ)։

Օրակարգի առարկան էր եգիպտոսից եկած Սիրականի զեկուցումը Լեռնավայրի մասին, բայց զեկուցողի հիւանդութեան պատճառով յետաձգուեց։ Ուստի Ժողովը անցաւ օրակարգի յաջորդ հարցին՝ ընկ. Շահխաթունեանի րեֆերատին [զեկուցման] «Կովկասեան գործունէութեան մասին»։ Եւ Գոլսի տեղեկագրին, որ ներկայացրեց Ջարդարեան։

Ընկ. Շահխաթունեանի զեկուցման մասին կարծիքների փոխանակութիւն չեղաւ եւ Ժողովը յարմար գտաւ նախ լսել կովկասեան գործունէութեան վերաբերեալ բոլոր զեկուցումները եւ ապա վիճաբանութեան նիւթ դարձնել։

Գոլսի տեղեկագրից յետոյ, Ժողովը զբաղուեց այդ խնդրով։

Մալումեան.— Ես իրրեւ Արեւմտեան Բիւրոյի անդամ կ'ուզէի մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ տալ։ 1906 թուին Գոլսի մէջ եղած մեր ընկերների թիւը 100 էր։ Դրանց մեծ թիւը արհեստաւորներ, ուսուցիչներ, պետական վարժարանների ուսանողներ էին։ Նրանք առանձին չօշափելի գործ չէին արել եւ չէին էլ կարող անել։ Նրանց դրամական դրութիւնը աննախանձելի էր։ 1906 թուին ունեցել են մուտք միայն 9152 դուրուշ, ասել է մօտ 760 ռուբլի։ Այդ գումարից տեղական մարմինը տուել է 2700 ղր. մնացածը հայթայթել է կազմակերպութիւնը։ Ծախս եղել է 8400 ղրուշ։ Ծախսուած գումարը գործադրուել է գլխաւորապէս բանտարկեալների վրայ եւ ընկերներին փախցնելու համար։ Դրամականի տղութիւնը խիստ չեչտուած է։ Լուրջ գործ սկսելու եւ յաջողութեան գրաւականներ ունենալու համար, անհրաժեշտ է կազմակերպել ու աշակցութիւն հասցնել։ Ահա երկու տարի է, որ Գոլիսը մեր գործի համար անմատչելի է դարձել։ Ի նկատի ունենալով այդ վայրի կարեւորութիւնը, անհրաժեշտ է գործող ուղարկել, մասսաները կազմակերպել եւ գործի ձեռնարկել։ Եթէ մենք մարդ ենք ուղարկում Բալկան, Ամերիկա, տեղացիներին կազմակերպելու նպատակով, ինչո՞ւ չպիտի ուղարկենք նաեւ Գոլիս։ Ես հրաւիրում եմ Ժողովի ուշադրութիւնը այս խնդրի վրայ։

Ռոստոմ.— *Ի՞նչ խաւերից են առհասարակ Գոլսում գործող ընկերները։*

Ջարդարեան.— Դրանք ընդհանրապէս արհեստաւոր, ուսուցիչ եւ պետական վարժարանների ուսանողներ են։ Վերջիններս ազատ մուտք ունեն գաւառից Գոլիս։

Ռոստոմ.— *Արհեստաւորների չրջաններում չի՞ կարելի հող դտնել, հնարաւո՞ր է արդեօք արհեստակցական միութիւններ ստեղծել, դէթ կողմնակի միջոցներով, որպէսզի կառավարութեան ուշադրութիւնը չդրաւի։*

Ջարդարեան.— Արհեստաւորների չրջանում կարելի է աշողութիւն գտնել, բայց խիստ խնդիր եւ չանք է հարկաւոր։ Մինչեւ այժմ երբեք գործը այդ հողի վրայ չէ դրուել. ուշադրութիւնը կենտրոնացած է եղել ցուցական գործունէութեան վրայ, մի կողմ դնելով տեղական կազմակերպչական գործը։ Այդ բոլորը կարելի էր տեղումը աւելի մանրամասն ուսումնասիրել։

Համօ.— Մի հանգամանք տեղեկագրի մէջ խիստ աչքի է զարնում։ Նրանք ներկայի մասին միայն մօտաւոր թուեր են տալիս, այն ինչ ապագայի ծրագիրը չատ որոշակի է դրւում, նոյնիսկ մանրամասն թուեր առաջ բերւում։ Բայց ի՞նչ հաւանական ենթադրութիւններ, ի՞նչ չանսեր կան այդ աստիճան ճշմարիտ համար։

Ջարդարեան.— Վերջին մի երկու տարիների փորձ եւ գործն է այդ հաւանական ենթադրութեան հիմքը։

Զոփուրեան.— Մի երեւոյթ ինձ աւելի քան զարմանալի է թւում։ Գոլսում կայ, որքան ինձ յայտնի է, առնուազն 150·000 հայ աղգաբնակութիւն եւ յանկարծ Դաշնակցութիւնը ունի միմիայն 100 կազմակերպուած անհատներ, որոնցից էլ միայն 25–30ն են գործակից, մնացածը համակիրներ. ասում եմ զարմանալի՝ քանի որ Դաշնակցութիւնը տարիների գործունէութիւն է ունեցել այնտեղ։

Ջարդարեան.— Կառավարութեան ճնշումները անասելի են։ Կանոնաւոր ոյժեր խիստ պակասում են։ 10 հոգի անգամ անկարող են միասին հաւաքուել։ Կը զարմանաք անտարակոյս, եթէ ասեմ, որ կնունքի ժամանակ նոյնիսկ պիտի կառավարութեան թոյլտուութիւնը ստանալ եւ միշտ էլ ներկայ են լինում մի քանի ոստիկաններ։

Սիգ.— *Ի՞նչ դեր է խաղում կղերը Գոլսում. նա արդեօք աղդեցութիւն ունի՞ ժողովրդական խաւերի մէջ։*

Սեպուհ.— Ի դուր են ոմանք զարմանք յայտնում, որ Գոլսում երկար տարիների գործունէութիւն կայ, բայց իրօք ոչինչ չէ արուած։ Ահա օրինակ Սալմաստը, դա մի կարեւոր վայր է, միշտ էլ ունեցել է յեղափոխական գործիչներ. բայց ի՞նչ մնայուն բան է արուած, ե՞րբ է ժողովուրդը կազմակերպուած։ Այդ տեսակի գործունէութիւնը Սալմաստում սկսուել է միայն 1903ից ի վեր։ Եւ այժմ հասել է միայն նշանակալի հետեւանքների։ Ուղարկեցէք Գոլիս ինտելիգենտ պրոպագանդիստներ, սկսեցէք այդ հողի վրայ դրուած կազմակերպութեան եւ այն ժամանակ կ'ունենանք գործ, մնայուն, յարատեւ գործ։

Զոփուրեան.— Ես եւս չեչտում եմ այն հանգա-

մանքի վրայ, որ մեր ուշադրութիւնը պէտք է կենտրոնացնենք տեղական ուժերի վրայ։ դրանք կարող են յարատեւ գործունէութիւն պահպանել։ Գարդ երեւում է, որ Դաշնակցութիւնը արժանի ուշադրութիւն չի դարձրել Գոլոի վրայ։

Վռամեան։— *Ես եւս մեծ տեղ եմ տալիս Գոլոի լայն գործունէութեան, ընդունելով նրա միջազգային նշանակութիւնը։ Եթէ դուք մեր դիւանը քննէիք, պիտի տեսնէք, որ մինչեւ 1896 թուականը ունեցել ենք մօտ 200 կազմակերպուած խմբեր, իւրաքանչիւրը կազմուած առնուազն 10 հոգուց։ Բոլոր արուարձանները կազմակերպուած էին։ Շրջանները այնքան ընդարձակ էին, որ դրանից ամէն մինը որոշ չափով անկախ գործունէութիւն ունէր։ 1896ից ի վեր մի ստուար թիւ դուրս եկաւ, չատերը սպանուեցին։ Նոր գործ չկըսուեց, սկսածն էլ անյաջող։ ամէն ինչ մատնուեց անուշադրութեան։ Ճիշդ է 1897 թուին ընկ. Ճոնսնը մտաւ Գոլիս ցոյցի նպատակով, բայց անյաջող։ 1898 թուին գնաց Խաժակը, 1907ին [?] ուրիշ ընկերներ։ բայց ոչ կարեւոր ձեռնարկ արին, ոչ էլ ժողովուրդին կազմակերպեցին։ Տեղեկագիրը ինձ համար մի հանդամանք պարզեց, որ ուշադրութիւնից չպիտի վրիպի։— դա այն է, որ այժմ տեղացիների մէջ ցանկութիւն կայ նոր գործ սկսելու, ցոյց են տալիս յեղափոխական տրամադրութիւն եւ կազմակերպւում են, չնայելով կառավարութեան խստացրած դրութեան։ Ես կ'ուզէի նաեւ մի բան իմաստը ճշդել եւ ընդգծել։ դա «համակրողն է»։ Թող նախ չհասկացուի համակրող բառը մեր ընկերների կողմից։ Գոլսում յեղափոխութեան համակրող լինել, կը նշանակէ դա՝ Բիւրոյի անդամ լինել կովկասում։ — Ժողովրդի մէջ կղերի ազդեցութիւնը խիստ ընկած է։ Գակասում է այդ ազդեցութիւնը նաեւ գաւառներում։ Գոլսի եւ շրջակայքի հայերի մեծագոյն մասը արհեստաւոր, կօշկակար, ոսկերիչ, նաւավար, ձկնորսներ են։ Նշանաւոր է Սամաթիա թաղը, որը միշտ էլ տուել է լաւ ընկերներ։ Մինչեւ այժմ այն սկզբունքն է տիրող եղել, որ Դաշնակցութիւնը տեռորական եւ ցուցական գործունէութիւնից դուրս ուրիշ բան չէ ճանաչում։ Այդ համոզմունքն է տիրում ժողովուրդի մէջ եւ ղեկավար ընկերների կողմից էլ ցանկութիւն չէ եղել ժողովուրդը կազմակերպելու։ Հենց այդ իսկ պատճառով, երբ վերջացել է ձեռնարկած ցոյցը, ընդհատուել է եւ Դաշնակցութեան գործը։ Այդ է վիրաւոր կողմը։ Եւ քանի որ Գոլիսը խոշոր տեղ ունի մեր գործունէութեան մէջ, կարեւոր է նորէն կազմակերպել։ Արժէ առանձնապէս ուշադրութիւն դարձնել պետական բժշկական վարժարանների ուսանողութեան վրայ, որովհետեւ սրանք գաւառացիներ են, վերադառնալիս մեծ դեր կը խաղան գաւառներում։ իսկ Գոլիս էլ ազատ մուտք ունեն։ Տրամադրութիւն պէտք է ստեղծել նոյնպէս թուրք տարրերի մէջ, մոգեր պատրաստել թուրք մամուլի, բրոշիւրների միջոցով եւ խօսքի պատգանդայով։ Անհրաժեշտ է նմանապէս ուշադրութիւն դարձնել պատրիարքարանի վրայ։ Սխալ է եղել մեր մինչեւ այժմու բռնած տակտիկը պատրիարքարանի վերաբերմամբ։ Մենք պիտի մօտենանք պատրիարքարանին, աշխատելով նրան մեր ձեռին առնել։ Պատրիարքարանի միջոցով կարելի է ճիշդ տեղեկութիւններ ստանալ գաւառների մասին, եւ եւրոպական պաշտօնական մարմիններին, օրգաններին հեռագիր տալ։ Իսկ այդ բոլորը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ կ'ունենանք Գոլսում մնայուն կազմակերպութիւն եւ ղօրաւոր մարմին։*

Համօ։— *Հնարաւոր չէ՞ արդեօք մուտք ունենալ Գոլսում քաղաքական խորհուրդների մէջ։ եւ առհասարակ քանի՞ հոգով են լինում այդ համախմբումները։*

Վռամեան։— *Այդ ժողովները տեղի են ունենում եկեղեցում, 10ից 15 հոգով։ Թէեւ այնքան էլ ազատ չեն, բայց կարելի է մուտք ունենալ։ Մենք մինչեւ 1896ը անդամներ ունէինք այդ մարմինների մէջ։ այժմ էլ կարելի է, բայց չատ զգոյշ լինել հարկաւոր է։*

Մալումեան։— *Այժմ պէտք է ուժ տալ զուտ կազմակերպչական գործին, անկախ տեռորական եւ ցուցական ձեռնարկներից։ Պէտք է այդ մասին հրահանգել մեր մարմիններին։ Ես առաջարկում եմ ժողովին մի բանաձեւ այդ մասին։*

Վռամեան։— *Գոլսոյ շրջակայքում, մանաւանդ Մարմարա ծովի չուրջը կան չատ առողջ տարրեր, որոնց մեծ մասը երկրագործ եւ արհեստաւոր են։ կան մաքսանենգներ, որոնք յաճախ կռւում են կառավարական պաշտօնեաների դէմ։ Ահա այստեղ կարելի է նմանակալից գործ կատարել։*

Արամ։— *Ես եւս Վասպուրականի մարմնի կողմից չեշտում եմ Գոլսի նշանակութեան վրայ։ Այդտեղ սովորող ուսանողները վերադառնալով գաւառները, նըշանաւոր դեր են խաղում պրոպագանդայի տեսակէտից։ Առհասարակ տիրող կարծիքն այն է, որ Դաշնակցութիւնը խիստ հարուստ է եւ այդ տեսակէտը մի վատ հակում է յառաջացրել ժողովուրդի մէջ։ Գործի դաղափարական կողմը չմեռցնելու եւ աւելի առաջ մըղելու համար, անհրաժեշտ է մեծ գումարներ չծախսել, տալ այնքան, ինչքան հարկաւոր է։ Եղրակացութիւնը այն է՝ որ պէտք է մեծ ոյժ տալ մասսայական կազմակերպութեան եւ դնել կանոնաւոր մնայուն հիմունքների վրայ։*

Ապա կարծիքների փոխանակութիւն եղաւ ընկ. Մալումեանի կազմած բանաձեւի մասին, որ հետեւեալն է։

«Ժողովը ծանօթանալով կ. Գոլսի դաշնակցական կազմի եւ պրոպագանդայի այժմեան վիճակին եւ նկատելով՝

ա) կազմի եւ պրոպագանդայի սահմանափակ վիճակը,

բ) Այն խոշոր դերը, որ կարող է կատարել յեղափոխական գործունէութիւնը թէ՛ Գոլսում եւ թէ շրջակայքում, այդի առաջ ունենալով վայրի ֆազմական կարեւոր նշանակութիւնը,

որոշեց՝

Ցանձնարարել կազմակերպական մարմիններին, յատկապէս Աբեւմտեան Բիւրոյին եւ Բալկանեան կ. կոմիտէին, չխնայելով ոչ մի ջանք՝ ուղարկել այնտեղ կարող ընկերներ, լայն կազմակերպութիւն յառաջ բերելու կ. Գոլսում եւ շրջակայքում»։

Բանաձեւը ընդունուեց միաձայն, բացառութեամբ մէկի։

Ժողովը փակուեց ժամը 8ին։

62ՐԴ ՆԻՍՏ (2 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Համօ–Մհերեան [Օհանջանեան]։
Ներկայ են 25 ժողովական։
Բացակայ են Մինասեան (Հ.), Անդրանիկ (Հ.)։

Գուէարկութեան են դրւում Նախագծի հրատարակման իրաւասութեան վերաբերեալ բանաձեւերը։

Թոռոսոմի առաջարկութեամբ Զարդարեանի բանաձեւի մէջ մտցւում է «...պարտաւոր էր հրատարակել» դարձուածքը։ Թոփչեան, Մալումեան եւ ուրիշները, որոնք հաւաքական բանաձեւ էին տուել, միանում են Զարդարեանի բանաձեւին, որ հետեւեալն է՝

«Ընդհանուր ժողովը լսելով ընկ. Մալումեանի զեկուցումը «Խորհրդի իրաւասութեան՝ Նախագծի հրատարակման գործում» եւ այս առթիւ տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնները եւ վիճաբանութիւնները՝ հասաւ հետեւեալ եզրակացութեան։

Խորհուրդը հիմնուելով Դաշնակցութեան հիմնական ծրագրի, Գ. Ընդհանուր ժողովի կողմէ կովկասեան գործունէութեան մասին տրուած որոշումների ոգիին, կովկասեան Շրջանային ժողովի այս առթիւ տուած որոշումներուն, ինչպէս եւս նաեւ կեանքի հրամայողական պահանջներուն վրայ, պարտաւոր էր հրատարակելու կովկասեան Նախագիծը՝ իբրեւ ուղեցոյց կովկասահայ կեանքի տնտեսական եւ տնտեսական գործունէութեան, վերապահելով ապագայ վերջնական հաստատութիւնը մերկայ Ընդհանուր ժողովին»։

Լրացումների ենթարկուելուց յետոյ բանաձեւը ենթարկւում է քուէարկութեան։ Համաձայն են բոլոր ժողովականները, բացի Մուրատից։

Մուրատ։— *Ես իմ համաձայնութիւնը կը տամ այն պայմանով՝ որ Խորհուրդը խոստանայ, որ Նախագծի հրատարակումը նրա իրաւասութիւնից բարձր է եղել... հակառակ դէպքում, ես չեմ ուզում ինքնախաբէութեամբ զբաղուել այստեղ՝ ձայն տալով մի այդպիսի բանաձեւի։*

Բողոքներ են բարձրանում, թէ անպատճառ պէտք է միաձայն հաւանութիւն տրուի բանաձեւին։

Նախագահը առաջարկում է անցնել Օրակարգի այլ խնդիրներին։

Թոփչեան *զեկուցում է անում հետեւեալ նիւթերի մասին՝ «Համակցութիւնը կովկասում կամ Նախագիծը ըստ էութեան»։*

Ժողովը անցնում է վիճաբանութեան։

Ժողովականներից չատերը նկատում են, թէ քանի որ ընկերներ՝ Բարսեղեան, Թոռոսոմ եւ Շահխաթունեան առանձին զեկուցումներ են տուել առհասարակ Դաշնակցութեան կովկասեան անցեալ ու ներկայ գործունէութեան մասին, հարկաւոր է խօսել ընդհանրապէս կարդացուած բոլոր չորս զեկուցագրերի մասին։

Նախագահ։— *Պէտք է խօսել ընդհանրապէս ծրագրային հարցերի մասին. ներկայ Ընդհանուր Ժողովը, մի կողմ թողնելով Նախագիծը, պէտք է ընդգծի մի նոր Ծրագիր, որը եւ պարտադիր է լինելու բոլոր դաշնակցական մարմինների համար։*

Թոփչեան։— *Ծրագրի մասին առայժմ խօսք չէ կարող լինել, քանի դեռ չենք որոշած մեր կուսակցութեան աշխարհահայեացքը։ Խօսենք նախ տակտիկայի մասին։*

Խահակեան։— *Հարկաւոր է անմիջապէս դնել այս հարցը, թէ Կովկասում մեր գործունէութիւնը սոցիալիստակա՞ն է լինելու թէ ոչ։*

Մաշուր։— *Հարցը պէտք է այսպէս դնենք։— Ի՞նչ կերպ վարել մեր գործունէութիւնը Տաճկահայաստանում։*

Ռոստոմ։— *Անհիմն են այդ առաջարկները։ Ծրագրային տեսակէտից, Դաշնակցութիւնը եղել է՝ աշխատաւորական դասին կողմնակից մի կազմակերպութիւն։ իսկ թէ այդ ուղղութեամբ գործնական ոչինչ չէ արուած։— այստեղ ո՛չ կազմակերպութիւնն է մեղաւոր, ոչ էլ նրա Ծրագիրը... Եթէ, սակայն, դուք կ'ասէք, որ ո՛չ, Դաշնակցութիւնը աշխատաւորական դասը չէ ունեցել երբէք — ես կը տամ մի զեկուցում՝ ապացոյց հիմնաւորելու համար։ — Մենք եղել ենք աշխատաւորական կուսակցութիւն եւ այստեղ դրուելիք հարցը հետեւեալը պէտք է լինի՝ նախ — Դաշնակցութիւնը դառնո՞ւմ է քաղաքական–յեղափոխական կուսակցութիւն կովկասում։ եւ ապա Դաշնակցութիւնը պէ՞տք է սկսի այնտեղ դասակարգային պայքար, համաձայն իր սկզբնական Ծրագրի ոգուն։*

Զաւրեան։— *Ինչո՞ւ այդ հարցը, թէ հարկաւո՞ր է կովկասում քաղաքական կռիւ մղել։ Գ. Ընդհանուր Ժողովը արդէն դրական որոշում է կայացրել։ Թէ՞ այստեղ կան մարդիկ, որոնք դէմ են կովկասեան գործունէութեան։*

Վռամեան։— *Այստեղ պէտք է վերջնականապէս որոշել, թէ արդեօք Դաշնակցութիւնը այսուհետեւ էլ վարելո՞ւ է կովկասահայ [գործունէութիւն ?] եւ ի՞նչ ուղղութեամբ։ Նախագծին կողմնակից եղած ընկերները թող որոշակի պարզեն այդ հարցը, որից յետոյ միայն մենք կը դառնանք այն խնդրին, թէ ի՞նչ յարաբերութիւն է ունենալու կովկասահայ՝ սահնք դասակարգային չարժումը՝ դէպի տանգհակայ դասը։ այդ յարաբերութիւնը հարկաւոր է որոշել։*

Թոփչեան։— *Հարցը պարզ է։ Ես իմ զեկուցման*

մէջ աչխատել եմ հաստատել, որ Դաշնակցութիւնը կովկասում եղել է աշխատաւորական կուսակցութիւն. եւ որ այսօր երբ պայմաններն աւելի նպաստաւոր են դարձել, հարկաւոր է աւելի ուժեղ կերպով չեչտել Նախագծի սոցիալիստական սկզբունքները:

Սեպուհ.— Աչխատաւորական կուսակցութիւն է եղել թէ ոչ, այս մի կողմ թողնենք. հարցը նրանումն է, թէ այսուհետեւ էլ Դաշնակցութիւնը գործելո՞ւ է կովկասում: Այս է էականը: Մենք սահմանից այն կողմը դատ ունենք յանձնուած վեց մեծ պետութիւնների խնամակալութեանը, որոնցից մէկն էլ Ռուսաստանն է. կարո՞ղ ենք կռուել ե՛ւ Ռուսաստանի դէմ: Ի հարկէ եթէ Ռուսաստանը պարլամենտական երկիր լինէր, այլ կերպ վերաբերմունք ցոյց կը տար մեր բազմաչարչար դատին. բայց ժ-բախտաբար ռէակցիան դեռ խստութեամբ տիրում է այնտեղ: Զգոյշ լինենք, չդիզուենք ռուս կառավարութիւնը, եթէ չենք ուզում, որ մեր երկիրը փլատակների վերածուի. ո՛չ մի ակտիւ կռիւ Ռուսաստանում: Նախ եւ առաջ տաճկահայ դատը. ժամանակի ընթացքում միայն, երբ տեսնենք, որ կովկասեան գործունէութիւնը, իսկապէս չէ վնասում տաճկահայ դատին, Դաշնակցութիւնը կարող է իր ձեռքն առնել ե՛ւ կովկասահայ դատի պաշտպանութիւնը:

Մուրատ.— Հարկաւոր է պարզել այդ երկու դատերի փոխադարձ յարաբերութիւնը, թէ մինչեւ այսօր ո՞ր աստիճանի վնասակար կամ օգտակար է եղել կովկասեան գործունէութիւնը՝ տաճկահայ դատին: Այս տեսակէտից, կարեւոր է գիտնալ՝ ի՞նչ ուժեր ունենք, ի՞նչ դրութեան մէջ են մեր կազմակերպութեան ներքին գործերը. հարկաւոր է քննել մեր դրամական հաչիւները:

Նախագահ.— Տեղեկագրերից արդէն որոշ գաղափար կազմած պէտք է լինէինք այդ բոլորի մասին: — Ինչ վերաբերում է առանձնապէս դրամականին, չուտով կը տանք պէտք եղած հաչիւները: Սրանցից առկայն, հօ չե՛նք կարող եզրակացնել, թէ հարկաւոր է երկու վարչութիւն եւս՝ կովկաս եւ Տաճկաստան գործել կամ ո՛չ. մենք առեւտրական ընկերութիւն չե՛նք, որպէսզի դէկավարութենք դրամական հաչիւներով:

Սեպուհ.— Երբէք Շահխաթունեանը յայտարարեց, որ Նախագիծը անդ է կացել միայն մի քանի ինտելիգենտ երիտասարդների դրդմամբ, որոնք չհաւատացել են միւս ընկերների անդիտակցութիւնը: Աւել է թէ Նախագիծը կենաքի հրամայողական պահանջ չէ՞ եղել, ինչպէս մինչեւ այժմ հաւատացրել ու համոզել են ինձ...: Գարգինեանը այդ հանելուկը: Յարուա՞ծ են, ուրեմն, մեր այն գործիչ–ընկերները, որոնց անուններով իսկ մենք հպարտանում ենք ուրիշների առաջ: Եթէ այո՛, այն ժամանակ ես դէն կը չպրտեմ այս Նախագիծը:

Շահխաթունեան (ուզում անելով).— Նախ ես բոլորովին չեմ գործածել «երիտասարդ» բառը. Դաշնակցութեան մէջ կան սոցիալիստներ՝ ամէն հատակի: Ես ասել եմ՝ մեր սոցիալիստների չարքերում կան եւ չատ այնպիսիները, որոնք իրենց հոգեբանութեամբ սոցիալիստ չեն, բայց համակերպուել են իսկական սոցիալիստներին:

Մուրատ.— Մի կարծէք, որ ձեր ասած այդ «անդիտակիցները» բոլորովին դաղափար չեն ունեցած Նախագծի էութեան մասին: Դեռ Ռայոնական ժողովի ընթացքում բողոքներ են բարձրացել, բողոքել եմ եւ ե՛ս: Բայց միայն լռեցինք, չուղեցինք դուրս գալ սահմաններից, ինչպէս Խորհուրդն այդ արեց. բարւօք համբերցինք ապասել մինչեւ Ընդհանուր ժողովը:

Թոփչեան.— Հետաքրքիր է, ինչո՞ւ Շահխաթունեանը խոյս է տալիս՝ հարցն ուղիղ դնելուց: Ես իմ զեկուցագրով ցոյց տուի, որ Նախագիծը բխած է եղել կեանքից. Շահխաթունեանն էլ պէտք կամ նոյն այդ տեսակէտի վրայ կանգնի կամ թէ ապացուցի որ Նախագիծը զօռով մտցրած մի բան է. երկուսից մէ՛կը: (Անցնելով բուն նիւթին, տեղի ունեցած վիճաբանութիւնները բաժանում է երկու կէտի): 1) Դաշնակցութեան հակացարիստական կուրը Կովկասում օգտակա՞ր է տաճկահայ դատին թէ ոչ. 2) Կովկասեան գործունէութիւնը մինչեւ այժմ ի՞նչ արդիւնք է տուել: Կանգ եմ առնում նախ երկրորդ հարցի վրայ: Ոչ մէկը այստեղ ստացած տեղեկութիւններից չէ ասում, թէ մեր գործը Կովկասում բացասական հետեւանքների է յանդել: Վերցնենք հենց Ջրաբերդը, որտեղ մեր ուժերը կազմալուծուել են իբր թէ սոսկ այն պատճառով, որ մենք սկսեցինք «սոցիալ» քարոզել. իսկ ես կ'ասեմ, որ ընդհակառակն կազմալուծուել են, որովհետեւ բացակայել է այդ «սոցիալը»: Չէ՞ որ Ջրաբերդում այսօր կանդուն են մնացած միայն արհեստակցական միութիւնները, որոնց չնորհիւ ե՛ւ պահպանուում է այնտեղ Դաշնակցութեան դոյութիւնը: Բայց կայ եւ մի այլ հանդամանք, որ ընդհանուր պատճառ է մեր բոլոր կազմալուծումների.— մի ժամանակ Դաշնակցութիւնը հասարակութեան համար ինչ որ խորհրդաւոր բան էր, դէպի որը ձգտում էին թէ՛ բուրժուան, թէ՛ հոգեւորականը, թէ՛ արհեստաւորը...: Երբ, սակայն, Ռուսաստանի դէպքերից եւ սրանց յաջորդող մանիֆեստից յետոյ Դաշնակցութիւնն այլեւս հրապարակի վրայ էր, առանց նախկին խորհրդաւորութեան շղարչի, տեսանելի ամենքին, — նրանից սկսեցին արագ–արագ հեռանալ բոլոր նրանք, որոնք տոգորուած չեն եղել յեղափոխական ոգւով: Նոյն այդ պատճառներով մենք կազմալուծուել ենք նաեւ՝ Քարում, Մրգաստանում, Ապառաժում եւն.: Բայց մեր այս կազմալուծումները մի մի յաղթանակներ են կուսակցութեան համար, որովհետեւ հեռացողների փոխարէն մեր չուրջն են համախմբուել աւելի մաքուր ու յեղափոխական տարրերը եւ մեր ուժերը աւելի են ամրացել՝ ե՛ւ բարոյական ե՛ւ նիւթական տեսակէտից: Մեր նոր գործելակերպի չնորհիւ է, որ այսօր 7–8000 բանուոր ունենք Թիֆլիզում — մինչդեռ մի երկու տարի առաջ (1904ին), երբ Դաշնակցութիւնը միայն տաճկահայ խնդրով է զբաղած եղել, մեր հետեւորդների թիւը նոյն այդ Թիֆլիզում հասնում էր հազիւ 2000ի: Մատնացոյց էք անում բանուոր մասսայի վրայ, որպէս թէ այնտեղի ամբողջ չրջանը հակառակ է Նախագծին: Ես կարծում եմ սակայն, որ այդպէս չէ, կազմակերպուած բանուորների մէջ կան եւ չատ տաճկահայեր, որոնք ո՛չ մի դէպքում, չեն կամենայ դնալ հականախագծականների յետեւից. այդ իսկ տաճկահայերի կողմից էր, որ պատգամաւորներ եկան մեզ մօտ Թիֆլիզ...: Բանուոր հականախագծականները չունեն մասսա. հետեւորդներից էլ մեծ մասը գիտակից չէ հարցի էութեանը. բաւական է բացատրել այդ անդիտակիցներին Նախագծի իմաստը, եւ բոլորն էլ մեր կողմը կ'անցնեն: — Մէկ խօսքով կովկասում վարած մեր քաղաքական սոցիալիստական գործունէութեան չնորհիւ Դաշնակցութիւնը վերջին երկու տարիների ընթացքում անհամեմատ աւելի չատ բան արեց, քան առաջ: Սեպուհը վախ է յայտնում, որ ռուս կառավարութիւնն աւելի կը թշնամանայ տաճկահայ չարժմանը եթէ Դաշնակցութիւնը կռիւ մղէ նրա դէմ: Բայց ընկ. Սեպուհ, այդ կառավարութիւնը չէ՞ր որ համարեա՛ գերեզման փորեց տաճկահայ դատի համար. դրա՞ դէմ պէտք է չբողոքել: Բելլինի կոնգրէսից սկսած նա միչտ էլ դաւեր է նիւթել տաճկահայ ազատարար չարժման դէմ. իսկ եթէ մի մի անգամ դուրգուրացել է մեզ, սոսկ այն նպատակով, որպէսզի մեր ձեռքով չալանակներ հանէ կրակից: Մայիսեան ծրագիրը, Լորանոյի քաղաքականութիւնը... այս բոլորը լաւ յայտնի են մեզ: Ո՛չ, բռնակալների սիրտը, հլու հնազանդութեամբ չէ՛, որ կարելի է չահել: Արմենականներն էլ յոյսեր են ունեցել, թէ Սուլթան Համիտը՝ աւելի չուտ ազերսներին կը դիմէ եւ Փորթուդալեանը Մարսէյլից մի երկար ազերսագիր է ուղղում Սուլթանին... որի հետեւանքը, սակայն, այն է լինում, որ իսկոյն արգելւում է «Արմենիա» թերթի մուտքը Թուրքիա: Ռուս բիւրոկրատիան իրեն չահերի համար վնասակար է համարում տաճկահայ յեղափոխութիւնը եւ չատ կ'ուզենար՝ արեան մէջ խեղդել այն. սահմանի վրայ զազանային կոտորածները դեռ քաղմ են մեր յիշողութեան մէջ: Ռուս բռնակալութիւնը անհաչտ հակառակորդ է բոլոր ազատարար չարժումներին: Չինդերն իրաւամբ է նկատել, որ ռուսական յեղափոխութեան դատը՝ համամարդկային դատ է: Եւ մենք պէտք է կռուենք այդ բռնակալութեան դէմ, բայց ոչ երբեք լռել նրա գործած վայրագութիւնների հանդէպ: Ժողովրդապետական Ռուսաստանը միայն կը նպաստէ տաճկահայ դատի յաղող լուծմանը: Վերջացնում եմ՝ Դաշնակցութիւնը Կովկասում պէտք է լինի քաղաքական–սոցիալիստական կուսակցութիւն:

Վիճաբանութիւնները ընդհատւում են. չարունակութիւնը թողնելով յաջորդ նիստին:

Նախագահը կարդում է մի գրաւոր առաջարկ՝ ժողովին ուղղուած ընկերներ Մուրատի եւ Տաթեւեանի կողմից, որ հետեւեալն է.—

«Կ'առաջարկենք, որ ներկայ ժողովի անդամները անպայման խոստանան իմիզիմիթին դնել կազմակերպութեան տրամադրութեան տակ եւ հնազանդիմ ժողովի կողմէ իրենց կարողութենց համաձայն տրուած որոշումներուն, առնուազն մինչեւ յառաջիկայ Ընդհանուր ժողովի գումարումը: Հակառակ դէպքում, իմիզիմիթին տրամադրելի չընդունելը բարոյական իրաւունք չունենան մասնակցելու ժողովի ծրագրային վերջնական, վճռական որոշումներուն»:

Այս առթիւ սկսում են վիճաբանութիւնները:

Ռոստոմ.— Մենք չենք կարող բռնանալ այս կամ այն ժողովականի կամքի վրայ, թէ՝ դո՛ւ ա՛նպատճառ պարտաւոր ես այս դործն կատարել: Այդ առաջարկը, յամենայն դէպս, այն իրողութիւնն է գուցէ չեչտում, որ մեր մէջ հարցեր յարուցանող եւ սրանց քննութեանը ուղղութիւն տուող ընկերներն իրենք են լինում յաճախ, որ քաչւում են մի կողմ, երբ խնդիրը գործելուն է հասնում: Այսպիսի դէպքեր չատ են տեղի ունեցել. 1898ի Ընդհանուր ժողովն օրինակ: — Բարոյական պարտաւորեցման մասին միայն կարող է խօսք լինել. Քող իւրաքանչիւրը մեզանից կեանքի մէջ աչխատի իրականացնել մեր դաւանած սկզբունքները եւ կայացրած որոշումները:

Մուրատ.— Այդ առաջարկը մենք անում ենք, հիմնուած անցեալի փորձառութեան վրայ: Ժողովից յետոյ իւրաքանչիւրը կը դնայ իւր դործին եւ այդպիսով մեր ծրագիրները անիրագործելի են մնալու: Այսօր մեզ ուժեր են հարկաւոր. եթէ ստիպողականութիւնը չլինի, քիչերը իրենց յօժար կամքով գործի կը ձեռնարկեն:

Խահախեան.— Եթէ Մուրատի առաջարկի միտքն այն է, որ մեզանից իւրաքանչիւրը, իւր ուժերի չափ գործի կուսակցութեան մէջ, այս դէպքում մի այդպիսի առաջարկ աւելորդ է միանգամայն: Իսկ եթէ դրանով ոչ միայն բարոյական, այլեւ իրաւական պարտաւորութիւն էք ուզում դնել ժողովականներիս վրայ, այստեղ ես զտնում եմ, որ այդ առաջարկին նպատակ է դրած այս ժողովը ներսից պայթեցնել:

Զաւրեան.— Որքան էլ բարի լինի Մուրատի ցանկութիւնը, նրա առաջարկն այնուամենայնիւ՝ բռնութիւն է, մի տեսակ ցենզուրա պատգամաւորներիս վերաբերմամբ: Մենք եկել ենք այստեղ մեր յօժար կամքով եւ ազատ ենք մեր գործունէութեան մէջ: Մենք կազմում ենք մի ամբողջական ձեռնարկութիւն եւ ոչ թէ մի կոնգլոմերատ [չեղջկոյտ, չեղջաքար], որի մասերը զօռով իրար կպցնելու կարիքն ունենանք: Ոչ մի կուսակցութեան մէջ այդօրինակ առաջարկներ չեն լինում:

Արամ.— Այստեղ մենք բոլորս դաշնակցական մարմինների ներկայացուցիչներ ենք. այսպիսի հանգամանքն արդէն բաւական է հաստատելու, որ մենք ամէնքս նոյն նպատակի չուրջը համախմբուած առաջ

պէտք է տաննենք մեր ընդհանուր գործը։ Եւ ի՞նչ իրաւական պարտաւորեցման մասին խօսք կարող է լինել. յեղափոխականը գնում է զոհուելու — ինքնաբերաբար եւ ո՛չ երբեք՝ ստիպուած, հպատակութեամբ չինովնիկական հրահանգների... եւ եթէ մենք այդպիսի պարտաւորեցումների կարիքը ղրանք — սա նշան է լինելու մեր յեղափոխական անանկութեան։

Սեպուհ.— Ես կարծում էի, որ այդ առաջարկը սիրով կ'ընդունուի ժողովի կողմից, մինչդեռ խիստ բողոքներ են լսւում նրա դէմ։ — Ընկերնե՛ր, րոպէն կրիտիկական է [ճգնաժամային]. մենք պէտք է լրենք մեր բոլոր ուժերը. մենք ամէնքս պարտաւոր ենք ժողովի տրամադրութեան տակ դնել մեր կեանքը։

Զոփուրեան.— Այդ առաջարկն ինքնըստինքեան գործնական չէ։ Ենթադրենք, որ ժողովականներից մէկը յանձն է առնում՝ այսինչ գործը կատարել. — որոշ ժամանակից յետոյ, սակայն, փոխւում են նրա հայեացքները՝ թէ՛ կուսակցութեան ձգտումների մասին ընդհանրապէս եւ թէ իր ձեռնարկած գործի մասին մասնաւորապէս։ Կամ մէկը ծուցական Մարմնի մէջ է մտնում, բայց վերջը ղղում է, որ իր ուժերը չեն համապատասխանում իր ստանձնած դերին. այս դէպքում նա ուղղակի պէտք է հեռանայ գործից, սրա իսկ յաջողութեան տեսակէտից։

Վիճաբանութիւնները կը չարունակուեն յաջորդ նիստին։ Նիստը փակւում է։

63ՐԴ ՆԻՍՏ (3 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Համօ Մհերեան։
Ներկայ են՝ 26 ժողովական։
Բացակայ է Անդրանիկ (Հիւանդ)։

Վիճաբանութիւնները չարունակւում են։

Խահակեան.— Թոփչեան, ի պատասխան Մուրատի, աշխատեց ապացուցանել, որ մեր սոցիալիստական գործունէութեան չնորհիւ՝ մեր խմբերը ամէլ բազմացել են։ Բայց արդեօք քանակո՞վ պէտք է չափել մի կուսակցութեան ուժը։ Մենք այսօր ունենք չատ այնպիսի խմբեր, որոնք մեր դաւանած սոցիալիզմի մասին այն աստիճան խոտոր հասկացողութիւն ունին, որ պատրաստ են գնալ ամէն մի հողմի ետեւից։ Եւ ապա ղլխաւորը՝ ղուր է Թոփչեանը աշխատում հաստատել, որ Դաշնակցութիւնը եղել է անցեալում մի սոցիալիստական կուսակցութիւն. ամենեւին՛։ Բաւուն, որի վրայ ի մէջի այլոց հիմնւում են այստեղ, միշտ էլ չեղաել է այն միտքը, թէ հայերի մէջ գոյութիւն չունի դասակարգային կուիւ։ Հետուն չգնանք, վերցնենք հենց մեր ներկայական առաջին ժողովը, ուր սոցիալիստական սկզբունքներով գործելու առաջարկը ստացել է միայն 8 ձայն ընդդէմ 6ի. չատ ընկերներ ունենք, որոնք իրաւ սոցիալիստներ չեն. ընկ. Վռամեան այստեղ անկեղծօրէն յայտնեց, թէ ինքը սոցիալիստ չէ։ Միակ հիմքը, որի վրայ Թոփչեանը կարող է կանգնել, 1892ի ծրագիրն է։ Այս ծրագիրը, սակայն, որքան էլ սոցիալիստական լինի, հենց սկզբից մնացել է մեռած տառ, առանց որեւէ դրական արժէքի. դա եղել է Լասսալի ասած սահմանադրութիւնը՝ Թղթի վրայ։ Մենք մեզ չխաբենք, անցեալում եղել ենք, ոչ միայն ոչ-սոցիալիստ, այլեւ հակասոցիալիստական։ Տաճկահայ ազդային դատով ոգեւորուած, մենք մեր այդ ազգայնութեան պրոպագանդով մթնացրել ենք կովկասահայի դասակարգային դիտակցութիւնը։ Թոփչեանը ազգայնութիւնը կարելի է գտնում սոցիալիզմի կողքին, թէ՝ մենք թէ՛ սոցիալիստ ենք, եւ թէ ազգային։ Այո՛, բայց այն ժամանակ միայն, երբ ազգայնութեան սկզբունքները կապւում են դասակարգային կուռի հետ. առանց այս կուռի՝ ազգայնութիւնը դառնում է չովինիզմ [ազգայնապաշտութիւն, այլամերժ ազգայնակնութիւն]։

Վռամեան (անձնական նկատողութիւն).— Ի՞նչ հիման վրայ է ասում Խահակեան, թէ ես ինձ ոչ-սոցիալիստ եմ յայտարարել այստեղ։

Նախագահը Խահակեանին թոյլ չէ տալիս պատասխանել։

Մուրատ.— Սխալ է, որ տաճկահայ դատը մթնացրել է կովկասահայ երիտասարդութեան միտքը. այլ ընդհակառակն է եղել։ Թոփչեանն ասում է, թէ կարսում եւ այլ տեղերում, մեր ուժերն աճել են, որովհետեւ սոցիալիստական ուղղութիւն ենք մտցրել մեր գործունէութեան մէջ։ Այս պատճառաբանութիւնը, սակայն, սխալ է. մեր խմբերը բազմացել են ինքնապաշտպանութեան չնորհիւ, եթէ ինքնապաշտպանութեան կռիւները չլինէին՝ Դաշնակցութիւնը իւր սոցիալիզմով չատ էլ առաջ չէր գնայ։ Սխալ է Թոփչեանի եւ ա՛յն ասածը, իբր թէ վերջին երկու տարուան ընթացքում Երկիր են ուղարկուած աւելի չատ ուժեր, քան ուղարկուել են առաջներում. ուղարկուած ուժերը Երկրի մի մասին են յատկացուել, միւս մասերը մնացել են առանց գործիչների.— Այն ժամանակ երբ դուք, ընկ. Թոփչեան, հողագործական եւ այլ հարցերով էիք զբաղուած, Երկիրը չէ ունեցել գոնէ մի կանոնաւոր Քղթակից։

Արամ.— Այստեղ ես այն տպաւորութիւնն եմ ստանում, թէ միայն տաճկահայ դատի չուրջն է եղել, որ հաւաքուել են կովկասահայ բոլոր խաւերը եւ գործել բացառապէս այդ դատի համար։ — Բայց դա սխալ է։ 1900ից այս կողմ, կովկասահայերի մէջ սկսւում է մի զօրեղ չարժում՝ դաշնակցականների չարքերում. սակայն ոչ դարձեալ յատկապէս տաճկահայ դատի համար։ Վերցնենք Բագուն։ Երբ Ռուիստարորը եկաւ կովկաս, ռէակցիայի օրերուն կազմալուծուած խմբերը վերականգնելու համար, այդ միջոցին էր, որ Բագուում դուժարուեց մի խումբ երիտասարդների ժողով, որոն եւ սկիզբը դրուեց Դաշնակցութեան գործունէութեան մի նոր չրջանի։ Եւ այդ ժողովումն էր որ հարց բարձրացաւ թէ՝ ո՞րտեղից սկսել կազմակերպութեան գործը, վերեւի՞ց թէ ներքեւից. այսինքն բուրժուաների՞ց թէ բանուորներից։ Բանուորականները յաղթեցին եւ ժողովը որոշեց գործել բանուորների մէջ, դասակարգային պայքարի հողի վրայ. հետագայ ժողովներում անկեղծա տրուեց այդ որոշմանը։ Ի հարկէ, չէր կարելի անմիջապէս անցնել լայն, ակտիւ գործունէութեան, պէտք էր սահմանափակուել նախ սոսկ պրոպագանդայով։ Իսկ երբ այնուհետեւ գործադուլները սկըսուեցին, մենք բազուի դաշնակցականներս, մասնակցեցինք քաղաքական ցոյցերին, գործադուլներին, միայն թէ ո՛չ պաշտօնապէս, քանի որ չունէինք բանուորական ծրագիրը՝ միւս կուսակցութիւններին առաջադրելու համար։ 1903ի գործադուլին, բազում դաշնակցականներս մասնակցութիւն ենք ունեցել. մեր ընկերներն էին, ղլխաւորապէս, որ դուրս էին գալիս բանուորների առաջ հրապարակով ճառելու. ինքս անձամ եմ եղել գործադուլային Բիւրոյին, իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ։ Եւ այս բոլորը կատարուել է բնական մըղումով. բանուորները հետզհետէ հաւաքուել են մեր չուրջը, այն պատճառով միայն, որ մենք պաշտպանել ենք նրանց դասակարգային չահերը։ Նոյնը եւ գաւառներում. այստեղ եւս մենք մասսաներ ենք գրաւել ոչ սոսկ «Հայաստան, Հայաստանով»։ Այո՛, մենք խօսել ենք չարունակ տաճկահայի օրհասական տանջանքների մասին, բայց գաւառական մասսաները հետեւել են մեզ, որովհետեւ մենք հիմնել ենք դատարաններ, կռուել ենք վաչխառուների դէմ, նպաստել ենք հողերի արդար բաժանման, բոյկոտ ենք հրատարակել կառավարութեան... Մէկ խօսքով, եթէ մենք կովկասահայ մասսաների սեփական չահերի պաշտպան չհանդիսանայինք, նրանցից հազիւ 1/10ը կը գար Դաշնակցութեան յետեւից, յանուն տաճկահայ դատի միայն։ Այս պէտք է ղիտնան Մուրատը եւ միւսները։ Այժմ, ի՞նչ դրական աղդեցութիւն է արել կովկասահայ չարժումը՝ տաճկահայ չարժման ընթացքի վրայ։ 1904ին Սասունի վիժումը լքում առաջ բերեց մեր չարքերում. արշաւանքների անյաջող ելքը, է՛լ աւելի սաստկացրեց այդ լքումը։ Բոլորս էլ այն աստիճանի յուսահատուած էին, որ երբ ես այդ միջոցին Երկիր էի անցնում, ինձ յիմար անուանեցին, թէ ո՞ւր ես գնում, տաճկահայ դատ չըկա՛յ այլեւս։ Եւ այս դատի չուրջը երբեմն եռացող ոգեւորութիւնը սառելու էր անպայման, եթէ հրապարակ չգար կովկասահայ չարժումը. սա էր որ չէզոքացրեց լքումը։ Կովկասահայ չարժման չնորհիւ էր, որ նորից հաւատ եւ յոյս ներչնչուեց մեզ՝ դէպի տաճկահայ դատը։ Մի՛ մոռանաք այս հանգամանքը։ Ընկերներից չատերը ասում են, որ Դաշնակցութիւնը վերջին երկու տարուան ընթացքում անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն է հասցրել Տաճկաստանի. միայն դա եղել է մի անցողական չրջան, երբ ապրել է Դաշնակցութիւնը՝ ինքնապաշտպանութեան չնորհիւ։ Այս բացատրութիւնը ճիշդ կարելի է համարել դրամականի աճման տեսակէտից, բայց ի՞նչ բացատրութիւն կը տաք այն հանգամանքին, որ Երկիր են մտել խոշոր թուով ինտելիգենտ (միջնակարգ կրթութեան տէր) կովկասահայեր. այստե՞ղ էլ «անցողական չրջանն» է պատճառը։ Այդ ինտելիգենտները կարող էին, եւ լիակատար իրաւունք ունէին, մնալու կովկասում, ուր այդ իսկ միջոցին յեղափոխական գործը եռում էր, առնուազն ոչ պակաս, քան Տաճկահայաստանում։ — Ո՛չ, կովկասահայ գործունէութիւնը բնաւ մնասակար չէ եղած տաճկահայ դատին. կովկասը մարզարան է տաճկահայ չարժման համար։ Իսկ թէ այդ երկու դատերը ի՞նչ յարաբերութեան մէջ պիտի լինեն, այդ մասին կը խօսեմ այլ անգամ։

Շահխաթունեան.— Ես չէի ուզել քննադատել Դաշնակցութիւնը այնպէս, ինչպէս հարկադրում է իրականութիւնը. ես իմ բեֆերատում արդէն ասել եմ, որ Դաշնակցութիւնը կովկասում չէ եղել քաղաքական կուսակցութիւն։ Երբ սակայն այստեղ պնդում են, ինչպէս Թոփչեանը, թէ Դաշնակցութիւնը անցեալում եւս սոցիալական կուսակցութիւն է եղել, ես նորից ստիպուած եմ հակառակն ապացուցանել։ Նախ հենց այն հանգամանքը, որ Թոփչեանի բեֆերատը [զեկուցումը] պաշտպանողական դիրքը էր բռնել՝ տեղացող յարձակումների առթիւ, — արդէն սա ցոյց է տալիս, թէ որքան խախուտ հողի վրայ է հիմնուած մեր սոցիալիզմը։ Անցեալում մենք սոցիալիստ չենք եղել։ Մինչեւ կալուածների դրաւումը մենք նոյնիսկ չենք էլ ուզել կռիւ յայտարարել ցարիզմին.— ասելով, որ նախ հարկաւոր է տապալել մէկ բռնակալութիւնը եւ ապա ելնել միւսի դէմ։ — Սոցիալիստակա՞ն է մի կազմակերպութիւն, որի մէջ բուրժուան հաւասարապէս տեղ է ունեցել աշխատաւորի հետ միասին։ Մրդաստանի կոմիտէն 1902ին աշխատել է աւելի հարուստներին գրաւել դէպի ինքը, — որովհետեւ հարուստներից աւելի չատ փող կարող էր ստանալ. եւ աւելի փող ստանալու հոգով տարուած կոմիտէականները բոլորովին չէին ղղում, որ այդպիսով վնասում են տեղական գործին։ — Թոփչեան ապացոյցներ է բերում, թէ այսքան աշխատաւորներ ենք ունեցել եւ ունինք։ — Աչխատաւորներ ունեցել էք, այո՛, բայց ունեցե՞լ էք սոցիալիստական ծրագիր, ա՛յլ բան է աչխատաւորներից կազմուած լինել, եւ ա՛յլ է աչխատաւորական ծրագրով գործել։ Մի աչխատաւոր կարող է ինքնին աւելի խիստ հակաչխատաւորական լինել, քան մէկ ոչ-աչխատաւորը։ Ասում էլ փորձեց ապացոյց բերել, որ Դաշնակցութիւնը իրօք պաշտպանել է բանուորների դասակարգային չահերը. բայց նա մոռանում է, որ Բագուի մարմինները, իրենք անկարող լինելով դեկավարել միայն՝ թոյլ են տուել մեր բանուորներին՝ մնանակցելու գոր-

ծադուլներին: — Անկասկած, եթէ այդ բանուորների խոշոր տոկոսութիւնը չլինէր, նրանք անյապաղ կը հետեւէին Դաշնակցութիւնից: Ես ի հարկէ, չեմ մեղադրում Դաշնակցութիւնը, որ մեծ թափով չէ գործել բանուորական շահերի համար. չեմ մեղադրում, որովհետեւ Դաշնակցութիւնը, անցեալում չէ եղել քաղաքական կուսակցութիւն: Ի զուր չկանանք հաւատացնել, թէ մեր ներկայ սոցիալիստական գործունէութեան չրջանը՝ անմիջական չարունակութիւն է նոյնպիսի մի չրջանի՝ անցեալում: Ռուսական յեղափոխութեան յաղթանակները, որ երկու երեք տարի առաջ սոցիալիզմի կողմնակից չէր, այսօր յարել է նրան: — Այսուհետեւ է միայն, որ պէտք է դառնանք քաղաքական—սոցիալիստական մի կուսակցութիւն: Բայց դառնալու համար, նախ եւ առաջ հարկաւոր է որոշել մեր տեսակէտը՝ ազգայնութեան գաղափարի մասին: Թուփչեանի ասելով մինչեւ այժմ ունեցած մեր ազգայնութիւնը չի հակասում սոցիալիզմին: Սխալ է բոլորովին: Այո՛, ազգայնութիւնը առհասարակ չէ հակասում սոցիալիզմին — բայց միայն այն դէպքում, երբ այդ երկուսի հանգցողութիւնները չէին զատուած իրարից, այլ կազմում են մի ամբողջութիւն: Եւ երբ ասում ենք ազգային պահանջներ — կապուած սոցիալիստական պահանջների հետ — հասկանալի է. բայց երբ ասում էք՝ ազգային կռիւ, անկախ սոցիալիզմից, այս դէպքում՝ այդ առանձնացած ազգայնութիւնը հակասում է սոցիալիզմին: Ես կ'ասեմ, որ սոսկ ազգայնութեան տեսակէտ ունենալ անկարող ենք, քանի որ մենք աշխատաւորական կուսակցութիւն ենք ուղում դառնալ. այո՛ կազմակերպենք հայ մասսաներ միայն, պաշտպանենք մեր ազգային պահանջները, բայց այդպիսով մենք չենք դառնայ ազգային կուսակցութիւն: Արամի այն ասածին, որ կովկասեան չարժումը մի տեսակ յեղափոխական մարզարան է տաճկահայ չարժման համար, — կը դառնամ յետոյ:

Ռոստոմ.— Ես կանգ կ'առնեմ նախ այն կէտի վրայ, երբ Թէ մեր Թուլանալու պատճառը Կովկասում՝ Նախագիծն է: Սա մեր հակառակորդ բուրժուազիայի սիրած փաստարկութիւնն է. եւ մեր այն ընկերների բերանով, որոնք այդ պատճառաբանութիւնն են բերում՝ խօսում է ինքը բուրժուազիան: Իսկական պատճառները դիտմամբ մի կողմը Թողած, բուրժուազիան Նախագիծն է մատնացոյց անում՝ մեզ վնասելու նպատակով: Մուրատը մատնացոյց է անում Ջրաբերդի վրայ, որ տեղի խմբերը, նրա կարծիքով Նախագծի չերկարհւ են կազմալուծուել: Ես էլ յատկապէս Ջրաբերդի վրայ կանգ կ'առնեմ, ապացուցանելու, որ Մուրատի կարծիքը սխալ է միանգամայն: Կազմալուծումը Ջրաբերդում կատարուել է Նախագծից վեց ամիս — մէկ տարի առաջ: Տարօրինակ է, ի հարկէ, որ մենք Թուլացել ենք Ջրաբերդի նման մի վայրում, որտեղ Դաշնակցութիւնը լայնարձակ գործունէութիւն է ունեցել եւ որը ռեակցիայի օրերին, վատ պահեց իր մէջ յեղափոխական ոգին: Որպէսզի պարզ լինի մեզ համար մեր Թուլանալու պատճառը, մենք պէտք է յիշենք Թէ ինչ պարագաներ բարձրացրին կազմակերպութեան նշանակութիւնը Ջրաբերդի չրջանում 1898 Թուի զօրեղ ռեակցիայից յետոյ: Այդտեղ էր, որ զարգացաւ դատարանական սիստեմը (եւ այն աստիճանի որ «Դաշնակցութիւն» ասելով ժողովուրդը մինչեւ վերջին ժամանակները հասկանում էր «դատարան»), սկսուեց Դաշնակցութեան դեկավարութեամբ կուլտուրական գործունէութիւն՝ Թատրոն, դպրոց, գրադարան եւն., բոյկոտ արուեց կառավարութեանը, — այս պարագաները վերակենդանացրին կովկասում մեր կազմակերպութիւնը. իսկ կալուածների գրաւումը՝ եկաւ ամենից մեծ ուժերը: Երբ, սակայն կալուածները վերադարձուեցին, հոկտեմբերեան մանիֆեստը լոյս տեսաւ, որով որոշ իրաւունք էր տրւում ժողովուրդին, մեզանից հետզհետէ հեռացան բոլոր այն տարրերը, որոնց պահանջները կալուածները յետ ստանալուց այն կողմը չէին անցնում. այսպէսով մենք սկսեցինք Թուլանալ, բնական էր այդ Թուլացումը, — իւրաքանչիւր կուսակցութիւն Թուլանում է յաղթանակ տանելուց յետոյ: Ջրաբերդում, մասնաւորապէս, մեր Թուլացման պրոցեսին [ընթացքին] նպաստեց եւ այն հանգամանքը, որ այդ միջոցին մենք փոխել էինք մեր գործելակերպը տաճկահայ չարժման վերաբերմամբ. առաջուայ պէս այլեւս խմբեր չէինք կազմակերպում, ինչպէս՝ Թումանի, Խանի խումբերը, որոնցով մի ժամանակ ոգեւորուելիս են եղել Ջրաբերդում: Ապա կար նաեւ մի ընդհանուր պատճառ՝ մեր Թուլացումների, բոլոր տեղերում. դա տնտեսական տագնապն էր: Կովկասահայ ժողովուրդը տնտեսապէս քայքայուել էր այնքան, որ իր ինքնապաշտպանութեան հրամայական գործի համար իսկ դժուարութեամբ էր փող տալիս: Կրկնում եմ, Ջրաբերդի բոլոր խմբերը կազմալուծուել են նախքան Նախագծի երեւան գալը: Ասում են՝ կովկասեան գործունէութիւնը վնասներ է տուել տաճկահայ չարժմանը: Ես կ'ուզէի, որ ինձ այստեղ մի առ մի Թուէին Թէ որո՞նք են այդ վնասները, որպէսզի ես միջոց ունենամ կէտ առ կէտ խօսել նրանցից իւրաքանչիւրի մասին: Շեչտւում է, որ կովկասեան գործունէութեան պատճառով Դաշնակցութեան մէջ ուժերի չլատում է առաջանում: Ահհասարակ կարծում են, Թէ յեղափոխական կուսակցութիւնը կառավարութեան նման միչտ էլ մնայուն, որոշ ուժ ունի, որին կարելի է ցանկալի կիրառումը տալ: Շատ հասկանալի է, որ Դաշնակցութիւնը գործ սկսելով և կովկասում, չէր կարող իւր բոլոր ուժերը առաջուայ նման յատկացնել բացառապէս Տաճկաստանին: Բայց չնայելով ուժերի կարծեցեալ չլատման, փաստն այն է, որ Դաշնակցութիւնն այնուամենայնիւ օգնութիւն է

հասցրել տաճկահայ չարժմանը՝ աւելի քան երբէք. եւ որուած այդ օգնութիւնը եղել է համեմատաբար մեծ՝ չնորհիւ կովկասեան գործունէութեան. կովկասում սկսած կռիւները հրապարակ հանեցին յեղափոխական բազմաթիւ անհատներ, բարձրացրին ընդհանրութեան ոգին. եւ այս բոլորից տաճկահայ դատը միայն չահ ունեցաւ: Առաջներում, մեր դրամական եկամուտն ամբողջովին յատկացուել է Տաճկաստանին. այդ ամբողջը սակայն, չատ քիչ է համեմատած եկամուտի այն մասի հետ, որ հիմա է յատկացւում (Թուեր է յառաջ բերում): — Այս չպէտք է մոռանալ: Բեռոյ, մեզանից ուժեր է խլել, ոչ Թէ բուն քաղաքական կռիւը ցարիզմի դէմ, այլ ինքապաշտպանութիւնը. սա էր որ զրաւեցրել է ամենքիս, Բիւրոյի անդամներից սկսած մինչեւ Մուրատը, Սեպուհը...: Եթէ կովկասում մի վրանդ կայ տաճկահայ դատի համար, դա ինքնապաշտպանութեան կռիւներն են եւ մենք պարտաւոր ենք ճիգ Թափել, որպէսզի վերջ տրւին այդ կորստաբեր կռիւներին. իսկ վերջ տուած լինելու համար, մենք պէտք է քաղաքական լողունգ [բնաբան] ունենանք, որը կը միացնէ մեզ մեր հարեւանների հետ: Սա մի հրամայողական պահանջ է մեր կուսակցութեան համար: Վարդանը հարց տուեց, եթէ Նախագիծը չհրատարակուէր, ի՞նչ կը լինէր ոչ-աշխատաւորական տարրը.— կը հեռանայի՛ն մեզանից. կալուածական հարցը, հայ-Թուրքական ընդհարումները, որոնք անցողական ազդակներ էին, եւ սրանց վերանալու կամ Թուլանալու հետ միասին, պէտք է Թուլանար նաեւ մեր ուժը: Շահխաթունեանը նկատում է, որ Դաշնակցութիւնը կովկասում քաղաքական կռիւ չէր մղում. այո՛, նա եղել է տաճկահայ չարժման մի օժանդակիչ մարմին, մի կիսա-յեղափոխական կազմակերպութիւն (կովկասում). 1905ից յետոյ միայն նա դառնում է (կովկասում) քաղաքական կուսակցութիւն. բայց մենք միչտ էլ ունեցել ենք յեղափոխական բազա — այլ կերպ՝ մենք չէինք կարող քաղաքական կուսակցութիւն դառնալ: Նախքան կովկասահայ դատը մեզ վրայ առնելը, մենք աչխատել ենք, որպէսզի կազմուի մի այլ քաղաքական կուսակցութիւն, յատկապէս այդ դատը վարելու համար (մեր աջակցութեամբ). դեռ կալուածական խնդրից առաջ մենք փորձել ենք մի այդպիսի ջոկ կազմակերպութիւն ստեղծելու. բայց ասպարէզի վրայ մնացին դարձեալ նոյն դաշնակցականները, որոնք միայն ընդունակ դտնուեցին յեղափոխական կռիւ մղելու եւ կովկասում: Եւ այդ կռուին մենք տուին ազգային ղրոշի, հիմնուելով, սակայն, միայն աչխատաւոր դասակարգի վրայ: Ամէն մի կուսակցութիւն հիմնւում է մի որոշ դասակարգի վրայ. մենք էլ հիմնուեցինք աչխատաւորների դասակարգային ձգտումների վրայ: Ու այս ձգտումների տեսակէտից՝ հասկանում ենք եւ մեր ազգայնութիւնը. մեր դաւանած ազգայնութիւնը՝ մեղուականի ու մչակականի ազգայնութիւնը չէ (բացատրում է ազգայնութեան ըմբռնման աստիճանական փաղերը մեր կեանքի մէջ): «Մեղուն» ազգային է եղել՝ դուտ կղերական տեսակէտից, «Մչակը»՝ բուրժուական, մեր տեսակէտն է այսօր՝ աչխատաւորականը, եւ այս աչխատաւորական տեսակէտից մենք եղել ենք եւ պիտի մնանք ազգային: Մեր դաւանած ազգայնութիւնը տարբերում է բուրժուականից մանաւանդ այսօր, երբ մեր բանակի, աչխատաւորների եւ բուրժուազիայի միջեւ դասակարգային անխուսափելի բաժանումներ են առաջ գալիս: Այս բաժանումները այնքան սուր կերպարանք են ստանում հետզհետէ, որ մեր հակառակորդները սկսել են մօտենալ խուլիգաններին, սրանց մեր դէմ հանելու նպատակով: — Ի վերջոյ մի քանի խօսք նրանց՝ որոնք ասում են, Թէ «բանուորական կոպեկներով օգնած չենք լինի տաճկահայ չարժմանը. չենք ուղում այդ կոպեկները»: Մեզանից ոչ մէկը Թոյլ չպէտք է տայ իրեն՝ արհամարհանքով վերաբերուելու բանուորի կոպեկներին: Ռեակցիայի ճգնաժամային րոպէներին, բանուորական—արհեստաւորական կոպեկները չէի՞ն, որ փրկեցին մեր կուսակցութիւնը. աչխատաւորներն են եղել, որ իրենց քակները միշտ էլ լայն բաց են արել յօգուտ մեր դործի, եւ ուրիշ ոչ մի տարր՝ նրանց չափ չէ նպաստել մեզ երբէք: Ջմոռանանք այս:

Սիգ.— Հարցը հարկաւոր է այսպէս դնել. երբ մենք կը տեսնենք որ Կովկասում մենք հող ունենք սոցիալիստական դործունէութեան համար, մենք պէտք է դործի անցնենք, Թէկուզ այդպիսով վնաս հասցնելու լինենք տաճկահայ դատին: Ես անհատապէս դտնում եմ, որ մեր կովկասեան սոցիալիստական դործունէութիւնը՝ վնասակար է լինելու այդ դատին, բայց եւ այնպէս պէտք է դործենք:

Մուրատ.— Մենք դէմ ենք ոչ Թէ Նախագծին, այլ միայն նրա դործադրութեանը եւ դործադրութեան ժամանակին: Սկսել էին հայ-Թրքական ընդհարումները. մենք սրանց վերջ չտուած, հրապարակ հանեցինք Նախագիծը՝ ռուս կառավարութեան դէմ կռուելու համար, մինչդեռ մենք այդ միջոցներին աչխատել ենք ամէն կերպ՝ նոյն այդ կառավարութեանը ասել՝ որ մենք հաւատարիմ հպատակներ ենք. վերջին ստրժնիկի [պահնորդ, դիւղական ոստիկան] սիրտն ենք ուղել չահել եւ յանկարծ մեր կուսակցութիւնը բացարձակ կռիւ է յայտարարում կառավարութեանը: Այժմ, այո՛, երբ հայ-Թրքական ընդհարումները վերջացել են, կովկասում կարելի է ցարիզմի դէմ ելնել. սկսել նոյնիսկ դասակարգային կռիւ: Միայն Թէ, ես չեմ ուղում, որ Դաշնակցութիւնը գլուխ անցնի այդ դասակարգային կռուին, քանի որ Տաճկահայաստանում Դաշնակցութիւնը չէ կարող ունենալ ոչ մի դասակարգային դործ: Մեր դատը ազգային դատ է: Դասակարգային ոչ մի տարաձայնութիւն տեղ չպէտք է գտնի մեր դործունէութեան մէջ: Արամը կարիք է համարում չեշտելու, որ Կովկասից ինտելիգենտ ուժեր են անցնում

Տաճկաստան։ Բայց այդքան էլ մի հպարտանաք. մեր դատը համամարդկային դատ է եւ ոչ միայն հայերը, այլեւ բոլոր ազդերից մարդիկ կը գնան՝ արիւն կը թափեն այդ դատի համար։ Զիպրիանին, ժորէսը՝ մեզ ապացոյցներ։

Մալումեան։— Եթէ մի կողմ թողնենք կողմնակի մանր առարկութիւնները, էական հարցը հետեւեալն է, թէ Դաշնակցութիւնը կովկասում դործ չպէտք է ունենայ, որպէսզի կարողանայ ամբողջովին նուիրուել տաճկահայ դատին։ Գարզենք այդ հարցը, ըստ էութեան։ Մի պահ մոռանանք որ կովկասում կան Դաշնակցութիւնը եւ Նահապետը։ Գոյութիւն ունի միայն հայ ժողովուրդը, ենթարկուած ռուս բռնակալութեան հալածանքներին։ Եւ այդ ժողովուրդը, որ վաղուց ի վեր տոգորուած է եղել յառաջդիմելու ոգով, կարո՞ղ էր մինչեւ վերջը տանել՝ իր իրաւունքների դէմ սիստեմատիկ կերպով գործադրուող բռնութիւնները, որոնք օրեցօր աւտոկանալով՝ Ալէքսանդր IIի մահից յետոյ վերածուեցին մի ամբողջ հայաջինջ քաղաքականութեան։ Մեր ժողովուրդը, մի քիւրտ ցեղ, մի անբեղեալ դանդուած էր լինելու, որպէսզի չմրոտանար այդ քաղաքականութեան դէմ։ Եւ եթէ դուք, տաճկահայ ընկերներ (ներեցէք «տաճկահայ» դարձուածքս), ընդունում էք, որ կովկասահայերը չէին կարող հանդուրժել՝ իրենց կուլտուրական ձգտումները հարուածող բռնակոլ ռեժիմին, — պէտք է հասկանալի լինի ձեզ կովկասեան գործունէութեան անհրաժեշտութիւնը։ Աննուազ դուք հաշտուում էք այդ անհրաժեշտութեան հետ։ Ապա թէ ոչ քաղաքական ո՞ր տրամաբանութեան հիման վրայ, դուք կարող էք ասել, որ Կովկասում պէտք չէր ակտիւ քայլերի դիմել, յանուն տաճկահայ դատի։ Կարելի՞ է միթէ ասել կովկասահայերին, թէ դուք իրաւունք չունէք ձեր ուժերի եւ միջոցների որոշ մասը ձեր կարիքների համար գործածելու, այլ պարտաւոր էք ամբողջովին տաճկահայ շարժման տրամադրութեան տակ դնել։ Մի այսպիսի առաջադրութիւն ապացոյց է խակ եւ անտրամաբանական մըտածողութեան։ Այս մի կողմից։ Միւս կողմից՝ Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական մարմին, չէր կարող անուշադիր թողնել կուսակցների երկար չարքերը Թուրքաստանում։ յաճախ մենք մեզադրուել ենք ռուսներից, վրացիներից, լեհերից, որ մեզանից ենք նեղ կուսակական, առանց լայն ձեռնարկների դիմելու։ Մինչդեռ միւս կողմից մի այլ մեզադրական է ուղղուում մեզ։ Թէ մենք չատ ենք ընդարձակել մեր գործունէութիւնը Կովկասում։ Չէր կարելի ատեմնափակուել ինքնապաշտպանութեամբ։ պահանջ էր ակտիւ քայլեր անել եւ նախագիծը այդ պահանջի արտայայտիչն է։ Քաղաքական խոշոր ախալ կը լիներ անուշադիր թողնել մի ամբողջ ժողովուրդի քաղաքական իրաւունքների պաշտպանութեան գործը։ Եւ ուրախ պիտի լիներնք, որ մեր կուսակցութիւնը այդ ախալը չտրաւ։

Նահապետեան։— Ի՞նչ պէտք է լինի Դաշնակցութիւնը ապագայում։ Մուրատը դէմ չէ նախագծին, դէմ է սակայն նրա գործադրութեանը։ Բնորոշ կարծիք է, ասել թէ՝ ծրագիրն ինքնըստինքեան, նրա գործադրելն էլ ինքնըստինքեան։ Ոչ, ինչ ծրագիր ունենք, այն իրագործելուն պէտք է ձգտել անմիջապէ՛ս։ — Շուշում եւ այլ վայրերում, ուր տեղի ունեցին հայ–թրքական ընդհարումները, անկարելի էր, ի հարկէ, Նախագծի սկզբունքներով դործել. բայց չէ՞ որ, օրինակ, Ալէքսանդրապոլում, մենք միջոց են ունեցել այդ անելու. բայց չենք արել։ Մեր սկզբունքները պէտք է աշխատել կեանքի մէջ մտցնել, ամէնուրեք, առանց ուշադրութեան առնելու ինչ ինչ բողոքները եւ համակերպուելու սրանց նրանց տրամադրութիւններին. որպէսզի այդպիսով զրոյի չհասցնենք մեր Մրապէրը։ Իւր Մրապէրի դործադրութեամբ, Դաշնակցութիւնը ոչնչով չպէտք է զանազանուի Թուրաստանում գործող յեղափոխական կուսակցութիւններից։ Ես չեմ կարող համաձայնիլ Մալումեանի հետ, իբր թէ հայ ժողովուրդն է, որ կուում է Կովկասում. արդէն անցել է այն չրջանը, երբ ամբողջ ժողովուրդն էր կռիւ մղողը, այլեւս Վրաստան Մամիկոնեանի ժամանակներում չենք ապրում։ Մենք ներկայումս սկսում ենք մի նոր գործ, որը տրամաբանօրէն, երբեք չէ կարելի կապել անցեալի կռիւների հետ։ Ես ասում եմ, իրրեւ դաշնակցական պատգամաւոր, որ Դաշնակցութիւնը առանց զանազան սահմանափակումների պէտք է մի ամբողջական Մրապէր դնէ հրապարակի վրայ եւ այդ Մրապէրը գործադրելիս՝ յետ չպէտք է կանգնի այս կամ այն ժամանակաւոր արգելքի առաջ։ Այս դէպքում միայն նա արժանի կը լինի «քաղաքական» կուսակցութիւն անուան։ Իսկ եթէ հանգամանքների պատճառով, Դաշնակցութիւնը չէ կարող ամբողջ Քափով վարել այսօրուայ կովկասեան գործունէութիւնը, նա պարտաւոր է այդ փաստական գործը յանձնել մի այլ առանձին կուսակցութեան։

Ռոստոմ։— (Նորից չեշտում է, որ այսօր կովկասում բուրժուազիայի եւ աշխատաւոր զասակարգի միջեւ անխուսափելիօրէն բաժանում է տեղի ունենում)։ Եւ ո՛չ թէ միայն մեր կովկասեան գործունէութեան պատճառով՝ բուրժուազիան թշնամանում է մեզ հետարգէն տաճկահայ յեղափոխութիւնն ինքնին, արհամարհանքի է հանդիպել նրա կողմից։ Սկզբում մենք ունենալ ենք սլաւկացուներ՝ բուրժուա ինտելիգենցիայի միջից, բայց հենց առաջին մի երկու տարուց յետոյ, բոլորն էլ հեռացան մեզանից եւ ուժակցիայի օրերին՝ ծագրի առարկայ գարձրին մեր վարած կուսակցութիւնը։ Բուրժուա ինտելիգենտների այս ամօթալի ընթացքի հանդէպ, մենք խնդրուել ենք զայրոյթից եւ պարտական վրայ պայթած ռումբը (1904ին)(31) ո՛չ այլ ինչ էր եթէ ոչ, այդ խորը գայրոյթի մի արտայայտութիւն։ Այսուհետեւ այլեւս ոչ մի կապ չենք կարող ունենալ կովկասահայ բուրժուազիայի հետ, խակ տաճկահայ

հարուստներից՝ հենց սկզբից երես ենք դարձրել։ Մեզ՝ կովկասահայ աշխատաւորներիս՝ մնում է միայն միանալ Թրքահայ աշխատաւորների հետ.— մանաւանդ որ մեր երկու հակառակորդները, երկու երկրների մէջ էլ, բուրժուա դասակարգերը՝ ձգտում են կապուել իրար հետ. լիչեցէք «Մշակ»ում տպուած կոչը Գոլսի էֆենդիներին ուղղուած. հեռու չէ այն օրը, երբ արմենականները կը միանան մշակականներին(32). առնուազն տեղի կ'ունենայ մի այլ նման համախմբում։

Ժամը 1ը լինելով նիստը փակւում է, վիճաբանութիւնների չարունակութիւնը թողնելով յաջորդ նիստին։

64ՐԴ ՆԻՍՏ (4 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Համօ–Մհերեան [Օհանջանեան]։
Ներկայ են՝ 24 ժողովական։
Բացակայ են՝ Մուրատ, Անդրանիկ (հիւանդ), Վարդան։

Ժողովի սկզբում կարդացուեց Վասպուրականի ներկայացուցչի համապատասխան(33) նամակը, որով յայտնում է թէ հիւանդութեան պատճառով անկարող լինելով ներկայ գտնուել Ընդհանուր ժողովին, իր ձայնը տալիս է Վասպուրականի մէջ ընկեր Իչխանին կամ Արամին։ Ժողովը որոչեց՝ որ Դաշնակցութեան կազմակերպական կանոնների 115րդ յօդուածի հիման վրայ այդ չէ թոյլատրուում(34)։

Նախագահ։— Սարհատի գործը քննող յանձնաժողովի երկու անդամները՝ Շահխաթունեան եւ Վահագն հրաժարուել են. պէտք է նորերը ընտրել։

Սրանց փոխարէն ընտրուեց ընկ. Բարսեղեան։ Ժողովը իրաւունք տուեց յանձնաժողովին՝ կարիք եղած դէպքում, խնդրին մօտէն ծանօթ ընկերների եւս կանչել խորհրդակցութեան։

Սկսուեց ընկ. Մուրատի եւ Վահագնի տուած առաջարկի չուրջը յարուցուած վիճաբանութիւնը։

Վռամեան։— Այս հարցը իւր էութեամբ այնքան կարեւոր է, որ չատ առաջ պիտի արծարծուէր։ Աւելի քան անտրամաբանական է երբ պատգամաւորները իրենց տրամադրելի չանելով, իրաւունք են համարում ժողովից դուրս դնելու ընկերներին ընտրել։ Ուրեմն բարոյական տեսակէտով լաւ կը լինի, եթէ բոլոր ընկերները իրենց դնեն Ընդհանուր ժողովի տրամադրութեան տակ։

Շահխաթունեան։— Մեր այդ որոչումով մենք միայն կասկածի ենք ենթարկում կուսակցութիւնը, ուրիշ ոչինչ։ Պահանջ է դրւում, որ մեր բոլոր վճիռների համար պայքարենք կեանքի մէջ եւ ձգտենք իրականացնել։ Ես համաձայն եմ դրան. խակ եթէ պարտականութիւնը իրաւական հողի վրայ դրուի, ես միանգամայն հակառակ կը լինեմ։

Սեպուհ։— Ես առաջարկում եմ յետաձգել այս խնդրի վիճաբանութիւնը, քանի որ առաջարկող երկու ընկերներն էլ այստեղ չեն(35)։ Ժամանանք, ընկերներ, որ Տաճկահայաստանի մասին խօսողների մեծ մասը կը գնայ կռիւս եւ ո՛չ երկիր։ Սահմանից են կողմը անցնելու են միայն երկու հոգի։ Եթէ պահանջ լինի, ես չեշտում եմ այդ, երկիր պիտի անցնեն այն ընկերները, որոնք սկզբունքային հարցեր են որոչում. հակառակ դէպքում այդ բանը պիտի թողնել երկրի ընկերներին։

Թոփչեան։— Խօսում են վարդով ծածկուած եւ փշոտ աճոռների մասին։ Ես ոչ մի տարբերութիւն չեմ դնում այդ աճոռների մէջ։ Իբր թէ կովկասի աճուռը դրաւիչ է.— բայց մի քաղաքական խաղով նա կարող է դառնալ եւ փշո՛տ, իսկ Տաճկահայաստանում ընդհակառակին(36)։ Ես խնդրում եմ աճոռների մասին ոչ մի խօսք չանել, ինչպէս եւ սահմանների մասին։ Մեր առաջ դրուած է մի պատմական կրիտիկական մոմենտ, որի այս կամ այն ելքից կախուած է Հ. Յ. Դաշնակցութեան լինել–չլինելու խնդիրը։ Ի դուր են մեր ընկերները վիրաւորուում։ Այստեղ կայ ժողովրդական դործ, կուսակցութեան պատուի եւ չահի հարց։ Պիտի մի կողմ ձգել երկուութիւնը, հակառակ դէպքում կը կրկնուի այն, ինչ արդէն տեսել ենք Կովկասում։ Այն բոլոր սկզբունքային որոշումները եւ վճիռները, որոնք Ընդհանուր ժողովում մշակուելու են, մեզանից ամէն մէկը պարտաւոր է իւրը ընդունելու եւ նրանց համար կռուելու։ Եւ մեզանից իւրաքանչիւրը ենթարկուելու է Ընդհանուր ժողովի որոշումներին եւ տրամադրելի է լինելու։ Ուրիշ կերպ ես չեմ հասկանում։ Եթէ չլինի այդ, ինձ համար ոչ մի արժէք չեն ունենայ մեր բոլոր նոյնիսկ միաձայն անցկացրած բանաձեւերը։

Մալումեան։— Սա առաջին անգամը չէ, որ նման ձայներ են լսւում։ Ամէն անգամ երբ խօսք է լինում կազմակերպութեան գործունէութեան մասին, ոմանք կարծել են, եւ ցաւալի է որ այժմ էլ կարծում են, թէ Թիֆլիզը, Պարիզը կամ Ժընեւը գրաւիչ են, ուր մարդիկ նստում են հանգիստ եւ հրահանգներ ղրկում։ Թող լաւ գիտենան մեր ընկերները, որ ինչքան արի գործն ունի իւր տեղը կազմակերպութեան եւ մեր քաղաքական չարժման մէջ, նոյնքան եւ մտքի գործը։ Այդ երկուսն էլ միայն նոյն գործի էական մասերն են։ Որքան պատասխանատու է մէկը՝ նոյնքան եւ միւսը։

Սեպուհ։— Ընկերներ, իմ ասածը իրականութիւն է։ Ես կը յիշեմ մի փաստ։ 1901 թուին, երբ Գիւմակը ձերբակալուեց, ամբողջ գործը Վասպուրականում անուշադրութեան մատնուեց։ Ոչ ոք չէր ցանկանում ներս մտնել Երկիր, որովհետեւ, պնդում եմ ես, ասպարէզը փշոտ է։ Անհրաժեշտ է առաջարկուած խնդիրը այդ մտքով վճռել։

Վահագն։— Այդ բարոյական պարտաւորութիւնը խախտուած է միայն վերջին 2–3 տարիներում. առաջ նկատուած չէր այդ: Աւելի քան բնական է, որ մենք, իբրեւ ներկայ սկզբունքների մշակողներ, պարտաւոր ենք, դրանց գործադրութիւնը մեր վրայ վերցնել, քան հեռու ընկերները, որոնք մասն չեն ունեցել ծրագրի մշակման հարցում: Նամանաւանդ կեանքի ներկայ փոթորկալից րոպէում ամէն մէկը պարտաւոր է մեր ուրոյնութիւնները կեանքի մէջ իրականացնելու դերի մէջ էական մասն ունենալ, լինի դա կովկասում թէ Տաճկական մասն ունենալ: Գործից չպէտք է փախչել, սա մեր ահայասանում: Գործից չպէտք է փախչել, սա մեր ահայասանում: Գործից չպէտք է փախչել, սա մեր ահայասանում

65ՐԴ ՆԻՍՏ (4 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Մալումեան։
Ներկայ են 26 ժողովական։
Բացակայ է՝ Անդրանիկ (հիւանդ)։

Օրակարգի է դնւի· Թուիչեանի «Կովկասեան գործունէութիւն» թռֆերատի վիճարանութեան շարունակութիւնը։

Նախքան վիճաբանութեան անցնելը, Ժողովը յարմար գտաւ լսել Դաշնակցութեան պաշտօնական մարմինների՝ Բոլկանի, Ամերիկայի, Վասպուրականի, Նալբանդի, Գանձակի, Իլատի, Ռոսկանապատի, Ապաոամի, Քարի, Մրզատանի, Զրվէժի եւ Եւրոպայի ու Թուրատատանի պաշնակցական ուսանողութիւնների ներկայացուցիչների կովկասեան գործունէութեան մասին։ Ժողովը լսեց նաեւ մի քանի բնկերների անհատական կարծիքները, ուղղուած Ընդհանուր Ժողովին, ինչպէս՝ Դուման, Շահրիկեանի եւ Մարի գրաւոր կարծիքները։

Թումչեան, իբրեւ Թիֆլիսի ներկայացուցիչ, անհրաժեշտ համարեց աւելացնել, որ եթէ Թիֆլիսի բանուորական մէջ կովկասեան գործունէութեան վրայ չէ չէչուած, պատճառը դրա հասկանալի համարուելն է· եւ որ Թիֆլիսի Երկանային ժողովը ծանրացել է առանձնապէս պատմափիլիսոփայական աշխարհհայեացքի վրայ։

Նախագահը խնդրում է այդ բոլոր բանաձեւերը արտագրուած ու առարկրուած յանձնել քարտուղարին՝ տրամաբանութիւնների մէջ անցքնելու համար։

Ապա սկսում են վիճաբանութիւնները։

Համօ — Վիճաբանութիւնների ընթացքում եղել են փաստացի սեմ չգութիւններ, որ կ'ուզէի ուղղել։ Կովկասի Յանձնական Ժողովում, ոչ ոք որոշակի հակառակ չէ եղել Նախագծին· սակայն ճիշդ տանելով՝ ստիպուիլիմին։ Փաստը այն է, որ մեր ընկերներից մի քանիսը անպատրաստ էին, նրանց դիրքը անորոշ էր այդ հարցի հանգէպ, դրա համար էլ ձեռնպահ մնացին։ Արեւելեան Բիւրօն յանձնաժողով եզած հնարաւորութիւն տալ նրանց, բրոշիւրների, թերթերի, խօսքի, պրոպագանդայի միջոցով, որպէսզի յանկարգ Երկանային Ժողովին պատրաստ ներկայանան։ Ընդ· Մուրատը յիշեց մի քանի թուեր, ինչպէս Բաքուում 70·000 բուրքին· դա ոչ թէ նախագծից առաջ է եղել, այլ հետագայում է բանի միջոցներով։ Ընկերներից մի քանիսը, ինչպէս նաեւ Մուրատը ասում են, թէ Դաշնակցութիւնը եղել է մի կոռուպարութիւն։ Դա մի ցաւալի սխալ է։ Ճիշդ է, Դաշնակցութիւնը այդ գերը ստանձնել է մի որոշ ժամանակ, բայց դա նրա նպատակը չէր։ Այդ բանը միայն բոլիտա էր կոռուպարութեան եւ նրա հիմնադրութիւնների դէմ։ Ինձել է արդէն այդ ժամանակը, եւ, այժմ Դաշնակցութիւնը առաջ պիտի գայ իբրեւ քաղաքական–սոցիալիստական կուսակցութիւն, ունենալով իւր ամբողջացած պատմափիլիսոփայական աշխարհհայեացքը, իր իդէալը, իր նպատակակէտը։ Եթէ չլինի այդպիսին՝ այն ժամանակ չէ էլ կարող կոչուել իսկական յեղափոխական կուսակցութիւն։ Մենք կուռւում ենք սոցիալիզմի յաղթանակի համար, սոցիալիստական կարգերի համար, մենք պայքարում ենք տնտեսական անհաւասարութեան դէմ, մի անարդարութեան դէմ, որ հիմքն է բոլոր միւս չարիքների, ամուր յենուելով միմիայն աշխատաւոր մասսաների վրայ։ Ես պնդում եմ ես, միայն այդ ջղուտ աշխատաւորների միջոցով կարելի է վերացնել այդ աղաղակող անարդարութիւնը եւ սոցիալիստական կարգեր հաստատել։ Ի հարկէ, կանգ չպիտի առնել զանազան յեղափոխական բոնի միջոցների առաջ, մեր դրած նպատակին հասնելու համար։ Եւ այդ դատի ամենաանկեղծ եւ նուիրուած պայքարողները կը լինեն միայն նրանք, որոնք ընդունում են սոցիալիստական վարդապետութիւնը։ Դա իմ խորին համոզմունքն է։ Մեր յեղափոխական պատմութիւնն էլ երեւան բերաւ այն փաստը, որ միայն նրանք մնացին հրապարակի վրայ, անյողդողդ իրենց գործին մէջ, որոնք կանգնած էին այդ տեսակէտի վրայ։ Ես չեմ մերժում այն իրողութիւնը որ մեր չարքերում կան չատերը, որոնց քեչդրում է միայն զգացմունքը· բայց եթէ նրանք էլ մօտէն ծանօթանան այդ հասարակական–գիտական ուսմունքին, պիտի ունենան նոյն ըմբռնումը։ Ուրեմն մենք չէնինք կարող ուրիշ բան անել քան ինչ որ արել ենք։ — Դառնում եմ ազգային հարցին։ Եթէ դուք քննէք մեր հիմնական Մրագիրը, ինչպէս եւ Նախագիծը, պիտի նկատէք, որ այդ խնդրի վրայ կանգ չէ առնուած, չէ ընդգծուած բնոյթը։ Ինչո՞ւ։ Ճիշդ է, մեր կուսակցութեան մէջ եղել են քիչ ազգասէրներ, չովինիստ անհատներ, բայց ոչ ամբողջական կազմակերպութիւնը։ Եթէ այդ հոսանքը չէ մտել կուսակցութեան մէջ, չէ զուռնաւորել նրան, այն պարզ պատճառով է՝ որ Դաշնակցութիւնը ունեցել է աշխատաւորական աշխարհհայեացք։ Ազգային ամենալայն ինքնորոշման հարցը ինքնորոշման հասկանալի է եղել, այնպէս՝ ինչպէս անհատի ազատութիւնը, անձի անձեռնմխելիութիւնը։ Այդ արդէն Մրագրից բխում է։ Եւ մենք կարող ենք նրանց միայն ընդունել մեր չարքերը, որոնք կանգնած են այդ տեսակէտի վրայ եւ այդպիսի գործ են տալիս հարցին։ Մանաւորելով խօսքս Կովկասի վերաբերմամբ՝ ի՛ասեմ, մի քայլ չպիտի անել, որը չէ համապատասխանում հիմնական կէտին։ Կովկասցիները չեն կարող անմասն մնալ կովկասեան գործից, դա նրանց կեանքն է։ Դա ռեզուլեան գործ է, որպիսին ունի ամէն մի հայ գաղութը եւ հասուածը։ Բայց ամէն մի հատուածը բնգգրկելու է մեր հիմնական տեսակէտը, մեր պատմափիլիսոփայական ըմբռնումը. գրանք գան գան սոցիալիստական խմբակցութիւններ են, որոնք մինչեւ ամէն մի միջազգային կապերով միւս նման կուսակցութիւնների հետ։ Դաշնակցութիւնը կը լինի հայ սոցիալիստական կուսակցութիւն եւ կը միանայ միւս սոցիալիստ կուսակցութիւնների հետ։ Դաշնակցութիւնը պիտի լինի հայկական ֆրակցիա՝ միջազգային սոցիալիստական կուսակցութեան։

Մուրատ — Համոն ասում է որ Դաշնակցութիւնը ազգային չպիտի լինի։ Հարցնում եմ, մինչեւ այժմ վարած դատը ազգայի՞ն է եղել թէ ոչ։ Ես կ'ասեմ, այո՛, եւրոպական դիպլոմատիայի առաջ դրուած է մեր հարցը իբր ազգային դատ եւ ոչ սոցիալիստական։ Իմ անհատական կարծիքով, Դաշնակցութիւնը եղել է ազգային, այդպէս էլ պիտի չարունակուի· ուրիշ բան է, թէ բանուորներին ու աշխատաւորներին էլ է պաշտպանելու։ Ես դրա դէմ չեմ։ Դեռ 1878 Թուին, Բերլինի վեհաժողովում դրուած է մեր դատը իբր համայն ազգային դատ եւ Թուրքահայերի համոզմունքն այն է՝ որ եւրոպան վերջ ի վերջոյ միջամտելու է։

Ժամանակը ուշացած լինելով, վիճաբանութիւնը ընդհատուեց։

Նիստը փակուեց ժամը 7ին։

66ՐԴ ՆԻՍՏ (4 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է՝ Մալումեան։
Ներկայ են 23 ժողովական։
Բացակայ են՝ Թոփչեան, Ճուչիկ, Վարդան, Անդրանիկ (հիւանդ)։

Շարունակւում են կարգացուել չրջանների կարծիքները՝ Դաշնակցութեան ապագայ գործունէութեան մասին։

Զաւրեան (*Մրզատանի պատգամաւոր*)։— Ես չեմ կարող իմ չրջանի կարծիքները լրիւ ասել չեթէ, որովհետեւ Ժողովը վերջանալու մօտ, մենք ատիկանական աշխատանքի ենթարկուեցինք եւ ստիպուած եղանք ոչնչացնել մեր բոլոր քղթերը, որոնց հետ նաեւ մեր գրչագրութիւնները. հետեւեալ օրերին, մենք նորից գրի անցկացրինք այդ գրչագրութիւնները, բայց չատպով ու առանց բացատրութիւնների։ — Այսքանը միայն կ'ասեմ, որ մեր բոլոր գրչագրութիւնները կազմել են միաձայն, բացառեալ (27) հարցից զատ որի վերաբերմամբ ունեցել ենք 13 ձայն բացատական եւ 4 ձայն դրական։ Ակտրային հարցի մասին խօսելիս (մեր Երկանային Ժողովում), մենք Ցանկհայաստանին զուգադրել ենք կովկասի այն վայրերը, որտեղ գոյութիւն ունի (ինչպէս օրինակ Ղարաբաղում) ոչ–համամասնական սեփականութեան սկզբունքը։

Գիւթթրատեցեակ — Դեւրաճի (Սասուն – Մուշի) կարծիքը։— Մենք տեսնում ենք, որ կովկասեան խնդիրն ուս չլինու եւ արհեստական երեւոյթ չէ, այլ ունի իւր լուրջ չարժառիթները. ուստի կարծում ենք, որ կովկասեան գործը, եթէ նոյնիսկ մեզ եւ Սարուսանի գանգատի ժարմինների ցանկալի էլ լինի, անհնար է կանգնեցնել. մեր կարծիքով այդ չարժումը ունի իւր տեղապատկան պահանջը, ուրեմն եւ հարկաւոր է։ Բայց մեր ենթադրեալ ժամանակ ցոյց տալիքը, անցոզակի կերպով, որ այսօր եւս յեղափոխութիւնը անհրաժեշտ է, որ ունի իւր լուրջ պատճառները, որ գանազան խնդացներ ժարդկանց ապրուցիս չէ· այլ մի բնական երեւոյթ, որ սասալ է եղել սասնկական ծանր եւ անսանելի ազդեցիկ։ Բացի դրանից, այսսեղիները մի նոր երեւոյթ չէ, այլ ունի իւր անցեալը, ներկուած հարիւր հազարաւորների արիւնով, սրտարդուած հազար ու հազար նահատակների կեանքով· մի պատճանութիւն կը լինէր քէ՛ մեր եւ քէ մեր կողմից, չնանչել երկուսի էլ՝ կովկասի եւ Տաճկահայաստանի գործունէութիւնը։ Իսկ եթէ ճանչենց, պարտաւոր է ուժեղը օգնել։ Այստեղ կայ Հայկական Հարց· իսկ եթէ ջհայկականը դուր չէ գալիս, հաշուեցէք մի լուրջ գաղտկարգի հարց, որին պարտաւոր է օգնել եթէ ոչ հայը, գոնէ իսկական մարդը, որը քէկուզ ազգային պատգարին էլ բնդունելու չլինի»...

(*Այս կարծիքն ամփոփող տեղեկագրի տակ ստորագրուած են՝ Ռուբէն եւ Տատրակ, Բարձրանդակ – Դուբաքի կենսարոնական կոմիտէի կողմից*)։

Միհասեան — Այստեղ կարդացուած բոլոր բանաձեւերին մէջ, տանկահայ դատը չիրթեւում է կովկասեան գործունէութեան հետ եւ այդպիսին հարցը՝ դասակարգային պայքարի հետ, ազգայնութիւնը համարելով մի տեսակ գարտուղութիւն։ Մեր դատը, քէ՛ ազգային, քէ՛ համազգային եւ քէ միջազգային է։ — Մի պատմական հայեացք ձգենք մեր անցեալի վրայ, հասկանալու համար մեր ազգայնութեան էութիւնը։ Մեր չարժումը՝ վերեւի՞ն է սկսուել, քէ ներքեւից։ Մի փոքր հետեւողներն անցննենք, կը տեսնենք, որ վերեւից է սկսուել։ Հայ ժողովուրդի տնտեսական հանգամանքները նախաչարժիչ պատճառներ են մեր ազգային հարցի սրծարծումին։ Երբ հայ ժողովուրդը տեսաւ, որ պետական երկրի արդարադատութեան տեսակէտով, յոյս չկայ հայ ժողովրդի բարելաւման, հայ ժողովուրդը տուաւ անոր քաղաքական ազգային բնաւորութիւն։ Նեղսէս պատրիարքը հայ բուրժուաների ալակցութեամբ նուիլագործեց գայն, միջազգային սեղանի վրայ դնելով եւ խլելով Բերլինի դաշնագրութիւնը։ Ասում, տանկահայ բուրժուազիան բացատապէս իւր տասմոքի հոգսերումն է տարուած եղել։ Չէր հետաքրքրուում ազգային քաղաքական հարցերով։ կային չատ բուրժուաներ, որոնք հաշտուել էին այն մտքի հետ, քէ՝ մեր ապագան, ամբողջ Թուրքիայի ապագայի մէջն է։ Երբ սակայն մեր դատը միջազգային ատեանին յանձնուեց, բուրժուազիան, յոյսը կորած Թուրքիոյ բարեհաստատումներից, յարեց նրան։ Գոլսի բուրժուազիան իր ձեռքն առաւ Հայաստանի կրթական գործը եւ նպատակ կրթական ընկերութիւններու, դպրոցներու եւն. հիմնուելուն։ բայց քէ, մեծ հաւատ էր տածում դէպի եւրոպական դիպլոմատիան, քէ սա ցանկալի լուծումն կը տայ հայկական դատին, այլ հաւատը մի քէտրիա էր, որը դժբախտաբար կ'ուշանար իրականանալ։ Միւս կողմից էլ, հետզհետէ այն համոզումը սկսեց տիրապետել, քէ առանց դէնքի ու արիւն քափելու՝ հայկական հարցը անկարող կը լինի զբաղեցնել Եւրոպայի դիւանագիտութիւնը։ 1885ին աւստրիական արտաքին գործերի մինիստրը հրապարակով յայտարարեց, քէ՝ եմինիւ որ արիւն չքափէ, յոյս մի դնէք Եւրոպայի աջակցութեան վրայ։ Այսօրինակ յայտա-

բարութիւնների, ի հարկէ, իրենց աղդեցութիւնն էին անում մտքերի վրայ. եւ ահա ռուսահայերն եղան, որ եկան, թէորիայից ու ցանկութիւններից դործի անցան: Այս բոլորից յետոյ, սխալ է կարծել, թէ տաճկահայ յեղափոխական չարժումը՝ սկզբից հենց սոցիալիզմի ճանապարհումն է առաջ մղուել: Սոցիալիստական սկզբունքներ են ունեցել միայն մի քանի երիտասարդ դործիչներ, եւ սա մնացած է իրենց համար անձնական համոզմունք: Ապա թէ ո՛չ, որի՞ դէմ էր ուղղուելու դասակարդային պայքարը, երբ Տաճկահայաստանում դոյութիւն չէ ունեցել եւ չունի՝ դասակարդային չահերի հակամարտութիւն: Իրողութիւնն այն է, որ Թուրքն է կեղեքողը բոլոր հայերին անխտիր: Այնտեղ չունինք մենք պրոլետարիատ, որովհետեւ չունինք եւ ինտուստրիա [ճարտարարուեստ]. վաչխատուներին մի համարձակ չհամապրծող մի դասակարդ, քանի որ նրանք ապօրինի մարմիններն են կամ հիւանդ ուժերի վրայ տղեղ վէրքեր. դասակարդ չեն կազմել ե՛ւ ամիրանները. նրանք սոսկ միջնորդների դեր են կատարելիս եղել պատրիարքարանի եւ կառավարութեան միջեւ: Դասակարդային պայքարի համար հող չկայ Հայաստանում. սոցիալիզմը այնտեղ raison d'être [գոյութեան իմաստ] կ'ունենայ միայն այն ժամանակ, երբ ինտուստրիա ստեղծուի ընդարձակ չափերով: Այսօր Թուրքիոյ մէջ կան հատուկտոր գործարաններ. բայց կարո՞ղ էք դնալ ու եղած հայ բանուորներին սոցիալիստական դաղափարներ ներշնչել. մի որեւէ չարժում առաջ բերելու փորձի համար՝ իսկոյն կը քշեն բոլորին եւ նրանց տեղերը կը տան ուրիշ ադդութիւններին պատկանող բանուորներին: — Կայ հողային հարց. բայց նախքան այդ հարկաւոր է փչրել քաղաքական բռնութիւնների չղթան: Շեչտում եմ, մեր չարժումը ունի դուտ ազդային քաղաքական բնաւորութիւն եւ մեր ազդայնութեան ամբողջութիւնը մենք չպէտք է զոհենք դասակարդային վաղահաս նկատումներին: Դասակարդային տարաձայնութիւններ եղել են միշտ էլ, մօտիկ ու հեռաւոր անցեալներում, կը լինեն ե՛ւ այսուհետեւ. այդպէս է մարդկային պատմութեան չրջանը: Եւ ինչո՞ւ ձգտել դասակարդայնութեան, մի՞թէ մեր ազդային աղատագրութեան խդձալը բաւական չէ մեզ. այս խդձալը պէտք է լինի Դաշնակցութեան գործունէութեան ահմանը: Այստեղ ասացին, թէ ազդայնութիւնը պէտք է հասկանալ աշխատաւոր դասակարդի տեսակէտից: Բայց ազդայնութեան դաղափարը լայն է. եւ բանուորների լոկ տնտեսական կարիքին բաւարարութիւն տալու ձգտումը՝ երբէք չէ կարող համեմատուել այդ դաղափարին, որ անմիջապէս եւ անհրաժեշտ լուծումի կարօտ է: Մեր գործը լայն հողի վրայ պէտք է դնել. պէտք է ապահովել Հայաստանի ապագան, իբրեւ հայ ժողովուրդի դոյութեան խարիսխ: Մի՛ կարծէք, որ մի ժողովրդի ազատագրման խնդրում բուրժուազիայի մասնակցութիւնը կարեւոր չէ, եւ որ ժողովուրդը ինքը, իւր սեփական ուժերով, կարող կը լինի դործն առաջ տանել. բուրժուազիան աւելի դիտակից է լինում միշտ եւ նա ուրիշ աղդերի ազատագրութեան մէջ նիւթական միջոցներն է հայթայթած: Համոն ասում է, որ մեր դատը՝ ազդային դատ չէ. ես կը պնդեմ հակառակը: Մենք ձգտում ենք ազատութեան եւ աղդային անկախ զարդացման: Եւրոպան միշտ նպաստել է տաճկական բռնակալ ռեժիմի տակ տանջուող քրիստոնեայ աղդերի ազատագրմանը, որպէսզի սրանք միջոց ունենան՝ ինքնուրոյն կերպով զարդանալու: Տաճկահայ դատը՝ նաեւ համազդային դատ է: Կովկասահայ չարժումը համազդային չէ կարող լինել, որովհետեւ նա դասակարդային պայքարի բնաւորութիւն ունի. մի բան, որ բոլորովին չէ հետաքրքրում ամերիկահայերին: Ապա Տաճկահայաստանն է եղած հայութեան պատմական օրրանը, այս հանգամանքն էլ առաւել համազդային է դարձնում տաճկահայ դատը: Մենք հայրենիք ենք ուզում, ճիշդ այնպէս, ինչպէս հրեաներն են ձգտում սեփական հայրենիք ունենալուն Պաղեստինի մէջ. եւ մեր ուզած հայրենիքը Տաճկահայաստանն է: — Իսկ եթէ հայրենիքի զաղափարը չենք ընդունում, Դաշնակցութիւնն այլեւս գոյութիւն ունենալ չէ կարող. այս դէպքում հայերիս ճակատադիրը պէտք է կապել՝ Թուրքերի, յոյների եւ միւսների ճակատադրին: Բայց մենք պէտք է ունենա՛նք այդ դաղափարը. հայրենիքը չէ պատկանում այս ու այն դասակարդին. նա ամբողջ հայ ժողովուրդի հայրենական ժառանգութիւնն է, հաւասարապէս՝ թէ՛ հարուստին եւ թէ աղքատին: Թուրքերը մեզ հալածում են ոչ իբրեւ մի դասակարդ, այլ իբրեւ հայ: Սոցիալիզմը մենք դարձրել ենք մեր իրականութեան համար՝ պրոկրուստի մահճակալ: Նա raison d'être ունի Եւրոպայում, բայց ոչ երբէք՝ մեզ մօտ: Ես անհատապէս չեմ ընդունում, որ սոցիալիզմը լինի մարդկութեան վերջին հանդրուանը. ուրիշները Թող հաւատան այդ բանին: Ո՞րն է սոցիալիզմի իդէոլոգիան [գաղափարաբանութիւնը] — կապիտալիզմի [դրամատիրութեան] Ընջումը, մարդկանց տնտեսական հաւասարեցումը, Ընջելով անհատական սեփականութիւնը: Շատերը կը պնդեն որ սոցիալիզմը միմիայն դասակարդային չահերը պաչտպանում է: Ես չեմ կարծում, որ սոցիալիստն այնքան խենթ լինի, որ միայն գործաւորների չահերը պաչտպանի եւ չանայ ստեղծել բանուորական դասակարդի տիրապետութիւնը. ընդհակառակը՝ համամարդկային է անոր նպատակը. դասակարդերը վերվայր չէջել չէ, այլ համահաւասարել: Սոցիալիզմը, ստամոքսի, այսինքն՝ տնտեսական հարց է. հանեցէք ստամոքսի հարցը մէջտեղից եւ սոցիալիզմը կը վերանայ. սոցիալիզմը իր էութեանը եւ նպատակին մէջ կը ձգտի, ամէն բանէ առաջ, ժողովուրդների տնտեսական բարօրութեանը. սոցիալիզմը մեզ չէ տալիս փիլիսոփայական հարցեր, այդ դուրս է նրա իրաւասութիւնից: Եւ մի՞թէ ստամոքսի հարցով կարող կը լինենք մարդկային հաւասարեցում յառաջ բերել...: Բուրժուազիան ինձ համար դասակարդ չէ, քանի որ նա իւր գոյութիւնը հիմնում է փողի վրայ. վերցրէք նրանից այդ փողը եւ նա կ'աղքատանայ, եւ իւրաքանչիւրը փողի միջոցով հեչտութեամբ կը դառնայ բուրժուա: Դասակարդ է սակայն արիստոկրատիան, որից որքան փող էլ վերցնելու լինենք, չէ կորցնում իւր առանձնաչնորհումը: Իմ կարծիքով պրոլետարիատը պաչտպանել, չէ նչանակում՝ ամբողջ մարդկութիւնը պրոլետար դարձնելու ձգտել. ընդհակառակն, պրոլետարիատը պէտք է բարձրացնել բուրժուական կեանքի բարեկեցիկ ըմբռնումին, եւ իւրաքանչիւրը իւր աչխատանքով ձգտելու է այդ բանին: Ժորէսը ասել է, թէ «ես ունեմ իմ մտաւոր եւ ֆիզիքական պահանջները. ես չեմ ուզում ճնշուող դառնալ»: Գալով այն խնդրին, իբր թէ մեր սկզբնական ծրադրի մէջ, սոցիալիստական ձգտումներ կան, խիստ կերպով չեշտուած — ես կ'ասեմ որ դոքա արդիւնք են եղել Դաշնակցութեան յառաջադէմ վարիչների մասնաւոր համոզմունքին, որոնց հետեւողները չէր կարելի իրականութիւնը. այն մի քանի բրոչիւրները, սոցիալիզմի մասին, եղել են սոսկ դաստիարակող միջոցներ՝ օրուայ ընթացիկ հարցերի եւ ձգտումների հետ ծանօթացնելու նպատակով: Տաճկահայերը միշտ էլ անտարբեր են եղել սոցիալիզմի նկատմամբ, չեչտելով չարունակ, որ «մենք ազդային կռիւ ունենք եւ միայն դրա մասին պէտք է մտածենք»: Հայութի՛ւնը վտանգուած է, եւ ոչ թէ սոցիալիզմը: Միայն քաղաքակա՛ն կռիւը կարող է մեզ համար միջոց լինել ազատութիւն ձեռք բերելու համար: Ոչ ոք չէ կարող մեղադրել մեզ, որ մենք սոցիալիստներ չենք. բոլորն էլ, ով ծանօթ է տաճկահայ իրականութեանը՝ ժորէսը, Վիվիանին եւն., միանգամայն արդարացնում են մեր ներկայի բացասական վերաբերմունքը դէպի սոցիալիզմը: Մենք կոչ ենք անում, աչխարհի բոլոր հայերին՝ մեր համազդային դատին աջակցութիւն ցոյց տալու: Կովկասահայերն եւս պէտք է օդնեն մեզ՝ թէ՛ բարոյապէս եւ թէ նիւթապէս. բաւական չէ, որ գան մեզ սկզբունքներ թելադրեն, ու ինչ որ սակրիւթեան մէջ մտնեն.— «եթէ այսպէս անէք — այնպէս չանէք»: — Ի՛նչ ուզում էք եղէք, սոցիալիստ թէ մոնարխիստ [միապետական], միայն թէ աջակցեցէք մեզ — իրրեւ հայերի: Մենք, ի հարկէ, չենք կարող կանդնեցնել կովկասահայ չարժումը. կ'ասենք սակայն, որ դա վնասում չէ մեր դատին, բայց կրնայ հակազդել: Երկու տարի առաջ որոչուեց, որ մարդիկ ուղարկուեն Սեբաստիա, բայց ոչ ոք չուղարկուեց, որովհետեւ Դաշնակցութիւնն ամբողջովին կլանուել էր կովկասի դործերով: Դաշնակցութեան գործունէութիւնը պէտք է կենտրոնանայ Տաճկահայաստանի վրայ, քանի որ սա է մեր իսկական հայրենիքը. մի ժողովուրդ չէ կարող երկու հայրենիքի համար կռուել: Ուստի կարեւոր է միանգամ ընդմիշտ որոչել մեր դիրքը՝ թէ՛ Տաճկահայաստանում եւ թէ Ռուսաստանում: Դաշնակցութիւնը կովկասահայ չարժման հետ կը չարժի ինչպէս կը պահանջեն տեղական պայմաններն ու պահանջները, որոնք մէկէ աւելի տարբեր կէտեր, պահանջներ ու տեսակէտներ ունեն տաճկահայ դատի հետ:

Խսահակեան.— Մենք սիրում ենք չեչտել, որ անցեալում սոցիալիստ ենք եղել. ուրեմն եւ նոյնը կը լինենք ե՛ւ ապադայում. եւ մասնաւորին հաւատացնում ենք, թէ մեր ներկայ ու անցեալ գործունէութեան միջեւ ոչ մի տարբերութիւն չկայ.— բայց մենք կը պրնդենք, որ այդ այդպէս չէ, անցեալում մենք չենք եղել ո՛չ սոցիալիստ, ոչ էլ նոյնիսկ յեղափոխական: Փաստերը չատ են պերճախօս: 1902ին, մի քանի ընկերներ առաջարկում են ակտիւ գործունէութիւն սկսել Կովկասում, բայց կտրուկ մերժում է տրւում կուսակցութեան կողմից: 1903ի չարժումները, կալուածների պրաման առթիւ, չեն ունեցել յեղափոխական ոգի. մեր պրոպադանդն այդ միջոցին կրել է ոչ-յեղափոխական բնաւորութիւն. եւ երբ կալուածները վերադարձրեցին, կուսի ասպարէզից յետ քաչուեցին նոյն այդ մասսաները, որոնք բողոքներ էին բարձրացրել միաժամանակ: Մեր հարցին, թէ «ինչո՞ւ խոշոր յեղափոխական ձեռնարկներ չենք արել», մեզ պատասխանում են, որ հայ-թրքական ընդհարումները արգելք են հանդիսացել: Բայց չէ՞ որ ընդհարումներից զերծ մնացած վայրերում, միջոց ունէինք յեղափոխական ակտեր կատարելու: Գուրիացիներն էլ ճնչուեցին, բայց եւ չդադարեցին ակտիւ գործունէութիւն վարելուց: Նոյնպէս եւ հրեաները: — Ցետոյ, ինչո՞ւ դուրս եկանք Թիֆլիզի «Համաձայնութեան Բիւրոյից»: Մեր հեռանալու պատճառաբանութիւնը արդեօք վայե՞լ էր մի յեղափոխական կազմակերպութեան: Մեր, անցեալում սոցիալիստ լինելն ապացուցանելու համար, ասում ենք, թէ ահա աչխատաւորական տարրեր ենք ունեցել: Բայց վերջապէս, բուրժուական կուսակցութիւններն էլ աչխատաւորներին տեղ են տալիս իրենց մէջ: «Քրիստոնեայ սոցիալիստներն» եւս իրր թէ բանուորներին պաչտպան են հանդիսանում: — Ոչ, մենք վարել ենք, միայն միջակ տեսակի սոցիալ-տնտեսական քաղաքականութիւն: Այսուհետեւ, այո՛, մեր գործունէութիւնը պէտք է լինի դուտ դասակարդային, եւ մեր գործունէութեան սոցիալիստականութիւնն այնպէս պէտք է չեշտուած լինի, որ կոզմնակի մոմենտներ, վայրկեան անդամ չկանդնեցնեն մեր յառաջխաղացութիւնը: Մեր կուսակցութեան միջից պէտք է դուրս դան այն տարրերը, որոնք իրենց սկզբունքներով համաձայն չեն կուսակցութեան աչխարհահայեացքին: Եւ ես յոյս ունեմ, որ մեր յաջորդ Ընդհանուր ժողովում, եթէ միայն այդպիսին տեղի ունենայ, չէնի մտքերի այն խառնաչփոթը, որպիսին տեսնում ենք այստեղ:

Զարդարեան.— Իմ համոզումնէն է, որ Կովկասն իրաւունք ունի իր գործը տնօրինելու այնպէս, ինչպէս ինքն է ուզում: Բայց մենք այն հրամայական հարցը կը դնենք միշտ, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ պէտք է լինեն կովկասահայ եւ տաճկահայ դատերը: Այս հարցը մեզ մտահոգութիւն է պատճառում: Մեր դատը պէտք է մնայ ոչ-դասակարգային, այլ ընդհանուր ազգային: Ես չեմ կարող համաձայնել ընկ. Համոյի հետ, որ մեր չարժումը պէտք է լինի միջազգային յեղափոխութեան մի ֆրակցիա: — Ինչ որոշում կ'ուզէք առնէք Կովկասի վերաբերմամբ. իսկ հերու դատերի փոխադարձ յարաբերութեան հարցի մասին կը խօսեմ յետոյ:

Իշխան.— Այստեղ այնպէս են նկարագրում Դաշնակցութիւնը, կարծես թէ նա դուտ սոցիալիստական կուսակցութիւն է եղել: Բայց այդպէս չէ. մենք չենք կատարել ոչ մի սոցիալիստական գործ: Մեր ծրագիրը սոցիալիստական է, — այս դեռ բաւական չէ, ասելու, թէ գործնականում եւս եղել ենք սոցիալիստական կուսակցութիւն: Տաճկահայաստանում մեր պրոպագանդան տարել ենք դուտ ազգային ուղղութեամբ. իսկ Կովկասում եղել ենք միայն օժանդակող մարմին, եւ այնքան հեռու սոցիալիզմից, որ հնչակեանների հետ վիճելիս մենք նրանց մեղադրելիս ենք եղել, որ նրանք սոցիալիզմի սկզբունքներով են ուզել գործել: Կուլտուրների պրսման առթիւ, ցոյց տուած մեր դիմադրութեան մէջ՝ սոցիալիզմի մասին խօսք չէ կարող լինել: Միայն Նախախիճն է որ պարզորոշ կերպով սոցիալիստական ուղղութիւն է մտցրել մեր գործունէութեան մէջ: Ի՞նչ սկզբունքներով է հարկաւոր գործել այսուհետեւ: Հարցի պատասխանը պարզ է, — պէտք է գործել մեր Ծրագրի ոգով. մենք պէտք է յենուենք աշխատաւոր դասակարգի վրայ եւ պաշտպանենք նրա շահերը: Այլ խնդիր է, ի հարկէ, երբ համազգային որեւէ վտանգ է առաջանում. այսպիսի արտակարգ եւ կրիտիկական վայրկեաններում, մենք առժամանակ բլոկ [bloc] կը կազմենք այլ տարրերի հետ: Ազգային կը լինենք այն մտքով, ինչ մտքով որ հասկանում են բոլոր սոցիալիստները:

Վռամեան.— Մենք ուզում ենք այստեղ որոշել մեր գործունէութիւնը: Չենք եկել այստեղ, ոչ իբրեւ սոսկ քէորեւորկոններ [տեսաբաններ], քանի որ վճռելու ենք մեր ժողովուրդի բախտը: Մեր քաղաքական կուրսը Տաճկաստանում սկսել է դաշնագրերից շատ առաջ. 1870ի պատրիարքարանի տեղեկագրերը, որոնք տնտեսական բացայայտ չեշտ ունէին, Սահմանադրութիւնը, — սրանք այն նախապատրաստական շրջանն են կազմել, որից յետոյ միայն, ասպարէզ եկան «Հնչակը» եւ «Դաշնակցութիւնը»: — Ոմանք ասում են, որ Դաշնակցութիւնը բացառապէս Թուրքաց Հայաստանի համար է առեղծուել: Սխալ է այս կարծիքը: Հովանոցակ հայութիւնը, Պոլսից մինչեւ Թիֆլիս եւ Ղիմխանին, ընդհանուր ձգտում է ունեցել, իւր գոյութիւնը ապահովելու: Առաջ հայերը յոյս էին դրել ռուս կառավարութեան վրայ, թէ սա կատարելու է իրենց փափաքը. բայց երբ Ռուսաստանը դրժեց իւր բոլոր խոստումները, հայերը իրենց աչքը դարձրին դէպի Տաճկաստան: Ասել է, թէ նախքան տաճկահայ ինքնավարութեան հարցը՝ սրդէն գոյութիւն է ունեցել ռուսահայ ինքնավարութեան գաղափարը. առաջ կարծել ենք, որ փրկութիւնը գալու է Ռուսաստանից, բայց յետոյ ընդհակառակը: Կրկնում եմ, որ Դաշնակցութիւնը միայն օսմանեան Հայաստանի համար չէր, որ հրապարակ եկաւ, այլ տառապող հայութեան: Դաշնակցութեան մէջ մտան անխտիր ե'ւ Ռուսաստանի ե'ւ Տաճկաստանի հայերը: Իսկ եթէ մեր Ծրագրի մէջ կովկասի մասին խօսք չէ եղել, պատճառն այն էր, որ մենք անհրաժեշտութիւն ենք համարել կռիւ յայտարարել ռուս կառավարութեանը մի այնպիսի ժամանակ, երբ թոյլ էր ռուս յեղափոխական չարժումը: Սխալ է, իբր թէ Դաշնակցութիւնը միայն Տաճկահայաստանում ունի պատմական միսիա: Ինձ համար գոյութիւն ունի մի ընդհանուր Հայաստան, առանց սահմանային բաժանմունքների՝ բռնակալների ձեռքով կատարուած: Ես այս ասում եմ իբրեւ հա'յ: Այն ընկերները, որոնք կարծում են թէ տաճկահայերը դէմ են կովկասահայ չարժմանը, լաւ կը լինէր, որ այդպիսի մտքեր այլեւս չարտայայտէին այստեղ: Տաճկահայերը կ'ընդունին եւ կը պնդեն, որ Դաշնակցութիւնը իրրեւ համահայկական կուսակցութիւն, պատրաստ է անցնել եւ ա'յդ չարժման դլուխը: (Ես յետոյ կը խօսեմ, թէ ինչո՞ւ տաճկահայ եւ կովկասահայ դատերը հարկաւոր է կապել իրար հետ): Տաճկահայաստանում մենք վարել ենք միայն անձնատուկն–քաղաքական կռիւ, քանի որ դասակարգային պայքարի համար բնաւ հող չէ եղել այնտեղ: Ի հարկէ, եթէ Կովկասում այդ հողը արդէն պատրաստուած էք գտնում, սկսեցէք դասակարգային պայքար, դէմ ոչինչ չունենք: Բայց եւ այնպէս, մենք չենք կարող ժխտել դասակարգային կռուի դաղափարը, Տաճկահայաստանի վերաբերմամբ, քանի որ դասակարգային ըմբռնումն արմատացած է մեր ժողովուրդի մէջ. հարուստները չեն, որ վարում են մեր դատը (ծափահարութիւններ): Բուրժուա կոչեցէք նրանց, ամէրա, կղերական կամ այլ ինչ՝ խոստումներ են տուել, բայց ո'չ մէկը դրանցից չեն իրագործել: Եւ ես այսօր տաճկահայ չարժման հիմքը տարբեր չեմ գտնում կովկասեանից, մենք ունենք Թուրքիայում խոշոր թուով գիւղացիութիւն, որն եւ իր ուսերի վրայ է տարել գործի ծանրութիւնը: Այս հարցը մենք աշխատել ենք արծարծել, օրինակ, Ամերիկայի մեր մամուլում. բայց մեր լուսաբանութիւնները գիտական հողի վրայ չեն եղել. մենք երբէք «բուրժուա» բառը չենք էլ գործածել, մի անգամ ընդմիշտ ժողովրդական զանգուածները կոչելու համար բուրժուներու գործակցութեան այնքան

ադիտաբեր պատրանքէն, որով ցարդ օրօրուած են եղել իրենք: Այսօր պարզենք, ամբողջացնենք մեր դասակարգային սկզբունքները, սրա դէմ ես անհատապէս ոչինչ չեմ ունենայ. միայն թէ, մեր մշակած թէորիաները հարկաւոր է դլուխութեամբ մօտեցնել ժողովրդին. մենք իրականութիւնը պէտք է աչքի առաջ ունենանք միշտ, եւ ոչ իբրեւ ազանդաւոր երեւան դանք: Մենք ամէն օր ականատես ենք, թէ ինչպէ'ս քաղաքակիրթ երկիրներու ընկերվարական կուսակցութիւնները (Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա) աներկդիմի յայտարարած են միշտ, թէ իրենք իրենց աչքատաւոր դասակարգի կուլտուրան եւ հայրենիքը պաշտպանելու են իրենց արիւնով, ամէն անգամ երբ օտար նուաճումի մը սպառնալիքի առջեւ դտնուին: Որքան աւելի եւս մե'նք, որ անկախ հայրենիք չունենք եւ թշնամիներով չրջապատուած ենք.— ուստի Դաշնակցութիւնը պարտաւոր է հայրենիքի դաղափարին կառչած մնալ, պատմական հողի վրայ ինքնավարութիւն պահանջելով: Այդ տեսակէտով մենք աղդային ենք եւ պարտաւոր ենք յայտարարել: Ընկ. Համոն ալ, որ այնքան հակառակ խօսեցաւ «աղդային» բառին, ստիպուած է սակայն ընդունելու, որ իրենց կուիւը Կովկասի մէջ դուտ ազդային եղած է, — դպրոցներու, կալուածներու խնդիրը, դաղթականներու վերադարձի հարցը, թատրոնական եւ դրպիտութեան ընկերութիւններու կազմումը, եւն.: Մենք ունենք հայութեան պատմական դատ մը, որուն անբաժանելի մասերը կը կազմեն տաճկահայ եւ կովկասահայ դատերը: Այդ դաղափարով միայն կրնանք կապել հայ դաղութները երկրի դատին հետ. եթէ այդ իդէալը չդնենք, տնտեսական պայքարը չի կրնար հրապուրել դաղութները, որոնք ինքնին արդէն բաւեկեցիկ են. այն ատեն կ'իյնանք հրեաներու օրին. սիոնիզմին հակառակ են այսօր բոլոր բաւեկեցիկ հրեաները, չհաւատալով քաղաքական վերածնութեան հնարաւորութեան Պաղեստինի մէջ: Դաշնակցութիւնը պատմական հայրենիքի վրայ ապրող սոփատանջ ու խեղճ ժողովրդի տնտեսական դատը չէ, այլ տառապող հայութեան տնտեսական ու քաղաքական ազատագրութի՛ւն դատը՝ պղպային կուլտուրայով անկախ հայրենիքի մէջ: Այդ իմաստով է, որ ես հակացած եմ համահայկականութիւնը, որ այնքան քաջքշուքների տեղի է տուած կովկասի մէջ: Գալով այն կէտին, որ պէտք է քննել, թէ այդ երկու դատերը կը վճռաբե՞ն իրար, ինչպէս հարցուց ընկերներէն մէկը — բնական է, ո'ր տեսակէտի վրայ ալ կանդնելու ըլլանք — դասակարգային, թէ ազգային —, պէտք է իմանալ թէ իրար կը վճռաբե՞ն թէ ոչ: Համաբաշխութիւնը հասկանալի է միայն փոխադարձ օգտակարութեան պարագային: Ես կը կարծեմ, որ կովկասահայ դատը տաճկահայ դատին չվճռաբեկէ դատ, ընդհակառակն, պիտի օդնէ: ա) Ճգնային համաբաշխութեան մեծ ազդակ մը պիտի ըլլայ, մեր ժողովուրդի յոյսերը մեռ պահելու դիտակցութիւնը՝ անվրդով, ապահով: Տաճկահայ դատը համազգային դատ մը եղած է, բոլոր հայերու գործակցութեամբ: Երկու տարբերու բաժանումը այն հետեւանքը կրնայ ունենալ, թէ տաճկահայոց դատը դաղարած է այլեւս կովկասահայը հետաքրքրելէ եւ ան ալ այսպիսի տագնապի պահուն: Այդպիսի կասկած մը աղիտաբեր կրնայ րլլալ հայութեան երկու հատուածներուն համար: բ) Արտաքին քաղաքականութեան տեսակէտէն նպաստաւոր է, մեր դատի թշնամիներու համար սովորական եղած է մեզ «ռուսի դործիք» անուանել. անդլիացիք, գերմանացիք յաճախ այդ դրպարտութիւնը ըրած են: Այդ անյաստահութիւնը ինքնին կը ջնջուի: գ) Ռուս եւ Թուրք կառավարութիւնները աւելի զուչաւոր կը դտնուին իրենց արտաքին եւ ներքին քաղաքականութեան մէջ հայերու հանդէպ, իւրաքանչիւր դրացի պետութեան մէջ բնակող հայ հատուածին քաղաքական–ազգային գործակցութիւնը նկատի ունենալով: դ) Թուրք ժողովրդի մէջ հնարաւոր կ'ըլլայ աստիճանաբար նըւաղեցնել ցարդ տարածուած կասկածոտութիւնը հայ տարամերժ չովինիստ նպատակներուն մասին, երբ ընկերվարական ծրագրով միացած գործենք հոն: — Գալով այն հինցած կարծիքին, թէ ընկերվարական կուսակութիւն հռչակելով մեզ, եւրոպական միջամտութիւնը կը դժուարացնենք, — անտեղի կը գտնեմ: Եւրոպական դիւանադիտութիւնը ո'չ մեր կարծիքը, ո'չ կրօնը եւ ոչ լեզուն կը հարցնէ միջամտելու ատեն, այլ իւր քաղաքական եւ տնտեսական չահերը: — Երկու խօսք ալ տաճկահայ պրոպագանդի, գործելակերպի մասին. ես կը կարծեմ որոշ վերապահութիւն պիտի ունենանք, քանի որ Թուրքիոյ հողային հարցը տակաւին ուսումնասիրուած չէ, ուստի գեղչաւոր բլլալու ենք a priori որոչումներ բնելէ, Թուրք հողատէրերը եւ քիւրդ ցեղապետները չգրգռելու աւելորդ կերպով: — Եղրակացութիւնս է՝ Դաշնակցութիւնը ընդունել իրրեւ ազդային ընկերվարական կուսակցութիւն, որ տառապող հայութեան պատմական դատը պաշտպանելու կոչուած է, երկու երկիրներու քաղաքական եւ հասարակական պայմաններու համեմատ՝ ըստ չելով իւր գործելակերպը:

Նիստը փակւում է:

67ՐԴ ՆԻՍՏ (5 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Թոփչեան:

Ներկայ են 24 ժողովականներ:

Բացակայ են՝ Մուրատ, Սեպուհ, Անդրանիկ (հիւանդ), Գուրեան:

Նախագահ.— Այսօր եկաւ Զիֆանի ներկայացուցիչ Գայիկ [Ստ. Տէր Մկրտչեան]:

Ժողովը չարունակեց Քերի մնացած վիճաբանութիւնը։

Շահխաթունեան.— *Բոլոր խօսողներն էլ, ասես, ձկտում են մի նպատակի, — ցոյց տալու, որ տիրող տեսակէտը ազգային հարցի վերաբերմամբ չէ համապատասխանում այն կէտերին, որոնք չեչտուած էին Նախագծում եւ այժմ էլ աւելի չեչտուելու են։ Ես ընդունում եմ, որ չատերը ազգային հարցի տակ ուրիշ բան են հասկանում։ Ես եւ Համոն բովանդակութիւն ենք տալիս ազգային հարցին։ Անկարելի է զուգընթացաբար առաջ տանել ազգային եւ դասակարգային տեսակէտները։ Այն պահանջների համար, որոնք դրւում են ժողովրդի իրաւունքները պաշտպանելու եւ խլուածները յետ գրաւելու, ես եւս պայքարելու եմ ձեզ հետ։ իսկ երբ ասւում է՝ Թէ Դաշնակցութիւնը տարբեր է միւս սոցիալիստական կուսակցութիւններից, ահա այդտեղ մենք բաժնւում ենք։ Միշտ սովոր են այդ հարցը ըմբռնել առանց չեչտուած բովանդակութեան։ Այդ լինում է արդէն մի ամբողջ ազգի պաշտպանութիւն, ուրիշ խօսքով հակադրութիւն սոցիալիզմի։ Ես չեմ ասում հայ բուրժուաներից չատանալ դրամական օժանդակութիւն, այլ Թոյլ չտալ, որ նա ղեկավարէ, քանի որ նա կարող է հեչտութեամբ ազդել անդիտակից աշխատաւոր տարբերին։ Բուրժուան բոլորովին այլ նպատակների համար է գործադրում կուլտուրան, քան աշխատաւոր տարբերը։ Ահա այստեղ է որ չատ ղգոյշ պիտի լինել։ Այնպէս վարել գործը, որ ներհակութիւն չյառաջանայ կուլտուրական եւ դասակարգային չահերի մէջ։ Հայ բուրժուան կարող է հեչտութեամբ չահագործել ազգային հարցը եւ աշխատաւորների դիտակցութիւնը մթնացնել։ Նոյնը չէ կարելի ասել ռուսաց բուրժուայի, քանի որ այնտեղ ազգային հարց չկայ։ Մերձեցում չպէտք է յառաջացնել հայ բուրժուայի եւ աշխատաւորի միջեւ։ Շատ սոցիալիստական կուսակցութիւններ կան, որոնք աւելի լայն պահանջներ են դնում ազգային հարցի վերաբերմամբ (օրինակ լեհ սոցիալիստական կուսակցութիւնը) քան բուրժուաները, քանի որ վերջիններս վախենում են Թէ պրոլետարները ամէն ինչ իրենց ձեռքն առնեն։ Դրէք նոյնիսկ ազատ Հայաստանի պահանջ, էլի չեմ ասէ, որ ազգային է, եթէ ի հարկէ, աշխատաւորների չահերի տեսակէտից էջ մօտենում խնդրին։ Ես ասում եմ, մեր կուսակցութիւնը դասակարգային է եւ այդպէս էլ պիտի կոչել նրան։ Ոմանք կարծում են, որ սոցիալիստ պրոլետարների առաջ գալով է երեւան եկել, ուրեմն հիմքն էլ նրանք են։ Սոցիալիզմի մէջ կան հոսանքներ։ Ես պատկանում եմ այն հոսանքին, որ ընդունում է բաշխման մոմենտը, Թէ աշխատաւորի արժիւնքը ինչպէ՞ս է բաշխուելու ժողովրդի մէջ, աշխատաւորի՝ որը չէ չահագործւում, որը, ինչպէս ինդուստրիական պրոլետարը, տալիս է յաւելեալ արժէք կապիտալիստ բուրժուային։ Գիւղացիութեան մի խոշոր բաժինը այս աստիճանի վրայ է. նա էլ վարձու բանուոր է. ունի միայն օրուայ պարէն։ Այս է իմ տեսակէտը։

Արամ.— Նախքան բուն հարցին անցնելը, ես խնդրում եմ, «մեր» եւ «ձեր» հարց մէջտեղ չբերուի, ամէն ոք, ով իրեն դաշնակցական է համարում, եւ սրտին մօտ է տաճկահայ դատը, իրաւունք ունի խօսելու։ Ընկ. Մինասեանը գովասանական խօսքեր է ուղղում հայ բուրժուաների հասցէին, ընդունելով նրանց տաճկահայկական դատին հիմնադիրներ՝ ուխտնական Թուերին։ Դա մի չրջան էր, երբ բուրժուաները չէին դիտակցում իրենց դասակարգային չահերը. բայց այդ, մեր դատը այդ ժամանակամիջոցում քաղաքական հարց չէր, այլ սոսկ կուլտուրական. իսկ քաղաքական դոյն ստացաւ այն ժամանակ, երբ նրանք տեսան, որ բալկանեան փոքրիկ ժողովուրդները ազատութեան դիպլոմատիական [դիւանագիտական] ճանապարհով. խրախուսուած այդ օրինակից, նրանք ուղեցին էժան ազդասիրութեամբ ձեռք բերել ազատ Հայաստան. իսկ յետոյ, երբ իրօք անկարելի եղաւ այդքան հեչտութեամբ Հայաստան ազատել, մեր բուրժուները ոչ միայն հեռացան այդ ասպարէզից, այլեւ միացան տաճիկ կառավարութեան հետ՝ յեղափոխութեան դէմ։ Մինասեանն ասում է, Թէ մեր դատը քաղաքական հարց է, յետոյ էլ աւելացնում, եթէ տնտեսական ապահովութիւն ունենայինք Տաճկահայաստանում, չէինք ձգտի քաղաքական ազատութեան։ Այո՛, հենց այժմ էլ մեր հարցը քաղաքական է, բայց հիմքը տնտեսական։ Տաճկահայերին դէպի կռիւ մղում են սովը, քաղցը, տնտեսական պատճառները։ Ասում են, որ Դաշնակցութիւնը կոչուած է Բերլինի դաշնագիրը իրականացնելու։ Բայց չպիտի մոռանալ, որ դա մեր նպատակը չէ, այլ միջոցներից մէկը. դա միայն մի էտապ [փուլ] է։ Մին էլ ասում են, կրկնելով Հայրիկի, Վարժապետեանի կարծիքը, Թէ մեր հարցը ամբողջապէս Եւրոպայի միջամտութիւնից է կախուած. սբխալ է այդ։ Նշանակութիւն չունի պետութիւնների դիրքը դէպի մեր դատը, չպիտի ղեկավարուել եւ առաջնորդուել եւրոպական քաղաքականութեամբ։ Ուրիշ բան է, Թէ Երկրի դրութիւնը Տաճկաստանում այն բնոյթն ստանայ, որ տնտեսական եւ քաղաքական սեփական վնասների պատճառով ստիպուած լինին միջամտելու։ Ծաւելով լսեցի այն խօսքերը, որ իբր Թէ Բերլինի դաշնագրի իրագործումով իր վախճանին է յանդում մեր հարցը։ Ահա այստեղ մենք իրարից խիստ բաժանւում ենք։ Ընդհակառակը, գոնէ ինձ համար խիստ պարզ է, որ Բերլինի դաշնագրի իրագործումից յետոյ, մեր առաջ կը բացուի նոր գործունէութիւն, դուստ տնտեսական սոցիալիստական գործունէութիւն. մի չարժում, առանց որի ոչ մի երկիր չէ կարող վերածնուել։ Ահա այդ ապագայ չահի տեսակէտից, հենց այժմ սկսելու ենք սոցիալիստական-տնտեսական աշխատանքը, զէթ պրոպագանդայով։ Այո՛, այդ է գլխաւորը. Բուլղարիոյ ազատութիւնից յետոյ բուլղար ժողովուրդը այնքան ոչակցիոն տրամադրութեամբ էր համակուած, այնքան զուրկ էր ազատական հասարակական իդէալներից, որ ապրող յեղափոխական գործիչները ափսոսում էին սրած ղոհողութիւնները։ Երբ մեր ազատագրութիւնից յետոյ հայ ժողովուրդը պիտի խուլիան դառնայ, կ'ասեմ, Թէ նա Թող չազատուի։

Չելալեան.— *Ասում են Թէ տաճկահայը ծոյլ է։ (բացականչութիւն՝ այդպիսի բան չէ ասուել)։ Ես կ'ասեմ, որ նա աչխատասէր է, եթէ բաղդատելու լինէք Տաճկաստանի միւս ժողովուրդների հետ։ Չեմ սբխալուի, եթէ ասեմ, որ մի խոշոր մասով հայը կ'ապրեցնէ Տաճկաստանը՝ հովիւէն սկսած մինչեւ Սուլթանը։ Եթէ այժմ նա քաղցած է, պատճառը այլ է։ Տաճիկ կառավարութիւնը կ'ուզէ բնաջինջ անել հայ ժողովուրդը արհեստական սովերով։ Գալ այստեղ եւ ասել այն, ինչ իրական հող չունի եւ նրանց չէ վերաբերում, ատոր ես հակառակ եմ։* Գալով 61րդ յօդուածին, ասել եմ, էլի կ'ասեմ, որ քանի ապրում ենք չպիտի դրանից ձեռք քաչենք։ Եւրոպական միջամտութիւնը կարեւոր ազդակ մ'է։ Ճիշդ է, Ռուսիան հակառակ է, բայց դրա դիմաց կան պետութիւններ, որոնք միշտ էլ համակիր են եղել մեր դատին եւ նոյնիսկ նրանց տնտեսական եւ քաղաքական չահերը կը թելադրեն դործին միջամտելու. իսկ Դաշնակցութիւնը կարող է այդ միջամտութիւնը աւելի արագացնել։ Եթէ մինչեւ այժմ օգտաւոր միջամտութիւն չէ եղել, պատճառը այն է, որ մենք օգտաւոր չենք եղել։ Մեր դատի յենարանն են կազմում, կրկնում եմ, այն դաչնագրերը, որոնք տրուած են յանուն մեր դատի։ Տաճկաստանի եւ Կովկասի դրութիւնը տարբեր է, ուրեմն պիտի լինին տարբեր կռիւ եւ տակտիկա։ Մեր յոյսը դեռ չէ կտրուած Եւրոպայից։ Եթէ կովկասահայերը նոր գործունէութիւն եւ դործելակերպ են ուզում ունենալ, այդ իրենց դործն է. բայց այդ դործելակերպը չպիտի անցնի սահմանի այն կողմը։ Մենք չանալու ենք ժողովուրդը բնաջնջումից ազատել, կեանքի ու դոյքի ապահովութիւն ստեղծել. իսկ դրանից յետոյ միայն նման գործելակերպի մասին խորհել։

Ռոստոմ.— *Մեր կովկասեան գործունէութիւնը սկսուեց ամենաանպատեհ պայմանների մէջ։ Եւ դործին սկզբնաւորութիւնը, չնայած այդ անպատեհ պայմաններին, ունեցաւ յաջողութիւն։ Դա ամենայանդուգն քայլ է, որ արել է մի յեղափոխական կուսակցութիւն։* 1904 Թուին, այդ գործունէութեանը ականատես է տըրւում։ Գայմանները փոխւում են, բռնակալութիւնը մի յայտնի չափով մեղմանում, քաղաքական կուսակցութիւններ ամբանում են իրենց դիրքերում։ Մեր առաջադրած պահանջներից մի քանիսը իրականացել են, մի քանիսը պարզուել եւ չեչտուել։ Այժմ արդէն անմտութիւն կը լինի մեր դրւած դիրքերից յետ քաչուել, մեր ձեռնարկած սոցիալիստական-քաղաքական կուսակցութիւն յետ կանդնել։ Մեր պահանջների մի քանիսը, որոնք մի ժամանակ խիստ էին համաբուում, այժմ դրւում են նոյնիսկ զանազան բուրժուական կուսակցութիւններից, ինչպէս ռամկավարական-սահմանադրականներից։ Այդ բոլորը ապացուցանում են մեր յաղթանակը։ Ճետ կանդնել այդ յաղթական դիրքից, կրկնում եմ, չունի որեւէ հիմք։

Համօ.— *Ուրախ եմ, որ ոչ ոք հակառակ չէ կովկասեան սոցիալիստական-տնտեսական դործունէութեան։* Ընկերներ Շահխաթունեան եւ Իսահակեան նայում են կեանքի վրայ դրքի տեսակէտից. նրանք գիտեն դրքից եւ տեսականապէս, որ կուսակցութիւնները լինում են այսպէս կամ այնպէս եւ այդպէս էլ մօտենում հարցին։ Բայց կեանքը մի քիչ տարբեր է։ Կեանքը ունի իւր առանձնայատկութիւնները։ Պէտք է մօտենանք խնդրին կերպով այդ կեանքին, ուսումնասիրենք այն իւր տեղում եւ ոչ Թէ խիստ դրքերով առաջնորդուենք, ուղղենք դէպի մեր ունեցած աչխարհահայեացքը։ Այս 17 տարուայ ընթացքում, մեր կուսակցութիւնը միշտ էլ առաջ է դնացել. այժմ մեր էտապներից մէկն է, որ պէտք է եղածը արձանագրենք։ Նախագիծը մչակել, դարդացնել, խորացնել եւ դործունէութեան չանձնարարել։ Ես այնդում եմ նորէն, որ Դաշնակցութիւնը, իբր քաղաքական սոցիալիստական կուսակցութիւն, ուննենալու է բոլոր հայկական հատուածների համար մի ընդհանուր ծրագիր եւ մի հիմնական տեսակէտ։ Ուրիշ կերպ անկարելի է հասկանալ։ Դառնում եմ ազգային հարցին։ Ազգային ամենալայն պահանջները կը լինին մեր ամենաառաջնակարգ պատուէրները, ձգտելով այդ իրականացնել։ Մենք կազմակերպելու ենք բոլոր հայ հատուածները, ուր էլ նրանք լինեն, որովհետեւ հայ ենք եւ մենք հեչտութեամբ իրար կը հասկանանք, կապելով իրար հետ ֆետերատիւ կապերով։ Եւ դա կը լինի ի հարկէ աչխատաւորական կուսակցութիւն, միեւնոյն ժամանակ չարաբերութեան մէջ դնելով միւս նման կուսակցութիւնների հետ, Թէ՛ կովկասում եւ Թէ Տաճկաստանում։ Մենք կարո՛ղ ենք Տաճկաստանում լինել սոցիալիստական կուսակցութիւն, վարելով միայն քաղաքական դատ, միանալով պետական ուժիմի դէմ կռուող Թուրք կուսակցութիւնների հետ, առանց նչանախեց անգամ վնասելու մեր սոցիալիստական գործը եւ հակասելու մեր տեսակէտին։

Ժողովը անցաւ բանաձեւերի խնդրին։ Երկար վիճաբանութիւնից յետոյ քուչարկութեան դրուեց ընկ. Թումչեանի բանաձեւը որ հետեւեալն է.

«Ընդհանուր ժողովը, լսելով զեկուցումներ Նախագծի եւ կովկասեան գործունէութեան վերաբերմամբ, եւ մանրամասն բննութեան ենթարկելով Թէ՛ Հ. Յ. Դաշնակցութեան գործելակերպը Կովկասում, Թէ՛ դրա հետ կապուած մի քանի հարցերը, կարծիքների փոխանակութիւնից յետոյ նկատելով հզրակացութեան.

1· Նախագծի ասհմանած ուղիով գործունէութիւնը կովկասում, բխած մեր Ծրագրի ոգուց, կամքի հրամայողական պահանջ է եղել, որ ունենայ է իւր դրական հետեւանքները յօգուտ աշխատաւոր դասակարգի:

2· Հ· Յ· Դ· Դաշնակցութեան յեղակէտը կազմող աշխատաւոր տարրերի շահերը պահանջում են շարունակել ազգիալիստական գործունէութիւնը կովկասում, աւելի լայն եւ աւելի մշակուած սիստեմով»:

Նախ քուէարկուեց ա· մասը, որ ստացաւ 20 ձայն Քէր եւ 5 ձեռնպահ, իսկ հակառակ ոչ մի ձայն: Ապա քուէարկուեց բ· մասը եւ ստացաւ 14 ձայն Քէր եւ 11 ձեռնպահ:

Ապա քուէարկութեան արուեց հետեւեալ բանաձեւը, որ հետեւեալն է·—

«Ընդհանուր ժողովը լսելով ընկ· Թոփչեանի զեկուցումը Դաշնակցութեան կովկասեան գործունէութեան մասին, գտնում է որ

ա· Դաշնակցութիւնը կովկասում սկզբից ի վեր լինելով միմիայն Տաճկահայ դատին օժանդակող մի կազմակերպութիւն, երբ կար տարիներ կովկասում չէ եղել բազմակողմանի կուսակցութիւն եւ միայն վերջին տարիները, շնորհիւ զարգացող բանուորական կեանքի եւ Ռուսաստանի յեղափոխութեան, սկսել է կուսակցական գունաւորում ստանալ, իրեն առաջնորդ ընդունելով այն հիմնական սկզբունքները, որ Դաշնակցութիւնը դրել է իւր 1892ի Ծրագրում եւ կովկասեան Նախագծում: Բայց բազմակողմանի կուսակցութիւն դառնալու պրոցէսի ընթացքում կովկասեան Դաշնակցութեան երեւան հանած գործունէութիւնը թէ՛ բազմակողմանի–ազատամարտի եւ թէ դասակարգային–սոցիալիստական կռուի տեսակէտից անբաւարար է եղել:

բ· Ցառաջիկայում Դաշնակցութեան գործունէութիւնը կովկասում պէտք է լինի զուտ դասակարգային եւ յեղափոխական–սոցիալիստական· ըստ որում նրա Ծրագիրը եւ աշխարհահայեացքը միանգամայն պարզ եւ որոշ պէտք է լինին, եւ նրա սոցիալիստ յեղափոխական գործունէութիւնը այնքան շեշտուած եւ այնքան ազատ պէտք է լինի կողմնակի մոմենտներից, որ ամենակարճ ժամանակամիջոցի մէջ, բոլոր ոչ–սոցիալիստ–յեղափոխական տարրերը իրենց ստիպուած զգան բոլշեւիզմի շարքերը»:

Այս բանաձեւի քէ՛ ա· եւ քէ բ· մասը կը–կը քուէարկուեցաւ՝ ստացաւ ամէն մի մասի համար 5 ձայն Քէր եւ 20 ձայն դէմ:

Քանի որ Թոփչեանի բանաձեւի 2րդ կէտը չանցաւ, դրա կըրկնաքուէարկութիւնը յետաձգուեց, հարցը աւելի լուսաբանելու համար:

Ապա ընկ· Վռամեան ներկայացրեց հետեւեալ բանաձեւը·—

«Ընդհանուր ժողովը, երկար վիճաբանութիւններէ ետք Դաշնակցութեան գործունէութեան վարկանիշը ճշդելու մասին,

Նկատելով որ Դաշնակցութիւնը հիմնուած է Ռուսիոյ եւ Թուրքիոյ հայ յեղափոխական ուժերու գործակցութեամբ, բարկար տարիներ կովկասում չէ եղել բազմակողմանի կուսակցութիւն եւ միայն վերջին տարիները, շնորհիւ զարգացող բանուորական կեանքի եւ Ռուսաստանի յեղափոխութեան, սկսել է կուսակցական գունաւորում ստանալ, իրեն առաջնորդ ընդունելով այն հիմնական սկզբունքները, որ Դաշնակցութիւնը դրել է իւր 1892ի Ծրագրում եւ կովկասեան Նախագծում: Բայց բազմակողմանի կուսակցութիւն դառնալու պրոցէսի ընթացքում կովկասեան Դաշնակցութեան երեւան հանած գործունէութիւնը թէ՛ բազմակողմանի–ազատամարտի եւ թէ դասակարգային–սոցիալիստական տարրերի շահերը պահանջում են շարունակել ազգիալիստական գործունէութիւնը կովկասում, աւելի լայն եւ աւելի մշակուած սիստեմով»:

Նախ քուէարկուեց ա· մասը, որ ստացաւ 20 ձայն Քէր եւ 5 ձեռնպահ, իսկ հակառակ ոչ մի ձայն: Ապա քուէարկուեց բ· մասը եւ ստացուեց 14 ձայն Քէր եւ 11 ձեռնպահ:

Ապա ընկ· Վռամեան ներկայացրեց հետեւեալ բանաձեւը·—

«Ընդհանուր ժողովը, երկար վիճաբանութիւններէ ետք Դաշնակցութեան գործունէութեան ապատակը ճշդելու մասին,

Նկատելով որ Դաշնակցութիւնը հիմնուած է Ռուսիոյ եւ Թուրքիոյ հայ յեղափոխական ուժերու գործակցութեամբ, բարկար տարիներ կովկասում չէ եղել բազմակողմանի կուսակցութիւն եւ տնտեսական ազատագրումին, իր Զորրորդ Ընդհանուր ժողովին մէջ հանդիսաւորապէս կ'ընդունի իր յեղափոխական կռուի դաշտը տարածել նաեւ դէպի կովկաս, ստանձնելով նաեւ կովկասահայ ազատագրումի դատը:

Դաշնակցութիւնը, շեշտելով հանդերձ տնտեսական կռուի անհրաժեշտութիւնը, անվերապահօրէն կը յայտարարէ որ հայ ազգային իրաւունքներու պաշտպանումը եւ զարգացումը կը շարունակէ մնալ իր ծրագրի գլխաւոր կէտերէն մէկը, միանգամայն հայ ժողովրդի պատմական հայրենիքի մէջ ինքնավարութիւն մը անհրաժեշտ պահանջ նկատելով ձեռ բերելիք իրաւունքներու պահպանումին եւ զարգացումին համար:

Դաշնակցութիւնը իր բարոյական եւ տնտեսական պայքարը պիտի շարունակէ մղել հայ աշխատաւոր զանգուածի դասակարգի միջոցով, իր գործելակերպը եւ նուազագոյն ծրագիրը յարմարեցնելով Թուրքիոյ եւ կովկասի ընկերային բարոյական պայմաններուն:

Եւ նկատի ունենալով որ տաճկահայ ժողովուրդը զրկուած է բարոյական տարրական իրաւունքներէ, մինչդեռ պարագան ոյժը չէ կովկասի համար, մանաւանդ սահմանադրական կարգերու հաստատումէն ետք, Դաշնակցութիւնը կը ճանչնայ տաճկահայ դատի գերակշիռ հանգամանքը յեղափոխական ուժերու եւ միւսական օժանդակութեան մեծագոյն բաժին մը յատկացնելով անոր իր գործունէութեան մէջ»:

Բոլոր բանաձեւերի քուէարկութիւնը Թողնուեց յետագայ նիստերին:

Ժողովը փակուեց ժամը 7½ին:

68ՐԴ ՆԻՍՏ (6 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Վռամեան:

Ներկայ են՝ 23 ժողովական:

Բացակայ են՝ Վահագն, Մաշուրեան (Հիւանդ), Մուրատ, Սեդուհ, Անդրանիկ (Հիւանդ):

Ընկերներ Շահխաթունեան եւ Խահակեան զեկուցումներ են տալիս Դաշնակցութեան «բաժանման» խնդրի մասին:

Սկսում են վիճաբանութիւններ:

Թոփչեան·— Ընկերներ Շահխաթունեանի եւ Խահակեանի զեկուցումները որոշ հոսանքի կարծիքի արտայայտութիւն են, եւ քանի որ այդ հոսանքը վերջերս նոյնիսկ կոնկրէտ քայլերի է դիմել Կովկասում, կը բնաւորէ որ կանգ առնել նրա վրայ: Իւրաքանչիւր կուսակցութիւն իւր գոյութիւնը հիմնում է այս կամ այն դասակարգի վրայ, որի ձգտումներին համապատասխան՝ մի որոշ աշխարհահայեացք եւ ծրագիր է մշակում իրեն համար: Դաշնակցութիւնն եւս ունի իր որոշ ծրագիրը, որտեղ արտայայտուած են աշխատաւոր դասակարգի ձգտումները, եւ այս՝ շատ ուժեղ կերպով: Ի հարկէ, կարող են ասել, թէ՝ քի վրայ կարելի է շատ բան արտայայտել, իսկ կեանքում ոչինչ չիրականացնել: Բայց հենց իրականացէք, Դաշնակցութիւնը չէ եղել ապագայ մասին երազող, այլ աշխատաւորական–դասակարգային կուսակցութիւն. Թուրքիայում նա ոչ թէ պանդան ամիրաների ու էֆենտիների չահերն է պաշտպանել, այլ միայն եւ միայն աշխատաւորներինը: Այլ խնդիր է, ի հարկէ, թէ Դաշնակցութիւնը քիչ չափով է իրագործել իր աշխատաւորական գաղափարները, չը–նորհիւ տիրող աննպաստ պայմանների: Դաշնակցութիւնը, իրրեւ դասակարգային կուսակցութիւն, անպայման ունի իւր raison d'être-ը Թուրքիայում· հետեւապէս կովկասում չենք մտցրել մեր կուսակցական գործունէութեան մէջ ո՛չ մի նոր ուղղութիւն· կովկասեան գործունէութեան սոցիալիստականութիւնը եղել է բնական շարունակութիւնը՝ մեր նախկին գործունէութեան: Ընկերներ, զեկուցանողները ասում են՝ «Թուրքահայ գիւղացիութեան վրայ հիմնուելը դեռ չէ նշանակում սոցիալիստ լինել· չէ՞ որ գիւղացիութիւն միշտ էլ եղել է»: Այս հարցի մասին 90ական թուականներին Ռուսաստանում երկար տաք վիճաբանութիւններ են տեղի ունեցել ռուս–մարքսիստների եւ նարոդնիկների միջեւ· սոց·–դեմոկրատները մարքսիստներին ասում էին, թէ գիւղերին մէջ սոցիալիստական գործունէութիւն չէ կարելի, որովհետեւ այնտեղ կապիտալիզմ եւ պրոլետարիատ չկայ, թէ գիւղացիութիւնը բուրժուական տարր է, նա պէտք է տիֆերեն–ցիացիայի [դասակարգացման] ենթարկուի եւ միայն դրանից յետոյ սոցիալիստները կարող են մտնել նրանց մէջ եւ հող դանել գործունէութեան: Սոց·–դեմոկրատ Բելդովը իւր նշանաւոր պրուժքով ըստ երեւոյթին լաւիլաւում էր նարոդնիկութեան ներկայացուցիչներին: Սակայն նարոդնիկները հակառակ դրան գըտնում էին գիւղերը, չարունակում էին իրանց գործունէութիւնը, հաւատացած լինելով, որ սոց·–դեմոկրատների առարկութիւնները անհիմն դարձուածքներ են՝ կրքերից վերցրած, օտար իրականութիւնից բխած, եւ ո՛չ ճիշդ Ռուսաստանի վերաբերմամբ: Եւ ի՞նչ ցոյց տուեց կեանքը· այն՝ որ այն ժամանակ մոլորուած էին սոց·–դեմոկրատները: Այսօր Ռուսաստանի մէջ, մանաւանդ գիւղացիութեան մէջ, այնքան տարածուած ու աղդեցիկ կուսակցութիւնը՝ սոցիալիստ–յեղափոխականները այդ նարոդնիկների հարազատ ժառանգներն են: Ես, ի հարկէ, չեմ ուզում ասել, որ ընկերներն եւս այդպէս են մտածում, քանի որ գիտեմ նրանց մարքսիստ չլինելու մասին: Սակայն նրանց առարկութիւնները՝ թէ Տաճկահայաստանում կապիտալիզմ չկայ, թէ այդտեղի գիւղացիութեան մէջ հող չկայ սոցիալիստական գործունէութեան, — չատ նման են վերոյիշեալին, եւ այնքան անհիմն եւ սխալ, որքան սոց·–դեմոկրատների առարկութիւնները ռուս գիւղացիութեան մասին: — Ընկերները ի դուր են չեչտում, թէ հարիւրաւոր տարիներից ի վեր գիւղացիութիւնը գոյութիւն ունի: Մենք վերցնում ենք այսօրուայ գիւղացիութիւնը Թուրքիայում, որը այսպէս թէ այնպէս կապիտալիզմի օրերումն է ապրում· այո՛, Թուրքիայում, բառի բուն նշանակութեամբ, կապիտալիզմ չէ կայ· կամ աւելի ճիշդ է ասել, չափազանց քիչ է զարգացած· բայց մի՞թէ այդ երկրի վրայ չէ ազդում եւրոպական կապիտալիզմը, որ վաղուց ուժգին թափով ներս է սրչալում Թուրքիայի բոլոր սահմաններից եւ արդէն սրմատներ է դցել նրա սրտում, երկաթուղիական եւ այլ ձեռնարկների միջոցով: Ապա ընկերները մոռանում են, որ Թրքահայերից մենք ունենք պրոլետարիատ· չլսեմանա՛ք: Ամերիկայի, Կովկասի, Բուլղարիայի սահմաններում կան բազմաթիւ բանուորներ, որոնք այդերին չարունակ Երկրի վրայ են տնկած եւ ձգտում են կեանքի ու գոյքի ապահովութիւն ձեռք բերել, այդ երկրում, իրենց հողերը մշակելու, ապրել կարողանալու համար: Ասում են որ տաճկահայ դատը պէտք է դարձնել «համազգային» դատ, որ նա լինի մի մարդասիրական գործ, որին կը նպաստէ ամէն մէկը: Սոցիալիզմն էլ մարդասիրական գործ է, բայց քէ՝ բուրժուազիան բանուորի համար բաւական է դնում սեւ հացը միայն, որպէսզի ինքն աւելի լաւ կերակուր ուտէ: Այդպէս է բուրժուազիան եւ ազգայնութեան վերաբերմամբ, — նա աշխատում է իւր սեւիակեան–շահագիտական դրշմը դնել վրան: Զեկուցանող ընկերները նկատում են, թէ բուրժուազիան փող չի տայ տաճկահայ դատի գործին, եթէ վերջինս մի սոցիալիստական կուսակցութեան ձեռքին լինի: Բայց կարծո՞ւմ են ընկերները, որ յեղափոխութեան դրդիչը փողն է միայն եւ մի՞թէ հարուստներն են, որոնց աջակցութեան վրայ բացառապէս պէտք է յոյսեր դնել: Դաշնակցութեան նեղ օրերին, աշխատաւորներն են եղել, որ օգնութեան են հասել իրենց կոպեկներով եւ ոչ թէ ունեւորները: Ասում էք, Դաշնակցութիւնը ապագա–սակարդային կազմակերպութիւն պէտք է լինի Տաճկահայաստանում· բայց որո՞նք են լինելու գործի դեկավարները, ամիրանե՞րը, թէ ժողովուրդի իսկական բարեկամները՝ սոցիալիստները: Ո՛չ, մինչեւ որ տաճկահայ դատը մի մաքուր, դատուած կուսակցութեան ձեռքը չտրուի, նա կորչելու վտանգի է ենթարկուելու: Ամիրաները երբեք չեն կարող ժողովուրդի չահերը պաշտպանել, քանի որ ժողովուրդը արդէն նրանց լաւ է ճանաչում, շատ վաղուց: Եւրոպացի հեղինակներից մէկը՝ Լարուս յիշում է որ 1849–1869 [տարիներուն] 950 բողոքագրեր էին ուղարկուած պատրիարքարանին եւ Բարձրագոյն Դրան, բայց պատրիարքը դա ծածկում էր եւրոպական դեսպաններից եւ էֆենտիների Քեխեդրութեամբ յայտնում, թէ ժողովուրդը շատ գոհ է իր վիճակից: Նոյն այդ ամիրաներն ու էֆենտիները էին, որ աշխատեցին խափանել Ներսէս պատրիարքի ծրագիրը (հայկական դատը միջազգային դարձնել), պատճառաբանելով թէ ժողովուրդին կը վնասենք այդպիսով· եւ երբ ազգային ժողովում նախատել սկսեցին Ներսէսին, վերջինս վրդովուած պատասխանում է, որ

նրանք իրաւունք չունեն ժողովուրդի անունից խօսելու: — 1883ին վասպուրականի էֆենտիները չորհակալական թուղթ են ուղղում Սուլթանին, թէ «մենք գոհ ենք մեր վիճակից»: Եւ ժողովուրդն է որ քաշում ծեծում է այդ էֆենտիներին: Վանումն էր նոյնպէս (1886ին) որ՝ դասակարգային չհերի հակամարտութեան հողի վրայ՝ արիւնահեղ ընդհարում տեղի ունեցաւ (Ղազոսեանների եւ Ապօղոսեանների խնդիրը): Ուրեմն զուր են կարծում ընկերները, իբր թէ Տաճկահայաստանում չկայ դասակարգային դիֆերենցիացիա. կա՛յ, թէեւ փոքր աստիճանով: Որքան էլ ամիրաներն ու էֆենտիները ճառեն, նոյնիսկ փող տան, ես երբեք չեմ կարող վստահանալ նրանց: Ի՞նչ էին անում մեր բուրժուաները Թիֆլիզում, այն ժամանակ, երբ երիտասարդութիւնը, կալուածական հարցի պատճառով, խանդավառ ցոյցեր էր անում. այդ բուրժուաները լուտանքներ էին թափում, թէ՝ «Տաճկաստանում կոտորել տուիք ժողովուրդը, այստեղ էլ նոյնն էք ուզում անել». նրանք աշխատում էին փաստաբանների միջոցով՝ յետ ստանալ խլուած կալուածները: Ես չեմ ուզում, որ բուրժուազիան մազաչափ անգամ, նիւթական նպաստներ տալով, ազդէ մեր դործի վրայ. ես չեմ ուզում, որ տաճկահայ դատը այս կամ այն կերպ կովկասահայ բուրժուազիայի հովանաւորութեան տակ մտնի. բուրժուազիայի ձեռքին նա կը դառնայ մի դործիք՝ մեր սոցիալիստական գործունէութեանը, կովկասում, մնասելու համար: Մի Ադելխանով հեշտութեամբ կը չհաղորդէ տաճկահայ գաղթականների (բանուորների) ազգային դգացմունքները. որքան էլ այդ բանուորները գիտակից լինին, այնուամենայնիւ նրանք կ'ազդուին Ադելխանովի մի խօսքից իսկ, թէ՝ «ես 1000 րուբլի եմ տուել ազգի համար. գործադուլ մի՛ անէք», եւ գործադուլ չանելով պատակտումների պատճառ են դառնալու բանուորութեան մէջ: Այս կորստաբեր է լինելու մի սոցիալիստական կուսակցութեան համար: Կրկնում եմ, միայն փողը չէ, որ ուժ է տալու մեր դատին եւ որի պատճառով անհրաժեշտ գտնուի բուրժուազիայի մասնակցութիւնը: Ունեցել ենք Իսրայէլ Օրիներ, Խմին Ճովսէփեաններ, որոնք համոզուած են եղել, թէ մի քանի միլիոններով կարելի կը լինի Հայաստանը գնել: Հանդուցեալ Մորէն եպիսկոպոս Ստեփանէն էլ կարծում էր, որ Սուլթանին կարելի է կաշառել եւ այդպիսով ազատութիւն ստանալ նրանից, բայց ուտօպիաներ [ցնորքներ] են այդպիսի յոյսերը. յեղափոխութեան յենակէտը փողը չէ. Փող բանուորները փող չտան, բայց կը տան իրենց կեանքը, որ աւելի բարձր ու մեծ է մեզ համար, քան փողը: Ընկերներն ասում են, որ տաճկահայ դատի ազգայնութիւնը մթնացրել է կովկասահայ բանուորութեան դասակարգային դիտակցութիւնը. բայց եթէ նրանց առաջարկած ձեւով բանուորներից չարունակենք դրամական նպաստներ հաւաքել, ինչպէս դուք էք առաջարկում, արդեօք այս դէպքում եւս չէ՞նք վնասելու նրանց դասակարգային դիտակցութեան արթնանալուն. եթէ ոչ, այլեւս ի՞նչ կարիք կայ բաժանուելու: Ի՞նչ տեսակ թէորիաներ [տեսութիւններ] կ'ուզէք, վերցրէք, բայց մի մոռանաք կեանքի թէորիաները, տեսական մի զեղեցիկ ժեստի պատճառով մի դաւաճանէք կեանքի պահանջներին: Մեր այդ բաժանումներից կ'օգտուեն մեր հակառակորդները. կը ստեղծուի մի խառնաչփոթ կացութիւն եւ մեր բոլորիս սկզբունքները կը վտանգուեն: Բաժանման անհրաժեշտութիւն չկայ, միեւնոյն ուղղութեամբ մենք կը գործենք երկու վայրերում եւս. եթէ պրոֆեսիոնալ միութիւններ ենք կազմում եւ այլ բարային չարժումներ առաջացնում Ալեքսանդրապոլում, նոյնը կարելի է անել եւ Սարիղամիշում, Բասենում, հետզհետէ անցնելով սահմանի այն կողմերը: Տաճկահայաստանում մենք հող ունենք սոցիալիստական սկզբունքական գործունէութեան համար. ես հաւատում եմ, որ այնտեղ հնարաւոր է դասակարգային դիտակցութիւն եւ գործունէութիւն առաջացնել: Սկզբում չէինք հաւատում, թէ Կովկասում հնարաւոր է լինելու այդ, բայց պայմանները փոխուեցին. նոյնը կը լինի եւ Տաճկահայաստանում: Ռուսաստանի եւ Տաճկաստանի պայմանների մէջ մեծ տարբերութիւն չկայ: Սխալ է ընկերների կարծիքը, թէ մի կուսակցութիւն անկարող է գործել տարբեր երկիրներում: Ինչպէ՞ս է հնարաւոր R.R.S.ները (Գերմանիայում, Աւստրիայում, Ռուսաստանում) չեն ուզում ճանաչել սահմանները, այլ ձգտում են միահամուռ եւ ամբողջական գործունէութեան. մե՞նք պէտք է սահմաններ ճանաչենք: Սոցիալիստ յեղափոխականները իրենք խորհուրդ են տալիս մեզ՝ չբաժանուել, որովհետեւ, բաժանումը կորստաբեր կը լինի: Բաժանումը այսօր աննկատելի կը մնայ. բայց ապագայում՝ խոշոր իրարանցումների առիթ է դառնալու: Սարաֆովն եւս ջերմ կողմնակից է միացեալ գործունէութեան. նա արդէն մակեդոնական փորձերով հասկացել է, թէ որքան աղիտաբեր է բաժանումը: Եւ յանուն ինչի՞ ենք ուզում բաժանուել. յանուն կովկասահայ աշխատաւորների՞, — չէ՞ որ դրանք ամէնքը դէմ են բաժանման: Ուրեմն ուզում էք վերեւի՞ց սկսել բաժանումը: Պատկերացրէք ձեզ դալիք դատն դէպքերը. զգոյշ եղէք, որպէսզի ոչ կովկասահայ գործունէութիւնը վնասուի, ոչ տաճկահայ դատը, ոչ էլ մեր ընդհանուրին սոցիալիստական սկզբունքները: Մէկ աշխարհահայեացք, մէկ դրօշակ, եւ միայն տարբեր գործելակերպ, տեղական պայմանների համեմատ, — ահա ա՛յդ պէտք է լինի մեր նշանաբանը:

Միհասեան.— Եթէ կովկասահայերը ցոյց տան, որ դատերի միացումով տաճկահայ չարժումը չի վնասուի, այսինքն սոցիալիստական եւ ազգային ուղղութիւնները մեր գործունէութեան մէջ չեն հակասի իրար, — լա՛ւ, հարցը փակենք: Ինչ ուզում էք, սակայն, եղէք կովկասում, տաճկահայ դատի [համար] կարեւոր է, [որ] նրան նիւթական եւ բարոյական օգնութիւն տրուի: Ի վերջոյ, ես գոհունակութեամբ եմ ողջունում ուսանող ընկերների մտքերը, թէ Տաճկահայաստանում անկարելի է սոցիալիստական սկզբունքներով գործել. ուրեմն եմ, որ նրանք թէորիաների մէջ չեն մոլորուել, այլ դաժան իրականութիւնն են ուշադրութեան առել: — Թոփչեանին կ'առարկեմ այն, որ տաճկահայ հարցը ազգային հարց է, ո՛չ սոցիալիստական: Դաշնակցութիւնը երբեք դասակարգային կռիւ չէ մղել, մեր ուժը հիմնուած է ամբողջ ազգի վրայ. փող պէտք է վերցնենք ե՛ւ հարուստներից: Նկատելի է, որ տաճկահայ բարձր պաշտօնէութիւնը աւելի ազգասէր է եղել, քան կովկասահայ բուրժուազիան: Ինձ համար տաճկահայ դատը գորդեան հանգոյցն է, որը միայն սրով պէտք է լուծել. իսկ այդ լուծումը կարելի կը լինի կատարել, ոչ սոցիալիզմի, ոչ այլ բանի միջոցով, այլ միայն փողի. փողն է մանաւորապէս՝ ջիղը ազատագրութեան գործի մէջ:

Զելալեան.— Տաճկական առած կայ թէ «ազօքը պէտք է սրտաբուխ լինի»: Առաջ կովկասահայերը դրծել են տաճկահայերի համար. իսկ այժմ մեզ ասում են, թէ «մենք մեր սեփական գործն ունենք, այստեղից դիմեցէք բուրժուաներին, նրանց աջակցութեամբ վարեցէք ձեր դատը»: Կարծես մեր դատը հոմանիշ է բուրժուական ձգտումների: Բայց եւ այնպէս, այդպէս ասողներն ամենից աւելի անկեղծ են հանդիսանում (բողոքներ են լսւում): Կովկասն ու Տաճկաստանը միեւնոյն կանոնով չպէտք է չափել: Ի հարկէ, չկայ ոչ մի ժողովուրդ, որ սոցիալիզմի կարիքը չզգայ. բայց ժամանակն ու տեղը հարկաւոր է միշտ աչքի առաջ ունենալ. Կովկասում, ռուս յեղափոխութեան չնորհիւ, նպաստաւոր պայմաններ կան. Տաճկաստանում, աննպաստ են: Մեզ նախ մեր կեանքն է հարկաւոր ապահովել, այնուհետեւ արդէն կը մտածենք ե՛ւ հացի մասին: Աւելի լաւ է, որ մեր դատը արհեստական կապերով չմիացուի կովկասահայ սոցիալիստական գործունէութեան հետ:

Համօ.— Շահխաթունեան նկատում է, իբր թէ, «բուրժուականութիւնը կը չարունակի իշխել մեր կուսակցութեան մէջ եւ ապագայում, եթէ միայն միջոցներ ձեռք չառնուեն նրա ազդեցութեան դէմ»: Այստեղ ես գտնում եմ փաստացի սխալ. բուրժուազիան չէ իշխել եւ չի էլ իշխէ երբեք: Բաժանումը մնասակար է լինելու, այն չատ պարզ պատճառով, որ կովկասում առաջ է գալու, տաճկահայ հարցի չուրջը, մի նոր կուսակցութիւն, բուրժուազիայի ղեկավարութեամբ. եւ այդ բուրժուական—ազգային կուսակցութեան յետեւից կը գնան մասսաները, որովհետեւ նրանց մօտ ուժեղ է ազգայնութեան զգացմունքը: Ի հարկէ այդ զգացմունքը պէտք է պահպանել. առանց ազգային իդէալիզմի՝ մենք կը դառնանք չոր նիւթապաշտներ, ինչպէս սոցիալ-դեմոկրատները. բայց միեւնոյն ժամանակ տաճ-

կահայ դատի վրայ չպէտք է նայել զուտ ազգային տեսակէտից, ինչպէս անում է ընկ. Միհասեանը: Տաճկահայաստանում մենք պէտք է դառնանք մի «համապետական» կուսակցութիւն, որովհետեւ կեանքն է այդպէս պահանջում:

Միհասեան.— Այդ հայեացքը նոր է: Ասել է թէ Բերլինի դաշնագիրը ջնջե՞լ:

Թոփչեան.— Մենք մոմիա չենք, որ չարունակենք մնալ մեր նախկին վիճակի մէջ: 15 տարուայ ընթացքում պայմանները փոխուել են եւ նոր պահանջներ են դրուել մեր առաջ: Մենք համապետական կուսակցութիւն դառնանք, քաղաքական տեսակէտից, բայց որովհետեւ քաղաքական չարժումն եւս, իսկական յեղափոխական ճանապարհով, կարող է վարել միայն ընկերվարական կուսակցութիւնը, մենք պէտք է լինենք ընկերվարական: Մենք թոյլ չպէտք է տանք, որ բուրժուազիան ստանձնէ տաճկահայ չարժման ղեկը. մե՛նք պէտք է լինենք միակ ղեկավարը:

Ստեփանեան.— Ես համոզուած եմ, որ ընկերները բաժանման առաջարկ են անում, աչքի առաջ ունենալով տաճկահայ դատի չահը. բայց ակամայից, անդունդն են ձգում նոյն այդ դատը: Ինչո՞ւ են կարծում, որ աշխատաւորների միջոցներով չէ կարելի պահովել տաճկահայ դատը: Անցեալի փորձերը ցոյց են տալիս, որ նիւթականը հայթայթել են միշտ էլ նոյն այդ աշխատաւորները. բուրժուաների հետ մենք ոչ մի դործ չունենք եւ չենք կարող ունենալ: Ձեր բաժանումով, ընկերներ, ոյժ կը տաք միհրանական չարժմանը: Ժողովը պէտք է ընդգծէ մէկ եւ միացած դործունէութիւն, երկու վայրերի համար էլ. վաղը—միւս օրը Տաճկաստանում եւս կը փոխուի դրութիւնը, ինչպէս անպատճառ կերպով փոխուեց Կովկասում(38):

Արամ.— (Սխալ է դնում Խահակեանի ասածը՝ թէ Տաճկահայաստանում դասակարգային չերտաւորումներ չկան եւ թէ տաճիկը ճնշում է հաւասարապէս բոլոր հայերին): Ես հակառակը կ'ասեմ. կառավարութիւնը հաւասար չափով հովանաւորում է թէ՛ Թուրք եւ թէ հայ հարուստներին: Մինչդեռ հարուստ հայերը ազատ մուտք ունեն Պոլիս, չունեւորները զրկուած են այդ արտօնութիւնից: Գաւառական քաղաքներում, այժմ եւս, դէպքերից յետոյ, հայ հարուստները վայելում են կառավարութեան լիակատար վստահութիւնը, աւելի քան քիւրտերը, ինչպէս օրինակ՝ Վասպուրականում: Ասել ուրեմն, որ հայ հարուստը Տաճկաստանում նոյնքան է ճնշուած, որքան աղքատը, սխալ է. նշանակում է ծանօթ չլինել տաճկահայ իրականութեան հետ: Այնտեղ գոյութիւն ունեն դասակարգային չերտաւորումներ: Բայց որքան էլ կողմնակից եմ սոցիալիզմի, ես գտնում եմ, որ ներկայումս հարկաւոր է վարել քաղաքական կռիւ (Տաճկաստանում), միայն թէ՝ սոցիալիստական ոգուով. այս ոգին պէտք է մըտցընել մեր գործունէութեան մէջ, նախ հենց համերաշ-

խութեան գործի յաջողութեան տեսակէտից: Մինչեւ այժմ կուռւել ենք ոչ միայն տիրող ռեժիմի դէմ, այլեւ մեր հարեւանների՝ տաճիկների եւ քիւրտերի դէմ. այսուհետեւ պէտք է ձգտել հասկացնել նրանց, որ մեր կռիւը նրանց դէմ չէ որ ուղղուած է: Այս նպատակի համար, հարկաւոր է ունենալ սոցիալիստական ծրագիր: կրկնում եմ, առայժմ Տաճկահայաստանում մենք ունենալու ենք քաղաքական կռիւ, որը սակայն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի էղափ դէպի սոցիալիզմը: — Երկու գործերը պէտք է միացնել իրար հետ, ոչ միայն բարոյական, այլեւ կազմակերպական կապերով: Մենք կարող ենք ամբողջովին տարուել Կովկասով, որտեղի դէպքերն այնքան բովանդակալից են ու հետաքրքրքիր, եթէ մեր կապերը սոսկ բարոյական լինեն. բարոյական կապերը անյուսալի են. կովկասահայերս հնչտուքեամբ կը բաժանուենք տաճկահայ չարժումից, դուրկ եւ քշամանանք նրան:

Վիճաբանութիւնների չարունակութիւնը մնում է յաջորդ նիստին: Եւ ժողովը փակւում:

69ՐԴ ՆԻՍՏ (6 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Վռամեան:

Ներկայ են 23 ժողովական:

Բացակայ են՝ Մաշուր (հիւանդ), Մուրատ, Սեդուհ, Անդրանիկ (հիւանդ), Վարդան:

Քննութիւն նախորդ նիստում կարդացուած անջատման երկու զեկուցագրերի մասին:

Ռոստոմ.— Այս երկու զեկուցագրերը այն տպաւորութիւնն են թողնում ինձ վրայ, որ կարծես թէ միայն պարտականութիւն էին ուզում կատարած լինել, եւ ոչ թէ խնդիրը բազմակողմանի լուծուած տեսնել. կարծես թէ ոչ մի նշանակութիւն չէ ունեցել նրանց համար մի չարք ժողովներում տրուած բացատրութիւնները. այնպէս որ հիմա էլ հարց է ծագում իմ մէջ, արժէ՞ արդեօք խօսել սահմանների դէմ, անհետ չի՞ անցնի այդ եւս, ինչպէս եւ նախընթաց մեր բոլոր խօսակցութիւնները: Ընկ. Մինասեանի համար կ'ասես, գործիչ չէ ունեցել մեր յեղափոխական 17ամեայ գործունէութիւնը: Երբ նա խօսում է, ի նկատի ունի հայկական հարցի միայն առաջին չրջանը, երբ դեռ յեղափոխական գործունէութիւնը չէր սկսած: Բայց մենք յեղափոխական կազմակերպութիւն ենք եւ պէտք է խօսենք մեր ծրագրի եւ գործունէութեան վրայ հիմնուած: Ահա մեր Ծրագիրը. նրա մէջ հետեւր ակնարկ անգամ չկայ Բերլինի դաշնագրի մասին: Ոչ միայն Բերլինի դաշնագիրը, այլեւ Ներսէս պատրիարքի ծրագիրը տեղ չէ գտնել մեր մէջ: «Դրօշակի» առաջին համարում միայն առաջ էր բերուած այդ ծրագիրը, բայց բարձրացած ընդհանուր բողոքների պատճառով՝ հենց երկրորդ համարում վերացուեց նա: Իսկ եթէ երբեմն մեր եւրոպական պրոպագանդի ժամանակ մենք մատնացոյց ենք անում Բերլինի դաշնագրի վրայ, դա անում ենք լոկ նրա համար, որ չեչտած լինենք մեր խնդրի միջազգային կողմը: Գալով այն հարցին, թէ ինչպէս է տարուել մեր կռիւը Տաճկահայաստանում, մի անգամ եւս պէտք է պնդեմ, որ նա չէ տարուել «ազգովին»: Այո՛, նա եղել է ազգի համար, բայց ոչ ազգովին: Դաշնակցութիւնը յենուել է միայն աշխատաւորական տարրի վրայ: Եւ թէ իսկապէս դա այդպէս է եղել, դրա ամենալաւ ապացոյցը կարող է ծառայել այն հանդամանքը, որ ընդհանուր կոտորածից(39) յետոյ միմիայն Դաշնակցութիւնն եղաւ, որ կարողացաւ պահպանել իւր գոյութիւնը Տաճկաստանում, — բոլոր միւս կուսակցութիւնները անհետ վերացան. — դրա պատճառը այն էր, որ միայն Դաշնակցութիւնն էր, որ խոր արմատներ էր ձգել աշխատաւորական տարրի մէջ: — Դասակարգ խօսքի մասին քիւրիմացութիւն կայ: Ոմանք հասկանում են դասակարգը, իբրեւ միայն տնտեսական զարգացումից առաջ եկած հերտաւորումներ: Դասակարգ չէ համարւում ազնուականութիւնը: Եւրոպական իմաստով՝ դասակարգ են ե'ւ ազնուականութիւնը ե'ւ բուրժուազիան: Գալով մեր տաճկահայկական իրականութեան, պէտք է նկատենք, որ ազնուականութիւնը բացակայում է հիմնովին: Նա ոչինչացել է մահմետական տիրապետութեան ընթացքում եւ նրա տեղը բռնել են գրեթէ բացառապէս քիւրտ ցեղապետները: Ուրեմն հայ աշխատաւորների հանդէպ կանգնած է քիւրտ ազնուական դասակարգը, որի հետ նա յարաբերւում է կամ անմիջապէս կամ հայ էֆենտիների, աղաների միջոցով: — Նիւթական օժանդակութեան վերաբերեալ էլ քիւրիմացութիւններ կան: Կովկասում, որ աւելի օժանդակի դեր է խաղացել, պէտք է ենթադրել, որ բոլոր խաւերը պէտք է օգնութեան հասնէին: Սակայն այդպէս չեղաւ: Միջին բուրժուաները գրեթէ չէին մասնակցում, խոշոր բուրժուաների մասին էլ խօսք չի կարող լինել. աւելի ևրմէ օժանդակութիւն էին ցոյց տալիս մանր բուրժուաները, բայց սահմանափակ չրջանում եւ ոգեւորութեան բացառիկ դէպքերում: Երբ, չնորհիւ ձեռք առնուած մի քանի միջոցների, խոշոր բուրժուաների դրպանը բացուեցաւ, այն ժամանակ էր, որ օժանդակող միջին եւ մանր բուրժուաների չրջանը լայնացաւ: Իսկ թէ առհասարակ այդ տարրը, ոչ մի բնական ձգտում չունի որեւէ օգնութիւն հասցնելու յեղափոխական գործին, ապացոյց դրան՝ Բուլղարիայի, Ամերիկայի, եւ առհասարակ արտասահմանեան հարուստների անտարբերութիւնը կամ հակառակութիւնը, անկախ այն հանգամանքից, թէ կապուա՞ծ են Թուրքիայի հետ թէ ոչ: — Դաշնակցութիւնը 17 տարուայ ընթացքում ցոյց է տուել, որ ազգային կռիւ չի մղել. այդ կռիւը եղել է ոչ թէ մահմետական ժողովրդի դէմ, այլ ռեժիմի, կառավարութեան, որից դժգոհ է նաեւ մահմետական աշխատաւորութիւնը: Իսկ եթէ վրիպումներ եղել են, դա միայն առաջ է եկել հակառակ մեր կամքին: — Բաժանումը, իմ խորին համոզմունքն է, յառաջ կը բերէ խիստ երկպառակութիւն: Մեր լսնկերները աւելի քան միամիտ են, երբ կարծում են, որ բաժանուելով կարող ենք բարեկամներ մնալ եւ մեր այդ բարեկամութեանը իդիլլական բնաւորութիւն են տալիս: Այդ սխալ է. մենք կը կանգնենք իրար հանդէպ, իբրեւ ոխերիմ թշնամիներ: Մենք ունենք օրինակներ. կուսակցութիւնը կը բաժանուի զանազան մասերի եւ կը մղի քշնամական կռիւ: Որքան ուշանայ անջատումը, եթէ այդ անխուսափելի է, այնքան լա'ւ: Այժմ ամենաանյապատ մոմենտն է, քանի որ մի կողմից բուրժուական եւ այլ կուսակցութիւններ կանգնած են մեր հանդէպ, միւս կողմից խուլիգանական խմբակցութիւններ:

Զարդարեան.— Օժանդակութեան գործի առաջարկով՝ կուսակցութիւնը Տաճկաստանում դրւում է աւելի քան անյարմար, նոյնիսկ անելանելի վիճակի մէջ, քանի որ Տաճկաստանում կուսակցութիւնը իւր ծրագիրը պիտի այնպէս յարմարեցնէ, որ կովկասում գործող բոլոր կուսակցութիւններից դրամական աջակցութիւն կարողանայ ստանալ: Մեզ մնում է կա'մ բաժանման հարցը դարձնել իրաւական եւ կա'մ կուսակցութեան տալ մի բնաւորութիւն, որ այդ քաոսային դրութիւնից դուրս գալ կարողանայ: Եթէ այնպէս լինի ինչպէս մի քանի ընկերներ են ձեւակերպում, այդ արդէն կուսակցութիւն չէ, այլ մի բարեգործական միութիւն: — Մեր դատը քաղաքական է. քէեւ հիմքը՝ տնտեսական, բայց անկարող ենք այժմ այդ հողի վրայ գործել: Այդ բանին դիմելու համար պէտք կայ լաւ ուսումնասիրել կեանքի բոլոր պայմանները. չէ կարելի հապճեպով ծրագրային բան մշակել եւ ընդունել: Հակառակ չեմ, ի հարկէ, տնտեսական կռիւ մտցնել մեր ծրագրի մէջ, իսկ մինչեւ ուսումնասիրելը, մենք վարելու ենք միայն քաղաքական կռիւ:

Գագիկ.— Ես ուզում եմ միայն մի կէտի վրայ ծանրանալ: Մեր Ծրագրի մէջ, թէեւ հաւասարութեան սկզբունքը կայ, ի հարկէ, ազգային հողի վրայ, բայց կեանքի մէջ խիստ չեչտուած չէ եղել. Քուրք ամբոխը կարծել է, որ մեր կռիւը ուղղուած է ամբողջ մահմետական ապստամբականութեան դէմ: Այժմ մենք պիտի ցոյց տանք, որ մեր կռիւը չհակադրւող դաստակրդի դէմ է, լինի դա Տաճկաստանում թէ Կովկասում: Մենք միայն մեր յեղափոխական սոցիալիստական գործելակերպով կարող ենք այդ քիւրտ համոզմունքը Քուրք մասսայի մէջից վերացնել: Դրանով կը վերանայ նաեւ կրօնական, ազգային առելութիւնը եւ կը սկսի դասակարգային կռիւ, ոչ թէ ազգային կռիւ:

Վռամեան.— Ես նորէն կը պնդեմ, որ մենք իրօք աշխատաւորական կուսակցութիւն ենք եղել եւ երա'նց

վրայ հիմնել մեր գործունէութիւնը: Ու սխալ ծրագիրն էլ չարունակել: Այն օրէն, երբ կը բաժանուի Դաշնակցութիւնը, եւ բուրժուական տարրերը առաջ կու գան եւ կը միանան, ասում եմ, այն օրէն կազմալուծուած [?] կը համարեմ մեր դատը: Ես թէեւ խիստ սոցիալիստ չեմ, բայց չեմ կարող միանալ հարուստների հետ: Այդ հարուստները կարող են միայն մեր դատը սպառել. մենք անիծում ենք կաթողիկոս, ամիրա, հարուստ: Մեր չահը կը պահանջէ դատը դնել տնտեսական հողի վրայ եւ հետու կենալ բուրժուաներից, եթէ նոյնիսկ սոցիալիստական չլինենք: Ես հաւատ չունեմ լիլիանների վրայ. երբ մարդիկ հաւաքւում են, իրենց կեանքի մի քանի ժամը միայն կարող են մեզնով պարապուել, նրանք մեզ հետ չեն միչտ, յարատեւ: Մեզ պէտք է իր աշխարհահայեացքով ամբողջովին դատին նուիրուած դանդուած, եւ ո՛չ համակիր, հետերժէն [այլակերպ, այլատարր] տարրեր: Մեր յոյսն է աչխատաւորութիւնը: Գալով դումայի հարցին, կ'ասեմ, որ մեզ համար նչանակութիւն եւ օգտակարութիւն կ'ունենայ միայն այն պարագային, երբ դաշնակցականներ կը լինեն այնտեղ, ոչ թէ լոկ սոցիալիստներ: Դրամական հարցը ինձ համար չատ էլ առաջնակարգ նչանակութիւն չունի. Ամերիկայի մեր 15000 գործաւորները տալիս են 60–70·000 տոլար. այն ինչ՝ հոլանտացիները, որոնք լիպա ունեն, հազիւ միայն 100·000 տոլար կարողանում են հաւաքել, այն էլ բրիտանական պարլամենտի հոլանդացի անդամների կոչ անելով: Ինչո՞ւ. որովհետեւ մեր մէջ պաղտփարական բան կայ: Ահա այդ է միացնում մեր երկու հայ հատուածները: Մենք չեմապարսենք. թողնենք, որ հարցը հասունանայ եւ ոչ թէ մենք բռնագրօսիկ կերպով կտրենք: Այժմ վաղաժամ է: Բուրժուական վտանգները մեզ կը ստիպեն միանալ, թողնել այդ հարցը եւ առաջ տանել մեր գործը:

Մալումեան.— «Անջատման հարցը» որ առաջ է բերուած այս ժողովում երկու ընկերների կողմից, իմ խորը համոզմամբ, չունի հիմնաւոր պատճառաբանութիւն եւ արդիւնք չէ՛ մեր քաղաքական կացութեան: Դա, մեծ մասամբ կուսակցական կռիւների արդիւնք է, եւ ոչ մի կապ չունի մեր չարժման յաջողութեան հետ: Առաջին անգամ անջատման խնդիր դրին Դաշնակցութեան այն հակառակորդները, որոնք տեսնել չեն կարող մեր կազմակերպութեան յեղափոխական գործելակերպը Կովկասում: Ապա դրան արձագանգ տուին այն տաճկահայ խմբերը, որոնք ուզեցին անջատման ուրուականով վախեցնել մեզ եւ ստիպել բարձի թողնել Կովկասը, ու կենտրոնանալ միմիայն Թրքահայաստանում: Քիչ յետոյ դրան սկսեցին արձագանգ տալ նոյնիսկ մեր չարքերին պատկանող ընկերներ, ոմանք կատարեալ անկեղծութեամբ՝ որի դէմ մենք պէտք է ըմբոստանանք: Անջատման մի քանի կողմնակիցներ այնքան հետու գնացին, որ սկսեցին քարո-

ղել եւ պնդել, թէ Քրքահայկական դատը եւ քաղաքական չարժումը մի բուրժուական չարժում է, ստեղծուած հայ բուրժուազիայի ձեռքով եւ ջանքերով, եւ հետեւաբար ծառայել այդ չարժման կը նշանակէ ծառայել բուրժուազիային: Դա քաղաքական խակութեան մի մարդարիտ է, արժանի բացառիկ հիացման... Սակայն մի համառօտ ակնարկով տեսնենք թէ ի՞նչ է հայկական չարժումը եւ ի՞նչ հողի վրայ է դրած նա: — (Ապա ճառախօսը կանգ առաւ Քրքահայ չարժման հիմնական կէտերի վրայ, պարզեց նրա զարգացման փուլերը. այն տարբերութիւնը, որ կայ ռամկավարական հակումներով ներչնչուած հայ աչխատաւոր ժողովրդի եւ աւատական քրդութեան, կրօնական ճորտութեան ենթակայ թուրքերի եւ կամ ազնուապետական կարգերով տարուած վրացիների մէջ) —: Մեր չարժման յենակէտ եղել է ոչ թէ մեր քաղքենի բուրժուա դասակարգը, այլ ի՛նքը աչխատող ժողովուրդը. այդ չարժմանը կեանք եւ ոյժ տուողը հարստահարող տարրերը չեն եղել, այլ աչխատաւորների զաղափարախօս հանդիսացող յեղափոխական խաւերը, որոնք 20 տարուց ի վեր չեն խնայել, ո՛չ կեանք, ո՛չ խօսք, ո՛չ գնդեր եւ ոչ պրիչ՝ փչրելու քաղաքական եւ տնտեսական ճնշման չղթաները եւ բանալու այն ճանապարհները, որոնցով պիտի անցնի մէն մի ժողովուրդ, որ ուզում է զարգանալ եւ ապրել, փոխանակ փտելու եւ հաչմանդամ լինելու: Եւ դրանով միայն պէտք է բացատրել այն փաստը, որ Քրքահայ դատին նուիրուեցին, այսքան տարիներից ի վեր, հայոց երիտասարդութեան եւ մտաւորականութեան լաւագոյն ուժերը, որոնք չովինիզմի եւ բուրժուական զաղափարների քչնամիներ են, ջերմ կողմնակիցներ միջազգային զաղափարների ու յեղափոխական լայն ծրագիրների: Դրանով պէտք է մեկնել այն, որ մեր չատ ընկերները, սոցիալիստ՝ համոզմունքով եւ յեղափոխական՝ մտածելակերպով, հետեւեցին այդ գործի մէջ եւ կրեցին կուռի, բանտի եւ կախաղանի ամբողջ ծանրութիւնը: — (Դրանից յետոյ ընկ. Մալումեան առաջ բերեց մի չարք հեղինակաւոր եւրոպացիների կարծիքը, մեր ժողովրդական դատի մասին, ինչպէս են՝ կաուտելար, Ենգելհարտտ, Գրին, Շուլէ, Մակ-Կոլ, Էվերտտ, Բրայս, Ռէկլիւ, Բայար, Կոնատան, Զիպրիանի, Լամպրէխտ, Ժորէս, Գրեհամ եւ ուրիշ չատերը, — ցոյց տալու համար, որ այդ դատը՝ իրրեւ քաղաքակրթական մի չարժում, արժանի է մեր ամբողջ աչակցութեան: — կանգ առնելով այն հարցի վրայ, թէ ի՞նչ կապ կայ կովկասահայ եւ Քրքահայ դատերի միջեւ, նա պաչտպանեց այն միտքը, որ կուսակցութիւնը այդ երկու դատն պէտք է առաջ տանի միեւնոյն դրօչակի տակ: Ապա անցաւ այն կէտին, թէ ի՛նչ դժբախտ հետեւանքներ կ'ունենայ անջատումը, իրրեւ մի առիթ զանազան քիւրմամցութիւնների, կռիւների, նոյնիսկ արիւնոտ ընդհարումների, կուսակցական հողի վրայ: Իրրեւ ապացոյց առաջ բերեց մի չարք փաստեր հնչակեան խմբերի կեանքից եւ ուսական մի քանի կազմակերպութիւնների փորձերից): — Շատ կարեւոր է եւ այն փաստը, որ անջատման առաջարկը ոչ մի համակրանք չէր գտնում կազմակերպական չրջաններում եւ նրա մասին առաջարկ է բերել միմիայն մի պատգամաւոր՝ Ռուսաստանի ուսանողութեան ներկայացուցիչը: Մեր մարմիններից 22ը վճռական կերպով դէմ են անջատման մտքին եւ հենց այդ հանդամանքը մեզ պիտի ստիպէ խոստովանելու, որ առաջարկը չէ բխում կեանքից, իրականութեան մէջ հող չունի եւ հետեւաբար այս ժողովում լուրջ կասկածների առիթ տալ չէ կարող: Մեր եւրոպացի բարեկամներն իսկ, որոնք փոքր ի չատէ ծանօթութիւն ունեն մեր չարժման մասին, սոսկումով են խօսում այդ տեսակ պառակտման եւ անջատումների մասին: Դուք կարդացիք, օրինակ, Ֆէյարի զեղեցիկ կոչը, տպագրուած «Դրօչակի» մէջ անցեալ տարի: Ես չեմ բերի ուրիշ եւրոպացի բարեկամների կարծիքը: Կը բաւականանամ յիչելով խօսքերը մեր թանկագին մի ընկերոջ՝ Քրիստափորի, որը մեր գործին եւ կազմակերպութեան զոհ բերեց իր կեանքի լաւագոյն տարիները, իր կեանքն իսկ — «ժամանակ է վերջապէս, գրում է նա, որ ներկայ մահաչուն կացութեան դիմաց, երբ տաճկահայկական կոտորածներից յետոյ, գուցէ, գտնւում ենք կովկասահայկական կոտորածների նախօրեակին, կռուելու անդրդուելի վճռողականութիւնը եւ իրար խառնուելու, իրար հետ միաձուլու, իրօք մի ամբողջութիւն կազմելու միահամուռ, միահոգի պահանջը մեր ընդհանուր նշանաբանը դառնայ: Պատռե՛լ է հարկաւոր բարտէզների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով գծած սահմանները, ջնջե՛լ է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից եւ որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարեւոր են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաեւ կռուելու անսասան վճռողականութիւն»: — Այդ կոչը պահանջում է՝ յետ մղել անջատման եւ պառակտման որեւէ առաջարկ: Մի՛ ծրագիր, յեղափոխական մի՛ բանակ — ահա՛ կռուի յաջողութեան լաւագոյն միջոցը:

Խահիկեան.— Մեր ընկերները միչտ էլ, մոռանալով մանր բուրժուաները, ծանրանում են խոչոր բուրժուաների վրայ: Այո՛, վերջիններս տուել են բռնի կերպով, բայց մանր բուրժուաների նուիրաբերութիւնը եղել է կամաւոր: Մենք ի՞նչ բաւարար քանակութիւն կարող ենք ստանալ աղքատ բանուորներից, եթէ դուրս գցենք մանր բուրժուաներին (բացականչութիւն՝ Երեւանի տարեկան մուտքի 40·000 ռուբլուց 35·000ը տուել են աչխատաւորները): Ռայոնական ժողովում, երբ մանր բուրժուաներին դուրս հանելու մասին խօսք եղաւ, Ֆոժակն ասում էր «այդ դէպքում կը մնանք

հրամանատարներ առանց բանակի»: Մենք չենք ուրանում, որ եղել է սոցիալիստական ծրագիր, բայց այդ ծրագիրը կեանքի համար եղել է մեռած տառ: Երկրի տնտեսական դրութեան մասին գրել եմ 15 երես, դեռ քիչ. Թոփչեանը ասում է, որ այդ մասին ոչինչ չասացի: Մենք պնդում ենք, որ Տաճկաստանում տնտեսական յարաբերութեան ուժերը զարգացած չեն սոցիալիստական գործունէութիւն սկսելու համար: Գալով բուրժուաներին, կ'ասեմ, որ նրանք մեզ համար վըտանգաւոր չեն մինչեւ մի որոշ աստիճան, մինչեւ կեանքի եւ գոյքի ապահովութիւն ձեռք բերելը: Այո՛, մինչեւ այստեղ նրանք կարող են մեզ հետ լինել: Մենք չենք ասում, որ բաժանումից խառնաչփոթութիւն, իրարանցում չի յառաջանայ, այլ մենք դնում ենք հարցը ըստ էութեան.— ո՞ւր է տանում այդ միութիւնը: Այդ երկու հարցերը իրենց էութեամբ բաժանելի են: Ես վերջացնում եմ Վռամեանի խօսքերով եւ համամիտ եմ նրա հետ, երբ հարցը հասունացած լինի, այլեւս հնար չլինի միասին տանելու, այն ժամանակ կը բաժանունք:

Շահխաթունեան.— Սխալ է կարծել, որ Տաճկաստանում գործող կուսակցութիւնը իր ծրագիրը պէտք է համաձայնեցնէ կովկասում գործող զանազան կուսակցութիւնների պահանջներին՝ նպաստներ ստանալու նպատակով: Ո՛չ երբեք: Նա կ'ունենայ իր չեշտուած եւ որոչակի ծրագիրը եւ դրանով էլ կ'առաջնորդուի, առանց դեկավարուելու միւս կուսակցութիւնների ցանկութիւններով: Վերջիններս կը լինին միայն օժանդակողներ: Եւ ասել՝ թէ այդ լիգան կ'ազդէ Տաճկահայաստանի գործին (երկրում), աւելի քան անհիմն է: Մերը կը լինի, կրկնում եմ, միայն ազակցութիւն: Սըխալ է նաեւ կարծել, որ կովկասեան բոլոր քաղաքական եւ սոցիալիստական կուսակցութիւնները անպայման մասն են ունենալու այդ լիգայի մէջ: Դրանով էլ սահմանափակւում է մեր գործը: Մենք իրաւասու չենք նրանց համար ծրագիր մչակելու եւ գործադրութեան առաջադրելու, քանի որ մենք երկրից դուրս ենք եւ չենք աչխատում նրանց հետ. եւ ի զուր են մեր ընկերները կարծում, որ միայն Դաշնակցութիւնը, կամ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնն է կանչըւած՝ տաճկահայ դատին օժանդակելու, ուրիշ խօսքով՝ միայն աչխատաւորական մասը: Ահա 15 տարի օգնել է մանր բուրժուան եւ սրանից յետոյ էլ օժանդակելու է: Այդ գործում, իմ կարծիքով, մասն ունեն թէ՛ սոցիալիստական եւ թէ բուրժուական կուսակցութիւնները: Գալով R.R.S. կուսակցութեան, պիտի ասեմ, իմ ցաւ ընկ. Թոփչեանի, որ ես էլ բարեբախտաբար ծանօթ եմ այդ հարցի հետ: Ճիշդ է, լեհական այդ երեք հատուածները կապուած են իրար հետ, բայց այդ կապը միայն բարոյական բնոյթ է կրում եւ ոչ թէ իրաւական: Ռուսաստանի լեհ սոցիալիստական կուսակցութեան ընդհանուր ժողովներին մասնակցում են միւս տեղերի լեհ պատգամաւորները՝ լոկ խորհրդատու, բայց ոչ վճռողական ձայնով: Ներկայանում են իրրեւ հիւրեր: Ուրեմն ուրիշ բան է ընդհանուր ծրագիրը, ուրիշ է կազմակերպական հարցը: Այդ հարցերը կազմակերպօրէն կապելը վնասակար է եւ կը խանգարէ, իսկ, եթէ ուղում էք, կարելի է ընդհանուր ծրագիրը մչակել: Պարզ է ուրեմն, որ մենք սոսկ օգնողներ կը լինենք, հետեւապէս նաեւ ոչ իրաւասու՝ կովկասում նստելու եւ Տաճկաստանի գործունէութեան համար վճռական ձայն ունենալու: Թող մեր տաճկահայ ընկերները վճռեն, թէ կարելի՞ է երկրում սոցիալիստական գործունէութիւն սկսել եւ ես կը խնայուհեմ նրանց որոշմանը, բայց ես պատասխանատուութեան ամբողջ ծանրութիւնը կը թողնեմ նրանց վրայ:

Թոփչեան.— Թէեւ ընկ. Շահխաթունեանը ձգտում է հաւատացնել մեզ, որ նա R.R.S. կուսակցութեանը ծանօթ է, բայց պէտք է ասեմ, որ նրա տեղեկութիւնները այդ հարցի վերաբերմամբ աւելի քան պակասաւոր եւ թերի են: Նա գուցէ լսել է մէկի կարծիքը, բայց անհրաժեչտ է այդ կուսակցութեան անցեալի հետ ծանօթանալ: R.R.S. իւր գոյութիւնը սատցել է 1892 թուին եւ ունի իւր կուսակցութեան երկար պատմութիւնը. չափազանց մեծ նմանութիւն ունի Դաշնակցութեան հետ: Կուսակցութիւնը ունենալով մի ընդհանուր աչխարհահայեացք եւ ծրագիր, տարիներ չարունակ գործել է 3 երկրներում: Տարբերութիւնը եղել է միայն տակտիկայի մէջ: Ուրեմն թող ծանօթանան այդ բոլորի հետ եւ ապա չեշտեն, թէ սխալ են իմ տուած տեղեկութիւնները: Միւս հարցերի մասին ես աւելորդ եմ համարում խօսել, որովհետեւ ընկերները ոչինչով չհերքեցին ասածներս: Առանց ծանօթ լինելու Տաճկահայաստանի տնտեսական սոցիալական պայմանների հետ, միանգամայն անհիմն է բացականչել, թէ Հ. Յ. Դաչնակցութիւնը չէ կարող այնտեղ էլ, կովկասում էլ իրրեւ մի՛ կուսակցութիւն գործել: Ես անցնում եմ բանաձեւի:

Թոփչեան կարդում է իւր բանաձեւը, բայց քուէարկութիւնը յետաձգւում է:

Նիստը փակւում է ժամը 7½ին:

70ՐԴ ԵՒ 71ՐԴ ՆԻՍՏԵՐ (7 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Համօ Մհերեան:

Ներկայ են 25 ժողովական:

Բացակայ են՝ Մուրատ, Սեպուհ, Անդրանիկ (հիւանդ):

Ցուցակների յանձնաժողովի կողմից գրաւոր առաջարկ է լինում, հրաւիրելու ընկ. Թորգոմին: Ցուցակների յանձնաժողովի անդամներ Արամ եւ Զաւրեան՝

ցանկալի են դնում թորգոմի ներկայութիւնը, որպէսզի նրանից կարելի լինի՝ աւելի մանրամասն ու փաստացի տեղեկութիւններ առնել։ Առաջարկին ընդունում է ժողովի կողմից (դէմ են միայն 4 ձայն)։

Կարդացւում են՝ նախորդ նիստին առաջարկուած բանաձեւերը։

Իսահակեան–Շահխաթունեանի բանաձեւը։

«Ի նկատի ունենալով՝

1. Որ Թուրքիայի իրականութիւնը թէ՛ տնտեսական, թէ՛ սոցիալական եւ թէ տնտեսական տեսակէտով տարբեր է կովկասեան իրականութիւնից,

2 Որ Թուրքիայի յեղափոխական կուսակցութիւնը, ինչպէս միեւնոյն ինքն է եղել, այժմ եւս ազգային–բուրժուական է. այնինչ կովկասեան մեր կուսակցութիւնը դասակարգային է, սոցիալիստական եւ միջազգային,

3. Որ բրմահայ դասը դեռեվարդող կուսակցութիւնը կարող է գտնուել միմիայն երկրում. իսկ նրկրից դուրս, մասնաւորապէս կովկասում, այդ կուսակցութիւնը կարող է ունենալ միմիայն օժանդակող կազմակերպութիւններ,

4. Որ այդ դատին օժանդակելու գործը կովկասում չէ վերաբերում միայն սոցիալիստական բանակին, այլ աւելի լայն ժողովրդական մասսաների. հետեւաբար այդ օժանդակութեան դեկավարութիւնը ու կազմակերպութիւնը չի կարելի յանձնել մի ոեւէ կուսակցութեան, այլ պիտի դրուի անկուսակցական հոգի վրայ,

Մենք գտնում ենք՝

Որ բրմահայ դատի եւ կովկասի հայ աշխատաւոր մասսաների դասակարգային կռուի դեկավարութիւնը անհրաժեշտ է յանձնել միմեանցից մնազմամայն անկախ կուսակցութիւնների։ — Սակայն, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ շնորհիւ նորկայի բացառիկ պայմանների, երկու գործի համար էղ շատ վնասակար հետեւանքներ կը յառաջանան, եթէ ամիջապէս եւ ամբողջապէս այդ երկու գործերը իրարից բաժանուեն, մենք առաջարկում ենք այդ բաժանումը առայժմ կատարել կազմակերպութեան, ստեղծելով երկու գործերի համար զատ-զատ մարմիններ, իւրաքանչիւրը իւր սահմանների իշխանութեան՝ բայց իրար հետ միացած փեդերատիւ կապերով»։

Շահխաթունեան.— *Անհրաժեշտ է պարզել մեր բանաձեւերը երկու տեսակէտից։ Նախ, նա տարբերւում է մեծամասնութեան առաջարկած փեդերատիւ կազմից նրանով, որ սկզբունքով չէ ընդունում այն. այլ իրրեւ մի անցողական շրջան — մինչեւ որ կեանքն ի՛նքը կը լուծի հարցը։ Միւս կողմից, մեր առաջարկած բաժանումը տարբերւում է նրանից, ինչ որ առաջարկում են մի քանիսը. սրանք առաջարկում են կովկասում դասակարգային կռիւ մղողներին բաժանել Դաշնակցութիւնից, ըստ որում վերջինը մնալու է կովկասում իբրեւ Քրքահայ կուսակցութիւն, հանդերձ իր ամբողջ մասսայով. իսկ մենք՝ օժանդակութեան դործը դնում ենք անկուսակցական հոգի վրայ։*

Զաւրեան.— *Այդ բանաձեւի մէջ մի հակասութիւն կայ. այդտեղ մէկ կողմից խօսւում է, թէ տնտեսական պայմանները Տաճկաստանում տարբերւում են կովկասի տնտեսական պայմաններից, միւս կողմից, բանաձեւի հեղինակները աւելացնում են հետեւեալը. «եթէ մեզ ապացուցեն, որ Տաճկահայաստանում իսկապէս հող կայ՝ սոցիալիստական գործունէութեան համար, այս դէպքում ուշինչ չունենք ասելու»։ Այս հակասութիւնն տեսակէտից, աւելի նպատակայարմար կը լինէր, եթէ ընկերները՝ Շահխաթունեան եւ Իսահակեան այլ կերպ խմբագրէին իրենց բանաձեւը. այսպէս օրինակ՝ «քանի որ դեռ ծանօթ չենք տաճկահայ տնտեսական պայմանների հետ, մենք բաժանուելու մասին չենք խօսի, մինչեւ յառաջիկայ Ընդհանուր ժողովը, երբ մենք արդէն ձեռք բերած կը լինենք հարկաւոր ծանօթութիւնը»։*

Շահխաթունեան.— *Բայց, քանի որ այստեղ՝ Տաճկաստանում սոցիալիստական գործունէութիւն վարելու կողմնակից են ե՛ւ այնպիսիները, որոնք Տաճկահայաստանի տնտեսական վիճակի մասին տեղեկութիւն ունեն աւելի պակասաւոր, քան ես, — մենք պնդում ենք մեր բանաձեւի վրայ, առանց դանազան ձեւակերպումներ մտցնելու նրա մէջ։*

Ռոստոմ.— *Այդ բանաձեւը ես գտնում եմ անհետեւողական։ Եթէ ընկերները դտնում են եւ համոզուած են, որ երկու դատերը չէ կարելի միացնել մի կուսակցութեան մէջ, — այն ժամանակ լաւ է, որ թողնեն Դաշնակցութիւնը։ Դուք ուզում էք մնալ, որպէսզի մեր (կովկասահայ) մասսաները դիտակցութեան բերէք՝ նրանց ապագայում բաժանելու նպատակով. բայց ձեր այդ կանոնաթիւնն իրագործելիք՝ Դաշնակցութիւնից դուրս։ Մէկ անգամ ընդմիշտ որոշեցէք ձեր դիրքը դէպի կուսակցութիւնը։*

Միմասեան.— *Ես համաձայն եմ ընկ. Իսահակեանի բանաձեւի առաջին կէտի հետ, որտեղ պարզաբանուած է տաճկահայ իրականութիւնը։ Բաժանման խընդրում, սակայն, ձեռնպահ եմ մնում։ Ես կ'ուզէի միայն, որ երաշխաւորուած լինի կովկասահայերի ազդեցութիւնը տաճկահայ դատին։*

Շահխաթունեան.— *Ես շատ ուրախ եմ, որ Ռոստոմը վերջապէս ցանկանում է հարցը խիստ ու բացարձակ կերպով դրուած տեսնել. այն է՝ որ վճռելի է [չէ ?] համարում Դաշնակցութեան հիմնական սկզբունքներն ու երկու դատերի միացման խնդիրը։ Գեղեցիկ. բայց ինչո՞ւ, երբ այստեղ պահանջներ են դրել, թէ սոցիալիզմի մասին այստեղ ոչ մի խօսք չպէտք է լինի, — ինչո՞ւ այն ժամանակ եւս այդքան կորուկ առաջադրութիւն չի արւում։ Թող խստութիւնը միւս կողմի վրայ էլ տարածուի։ — Ապա ընկ. Ռոստոմը մեզ այնքան միամիտ չկարծէ, որպէս թէ մենք յոյս ունենք, թէ մասսաները անմիջապէս կը հետեւեն մեզ։ Կեանքն ի՛նքը կը կրթէ մեր մասսաները, կը հասունացնէ բաժանման հարցը եւ այդ հասունացման առաջը չեն կարող առնել, ո՛չ Ռոստոմը, ոչ էլ ուրիշները։ Եթէ Ընդհանուր ժողովը պահանջում է, որ համոզուելո՛վ եւս մենք պէտք է կողմնակից լինինք միացման, այդ դէպքում մենք ստիպուած կը լինենք հեռանալ կուսակցութիւնից։*

Իսահակեան.— *Ընկ. Զաւրեանն ասում է՝ «բաժանման խնդիրը թողնել առկախ», մինչեւ որ ճիշդ դաղափար կը կազմենք Քրքաց Հայաստանի տնտեսական վիճակի մասին։ Բայց երկիրը ճանաչելու համար, անհրաժեշտ չէ անպատճառ այնտեղ գնացած լինել. այստեղ կարդացուած տեղեկագրերից արդէն հնարաւորութիւն ունեցանք որոշ գաղափար կազմելու։ Եւ այդ տեղեկագրերի հիման վրայ, ես կրկնում եմ, որ այսօր Տաճկահայաստանում հող չունենք սոցիալիստական գործունէութեան համար։ — Մաշուրը մեզ չէ հասկացել. մենք չենք ասում, որ տաճկահայ դասը յանձնենք կովկասում լիբերալ [ազատական] կամ մի ուրիշ կուսակցութեան, այլ այն՝ որ գործը պէտք է դնել անկուսակցական հողի վրայ։ Մենք չենք ուզում հիմիկուանից իսկ պատակոտումներ ձգել կուսակցութեան մէջ. քանի որ համոզուած ենք անպայման, որ վաղ թէ ուշ բաժանումը պէտք է տեղի ունենայ։*

Մանուկ.— *Ժողովրդից անմիջապէս բխող պահանջների հիման վրայ միայն պէտք է կազմել այս կամ այն ծրագիրը։ Երբ վերեւիցն են օրէնքներ սահմանում, նրանցից 90–95% մնում է անիրագործելի։ Այս Ընդհանուր Ժողովը իրաւունք չունի՝ սոցիալիստական սկզբունքները պարտադիր դարձնելու տաճկահայ գործունէութեան համար. Տաճկահայաստանում դրա համար հող չկայ. Ռուսահայաստանում միայն կարող էք սոցիալիզմ մտցնել։*

Ռոստոմ.— *Շահխաթունեան պահանջում է, որ մենք միւս կողմի վերաբերմամբ էլ խիստ լինենք։ Ես ոչ մի բարոյական իրաւունք չունեմ, նրանցից՝ որոնք 15 տարի չարունակ միայն տաճկահայ դատի համար են գործել, ու նրանով միայն ոգեւորուել՝ պահանջելու այդպիսիներից, որ նրանք անպայման յարին սոցիալիզմին։ Ես կ'աշխատեմ համոզել, — բայց ոչ այս կամ այն ճնշումը գործ դնել։ Եւ ի՞նչպէս կարող են նրանք ըմբռնել մեր ծրագրային հիմունքները, քանի որ սրանք բնաւ բացատրութիւնների չեն ենթարկուել մեր կողմից. ի՞նչ բարոյական իրաւունքով պէտք է լուտիպենք օրինակ Գէորգ Զաւուչին, մի մարդ, որին դաղափար չենք տուել սոցիալիզմի մասին, — որ նա սոցիալիստ դառնայ։ Ճեառ, ենթադրենք նոյնիսկ որ Գէորգ Զաւուչն ու մեր միւս կուսակիցները դիտակցութեան են եկել, ունեն զանազան ֆորմուլաներ [բանաձեւեր] — բայց մի՞թէ դրանով կը փոխուի նրանց նախկին գործելակերպը։ — ամենեւի՛ն։ Մենք խիստ ենք լինելու դէպի նրանք, որոնք չեն հաշուում մեր հիմնական սկզբունքների հետ։ Հետագայում մենք կը պարզենք, թէ ի՞նչ պայմաններով առ կամ նա դաշնակցականի կարող է լինել։*

Վառմեան կարդում է իւր կազմած բանաձեւը։

Մալումեան.— *Վառմեանի բանաձեւը ընդհանուր ծրագրային բնոյթ ունի. ուստի քուէարկութեան կարելի է դնել յետոյ։ Այսօր խնդիրն անյապաղ մասին է։*

Վառմեան պահում է իւր բանաձեւը ուրիշ նիստի։

Մալումեան կարդում է իւր բանաձեւը, որ հետեւեալն է։

«Ընդհանուր ժողովը, լսելով Դաշնակցութեան երկու հատուածների — կովկասեան եւ բրմահայկական — մասին եղած զեկուցումները, ինչպէս այս առիթով ծագած վիճաբանութիւնները, եւ ցնծի ունենալով՝

ա) որ հայ աշխատաւոր ժողովրդի այդ երկու հատուածների բազաֆական–տնտեսական կռիւը հիմնուած է միմիայն Տրագրի վերայ, վաւերացրած 1892ին, եւ լրացւում է Գ. Ընդհանուր ժողովի որոշումներով եւ 1905ի Նախագծով,

բ) որ բրմահայկական եւ կովկասեան գործունէութիւնները, ինչպէս այդ շեշտուեց ժողովի ընթացքում, ոչ միայն չեն վնասում միմեանց, այլեւ ընդհակառակին, երկու երկիրների աշխատաւոր ժողովուրդի շահերի յարաբանակին,

գ) որ բրմահայ ժողովրդի շարժումը, որին կազմակերպութիւնը ծառայում է 17 տարուց ի վեր, այժմ մանաւանդ, երբ բրքրական ռեժիմից դժգոհ տարրերը սկսել են շարժել, պահանջում է համերաշխ գործունէութեան համար մեր յեղափոխական ոյժերի կրկնակի լարումն ու շաղկապումը,

Որոշեց՝

ա) Ցնծի մղել անյապաղ առաջարկը, իբրեւ մի տեսակէտ՝ որ չէ հիմնուած մեր աշխարհահայեացքի եւ գործունէութեան վրայ եւ չէ բխում կազմակերպութեան շրջանների որոշումներից (21ից 20ը դէմ են, միայն մէկը՝ յօգուտ անյապաղման)։

բ) երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի եւ դեկավարութեան ներքոյ։

գ) Հաւատարիմ մնալով ընդհանուր Տրագրին, վայրերի գործունէութիւնը առաջ տանել տակտիկի ուրոյն եղանակով, յարմարեցրած տեղական հանգամանքներին եւ պայմաններին»։

Ռոստոմ (*բանաձեւի մասին խօսելով*).— *Մեզ համար էականն է ամենից առաջ այն հարցը, թէ ժողովը սկզբունքով ընդունո՞ւմ է միացեալ գործունէութիւնը թէ ոչ. ուստի պատճառաբանութիւններն մի կողմ թողնել։*

Մալումեան ձեւակերպում է իւր վերոյիշեալ բանաձեւը առանց պատճառաբանութեան հետեւեալ ձեւով՝

«Ընդհանուր ժողովը լսելով Դաշնակցութեան երկու հատուածները — կովկասեան եւ բրմահայկական — բաժանելու մասին եղած զեկուցումները (Իսահակեանի եւ Շահխաթունեանի) եւ այդ առիթով ծագած վիճաբանութիւնները,

Որոշեց՝

1. Ցնծի մղել անյապաղման առաջարկը եւ

2. Երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի եւ դեկավարութեան ներքոյ»։

Քուէարկութեան դրուելով՝ այս կրճատուած բանաձեւը ընդունւում է Ժողովի կողմից ձեռնպահութեամբ չորս հոգու (Շահխաթունեան, Իսահակեան, Մաշուր եւ Սիդ)։

Շահխաթունեանի եւ Իսահակեանի բանաձեւը, քուէարկութեան դրուելով, ասնում է 2 ձայն Քեր, 1 ձեռնպահ, մնացածները՝ դէմ։

Մաշուր առաջարկում է իւր բանաձեւը, որ հետեւեալն է։

«Ընդհանուր ժողովը լսելով ընկերներ Շահխաթունեանի եւ Իսահակեանի տանկահայ դատի անյապաղման եւ անկուսակցական հողի դնելու զեկուցումները, գտնում է որ՝

ի նկատի ունենալով, որ Տաճկահայաստանում հաղաքական կուիւը երբեք չէ հակասում սոցիալիստականին, այլ պատրաստում է վերջնիս համար գործունէութեան լայն ասպարէզ, որ տաճկահայ ժողովուրդի 90%ը կազմող աշխատաւոր դասերի դատը անկուսակցական հողի վրայ դնել կը նշանակէ բուրժուազիայի ձեռքը տալ նրան մեռցնել այդ դատը, եւ որ տարբեր հաղաքական ու տնտեսական պայմանների տակ ապրող հայ մասսաների ներկայացուցիչները չեն կարող մի Ընդհանուր ժողովում մշակել տարբեր միջավայրերի համապատասխան եւ նրանց համար մերձաւոր ծրագիր ու տակտիկա այդ գործի համար, — ուստի, հիմնուելով Դաշնակցութեան սկզբնական Ծրագրի ոգու վրայ, այս Ընդհանուր ժողովում պէտք է մշակել յեղափոխական սոցիալիստական ծրագրի ընդհանուր մասը, հիմնաւորուած պատմափիլիսոփայական որոշ աշխարհահայեացքով· իսկ միջին ծրագիրն ու տակտիկական խնդիրները թողնել համապատասխան երկրների Ռայոնական ժողովներին (տաճկահայ դատիճը կարելի է յանձնել յատուկ նրա համար գումարուած մի ձեռնհաս մարմնի)»:

Մալումեան·— *Առաջարկում եմ անդամ հարցին վերաբերեալ իմ բանաձեւը՝ պատճառաբանութեամբ հանդերձ, պարզելու համար թէ ինչո՞ւ է ժողովը յետ մղում անդամման առաջարկը:*

Նախագահը քուէարկութեան է դնում այս առաջարկուած պատճառաբանութեամբ բանաձեւը:

Բանաձեւը անցնում է, որի դէմ են՝ Շահխաթունեան, Իսահակեան· ձեռնպահ են՝ Մաշուր, Մինասեան եւ Սիգ:

Սիգ·— *Համաձայն Նալբանդի Շրջանային ժողովի դրած պայմանի, տաճկահայ եւ կովկասահայ դատերի յարաբերութեան խնդրում մնում եմ ձեռնպահ քուէարկութեան առթիւ: Իսկ անձնապէս կողմնակից եմ բաժանման բանաձեւին:*

Ժողովն անցնում է հերթական այլ հարցերի: Քուէարկում է Նախագծի հրատարակման իրաւասութեան խնդրի վերաբերմամբ ընկ. Զարդարեանի բանաձեւը, որը ընդունւում է միաձայն:

Ընկ. Զարդարեան զեկուցում է տալիս Ոսկեհանքի շրջանի տեղական գործունէութեան մասին, որ հետեւեալն է·—

«Իսմիրի շրջանը կ'ընդգրկէ Մանիսան, Տէնիզլին, Գասապան եւ այս շրջանակին մէջ գտնուող միւս հայ բնակչութիւնները: — 1904էն մինչեւ ներկայ Ընդհանուր Ժողովը՝ Իսմիրը եղած է Յուցականի մէկ վայրը եւ այս ուղղութեամբ կատարած որոշ գործունէութիւն, որուն տեղեկագիրը եւ հաշուետուութիւնը արդէն Յուցական Մարմնի կողմէ առանձնապէս ներկայացուած է Ընդհանուր Ժողովին: Հետեւաբար ես պիտի տամ միայն տեղեկութիւններ, որ կը վերաբերին տեղական կազմակերպութեան եւ անոր արդի վիճակին: — Իսմիրը իր հայաշատ բնակչութեամբ, հայերու մտաւորական եւ նիւթական կարգացումով, իր աշխարհագրական դիրքովն ու եւրոպական այլեւայլ խառն ազգաբնակութիւներովը՝ ինչպէս նաեւ Կիլիկիոյ, Փոքր Ասիոյ հետ յարաբերուելու իւր բացառիկ դիւրութիւններովը, պէտք է, որ ներկայ Ընդհանուր Ժողովի լուրջ ուշադրութիւնը գրաւէ, մանաւանդ երբ ժողովը նկատի ունենայ թէ Իսմիրը անցեալին մէջ իր դրամական օժանդակութեամբը եւ բարոյական լաւագոյն ուժերովը նշանակալից դեր մը խաղացած է: Դժբախտաբար ասկէ առաջ Յուցականի գործունէութիւնը, ինչպէս Պոլսոյ, նոյնպէս Իսմիրի տեղական կազմակերպական գործին մեծապէս վնասած է, քանի որ ոչ միայն դուրսէն գացող ընկերները, այլ նոյնիսկ տեղական աչքի ընկնող ընկերները կլանուած են եղեր Յուցականով. մինչ, եթէ տրամադրելի ուժերը նուիրուած ըլլային աւելի լայն պրոպագանդի եւ կազմակերպչական աշխատութեան, տեղական գործը այսօր պիտի ներկայացներ աւելի խոր հիմնաւորում ու մխիթարական վիճակ: Յուցականի վիժումէն ետքը, ինչպէս ծանօթ է ժողովին, բազմաթիւ ձերբակալութիւններ եղան թէ՛ Իսմիրի, թէ՛ Մանիսայի, Գասապայի եւ միւս քաղաքներուն մէջ, եւ ընկերներէն մէկ մասը արտասահման անցաւ, այնպէս որ Կազմակերպութիւնը ջլատուեցաւ, որովհետեւ ձերբակալուածներուն մեծագոյն մասը դատապարտուեցան: Մէկ քանիները թէեւ անպարտ արձակուեցան, բայց այսօր կառավարական խիստ հսկողութեան տակ են եւ ոստիկանական խստութիւնները չափազանց ծանրացած են: Այս պահուս Իսմիրի շրջանին մէջ իրաւ է թէ գոյութիւն ունին խումբեր, կայ մարմին մը, որուն գործունէութեան հեռուէն ընթացք տուած է Բալկանի Կ. Կոմիտէն եւ օժանդակած է նիւթապէս, բայց կարեւոր է անկեղծութեամբ ըսել՝ թէ Իսմիրի կազմակերպութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ չէ: Դժբախտաբար տեղական ընկերներու մշակած հարցերը պիտի չկրնամ ներկայացնել ժողովին, քանի որ նախապէս այդ հարցերը ղրկուած են եղեր Իսմիրի կողմէ նշանակուած նախորդ պատգամաւորին՝ որու ընտրութիւնը բեկանեց ժողովը. այս իսկ պատճառով պիտի օգտուիմ նախապէս Բալկանի միջոցով Ընդհանուր ժողովին ղրկուած տեղեկագրէ մը: — Իսմիրը կոչուած է մեր յառաջիկայ գործունէութեան մէջ ալ կարեւոր տեղ մը բռնելու, թէ՛ Յուցականի, թէ նիւթական ու բարոյական օժանդակութեան տեսակէտով: Բայց անհրաժեշտ է, որ կազմակերպիչ ընկեր մը նշանակուի Իսմիրի համար, որպէսզի մէկ կողմէն՝ տեղական կազմը կրկին հիմնաւորէ, եւ միւս կողմէն՝ հետամտի իրագործել բոլոր այն պարտականութիւնները, որ ժողովը պիտի դնէ նոյն վայրին վրայ: Ասոր համար կ'առաջարկեմ որ ժողովը առժամաբար նիւթապէս օժանդակէ Իսմիրի գործին, մինչեւ որ անհիկ կարող ընկեր ինքնիրեն բանելու: Իսմիրը միշտ ընդունակ է տալու բարոյական ուժեր եւ նիւթական մեծ գումարներ. անհիկ ամէն յարմարութիւն ունի ծառայելու, իբրեւ յարաբերութեան գլխաւոր կեդրոն՝ Պոլսոյ, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ կեդրոններու հետ, ուստի ժողովին կը մնայ համապատասխան որոշումներ տալ եւ օգտուիլ այս վայրէն: Վերջացնելով այս համառօտ տեղեկութիւնները, պատրաստ եմ պատասխանելու ինծի տրուած հարցերուն:

Մալումեան·— *Ծանկալի է, որ Ոսկեհանքի շրջանը մանէ Պոլսում կազմուելիք կենտրոնական կոմիտէի իրաւասութեան տակ: Որովհետեւ Ոսկեհանքում մենք չենք կարող ունենալ այնքան լայն գործունէութիւն, որպէսզի կարեւոր լինի մի ջոկ կ. կոմիտէ հիմնել այնտեղ:*

Զարդարեան·— *Ես համաձայն չեմ, նոյնիսկ հակառակը կ'ասեմ, որ Ոսկեհանքին տրուի առաջնութիւնը Պոլսի հանդէպ: Որովհետեւ, նախ՝ Պոլսի հետ կապուած մնալը ինքնըստինքեան բարդութիւնների աղբիւր է դառնալու, եւ ապա՝ Ոսկեհանքը ունի լաւ երիտասարդ ուժեր եւ կարող է նիւթական միջոցներ տալ:*

Մալումեան·— *Բայց այնտեղ կայ մի ոչ-յեղափոխական մթնոլորտ, որը փչացնում է գործը: Կարծում եմ, որ առժամանակ գոնէ Ոսկեհանքում չպէտք է կազմել որեւէ անկախ մարմին:*

Վռամեան·— *Սխալ է ընկ. Մալումեանի ասածը, թէ Ոսկեհանքում տիրում է ոչ-յեղափոխական մթնոլորտ: Պոլսից յետոյ բարձրացաւ Ոսկեհանքը. այնտեղ կատարուել են մի շարք տեռորներ: Իսկ որ տղաներն ըմբոստացել են, այդ եղել է ոչ նրանց անյեղափոխական լինելուն պատճառաւ, այլ այն՝ որ գործելու նիւթ չէ տրուել նրանց: Շատ լաւ տղաներ են. բայց որովհետեւ գործ չունեն ձեռքերնին, ինքնաշլուխ քայլեր են անում: Եթէ նրանց գործ տրուի, անպայման օգտակար են լինելու մեզ: — Յետոյ Ոսկեհանքը չատ աւելի դիւրութիւններ է տալիս՝ Փոքր Ասիոյ գործերը վարելու համար, քան Պոլիսը· այդտեղ կան՝ երկաթուղի, փոստ, եւն. եւրոպական քաղաք է, եւ մենք միջոց ունենք յաճախ մտնել այնտեղ· Ոսկեհանքի միջոցով մենք մօտ կապեր կ'ունենանք Լեռնավարչի հետ: Այնպէս որ Մալումեանի առաջարկը՝ այնտեղ առայժմ միայն ենթակոմիտէ ունենալ, գտնում եմ սխալ: Ես միանում եմ Զարդարեանի կարծիքի հետ, որ ժամանակի ընթացքում Պոլիսը թերեւս տեղի տայ Ոսկեհանքի առաջ: Հարկաւոր է միայն փորձուած եւ մնայուն գործիչներ ուղարկել այնտեղ, որոնք ընդունակ լինեն՝ գործը հաստատուն հիմքերի վրայ դնելու:*

Ռոստոմ·— *Ճիշդ է, որ այնտեղ յեղափոխական ուժեր կան. բայց միայն՝ նրանց եռանդը չատ է չափազանց. եւ այդ չափազանց եռանդի չնորհիւ, նրանք չեն ուզում ճանաչել ոչ մի օրէնք, չեն ուզում ենթարկուել Պատասխանատու Մարմիններին. գործում են ինքնագլուխ: Ուրեմն, նախ մեզ միջոցներ պէտք տալէք, որոնցով կարելի լինի եռանդի այդ չափազանցման առաջն առնել, որպէսզի մենք գործունէութիւն սկսենք այնտեղ:*

Մանուկ·— *Դրսեցիներն են, որ դժգոհութիւնների ու խռովութիւնների առիթ են տալիս եւ ո՛չ թէ տեղացի գործիչները:*

Զարդարեանը եւս չեչտում է նոյն բանը՝ թէ, եթէ դրսից եկող գործիչները տակտով վարեն գործը, անկարգութիւններ տեղի չեն ունենայ: Վիճաբանութիւնները վերջանում են:

Նախագահը առաջարկում է՝ կա՛մ բանաձեւ կազմել ընկ. Զարդարեանի չօշափած հարցի վերաբերմամբ, կամ թողնել նրան առկախ:

Հարցը թողնւում է առկախ:

Ընկ. Վարդանի կողմից բանաձեւ է առաջարկւում, «Կովկասի ինքնապաշտպանութեան գործի» խնդրի վերաբերմամբ:

Համօ·— *Ինքնապաշտպանութեան կռիւների ընթացքում արած դիտողութիւնների հիման վրայ, ես այն եզրակացութեան եմ յանգել, որ ինքնապաշտպանութեան գործը ամբողջովին պէտք է զատել կուսակցութիւնից եւ դնել անկուսակցական հողի վրայ, կազմել մի անկուսակցական մարմին, որի մէջ ե՛ւ կը մըտնեն անհատ դաշնակցականներ՝ գործին մեր ուզած ուղղութիւնը տալու համար: Այսպիսով կուսակցութիւնը ազատ կը մնայ պատասխանատուութիւնից: Այժմ երբ ժողովուրդը զինուած է եւ որոշ չափով պատրաստուած, մենք յետ պէտք է քաշուենք: Այս տեսակէտից, Վարդանի առաջարկը եւս գտնում եմ պատասխան:*

Մաշուր·— *Ամէն տեղ ցանկութիւն է յայտնուած, որպէսզի գործը յանձնուի իրեն՝ ժողովրդին, եւ մենք ընդառաջ ենք գնալու այդ ցանկութեանը: Ինքնապաշտպանութիւնը համաժողովրդական գործ պէտք է դարձընել եւ ո՛չ թէ կուսակցական. ժողովուրդի մէջ պէտք է արծարծել մխիթարեան ղաղափարը. իսկ մեր դաշնակցական չարքերում, մենք պէտք է կազմակերպենք մարտական խմբեր՝ որոնք ե՛ւ կը լինեն առաջնորդողները կռիւների ժամանակ:*

Միհաւեան·— *Ինքնապաշտպանութեան գործը յաւիտենապէս չարունակելու անհրաժեշտութիւնը չկայ, ես համոզուա՛ծ եմ, — քանի որ պետական դումայի չնորհիւ վտանգը մասամբ վերացուած կարելի է համարել: Ցամենայն դէպս, Դաշնակցութիւնը ժողովրդին պէտք է թողնէ այդ գործը:*

Գագիկ·— *Ես չեմ կարծում, որ ժողովուրդը կարողանայ ինքն իրան բաւարար չափով տանել ինքնապաշտպանութիւնը, եթէ չլինի մի ընդհանուր ղեկավարութիւն: Եթէ անցեալ ընդհարումների ժամանակ կարելի եղաւ այնպէս յաջող ու փառաւոր կերպով տանել ինքնապաշտպանութիւնը, — դա չնորհիւ նրա էր, որ կար մի ընդհանուր ղեկավարող եւ ուղղութիւն տուող հիմնարկութիւն՝ ի դէմս Դաշնակցութեան, որին են—*

Թարիւռւմ էին ամէնքը եւ ամէն տեղ։ Եթէ չլինէր այդ ընդհանուր սխտեմն ու դեկավարութիւնը, ժողովուրդը չէր ցոյց տայ այն միահամուռ եւ փոխադարձ օգնութիւնը, որպիսին ցոյց տուեց։ Ես գիտեմ մի չարք պատահար, որ պիւղացիք խնայելով իրենց ռաղմամթերքը, չեն ուղեցել գնալ հարեւան գիւղին օգնութեան, ցանկանալով պահել փամփուշտները այն դէպքի համար, երբ իրենց գիւղի վրայ յարձակուեն. եւ եթէ գնացել են, գնացել են Դաշնակցութեան չնորհիւ. ուրեմն եթէ Դաշնակցութիւնը, իբրեւ կազմակերպութիւն, ուղում է խաոնուել ինքնապաշտպանութեան գործում, նա կա՛մ պէտք է «իրաւասութիւն» եւ «պատասխանատուութիւն» ստանձնի ամբողջովին, եւ կամ ոչ մի պարտականութիւն չպիտի ստանձնէ։ Միջին ճանապարհ չպէտք է լինի, որովհետեւ միեւնոյնն է՝ եթէ կիսատ պռատ պարտականութիւն ստանձնէ, այնուամենայնիւ անյայտող հետեւանքների մեղքը ամբողջութեամբ էլի կը դնեն Դաշնակցութեան վրայ։

Նախագահը *քուէարկութեան է դնում վարդապետ բանաձեւը կէտ առ կէտ.*

I կէտ — համաձայնութիւն (1 դէմ. 1 ձեռնպահ)։

II կէտ — համաձայնութիւն (2 դէմ. 2 ձեռնպահ։ *Հակառակ ձայն առուղները ասելորդ են դառնում* II *կէտը եւ այդ պատճառով էլ դէմ են նրան*)։

III կէտ — *մենամասնութիւնը* (13 ձայն) *առաջարկում է բոլորովին դուրս հանել այդ կէտը. բայց քանի որ այդ* 13 *ձայնը բոլոր ներկայ եղող ձայների* 2/3*ը չեն կազմում, նրանց առաջարկը չէ անցնում*։

Մաշուր *առաջարկում է նշանակել մի յանձնաժողով, որը մշակուած բանաձեւ ներկայացնի «ցինման գործի» հարցի մասին։ Առաջարկը ընդունւում է։ Ցանձնաժողովի համար ընտրուում են ընկերներ՝ Վարդան, Գագիկ, Սաքօ, Մաշուր։*

72ՐԴ ՆԻՍՏ (8 Ապրիլ, առաւօտ)

Նախագահուում է Մալումեան։

Ներկայ են 21 *ժողովականներ։*

Բացակայ են՝ Արամ, Մուրատ, Ստեփանեան, Վռամեան, Սեպուհ, Անդրանիկ (Հիւանդ), Զաւրեան։

Օրակարգն է՝ Արեւելեան Բիւրոյի հաշիւը։

Նախագահ.— *Ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը, գործը փութացնելու նպատակով, անհրաժեշտ է հետեւեալ նիստերի ներքերը բաժանել մի քանի մանաւանդ ժողովների միջեւ, որպէսզի գրանց վերաբերմամբ մշակուած զեկուցումներ ներկայացնեն Ընդհանուր ժողովին։*

Ժողովը ընդունեց այդ եւ աշխատանքը բաժանուեց հետեւեալ կերպով.

1. Գաղութների (*Ամերիկայի, Բուլկարի, Պարսկաստանի*) *մասին զեկուցում.*— *պրոպագանդի եւ կազմակերպելու որձ գործը.*— *հրատարակչական գործ.*— *դրամական միջոցներ.*— *մարտիկ ուժերի պատրաստութիւն։* — *Սրանց համար ընտրուեցին՝ ընկերներ՝ Վռամեան, Զաւրեան եւ Ստեփանեան։*

2. կազմակերպական կանոնների վերաքննութեան համար՝ ընկերներ՝ *Մալումեան, Համօ եւ Զոփուրեան։*

3. Դրամական հաշուետուութիւն *սխտեմի քննութեան եւ նոր սխտեմի մշակման հարցի համար՝ ընկերներ՝ Զոփուրեան, Գագիկ եւ Բարսեղեան։*

4. Բռնի հանգանակութեան *մասին՝ ընկերներ Համօ եւ Թոփչեան։*

5. Ձիճուորական ընդհանուր խորհրդի հիմնումն՝ *ընկերներ Մուրատ, Վարդան եւ Վռամեան։*

6. Դրամական եւ կարգապահական զեղծումների *քննութեան համար՝ արդէն նախապէս ընտրուած մանաժողովի անդամները։*

7. Զինու–պայքարական դպրոցի *հիմնարկութեան համար՝ ընկերներ Թոռոսեան եւ Զարդարեան։*

8. Համերաշխութեան *խնդիր. կազմակերպութեան վերաբերմունքը դէպի այլ հեռակցութիւնները.— մինչպատերազմեան Բիւրոյի առոյգները՝ ընկերներ Մալումեան եւ Համօ։*

9. Համերաշխ ձեռնարկներ *այլ հեռակցութիւնների հետ՝ ընկերներ Զարդարեան եւ Մինասեան։*

10. Միջկուսակցական ատեանի *հաստատումը՝ ընկերներ Վռամեան եւ Թոռոսեան։*

11. «Դրօշակի» *հրատարակութիւնը, տեղափոխութեան հարցը, գործերի եւ Լոնտոնի* Pro Armenia*ների հարցը, դերմաներէն օրգանի խնդիրը՝ ընկերներ Մալումեան, Մինասեան եւ Յակոբեան։*

12. Գարբերական օրգաններ *կովկասում՝ Թոփչեան, Շահխթունեան, Համօ։*

13. Գրքեր, *բրոշիւրներ եւրոպական լեզուներով՝ Մինասեան եւ Գուտան։*

14. Նոյնը՝ *ռուսերէն, թուրքերէն, իրաներէն, վրացերէն՝ Համօ, Արամ, Իշխան։*

15. Հայկական դատը *լաւէի ժողովին՝ Վռամեան, Մալումեան, Արամ, Զարդարեան։*

16. Կազմակերպութեան առձեռն դրամական միջոցները, *մասը ապագայ ապրիւրներ՝ Զոփուրեան, Գագիկ, Բարսեղեան եւ Ճուչիկ։*

17. Նախահաշիւ առաջիկայ ձեռնարկների համար՝ *Իշխան, Համօ, Սիմոն, Արամ, Սեպուհ։*

18. Միջոցներ *հաղորդման թանտարկեալների օգտին — կարմիր խաչ.— Ճուչիկ, Գուտան, Զարդարեան։*

19. Ընտրութիւնների եւ *յաջորդ Ընդհանուր ժողովի տեղի եւ ժամանակի որոշումը, կը ներկայացնէ դիւանը։*

Որոշուեց մինչեւ հինգ օր բոլոր զեկուցումները ներկայացնել դիւանին։ Ապա ժողովը անցաւ օրակարգին։

Համօ *ներկայացրեց Արեւելեան Բիւրոյի* 1904–5 *եւ* 1906 *տարիների հաշիւը. զեկուցումը տեւեց* 40 *րոպէ։*

Սկսում են հարցումները.

Շահխաթունեան.— *Հետաքրքիր է իմանալ, թէ դուռ կուսակցական մուտքը կովկասում, անկախ ինքնապաշտպանութիւնից, ծառայութեան ի՞նչքան կը լինի։*

Համօ.— *Իմ հաշիւներից դժուար է այդ անել, պէտք է առանձին առանձին մարմիններից հանել։*

Վահագն *կ'ուզէ գիտենալ, թէ ի՞նչ փոխառութիւններ են արուած զանազան կուսակցութիւններին։*

Համօ.— 904 *թուին սոցիալիստ յեղափոխականներին. մեր ժողովի որոշման հիման վրայ, մենք պէտք է համերաշխ գործէինք նոյնպէս վրացի սոցիալիստ ֆեդերալիստների հետ։ Նրանք աղքատ լինելով, կարիքի դէպքում մենք նպաստել ենք։*

Վահագն.— *«Ճառաջի» հրատարակութիւնը երկու բիւրոների համաձայնութեա՞մբ է եղած։*

Համօ.— *Այո՛, եւ՛ Բայոնական ժողովի, որը որոշեց յատկացնել* 20·000 *ռուբլի լրագրին եւ՛ 10·000 ռուբլի բրոշիւրներին։*

Վահագն.— *Բայոնական ժողովը իրաւունք ունէ՞ր փողը յանձնելու որոշում կայացնելու։*

Գագիկ.— *Երբ հրատարակութեան հարցը դրուեց, միւք ծագեց ակցիոներով [բաժնեթուղթերով] սկսել գործը. բայց երբ վերջինս չյաջողուեց, Բայոնական ժողովը որոշեց կազմակերպութեան միջոցներից վերցնել։*

Համօ.— *Երկու Բայոնական ժողով եղաւ, եւ երկրորդ ժողովը նկատելով ակցիայի անյաջողութիւնը՝ որոշեց այդ նպատակի համար որոշ գումար նշանակել։*

Վահագն.— *Կրկնում եմ, Բայոնական Ժողովն արդեօք իրաւունք ունէ՞ր այդ քայլն անելու. չէ՞ որ մենք ունենք եւ այլ բերքեր՝ «Հայրենիք», «Ռազմիկ». ինչո՞ւ նրանց չնպաստեցինք։*

Զոփուրեան.— «*Հայրենիք*»*ին եւ «Ռազմիկ»ին էլ տուել է Դաշնակցութիւնը, միայն փոխարինաբար։*

Թոփչեան.— *Ուզում եմ բերքի մասին փաստացի տեղեկութիւններ տալ։ Երկու բիւրոները իրաւունք են վորհրդի որոշումները։ Նիւթականի վերաբերմամբ որոշուած էր ակցիաներ բաց թողնել եւ յատուկ Ֆոնդ հաւաքել բերքի համար, անկախ կուսակցութեան միջոցներից։ Բայց բոլոր չբնաններից ստացուած տեղեկութիւններից պարզուեց, որ այդ ակցիաները կարելի էր տարածել, բայց դա միայն ձեւական բան կը լինէր եւ, միեւնոյնն է, կ'ազդէր կուսակցութեան եկամուտների վրայ, դուրս եւ քիւրխմացութիւններ ու բարգութիւններ առաջ բերէր։ Այդ պատճառով, աւելի նպատակայարմար համարուեց բերքը ժամանակաւորապէս հրատարակել կուսակցութեան օժանդակութեամբ, բայց պաշտօնական օրգան չհամարել, մինչեւ որ Բայոնական ժողովը հաստատէ։ Մարտին դումարուեց Բայոնական ժողովը։ Նա ոչ միայն իրաւունք ունէր, այլեւ պարտաւոր էր այդ քայլն անելու, որովհետեւ ամէն տեղից բերքի պահանջ էր լսւում։ Մեր կազմակերպական կանոնների թելադրութեամբ, իւրաքանչիւր մարմին կարող է եւ իրաւունք ունի իւր դրամի մի որոշ %ը պրծադրել տեղական պէտքերին։ Ուրեմն իրաւունքի մասին էլ հարց լինել չէ կարող։ Բացի այդ՝ կովկասի ինքնապաշտպանութեան համար նշանակուած էր* 20·000 *ռուբլի, որը կարող էր ծախսուել բերքի վրայ, որովհետեւ այդ պրոպագանդ է։ Եթէ բերքը կուսակցութեան ձեռնարկութիւն չլինէր, մենք այդքան բաց չէինք ունենայ. որովհետեւ երկու անգամ տաւար ենք դնել. բացի այդ՝ խմբագրական կազմը այնպէս էր սահմանուած, որ խմբագրողները ոչ միայն բերքին էին զեկավարում եւ առաջ տանում, այլ եւ պրոպագանդ մղում, դասախօսներ գնում։ Հենց այդ պատճառով էլ խմբագրական կազմի մէջ սովրականից աւելի մարդիկ են մտած, աւելորդ ծախսեր են արուած։*

Համօ.— *Դրանից զատ եղել են ծախսեր, որոնք խմբագրութեանը չեն, այլ Բիւրոներինը։*

Թոփչեան.— *Միանգամ ընդմիշտ զանազան քիւրխմացութիւնները վերացնելու համար, ասեմ, որ խմբագրական կազմը եղել է այնպիսի ընկերներից կազմըւած, որոնք հրաժարուել էին իրենց ունեցած ուրիշ պաշտօններից եւ վարձատրութեան չափը անհամեմատ պակաս է եղել, քան առաջ ստացածը։ Ես չեշտում եմ դրա վրայ, որովհետեւ ուրիշ տեսակի ծախսեր են լրտեսում այդ մասին։*

Վահագն.— *Թոփչեանի պաշտպանութիւնը այնքան էլ հիմնաւոր չէ, քանի որ տեղական գործերին կարելի է միայն* 10% *յատկացնել, մի չատ փոքր գումար՝ բերքի հրատարակութեան համար. իսկ ինքնապաշտպանութեան* 20·000 *ռուբլուց իրաւունք չունէին ծախսելու, որովհետեւ դա որոշուած էր միայն ա՛յդ գործի համար։ Ընկ. Զոփուրեանը սխալւում է նրա համար, որ իմ խօսքը սկզբունքի մասին է. Ժորհուրդը կամ Բայոնական Ժողովը իրաւունք չունէին Դաշնակցութեան կատարածէն որոշ գումար յատկացնել մի նոր ձեռնարկի, որպիսին է կովկասեան բերքը։ «Հայրենիք»ի հրատարակութիւնը ձեռնարկուած է անհատ ընկերների աջակցութեամբ, անկախ Դաշնակցութեան արկղից. իսկ ժամանակ առ ժամանակ, եթէ փոքրիկ փոխառութիւն է արուել, այն էլ մաս մաս վճարուած է։ Այժմ ունի մօտ* 1000 *ռուբլի սեփականութիւն, որ արուած է Հ. Յ. Դաշնակցութեան։*

Համօ.— 1904 *թուի Ընդհանուր ժողովի որոշումների համաձայն, ճիշդ է, մենք իրաւունք ունէինք միայն* 10% *ծախսել տեղական գործերի վրայ, բայց մեզանում բացառութիւններ միշտ էլ եղել են եւ յարգուել, ի հարկէ, երբ կարիքը այդպէս է պահանջել։ Օրինակ՝ կովկասեան տեղական մարմինները, երկրից եկած կամ գնացող գիներուների համար ծախսում են ահագին գումարներ (*20%*)։ Սա ընդհանուր ծախս է եւ ոչ տեղականի։ Մի՞թէ օրինակ Բիւրոյի ծախքը տեղական է։ Մի՛չ. դա ընդհանուր ծախս է։ Բացի այդ, կովկասի պէս վայրի պրոպագանդի ծախքը նոյնպէս տեղական ծախս չէ։ Թերքը եւ հրատարակութիւնները տեղական բաներ չեն, այլ ընդհանուր Դաշնակցութեան։ Կազմակերպութեան վարկը բարձր պահել, համամասնաւոր կովկասում, տեղական բնոյթ չէ կրում երբեք։ Այսպէս ուրեմն եթէ տասերի եռակից ընկնենք, այն ժամանակ* 1906 *թուին ծախսուած փողը կովկասում, նոյնպէս տեղական պիտի համարենք, որովհետեւ երկիր չէ մտցըւած, հետեւապէս անբերատուք։ Մի՞թէ կովկասի ինքնապաշտպանութիւնը, ժողովուրդի կեանքը ապահովելը տեղական գործ է։ Մի՛չ, դա ընդհանուր Դաշնակցութեան գործ է։ Մեր որոշումով մինչեւ* 1904*ը* 20% *էինք ծախսում կովկասում, իսկ* 80%*ը Երկրում. իսկ* 1906 *թուին կովկասում ծախսուել է* 67%*ը։*

Խահակեան.— *կարծում եմ, Համոյի ասածը փաստական տեսակէտից ճիշդ չէ, որովհետեւ 1906 թուին ծախսուածը հաւաքուած է ինքնապաշտպանութեան համար:*

Վահագն.— *Անհրաժեշտ է զատել բուն խնդրի եւ ինքնապաշտպանութեան դուժարները:*

Միհնասեան.— *Համոյի արդարացումը թերթի վերաբերմամբ սխալ է: «Ճառագ»ը ընդհանուր Դաշնակցութեան օրգան չէ. ընդհանուր է միայն «Դրօշակ»ը: «Ճառագ»ը եղել է սոսկ տեղական թերթ, մանաւանդ որ «Դրօշակ»ը եւ «Ճառագ»ը տարբեր կարծիքներ չունէին:*

Թոփչեան.— *«Ճառագ»ը կովկասեան Հայոնական ժողովի պաշտօնական օրգան է, այդ նոյն ժողովի որոշմամբ: Ճանկութիւն կայ եւ առաջարկել Ընդհանուր ժողովին՝ ընդունելու այդ թերթը, ամբողջ Հ. Յ. Դաշնակցութեան իբր օրգան:*

Նախագահ.— *Թոփչեանի ասածը հակասում է Համոյի ասածին:*

Թոփչեան.— *Երբեք չէ հակասում: Համոն չէ ասում, թէ մեր թերթը ամբողջ կազմակերպութեան պաշտօնական օրգան է, այլ պաշտպանելով կուսակցութեան շահերը, պայքարելով ուրիշ կուսակցութիւնների դէմ, ընդհանուր կուսակցական նշանակութիւն ունի: Մինչեւ Հայոնական ժողովը մենք չէինք յայտարարում իբրեւ պաշտօնական օրգան եւ հետեւ էինք մնում կուսակցութեան տեսական խնդիրների լուսաբանութիւնից: Միայն Մարտի Հայոնական ժողովը (41), իր երեք նիստերում մշակեց այդ հարցը, պաշտօնապէս ընդունեց, փող նշանակեց եւ խմբագրութիւն ընտրեց:*

Զարդարեան.— *Երբ «Հնչակի»ը սկսուեց հրատարակուել, Արեւմտեան Բիւրոն մեզ իրաւունք չտուեց պաշտօնական օրգան դարձնել:*

Մալումեան.— *Ճիշդ է, այդ տեսակ պաշտօնական օրգաններ հիմնելը անյարմարութիւններ ունեն կուսակցական տեսակէտից: Երբ կը խօսենք կազմակերպութեան պաշտօնական հրատարակութիւնների մասին, ես այն ժամանակ այդ հարցին կ'անդրադառնամ մանրամասն կերպով:*

Ռուստամ.— *Մեր որոշումներով, կազմակերպութիւնը ունէր միայն մի պաշտօնական օրգան, միւս մարմինները կարող էին հարկաւոր դէպքում միայն թռուցիկներ հրատարակել: Այդպէս էլ եղել է անցեալում. մենք դէմ ենք եղել ամէն անգամ, երբ այդ տեսակ ձգտումներ արտայայտուել են: Բայց պէտք է ասել, որ երկիրը, որ էր մեր գործունէութեան խնամքի վայրը, բացառութիւն է համարուել: Ընկերների համաձայնութեամբ, օրինակ 1895 թուին, մտադրութիւն կար երկրում մի թերթ հրատարակել: Մանուկը կը յիշէ, որ Տրապիզոն հետս տպագրական տառեր էի տարել: Մենք խոսխոսուել ենք նոյնպէս նոյնմանի փորձեր Շամում [Վան]: 1904ից յետոյ, որովհետեւ կովկասը նոյնպէս դառաւ մեր բուն յեղափոխական գործունէութեան վայր, բնական էր, նա դրանով ձեռք պիտի բերէր իրաւունք իր օրգանը ունենալու: Ինչ վերաբերում է «Ճառագ»ի ծախսերին, պէտք է ասեմ, որ դրանց մէջ մտնում են ընդհանուր կազմակերպական ծախսերից մի խոշոր մաս:*

Միհնասեան.— *Ես գտնում եմ, որ «Ճառագ»ը տեղական բան է եւ Հայոնական ժողովի իրաւասութիւնից դուրս էր 24·000 ռուբլի դրան յատկացնել: Ես առաջարկում եմ միեւնոյն ժամանակ կովկասեան օրգանի բնոյթը որոշել:*

Տաճատ.— *Ես դնում եմ այս հարցը.— «Հայոնական ժողովը, առանց չորնային կոմիտէների որոշման, իրաւունք ունէ՞ր նման բան ձեռնարկելու»: Թերթի խնդիրը ինձ համար ուղղակի նորութիւն էր:*

Զոփուրեան.— *Աչքի առաջ ունենալով խնդրի կարեւորութիւնը, արժէ առանձին քննել:*

Ժողովը համաձայնում է այդ առաջարկին:

Նախագահը խնդրում է ընկերներ Վահագնին եւ Տաճատին տալ այդ մասին առաջարկ:

Զարդարեան.— *Կ'ուզէի գիտենալ թէ այդ մեծաքանակ դրամները ինչպէ՞ս կը պահուին:*

Համօ.— *Այդ դրամները զանազան վստահելի անձնաւորութիւնների միջոցով դրւում են բանկ եւ դանձապահը կարիքի դէպքում ստանում է:*

Մալումեան.— *Դա անխուսափելի միջոց է: Նոյնիսկ Շուէյցարիայում, որքան էլ սա աղատ երկիր է, չէինք կարողանում «Դրօշակ»ի կամ «Դաշնակցութեան» անունով դրամը բանկը տալ: Այստեղ էլ մանաւանդ մարդկանց միջոցով է բանկ դրւում: Վստահութեան մասին խօսք չէ կարող լինել. բայց կատարեալ ապահովութեան համար բանկային տեսրում դրւում է, որ դրամը պատկանում է «Դրօշակ»ի խմբագրութեան, իբր ղեկավարութեան մի միջոց, որպէսզի մեր ընկերներից մէկի մեռնելու դէպքում, դրամը չվատնգուի եւ նրա ընտանիքին չանցնի: Կազմակերպութեան անունով բանկերում դրամ դնելու համար, պէտք է նա ճանաչուած լինի բանկային կանոններով:*

Սրանից յետոյ ընկ. Համոն տուեց Կովկասում հրատարակուած «Ճառագ»ի գրաղարանի բրոշիւրների հաշիւը, մինչեւ այս տարուայ փետրուար ամիսը:

Ժողովը փակուեց ժամը 7ին:

73ՐԴ ՆԻՍՏ (8 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:
Ներկայ են ժողովական:
Բացակայ՝ :

Նախագահ.— *Դարձեալ մի անգամ խնդրում եմ ժողովականներին՝ ժողովի ընթացքի մասին ոչինչ չգրել դրսի մարդոց եւ առհասարակ զգոյշ լինել: Ծրնունից լուր կայ, որ այստեղ է եկել մի կասկածելի պարոն, որի վերաբերմամբ հարկաւոր է զգուշանալ:*

Ընկերներ Զարդարեան եւ Խահակեան, իբրեւ մանախմբի անդամներ, զեկուցում են տալիս Ընդհանուր ժողովին ուղղուած լրերի տեղեկագրի մասին: — Զեկուցումը բաժանւում է երկու մասի՝ I եւրոպական պրոպագանդա եւ II մեղադրանքներ Արեւմտեան Բիւրոյի դէմ: Առաջին մասի վերաբերմամբ խօսք չէ լինում, ժողովը կանգ է առնում երկրորդ կէտի վրայ: Երկրորդ մասի քննութեան ժամանակ ընկ. Մալումեան, լինելով Արեւմտեան Բիւրոյի անդամ, նախագահութեան պաշտօնը յանձնում է զբաղեցնող անդամ ընկ. Համոյին:

Թոփչեան.— *Կ'ուզէի իմանալ, թէ արդեօք այդ տեղեկագիրը, լրերը ցանկացե՞լ է Ընդհանուր ժողովի նիւթ դարձնել, — որպէսզի ինքն եւս ներկայ գտնուի՝ իւր կարծիքները պաշտպանելու համար:*

Նախագահ.— *Տեղեկագիրը յանձնուել է Արեւմտեան Բիւրոյին, լրերի քրոջ ձեռքով, որը յայտնել է թէ, իր եղբայրը դուրս է եկել կազմակերպութիւնից:*

Հարց է բարձրանում, թէ ո՞րքան չարժէ է քննութեան ենթարկել տեղեկագիրը՝ լրերի բացակայութեան:

Միհնասեան *առաջարկում է ծանօթանալ տեղեկագրի հետ եւ բոլորովին չխօսել նրա մասին:*

Զելալեան.— *Եթէ ամենեւին չպէտք է խօսել տեղեկագրի մասին, կամ եթէ անհրաժեշտ է խօսել, պէտք է հրաւիրել նաեւ լրերին:*

Մաշուր, Թոփչեան, Տաճատ համաձայն են Զելալեանի առաջին:

Ռուստամ *գտնում է, սակայն, որ նախ հարկաւոր է ծանօթանալ Արեւմտեան Բիւրոյում եղած մի քանի դեկումենտների [փաստաթուղթերու]՝ լրերի չօշափած խնդրի մասին: — Եթէ հարցը մնաց դրձեալ չպարզուած, այն ժամանակ միայն հրաւիրել լրերին:*

Թոփչեան *առաջարկում է այդ դեկումենտները յանձնել քննիչ մանախմբովին:*

Մալումեան *ցանկութիւն է յայտնում, որ լրերը ներկայ լինի ժողովին այդ խնդրի քննութեան ժամանակ:*

Զելալեան.— *Բողոքում եմ, եւ առաջարկում, որ դեկումենտները յանձնուեն մանախմբովին: Լրերի հարցը պէտք է հիմնական քննութեան ենթարկել, քանի որ նա մեզ մօտ (Ամերիկայում) առանձին ուշադրութիւն է դրաւել:*

Թոփչեան *կրկնում է իւր առաջարկը, — դեկումենտները յանձնել մանախմբովին:*

Քննութեան դրուելով, առաջարկը անցնում է 16 ձայնով: եւ հարցը՝ փակւում:

Արամ *զեկուցում է տալիս «Արշաւախմբերի մասին», որի համառօտութիւնը հետեւեալն է.—*

«Մեր յեղափոխական աւցեալը, գուցէ ոչ մի ձեռնարկի վերաբերմամբ այնքան հարուստ նիւթ եւ փորձառութիւն չէ տուել մեզ, որչափ տուել են արշաւախմբերն ու օգնութեան գնացող խմբերը: Մեր առաջին յեղափոխական քայլերը կայացել են հայդուկային խմբեր կազմել եւ Երկիր ուղարկելու մէջ: Այդ խմբերի նպատակն է եղել վէնք անցնել Երկիր, վինուորներ, ռազմիկներ վարժեցնել. իսկ ներսը՝ Երկրում՝ այդ հայդուկային խմբերի նպատակն է եղել կազմակերպութիւն առաջ բերել: Գործունէութեան անձնական օրինակով ու անձնուիրութեամբ պրոպագանդա անել եւ ժողովրդին հրաւիրել ըմբոստացման: Ժամանակի ընթացքում, հայդուկային խմբերի այդ միսիան [առաքելութիւնը] փոխւում է, մի կողմից Երկրում առաջ եկած ժողովրդական կազմակերպութեամբ, միւս կողմից էլ վէնք տեղափոխելու դիւրութիւներ ունենալու գործառնութեամբ (?): Ըստ երեւոյթին, այժմ Երկրից դուրսի հայդուկային խմբերը պէտք է ծառայեն արշաւախմբերի կամ ձեռնարկների ժամանակ օգնութեան հասնելու կոուող ընկերներին: — Արշաւախմբերի գլխաւոր նպատակն է եղել [փաճացնել?, ընկճել?] սահմանագլխի մեր գործին թշնամի քիւրտ աշիրաթները, աւերել սահմանագլխի թրքական գօրանոցները եւ փոստերը. ձեռնարկների ժամանակ կառավարութեան ուժերը ցրուել, թոյլ չտալ, որ նա տանի իւր ուժերի մաքսիմալը ձեռնարկների վայրը. ձեռնարկների բնոյթին տեղականից աւելի ընդհանուր դժգոհութեան գոյն տալու համար, ցոյցեր անել սահմաններում, եւն.: Ահա այն գլխաւոր դրդիչ պատճառները, որ մեզ ստիպել են ունենալ Խանասորի, Բագրեւանդի եւ Օլթիի արշաւախմբերը: Առաջինը, ինչպէս գիտէք, կազմակերպուած էր Մայրիկցի աշիրաթին սահաբեկելու համար կամ ջընջելու, սրանց հասցրած վնասների համար՝ որ էր 600 վասպուրականցիներ եւ այլ բազմաթիւ խմբեր կոտորելը: Մեր յեղափոխական պատմութեան մէջ, այս փայլուն արշաւանքը, այնքան յոյսեր ու երազներ յարուցանող դէպքը, ինչպէս յայտնի է, շատ քիչ վնաս կարողացաւ հասցնել մայրիկցիների, տնտեսապէս թէ մարդկային կոհերով՝ որոնց թիւը 100ից չ'անցնիր: Իսկ սրա փոխարէն տուել ենք 19 կոհ եւ մօտ 40.000 ռուբլի ծախս: Իսկ թէ նա կարողացաւ սահաբեկել առհասարակ քիւրտերին, սա ճի՛շդ է. բայց ճշմարիտ է եւ այն, որ դա քիւրտ եւ առհասարակ մահմետական տարրերի մէջ այն համոզումը առաջ բերաւ, թէ մեր կռիւը ոչ թէ բացառապէս կառավարութեան, այլ առհասարակ մահմետականների դէմ է. ի հարկէ սա վերջնի միակ պատճառը չէ, բայց եւ պատճառներից մէկն է, գէթ Վասպուրականում. եւ այս թիւր կարծիքը տիրում է մինչեւ այժմ էլ նրանց հասկացողութեան մէջ: Այս բոլորի հետ միասին ես չեմ ուզում կառավարական պրովոկացիային երկրորդական դեր վերագրել. սա առաջին տեղն է բռնում. այսպիսի քայլերը դառնում են պրովոկացիայի աղբիւր կառավարութեան ձեռքը: — Բագրեւանդի եւ Օլթիի

արշաւախմբերի նպատակն է եղել, ինչպէս գիտէք, աւերել սահմանագլխի (Զօրուն, Մօսուն եւ Նարիման) թրքական զօրանոցները, կամ դարձնել թշնամու ուշադրութիւնը դէպի սահմանը եւ ընդհանուր բնոյթ տալ Բարձրաւանդակի ձեռնարկին: Այս խմբերից վերջինը, ինչպէս գիտէք, ունեցաւ մի ողբերգական վախճան, կոտորուելով, առանց դիմադրութեան, ռուս քոչականներից եւ թուրք սահմանապահ կինուորներից. իսկ առաջինը մասամբ ենթարկուեց նոյն ճակատագրին. իսկ մասամբ էլ կարողացաւ անել այն, որ հարկաւոր էր: Մի մոռանաք, որ այդ երկու ձեռնարկներն էլ տեղի են ունեցել Բարձրաւանդակի վիժումից ամիսներ յետոյ, այն ժամանակ՝ երբ ընկերները բունը կորցրած առիւծների նման թափառում էին դաշտում կամ Ախլաթում: Իսկ դրանք ո՞րքան կարողացան ընդհանուր գոյն տալ Բարձրաւանդակի շարժմանը, այդ մասին ո՛չ մի մխիթարական փաստ չունինք: Ինչ էր պատճառը այս բոլոր անյաջողութիւնների եւ դժբախտութիւնների արդեօք այն, որ գնացողները չէ՞ն ունեցել վոհուեւու բարձր արժանիք. ո՛չ, եւ հապար անգամ ո՛չ, ի պատիւ ընկած հերոս նահատակների եւ ի խրախոյս կենդանի մնացած պարտաճանաչ ընկերների, պէտք է խոստովանենք, որ նրանք արել են աւելի, քան ինչ որ սպասելի էր այդպիսի, մեծ մասամբ անփորձ տարրերից: Պատճառները խորն են եւ բազմական. ահա՛ դրանք.— Մենք չենք ունեցել անցնելու մի ապատ վայր, ինչպէս Բուլղարիան, որ առանց վտանգուելու կարողանանք կազմակերպել մեր ուժերը, նախքան սահմանը անցնելը: Մեր խմբերի մեծ մասը անծանօթ են եղել սահմանների աշխարհագրական պայմաններին, ճանապարհներին ու անցքերին. բացի այդ, անցնելուց յետոյ, չունէին փիփքական հնարաւորութիւն դիմադրելու անքնութեան, սովածութեան ու յոգնածութեան: Մեր ամէն մի կռուողի դէմ կառավարութիւնը դուրս է հանում 10 կռուող: Մենք դիւրութիւն չունէինք եւ ոչ էլ յոյս՝ ռազմամթերքի օգնութիւն հասցնելու. իսկ թշնամին՝ ընդհակառակն: Թշնամին ծանօթ է վայրերին, անցքերին, նա կռւում է իր սահմաններում, իւր տանը եւ հանգստութեամբ: Այդ կռիւը վերոյիշեալ պատճառներով չէ կարող տեւել մէկ օրից աւելի, յամենայն դէպս չէ կարող տեւողական բնոյթ ունենալ, կառավարութեան ուժերը ցրել կամ տալ գործին ընդհանուր բնոյթ: Մեր արշաւախմբերով, ուրեմն, չենք կարողանում մեր առաջադրած ամենափոքր նպատակներն անգամ իրագործել. միւս կողմից կազմակերպութեան այնպիսի բարոյական, տնտեսական եւ ռազմական վէրքեր ենք տալիս, որ դժուար է երկար տարիներ այդ բուժել, եւ նորանոր ուժերով փոխարինել: — Մի մոռանաք, որ արշաւախմբերը իրենց փանտաստիկ, հերոսական ու խրախուսիչ կողմերով, որքա՜ն մարդիկ են հրաւիրում կռուի դաշտը, ոգեւորելով նրանց. բացի այն գործի մարդկանցից, որոնք բնական մղումով դրանց ետեւից են գնում, ե՛ւ նրանք, որոնք խաղաղ ժամանակը դժուարանում են Երկիր մտնել եւ խաղաղ գործունէութեան նուիրուել, արշաւախմբերի ժամանակ, սրա առաջի շարքերումն են կանգնում: Ցիշեցէք համալսարանական ինտելիգենտներից մինչեւ կիսաինտելիգենտ երիտասարդութեան այն երկար շարանը, եւ դուք կը տեսնէք շատ սիրելի դէմքեր. ես կը տամ միայն ընկածների անունները՝ Կարոն, Սաղաթէլեանը, Գայլ Վահանը, Կոլիան, Ֆէլդերը, Մենակը, Թորգոմը, Ռուս Գէորգը, Վաղարշակը, երկու Հմայեակները, բժիշկ Խաչիկը, Իսաջանը, Լեւոնիկը, Վարդանը եւ այլ շատերը՝ որոնց անունները ինձ անյայտ են. դեռ կանգնած են ժողովուրդի ծոցից դուրս եկած հերոսները, Վաղօն, Որսորդ Գէորգը, Խանը եւն.: Ճիշդ է, կենսունակ ժողովուրդը եւ նրա թարգման կուսակցութիւնը ընկած հերոսների տեղ նորերը կը ծնի. բայց դրանք այնպիսի վոհեր են, որոնց տեղ նորերը ուենենալու համար Տաճկահայաստանը երկար պիտի սպասէ...: Այս բոլոր վոհերից վատ մենք թշնամու ձեռքն ենք թողնում առատ ռազմամթերք եւ այլ հարստութիւն, որով. մեր շնորհիւ, թշնամուն կինելու նոր դժբախտութիւնն ենք աւելացնում: Օգնութեան գնացող խմբերից՝ խաստուր, Խան, Նեւրուպ, Երկաթ, Վաղարշակ, Դուման եւ Փոխիկ, եւ ոչ մէկը չհասաւ իր նպատակին՝ հենց վերոյիշեալ պատճառով: Այժմ էլ կարող ենք պնդել, որ այդ հողի վրայ մենք ոչ մի յաջողութիւն չենք ունենայ: — Լուրջ գործողութիւնների ձեռնարկելը տեւողական դարձնելու համար մենք նախապատուութիւն ենք տալիս ռազմական եւ վինական ուժերի կենտրոնացման Երկրում, համոզուած լինելով, որ այդպիսի դէպքում ներսի տասը կռուողը աւելի բան կարող են անել՝ քան դրսից եկածները:

Եվրակացութիւն՝ նկատելով, որ Երկրում եղած շարժումների ժամանակ, սահմաններում վինուորական վիճակ ստեղծուելով, անցուդարձը դժուարանում է,

Նկատելով, որ արտասահմանից եկած խմբերը փիփքական հնարաւորութիւն չեն ունենայ ներս գնալու,

Նկատելով, որ այդ արշաւախմբերը արտասահմանում ահագին աղմով են ձգում, ոգեւորութիւն առաջ բերում, անխոհեմ քայլեր անել տալիս,

Նկատելով, որ այդ շարժումները անարդիւնք լինելով հանդերձ վնասում են Դաշնակցութեան դրամական եւ ռազմական բիւտճէն, եւ շատ ապնիւ տարրերի համար գերեզման են փորում սահմաններում, որ դրանով փակում ենք մեր կարեւոր գծերը՝ որով ապագայ գործը վրկում ենք իրեն կենդանութիւն տուող մի գործօնից,

Այս բոլորը ի նկատի առնելով, ես պնդում եմ, քանի որ մեր պայմանները ներսում եւ դրսում միեւնոյնն են, որ գէթ առ այժմ դրա փոխարէնն արժէ ուշադրութիւն դարձնել թուրքիի խմբերի կազմելուն, առաջ գալուն, որովհետեւ սրանք կարող են իրենց վրայ առնել արշաւախմբերի փունկցիաները [դերը] հեռու հայկական գաւառներից եւ ձեռնարկների վայրերից:

Գուսան.— Մենք չարունակ բողոքել ենք, որ արշաւախմբերը վնասում են միայն մեր գործին, բայց մեր բոլոր բողոքները մնացել են անլսելի: Այժմ վերջապէս համոզուել ենք, որ իսկապէս խոշոր վնասներ են տուել այդ արշաւախմբերը:

Զարդարեան.— Ինչո՞ւ սկզբունքով դատապարտել արշաւախմբերը. եթէ նրանք անյաջողութեան են յանդել, այս դէպքում պատճառը պէտք է բերել ոչ անպայման սկզբունքը, այլ այն՝ որ տեխնիկական սխալներ են եղել, ժամանակն անյարմար է եղել, խմբերը լրկատար պատրաստութիւն չեն ունեցել:

Համօ.— Անշուշտ այսօր արշաւախմբերը դարձել են միանգամայն աննպատակայարմար: Բայց չպէտք է մոռանալ, որ անցեալի խմբերը մեծ դեր են կատարել՝ ժողովուրդի մէջ կռուելու ոգին վառ պահելու տեսակէտից. մենք չենք կարող ներկայի պաղարիւնութեամբ դիտել արշաւախմբերի անցեալ գործունէութիւնը եւ միայն բացասական կողմեր որոնել նրա մէջ:

Ռոստոմ.— Ճիշդ է, անցեալի դէպքերը չպէտք է քննադատենք այսօրուայ տրամադրութեամբ, որովհետեւ այն, ինչ որ այսօր աննպատակայարմար է, առաջ եղել է ե՛ւ խելացի ե՛ւ անհրաժեշտ: Ընկ. Աբամը նախացնում է նաեւ Թանասորի նշանակութիւնը. բայց, կարծեմ, ակամայ, որովհետեւ նա ինքը մի ժամանակ ոգեւորուած է եղել այդ արշաւանքով: Մենք չենք կարող մոռանալ Թանասորը, նախ հենց այն պատճառով, որ նրա չնորհիւ հայ-քրտական յարաբերութիւնները աւելի մեղմ բնաւորութիւն ստացան. մաղրիկեանները, մանաւանդ, միանգամընդմիշտ Թողին իրենց նախկին թշնամական ընթացքը դէպի հայերը: Այդ արշաւանքով մենք ցոյց տուինք քրտերին, որ մենք մեր պէնքն ուղղում ենք միայն մեր անմիջական թշնամիներին եւ ո՛չ մի ամբողջ քրտութեան դէմ: Թանասորից յետոյ էր, որ մի քիւրտ ցեղապետ Աւետարանական եկաւ՝ Դաշնակցութեան հետ պաշտօնապէս յարաբերութիւնների մէջ մտնելու նպատակով: Բայց այն երկիւղը, թէ քրտերը վրէժխնդիր կը լինեն՝ չարդարացաւ:

Աբամ.— Թանասորն արդարացնելու կարիք չկայ, քանի որ մենք բոլորս խոնարհւում ենք նրա մեծութեան առաջ: Հարցը այն է սակայն, թէ արդեօք այսուհանդ էլ չարունակելու ենք միեւնոյն սակերին:

Ռոստոմ.— Ես համաձայն եմ, որ ներկայ պայմաններում, արշաւախմբերն աննպատակայարմար են: Բայց չէ՞ որ կարող են այնպիսի պայմաններ ելնել, երբ արշաւախմբերը կը դառնան անհրաժեշտ. այս կէտի մասին Աբամը ոչինչ չասեց:

Ստեփանեան.— Աբշաւախմբերի անյաջողութեան պատճառը եղել են մինչեւ քրտերը: Այսուհանդերձ հարկաւոր է աչքաթող, որ մեր եւ քրտերի մէջեւ մի ուղղական բարեկամութիւն հաստատուի. իսկ այս բանի համար հարկաւոր է Թողնել արշաւախմբերի սիստեմը:

Վահագն.— Աբամի դեկուցումը այնպիսի տպաւորութիւն Թողեց, իբր Թէ մեր բոլոր արշաւախմբերը եղել են սխալ. ստացուող բացասական տպաւորութեան տակ, նեմանում են այն դրական կողմերը, որ ունեցել են արշաւախմբերը, մինչդեռ այդ դրական կողմերն անհամեմատ աւելի շատ են: Արշաւախմբերի տուած դրական արդիւնքներից մէկն էլ այն է, որ ժողովրդի մէջ — սահմանից ե՛ւ այս, ե՛ւ այն կողմը — յեղափոխական ոգի է առաջացել: — Ես էլ համաձայն եմ, որ ներկայումս արշաւախմբերը աննպատակայարմար են:

Համօ.— Ժողովը դտնում է, որ արշաւախմբային գործելակերպն այլեւս ընդունելի չէ, քանի որ պայմանները փոխուել են. նոր պայմաններին համապատասխան էլ, նոր տակտիկա պէտք է ընդգծել: Մինչեւ այժմ մեր յեղափոխութիւնն եղել է՝ զինուորական, այսուհետեւ պէտք է լինի քաղաքական. գործող անձինք լինին ոչ միայն զինուորական, այլեւ ոչ-զինուորականներ:

Գուսան.— Այստեղ խօսում են այն բարոյական ազդեցութեան մասին, որ արել են արշաւախմբերը ժողովրդի վրայ, սահմանի երկու կողմումն էլ. բայց ես կ'ասեմ, որ սահմանից այս կողմը միայն եղել է որոշ խանդավառութիւն, մինչդեռ այն կողմը՝ խմբերը իրենց ներկայութեամբ փորձաքներ են բերել հայ գիւղերի վրայ. խումբը 2–3 ժամ կռւում է գիւղում, ապա հեռանում — եւ գիւղը ենթարկւում է պատժի, քայլայի ու աւերածի:

Զելալեան.— Ուրիշ էր անցեալը, ուրիշ է լինելու ապագան.— Աբշաւախմբեր չպէտք է ուղարկել, բայց միեւնոյն ժամանակ երկրից դուրս (արտասահմանում) հարկաւոր է ուժեր պատրաստել ու կենտրոնացնել, որոնք կարողանան հարկաւոր եղած րոպէին անյապաղ երկիր մտնել:

*Միմսոեան.— Արշաւախմբերը մեր կուսակցութեան պատմութեան մէջ մի մի ողբերգական դէպքեր են, տասնեակ մտաղ սերունդներ գոհ են գնացել նրանց պատճառով, մեր յեղափոխական գործունէութեան ուժը երկար տաեւի համար անդամալուծուած է: Այս ցաւալի ազէտների պատճառը ես երեք կէտով եմ բացատրում: Նախ կուռ վայրերի մէջ այլեւայլ ցեղերի թշնամական դիրքը, երկրորդ՝ սահմանից ներս կայանների հեռաւորութիւնը, երրորդ՝ հմուտ վարիչների պակասը. գնացած խմբերը մեծ մասամբ անծանօթ են եղել տեղագրական պայմաններին եւ ճանապարհը կորցնելով, անուղեցոյց, ընկել են թշնամիների ձեռքը. անհրաժեշտ է փոքուած վարչական ձեռք. անհրաժեշտ է փոքուած վարչական ձեռք. անհրաժեշտ է փոքուած վարչական ձեռք

Վռամեան։— Ոչ ոք, ի հարկէ, չէ կարող պնդել, թէ արշաւախմբերը վարդեր են ափռել իրենց յետեւից։ Բայց նրանց անյաջողութեան մէջ մեղաւոր է ոչ թէ սկզբունքը ի՛նքը, այլ ժամանակը։ 1904ի արշաւանքները, թերեւս այն դժբախտ ելքը չունենային, եթէ կատարուած լինէին մի այլ ժամանակ։ Այնուամենայնիւ, արշաւանքները, այն դրական ծառայութիւնն են մատուցել, որ ուժեղ կերպով նպաստել են ժողովուրդի գաղափարական արթնանալուն։

Արամ։— Յոսողներից ես այն տպաւորութիւնը առացայ, որ նրանք արշաւախմբերի վրայ նայում են ոչ իբրեւ մի տակտիկական գործի կամ մի ռազմական ճեռնարկի վրայ, յօդուտ մեր հարցի լուծման, այլ իբրեւ մի ապիտացիայի միջոցի, արտասահմանի պրոպագանդի համար կամ երկու ժողովուրդները իրար հետ կապելու մի միջոցի վրայ։ Այս բոլորը ճիշդ է, բայց սա ոչ մի կապ չունի մեր տակտիկայի հետ եւ չէ նպաստում գործին։ Իսկ ինչ վերաբերում է Ռոստոմի եւ Համոյի ասածներին, կ'ասեմ, որ դա մեր անցեալը սեւացնել կամ ակամայ նրանց օգտակարութիւնը ժխտել չէ։ Անցեալից ես վերցնում եմ այն օրինակները, որոնք կապ ունեն մեր տակտիկայի հետ։ Ես ժողովականների ուշադրութիւնն եմ հրաւիրում իմ զեկուցման այն կէտերի վրայ, որ մեր խմբերը ֆիզիքական հնարաւորութիւն չունեն ներս գալու, կամ սահմաններում նպատակայարմար գործ կատարելու։ Ահա այն մոտիֆները, որոնցով ես առաջնորդուել եմ զեկուցման կազմելիս։ — Եւ քանի որ անպատեհութիւնները չեն վերացել, միտք չունին եւ արշաւախմբերը, եւ զինատարները, ձեռնարկների ժամանակ։ — Ինդրում եմ քուէարկել իմ բանաձեւը։

Զարդարեան։— Նկատում է, որ այդ հարցը պէտք է յետաձգել, քանի որ զինուորական ընկերները բացակայ են նիստին։

Համօ։— Բայց քանի որ սկզբունքի խնդիր է դրուած մեր առաջ, մենք առանց այդ ընկերների էլ իրաւունք ենք, մեր վճռական կարծիքը յայտնել նրա վերաբերմամբ։

Նախագահը քուէարկում է հարցը եւ 17 ձայնով որոշւում է յետաձգել։

Նախագահը առաջարկում է պաշտօնապէս յայտնել ընկերներ Մուրատին եւ Սեպուհին, որ նրանք մտնեն իրենց պարտաւորութեան կատարման մէջ, այն է՝ յանձնախմբի նիստերին։

Ժողովը ընդունում է առաջարկը եւ յանձնարարում է ընկերներ Զարդարեանին եւ Մինասեանին, այդ մասին տեղեկացնելու վերոյիշեալ ընկերներին։

Նիստը փակւում է։

74ՐԴ ՆԻՍՏ (9 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Մալումեան։

Ներկայ են 24 ժողովական։

Բացակայ են՝ Մուրատ, Սեպուհ, Աղբրանիկ (հիւանդ), Գրուպինեան։

Նախագահ։— Այսօր հերթ է Լեռնավարի ներկայացուցիչ ընկ. Ջաւրեան. խնդրում եմ մանդատներ առուղղ մանրամասներից՝ առուղղ թղթերը եւ մտցնել ցանկի մէջ։

Օրակարգն է Ցուցականի յանձնաժողովի զեկուցումը։ Ցանձնաժողովի անդամներն են՝ Արամ, Վռամեան, Թոփչեան, Ջաւրեան եւ Վարդան։

Թոփչեան։ Մի քանի խօսքով բացատրում է թէ ի՛նչ կերպով կազմել են իրենց զեկուցումը. զեկուցումը բաժանած են երեք մասի ա) Տեխնիկական, բ) կազմակերպական, գ) Ընկերական յարաբերութիւններ։

Տեխնիկականի մասին զեկուցանում է Արամը. կազմակերպականի մասին՝ Վռամեան, իսկ ընկերական յարաբերութիւնների մասին, ինչպէս նաեւ եզրակացութիւնը իրրեւ վերջաբան՝ Թոփչեան։

Վռամեանի զեկուցման մէջոցին, Սաֆոն յաճախ բողոքի ձայներ է բարձրացնում եւ բացականչութիւններով ընդմիջում զեկուցողին. ի վերջոյ բողոքը աւելի սուր կերպարանք առանալով, զեկուցման ընթերցումը ընդհատուեց։

Սաֆօ։— Ես բողոքում եմ այսպիսի զեկուցումի դէմ եւ անկարող եմ այլեւս լսել։ Դա զեկուցում չէ, այլ ամբաղձակտ ցեխ եւ ամբաստանութիւն։ Ես կրկնում եմ, անկարող եմ մնալ այստեղ եւ հեռանում եմ (եւ փորձում է հեռանալ)։

Գագիկ։— Ես դրան հակառակ եմ։ Նա հեռանալով զրկում է մեզ այդ հարցով զբաղուելու հնարաւորութիւնից։

Թոփչեան։— Ընդհանուր ժողովը այդ գործը յանձնել է մանրամասներին, մանրազնին քննելու եւ զեկուցում ներկայացնելու։ Եւ նա կատարում է իր վրայ դրած պարտականութիւնը յենուելով փաստաթղթերի, արձանագրութիւնների եւ տեղեկագրի վրայ։ Թէ այդտեղ որքան յանձնախմբի անդամները անձնական հաշիւներով են զեկավարուել, դա հարցի լուսաբանութիւնը ցոյց կը տայ։ Դուք, Գ. Սաֆօ, քաղաքին ունէիք այստեղ մնալ, ամբողջ զեկուցումը լսել եւ յետոյ, եթէ կարող էք ապացուցանել, ապացուցէք, որ դա ամբողջապէս սխալների եւ զրպարտութիւնների մի շարք է։ Հակառակ դէպքում, մեր հեռանալը հաւասար է պատասխանատուութիւնից փախուստ տալուն։

Սաֆօ։— Ես կը հեռանամ, բայց ժողովը ինչ վճռէ, ես պատրաստ եմ նրա որոշումներին ենթարկուելու։ Ես չեմ փախչում. դուք գիտէք որ ես միշտ իսկ առանց պաշտօնական հրաւէրի եմ եկել այստեղ։ Ես չեմ կարող այլեւս մնալ. այդ զեկուցումը աւելի քան միակողմանի կերպով է կազմուած, կրքոտ, նոյնիսկ թրքական թերթերի տեղեկութիւնների վրայ յենուած։ Ես հեռանում եմ ժողովից, դուք կը տաք ինձ զեկուցումները եւ ես դրանց կերպով կը ներկայացնեմ մանրամասն պատասխան։

Վարդան։— Ժողովը որպէսզի [չլինուի] միակողմանի եզրակացութեան վրայ, անհրաժեշտ է Սաֆոյի ներկայութիւնը։ Սաֆոն ասում է, որ իրենն է միակ ճշդրիտը։ Լա՛ւ, չէ՞ որ, Սաֆօ՛, դու պարտաւոր ես այդ ճշմարտութեան մէջ մեզ համոզելու։ Ժողովը պէտք է լսէ երկու կողմերի բացատրութիւնը եւ տայ իր խօսքն է ասելու։

Բարսեղեան։— Սաֆոն ուզում ու իւր բացակայութեամբ բողոքական ճնշում գործ դնել ժողովի վրայ, որ ցանկալի չէ։

Համօ։— Եթէ Սաֆոն չէ կարողանում լսել զեկուցումը, այդ իր գործն է. բայց ժողովի գործն է լսել այդ կատարուած փաստաթղթերի, նա պարտաւոր է յամենայն դէպս մեր հարցումներին պատասխանել։ Նա կարող է հեռանալ, ես հակառակ չեմ դրան, եւ ժողովի պատւի տեսակէտից, երբեք հարկ չեմ տեսնում խնդրելու, որ նիստին ներկայ գտնուի։

Նախագահ։— Ընկ. Համոյի կարծիքը սխալ է։ Սաֆոյի ցանկութեամբ է ընտրուել այս մասնախմբերը եւ մի քանի ընկերներ, որոնց ժողովը ուղում էր մասնաժողովի անդամ ընտրել եւ որոնք կարող էին գործի տեսակէտից խիստ օգտակար լինել, դուրս են մնացել, հենց միայն այն պատճառով, որ Սաֆոյի հետ, ինչպէս ինքն է ասում, լաւ յարաբերութեան մէջ չեն եւ կարող են անձնական տեսակէտով զեկավարուել։ Ահա այդքան մեծ տեղ է թողել ժողովը Սաֆոյի ցանկութիւններին։ Ես պնդում եմ, որ նա պարտաւոր է մնալ, լսել մինչեւ վերջը եւ իւր պատասխանը տալ։

Համօ։— Իմ միտքը լաւ չէք հասկացել։ Ես ասում եմ, Սաֆոն պարտաւոր է բացատրութիւն տալ, ինչ ձեւով լինի այդ, կամ այստեղ ժողովում, կամ դրսում։ Յատուկ պարագայում՝ ժողովը կարող է իւր որոշումը կայացնել՝ հիմնուելով զեկուցման եւ ձեռքում եղած դիւմումնաները [փաստաթուղթերուն] վրայ։

Արամ։— Մեր տրամադրութեան տակ դրել էր Բիւրոն բոլոր դրաւոր փաստաթղթերը, ինչպէս եւ Սաֆոյի նամակները. ծուցական Մարմնի անդամներից այսթեղ էր միայն Սաֆոն։ Մենք ցանկանում էինք, խնդիրը բազմակողմանի լուսաբանելու համար, իմանալ նաեւ մեր ընկերների կարծիքը, — օրինակ՝ Թորգոմի եւ Թուբինայի, ինչպէս եւ դահագան մասնաւոր ընկերների դիտողութիւնները։

Թոփչեան։— Անցեալ նիստերից մէկում, մենք ամբողջ 4 ժամ լսեցինք Սաֆոյի տեղեկագիրը։ Այնտեղ եւս կային անճառելի զրպարտութիւններ, կրքից բիան խօսքեր եւն., բայց ժողովը համբերութեամբ մինչեւ վերջը լսեց, որպէս այդ բոլորը։ Այդ ի՞նչ վերմունք է. դեռ մասնախմբի ամբողջ բացատրութիւնը չլսած, նրա եզրակացութիւնը չիմացած, Սաֆոն ուզում է ժողովից հեռանալ։ Կրկնում եմ, այդ միայն խուսափելու միջոց է, ուրիշ ոչինչ։ Մի մարդ, որ ընդունակ է համարուել հակայական ցոյց կազմակերպելու, նա պիտի ունենայ չղջրի ամբութիւն՝ այս զեկուցումը եւս լսելու։ Իսկ նրա կարծիքը մասնախմբի մասին ես համարում եմ միանգամայն անհիմն զրպարտութիւն։ Մեզ զեկավորող եղել է մեծիայն ֆակտը [իրողութիւնը], փաստաթուղթը։ Եթէ մեր զեկուցման մէջ դատ ճշմարտութիւններ են պարզուած եւ այդ ճշմարտութեան խօսքը ճնշում, գայթացնում է մեզին կամ մեզին, — դրանում մեղաւորը մենք չենք, այլ մերկ իրականութիւնը։ Ուրեմն, գայթացնելու եւ հեռանալու փոխարէն թող լսեն ու մինչեւ վերջը լսեն։

Վռամեան։— Ասել է Գ. Սաֆոն ամէն բան իրաւունք ունի զեկուցանել եւ զրպարտել. մենք պարտաւոր ենք այդ ամէնը տանել եւ լսել. իսկ նա անկարող է լսել եւ մնալ ժողովում, երբ մենք, նրա նամակների, պաշտօնական գրութիւնների, տեղեկագրի, արձանագրութիւնների վրայ յենուած՝ ասելիս ենք մեր եզրակացութիւնը, մեր բացատրութիւնը։ Ահա ինչպիսի հանճարեղ տրամաբանութիւն հանդէս կը բերէ։

Նախագահ։— Նորից կրկնում եմ, դուք պարտաւոր էք մնալ ժողովին, լսել ամէն ինչ եւ մեր կողմից պատասխան տալ։

Սաֆօ։— Ես համաձայն չեմ։

Սրանից յետոյ չարունակւում է զեկուցման ընթերցումը։

Ընդմիջում 5 րոպէ։

Սաֆօ։— Ես միանգամայն համաձայն եմ մասնախմբի վերջին առաջարկին։ Դատ, իսկոյն գա՛ս։ Դեռ 6 ամիս առաջ Բիւրոյին ես դատի համար առաջարկ եմ արել։ Ծուցականի Մարմնի ցանկութիւնն է այդ։ Իսկ ըստ էութեան չեմ կարող երկար խօսել, քանի որ զեկուցման մէջ այնքան բան է խճողուած, այնքան ծանրակչիռ խնդիրներ արծարծուած, որ ինձ պէտք է խըղճալով հանդերձ, նա պարտաւոր է յամենայն դէպս մեր հարցումներին պատասխանել։ Նա կարող է հեռանալ, ես հակառակ չեմ դրան, եւ ժողովի պատւի տեսակէտից, երբեք հարկ չեմ տեսնում խնդրելու, որ նիստին ներկայ գտնուի։

Նախագահ։— Ընկ. Համոյի կարծիքը սխալ է։ Սաֆոյի ցանկութեամբ է ընտրուել այս մասնախմբերը եւ մի քանի ընկերներ, որոնց ժողովը ուղում էր մասնաժողովի անդամ ընտրել եւ որոնք կարող էին գործի տեսակէտից խիստ օգտակար լինել, դուրս են մնացել, հենց միայն այն պատճառով, որ Սաֆոյի հետ, ինչպէս ինքն է ասում, լաւ յարաբերութեան մէջ չեն եւ կարող են անձնական տեսակէտով զեկավարուել։ Ահա այդքան մեծ տեղ է թողել ժողովը Սաֆոյի ցանկութիւններին։ Ես պնդում եմ, որ նա պարտաւոր է մնալ, լսել մինչեւ վերջը եւ իւր պատասխանը տալ։

Համօ։— Իմ միտքը լաւ չէք հասկացել։ Ես ասում եմ, Սաֆոն պարտաւոր է բացատրութիւն տալ, ինչ ձեւով լինի այդ, կամ այստեղ ժողովում, կամ դրսում։ Յատուկ պարագայում՝ ժողովը կարող է իւր որոշումը կայացնել՝ հիմնուելով զեկուցման եւ ձեռքում եղած դիւմումնաների [փաստաթուղթերուն] վրայ։

Արամ։— Մեր տրամադրութեան տակ դրել էր Բիւրոն բոլոր դրաւոր փաստաթղթերը, ինչպէս եւ Սաֆոյի նամակները. ծուցական Մարմնի անդամներից այսթեղ էր միայն Սաֆոն։ Մենք ցանկանում էինք, խնդիրը բազմակողմանի լուսաբանելու համար, իմանալ նաեւ մեր ընկերների կարծիքը, — օրինակ՝ Թորգոմի եւ Թուբինայի, ինչպէս եւ դահագան մասնաւոր ընկերների դիտողութիւնները։

Թոփչեան։— Անցեալ նիստերից մէկում, մենք ամբողջ 4 ժամ լսեցինք Սաֆոյի տեղեկագիրը։ Այնտեղ եւս կային անճառելի զրպարտութիւններ, կրքից բիան խօսքեր եւն., բայց ժողովը համբերութեամբ մինչեւ վերջը լսեց, որպէս այդ բոլորը։ Այդ ի՞նչ վերմունք է. դեռ մասնախմբի ամբողջ բացատրութիւնը չլսած, նրա եզրակացութիւնը չիմացած, Սաֆոն ուզում է ժողովից հեռանալ։ Կրկնում եմ, այդ միայն խուսափելու միջոց է, ուրիշ ոչինչ։ Մի մարդ, որ ընդունակ է համարուել հակայական ցոյց կազմակերպելու, նա պիտի ունենայ չղջրի ամբութիւն՝ այս զեկուցումը եւս լսելու։ Իսկ նրա կարծիքը մասնախմբի մասին ես համարում եմ միանգամայն անհիմն զրպարտութիւն։ Մեզ զեկավորող եղել է միայն ֆակտը [իրողութիւնը], փաստաթուղթը։ Եթէ մեր զեկուցման մէջ դատ ճշմարտութիւններ են պարզուած եւ այդ ճշմարտութեան խօսքը ճնշում, գայթացնում է մեզին կամ մեզին, — դրանում մեղաւորը մենք չենք, այլ մերկ իրականութիւնը։ Ուրեմն, գայթացնելու եւ հեռանալու փոխարէն թող լսեն ու մինչեւ վերջը լսեն։

Վռամեան։— Ասել է Գ. Սաֆոն ամէն բան իրաւունք ունի զեկուցանել եւ զրպարտել. մենք պարտաւոր ենք այդ ամէնը տանել եւ լսել. իսկ նա անկարող է լսել եւ մնալ ժողովում, երբ մենք, նրա նամակների, պաշտօնական գրութիւնների, տեղեկագրի, արձանագրութիւնների վրայ յենուած՝ ասելիս ենք մեր եզրակացութիւնը, մեր բացատրութիւնը։ Ահա ինչպիսի հանճարեղ տրամաբանութիւն հանդէս կը բերէ։

Նախագահ։— Նորից կրկնում եմ, դուք պարտաւոր էք մնալ ժողովին, լսել ամէն ինչ եւ մեր կողմից պատասխան տալ։

Սաֆօ։— Ես համաձայն չեմ։

Սրանից յետոյ չարունակւում է զեկուցման ընթերցումը։

Ընդմիջում 5 րոպէ։

Սաֆօ։— Ես միանգամայն համաձայն եմ մասնախմբի վերջին առաջարկին։ Դատ, իսկոյն գա՛ս։ Դեռ 6 ամիս առաջ Բիւրոյին ես դատի համար առաջարկ եմ արել։ Ծուցականի Մարմնի ցանկութիւնն է այդ։ Իսկ ըստ էութեան չեմ կարող երկար խօսել, քանի որ զեկուցման մէջ այնքան բան է խճողուած, այնքան ծանրակչիռ խնդիրներ արծարծուած, որ ինձ պէտք է խըղճալ

րել, այդ զեկուցումը՝ փաստաթղթերի հետ յանձնէք, որպէսզի կարողանամ մի առ մի պատասխանել, ի հարկէ մի ուրիշ նիստում։ Միայն այսքանը կ'ասեմ, որ աւելի քան դաղրելի է ¶. Վռամեանի զեկուցումը, աւելի ճիշդ մասնախմբի ամբաստանագիրը (բացականչութիւններ. «դա Վռամեանի անձնական կարծիքը չէ, այլ մասնախմբի»)։ Մի ծանր ամբաստանութիւն, որի դէմ կարծում էի պիտի բողոքեն Մալումեան եւ Ռոստոմ, քանի որ դրանք չատ լաւ ծանօթ են իսկական իրականութեան, դա Ոսկեհանքի վիճման պատճառն է։ Մեզ մեղադրում են գործը հապճեպ կատարելու մէջ։ Այդ մի անխիղճ ամբաստանութիւն է։ Բիւրոյի անդամներին քաջ յայտնի է, որ մենք դանդաղում էինք գործի ամբողջութիւնը եւ պատասխանատուութիւնը ի նկատի ունենալով. իսկ Բիւրոն յաճախ կարգադրում էր՝ ձեռնարկը չտապեցնել։ Մեզ մեղադրում են նաեւ այնպիսի բաների մէջ, որ բոլորովին անարդար են, օրինակ, թէ ինչո՞ւ այսքան կատարող է եղել եւ ոչ աւելի։ Մենք արել ենք այն, ինչ գիտենք, ինչ կարող էինք գիտնալ եւ ոչ թէ պահանջել այն, ինչ չէինք կարող գիտնալ։ Մի կէտ եւս կ'ուզէի պարզել։ Օրերորդը պնդում էր պայքումը վայրկենական անել, իսկ ես հակառակ էի։ Իսկ ինչո՞ էի հակառակում, մի՞թէ նրա կեանքը ի նըկատի ունէի. ես չատ լաւ գիտէի, որ նա անձնազոհ է, որ նա պատրաստ է մեռնելու։ Բայց մոռենալը դժուարին է, աւելի դժուարին երբ որոշ է, թէ այս ինչ րոպէում է մահն սպասւում։ Ինձատ ծանր է այդ րոպէն. մի փոքր չուտ կամ ուշ, մի փոքր տատանում, եւ ամէն ինչ ոչնչացած է։ Կեանքի ամենատանձնազոհ, հերոս անհատներն անդամ կախաղանին մօտենալիս գուշատւում են. բայց այդ ոչինչ, դահիճը կը կախի նըբան.— իսկ մե՞րը։ Մեզանական համար նման րոպէներ չկան. մի րոպէ, եւ աւելին չկայ։ Ատում եմ, մեղադրելիս՝ այդ րոպէի ամբողջ նշանակութիւնը պիտի ըմբռնել՝ հասկանալ։ Մեզ համար բոլոր մանրամասնութիւնները պարզ էին. այդ կը վկայէ եւ օրերորդը։ — Տարածութիւնը չափել ենք մի քանի անգամ։ Մենք գիտէինք, որ Սուլթանը 1 րոպէ 24 վայրկեանից [երկվայրկեան] մօտենում է այսինչ տեղին. 6 քայլ այս կամ այն կողմը պիտի թողնուէր. եւ օրերորդը, ինչպէս ինքն է ասել, նշանակած ժամանակից երկու րոպէ չուտ է տեղմել վայրկենապարը։

Ռուբինա։— Ո՛չ, սխալւում էք, ես ճիշդ ժամանակին եմ տեղմել(42)։

Սաֆօ։— Լաւ յիշեցէք, օրերորդ, այդ դուք մի քանի անգամ էք ասել։ Դուք արել էք մի քանի քայլ, երբ փողը հնչել է։

Ռուբինա։— Ես այդպիսի բան չեմ ասել եւ չէի էլ կարող ասել, քանի որ հիմնովին սխալ է։ Ես խելքս ու գիտակցութիւնս չէի կորցրել, եթէ այդպիսի բան էք ընդունում, չարաչար սխալւում էք։ Ես ճիշդ ազդանշանի ժամանակ տեղմեցի նշանը։ Եւ երբ երկու քայլ

հետաքրքրական պատմութիւնը, մեզ քեզնից պակաս չէ։

Սափօ.— Որքան յիշում եմ, դուք ասել էք ինձ, որ մի երկու վայրկեան չուտ էք սեղմել։ Եթէ այդպէս չէ, ուրեմն ես սխալուել եմ եւ ներողութիւն եմ խընդրում։ Մենք չէինք կասկածում, եւ հաւատացած էինք, որ Սուլթանը մեռել է, որովհետեւ ամէն ինչ կատարուել էր այնպէս, ինչպէս կարգադրուած էր։ Հենց այդ-պատճառով էլ թոյլատրում ենք նամակներին անմիջապէս փոստը տալու։ Ներիր չէ՞։ Վատմանի դիտողութիւնը այդ մասին։ Ժորբար մեզ հաւատացնում էր, որ ժամը 1-ին գցած նամակները հասնում են յաջորդ օրը։ Մենք ընդհատում էինք ուրախս.— Եթէ պայթել է մեքենան, ուրեմն եւ մեռել է Սուլթանը, հետեւաբար պիտի յայտնել պետութիւնների ներկայացուցիչներին։ Եթէ 15 օր էլ մնայինք, անկարող էինք դիանալ ուելիին, ինչ պիտի էինք։ — Դրութիւնը խիստ գժուարին եւ կրիտիկական էր։ Րոպէ առ րոպէ սպասում էր կոտորած։ Միջամտութիւնը արագացնելու եւ կոտորածի առաջն առնելու համար, մենք անհրաժեշտ գտանք չսպասելնեղ նաեւ հիւպատոսների դրութիւնները։ Եթէ մենք գիտեինք անպատ, որ Սուլթանը մեռած է, էլի կր յանձնէինք նամակները։ Մենք նոյն օրը երեկոյեան հետացանք քաղաքից։ — Մի կէտ եւս։ Մեզ մեղադրում են, որ մեր բնակիչներին թոյլ եւ հետացել ենք։ Այո՛, պարոններ, ես ի՛մաեմ, որ էլ մեզ ալինչ չէր կապի Գալաթայ հետ։ Մեր միակ նպատակը Սուլթանն էր եւ նա բնիած էր։ Մենք ունէինք միայն մորթին, որի մասին կարող էինք մտածել եւ հոգալ։ Իսկ միւս բնակիչներին չէինք էլ նանաչում, չգիտէինք նոյնիսկ հասցէները, որպէսզի հնարաւորութիւն ունենայինք անգէմութիւն տալու եւ հետերնիս վերցնելու։ Այդ, խոստովում եմ, էր միայն եւ օրմորդը (վիկտոյէ է)։ Միայն մորթան էր ուրեմն, նրան կարող էին խուզարկել եւ մերկացնել։ Բայց նրա գրութիւնը, իրը բնակիչ, անհամեմատ լի վտանգաւոր էր, քան մերը։ Բայց էլի հոգացել ենք նրա մասին։ Միեւնոյն երեկոյ պատուիրեցինք, առաւնը նրան հարիւրաւոր գրամը եւ ասացինք, որ կիմի ուղում է՝ խոխոն գաւառ գայ, մանաւանդ որ նա ունէր կոնսուլար անձագրիր։ Եւս վերջացնում եմ։ Իմ երկար մանրամասն պատասխանը լրացնում եմ մի այլ անգամի, երբ մտածեն կը ծանօթանամ զեկուցման հետ։

Նախագահ.— Ես փափաք եմ մեղադրել։

Սափօ.— Բայց մի խնդիր մնաց անպատ.։ արդեօք ես զեկուցանե՞ր եմ այս մեղադրում, եւ մանաւանդ զեկուցումը փաստաթղթերի հետ տա՞ր էք բնե, որպէսզի մանրամասն, մի առ մի պատասխանեմ։

Նախագահ.— Այդ մասին կը խօսակ երեկոյեան նիստին։

Նիստը փակուեց ժամը 4-ին։

75ՐԴ ՆԻՍՏ (9 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան։

Ներկայ են 24 ժողովական։

Բացակայ են՝ Խահակեան, Մուրատ, Սեպուհ, Աղբրանիկ (Հիւանդ), Ջուբեան։

Ցուցական յանձնաժողովի զեկուցումը.— *Հարուածուիչն* նախորդ նիստի։

Սափօ.— Ինչո՞ւ որ այդ զեկուցման մէջ անիրաւ մեղադրանքներ կան բարդուած ինձ վրայ, ես պէտք է պատասխանեմ այդ բոլորին. իսկ, որպէսզի մինչեւ ուշ ենթամ հարկաւոր պատասխաններս տալու, կը խնդրէի ինձ յանձնել քէ՛ այդ զեկուցումը եւ քէ՛ փաստաթղթերը։

Արամ (յանձնաժողովի անդամ).— Եթէ քղթերը յանձնուին Սաֆոյին, այլեւս կարիք չենք ունենայ մի յատուկ զատական մարմնի։ Սաֆոյին արուելիք պատասխանից յետոյ ժողովը ինչ զատաստ կը հանգիստանայ։

Համօ (մխանում է Արամի առաջարկին).— Գէթ է հնարաւորութիւն տալ ամբաստանեալ կողմին՝ պատասխանելու։ որից յետոյ եւ ժողովը իւր վերջնական կարծիքը կը յայտնի — կամ ընդունելով յանձնաժողովի տուած առաջարկները կամ մի նոր բանաձեւ կազմելով։ Քղթերը պէտք է յանձնել Սաֆոյին։

Զարգարեան.— Համաձայն եմ Համօյի հետ։

Չիլալեան, համաձայնելով նախորդին, ասելացնում է, — բնական է, որ Ցուցական Մարմինը պատրաստ է լսել։ Իւրաքանչիւր գործ իւր անխուսափելի պատասխանները կ'ունենայ։ Ուստի հարկաւոր չէ ասելորդ քաշքշուքների յետեւից ընկնել։ Նիւթ գտնենք միայն ամբաստանութիւնը, որ ասուել են ընկերներից մի քանիսը։

Թոփալեան (յանձնաժողովի անդամ).— Ցանձնաժողովը բնաւ կանխամտածուած ցանկութիւն չէ ունեցել Սաֆոյին մեղադրելու։ Սաֆոյի կորցրած իւր անձնավստահութիւնը — այժմ էլ յանձնաժողովն է յայտնում իւր կարծիքը. հնարաւորն գործը պէտք է յանձնել գատաստ մարմնին. սա մի մեղադրական կը յանձնէ Ցուցական Մարմինն, վերջինս էլ, պէտք եղած գործողութիւնները կը պահանջէ դիտողից՝ այդ մեղադրականին պատասխանելու համար. կամ արդէն անենք, կամ թէ հինս փակենք ժողովը, յանձնելով քղթերը Սաֆոյին, որպէսզի վարը պատասխան տայ։

Պարզեան.— Եթէ Սաֆոյի ասելը պատասխանից յետոյ, պարտէզ էլի վիճաբանութիւններ պէտք է լինեն, ես առաջարկում եմ, ժամանակի խնայողութեան համար, որ յանձնաժողովը այժմ, այս ժողովում, կարգայ իւր եզրակացութիւնները առանձին առանձին, եւ ժողովը Սաֆոյից յետ վերջնական պատասխանները։

Պաճօ.— Ժամանակը խնայելու տեսակէտից, անշուշտ է պետք անմիջապէս պատասխանել կամ ոչ կամ։ Բայց նկատի ունենալով, որ ասելով թէ զեկուցումը հարիւրաւոր է ընդունել իրրեւ պատասխան իմ անձնական։ Ինձիչ յանձնաժողովի այդ զեկուցումը, գիտակցաբար թէ ցուցիչասրտաբար, սկիզբն պատասխան է ու խնդրութիւնը, որ ես չեմ կարող պատասխանել։ — Ինձ համար միեւնոյն է, ամբողջ ժողովի ինչն է պատասխան գիրը կատարել, թէ մի առանձին մարմին։ բայց նկատ գէպքում եւս, գոք ժամանակի խնայողութեան համար լսենք եւ յետոյ։ ապա վիճաբանենք ցուցիչների առանձրաց, պետք հետաքրքրուած Ցուցական Մարմնի պատասխանի վրայ։ — Ներելիք այժմ, ինչ հնարաւորութիւն տալիս էք զեկուցման մեղադրանքների պատասխանել թէ ոչ։

Նախագահ.— Ցանձնաժողովի առաջարկն է դարձը թողնել պատասխան մարմնին, որին մեղադրող ընկերները բացատրութիւն կը տան։ — Մի այլ առաջարկ ես կայ, — մեզնից առել Համօն, որ յանձնաժողովը զեկուցման հետ։ (Ուղում է քաւէարկել)։

Սափօ.— Բայց արդեօք հարցը ապատուա՞ծ է։

Նախագահ.— Նոքա, որոնք կարծում են, թէ հարցը ապատուած պէտք է համարել՝ բանաձեւերի անցնելու համար, թող յայտնեն։ (15 ձայն համաձայն են, 1ը դէմ, 5ը՝ ձեռնպահ)։

Չիլալեան.— Ես ձեռնպահ եմ մնում, որովհետեւ այսօրուայ քննութեան ժամանակ չեմ ներկայացել։

Համօ.— Ես բացատրած եմ այդ անակ դարձուածքի դէմ։

Մինասեան.— Աներաժեշտ է, որ Սաֆոն հակազեկուցումը կարդայ։

Թոսունեան.— Քղթերը հարկաւոր է յանձնել Սաֆոյին, առ կը պատասխանէ զեկուցմանը. այնուհետեւ խնդրեմ ունենք բացատրութիւնների կերպով կը պարզենք — այո՛, կամ մերժելի, որոնք դեռ ուղում են խօսել։ — Այդ բոլորից յետոյ ժողովը կը տայ այս կամ այն որոշումը վերջնականապէս պարզուած կէտի մասին. իսկ եթէ այնուհետեւ մեռն մուր կէտեր, եւ եթէ այդ կէտերը նկատելի կարեւոր, կը նշանակենք մի յանձնաժողով, մուր կէտերը ջննելու համար։

Նախագահը առաջարկում է հետեւեալ բանաձեւը։

«Ժողովը լսելով Ցուցական յանձնաժողովի զեկուցումը, որոշեց՝ յարգելով Ցուցական Մարմնի ներկայացուցչի խնդիրը, տալ նրան զեկուցումը՝ ամբաստան պատասխանելու համար, եւ այդ պատասխանը բերել ժողովին՝ ոչ ուշ քան 4 օրից»։

Բանաձեւը ասուեում է 15 ձայն, ձեռնպահ են մնում ընկերներ Զաւրեան, Չիլալեան եւ յանձնաժողովի չորս անդամները։

Զաւրեան յայտնում է, որ նոր նկատ լինելով, հարցը իրեն համար պարզուած չէ։

76ՐԴ ՆԻՍՏ (11 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Թոփչեան։

Ներկայ են 22 ժողովական։

Բացակայ են՝ Մուրատ, Միհրաեան, Սահակեան, Զարդարեան, Սեպուհ, Աղբրանիկ (Հիւանդ), Վարդան։

Օրակարգն է «Միկոզգայիի Սոցիալիստական Բիւրոյի դիմումը», որ պիտի ներկայացնէր ընկ. Մալումեան, եւ «Համերաշխութիւնը խնդիրը», որ պիտի զեկուցանէն Համօ՝ Ցուսաւոտեանի համար եւ Միհրաեան՝ Տահկաստանի համար։

Ցուսաւոտեան.— Նախքան Օրակարգին անցնելը, ես կ'ուզէի մի առաջարկ անել. իմ կարծիքով բոլորովին ուելորտ է այդպէս երկար եւ տանեղրաքիկ արձանագրութիւններ կազմելը։ Անհրաժեշտ է միայն ծանրանալ գլխաւոր եւ էական կէտերի վրայ, մի կողմ թողնելով բոլոր մանրամասնութիւնները։

Նախագահ.— Ես անկարող եմ ընթացք տալ ընկ. Ցուսաւոտեանի առաջարկին, քանի որ այդ մասին արդէն վաղուց է խօսուել եւ որոշում է կայացել։

Անցնելով Օրակարգին, մի քանի ընկերներ այդ նիստ օրակարգին գէմ են խօսում, ընդունելով այդ վազամոմ, նկատելով թէ կան մի շարք ծրագրային հարցեր, որոնց արա հետ ապրելու ունեն եւ դեռ մնացել են ամենաթ։ Առաջարկուում է 3 օրով ժողովի գրասենեակը գոգարերեցնել, որպէսզի յանձնաժողովները, ամենայն ծրագրային մանանաժողովը հնարաւորութիւն ու մանանակ ունենան խնդիրները մշակելու։

Վատմանեան.— Ես առաջարկում եմ, որ յանձնաժողովներն գիւրութիւն ստանալ լինելու համար, ժողովները կասարուեց մեկ էլ օրով տալ։

Ալամ.— Ես մեռնում եմ ընդ. Վատմանի առաջարկին, բայց փոխանակ երեկոները ազատ լինելու, առաւօտները ազատ լինեն, որպէսզի մարդ ամբողջ գրասենեակ լուրջ խնդիրներով։ — Որովհետեւ մի երկու օրից յետոյ սպասուած եմ մեկնել, ուստի խընդրում եմ դէմ արագացնել Տահկահայաստանի գործունէութեան տակաւին հարցը, որպէսզի մերիր ընկերներին կարողանամ որոշակի բան հաղորդել։

Զաւրեան.— Ես ոչինչ չտեղեկանալով ընկերների առաջարկի դէմ, ուզում եմ ժողովի լուրջ ուշադրութիւնը հրաւիրել մի որոշ հրատապութեան վրայ։ Մեր ընկերներից մի քանիսը, մի որոշ, սխալմամբ կերպով բացակայում են ժողովներից։ այս հանգամանքը չէ կարելի անուշադիր թողնել։ Ես առաջարկում եմ որոշակի եւ կարուկ մերոց ձեռք առնել դրա դէմ։

Ժողովը ժամերի մեծամասնութեամբ որոշեց մի քանի օր նիստերը կատարել միայն երեկոները, եւ առաւօտները յատկացնել յանձնաժողովների պատասխանութիւններին։

Նախագահ.— Ժողովականների ուշադրութիւնն եմ հրաւիրում Զաւրեանի առաջարկի վրայ։ Ցնայած մեր յանձնախմբի մեծաւոր դիմումներին, էլի մի քանի ընկերներ սխալմամբ կերպով բացակայում են։ Ես առաջարկում եմ, եթէ ունէ մեկը առանց յարգելի պատճառի երեք անգամ բացակայ է ժողովներից, նրան հեռացնել Ընդհանուր ժողովից դուրս։ Գուցէ ուժանց չափից ուելի խիստ թուի իմ առաջարկը, բայց ինչպէս երեւում է, ուրիշ կերպ չէ կարելի վարուել եւ արդիւնքի հասնել։

Վատմանի.— Ցարմէ ազգային մեկնութիւնների դէմն, պէտք է բարոյական մեկնութիւններ ձեռք առնել։ կարելի է դիմել կոդմից պատասխանատու գրել։

Մալումեան.— Ես առաջարկում եմ ապաել, մեկնել որ ընկերներ Զարդարեանից եւ Միհրաեանից պատասխան առանձին. չէ՞ որ նրանց պատասխան ժողովի կողմից յանձնարարուած է բացակայող ընկերների հետ խօսել եւ անգիութիւն բերել։ Ուստի սպասենք այդ պատասխանին մեկնելու վրայ։

Զաքարեան.— Ես առաջարկում եմ, որ դիւանը պատասխան դրութիւնը դիմէ եւ գրաւոր պատասխան պահանջէ, որպէսզի գոհացմունքները մնան մեր գրքերի մէջ։

Ժողովը, ի նկատ ունենալով, որ պատասխան չէ ստացուել յանձնարարուած ընկերներից, յարմար գտաւ դեռ չկատարել որեւէ վերջնական որոշում այդ հարցի մասին եւ սպասել պատասխանի։

Դիւանը որոշեց յարգել նիստ օրակարգը, որ հետեւեալն է, — «Միչկուսակցական առեսն», «Ռուսի հանգամանութիւն», «Ինքնապրոցեսի գաղթ», «Խնդում կա էէյի ժողովին» եւ «Կազմակերպական կանոնների վերաքննութիւն»։

Նիստը փակուեց ժամը 12½-ին։

77ՐԴ ՆԻՍՏ (11 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Համօ Մհերեան։

Ներկայ են ժողովական։

Բացակայ՝ ։

Վերսկսում են վիճաբանութիւնները «Միչկուսակցական» մասին։

Հարց է բարձրանում, թէ ի՞նչն է խոչընդոտ սոցիալիստների էութիւնը, ի՞նչ կապ ունեն գիտական խնդիրների հետ. եւ արդեօք նրանք միայն առհասարակ վրա՞յ են գործելու, թէ պէտք է անցնեն երկրի ներսը՝ որոշ վայրեր նպատակակէտ ունենալով։

Համօ.— Սոցիալիստները արտասահմանից մտնում

են երկիր անկախ այն հանգամանքից, թէ ի՛նչ կէտումն են կատարելու իրենց դերը՝ սահմանագլխի վրա՞յ թէ ներսում։

Սաֆօ.— Դրսում պատրաստութիւններ կը տեսնենք, բայց ուզարկուած խմբերը քիչ անդամ կարողանում են տեղ հասնել. նրանք անխուսափելի կերպով կուտի են բռնւում ճանապարհին։ Ուստի ներս մտնելը նպատակ չպէտք է դնել, այլ մեր արշաւախմբերը միայն սահմանագլխի վրայ պէտք է կուռնեն։

Սեպուհ.— Այլ բան է արշաւախումբը եւ այլ՝ զինատար խումբը։ Վերջիններէն վերաբերմամբ ես կ'ասեմ, որ նրանք այլեւս անհրաժեշտ չեն դարձել, մանաւանդ այն պատճառով, որ մենք այսօր ուրիշ միջոցներ ունենք՝ զէնք տեղափոխելու երկիր, աւելի ապահով եւ աւելի մեծ քանակութեամբ։ — Աւելորդ ասում է, թէ արշաւախմբերը միանգամայն են հեղի։ բայց ինչո՞ւ. իմ կարծիքով որովհետեւ խմբերն անպատրաստ են եղել։ Մի հրանի խմբի 100 մարդու մէջից հազիւ 15ը հրացան լաւ գործածել իմացել են։ Մենք այս սխալ հանգամանքի վրայ պէտք է մեծ ուշադրութիւն դարձնենք։ Արշաւախմբերի դերը սկզբունքով ժխտել միանգամ ընդմիշտ չենք կարող. ընդհակառակ ապստամբութեան ժամանակ, մենք պէտք է պատրաստի ուժեր ունենանք՝ անմիջապէս դէպի երկիր արշաւելու համար, որպէսզի այդպիսով ցրուենք քշնամու ուժերը, եւ հենց այս է լինելու արշաւախմբերու նպատակը. նրանք չեն ուզարկուելու՝ այս կամ այն որոշ վայրին հասնելու համար, այլ միայն զրաղեցնելու քշնամուն։ Ռուսաստանից ներս խուժելը ինքնըստինքեան ապստամբութիւն կը թոզնի նրա վրայ։

Ջոփուրեան.— Սեպուհն ասում է, որ երկիր զինցոյց արշաւախմբերը յատուկ նպատակ չունենան որոշ կէտերի ձգտելու։ Ջէ՞ր կարելի, որ արշաւախմբերը, խուսնելով խոյս տալով, ջանային ճանապարհ բռնել դէպի որոշ վայրեր։

Սեպուհ.— Ինչո՞ւ եւ նեւրուզը պէտք է Սասուն հասնէին, բայց կէս ճանապարհին ակամայից կասի են բռնւում։ Յատկապէս սահմանագլխի մօտերքում գործելու գնացող արշաւախմբերը նպատակայարմար են եւ այն առումով, որ նրանք յարմարագոյն րեզերքն են ունենալու. իսկ նախայարձակ լինելն աւելի լաւ է, որովհետեւ, այդպիսով մենք չփոքիչնում ենք քշնամուն։

Չաւարեան.— Արշաւախմբերը սերտ կերպով կապուած են մեր ընդհանուր գործունէութեան, տակտիկայի հետ— ասում հարկաւոր է որոշել նախ այդ տակտիկան, որի սահմանագծումներից մէկը կը կազմեն արշաւախմբերը։ Ասուից արշաւախմբերի, ընդհանուր գործունէութեան գծուռը է երեւակայել. իսկ քէ արշաւախմբերը ի՞նչ կերպ պէտք է մտնեն երկիր, կամ ո՞րը պէտք է մտնեն՝ երկրագործական խնդիր է, որի լուծումը հարկաւոր է թողնել երկրի վարիչ մարմիններին։ Ասել, որ մեր անցեալ արշաւախմբերը, որովհետեւ անյաջող են անցել, դրա համար պէտք է ձեռք վերցնել դրանցից, սխալ է. առաջին, երկրորդ, երրորդ··· խմբերը յաջողութիւն չեն ունեցել. բայց չէ՞ որ վեցերորդը··· տասներորդը, ի վերջոյ յաջողութեան է յանդելու։ Անյաջողութեան պատճառը սկզբունքի մէջ չէ ինքնըստինքեան, այլ՝ չրջապատող պայմանների, դրսի հանգամանքների. 1904ի արշաւանքները եթէ սպասած հետեւանքները չունեցան, որովհետեւ մէկ կողմից Գոլիսն անկարող եղաւ ժամանակին արձայանգ տալու եւ միւս կողմից՝ Սասունը, ստիպուած չտապալ էր։ — Սկզբունքով, ուրեմն, մենք չենք կարող ժխտել արշաւախմբերի նշանակութիւնը. ապստամբութեան միջոցին, ժողովուրդը չէ, որ ամբողջովին ոտքի է կանգնում, այլ նրա որոշ մասերն են կռուի ելնում, — նաեւ իրրեւ արշաւախմբեր։ Արշաւախմբերն անհրաժեշտ են մեր գործի համար եւ այն պատճառով՝ որ երկիրը հետզհետէ դատարկւում է երիտասարդ ուժերից։ Կովկասը իր մէկ միլիոն հայ ազգաբնակութեամբ, պէտք է խմբեր ունենայ՝ քաղմ ուժերի այդ աճող պարապը հարկաւոր եղած դէպքում լրացնելու համար։

Գուսան.— Բայց չէ՞ որ մեծ քանակութեամբ խմբեր կազմակերպելու համար հարկաւոր է նախ եւ առաջ ունենալ մի բազա [խարիսխ]. ասկոյն քոյլ կը տա՞յ Ռուսաստանը, որ նրա տերիտորիան մենք բազա դարձնենք։ Ի հարկէ ոչ, կառավարութեան հետ միասին արգելք է հանդիսանալու եւ Դաւման։

Չաւարեան.— Բազան չատ որոշ է, հայ ժողովրդի մէջ, ամէն տեղ, իւրաքանչիւր գիւղում, կը կազմակերպենք ինքնապաշտպանական խմբեր։ Ապա առանձնայատուկ վայրերում, ինչպէս Սասունն է, ուր յարմարութիւններ ունենք ուժ կենտրոնացնելու, — մենք կը սկսինք զօրեղ կերպով պատրաստուել, որպէսզի կարողանանք մզուելիք կռիւները դարձնել յարատեւ. երկարատեւ կռիւներով աւելի կը դրսւնք դրսի ուշադրութիւնը։

Չաւարեան.— Անցեալ անգամներին, մենք չատ լուրջ հիմունքներ ենք առած բերել, ցոյց տալու, որ արշաւախմբերն այլեւս անհրաժեշտ չեն եւ վնասակար են գործել. բայց ընդ. Չաւարեան ուզում է սկսել այն նախկին տակտիկան։ Ուրեմն, նոյն սխալ դէպքերը, — նորի՞ց վտանգի ենթարկել մեր գործը··· Չկրկնե՛նք անցեալի սխալները։ Արշաւախմբերի օգնութեանը պէտք է գիմենք այն ժամանակ միայն, երբ խոշոր դէպքեր ունի ի՛ւնենան՝ ինչպէս համապատասխան ապստամբութիւն եւն.։

Ռուստամ.— Մենք ոչ մի դէպքում չենք կրկնել մեր մի անգամ արդէն արած սխալը. բայց սկսել ենք մի տեսակ վախենալ արշաւախմբերից։ Չաւարեանը չէ ասում, թէ խոպոպ ժամանակներում վերցնենք խմբեր ուզարկենք. այլ խմբերի գործադրութիւնները հարկաւոր է կապել խոշոր դէպքերի հետ, որոնց ընդառաջ գնալու համար, մենք պէտք է նախապատրաստուած լինենք։ Ես համաձայն եմ Արամի հետ, որ աւելի լաւ է ունենալ 10 հրացան երկրի ներսում, քան 100ը դրսում. պէտք է աշխատել, որքան կարելի է՝ չատ զէնք մտցնել երկիր.— Թէեւ ի հարկէ, չենք կարող որոշել, թէ անպատճառ այսինչ քանակութեամբ պէտք է լինեն մտցուելիք զէնքերը. բայց այս ու այն պատճառով չուղարկուած կամ աւելացած զէնքերը, մենք կը պահենք արշաւախմբերի զինման համար։ Արշաւախումբ պատրաստելու համար, հարկաւոր է ունենալ նախ ուժեր. խմբերի անդամները բոլորն էլ պէտք է վարժ լինեն զէնք բանեցնելու մէջ եւ ապա զինանի քալել. մենք այժմեանից միջոցներ պիտի ձեռք առնենք զինուորական կրթութիւն տալու հարկաւորներին։

Արամ.— ԵԹէ երկրի ներսում չկայ ոչ մի չարժում, բայց յանկարծ մեռնում է Սուլթանը, — այս դէպքում հարկաւո՞ր են լինելու արշաւախմբերը թէ ոչ։

Մուրատ.— Արշաւախմբերն անհրաժեշտ են։ Ես ասել եմ, որ մեր կռուողները պէտք է լինին անկախ մարդիկ եւ այդպիսիները կարող են միայն դրսում կազմակերպուել. ներսում՝ մարդիկ ծանրաբեռնուած են ընտանիքներով եւ նրանց համար դժուար է՝ ամբողջովին նուիրուել գործին։ Կարեւոր է, որ խմբերը ստուգած լինեն զինուորական կրթութիւն՝ խիստ տիպիկական վրայ։

Միհնաւեան.— Սկզբունքով, ոչ ոք հակառակ չէ արշաւախմբերին, միայն թէ այնպէս վարել նրանց, որ օգտակար լինեն։ Արշաւախմբերը պէտք է ասպարէզ ելնեն, երբ ներքին ապստամբութիւնը կը պայթի. երբ նրանք լինելու են՝ ընդհանուր չարժմանը արձագանգ տուող ցոյցեր, արգիլելու համար կառավարութեան ուժերը, որ չկրնան կենտրոնանալ ապստամբավայրին չուրջը եւ խեղդել ապստամբական չարժումը։ Արշաւախմբերը պէտք է լինեն՝ մեծաքանակ եւ զինուորական գործին հմուտ առաջնորդներով, եւ մանաւանդ վալդներով, որոնք երկրի տեղագրութեան ծանօթ լինեն։

Թոփչեան.— Որքան էլ բացասական հետեւանքներ ունեցած լինեն այդ արշաւախմբերը, չպէտք է մոռանալ նրանց տուած ե՛ւ դրական արդիւնքները։ Աւստրն էլ սկզբունքով չէ ժխտում արշաւախմբերի նշանակութիւնը. ուզում է միայն, որ միջոցներ ձեռք առնուեն՝ նախկին սխալների կրկնութեան դէմ, որպէսզի անտեղի արշաւանքների պատճառով չվնասուի երկրում կատարուող ընդհանուր պատրաստութեան գործը։ Իմ կարծիքով արշաւախմբեր կը կազմենք այն մարտական խմբերից, որ մենք ունենալու ենք կովկասեան գործի համար. երբ կարիճում, օրինակ, յանկարծ դէպքեր տեղի ունենան, մեր մարտական խմբերը կը չտապեն օգնութեան հասնել։ Այդ մարտական խմբերին հարկաւոր է ծանօթացնել երկրի հետ, տեղագրական տնտեսկէտից։

Ջաւրեան.— Ռուստոմն ասում է, որ ուղարկուած արշաւախմբերը բոլորն էլ ունեցել են որոշ նպատակ. ճիշդ չէ։ 1904ի Ռայոնական ժողովում (Թիֆլիզ) հարց բարձրացաւ, թէ չարունակե՞լ խմբեր ուղարկելը, թէ ոչ. եւ թէեւ մեծամասնութիւնը համոզուած էր, որ յաջողութեան ոչ մի չանս չէր կարող լինել, այնուամենայնիւ վճռուեց ուղարկել, որպէսզի այդպիսով իրագործուած լինէին Գ. Ընդհանուր ժողովի որոշումները։

Ռուստամ եւ Համօ ուղղում են անում, թէ Ռայոնական ժողովը այդպիսի որոշում չէ կայացրել, եւ չէր էլ կարող, քանի որ բոլոր արշաւախմբերը արդէն տեղի էին ունեցել նրանից առաջ։

Համօ.— Կրկնում եմ, որ անցեալում մեր վարած չարժումը եղել է՝ զինուորական, դուտ հայկական։ Ներկայումս հարկաւոր է փոխել մեր այդ գործնականը. մենք պէտք է գործենք՝ համերաչխ թուրքիայի մէջ յեղափոխական տարրերի հետ. իսկ մէկ որ արդէն հաստատուի համերաչխ գործակցութիւն, արշաւախմբերը խոշոր չափով կորցնելու են իրենց նշանակութիւնը։

Արամ.— Հարց էք բարձրացնում, խօսում էք զանազան տնտեսկի արշաւախմբերի մասին եւ ես չհակասեցայ, թէ դրանցից, որի՞ վրայ էք ուզում կանգ առնել։ Ռուստոմն ասում է, իբր թէ մենք մեր սխալները չենք կրկնել. բայց առնուազն արշաւախմբերի գործում, մենք չենք ուզել օգտուել անցեալի դասն փորձերից — ապա թէ ոչ՝ Խաստուրից յետոյ մենք Օլթիի արշաւանքը չէինք կազմակերպեր։ ԵԹէ դուք արշաւախումբ ուղարկէք, երբ երկրում չկայ ոչ մի չարժում, ես ասում եմ, սա ձեր կողմից կը լինի քաղաքական դաւաճանութիւն։ Քանի որ ժողովուրդը, ինքը պատրաստ չէ, դրսից եկող խմբերին նա քշնամաբար է վերաբերւում։ Ուժերը պէտք է կենտրոնացած ունենանք երկրի ներսում, թէ՛ մարդիկ եւ թէ զէնքերը պէտք է լինեն այնտեղ։ Այն ժամանակ երբ վճռապրականի մարմինը զէնք էր պահանջում, փոխադրութեան միջոցներ առաջարկելով, միեւնոյն ժամանակ Ռայոնական ժողովը որոշում էր՝ մինչեւ սահման հասցրած զէնքերը գործադրել արշաւախմբերի համար։

Ռուստամ (ուղղում անելով).— Ոչ թէ Ռայոնական ժողովը, այլ Բիւրոն էր. այդ այն ժամանակն էր, երբ յոյսեր կային, թէ Սուլթանի օրերը հաշուուած են. մենք ուզեցինք պատրաստ լինել անակնկալների համար. այս նպատակով էլ՝ զէնք հասցնելին սահմանապահի վրայ։ Այդ միջոցին էր, որ եկաւ Աբամը, թէ՝ զէնքերի ներս զէնք փոխադրելու։

Արամ.— Փաստը բնորոշ է, մեր այդ պատրաստութիւնները տեսնելով են կանխակալ մտքով՝ նոր արշաւախմբեր կազմակերպելու։ Ես չեմ հաւատում, որ կա-

տարածների ժամանակ, դրսի ընկերները կարողանան օդնութեան հասնել. բոլոր կէտերում ճանապարհները կը փակուեն եւ նրանք այլեւս անկարող կը լինեն ներս մտնել: Համաձայն եմ Մուրատի հետ, որ մեր բոլոր զինուորական դեկավարները, նոյնիսկ տանտանպետները հմուտ լինեն իրենց գործին. քո՛ղ արտասահմանի մարմինները տան մեզ այդպիսի մարդիկ: Սահմանադլխի ցոյցերը դանում եմ անօգուտ, քանի որ մենք երբեք հնարաւորութիւն չունենք երկար մնալու կուսի այդօրինակ վայրերում: Վերջացնում եմ խօսքս, — քանի դեռ չեն փոխուել Երկրի ներկայ պայմանները — ամէն մի արշաւախումբ ես համարում եմ վնասակար:

Ահա իմ բանաձեւը սրա համար.

«Հիմք ունենալով, որ լուրջ գործողութիւնների, ձեռնարկների տեղափոխման համար մեր ուշադրութիւնը, ուժերի եւ ռազմական ուժերի կենտրոնացումը մեր ներսում, անհամեմատ աւելի ցանկալի են,

Նկատի ունենալով որ երկրի մեր ներսը եղած շարժումների ժամանակ, սահմանները զինուորական վիճակ մտցնելով, անցուդարձը դժուարացնում է,

Նկատելով որ արտասահմանից գնացող խմբերը փիզիկական հնարաւորութիւն չեն ունենում մեր գնալու, կամ սահմաններում օգտակար գործ կատարելու,

Նկատելով, որ արտասահմանում արշաւախմբերի պատրաստութիւնը տեսքի տալում է ձգում եւ, ոգեւորութիւն առաջ բերելով, տեղահան էապէս տալիս,

Նկատելով, որ այդ շարժումները ամարդիւնք լինելով հանդերձ, վնասում են Դաշնակցութեան դրամական եւ ռազմական թիւռեներին, եւ շատ ազնիւ տարրերի համար զրկելով պատրաստում սահմաններում,

Նկատելով, որ դրանով փակել եմք տալիս մեր կարեւոր գործը, եւ այդպիսով մեր ապագայ գործը զրկում իր կենդանութեան մի գործօնից,

Այս եւ այլ թագմաթիւ նկատումներով, — մերժել առայժմ արշաւախմբերի ձեռնարկները, համի որ երկրում եւ մանաւանդ արտասահմանում ներկայի վիճակը չէ փոխուել:

Վռամեան.— Այդ բանաձեւը պարապանք է անցեալ Ընդհանուր ժողովի դէմ, քանի որ ակնարկած ու քննարկուած արշաւախմբերը միայն անոր որոշումով տեղի ունեցան եւ իրրեւ սխալում չէ դործադրուած մեր կազմակերպական գործունէութեան մէջ. բացատրութեամբը հանասարի արշաւանքի:

Արամ խնդրում է Վռամեանի այդ նկատողութիւնը մտցնել արձանագրութեան մէջ:

Բանաձեւեր են առաջարկում Մալումեան, Վռամեան, Գագիկ, Զաւարեան: 22 ձայնով անցնում է Զաւարեանի բանաձեւը, որ հետեւեալն է.

«Ապագայում Թրխանայատանում մեր մտելիք կռւի մէջ, այլեւայլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին, աշխատելքները միեղբ եւս օգտակար կարող եմ լինել, — իրր ձերսի մարդ մտցնելիք ոյժերը վստահ եմ, որ դա կնշը կը գործէ ազգու, լայն եւ յաջողու: Միջոցներ ձեռք առնել միլիցիայի սկզբունքով կամ այլ ձեւի, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբերը մտցնել ապագայ գործողութիւնների համար»:

Վռամեան.— Այդ բանաձեւերի մէջ մտցնել նաեւ, որ կարդերի ժամանակ արշաւախմբերը պէտք է օգնութեան հասնեն:

Ռոստոմ.— Այդ հարցը արհեստական կերպով է յարուցուում: Շատ բնական է, որ մենք առանց այլեւայլութեան անյապաղ օդնութեան ենք դնալու՝ կարդերի ղեկավարում:

Վռամեան բանաձեւում է իւր առաջարկը. «Զարդերի պարագային ևս սահմանի երկու կողմը՝ Պատասխանատու մարմինները իմքնապաշտպանողական խմբեր կը կազմեն, վտանգի տակ գտնուող ժողովրդին օգնելու համար»:

Այս առաջարկը քուէարկուելով՝ ստացուում է 13 ձայն թեր, 10 ձայն դէմ եւ 5 ձեռնպահ:

Վռամեան բողոքում է քուէարկութեան այդ արդիւնքի դէմ, այդպիսի մի կարեւոր հարց մասին եւ պահանջում, որ իր բողոքը մտցուի արձանագրութեան մէջ:

Ժողովը անցնում է Օրակարգի հետեւեալ կէտին. «Կովկասահայերի իմքնապաշտպանութեան» հարցին, որի համար ներկայացուեց հետեւեալ հաւաքական բանաձեւը.

«Ընդհանուր ժողովը լսելով կովկասի հայ ազգաբնակութեան իմքնապաշտպանութեան եւ զինման գործի մասին եղած զեկուցումները ու վիճաբանութիւնները, յանգեց հետեւեալ որոշման.

Իմքնապաշտպանութեան գործը իրրեւ համժողովրդական գործ՝ պէտք է բաղկանայ ամբողջովին ժողովրդից: Կուսակցութեան անդամները կարող են մասնակցել իմքնապաշտպանութեանը, իրրեւ բազմոցի անհատներ, աշխատելով մտցնել ժողովրդական միլիցիայի սիստեմը եւ կազմակերպել ժողովրդական իմքնապաշտպանութեան մարմիններ: Անակնկալ դէպքերում, երբ ժողովուրդը կը հրաւիրէ Դաշնակցութիւնը՝ դեկավարելու իմքնապաշտպանութեան գործը, իրա՝ ժողովրդի պատասխանատուութեամբ, ըստ անուանց եւ ըստ միասնական ոգեկցութեան, այդ դէպքում Ընդհանուր ժողովը վերապահում է ազատութիւն, տեղական մարմիններին՝ վարելու ըստ իրենց հայեցողութեան»:

Վռամեան.— Այդ բանաձեւը հիմնովին տարբերուում է վարդանի այն բանաձեւից, որն անցեալ անգամ կարդացուեց այստեղ. վարդանի բանաձեւի մէջից ոչ մի կէտեր, յատկապէս մարտական խումբերի կազմութեան մասին, դուրս են հանուել բոլորովին եւ իմքնապաշտպանութեան հարցն այլ բնաւորութիւն է ստանում: Այդ բանաձեւն ըստ էութեան, կատարելապէս անհամապատասխան եմ դանում կովկասեան իրականութեանը, ուստի մենք ձեռնպահ ենք մնալու:

Գագիկ (Պաշտպանում է բանաձեւը).— Քանի որ մենք կայացրել ենք մի այլ որոշում, որի հիման վրայ ունենալու ենք մարտական-յեղափոխական կուսակցական խմբեր, հակահնալի է, որ իմքնապաշտպանութեան գործը մենք բարձի թողի չենք անի: Ուզում ենք միայն, որ իմքնապաշտպանողական խմբերը կազմուեն բոլոր խաւերից. որովհետեւ եթէ Դաշնակցութիւնը իմքնապաշտպանական գործի կազմակերպութեան ամբողջ պատասխանատուութիւնը իր վրայ առնելու լինի, այն ժամանակ նա պէտք է իր տրամադրութեան տակ ունենայ հասարակութեան բոլոր խաւերի ամէն տեսակ պետական ուժերը առանց կուսակցական խտրութեան. իսկ այդ նա չէ կարող անել իմքնակոչ կերպով: Եթէ անցեալում արել է, ստիպուած՝ սուր րոպէի անյետաձգելի կարիքից: Սակայն այդ գործը լինելով համաժողովրդական եւ անկուսակցական, դրա հոգսը ամբողջութեամբ պէտք է ընկնի ամբողջ ժողովրդի վրայ. այլ բան է, եթէ ժողովուրդը ինքը վստահացնայ այդ գործի ղեկավարութիւնը Դաշնակցութեան եւ խնդրէ նրան վարելու գործը, այն ժամանակ Դաշնակցութիւնը կարող է կազմակերպել ըստ իւր հայեցողութեան: Իսկ առանց դրան Դաշնակցութեան տակտիկն ու հայեացքները կարող են անցնել իմքնապաշտպանութեան գործում այն չափով, որ չափով նրա անդամները կարող են ազդեցութիւն ունենալ իրրեւ անհատ մասնակցողներ: Առանց ժողովրդի հրաւէրին, Դաշնակցութիւնը իմքնիրեն իրրեւ կազմակերպութիւն՝ կարող է մասնակցել իմքնապաշտպանութեան մէջ միայն իւր յեղափոխական մարտական խմբերով:

Նախագահ.— Բայց ո՞վ պէտք է ասի՝ իմքնապաշտպանութեան ընդհանուր յատակագիծը:

Գագիկ (չարունակելով իրրեւ պատասխան).— Իմքնապաշտպանութեան մարմինը, որի մէջ մտած անհատ դաշնակցականները կ'աշխատեն իրենց կուսակցական դրօշը դնել գործի վրայ:

Բանաձեւը քուէարկութեան դրուելով, ստանում է 20 ձայն թեր: Սեպուհը եւ 4 ուրիշները ձեռնպահ են մնում: Մուրատը դէմ է:

Ռոստոմ եւ Գագիկ նոր բանաձեւ են առաջարկում, որոնց քուէարկումը, ասկայն թողնուում է յաջորդ անդամին:

Ընկեր Մալումեան ներկայացնում է մի բանաձեւ, մշակուած յատուկ մանաւանդողովի (Մալումեան, Արամ, Զարդարեան եւ Վռամեան) կողմից՝ «Հայոց հարցը կամ Հէյի ժողովում», որ հետեւեալն է՝

«Ընդունելով եւրոպական պրոպագանդի կարեւորութիւնը եւ անոր չարունակութիւնը, սկզբունքով կ'ընդունենք Դաշնակցութեան միջոցներով հայկական հարցը ներկայացնել կամ Հէյի հարթարդածողովին, որուն յաջողութեան համար կ'ապաւարկենք հետեւեալ միջոցները.

1° Ցանկալի է այդ դիմումի նախաձեռնութիւնը տալ նախագահ Ռուզվելդին, համի որ նոյն ցեղատոհմով էապէս առնուած են:

2° Նախապատրաստական անչապող դիմումներ Ֆրանսայի, Անգլիայի, Իտալիայի եւ Բելգիայի մեր բարեկամներուն, որպէսզի անմիջապէս եւ երբ կարելի է հրապարակային ձեւով՝ ապահովեն Ռուզվելդի վրայ:

3° Առանձին դիմում Գերմանիայի:

4° Առանձին դիմում Չէյմս Բրայսի:

5° Ստիպել կ. Գալոյ պատրիարքը՝ մեռամտական ներկայացնել բարենպաստ պահանջներ ի. Դրան:

6° Օգտուել միջապարլամենտական որոշումէն:

7° Դիմումներ՝ մամուլին, կռնգրէսներու եւ միջազգային բիւրոներու՝ ազիտացիայի [բարոզչութեան] համար:

8° կազմակերպել բարեկամ եւրոպացիներէ կազմուած յատուկ յանձնախումբ Գարիզի մէջ, յանձնելով անոր ամէն նախապատրաստութիւն:

9° Ցանկալի է որ այս ձեռնարկներուն մէջ որոշ դեր մը ստանձնէ Գոլոյ կամ Երկրի ձեռնհաս մարմիններէն մէկը:

10° Ընդհանուր ժողովի կողմէ 5000 փրանկի բիւրեղ մը այս նպատակի համար եւ արտօնել Արեւմտեան Բիւրոյ յանուն Դաշնակցութեան դեկավարելու գործը եւ ընթացք տալու յարակայ բոլոր պարագաներուն»:

Իսահակեան.— Մինչեւ չպարզուի ժողովի հայեացքը եւրոպական դիպլոմատիայի մասին, մենք չենք կարող քննութեան առնել այդ բանաձեւը:

Միհասեան.— Բայց չէ՞ որ սրտէն դիմում ենք արել Ռուզվելդին՝ Լա Հէյի ժողովին համար եւ մասամբ նկատի առնուած է:

Թոփչեան.— Այդ բանաձեւի առթիւ կարող ենք խօսել ընդհանրապէս թէ ի՞նչ դիրք ենք բռնելու դէպի եւրոպական դիպլոմատիան: (Այս հարցի մասին խօսելու է վաղը):

Զաւրեան.— Մինչեւ այժմ մեր բոլոր դիմումները եղել են՝ դուռ հայկական տեսակէտից. բայց այսուհետեւ քանի որ մեր չարժումն ուղում ենք դարձնել ընդհանուր — պետական, — մեր աննկիրք դիմումների մէջ պէտք է յիշատակենք, որ մեր պահանջները վերաբերում են ընդհանուր ազգաբնակութեան:

Նիստը փակուում է վիճաբանութիւնների չարունակութիւնը թողնելով յաջորդ նիստին:

78ՐԴ ՆԻՍՏ (12 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Վռամեան:

Ներկայ են 24 ժողովականներ:

Բացակայ են՝ Շահխաթունեան, Սեպուհ, Անդրանիկ (հիւանդ), Զաւրեան, Համօ:

Օրակարգն է՝ ա) Դիմումն Լա Հէյի ժողովին եւ բ) Բոնի հանգանակութիւն:

Բանալով նիստը, նախագահը խնդրեց, որ խօսողները կենտրոնանան հարցի էական կողմերի վրայ եւ խօսքն կարճ, որովհետեւ ժամանակը շատ է սուղ:

*Իսահակեան.— Ես խնդրում եմ այդ հարցի կողմնակիցներին, բացատրել թէ ի՞նչ կոնկրէտ փաստերով է պայմանաւորուած եւրոպական միջամտութիւնը մեր դատի վերաբերմամբ: Այն իրողութիւնը, թէ եւրոպան միջամտել է բալկանեան մանր պետութիւններին եւ դրա վրայ յենուելով հետեւցնել, որ Հայկական Դա-

տին էլ կը միջամտէ, բաւականին անհիմն է եւ խիստ լուսաւեսութեան արդիւնք: Հարկաւոր է ցոյց տալ նըպաստող ապդակները:

Նախագահ.— Այդ տակտիկը Հ. Ց. Դաշնակցութիւնը ընդունել է տարիներից ի վեր: Անհրաժեշտ է որ հակառակ կողմը խօսի:

Ռոստոմ.— Մեղնից ոչ ոք չի ծոյլ տայ իրեն, պնդելու, որ եւրոպական պետութիւնները միջամտելու են, անպայման, մեր դատի օգտին. դա հաւանական, բայց չամենայն դէպս թէական բան է: Ակնկալել մի միայն եւրոպայի մարդասիրութիւնից, դա աւելի քան մեկոդմանի [միամտութիւն ?] է: Եւրոպայի միջամտութիւնը անխուսափելի կը լինի միայն այն պատճառով, որ նա տէր եւ խնամակալ է այն երկրին, որի հետ կապուած է մեր դատը: Հետեւապէս ակնկալած միջամտութիւնը առանց մեղ էլ տեղի կ'ունենայ, եւ դա կը լինի հենց եւրոպական պետութիւնների սեփական չահերի թելադրութիւնը: Այս առաջին եւ գլխաւոր պայմանն է: Կան նաեւ երկրորդական պարագաներ. օրինակ՝ մեր գործօն դերը: Բոլոր պետութիւնները միատեսակ եւ միեւնոյն չափով չեն չահագրգռուած Տաճկաստանով: Մենք պէտք է պարզենք մեղ համար այդ յարաբերութիւնները եւ մանաւանդպէս փնտռենք այն պետութիւնները, որոնց բանած դիրքը մեր դատի հանդէպ գրական է, եւ որոնց չահերը Տաճկաստանում մեր օգտին եւս ծառայում են: Միջազգային այդ բարդ յարաբերութիւնների մէջ մենք պիտի միջամտենք, իրրեւ մի ինքնուրոյն ազդակ. իրական եւ զօրաւոր միջամտութիւն առաջ բերելու համար, պէտք է յարատեւ ջան պահենք այդ հարցը եւ աշխատենք սպառնական ոյժ ներկայացնել, որպէսզի յաղող մոմենտներում մեր ձայնն էլ թելադրող լինի, որպէսզի մենք էլ մեր կողմից կարողանանք թելադրութիւններ անել եւ աղդել առաջնակարգ փոփոխութիւնների, յեղաշրջումների վրայ:

Զաւրեան.— Այն հարցը որ դնում է Մալումեան՝ դործնական, երկրորդական է: Գլխաւորը եւրոպական միջամտութիւնն է եւ դա երեւան է գալիս բոլոր խընդիրների վերաբերմամբ. մեր հարցում եւրոպական բոլոր պետութիւնները չահագրգռուած են, ոմանք ուղղակի, ոմանք անուղղակի: Եւ դա ճիշդ է ոչ միայն մեր, այլեւ բոլոր խոշոր քաղաքական հարցերի վերաբերմամբ. օրինակ՝ ռուս-ճապոնական պատերազմը: Գրեթէ բոլոր պետութիւնները ուղղակի կամ անուղղակի կերպով չահագրգռուած էին այդ խնդրով: Ամերիկան անգամ, ինչպէս պիտէք, նշանաւոր դեր խաղաց դրա մէջ: Նոյն այդ ընդհանուր բնոյթ կրող երեւոյթի առաջ ենք կանգնած Պարսկաստանի վերաբերմամբ: Անդլիա մի կողմից է չահագրգռուած, ի հարկէ իրրեւ դեմոկրատիկ կարգերի ներկայացուցիչ, իսկ Ռուսաստանը մեւս կողմից, իրրեւ ռեակցիոն տարր: Թուրքիան էլ քաղաքականապէս իրրեւ Թոյլ, տկար պետութիւն, աւելի քան անհրաժեշտելի է եւրոպայի միջամտութիւնը եւ խնամակալութիւնը նրա նկատմամբ: Եւրոպան ձգտում է դարձնել Օսմանեան պետութիւնը ադատ առեւտրական չուկայ եւ չահագործել նրա տնտեսական հնարաւորութիւնները: Այո՛, դիպլոմատիան խաղացել է եւ խաղալու է խոշոր նշանակալի դեր բոլոր չարժումների մէջ: Սա տնտեսական կողմն է: Մեղ համար կարեւորը գործնականն է: Տրուե՞լ է արդեօք վերջին 3 տարուայ ընթացքում կատարուած եւրոպական պրոպագանդի մասին դեկուցում, այդ ես չդիտեմ: Ես դիտեմ միայն որ Թէեւ ընկ. Լորիսը անցեալ Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուեց իրր դեկավար եւրոպայի պրոպագանդի, բայց նա չկատարեց լիուլի իր պարտականութիւնը. ամէն ինչ Թողնուած էր առանց այն էլ ծանրարեռնուած Արեւմտեան Բիւրոյի վրայ: Եթէ այժմ էլ այդպէս պիտի տարուի եւրոպական պրոպագանդը, ես միանդամայն հակառակ եմ: Ահագին ծախսեր են լինում եւ արդիւնքը նրա համեմատ չատ աննչան է:

Մադումեան.— Եւրոպական պրոպագանդի մեր տեսակէտը ամենից առաջ հիմնուած է այն փաստի վրայ, որ Օսմանեան պետութիւնը, միջազգային դաշնագրերով դրուած է եւրոպայի հսկողութեան տակ, եւ պաշտօնական եւրոպան, հակառակ նրա մէջ տիրող տրամադրութիւններին, մի քանի անդամ եւ այն էլ վրճռական եղանակով միջամտել է սուլթանահպատակ երկրի ներքին գործերի մէջ: Այդ միջամտութիւնը երբեմն եղել է նոյնիսկ յանուն քաղաքակրթական համակրելի դիտումների: 1839, 1842, 1856 եւ վերջապէս 1876ի Նչանաւոր օրէնքները, որոնք կազմում են արեւելեան քրիստոնեաների պատմութեան մէջ կարեւոր էջեր, մեծ մասամբ արդիւնք են այդ միջամտութեան: Մեր դատը, յատկապէս, քանի անդամ, 1878ին, 1883ին, 1895ին եւ 1904ին, ստացել է եւրոպական պատասխանատուութեան բնոյթ եւ այդ հանգամանքը անտես առնել մենք իրաւունք չունենք: Եւ չենք էլ կարող այն որոշ պատճառով, որ մեր յեղափոխական գործունէութիւնը քաղաքական ընդհանուր տեսակէտից, ինչպէս եւ մեր գործելավայրի աշխարհագրական դիրքի տեսակէտից, այնպիսի աննպաստ պայմանների մէջ է դրուած, որ անկարող ենք անտես առնել եւ անտարբերութեան մատնել այդ գործօնը՝ եւրոպայի միջամտութիւնը: Ցանկալի է, անկասկած, մեր աղատութեան գործը յաղթանակել տալ, իրագործել սեփական ուժերով, մեր կռուող աշխատաւոր տարրերի սեփական միջոցներով, սակայն այդ ցանկութեամբ խնդիրը չի լուծուիր եւ իրականութեան մէջ մենք հարկադրուած ենք դիմել դրսի օգնութեան, քաղաքական աշխարհի միջամտութեան: — Այդ միջամտութեան համար մենք երբեք չենք դիմել այն միջոցներին, որոնք յեղափոխական կռուող կազմակերպութեան նպատակին եւ գործելակերպին վնասել կարողանային: Եւրոպական մեր պրոպագանդը չէ եղել հիմնուած աղերսանքի սկզբունքի վրայ, երբեք չէ եղել ուղղուած այն տարրերին, որոնք թշնամի են յեղափոխութեան: Այլ էր, օրինակ, Հայաստանի խմբի, Զերազի, արմենականների, ինչպէս եւ հայոց պատրիարքների դիմումը եւ այլ՝ մերը: Ներքանք աղերսում էին: Մենք պահանջել ենք: Ներանք դիմել են եւրոպական դիպլոմատիայի մարդասիրութեան, մենք դիմել ենք նորագոյն եւրոպայի յեղափոխական մտքին: Մեր բոլոր օրգանները, հայերէն թէ ֆրանսերէն, մեր բոլոր բարեկամները, Ֆրանսայում թէ այլուր, մեր միտինգները՝ մեծ թէ փոքր, հիմնուած են այն մարտական տրամադրութեան վրայ, որ ցոյց է տուել հայ յեղափոխութիւնը յանուն հայ ժողովրդի, եւ այն պահանջների արդարութեան վրայ, որոնք կազմել են մեր կռուի եւ մեր յեղափոխութեան հիմնաքարը: Ահա այս է պատճառը, որ Թրքահայ չարժումը, հակառակ իր արիւնոտ կերպարանքին, միշտ գտել է խորը համակրանք եւրոպական հասարակաց կարծիքի առջեւ, մամուլի մէջ եւ պարլամենտներում: — Բայց այդ բոլորը չէ: Կայ եւ մի այլ հանգամանք, որը կազմում է մեր պրոպագանդի, եթէ կարելի է ասել՝ փիլիսոփայական կողմը: Եւրոպայում, ինչպէս գիտէք, փոքր ու փոքր, բայց հաստատօրէն կազմուում է միլազգային մի բանակ, մտածողների եւ գործիչների մի արտազգային զինուորութիւն, որի մտքերն ու ցանկութիւնները չեն սահմանափակուում իրենց հայրենիքի սահմաններով, որ ձգտում է սոցիալիստական եւ քաղաքական յեղափոխութեան գործը դարձնել միջազգային, տարածել մարդու եւ աշխատաւորի իրաւունքի գաղափարը նոյնիսկ եւրոպայից դուրս: Այդ բանակը կայ. Նրա մէջ են մտնում սոցիալիստական եւ յեղափոխական չրջանները, մամուլի, պարլամենտների եւ քաղաքական այլ ասպարէզում գործող այն մարդիկ, որոնք ունեն միջազգային ձգտումներ եւ նրանց համար նոյնքան թանգ կարող է լինել Թուրքերի, քրտերի, չինացիների հարցը, որքան այսօր թանգ է լեհերի, ֆիններին, ռուսների, հայերի կամ վրացիների հարցը: Ահա այդ չրջանին են պատկանում մեր չարժման բազմաթիւ բարեկամները, եւ որոնց դրաւիչ անունները ձեզ, ընկերներ, քաջածանօթ են: Մենք թէ՛ իրրեւ յեղափոխականներ եւ թէ իրրեւ մտքի աշխատաւորներ, ձգտում ենք մերձենալ այդ չրջանին, կապուել այդ բանակի հետ եւ լինել նրա փոքրիկ զօրագունդը մեր երկրի մէջ, Փոքր Ասիայում, այնտեղ, որը հանդիսանում է եւրոպական մտքերի տեղափոխութեան համար մի կարեւոր կամուրջ: Այդ հիմնական պատճառով, մեր քաղաքական ձգտումները չեն կարող եւ չպէտք է նկատուեն իրրեւ նեղ ազգայնական, լոկ հայկական, այլ իրրեւ անբաժան մի մասը այն լայն եւ ընդհանուր չարժման, որի հիմքերը դրուած են միջազգային մտածողների եւ գործողների պլեհատի ջանքերով, եւ որոնք պէտք է կազմեն մեր քաղաքական գործունէութեան ուղեցոյցը, մեր յեղափոխական չարժումների հիմնաքարը: Եւրոպական պրոպագանդը, իրրեւ մեր կազմակերպութեան գործերի մի էջը, ներչընչուած է եւ ներչընչուած պիտի լինի այդ մտածողութեամբ, իրրեւ մի նոր միջոց, որը մեղ կապում է միջազգային յեղափոխական բանակին եւ նրա կենտրոնական չրջաններին: — Դա է ահա մեր քաղաքական-փիլիսոփայական հայեացքը, առանց որի մեր բոլոր ընկերների եւ մարմինների գործունէութիւնը կը լինի երեսուն, դուրկ ղեկավար սկզբունքից, եւ հետեւաբար անհամակրելի: — Ապա ընկ. Մալումեան անցաւ պրոպագանդի համար ձեռնարկուած միջոցներին, համեմատելով նրանց լեհերի, ֆինների, մակեդոնացիների եւ ռուս կազմակերպութիւնների այդ նպատակով արած քայլերին եւ վերջացրեց՝ եղրակացնելով, որ այդ մեր պրոպագանդը եւրոպայում արդէն հող է գըտել եւ պէտք է այդ ուղղութեամբ չարունակել:

Խահակեան.— Եւրոպայի միջամտութիւնը Թուրքիայի վերաբերմամբ պիտի հասկանալ երկու կերպ, ա) Թուրքիայի գործերը կարգադրելու եւ բ) մեր հարցի համար: Շատերը մեղադրում են, որ եւրոպայի ուշադրութիւնը եւրոպական պրոպագանդի տեսակէտից ոչինչ չէ արել: Այդ մեղադրանքը անհիմն է, քանի որ այդ հարցը մեղ համար միշտ էլ մութ եւ անորոշ է եղել: Աւում էք, միջամտութիւն կը լինի Հայաստանի պատճառով. ինչո՞ւ: Ես լսում եմ միայն ընդհանուր խօսքեր: Ես չեմ ընդունում, որ մենք կարող կը լիներք այնպիսի չարժում, այնպիսի սպառնական ոյժ առաջ բերել Թուրքիայում, որը պայմանաւորուած լինի եւրոպայի անխուսափելի միջամտութեամբ: Ի՞նչ պիտի լինի մեր դիրքը հակադիր չահեր ունեցող պետութիւնների միջեւ: Իմ կարծիքով եւրոպական պետութիւնները իրենց չահերը վերջնական քայքայումից փրկելու համար կարող է պատահել որ միջամտեն Տաճկաստանի գործերում, եւ այդ կը լինի երկու նկատումով, կա՛մ բաժան-բաժան անելու այդ երկիրը, եւ կամ իրական կարգեր հաստատելու ամբողջ Տաճկաստանում: Երկու դէպքումն էլ միջամտութիւնը վերաբերում է ամբողջ երկրին եւ ոչ Թէ միայն հայկական հանգներին:

Միհրախեան.— Եթէ մինչեւ այժմ եւրոպան չէ միջամտել, պատճառն այն է, որ մեր գործունէութիւնը չատ անհամեմատական է եղել: Մենք մեր յոյսը եւրոպայի միջամտութիւնից չենք կարել, նա կը կատարուի վազ Թէ ուշ: Երկրում տեղի ունեցող ամէն մի ապստամբութեան միջոցին մեր աչքը ծակում ենք միշտ էլ եւրոպայի վրայ: Այս պատմական փաստ է, որ եւրոպան հակամէտ է դէպի քրիստոնեաները եւ դրանց է միշտ էլ առաւելութիւն տալիս, իրր կենսունակ, լաւ եւ յառաջադիմող տարրի: Նոյնը եւ Հնդկաստանում: Եւ ես եւրոպայի միջամտութիւնը մեր դատի վերաբերմամբ համարում եմ դուրս ամէն կասկածից եւ ընդունում

դլական մաքով: Ես կը մատնանշեմ մի քանի փաստեր, — օրինակ՝ Մայիսեան Ծրագիր, Բերլինի դաշնագիր: Մի՞թէ Եւրոպան ուղեց մեզ խաբել: Ո՛չ, այլ հանդամանքները այդպէս դասաւորուեցին: Հարցնում են, ո՞ր տէրութեանը դիմենք: — Բոլոր վեց պետութիւններին էլ, — կ՚ասեմ ես: Իսկ գլխաւորապէս նրանց, որոնք գօրաւոր են եւ մեզ համակիր: Վերջերս մոցրել ենք ցանկի մէջ նաեւ Ամերիկան: Ես նորէն պնդելով Եւրոպայի միջամտութեան անխուսափելիութեան վրայ, առաջարկում եմ մեծ տեղ տալ եւրոպական պրոպագանդին:

Զեղալեան.— Իմ մէջ մի ուրիշ մտածում կայ, զուցէ ուրիշ ընկերներ էլ նոյն կարծիքին են: 17 տարուայ յեղափոխական մեր գործունէութիւնը մեզ բերաւ այն համոզմունքին, որ մենք ազատութիւն ձեռք բերելու համար, պէտք է թուրքիայի միւս դժգոհ տարրերի հետ մէկտեղ համբայ ելլենք: Այժմ մենք դիմում ենք միայն հայերի համար: Բացի այդ, 61րդ յօդուածը ամբողջապէս ղէմ է քուրքերի, քրտերի եւ չերքէզների: Այս պայմաններում այժմեան մեր բռնելիք դիրքը չէ՞ որ կեղծիք է, միեւնոյն ժամանակ հակասութիւն: Մեր գործելակերպով զրոում ենք քրտերին: Ի՛ուզէի այդ հարցը պարզուէր:

Ռոստոմ.— Այդ կարծիքը ես էլ եմ լսել: Մեր նախկին արմենական ընկերոջ տեսակէտով մինչեւ այժմ գործը տարուել է սխալ հիմունքով: Եթէ այնպէս վարչինք գործը, որ կասկած չառաջնար քրտերի մէջ դէպի մեր պատը, այն պարադային քրտերի մէջ յաջողութիւն կ՚ունենայինք եւ միութեան գործը չատ կը դիւրանար: Այս տեսակէտին սկզբունքով հակառակ չեմ եւ ճիշդ եմ դտնում, բայց դրանից չվիտի հետեւի, որ քրտերի ու չերքէզների կատարած չարիքները պրոպագանդայի նիւթ չվիտի դարձնենք: Եթէ մեր նպատակին չենք հասել, դրա պատճառը յամենայն դէպս այն չէ, որ մենք խօսում, դրում ենք քրտական ազգանունների մասին եւ պահանջում ենք վերջ տալ դրանց: Իրողութիւնը դոյութիւն ունի առանց մեր խօսելուն էլ: — Ես դտնում եմ մի հիմնական եւ խիստ սկզբունքային հարցի: Մ՚եմ վրայ պիտի դնել մեր յոյսը: Մի քանի տասնեակ տարիներ առաջ, ֆրանսիական յեղափոխութենից ի վեր բուրժուական դասակարգը խիստ յեղյուրջում մտցրեց դրեթէ ամէնուրեք: Այդ, նոր կարդեր բերող չարժման ալիքները տարածուեցին համարեա բոլոր եւրոպական պետութիւնների մէջ: 1848 թ-ին նա ազդեց իր դերադոյն մոմենտը: Չնորհիւ այդ բուրժուական չարժման, ազատագրուեցին Ռումանեան, Ճունաստանը, Սերբիան եւն.: Գլուխներին տարրները իրար եռուեց, բուրժուան կորցրեց իւր յեղափոխական ոյժը, իր համբերը: Այժմ դրա տեղ ամէնուրեք բարձրանում է աշխատաւորական ուժը, նորագոյն ռամկավար հոսանքը. նա մեծ պարտութիւն կրեց ռամկին յեղափոխութեան մէջ եւ 30ական ու 48 թուականներին նրա յաղթանակը Գարիպի կոմմունայի օրերում կարճատեւ եղաւ. բայց այժմ հետզհետէ զօրեղանում է, իսկ ապագայի փառաւոր յաղթանակը նրանն է: Ահա այս պէտք է լինի մեզ դեկավարող սկզբունքը՝ եւրոպական միջամտութեան հարցին մօտենալիս: Այո՛, մենք պիտի չլսո՛նք փնտռենք գլխաւորապէս, դրանց հետ միանանք, դաշնակցինք, քողնելով, որ իւրաքանչիւրը իւր պետութեան սահմաններում ազդի քաղաքական ուղղութեան վրայ: Այդ տեսակէտից պիտի մօտենանք նաեւ Ռուսաստանի, մանաւանդ որ առաջացած փոփոխութիւնը մեծ նշանակութիւն ունի, ի հարկէ դլուխն մտքով, մեր հարցի համար: Իսկ գալով Խահախեանի այն հարցին, Թէ միջամտութիւնը Տաճկաստանի՞ Թէ Տաճկահայաստանի համար է, կ՚ասեմ ես, — մենք դնում ենք հայկակա՛ն հարց, իսկ եթէ ընդհանուր բանուորական–համամասնական դաբաձաւ, ասելի լաւ: 1896ին, Բանկ Օտտոմանում, մեր կողմից դրուեց միայն 6 նահանջների բարենորոգման հարցը, բայց Եւրոպան դրեց համամասնական [հարց]: Ես այն կարծիքին եմ, որ մեր պրոպագանդան մղելիս, պիտի դեկավարուենք մեր ծրագրում դրած պահանջներով, ուրեմն պիտի կանգ առնենք գլխաւորապէս տաճկահայկական խնդրի վրայ:

Նախագահ.— Հարցը սպառուած համարելով, դնում է ի Հէյի ժողովին դիմելու բանաձեւը:

Թէթեւ վիճաբանութենից յետոյ, ժողովը ընդունում է ընկ. Զարդարեանի հետեւեալ առաջարկը.

«Ժողովը լսելով մասնաժողովի զեկուցումը կ՚ա Հէյի ժողովին դիմելու մասին, վճռից մասնախմբի մշակած որոշումները յանձնել պատշաճ մարմնին՝ ի գործադրութիւն»:

Սրանից յետոյ քուէարկուեցին եւրոպական միջամտութեան վերաբերեալ բանաձեւերը:

Թուիչեան–Զաւարեան–Ռոստոմի բանաձեւը՝

«Ի նկատի ունենալով այն բոլոր ընդհանուր նիմքերը, որոնք հարկադրեցին Դաշնակցութիւնը սկսել իւրացնել պրոպագանդան, ընդհանուր ժողովը որոշում է շարունակել դա նոյն ուղղութեամբ, որը մշակուած է եղել 1904 թուի Ընդհանուր ժողովի կողմից: — Աչքի առաջ ունենալով ներստացուած առաջ եկած բարեփոխութիւնները, ուշադրութիւն դարձնել եւս այն պրոպագանդի վրայ, որ կարող է կատարուել Ռուսաստանում, ընդդիմադիր տարրերի. ազդակցութեամբ»:

Այս բանաձեւը անցաւ ձայների մեծամասնութեամբ. հակառակ չ՚ուզ, ձեռնպահ՝ 3 հոգի:

Խահախեան–Մուշեղ–Սիգի բանաձեւը մերժուեց. որին համաձայն էին երեք ձայն: (Բանաձեւը տե՛ս 55րդ նիստում):

Նախագահը կարդաց «Վերջին ընկերների կողմից բերուած մի առաջարկը, բայց դրա մասին քան էութեան խօսելը քողնուեց վաղուայ նիստին:

(5 րոպէ ընդմիջում):

Ժողովը վերաբացուելով ընկ. Մալումեան կարդում է մի բաթիկմաներ՝ Գիչո Գիլորի եւ Բօրխ Մարտինովի հետապրեր, ինչպէս եւ ընկ. Լունկեւիչի նամակը:

Գիլորի հետապրն է՝

«Անկարող եմ Ապրիլի 25ից առաջ գալ. իմ շոգեկալութիւնները եւ ռեյոյցիները: Նամակը փաստով»:

Մարտինովի հետապրը հետեւեալն է՝

«Բացակայ լինելով Սոֆիայից, այսօր միայն կարողացում եմ պատասխանել: Հրաւէրը ընդունում եմ մեծ հաճոյքով. մեկնիլ ապրիլ 22ից առաջ անհնար է իմ համար: Նդայպրական ռեյոյցիները»:

Լունկեւիչի նամակը հետեւեալն է՝

8 Ապրիլ

«Թանկագին ընկերնո՛ր,

Ցաւտնում եմ ձեզ իմ անկեղծ բարեկամական շնորհակալութիւնը, այն մեծ ուշադրութեան համար, որ դուք ցոյց տուիք դէպի իմ ձեր հրաւէրով: Սակայն չափազանց ցաւում եմ, որ հնարաւորութիւն չունեմ օգտուելու այդ հրաւէրից, որովհետեւ վատառողջ եմ եւ շատ ստիպողական աշխատանք ունեմ: — Զրկուելով ձեզ հետ մի քանի օր անցկացնելու հաճոյքից, ես մխիթարում եմ իմ այդ յուսով, որ դուք առաջիկայում էլ իմ հնարաւորութիւն կը տաք իմ համեստ ուժերի ու գիտութեան չափով ծառայելու մեզ բոլորիս համար թանկագին գործին»:

Ժողովը անցնելով հերթական խնդրին, լսեց բանի հանգամանութեան մասին եղած դեկուցումը, որը ներկայացրեց ընկ. Թուիչեան: Ապա սկսաւ վիճաբանութիւնը:

Մինասեան.— Ես այն տեսակէտին կը պատկանիմ, եթէ մէկը պատասխանատու է օժանդակել, բայց չէ կամենում կամով իր պատասխանատուութիւնը կատարել, պէտք է նրանից բռնի կերպով պահանջել: Ես դտնում եմ, որ կառավարութիւնից խլածը նոյնպէս ժողովրդական է: Թող ներուի ինձ ասել, որ մենք ժէզուիտների նման, «նպատակը արդարացնում է միջոցը» դործադրելու ենք:

Զաւարեան.— Ես հիմնովին հակառակ եմ բռնի հանդանակութեան, ինչ պարագայում եւ ինչ ձեւի տակ լինի այդ: Այդ եզբակացութեանն են բերել ինձ մեր կուսակցութեան կրած մի չարք դառը փորձերը: Ո՛չ, մի յեղափոխական կուսակցութիւն, ինչպէս է Դաշնակցութիւնը, որը կոչուած է լայն ժողովրդական խաւերին պաշտպանելու, նա չպէտք է նման սադքաք ճանապարհի վրայ կանդնի: Ահա հինգ տարի է, որ Դաշնակցութիւնը կանդնել է այդ անմաքուր ճանապարհի վրայ: Եւ այդ կատարուեց այն ժամանակ, երբ մենք հեռու մնացինք զոհարերութիւնից, չեղուեցինք առաջնորդ ուղիից եւ դիմեցինք բռնի հանդանակութեան: Հենց այդ օրից էլ մեր չարքերում առաջացաւ լքում եւ քայքայում: Կովկասում ունեցանք մի քանի յաջող փորձեր, ի հարկէ, զոհերի հետ կապուած: Այդ աւելի խրախուսեց մեզ: Թուրքիայում մինչեւ այդ ժամանակ մաքուր էր գործը, բայց այժմ չնորհիւ դրամի, առատ դրամի, կեղտոտուում են գործիչները: Մի չրջան, որ առաջ 10 ոսկի էր ծախսում, այժմ 100–1000 ոսկի է պահանջում եւ գործադրում: Այո, շատ քիչ է մատնում դործի յաջողութեան մասին. ուզում են դրամով անել ամէն ինչ, ինչպէս հրեաները: Ո՛չ, դրամը չէ ձեռնարկի, յեղափոխական գործի դրուատականը, այլ անձնազոհութիւնը, արիւնը: — Նոյն այդ երեւոյթին ականատես եղանք նաեւ Գոլտում: Դրամը շատ էր, անսահման, եւ մարդիկ իրենց յոյսը դրել էին միայն փողի վրայ, չուզելով մի զոհ անդամ տալ: Եւ այդ վարձկանական սիստեմի արդիւնքն այն եղաւ, որ ձեռնարկը վիժեց: Ուր դրամը շատ է, այնտեղ տիրում է նոյն անմաքրութիւնը. ընդհակառակն, այնտեղ, ուր քիչ դրամ կայ, տիրում է մաքրութիւն, անձնուիրութիւն: Մեր գործունէութիւնը կարող է առաջ գնալ եւ յաջողութեամբ պահպանել այն ժամանակ, երբ խիստ ներդաշնակութիւն կը լինի բոլոր ճիւղերի — զրամականի, բարոյականի եւ դինականի միջեւ: Ահա այս երեքին էլ հաւասար չափով բաւարարութիւն [պէտք է] տալ, չվերյանելով ոչ մի կողմը: Մենք չատ ականջ ենք կախել երիտասարդ պոլսեցիների այսպիսի տղայամիտ խօսքերին.— «Փող տուէք, մենք կ՚ազատենք Հայաստանը»: Տուեցինք եւ անբարոյականացանք: Ասում են, որ միայն Տաճկաստանում խոշոր գումարներ են հարկաւոր: Ես չեմ դտնում որեւէ տարբերութիւն Տաճկաստանի եւ Կովկասի մէջ: Կովկասում նոր գործ է սկսւում, դուցէ նրան էլ նոյնքան մեծ գումարներ հարկաւոր լինին, որքան Տաճկաստանին: Վերջացրնելով ասելիքս, նորէն կրկնում եմ, որ ես դէմ եմ բռնի հանդանակութեան՝ առանց ամենափակումների, առանց բացառիկ բոպէների: Եթէ ես իրաւունք չունեմ ընկերոջս արիւնն առնել, ի՞նչ իրաւունք ունեմ բռնի կերպով ուրիշից խլել: Պէտք է այդ անբարոյականութիւնը վերացնել: Ես չեմ ուզում այդ վիճակի մէջ նորէն ինձ խրել:

Զարդարեան.— Ընկ. Թուիչեանը անհատական սեփականութեան վրայ բանալու դէմ է սկզբունքով, այն ինչ առաջարկում է պետական էքսպրոպրիացիան [սեփականութեան բռնադրաւում], բայց չէ՞ որ դա էլ էապէս անհատների սեփականութիւն է: Պէտք է ընդունել, Թէ այդ երկուսից ո՞րն է դիւրին եւ քիչ դոհեր պահանջում: Իմ կարծիքով կառավարական դրամների էքսպրոպրիացիան խիստ վտանգաւոր է: Ընկ. Թուիչեան խիստ հետեւողական կը լինէր, եթէ դնէր բռնի հանդանակութեան սիստեմը: Ես եւս կ՚ընդունեմ, որ Դաշնակցութիւնը կարեւոր պարագաներում, անհրաժեշտ կարիք կ՚ունենայ դրամի: Անհրաժեշտ է մի մարմին, որ նման պահանջի դէպքում դեկավարի դործը:

Ռոստոմ.— Սիմոնի սասծները արժանի են մեր խիստ ուշադրութեան: Մեզանից ամէն մէկին պարզ է բռնի հանդանակութեան դառն հետեւանքները: Չաշխատենք դրանց առաջ աչք փակել: Բայց Զաւարեանը դոյները չատ մթնացրեց: Ուրիշ կուսակցութիւնների հետ համեմատած՝ էլի՛ Դաշնակցութիւնը բարձր է կանգնած: Ահա վրացական Ֆեդերալիստները, նրանց մէջ առաջացել է անարխիական չարժում, որ միայն էքսպրոպրիացիայի վերածուած է, որի մէջ խիստ դեր է կատարել այդ չօշափուող հարցը: Լեհական R.R.S.ի քայքայման պատճառը էլի նա է: Եւ դրանք փողը հաւաքում են փողի համար, մի բան՝ որ չէ արել Դաշնակցութիւնը: Խիստ անհրաժեշտ կարիքի դէպքում,

բոլոր միջոցները սպառելուց յետոյ միայն, Դաշնակցութիւնը դիմել է բռնի հանդգնակութեան: Հնչակեանները միշտ էլ այդ ճանապարհի վրայ են կանգնած եղել, — չլինէր այդ, դուցէ եւ նրանք վերակազմըւէին: — Մի խիստ նկատուած երեւոյթ է այն, իմ կարծիքով, միեւնոյն ժամանակ բնական, երբ պատրաստի դրամներ են ստացուել, ղղալի կերպով պակասել են անդամավճարները: Դեռ աւելին: Քայքայւում է նաեւ կազմակերպչական ամբողջ գործը: Հենց այդ հանգամանքը նկատի ունենալով, ձայների ճնշող մեծամասնութեամբ մերժեցինք բռնի հանդգնակութիւնը Շուշիում: Բայց յանկարծ բռնկուեց Գանձակի կոտորածը եւ նորէն հարկ եղաւ բռնի միջոցի դիմելու: Այսպէս ուրեմն, մենք ձեռք ենք առել այդ միջոցը, երբ մի կոնկրէտ բան է դրուած եղել մեր առաջ: Այս առելով հանդերձ, կ'աւելացնեմ միաժամանակ, որ փողը յամենայն դէպս ջրի նման հոսել է: — Ես դերադասում եմ պետական դրամների էքսպրոպրացիան՝ անհատական սեփականութիւնից:

Մուրատ.— Ես էլ սկզբունքով հակառակ եմ բռնի հանդգնակութեան: Ջաւարեանի մի կարծիքին, միանգամայն համաձայն եմ, — այն, որ ամէն մէկը մեզնից իւր դրամական զոհաբերութիւնն անէ եւ իւր քըսութիւնով ապրի: Դա մի դերազոյն բան կը լինի մեզ համար: Բայց մենք չգիտենք, թէ մեր վաղուան կարիքի համար բաւարար դրամ կ'ունենա՞նք թէ ոչ: — Կառավարութեան դրամներից օգտուելը լաւ է, բայց դա միշտական, յարատեւ չէ կարող դառնալ, հարիւրից հազիւ 45–50 փորձերը յաջող անցնեն: Եւ ես ասում եմ, որ վարձկանական սիստեմը մեր մէջից պէտք է վերցնել: Այս էլ կ'ասեմ, որ ինչքան հարստութեան, նոյնքան եւ չքաւորութեան պատճառով ենք վնասուել: Այս էլ չպէտք է մոռանալ. փողը չէ անբարոյականացնում մարդկանց, այլ գործողները, գործադրութեան սխալ, անկանոն սիստեմը: Մաքուր անհատներին չէ կարող դրամը անբարոյականացնել, եւ եթէ մենք անբարոյականանում ենք, այդ կը նշանակէ պարզապէս մեր տհասութիւնը, սկզբունքի մաքրութեան բացակայութիւնը:

Մալումեան.— Շօշափուող հարցը թէթեւ, հասարակ խնդիր չէ, հետեւապէս պէտք է աւելի ծանրանալ նրա վրայ: Բռնի հանդգնակութեան առաջին քայլը եղել է 1902 թուին, Դաշնակցութեան կամքը Ներկայացնող Մարմնի որոշմամբ: Այդ այն ժամանակն էր, երբ կազմակերպութեան գանձատունը միանգամայն դատարկ էր եւ կարեւոր ձեռնարկների համար դրամի խիստ կարիք կար: Սակայն բռնի հանդգնակութեան առաջին քայլը արուել է այն պայմանով, որ նա լինի առաջին եւ վերջինը: 1904ի Ընդհանուր Ժողովում եւս որոշուում է ընդմիշտ վերջ տալ այդ անընդունելի միջոցին (կարդում է այդ որոշումը), Թոյլ տալով «Փոթորիկ»ին կարգադրել այդ գործը: Արդիւնքը մեզ քայլ յայտնի է, — այն՝ որ նա չարունակուել է: Նոյնը կատարուեց նաեւ 1905ի Ժողովի որոշումից յետոյ (կարդում է Ժողովի որոշումը): Ես չեմ ընդունում ոչ մի բացառիկ հանգամանք, պէտք է եւ ժամանակ է վերջ դնել հանդգնակութեան բռնի միջոցին: Եթէ խնդիրը թեւի թողնենք, մարմինները միշտ էլ կարող են բացառիկ, անօրինակ մոմենտ գտնել եւ անցեալի աններելի դէպքերը նորից կրկնել: Ես չեմ յիշեցնի մեր չարքերի այն բարոյական քայքայումը, որ մեր երկու ընկերները այնքան փայլուն կերպով պատկերացրին, ես միայն կանգ կ'առնեմ մի կէտի վրայ: Կարո՞ղ է արդեօք կազմակերպութիւնը բռնի հանդգնակութեամբ ուժեղանալ: Ես կ'ասեմ՝ ո՛չ: Դեռ աւելի՛ն: Շնորհիւ այդ միջոցի մեր մարմինները չեն զործում, անդամավճարները դադարում են եւ այդ տեսակէտից, մեր մուտքը, թէեւ առաջ մի ղղալի գումարի էր հասնում, այժմ բոլորովին չքացել է: Սա մի կարեւոր կէտ է: Կայ եւ մի այլ հանգամանք: Մի քանի այլ կուսակցութիւններ, որոնց թւում եւ հնչակեանները, հետեւելով մեր օրինակին, հասցրել են այդ գործը այլանդակութեան, թալանի եւ առեղծել մի յեղափոխական անարխիա [անկանոնութիւն]: Մենք դժբախտաբար մասն ունենք նրանում: Մենք դժբախտաբար մասն ունենք այդ անարխիայի մէջ: Դէպքեր են եղել, որ մեր ներսից կամ ուրիշ յեղափոխական բարեկամները, լուրեր առնելով, հարց են տուել, թէ ո՞րքան ճիշդ է այդ բոլորը: Մենք ճնշւում ենք, չենք կարողանում բայ ճակատով մեր բարեկամների հետ այդ մասին խօսել, այնքա՛ն վատ, այնքա՛ն աններելի է ստեղծուած սիստեմը: Եզրափակելով ասածներս, չեշտում եմ, ես դէմ եմ բռնի հանդգնակութեան, առանց որեւէ սահմանափակումի:

Գուսան.— Ես սկզբունքով դէմ եմ բռնի հանդգնակութեան. բայց չեմ ընդունում, որ դա անբարոյական միջոց է. այն ժամանակ նոյնը պիտի ասուէր նաեւ տեռորի վերաբերմամբ: Եթէ մենք համոզուած ենք, որ մենք ենք միակ ճշմարիտը, որ մեր մօտ է ճշմարտութիւնը եւ մենք ենք պատմութիւն ստեղծում, պէտք է դիմենք մեր յաղթանակին, առանց կանգ առնելու յեղափոխական բռնի միջոցի առաջ: Մենք օգտուելու ենք բոլոր յեղափոխական միջոցներից: Ես չեմ կարող բռնի հանդգնակութեան դուռը բոլորովին փակել. կան մոմենտներ, երբ այդ դուռը պիտի բանալ:

Արամ.— Արդէն ընկերները բռնի հանդգնակութեան վէրքերը այնքան փայլուն կերպով յառաջ բերին, որ ինձ քիչ բան է մնում ասելու: Ես կ'ասեմ միայն, որ եթէ Ընդհանուր Ժողովը ուզում է յեղափոխական բարձրութեան վրայ պահել ընկերների զոհաբերութիւնը, չպիտի ընդունի բռնի հանդգնակութիւնը: Այժմ բովանդակ Ռուսաստանում կատարում է այդ անբարոյականութիւնը: Մենք երբ լսեցինք, որ վասպուրականի համար 60·000 ռուբլի բիւդճէ է նշանակուած, մեր ձեռքերը, աշխատելու ձգտումը թուլացան: Եթէ ուզում էք, ընկերներ, մաքուր յեղափոխականներ մնալ, մերժեցէ՛ք բռնի հանդգնակութիւնը. իսկ եթէ [ուզում էք] անբարոյականալ՝ ընդունեցէք:

Խահակեան.— Կ'ուզէի մի հանգամանք բնորոշել: Գէթ է անհատական սեփականութեան եւ պետական էքսպրոպրացիայի միջեւ տարբերութիւն դնել, քանի որ յեղափոխական բարոյական ցնդի խնդիր կայ: Պետական դրամների էքսպրոպրացիան կատարւում է չատ լայն ձեւով, թէեւ խիստ դժուարութեամբ եւ զոհերի հետ կապուած. բայց յեղափոխական բարոյական ցնդը չէ տուժում եւ ես դրա վրայ նայում եմ իբրեւ մի յեղափոխական ակտի վրայ: Ես հակառակ եմ, ի հարկէ, բռնի հանգանակութեան:

Մանուկ.— Ես եւս այն կարծիքին եմ, որ փողը չէ որ անբարոյականացնում է, այլ այդ կախուած է գործադրուելու ձեւից եւ անհատներից:

Գագիկ չեշտում է այն երեւոյթի վրայ, որ առատ դրամը մեռցնում է յեղափոխական ոգին մարդի մէջ եւ աշխատանքի համար մեզի դարձնում:

Վարդան.— Մեր գործունէութեան սկզբներում, մեր նպատակն էր՝ առաջ մարդ ունենալ, ապա դրամ: Երբ գոհաբերութեան ընդունակ, գործին նուիրուած մարդիկ կան, դրամը ինքնըստինքեան առաջ կը գայ: Վերջերս խախտուեց այդ սկզբունքը եւ առաջին տեղը տրուեց փողին: Դուք չէք կարող մատնանիշ անել մի խոշոր յեղափոխական ակտ, որ դրամի չնորհիւ կատարուած լինի: Այդ ակտերը կատարուել են միայն անձնազոհ հերոս անհատների արեան գնով:

Մաշուր.— Փողի չատութեան պատճառով դաշնակական խաւերից զատ, որի մասին ընկ. Ջաւրեան այնպէս հիանալի կերպով պարզեց, բռնի հանդգնակութիւնը ահաբեկել է ժողովրդական լայն խաւերը: Դժուար է ասել, թէ ժողովրդական այն լայնածաւալ համակրանքը չատ անգամ, իրօք համակրանք է, թէ առերեսուելի միայն, ընդհանուր ահաբեկութիւնից առաջացած ժամանակաւոր մի երեւոյթ: Նոյնիսկ մեզ համակրող ինտելիգենտ շրջաններում, մեր յաճախ հաստատացումների հակառակ, տիրում է նոյն կարծիքը: Այստեղ վերջապէս, մենք պէտք է վերջնականապէս մերժենք բռնի հանդգնակութեամբ կամ ահաբեկութեամբ դրամ ժողովելու անմաքուր գէնքը: Ոչ մի «բայց», ոչ մի բարձրագոյն մարմին կամ արտակարգ դէպք եւ ոչ մի «փակ եթէ» չպէտք է խախտէ մեր այդ մերժման որոշումը: Աւելացնեմ, որ կառավարական էքսպրոպրացիան պէտք է միայն յեղափոխութեան ժամանակ գործադրենք, կառավարութեան նիւթական եւ բարոյական ուժերը սպառելու համար:

Զարդարեան.— Ընկ. Մալումեանի բերած փաստերը ապացուցանում են հենց այն, որ ինչքան էլ ուզում ենք որոշումներ կայացնել, էլի կհանդէպ պահանջի առաջ անզէն ենք մնալու: Մի՞թէ կարելի էր առանց փողի անել կոլկասում այն, որով այժմ պարծենում ենք: Ասում եմ, այդ եղել է, եւ միշտ էլ կը լինի, միայն պէտք է կանոնաւորել եւ մի որոշ մասշտաբի յանձնել:

Չելալեան.— Գիտեմ ասեմ, որ ցաւալի պարագայի տակ կը գտնուիմ: Այստեղ եկել ենք կարծես ինքզինքնիս դատապարտելու: Չէ՞ որ այդ բոլոր ձեռնարկները, փողի վերաբերմամբ, մեր հրահանգով են եղել եւ ոչ թէ ինքնակամ: Սխալ է ասել, թէ մենք անբարոյականացել ենք. դուցէ վարկաբեկ ենք եղել, ձեռք բերած տալերները լաւ տակտիկով չենք գործածել: Մեզ վարկաբեկողները եղան մեր հակառակորդները եւ ներքանչ՝ որոնցից բռնի դրամ ստացանք:

Մուրատ.— Մէկանգամ ընդմիշտ մերժել բռնի հանդգնակութիւնը՝ մենք անկարող ենք, քանի որ երկրում խոշոր պատրաստութիւնների հրամայողական պահանջի առաջն ենք կանգնած լինելու: Հարկաւոր են միջոցներ: Մեր դաշնակցական կազմակերպութիւնները չեն կարողանայ բաւարարութիւն տալ գործի հսկայական կարիքներին: Ուրիշ ճանապարհ ցոյց տուէք, որպէսզի կարելի լինի այլ կերպ դրամ հայթայթել՝ այն ժամանակ կը թողնենք բռնի հանդգնակութիւնը:

Ջաւարեան.— Գիտեմ, քուերը դուցէ կարողանան համոզել ձեզ ասածներիս ճշմարտութեան մէջ: Մեր քանի ընկերներից՝ որոնք մի ժամանակ եղել են պապայման մաքուր ու անկեղծ յեղափոխականներ, առնուազն տասը, մեր 15 տարուայ գործունէութեան ընթացքում ընկել են բարոյապէս. մէկը դողութիւն է արել, միւսը զեղծում է կատարել, երրորդը ծայրայեղ կերպով չհայլել է կուսակցութեան դրամները, եւն.: Մնացած տասը հոգուց էլ մի մասը՝ կողմնակի կերպով, անբարոյական քայլերի է դիմել, կաշառուել է անգիտակցաբար, այս կամ այն միլիոնատէրից: Առաջ Դաշնակցութիւնը եղել է մասնաւորական կազմակերպութիւն, նրա յետեւից գալիս են եղել տասնեակ հազարներով մարդիկ, որոնց ուժերով մենք կարող էինք յեղափոխական գործեր կատարել: Փողի չնորհիւ, առակայն, մեր մէջ մուտք գործեց բիւրոկրատիզմը, — որը սպառնում է աւելի զգուելի դառնալ, քան ռուսական բիւրոկրատական ուժերը: Նոյնիսկ այն ընկերները, որոնք մի ժամանակ բռնի հանդգնակութեան խիստ կողմնակիցներ են եղած, ստիպուել են խոստովանել այդ դառն իրականութիւնը: Եւ Դաշնակցութիւնը այսօր անպայման կ'ոչնչանար, եթէ զօրեղ նեցուկ չունենար անցեալը, — այո՛, անցեալը, երբ ունեցել ենք ընկերներ՝ դուրկ չափիկ անգամ փոխելու միջոցից. այդպիսի ընկերների վրայ է եղել, որ հիմնուել է Դաշնակցութիւնը: — Եթէ Դաշնակցութիւնը չարունակի իր ներկայ ընթացքը, նա կը դառնայ մաֆֆիա. արդէն այդ անունով են սկսել որակել մեր կուսակցութիւնը: Բացառիկ դէպքերում միայն, թեթեւ կարելի լինէր հաշտուել բռնի հանդգնակութեան հետ. մեր

անցեալում, սակայն, չեմ գտնում որեւէ բացառիկ հանգամանք: Ձգէտք է մոռանանք, որ մենք դործում ենք հայ ժողովուրդի մէջ, որը դարերի ստրկութեան հետեւանքով իւրացրել է չատ անբարոյական ձգտումներ, որոնք կոլտեան անդունդը կարող են ձգել մեզ: Մի այլ ազգի, օրինակ անգլիացիների մէջ, դուցէ այնքան վտանգաւոր չլինէր մեր բռնած ճանապարհը: Ընկերներից մի քանիսը՝ «բայց» են աւելացնում իրենց ճառերում. չպէ՛տք է լինի ոչ մի «բայց»: Եթէ ունենք հաստատացած որոշ պահանջներ, մենք կը կարողանանք գտնել եւ միջոցներ, նրանց բաւարարութիւն տալու համար մենք կը դիմենք ժողովրդական հանդանակութեան. հարկաւոր է միայն, որ աչխատանք թափուի մեր կողմից: Ներկայ պայմաններում, մեր բոլոր կարիքների չափը հասնելու է 50·000–100·000 մի դումարի, որը կը լրացուի մեր հետեւորդների նպաստներով. կը հաւաքենք այնքան, որքան հաւաքելիս ենք եղել երկու երեք տարի առաջ: Կազմակերպութիւնը պէտք է դնենք նախկին հողի վրայ: Եւ եթէ գործը եռանդով վարենք, մեր չուրջը կը խմբուին նորանոր համակրողներ: Ինչ վերաբերում է էքսպրոպրիացիայի խնդրին, կ'ասեմ, բացարձակ ապաստամբութեան դէպքում արա՛ ինչ կարող ես, քանի որ կառավարութիւնը քո թշնամին է այլեւս. բայց դա ինքնասպանութեան էքսպրոպրացիա չէ, այլ կռիւ: — Կարուկ վճիռ պէտք է կայացնել այստեղ, թէ բռնի հանդանակութեան ակըռբունքները մենք ժխտում ենք միանգամընդմիչտ:

Ռոստոմ.— Զաւարեանն ասում է, թէ ժողովուրդը բաւարարութիւն կը տայ մեր գործի դրամական պէտքերին, եթէ միայն մենք եռանդով գործենք. այո ճիշդ է, բայց միեւնոյն ժամանակ Զաւարեանն ասում է եւ ա՛յն, որ մեր ժողովուրդը անբարոյական ձգտումներ ունի եւ այսպիսով ընկնում է հակասութեան մէջ: Լաւ, վատ, այդ ժողովուրդն է, այո՛, որ չէ ուզել զոհաբերութիւն անել, եւ այն ժամանակ, երբ վտանգն էր կախուել նրա դլխին. եթէ մենք բռնի միջոցների չդիմէինք ինքնապաչտպանութեան նկատումների չրջանում, կատորուելու էինք անտարակոյս: Ինչո՞ւ ենք սոսկում բռնի միջոցներից, արդէն յեղափոխութիւնն ինքնին բռնութիւն է: Հարցը չատ փող ունենալու մէջ չէ, այլ նրա գործադրման մէջ: Ռուսական Չնորոնոյա Վոլիան [ռուսերէն դրուած] ահագին գումարներ է ունեցել. բայց նա չանբարոյականացաւ երբեք. որովհետեւ այդ գումարները ծախսուել են խելացիութեամբ եւ խնայողութեամբ: Մենք եւս պէտք է նոյն կերպ վարուենք: Տանք կազմակերպութեանը նորմալ ընթացք, որպէսի իւրաքանչիւր գումար յատկացուի բացառապէս այն նպատակին, որի համար ե՛ւ հաւաքուել է:

Վռամեան.— Զաւարեանը սեւ-սեւ գոյներով նկարագրեց մեր բարոյական անկումը: Բայց դա պարզապէս չափազանցութիւն է: Կովկասի ինքնապաչտպանութեան չրջանը մեր պատմութեան մէջ, բացառիկ չրջան է եւ այդպիսի չրջաններ ամէն ազգ էլ ունեցել է: Եթէ աչխարհում երկու մաքուր քաղաքական կուսակցութիւն գոյութիւն ունին, դրանցից մէկը Դաչնակցութիւնն է անկասկած: Ռօսքը համեմատական մաքրութեան մասին է. կրօնական տեսութիւններ քարոզող մի միաբանութիւն չենք, այլ մի քաղաքական կուսակցութիւն, որ ստիպուած է հաչտուել կեանքի առօրեայ պայմանների հետ. հետեւաբար կոմպրոմիսներ ստիպուած ենք անել կոմաց կոմաց, քանի որ քաղաքական նպատակ ունենք իրագործելու, եւ այն էլ մօտիկ ապագայում: Մեղ չուտպել է հարկաւոր. իսկ չուտպելու համար՝ անհրաժեչտ է փող: Եթէ այդքան խիստ բարոյական էք ուզում լինել ձեր գործունէութեան մէջ, հապա ինչո՞ւ էք ընդունում տեառրի ակըռբունքը. չէ՞ որ այստեղ եւս բռնութիւն էք գործ դնում, արիւն էք թափում: Մենք չենք կարող գործնական յեղափոխական լինել եւ նոյն ժամանակ անպայման ու բացարձակօրէն մաքուր մնալ. չենք կարող չարաչարուել այն արիւնից, որի մէջ մենք կանգնած ենք. մենք պէ՛տք է բարոյական լինենք այն չափով միայն, որ մեր գործը բարոյապէս չզահավիժի. իսկ այդ ծայրայեղ աղէտից չատ հեռու ենք մենք: Ես չեչտում եմ, որ ո՛չ թէ դրամն ինքը վնասում է մեզ, այլ նրա գործածման ձեւը: Եւ մենք Ռոստոմի առաջարկած՝ ծախսերի կըռնճատման սիստեմից զատ, մարմիններին եւս այնուհետեւ չպէտք է տանք աւելորդ փող, թող նրանք իրենք աչխատեն՝ հարկաւոր միջոցները սեփական ուժերով ձեռք բերել: Կրկնում եմ, մենք պէտք է թողնենք տեսական սկզբունքները. քարացած դոգմաների երկրպադու չենք. հարկաւոր է գործնական լինել: Մենք չենք միայն, որ բռնի կերպով դրամ ենք կորզում. նոյնն են անում, դուցէ աւելի լայն չափերով ու աւելի կեղտոտ միջոցներով, սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-յեղափոխականները: Մեր յեղափոխական գործը պէտք է առնչ տարուի՝ ամբողջ ժողովրդի միահամուռ օժանդակութեամբ. ամէն մէկը պարտաւոր է նըպաստելու. հակառակ դէպքում, աւելի լաւ է՝ մէկ-երկուսը զոհուեն, քան փողի եւ զէնքի պակասութեան պատճառով՝ ամբողջ գաւառներ վտանգուեն:

Թոփչեան.— Սկզբունքով մենք չենք կարող ընդունել բռնի հանգանակութիւնը, քանի որ մեր ծրագրի ոգին դէմ է նրան: Եւ այստեղ ոչ ոք չհերքեց, որ այդ սիստեմը բացասական աղդեցութիւն է անում կուսակցութեան վրայ. Վռամեանը, սակայն «որովհետեւներ» չտեսնից ընկաւ: Ո՛չ մի «որովհետեւ». այս հարցի մասին երկու կարծիք լինել չէ կարող. միանգամայն վերջ դնել է հարկաւոր բռնի հանգանակութեան սիստեմին, — մանաւանդ այսօր, երբ Դաչնակցութեան անունը չահագործում է չանգուժիանների կողմից (43): — Իսկ եթէ այնուամենայնիւ մի «բայց» ենք գնում., մեր այս «բայց»ը բացառիկ «բայց» է. մենք դեռ պէտք է լարուած ուժերով գործենք Տաճկաստանում, եւ այնտեղ ուրոդ բացառիկ դրութեան տեսակէտից՝ էքսպրոպրիացիան եւ համարում եմ ընդունելի: Սկզբունքով դէմ լինել էքսպրոպրիացիային, տալով թէ կառավարութեան փողերը ժողովրդի փողերն են՝ սխալ է. չէ՞ որ Սուլթանի թագն էլ, գահն էլ, նոյն այդ ժողովրդական փողերոմն են չինուել: Ժողովուրդից հաւաքուած փողերով կառավարութիւնը ճնչում է ժողովրդին. եւ եթէ մենք այդ փողերը խլենք նրանից, նչանակում է խլել ժողովուրդը ճնչելու ամենաազդու միջոցը:

79ՐԴ ՆԻՍՏ (13 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:

Ներկայ են՝ 24 ժողովական:

Բացակայ են՝ Ստեփանեան, Անդրանիկ (հիւանդ), Գուսան, Համօ, Գագիկ:

«Միչկուսակցական տեսակէտի հարցի վերաբերմամբ բանաձեւ է ներկայացուած ժամանժողովի կողմից, ըստ. վռամեանի միջոցով, որը հետեւեալն է.—

Ծողովը բարձր պահելու համար յեղափոխութեան հմայքը եւ վերջ մը դնելու համար վերջերս տեղի ունեցած ցաւալի դէպքերուն, պարտաւորիչ կը դտնէ միչկուսակցային իրաւարար տեսակէտները չ. 6. Դաչնակցութեան եւ ուրիշ կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու միջեւ, համաձայն հետեւեալ կէտերուն.

1. Այդ տեսակէտները կը կազմուին շահագրգռուող կողմերու ներկայացուցիչներէ, չէզոք ճանձիս ամներէ կամ ուրիշ կուսակցութիւններու ներկայացուցիչներէ, բոլ յարմարութեամբ:

2. Այդ տեսակէտները կը կազմուին միմիայն շրջանի պատասխանատու մարմնի հաւանութեամբ եւ գործակցութեամբ, ընդհանուր տեսակէտ մը պահպանելու համար այդ գործին մէջ:

3. Միչկուսակցական իրաւարար տեսակէտ ունենալ այնպիսի կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու հետ, որոնք կը համակերպին այդ տեսակէտներու որոշումներուն ամէն պարագայի տակ, եւ խոյս չեն տար այդ տեսակէտներուն ենթարկուելէ՝ իրենց ամբողջ ներգ պարագային հետ:

4. Այդ տեսակէտներու որոշումներն անբեկանելի են եւ չեն ենթակայեր ընդհանուր ծողովին:

5. Տեսակէտներու կազմութեան մանրամասնութիւններր մշակելը կը թողուի շրջանի ծողովներուն:

Նախագահը ձեւակերպում է վռամեանի առաջարկը. արդեօ՞ք որոշ ցենդ պէտք է պահանջուի այն կուսակցութիւններից, որոնց հետ յարաբերութեան մէջ մանելու հարց է դրւում: Մասնաւորելով խօսքը հրնչակեանների վերաբերմամբ, նկատում է, որ Գ. Ընդհանուր Ծողովը պարտաւորեցաւ մտնել է նրանց դոյութիւնը: «Գէ՞տք է վերահաստատենք անցեալ Ընդհանուր Ծողովի այդ որոչումը թէ ո՛չ»:

Ռոստոմ.— Ինչպէսը ընդհանուր կերպով դնենք, ոչ միայն մասնաւորապէս հնչակեաններին, այլ նաեւ բոլոր միւս կուսակցութիւնների՝ հայկական, ռուսական, վրացական եւն. վերաբերմամբ:

Մաշուր.— Հնչակեաններին հետ մենք սահմանած պէտք է յարաբերութեան մէջ մտնենք: Թէեւ պարտադրանքս չենք ճանաչում նրանց, բայց իրենց որոշ քայլերով՝ մեր կամքին հակառակ գրաւում են [?] մեզ: Միչկուսակցական տեսանի հարցը՝ լաւ է, որ թողնենք տեղական մարմիններին:

Զարդարեան.— Եթէ մի կազմակերպութիւն ունի յեղափոխական ծրագիր եւ գործում է յեղափոխական միջոցներով, — մենք կարող ենք յարաբերութեան մէջ մտնել մի այդպիսի կուսակցութեան հետ:

Չելալեան.— Բայց նաեւ հարկաւոր է որոչել, թէ որո՞նք են իսկապէս յեղափոխական, եւ որոնք՝ ո՛չ:

Միճասեան.— Մենք յարաբերութիւն ենք ունենալու՝ անխտիր քաղաքական-հասարակական բնաւորութիւն ունեցող բոլոր կուսակցութիւնների հետ:

Ջոփուրեան.— Ենթադրենք, որ այստեղ որոչեցինք, թէ յարաբերութեան մէջ պէտք է մտնել այսինչ կուսակցութիւնների հետ.— հարց է, սակայն, քանի՞ որ դրանցից կ'ուզենան մեր որոչումներին ընդառաջ գնալ: Մարմիններն իրենք պէտք է կազմակերպեն, հարկաւոր եղած դէպքում:

Զաւարեան.— Այդ խնդրի մասին չ'արժէ երկար խօսել ընդհանրապէս: Գալով հնչակեաններին — ոըբանք դիտմամբ են յարուցանում միչկուսակցական տեսանի հարցը, որպէսզի այդպիսով մեղ վրայ բռնոյական ճնշում գործ դրած լինեն՝ մեր անցեալ Ընդհանուր Ծողովի որոչումը, իրենց վերաբերմամբ, վերացնելու: Իրականութեան մէջ, նրանք երբեք չեն հրապարտակուի այդօրինակ տեսանների վճիռներին. այդ տեսակէտից արդէն բաւորու ապացոյցներ ունենք: — Կարիք չեմ տեսնում՝ առանձին կանոնագրութիւն մըշակելու, թէ ո՛ւմ հետ եւ ի՛նչ կերպ յարաբերութիւն ունենալ. կեանքն ինքը պէտք եղած ընթացքը կը տայ գործին: Ընդհանուր Ծողովը այդքանը միայն կարող է ասել.— դաչնակցական եւ այլ մարմինների ու խորհրդակցութիւնների մէջ ծագած վէճերի լուծումը Ընդհանուր Ծողովը յանձնարարում է կատարել միջնորդ կամ միջնադատական դատարանների միջոցով:

Խտահակեան.— Միչկուսակցական տեսանի հարցը ես հասկանում եմ, — որ կազմուի մի մնայուն միչկուսակցական մարմին, բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներից բաղկացած:

Նախագահը առաջարկում է Խտահակեանին, բանաձեւել իր այդ միտքը եւ ապա 10 հոգու առորագրութեամբ ներկայացնել Ծողովին:

Ջաւրեան չէ ընդունում՝ միչկուսակցական տեսանի անհրաժեչտութիւնը: Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների եւ սոցիալ-յեղափոխականների եւ ուրիչ մեր կուսակցութիւնների միջեւ չատ քիւրիմացու-

Թիւններ են տեղի ունենում, բայց ոչ ոք կարեւոր չէ գտնում յաւուկ ատեանների օգնութեանը դիմելու: Ընկերական ճնշով աշխատում են վերջացնել վէճերը:

Մուրատ.— Մենք չենք կարող ասել, որ այսինչը յեղափոխական չէ, եթէ միայն նա ինքներին այդպէս է յայտարարում եւ մենք պէտք է ընդունենք հնչակեանների գոյութիւնը՝ իբրեւ յեղափոխական կուսակցութիւն: — Ընդունում եմ բանաձեւը մէջի բոլոր առաջարկներով:

Նախագահը ամփոփում է խօսակցութիւնները եւ դնում է հետեւեալ առաջարկը. «Սկզբունքով ընդունել միկուսակցային ատեանի կարեւորութիւնը»:

Մասնաժողովի առաջարկած բանաձեւը քուէարկուում է եւ ընդունւում մեծամասնութեան կողմից: Դէմ են միայն չորս ձայն:

Քննութեան է դրւում «Զինապայքուցիկ դպրոց»ի հարցը. զեկուցում յաւուկ մասնաժողովի (ընկերներ՝ Ռոստոմ եւ Զարդարեան):

Ռոստոմ.— Դաշնակցութիւնը իր սկզբնաւորութեան օրից մեծ ուշադրութիւն է դարձրել կանոնաւոր զէնք ունենալու վրայ: Այս նպատակով էինք հիմնել արհեստանոցներ՝ Թաւրիզում, Թիֆլիզում եւ այլուր: Ռմբային պատրաստութիւնների մասին դժբախտաբար հոգ չէ տարուել: 96 թուականի ռումբի ձեւը երկար ժամանակ մնաց գործածութեան մէջ: Նոյնիսկ երբ Կովկասում սկսուեցին տեռորներ եւ անհրաժեշտութիւն զգացուեց կատարելագործուած ռումբ ունենալու, լուրջ միջոցներ ձեռք չառնուեցին այնուամենայնիւ: Այդ էր պատճառը, որ Ծուցկանը հենց առաջին քայլափոխից հանդիպեց մեծ դժուարութիւնների եւ ֆրնտստափորր ստիպուած եղաւ դուրս գալու՝ փորձերի համար: Միաժամանակ, օգտուելով էնէրների հետ մեր ունեցած բարեկամութիւնից, մեր ընկերներից մի քանիսը սովորեցին պատրաստել պայթուցիկ նիւթ եւն.: Սովորած ընկերներից մէկին՝ որ քիմիկոս էր, ուղարկեցինք Ֆրլիպպէ, որպէսզի այնտեղ հատատուկ մի արհեստանոց, ուր հնարաւոր է սովորել ռումբի վերաբերեալ բոլոր կողմերը, ճուլել, նիւթեր պատրաստել եւն.: Այդ բանը իրագործուեց եւ մի քանի երիտասարդներ անցել են այդ արհեստանոց-դպրոցից: Նոյն ձեւի արհեստանոց ուզեցինք հիմնել նաեւ Փարիզում, ուր գնաց մեր մասնագէտ ընկերը, սկսելու գործը. բայց չդիտեմ ինչո՞ւ ձեռնարկն անկատար մնաց: — Ջուլարաններ ունեցել ենք Ե՛ւ Կովկասում, ճուլուել են բացի ռումբերից նաեւ թնդանօթներ: Ռակէտներ [հրթիռներ] պատրաստելու փորձեր ենք արել, որ բաւական յաջողուել են: Վերջերս էլ փորձեր ենք արել՝ փամփուշտի եւ գնդակի չափիկներ պատրաստելու. եւ յոյս կար, որ յաջողութիւն ունենանք: Այս ամէնը հարկաւոր է կանոնաւորել եւ գործը մասնագէտների ղեկավարութեան տակ դնել:

Զաւարեան.— Այդ խնդիրը հարկաւոր է դնել աւելի ընդհանուր ձեւով. այն է՝ հրահանգել բոլոր մարմիններին, որ մեծ ուշադրութիւն դարձնեն զինապայթուցիկ նիւթերի պատրաստութեան վրայ:

Ռոստոմ.— Բայց երբ ընդհանրացնենք, այլեւս ոչ ոք չէ ուզում գործ կատարել:

Միմաստեան.— Գործը պէտք է տեղականացնել, կենտրոնացնել որոշ տեղերում, — յանձնելով մի քանի տասնեակ մարդկանց ղեկավարութեան:

Վռամեան.— Այդ խնդիրը զբաղեցրել է Ե՛ւ մեզ Ամերիկայում. բայց երկրի պայմանները աննպաստ են. եթէ մի պայթում իսկ տեղի ունենայ, ամբողջ հայ գաղութը կարող է վտանգի ենթարկուել: Ապա, այդ գործը մեծ ծախսեր է պահանջում: Ես առաջարկում եմ գործը կենտրոնացնել որոշ վայրերում: — Նիւթերի պատրաստութեանը պէտք է վարժեցնել այնպիսիներին միայն, որոնք ունեն որոշ անցեալ ու վստահելի մարդիկ են, որպէսզի իրենց սովորելիք արհեստը վերջը իրենց անձնական չահերի համար չչահագործեն կամ նոյնիսկ մեր դէմ չդարձնեն:

Զարդարեան.— Բուլղարիայում արհեստանոց ենք հիմնել. բայց մասնագէտների պակասութեան պատճառով գործը դանդաղ է առաջ գնում: Ես առաջարկում եմ յանձնել գործը մի կենտրոնական մարմնի:

Արամ.— Գործը չընդհանրացնենք, որպէսզի չճապաղանայ: Ես յատկապէս «Վրէժ»ի վրայ կանգ կ'առնեմ. եթէ հմուտ վարպետներ ունենք, բացառապէս նիւթերի պատրաստութեանը նուիրուած, — այնտեղի արհեստանոցը խոշոր օգուտ կը տայ մեզ:

Վարդան.— Պէտք է պարտաւորեցնել այդ մարմնին՝ մասնագէտ մարդիկ հայթայթելու այն չրջանին, որտեղ այդպիսիների կարիք կը զգացուի: Ապա հարկաւոր է չեչտել, որ մասնագէտների թիւը պէտք է հասցնել առնուազն տասրեակն 10ի:

Վարդանի այս առաջարկը, իբրեւ յաւելուած, մըտցրւում է բանաձեւի մէջ:

Բանաձեւը քուէարկուում է առանց այդ յաւելուածի. ատանում է 17 ձայն (ձեռնպահ է Զաւարեան):

Վարդանի առաջարկը՝ անցնում է մէկի ձեռնպահութեամբ:

Ահա բանաձեւը՝

«Նկատելով, որ անհրաժեշտութիւն է մեր յեղափոխական ձեռնարկներու համար ունենալ բաւ կարելւոյն շատ հմուտ արհեստաւորներ՝ զինագործ-պայթուցիկ եւ այլ յարակից արհեստներու համար, ընդհանուր ժողովը կ'ընդունի.

ա) Բալկանի եւ Սպռւստամի զանազան վայրերում մէջ, ինչպէս նաեւ վրէժի մէջ, հիմնել արհեստանոցներ, ուր ընդունակ եւ տրամադրելի ընկերներ վարժուին զինագործ-արհեստագիտական այլեւայլ ճիւղերու մէջ. մասնաւորապէս կանոնաւորի վրէժի արհեստանոցը:

բ) Ընտրել արհեստագիտական յատուկ յանձնախումբ մը, որոյ վրայ պարտականութիւն դնուի ծանօթանալ այլեւայլ կատարելագործումներու հետ եւ զանոնք յարմարեցնել մեր պահանջներուն:

գ) Նոյն մարմինը պիտի հսկէ նաեւ վերոյիշեալ արհեստանոցներուն եւ անոնց կանոնաւորութեանը, ծախսերուն եւ գործավարութեանն: Մասնագէտներուն թիւը պիտի լինի ոչ պակաս քան տասներեք տասը»:

«Տաճկահայերի ինքնապաշտպանութեան» խնդրի համար բանաձեւը առաջարկւում է յանձնախմբի կողմից:

Վռամեան (յանձնաժողովի անդամ).— Մենք աչքի առաջ ենք ունեցել չկազմակերպուած վայրերը՝ Թուրքիայում: Բայց եթէ ուզում էք ընդհանուր կերպով դնել խնդիրը՝ ամբողջ Երկրի վերաբերմամբ, այդ դէպքում մենք կը հանենք բանաձեւի առաջին կէտը:

Նախագահ.— Դնենք հարցը նախ ընդհանուր կերպով, ապա կ'աւելցնենք ծանօթութիւնը՝ չկազմակերպուած վայրերի մասին:

Բանաձեւը անցնում է մեծամասն, որը ներկայացուելու է յաջորդ նիստին — վերջնականապէս մշակուած:

Բանաձեւեր են կարդացւում՝ «Բոնի հանգանակութեան» հարցի վերաբերմամբ: Համօ-Թոփչեան (յանձնախմբի), Խահակեանի, Մալումեանի, Վռամեանի:

Շահխաթունեան.— Նախ սկզբունքով՝ ընդունո՞ւմ ենք էքսպրոպրիացիան Քէ ոչ. եւ ապա ներկայ պայմաններում կարելի՞ է արդեօք էքսպրոպրիացիաներ կատարել: Որովհետեւ բուրժուազիան մեր հակառակորդն է եւ կ'աշխատի այս կամ այն ձեւերը գործածել մեր դէմ, մենք էլ կարող ենք դիմել էքսպրոպրիացիային, համաբերելով այն մի զօրեղ միջոց՝ բուրժուազիայի դիմադրական ուժը հարուածելու համար:

Սեպուհ.— Մենք որոշումներ ենք արել՝ Երկրի գործունէութեան, ցուցական ձեռնարկների են. մասին, բայց բոլոր այդ ծրագրերը մնալու են անիրագործելի, քանի որ մենք այստեղ չենք ուզում ընդունել բոնի հանգանակութիւնը: Անպատճա՞ռ պէտք է ընդունենք. հակառակ դէպքում բացարձակօրէն դրէք բաժանման հարցը: Ինչո՞ւ մինչեւ այժմ դէմ եմ եղել բաժանման ձգտումներին, բայց քանի որ չէք ընդունում բոնի հանգանակութիւնը՝ լաւ է բաժանուենք:

Համօ.— Շահխաթունեանն ասում է, Քէ էքսպրոպրիացիան մի տեսակ զէնք է մեր ձեռքին՝ մեր հակառակորդի դէմ կռուելու համար: Բայց մի՞թէ այդ բոնի համար մենք պէտք է խախտենք մեր հիմնական սկզբունքը: Ոչ մի սոցիալիստական կուսակցութիւն կոզմնակից չէ, մանաւանդ սեփականութիւնը էքսպրոպրիացիայի ենթարկելու: Փողը ապառնան առարկայ է բուրժուայի ձեռքին եւ ոչ Քէ արտադրութեան միջոց. սոցիալիստը՝ արտադրութեան միջոցներն է էքսպրոպրիացիայի ենթարկելու: Սկզբունքային տեսակէտից չէ կարելի ընդունել՝ բոնի հանգանակութիւնը: Սեպուհը դուռ գործնական կարծիք է յայտնում, Քէ զրամական խոշոր միջոցներ են հարկաւոր մեզ, որով-հետեւ ծրագրում ենք եւ խոշոր ձեռնարկներ: Բայց, մեր այդ ձեռնարկների նպատակին չէք եւ հակառակ մեր գործադրած միջոցները:

Զաւարեան (հարց է տալիս Ամերիկայի ներկայացուցչին).— Ինչո՞ւ Ամերիկայում չէք արել բոնի հանգանակութիւն:

Վռամեան.— Որովհետեւ պայմաններն աննպաստ էին:

Վահագն.— Որովհետեւ «Փոթորիկ»ը կար, որ գործում էր այդ ուղղութեամբ:

Բանաձեւերի վերջնական քուէարկութիւնը թողնւում է հետեւեալ նիստին:

80ՐԴ ՆԻՍՏ (13 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:

Ներկայ են՝ 23 ժողովական:

Բացակայ են՝ Ռոստոմ, Թոփչեան, Անդրանիկ (հիւանդ), Վարդան (հիւանդ), Զաւարեան:

Օրակարգն է՝ «Ինքնապաշտպանութեան», «Բոնի հանգանակութեան» բանաձեւերը եւ կովկասեան զեղծումների՝ միհրանակաւոր հարցը:

Քուէարկուելով «Ինքնապաշտպանութեան» այն բանաձեւը, որ ներկայացրից մասնաժողովը, անցաւ միաձայն: Ահա բանաձեւը.

«Ինքնապաշտպանութեան գործը Թուրքիոյ մէջ».

Ժողովը լսելով քեկ. Վռամեանի զեկուցումը ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման մասին, տեղեկանալով Ամերիկայի կ. կոմիտէի ներկայացրած ծախսագծին, եւ գնահատ առնելով ինքնապաշտպանութեան մասնաւորի բերած հարկաւորութիւնները,

Որոշեց լուրջ ինչերու վրայ դնել ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումը Թուրքիոյ հայաբնակ վայրերու մէջ, օգտուելով յատկապէս Շամի եւ Լեռնավայրի [?] (44) կ. կոմիտէներու ձեռ բերած զոհաղուրկիչ արդիւնքէն այդ ուղղութեամբ: Ինքնապաշտպանութեան գործը պիտի կազմակերպուի առաջնորդ ունենալով հետեւեալ չորս կէտերը.

1. Ինքնապաշտպանութեան խումբերը կը զինուին տեղացիներու ձիւրակոծ միջոցներով: (Ծանօթ.— Դաշնակցութիւնը կ'ընդունի պահպանել համագիւղացիներէ զինեալ ինքնապահպանական խումբեր, որոնք կը գործածուին նրկրի պատիկ մարմնի ձեռքով, ոչ բացառապէս ազգային գիւղի, այլ գիւղակա՛ն շրջանակի համար):

2. Նրէ ձեր կազմակերպուած մարմիններր վտահութիւն

ձերշնչեն իրենց գործունէութեամբ եւ կոչի հաստատուն համագումարով, Դաշնակցութիւնը կրնայ, եթէ պէտք տեսնէ, փոխադրել շրջաբերութեան գումար մը, զէնքի չուկայ ստեղծելու համար: (Ծանօթ.— Դաշնակցութեան նախահաշուի մէջ կ'որոշուի այդ նպատակին յատկացեալ առաւելագոյն գումարի բաժակը):

3. Ինքնապաշտպանութեան խումբերու ձեռք բերած զէնքերը կը համարուին համայնական սեփականութիւն, կը գտնուին Դաշնակցութեան կեդրոնի [հակակշռի] տակ եւ կը գործածուին միմիայն ամէն հրահանգներով:

4. Ջինման գործը պէտք է կատարուի աստիճանաբար, ինքնապաշտպանութեան խումբերու կազմութեան եւ ամէն գինուրական կրթութեան զարգացման զուգընթաց:

Ցաւելուած՝

Երկրի կազմակերպուած վայրերէն գուրս եւս ինքնապաշտպանութեան գործի սիստեմ մը ստեղծելու նպատակով, որոշուեցաւ՝

1. Ձեռնարկել կազմակերպելու այդ վայրերը, արեւմտեան շրջանը բռնելով Արեւմտեան Բիւրոյի Շրջանային ժողովին եւ արեւելեանը՝ երկրի Գետասխառնուտը Մարմինիներու եւ Արեւելեան Բիւրոյի համաձայն գործակցութեամբ:

2. վերի յօդուածի մէջ յիշած մարմիններուն կը յանձնարարուի մշակել ընդհանուր կանոնագրի մը ինքնապաշտպանութեան խումբերու եւ ժողովուրդի զինման մասին, ամէն կերպառութիւ պատասխանիչ ընելով բոլոր մարմիններու համար:

Ապա քուէարկութեան դրուեց բոնի հանգանակութեան բանաձեւը ստացաւ + 14 եւ — 7: Ժողովը նպաստակայարմար դատեց այդ հարցի վերջնական քուէարկութիւնը յետաձգել, մինչեւ ամբողջական քննութիւնը:

Ժողովն անցնում է «Կովկասեան գեղծումների» հարցին, որը ներկայացրեց այդ նպատակով ընտրուած մասնախումբը:

Նախագահ.— Ստացուած են Ընդհանուր Ժողովի անունով երկու Թուղթ, որոնք կապ ունեն չօշափուող հարցի հետ. արդեօք պէտք է կարդալ ժողովո՞ւմ, թէ յանձնել մասնախմբին: Այս երկու գրութիւնները ստացուած էին վերջին օրերը: Առաջինը կրում է «Թամամեանական Ջինուորական Խորհուրդ» ստորագրութիւնը եւ Դաշնակցութեան կնիքով է վաւերացուած, իսկ երկրորդը՝ մշեցի գինուոր Մուշեղի կողմից է:

Ժողովը որոշում է յանձնել այդ գրութիւնները մասնախմբին:

Զարդարեան կարդում է մասնաժողովի զեկուցումը:

Սկսում են վիճաբանութիւններ այդ հարցի շուրջը:

Նախագահը նկատում է, որ նախ պէտք է լրացուցիչներ անել, քանի որ տեղեկութիւնները այդ կտրուկ հարցի վերաբերմամբ բաւական թերի են եղել, եւ ապա անցել բանաձեւին՝ ըստ էութեան:

Ստեփանեան.— Այդ խնդիրը քննելիս, մասնաժողովը պէտք է դիմէր միւս մարմիններին եւս, բազմակողմանի լուսաբանութեան համար: Ես ուզում եմ մի քանի լրացումներ անել: Միհրանի չհաստատութիւնները չէին սահմանափակուած միայն Կովկասով: Նա անցել է սահմանի այն կողմը եւս: Նա յաճախ նամակներ էր ղրում Վարակասան իր ծանօթներին, թէ Դաշնակցութիւնը ձեռք է քաշել Տաճկահայաստանի գործից, թէ դինուորներին Կովկասում փող չեն տալիս, եւ այսպիսով դրդռում էր նրանց: Մենք հաղիւ կարողացանք հաւատացնել, որ դա բախտախնդիր մէկն է: Անհրաժեշտ է այդ զեղծարարների դէմ խիստ միջոցներ ձեռք առնել, որպէսզի ուրիշ անգամ նման երեւոյթ տեղի չունենայ:

*Համօ.— Ինդրի խիստ կարեւորութիւնը ի նկատի առնելով, պէտք էր չատ աւելի ծանրանալ դրա վրայ, քան արել է մասնախումբը: Ես կարծում էի, թէ մի փոքր երկար կանգ պէտք էր առնել չարժման բնոյթի եւ պատճառների վրայ: Այդ չարժման հիմը կազմում էր բնական անբաւականութիւնը, մի անբաւականութիւն, որ տիրում էր մի քանի մեծ քաղաքների, օրինակ՝ Կարսի, Ալէքսանդրապոլի, մուշ եւ անդիտակից մասսաների մէջ: Ուրեմն հողը կար, որի վրայ կառուցել են բախտախնդիրները իրենց գործը: Անգիտակ մասսան չէր տեսնում Տաճկահայաստան գնացող արշաւախմբեր, չէր լսում կռիւների եւ քանդուած գիւղերի մասին եւայլն. դրանց մէջ է նա սովորել տեսնել յեղափոխութիւնը: Եւ մտածում էր, որ Դաշնակցութիւնը մոռացել է տաճկահայկական դատը եւ տարուել կովկասեան գործով: Նա չէր կարող պինդել Վասպուրականի փոխադրուած զէնքերի մասին, որը կատարուում էր խոշոր չափերով, լուռ եւ փայլուն յաջողութեամբ. մասսան չգիտէր այն խոշոր դրամական գումարի մասին, որ երկիր էր ուղարկուած: Ձիլդ է, գիւղին ընկ. Զաւրեանի ձեռնարկի եւ նպաստների մասին, քանի որ այդ մասին լրագրերում գրուեց, բայց նրանք չգիտէին, որ դա Դաշնակցութեան գործն է: Մի կողմից այս հանգամանքը, միւս կողմից էլ նրանք տեսնում էին իրենց չուրջը, կովկասում կատարուող յախուռն գործունէութիւնը հենց այդ Դաշնակցութեան կողմից, որ առաջ միանգամայն եւ ամբողջովին նուիրուած էր տաճկահայ դատին: Այս հողն արդէն կար, կար անբաւականութիւն Դաշնակցութիւնից, իսկ որանից օգտուելու ցանկութիւն ունեցողներ չատ կային: Առաջին տեղը բռնում է մեր բուրժուազիան, որը ամենից չատ է վախենում յեղափոխութիւնից եւ ցանկանում է նրան խափանել: Այդ չարժման բերան դարձաւ բուրժուական օրգան «Մշակ»ը, որ չատ ճարպիկ կերպով ընթացք տըւեց անգիտակից մասսաների բողոքին եւ առաջ տարաւ պոլեմիկը [բանավէճը]: Այդ չարժումը սկզբից եւեթ կրել է հակայեղափոխական բնոյթ: Այն բնականութեան նշոյլը, որ կար չարժման սկզբում եւ որը վերեւում մատնանիշ արի, ժամանակի ընթացքում վերացուեց: Եւ ասոր երը մեզ հնարաւոր եղաւ պարզել, որ մի կողմից Դաշնակցութիւնը չէ դադարել տաճկահայ դատից եւ որ աւելի ուժգին կերպով է գործում, եւ միւս կողմից հնարաւոր եղաւ ցոյց տալ այդ չարժման հակայեղափոխական բնաւորութիւնը, — այսպիսով կարողացանք պոկել գործիք դարձած անգիտակից մասսայի մեծ մասը: Մենագածները բոլորովին այլասերուեցին ու անբարոյականացան, դառնալով ամենատարր տեսակի հակայեղափոխականներ: Միհրանն ու ընկերները, այժմ ոչ միայն հայ բուրժուազիայի գործիքն են, այլեւ կառավարութեան: Նրանք յաճախ լինում են ոստիկանների հետ խնջոյքներում եւ խորհրդակցութիւններ են ունենում: Մի խօսքով, նրանք ամենայօժար կերպով առաջարկում են իրենց աջակցութիւնը ռուսաց կառավարութեանը: Եւ կառավարութիւնը այն համոզմունքն ունի, որ Դաշնակցութիւնը բաժանուած է երկուսի՝ նոր եւ հին, առաջինը գործում է կովկասում, իսկ երկրորդը՝ Միհրանի կուսակցութիւնը՝ Տաճկահայաստանի համար: Կառավարութիւնը աշխատում է հին Դաշնակցութեան ձեռքով կոտրել նորի դէմ: Դրան որպէս ապացոյց կարող է ծառայել այն, որ Միհրանն ու ընկերները բացայայտ եւ ազատ զէնք են կրում քաղաքում: Բացի այդ, երբ նրանցից մէկը ձերբակալում է, կառավարութիւնը խնդրն բաց է թողնում: Դեռ աւելի'ն. նրանք տալիս են ոստիկանութեան ներկայացուցիչներին քիկնապահներ՝ նրանց պաշտպանելու համար: Մինչեւ վերջին ժամանակները նրանք սահմանափակուած էին քաղաքներում, բայց այժմ մարդիկ են ղրկում նաեւ գաւառները եւ յայտարարում, թէ Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոները չրկան, թէ նրանք դատի են ենթարկուած եւ միայն «Ջինուորական Խորհուրդն է վարում բոլոր գործը: Հանգանակութիւնը եւս տարածուել է Թիֆլիսից դուրս, Ռոստով, Արմաւիր եւն.: Ամէն տեղ միջոցներ են ձեռք առնում մեր գործը քայքայելու, մեր ձեռնարկները վիժեցնելու համար:

Խահակեան.— Այդ զեղծարարների քննութիւնը վերապահուած է միայն Ընդհանուր Ժողովին: Աւելի քան վտանգաւոր է, նոյնիսկ անօրինական, այս գործը յանձնել Բիւրոներին կամ ուրիշ մարմինների:

Մանուկ.— Այդ չարժումը դեռ Միհրանից առաջ կար լայն խաւերի մէջ:

Շահխաթունեան.— Մի՞թէ գաղտնապահութիւնը այնքան խիստ էր, որ չէր կարելի ընդհանուր գործունէութեան մասին տեղեկութիւններ տալ, եւ կասկածները փարատել: Գուցէ դա եղել է ընկերների կողմից մի սխալ: Ի՞նչպէս է եղել Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի միհրանականները, այդ մասին ոչինչ չասաց Համօն:

Համօ.— Մոռացայ ասել, որ վերջին 1½ ամսում, ինչպէս ապացուել էր, սկսուել էր քայքայում եւ լքում նրանց չարքերում: Վերջերս նրանք ձեռնարկել էին խիստ ահաբեկչական գործողութիւններ: Անարխասա-

*ներէ անունից, անդրապետ նամակներով դիմում էին ոյս կամ այն հարուստին, յետոյ երկու հոգիով ներկայանում էին նոյն այդ հարուստին եւ փող պահանջում, առաջարկելով իրենց պաշտպանութիւնը անարխիստների դէմ: Սահմանը հետզհետէ նեղցաւ եւ հարերը սկսեցին իրար մատնել. հենց այդ էր պատճառը, որ չատերը կարծում էին, թէ Դաշնակցութեան բանն է եւ մենք հարկադրուած եղանք պաշտօնապէս հերքել: Այժմ նրանց չարքերից հեռանում են, ոչ միայն մարքուր, այլեւ մուք տարրերը, որովհետեւ վերջիններիս ղեկավարները թոյլ չեն տալիս բաւարար կերպով չհատուցելու, եւ մեծ բաժինը, գուցէ եւ ամբողջը, իրենց են վերցնում: Ես դիմամբ Միհրանի անճնաւորութեան վրայ կանգ չառայ, որովհետեւ այստեղ անճնաւորութիւնը բնաւ նշանակութիւն չունի: Քանի որ ժողովականները հարցնում են նրա մասին, ասեմ մի քանի խօսք: Կազմակերպութիւնը պիտի նրան դատի ենթարկէր, քանի որ, Մոռունի արշաւանքից վերադառնալիս, անճնաւորւ է եղել կառավարութեան ամբողջ խմբով եւ զէնքերով: Այս դործում նա ապացուցեց թէ ինչպիսի չահախնդիր մարդ է, որ ուզում է հերոս դառնալ, բայց ջրից չոր դուրս գալ: Երբ նա դուրս եկաւ երեւանի բանտից, դիմեց Դումանին՝ պաշտօն առանալու. բայց նա մերժեց: Միհրանը զժգոհ Դաշնակցութիւնից՝ գնաց Բաքուն, այնտեղ իմ վերեւ յիշած անբաւականութեան հողը գտաւ եւ, իբր ճարպիկ մարդ, անցաւ չարժման գլուխը: Կազմակերպութեան բռնած դիրքը այդ չարժման հանդէպ եղել է չատ խելացի: Սկզբում առաջարկողներ կային, ուղղակի տեռորի միջոցով ոչնչացնել պատասխանատուներին եւ չարժումը բնում խեղդել: Միւս մասը հակառակ տեսակէտ ունէր: Նա մտածում էր, որ չուտով այդ հողը հնարաւոր կը լինի խլել նրանց ոտ տակից, չարքերը քայքայել, երեւան հանելով չարժման իսկական հակայեղափոխական բնոյթը: Եթէ առաջին մտածողների թելադրութեամբ վարուէինք, Միհրանն ու ընկերները կը հերոսանային անգիտակից մասսայի առաջ: Եթէ մեզ յաջողուէր այնպէս անել, որ տաճկահայերի յայտնի եւ աչքի ընկնող ուժերին ակնյայտնի եւ վճռական կերպով դուրս բերէինք այդ չարժման դէմ, պարզելով նրանց միջոցով տաճկահայ մասսայի առաջ չարժման իսկական հակայեղափոխական եւ հակատաճկահայկական բնոյթը, մի դուցէ մեզ հնարաւոր լինէր չարժումը խեղդել ապրի մէջ: Այդ չարժման մի յայտնի չափով անգիտակցաբար նպաստել են նաեւ մեր մօտիկ ընկերներից մի երկուսը, որոնք այստեղ այնտեղ խօսում էին, թէ Դաշնակցութիւնը մի կողմ է թողել տաճկահայ գործունէութիւնը: Բայց եւ այնպէս մեզ յաջողուեց հասնել այն հետեւանքին, որ մասսայի մեծագոյն մասը միացաւ նորից կազմակերպութեան, իսկ միւս ասոր մասը երեւան բերաւ «Թամամեանական Ջինուորական Խորհուրդ»ի նման մի մարմին:

Մուրատ.— Դեռ սկզբից ևս հակառակ եմ եղել Նախագծին, երբ չկար Միհրանը, ի նկատի ունենալով, որ դրանով մեր դատի առաջ պատնէշ էր դրւում: Մենք չատ լաւ գիտէինք, որ հնչակեանների մէջ էլ սոցիալիզմի պատճառով էր երկպառակութիւն ընկել, հետեւապէս չէինք կարող դէմ չլինել Նախագծին: Ուրիշ բան է, որ ինքնապաշտպանութեան զորքը մոռացնել տուեց այդ: Դեռ Միհրանից առաջ կար այդ բողոքը Թիֆլիսում, կարսում, Ալեքսանդրապոլում եւն.: Երբ բարդատուքը գրաւելու որոշում չէ եղել, դա սխալ է, եւ զարմանում եմ, որ դրան հաւատում էք: Նրանք ուզում էին միայն Շիայու սպանութեան առթիւ բացատրութիւն պահանջել եւ պարզել այդ «ոճիրը»: Ես էլ այն կարծիքին եմ, որ այդ դատը այստեղ պէտք է առնել:

Տաճատ (մասնախմբի անդամ).— Մենք մեր բոլոր եղրակացութիւնները, որ պիտի կարդամ, հանել ենք, հակասութիւններ չլինելու համար, միայն փաստաթղթերից, Միհրանի ու ընկերների նամակներից եւ նրանց քուռցիկներից: — Կարդում է այդ, որը լոյս է սփռում հարցի պատճառի եւ գործը վարելու բնոյթի վրայ:

Նախագահը թելադրում է այդ թուղթը կցել մասնախմբի բանաձեւին իբր յաւելուածան, համաթուղթել բոլոր նամակները եւ դոկումենտները, անկորուստ պահելու համար:

Հինդ րոպէ ընդմիջումից յետոյ Ժողովը բացւում է եւ, մասնաժողովի առաջարկի համաձայն, յետաձգւում է բանաձեւի քուէարկութիւնը, որպէսզի լաւ մշակուի:

Նախագահը վիճաբանութեան է ենթարկում այն հարցը, թէ արդեօք զեղծարարների դատը պիտի թողնել կովկասեան ոեւէ մարմնի՞, թէ հենց Ընդհանուր Ժողովում վերջացնել:

Խաչիկեան.— Մուրատը եւ Սեպուհը յայտնում են այն կարծիքը, որ այդ իրաւունքը վերապահուած է Ընդհանուր Ժողովին եւ նա է միայն ձեռնհաս: Այդ որոշումը պէտք է լինի խիստ եւ կտրուկ:

Համօ.— Դատավարութիւնը չպէտք է թողնել մեւ մարմիններին, այլ այստեղ որոշել: Միայն պէտք է ընտրել մի մարմին, որի անդամները զաղտնի լինեն, որպէսզի որոշումները է կատար ածեն:

Մաշուր.— Հետաքրքիր է դիտնալ, թէ Ընդհանուր Ժողովը որի՞ն է ուղում նամակներ մեղադրեալների ձեռքի վրայ, Միհրանի՞ն թէ հոսանքին: Մենք դիտենք ենք Միհրանին եւ ընկերներին ոչ թէ իբրեւ այդ չարժման պարագլուխներ, այլ իբրեւ զեղծարարներ, ոճրագործներ: Բայց մենք ինչպէ՞ս պէտք է կռուենք այդ հոսանքի դէմ, ահա այդ մասին եւս կարեւոր է մտածել:

Արամ.— Այդ չարժումը, որ մի հասարակական երեւոյթ է, դա պարզ է. որ դրա դէմ պէտք է կռուենք, այդ էլ պարզ է: Եւ կը կռուենք այն միջոցներով, ինչ ժամանակին ասել են ընկերներ Թռուչեան եւ Համօ: Բայց այստեղ խօսւում է անհատների ոճրագործ դէրի մասին, այդ չարժման մէջ: Ուրեմն նրանք իբրեւ անհատ զեղծարարներ են պատասխանատուութեան կանչւում:

Թռուչեան.— Քանի որ հարցը խիստ ծանրակչիռ է, պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել բանաձեւի մշակման վրայ, մանաւանդ որ կը հրատարակուի եւ լայն խաւերում խօսակցութեան նիւթ կը դառնայ: Աւելի լաւ է մի կողմ թողնել աւելորդ, բանաձեւի ուժը թուլացնող մանրամասնութիւնները եւ կենտրոնանալ ամենէական կէտերի վրայ, ինչպէս ա) ամբաստանեալները. բ) կնիքը. գ) Սեպտ. 1ին հրատարակուած ակտը՝ դիւկտատուրան. դ) հանդանակութիւնը (Դաշնակցութեան անունով հաւաքուած փողի մասին հաշիւ չեն ներկայացրել Ընդհանուր Ժողովին եւ չռայլել են):

Նախագահ.— Վիճաբանութիւնը համարում եմ սպառուած եւ բանաձեւի քուէարկութիւնը թողնում եմ վաղուան:

Նախագահ.— Ծուցակների անդամ Սաֆոյին որուել է մասնախմբի դիկուցումը եւ փաստաթղթերի մի մասը. այժմ նա խնդրում է դոկումենտների միւս մասը եւս: Արդեօք Ժողովը համաձա՞յն է յանձնել մնացածները:

Արամ.— Ես հակառակ եմ դրան եւ բողոքում եմ: Նրա այս քայլը խիստ վերաւորական է. նա տալիս է անվստահութեան քուէ մասնախմբին, որ կը նշանակէ Ընդհանուր Ժողովին:

Ժողովը զանելով այդ առարկութիւնը ոչ բանաւոր, որոշեց՝ յանձնել Սաֆոյին խնդրած փաստաթղթերը, որպէսզի որուի նրան հնարաւորութիւն՝ հարցի հետ ծանօթանալու:

Ժողովը փակուեց ժամը 8ին:

31ՐԴ ՆԻՍՏ (14 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Զաւարեան:

Ներկայ են 26 Ժողովական:

Բացակայ են՝ Անդրանիկ (հիւանդ), Գուսան, Գաթիկ:

Օրակարգն է՝ Հրատարակութիւնների հարցը:

Նախագահը առաջարկում է հրատարակութիւնների եւ պրոպագանդի խնդիրները միացնել եւ խօսել ընդհանրապէս՝ բոլորի մասին:

Մալումեան բանաձեւ է ներկայացնում «Դրօշակի» եւ կից հրատարակութիւնների հարցի վերաբերմամբ, մշակուած մասնաժողովի կողմից: — Մեր հրատարակութիւնները երեք ճիւղի պէտք է բաժնել. առաջին՝ պաշտօնական օրգան՝ «Դրօշակ», «Pro Armenia» եւ յարակից գրքերի հրատարակութիւն. երկրորդ՝ հրատարակութիւններ Կովկասում, եւ երրորդ՝ հրատարակութիւններ այլ վայրերում: Ծաւալի է, ի հարկէ, որ երկրի մէջ հնարաւորութիւն չունենք որեւիցէ յեղափոխական հրատարակութեան ձեռնարկելու: Մասնաժողովի առաջարկ է՝ լայնացնել «Դրօշակի» բովանդակութիւնը, տալով խմբագրութեանը իրաւունք՝ մտնելու սոցիալական եւ տեսական հարցերի քննութեան մէջ, — քանի որ այդ կը պահանջէ մեր ծրագիրը, — եւ չօչափելու միեւնոյն ժամանակ այնպիսի հարցեր, որոնք դուրս են Մրագրից, բայց առընչութիւն ունեն մեր գործունէութեան հետ: — Գործի տեխնիքական տեսակէտից, «Դրօշակի» խմբագրութիւնը բաւական դժուար կացութեան մէջ է եղել. մարմինների կողմից հաղորդուող տեղեկութիւնները չատ աղքատ են եղել եւ միչտ հնացած: Այս մի կողմից, միւս կողմից՝ կազմակերպական խնդիրներից զատ կան նաեւ տեսական հարցեր, որոնց համար, սակայն, քիչ տեղ է մնում մերթի սուղ էջերում. հարկաւոր է ծաւալը մեծացնել: «Դրօշակը», առայժմ նկատի առնելով քաղաքական պայմանները, պէտք է պահել արտասահմանում՝ Թիֆլիս: Ցանկութիւն է յայտնուել՝ մեր պաշտօնական օրգանը տեղափոխել Կովկաս. տարաբախտաբար առայժմ այդ անհնարին է, քանի որ անակնկալ դէպքեր կարող են տեղի ունենալ Ռուսաստանում եւ մենք վրատահ չենք, թէ որքան ապահով կը լինի օրգանի դրութիւնը այնտեղ: Ցանկութիւն է յայտնուել նաեւ, որ Հիւրակը այսուհետեւ հրատարակուի Փարիզում, որպէսզի խմբագրութիւնն այդպիսով աւելի մօտ յարաբերութիւնների մէջ լինի մեր այնտեղի բարեկամների հետ: Այդպիսի որոշում, այստեղ տալ չենք կարող. հարկաւոր է իմանալ մեր Ֆրանսացի բարեկամների կարծիքը. իմ կարծիքով այդ հարցի լուծումը պէտք է թողնել երկու Բիւրոներին: Ապա ընկ. Մալումեան պաշտպանում է իր առաջարկած բանաձեւի միւս կէտերը:

Թռուչեան.— Մամուլի որոշ չափով ազատութիւնը, մանիֆեստից յետոյ, թոյլ տուեց բոլոր կուսակցութիւններին՝ դէմն ունկից լոյս աշխարհ գալ եւ իւրաքանչիւրը ունեցաւ իր սեփական մէկ կամ աւելի օրգանը: Հնչակեաններն անգամ ունեն այսօր իրենց թերթը: Կուսակցութիւնները լարուած ուժերով պրոպագանդա են մղում: — Դաշնակցութիւնն եւս չէր կարող թերթ չունենալ: Թէ որքան մեծ էր թերթի պահանջը մասսաների մէջ, ապացոյց են այն անվերջ դիմումները դաւառներից, որ մեր խմբագրութիւնը ստացել է «Զանգո» փակուելից յետոյ, թէ «Թերթ տուէք, ինչ կերպ ուղում էք արէք». կարծում էին, որ երբ Թերթը չկայ, չկայ ուրեմն եւ Դաշնակցութիւնը: Իովանդակութեան ուղղութեան գալով, ես կ'ասեմ, որ մեր արտասահմանեան մամուլն աւելի նպաստաւոր պայմանների մէջ է գտնուել, քան Կովկասինը. մինչդեռ, օրինակ, «Դրօշակի»ը պէտք էր բնաւ չխօսէր օրուայ հրատապ հարցերի մասին, մենք անկարող էինք լռել, քանի որ կեանքը պահանջում էր մեզանից խօսել: Զգիտէինք, սակայն, արդեօք մեր արտայայտած կարծիքները չէ՞ն հակասի մեր կուսակցութեան պաշտօնական հայեացքներին: Հայ–Թրքական ընդհարումների պատճառների վերաբերմամբ մենք երկար վիճել ենք, թէ ո՛րն է լինելու, իսկապէս, մեր կուսակցական կարծիքը այդ մասին: — Ռայոնական Ժողովը թէեւ Թոյլ տուեց՝ որոշ հարցերի քննութեան մէջ մտնել, բայց կան եւ ուրիշ կէտեր, որոնց մասին խօսելու իրաւունքը պէտք է տայ Ընդհանուր Ժողովը: — Օրաթերթը, սակայն, բաւարարութիւն չէ տալիս. հարկաւոր է ունենալ եւ մի ամսագիր՝ յատկապէս գիտական հարցերին նուիրուած. արդէն Ռայոնական Ժողովը հաստատած էր գտել մի այդպիսի պահանջ, բայց ուժերի բացակայութեան եւ այլ պատճառներով դործը յետաձգուեց. այժմ պէտք է պոհացում տալ պահանջին: Շրջաններն եւս ինքնաբերաբար կարիք են զգում տեղական Թերթերի: Անդրկասպեան երկրում, օրինակ, ցանկութիւն կայ չաբաթաթերթ հրատարակել ոչ–կուսակցական միջոցներով: Ռոստովի չրջանում եւս ուղում են առանձին Թերթ ունենալ. Մրգաստանում, Ա–պատաժում, Ոսկանապատում: Բայց այս բոլոր չրջաններից միայն Ոսկանապատին կարեւոր է Թերթ ունենալ. — բանուորական վայր է եւ հակառակորդ կուսակցութիւնները կատաղի կռիւ են մղում մեր դէմ. իսկ միւս չրջանները առայժմ կարող են առանց Թերթերի մնալ, որովհետեւ մենք չունենք աւելորդ ուժեր այդ Թերթերի ղեկավարութեան համար: — Բրոշիւրներ դնում եմ անհրաժեշտ, կան հարցեր, որոնց մասին հարկաւոր է խօսել առանձին գրքերով: Բրոշիւրներից մենք դեֆիցիտ [բաց] չենք ստանայ. մեր այսօրուայ առերեսոյթ դեֆիցիտը կը ծածկուի չուտով, երբ կը ծախուեն մնացած գրքերն եւս: — Անհրաժեշտ է ունենալ եւ ռուսերէն օրգան, մի չաբաթաթերթ՝ ծանօթացնելու ռուս հասարակութեանը մեր կուսակցութեան եւ նրա ձգտումների հետ. մենք այդպիսով կարող կը լինենք վերացնել այն թիւր կարծիքը մեր մասին, որ կազմել է ռուս հասարակութիւնը՝ սոցիալ–դեմոկրատական կեդտոն զրպարտութիւնների հիման վրայ: — Օրաթերթի, ամսագրի եւ բրոշիւրների համար հարկաւոր կը լինեն 4–5 ղեկավարներ, (որոնք բոլորն էլ պէտք է այստեղ ընտրուեն) եւ նիւթական օժանդակութիւն՝ 25–30·000 ռուբլի (10–15·000՝ օրաթերթի, 5·000՝ ամսագրի եւ 10·000 բրոշիւրների համար): Այս գումարներն, ի հարկէ, կորած չպէտք է հա–

մարել: — Իսկ Ոսկանապատի քերթի ծախսերը կը հոգայ տեղական մարմինը՝ ինքը:

Վռամեան.— «Հայրենիք»ն ու «Ռազմիկ»ը տարբեր հիմքերի վրայ են դրուած, քան Կովկասի մեր թերթերը: Մենք այն սկզբունքն ենք խիստ կերպով անցկացրել մեր դործունէութեան մէջ, որ թերթը պէտք է ապահովէ ինքն իրեն՝ տեղացիների նպաստներով, առանց յոյսը դնելու կազմակերպութեան դանձի վրայ: Այդ սկզբունքն է որ զօրացրեց մեր մէջ նախաձեռնութեան ոգի: «Հայրենիք»ը չենք հրատարակել կուսակցութեան միջոցներով. սկզբում, որոշ դումար ենք ստացել, բայց ժամանակի ընթացքում յետ ենք դարձրել. կազմակերպութիւնը տուել է մեզ միայն խմբագիր: Մենք կազմել ենք ակցիոներական ընկերութիւն եւ միահամուռ ուժերով յառաջ ենք տարել դործը: Եւ այսօր մենք նպաստ առնելու ոչ մի դիմում չունենք Ընդհանուր Ժողովին: Զարմանում ենք, որ Կովկասի համար 25–30·000ի խնդիր է դրւում: Ես առաջարկում եմ կուսակցական մամուլի միութիւն կազմել, որպէսզի այդպիսով բարոյական կապեր առնեն թերթերի միջեւ: Սրանով առաջ կը դայ փոխադարձ դործակցութիւն, եւ այն թիւրիմացութիւնները, որ կատարւում են այս կամ այն յօդուածի ո՛ր թերթում տպելու հարցի չուրջը՝ կը վերանան ինքնըստինքեան: — Գրաւոր պրոպագանդայից դատ անհրաժեշտ է այժ տալ եւ բանաւոր պրոպագանդային. եթէ Կովկասի մէկ միլիոն հայ ազդաբնակութիւնը միայն 7·000 բաժանորդ է տալիս «Ժամանակ»ին, պատճառն այն է որ ժողովուրդը դեռ մեծ կարիք ունի եւ՛ բանաւոր պրոպագանդայի: Նոյնը եւ Ամերիկայում. բայց այդ բանի համար, պէտք է ունենալ անպայման ձեռնհաս մարդիկ. իւրաքանչիւր չրջան՝ պէտք է յարմար ուժեր ուղարկուեն. հարկաւոր է մարդիկ պատրաստել բանաւոր պրոպագանդայի համար. եւ այս նպատակով՝ յատուկ դասընթացքներ պէտք է հիմնել: Միայն դէնքով չէ, այլ խօսքով ջարդել պէտք է դիտնանք մեր հակառակորդներին. մեր պրոպագանդիստները վարժուած պէտք է լինին պրոպագանդիստական յատուկ ձեւերի: Եւ դլխաւորը՝ կարեւոր է, որ մեր բոլոր պրոպագանդիստները իրազեկ լինեն եւ՛ ստանկահայ իրականութեան եւ՛ ընկերվարական սկզբունքներին, ընդհանրապէս պէտք է ծանօթ լինեն մեր բոլոր հիմնական հարցերի հետ: Ապա նրանք պէտք է տեղեակ լինեն նաեւ ամբոխի հոգեբանութեանը, ուստի անհրաժեշտ է դասընթացքներ առնդել պրոպագանդիստներ պատրաստելու համար: — Վերջացնում եմ խօսքս, նորից չեշտելով, որ թէ՛ գրաւոր եւ թէ բանաւոր պրոպագանդայի համար մենք չենք վերցներ կազմակերպութիւնից եւ ո՛չ մի կոպեկ. բոլոր ծախսերը կը հոգանք ինքներս:

Չարդարեան (ամփոփ տեսութիւն է տալիս կուսակցական մամուլի մասին Բուլղարիայում).— «Ռազմիկ»ը հրատարակւում է 1½ տարուց ի վեր եւ այդ ընթացքում մօտ 2·500 ֆրանք փոխառութիւն է արել՝ դեֆիցիտը ծածկելու համար. թէեւ «Ռազմիկ»ը միւս թերթերից աւելի բաժանորդ ունի, բայց եւ այնպէս դեռ անկարող է առանց վնասների դոյութիւն ունենալ. դուցէ ոչ մի փոխառութեան չդիմէինք, եթէ միայն տրուէին խոստացած ակցիաները (թերթը, ինչպէս արդէն ասել եմ, սկսուել է իբրեւ մի ակցիոներական ձեռնարկ): Միւս կողմից էլ շատ բաժանորդներ չեն վճարում: — Եթէ ասկայն, մեր գործը մինչեւ այժմ ունեցած ընթացքով չարունակէ առաջ դնալ, մօտ ապագայում մենք հաւանականապէս կարողանանք բոլոր ծախսերը դոցել: — Եդիպտոսի վերաբերմամբ շատ բան չեմ կարող ասել. կը նկատեմ միայն, որ այնտեղ, դոնէ առայժմ, որեւէ թերթ ունենալ, աննպատակայարմար է. իսկ բանաւոր պրոպագանդայի խնդրում, Եդիպտոսը կարելի է միացնել Բալկանի հետ. մի անձ նաեւ որեւէ վարժատրութիւն, որում է — ասկային ոչ իբրեւ առճիկ, — 3·600 ֆր. տարեկան, թողնելով այդ դումարը նրա անմիջական տրամադրութեան տակ: Քէյսրիից զատ, խմբագրութիւնն ունի մի քարտուղար եւ մի էքսպեդիտոր: Թերթը ապրում էր սկզբում 1000 օրինակ. իսկ այժմ՝ 2000: Այդ քանակը եւ դանում եմ չատ քիչ: Եւրոպայում միայն հարկաւոր է ցրուել առնուազն 5–6000 օրինակ — ուղարկելով բոլոր պարլամենտական դործիչներին, հայասէրներին, դիւղացիներին եւն.: Օրգանը բովանդակութեան մասին, այլ անգամ առիթ է եղել խօսելու. բացի առաջնորդողներից (Քէյսրի եւ ուրիշների դրած) պարունակում է՝ տեղեկութիւններ մեր երկրի վիճակի վերաբերմամբ եւ այս վերջիններն այնքան ճիշդ են եղած, որ առաջ են բերել վատահութիւն բոլոր շրջաններում: Եւ Քէյսրը չէ՞ւում է մի աւելորդ անգամ եւս, որ երկրից տեղեկութիւնները պէտք է աւելի յաճախակի դարձնել եւ այդ տեղեկութիւնները պէտք է լինին անպայման ճըշդըբիտ: (Կարդում է Քէյսրի նամակը, որտեղ նա իր կարծիքն է յայտնում «Pro Armenia»ի հրատարակման մասին): Վատ չէր լինի, եթէ «Pro Armenia»ի էջերի մէջ մտցուէր եւ մի կէտ, որից մենք մինչեւ այժմ խուսափել ենք չարունակ. այն է՝ տեղեկութիւններ մեր կազմակերպութեան մասին. եւ քանի որ Քէյսրն լաւ ծանօթ է Դաշնակցութեան, նա կարող կը լինի այդ անել յայտ կերպով, եթէ միայն նրան արտօնութիւն տրուի: — Ամփոփում եմ իմ առաջարկը: Շարունակել «Pro Armenia»ի հրատարակութիւնը: Քէյսրին տրուի մի օգնական: Որոշել բիւդէն՝ 12–15·000 ֆրանքի: — Ինչ վերաբերում է Լոնդոնի «Pro Armenia»ին, համաձայն եմ այդ խնդիրը փակուած: Գերմանախօս երկիրների համար նպատակայարմար եմ գտնում հրատարակել մի գերմաներէն երկշաբաթաթերթ, նոյնիսկ Շվէյցարիայում, քանի որ այս պայմաններում, այդպիսի թերթը մեզ կը նստի ոչ աւելի քան 6·000 ֆրանկ: Մենք ունենք մեր հարցին նուիրուած մի գերմանացի գրող՝ Իլզ Ֆրայան, որ յաջողութեամբ կարող է դեկավարել այդ գործը:

Ռուստոմ (համամաձայն է Վռամեանի առաջարկին).— Ամէն մի լուր կը հաղորդուի բոլոր թերթերին միաժամանակ: Թարմ տեղեկութիւնները կը յանձնուին ո՛չ Դրօշակ»ին, այլ միւս կիսապաշտօն թերթերին, որոնք աւելի առաջ են լոյս տեսնում: — Տեղական մարմինները՝ սեփական միջոցներով պէտք է հրատարակեն իրենց թերթերը: — Բայց կովկասեան ազդանական թերթերին, հարկաւոր է նպատակ տալ, որքան որ անհրաժեշտ դտնուի:

Մուրադեան.— Մեր թերթերը լուրջ բնաւորութիւն չեն կրում: «Ժամանակ»ն օրինակ, աւելի շուտ ամենական հարցերով է զբաղւում. եւ իր բոնած այդ ընթացքի բերումով էր, որ ընկաւ նրա վարկը հասարակութեան աչքի առաջ: Պէտք է որոշ ուղղութիւն մըտցընել «Ժամանակ»ի մէջ. մինչեւ այժմ այդ չէ տրուել, թէեւ խոշոր ուժեր են հաւաքուած եղել նրա չուրջը: — Ես հակառակ եմ, որ «Ժամանակ»ին փող տրուի. նպաստել հարկաւոր է միայն «Դրօշակ»ին եւ «Pro Armenia»ին: Կողմնակից եմ մամուլի միութիւն հաստատելու առաջարկին:

Չիլոպեան.— Ինչ կարիք կայ այդքան թերթերի. որեւէօք ուղում ենք մի գրականական ընկերութիւն դառնալ: Հարկաւոր չեն. բաւականանանք եղածներով:

Վռամեան.— «Դրօշակ»ը պէտք է լինի գիտական թերթ՝ նուիրուած երկու դատերի լուսաբանութեան դործին. եւ լուսաբանութիւնները պէտք է լինին լուրջ, եւ ոչ թէ ունենան ընդհանուր կարծիքների բնաւորութիւն, ինչպէս եղել է մինչեւ այժմ: Այս դէպքում թերթն աւելի հետաքրքրութիւն կը չարժի եւ բաժանորդագները կը վճարուեն: Տրուող տեղեկութիւնները այլեւս չհամեմատուեն անվերջ կրկնուող հատարակութիւններով, այլ լինելու են՝ կարճ. միայն փաստերը պէտք է արձանագրուեն ստատիստիկան [վիճակագրական] ձեւով: Համաձայն եմ, որ ռուսերէն լեզուով թերթ ունենանք:

Ժողովը անցնում է «Բոլի հանգանակութեան» հարցի վերաբերմամբ առաջարկուած բանաձեւերի քննարկութեան: Բանաձեւեր՝ Վռամեանի, Մելոմեանի, Զաւարեանի:

Այդ առիթով մի քանի ժողովական հետեւեալ դրաւոր առաջարկն են ուղղում նախագահին.— «Ներքոյս ենք Ընդհանուր Ժողովից՝ բոլի հանգանակութեան բանաձեւերը յետաձգել, մինչեւ որ յատկիկայ գործունէութեան նախահաշիւը մշակուի»:

Նախագահը քուէարկութեան է դնում այդ առաջարկը: Եւ Ժողովն իր հաւանութիւնն է տալիս:

Թոստոմ հետեւեալ բողոքն է ներկայացնում, որ ձանապրութեան մէջ մտցնելու համար.— «Բողոքում եմ, որ հակառակ Ընդհանուր Ժողովի որոշմանը՝ Սաֆրին միայն յանձնաժողովի դեկուցումը յանձնելու, դիւանը յանձնել է նրան նաեւ մի շարք նամակներ եւ դոկումենտներ»:

82ՐԴ ՆԻՍՏ (14 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Զաւարեան:

Ներկայ են 26 ժողովական:

Բացակայ են՝ Անդրանիկ (հիւանդ), Գուսան, Վարդան:

Օրակարգն է հիւստարակութիւնների մասին եղած վիճաբանութիւնների չարունակութիւնը:

Համօ.— Ես չեմ ուզում մանրամասնութիւնների մէջ մտնել, այլ կ'ուզեմ եմ մի երեւոյթ, որը մեր մէջ խիստ աչքի է ծակել. դա մտաւորականութեան բացակայութիւնն է, մտքի պրոպագանդի վրիպումն է: Գու-

ցէ ոչ մի կուսակցութեան կողմից ծրագրային եւ տակտիկի հարցերը, մի խօսքով մտքի պրոպագանդը այնպէս չէ մոռացուել, ինչպէս այդ եղել է Դաշնակցութեան կողմից: Ահագին չանք եւ ոյժ, դրամ եւ աշխատանք ենք դրել այլ ձեռնարկների վրայ, բայց բոլորովին մի կողմ թողնել մի քաղաքական կուսակցութեան այդ խիստ անհրաժեշտ մասը: Ես կ'ուզէի, որ այս հանդամանքը չեշտուէր բանաձեւի մէջ: Եւ մասնաւորին ոգեւորել ենք միայն զղացմունքի, բայց ոչ մտքի վրայ ազդելով: Այլեւս չենք կարող այդ ուղիով չարունակել, այդ կը նշանակէ անկման դիմել: Ընդհակառակը, այդ կը նշանակէ մի չեշտ տալ այդ գործին եւ ոչ նուր ժողովը պէտք է մի չեշտ տայ այդ գործին եւ ոչ ընդհակառակ:

Զարդարեան.— Ես ալ հաւատարապէս կը չեշտեմ պրոպագանդի վրայ: Վերակազմեալ հնչակեանները, եթէ այժմ պոյուրիւն ունեն եւ բանական ուժ կը ներկայացնեն Ամերիկայում, այդ միայն դրաւոր պրոպագանդի շնորհիւ է: — Ես ընկ. Մալումեանի առաջարկին՝ պերմանեերէն թերթի վերաբերմամբ, ըստ էութեան համաձայն եմ, բայց արդեօք չէ՞ կարելի սոցիալիստական կամ դեմոկրատ թերթերի հետ պայմանաւորուել եւ համաձայնութեան գալ, որպէսզի մի բաժին տրամադրելի անեն մեզ՝ հայկական հարցի լուսաբանութեան համար: Այս ասում եմ երկու նպատակով. ա) խոշոր գումար ծախսելու կարիք չի լինի եւ բ) թերթը խիստ մեծ քանակութեամբ կը տարածուի: Կ'ուզէի որ այս եւս ուշադրութեան առնուէր:

Թոփչեան.— Զեկուցմանս մասին եղած առարկութիւններին վերջում կը պատասխանեմ: Իսկ այժմ իբրեւ ժողովական կ'ուզէի խօսել «Դրօշակի» եւ «Pro Armenia»ի մասին: «Դրօշակի» դերը չատ որոշ է, նա պէտք է լինի չաղկապող օղակը բոլոր դաշնակցական ընոյթ կրող թերթերի միջեւ եւ ամբողջ Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական օրգանը: Նրա տեղափոխութիւնը Վարիզ աւելի քան նպատակայարմար է եւ ոյժերի խիստ խնայողութիւն: Այդ երկու օրգանների, «Դրօշակի» եւ «Pro Armenia»ի միասին լինելը մեծ յարմարութիւններ է ներկայացնում մեզ համար: Հետեւապէս պէտք է որոշել այդ դրական մտքով: — Ուրախ եմ, որ պերմանեերէն թերթի առաջարկ է դրուում: 1902 թուին «Եւրոպայի հայ ուսանողութեան միութեան» կոնգրէսի առաջ դրուեց այդ հարցը, բայց մերժուեց, դնելով խնդիրը դեռեւս չհասունացած: Դա մի կարեւոր պլուս է մեր գործի համար, եթէ յաջողուի: Այժմ մի քանի փաստացի ուղղումներ ընկ. Մուրատի դիտողութիւնների վերաբերմամբ: Նա ասում է, որ «Ժամանակի» վարկը ընկել էր: Թէ այդ նրա անձնական կարծիքն է, եւ թէ ինչպէ՞ս է նա այդ խօսքը չափում, ես չգիտեմ. բայց ինձ համար պարզ է որ նա սխալւում է: Ընդհակառակը, ամենաբարձր թերթը կովկասում էլի «Ժամանակն էր: Մուրատն ասում է, լուրը ապում եւ յաջորդ օրը հերքում են: Ո՞նչ անենք, ընկե՛ր Մուրատ, դրանք լրագրութեան մէջ այնքան անսովոր բաներ չեն: Երեւանում մի սպանութիւն էր պատահել, առաջին օրը դրում են այդ մասին եւ համարում հայերի բան, իսկ յաջորդ օրը նամակ է ստացուում, որ դիտում է այդ իբր պրովոկացիա: Գէորգ Զաւուչի մասին տպածը չատ-չատ կարելի է անզգուշութիւն համարել, բայց երբեք չար դիտաւորութիւն, եւ ոչ թէ թոյլ տալ համեմատելու «Մշակ»ի դիտաւորեալ մատնութեան հետ: Մեզ մեղադրում են նաեւ այն բանի մէջ, որ բանուորների բողոքներին, ընդդէմ Միհրանի, տեղ ենք տուել թերթի մէջ: Բայց ինչո՞ւ մոռանում են բուրժուական-կղերական «Մշակ»ի արշաւանքը Հ. Յ. Դաշնակցութեան դէմ՝ առանձնապէս տաճկահայերի անունից, որ աւելի ու աւելի զգուելի բնաւորութիւն էր ստանում: Այդ թերթը յայտարարում էր նոյնիսկ, իբր թէ դաշնակցական զանազան խմբերի եւ խմբապետների յօդուածներով, որ Դաշնակցութիւնը բոլորովին կազմալուծուած է եւ գոյութիւն չունի: Բացի դրանից զանազան բախտախնդիրներ, դասնակցական անունով քողարկուած, նոյն բուրժուական մամուլի էջերում ծաղրում էին Դաշնակցութեան բանուորական չարժումը, նրանք նոյնիսկ սպառնում էին բանուորական խմբերին ու արհեստակցական միութիւններին, աշխատում էին արդիլել պրոպագանդիստներին խմբերի մէջ գնալու եւ խօսելու: Ահա այդ ժամանակ էր, որ բանուորների եւ արհեստաւորների շարքերում խիստ բողոք եւ դժգոհութիւն յառաջացաւ եւ նրանց կողմից ուժեղ ցանկութիւն դրուեց իրենց բողոքի ձայնը բարձրացնելու: Եւ մենք տեղ տուինք բանուորների նամակներին, ի հարկէ, չատ խիստ կրճատումներով եւ սեղմուած: Նրանց ձայնը չատ նշանակալից դեր կատարեց: այդ ոչ ոք չպէտք է ուրանայ: Նրանք ցոյց տուին, որ Դաշնակցութիւնը չէ կազմալուծուել, որ Դաշնակցութիւնը մասսա ունի, որ նրա նորադոյն գործունէութիւնը իր ջերմ պաշտպաններն ունի: Եւ այդ, կրկնում եմ, ուժեղ կերպով հակազդեց ծաւալող չարժմանը եւ կանգնեցրեց հոսանքը: Մուրատը չատ հանդիստ կերպով ասում է, որ իբր թէ թերթին նայող չկայ եւ թողնուած է պատահականութեան: Ո՛չ, ընկ. Մուրատ, այնտեղ մարդիկ կան, որ էլ պաշտօնապէս մեր Թաւրիզեան ժողովի եւ Արեւելեան Բիւրոյի կողմից ընտրուած մարդիկ, որոնք խմբագրած են թերթը: Այդ դու էլ չատ լաւ գիտես: Ամէն քիչ ու չատ պատասխանատու յօդուած կարդացուում է խմբագրական ժողովում, նոյնիսկ Բիւրոյի կարծիքն ենք երբեմն հարցնում: Մեր թերթը երբէք պատահականութեան դուռ չէ եղել: Դառնալով պրոպագանդի հարցին, կը չեշտեմ, որ դրան պէտք է տալ մենաշնորհական տեղը: Մենք պէտք է պատրաստենք միեւնոյն աշխարհահայեացքով գինուած, միեւնոյն տեսակէտի վրայ կանգնած զօրաւոր բանակ, որով կը ստեղծուի յարատեւ գործունէութիւն: Եթէ չլինի այդ համոզմունքը, մեր գործը եւ կուսակցական ուժը կը նմանին այն մշուչին, որը արեւ ծագելիս, անհետանում է: Երբ կայ Սասուն, կայ մի արիւնոտ ձեռնարկ, կայ նաեւ գործ ու ոգեւորութիւն: Երբ մոռացւում է այդ, վիժում եւ քայքայւում է միեւնոյն ժամանակ Դաշնակցութեան հմայքը: Այո՛, մենք պէտք է պատրաստենք, դաստիարակենք քաղաքական-սոցիալիստական կուսակցութեան պայքարող անդամներ, իսկ այդ կարելի է անել գրաւոր եւ բանաւոր պրոպագանդի միջոցով: Ինչո՞ւ հրացանների համար զոհաբերութիւններ կարելի է անել եւ դրամ բաց թողնել, իսկ երբ նոյն բանը պահանջւում է պրոպագանդայի համար, մարդիկ սարսափում են: Ես կ'ասեմ, մեր գոյութեան եւ զաղափարական յաղթանակի հիմնաքարն է կազմում գրաւոր եւ բանաւոր պրոպագանդը: Ոյժ տուէք նրան:

Մալումեան.— Խիստ կարեւոր է նման պրոպագանդա նաեւ Երկրում: Մեր մէջ այն համոզումն է տիրում, որ ասես մտաւորականը մեր շարքերում տեղ չունի, այլ միայն զինուորականը: Բայց այժմեան պարագաներում, վերջինը միայն հերիք չէ գործի յաջողութեան տեսակէտից: Գաւառական քաղաքներում, նոյնը եւ ծովափնեայ վայրերում, մեծ քանակութեամբ գրագէտ երիտասարդութիւն կայ, բայց չկայ առողջ մըտաւոր սնունդ. նրանք կերակրւում են Պոլսոյ լրագրութեամբ կամ ֆրանսական թերթոնային գրականութեամբ: Եւ մասամբ սրանով եմ բացատրում երկրից ձեռնհաս գործիչներ դուրս չգալու պատճառը: Մեզանում ուղղակի բացարձակօրէն բացակայել է պրոպագանդը, թէ ինչո՞ւ՝ հաստատ չեմ կարող ասել: Բայց ներկայի համար կարող եմ պնդել, որ դա հնարաւոր է, մինչեւ իսկ խիստ անհրաժեշտ: Պրոպագանդի բացակայութեան արդիւնք է այն, որ չէք գտնի մի հարց, որի վերաբերմամբ մի քանի ընկերներ միեւնոյն տեսակէտն ունենան: Պարզ չեն նոյնիսկ մեր ապագան, Եւրոպայի միջամտութիւնը, անկատարելական տեսակէտը եւ այլ նման մի չարք խնդիրներ: Զգիտեն թէ ի՞նչ տարբերութիւն կայ Դաշնակցութեան եւ Արմենականների միջեւ: Մինչեւ այժմ չեն եղել մեր տեսակէտը եւ ծրագրային հարցերը լուսաբանող գրքեր եւ հրատարակութիւններ: Միակ մատուր անունդ տուողը եղել է «Դրօշակը». դա էլ շատ քիչ է զբաղուել այդ հարցերի բաւարար լուսաբանութեամբ: Ես այժմ խիստ հետաքրքրութիւն եմ նկատում այդ ուղղութեամբ: Պէտք է մատչելի գրքերով տարածել, ոյժ տալ ամէն հնարաւոր միջոցներով պրոպագանդի գործին եւ համոզիչ գործիչներ պատրաստել: Այս պահանջում է մեր խիստ չահը:

Զելալեան.— Այս թերութիւնները, որոնք կը մատնանչուեն «Ժամանակի» վերաբերմամբ, ես համարում եմ անխուսափելի եւ արդիւնք կովկասեան անորմալ կեանքի: Բայց այդ չէ իմ ասելիքը: Ես բոլորովին համակատակ եմ նոր թերթեր հրատարակելու մտքին: Եթէ թերթերը կովկասում այդպէս յաճախ երեւան կը գան, ոչ թէ կարիքի արգասիք են, այլ որովհետեւ կեանքը անորմալ է եւ ամէն մէկը ջղայնութեան րոպէին թերթի է ձեռնարկում: Նոյն երեւոյթին մենք ականատես ենք եղել Ամերիկայում: Դաշնակցութիւնը լրջացաւ Ամերիկայի մէջ, երբ «Հայրենիք»ը լրջացաւ: Թերթերը թող քիչ լինեն, բայց լաւ խմբագրուեն, այդ է իմ համոզմունքը: Կա՞ն բաւարար խմբագիրներ, ի հարկէ ո՛չ: Ուրեմն չպէտք է չտապել, աւելի լաւ է «Ժամանակը» 4ի փոխարէն 8 երես լոյս տեսնէ, քան տարբեր թերթեր հրատարակուեն եւ մի չփոթ ստեղծուի: Գալով պերմանեերէն օրգան հիմնելու առաջարկին, ես կ'ասեմ՝ աւելի լաւ է և պերազատելի՝ պերմանական թերթերում գրել, եթէ հնարաւոր է, որոշ բաժին տրամադրելի անելով, քան սեփական օրգան ունենալը, որով նոր ծախսի դուռ է բացուում: «Pro Armenia»ն պատուախընդրութեան հարց է դարձել, դրա համար էլ հակառակ չեմ նրա հրատարակութեան:

Մուրատ.— Ես չեմ ասում, որ «Ժամանակի» վարկը բոլորովին ընկել էր, այլ վատ էր խմբագրուում: Դուք էլ, ընկ. Թոփչեան, ղզուում էիք «Մշակի» հետ վարած պոլեմիկայից: Իսկապէս այն չէր թերթը, ինչ մենք սպասում էինք: Մենք չենք ուզում համեմատել ուրիշ թերթերի հետ:

Չաւարեան.— Մինչ էլ Ընդհանուր ժողովներում որոշուել են մի չարք ցանկութիւններ, որոնց մի կարեւոր մասը մնացել է կեանքում անիրագործելի: Մի քիչ էլ գործնական լինենք: Տանք այնպիսի որոշումներ, յայտնենք այնպիսի ցանկութիւններ, որոնք կարողանանք կեանքի մէջ ի կատար ածել: Գալով հրատարակութիւններին, իմ կարծիքն է, որ խնդիրը քանակի մէջ չէ, այլ որակի. Թող քանակով պակաս լինեն մեր հրատարակութիւնները, բայց իրենց էութեամբ եւ բովանդակութեամբ արժէք ներկայացնեն: Թերթերը կազմակերպութեան բերանը լինելով, լուսաբանելու են մեր տեսակէտը, լուծելու են զանազան պրոբլեմներ: Մինչ էլ լսել ենք բողոքներ Դաշնակցութեան տեսական կողմի վիրպումի եւ պակասի մասին, եւ իրաւացիօրէն: Համեմատեցէք սոցիալ-դեմոկրատների հետ. նրանց ամէն մի հրատարակութիւնը որոշ չափ ծանրանում է տեսականի վրայ, մեզ մօտ ընդհակառակն: Մեր մէջ եթէ խառնաշփոթութիւն կայ, այդ չնորհիւ է մեծ մասամբ տեսական կողմի մեր թոյլ տուած պակասներու: Այն ժամանակ, երբ մեր թերթը լոյս տեսաւ Կովկասում, իմ մէջ մի մտածում առաջացաւ. արդեօք նա նպաստելո՞ւ է Դաշնակցութեան հմայքի բարձրացման, նրա կազմի ուժեղանալուն: Ես այժմ,

ինչպէս եւ այն ժամանակ, տատանուում եմ դրական պատասխան տալու: Իմ կարծիքն է՝ լաւագոյնն է մի քերթ ունենալ, բայց լաւ խմբագրուած, քան մի չարք քերթեր: Մեր ընկերների չարքերում, թէ՛ անցեալում, թէ՛ հիմա, կան տեսակէտների տարբերութիւններ. պէտք էր, որ երիտասարդ ընկերների կարծիքների արտայայտութիւնն էլ տեղ գտնէր մեր քերթում: Եթէ եղած տարաձայնութիւնները սուր բնաւորութիւն ստացան, դա մասամբ եւ նոյն պատճառով էր, որ նրանք տեղ չեն գտել մեր օրագրում: Անհրաժեշտ էր ընկերը երիտասարդների հետ խորհրդակցել, առաջ քաշել, յօդուածներ ստանալ եւ համերաշխութեան ձեռք տալ: Այդ չէ եղել անցեալում, բայց չպիտի կրկնել ապագայում: Ես հակառակ եմ օտար լեզուով նոր օրգաններ հիմնելու առաջարկին: Եթէ գրողներ, դրելու ցանկութիւն ունեցողներ կան, կարող են մի տեղ դերմաներէն դրել, մի այլ տեղ ռուսերէն եւն.: Բայց էջեր միշտ էլ կարող ենք ունենալ:

Համօ.— Թերթի կարեւորութիւնը մեզ համար այնքան բացայայտ է, որ դրա դէմ վիճելն անդամ աւելորդ է: Այն խոշոր դերը որ կատարեց «Ժամանակ»ը, Ջաւարեանը կապածի է ենթարկում եւ նրա կարծիքով աւելի լաւ կը լինէր, յարձակումից զերծ կր մնար Դաշնակցութիւնը, եթէ քերթը չհրատարակուէր: Այն ժամանակ ես էլ կ'ասեմ, եթէ Դաշնակցութիւնը չունենար որեւէ գործունէութիւն, էլ աւելի ազատ կը մնար յարձակումից: Ցարձակումներ եղան, այո՛, բայց դա կեանքի դիֆերենցիացիայի արդիւնք էր, մինչեւ իսկ անհրաժեշտ էր եւ անխուսափելի. իսկ «Ժամանակ»ը մղել է կուսակցական պայքար: Հայ բուրժուազիայի բերան «Մշակ»ը շատ լաւ նկատեց իր դէմ կանգնած մրցակից քերթի եւ կազմակերպութեան ուժը, որը դալիս էր նրա հիմքերը փորելու. եւ բնականօրէն յարձակուեց: Ի՞նչն է դրանում զարմանալին, ոչի՛նչ. դա կեանքի պայքար է: Կենտրոնական ժողովի եւ հոգաբարձութեան բնորոշիչների չուրջը մղուած կռիւն եւս անհրաժեշտ էր, մենք չէինք կարող ձեռնպահ մընալ եւ թողնել, որ բուրժուա-կղերականները մեր հասարակական կրթական հիմնարկութիւնները իրենց ձեռքն անցընէին եւ իրենց ձգտումներով ու հայեացքներով գունաւորէին: Քերթի եւ այդ պայքարի չնորհիւ էր նաեւ, որ մեր չարքերը մաքրուեցին բուրժուա տարրերից:

Ռոստոմ.— Ես հակառակ եմ Ջաւարեանի այն կարծիքին, թէ ծրագրենք այն ինչ կարող ենք իրագործել: Երբ բանը վերաբերում է ցուցական եւ այլ մարտական ձեռնարկների, այդ ուրիշ է. իսկ այժմ խօսւում է հրատարակութիւնների մասին: Առանց վախենալու կարող ենք մի չարք ցանկութիւններ յայտնել եւ գործը ոչընչով չի վնասուի, եթէ մի մասը անկարող լինենք իրագործել: — Միանգամայն համաձայնելով Համօյի առաջնեների, միայն ուզում եմ չեշտել այն պարզ հանդամանքի վրայ, որ քանի քերթ չկար կովկասում, չէր կար նաեւ ճշդրիտ դաղափար Դաշնակցութեան մասին: Մեր քերթի դերը խիստ նշանակալի է եղել թուրք-հայկական ընդհարումների վերաբերմամբ: Այդ երբեք չպէտք է մոռանանք: Առաջ, երբ չկար քերթ, «Մշակ»ը բացատրում էր ամէն ինչ իր ձեւով, իր տեսակէտով, եւ ապաւորութիւնն այն էր, որ ամէն տեղ հայերի մէջ տիրում էր վհատութիւն, լքում եւ որ ամէն տեղ կոտորուողը միայն հայն էր: Նա լուսնեակամբ էր անցնում Դաշնակցութեան տարած յաղթանակների վերաբերմամբ, եւ տեղ չէր տալիս նման դրութիւնների: «Ճոռոգ»ը բացեց Դաշնակցութեան բերանը եւ իրականութիւնը իր իսկական դոյներով տեղ գտաւ նրա էջերում: Ասում եմ՝ միայն ա'յդ ժամանակից իսկական տեղեկութիւն տրուեց Դաշնակցութեան գործունէութեան մասին: Շատ բնորոշ է ըստ էութեան այն հանդամանքը, որ արտասահմանում այն կարծիքն էր տիրում, թէ Դաշնակցութիւնը միայն վերջին չրջանումն է յաղթանակել: Ինչո՞ւ: Որովհետեւ միայն այդ չրջանի մասին է իսկական տեղեկութիւն տրուել, ի հարկէ մեր քերքի միջոցով: Ջաւարեանը սխալւում է, կարծելով, որ եթէ քերքը տրուէր երիտասարդներին, աւելի լաւ կը լինէր: Ընդհակառակն, եթէ քերքը տայինք նրանց, աւելի սարսափելի բան կը ստեղծուէր, չրջանի տարօրինակ բնոյթը ի նկատի ունենալով: Ես եւս այն համոզմունքին եմ, որ պէտք է ամէն կերպ պահել մեր չարքերում երիտասարդներին: Կարելի է այդ երկու տարրերից հաւաքական խառն խմբագրութիւն կազմել:

Վռամեան.— Օպտակարութեան մասին խօսել աւելի քան անօրինական է: Չկայ մի բան, մի երեւոյթ, որ իր ոչչ հետեւանքը չունենայ: Բոլորովին սխալ է կարծել, որ քերքն է եղել պատճառ յարձակումների եւ մեր չարքերի վնասուելուն: Չեմ ուզում դրա վրայ ծանրանալ: Բայց ի՞նչպէս չտկել: Ճիշդ է, բաներ կան, որ վրիպել են. բաժանորդագրութիւնը խիստ նուազ է եղել, բայց մենք խօսելու ենք քերքի ուղղութեան եւ ոչ թէ վարելու մասին: Սխալ է մի քերք բիւրոյի կամ մի մարմնի ձեռք տալ, առանց խմբագիրների, մի վստահելի դլուխի, պատասխանատու անհատի՝ որի վրայ էլ կ'ընկնի քերքի ամբողջ պատասխանատուութիւնը: Ահա իմ համոզմունքը: Քերքը վարող մեր ընկերները անփորձ են եղել եւ Դաշնակցութեան կիսապաշտօնական քերքը իր բարձրութեան վրայ չեն պահել: Շատ բան «Ժամանակ»ը կարող էր արհամարհել եւ ոչ թէ ընթացք տալ: Այդասում եմ Ամերիկայի մեր փորձառութիւնից: Քերքի յաճախակի դադարման դործում էլի մեր ընկերների անփորձութիւնը եւ անդրուշութիւնը դեր են խաղացել: Կարելի էր նոյն բանը ասել, դրել այլ ձեւով եւ տեղիք չտալ փնտելու. ոչ թէ ամէն ժամանակ պոռալ, թէ ես կոմիր յեղափոխական եմ, եւ այլ բառերի եւեւից ընկնել: Այդ կարելի է դործով, զգալափարով ցոյց տալ եւ

ոչ թէ դոռալով: Թերթի վրայ նայելու է եւրոպական մաքով, աւելի բարձր: Գալով «Pro Armenia»ին, պիտի ասեմ, որ ես այնքան լաւատես չեմ: Իմ կարծիքով սա այնքան էլ գոհացուցիչ չէ: Ջափազանցելու չէ, ինչպէս սիրում է ասել ընկ. Մալումեանը, բովանդակութիւնը ճոխ չէ, ոչ էլ բաղմակողմանի: Կարեւոր հարցեր, մեր դատի տեսակէտից, ուղղակի վրիպում են: Աչքի է զարնում նաեւ կոնտրոլի եւ հայ աչքի բացակայութիւնը: Այդ տեսակէտից լաւ կը լինի, որ կապուի «Դրօշակ»ի հետ, ուրիշ կերպ անհնարին է: Մենք ամէն բան թողել ենք Գ. Քիլարին. նա անձնուէր է, այդ չեմ ուրանում. բայց ամէն ինչ նրա բերնով չպէտք է ասել. ոչ էլ նա մեծ հեղինակութիւն է: Նոր ուժեր դտնելու է: Այդ բոլոր վրիպումների եւ քերութիւնների մի նշանաւոր մասը կը չտկուի, եթէ «Դրօշակ»ը փոխադրուի Գարիզ եւ այդ երկու քերքերը միասին խմբագրուին, մանաւանդ որ Գարիզը բոլոր գլխաւոր հոսանքների վայր է եւ կենտրոնական քաղաք: Արեւմտեան Բիւրոն, որ Դաշնակցութեան արտաքին գործերի ներկայացուցչութիւնն է նկատւում, պէտք է մի կենտրոնական քաղաքում լինի, ոչ թէ Ժընեւի նման խուլ մի անկիւնում: Կրկնում եմ, կոնտրոլի խիստ պահպանութիւն կայ: Համեմատեցէ՛ք հապա «Hellenismus» քերքը, որ նուիրուած է հելլենական չահերին Բալկանների մէջ, մեր «Pro Armenia»ի հետ. որքա՜ն է ճոխ, հարուստ յօդուածներով եւ բովանդակալից: Վանի հասարակ նաւակը դարձել է «Pro Armenia»ի մէջ զրահաւոր, կովկասեան թաթարները ներկայանում են «Pro Armenia»ի էջերում, իրրեւ քիւրտեր: Ահա թէ ի՞նչ է ստեղծուել անկոնտրոլ գործից: Ես բոլորովին հակառակ եմ նոր օրգաններ ունենալու մտքին եւ համակարծիք եմ ընկ. Ջաւարեանին: Այն էլ բաւական է, որ Արեւմտեան Բիւրոն կարեւորագոյն տեղեկութիւնները հակիրճ ձեւով հաղորդէ նշանաւոր քերթերին: Այդ աւելի նշանակալից է, քան նոր քերթեր ունենալը:

Ժողովր փակուեց ժամը 8½ին:

83ՐԴ ՆԻՍՏ (15 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Ջաւարեան:

Ներկայ են՝ 25 ժողովական:

Բացակայ են՝ Իշխան, Ռոստոմ, Անդրանիկ, Գապիկ:

Շարունակւում են վիճաբանութիւնները «Բաձառոր եւ գրաւոր պրոպագանդ»ի մասին:

Շահխաթունեան.— Ես կանդ չեմ առնի պրոպա-

ներ կազմեն, ձեռք ու ոտքը կապեն՝ նստեն. եթէ ծուլութիւն չսիրող եւ գործօն ուժեր կան, Թող հանդէս գան իրենց կենդանի խօսքով: Թիֆլիզի կենտրոնական Թերթը իւր ամսաթերթով առ այժմ Թող բաւականացնէ եւ Թող նրա չուրջը համախմբուին Թերթի ղեկավարող ուժերը եւ ոչ Թէ ցրիւ գան: Դաշնակցութիւնն այսքան տարի է կուռւմ է եւ կռուի այդ ամենատարրական օրէնքը չի ուզում կիրառել իր կարեւոր ճեռնարկութեան մէջ: Մենք մոռանում ենք, որ մի ցիսլ-դեմոկրատիա չենք, նրա վարդապետութեան եւ կռուի միօրինակ պարզութեամբ եւ սկզբունքների որոշ ֆորմուլաներով: Մեր զանազան Թերթերը կը սկսեն այնպէս իրար հակասել տարրական խնդրի լուսաբանութեան կամ հենց սկզբունքների մէջ, որ կարմրելով միայն չենք բաւականանայ, ստիպուած կը լիներնք ուղղակի ասելու՝ Թէ նա Դաշնակցութեան Թերթը չէ: Այսպիսի տարուբերուող չրջանում բազմաթիւ Թերթերը մեզ ամենամեծ վնասները կը հասցնեն, կարեւոր կենդանի ուժերը կ'ամլացնեն, մտքերի այնպիսի չփոթ կը ստեղծեն, որ էլ դժուար կը լինի պրծնել: Ապա ես ուզում եմ խօսել նաեւ պրոպագանդիստների մասին. խօսքը միայն կազմակերպչական բնոյթ պիտի կրի, որովհետեւ մենք նիւթերի զբաղմունքի տարօրինակ սխեմա ենք մշակել, — Մրագիրը, որից պիտի բխէին մեր ուժերը, Թողնուած է ամենից վերջը: Դանճակի եւ Ասպառաժի չրջաններում պրոպագանդիստների եւ պրոպագանդի խնդիրը ամենայայտնի եւ կենտրոնական խընդիրներից մէկն է եղել եւ է, մանաւանդ այս ճգնաժամին: — Առաջներում, դեռ այն ժամանակ, երբ կատարեալ տէր չէինք դրութեան, մեր զաւառական չրջաններում չկար մի քիչ չատ բաւարար ուժ, որ մտքի ղէմ մտքի ղէնքերով կռուէր եւ կուսակցութեան վարկն ու պատիւը պաչտպաներ: Այսօր, երբ ինքնապաչտպանութեան, դինուորականութեան չրջանը անցնում է, երբ նոյնպիսի կամացուկ կերպով սկսում է գիտակցութեան գալ մեր հարեւանը, որին հենց մեր չահերի տեսակէտից պիտի օժանդակենք, այսօր, երբ մեր ղէմ կանգնած է բազմագլխանի հակառակորդների գրոհը, երբ ժողովրդական միտքը սկսել է ցնցուել եւ ուժգին կերպով հետաքրքրուել մեր հասարակական խնդիրներով եւ երբ մեր բոլոր հակառակորդները հիանալի հող կը պնդեն իրենց գործի համար, ասացէք, խնդրեմ, ո՞վ պիտի նրանց հարուածներին հակահարուածներ տայ եւ պահպանի Դաշնակցութեան հինաւուրց ծառը տապալումից. գուցէ ո՞ւմբը, գնդա՞կը. միամիտները միայն չգիտեն, որ այդ բռնութիւնները Դաշնակցութեան Թչնամիներին կ'ուժեղացնեն եւ ուրեմն մնում է միայն մեր ճեռքը՝ ամենահիմնական զէնքը՝ կենդանի յեղափոխական պրոպագանդը: Դաշնակցութիւնը, որպէս մի յեղափոխական կուսակցութիւն, պէտք է մեր կեանքի լաւագոյն ուժերը իր մէջ կենտրոնացնէ, լինի մի կենդանի կուսակցութիւն եւ հանդիսանայ մեր կեանքի զլխաւոր զարկերակներից մէկը. եթէ ուզում ենք, որ Դաշնակցութիւնը ապրի եւ զարգանայ՝ մենք չենք կարող այսօր նախկին կիսատ-պռատ պատրաստականութեամբ հանդէս գալ մեր չուրջը, մեր դուրսն ու ներսը վխտացող հակառակորդների դէմ: — Այսպիսի պայմաններում, մի յեղափոխական կուսակցութեան կենդանութեան համար, օրաթերթերը, ամսաթերթերը, Թէկուզ մի հանճարեղ կերպով հեղեղուն էլ՝ չեն կարող նրան վտանգից փրկել, եթէ չկան նրանց հետ միատեսակ կենդանի մտաւոր ուժեր, որոնք հրապարակական ժողովներում, մեր ղէմ կանգնած հակառակորդներին կենդանի խօսքով հարուածեն, աչխատաւոր ամբոխին իրենց ետեւից տանեն, հոգի տան տապալրական մեռած տեառերին: Զպէտք է մոռանալ, որ մենք պիտի լինենք մի կենդանի մարտիկ կուսակցութիւն, ուժեղ իւր գիտակից ընկերների Թուի ստուարութեամբ: Այս բոլորը ի նկատի առնելով ես խոնարհաբար խնդրում եմ ի դիմաց իմ բազմաթիւ ընկերների եւ ի դիմաց այն չրջանի, որ ինձ ուղարկել է Ընդհանուր Ժողովին, ամենամեծ ուչադրութիւն դարձնել մտաւոր ուժերի պատրաստութեան վրայ, մաքուր-կուսակցական-յեղափոխական-սոցիալիստական պրոպագանդայի խնդրի վրայ. մի բան, որի վրայ մենք մինչեւ այսօր ուչք չենք դարձրել: Մենք 100 հազարներ ենք ծախսում մեր ռազմական գործի համար, մասնադէտների, տեխնիկների, դինուորական դպրոցի, արհեստաւորների, դինապայթուցիկ արհեստանոցների կառուցման համար, բայց չպէտք է զլանանք մտածել մեր այդ հսկայական ապագայի զէնքերի համար պատրաստելու դիտակից յեղափոխականների բանակ, հնդամուտ մտաւորական ղեկավարներով, որպէսզի մի օր չմնանք զօրապետներ առանց բանակի: Այն ինչ ես ուզում եմ առաջարկել կարելի է եւ հնարաւոր: — Աներայժեչտ է ունենալ երկու կենտրոնական քաղաքներում՝ Բագուում եւ Թիֆլիզում, մի մչտական մարմին՝ պատասխանատու պրոպագանդային մարմին. նրա անդամները պէտք է ազատ լինեն կազմակերպչական եւ լրագրական աչխատանքներից: Նրանց պարտականութիւնը պիտի կայանայ մչտական չրջագայութեան մէջ՝ այն վայրերը, ուր արտակարգ պահանջ կը զգացուի: Նրանք պիտի այս ու այն քաղաքներում հրապարակային եւ կուսակցութեան անդամների համար դասախօսութիւններ կազմեն: Երկու կենտրոնական քաղաքներում նրանք պիտի ունենան մչտական պրոպագանդիստների դպրոց: Նրանք պիտի զաւառական ուժերը լոյս աչխարհ հանեն եւ ուղղութիւն տան: Նրանք ամէն տեղ Մրագիրն ու նրա հետ կապուած տեսական խնդիրները պիտի պարզեն եւ պայքարեն հակառակորդների դէմ: Վերջացնում եմ խօսքս. — Այսօր մեր ժողովրդի աչխատաւորական միտքն ու հոգին պահանջում են մեզանից իւր հոգու համար խոչընդոտներ. իսկ իւր մտածողութեան համար՝ նա մեզանից սպասում է

այդ խոչընդոտները, երկաթի օրէնքներով հիմնաւորուած մտքեր: Դաշնակցական ինտելիգենցիան, հաւատացէք, պատրաստ է զոհաբերութեան. նա պահանջում է միայն իւր ծարաւ մտքի ու հոգու համար սնունդ, եւ մենք պարտաւոր ենք նրան բաւարարութիւն տալ: Եթէ դուք սիրում էք Դաշնակցութիւնը, այն ժամանակ դուք պարտական էք մեր ապագայ գործունէութեան մէջ ամենամեծ տեղը տալ յեղափոխական պրոպագանդայի, յեղափոխական ուժերի զարգացման ու մեր մասսաներին պիտակցութեան բերելու խնդրի վրայ: Եթէ իմ առաջարկած միջոցը անբաւարար է, պէտք է մտածել, աւելի կատարեալ միջոցների դիմելու:

Մինասեան.— Մենք աչքի առաջ ունենք երկու տեսակ պրոպագանդա — օտար եւ հայ — եւ երեք միջոց՝ գրաւոր, բանաւոր եւ գործնական: Ջմոռանանք, որ մինչեւ այժմ մեր պրոպագանդը միայն գործնականն է եղել: Կեանքը դնում էր կենդանի գործունէութիւն եւ ժողովուրդը յարում էր Դաշնակցութեան: Դաշնակցութիւնն յաղթեց հնչակեաններին, ոչ Թէ պրոպագանդայով, այլ կենդանի գործով: Եթէ կենդանի գործը կորցնենք, պրոպագանդը մեզ չէ կարող պահել, որովհետեւ մասսան մեզ հետ կապուել է միայն գործով: Եթէ դուք կ'ուզէք ժողովրդին բերել մեր խօսքին, պրոպագանդայով չէք յաղթի: Կենդանի գործը կը տայ միայն ժողովրդի սպասածը: Կովկասում հարցը միայն իւր դասակարգային կողմով յառաջ բերաւ դաշնակցական պրոպագանդի կարեւորութիւնը. իսկ Ցաճկաստանի մասին ժողովուրդը գիտէ պէտք եղածը, — Հայաստանի բարենորոգումների պահանջը: Կովկասում միայն պրոպագանդի պահանջ առաջ եկաւ. եւ եթէ կ'ուզենք մեր ամբողջութիւնը պահել, բաւարարութիւն պէտք է տալ: — Թերթերը չատացնելով բան դուրս չի գար. այդ նոյնպէս մեծ նիւթական զոհողութիւն կը պահանջէ: Պէտք է որակին նայել, եւ ոչ քանակին: Երբ լոյս տեսաւ «Ճառայ»ը, նա առաջ բերաւ որոշ յուղում. «Մուրճ»ի դէմ բոլոքոտ յայտարարելով եւ «Մուրճ»ի դէմ անձնական բանակուիւ մղելով լայն հակառակութիւն յառաջ բերաւ: «Ճառայ»ը դուրս գալով, կարծեց Թէ ինքն է հայոց ազգի տէրը եւ իւր ճեռքը առաւ կրօնական եւ այլ հարցեր, ինչպէս էջմիածնի կենտրոնական ժողովը: Առաջ Դաշնակցութիւնը ազգային էր միայն, ապա ստեղծուեց դասակարգային հարց. «Ճառայ»ը չկարողացաւ հաչտեցնել այդ երկու գաղափարները եւ որոշ խլրտում յառաջ բերաւ: Ես համակարծիք եմ, Թէ «Ճառայ»ն ուրիչ կերպ չէր կարող, երբ նրա վարիչները չգիտէին, Թէ ի՞նչ է նրա ուղղութիւնը: «Ճառայ»ի վարիչները չպէտք է որոշ սահմանից դուրս գային եւ գուհկուիւթեան հանէին, ինչպէս «Մուրճ»ի եւ «Մշակ»ի դէմ բռնած դիրքում: — Գալով «Դրօչակ»ին, պէտք է ասեմ, որ նա մեզ համար պիտի լինի մի պատմական արխիւ՝ հայ պատմութեան եւ հայ կուսակցութեան, միայն որոշ բարեփոխութիւն պէտք է անել: Օտար պրոպագանդի մեր օրգանը պիտի լինի միայն «Pro Armenia»ն, որ նոյնպէս մեր արխիւն է այն քաղաքական անճանց համար, որոնք պիտի զբաղուեն մեր դատով: Ժողովուրդը նրանից չի օգտուեր, որովհետեւ հայկական կեանքը նրա համար այժմկուիւն չունի: Ընկ. Վռամեան չատ ճիչդ ասաց, որ «Pro Armenia»ն իր բարձրութեան վրայ չէ. բայց դրա մեղքը մերն է, որովհետեւ լուրեր, տեղեկութիւններ չենք տալիս: Կլեմանսոն, Ժորէսը, որոնց անունը գըրուած է դրա մէջ, այդ չեն կարող անել. մե՛նք պիտի անենք: Ուրիչ Թերթեր մեզ պէտք չեն՝ օրինակ գերմաներէն, — պրոպագանդի ուրիչ միջոցներ կան, — միթինգ, պարլամենտ, կոնֆերանս եւն.: Ամենացօրեղ միջոցն է հանրային կարծիքին վրայ՝ կոնֆերանսը, որ պէտք է անել յայտնի մարդկանց միջոցով, որոնց անունն ու նիւթը ժողովուրդին կը գրաւեն:

Իսահակեան.— Ասում են, որ «Դրօչակ»ը պէտք է լինի կենտրոնական օրգան. այդ կարող ենք մի քանի տեսակ հասկանալ. նախ՝ կենտրոնական օրգան, որ կարող է սկզբունքային ղեկավարող օրգան լինել եւ երկրորդ՝ պաչտօնական տեղեկատու: Ո՞րը պէտք է լինի: «Դրօչակ»ը, իմ կարծիքով, պէտք է լինի մեր կուսակցութեան սկզբունքային հարցերը լուսաբանող օրգան: Ասում են, որ «Դրօչակ»ը չատ է սիրուած Ցաճկաստանում. բայց այն ժամանակ, նա չէ կարող նրանց բաւարարութիւն տալ. երկուսից մէկը, — կա՛մ «Դրօչակ»ը պէտք է լինի գիտական սկզբունքային հարցերով զբաղուող Թերթ եւ կամ ժողովրդական հրատարակութիւն: Ի՛նչ բաժնով ուզում էք արէք, բայց այդ երկու մասերն իրարից անջատեցէք: Ես կարծում եմ, որ «Դրօչակ»ը կարող ենք պահել իրրեւ զուտ ժողովրդական Թերթ, իսկ յետոյ կ'ունենանք հետը՝ յաւելուած բաժին, գիտական, որ կը տպուի սահմանափակ Թուով: Իսկ ինչ վերաբերում է «Ճառայ»ին, չենք կարող պահանջել նրանից, որ նա բացատրէր կուսակցութեան սկզբունքները: Օրաթերթի դերն է առօրեայ հարցերով զբաղուել. բայց ի նկատի ունենալով այն պայմանները, որոնց մէջ նա երեան եկաւ, նա պիտի այդ անէր: Կովկասեան ամսաթերթն աւելի քան անհրաժեչտ է, նա պէտք է բանավէճի բնոյթ ունենայ: «Դրօչակ»ը այդ չէ կարող անել, որովհետեւ նա պէտք է որոշ, հաստատուն բնաւորութիւն ունենայ: Ջանգան Թերթեր հրատարակելու արգելք չենք կարող դընել, որովհետեւ ամէն դաշնակցական անհատ կարող է հրատարակել, նոյնը կարող է անել եւ կենտրոնական կոմիտէն. միայն պէտք է լինի մի կենտրոնական օրգան, որ հսկէ ընդհանուր ուղղութեան վրայ: — Ովքե՞ր պէտք է լինեն «Դրօչակ»ի խմբագրութիւնը. ով էլ լինի, նա պէտք է պատասխանատու լինի Ժորհրդի առաջ: Կովկասի Թերթի խմբագրութիւնը պէտք է ընտրուի Կովկասեան Ինչոնական Ժողովից եւ պատասխանատու՝ կովկասեան կենտրոնական մարմնի առաջ,

հենց այնպէս, ինչպէս ուրիշ տեղերի քերթերը։ — Ի նկատի ունենալով, որ պրոպագանդն ընդունում ենք կուսակցական անհրաժեշտութիւն, պէտք է ապահովել «Ծառուկ»ի եւ ամսագրի գոյութիւնը։ Արեւմտեան չըրջանի քերթերի համար այդ չպէտք է լինի, որովհետեւ նրանք մեզ համար նպատակ չեն, այլ միայն օժանդակող։

Զոփուրեան։— Ընդհրը չբաժանուեց առանձին առանձին մասերի, որ եւ առիթ տուեց այսպիսի չփոթ վէճերի։ Ես ուզում էի պրոպագանդի կարեւորութեան մասին խօսել։ Սոցիալ-դեմոկրատները, իրենց բիւրոճէի գրեթէ 95%ը գործ են դնում պրոպագանդի համար։ Պրոպագանդն է այն ոյժը, որ ամենից աւելի զարկ է տալիս կուսակցութեան ծաւալման։ Այնպիսի կենտրոնական տեղերում, ինչպիսիք են Թիֆլիզը, Բաքուն, եթէ գրաւորի հետ բանաւոր պրոպագանդ չլինի, մասսայից չատերը կը կորցնենք։ Ամսաթերթի եւ օրաթերթի պէտքն ընդունում եմ։ — Անհրաժեշտ է ռուսերէն քերթ։ Ցիչում եմ, որ ընկերներից մէկը՝ Զաւարեանը ասաց, որ նոյնիսկ Գետերբուրգում մեզ համարեան են մաֆիա, ինչ որ աւելի եւս չեշտում է ռուսերէն քերթի կարեւորութիւնը, որ ոչ միայն կովկասի համար է հարկաւոր, այլեւ Տաճկահայ հարցի։ Մասնաւորելով խօսքս Ռսկանապատի մասին, իրրեւ բանուորական կենտրոնի, պէտք է ասեմ, որ չատ խեղճ վիճակի մէջ է, նոյնիսկ ամէնօրեայ յօդուածների դէմ չենք կարող պատասխանել։ Շատ կ'ուզէի, որ Ընդհանուր Ժողովը արտօնէր Ռսկանապատին գոնէ չաքաթը երկու անգամ քերթիկներ հրատարակել, որովհետեւ չատ վատ տպաւորութիւն է թողնում, երբ յաճախ չենք կարողանում հերքել տեղացող մեղադրանքները։

Ստեփանեան։— Այսքան խօսում էք, բայց ոչ մի միջոց չէք առնչարկում։ Դաշնակցութեան քերթերից մենք ճանչչում ենք օրգան՝ «Դրօշակ»ը եւ ուզում ենք չարունակել։ Կ'ուզէի լսել ընկ. Մինասեանից՝ Պարսկի հայ ուսանողութեան օրգանի մասին, որը նոյնպէս իւր ճակատին կրում էր՝ «Հ. Ց. Դաշնակցութեան Եւրոպայի Ուսանողական Միութիւն» անունը։

Շահխաթ-ունեան (չարունակում է իւր ընդհատուած խօսքը)։— Տեղի ունեցաւ մի խոշոր թիւրիմացութիւն։ «Ծառուկ»ն իրեն ղրկց մասնաւոր քերթի ղրութեան մէջ եւ կորցրեց կուսակցական օրգանի բնոյթը։ Եւ այդ բանակռուի առթիւ տեղի ունեցաւ, անհատական զրոյցում, բայց ոչ երբեք կուսակցական։ Օրաթերթի առթիւ ես համաձայն եմ ընկ. Խահակեանի հետ. երիտասարդների մէջ կայացած այն խոշոր անհատրբերութիւնը քերթի գործունէութեան նկատմամբ մեծ արգելք ներկայացուց, հենց օրինակ իմ մասին. բանակռուի մէջտեղ իմ եւ խմբագրութեան միջեւ՝ ուրիշ էր. դրա համար էլ չէի կարող մասնակցել։ Իմ առաջարկներն են՝ կովկասի համար օրաթերթի եւ ամսագրի քերթ։ Հարկաւոր են եւ ուրիշ քերթեր. բայց որովհետեւ թողնելով անհատներին՝ մի ուղղութիւն պահելը դժուար է, այդ պատճառով էլ հարկաւոր է, որ դրան յատկացրած մարմինը տայ ուղղութիւններ, որ լինին մեծամասնութեան կարծիքի արտայայտութիւնը, եւ որոնցից ոչ մի խմբագրութիւն չպէտք է չեղուի։ Բոլոր կուսակցութիւնների նպատակը գործնականն է, որն այնքան էլ պարզ չէ, ինչպէս կարծում է ընկ. Մինասեանը, եւ ահա պրոպագանդն այդ պէտք է պարզէ։

Մինասեան։— Ընկ. Ստեփանեան մի քանի անգամ հարց դրեց Վարիզի ուսանողութեան քերթի մասին. բայց նա երեւի անծանօթ է գործին։ Այդ քերթը մասնաւոր բան է եղել, որին մասնակցել են ե'լ դաշնակցականներ։ Այդ հրատարակութեան նպատակն էր տալ հայոց մասին եղած հրատարակութիւնների անալիզը։ Վրան դրած «Հ. Ց. Դաշնակցութեան Եւրոպայի ուսանողական միութիւն» անունը՝ պաշտօնական բան չէ։ Մասնաւոր քերթ հրատարակելուն ես դէմ չեմ. ամէն մարդ ազատ է. եթէ նա դաշնակցական է, քերթն էլ դաշնակցական կը լինի. բայց ի հարկէ, ոչ պաշտօնական։

Զաւարեան։— Ասածների վրայ երկու բան կ'ուզեմ աւելացնել. որ մեր հրատարակութիւնների մէջ եղել են սխալներ, դա անկասկած է. ապացոյց, որ մեր, «Մշակ»ի ու «Մուրճ»ի մէջ բաժանումն այնքան էլ էական չէ։ Նրանք օրինակ տպում են ե'լ սոցիալ-դեմոկրատական յօդուածներ։ Ինչոր չափով այստեղ դեր է խաղացել անձնականը. սկզբունքային լուրջ պայքար չէ եղել։ Հենց պայքարն էլ ծագեց այն ժամանակ, երբ հարց բարձրացաւ, թէ ո՞վ պէտք է լինի Ներսիսեան կամ Ծովինարեան դպրոցների հոգաբարձու։ Մեր եւ նրանց մէջ ըստ էութեան տարբերութիւն չկար. տարբերութիւնը տակտիկայի մէջ է. նրանք համարում էին մեր դրած պահանջները չհասունացած։ Մեր դրած պայքարը գոնաւորում էր անձնականով եւ ոչ զգափարականով։ — Շեչտուեց, որ ամէն չրջանի հրատարակութիւններ արտայայտիչ պէտք է լինին կուսակցութեան մէջ տիրող հոսանքի. այդ էլ չէ եղել։ Մալումեանն ասում է, թէ «Դրօշակ»ը տարածւում է 10 հազարով. ես վախենում եմ, որ մեր քերթերով խնճոր են փաթաթում. բացի դրանից քերթերի մեծ մասը կորչում է։ Եթէ ձրի տարածելու լինենք, այն ժամանակ կարող ենք «Դրօշակ»ը 20·000 էլ տպել. բայց ի՞նչ օգուտ դրանից. «Դրօշակ»ը պէտք է բաժնեդնով լինի։ — Գալով բանաւոր պրոպագանդին, պէտք է ասեմ, որ նա սերտ կերպով կապուած է գրաւորին. զատել այդ երկուսը չէ կարելի։ Մենք այդ քերթութիւնը կատարել ենք, բայց մենք պէտք է խոյս տանք դրանից ապագայում։

Մադումեան։— Շատ ցաւալի է, որ հարցերը չբաժանուեցին, որպէսզի աւելի հեշտ լինէր դրանց մօտենալ եւ քննել։ Ընկ. Զաւրդարեանն ու Զելալեանն ասում են, որ փոխանակ նոր քերթ հիմնելու՝ գերմաներէն, կարող էք ուրիշ քերթերի մէջ գրել։ Զելալեանի կողմից ինձ այդ չէ զարմացնում. բայց զարմացնում է ինձ Զաւրդարեանի կողմից, որ ծանօթ է եւրոպական մամուլին։ Այդ փորձերը արել ենք մենք եւ յաճախ չատ քերթերի դուռ բախել, բայց անյաջող։ Եւրոպական լրագիրը չի տալ ձեր յօդուածը, եթէ չօշափուած հարցը չի ներկայացնում օրուայ հետաքրքրութիւն։ Նոյնիսկ դրամական առաջարկութիւն է եղել «l'Aurore»ի խմբագրութեան, բայց մերժուել է։ Այս իրողութիւնն ահա ստիպեց մեզ սեփական օրգանի վրայ կանգ առնել։ Սիմոն եւ Ռոստոմ նորից կանգ առան այն հարցի վրայ, թէ «Դրօշակ»ի մէջ տեղ չէ տրուած տեսական հարցերի լուսաբանութեան. իսկ Ռոստոմը նոյնիսկ փորձեց ցոյց տալ, թէ տեղ չատ է եղել.— ես չեշտում եմ, նորից, որ այդ չէ արուել դիտմա'մբ, համարելով «Նախագծի» եւ դրա հետ կապուած խնդիրը՝ կազմակերպութեան տեսակէտից անյարմար պաշտօնական օրգանի էջերի համար, մի խընդիր, որ կարող էր փոթորկի տեղիք տալ։ Ներկայ Ընդհանուր Ժողովը պէտք է իրաւունք տայ «Դրօշակ»ին իր էջերը բանալու այդօրինակ հարցերի համար։ Մի քանի ընկերներ խօսեցին ընդդէմ գերմաներէն օրգանի. ես նրա խորը կողմնակից չէի, քանի որ կովկասեան փոթորկալից վիճակի մէջ էր. բայց այժմ, երբ այնտեղ խաղաղ է, ես ոչինչ չունեմ հակառակ այդ ձեռնարկութեան. մանաւանդ, որ յարմարութիւններ կան եւ ծախսը չնչին է՝ 6000 ֆրանք։ Չնայած այն հայեացքին, որ Գերմանիայում մեզ համար նպաստաւոր կարծիք չըկայ, պրոպագանդն արւում է հենց այնտեղ, որ հակառակ տրամադրութիւն կայ։ Ճիշդ է որ հանրային կարծիքը ազդեցութիւն չունի Վիլհելմի վրայ, բայց այնտեղ կայ մեծ քանակութիւն մտաւորականների, գրողների, պրոֆեսորների, ազատ մտածողների, որոնք կողմնակից են մեզ, ինչպէս եւ առհասարակ կողմնակից են ճնշուածների, եւ այդպիսիների պէտք է ծանօթացնել մեր դատի հետ. պէտք է պատռել մթութեան քողը, որով ծածկուած է մեր հարցը, ամրողջ Գերմանիայում։ Ընկ. Թոփչեանի առաջարկը, թէ մեր կովկասի օրգանը պէտք է պաշտօնական լինի եւ խմբագրութիւնն Ընդհանուր Ժողովից ընտրուած՝ անկարելի բան է։ Մի կազմակերպութիւն երկու պաշտօնական օրգան չէ կարող ունենալ։ Ինչ դիրքի մէջ ուզում էք դրէք կենտրոնական օրգանը, ամսաթերթ թէ օրաթերթ.— ուր ուզում էք բանտարկէք, ծընեւում, թէ Թիֆլիսում, նա պիտի լինի մէկ հատ։ Հակառակ ընդհումը առաջ կը բերէ մտքերի քաոսական վիճակ։ Կովկասի քերթն անհրաժեշտ է եւ պիտի գտնուի Ռուսոնական Ժողովի տրամադրութեան տակ, բայց պաշտօնական անուն չպէտք է կրէ։ Միանգամայն կողմնակից եմ ռուսերէն մի քերթի անհրաժեշտութեանը, որ պիտի վերացնէ այն բոլոր թիւրիմացութիւնները հասում են, որ փոխանակ նոր քերթ հիմնելու՝ գերմաներէն, կարող էք ուրիշ քերթերի մէջ գրել։ Զելալեանի կողմից ինձ այդ չէ զարմացնում. բայց զարմացնում է ինձ Զաւրդարեանի կողմից, որ ծանօթ է եւրոպական մամուլին։ Այդ փորձերը արել ենք մենք եւ յաճախ չատ քերթերի դուռ բախել, բայց անյաջող։ Եւրոպական լրագիրը չի տալ ձեր յօդուածը, եթէ չօշափուած հարցը չի ներկայացնում օրուայ հետաքրքրութիւն։ Նոյնիսկ դրամական առաջարկութիւն է եղել «l'Aurore»ի խմբագրութեան, բայց մերժուել է։ Այս իրողութիւնն ահա ստիպեց մեզ սեփական օրգանի վրայ կանգ առնել։ Սիմոն եւ Ռոստոմ նորից կանգ առան այն հարցի վրայ, թէ «Դրօշակ»ի մէջ տեղ չէ տրուած տեսական հարցերի լուսաբանութեան. իսկ Ռոստոմը նոյնիսկ փորձեց ցոյց տալ, թէ տեղ չատ է եղել.— ես չեշտում եմ, նորից, որ այդ չէ արուել դիտմա'մբ, համարելով «Նախագծի» եւ դրա հետ կապուած խնդիրը՝ կազմակերպութեան տեսակէտից անյարմար պաշտօնական օրգանի էջերի համար, մի խընդիր, որ կարող էր փոթորկի տեղիք տալ։ Ներկայ Ընդհանուր Ժողովը պէտք է իրաւունք տայ «Դրօշակ»ին իր էջերը բանալու այդօրինակ հարցերի համար։ Մի քանի ընկերներ խօսեցին ընդդէմ գերմաներէն օրգանի. ես նրա խորը կողմնակից չէի, քանի որ կովկասեան փոթորկալից վիճակի մէջ էր. բայց այժմ, երբ այնտեղ խաղաղ է, ես ոչինչ չունեմ հակառակ այդ ձեռնարկութեան. մանաւանդ, որ յարմարութիւններ կան եւ ծախսը չնչին է՝ 6000 ֆրանք։ Չնայած այն հայեացքին, որ Գերմանիայում մեզ համար նպաստաւոր կարծիք չըկայ, պրոպագանդն արւում է հենց այնտեղ, որ հակառակ տրամադրութիւն կայ։ Ճիշդ է որ հանրային կարծիքը ազդեցութիւն չունի Վիլհելմի վրայ, բայց այնտեղ կայ մեծ քանակութիւն մտաւորականների, գրողների, պրոֆեսորների, ազատ մտածողների, որոնք կողմնակից են մեզ, ինչպէս եւ առհասարակ կողմնակից են ճնշուածների, եւ այդպիսիների պէտք է ծանօթացնել մեր դատի հետ. պէտք է պատռել մթութեան քողը, որով ծածկուած է մեր հարցը, ամրողջ Գերմանիայում։ Ընկ. Թոփչեանի առաջարկը, թէ մեր կովկասի օրգանը պէտք է պաշտօնական լինի եւ խմբագրութիւնն Ընդհանուր Ժողովից ընտրուած՝ անկարելի բան է։ Մի կազմակերպութիւն երկու պաշտօնական օրգան չէ կարող ունենալ։ Ինչ դիրքի մէջ ուզում էք դրէք կենտրոնական օրգանը, ամսաթերթ թէ օրաթերթ.— ուր ուզում էք բանտարկէք, ծընեւում, թէ Թիֆլիսում, նա պիտի լինի մէկ հատ։ Հակառակ ընդհումը առաջ կը բերէ մտքերի քաոսական վիճակ։ Կովկասի քերթն անհրաժեշտ է եւ պիտի գտնուի Ռուսոնական Ժողովի տրամադրութեան տակ, բայց պաշտօնական անուն չպէտք է կրէ։ Միանգամայն կողմնակից եմ ռուսերէն մի քերթի անհրաժեշտութեանը, որ պիտի վերացնէ այն բոլոր թիւրիմացութիւնները հա-

յերի մասին ընդհանրապէս եւ կազմակերպութեան մասնաւորապէս, — ընդունում եմ եւ ամսաթերթի կարեւորութիւնը. բայց դաւառաթերթերը, որոնց մասին խօսք եղաւ, չեն յաջողուի. ուժեր չունենք։ Գուցէ միայն Բաքուում կարող է յաջողուել, այն էլ խլելով մեզանից կազմակերպական ուժերը։ Թող Ընդհանուր Ժողովը թոյլտուութիւն տայ Բաքուին քերթ ունենալու, չեչտելով, որ անէ, երբ միջոց եւ ազատ ուժեր կ'ունենայ։ Համաձայն չեմ ընկ. Մինասեանի մտքին. ի՞նչ բարոյական իրաւունքով դուք «Դրօշակ»ն արխիւէք ուզում դարձնել։ «Դրօշակ»ը պէտք է լինի կազմակերպութեան կուռող օրգանը, նրա գաղափարների եւ շահերի պաշտպանը. պիտի լուսաբանէ ծրագրային հարցերը. պէտք է զբաղուի եւ տաճկահայ դատով։ Նոյնպէս արխիւ չպիտի լինի եւ «Pro Armenia»ն, որ երբեմն ճարահատուած հնացած նիւթեր է տպում. տուէք նոր եւ թարմ նիւթեր, որպէսզի նա մնայ մեր դատի կենդանի բերանը։ Գալով ընկ. Զաւարեանի առաջարկին, թէ «Դրօշակ»ը պէտք է մնայ վճարովի, ինձ անհամոզեցուցիչ է թւում նրա պատճառաբանութիւնը։ Ես համաձայն եմ, եթէ դուք օրինակ 10 ֆր. նշանակէք տարեկան բաժնեգին. բայց նշանակէք 3 ֆր. որ նոյնիսկ տպագրութեան ծախսը չէ հանում, աւելի քան աննպատակայարմար է։ Հակառակ եմ այն կարծիքին, թէ աւելի լաւ է վճարով 1000 օրինակ հրատարակել քան ձրի 10·000 օրինակ։ Տպագրութեան ծախսերը հասարակութիւնն է տալիս, ուրեմն նրա էժան կամ ձրի տարածումը որոշ արդարացում ունի։ Գանձ կայ, հետեւաբար պէտք է աւելցնել «Դրօշակի քանակը։ Այդ պահանջը կը հանէր անպայման 25·000ի, եթէ կովկասում «Դրօշակ»ը ազատ մուտք ունենար եւ Պարսկաստանի արգելքը չլինէր։ Այդքան տարածուելն ես համարում եմ արդիւնք կազմակերպութեան ճամն։ — Վռամեանը երէկուայ երկար ճառի մէջ դարմանալի տրամադրութիւն ցոյց տուեց ամէն բանի մասին խօսելու եւ ամէն բան խառնելու։ Դուք, ընկ. Վռամեան, որ բաւական ծանօթ էք մամուլի գործին, ի՞նչ հիման վրայ առաջարկ էք անում, կապել «Դրօշակ»ը, «Հայրենիք»ը, «Ռազմիկ»ը, որոնք տպագրւում են միմեանցից այնքան հեռու, որպէսզի ամէն լուր իրար հաղորդեն փոխադարձաբար։ Ձեր առաջարկը միանգամայն անգործնական եմ գտնում եւ համամատութիւնը «Թայմզ»ի եւ «Հերալդ»ի հետ՝ չատ միամիտ։ — Եւրոպական պրոպագանդը Վարիզում կենտրոնացնելու ձեր կարծիքը, որոշ չափով ճշմարիտ է։ Բայց այդ կարելի է անել բաւական յաջող, կազմակերպուած ձեւով ե'լ ծընեւում, ինչպէս ցոյց տուեց 7 տարուայ փորձը։ Հարցեր եղան, թէ ինչու համար անյարմար է «Դրօշակ»ը այժմ եւեթ փոխադրել Վարիզ։ Այդ հարցը մանաւանդ անցել է հարեւանցի կերպով, տալով իրաւունք Բիւրոյին՝ փոխադրել, երբ յարմար կը լինի։ Փոխադրելու համար պէտք է տես-

նրւնք նախ մեր Գարիզի բարեկամների հետ, խորհրդակցենք եւ լուրջ քննելուց յետոյ՝ անենք։ Գարիզը ունի այդ կողմից անյարմարութիւններ, որոնց մասին, ասկայն, տիղը չէ այստեղ խօսելու։ Բացի դրանից, չէ՞ որ մտերիմ ապագայում կարող է լինել, որ «Դրօշակը» կովկաս փոխադրուի. քիչ ժամանակի համար Գարիզ փոխադրելը, որ ահագին ծախս կը պահանջէ՝ աւելորդ է։ Երկու խօսք էլ Վառմանի այն կատարելապէս անտեղի եւ անհիմն կարծիքի առիթով, որ նա յայտնեց Քիլարի մասին։ Նոյնն ասեց եւ մէկ ամիս առաջ։ պընդում է, որ «Pro Armenia»ն վատ է տարուում, վերջնում է մի համար ու կրկնում, որ ոչինչ չէ պարունակում, բայց եթէ մի առաջնորդող, լուրեր եւայլն։ Բայց չէ՞ որ նոյնը կարելի է ասել բոլոր Քերթերի մասին. դա յոյժ քննադատութիւն չէ։ Քիլարի եւ Գրեանաձի փոբմաոութիւնը եւ լրջութիւնը այնքան անկասկած են, որ այս ժողովում արտայայտուած այդ տեսակ կարծիքը համարում եմ միանգամայն անտեղի։ — Վերջացնում եմ յիշատակելով ընկ. Արամի երկուսյ մի փոքրիկ ճառը, որ իմ վրայ ճնշիչ ազդեցութիւն արաւ։ Նա ասաց որ Երկրում ունենք տարբեր, որոնք մեր յեղափոխական մտաւորականութիւնից ապաստան են ուսումնասիրութիւններ, գրուածքներ տանկհակաց գաղտ, մեր ծրագրի, Ֆետերացիայի, ազգային խընդրի, մեր ապագայի եւ այլ անթիւ հարցերի մասին։ Ես էլ, եւ թնձ հնա չատ ընկերներ, յամառ մտածել ենք Երկրի ժողովուրդի մասին, որին պատկանում է գիրքը, միտքը, յեղափոխէ խօսքը։ Գրագիտնեքը, լինի գրաւոր թէ բանաւոր, խոյոր գեր ունի կատարելու եւ այս ժողովին է պատկանում առանձապատկել պրոպագանդային աշխատանքը, որովհետեւ առանց այդ գիտակից վերաբերմունքի, յեղափոխական դիմնուրը կարող է գառնալ բանաւոր, ինքը յեղափոխութիւնը՝ բանութիւն։ — Ցաւոյն թող լաւ իմանան Երկրի մէջ եղողները, որ մեզ պատրը այն ընկերները չեն, որոնք թողնում են գրէչ գինքի համար, որոնք նուիրուում են իրենց մասնագիտութեան համապատասխան գործերի, գրգուած ապագայ պահանջից։ Ներկայ Ընդհանուր ժողովը պիտի տանգնէ յատկորոշութիւններ, որպէսզի ընկերները մասնագիտանան, որ ամէն մարդ իւր գործով պարապի։ Տարաբախտաբար կրիտիկայի այսոսկ գործածուած ձեւը, ոչ թէ գրան է տանում, այլ խոխոռում է այդ մասգրութիւնը. օրինակ, մի ընկեր ասում է, թէ Դաշնակցութիւն չկայ, երկրորդը՝ թէ Դաշնակցութիւնը՝ կոնգլոմերատ է՝ խառնուրդ, երրորդը՝ թէ «Յառաջ»ի եւ մեր միջեւ գոյութիւն չէ ունեցել սկզբունքային ոչ մի տարբերութիւն, թէ մեր բանակութիւնները կրել են անձնական հաշիւների բնաւորութիւն։ Ո՛չ, անձնաւորութիւնների դէմ կռուել ենք յանուն Դաշնակցութեան, քանի որ այդ անձնաւորութիւնները եղել են անհաշտ հակառակորդներ Դաշնակցութեան։ Կայ սկզբունքային չափազանց խոշոր տարբերութիւն մեր եւ «Յառաջ»ի միջեւ։ «Մուրճ»ի վերաբերմամբ եւս նոյնն է։ Զաւարեանը հարցնում է, թէ ի՞նչ սկզբունքային տարբերութիւն կայ մեր եւ «Մշակ»ի մէջ։ Ընկերն ինքը չատ լաւ գիտէ, թէ կենսրնական ժողովում ինչպէ՛ս ազմկում էին «մշակ»ականները, երբ մի դաշնակցական հարց էր բարձրացնում՝ վանքապատկան հոգերը գիւղացիներին յանձնելու. ինչպէ՛ս նրանք պրովոկացիա էին անում անգիտակից խաւերի մէջ, թէ գաշնակցականները ուզում են երուսազէմի կալուածները տալ տարաներին. Ներսիսեան գպրոցի հոգաբարձական ընտրութիւնների ժամանակ, «Մշակ»ն ամէն կերպ աշխատում էր գրգռել հատարակական կարծիքը. իսկ նորարոց III գասարանը, ուղղակի աչքի փուշ դարձաւ նրա համար. ակնարկներ էին լինում «Մշակ»ի էջերում՝ թէ այդ գասարանը գաշնակցական հոգաբարձութեան չնարհիւ յեղափոխական մթնոլորտ է ստեղծել գպրոցում, որպէսզի տպչպիով գրուէ կատարութեան ուշագրութիւնը։ Գալով մեր Քերթին, եղած մեղագրանքները ես գանում եմ չափազանցուած։ Մէկ կողմից ասում են, թէ տեսական հարցերով քիչ ենք գրագուել, միւս կողմից էլ, թէ ատկհհաչ գաղտ վերաբերմունք ենք գործ ածել մեր եւ «Մշակ»ի մէջ։ «Մուրճ»ի վերաբերմամբ եւս նոյնն է։ Զաւարեանը հարցնում է, թէ ի՞նչ ակզբունքային տարբերութիւն կայ մեր եւ «Մշակ»ի մէջ։ Ընկերն ինքը չատ լաւ գիտէ, թէ կենսրնական ժողովում ինչպէ՛ս ազմկում էին «մշակ»ականները, երբ մի գ

մինների մէջ. հարկաւոր դէպքում պարտք անելու իրաւունքը պէտք է վերապահուած լինի բոլոր մարմիններին, միայն այն պայմանով, որ ասած պարտքը աւելի չլինի քան մի ամսուայ եկամուտը:

Արամ.— Զանազան քիւրդմաղուքիւններից խոյս տալու համար պէտք է վերացնել կուսակցական կնիքով պարտք վերցնելը, որովհետեւ, ինչ էլ լինի պարտք վերցնելու հետեւանքը, պատասխանատուքիւնը ընկնում է ամբողջ կուսակցութեան վրայ:

Ժողովը 18 ձայնով ընդունում է հետեւեալ որոշումը.— «Կազմակերպութեան համար, կուսակցութեան անունով եւ կնիքով պարտք վերցնել ոչ մի դէպքում չէ թոյլատրւում: Հարկաւոր դէպքում պարտք վերցնել կարելի է միայն անհատական պատասխանատուութեամբ»:

Մնացած առաջարկները ասոնում են ձայների փոքրամասնութիւն:

Մալումեան.— *Ընկ. Վռամեանի հարցին, թէ արդեօք Արեւմտեան Բիւրոյին յանձնուե՞լ է համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման կազմել ամբողջ կուսակցութեան միամեայ հաշուեկշիռ, պէտք է պատասխանեմ, որ այդ բանը տարբախտաբար չէ յաջողուել եւ այդ այն պատճառով, որ մեր բոլոր դիմումները մեր մարմիններին՝ ուղարկելու մեզ իրենց հաշիւները՝ անհետեւանք են մնացել: Այդ դիմումները կրկնուել են յաճախակի, սակայն մեծագոյն մասը մնացել է նոյնիսկ անպատասխան: Առաջարկում եմ Ընդհանուր Ժողովին պարտաւորացնել մարմիններին գոնէ առաջիկայում, ժամանակին իրենց հաշիւները մեզ ուղարկելու. այլապէս կուսակցութեան հաշիւները կը մնան միշտ անկանոն:*

Նախագահ.— *Ժողովի քննութեան է դրւում գրաւոր պրոպագանդի մասին որոշում կայացնելու հարցը: Առաջարկում եմ կարդալ այն բանաձեւերը, որ կան այս հարցի մասին:*

Զաւարեան կարդում է իւր բանաձեւը:

Մալումեան.— *Ընկ. Զաւարեանի բանաձեւը օգտակար կարող է լինել միայն այնպիսի մարդկանց համար, որոնք ծանօթ են այս խնդրին եւ գիտեն դրա չորքը առաջացած պահանջներն ու կարիքները. իսկ ոչ-ծանօթի համար՝ նրանք դատարկ են գործնական նշանակութիւն ունենալուց, որովհետեւ չափազանց անորոշ խօսք է ասել, թէ «Որոշակի կամ «Pro Armenia»ի վիճակի տնօրինութիւնը յանձնւում է պատասխանատու մարդկանց խղճին եւ հանգամանքներին. դա ընդհանուր բան է: Իմ կարծիքով Ընդհանուր Ժողովը պէտք է որոշ հրահանգներ տայ այդ գործով զբաղուող մարդկանց, որպէսզի նրանք որոշ ուղեցոյց ունենան եւ դրա համար ես առաջարկում եմ իմ առանձին բանաձեւը:*

(Հինգ րոպէ ընդմիջում)

Նախագահ.— *Առաջարկում եմ ընկ. Մալումեանին կարդալ իւր բանաձեւը:*

Մալումեան կարդում է բանաձեւի առաջին կէտը:

Վռամեան.— Պէտք է այդ կէտը այնպէս բանաձեւել, որ կուսակցութեան պաշտօնական թերթը մէկը լինի եւ այդ՝ «Որոշակը»:

Շահխաթունեան.— *Ոչ մի հիմք չկայ պաշտօնական համարել միայն «Որոշակը». վազը կարող են Ռուսաստանի կարգերը փոխուել եւ մենք օրինակ «Ճառաջի»ի հակառակ կը դնենք «Դաշնակցութեան օրգան» խօսքերը:*

Նախագահը ձեւակերպում է երկու կարծիքները եւ քուէարկութեան է դնում երկու առաջարկներն էլ:

Առաջին առաջարկը, որ «Որոշակը կուսակցութեան միակ պաշտօնական օրգանը պէտք է լինի» ասոնում է 11 ձայն, իսկ երկրորդ առաջարկը՝ որ Դաշնակցութիւնը, բացի «Որոշակից, կարող է ունենալ ուրիշ պաշտօնական օրգաններ եւս» ասոնում է 17 ձայն. վերջին առաջարկի համեմատ բանաձեւի առաջին կէտը ձեւակերպւում է այսպէս. ««Որոշակը ներկայացնում է իրենից կուսակցութեան կենտրոնական պաշտօնական օրգանը»:

Մալումեան կարդում է բանաձեւի մնացած կէտերը, որոնք մի քանի փոփոխութիւնների են ենթարկւում եւ ընդունւում հետեւեալ ձեւակերպութեամբ.

«Որոշակ» եւ կից հրատարակութիւններ

1. «Որոշակը մնում է կուսակցութեան պաշտօնական կենտրոնական օրգան:

2. Նկատի ունենալով հաղաքական առայժմ անկանոն պայմանները, «Որոշակը պահել արտասահման՝ Ժընեւ: Ներազական մի այլ կենտրոն փոխադրելու հարցը թողնել Արեւմտեան Բիւրոյի եւ խմբագրութեան հայեցողութեան, առնելով եւ Արեւելեան Բիւրոյի համաձայնութիւնը:

3. Արտօնել խմբագրութիւնը, երբ հարկ տեսնէ, «Որոշակը հրատարակել աւելի մեծ ծաւալով եւ ի հարկին անել յատկուածներ:

4. Ձգդուելու համար հետեւել Ընդհանուր Ժողովի նախագծած ուղղութեան, ազատութիւն տալ խմբագրութեանը՝ մտնելու ինչպէս ծրագրային, այնպէս եւ տնտեսական-հաղաքական հարցերի ու ուղղութիւնների մանրամասն մեկնաբանութեան եւ քննադատութեան մէջ: Տեսական խնդիրները նրա մէջ պիտի բանեն՝ առաջնակարգ տեղերից մէկը:

5. Պարտաւորեցնել բոլոր մարմիններին, հաղորդելու պաշտօնական օրգանին՝ կազմակերպական բոլոր ազդերը, որոշումները եւ թռուցիկները: Պաշտօնական թղթեր ունեցող ազդերը չտպագրել որեւէ այլ թերթում, առանց հեղինակող մարմնի թոյլտուութեան:

6. Խմբագրութիւնը կարող է, հարկ տեսած դէպքում, յատուկ վճռորովի թղթակիցներ ուղարկել կամ ունենալ նրկրի մէջ:

7. Բաժանորդագրի բանակի որոշումը թողնել Բիւրո-Խմբագրութեան: Երկիր ուղարկւում է մրի:

8. Տեսական եւ հիմնական հարցերի մանրամասն ուսումնասիրութեան համար՝ հրատարակել «Որոշակին կից, տարեկան 2-3 անգամ, հատորի ձեւով, առանձին հանդէս, մասնակցութեամբ մեր եւ օտար գրողների (խորհրդի որոշումը այս մասին):

9. Նկատի ունենալով մամուլի այժմեան՝ համեմատաբար ազատ վիճակը Անդրկովկասում, հայերէն բրոշիւրների հրատարակութիւնը ծրագրւում՝ սահմանափակել եւ հրատարակել միմիայն այնպիսիները, որոնք հնարաւոր կովկասում տպագրուել չեն կարող:

10. Հրատարակել պրոպագանդայի նպատակով, թիւրքահայ եւ կովկասեան շարժման եւ յեղափոխութեան ներկրուած գրեանքներ, եւրոպական զանազան լեզուներով, գրուած ձեռնհաս անձանց ձեռքով:

11. Ոյժ տալ թուրքերէն, էրմերէն, ֆրանսերէն եւ այլ լեզուի բրոշիւրների, որոնց նպատակը պիտի լինի նպաստել հայերի հետ ապրող այլեւայլ ժողովուրդների համերաշխութեան եւ մերձեցման:

Վռամեան *առաջարկում է Ընդհանուր Ժողովին հետեւեալ որոշումը ընդունել «Որոշակի հրատարակութեան վերաբերմամբ.*

«Արտասահմանի մէջ տարածելու սահմանուած օրինակները թիւը սահմանափակել, վճռուած բաժանորդագրութիւնը կրճատ ըլլալ անհատական կամ կոմիտէներու կողմէ հատուկառ բաժնեգրութեամբ (կոմիտէները պարտաւոր կ'ըլլան իրենց պահանջած օրինակներու գինը վճարել համագումարներուն, հանդէսներու հասոյթներով, կամ իւրաքանչիւր քննադատդէ բաժնեգինի պահանջելով):

Այս առաջարկը ասոնում է միայն 9 ձայն եւ համարւում է չեղածած:

Թոփչեան *կարդում է յանձնաժողովի կողմից առաջարկուած բանաձեւը «կովկասեան հրատարակչական գործունէութեան» մասին, որ հետեւեալն է.*

«Հրատարակել կովկասում

1. Մի օրաթերթ, որ համդիսանալով օրգան Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան շրջանի. պէտք է ընթացիկ տնտեսական-քաղաքական-հասարակական բոլոր հարցերին արձագանգ տայ, դէկավար ունենալով մեր աշխարհահայեացքը եւ արձագանգելով մեր ծրագրային սկզբունքները:

2. Մի ամսագիր (հասարակական-գիտական-գրական): Նրա ծաւալի, բաժինների եւ այլ մանրամասնների որոշումը թողնելով հայեցողական ժողովին:

3. Մի ռուսերէն օրգան (շաբաթաթերթ կամ օրաթերթ) որի բուն նպատակն է լինելու պարզաբանել հայ կեանքը եւ առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան իսկական պատկերը Ռուսաստանի հասարակութեան առաջ եւ առանձնապէս պրոպագանդ մղել յօգուտ տեղեկատուի դատի:

4. Շարունակել «Ճառաջի գրադարանի հրատարակութիւնը (առնուազն 100 տպագրական թերթ — 3200 էջ) լոյս ընծայելով մեր ծրագրին ու գործելակերպին համապատասխան իմքնուրոյն եւ թարգմանական գրուածքներ, գիտական-հասարակական ընդհանուր հարցերի շարքում կարեւոր տեղ տալով նաեւ տնտեսական-սոցիալական ուսումնասիրութեան վերաբերեալ աշխատութիւնների (տեղեկատու բարբառով):

5. Այդ որոշումները իրագործելու համար Ընդհանուր Ժողովը յատկացնում է 30·000 ռուբլի օժանդակութիւն, ձրա գործադրութեան մանրամասները թողնելով կովկասի հայոցական Ժողովի որոշման:

6. Իբրեւ պատասխանատու մարմին կովկասում առաջ տարուելիք գրաւոր պրոպագանդի, Ընդհանուր Ժողովը ընտրում է 4–5 հոգուց բաղկացած մի խմբագրութիւն, որը առաջնորդուելով մեր հիմնական աշխարհահայեացքով ու ծրագրով եւ լրացուցիչ հրահանգներ ստանալով կովկասեան հայոցական Ժողովից, պէտք է իրականացնէ իր վրայ դրուած պարտականութիւնը»:

Ռոստոմ.— *կովկասեան թերթի հրատարակութիւնը տեղական բնոյթ ունի, հետեւաբար բիւրեղէն պէտք է դուրս գայ օրակարգից եւ թողնել հայոցական Ժողովին:*

Թոփչեան.— *Բիւրեղեի հարցը թողնել հայոցական Ժողովին չէ կարելի, որովհետեւ այժմ կովկասը համաձայն մեր որոշումների նոյնպէս «Ներկիր» է եւ Տաճկահայաստանի նման՝ հատասրապէս ենթակայ Ընդհանուր Ժողովի հոգածողութեան եւ հակոդութեան:*

Նախագահը *առաջարկում է բանաձեւը կարդալ կէտ առ կէտ:*

Վռամեան.— *կովկասում առանձին ամսաթերթը իւր բիւրեղեով չկիսի ծանրացնել կուսակցութեան վրայ, մանաւանդ որ այդպիսով անհատական նախաձեռնութեան ոգին մեռնում է:*

Թոփչեան *չեչտում է ամսագրի անհրաժեշտութիւնը մի կողմից, իսկ մեւս կողմից էլ այն հանգամանքը, որ եթէ կազմակերպութիւնը այդ գործը իւր վրայ չառնէ, հազիւ թէ դոնուին անհատներ, որոնք միեղ ունենան այդ ծանրութեան տակ մտնելու, եւ պէտք է, որ Ընդհանուր Ժողովը պէտք է իւր վրայ վերցնէ ամսագրի հրատարակութեան գործը:*

Վռամեան ընդհատում է Թոփչեանին եւ մի քանի անկարգներ տեղի կովկասեան թերթի՝ «Ժամանակ»ի խմբագրութեան մասին, որից ընկ. Թոփչեան վերաբերուած հրաժարում է վիճաբանութիւնը մոռանալուց, առաջարկելով արձանագրել հետեւեալը՝

Թոփչեան.— *Բողոքելով Ժողովում արտայայտուած անվայել կարծիքների դէմ կովկասեան գրաւոր պրոպագանդի վերաբերեալ եւ այդ ձեւով անհարիին համարելով հարցերի լուրջ լուծարութիւնը եւ լուծումը, այդ խնդրի չուրջը կատարուող բոլոր քուէարկութիւնների ընթացքում ձեռնպահ եմ մնում:*

Նախագահը, *իրրեւ ժամանակի անդամ, բացատրում է այն կարեւոր նշանակութիւնը, որ կարող է ունենալ կովկասեան ամսագիրը Դաշնակցութեան յառաջադիմութեան համար. չեչտում է, որ կովկասեան ամսաթերթը զուտ տեղական բնաւորութիւն չունէր, այլ ընդհանուր դաշնակցական եւ դրա համար Ընդհանուր Ժողովը պէտք է այդ մասին որոշում տայ եւ ոչ թէ հայոնական Ժողովը:*

Ժողովը 19 ձայնով ընդդէմ 3ի ընդունում է բանաձեւի երկրորդ կէտը (ամսաթերթի հարցը), եւ անցնում ուսերէն լեզուով մի դաշնակցական լրագիր հրատարակելու հարցին (բանաձեւի 3րդ կէտ):

Զաւարեան.— *Այն բոլոր հարցերը, որոնք կովկասում ունեցել են մեր հրատարակչական գործունէութեան են վերաբերում, այդ բոլորը տեղական բնոյթ ունեն եւ այդ հարցերի մասին խօսելու տեղը այստեղ չէ, այլ կովկասեան պատասխանատու ժողովների եւ մարմինների մէջ: Գալով ուսերէն լեզուով լրագիր հրատարակելուն, պէտք է նկատեմ, որ ինչպէս գրական այլեւայլ ապարդիւնների, նոյնպէս եւ այստեղ, մենք բաւարար չափով ուժեր չունենք. եթէ ուժեր ունենայինք, նրանք կարող էին երեւան գալ նաեւ ուսական թերթերում. սրանք մեզ ոչ մի տեղ կը տան իրենց էջերում, այլեւ կը վճարեն այդ բանի համար: Ես այն կարծիքին եմ, որ թէկուզ այստեղ այդ թերթը հրատարակելու հարցն էլ անցնելու լինի, մենք անկարող ենք լինելու նրան գլուխ բերելու:*

Ժողովը ձայների մեծամասնութեամբ ընդունում է ուսերէն լեզուով թերթ հրատարակելու որոշումը (բանաձեւի 3րդ կէտ):

Բանաձեւի 5րդ կէտը՝ կովկասեան հրատարակչական գործունէութեան յատկացնել 30·000 ռուբլի, Ժողովը յետաձգում է մինչեւ Ընդհանուր բիւրեղեի կարգադրութիւնը եւ անցնում է բանաձեւի յաջորդ կէտին՝ որով առաջարկւում է, որ Ընդհանուր Ժողովը ընտրէ կովկասեան թերթի խմբագրութիւնը:

Շահխաթունեան.— *Ես հակառակ եմ այդ կէտին:*

Ժողովը մերժում է կովկասեան թերթերի համար Ընդհանուր Ժողովում խմբագրութիւն ընտրելու հարցը եւ ընդունում է ընկ. Ազամի հետեւեալ ձեւակերպումը՝ «կովկասեան թերթի խմբագրական կազմի ընտրութիւնը թողնւում է հայոնի բարձրագոյն իրաւասու Մարմնին»:

Վռամեան *առաջարկում է իւր ձեւակերպումը, որ հետեւեալն է՝ «կովկասեան թերթի խմբագիրը կ'ընտրուի հայոնական Ժողովէն, Արեւելեան Բիւրոյի առաջարկած ցանկի վրայ: Արեւելեան Բիւրոն պատասխանատու է այդ թերթի խմբագրութեան համար»:*

Ժողովը ձայների մեծամասնութեամբ ընդդէմ երկուսի մերժում է այս ձեւակերպումը:

Նախագահ.— *Ի նկատ ունենալով, որ ընկերներից ոմանք անորոշութիւն են գտնում ընկ. Ազամի առաջարկի հետեւեալ բարձրագոյն իրաւասու մարմին» խօսքերի մէջ, առաջարկում է Ժողովին պարզել, թէ այդ խօսքերի տակ ի՞նչ է հասկացւում: Բանաձեւի կողմնակից 21 հոգուց 8ը այդ խօսքերի տակ հասկանում են հայոնական Ժողով, իսկ 13 հոգին ո՛չ: Այսպիսով ընկ. Ազամի առաջարկը կորցնում է իւր իրական ուժը:*

Նախագահը համարում է այս հարցը չպարզուած եւ յետաձգում է մինչեւ յաջորդ նիստը:

Զարդարեան *առաջարկում է հետեւեալը. «Արեւմտեան Բիւրոյի շրջանի կ. կոմիտէներու նախաձեռնութեամբ հրատարակուող («Հայրենիք» եւ «Ժողովուրդ») կամ հրատարակիչի կնոջ պաշտօնական թերթերու պահպանման կամ զարգացման համար, եթէ պէտ-*

ը զգացուի, արտօնել Արեւմտեան Բիւրոյի Ռայոնական ժողովը՝ տեղական եկամուտի 20%էն որոշ տոկոս մը յատկացնել տարեկան»:

Ժողովը որոշեց այս հարցի քննութիւնը յետաձգել յաջորդ նիստին:

Նախագահը ժողովի հայեցողութեանն է դնում ընկ. Ջաւրեանի այն հարցը, թէ ճուլական Մարմնի անդամ Սաֆոն ե՞րբ պէտք է ներկայացնէ իր պատասխան-զեկուցումը:

Ժողովը որոշում է յայտնել Սաֆոյին, որ նա մինչեւ ամսի 17ը անպատճառ գայ ժողովին իր բացատրութիւնը տալու՝ յայտնելով նրան, որ եթէ նա որոշուած ժամանակին չգայ, ժողովը կը տայ նրա մասին իր որոշումը նրա բացակայութեան:

Նախագահը ժողովի ջննութեանն է ներկայում ջննիչ յանձնաժողովի պատրաստած բանաձեւը «Միհրաճական խնդրի մասին»:

Մուրատ.— *Ես դէմ եմ, որ այդ խնդրի մասին չէ կարելի վերջնական եզրակացութեան յանգել, առանց կարդալու այն բողոքները, որ Միհրաճական կուսակցութեան դէմ ներկայացրել են Հնչակեան ժողովին ուղղուած են:*

Արամ.— *Այդ նամակների մասին այստեղ խօսք չպէտք է լինի: Ջննչ խօսում այն ընկերների մասին, որոնք այս կամ այն պատճառով դժգոհ են մեր մարմիններից եւ ուզում են իրենց ձայնը լսելի անել Հնչհանուր ժողովում. Նրանց մենք անկասկած պէտք է լսենք, բայց միայն երբ այդ խնդրին կը դանք. առայժմ մենք խօսում ենք Միհրանի եւ ընկերների մասին իբրեւ զեղծարարների եւ ոչ թէ իբրեւ բողոքողների:*

Ժողովականներից շատեր է նկատի ունենալով, որ չատերը չգիտեն Միհրանական կուսակցութեան հոսանքը, այն յանգամանքների հետ, որ գործել է Միհրանը իւր մի խմբակի հետ, առաջարկում են ընդ. Ռուսոմին մի յատուկ զեկուցում պատրաստել Միհրանական կուսակցութեան մասին: Ժողովը հաստատում է այդ առաջարկը եւ անցնում է յանձնաժողովի բերած բանաձեւի ընթերցանութեան (տես յաջորդ նիստին):

Մուրատ.— *Նախ առաջարկում եմ կարդալ բանաձեւը կէս առ կէս: Բացի դրանից առաջարկում եմ բանաձեւի մէջ չթերել այն-պիսի մեղադրական կէտեր, որոնք բոլորովին պարզ չեն: Միհրանի եւ իւրայիններէն գործած մի քանի յանցանքները այնքան ծանր են, որ լիովին բաւական են այդ մարդկանց ամենածանր պատժի ենթարկելու համար: Ջպէտք է կէտեր մտցնել մեր մեղադրութեան մէջ, որ յետոյ յարձակման նիւթ դառնային մեր դէմ:*

Թոփչեան *մեծաւոր է Մուրատի առաջարկին:*

Ճանճմաժողովը կարդում է կէտ առ կէտ: Առաջին կէտը անցնում է անփոփոխ: Բանաձեւի մնացած կէտերի ջննութիւնը քաղնւում է յաջորդ նիստին:

Այս նիստում, պրոպագանդի եւ հրատարակութիւնների վերաբերմամբ ժողովը ընդունեց երեք բանաձեւ, որոնց երկուքը բերուած են վերեւում եւ երրորդը հետեւեալն է.—

Պրոպագանդ եւ հրատարակութիւններ

Հիմնուած այն տեսակէտի վրայ, որ գլուխ եւ բանւոր լայն պրոպագանդը կարեւոր գործօններից մէկը պիտի լինի կազմակերպական գաղափարները տարածելու եւ ձեռնարկները յաջողցնելու համար, Ընդհանուր ժողովը որոշից առաջիկայում իւր ուժերի կերպով առաջ մղել պրոպագանդի գործը այլ հիմունքներով, որոնք մշակուած են նախորդ ժողովում եւ այլ լրացումներով, որոնք կատարուելիք ներկայ ժողովի ընթացքում:

Ա. *Եւրոպական պրոպագանդ* (Ամերիկան եւս ու այլ վայրեր)

1. Գրաւոր — լրագրեր, գրքոյկներ եւն.:

2. Բանաւոր — կոնֆերանսներ, միթինգներ, պարլամենտական դիմումներ եւն.:

Բ. *Ռուսահայոնի պրոպագանդ*

1. Գաղտնական օրգան, պարլամենտական դիմումներ, հրատարակութիւններ եւն.:

Գ. *Կովկասեան պրոպագանդ*

1. Գրաւոր — լրագիր, հանդէս, գրքոյկներ,

2. Բանաւոր — ժողով, միթինգ, դիմումներ եւն.:

Դ. *Գրոպագանդ Երկրում*

1. Գաղտնի շրջաբերականներ, հայ, թուրք, ֆիւրտ եւ այլ լեզուներով:

2. Գրոպագանդիստներ, շրջիկներ (բանւոր):

Համապատասխան մարմիններուն յանձնելով թէ՛ գրաւոր եւ թէ բանաւոր պրոպագանդի գործը, որոշուած նախահաշուի սահմաններում, Ընդհանուր ժողովը յանձնարարում է վերհաւատել հետեւեալ որոշումներով՝

1. «Դրօշակ» եւ կից հրատարակութիւններ (տես սոյն արձանագրութիւնը):

2. Կովկասեան հրատարակութիւններ (տես սոյն արձանագրութիւնը):

3. «Pro Armenia»

ա. Շարունակել Գարիգի «Pro Armenia»ի հրատարակութիւնը, ֆիյարի խմբագրութեամբ, ճանաչելով թէ՛ օրգանի եւ թէ խմբագրութեան մարմնի մատուցած ծառայութիւնները հայց շարժման:

բ. Արտօնել ֆիյարին հրատիրել մի օգնական-խմբագիր, թէ՛ վարչական մասը վարելու եւ թէ թերթի խմբագրական գործին օգնելու համար:

գ. Մտցնել «Pro Armenia»ի էջերի մէջ տեղեկութիւններ Դաշնակցութեան գործունէութեան մասին:

դ. Հաստատել 12–15 հազար փրանկի բիւջէ «Pro Armenia»ի համար:

ե. Փակել Լոնդոնի «Pro Armenia»ի հարցը եւ նրա հրատարակութիւնը համարել՝ ներկայ պայմաններում՝ անկարելի, թողնելով անգլիական պրոպագանդի գործը Լոնդոնի մեր հարցին բարեկամ թերթին:

զ. Ներքին մամուլի մէջ պրոպագանդ անելու համար, բիւջէի սահմանած չափով, թղթակիցներ պահել:

է. Դրամապէս ջպատել իտալիայում հրատարակուող թերթին՝ գրադուելու մեր հարցով:

Նիստը փակուեց ժամը 7ին:

85ՐԴ ՆԻՍՏ (16 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Համօ Մհերեան:

Ներկայ են 25 ժողովականներ:

Բացակայ են՝ Իսահակեան, Մուրատ, Ռուսոմ, Անդրանիկ (հիւանդ), Ջաւրեան:

Օրակարգն է «Ցեղափոխական ուրիշ կուսակցութիւնների հետ՝ համերաշխութեամբ գործելու» հարցը, որի մասին զեկուցում են տալիս ընկերները՝ Համօ եւ Մինասեան:

Համօ.— *Նախքան բուն հարցին անցնելը՝ պարտք եմ համարում յայտնել հետեւեալը. Հ. Յ. Դաշնակցութիւնն, իբրեւ աշխատաւորական-սոցիալիստական կուսակցութիւն, համերաշխութեան մասին խօսելիս ամենից առաջ պիտի չեշտէ այն բանը, որ նա յարում է համայն աշխարհի բոլոր աշխատաւորական կուսակցութիւններին, որոնց հետ միասին կազմում է միջազգային սոցիալիստական կուսակցութիւն, եւ այս աչքի առաջ ունենալով՝ մենք պիտի անպատճառ ընդունենք Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի առաջարկը:*

Միհնասեան *կարդում է զեկուցումը, որ հետեւեալն է.*

«Համերաշխ ձեռնարկներու գաղափարը Դաշնակցութեան մէջ վաղուց է որ գոյութիւն ունի, բայց իրականութեան մէջ հաստատ հող չէ գտած, այնպէս որ այդ գաղափարը մնացած է մեռած տառ: Այն համերաշխութիւնը որ վերջերս իրերու բռնութեամբ ստեղծուեցաւ Ռուսաստանի այլեւայլ ազգութիւններու յեղափոխական տարրերուն միջեւ, Թիւրքիոյ մէջ անհնար եղած է, որովհետեւ քաղաքական միեւնոյն հանգամանքները չեն ներկայացած, որովհետեւ Թիւրքիոյ դժգոհ ազգութիւնները յեղափոխական գիտակցութեան միեւնոյն աստիճանի վրայ չեն գտնուիր, կամ իրենց շարժումները լոկ տեղական եւ քրոնիկ բնաւորութիւն են ունեցած, տարբեր շարժառիթներէ բխած: Այդ դժգոհութիւնները որոշ քաղաքական ծրագրի մէջ չեն պարփուած, այլ միայն արտայայտուեր են մինչեւ հիմա վաղանցիկ խլրտումներով, առանց ունենալու որոշ իտէալական սկզբունքի մը կապակից շարունակութիւնը եւ թափը: Մեր համերաշխութիւնը ցարդ կայացած է մակեդոնացիներու հետ, այն ալ փուտ բարեկամական հողի վրայ, իբրեւ տառապակից քրիստոնեայ ժողովուրդներ՝ միեւնոյն իսլամական լուծին տակ: Այդ սահմանափակ համերաշխութիւնը չէ կրցած ըլլալ ապստամբական գործակից նիւակակցութիւն մը՝ ընդհանուր թշնամուն դէմ. այնպէս որ մենք միշտ միայնակ մնացած ենք՝ Թիւրքիոյ ուժերուն դէմ: Բայց փոխադարձ բարոյական եւ որոշ դաւադրական աջակցութիւններով օգտակար եղած ենք իրարու եւ մեր երկուքին դատը Եւրոպայի մէջ գրեթէ յաճախ ձեռք ձեռքի քալած է: Նկատի ունենալով մեր որդի յեղափոխական դրութիւնը, եւ միանգամայն Թուրքիոյ մէջ, ռուսական եւ պարսկական շարժումներուն նման եւ անոնց ապդեցութեան տակ, յեղաշրջում մը գալու հաւանականութիւնը, որուն նշանները արդէն սկսած են ծայր տալ, եւ որուն կամայ ակամայ պիտի ենթարկուինք, մեզի կը մնայ, այդ նախատեսութեամբ, այժմէն որոշել մեր դիրքը գալիք պատահականութիւններու առջեւ: Կան Թուրքիոյ մէջ այդպիսի համերաշխութեան տարրեր, կարելի՞ է անոնց մէջ համերաշխութիւն գոյացնել եւ համերաշխութեան պահուն՝ քաղաքական ի՞նչ ծրագիր ընդունիլ, որ գոհացում տայ իւրաքանչիւր ազգութեան ուրոյն իրաւունքներուն կամ պահանջներուն: Թուրքերը կը կապմեն այդ համերաշխութեան մէջ կարեւոր տարրը, որոնց հաստատական կամ բացասական դիրքէն կախում ունի համերաշխութեան գաղափարի յաջողութիւնը կամ անյաջողութիւնը: Թուրքերու մէջ երկու կուսակցութիւն կայ, մէկը կուտ ազգայնական սահմանադրական, որ չ'ընդունիր առանձին ազգութիւններու համար առանձին իրաւունքներ՝ այլ կ'ընդունի օսմանեան քաղաքացիութիւն, Միդհադ փաշայի, քիչ շատ բարեփոխուած սահմանադրութեան հովանաւորութեան տակ: Այդ ուղղութեան պարագլուխն է Ահմէդ Ռիփա: Միւսը՝ Թուրքիոյ ներկայ իրականութիւնը աչքի առաջ ունենալով, աւելի ապատական ուղղութիւն ցոյց կու տայ, ընդունելով՝ որոշ ապակեդրոնացումի մը սիստեմը. այսպիսով կը յուսայ մասամբ գոհացում տուած ըլլալ դժգոհ ազգութիւններու պահանջներուն եւ թուլցնել անոնց կենտրոնախոյս ձգտումները, որոնք կը սպառնան օսմանեան կայսրութեան ոչ միայն ամբողջութեան այլ մինչեւ իսկ գոյութեան: Այդ կուսակցութեան պետն է իշխան Սաբահեդդին: Այս վերջինը իւր դէմ ունի ապգայնականներու զօրաւոր եւ անհաշտ տարր մը, որ այդ ծրագրի մէջ կը կարծէ տեսնել արդէն Թուրքիոյ ապագայ բաժանումի մը սաղմը: -- Մենք պէտք է օգտուենք ազատականներու տրամադրութիւններէն եւ ուժ տանք անոնց պրոպագանդին՝ հետզհետէ կանոնք բերելով աւելի լայն հայեցակէտի վրայ: Համերաշխութեան միւս տարրերն են՝ Թուրքիոյ դժգոհ տարրերը՝ մակեդոնացիք, ալբանացիք, արաբները, սիրիացիք, քիւրտերը եւ ասոնց իւրաքանչիւրը, մէկէ աւելի անգամներ, Թուրքիոյ դէմ ցոյց տուած է իր անհաշտ դժգոհութիւնը ապստամբական շարժումներով եւ որոնց մէջ, քիչ շատ շեշտուած են եւ հետզհետէ ալ կարկառուն կերպով կը շեշտուին յեղափոխական եւ ազգայնական ինքնուրոյն եւ նոյնիսկ սեպարատիստ ձգտումները: Թուրք կառավարութիւնը ատոնցմէ ոմանք կը լռեցնէ կրօնի արուեստական կապերով, բայց այդ չէ կարող երկար տեւել: Համերաշխութիւնը պիտի ծառայէ առաջադրուած քաղաքական ծրագրի մը իրագործումին, որուն նախաշաւիղը եւ ջատագովը Դաշնակցութիւնը ինքը պիտի ըլլայ: Դաշնակցութիւնը պէտք է աշխատի յաջողցնել այդ համերաշխութիւնը համախմբելու համար այդ դժգոհ տարրերը՝ քաղաքական ծրագրի մը շուրջը, որ ունենայ ֆեդերատիֆ բնաւորութիւն: Այդպիսի համախմբում մը, իբր պատկառելի ուժ մը, բարոյապէս կրնայ ճնշել երիտասարդ թուրքերը, նոյնիսկ թուրք կառավարութիւնը, որոնք կամայ ակամայ պիտի տեղի տան իրենց հպատակ ազգութիւններու արդարացի պահանջներուն կամ համակերպին իրենց կայսրութեան պառակտումին: Ձմո-

ռանանք ըսել, որ 1902-ի վերջը Ժընեւի մէջ «Fédération Ottomane» անունով թերթի մը հաստատութեան համար, թուրք, հայ, ալբանացի, մակեդոնացի գրողներէ մարմին մը կազմուեցաւ, բայց թերթին յաջողութեան կէս ճամբին, թուրքերէն մաս մը ձեռնպահ մնացին ինչ ինչ պատճառներով եւ գործը վիժեց, հապիւ երկու թիւ լոյս տեսնելով: Այդ համերաշխութիւնը հաստատուն ընելու եւ նուիրագործելու համար, անհրաժեշտ է կազմել համաժողով մը ուր հրաւիրուին կարեւոր բոլոր տարրերը: Հոն օսմանեան կայսրութեան բարենորոգումներու եւ ռեժիմի մասին ինչպէս նաեւ ազգութիւններու ընդհանուր կայսրութեան հետ ունեցած յարաբերութիւններու մասին երկար քննութիւն եւ վիճաբանութիւններ տեղի կ'ունենան, որոնք լուսաւորելով մտքերը, գաղափարական համերաշխ հոսանք մը կը ստեղծեն եւ կը շաղկապեն այդ չէզոքացած տարրերը, որոշ գործնական հողի եւ ուղղութեան մը վրայ: Ցետոյ այդ համաժողովը, պըրոպագանդի ապդու միջոց մըն է միւս ազգաբնակութիւններուն մէջ՝ աւելի գիտակից եւ պահանջկոտ ընելու անոնց ազգայնական իրաւապահանջները (revendication): Իսկ հայկական դատը, որ ցարդ միս մինակ էր՝ Թուրքիոյ հանդէպ, իր շուրջը հաւաքելով այդպիսի ուժեր ընդհանուր թշնամուն դէմ կը վինէ կանոնք եւ կը ստիպէ զայն անձնատուր ըլլալ եւ ընդունիլ իրեն առաջադրուած համադրագիրը: Հայկական հարցը դրականապէս կը շահի եւ իր վոհողութիւնները անհամեմատ կերպով կը նուազին ցեղային թշնամութիւններու դադարումով, եթէ կարողանանք հեռատես տակտիկով մը կատար ածել այդ ծրագիրը: Որովհետեւ ինչ ալ ըլլայ, մենք որ այնքան անհուն վոհողութիւններ ըրած ենք մեր ազատագրութեան դատին համար, չենք կրնար յուսահատօրէն հրաժարուիլ մեր պահանջներէն: Սակայն ի հարկին գործելակերպը կարելի է փոխել, առանց նպատակը փոխելու: Համերաշխութեան գաղափարը մեկի համար խոստմնալից կռուան մըն է: -- Եթէ այդ համագումարը անմիջական հետեւանք չունենայ, ապագայի համար բեղմնաւորող փորձ մըն է, որու իրականացման համար չպէտք է խնայենք մեր ջանքերը եւ խորհուրդները: Մեր կողմէ այդ հարցը կանխօրօք կամ կիսապաշտօն կերպով արծարծելով, այդպիսի համագումարի նախաձեռնութիւնը լաւագոյնն է տալ այն թուրք կուսակցութեան, որ իր սկզբունքով քիչ շատ կը մօտենայ մեզի: Մենք այսպիսի ծրագրի մը յաջողութեան մէջ լիուլի գոհացում կը գտնենք մեր ինքնուրոյն եւ մարդկային պահանջներուն -- եթէ միջազգային անբարեացակամութիւններու եւ հաշիւներու չբախի: Այդպիսի թուական մը պէտք է ողջունել իբր նոր դարագլուխ մը մօտաւոր Արեւելքի պատմութեան մէջ: Ազգութիւնները պահելով իրենց ազգային ինքնուրոյնութիւնը, իրենց հայրենի հողի վրայ — ինչ որ էականն է մեկի համար -- կ'ապահովեն նաեւ օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, որուն հետեւանքները վերջ ի վերջոյ վինաթափ պէտք է ընեն անհաշտ եւ ապգամոլ, նոյնիսկ համիսլամ թուրքերը, երբ անողոք իրականութեան դէմ առ դէմ գտնուին: Եթէ Ռուսաստանը իրագործէ ապակենտրոնացումի սիստեմը, մեծապէս կրնայ նպաստել այդ գաղափարին Թուրքիոյ մէջ: Սակայն պաշօնապէս այդօրինակ քայլ մ'առնելով, յանձնառու պատասխանատուութեան մը տակ մենք մեզ կաշկանդելէ առաջ, որուն հետ, բնականաբար, մեր գործերը պէտք է համապատասխան ընթանան, մենք մեր հարցին լուծման համար գոյ եղած միջոցները պէտք է շահագործենք եւ սպասենք, ինչպէս Լահէի ժողովը, որ մօտալուտ է եւ ուրիշ դիւանագիտական դիմումներ: Կայ նաեւ թուրք-բուլղար վերահաս պատերազմի մը հաւանական եւ նոյնիսկ կարելի երկիւղը. այդ պատերազմը կարող է արեւելեան հարցը վերարծարծել, հետեւաբար եւ հայկականը: Ինչ ալ ըլլայ, մինչեւ Լահէի ժողովը, անուղղակի կերպով աշխատելու ենք համերաշխութեան գաղափարը արծարծել եւ թրքահպատակ ուրիշ դժգոհ ազգութիւններու հետ յարաբերակցիլ եւ մերձեցում առաջ բերել: Եթէ Լահէի ժողովին մէջ մեր հարցը ապարդիւն անցնի, ժողովէն յետոյ յուսելով համերաշխութեան խնդիրը, պէտք է փութացնել թրքահպատակներու միջազգային համաժողովի գումարումը, իբր գոհացուցիչ եւ բանաւոր լուծումներէն մէկը մեր տարաբախտ եւ ողբերգական հարցին, առանց սակայն Երկրի ուժգին պատրաստականութեան գաղափարէն հրաժարելու մինչեւ այն օրը՝ երբ առաջադրուած եւ ցանկալի ծրագիրը հող եւ կարելիութիւն կը գտնէ, ապագայ որեւէ յուսախաբութեան կոհ չըլլալու համար:

Օտար տարրերու հետ համերաշխութեան ձեռնարկել բնականաբար հայ յեղափոխական մարմիններու հետ համերաշխութեան գաղափարը եւս կը շօշափէ: Որովհետեւ չենք կրնար մեր ձեռնարկը հակասութեան մէջ դընել միւս կուսակցութիւններու ազգայնական տարամերժ գործունէութեան հետ, հարկաւոր է ուրեմն, որ բոլոր հայ յեղափոխական մարմինները կանխաւ համաձայնութեան գան որոշ քաղաքական ծրագրի մը սկըզբունքին եւ ուղղութեան մասին, ապագային իրար չըքանդելու համար: Համերաշխութեան գաղափարը հայ յեղափոխական մարմիններու միջեւ, արդէն կ'արծարծուի անխտիր բոլոր կուսակցութիւններու թերթերուն մէջ, իբրեւ ազգային կամքի արտայայտութիւնը ազգային աղէտին առջեւ: Անշուշտ համերաշխութեան համար պայմանադիր մարմինները պէտք է լրացնեն յեղափոխութեան ուժին եւ գործունէութեան որոշ պայմաններ, հնչակեաններու մասին այստեղ բացատրական տեղեկութիւններ չտրուեցան. անուանակա՞ն թէ իսկական կուսակցութիւն են եւ որոնք կարեւոր ուժ կը ներկայացնեն: Եթէ իրօք յեղափոխական ուժ են, գործնականի մէջ պէտք է հաշտուինք անոնց հետ, եթէ չենք ուզեր որ մեր պատրաստութիւնները եւ գործունէութիւնը, հակամիտումի մէջ, վտանգուին կամ առանձնակի անհամընթաց եւ հակադիր գործողութիւններով պատճառ ըլլանք մեր ձեռնարկ-

ներու վիժումին: Կ'ընդունիմ գործնական դժուարութիւնները այդ համերաշխութեան սահմանները ճշդելու մասին, սակայն պէտք է ընդունիլ նաեւ բարոյական այն անհուն ապդեցութիւնը, որ կրնայ առաջ բերել հայ ժողովուրդի վրայ, երբ տեսնէ որ մենք կուսակցական շահերու համար չէ որ կը կռուինք, այլ ընդհանուր ազգին շահերը նկատի ունինք: Աւելի քան որեւէ ժամանակ, հարկաւոր է որ ընդհանուր ազգին ակնդէտ սպասումին, Դաշնակցութեան համաժողովը բանաւոր որոշում մը կայացնէ այդ մասին եւ ցոյց տայ հաշտարար եւ գերապանցօրէն հայրենասիրական ոգի մը, որով հայ ժողովրդի աչքին մեծապէս պիտի բարձրացնէ իր բարոյական հմայքը եւ ապդեցութիւնը»:

Համօ.— Մինչդեռ Տաճկաստանում կանգ չենք առել որոշ յեղափոխական կուսակցութիւնների վրայ. այն պատճառով, որ դեռ չգիտենք, թէ որքան հեռուներ են անցնելու տեղի ունեցող չարժումների ալիքները, Ռուսաստանում մենք ստիպուած ենք այդ անելու. այստեղ արդէն կեանքը առաջ է բերել իւրաքանչիւր ազգութեան չրջանում մի քանի քաղաքական հոսանքներ, մի քանի կուսակցութիւններ եւ մենք պէտք է որոշենք, թէ դրանցից որո՛նց հետ կարող ենք համերաչխ գործել: Անշուշտ, այն կուսակցութիւններին միայն համերաչխութեան ձեռք կը մեկնենք, որոնք մօտ են լինելու մեզ՝ իրենց ձգտումներով, սոցիալիստական աչխարհահայեացքով: Սրանց մէջ եւս, սակայն, հարկաւոր է որոշ խորութիւն դնել.— սոցիալ-դեմոկրատների հետ մենք երբեք չենք կարողանայ համերաչխ լինել, մէկ որ նրանք նախ տարբերւում են մեզանից պատմափիլիսոփայական աչխարհահայեացքով եւ ապա՝ բոլորովին այլ կերպ են նայում ազգրարային հարցի վրայ եւ պաչտպանում քաղաքական կազմի այլ սիստեմ: Մենք կը մօտենանք միայն այն սոցիալիստներին, որոնք այդ կէտերում համամիտ են մեզ. դրանք են՝ լեհական ու բելոռուսական սոցիալիստները, ռուս սոցիալիստ-յեղափոխականները, վրացի սոցիալիստ-ֆեդերալիստները են.: Բոլոր սրանց հետ պէտք է միանալ, կազմել մի ընդհանուր դաչնակցութիւն, միանգամայն պահելով մեր կատարեալ կուսակցական անկախութիւնը: Մանաւորապէս, կովկասում մօտ են մեզ՝ էս-էրներն ու վրացի ֆեդերալիստները, բայց առաջինները Թոյլ են, իսկ ֆեդերալիստների վերաբերմամբ պէտք է ասել, որ նրանց եւ մեր միջեւ որոշ տարաձայնութիւն է առաջացել վերջին ժամանակներում. տարաձայնութեան պատճառը մէկ կողմից այն խիստ արչաւանքն է, որ վրացի սոցիալ-դեմոկրատները վարում են Դաչնակցութեան դէմ. միւս կողմից այն հանգամանքը, որ մենք ամբողջ թափով չենք կարողացել մասնակցել ընդհանուր չարժումներին: Հարկաւոր է նկատել, որ ֆեդերալիստները այնպիսի քայլեր են անում, որ մենք սկսել ենք կասկածել՝ իսկապէ՞ս մաքուր սոցիալիստներ են նրանք, աղնուականութիւնը հետզհետէ ուժեղանում է նրանց չարքերում: Ապա Թուում է, որ ֆեդերալիստները օրէցօր Թուլանում են. պետական դումայի ընտրութիւններին նրանք ոչ միայն չկարողացան իրենց թեկնածուներից մէկին գոնէ անցկացընել, այլեւ չունեցան՝ մեծ Թուով պատուիրակներ. անցեալ ընտրութիւններին, Թիֆլիսում, նրանք նոյնիսկ վտանգաւոր էին սոցիալ-դեմոկրատներին, բայց այս անգամ հազիւ մէկ պատուիրակ երեւաց նրանց կողմից: — Վրաց սոցիալ-դեմոկրատները, որ վրացի ժողովրդի 90% են կազմում, չեն կարող համերաչխ լինել մեզ հետ, քանի որ նրանք եւս տոգորուած են դէպի հայերը ցեղային ատելութեամբ. իրենց միջազգային են կոչում, բայց ամենախիստ չովինիստներ են: Մնում են Թուրքերը. ճիշդ է, նրանց մէջ դեռ գոյութիւն չունի ոչ մի կուսակցութիւն. կան միայն սոցիալ-դեմոկրատ փոքրիկ խմբակներ, որոնք Թոյլ են շատ, ոչ մի ոյժ չեն ներկայացնում: Ամէն մի փոքր ի չատէ ազատամիտ Թուրք սոցիալ-դեմոկրատ է համարում իրեն, որովհետեւ միայն գոցիալ-դեմոկրատներն են տեսնում հրապարակի վրայ՝ կառավարութեան դէմ գործող: Բայց Թուրք մասսաները պարարտ հող են մեր պրոպագանդայի համար: Որքան էլ կառավարութիւնը չարունակէ դրգռել Թուրք ամբոխը, մենք այնուամենայնիւ միջոց ունենք մտնելու Թուրք աչխատաւոր խաւերի մէջ, քանի որ Թուրք գիւղացիութեան համար, իր իսկ բեգերի ձեռքով կեղեքուած, հայ գիւղացիութիւնը մի բնական դաչնակից է: Համերաչխութեան գաղափարի իրականացման վայրը՝ գիւղն է լինելու, իր հողային չարժումներով: Աւելին, առանց Թուրք գիւղացիութեան, միայնակ տանել այդ չարժումները՝ չենք կարող, որովհետեւ հայերիս կռիւը Թուրք բեգութեան դէմ կը չահագործուի նոյն այդ բեգերի կողմից՝ իբրեւ ազգային, հակաքրքական կռիւ: Մեզ հետ պէտք է լինի Թուրք գիւղացիութիւնը անպայման, այդ նպատակով մենք պէտք է չանանք գիտակցութեան բերել նրան: — Իսկ Թէ ի՞նչ ձեռնարկներ կարող ենք կատարել համերաչխ ուժերով — այս ցոյց կը տայ ապագան: (Կարդում է մի բանաձեւ՝ իր չօշափած հարցի վերաբերմամբ):

Շահխաթուն.— Խօսել էս-էրական միութիւն կազմելու մասին այդքան ընդհանուր կերպով՝ չէ կարելի: Հարցին հարկաւոր է կոնկրէտ ձեւակերպումներ տալ: Որքան էլ մեր ծրագիրները միեւնոյնը լինեն, բայց եւ այնպէս այն հանգամանքը, որ մենք լինելու ենք կողք կողքի էս-էրների հետ — ուրեմն, երկուսս էլ ունենալու ենք գոյութեան իրաւունք.— փոխադարձ մրցութեան պատճառ կը դառնայ: Եթէ էս-էրները պնդեն, որ իրենք եւս, Դաչնակցութիւնից զատ, պէտք է գործեն հայերի մէջ, — այս դէպքում առաջանալիք կուսակցական հակամարտութիւնը՝ անկարելի կը դար-

ձընէ ծրագրուած միութեան հիմնումը: Հետեւապէս կարեւոր է որ Դաշնակցութիւնը հենց սկզբից որոշ առաջադրութիւններ անի ապագայ անախորժ բիւրիմացութիւնների առաջն առած լինելու համար:

Զաւրեան.— Անցեալ Դեկտեմբերին էս-էրների կենտրոնական կոմիտէի հետ բանակցելով, ինձ համար պարզուեցին նրանց տրամադրութիւնն ու ձգտումները: Նրանք ցանկութիւն ունեն՝ մի ընդհանուր էս-էրական դաշնակցութիւն ստեղծել, որի մէջ մտնեն Ռուսաստանի բոլոր էս-էրական կուսակցութիւնները. այդ դաշնակցութիւնը կազմուելու է ֆեդերատիւ սկզբունքների հիման վրայ, որպէսզի նրա մէջ մտնող իւրաքանչիւր ջոկ կուսակցութիւն միանգամայն ինքնուրոյն մնայ իր չրջանում: Էս-էրները չեն ուզում, որ իրենք լինեն ընդհանուր կազմակերպողներն ու վարիչները բոլոր ազգերի մէջ. նրանց փափաքն է էս-էրական սկզբունքները յաղթանակած տեսնել, — միեւնոյնն է իրենց անմիջական ղեկավարութեամբ թէ ուրիշների. ամէն մի չրջանի, ժողովրդի կազմակերպման գործը նրանք թողնում են տեղացիներին: — Ռուսաստանի էս-էրների դաշնակցութեան մէջ՝ իւրաքանչիւր կուսակցութիւն իւր ներկայացուցիչը կ'ունենայ, պայմանով, որ են-թարկուի որոշ ընդհանուր պարտականութիւններին, ինչպէս օրինակ՝ պէտք եղած դէպքում կուռի դուրս գալ բոլոր միւսների հետ: Վերջին կէտի վերաբերմամբ մեր կողմից առաջադրուեց, թէ նոր հայ-թուրքական ընդհարումների դէպքում Դաշնակցութիւնը անկարող լինի թերեւս ակտիւ քայլերի դիմելու կառավարութեան դէմ, բայց այդ պակասը մենք կը լրացնենք այլ ձեռնարկներով: Նրանք համաձայն են այդ բանի: Եթէ մենք էս-էրական ոդու համապատասխան մի ծրագիր մշակենք — մենք կ'ընդունուենք կազմուելիք միութեան մէջ: Մեր երկու դատերի յարաբերութեան խնդրի վերաբերմամբ, էս-էրները սկզբունքով կողմնակից են նրանց միացման. տակտիկայի հարցում՝ նրանք իրենց ձեռնհաս չեն դատում: — Իմ այս բանակցութիւնները, սակայն տեղի են ունեցել ամիսներ առաջ եւ քանի որ այդ ընթացքում մեր հակառակորդները խստացրել են իրենց յարձակումները Դաշնակցութեան դէմ, — չգիտեմ, արդեօք էս-էրները նոյն բարեկամական տրամադրութեամբ կը վերաբերուե՞ն մեզ: — Նրանք ցանկութիւն յայտնեցին, որ այս Ընդհանուր ժողովը վերջնականապէս որոշի կուսակցութեան ծրագիրը եւ որ այդ մասին անմիջապէս յայտնուի նրանց, որպէսզի իրենց առաջիկայ կոնֆերանսում քննութեան դրուի:

Ահարոնեան յայտնում է, որ Թիֆլիս էր եկել էս-էրների ներկայացուցիչը եւ խնդրել Դաշնակցութեան ծրագիրը՝ Ապրիլի 15ին կայանալիք իրենց համագումարի մէջ ուշադրութեան առնելու համար:

Մալումեան.— Համաձայն եմ ընկ. Համոյի առաջարկին: Արդէն ժամանակն է, որ մեր կուսակցութեան մէջ բացուի գործունէութեան մի նոր եւ դրական չրջան — համերաչխ գործակցութիւն ուրիչ կուսակցութիւնների հետ: Ցարդ, մեր բոլոր որոշումները այդ ուղղութեամբ՝ մնացել են մեծ մասամբ թղթի վրայ եւ մեր ընկերներից մի քանիսը նոյնիսկ դէմ են եղել նրանց իրագործմանը: Մի կէտում միայն համաձայն չեմ Համոյի հետ, այն՝ որ Դաշնակցութիւնն ինքը ղեկավար հանդիսանայ թուրք մասսաների մէջ: Ի նկատի ունենալով այն տեսակէտը, որ թուրք ամբոխն այսօր ունի դէպի հայերը, առանձնապէս դէպի Դաշնակցութիւնը, ես գտնում եմ այդ առաջարկը անգործնական: Թուրք մտաւորականների միջոցով միայն մենք կարող ենք մտցնել մեր գաղափարները թուրք մասսաների մէջ՝ կովկասում. ինչպէս եւ համերաչխ գործակցութեան համար, ես կարեւոր եմ գտնում, որ հաստատուեն երեք միկրուսակցական բիւրոներ. մէկը Պետերբուրգում (ռուսական ընդհանուր գործերի համար), երկրորդը՝ կովկասում, տեղական գործերի համար եւ երրորդը՝ արտասահմանում՝ Թուրքիայի չարժումների համար:

Սաֆօ.— Ղաղախի չրջանում մենք հող ունենք՝ համերաչխութեան գաղափարի համար. այնտեղի թուրքերը կռիւներից յետոյ, այնքան են մօտեցել մեզ, որ նոյնիսկ մարդ են խնդրում մեզանից՝ իրենց մէջ եւս գործելու:

Համօ.— Վերածնուող ժողովուրդների մէջ՝ ինտելիգենցիան աւելի չովինիստ [թիւրու ազգայնական] է լինում, քան մասսաները. այդպէս են եւ թուրք մտաւորականները. եւ ես կասկածում եմ, արդեօք կարող կը լինե՞նք նրանց միջոցով որեւէ դրական արդիւնքի հասնել: Մենք սկսելու ենք անմիջապէս մասսաներից. ես չեմ ասում, որ թուրք գիւղացուն կազմակերպենք իրրեւ դաշնակցականի, հարկաւոր է միայն նախապատրաստել նրան, որպէսզի հենց ներքեից առաջացած լինեն ապագայի թուրք աչխատաւորական կուսակցութիւնները: Էս-էրների կոնֆերանսում քննութեան են ազդայնութեան ու ֆեդերացիայի հարցերը, որոնք չպարզաբանուած են մնացել նրանց վերջին համագումարում (Ֆինլանդիայում). սկզբունքով էս-էրներն արդէն դրական հայեացք ունեն այդ հարցերի մասին. բայց պէտք է որոշեն նրանց լուծման միջոցները. այս տեսակէտից, նրանք ուզում են լսել Ռուսաստանի զատ-զատ ազգութիւնների ցանկութիւնները:

Վարդան.— Շատ է կարեւոր, ի հարկէ, որ դրծենք թուրքերի մէջ, բայց ներկայ պայմաններում մեզ հազիւ թէ յաջողուի այդ: Բացի այն, որ սառնութիւն է տիրում մեր եւ նրանց միջեւ, կառավարութիւնն եւս կ'աչխատի նոր պրովոկացիաներ անել, երբ տեսնի, որ մենք հակակառավարչական պրոպագանդա ենք վարում թուրքերի չրջանում: Ուրեքան էլ առելու լինի իր բէչերին, թուրք գիւղացին այնուամենայնիւ դեռ պատրաստ է առաջինը մեզ հարուածելու: Անկարելի է մտնել թուրք մասսաների մէջ. թուրք ինտելիգենցիայի միջոցով միայն մենք կարող ենք ազդել նրանց վրայ, եւ դա էլ շատ սահմանափակ չափով: Ես կարծում եմ, որ մենք պէտք է ուղղակի գործենք թուրք մասսաների մէջ՝ ինչպէս որ անում են ուրիշ կուսակցութիւնները: Ես ինքս կողմնակից եմ, որ մենք մեր ուժերը չսփռենք, այլ կենտրոնացնենք մի քանի կէտերի վրայ, որոնք ունեն մեծ նշանակութիւն մեր ընդհանուր գործի համար. այդ կէտերն են՝ Պոլիսը, Սմիռնիան, Կ. Պոլսի նահանգները եւ Կիլիկիան: Ես կարծում եմ, որ մենք պէտք է ուղղակի գործենք թուրք մասսաների մէջ, ինչպէս որ անում են ուրիշ կուսակցութիւնները:

Ահարոնեան.— Ես ուզում եմ ասել, որ մենք պէտք է ուղղակի գործենք թուրք մասսաների մէջ, ինչպէս որ անում են ուրիշ կուսակցութիւնները: Ես ինքս կողմնակից եմ, որ մենք մեր ուժերը չսփռենք, այլ կենտրոնացնենք մի քանի կէտերի վրայ, որոնք ունեն մեծ նշանակութիւն մեր ընդհանուր գործի համար. այդ կէտերն են՝ Պոլիսը, Սմիռնիան, Կ. Պոլսի նահանգները եւ Կիլիկիան: Ես կարծում եմ, որ մենք պէտք է ուղղակի գործենք թուրք մասսաների մէջ, ինչպէս որ անում են ուրիշ կուսակցութիւնները:

Նորդութիւնն անհրաժեշտ է մեզ:

Ահարոնեան.— Դա տակտիկայի խնդիր է. եթէ այսօր անկարելի էր վաղը կը դառնայ հնարաւոր:

Մուրատ.— Ես այնքան էլ լաւատես չեմ թուրք-հայկական ցանկալի համերաչխութեան հանդէպ եւ Սաքոյի յոյսերը ես գտնում եմ վաղահաս: Մեր մուտքը թուրք մասսաների մէջ՝ վտանգաւոր է, եւ մենք միայն թուրք ինտելիգենտների միջոցով կարող ենք մեր նպատակները իրագործել:

Զաւրեան.— Որոշ տեղերում, անկասկած, մենք վտանգների կ'ենթարկուենք. բայց չէ՞ որ հայ գիւղերում եւս մենք զերծ չենք մնում զանազան վտանգներից: Պրովոկացիան կը չարունակէ գործել: Բայց այդ բոլորը դեռ չէ նչանակում, որ պէտք է յետ կանգնել. հարկաւոր է միայն որոշ տակտիկայով ղեկավարուել:

Վարդան.— Կրկնում եմ, որ այսպէս ասած, պաշտօնապէս մտնել թուրք մասսաների մէջ, մենք չենք կարող. գնալ այս ինչ գիւղը, հաւաքել գիւղացիներին եւ քարոզել, հակակառավարչական տրամադրութիւն ներչնչել նրանց, — անկարելի է, — նախ հենց այն պատճառով, որ թուրքերն իրենք կը յայտնեն այդ մասին կառավարութեանը: Անհատական պրոպագանդա միայն կարող կը լինենք վարել, այսինքն՝ անհատ թուրքերին քարոզել:

Արամ.— Ընկ. Մինասեանի ղեկուցումից որոշ կերպով ես չկարողացայ հասկանալ համերաչխութեան այն խարիսխը, որի վրայ պիտի յենուի մեր ապագայ գործակցութիւնը: Այժմ պարզ է, որ լոկ համերաչխութեան կոչերով մենք չենք կարող գործ յաջողցնել. այսուհետեւ հարցը կարող է դառնալ միմիայն համերաչխ գործակցութեան մասին: Այս տեսակէտից չատ անորոշ է ընկ. Մինասեանի ղեկուցումը, նա չարունակում է պնդել, որ մենք չենք կարող փոխել մեր ծրագիրը. այսինքն պիտի չարունակենք մեր անկատարելական ձգտումները, եւրոպական միջամտութիւնը միայն հայերիս համար եւն.: Բաւական չէ որ մենք պիտի փոխենք մեր տակտիկան, ժամանակի եւ պարագաների համեմատ, հարկաւոր է ունենալ մի ընդհանուր ծրագիր, որի չուրջը կարելի լինի համախմբել բոլոր դրժգոհ տարրերին: Մենք բաց ճակատով եւ յեղափոխական չիտակութեամբ պէտք է դուրս գանք նրանց դէմ և ոչ յետին ու մութ ծրահիրներով: Ես դժբախտաբար քաղաքական հարցերում ձեռնհաս չլինելով, չեմ կարող այս հարցի մասին որեւէ հեղինակաւոր բան ասել, այլ պիտի բաւականանամ այն գործնական տպաւորութիւններով, ինչ որ ստացել եմ Երկրում: Մեր ամբողջ 17ամեայ գործունէութիւնը մեզ ապացուցնում է, որ մենք մեն մենակ, մեր ուժերով, անկարող ենք որեւէ նպատակայարմար գործ կատարել: Մեր դէմ դուրս եկան, ոչ միայն կառավարութիւնը, այլեւ մահմեդական մասսաները: Սրանց կից, մեծ դեր են կատարում եւ մեր թուական քանակութիւնը, մանաւանդ ցրուած լինելը մեծ տարածութեան վրայ, չրջապատուած օտար տարրերով, որով չենք յաջողում կանոնաւորապէս կազմակերպուել եւ զանազան վայրերը իրար հետ կապել: Այս բոլորից յետոյ դարձեալ չբունակել հին սխտեմը՝ անհնարին է, մանաւանդ որ տաճիկ մասսաները վերջին չարժումներով մեծ անակընկալ են տուել մեզ: Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, անմիջապէս աւելացնեմ, որ ես ամբողջապէս չեմ բաժանում դրսում տարածուած այն կարծիքը, որ ըստ մոդայի ծախուում է քաղաքական չուկայում, — որ իբր թէ Դաշնակցութիւնը տարուած իր ազգայնական ֆանատիզմով, արհամարհել է հարեւաններին, կամ անկարող է եղել նկատել այն կայծերը, որ թաղնուած էին թուրք մասսաների մէջ: — Հէնց է կեանքում առաջ եկած մի երեւոյթից, յետին թուով եզրակացութիւններ հանել, մոռանալով ամբողջ անցեալը, թուրք մասսաների տգիտութիւնը, թուրք ինտելիգենցիայի քաղաքական սննկութիւնը, մանաւանդ ռուսական մեծ յեղափոխութեան ազդեցութիւնը, պարսկական չարժումների տպաւորութիւնը եւ այլ փոփոխութիւնները, որոնք անցեալում եւ ներկայում ազդել են թուրք ժողովրդի տրամադրութեան եւ վիճակի վրայ. նրանք մոռանում են մանաւանդ տնտեսական այլ ճնչումներ, որ վերջերս ծանրացել են թուրք ժողովրդի վզին: Իմ անհատական համոզումն է, որ մենք ձեռք պիտի քաչենք մեր առանձնացած չարժումներից եւ միանանք կամ սկիզբ դնենք համապետական չարժման, մեր երկրում բնակուող բոլոր ցեղերի հետ: Այդ գաղափարը կեանքում իրագործելու համար ես մի այլ ճանապարհ եմ առաջարկում. ես մեծ հաւատ չունեմ եւրոպա տպաստանած «Երիտասարդ Թուրքերի» կամ այսպէս կոչուած «Ժէօն Թուրքերի» վրայ. նրանք մեծ մասամբ պալատական յեղափոխականներ են, որոնք ունեն այս կամ այն դինաստիական թախտմային [?] չահեր. դրանցից սկսելով չատ դժուարութիւնների կը հանդիպենք: Ըստ ամենայնի նպատակայարմար է սկսել հենց բուն Երկրից, հենց թուրք մասսաներից եւ նրա ծոցում ապրող գործիչներից: Պէտք է յայտնեմ, որ այդ չարժումները ոչ մի կապ չունին արտասահմանի «Երիտասարդ Թուրքերի» հետ. նոյնիսկ վերջինների թերթերը եւ գրականութիւնը մենք ենք տարածում Երկրում: Ես առաջարկում եմ կազմել Երկրում թուրքերի հետ միացեալ ուժերով խառն կոմիտէներ: Սրանք զբաղուելու են մանաւանդ այն բոլոր հարցերով, որ ընդհանուր են բոլոր ազգութիւնների համար, օրինակ՝ պրոպագանդա, քաղաքական տեսութիւններ, միացեալ ուժերով բողոքներ, բոյկոտ եւն.: Ի հարկէ ժամանակի ընթացքում պիտի կազմուի մի ընդհանուր ծրագիր ըստ յեղափոխական կեանքի զարգացման: — Այս բոլորի հետ մենք չարունակելու ենք մեր գործունէութիւնը եւ նպատակը առայժմ այդ է լինելու: Առայժմ մենք մեծ ուշադրութիւն ենք դարձնելու

ինքնապաշտպանութեան գործին, զոհ չդնալու համար կառավարական մի նոր պրովոկացիայի։ Մենացած ամբողջ ուժերը պէտք է տալ համերաշխութեան գործին, խուսափելով տակտիկական այն բոլոր ձեռնարկներից, որոնք կը խանգարեն համերաշխութեան գործը։

Զարդարեան.— *Թրքական չարժումներին պէտք է մեր կողմից եւս դարկ տրուի։ Բայց եւ այնպէս, ես հաւատ չունիմ, որ Թուրք մասսան ընդունակ լինի կարճ ժամանակում յեղափոխականանալու եւ կամաց կամաց միայն կարող ենք մեր ազատագրական գաղափարը ներշնչել նրան (մասսային)։ Հետեւապէս, մեզ անկարելի է սպասել, մինչեւ որ Թուրք մասսաները չարժուեն. մենք պէտք է չարունակենք մեր նախկին գործելակերպը, որը, սակայն, չունի անջատական բնաւորութիւն։ Ցարդ Դաշնակցութիւնը երբեք չէ քարոզել՝ բացարձակ անջատում. մենք միչտ էլ ուզել ենք մնալ Տաճիկ պետութեան սահմաններում։ Եւրոպայի օգնութեան դիմելը, ինչքըստինքեան, անջատական մի ձգտում չէ, քանի որ Թուրք Սաթահեդդինը ի՛նքը հակուած է դէպի Եւրոպան։ Ընդհակառակը, Եւրոպայի միջամտութիւնը հայկական հարցի մէջ, օգտակար է լինելու հենց իրենց՝ Թուրքերին, որովհետեւ հայկական վիլայէթներում մոցուելիք բարենորոգութիւնները կաղմելու են կորիզը՝ ապագայ ընդհանուր բարենորոգումների։*

Ահարոնեան.— *«Երիտասարդ Թուրքեր»ը մեր չարժումների մէջ անջատողականութիւն են տեսնում, քանի որ մենք ձգտում ենք՝ հայաբնակ վեց վիլայէթների համար ստեղծել մի առանձին վարչաձեւ, որը տարբեր է լինելու մնացած ընդհանուր վարչաձեւից, նոյնիսկ ազատական վարչակարգից։ Մեղ անջատողական են համարում բոլոր «Երիտասարդ Թուրքեր»ն անխտիր, և՛ Ռիզան և՛ Սաբահեդդինը։ Ես իսկապէս այն հանգամանքը, որ մենք ուզում ենք Եւրոպայի կողմից նըշանակուած մի յատուկ նահանգապետ ունենալ վեց վիլայէթների համար, այս հանգամանքն արդէն բաւական է համոզելու «Երիտասարդ Թուրքեր»ին, որ մենք անջատողական ձգտումներից հեռու չենք. մինչդեռ նըրանց նպատակն է՝ Տաճկաստանը պահել իր ամբողջութեամբ։ Վարիչի կոնգրէսում (1902ին), որին ինքս մասնակցել եմ, Ռիզան դարձաւ մեզ, թէ՝ «դուք օսմանցիներ էք»։ Իսկ Սաբահեդդինը, որ à tout prix ուզում էր հայ յեղափոխականների հետ գործել, նկատեց թէ՝ այն ինչ որ դուք պահանջում էք ձեր վեց վիլայէթների համար, պէտք է պահանջենք եւ մնացած բոլոր վիլայէթների համար։ «Երիտասարդ Թուրքեր»ի այս ձգտումները մենք պէտք է ի նկատի ունենանք։ Համաձայն եմ Մինասեանի հետ, որ մենք կապեր հաստատենք ներսի գործիչների հետ։ Եւ ներսում մենք պէտք է հրապարակ դանք մեր ամբողջ ծրագրով, առանց կեղծելու մեր այս կամ այն ձգտումը. կեղծիք բանեցնելը չարաչար սխալ է լինելու մեր կողմից։*

86ՐԴ ՆԻՍՏ (16 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Համօ Մհերեան։

Ներկայ են՝ 24 ժողովական։

Բացակայ են՝ Խահակեան, Իշխան, Անդրանիկ (Հիւանդ) Գուսան, Վարդան, Գագիկ։

Օրակարգն է՝ «Կովկասեան գեղծարարների մասին» եղած վիճաբանութեան չարունակութիւնը եւ բանաձեւեր այդ մասին։

Այս խնդրի մասին ցարդ եղած վիճաբանութիւնը անբաւարար դտնելով, Ընդհանուր Ժողովը հարկ համարեց հարցի մութ մնացած կողմերի վրայ ծանրանալ եւ պարզել։ Ժողովը կենտրոնացաւ գլխաւորապէս այս երկու հարցերի չուրջը՝ ա) Թէ Հ. Յ. Դաշնակցութեան ո՞ր մարմինը պիտի այդ գեղծարարների վերաբերմամբ դատավճիռ կայացնի եւ բ) ի՞նչ պատիժ է տըրւելու։

Ռոստոմ.— Ես հակառակ եմ արտայայտուղ այն կարծիքին, որ Ընդհանուր Ժողովը դատարանի դեր պիտի ստանձնէ եւ դատավճիռ արձակէ։ Իմ կարծիքով այդ գործը ամբողջապէս պիտի Թողնել կովկասեան մարմիններին, միեւնոյն ժամանակ յանդիմանութիւն յայտնելով Արեւելեան Բիւրոյին, որ ժամանակին կըտրուկ միջոցի չէ դիմել եւ այդ հարցը հասցրել է Ընդհանուր Ժողովին։

Արամ.— Մեր կազմակերպութեան որոշումների մէջ մի վիրաւոր կէտ կայ, որ նման գեղծումների դէպքում, վճիռը գործադրելու համար հաստատուելու է Մորհրդի կողմից։ Զկայ Մորհուրդ, հետեւապէս հարցը դրուելու է Ընդհանուր Ժողովի առաջ։ Եւ նա պէտք է իր խօսքն ասի, իր կտրուկ որոշումը տայ։

Վռամեան.— Սա Դաշնակցութեան վերջին Ընդհանուր Ժողովը պէտք է լինի, որ զբաղուելու է դատական դործով. Միհրանի, ինչպէս եւ Վարդոյի խնդիրը եւ այլ նման գեղծումներ, չպէտք է Ընդհանուր Ժողովի զբաղմունքի նիւթ դառնան։ Այս բանը միանգամ ընդմիչտ պարզ պէտք է լինի։ Ես եւս միանում եմ ընկ. Ռոստոմի Արեւելեան Բիւրոյի մասին ասածին, բայց կ'աւելացնեմ՝ նաեւ Արեւմտեան Բիւրոյին յանդիմանութիւն յայտնել, որ Միհրանի, ինչպէս եւ Վարդոյի գործը, ժամանակին չեն լուծել եւ հասցրել են Ընդհանուր Ժողովին։

Արամ.— Ես չեմ հասկանում այս ձեւը եւ ինձ մընում է զարմանք յայտնել։ Ինչո՞ւ մի կոմիտէի հասարակ գեղծումը դրւում է Ընդհանուր Ժողովի սեղանի վրայ, իսկ այժմ, երբ մի խորունկ վէրք է հասցուած Դաշնակցութեան, երբ զարելի դաւաճանութիւն է կատարուել եւ ամբողջ կազմակերպութիւնը տակն ու վըրայ եղել, Ընդհանուր Ժողովը չի կամենում իւր հեղինակաւոր խօսքն ասելու այդ մասին։

Շահխաթունեան.— Սկզբից ի վեր մեր կազմակերպութեանը այնպիսի բնաւորութիւն է տրուած, որ Ընդհանուր Ժողովը, Դաշնակցութեան բարձրագոյն Ժողովը, ամէն խնդիրներով զբաղուել է եւ ունեցել է չատ ֆունկցիաներ [պաշտօնեաներ, դերեր]։

Արամ.— Ես չվերջացրի իմ ասելիքը։ Ասում եմ զարմանալի է, որովհետեւ Դաշնակցութեան մէջ ըստեղծուել է մի նոր դաշնակցութիւն եւ Ընդհանուր Ժողովը ուզում է աչք փակել այդ բոլորի առաջ եւ Թողնել, որ աւելի ու աւելի ծաւալուի։ Գարսաւանքի քուէ չպէտք է տալ Արեւելեան Բիւրոյին։ Նա անկարող էր կտրուկ միջոցի դիմելու. նրա վարմունքը եղել է խիստ խելացի եւ հեռատես. հակառակ դէպքում կը կանգնէին ռուսահայերն ու տաճկահայերը իրար դէմ՝ իրր ոխերիմ թշնամիներ։

Զաւրեան.— Ես եւս այն կարծիքին եմ, որ Ընդհանուր Ժողովը պէտք է սկզբունքային հարցերով զբաղուի եւ ոչ Թէ դատավճիռներ արձակէ։ Բայց կան հարցեր, որոնցով այստեղ պէտք է զբաղուել։ Մենք, ի հարկէ, այստեղ կարող ենք միայն բանաձեւերով բաւականանալ. ես զարմանում եմ, որ Ռոստոմը լինելով Արեւելեան Բիւրոյի անդամ, այժմ յայտնում է յանդիմանութիւն նրան, ժամանակին այդ խնդիրը իր տեղում չվճռելու պատճառով։ Ինչո՞ւ հապա Ռոստոմը չէ պահանջել այդ վճիռը իր ժամանակին։ Եթէ չեն ածրել, այն պարզ պատճառով է, որ հենց ինքը, Ռոստոմը, մի չարք ուրիչ հանգամանքներ ի նկատի է ունեցել։ Բայց այժմ չպէտք է Թերի միջոցներով բաւականանալ. այլ դիմել ամենախիստ միջոցների։ Ես հաւատում եմ, որ Մուրատն ու Սեպուհը ինչ վճիռ պահանջում էին այնտեղ Կովկասում, կը պահանջեն եւ այստեղ։

Ստեփանեան.— Սխալ է ասել, որ այդ վճիռը Արեւելեան Բիւրոյի իրաւասութիւնից դուրս էր։ Նման չատ գեղծումների դէպքում, նոյնիսկ չատ Թեթեւ տեսակի, Պարսկաստանում, Իլատում եւն., յանցաւորներին մահուան պատժի են ենթարկել։

Միհրանեան.— Եթէ Միհրանը մեզ այսպէս կը զբաղեցնէ, պատճառն այն է, որ նա այսպէս Թէ այնպէս իրր մի հոսանքի ներկայացուցիչ է հրապարակ եկել, հենց դրա համար էլ փափկանկատ են եղել մեր մարմինները. իսկ որ նա գեղծարար, ոճրագործ է, — չատ պարզ է։ Մեզ մնում է պարտաւանքի քուէ տալ տեղական մարմիններին, յանձնելով այդ դործը միեւնոյն ժամանակ նրանց՝ որպէսզի իրենք մաքրեն։

Մալումեան.— Ես զարմանում եմ, որ նախագահը ընթացք է տալիս նման խօսակցութեան։ Մեր կազմակերպական կանոնների 21րդ յօդուածի համաձայն, այդ տեսակ գեղծումների որոշումն անցնում է Շրջանային Ժողովներից՝ Մորհրդին եւ ապա Ընդհանուր Ժողովին, առաջինի չլինելու դէպքում։

Համօ.— Ռոստոմի բռնած դիրքը եւ խօսելու տոնը ինձ միանգամայն զարմացնում են։ Նա չատ լաւ գիտէ, որ մենք, եթէ ուղենայինք, չատ հեչտութեամբ կը սպանէինք պարագլուխներին։ Հենց մէկը նա էր, որ չէր ուզում։ Նոյն Ռոստոմը այնքան տկարանում էր, որ իրեն անդամալոյծ էր յայտարարում Թրքահայերի առաջ եւ նրանց միջամտութիւնը խնդրում։ Բայց տաճկահայերը չուզեցին, եւ եթէ կամենային անկեղծ կերպով միջամտել՝ կը կարողանային 3 օրում չարժումը բնում խեղդել։ Այդ իմ խորին համոզմունքն է (լսւում են բողոքի ձայներ)։

Թոփչեան.— Այս խնդիրը այնքան փոքրացրին, որ ասես դա մի կոմիտէի հարց է։ Ռոստոմի փափկանկատութիւնը չատ խորն է։ Ես հասկանում եմ այդ, բայց նա սխալւում է իւր փափկանկատութեան մէջ։ Մի երկու ամիս նստել ենք այստեղ, հեռու կովկասից, ասես տրամադրւում ենք իրականութիւնը վարդագոյն պատկերացնելու։ Ո՛չ, ընկերներ, իրականութիւնը դառն է, խիստ դառն է եւ սեւ։ Այդ չպէտք է մոռանալ։ Դաշնակցութեան չահերը պահանջում են, առանց վախենալու, կատարել մեր պարտականութիւնը եւ ասել մեր խօսքը։

Զելալեան.— Այժմ կայ մեր մէջ երկու մտածողութիւն, հին եւ նոր։ Դուք էլ էք ասում, որ չերտասւորում կայ, երկու ֆրակցիայի է բաժնուած։ Դա արդիւնք է ռուսաց յեղափոխութեան եւ այդ բաժանումը ես անուանում եմ բիւրոյականութիւն եւ միհրանականութիւն (բացականչութիւն, — բողոքում ենք դրա դէմ)։ Եւ դրանցից ամէն մէկը իրեն իրաւական եւ իսկական Դաշնակցութիւնն է համարում։ Այդ երկու հոսանքներից մէկի ներկայացուցիչը չկայ այստեղ, հետեւապէս մեր որոշումը կը լինի խիստ միակողմանի եւ անարդար։ Մենք պէտք է դիմենք օրինաւոր ճամբի, այն է՝ կանչել երկու կողմերին, լսել երկուսին էլ եւ ապա վճիռ արձակել (բողոքներ, խիստ դժգոհութիւն)։

Խօսողը ընդհատում է իւր խօսքը։ Ժողովում տիրող յուզմունքը դադարում է եւ նախագահը առաջարկում է ընկ. Զելալեանին չարունակելու՝ օգտուելով խօսքի ազատութիւնից, Թէեւ գտնում է որ նրա ասածները պատիւ չեն բերում Թէ՛ Ժողովին եւ Թէ իրեն։ Զելալեանը կամովին հրաժարւում է խօսելուց։

Ահարոնեան.— Այս ցաւալի միջադէպը մի չփոթ առաջ բերաւ իմ մէջ։ Գուցէ դուք սովորել էք, բայց ինձ համար, իրր նոր եկողի, բաւականին անսովոր էր այս։ Ռոստոմն ասաց, որ այս Ժողովը ոչ Թէ դատական այլ օրէնսդրական Ժողով է։ Նրա ասածը իրաւացի լինելով, ունի իր խիստ գիտական հիմունքը։ Այդ տեսակէտից մօտենալով խնդրին, չեն կարող Միհրանի եւ այլ նման գեղծարարների հարցերը Ընդհանուր Ժողովում տեղ գտնել։ Այսպիսի օրէնսդրական մարմինը ձեռնհաս չէ երկու կողմերի վկաներին կանչել, յու-

ցումներ ստանալ, հետեւապէս նրա որոշումը խիստ պակասաւոր կը լինի եւ Թիւրիմացութիւնները՝ անխուսափելի: Այո՛, ինչպէս Ռոստոմը նկատեց, կան դատապարտելի մարմիններ, որոնք կարող էին ժամանակին խեղդել այդ տգեղ, դաւաճանական քայլերը, բայց չարեցին եւ դարձրին սանձելու հնարաւորութիւնն անկարելի: Դա ուղղակի մի տխուր Թիւրիմացութեան արդիւնք էր, որ առաջ եկաւ այդ չարժման մասին մեր ունեցած տեսակէտից: Սխալ է նմանեցնել, խառնել այդ երկու չարժումները: Միհրանական ձեռնարկը մի խուլիգանական չարժում է. դա ուրիշ անուն չունի: Իսկ մեւս չարժումը, որը կապուած է Կովկասեան Նախագծի հետ, մի տեսակէտ է, մտածողութեան մի ձեւ է, որը ունի համակիրներ մեր չարքերում. մինչեւ իսկ եւ այդ մասին կարելի է ժամերով, օրերով խօսել, առանց իրար վիրաւորելու: Միհրանական չարժումը կապեցին տաճկահայ դատի հետ. «Մշակ»ը եւս չհակադրծեց այդ եւ անդիտակից մասսան կարծում էր, որ Միհրանը ներկայանում է իբր դաշնակցական ներկայացուցիչ այդ դատի: Ահա սրանով պիտի բացատրել Շեխլու փառաւոր Թաղումը: Ահա այդ ժամանակ էր, որ մենք խորը կերպով զգում էինք մեր անցեալ սխալը, քանի որ փախցրել էինք այն բարեխղճող մոմենտը, երբ խնդիրը այդ բնոյթը չէր ստացել եւ առանց բարդութիւնների առաջացնելու, կը կարողանայինք ոչնչացնել զեղծարարներին եւ չարժումը սաղմնային դրութեան մէջ խեղդել: Տեղական մարմինները չէն արել այդ բանը, հենց դրա համար էլ մեղաւոր են: Այժմ մեզ մնում է՝ մի խոշոր մասը, որ Թիւրիմացութեամբ է հետեւում նրան, զատել չանտաժիստներից, բարոյական դէնքը վերցնել վերջիններից եւ յանձնել տեղական մարմիններին՝ պատժելու: Այնպիսի խոշոր կեղծիքներ եւ դաւաճանական քայլեր էին եղել այդ խմբակի կողմից, որ պէտք էր ժամանակին հոգալ եւ կարգադրել, հետեւապէս մեր յանդիմանութիւնը յայտնելու ենք Արեւելեան Բիւրոյին:

Զաւարեան.— Անհիմն է պահանջել, որ Արեւելեան Բիւրոյին յանդիմանութիւն կարդացուի, ինչպէս մտածում են մի քանի ընկերներ: Այն դիրքը, որ բռնել են Արեւելեան Բիւրոն եւ տեղական մարմինները միհրանական չարժման դէմ, եղել է ամենահետեւողականը եւ խելացին: Առաջին անգամ այդ չարժման մասին որոշակի կերպով խմացուեց էջմիածնում, երբ ժողով էր նշանակուած Երեւանում. խնդրն եւեթ մարդիկ ուղարկուեցին ժողովից այլեւայլ տեղեր՝ բացատրելու այդ չարժման էութիւնը: Նոյն ձեւով վարուել են նաեւ Թիֆլիզում, Բաքուում եւն.: Շարժման ամենագըլխաւոր պատճառը մեր մասսաների տգիտութիւնն էր: Մենք ունենք յանցանքի մեր բաժինը եւս, այն չափով, որ պրոպագանդա չենք արել, չենք բացատրել մեր տեսակէտները ու ուղղութիւնը: Շատերը ուղղակի տեղեկութիւն չունէին «Նախագծի» մասին, կամ եթէ ունէին էլ՝ շատ Թիւր գաղափար. լաւ չէր լուսաբանուած «Նախագծը» իր ամբողջութեամբ: Բացի այդ, մեր չարքերի մէջ էլ կային տարբեր հոսանքներ, տատանումներ: «Մշակ»ը անցաւ այդ չարժման ղլուխ, կանոնաւորեց եւ ընթացք տուեց: Եթէ մենք սուր միջոցներ ձեռք առնէինք դուցէ աւելի վատ լինէր, քան այժմ է. կը տային գլալի զոհեր ե՛ւ մենք, միհրանականները նահատակներ կը հռչակուէին. ի հարկէ մենք կարող էինք զեղծարարներին, ինչպէս եւ Միհրանին պատժել, քանի որ մի զէնքի, մի փամփուշտի համար անգամ, ըստ կանոնագրութեան, կարելի է մարդ գնդակահարել, բայց անել դա՝ մեզ ձեռնտու չէր: Ներկայումս մեզ մնում է պարզել ամբողջ չարժման բնոյթը եւ զեղծարարների կերպարանքը, յայտարարել դա ի գիտութիւն բոլորի, եւ այն ժամանակ, ես համոզուած եմ 9/10 մասը կը հեռանայ զեղծարարներից: Սխալ կը լինի եթէ այժմ եւս խիստ եւ սուր միջոցների դիմենք: Ոչ մի կաթիլ արիւն այդ գործի առթիւ չպէտք է թափուի: Մենք կը տանք որոշակի կերպով մեր ծրագիրը իր ամբողջութեամբ, ով համաձայն է դրա հետ՝ կը մնայ, ով չէ — լինի նա երիտասարդ դաշնակցական թէ հականախագծական, այդ միեւնոյնն է — կը հեռանայ Դաշնակցութեան չարքերից: Ասում եմ, հականախագծական եւ երիտասարդ դաշնակցական, որովհետեւ այդ երկու ծայրայեղութիւնների միջեւ մի նմանութիւն եմ գտնում:

Զաւրեան.— Այժմ բոլորը վերջնական որոշման են սպասում Ընդհանուր ժողովից, նոյնիսկ Միհրանը. եւ յանկարծ Ընդհանուր ժողովը հեռացնում է այդ դատը իրենից: Սխալ է այդ: Աչքի առաջ ունենալով հարցի բացառիկ նշանակութիւնը, Ընդհանուր ժողովը պէտք է զրաղուի դրանով եւ իր որոշումը տայ:

Մուրատ.— Սխալուում է Համոն, երբ ասում է, «եթէ ուղէինք՝ կը ճնշէինք»: Այդ կը նշանակէ բոլորովին անծանօթ լինել տաճկահայ կեանքին: Մեր մէջ միշտ էլ եղել են եւ կան թայֆաներ, որոնք իրար դէմ կանգնում են իրր թշնամիներ. բայց այս դէպքում նրանք միացել էին: Այդ, ի հարկէ, չէիտէիք դուք: Եթէ մի փորձ լինէր, ահագին խառնաչփոթութիւն կը յառաջանար եւ մի շարք մարդիկ կը սպանուէին: Ես դէմ չեմ նախագծական չարժման, ոչ էլ կը կռուեմ դրա դէմ: Զաւարեանն ասում է, պէտք է զեղծարարներին անպատիժ Թողնել, բաւականանալ միայն Դաշնակցութիւնից հեռացնելով: Ես ասում եմ՝ որ ես չե՛մ Թողնի, որ Միհրանը անպատիժ մնայ:

Ռոստոմ.— Եթէ ոչ մի տարի, գէթ կէս տարի առաջ մենք ունէինք նախազգացում այդ չարժման մասին: Լսում էին ձայներ, եւ ոմանք ասում էին՝ Թէ «ձեր զինուորներին ձեր դէմ պիտի ուղի հանենք»: Մենք լուրջ չհետեւեցինք դրան եւ անուշադրութեամբ անցանք: Մեզ չյաջողուեց դրա խորունկ պատճառը, պատրաստող գաղտնի ձեռքը գտնել, որպէսզի հնարաւոր լինէր արմատից ոչնչացնել: Եթէ մտնէինք գինուորների մէջ, մտերիմ յարաբերութիւն ստեղծէինք, իմանայինք նրանց մտածումները, մեզ կը յաջողուէր չարժման առաջն առնել: Հենց այդ էր պատճառը, որ մենք յանկարծակիի եկանք, երբ այդ բռնկուեց: Ես մէկն էի, այո, նրանցից, որոնք խիստ հակառակ էին արիւնահեղութեան, Միհրանի սպանութեան: Նրանք սոսկ զեղծարարներ չէին ներկայանում հասարակութեան անդիտակից մասսաներից առաջ, այլ մի գաղափարի կրող. հենց դրա համար էլ նրանց հետ չենք վարուել իբր լոկ յանցաւորների եւ եղել ենք փափկանկատ: Մենք այն տեսակէտին էինք, որ պէտք էր Միհրանին մերկացնել, ցոյց տալ մասսաներին նրա իսկական այլանդակ կերպարանքը եւ բարոյապէս մեռցնել: Մենք ոչ Թէ պէտք է նրան սպանենք, այլ մտածենք նրա գոյութեան մասին, որպէսզի ապրի եւ ողջ մեռնի: Եւ հետեւանքն այն եղաւ, որ նա այժմ գերօ է: Նոյնն է եղել մեր վերաբերմունքը Արփիարեանի վերաբերմամբ: Մենք կարող ենք այստեղ որոշում տալ. բայց ամբողջ գործը Թողնելու ենք համապատասխան պատշաճ մարմնին, իբր իր պարտականութիւնը:

Վահագն.— Արդէն մի քանի անգամ լսել ենք Ռոստոմի այդ կարծիքը Արփիարի վերաբերմամբ: Բայց սխալ է այդ տակտիկը, ընկե՛ր Ռոստոմ: Կարծում եմ Ռոստոմն էլ ինձ հետ միասին կ'ասի, որ Արփիարը Թուեւարել է ժամանակին մեր չարքերը եւ մեծ չարիք է եղել մեզ համար: Դրա հիմնական պատճառը հենց այն է, որ նա ողջ է մնացել: Նոյն սխալը կրկնուել է նաեւ այստեղ, Միհրանի վերաբերմամբ: Եթէ ժամանակին այդ ոճրագործների առաջ միջոցներ ձեռք առնուէին համապատասխան մարմինների կողմից, այն պարագային այսպիսի խառնաչփոթութիւն չէր առաջանայ եւ այժմ մեր առաջ կը ներկայանար միայն հականախագծական չարժում: Ես հաւատացած եմ նաեւ, որ եթէ ժամանակին Անդրանիկ, Վարդան, Մուրատ, Սեպուհ եւն., որոնց առաջ Միհրանը մի փոքր մարդ է հենց տաճկահայ դատի տեսակէտից, դուրս գային եւ պարզէին մասսայի առաջ Միհրանի ստոր դիտումները եւ յայտնէին ամէն ինչ, — ես խորապէս համոզուած եմ, նրա սպանութեան դէպքում անգամ ոչ մի բարդութիւն չէր առաջանայ: — Ես եւս այն կարծիքին եմ, որ պէտք է կտրուկ որոշում կայացնել հենց այնտեղ:

Ժողովը միաձայն յայտնեց իր այն տեսակէտը, որ Միհրանականութիւնը պիտի որակել խուլիգանութեամբ եւ որ դա խորապէս տարբերւում է հականախագծական չարժումից: Ժողովը դիտում է Միհրանին եւ ընկերներին, ոչ Թէ իբր մի գաղափարական չարժման ներկայացուցիչներ, այլ զեղծարարներ, դաւաճաններ եւ ոճրագործներ:

Սրանից յետոյ քուէարկուում են երկու բանաձեւերը, նրանց պատժելու վերաբերմամբ:

Արամի բանաձեւը՝ «Զինուորական Խորհրդին եւ ցրան կից եղած անհատ զեղծարար-ոճրագործներին դատել Ընդհանուր ժողովից ընտրուած մի յատուկ մարմնի միջոցով: Որոշումները իրագործել եւ յայտարարել Ընդհանուր ժողովի անունից յատուկ մարմնի ձեռքով»:

Այս բանաձեւը ստացաւ + 10 *եւ* — 17 *ձայն. հետեւապէս եւ մերժուեց:*

Յետոյ քուէարկուեց ընկ. Մալումեանի բանաձեւը մի քանի փոփոխութիւններով: Առաջին եւ երրորդ մասերը անցան միաձայն. իսկ երկրորդ մասը մէկի (Զելալեանի) ձեռնպահութեամբ: Ահա բանաձեւը.

«Ներկայացրած փաստերի հիման վրայ ժողովը որոշեց

1. Համարել Միհրանի եւ իր գործակիցների վարմունքը՝ ծանր յանցանք կազմակերպութեան եւ նրա պաշտպանած քրիստոնեայ դատի դէմ եւ այդ հիման վրայ ցանցառնել նրանց արտաքսուած Դաշնակցութեան շարքերից:

2. Ցանձնել պատշաճ մարմնին՝ կազմակերպական կանոնների նախատեսուած պատժի ենթարկել Միհրանին եւ իր գործակիցներին:

3. Հրատարակել որոշումը պաշտօնական օրգանի մէջ:

4. Հրաւիրել դաշնակցական իրաւասու մարմինների ուշադրութիւնը այն հանգամանքի վրայ, որ ապագայում այդ տեսակ անձինք անյապաղ ենթարկուեն [կազմակերպական] կանոններով նախատեսուած պատասխանատուութեան, առանց սպասելու եւ բերելու այդօրինակ խնդիրներ Ընդհանուր ժողովին»:

Այս բանաձեւը հիմնուած է քննիչ յանձնաժողովի եզրակացութեան վրայ, որ հետեւեալն է.

«Քննիչ յանձնաժողովը, հիմնուած Ընդհանուր ժողովում եղած պաշտօնական վկայուցումների եւ նոյն ժողովի դիւանում եղած գրաւոր տոկումենտների վրայ, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

1. Ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ անուն կրող մարմինը Հ. Յ. Դաշնակցութեան մէջ կազմակերպուած է ապօրինի ճանապարհով:

2. Այդ ապօրինի մարմինը շինել եւ գործածել է կեղծ կնիք Հ. Յ. Դաշնակցութեան անունով:

3. Հրատարակել է Հ. Յ. Դաշնակցութեան անունից մի շարք թռուցիկներ եւ յատուկ ամբաստանագրեր, աշխատելով ամենաստոր վրպարտութիւններով արատաւորել Հ. Յ. Դաշնակցութեան 1904-ի Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուած դաշնակցական մարմիններին:

4. Տաճկահայ դատի պաշտպանութեան պատրուակով երեւան գալով եւ նրա անունը շահագործելով, բուրժուական եւ այլ մթին հակադաշնակցական տարրերի ձեռքը գործիք է եղել կազմակերպութեան դէմ եւ որոշ չափով վարկաբեկել է այդ դատը հայ հասարակութեան առաջ:

5. Կազմակերպելով «Զինուորական Խորհուրդ», նպատակ է ունեցել յայտարարել զինուորական դիկտատուրա, բռնի միջոցներով իր ձեռին առնելու կուսակցութեան վարչական գործը, դրամը, կայքը:

6. Իւրացրած է կապմակերպութեան մի քանի վէնքերը:

7. Գործիք է դարձած իշխանութեան ձեռքին եւ գտնւում է գաղտնի ոստիկանութեան յատուկ հովանաւորութեան ներքոյ:

8. Ապօրինի այդ մարմնի գործունէութիւնը անպայման եւ աներկդիմի կերպով պարսաւի է արժանացել Դաշնակցութեան բոլոր մարմինների եւ գործիչ ընկերների կողմից. (Երկրի, Ռուսաստանի եւ արտասահմանի):

9. Ընդհանուր եզրակացութիւն՝ «Ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ» անուան տակ միացած ուժերու գործունէութիւնը ոչ միայն վերին աստիճանի մի խուլիգանական շարժում է, ունենալով նեցուկ հայ բուրժուա տարրերը, ռուս ոստիկանութիւնը, այլեւ մի ստոր դաւաճանութիւն է՝ մասնաւորապէս տաճկահայ դատին, որի անունն էր շահագործում, եւ հայ կեղեքուած մեծամասնութեան շահերին՝ ընդհանրապէս»:

Նիստը փակուեց ժամը 8½ին:

ՆԻՍ 87, 88, 89, 90, 91, 92 (վեց նիստ)
(Ապրիլ 18 - 22)

Նախագահներ՝ Համօ, Մալումեան, Թոփչեան, Վռամեան:

Օրակարգն է կազմակերպական կանոնագրի վերաքննութիւնը եւ հաստատումը:

Մանախումբի կողմից (որի անդամներ էին Համօ, Մալումեան, Զոհրապեան), ընկ. Մալումեան ներկայացրեց կանոնագիրը, կատարուած յանձնումներով ու փոփոխութիւններով եւ Ժողովը այդ աշխատանքին նուիրեց վեց նիստ: Բոլոր յօդուածները մէկ մէկ կարդացուեցան եւ ենթարկուեցան քննութեան:

Ժողովը վերջին նիստում հաստատեց վերակազմուած կանոնագիրը եւ յանձնարարեց ԻՄՁի յանձնաժողովին՝ վերջնականապէս խմբագրել եւ Ժողովի փակումից ամենաշատը 15 օրուայ ընթացքում տպագրել եւ ուղարկել բոլոր մարմիններին:

Ցուցականի անդամ Սաֆոյեդ դրուագ խնդիր է առացուել՝ երկու օր եւս ժամանակաւորիս տալու իրեն, որպէսզի կարողանայ յանձնաժողովին արուելիք պատասխանը պատրաստել:

Ժողովը որոշեց բաւարարութիւն տալ այդ խնդրին, թէեւ զբաւաւ, որ Սաֆոյին պատճառաբանութիւնը անհիմն է միանգամայն: Սաֆոյին պէտք է յայտնել որ նա ամեն 19ի առաւօտեան պէտք է ներկայացնէ իւր պատասխանը, վերցրած դռհումենտների հետ միասին:

Ցաղատ ԱՔՆԵԱՆ մանախումբի կողմից զեկուցում է տալիս Լեռնամերձի նախկին ընկեր Մարկոսի կատարած չարաշահութեան մասին եւ ներկայացնում է մանախմբի առաջարկը այդ մասին:

Տեղի ունեցած վիճաբանութիւններից յետոյ՝

Նախագահը առաջարկում է հաստատել Լեռնամերձի Շրջանային Ժողովի որոշումը, որի հիման վրայ Մարկոսը հեռացուել է Լեռնամերձից:

Այս առաջարկին ընդդիմանում է, մէկ ձայնի բացառութեամբ: Դրա հետ միասին որոշւում է՝ յայտնել Մարկոսին, որ նա այլեւս ազատ է Վիճակից հեռանալու:

Վռամեան բողոքում է Ժողովի այս որոշման դէմ:

Զաւրեան միանում է այդ բողոքին:

ՆԻՍ 93, 95, 97, 98 (չորս նիստ)

Նախագահում էին՝ Զաւրեան, Վռամեան, Համօ, Մալումեան:

Ընդհ. Ժողովը այս չորս նիստը նուիրեց Մրագրի այլեւայլ կէտերի քննութեան եւ մշակութեան:

Գլխաւոր հարցերը պատում էին տնտեսական, ազգային, քաղաքական, ինչպէս եւ Ֆեդերացիայի եւ Դաշնակցութեան նպատակի նուազագոյն պահանջների չուրջը:

Այդ հարցի վերաբերութեամբ բանաձեւեր ներկայացրին՝

Թոփչեան:— Հասարակական հոլովոյթը, կապիտալիզմի զարգացումը ու ամիատի դերը:

Զաւարեան:— Ազգային եւ կալտուրական [մշակութային] իրաւունքների խնդիրը:

Խահակեան:— Ցնտեսական-հասարակական զարգացման փուլերը [փուլերը]:

Շահխաթունեան:— Ցաւելեալ-արժէքի սկզբունքը:

Մալումեան:— Դաշնակցութեան սոցիալիստական ազատակը եւ յեղափոխական տակտիկը. մեր ցնտզագոյն պահանջները:

Համօ:— Դաշնակցութեան պատմա-փիլիսոփայական սկզբունքները:

Ահարոնեան:— Ազգային կռուի ազդեցութիւնը դասակարգային շարժումների վրայ:

Ժողովը այդ հարցերի չուրջը կատարեց մանրամասն վիճաբանութիւն:

Որոշուեց՝ բոլոր բանաձեւերը, որոնք հաստատուեցին այդ չորս ժողովներում, յանձնել ԻՄՁի յանձնաժողովին՝ զեկուցում տալու դրանցով Մրագրի վերջնական խմբագրութեան մէջ:

ՍԱՆՕՓ.— Քարտուղարների մի մասին սահպղական մեկնութիւնը եւ ժամանակի սղութիւնը՝ թոյլ չտուեց այդ չորս ժողովներում արձանագրութիւնները կազմել ըստ սովորականին:

94ՐԴ ՆԻՍ (20 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է՝ Մալումեան:

Ներկայ են 28 ժողովական:

Բացակայ են՝ Իչխան, Անդրանիկ (Հիւանդ), Գուսան, Վարդան:

Օրակարգն է Ցուցականի հակա-զեկուցումը:

Ցուցականի ներկայացուցիչ Սափոն իր պատասխանը բաժանել եւ գաստւորել էր Ցուցականի Ցանձնաժողովի զեկուցման համեմատ: Այդ պատասխանը բաղկացած էր երեք բաժիններից ա) տնտեսական, բ) կազմակերպական եւ գ) ընկերական յարաբերութիւններ: Այս նիստում նա կարդաց միայն առաջին մասի զեկուցումը, որը տեւեց 3 ժամ եւ 20 րոպէ:

Նախագահ.— Արդէն լրացաւ այն ժամանակամիջոցը, որ Ժողովը նշանակել էր Ցուցականի պատասխանի համար: Ես պատասխանատուութիւնը Ժողովի եմ Ժողովին եւ առաջարկում եմ որոշել այն հարցը, թէ արդեօք ուզո՞ւմ էք հենց այժմ վերջացնել թէ Ժողովը մի այլ նիստ:

Գագիկ.— Այժմ անկարելի է կէս ժամում հապճեպով վերջացնել: Իմ կարծիքով լաւ կը լինի, որ վաղն էլ մի երկու ժամ նուիրենք այս խնդրին եւ միանգամայն փակենք:

Թոփչեան.— Թէ Ցուցականի ներկայացուցիչը մեզ երկու բաժինների՝ կազմակերպական եւ ընկերական յարաբերութիւնների վերաբերմամբ էլ այսպիսի պատասխան տայ, ես կ'ասեմ, որ յանձնաժողովը բոլորովին պատրաստութիւն չունի նորին խօսելու: Նա յանձնաժողովի դրած հարցումներին ուղղակի չէ մօտենում, այլ միայն պատրաստ է անում խնդրի եւ հարցերի չուրջը: Ճիշդ է, մենք անգէտ ենք մանագիտական հարցերում, բայց նա այդ չպատճառեց փաստերով: Կրկնում եմ, մենք պաշտպանելու կարիք չենք զգում:

Նախագահ.— Հետաքրքիր է իմանալ նաեւ յանձնաժողովի մեւս անդամների կարծիքը:

Վռամեան (յանձնաժողովի անդամ).— Ես եւս համաձայն եմ, որ մեւս մասերն էլ այսպէս չպատասխանուեն:

Ալամ (յանձնաժողովի անդամ).— Ես այն կարծիքին եմ, որ պէտք է դէթ 5 րոպէով պատասխանել, քանի որ նա հարցումները այնպէս է դնում եւ պատասխանում, որ հնչուեցիկ քիւրմիւրթիւնների առիթ կը տրուի:

Զարդարեան.— Քանի որ խնդիրը խիստ մասնագիտական է եւ ծանր, մենք իրր ոչ-մասնագէտներ՝ անկարող ենք պարզել եւ վերլուծական եզրակացութեան գալ: Ես առաջարկում եմ միանգամ ընդմիշտ վերջնել այս հարցը Ընդհանուր Ժողովից եւ յանձնել մի պատասխան մարմնի:

Քուէարկութեան է դրւում այդ առաջարկը եւ մերժւում է:

Որոշեց յետոյ նախագահը դնում է այն հարցը, թէ Ժողովը կանկոնո՞ւմ է համաձայնել Սաֆոյի առաջարկին՝ յետաձգել Ժողովը եւ նիւթ դարձնել մի այլ նիստ: — Ժողովը համաձայնում է. իսկ թէ այդ խնդիրը ե՞րբ օրակարգի մէջ կը մտցուի, դա թողնւում է դիւանին: Միաժամանակ որոշուեց մի նիստում բոլորովին վերջացնել Ցուցականի հարցը այսպէս՝ 2 ժամ յատկացնել Սաֆոյին իր պատասխանը վերջացնելու համար, մի ժամ Ցուցականի մեւս անդամներին՝ նոր ցուցմունքներ եւ լուսաբանութիւններ տալու եւ մի ժամ էլ Ժողովին, հարցը փակելու համար:

Ժողովը փակուեց 8½ին:

96ՐԴ ՆԻՍ (21 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է՝ Համօ:

Ներկայ են՝ 25 ժողովական:

Բացակայ են՝ Իչխան, Զէյլեան, Սեպուհ, Անդրանիկ (Հիւանդ), Վարդան:

Օրակարգն է «Զիֆոն»ի հաշիւը:

«Զիֆոն»ի ներկայացուցիչ ընկ. Գագիկը տուեց 1905ից ի վեր գնուած հրազէնների (հրացան, ատրճանակ եւ գիլդիներ) մանրամասն հաշիւը: Նախքան հաշուին անցնելը, նա մի քանի խօսքով ծանօթացրեց այդ ձեռնարկին կազմակերպութեանը: Սկզբում Կ. Կոմիտէներին կից կազմուել էր մի մարմին, որը վարում էր ղէնքի գնման գործը: Ի նկատի ունենալով այդ հանգամանքից առաջացած անխուսափելի անյարմարութիւնները եւ բարդութիւնները, 1905ի Ռայոնական Ժողովը որոշում է կազմել արեւելեան Բիւրոյին կից մի յատուկ մարմին՝ «Զիֆոն»ը (Զինական Ֆոնդ), որին եւ յանձնում է ղէնքի գնման գործը եւ այդ ամբողջապէս կենտրոնացնում նրա ձեռքում:

Ընդհանուր Ժողովի որոշմամբ՝ արձանագրութեան մէջ են մտցուում այդ հաշուի մի քանի գրաւոր թուերը: (Տես այս նիստի վերջը):

«Զիֆոն»ի հաշուի զեկուցումը տեւեց 45 րոպէ: Այս հարցի վերաբերմամբ եղան մի քանի հարցումներ:

Սեպուհ.— Գնուած հրացաններից որքա՞նն է տեղ հասել:

Գագիկ.— Դժուար է այդ հարցման որոշակի պատասխան տալ: Տեխնիկական յարմարութիւն ուղղակի չկայ այդ բանը ստուգելու համար: Վերջերս երկու հոգուց մի յանձնախումբ է ուղարկուած բոլոր վայրերը, որպէսզի թէ՛ ղէնքերի եւ թէ դրամականի հաշիւը ստուգեն եւ մաքրեն. այն ժամանակ հնարաւոր կը լինի դիտնալ, թէ ի՞նչքան հրազէն ունենք եւ թէ դրանք ո՞րտեղ են գտնւում: Ցամենայն դէպս կորուստը 10–15%ից աւելի չէ կարող լինել: Վերադիր վճարն էլ կարելի է հաշուել 10%:

Վռամեան.— Այժմ ի՞նչքան զէնք կայ պատրաստի:

Գագիկ.— Շատ քիչ. մի մասը ղրկուած է Երկիր. իսկ թէ մարմինները ո՞րքան են ծախել ժողովրդին, դեռ յայտնի չէ:

Համօ.— Գնումը դեռ չարունակո՞ւմ է:

Գագիկ.— Այո՛, բայց ոչ Թուսաստանում, այլ միայն Կովկասում եւ Երկրի համար:

Սրանից յետոյ ընտրուեց մի մանախումբ, որին հոգուց բաղկացած (Գագիկ, Մուրատ եւ Բարսեղեան) որպէսզի եղած գրաւոր եւ բերանացի տեղեկութիւնների հիման վրայ՝ Դաշնակցութեան հրազէնների մի տախտակ կազմեն:

Ցօսք բացուեց նաեւ Բաքուի չրջանի զէնքերի մասին, որ ուղարկուած է եղել գլխաւորապէս Արեւմտեան Բիւրոյի կողմից եւ որոշուեց՝ պահանջել, Արեւելեան Բիւրոյի միջոցով, ուղարկուած զէնքերի մանրամասն հաշիւը:

ՋԻՖՈՆԻ ՀԱՇԻՒԸ ԳՆԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՎՃԱՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ		քանակ	արժէք ռուբլի	 կոպէկ
Մօսինի հրացան		982	54·155	59
Բերդանի հրացան		998	34·367	80
Մաւզեր եւ այլ տեսակ հրացաններ		324	14·910	90
	ընդամէնը	2·304	103·434	29
Մաւզեր եւ Բօրխարդի ատրճանակներ		793	32·901	30
Պարաբելլում ատրճանակներ		210	7·709	—
Սմիտվէսըն, Նագան, Բարաւնինկ եւ այլ տեսակ ատրճանակներ		2·839	55·581	93
	ընդամէնը	3·842	96·192	23
Փամփուշտ վանապան տեսակ հրացանների		639·196	70·858	23
Դատարկ գիլզի վանապան տեսակ հրացանների		735·767	40·905	23
Փամփուշտ վանապան տեսակ ատրճանակների		518·727	31·968	98
	ընդամէնը	1·893·690	143·732	44
Հրացանի մեծ եւ փոքր մասեր		2·628	13·966	31
Փամփուշտի մասեր (վառօդ, գնդակ, շապիկ, արճիճ եւն),			12·876	66
ճաթռուկ (պիստոն)		1·305·000	2·547	50
Զանապան գործիքներ			6·017	52
Ամաններ (ճամբրուկ, սնտուկ, պարկ եւն.)		817	1·483	86
Հագուստեղէն վինուորների եւն. (եափունջի, գլխարկ եւն.)			4·306	44
Դաշոյններ եւ ֆիննական դանակներ		375	580	—
Խնձորի եւ հրթիռի պարագաներ, մաքս, եւն.			2·905	25
Վերադիր ծախսեր ընդհանուր փոխադրութեան			69·745	79
	Ընդհանուր գումար	— — — —	457·788	29

ՋԻՖՈՆԻ ՀԱՀՈՒԵԿՀԻՒ	ռուբլի	կոպէկ
Մուտք		
Բիւրոյից ստացուած 1905-1906 թ.	307·788	58
«Փոթորիկ»ից ստացուած է	113·000	—
Եկեղեցու հանգանակութիւնից — Փոթոյի հաշիւ	43·000	—
Մեծ Քաղաքի վաճառականական կոմիսիայից	25·000	—
Համապասպից՝ աւանս ապրանքի գնման համար	9·100	—
Գիւղացիներից՝ աւանսներ ապրանքի գնման համար	21·096	—
Վաճառուած ապրանքներից	3·188	—
Բանկի տոկոսներ	1·208	50
Այլ մարմիններից	104·629	03
	628·010	11
Ելք		
Տրուած՝ ռպմամթերքի, գործիքների, հագուստների	386·595	50
Ծախուած՝ փոխադրութեան, ճանապարհածախսի, կաշառքների, հիւանդանոցների, պահեստների, ապրուստի, դիւանական	69·745	79
Փոխադրած՝ այլ մարմինների	98·778	00
Կորուստ կամ կասկածելի ապառիկներ	6·266	97
	561·386	26
Մնացորդ աւանսներ՝ առ 1 Դեկտ. 1906 թ.	34·551	43
Մնացորդ կանխիկ դրամ վանապան վայրերում առ 1 Դեկտ. 1906	32·072	42
Գումար	628·010	11

99ՐԴ ՆԻՍՏ (23 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան։

Ներկայ են 27 ժողովական։

Բացակայ են՝ Իչխան, Վարդան (հիւանդ), Անդրանիկ (հիւանդ)։

Օրակարգն է՝ «Թուրքիոյ ընդդիմադիր տարրերի հետ համերաշխութեան» բանաձեւը։

Բանաձեւ ներկայացնում են՝ Միմոսեան եւ Արամ։ Նախագահը քուէարկութեան է դնում Արամի բանաձեւը։

Ժողովը անհրաժեշտ է համարում մի երկու կէտերի վերաբերմամբ արտայայտուելու։ Եւ վիճաբանութիւն ու կարծիքների փոխանակութիւն է տեղի ունենում գլխաւորապէս անկատ թէ խառն կոմիտէներ ուղեւորելու հարցին չուրջը։

Ռուստամ։— Որ մեր կուսակցութիւնը անկատողական ձգտումներ չէ ունեցել, դրան իբր ապացոյց կարող է ծառայել հենց մեր գործունէութիւնը։ Եթէ այժմ այստեղ այս խնդրի վերաբերմամբ հարց է բարձրանում, պատճառն այն է, որ մեր ընկերներից շատերը ուղղակի չգիտեն մեր որոշումների մասին։ Մեր 17 տարուայ գործունէութեան ընթացքում մենք ապացուցել ենք շատ անգամներ [որ նման ձգտում ունեցած չենք]։ Բացի այդ, 1904ի Ընդհանուր ժողովում եղել է չեչտուած որոշում։ Գալով համերաշխութեան, պէտք է ասեմ, որ այդ կէտնքի մէջ լայն չափով չէ իրագործուում։ Այդ ուղղութեամբ կազմակերպութիւնը մեծ ջանք է գործ դրել, բայց աչքի զարնող յաջողութեան չի հասել։ Ես, ի հարկէ, միանգամայն համաձայն եմ համերաշխութեան գործառնութեան օտար ընդդիմադիր տարրերի հետ։ բայց ես վտանգաւոր եմ համարում միանալ Թուրքերի եւ քիւրտերի հետ, խառն կոմիտէներ կազմակերպելով, քանի որ վերջիններս զեկավարուում են հարուստների եւ բէգերի կողմից։ Էրզրումի չարժման զեկավարները եղել են երեք ամենայայտնի վաչխառուներ։ Դժգոհութիւնը աշխատաւոր տարրերի մէջ, տգիտութեան պատճառով, դեռ շատ աղօտ է եւ Թոյլ։ Իմ կարծիքով տեղական մարմինները կարող են համաձայնութեան գալ քիւրտերի, Թուրքերի եւ ատրինների հետ, եւ ի հարկին համերաշխութեան ձեռնարկներ անել։

Զարդարեան։— Ես միանգամայն հակառակ եմ խառն կոմիտէներ կազմելու առաջարկին։ Դեռ ժամանակը չէ նման ձեռնարկներ անելու, քանի որ Թուրք մասան անգիտակ է եւ անկարող մեր ծրագրով զեկավարուելու։ Սրանից զատ մեր գործակցութիւնը Թուրքերի հետ առիթ կը տայ նոր կոտորածների եւ խլրտումների։ Մենք պէտք է աշխատենք հեռուից տոն տալ չարժումներին եւ խիստ վերապահութեամբ վերաբերուել։

Համօ։— Ընդունելով հանդերձ, որ մեր չարժման մէջ երբեք անձատողական բնոյթ չկայ, բայց մենք միշտ էլ եւ այժմ, պէտք է չեչտենք դրա վրայ։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ հենց մեր դրած իդէալից չէ բխում սեպարատիստական ուենչ։ Բայց ինձ բոլորովին զարմացնում է ընկ. Զարդարեանի առարկութիւնը։ Մի՞թէ նա կարծում է, որ եթէ մենք մենակ գործենք եւ չմիանանք ընդդիմադիր տարրերի հետ, կառավարութիւնը չպէտք է կոտորէ հայերին։ Առարկութիւնն ու վախը անհիմն լինելով, ես չեմ ուզում ծանրանալ դրա վրայ։ Կառավարութիւնը միշտ էլ առիթներ կարող է գտնել կոտորածներ առաջ բերելու, եթէ ուզէ։ Թուրքերը դիմում են մեզ եւ խնդրում մեր աջակցութիւնը եւ զեկավարութիւնը։ Մենք չպէտք է մերժենք այդ։

Արամ։— Փաստ է, որ Թուրքիայում տեղի ունեցող եւ քաղաքական գոյն կրող չարժումները զեկավարուել են մեր ձեռքով։ գուցէ մեր ընկերներից շատերը չգիտեն այդ մասին։ Թուրքերը յաճախ ասել են մեր ընկերներին՝ Վանում, Էրզրումում եւ Եւրոպայում, որ դուք պէտք է լինէք մեր ուսուցիչները։ Մենք պէտք է մօտենանք այդ ընդդիմադիր ուժերին։ այդ է պահանջում մեր իսկ շահը։ Գալով անձատման խնդրին, ես առաջարկում եմ, ոչ Թէ սոսկ որոշումով բաւականանալ, այլ պաշտօնապէս յայտարարել, քանի որ մինչեւ այժմ էլ տիրում է առաջուայ Թիւր կարծիքը եւ մինչ էլ կրկնւում է։

Մուրատ։— Մեր ընկերներից մի քանիսը խիստ լաւատես են։ բայց ես դժբախտաբար անկարող եմ նրանց լաւատեսութիւնը բաժանել։ Եթէ համոզուած լինեմ, որ Թուրքերի մէջ առաջացած չարժումը յեղափոխական բնաւորութիւն է կրում, ես խնկով մոմով կը դիմաւորեմ, բայց իրականութիւնը այդպէս չէ։ Նրանք ոչ Թէ նոր պետական կարգեր են պահանջում, այլ հին խալիֆայութիւնը։ Նրանց մէջ չկայ յեղափոխական չարժում, հետեւապէս չենք էլ կարող միացած գործ ձեռնարկել։ Շատ չատ մենք կարող ենք հեռուից տոն տալ, Թելեգրումներ անել, բայց երբե՛ք խառն կոմիտէներ կազմել։ Հայերս դեռ ջուրը չտեսած հանուել պիտենք։

Վռամեան։— Ես եւս այն կարծիքին եմ, որ մենք խիստ վերապահութեամբ պիտի վարուենք։ Ես համաձայն եմ աջակցելուն, դրամ տալուն, բայց մենք աշխատելու ենք երեսան չգալ։ Այս էլ պիտի ասեմ, որ մենք չատ էլ չոգեւորուենք հեռուէն եկած ձայներով։

Նախագահ։— Զգուշութիւնը ինքնըստինքեան հասկանալի է։ դրա վրայ խնդրում եմ չծանրանալ։

Ահարոնեան։— Մեր մէջ կայ անձատողական ձգտում, այդ չպէտք է ուրանալ։ Մենք պահանջում ենք

րեֆորմներ [բարենորոգումներ]՝ ոչ թէ համայն պետութեան, այլ վեց վիլայէթների համար. դրանից զատ մենք պահանջում ենք մի եւրոպական ներկայացուցիչ հայերի համար, եւ այդ բոլորը դիտւում է Թուրքերի կողմից իբր սեպարատիզմ: Այո՛, մենք միայն սեպարատիստներ ենք համարւում: Թուրքերը առաջարկում են մեզ Սաբահեդդինի ծրագիրը. եթէ չընդունենք, հետեւալէս կը համարուենք սեպարատիստներ:

Վռամեան.— Տաճկաստանից անջատուելու մասին, ոչ ոք չի մտածի. դա կը լինէր յիմարութիւն. ոչ թէ որովհետեւ չենք կարող, այլ հենց մեր տնտեսական չահերը կը պահանջեն միացած մնալ: Մեր պահանջած ֆեդերացիան չեն ըմբռնում Թուրքերը եւ դրա մէջ են տեսնում սեպարատիզմ: Անհրաժեշտ է համոզել եւ հասկացնել Թուրքերին, որ դա միակ միջոցն է Թուրքիայի ամբողջութեան համար. հակառակ դէպքում նա կը բաժանուի:

Միհնասեան.— Ժէօն Թուրքերն անգամ չեն կարողանում հասկանալ մեր այդ համերաշխութիւնը, ուր մնաց թէ անգիտակ Քուրք ժողովուրդը: Թուրքը դեռ ղեկավարւում է կրօնական հոգուով եւ եթէ Թուրքիան կուռի բռնուի մի որեւէ քրիստոնեայ պետութեան հետ, իսկոյն Թուրքերը կը կանգնեն հայերի դէմ: Մենք պէտք է ժէօն Թուրքերից սկսենք: Շատ շատ կարող ենք թեւլդրութիւններ անել հեռուից եւ քաջալերել, բայց միասին հրապարակ դուրս գալ պայքարելու, ես վտանգաւոր եւ վաղաժամ եմ համարում: Մեր կուսակցութիւնը, ինչպէս հէնտել եմ բանաձեւի մէջ, պիտի լինի կոչ [խորհրդաժողովը]:

Նախագահը քուէարկութեան է դնում Արամի բարեփոխուած բանաձեւը մաս մաս: Ամբողջ բանաձեւը, «նկատումի»ներից զատ, անցաւ ձայների մեծամասնութեամբ: I մասը՝ + 18, — 5, ձեռնպահ՝ 2: II մասը՝ միաձայն, III մասը առանց քուէարկութեան ընդունուեց, աւելի քան հասկանալի համարուելով. IV մասը՝ + 23, — 1, ձեռնպահ՝ 2:

Ապա քուէարկութեան է տրւում Մինասեանի բանաձեւը:

Միհնասեան.— Ես աւելորդ չեմ համարում նկատել, որ ընկ. նախագահը պէտք է առաջ իմ՝ իբր այդ խնդրի զեկուցանողի՝ բանաձեւը քուէարկութեան դնէր:

Չելալեան.— Որովհետեւ դա գործին չէ գալիս: (Լսւում են բողոքներ այս դարձուածի դէմ):

Նախագահ.— Ես բողոքում եմ ձեր (Չելալեան) անվայել նկատողութեան դէմ, եւ կ'ուզէի, որ երբեք նման խօսքեր չլսուէին այս ժողովում: (Առաջարկւում է այս արձանագրութեան մէջ մտցնել): Ապա ներողութիւն եմ խնդրում ընկ. Մինասեանից՝ կատարուած թիւրիմացութեան համար: Ես կարծում էի, որ ընկ. Արամի հետ համաձայնութեան էք եկել:

Մինասեանի բանաձեւի առիթով ժողովը յայտնում է այն կարծիքը, որ ըստ էութեան զեկուցանողի մտքերը արդէն արտայայտուած են ընդունուած բանաձեւի մէջ:

Շօշափուող հարցի վերաբերմամբ լրացուցիչ բացատրութիւններ կային նաեւ Զաւարեանի, Ռոստոմի եւ Վռամեանի կողմից, որոնք ընդունուեցին ժողովից: Ուստի ժողովը ընտրեց երեք հոգուց — Զաւարեան, Ռոստոմ, Զարդարեան — կազմուած մի մասնախումբ, որին յանձնուեցին բոլոր բանաձեւերը, որպէսզի դրանցից լրացած եւ մշակուած մի ընդհանուր բանաձեւ բերուի ժողովին:

Ապա ընկ. Համոն ներկայացրեց «Նախահաշուի» զեկուցումը, որ տեւեց 30 րոպէ:

Նիստը փակուեց ժամը 1½-ին:

100ՐԴ ՆԻՍՏ (23 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է՝ Մալումեան:
Ներկայ են Ժողովականներ:
Բացակայ են՝ :

Շարունակութիւն «Նախահաշուի» քննութեան:

Մանուկ, Տրապիզոնում գտնուող 40·000 ֆրանքի վերաբերմամբ յայտնում է, որ այդ գումարը որոշուած է:

Ռոստոմ.— Մենք քանիցս դիմումներ ենք արել Տրապիզոն, բայց ոչ մի վճռական պատասխան չենք ստացել: Արդեօք այդ գումարը այժմ եւս գոյութիւն ունի՞ թէ ոչ: Հասցէներ ենք հաղորդել, որպէսզի դրւեն մեզ, բայց միշտ էլ խոյս են տուել, պատճառաբանելով, թէ նամակ են գրել: — Ես կարծում եմ, որ այնտեղ միտք չունեն այդ գումարը ձեռքից բաց թողնել, գուցէ ուզում են բացառապէս տեղական կարիքների համար գործածել: Կասկած կայ, սակայն, որ գումարը մի քանի անձնաւորութիւնների ձեռքն է: Գիտեմ, ի՞նչ միջոցների դիմենք, որպէսզի այդ 40·000ը ստացուի:

Զաւարեան.— Այդ գումարը ձեռք է բերուած տեղացիների նախաձեռնութեամբ. չգիտեմ, սակայն, ինչպէ՛ս են պահել այն: Լսեմ եմ, որ վերցրել 40ական ոսկի բաժանել են իրար մէջ՝ պահելու համար: — Ներկայումս գումարի մի մասը հալուած պիտի համարել. մնացածի վերաբերմամբ հարկաւոր է աշխատել, որ ուղարկուի Մուշ, Վան, կամ մի այլ տեղ:

Ժողովը ընդունում է Զաւարեանի այս վերջին առաջարկը:

Զաւրեանի միսիայի գումարը:

Համօ.— Զաւրեանին ուղարկուել է բաղէչ՝ 2·000 ոսկի, բայց որովհետեւ Զաւրեանը հեռացել էր բաղէշից նախքան այդ գումարի տեղ հասնելը՝ գումարը մնացել է այդտեղի ռուսաց հիւպատոսի մօտ: Արեւելեան Բիւրոն կարգադրեց, որ հիւպատոս Շիկովը, այդ գումարից 5000 ռուբլի բաժանէ հայ սովեալներին: Վերջը, սակայն, իմացուեց, որ Շիկովը, իր հայ քարտման հետ միասին եւ սրա դրդմամբ վատնել է այդ 5000 ռուբլին: Ներկայումս միջոցներ են ձեռք առնուած, որպէսզի Պոլսոյ ռուսաց դեսպանատան միջոցով Շիկովից յետ առնուեն վերոյիշեալ դրամները:

Նախագահի առաջարկութեամբ՝ միսիայի մնացորդ գումարը հանւում է հաստատ եկամուտների ընդհանուր ցանկից եւ մտցւում Սասունի եւ Մուշի սովեալների համար հանգանակուելիք 100·000 ֆրանքի մէջ:

Ժողովը անցնելով Արեւմտեան Բիւրոյի 25·000 ֆրանք եկամուտի հարցին՝ որոշեց, որ այդ գումարի մէջ պիտի հաշուել Թէ՛ «Դրօշակի» եւ Թէ բոլոր միւս հրատարակութիւնների եկամուտը: Մարմիններին որոշուած Թերթերի եւ գրքերի դինը պիտի գրել եկամուտ՝ ի հաշիւ այն մարմինների, որոնց ուղարկւում է:

Նալբանդի եւ Թլատի Կ. Կոմիտէները, միացած, պէտք է տան 20·000 ֆր. տարեկան:

Մուրատ.— Ինձ Թւում է տարօրինակ այն՝ որ Մեծ Քաղաքը՝ 25·000 ֆրանք պիտի տայ, Նալբանդն ու Թլատը՝ 20·000 ֆր. տարեկան, եւ սրանց հետ միասին Մուշ–Սասունը՝ նոյնպէս 20·000 ֆրանք:

Նախագահը առաջարկում է Մուշ–Սասունի 20·000ը իջեցնել 10·000ի՝ հաշուելով Երկրի Կ. Կոմիտէների նուազագոյն չափը 10·000 եւ ոչ Թէ 20·000:

Այս առաջարկը չէ անցնում:

Մուշ–Սասունի սովեալներին օգնելու համար Ժողովը որոշեց 100·000 ֆրանքի հանգանակութիւն բանալ՝ մասնաւոր կերպով:

Ժողովը անցաւ Արեւելեան Բիւրոյի տարեկան 20·000 ֆրանք ծախքի հարցին:

Ռոստոմ.— Արեւելեան Բիւրոն ծախսեր չպիտի ունենայ: — Ռոճիկաւոր անդամներ չպէտք է լինեն. ռոճիկ տալ Բիւրոյի անդամներին՝ նշանակում է զբաղցրել բոլոր միւսների ախորժակը:

Զաւարեան.— Բոլորովին դուրս հանել ծախսերը՝ դժուար է, հարկաւոր է մի փոքր գումար ունենալ՝ ճանապարհածախսի համար եւն.: Բեւոյ այն սկզբունքը պէտք է անցկացնել այստեղ, որ իւրաքանչիւրը մեզանից՝ կազմակերպական դրամներով ապրելով՝ չպէտք է երբեք ծախսէ այնչափ, որչափ ծախսելիս է եղել առաջ իւր սեփական միջոցներով:

Զաւրեան.— Չէ կարելի որոշ գումար չդնել Բիւրոյի անդամների տրամադրութեան տակ, քանի որ նրանք ամբողջովին զբաղուած են կուսակցութեան գործերով: Ռուս յեղափոխականների մէջ ընդունուած է այդ: Մենք եւս պէտք է նոյնն անենք, ուշադրութիւն չդարձնելով զանազան ասէկոսեների վրայ:

Մալումեան.— Այս խնդրի մէջ մեր մարմինները չատ խիստ պիտի լինեն խնայող, որովհետեւ դա լոկ դրամական հարց չէ, այլեւ բարոյական՝ ամենից առաջ: Եւ ուրախութեամբ պէտք է նկատել, որ Դաշնակցութեան ղեկավար մարմինները, այդ կողմից համեմատելով ուրիշ չատ կուսակցութիւնների հետ, միշտ եղել են խստապահանջ: Ռուս եւ մահմեդոնացի ընկերները միշտ զարմանքով են ընդունել այն փաստը՝ որ, օրինակ, Արեւմտեան Բիւրոյի անդամները ստանում են ամսական 150 ֆրանք. իսկ Արեւելեան Բիւրոյի ընկերները՝ մի համեստ գումար, հազիւ բաւական ապրելու համար: Տարաբախտաբար, այդ խնայող սիստեմը, որ ընդունուած է մեր ղեկավար մարմինների չրջանում, վերջին տարիներս խախտուած է կազմակերպական մի քանի այլ խաւերում, մի հանգամանք, որ առիթ է տալիս հրէչաւոր լուրերի եւ թիւրիմացութիւնների: Պէտք է դրա առաջն առնել: Ցանձնարարելով այս հանգամանքը ընկերների ուշադրութեան, գտնում եմ, որ Արեւելեան Բիւրոյի համար պէտք է պահել առաջարկուած գումարը:

Արամ.— Մեզ հարկաւոր են կողմնակի զբաղմունքներից միանգամայն ազատ մարդիկ, որոնք միջոց ունենան՝ գործը կանոնաւոր եւ եռանդուն կերպով առաջ տանելու:

Զաւարեան առաջարկում է՝ 20·000ը իջեցնել 10·000ի:

Առաջարկը չէ անցնում: Եւ Ժողովը հաստատում է 20·000ի գումարը:

Կովկասում գրաւոր եւ բանաւոր պրոպագանդա վարելու գործի համար դրուած է 80·000 ֆր., որը հաստատւում է Ժողովի կողմից:

կովկասում քաղաքական կռիւ մղելու համար նշանակում է 75·000 ֆր.։

Խսահակեան չափազանց քիչ է գտնում այդ գումարը, ի նկատի ունենալով, որ Թերեւս պահանջ լինի ակտիւ քայլերի դիմելու կառավարութեան դէմ։ Առաջարկում է գումարը բարձրացնել 150·000ի։

Այս առաջարկը մերժւում է։

Որոշւում է «Փոքրորիկի» գումարներից մի որոշ մաս վերցնել եւ մտցնել նախահաշուի մէջ։

Նիստը փակուեց ժամը 9ին։

101ՐԴ ՆԻՍՏ (24 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Զաւարեան։
Ներկայ են ժողովական։
Բացակայ՝ ։

Քուէարկութեան է դրւում «Բռնի հանգաստեցուցեալ» բանաձեւը՝ մի քիչ բարեփոխուած։

Զաւրեան կարծելով, որ Դաշնակցութիւնը անկարող կը լինի այդ որոշման վրայ կանգնելու, առաջարկում է դուրս դնել բանաձեւի մէջից «վերջնական» բառը։

Ժողովը համաձայնւում է։

Վռամեան.— Քանի որ իմ բանաձեւի եւ ոչ մի կէտը չէ մտել յանձնաժողովի բանաձեւի մէջ, ուստի ստիպուած եմ իմ բանաձեւը առանձին քուէարկութեան դնել։ Ինձ համար հետեւանքը նշանակութիւն ունի, եւ ես չեմ հաւատում, որ ներկայացուած բանաձեւի հետ կապուել կարողանանք։

Քուէարկւում են յանձնաժողովի եւ Վռամեանի բանաձեւերը զոյգ զոյգ. յանձնաժողովի բանաձեւը ստանում է 15 ձայն իսկ Վռամեանինը՝ 5 ձայն. ուրեմն երկուսն էլ մեծամասնութիւն չեն ստացել։

Նախագահի առաջարկութեամբ նորից քուէարկւում է յանձնաժողովի բանաձեւը, դուրս դնելով վերջին մասը, ուր ասուած է թէ պէտք է այդ որոշումը «Դրօշակի» միջոցով յայտարարել ի գիտութիւն։ Այս բանաձեւը միայն 8 ձայն ստացաւ եւ չանցաւ։ — Բանաձեւի վերջնական քուէարկութիւնը յետաձգուեց մի այլ նիստի, երբ բոլոր ընկերները ներկայ կը լինեն։

Քուէարկութեան է դրւում «Բռնի հանգաստեցուցեալ» բանաձեւը՝ մի քիչ բարեփոխուած։

Զաւրեան կարծելով, որ Դաշնակցութիւնը անկարող կը լինի այդ որոշման վրայ կանգնելու, առաջարկում է դուրս դնել բանաձեւի մէջից «վերջնական» բառը։

Ժողովը համաձայնւում է։

Վռամեան.— Քանի որ իմ բանաձեւի եւ ոչ մի կէտը չէ մտել յանձնաժողովի բանաձեւի մէջ, ուստի ստիպուած եմ իմ բանաձեւը առանձին քուէարկութեան դնել։ Ինձ համար հետեւանքը նշանակութիւն ունի, եւ ես չեմ հաւատում, որ ներկայացուած բանաձեւի հետ կապուել կարողանանք։

Քուէարկւում են յանձնաժողովի եւ Վռամեանի բանաձեւերը զոյգ զոյգ. յանձնաժողովի բանաձեւը ստանում է 15 ձայն իսկ Վռամեանինը՝ 5 ձայն. ուրեմն երկուսն էլ մեծամասնութիւն չեն ստացել։

Նախագահի առաջարկութեամբ նորից քուէարկւում է յանձնաժողովի բանաձեւը, դուրս դնելով վերջին մասը, ուր ասուած է թէ պէտք է այդ որոշումը «Դրօշակի» միջոցով յայտարարել ի գիտութիւն։ Այս բանաձեւը միայն 8 ձայն ստացաւ եւ չանցաւ։ — Բանաձեւի վերջնական քուէարկութիւնը յետաձգուեց մի այլ նիստի, երբ բոլոր ընկերները ներկայ կը լինեն։

Սրանից յետոյ քուէարկութեան է դրւում Թուրքիոյ ընդդիմադիր տարրերի եւ խմբակցութիւնների հետ Դաշնակցութեան վարելիք համերաշխութեան միացած եւ ամբողջացած բանաձեւը, որը մի քանի փոփոխութիւններով անցնում է ձայների մեծամասնութեամբ։

Այդ բանաձեւը հետեւեալն է.

«Ընդհանուր ժողովը լսելով ընկ. Միհնասեանի զեկուցումը Թուրքիոյ յեղափոխական տարրերու հետ համերաշխութեան մասին, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

«Հաշիւ ուրախութեամբ դիտելով թուրք ժողովուրդի մէջ ծայր տուած հակակառավարական դժգոհութեան երեւոյթները, նպատակաւոր վայրկեանը հասած կը նկատէ համերաշխութեան գաղափարի իրականացումը գործնական հողի վրայ դնելու, — ինչ որ, դժբախտաբար ցարդ չէր յաջողած Դաշնակցութեան՝ հակառակ տարիներէ ի վեր ձեռք առած միջոցներուն՝ համաձայն Ծրագրին եւ ցանկորդ Ընդհանուր ժողովի որոշումներուն։

Հետեւաբար ժողովը ստիպողաբար կը յանձնարարէ Երկրի մարմիններուն ամէն կերպով աջակցիլ թուրք ժողովուրդի ընդդիմադիր տարրերու՝ զեկավարելով զանոնք իրենց կռուին մէջ այդ ուժիմի դէմ։ Այդ գործակցութիւնը պէտք է այնպէս կարգադրել եւ առաջ տանել, որ թուրք բռնապետ ու ընդդիմադիր տարրը կարկառուն կերպով ապացուցէ նաեւ, որպէսզի կառավարութիւնը ամբոխային կրօնամոլութիւնը հայ ժողովուրդին դէմ գրգռելու եւ հայ յեղափոխութիւնը հակահալիֆայական կամ հակաասլանական հայ շարժումի մը իբր հեդինակը ցոյց տալու առիթէն զրկուի։

Այս տեսակէտներէն առաջնորդուելով ժողովը կը յանձնարարէ՝

ա) Երկրի մարմիններուն, որպէսզի ամէն կերպ աշխատին սկիզբը դնելու համար համերաշխ գործակցութեան եւ առաջ բերեն համերաշխութեան մարմիններ։

բ) Գաւոկան մարմիններուն՝ յանախագատրաստական բանակցութիւններ սկսիլ — յարմարագոյն եղանակով — յեղափոխական թուրք եւ այլ տարրերու եւ խմբակցութեանց հետ, որոնց գաղափակած հայեացքները եւ գործունէութիւնը տեղի կը մօտենան Դաշնակցութեան սկզբունքներուն։ աշխատիլ ճիշ եւ ուշով պրպտագնդիլ ուժ տալ՝ Երկրի թուրք ժողովուրդին մէջ տարածելով ուշադրութիւնը հրատարակութիւններ, հրահանգելով Երկրի մարմիններուն՝ ամէն կերպով աջակցիլ այս աշխատութեան։

գ) Ապա այժ տալ մեր կազմակերպութեան յանձնառու քայլերէն հրատարակութիւններու, — գիրք, թռուցիկ եւ եթէ կարելի է՝ առանձին օրգան մը։

դ) Նկատելով մանաւանդ, թէ Թուրքիոյ մէջ տարբեր տարբեր ազգութիւններու իմքնուրոյն գործունէութեան, չեն կազմեր միացած ընդհանուր ուժ մը ընդհանուր բշնամուն դէմ, գործել Թուրքիոյ այլ ազգութիւններու յեղափոխական կուսակցութեանց եւ տարրերու մէջ համերաշխութիւն առաջ բերել եւ կազմել յեղափոխական դաշնակցութիւն մը, փոխերաշխ սկզբունքի վրայ հիմնուած բազմակողմանի ծրագրով՝ որ պահովէ բոլոր ազգութիւններու իրաւունքը. այս գաղափարի իրականացման համար, առաջին պատեհութեամբ իսկ հրաւիրել կոնգրէ մը՝ վերոյիշեալ տարրերու մասնակցութեամբ։

Միեւնոյն ատեն, թուրքերու մէջ տարածուած անհիմն թիւրիմացութիւններուն վերջ տալու համար, ժողովը պարտ կը համարէ յայտարարել, որ Դաշնակցութիւնը Թուրքիոյ մէջ ունեցած չէ եւ չունի անկատակ ոչ մէկ գործում. այլ իւր գործակից է եղած ազգերու կատարեալ հաւասարութեան եւ տեղական լայն իմքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայէթներու իմքնավարութիւն, ինչ որ չի հակասեր միւս ազգերու իրաւունքին։

Բացի դրանից, աչքի առաջ ունենալ Արեւելքի մէջ այժմ կատարուող մտերու խմորումը եւ այն հանգամանքը՝ որ թուրք ընդդիմադիր շարժման զեկը ձեռքերում կը գտնուի ուժեղ դասին ձեռքը, եւ հիւրտերու մէջ դժգոհները գլխաւորապես ատամական իշխանութեան մշացորդ ցեղապետներն են, եւ հետեւաբար թէ՛ թուրք եւ թէ հիւրտ շարժման զեկավարները չեն կարող ցնատուել աշխատաւոր տարրերու հարազատ ներկայացուցիչներ։ Ու որպէսզի ճամբայ բացած ըլլանք հետագայ աշխատաւորական բանակին առաջ գալուն, մենք առանձնապէս կը շեշտենք տնտեսական եւ ընդհանուր բաղաքացիական պահանջներու վրայ»։

Մուրատ, հակառակ լինելով այդ բանաձեւին, առաջարկում է արձանագրութեան մէջ մտցնել հետեւեալ գրաւոր կարծիքը.— «Ի նկատի ունենալով, որ ա) ժողովականների 2/3ը ծանօթ չլինելով Երկրի կեանքին եւ ներկայի պայմաններին, բ) որ ընկերները լրև տեղեկութիւններով են առաջնորդւում եւ կովկասի մաշտաբով չափում Երկրի գործունէութիւնը եւ գ) որ ընկեր ժողովականները տակտիկ եւ ծրագիր են մշակում կովկասի իրականութեան վրայ յենուելով՝ ես հակառակ եմ քուէարկուող բանաձեւին»։

Նախագահ.— Ընդունելով Մուրատի կարծիքը միանգամայն սխալ, ես կ՛ասեմ, որ ամէն մի դաշնակցականի պարտականութիւնն է ծանօթ լինել Երկրին եւ ընդհանրապէս մեր գործերին. իսկ եթէ այս կամ այն ընկերը պակաս գիտէ եւ մօտէն չի ճանաչում Երկիրը, շատ էլ մեծ յանցանք չէ։ Եթէ Մուրատը իր ձեռնհասութեան վրայ է չեչտում, յոյս ունեմ, որ նա չի մոռանայ եւ ուրիշների ձեռնհասութիւնը։

Ռոստոմ.— Ես կ՛ասեմ եւ այն, որ Մուրատը միջամտել է եւ այնպիսի խնդիրների մէջ, որոնց վերաբերմամբ նա աւելի քան անձեռնհաս է։ Բայց հետաքրքիր է իմանալ, թէ ո՞րն է այդ 2/3ը, որոնք չեն ճանաչում Երկրի իրականութիւնը։

Մուրատ.— Հենց բոլորս էլ չենք ճանաչում, ինչպէս եւ ես։

Արամ.— Ես բողոքում եմ, որ մի առաջարկ, որի մասին չէ խօսուած այս ժողովում եւ չէ պատճառաբանուած, այլ անորոշ կերպով է դրուած, մտցւում է արձանագրութեան մէջ։

Կարդացւում է Կովկասի յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնների հետ վարելիք համերաշխութեան վերաբերեալ բանաձեւը։

Այս բանաձեւը համաբուում է ժողովի կողմից թեթեւ եւ բանաձեւը յանձնւում մի մանանխմբի (Ահարոնեան, Համօ եւ Թոփչեան)՝ մանրամասն մշակելու։

Թոփչեան նկատում է, որ բանաձեւի մէջ պէտք չեչտուի մեր վերաբերմունքը դէպի վրացի ֆեդերալիստները, որոնք կրում են դեռ ազնուականութեան դրոշմ, եւ սոցիալ–դեմոկրատիան, որը յաճախ ներկայանում է իբր խիստ չովինիստական կուսակցութիւն։

Նախագահը առաջարկում է «միանալ» բառը փոխել գործակցութեան, քանի որ մենք չենք կարող այդ կուսակցութիւններին միանալ, այլ միայն գործակցել եւ համերաշխ ձեռնարկներ անել։ Նա նկատում է, որ հարկաւոր է ուշադրութիւն դարձնել նաեւ մի այլ կուսակցութեան՝ «Աչխատաւորականի» վրայ, որը նոյնպէս յենւում է աչխատաւոր տարրի վրայ։

Այս նիստում Ժողովը զբաղւում է Դաշնակցութեան ընդհանուր ծրագրով։

Ներկայացուած ծրագիրը բաղկացած էր երեք բաժիններից։ Առաջին բաժինում, որ կարելի է ծրագրի նախաբան համարել, լուսաբանուած եւ պարզաբանուած էր՝ Դաշնակցութեան պատմափիլիսոփայական աչքարհահայեացքը. իսկ երկրորդ եւ երրորդ մասերում խարհահայեացքը. իսկ երկրորդ եւ երրորդ մասերում ծանրացած էր գլխաւորապէս՝ Տաճկաստանի եւ Կովկասի կացութեան վրայ։

Ծրագրի վերաբերեալ վիճաբանութիւնը թողնւում է երեկոյեան նիստին։

Նախագահը նկատում է, որ բոլոր կրկնութիւնները, որոնք կան երեք մասերումն էլ, պէտք է դուրս դցել եւ տալ խոշոր ընդհանուր գծերով։ Նկատում է, որ հարկ եղած ուշադրութիւնը պիտի յուցնել հողային հարցին, որը քիչ տեղ է գրաւում այստեղ, չնայած դրանով չհագեցուած է մեր ժողովուրդի գրեթէ 9/10 մասը։

Նիստը փակուեց ժամը 1 եւ 20 րոպէին։

102ՐԴ ՆԻՍՏ (24 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Զաւարեան։
Ներկայ են՝ 28 ժողովական։
Բացակայ են՝ Վարդան, Անդրանիկ (հիւանդ)։

Ընկերներ Ռոստոմ, Թոփչեան եւ Միհրասեան ներկայացնում են ծրագրային հարցին վերաբերեալ մի նախագիծ, որի քննութեան դիմեց Ժողովը։

Վռամեան.— Ցառաջաբանի մէջ մի բաց կայ. այդտեղ ոչ մի խօսք չէ ասուած ազգային պայքարի մասին եւ նա կանգ է առնում միայն աչխատաւորների իրաւունքների վրայ։

Շահխաթունեան.— Իմ կարծիքով պէտք էր բնորոշել զեկուցման մէջ մէկ կողմից այն ընդհանուր գծերը, որ ունի Կովկասը ամբողջ Թուրքիոյ հանդէպ

եւ միւս կողմից, այն տարբերութիւնները այդ երկուսի մէջ, որոնց հիման վրայ մենք ուրոյն պահանջներ ենք դնում:

Համօ.— Գլխաւոր կէտերի հետ համաձայն եմ, բայց ընդհանուր առմամբ Ռոստոմի կարդացած նախագիծը քոյլ տպաւորութիւն է թողնում: Նախ պարզ եւ որոշ կերպով չէ ասուած, թէ ի՞նչ է կուսակցութեան իդէալը. մի բան, որ անհրաժեշտ է չէտել: Ճետոյ ցոյց չէ տրուած թէ ի՞նչպէս է ընթանում պատմութիւնն առհասարակ եւ ի՞նչպէս կարող կը լինենք մենք՝ մեր իդէալը իրականացնել: Ապա ծրագիրը ծանրանում է դլխաւորապէս տնտեսականի վրայ, հակուում է դէպի մատերիալիստական աշխարհահայեցողութիւնը, քիչ տեղ տալով իդէալիզմին:

Թոփչեան.— Այսպիսի աշխատանքները դժուար է լինում հաւաքական մարմնի միջոցով կատարել: Այլ բան է, եթէ մի պատրաստի նախագիծ լինէր եւ յանձնուէր մասնաժողովի քննութեան: Մեր յանձնախումբը ժամանակ չէ ունեցել, մի հիմնական ու բազմակողմանի ծրագիր մշակելու: Եւ քանի որ այժմ արդէն ուշ է այդ անելու համար, լաւ կը լինէր, որ այստեղ ընդգծուէին միայն գլխաւոր կէտերը (Կովկասի եւ Տաճկաստանի վերաբերեալ), ապա այդ կէտերը Ռոստոմի յառաջաբանի հետ միասին յանձնուէին մեզանից մէկին՝ մի ամբողջական ծրագիր ներկայացնելու համար:

Զաւարեան.— Մենք ճնշւում ենք ոչ միայն տնտեսապէս ու ազգայնապէս, այլ նաեւ այն հանգամանքի չնորհիւ, որ մեր եւ մեր հարեւանների կուլտուրական [մշակութային] զարգացումը ստոր աստիճանի վրայ է կանգնած. այս կէտը պէտք է չեշտուած լինի ծրագրի մէջ: Ճետոյ ծրագրի մէջ չպէտք է լինեն մանր կէտեր, ինչպէս է ձրի բժշկութիւն եւայլն. բոլոր մանր պահանջները հարկաւոր է ամփոփել մէկ կամ երկու կէտի մէջ: Գալով այն հարցին, թէ ի՛նչ խաւի վրայ ենք յենուելու մենք, ինչո՞վ ենք մենք սոցիալիստ եւ ինչո՞վ ենք տարբերւում միւս սոցիալիստներից, պէտք է ասեմ, որ մենք չենք կարող յենուել միայն պրոլետարիատի վրայ. մեր յենակէտն են լինելու բոլոր նրանք՝ որոնք իրենց սեփական աշխատանքով են ապրում, առանց չհագործելու ուրիշների քրտինքը: Մենք պէտք է պաշտպանենք բոլոր ճնշուածներին եւ կեղեքուածներին:

Խսահակեան.— Սոցիալիստական ծրագիր կազմելու համար, մենք անհամեմատ աւելի նպաստաւոր պայմանների մէջ ենք գտնւում, քան 40–50 թուականների սոցիալիստները: Մեր առջեւն են այսօր այդ սոցիալիստների ծրագիրները, նրանց ենթադրութիւնները, ակնկալութիւնները, հաւատը հասարակական կեանքի հետագայ զարգացման մասին՝ մի կողմից, եւ վերջին 50 տարուայ կեանքը եւ այդ կեանքից բխած սոցիալիզմի քննադատութիւնը՝ միւս կողմից: Եւ մենք հնարաւորութիւն ունենք պարզ կերպով տեսնելու, թէ 50ական թուականների կէտերից որո՛նք են իրենց այժմէութիւնը պահել մեր օրերի համար եւս, եւ որոնք պէտք է մէկդի ձգուեն: Նորագոյն սոցիալիզմի հայրերը՝ Մարքս եւ Էնգելս շատ բան են ասել եւ պնդել, որոնք պայմանաւորուած են այն ժամանակուայ հանդամանքներով եւ որոնք մեր օրերում իրենց արժէքը կորցնում են: Օրինակ՝ հաւատը դէպի կապիտալիզմի արագ ընթացքը, նրա ծաւալուելը արդիւնաբերական բոլոր ճիւղերի վրայ եւ բոլոր երկիրներում, նրա յեղափոխականացնող ուժը եւն., այս բոլորը խոշոր չափով պայմանաւորում է կապիտալիստական արդիւնագործութեան այն առանձնայատուկ զարգացմամբ եւ բնաւորութեամբ, որ նկատում էր անցեալ դարու առաջին կէսերում: Նոյնպիսի ժամանակաւոր եւ տեղական հանգամանքների կարելի է բերել եւ՛ սոցիալիստական վարդապետութեան այլ կողմերը: Մենք պէտք է մի կողմից ի նկատի ունենանք 50ական թուականների սոցիալիզմը. երկրորդ կողմից այն քննադատութիւնը, որ արծարծուել է մեր ժամանակներում այդ սոցիալիզմի հետեւանքների դէմ, եւ երրորդ կողմից մեր երկրի իրական պայմանները, որպէսզի մեր ծրագիրը ըստ կարելւոյն կատարեալ եւ ըստ կարելւոյն ռէալիստական [իրապաշտ] լինի:

Մալումեան.— Ես կանդ չեմ առնի ներկայացրած նախագծի երկրորդական կէտերի վրայ, դրանք ուղղելի եւ փոփոխելի են: Այս ծողովում հարկաւոր է որոշել եւ հաստատել էական արժէք ունեցող կէտերը, որոնք պիտի կազմեն մեր սոցիալիստական ծրագրի հիմքը: Ահա այդ նպատակով կազմակերպութեան Ընդհանուր ծողովը պէտք է պաշտօնապէս յայտարարէ, որ Դաշնակցութիւնը այսօրուանից հանդէս է գալիս իբրեւ հայ աշխատաւորների կուսակցութիւն, իբրեւ աշխատաւոր դասակարգի չհերի դրօշակակիր: Մեր ձգտումը պէտք է լինի կազմակերպել հայ աշխատաւոր ժողովուրդը տնտեսապէս եւ քաղաքականապէս, եւ միացած հարեւան աշխատաւոր ժողովուրդների հետ՝ ձեռք ձգել կառավարութեան ղեկը, եւ այդ միջոցով դիմել գլխաւոր նպատակին, այն է՝ կապիտալիստական կարգերը փոխարինել սոցիալիստական կոլլեկտիւ [հաւասարական] կարգերով: Եւ այդ պիտի յայտարարուի որոշակի եւ բարձրաձայն:

Այդ մէկ. միւս կողմից՝ անհրաժեշտ է ընդունել, որ կազմակերպութիւնը, հետապնդելով հանդերձ այն բեֆորմները, որոնք առօրեայ անհրաժեշտութիւն են՝ մեր աշխատաւոր ժողովրդի տեսակէտից, իր նպատակներով եւ գործ դրած միջոցներով բեֆորմների կուսակցութիւն չէ, այլ յեղափոխական կուսակցութիւն: Դա անհրաժեշտ է անել, որպէսզի միանգամընդմիշտ պարզենք մեր գործելակերպը եւ տակտիկի հիմունքները, որոնք մանաւանդ վերջին տարիներս անվերջ թիւրիմացութիւնների առիթ են տուել եւ չարունակում են տալ:

Կայ մի այլ կարեւոր կէտ: Ինչպէս գիտէք, Միջազգային Սոցիալիստական Բիւրոն 1905 թուին դիմեց Հրօշակի խմբագրութեան, իբրեւ կազմակերպութեան պաշտօնական օրգանին, խնդրելով յայտնել, թէ արդեօք Դաշնակցութիւնը յարո՞ւմ է միջազգային սոցիալիստական կոնգրէսների որոշումներին՝ թէ ոչ: Այս հարցի լուծումը Քողնուած է ներկայ Ընդհանուր Ժողովին: Ինձ Քւում է, որ մի դրական պատասխանով պէտք է որոշենք մեր դիրքը, եւ միանգամընդմիշտ յայտնենք միջազգային սոցիալիստական բանակին: Աշխատաւորների միջազգային կապակցութիւն, աշխատաւոր դասակարգի քաղաքական եւ տնտեսական կազմակերպումն, արդիւնաբերութեան միջոցների համայնացումն — ահա այն հիմնական կէտերը, որոնք պահանջւում են սոցիալիստական միջազգային բանակի մէջ մտնելու համար: Այդ կէտերը մեզ համար ընդունելի են, նրանք գոյութիւն ունեն նոյնիսկ մեր հիմնական ծրագրի մէջ եւ հետեւաբար մեր միանալը միջազգային սոցիալիստական բանակին՝ պէտք է համարել անխուսափելի եւ անյետաձգելի: Այս հիմնական կէտերը որոշելուց եւ ընդունելուց յետոյ, կրկնում եմ, շատ հեշտ կը լինի մշակել ծրագրի երկրորդական կէտերը: Ընդհանուր առմամբ համաձայն եմ նախագծի պատմափիլիսոփայական մասի հետ, եւ եթէ կայ մի փոփոխութիւն առնելու բան, դա խմբագրական ուղղումներն են, որ դժուար չէ մշակել:

Միհասեան.— Պէտք է պարզաբանել, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ է սոցիալիզմը ազգայնութեան գաղափարի հետ:

Վիճաբանութեան չարունակութիւնը յետաձգուեց յաջորդ նիստերին եւ նիստը փակուեց:

103ՐԴ ՆԻՍՏ (25 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:
Ներկայ են 24 ժողովական:
Բացակայ են՝ Շահխաթունեան, Խսահակեան, Թոփչեան, Վարդան, Զաւարեան, Անդրանիկ (հեռանդ):

Այս նիստում ընկ. Մալումեան դիւանի անունից ներկայացնում է մի չարք առաջարկներ զանազան խնդիրների վերաբերմամբ, ծողովի քննութեան ենթարկելու եւ հաստատելու համար: Այդ առաջարկները, որոնք ամփոփուած էին 16 կէտերի մէջ, թեթեւ վիճաբանութիւնից յետոյ, ընդունուեցին ծողովի կողմից միաձայն, բացառութեամբ 6րդ կէտի:

Այս 6րդ առաջարկը հետեւեալն էր.— Ուղարկել երկու ընկեր Բուլղարիա, տեղնուտեղն ծանօթանալու Զինուորական Դպրոցի մէջ տեղի ունեցող դժգոհութիւններին, իրաւունք տալով նրանց պատասխանատուութեան ենթարկել դասատու Ռաչիտին եւ հարկ դասած դէպքում՝ հեռացնել նրան, կարգի բերել դպրոցի դասընթացքը, դրամական վիճակը եւ գործերը: Արդիւնքը տեղեկագրել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին:

Զարդարեան.— Ռաչիտի խնդիրը խիստ կարեւոր է եւ անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել: Նա է պատճառ դառել մի չարք ինտրիգների եւ ամբողջ գործը բարդացրել:

Մալումեան.— Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ Բալկանի Կ. Կոմիտէն հիասթափուել է Ռաչիտի վերաբերմամբ: Արեւմտեան Բիւրոն, արդէն ժամանակին հաղորդել էր Բալկանին այն անվստահելիութեան մասին, որ յայտնել է Ռաչիտի վերաբերմամբ Արեւելեան Բիւրոն, բայց առանց այդ ի նկատի ունենալու, Բալկանը յանձնեց նրան այսպիսի պատասխանատու գործ: Եւ այժմ Բալկանի ներկայացուցիչն է, որ բողոքում է. այս ամենալաւ պատիժն է Կ. Կոմիտէի համար: Բալկանի մեր ընկերները պէտք է գիտենային, որ հեռացուած անդամը չէ կարող մի այլ մարմնի մէջ մտնել, մինչեւ որ պատասխանատու կոմիտէի կամ Բիւրոյի կողմից չվարզուի խնդիրը: Եւ այդ նոյն Ռաչիտը, փոխանակ բացատրութիւն տալու մարմնին, Քոյլ է տուել իրեն, մինչեւ իսկ մեղադրանքներ Քափել Քրիստափորի, Անդրանիկի հասցէին, հայհոյել Դաշնակցութեան եւն.:

Զարդարեան.— Երբ Արեւելեան Բիւրոյից գրութիւն ստացուեց Ռաչիտի մասին, նա արդէն գործի մէջ էր եւ անկարող էինք հեռացնել, մանաւանդ որ չկար ուրիշ համուտ վարպետ: Նրա աշխատանքը չէ կարելի ուրանալ եւ չգնահատել. — բայց նա հոգեպէս ուղղակի հիւանդ է:

Համօ.— Բալկանի առարկութիւնը միանգամայն անհիմն է, քանի որ Արեւմտեան Բիւրոն դեռ ժամանակից չուտ հաղորդել է այդ մասին:

Նախագահ.— Ես կ'ասեմ դեռ աւելին. Արեւմտեան Բիւրոն յայտնեց Բալկանի Կ. Կոմիտէին, որպէսզի Ռաչիտին հաղորդեն Արեւելեան Բիւրոյի որոշումը, նրա խնդրի մասին. բայց Բալկանը մերժեց այդ եւ պատասխանեց, որ Բիւրոն ուղղակի նրան գրէ:

Սեպուհ.— Ջարժէ չատ ծանրանալ այս հարցի վրայ, քանի որ մեր մէջ յաճախ կրկնուող երեւոյթ է այդ: Օրինակ Վասպուրականից հեռացուած զինուորը ընդունւում է Վրէժում, Վրէժից արտաքսուածը՝ Մըրզաստանում եւն.:

Չելալեան.— Ռաչիտին ընդունելու խնդրի մէջ տեղի է ունեցել նաեւ մի թիւրիմացութիւն: Մենք մի հե-

ուզէր ստացանք, որով յայտնում էին Ռաչիտին ընդունելու մասին, բայց, յետոյ, ինչպէս նամակից պարզուեց, դա ոչ թէ Ռաչիտին, այլ Տաճատին էր վերաբերում:

Տաճատ.— *Ես կ'ուզէի ժողովի ուշադրութիւնը հրաւիրել եւ մի այլ հանգամանքի վրայ: Բալկանում ընկերական յարաբերութիւնը չատ վատ է եւ ամբողջ կազմակերպական գործը կազմալուծուած: Իմ կարծիքով, ուղարկուած ընկերների միսիան պիտի լինի, աւելի կազմակերպութիւնը վերակազմել, քան Ռաչիտի խնդիրը:*

Սեպուհ.— *Ես առաջարկում եմ կանոնագրութեան մէջ մուցնել այսպիսի մի կէտ, որ եթէ մէկը հետացուում է, մարմինը պարտաւոր է մի թոուղիկ բաց թողնել եւ յայտարարել այդ մասին միւս պաշտօնական մարմիններին:*

Ստեփանեան.— *Միանում է այդ մտքին:*

Հայմ.— *Մեր ստացած տեղեկութիւնները եւս ցոյց են տալիս, որ դրութիւնը խիստ տխուր է Բալկանում: Այնտեղ տիրում է անկարգապահ գործունէութիւն: Հրապարակային ժողովներում խօսում են կովկասեան գործունէութեան դէմ, եւ մեր ընկերները չեն պաշտպանում: Զրպարտում են Բիւրոներին գեղծումների մէջ, եւ Բալկանի Կ. Կոմիտէն լուսաբեմը է անցնում, առանց հերքելու:*

Զարդարեան.— *Ես բողոքում եմ ընկ. Համոյի դէմ եւ կ'ուզէի որ իր աղբիւրը ստուգէր: Ոչ մի հրապարակային ժողովում չեն զրպարտուել Բիւրոները: Ընկ. Համոյի տուած տեղեկութիւնը միանգամայն անհիմն է:*

Վահագն.— *Ճամբնայն դէպս փաստը սխալ չէ: Բայց մեղադրել մարմիններին՝ անարդար եւ սխալ կը լինի: Ճիշդ է, Ռաչիտը Թոյլ տուաւ Կ. Կոմիտէի ժողովում Թիֆլիզի Բիւրոյի անդամների վերաբերմամբ մուէթ ակնարկներ անել: Մենք բողոքեցինք ի հարկէ դրա դէմ: Միւս կողմից չպէտք է մոռանալ եւ այն, եթէ չլինէր Ռաչիտը, Զինուորական Դպրոցի մէջ նըբան յանձնուած ճիւղը կը մնար առանց դասատուի:*

Զարդարեան.— *Նրանք, որոնք Թոյլ են տուել կովկասի ընկերներին մասին խօսելու եղել են գլխաւորապէս ձեր տղերքը: Բալկանը լինելով ճամբուն վրայ, յաճախ մարդիկ գնում-գալիս եւ Թունաւորում են մեր տեղական տղաների միտքը: Պէտք է մի չափ դնել, մենք անկարող ենք բոլորին ընդունել եւ տեղ տալ:*

Տաճատ.— *Ես պնդում եմ իմ առաջարկի վրայ, աւելի ուշադրութիւն պիտի դարձնել ընկերական յարաբերութիւնների եւ կազմակերպական գործերի վրայ եւ հենց դրա համար մարդ պիտի ղրկել, քան Ռաչիտի համար:*

Այս նկատումները եւ վիճաբանութիւնն ի նկատի ունենալով ժողովը ճրդ կէտը ձեւակերպեց այն ձեւով, ինչպէս առաջ է բերուում ներքեւում:

Ահա ընդունուած որոշումների ցանկը.

1. Ընտրել երկու ընկեր, յանձնարարելով նրանց մեկնել Պետերբուրգ, յարաբերութեան մէջ մտնել Սոցիալիստ-յեղափոխականների կենտրոնական մարմնի հետ, թէ՛ նրանց համագումարին մասնակցելու եւ թէ համերաշխութեան եւ ընդհանուր ձեռնարկների ծրագիր մշակելու նպատակով (միշտ հետեւելով Արեւելեան Բիւրոյի հրահանգներին):

2. Խմբագրել բոլոր որոշումներն ու քանձաւերը եւ ըստ կարելւոյն շուտ հասցնել մարմիններին եւ կամ հրատարակել պաշտօնական օրգանի միջոցով: Այդ խմբագրութիւնը պիտի կատարէ Իճճի յանձնաժողովը, ղեկավարուելով ժողովի տուած ցուցմունքներով:

3. Ժողովից անմիջապէս յետոյ տպագրել, ոչ ուշ քան 15 օր, եւ մարմիններին բաժանել «կազմակերպական կանոնները», հնած փոփոխութիւններով եւ յաւելումներով:

4. Թղթածրարների մէջ եղած բոլոր դիմումներն ու առաջարկները, որոնք համարագրուած են դիւանի թղթերում՝ ընել եւ նրանց վերաբերմամբ որոշումներ կայացնել, առաջնորդուելով ժողովի հրահանգներով: Այդ գործը յանձնել Իճճի յանձնաժողովին:

5. Ուղարկել յատուկ մի ընկեր Աբէնի, լիազօրութիւն տալով լուծարքի ենթարկել Աբէնիի զինա-դրամական գործը եւ արդիւնքը տեղեկագրել Արեւմտեան Բիւրոյին:

6. Ուղարկել երկու ընկեր Բուլղարիա, որոնք կ. Կոմիտէի մի ներկայացուցչի հետ տեղն ու տեղը ծանօթանան Զինուորական Դպրոցի մէջ տեղի ունեցող դժգոհութիւնների, իրաւունք տալով նրանց, խորհրդակցութեամբ Արեւմտեան Բիւրոյի, պատասխանատուութեան ենթարկել այդ դժգոհութիւնների պատճառ եղողներին, կարգի բերել դպրոցի դասընթացքը, դրամական վիճակը եւ գործերը: Նոյն ընկերներին յանձնել խստօրէն ընել շրջանի կազմակերպական անկերպարան գործերը եւ կարգի բերել: Արդիւնքը տեղեկագրել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին:

7. Արեւմտեան Բիւրոյին [պարտականութիւն] յանձնել, շատ շուտով յատուկ ընկեր ուղարկել Եգիպտոս, խիստ ընութեան ենթարկելու այնտեղի գործերը եւ վերակազմել մարմինները:

8. կազմել երեք ընկերներից բաղկացած մի հաշուեքննիչ մասնաժողով, պարտաւորութիւն դնելով նրա վրայ՝ ընել ամբողջ կազմակերպութեան հաշիւները, հարկ եղած ժամանակ նոյնիսկ պտոյտ անելով այլեւայլ շրջաններ եւ զեկուցանել արդիւնքը երկու Բիւրոներին:

9. Իճճի յանձնաժողովին յանձնել կարգադրելու եւ վերջ տալ 1) գեղծումների գործերը (տես թղթածրար), 2) ոսկեհատիկ ցուցական Մարմնի խնդիրը, 3) Լոռիսի դիմումի խնդիրը, եւն.:

10. Մնայուն գործիչներ ուղարկել Բալկան, Եգիպտոս, Ամերիկա՝ Արեւմտեան Բիւրոյի միջոցով, նրանց յանձնարարելով պրոպագանդայի եւ կազմակերպական գործեր:

11. Վրէժստանի արհեստանոցը դնել կ. Կոմիտէի լիակատար տնօրինութեան տակ, միջնեւ զինապայթուցիկ մարմնի կազմուելու գործի սկսելը:

12. Ընտրել Իճճի յանձնաժողովի համար՝ իճճ անդամներ տալով նրանց լիազօրութիւն կարգադրելու վերնի չիշուած գործերից նշանակուածները եւ վերջացնելու, յանուն ժողովի, հերթական խնդիրները: Իճճի յանձնաժողովի գործունէութիւնը պիտի դադարի ոչ ուշ քան 15 օր ժողովի փակումից յետոյ:

13. Յանձնել [պարտականութիւն] Արեւելեան Բիւրոյին՝ անյապաղ ընկերներ ուղարկել Էրզրում, կազմակերպելու այդ կարեւոր շրջանը եւ տրամադրելի ամէն ջանքերով այդ շրջանին յատկացրած 15 հազար ֆրանկը: Անհրաժեշտ է այդ շրջանի գործին տալ թուրք-հայկական միացած գործունէութեան կերպարանք, համերաշխութեան հողի վրայ:

14. Յանձնարարել Վասպուրականի եւ Սասունի մարմիններին, իճչպէս եւ Արեւելեան Բիւրոյին, բարոյական աջակցութիւն ցոյց

տալ մեր անմոռանալի ընկերներ Սերոբի եւ Հրայրի ընտանիքներին, հոգալով, կողմնակի, կամ եթէ այդ անհնարին լինի՝ «Կարմիր խաչ»ի միջոցներով, նրանց զաւակների ուսման գործը երկրի մէջ կամ կովկասում,

104ՐԴ ՆԻՍՏ (25 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:

Ներկայ են 19 ժողովական:

Բացակայ են՝ Շահխաթունեան, Իսահակեան, Իչխան, Թոսամ, Թոփչեան, Մուրատ, Սեպուհ, Վարդան, Զաւարեան, Ահրոնեան, Անդրանիկ:

Նախագահը յայտնում է դիւանի կողմից, որ ոչ ոք չպէտք է քան արտադրէ արձանագրութիւններից, քանի որ դրանք չեն հաստատուած, քէ չէ կարող են Քիւրիմացութիւններ առաջ գալ:

Կարդացւում է Նալբանդի պատգամաւորի հետեւեալ առաջարկը.

«Ռանի որ թլատը միացւում է Նալբանդի հետ եւ որովհետեւ այդ յայնածաւալ շրջանում կանոնաւոր կազմակերպութիւն առաջ չերթալու համար հարկաւոր են առնուազն երկու ազատ գործիչներ, որ այդ շրջանում գտնել անհնարին է, եւ ի նկատի ունենալով, որ Ընդհանուր ժողովը համամասն հարցի վերաբերող որոշում արել է ուրիշ շրջանների համար, առաջարկում եմ ժողովին Նալբանդին եւս տալ ազատ ընկերներ, որոնք զբաղուեն բացառապէս այդ շրջանի կազմակերպական [եւ] պրոպագանդայի գործով»:

Այս հարցի շուրջը տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն, որի ժամանակ արտայայտուեց այն կարծիքը, քէ պէտք է հարցը լուծել սկզբունքով, գործադրութիւնը յանձնելով համապատասխան մարմնին:

Մալումեանի առաջարկութեամբ ժողովը որոշեց, որ Արեւելեան Բիւրոն յատուկ ուշադրութիւն դարձնի այդ շրջանի վրայ եւ առաջին հնարաւոր դէպքում բաւարարութիւն տայ:

Ապա տրուում է Այդեսեանի ներկայացուցչի առաջարկը, որ մարդիկ ուղարկուեն Վարակասան՝ Թուրքերէն սովորելու համար, որոնք պիտի յետոյ Աղբիւրվկասի Թուրքերի մէջ պրոպագանդ անեն:

Այս առթիւ ոմանք առարկում են, քէ փոխանակ Թուրքերէն սովորելու համար մարդ ուղարկելու Վարակասան, կարելի է Թուրքերէն իմացող հայ երիտասարդներին պատրաստել եւ ուղարկել պրոպագանդի. միւսներն այս հարցը կապում են ընդհանուր պրոպագանդի հետ, առաջարկելով բանալ կենտրոնական պրոպագանդների դպրոց, որտեղ սովորեցնեն եւ Թուրքերէն:

Ժողովը սկզբունքով համաձայն լինելով այս առաջարկին, գործադրութիւնը Թողնում է Արեւելեան Բիւրոյին:

Ժողովն անցնում է Էրզրումի չրջանի հարցին:

Կարդացւում է գրաւոր զեկուցում Էրզրումի եւ չրջակայքի մասին, որից յետոյ մտքերի փոխանակութիւն է տեղի ունենում:

Նախագահ.— Ես կարծում եմ, որ Էրզրում կարելի է ուղարկել Թուրք ընկերներ, որոնք ցանկութիւն են յայտնում գործել մեր գլխաւոր տակ. վերջին չարժումներից յետոյ՝ կազմակերպութիւնը ոչ մի հիմք եւ իրաւունք չունի անուշադրութեան մատնելու այդ կարեւոր կէտը:

Զարդարեան.— Իմ ձեռքն ընկան մի քանի նամակներ Էրզրումից, որոնք ցոյց են տալիս, որ այնտեղ տիրում է երկպառակութիւն՝ հների եւ նորերի մէջ, որ բաւականին դժուար կացութիւն է ստեղծել: Հետաքրքիր էր լսել այդ մասին տեղեկութիւններ:

Արամ.— Կարծոյ գործը ոչնչացաւ 1904ին, Խանի խումբը Էրզնկայում յետոյ: Այժմ այնտեղ ունենք մօտ 80 բանաւորկեալ ընկերներ, որոնցից 13ը ռուսաստանցի են: Էրզրումում այժմ կայ երեք ընկեր, մի ժամագործ, մի արհեստաւոր եւ մի ուսուցիչ: Վերջինս գերմանական համալսարանում կրթութիւն ստացած եւ ռանդոտ մի երիտասարդ է: Նա էր բոլոր գործերի վարիչը: Բայց ամառը գրել էր Բիւրոյին, թէ ինքը այլեւս անկարող է չարունակել կազմակերպութեան գործը, որովհետեւ Թուրքերի չարժումը, որի ղեկավարներից է եւ ինքը, քանի գնում աճում է եւ ժամանակ չատ խլում. բացի այդ, իբրեւ ուսուցիչ անյարմար է գտնում գործի մէջ լինել: Նա առաջարկում է ուշը դարձնել Բերքական չարժման վրայ եւ կազմակերպել հայ ինտելիգենցիան ու գաւառները: Հների եւ նորերի կռիւը այժմ գոյութիւն չունի: Դաշնակցութիւնը լաւ գործ կարող է անել՝ աշակերտների մէջ, որոնք հետաքրքրւում են յեղափոխական չարժումներով. պէտք է նրանց կազմակերպել եւ գրքեր ուղարկել: Էրզրումն իմ կարծիքով չատ կարեւոր դեր ունի կատարելու, դրա համար էլ պէտք է կազմակերպել եւ աշխատել համերաշխութիւն առաջ բերել Թուրքերի հետ, որոնց կողմից այդպիսի տրամադրութիւն նկատւում է. լաւ կը լինէր լեզուի մարդ ուղարկել, որ չատ բան կարող է անել. կարելի է ուղարկել Զերքէզովին (Ծրընեից եկած), որ ցանկութիւն է յայտնել՝ գնալու իբրեւ մեր մարդը:

Ժողովը որոշեց Էրզրումի մէջ առաջ բերել կազմակերպութիւն, եւ յատկացնել այդ նպատակի համար որոշ գումար:

Ապա կարդացւում է Վասպուրականի երկու ներկայացուցիչների՝ Արամի եւ Իչխանի առաջարկը, ուր խնդրւում են իրենց հակողութեանը Թողնել Վրէժի Մենաւոր եւ Աւարայրի վայրերն, իբրեւ յարմար ճանապարհներ երկիր զէնք փոխադրելու:

Ահա այդ առաջարկը՝

«Վասպուրականի շրջանի երկու կ. կոմիտէները խնդրում են Ընդհանուր ժողովէն, վրէժի շրջանի Աւարայր եւ Մենաւոր վայրերը Թողնել Բիւրոյի երկիր գործով զբաղող հատուածի եւ վնաս մարմինների անմիջական հսկողութեան տակ: Դա կարեւոր է փոխադրութեան գործի կանոնաւորութեան, դրամական հաշիւների խնայողութեան, գաղտնապահական եւ այլ տեսակէտների»:

Ստեփանեան (Վրէժի ներկայացուցիչ) բողոքում է առաջարկի դէմ եւ ցոյց է տալիս, որ յիշեալ երկու վայրերի միացումը երկրի հետ՝ հենց երկրի գործի համար վնասակար է: Եթէ ժողովը որոշէ այդ վայրերը միացնել Վասպուրականի հետ, այն ժամանակ այդ տեղերի համար պատասխանատուութիւնն էլ պէտք է երկրի ընկերների վրայ ընկնի. Վրէժն այլեւս այնտեղ ոչ մի գործ չպէտք է ունենայ:

Արամ համաձայն չէ եւ պնդում է, որ Մենաւորն ու Աւարայրը դրուեն Վասպուրականի տրամադրութեան տակ, իսկ պատասխանատուն այդ տեղերի կազմակերպութեան համար՝ մնայ Վրէժը:

Նախագահը առաջարկում է ընկ. Ստեփանեանին եւ Արամին՝ իրենց մէջ համաձայնութեան գալ այդ հարցի համար եւ յայտնել նախօրն մի բանաձեւ ներկայացնել:

105ՐԴ ՆԻՍՏ (26 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Մալումեան։
Ներկայ են ժողովական։
Բացակայ՝ ։
Օրակարգն է՝ Քղքածրարի մէջ եղած Քղքերի զեկուցումը

եւ «Համբարձումեան հարցը հնչակեաններուն հետ»։

Վարամեան դիւանի կողմէ զեկուցում է տալիս Քղքածրարի մէջ եղած բոլոր կարեւոր խնդիրների մասին։ Զեկուցումը տեւեց 25 րոպէ։

Ահա այդ խնդիրների ցանկը.

I Բողոքներ

Անհետեւանք Քողուլ՝ Սուրէն Համասթի (Բուլղարիա) [բողոքը]՝ Բալկանեան Կ. Կոմիտէի դէմ, Թաթուլի՝ Նալպանդի Կ. Կոմիտէի դէմ։

Քննութեան ենթարկել դոկտոր Փաշայեանի դէմ բողոքները, Սեդրակ Գարբիէլեանի եւ Արամ Մանուկեանի (Եգիպտոսէն՝ զատ զատ բողոքներ), Էդուարդ-Սիսակի պահանջը՝ Ամերիկայէն։

Վերաքննել Աւետիս Ազամիրզեանի բողոքը Երեւանի Կ. Կոմիտէի դէմ։ Արամ Մանուկեանի նկատմամբ վճիռը ատուցել տալ Եգիպտոսի գործիչի ձեռքով։

Ցուցական մարմնի հաշիւներն ատուգող (կամ դատող) յանձնախմբին յանձնել Գ. Գարագէօզեանի պահանջը Դաշնակցութենէն՝ 468 դրուշ, ատուգելով նաեւ անոր ամբաստանութիւնը Քրիմի մասին։ Նոյն Մարմինի՝ Կ. Համբարձումեանի նամակը Իզմիրի գործերու մասին (Բիւրոյին ուղղուած)։

Լիազօր հաշուեքննիչ մարմնին յանձնել Դուրբախի եւ Հալէպ Շահրի նամակները զէնքի գնդումներու այլեւայլ պարագաները յիշող։

Կազմակերպական կանոններու մշակման առնն նկատի առնել վառնայի Կոմիտէի բողոքները։ (Բալկանի Մարմնին յանձնարարել 15·000 ֆրանքը իր պահանջ արձանագրել Ե. Ալաճաճեանի)։ Նաեւ Վանի ընկերներու նամակը՝ ընդհանուր սխեմայի մասին վաստպրականի մէջ։

Զինուորական Վարժարանի մասին մշեցի Սմբուլի, Արշակ Սըվաճեանի եւ Վռամի բողոքը։

Որոշուեցաւ յանձնել Զինուորական Վարժարանի գործը լիազօր յանձնախմբին։

II Տեղեկագիր–Առաջարկ

Տուժերի մասին Ամերիկայէն առացուած երկու տեղեկագրերը (Լօբէնեան՝ Զ. Մ. Մ., Արթ. Գ. Դ. եւ Ճոլճէի Գրքճեանինը), յանձնել տեղեկագրելու ընկերներ Ա. Հ.ի եւ Բ. Ճ.ի [?], Բարձր Հայքի կազմակերպական գործին կցելու։

Գիլիկիոյ մասին, Գրիգոր Աբաջեանի, Տր. Ն. Գլճեանի ծրագրերը նկատի առնել Գիլիկիոյ գործերու քննութեան առնն։ Մանուկ Սիսլեանինը տարտամ եւ անորոշ գրուածք է։ ատուգել այդ մարգու անձնաւորութիւնը, Եգիպտոսի մարմիններու միջոցով։

Սերասխոյ գործերի մասին՝ առաջարկը Քորհրդին, — նկատի առնուած այդ չրջանի մասին եղած որոշումներով։

Եգիպտոսի կարգ մը ընկերներու կողմէ գործելու ուրուագիծը յանձնել Աբեւմտեան Բիւրոյին, հոն զրկուելիք գործիչին քննութեան առաջարկելու։

Ամերիկայի Կ. Կոմիտէի նամակը, գործիչներու եւ համաւորներու մասին, նկատի առնուած է։

Ֆիլիպէի կոմիտէի առաջարկները՝ բանտարկեալներուն դիւանագիտական ճամբով ազատման ձեռնարկել՝ յանձնարարուած են Աբեւմտեան Բիւրոյին։

Մրգաստանի կոմիտէի առաջարկը՝ Ռ.ի ընտանիքի նկատմամբ առնուած է օրակարգի մէջ։

Ն. Գալուստեանի առաջարկը, այրող հեղհեղութիւններու մասին, հաղորդել պայծուցական մասնախմբին։

III Գործիչներ

Ընդհանուր Ժողովին առաջարկած են ինքզինքին իբր տրամադրելի

ա) Լեւոն Կիւրեղեան՝ Եգիպտոսէն, բ) Ա. Տէր Զաքարեան՝ Բրիւսէլէն, գ) Քեռիի եղբայրը՝ Կովկասէն։

Որոշուեցաւ յանձնարարել Բիւրոներուն՝ առանց ձեռնհասութեան եւ նկարագրի մասին քննութիւն կատարել եւ գոհացում տալ անոնց փափաքին։

ՄԱՆՕԹ.— Հալէպ Շահրի խնդիրը անհետեւանք Քողուլ, նկատի ունենալով, որ Գործօնի զենքերու գրաւման պատճառ եղողն է։

IV Ծրագրի մասին Քելադրութիւններ եւ առաջարկներ.— ա) Շահ... բ) Դուժանի, գ) Մարի եւ դ) Բագուեցիներ Տաճկահայերու Միութեան, ե) Բժիշկ Վ.ի նամակը։

Ժողովը որոշեց այդ հարցերը յանձնել Ինքն յանձնաժողովին, որպէսզի նա ժամանակին զրաղուի դրանցով եւ ընթացք տայ։

Դիւանի կողմէ հեռագրուած էր մեր բարեկամ Սարաֆովին, որպէսզի գայ Ընդհանուր Ժողովին. բայց այժմ Բուլղարիայից հեռագրով պատասխանել են, որ նա անկարող է մինչ 25ից առաջ մեկնել դէպի Վիեննա։ Ժողովը որոշեց յայտնել Սարաֆովին, որ այլեւս չգայ, քանի որ Ժողովը այս օրերը փակուելու է։ եւ քանի որ մեր ընկերներից երկու հոգի գնալու են Բուլղարիա՝ տեղական գործերի համար, յանձնարարուեց անոնցից նրա հետ Բուլղարիայում եւ խորհրդակցել կարեւոր հարցերի մասին։

Սրանից յետոյ Ընդհանուր Ժողովը զբաղւում է համերաշխութեան հարցով՝ Հնչակեան կուսակցութեան հետ։

Կարդացւում է Հնչակեան կուսակցութեան Գործադիր կենտրոնական Վարչութեան դիմումը Ընդհանուր Ժողովին, այդ խնդրի առթիւ, եւ երկու նամակներ՝ ղրուած, այդ նոյն հարցի առթիւ, Գարիզում ապրող մի անձի կողմից։

Համօ.— Գէտք է ասեմ, որ հնչակեանները երբեք կորեկտ չեն եղել եւ միշտ էլ նրանք են առիթ տուել յարաբերութիւնների սրման։ Նրանք սպառնալիքով դրամ էին պահանջել Գէորգեանից, բայց վերջինս հրաժարուել էր վճարել. մենք յայտնեցինք հնչակեաններին, որ յետ կանգնեն իրենց պահանջից։ Նրանք ուզեցին այս խնդիրը դնել ուրիշ յեղափոխական կուսակցութիւնների առաջ։ Բայց մենք մերժեցինք, դիտել տալով, որ Գէորգեանը դաշնակցական է։ Ձնայած այս մեր բոլոր ղգուշացումներին, նրանք էլի սպանեցին։ Անախորժ բարդութիւններ չառաջացնելու համար, մենք աւելի բարւոք դատեցինք լուծութեամբ անցնել եւ չպատասխանել նոյն ձեւով նրանց։

Զարդարեան.— Ես եւս կը պնդեմ, որ նրանք ամէն կերպ աշխատում են մեզ խանգարել։ Այն միջոցին, երբ մենք ձեռնարկեցինք հանդանակութեան, նրանք դիմեցին մի չարք հարուստների եւ սպառնացին, որպէսզի մեզ դրամ չտան, պատճառաբանելով, թէ իբրեւ հնչակեաններ են։ Նրանք, ի հարկէ, բաւականին յաջողութիւն ունեցան, մանաւանդ Ռուսմուքում, եւ մենք ստիպուած եղանք դիմել կենտրոնին։ Մի կողմից նրանք համերաշխութեան մասին էին բանակցում, միւս կողմից այդպիսի տգեղ քայլեր թոյլ տալիս։

Ստեփանեան.— Մեր կողմից մի խոշոր սխալ էր այն, որ նրանց հետ համերաշխութեան բանակցութեան մէջ մտանք։ Այժմ ուղղակի չահագործում են այդ համերաշխութիւնը եւ մեր անունը։ Նրանք ամէն կերպ աշխատում են մեզ խանգարել։ Ճիշդ է, հնչակեանները առաջուայ չափով չեն գրում մեր մասին իրենց օրգաններում, բայց «Մշակը» իբր լեզալ թերթ, տակաւ դառել է նրանց օրգանը եւ ամէն ցեխ հնչակեանների կողմից մեր մասին տեղ է գտնում այնտեղ։ Ես կարող եմ ասել դրականապէս, որ մենք գործակատարում անկարող ենք նրանց հետ համերաշխ գործել։ Նրանք ոչ ոյժ են ներկայացնում այնտեղ եւ ոչ էլ գաղափարական գործ ունեն։

Զաւրեան.— Ես չատ մօտիկից ճանաչում եմ Հընչակեան կուսակցութեան նախկին լիդերներից մէկին, տիկին Հազարբէգեանին. նա կ'ուղենար ապահովել իր ընտանիքը, նա տենչում է եւ իր նախկին փառաւոր դիրքն ստանալ։ Մի կուսակցութիւն, որի ղեկավարը այսպիսի մի անձնաւորութիւն է, պարզ է թէ ինչ բարոյական արժէք ունի այդ կուսակցութիւնը։ Նրանց չարքերը լիքն են այսպիսի անհատներով։ Ոչինչ չէ կարող մեզ նրանց հետ կապել։ Նրանք չեն եղել մեր վերաբերմամբ կորեկտ եւ կանգնած մի քաղաքական կուսակցութեան բարձրութեան վրայ։ Գէտք է միանգամ ընդմիշտ յետ մղել նման առաջարկներ։

Սեպուհ.— Ճիրաւի, նրանք իրանցից ոչինչ չներկայացնելով, միշտ էլ աշխատել են մեզ խանգարել։ Ամենապերճախօս ապացոյցը կարող է ծառայել Մոսուլի դէպքը 1904ին։ Նրանք գիտէին մեր ձեռնարկի մասին՝ յարձակում Մոսուլի վրայ, մի քանի հոդուով գընացին եւ խանգարեցին մեր ձեռնարկութիւնը։

Արամ.— Ես զարմանում եմ, որ ընկ. Մալումեանը, ծանօթ լինելով ամբողջ անցած դարձածին, անուանում է նրանց քաղաքական–յեղափոխական կուսակցութիւն։ 1896ից ի վեր հնչակեանները գոյութիւն չունեն Երկրում, միայն մի երկու անհատներ, կամ

թաֆիանելի պատկանողներ. չկայ քաղաքական կուսակցական համոզմունք։ Նրանց հետն անգամ չկայ Մեծ Հայքում, էլ ի՞նչպէս կարող է համերաշխութեան մասին խօսք լինել։ Երբեմն մեր բարեացակամ վերաբերմունքով, ուղղակի քաջալերում ենք նրանց եւ ապագայի Քչնամիներ պատրաստում։ Վերջերս Վան ուղարկուեց մի հնչակեան ներկայացուցիչ. նա մօտեցաւ մեզ եւ խիստ բարեկամական վերաբերմունք էր ցոյց տալիս։ Մենք լաւ ընդունեցինք. նա հաստատուեց Վանում եւ խմբեր կազմեց։ Հենց որ, մի քանի տղաներ, այն էլ մեր չարքերից վռնտուածներից, հաւաքեց իր չուրջը, նա մոռացաւ համերաշխութիւն եւ ամէն ինչ, դարձաւ իրօք Քչնամի։ Ահա այսպէս են նրանք։ Անկարելի է նրանց հետ համերաչխ գործ ունենալ. եւ ի զուր տեղը չաչխատենք մեր ձեռքով, մի այլ կուսակցութիւն մեր կողքին բուսցնել. չատ էլ չգիտք է ոգեւորուենք Մուրատով։ Մի մարդ, որին հազարաւոր ածականներ են տուել, ինչպէս՝ յիսուս Մուրատ, Մուրատ խան, բէդ եւն., դեռ նա ոչ մի անգամ չէ գրել, որ այդպիսի բաներ չզրէն եւ ասեն։ Նա մի կողմից մեզ դիմում է համերաչխութեան համար, միւս կողմից գաղտագողի բանակցութիւններ է փորձում Գէորգ Զաւուչի հետ. ահա թէ ինչպիսի անձնաւորութիւն է նա։

Խահակեան.— Եթէ այդպիսի ածականներ է ընդունում Մուրատը, կը նշանակէ նա չէ իմացել։ Ճամենայն դէպս տրամադրութիւնն այն է, որ նա մաքուր յեղափոխական է. իսկ որ կեղտոտ անհատներ կան նրանց չարքերում, դա չատ պարզ է։ Երկուսից մէկը, կա'մ Մուրատը եւ իր նմաններն են ազդելու կուսակցութեան վրայ եւ գործն առաջացնելու, եւ կամ միւսները։ Այսպէս թէ այնպէս, մեր յարաբերութիւնը պահպանելու ենք Մուրատի հետ, քանի որ մենք ծղոտից անգամ բռնելու ենք մեր դատին դիմելիս։

Մուրատ.— Որ Հնչակեան կուսակցութիւնը ունի մաքուր տարրեր, այդ չպէտք է ժխտել. եթէ այդ չլինէր, կազմակերպութիւնը այժմ արդէն միանգամայն կազմալուծուած կը լինէր։ Նրանք էլ, ինչպէս եւ մենք, նոյն ժողովուրդի ծնունդն են եւ նրանց մօտ կան թէ՛ մաքուր եւ թէ կեղտոտ մարդիկ։ Մենք պէտք է որոշենք մեր տակտիկը բոլոր կուսակցութիւնների վերաբերմամբ եւ ոչ թէ մասնաւորապէս հնչակեանների։

Վռամեան.— Ես սկզբունքով համաձայն եմ համերաշխութեան, բայց ի՞նչ կը հասկացուի դրա տակ. ի՞նչ անենք, որ համերաչխ լինենք։ Մուրատն էլ չէր կարողանում իմ այդ հարցմանը որոշակի պատասխան տալ։ Նրանք ուզում են հասարակութիւնը չահագործել։ Հնչակեանները համերաչխութեան են դիմում, միայն այն ատեն, երբ տկարանում են։ Ամենալաւ ապացոյցը տուաւ ընկ. Արամը՝ Վանի կեանքի մասին։ Նրանք իդէալ չունեն եւ բախտախնդիրներ են։ Քաղաքական դաւանանք չկայ. միայն աթոռներ ստեղծել կը ցանկան։ Ես հաւատ չունեմ նաեւ Մուրատի վրայ։ Ու-

բեմն մեզ ի՞նչը կը ստիպէ համերաշխել: Միմիայն հանրային կարծիքը: Բայց մենք չենք կարող հասարակութեան տարտամ, անհիմն կարծիքին հետեւել: Մեր ցանկութիւնն է վերացնել այդ կուսակցութիւնները ու սպանութիւնները, իսկ այդ կարելի է անել եւ այլ միջոցներով: Մենք չենք կարող յանուն ժողովրդի չահերի դրանց ներս թողնել: Թոյլ տալու չէ երկրում մի այլ կուսակցութիւն մեր կողքին բռնելու:

Ստեփանեան.— *Նրանք դիտմամբ Տաճկաստանի հարց են դրել, որպէսզի հնարաւորութիւն ունենան երկիր մտնելու. իսկ յետոյ էլ, բնական է, կը դառնան մեր թշնամիները: Թաւրիզում մի կողմից մեզ հետ բանակցութիւն էին վարում, միւս կողմից էլ մեր ընկերների ոտի տակը փորում:*

Միւնասեան.— *Թերթերի մէջ էլ այդ հարցը արծարծուել է. անհրաժեշտ է մի կերպ բաւարարութիւն տալ: Կոնկրէտ առաջարկների վրայ չենք կարող կանգ առնել: Պիտի այնպիսի պատասխան տալ, որ ո՛չ այս եւ ոչ այն կողմը վնասի. բոլորովին անուշադրութեան չէ կարելի մատնել:*

Զաւդարեան.— *Բոլոր յայտնուած բացասական կարծիքների հետ համամիտ եմ. բայց հետեւանքների մասին չխօսուեց: Ճիշդ է, երկրում նրանք ուժ չունեն, գուցէ եւ բոլորովին գոյութիւն չունեն. բայց դրսում դրանք կան եւ բաւական ուժ կը ներկայացնեն: Այդ չպէտք է մոռանալ: Ուրեմն համերաշխութեան առաջարկը սկզբունքով պիտի ընդունել եւ մի բանաձեւ անցկացնել, որ արդիւնք առաջանալիք չարիքների անխուսափելիութիւնը:*

Զաւարեան.— *Այսքան չէր երկարի խնդիրը, եթէ դնէինք միջկուսակցային հարցին կից: Դեռ 98–1904 թուերին պնդում էին ոմանք, ինչպէս եւ Վռամեանը, որ Հնչակեանութիւնը կուսակցութիւն չէ: Բայց կեանքը այդ չէ ասում: Քանի քանի անդամ նրանք բաժանուել են, բայց մենք անկարող ենք եղել նրանց ձուլելու, մեզ մօտեցնելու: Դա փաստ է: Գուցէ այդտեղ սուելի դեր են խաղում քաղաքական ոգին, պատասխանատուութիւնը եւն., քան դաղափարի տարբերութիւնը: Բայց փաստը մնում է փաստ: Նրանք այնքան էլ ցածր չեն ինչպէս կարծւում է: Դասակարգային դիտակցութեան տեսակէտից, նրանք աւելի բարձր են քան մենք: Գուցէ նաեւ ուրիշ կուսակցութիւններ հրապարակ գան տաճկահայ դատին նուիրուած, ուստի ցանկալի՛ է համերաշխութիւնը: Գալով ներկային, պիտի մենք որոշակի ասենք, որ նրանց հետ կը միանանք, երբ նրանց չարքերը կը մաքրուեն, եւ երկրորդ՝ ուժ կ'ունենան երկրում: Առանց դրան մենք չենք կարող համերաշխութեանը ընթացք տալ:*

Համօ.— *Երկու բան խանգում ենք իրար. ոմանք կարծում են, որ մեր բանակցութիւնը կովկասում եղել է համերաշխութեան տեսակէտից. բոլորովին ո՛չ, այլ միայն միջ-կուսակցային սպանութիւններին վերջ տալու նպատակով. նոյն այդ մտքով եղել է նաեւ մեր բանակցութիւնը Պարսկաստանում: Ի՞նչպէս կարելի է կոնկրէտի մասին խօսք ընել, երբ հրապարակում կան միայն երկու կուսակցութիւն, դեռ չեմ ասում, որ Տաճկաստանում հնչակեանները որեւէ դործունէութիւն չունեն:*

Մալումեան.— *Առնուազն անյարմար էր, այսպիսի ձեւով խօսել մի կուսակցութեան մասին Ընդհանուր ժողովում, ուր խօսւում է համերաշխութեան մասին բազմապիսի կուսակցութիւնների եւ տարրերի հետ, ինչպէս քիւրտերի, Թուրքերի, ասորիների, մակեդոնացիների եւն.: Իսկ մի անձնաւորութեան մասին, որպիսին է Մուրատը, որը դնահատելի յեղափոխական անցեալ ունի, այդպիսի անվայել ածականներ ասել առնուազն անյարմար է: Այն համերաշխ ձեռնարկները, որոնք եղել են մեր ընկերների եւ հնչակեան խմբերի մէջ՝ Պարսկաստանում, Վանում, Թիֆլիսում եւն., մի դօրեղ հակադրութիւն է այստեղ արտայայտուած, անհիմն կարծիքների եւ մի քանի ընկերների տարօրինակ վերաբերմունքի: Պէտք է մատնանշել եւ բողոքել հընչակեանների չարքերում տեղի ունեցող կեղտերի դէմ. բայց այդ չէ նշանակում, որ պիտի աչքերը փակել մեր պակասութիւնների վրայ եւ խօսել համերաշխութեան դէմ: Իմ կարծիքով մենք պէտք է յայտնենք, որ մենք ջերմ կողմնակիցներ ենք համերաշխութեան, ինչպէս եւ միջ-կուսակցային ատեանին, եւ երրորդ՝ որ կոնդրէն չէ կարող ընդունուել, քանի որ դրա համար բաւական թուով մարմիններ չկան, եւ չեչտել, որ համերաշխութիւն ունենալու ամենալաւ միջոցն է յեղափոխական չարքերի մաքրութիւնը:*

Ժողովը համարելով վիճաբանութիւնը սպառուած, անցնում է բանաձեւերի քննութեան: Կային երկու բանաձեւեր՝ Զաւարեանի եւ Զարդարեանի: Քուէարկուեց Զաւարեանի բանաձեւը, որն անցաւ մի ձայն, երկուսի բացառութեամբ:

Ահա այդ բանաձեւը.

«Լսելով Հնչակեան Կարիզի կենտրոնական վարչութեան առաջարկը յեղափոխական կոնգրէի գումարման եւ համերաշխութեան մասին եւ լսելով ընկերների յայտնած կարծիքները հնչակեան այլեւայլ հատուածների բռնած ընթացքի եւ զանազան վայրերում ունեցած գործունէութեան մասին, Ընդհանուր ժողովը

ա) Զգտնելով, որ հնչակեան անուան տակ գործող հատուածներն ու խմբակցութիւնները բաւականաչափ զտուած լինին անվստահելի տարրերից (որոնց մասին ժամանակին յիշուած է եղել կուսակցութեան գրութիւնների մէջ),

բ) Համարելով, որ Դաշնակցութեան եւ հնչակեան հատուածների մէջ համերաշխ գործակցութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ տեղական հնչակեան մարմինները իրենց առօրեայ ընթացքով եւ յեղափոխականին վայել գործունէութեամբ վստահութիւն կը ներկայացնեն դաշնակցական տեղական մարմիններին,

գ) Գիտակցելով, որ կոնգրէի եւ համերաշխութեան հարցը էապէս լուրջ նշանակութիւն կարող է ունենալ այն դէպքում, երբ լինեն հնչակեան եւ այլ մարմիններ երկրի ներսում,

որոշեց՝

Պաշտօնական կոնգրէի գումարումը ներկայումս համարել վաղաժամ, յուսալով, որ վերը յիշուած պատճառաբանութիւնների թուլանալն ու վերացումը ապագայում հնարաւոր կը դարձնէ Դաշնակցութեան համերաշխ գործակցութիւնը հայ յեղափոխական այլ տարրերի հետ:

Սրա հետ միասին Ընդհանուր ժողովը յիշեցնում է, որ Դաշնակցութեան երրորդ Ընդհանուր ժողովի որոշմամբ այլեւայլ մարմիններին սյուտկանող, գործին նուիրուած եւ վստահելի անհատների ու խմբերի հետ համերաշխօրէն կռիւ մղելը ընդհանուր քշեմում դէմ (մանաւանդ՝ երկրին մէջ) եղել է եւ այժմ էլ լինելու է Դաշնակցութեան քաղաքականը:

Իսկ ներկայումս Ընդհանուր ժողովը յանձնարարում է բոլոր իր մարմիններին՝ ամէն կերպ խոյս տալ կուսակցական ընդհարումներից եւ դաշնակցական ու այլ կուսակցութիւնների ու խմբակցութիւնների մէջ ծագող վէճերն ու թիւրիմացութիւնները լուծել միջնորդական, միջ-կուսակցական ատեանի միջոցաւ:

Ահա ընկ. Զարդարեանի բանաձեւը, որը որոշուեց անցկացնել արձանագրութեան մէջ.—

«Ընդհանուր ժողովը լսելով Հնչակեանների Կարիզի կենտրոնին պաշտօնական դիմումը, ուղղուած Դաշնակցութեան Ընդհանուր ժողովին, միջ-կուսակցական ատեանի, տանկահաչ դատի համար կազմուելիք կոնգրէի եւ համերաշխութեան մասին, որոշեց.

Նկատելով, որ ժողովը արդէն իր նախորդ որոշումներուն մէջ ընդունած է միջ-կուսակցային ատեանի մը հաստատումը կուսակցութեանց եւ խմբակցութեանց միջեւ ծագած վէճերը ու անհամաձայնութիւնները լմնելու եւ հաշտարար կերպով կարգադրելու համար,

Նկատելով մանաւանդ, որ համերաշխութեան գաղափարը, միշտ Դաշնակցութեան հաստատուն եւ անխախտ բազմամեայ մէկն եղած է,

ժողովը կը յանձնարարէ իր բոլոր մարմիններուն՝

ա) Առաջնորդուել յատուկ կայքին մէջ ալ՝ նոյն սկզբունքով:

բ) Ամէն միջոց գործ դնել խոյս տալու համար հնչակեան խումբերու եւ անհատներու հետ ընդհարումներ ունենալ է, ներգրկելով կուսակցական ամէն թիւրիմացութիւն ու անհամաձայնութիւն՝ վերոյիշեալ միջնորդ ատեանին:

Ընդհանուր ժողովը սկզբունքով համակիր լինելով հանդերձ հայ յեղափոխական կուսակցութեանց կողմէ կազմուելիք կոնգրէի մը գաղափարին, կը նկատէ թէ մեր մէջ յեղափոխական կուսակցութեանց քիւրը չափազանց անբաւական է՝ կոնգրէի մը կազմութիւնն արդարացնելու:

Այս առիթով ժողովը յարմար կը դատէ շեշտել, թէ կուսակցական համերաշխութեան ամենալաւ կռուանը յեղափոխական մաքրութիւնը եւ շիտակ գործունէութիւնն է, որուն վրայ միայն կրնայ հիմնել իրական եւ տեւական ամէն համերաշխութիւն»:

Ժողովը փակուեց ժամը 1½ին:

ԾԱՆՕԹ.— Հնչակեաններին վերաբերեալ բանաձեւը Ընդհանուր ժողովի որոշման համաձայն ինքն յանձնաժողովի կողմից ենթարկուեց խմբագրական փոփոխութիւնների: (Տես բանաձեւերի հաւաքածուն):

Յանձնաժողովի կողմից՝

Ե. ԹՈՓՋԵԱՆ

106ՐԴ ՆԻՍՏ (26 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան:
Ներկայ են 24 ժողովական:
Բացակայ են Շահխաթունեան, Իսահակեան, Թոփչեան, Վարդան, Զաւարեան, Անդրանիկ (հիւանդ):

Նախագահը առաջադրում է կարդալ Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքի ապահովութեան խնդրի մասին եղած բանաձեւը:
Մալումեան կարդում է բանաձեւը, որն անցնում է միաձայն:
Ահա այդ բանաձեւը՝

«Ընդհ. ժողովը հանոյքով լսեց կովկասեան Ռայոնական ժողովի որոշումը և երեւանի ընկերների առաջարկը՝ մեր անմոռանալի ընկ. Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքը ապահովելու մասին, ու աչքի առաջ ունենալով, որ այդ հոգսը մինչեւ այժմ ծանրացած է եղել հանգուցեալի անձնական ընկերների վրայ եւ որ այդ եղանակով դժուար է ապահով պայմանների մէջ դնել նրա զաւակի կրթութեան գործը, այլեւ այն, որ կազմակերպութեան համար բարոյական պարտաւորութեան խնդիր է՝ օգտուելով այս առիթից արտայայտելու յարգանք մեր ընկերոջ թանկագին յիշատակին, որոշեց՝ կուսակցութեան վրայ առնել այդ գործի կարգաւորումը եւ պարտաւորեցնել Թիֆլիզի եւ Բագուի մեր մարմիններին՝ անյապաղ գործի գլուխ անցնել եւ ամենաուշը մինչեւ 1907 թուի վերջը կազմակերպի միջոցներով կազմել մի փոնդ եւ յատկացնել այդ՝ Քրիստափորի ընտանիքին եւ նրա զաւակի ուսման գործին»:

Ժողովը անցնում է «Պարսկահայ դաշնակցական կազմակերպութեան բռնելիք դիրքին՝ ներկայ պարսկահայ ընդհանուր յեղափոխական շարժման հանդէպ»:

Նախքան բուն խնդրին անցնելը Վրէժ Ժամանակի ներկայացուցիչ՝ Ստեփանեան առաջադրում է Ժողովին պարսկահայ վերջին Ռայոնական Ժողովի որոշումը՝ Վրէժը բաժանել երկու կենտրոնական կոմիտէների՝ I Թեհրանի, Իսպահանի եւ Գիլանի չրջանը, II Ատրպատականի՝ Թաւրիզի, Սալմաստի, Ուրմիի եւ Ղարադաղի չրջանը:

Ժողովը լսեց այդ առաջարկը եւ ի նկատի ունենալով, որ Պարսկաստանը չէ կարող երկու կենտրոնական Կոմիտէի դրամական ցենզ ներկայացնել, ուստի չընդունեց այդ առաջարկը եւ որոշեց չարունակել՝ ճանաչել Պարսկաստանը իբրեւ մի Կ. Կոմիտէ, մինչեւ նա կարող կը լինի ներկայացնել երկու կենտրոնական կոմիտէի համապատասխան գործիչ ուժերի եւ դրամական ցենզ:

Պարսկահայերի ինքնապաշտպանութեան գործը: *Ժողովը լսելով ներկայացուցչի այդ մասին տուած համառօտ զեկուցումը, պատճառաբանուած տեղի բնակչութեան վիճակագրական (75·000 հայ, 6 միլիոն պարսիկ) եւ պետական ու հասարակական անպատճառ պայմանները, առանձնապէս ծանրանալով ներկայ անար-*

խական չրջանի կացութեան վրայ՝ որոշեց ընդունել զեկուցանողի առաջարկը՝ պարսկահայերի ինքնապաշտպանութեան գործը թողնել Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կազմակերպութեան հսկողութեան տակ։

Պարսկաստանի ընդհանուր յեղափոխական շարժման հանդէպ մեր բռնելիք դիրքի մասին խօսեցին Պարսկաստանի ներկայացուցիչը, ընկերներ՝ Զաւարեան, Արամ, Համօ եւ Իսահակեան։ Համառօտակի նկարագրեցին Պարսկաստանի ներկայ չարժման չուրջը առաջ եկած դէպքերը, պարսկական պետական եւ հասարակական կարգերի կազմալուծումը եւ տնտեսական կատարեալ քայքայումը։

Խօսողները այդ չարժումը բնորոշեցին հետեւեալ կերպով. չարժման ղեկավարներն են վաճառականական եւ հոգեւորական չահագրգռուած դասակարգերը. մէկը իբր ներկայացուցիչ տնտեսական վտանգուած արդիւնաբերութեան, իսկ միւսը՝ իբրեւ ներկայացուցիչ ժողովուրդի կրօնական հին կարգերի եւ օրէնքներ։ Խօսք եղաւ նոյնպէս կողմնակի ղեկավարների մասին, որպիսիք են այդ չարժումով չահագրգռուած ռուսական եւ անգլիական դիւանագիտութիւնը։

Նկատի ունենալով, որ տարբեր քաղաքական եւ դասակարգային չահերով առաջնորդուող այդ ղեկավարները վարիչ հանդիսացած են մի չարժման, որ իր ընդհանուր բնոյթով նպատակ ունի I քաղաքական չարժումի՝ իրաւակարգի հաստատման համար. II իդէալական չարժումի՝ մարդկային իրաւունքների հաւասարութեան համար. եւ III տնտեսական չարժումի՝ համապատասխան ընդհանուր աշխատաւոր ժողովրդի չահերին,

Նկատի ունենալով նոյնպէս եւ պարսկահայ ժողովրդի տեղական անմիջական, ինչպէս նաեւ տագնապահայ ժողովրդի հեռաւոր չահերը, որոնք այնքան սերտ առընչութիւն ունեն սահմանակից Պարսկաստանի այդ ընդհանուր յեղափոխական չարժման հետ, նաեւ այն, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը իւր վրայ է վերցրել հայ ժողովրդի մեծամասնութեան, այն է՝ աշխատաւոր դասակարգի չահերի պաշտպանութիւնը, ժողովը, ճեռնպահութեամբ մէկի, 25 ձայնով ընդունեց Զաւարեանի առաջարկած հետեւեալ բանաձեւը.—

«Նկատելով, որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երեւոյթ թէ Պարսկաստանի, թէ Արեւելքի համար,

Նկատելով, որ դրա տարածուելն ու լայնանալը ցանկալի է թէ՛ համամարդկային եւ թէ հայկական տեսակէտից,

Ընդհանուր ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին ու անհատներին, բոլոր միջոցներով ձգտել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման ու ցանկութեան գործի մէջ ոգի, որը բխում է Դաշնակցութեան ծրագրից»։

Ջրաբերդի մասին զեկուցում է անում այդ չրջանի պատգամաւոր՝ Ահարոնեան։

Զեկուցումից յետոյ Ջոփուրեան կարդաց նոյն չրջանի ըրդական հաչիւները. որից յետոյ զեկուցողը առաջարկեց մի բանաձեւ իւր չրջանի մասին, որի մասին ըստ էութեան խօսելու ժամանակ չլինելով, ժողովը բանաձեւի քննութիւնը յետաձգեց յաջորդ ժողովին։

Նիստը փակուեց ժամը 8½ին։

107ՐԴ ՆԻՍՏ (27 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Ահարոնեան։

Ներկայ են՝ 26 ժողովական։

Բացակայ են՝ Ռոստոմ, Ստեփանեան, Վարդան, Անդրանիկ (հիւանդ)։

Դերսիմի մասին զեկուցում է անում ընկ. Մինասեան եւ ներկայացնում է առաջիկայ գործունէութեան համար մի բանաձեւ։

Մալումեան.— Դժուար է, ի հարկէ, այդ բարի ցանկութեան դէմ խօսել. սակայն կայ մի կէտ, որի մասին մի քանի անգամ առիթ եղել է խօսելու եւ այս անգամ էլ պէտք է չեչտել։ Չենք կարող այժմ չարունակել մեր սխալը։ Ուր մի բուռ հայ կայ, միշտ էլ մենք ձգտել ենք այնտեղ եւս կազմակերպութիւն հաստատել, ճեռնարկներ անել։ Այսպիսով փոխանակ մեր ուժերը խնայելու եւ կենտրոնացնելու որոչ կարեւոր վայրերում, մենք ցրուել ենք այդ։ Իմ կարծիքով դա քաղաքական ունայն ցանկութիւն է եւ մեր սխալ սխեմայի մի նոր արտայայտութիւն։

Չելալեան.— Մի քանի մասին, ինչպիսին է Դերսիմը, որ տարիներով խօսուել է՝ ուտոպիա [ցնորք] չէ։ Այս խնդիրը միշտ էլ դրուել է Դաշնակցութեան սեղանի վրայ, բայց ամէն անգամ էլ աջացիով յետ է մղուել։ Մենք չատ հեշտութեամբ կարող ենք նրանց մէջ յաջողութիւն ունենալ, քանի որ այդ քրտերը չատ աւելի քիչ արհամարհանքով կը վերաբերին հայերին, քան սիւննի Թուրքերին։ Նրանց մէջ կրօնական նախապաչարմունքը այնքան ուժեղ չէ։ — Քանի որ տրամադրելի մարդիկ կան, պէտք է օգտուել այդ հանգամանքից եւ գործի ճեռնարկել։ Եթէ Ընդհանուր ժողովը չի ուզեր անել, թող թոյլատրէ Ամերիկային՝ նախաճեռնելու։

Վռամեան.— Ես ժողովի ուչադրութիւնը հրաւիրում եմ ղըզլբաչ քիւրտերի վրայ, որոնք մէկ միլիոնից աւելի են այդ չրջանում։ Սրանք միշտ էլ բարեկամաբար են տրամադրուած եղել դէպի հայերը եւ մեր ընկերվարական պրոպագանդը այնտեղ պարարտ հող կը գտնի։ Հակասութիւն չկայ հայերի եւ այդ քիւրտերի

չահերի մէջ, որովհետեւ նրանք հայերի կեղեքողները չեն։ Դերսիմը ունի իւր տեղական չահերը. կրկնում եմ՝ չկայ այդտեղ չահերի բախում քիւրտերի եւ հայերի մէջ, իսկ դա մի խիստ նպաստաւոր հանգամանք է մեր պրոպագանդի համար։ — Իմ եզրակացութիւնը այն է, որ պէտք է Դերսիմում գործ սկսել։ Ճիշդ է մինչեւ այժմ փորձեր եղել են, բայց լաւ ուսումնասիրուած չէ եղել երկիրը եւ ճեռին անգամ անհրաժեշտ ծրագրերով էր ուզում բարեկամութիւն ճեռք բերել։ Ի՞նչպէս կարելի է Շարաֆի բէգի նման հրէչին բարեկամական ճեռք մեկնել, իսկ Դերսիմի քիւրտերի մէջ գործունէութեան առաջարկը յետ մղել։ Ժամանակը հասել է, որ մենք մեր սխալը ուղղենք եւ մի խելացի ճեռնարկ սկսենք։

Զաւարեան.— Որոշ ծրագրով եւ բիւդճէով գործունէութիւն եղել է Դերսիմում դեռ 10–20 տարի առաջ։ 1894 թուին գնացին մարդիկ, ուսումնասիրեցին տեղն ու տեղը եւ դրին հազարաւոր զէնքերի եւ խոշոր գումարի պահանջներ։ Մարդիկ մինչեւ իսկ քրտացան, քիւրտերի հետ մօտիկ բարեկամական յարաբերութիւն ստեղծելու համար, բայց էլի ունայն ճեռքով յետ դարձան։ Որ քիւրտերը կիսաքրիստոնեայ են, որ Դերսիմը խիստ անառիկ վայր է, այդ ես չեմ ժխտում. բայց այդ չէ գլխաւորը. կան նաեւ ուրիշ նման վայրեր, եւ աւելի մօտ սահմաններին, վայրեր՝ որ ունեն աւելի առաւելութիւններ, Վարդոյի չրջանը, Մոկսը եւ Ատրպէքը, որոնք տարիներից ի վեր գրաւել են իմ ուչադրութիւնը։ Բայց մի քան խիստ պակասում է Դերսիմի, ինչպէս եւ միւս քիւրտերի մօտ, այն՝ որ նրանք իրենց քաղաքական գիտակցութեամբ խիստ տհաս են։ Հենց դրա համար էլ մեր ճեռնարկները մօտ ապագայում անօգուտ կ'անցնեն։ Ես Դերսիմի վրայ նայում եմ իբրեւ մի կտորի վրայ մեր համերաչխութեան խընդրի՝ օտար տարրերի (չերքէզներ, ասորիներ, մակեդոնացիներ եւն.) հետ։ Սա իբր պրոպագանդայի վայր, կարող է ապագայում մեզ յոյսեր ներչնչել։ Այս տեսակէտից ես համամիտ եմ Դերսիմի մէջ գործունէութեան, բայց առանց խոշոր յոյսեր տալու գործողներին մօտ ապագայի վերաբերմամբ, ոչ էլ մեծ գումարներ ծախսելու։

Մուրատ.— Շատ ճիշդ է նկատում Զաւարեանը. մեծ գումարներ են ղրկուել, մարդիկ են գնացել, բայց միշտ էլ անյաջողութիւն պատահել։ Ես հակառակ եմ Դերսիմը ապստամբութեան վայր դարձնելուն. միայն պէտք է մտքեր պատրաստել, որ ժամանակին կարողանանք մեզ հետ միացնել։ Մենք պէտք է օգտուենք նրանց ապստամբական տրամադրութիւնից՝ կառավարութեան դէմ եւ ծառայեցնել մեր օգտին։ Ուրեմն արժէ մարդ ղրկել, վատ պահել այդ, ի հարկէ ապագայի համար։

Սեպուհ.— Սարգիս անունով մի տղայ կայ Բաթումում, որը ցանկանում է գնալ Դերսիմ, գործ ստեղծելու նպատակով, միայն մի պայմանով, որ Դաշնակցութիւնը օդնէ։ Նա ունի մի քանի հազար ռուբլի։ Նա ասում է, որ կարող ենք Դերսիմը դարձնել փախստականների մի գաղթավայր։

Մինասեան.— Դերսիմը կղզիացած տեղ է. նա կարող է լաւ օժանդակ ոյժ ծառայել մեզ համար։ Ես համամիտ չեմ Զաւարեանի լաւատեսութեան, որ հնարաւոր է չերքէզների հետ գործ սկսել։ Դերսիմը բացառիկ դիրք ներկայացնելուց զատ, քիւրտերը խիստ բարեկամական տրամադրութիւն ունեն։ Մենք պէտք է աչխատենք Քոյլ չտալ, որ Դերսիմի քիւրտերը բոլորովին Քրքանան։ Եթէ մէկ միլիոն այստեղ գործ դնենք, ես համոզուած եմ, տաս միլիոնի օգուտ կը ստանանք։ Դերսիմը կը լինի մի նեցուկ մեր ապագայ ճեռնարկների եւ գործունէութեան համար։

Սրանից յետոյ քուէարկուում է Մինասեանի եւ Վռամեանի միացած բանաձեւը, որ անցնում է միաձայն։

Ահա բանաձեւը՝

«Նկատելով, որ Դերսիմը, իր լեռնային դիրքով, Հայաստանի ամենէն հզակած դիրք ունեցող վայրերէն մէկն է, քերթուս ամենէն ամառիկը, եւ առհասարակ հոն բնակող հիւրտ ցեղերը, որոնց մէջ զոյութիւն ունի ցեղ փոխրիկ բայց համքաւաւոր հայ ցեղ մը, իրենց սովորութիւններով աւելի կը մօտենան հրիստոնէութեան եւ աւելի համակրաբար կը վերաբերին հայոց, ինչպէս ցոյց կու տայ իրենց յարգանքը դէպի հայ ուխտատեղիները, ինչպէս ճաու այլ պարագան, որ Բաիկոյ յարթնակօրէն հռուած են քուրբ կառավարութեան զօրերուն դէմ եւ իրենց անկախութիւնը պահպանած, եւ միշտ հակառակած են՝ քոյլ չտալով կառավարութեան, որ դպրոցներ հիմնէ, վախենալով, որ իրենց զաւակները կը մահմետականացուին,

Նկատելով, որ հայերը վաղուց ի վեր ուչադրութիւն դարձուցած են դէպի Դերսիմը եւ ջանքեր ալ եղած են այնտեղի հիւրտ տոքբերուն հետ միութիւն մը կազմելու համար, որ դէմ տնտեսական միջոցներու եւ հաւատքի պակասով յարատեւութիւն չէ ունեցած,

Նկատելով, որ մեր ազատամարտական միս միջոց դրութիւնը կը բերայէ մեզ մեր սահմաններուն մէջ ուժեղ դաշնակից մը փնտռել եւ Դերսիմը իբր բնական պատրաստի վայր կը ներկայացնայ, ուր ազատամարտական շարժում մը կարող է զարգացնել եւ ցլատել Թրքահայաստանի օսմանեան զինուորական ոյժը եւ այսպէս քոյլ տալ հայ ազատամարտութեան աւելի թափով եւ յաջող կերպով կատար ածելու իւր ազատագրական ճեռնարկը,

Ընդհանուր ժողովը կ'որոշէ մասնաւոր ուչադրութիւն դարձնել Դերսիմի վրայ, հայեւիւրտ գործակցութեան ապագայ կառուած մը ստեղծելու նպատակով,

Ինչպէս ճաու կը յանձնարարէ Արեւելեան Բիւրոյին՝ հոն ղրկել ճեռնհաս պրոպագանդիստ ուժեր, որոնք կը գործեն այնտեղ՝ կազմակերպական գործունէութեան սահմանին մէջ, համաձայն այն որոշումներուն, որոնք դրուած են ազգամավայրերէն դուրս գտնուած շրջաններու մասին»։

Այս նիստում քուէարկուում է վերջնականապէս Բոցի հանգանակութեան բանաձեւը, որ ներկայացրին Մալումեան եւ Զաւարեան, եւ որ անցնում է 20 ձայ-

նով ընդդէմ 3ի (սրանց մէջ՝ Սեպուհը)։

Ահա բանաձեւը՝

«Լսելով բռնի հանգանակութեան մասին եղած զեկուցումն ու վիճաբանութիւնները, Ընդհանուր ժողովը, նկատի ունենալով՝

1) 1904ի Ընդհանուր ժողովի որոշումը, որ այդ ձեւի հանգանակութիւնը նկատած է իբրեւ բացարձակ չարիք,

2) 1905ի Խորհուրդի վճիռը, որ կարգադրում է «դադարեցընել «Դրամ» կոմիտէի կողմից նոր դիմումներ անելը»։

Այլեւ նկատելով՝

1) Այն բարոյական լճռումը, որ առաջ է բերել բռնի հանգանակութիւնը հասարակական լայն խաւերում, քանի ցնծացնելով միաժամանակ մարմինների գործունէութիւնը,

2) Դաշնակցութեան եւ այլ մարմինների ունեցած դառն փորձերը, հակայեղափոխական հետեւանքները եւ կազմակերպական շարքերի բայբայումը,

Որոշեց՝

1) Խստիւ արգիլել բռնի միջոցների գործածութիւնը հանգանակութեան գործում։

2) Ամենախիստ պատասխանատուութեան ենթարկել այն անդամներին եւ մարմիններին, որոնք կը շարունակեն դիմել բռնի միջոցների։

3) Ազդու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բռնի հանգանակութիւններին, որ կատարում են այլեւայլ բախտախնդիրներ, կազմակերպութեան անունից, գաղտնի կամ խարդախուած միջոցներով։

4) Ժողովի այս որոշման մասին յայտարարել կազմակերպութեան պաշտօնական օրգանի մէջ»։

Վռամեանի բանաձեւը ստացաւ միայն 8 ձայն եւ որոշուեց, համաձայն ընդունուած սովորութեան, մըտցընել արձանագրութեան մէջ։

Ահա Վռամեանի բանաձեւը՝ բռնի հանգանակութեան մասին։

«I Նկատելով, որ յեղափոխութեան վախճանական նպատակի համար, եթէ յեղափոխութիւնը իրաւունք կը համարէ իրեն՝ թէ իր հետեւորդներու եւ թէ հակառակորդներու արիւնը թափել, անմրմռնելի փափկանկատութիւն մը պիտի ըլլայ մերժել նոյն հակառակորդներու դրամը պահանջել,

Նկատելով, որ ազատագրութեան կռուի հանգամանքը կը պահանջէ, որ ժողովրդի բոլոր դասակարգերը պարտաւոր են աջակցել, այն ինչ ունեւոր դասակարգերը երբեք իմքնաբերաբար չեն օգնած ազատագրութեան այդ դատին,

Նկատելով, որ դրամագլուխը, նկատմամբ այդ իբրեւ պարզ դրամ թէ արտադրութեան միջոց, իբրեւ յատկեալ արժէքի կուտակում, որոշ չափով համայնական սեփականութեան բնոյթ ունի,

ժողովը անկարելի կը գտնէ մերժել բռնի հանգանակութիւնը, յեղափոխական սկզբունքի տեսակէտէ։

II Սակայն նկատելով նաեւ որ՝

Բռնի հանգանակութիւնը սիստեմի ձեւ ստանալով կովկասեան իմքնապաշտպանութեան տագնապալի օրերուն, անքարոյացումի եւ դրամաշորթութեան տխուր երեւոյթի մը յանգաւ,

ժողովը մերժից ասկէ ետ իբրեւ սիստեմ ընդունել, որոշելով ծանր պատասխանատուութեան ենթարկել զանցառու մարմինները, ի հարկին կազմալոյծ հռչակելով զանոնք։

III ժողովը նկատելով միանգամայն որ՝

ա) Դրամի բանակութիւնը չէ, որ կ'անքարոյացնէ անոնք գործադրողը, այլ դրամի անկոնդրոլ եւ անքարեխիղճ գործածումը՝ անպատասխանատու մարդու ձեռքով, ոչ բուն յեղափոխական նպատակներու համար,

բ) Եթէ Դաշնակցութիւնը առաջիկային ունի կատարելիք ուժգին գործունէութիւն մը, մինչդեռ նախահաշիւը անկարող է գոհացում տալ բոլոր պահանջներուն,

ժողովը Դաշնակցութեան Խորհուրդին կը վերապահէ բռնի հանգանակութիւն մը կատարելու բացառիկ որոշումը, հետեւեալ չորս պայմաններու տակ։

1) Եթէ Ընդհանուր ժողովի որոշումներու համաձայն կատարելիք կարեւոր ձեռնարկներ անիրագործելի կը մնան դրամի չգոյութեան պատճառով։

2) Երբ Դաշնակցութիւնը անկարող ըլլայ հայբայթելու ոգորուած գումարը այդ ձեռնարկներու համար, տրուած պահուն։

3) Հանգանակութիւնը կը կատարուի որոշ յեղափոխական ձեռնարկի համար պահանջուած գումարին չափով։

4) Ձեռք բերուած գումարը չի կրնար գործածուիլ, որեւէ պարագայի տակ, ուրիշ որեւէ նպատակի համար, բացի այն նպատակէն, որուն համար հանգանակուած է»։

Քուէարկւում է նաեւ ընկ. Զաւարեանի բանաձեւը Զրաբերդի վերաբերմամբ եւ աննշան փոփոխութիւններով անցնում է միաձայն՝ բացառութեամբ Մուրատի։

Ահա այդ բանաձեւը։

«Լսելով Զրաբերդի շրջանի մասին տրուած զեկուցումը եւ գտնելով որ այնտեղ տիրող տնտեսական տագնապը եւ զանազան հարստահարութիւնները արդիւնք են կառավարական ընդհանուր անարխիայի, գիւղացու սակաւ անզգուշութեան ու ազգայնութեան, ինչպէս եւ յեղափոխական նախկին մարտիկներից ոմանց կամ խմբերի անբարոյական սանձարձակութեան,

Ընդհանուր ժողովը յայտարարում է 1) Դաշնակցութիւնից մերժւում են ժողովրդի վրայ բռնացող գիւղուրները եւ նրանց դէմ կոիւ է յայտարարւում կազմակերպական միջոցներով եւ 2) ւարարութիւնների, ւազգակային խմբերի, ինչպէս եւ անարխիայի առաջն առնելու համար անհրաժեշտ է դառնում կազմակերպել եւ իրար շաղկապել գիւղերը։ 3) կազմակերպել գիւղացիութիւնը, նպաստել նաեւ ռուս յեղափոխական շարժումներին, որոնց յաղթանակը միայն կարող է լուծել հողային տագնապը, բարձրացնելով թէ՛ տեղացուն եւ թէ գաղթականին, իրենց տնտեսական ծանր կացութիւնից»։

108ՐԴ ՆԻՍՏ (28 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան։

Ներկայ են 25 ժողովական։

Բացակայ են՝ Ստեփանեան, Սեպուհ, Վարդան, Ահարոնեան, Անդրանիկ։

Նախագահ.— *Այսօրուայ նիստը համաձայն անցեալ օրուայ որոշման, զբաղուելու է բացառապէս Ցուցական Մարմնին վերաբերեալ հարցով։ Ներկայ է այդ մարմնի անդամներից մէկը եւս՝ ընկ. Թորգոմը, որ կանչուած է յանձնաժողովի առաջարկութեամբ։ Նիստի 2 ժամը տրուում է Սաֆոյին, 1 ժամը պատասխանի եւ բացատրութիւնների, մէկ ժամն էլ յանձնաժողովին։ Այսօր նախագահութեան հերթը իմը չէ, Ահարոնեանինն է, որը բացակայ է։ իսկ միւսներն էլ յանձնաժողովի անդամ են։ Դուք ոչինչ չունէ՞ք նախագահութեան դէմ, Գ. Սաֆո։*

Սաֆո.— *Ոչ։*

Նախագահ.— *Իսկ դո՞ւք, ընկ. Թորգոմ։*

Թորգոմ.— *Ոչ։*

Նախագահ.— *Խօսքը ձերն է, Գ. Սաֆո։*

Սաֆոն *չարունակում է նախորդ նիստում կիսատ մնացած հակազեկուցումի չարունակութիւնը, որ վերաբերում է ծուցականի կազմակերպական հարցին։ Մանաժողովի զեկուցման Գ. մասին, որ վերաբերում է ընկերական քիւրքիմացութիւններին եւ յատկապէս Քրիստափորին, Սաֆոն պատասխանում է բանաւոր։*

Սաֆո.— *Գալիս է մեղադրութեան երրորդ մասը, որ ամենածանրն է. դա ընկերական յարաբերութիւնների խնդիրն է։ Այս մասը կազմուած է բաւականին լաւ, եւ մենք ոչինչ չէինք ասի, եթէ չլինէին մի քանի հակասութիւններ, որ եւ մատնանիշ կ'անենք։ Հարցը ընկերների մասին է՝ Սարգիսի, Աշոտի եւ գլխաւորապէս Քրիստափորի։ Քննադատը կարծում է, որ այդ մասը չէ կարելի անտես առնել եւ պէտք է զրպարտութիւնը պարզել։ Զրպարտութիւն բառը՝ քննադատը չատ չտակ է գործածում, առանց իրեն համար պարզելու հարցի էութիւնը։ Ինձ թւում է, որ չատ ծանրակիռ հանգամանքներ կային մեր այսպէս վերաբերմունքին, այն էլ դէպի մեռած մարդը։ Այստեղ ասուած է եղել, որ էլլէնը [Քրիստափորը] պէտք է հետանայ եւ Ռուբինային մօտը չպիտի պահի. իսկ Սաֆոյի եւ Էմիլի մասին այդպիսի որոշում չէ եղել։ Դրա պատճառն այն է, որ որոշումը չատ չտակ է եղել եւ անցադիրը բաժանելուց ժամանակ չենք ունեցել։ Ապա պարտք եմ համարում յիշել, որ իմ արձանագրութեան մէջ երբեք էլլէնին չէ վերագրւում եղեռնագործութիւն։ Ինչպէս կարելի է, որ այդպիսի բան ասող մարդիկ նոյնպէս առաջարկեն նրա զաւակը ապահովել։ Ես չեշտում եմ, որ այն ինչ որ մենք ենք ասել էլլէնի մասին, ամենաարարձր բանն է, որ կարելի է ասել. երբ բանասեղծները երգեր են յօրինում, եւ ուրիշները գովասանքներ մատուցանում, դա այն արժէքը չունի, ինչ որ ծուցականի խօսքը։ Նրանք ասում են նրան «ընկեր», այն էլ՝ «աւագ ընկեր»։ Ես կը կարդամ ձեզ արձանագրութիւններից մի կտոր. «Միաձայն որոշուեց Քրիստափորի եւ Շապուհի թաղման ծախքը..... (բերել չարունակութիւնը)»։ Այսպէս ուրեմն, յանձնախմբի բերած «դառն հեգնանք է» արտայայտութիւնը, ծուցականի վերաբերմամբ դէպի Քրիստափորը, միանգամայն անտեղի է։ Մենք բացարձակ եւ մանրամասն գրել ենք մեր մտածումները էլլէնի մասին. տալէք ինձ մեր գրած նամակը այդ առթիւ...։ Բայց ես կ'ասեմ եւ բերանացի, միայն խնդրեմ, Օրիորդ, ի չարը դործ մի՛ դնէք իմ համբերութիւնը։ Այնտեղ գրուած է մի երեսաչափ, որ Վիտոչի աղէտը հետեւանք է Քրիստափորի մէջ այդ վայրկեանին սառնութեան եւ չրջահայեցողութեան բացակայութեան. այդ նամակում օրինակ եմ բերել, թէ ինչպէս մի բաժակ ջուր տանելու համար պէտք է սառնութիւն. եթէ մարդ վրդովուած է՝ կը թափէ։ Իսկ մի ուժասնակի փորձի պէս բանի ժամանակ, պէտք է որ մարդ սառը, կենտրոնացած վիճակի մէջ լինի. բաւական է վրդովուել՝ եւ աղետով կը վերջանայ, ինչպէս եւ եղաւ։ Եթէ Քրիստափորը վրդովուած չլինէր, նա թոյլ չէր տայ, որ ռումբը դէչը անփորձ մարդը, որ պատրոյդը կարճ լինէր, խշշոցը լսելուց յետոյ գէչը։ Պաւիլլոնից գալու համար խշխշոց լսել պէտք չէր. այդ սխալը նա չէր կրող չնկատել, եթէ անդորը լինէր։ Ահա այդ հոգեկան դրութիւնն է եղել պատճառը. իսկ որ նա վրդովուած էր մեր դէմ, վրդովուած էր Վռամի դէմ, այդ փաստ է եւ մի ուրիշէք այժմ կրկնելու. քանի որ դատ է լինելու, այն ժամանակ կ'ասեմ։ Վրդովուելու շատ պատճառներ ունէր։ Ոսկեհատքի [Իզմիրի] փողին նա հակառակ էր. մենք պնդում էինք Լիսին [Պոլսոյ ?] ուղարկելու 3000 ռուբլի. նա դէմ էր, դարձեալ մենք պնդում էինք. տասնեակ առիթներ ունէր վրդովուելու, եւ այդ վրդովմունքը չէր կարող նրան սառնասիրտ դրութեան մէջ թողնել։ Եւ այդ առթիւ, մեր գրածն ու ջնջածը ի չարն է գործ դրել յանձնաժողովը։ Թուխչեանը չեշտում է, որ որոշ տեղեր են թողնուած, որ կարելի է կարդալ, եւ իբր թէ այդ միտումով է արած. այդ սխալ է, — դա իմ գրելու ձեւն է։ Ես վերջացրի։

---

5 րոպէ ընդմիջում։

Ռուբինա.— *Ես իրրեւ ծուցականի գործին մասնակից մի անձ, կ'ասեմ մի քանի խօսք, որպէսզի տեսնէք թէ ինչպէս փոխուեց ձեռնարկութեան ծրագիրը եւ թէ ի՛նչ վերաբերմունք էր ցոյց տալիս Սաֆոն։ Մենք եկանք Զմիւռնիայից Սեպտեմբերին, եւ քիչ ժամանակ յետոյ դնացինք կառքով Սելամլըք. կառքով մօտ չեն թողնում. մենք կանգնեցուցինք եւրոպացւոց տեղը. ես եւ հայրիկը [Քրիստափորը] դիտում էինք տերրասից. եւ նա այդ ժամանակ որոշեց ռումբով գործել տերրասից. կառքի մասին չէինք էլ մտածում։ Երբ կարոյին եւս հեռացրին եւ որովհետեւ խնձորները [ձեռնաոումբերը] գլխաւոր զէնքն էին մեզ համար, հայրիկն ի՛նքը որոշեց գործը գլուխ բերել։ Սաֆոն ասում էր՝ խնձորները կատարելագործուած չէին. չգիտեմ ի՛նչ հիմք ունի։ Գակաս էր միայն զսպանակը, որի համար մի քանի յայտ փորձեր կատարուել էին Սոֆիայում։ Երբ ես Վիեննայից դարձայ Պոլիս, Սաֆոն զանազան յօգ-*

ուածների հիման վրայ ասում էր, թէ ինձորով չէ կարելի գործել. պէդում էր թէ մարդ չկայ: Մի տարի մնացինք այնտեղ եւ մարդ չէինք գտնի. զարմանալի է: Ես յիշեցրի թէ պատմած ծրագիրն էլ անպէտք է: Ապա տեղեկագրի մէջ ասուած է, որ ամառ լինելու պատճառով՝ չորերի մէջ անկարելի էր ուժգ պահել. բայց չէ՞ որ մենք յատկապէս այդ նպատակի համար «նաքիտաքա» ունէինք, եւ ուրեմն այդ պատճառաբանութիւնն էլ անհիմն է: Իսկ որ գլխաւորն է՝ Սաֆոն միշտ պնդում էր, թէ աւելորդ զոհ պէտք չէ տալ. եւ գարնիզի մասնագէտն էլ, որի հետ նա զրաճեալ առանձին, առանց ինձ խօսել էր, իբր թէ ասել էր, որ կառքի պայթումից կը պայթեն եւ պաւիլիոնի ուժերը: Նա միշտ կրկնում էր, թէ այն գործն է գործ, որ առանց աւելորդ զոհի է լինում: Ես զարմանում էի. ի՞նչպէս կարելի էր յեղափոխական լինել եւ վախնալ զոհից եւ չօգտուել ունեցած բոլոր դիրքերից. կարելի էր մի քանի դիրք բռնել եւ մի քանի կառք ունենալ: Այժմ ասում եմ, որ դա ուսումնասիրուած չէր, իսկ այն ժամանակ, երբ ես պնդում էի այդ, անուանում էին ֆանտազիա: Ճետոյ գլխաւոր չարիքը ժամացոյցն էր: Նա յամառ չեչտում էր, որ ղեղերին չէր հաւատում: Ձէ՞ յիշում արդեօք՝ ի՞նչ էի առարկում ես այնտեղ: Գուցէ նա իրաւացի էր իմ ղեղերի նկատմամբ. բայց ի՞նչպէս հաւատում էր Սուլթանի ճիշդ այդ րոպէին այնտեղ գալուն, չէ՞ որ նա մեքենայ չէր, կարող էր ուշանալ, այդ րոպէին չգալ, ինչպէս եւ պատահեց: Դուք աւելի հաւատում էիք, որ Սուլթանն այդ վայրկեանին կը դայ, քան լսում էիք ընկերոջ, որ կասկածում էր եւ պատրաստ էր ամէն զոհողութեան: Ապա Սաֆոն ասում էր, որ իբր թէ ես մի քանի րոպէ առաջ եմ սեղմել. ես անցեալ ժողովում հերքեցի, եւ այժմ էլ նոյնը կրկնում եմ, զսպանակը սեղմել եմ ճիշդ ժամանակին, այսինքն փողը հնչելուց յետոյ. մի քանի քայլ հեռանալուց յետոյ լսում է պայթիւնը: Բայց ի՞նչպէս դուք այն ժամանակ չէիք մտածում, որ ես եմ փչացրել զործը: Դա դուք դիտմամբ էք ասում, ինչպէս չքաշուեցիք հայրիկի մասին այնպիսի բան գրել. դուք ասում էիք, որ ես «ապազայ սերունդի աչքերը բաց կ'անեմ, ցոյց կը տամ, ով էր Քրիստափորը», եւ այժմ նրան անուանում էք «աւազ ընկեր», մինչդեռ այնտեղ ասում էիք թէ նա ընկեր չէ. եւ ես բողոքում էի, որ Ցուցական Մարմինը չառաջարկէ որ Դաշնակցութիւնը Քրիստափորին թաղէ եւ նրա որդուն ու կնոջը ապահովէ. ես ասում էի՝ «Թող այդ նրա իսկակա՛ն ընկերները անեն»: Դուք ինձ չլսեցիք եւ ես հակառակում էի: Ես միշտ հեռանքով էի վերաբերւում ձեր տեղեկագրին, որովհետեւ այդ, ես միշտ ասել եմ, տեղեկագիր չէ, այլ Սաֆոյի բնութագիրը՝ խարակտերիստիկը. եւ եթէ չլինէր այդ տեղեկագիրը, դուք այստեղ չէիք կանգնի իրերս մեղադրելս: Հենց այդ նպատակով ինքս էլ ստորագրեցի տեղեկագրի տակ, որպէսզի այդ փաստաթուղթը հասնի ուր հարկն է՝ անփոփոխ եւ Սաֆոյին չճանաչողների առաջ բաց անէ նրա իսկական պատկերը:

Սաֆօ.— Ես հպարտանում եմ դրանով եւ խղճում եմ ձեզ:

Ռուբինա.— *Այո, ես դիտմամբ ստորագրեցի այդ տեղեկագիրը, որ ընկերները միջոց ունենան ձեզ այստեղ կանչելու: Ապա կառքի կանգնելու մասին ես միշտ պնդել եմ, թէ չպէտք էր մեքենայով անել. վերջին մոմենտին, երբ Սուլթանը երեւաց, արագ մօտենալ եւ պայթեցնել, եւ դրանով փորձն անպատճառ յաջողութեամբ կը պսակուէր. իսկ վայրկենաչափի մեքենայով չատ դժուար էր, տեղն էլ չատ անյարմարութիւններ էր ներկայացնում. անկիւնում կար մի ծառ, որ կարող էր արգելք լինել: Ես բոլորը չասացի: Կը խնդրեմ, ինձ հարցեր տաք եւ ես կը պատասխանեմ, որ աւելի պարզըւի խնդիրը:*

Վահագն.— *Արդեօք կառքը նախապէս որոշուած տե՞ղը կանգնեցաւ:*

Ռուբինա.— *Այո՛:*

Շահխաթ-ունեան.— *Ժորխի անճնաւորութեան մասին մի քանի խօսք կ'ուզէի լսել:*

Ռուբինա.— *Ժորխը, երբ մտաւ մեզ մօտ եւ տեսաւ որ վիճակով ենք ուզում գնալ, մի ճառ ասաց, որ այդպիսի գործին վիճակով չպիտի գնաք, ձեր բարոյական պարտքն է՝ առանց վիճակի գնալ. եւ նկատեց որ ես (Ռուբինան) ամենից չատ բարոյական իրաւունք ունեմ այդ անելու. ապա նա բարկացած հեռացաւ:*

Սաֆօ.— Դուք երազում էք, օրիորդ. նա ի՞նչ լեզուով ասաց:

Ռուբինա.— *Ֆրանսերէն, եւ էմիլը թարգմանեց:*

Սաֆօ.— *Էմի՞լը, ֆրանսերէ՞ն. դուք երազում էք:*

Ռուբինա.— *Ինչու էք միշտ կրկնում «երազում էք». ասացէք այդ ժողովից Ժորխը չգնա՞ց բարկացած:*

Սաֆօ.— *Ո՛չ:*

Թորգոմ.— *Ես ներկայ էի, բայց չեմ յիշում այդ:*

Ռուբինա.— *Ես եւ Սաֆոն միշտ ռուսերէն էինք խօսում. դրա համար էլ Թորգոմի վկայութիւնը ինձ համար օրինական չէ:*

Թորգոմ.— *Այն օրը ժողով եղաւ եւ որոշուեց վճակ. ժողովի սկզբին, տաք վիճաբանութիւնից յետոյ, երբ որոշել էինք վիճակ՝ հակառակ օրիորդի պահանջին, որ իրե՛ն յանձնուի, եւ երբ ես խոստացայ, եթէ ինք դուրս գայ, իրեն յանձնել, — ուշաթափուեց ուրախութիւնից: Ժորխն ինձ տուեց գլխարկը եւ ջուն հանեցինք. բայց չեմ յիշում, որ բարկացած գնաց:*

Գագիկ.— *Սաֆոն ասում էր, թէ ինձորները ապարդիւն են, որովհետեւ կառքի պայթիւնից դրանք կը պայթեն: Արդեօք այլ կէտեր չկայի՞ն ինձորուորներին կանգնեցնելու, որ դուրս մնային պայթման չբջանից:*

Զաւրեան.— *Օրիորդն ասաց, որ կառքի կանգնելու տեղը վերջին ժամանակ որոշուեց. ե՞րբ եւ ո՞վ որոշեց:*

Ռուբինա.— *Մի չաբաթ առաջ ես որոշեցի եւ պայման դրի, որ եթէ առանց մեքենայի լինի, փողոցում կանչենք, իսկ մեքենայով՝ բակում:*

Տաճատ.— *Քիչ առաջ Սաֆոն արձանագրութեան մասին խօսելիս ասաց, թէ Քրիստափորը «ամէն ընկերն էր». իսկ Ռուբինան հակառակն էր ասում. կ'ուզէի, որ Թորգոմն այդ մասին կարծիք յայտնէր:*

Թորգոմ.— *Ես չեմ լսել Սաֆոյի անոր մասին զէշ խօսելը:*

Շահխաթ-ունեան.— *Արդեօք Թորգոմը ընկերական վերաբերմունքի մասին ի՞նչ կ'ասէ:*

Ռուբինա.— *Ամառը, երբ Թորգոմը մեզ մօտ էր, ես ասացի թէ տեղեկագրի մէջ այսպիսի տողեր կան. նա ասաց թէ չէ կարդացել:*

Թորգոմ.— *Այդ թիւրիմացութիւն է, այդպէս բան չէ եղել. ես ասել եմ՝ քանի դուք ասում էք, թէ արձանագրութիւն կազմուած է Սաֆոյի ասածով եւ սուտ է, ես կը գրեմ Սաֆոյին, որ գայ եւ բացատրութիւն տայ:*

Ռուբինա.— *Եւ եթէ կարդացած լինէիք, ինչո՞ւ պիտի ասէիք, թէ ես հայրիկի հետ մտալով գործին կը վնասեմ, քանի որ ես սենեակից ամենեւին դուրս չեմ եկել եւ միշտ օգնել եմ նրան:*

Թորգոմ.— *Մենք որոշեցինք, որ դուք հետը չերթաք, զգուշութեան համար: Կը վախենայինք որ գործին կրնաք վնասել:*

Շահխաթ-ունեան.— *Թորգոմը ստորագրելուց առաջ կարդացե՞լ է նաեւ ընդլուած տեղերը:*

Թորգոմ.— *Կարդացել եմ:*

Ռուբինա.— *Ձէք կարդացել. չէ՞ որ դուք ինքներդ հարցրիք այդ մասին ինձանից:*

Շահխաթ-ունեան.— *Այստեղի տուած տեղեկագիրը կարդացե՞լ էք:*

Թորգոմ.— *Ո՛չ, այդ մասին չատ խօսք է եղել եւ ես պատճառ չունէի կասկածելու. հնարաւորութիւն չկար կարդալու. վերջին թուղթն եմ ստացել եւ ստորագրել, հաւատալով, որ իմ ընկերն ինձ չի խաբի:*

Շահխաթ-ունեան.— *Ռուբինան ասում է, թէ Սաֆոն խուսափում էր էլէկնի արած բոլոր միջոցներից, ասելով, թէ չպիտի անել այն բոլորը, ինչ որ անում է էլէկնը:*

Թորգոմ.— *Ձեմ լսել, չգիտեմ:*

Թոփչեան.— *Վիտոլի դէպքի արձանագրութիւնը ստորագրել է Թորգոմը. ի՞նչ տեղեկութիւն տուեց Սաֆոն, որ ստորագրեցիք:*

Թորգոմ.— *Սաֆոն ասում էր, թէ Քրիստափորը յուզուած դրութեան մէջ է եղել, որ ուզեցել է մեծամիտ խօսքերին դաս տալ:*

Թոփչեան.— *Ճուզուա՞ծ, թէ դիտաւորութիւն է*

ունեցել վրէժ լուծելու. ինչո՞ւ է պատրոյգը կարճ արել:

Թորգոմ.— Վախեցնելու համար:

Արամ.— *Ի՞նչպէս է ստորագրել Աչոտը, քանի որ արձանագրութեան մէջ իրեն դէմ աննպաստ բան կայ. Ք՞ն նա էլ չէ կարդացել:*

Թորգոմ.— *Ձգիտեմ. երկու տարուայ բան է, չեմ յիշեր: Բայց չեմ կարծեր որ առանց կարդալու է ստորագրել:*

Արամ.— *Առաջ արձանագրութիւնները կազմուում եւ ստորագրուում էին տեղն ու տեղը. այս արձանագրութի՞ւնը ինչպէս է եղել:*

Թորգոմ.— *Արձանագրութիւնները յաջորդ օրը կը ստորագրուէին. այս՝ չեմ յիշեր:*

Ռուբինա.— *Հայրիկից յետոյ արձանագրութիւն չէ եղել. Սաֆոն իւր սենեկում գրեց, վերջին օրը բերեց՝ առանց կարդալու ստորագրեցին. ես էլ ստորագրեցի:*

Համօ.— *Ինչո՞ւ Թորգոմը նոյն բացատրութիւնը չէր տալիս Թիֆլիզում, Քրիստափորը ուզեցել է վրամին վախեցնել:*

Թորգոմ.— *Ես ըսի, Քէ չեմ ըսեր այնտեղ իմ կարծիքները, որովհետեւ ես այնտեղ իբր վկայ եմ կանչուել եւ ոչ իրրեւ ամբաստանեալ. ես պարտական չէի ասելու:*

Ռուբինա.— *Թորգոմն ասում է, որ հայրիկն ուզում էր վախեցնել Վրամին. ի՞նչ է կարծում Թորգոմը, մենք գնացինք մի՞ խնձորով. 5–6 խնձոր կար եւ բոլորը կարճ պատրոյգով, ուրեմն բոլորի՞ն էլ վախեցընելու մտադրութիւն կար. ես զարմանում եմ, Քէ ի՞նչպէս դուք քեթեւամտօրէն միացաք Սաֆոյի կարծիքին եւ չհետաքրքրուեցիք մանրամասները իմանալու:*

Բարսեղեան.— *Ի՞նչպէս էք հասկանում, Քէ Քրիստափորն ուզում էր վախեցնել Վրամին. ինչո՞ւ ես չեմ հասկանում:*

Թորգոմ.— *Կային պատճառներ, ինչպէս ասաց Սաֆոն. 3000 ֆրանքի խնդիրը, Սարգսի հարցը. Վրամի ղրկած նամակը. նա ուզեց պզտիկցնել բուլղարների եւ ներկայ եղող օրիորդների առաջ:*

Զաւրեան.— *Ինչի՞ց երեւում էր այդ, որ Քրիստափորն ուզում էր պզտիկցնել նրան. դուք ի՞նչ հանգամանքներից դրդուած այդ եզրակացրիք:*

Թորգոմ.— *Որովհետեւ այնտեղ եղող բոլոր բուլղար ընկերներն ես հակառակ էին այդ սիստեմով ուժգ ձգելուն. բայց էլէկնը վիրաւորուել է եւ անուշադրութեան մատնել: Լազոփը [Լիապով ?] վրդովուած կր պատմէր, Քէ յիմարութիւն է այդպէս անելը եւ ինքը չէ կարողացել համոզել, հեռացել էր հեռացընելով նաեւ օրիորդին, որ զոհերի Քիւը պակաս լինի:*

Վռամեան.— *Արդեօք Թորգոմը կրնա՞յ ըսել, Քէ որքան մարդ են ուզել դրսէն, պաւիլիոնէն ուժգ նե-*

տելու համար, եւ ումի՞ց:

Թորգոմ.— Այդ խօսած է Սաֆոն: Տեղեկութիւնս այնքան է, ինչքան լսել է Սաֆոն: Սաֆոն մեզի լուր բերաւ՝ թէ Յորհուրդն այդ մերժել է եւ ուրեմն չէինք կարող հեչտութեամբ Գոլսէն մարդ դոնել:

Վռամեան.— Դուք ուրիշ մարմնի դիմեցի՞ք պաշտօնապէս, դրսէն մարդ հրաւիրելէն առաջ:

Թորգոմ.— Ո՛չ:

Վռամեան.— Ձեր ծրագրին մէջ կա՞ր, որ այդ գործէն առաջ ուրիշ ձեռնարկ էլ անէք, — գրաւոր զեկուցում տալու դեսպաններին՝ Սուլթանի մահէն առաջ:

Թորգոմ.— Այո՛... կրնայ ըլլալ... ունէինք պատրաստուած գրած:

Վռամեան.— Բռնուած ընկերներից Նահապետի եւն. հետ գործ ունեցե՞լ էք:

Թորգոմ.— Ես ինքս ունեցել եմ:

Համօ.— Արձանագրութեան մէջ ասուած է, որ վիճակ գցելու ժամանակ, եղել է մի օժանդակ ընկեր՝ Արամ, որին ընկել է վիճակ եւ որին պէտք է յանձնէր կառքը տանել: Ճանաչո՞ւմ էիք նրան:

Թորգոմ.— Այո՛, Աչոտը վկայ էր:

Համօ.— Աչոտը որ կասկածի տակ էր, ի՞նչպէս դուք վստահեցաք նրան. դրսից մարդ վախենում էիք հրաւիրել, իսկ անվստահելի ընկերոջ առաջարկած մարդուն ընդունել էք, — զարմանալի է:

Թորգոմ.— Աչոտի վրայ կը կասկածէինք իբրեւ գործի անընդունակ մարդու եւ ոչ իբրեւ ընկերոջ. ինչո՞ւ սիտի չհաւատայինք:

Սաֆօ.— Ինդրում եմ Օրիորդ Ռուբինեային, որ յայտնէ, թէ բացի տպագրուած թղթերը յանձնելը, ուրիշ գործ ունէի՞նք:

Ռուբինա.— Ո՛չ:

Սաֆօ.— Միւս ընկերներին՝ Նահապետին եւն. ճանաչո՞ւմ էինք:

Ռուբինա.— Ես եւ դուք ո՛չ:

Սաֆօ.— Օրիորդ, լաւ յիշեցէք և ասացէք, արդեօք երբ ձեզ կրկին առաջարկեցի, որ պաւիլիոնը Թողնէք, որովհետեւ ռումբերի մասին այլեւս խօսք չկայ, ի՞նչ ասացիք դուք: Ձեր խօսքերն են՝ «ինչի էք կարծում, թէ ես հակառակ կը լինեմ պաւիլիոնը Թողնելուն. ռումբերն ինձ էլ են զզուեցրել»:

Ռուբինա.— Ես ասել եմ ծաղրով, որովհետեւ դուք միշտ կրկնում էիք ձեր այդ խօսքերն. իսկ վերջին խօսքերն ես չեմ ասել:

Սաֆօ.— Կարելի՞ էր կառքը վայրկենական դարձընել:

Երկու վայրկենաչափ կար, չէ՞ր կարելի միաժամանակ վայրկենական դարձնել:

Ռուբինա.— Ոչ, այնտեղ չէր կարելի. քաղաքից դուրս կարելի էր անել. իսկ այնտեղ լրտեսների մէջ չէր կարելի անել:

Սաֆօ.— Իսկ մկրա՞տը:

Ռուբինա.— Մկրատով Քեալը կը կտրուէր. բայց կարող էր պատահել, որ ան չգործէր:

Սաֆօ.— Մնաս բարեւի ժամանակ ես չասացի՞, թէ Զարեհն այժմ ձեր տրամադրութեան տակ է:

Ռուբինա.— Ես չեմ լսել. բայց դիտեմ, որ ասացիք, թէ «Օրիո՛րդ, ի նկատի ունեցէք, որ Զարեհն քիչ հարբած է. ես հոտը առի». այո՛, նրա աչքերը կարմրած էին, դուք էլ ասացիք թէ «ոչինչ, ներողամիտ պէտք է լինել, որովհետեւ բոպէն շատ ծանր է»:

Սաֆօ.— Դուք հաւատո՞ւմ էիք դուռն գալու ժամանակ, որ Սուլթանը սպանուել է:

Ռուբինա.— Այո՛, բայց մի քիչ կասկածում էի, որովհետեւ ձայնն այնպէս ուժգին չէր լսուել, ինչպէս սպասում էի:

Սաֆօ.— Մենք, որ գնացքը նստեցինք, համոզուա՞ծ էինք:

Ռուբինա.— Այո՛:

Սաֆօ.— Դուք երբեւիցէ առաջարկ արի՞ք ռումբով պաւիլիոն գնալու:

Ռուբինա.— Ո՛չ, ինչ որ վայրկենաբարն էր, ինձ էր վերաբերում. ինձ վրայ վստահ էի, եւ կ'անէի. իսկ ինչ ուրիշին է վերաբերում՝ չեմ կարող ասել. եւ քանի որ պաւիլիոնից ռումբ նետողն ես չէի լինելու, այդ առաջարկը չէի անի: Արձանագրութեան մէջ ասուած է, որ իբր Թէ ..... ենք գնացել. մենք ուրախ էինք, բայց չեն .....(45): Դուք շատ մոայլ էիք եւ երբ հարցրի պատճառը, ասացիք.— «Եթա վաս փրոբլիմայու», որովհետեւ ես կ'ուզէի ձեր տեղը լինել:

Սաֆօ.— Իսկ դուք ասացի՞ք, Թէ ես ձեր Քշնամին եմ, եւ միշտ էլ կը մնամ, երբ մենք հրաժեշտի համբոյրն էինք տալիս:

Ռուբինա.— Այո՛, ասել եմ եւ կ'ասեմ. ես ձեր Քշնամին եմ, եւ կը մնա՛մ [Քշնամի] հայրիկին սպանողին: Դո՛ւք սպանեցիք հայրիկին, դո՛ւք: (Զանգահարութիւն):

Սաֆօ.— Ես, որ ձեզ ոչնչութիւնից եմ հանել եւ այստեղ բերել:

Ռուբինա.— Այո՛, ձեր պատճառով ես արժանացայ այս երջանկութեան. բայց ես ձեր Քշնամին եմ, այո՛:

Թոփչեան.— Ես իբրեւ մասնաժողովի անդամ գրեթէ ոչինչ չունեմ ասելու, որովհետեւ Գ. Սաֆոն մեր զեկուցման ոչ մէկ կէտը չհերքեց. իսկ վերջին մասի վերաբերմամբ նոյնիսկ յայտնեց, Թէ չատ լաւ է կազմըւած: Բայց չնայելով դրան, նա դարձեալ ուզում է մեզ հաւատացնել, Թէ տեղեկագիրն ու արձանագրութիւնները կազմողները անմեղ են, Թէ ինքը նպատակ չէ ունեցել արատաւորելու Քրիստափորի յիշատակը: Որպիսի՛ դառն հեգնութիւն. անուանել մեկին «աւազ ընկեր», մատնել նրա ընտանիքի ապահովութեան մասին, բայց միեւնոյն ժամանակ մտնել նրա մեռած հոգու խորքը եւ այնտեղ ամենաստոր յատկութիւններ որոնելու փորձ անել: «Քրիստափորը բարկացած էր, ուզում էր Վռամին վախեցնել», — ասում են Սաֆոն եւ Թորգոմը եւ իսկոյն աւելացնում, Թէ դրանով իրանք չեն ուզում Քրիստափորին ոճրագործ համարել: Զարմանալի հասկացողութիւն: Ասացէ՛ք խնդրեմ, մի՞Թէ դատապարտելի չէ, երբ մի յեղափոխական, գործի շահը Թողած, տարւում է իւր անձնական կրքերով, համակիւներով, եւ հակառակորդին վախեցնելու համար, ռումբով այդքան վտանգաւոր խաղեր է անում: Մի՞Թէ Գ. Սաֆոն այդքան միամիտ է, որ կարծում է, Թէ մենք չենք հասկանում արձանագրութեան մէջ մտցրած այն նշանաւոր դարձուածքների իսկական իմաստը.— Որ Գ. Սաֆոն ուզել է անպատճառ արատաւորել Քրիստափորի յիշատակը, դա աւելի քան պարզ է: Երեւակայեցէք Սաֆոն, Գոլսից Սոֆիա գալով, փոխանակ խոնարհուելու երկու ընկած ընկերների Քարմ շիրմների առաջ եւ նրա կիսատ Թողած գործը շարունակելու մասին խորհելու, սկսում է մեռածների հոդիները քրքրել, ինչ որ վկայութիւններ հաւաքել նոյնիսկ դրաւոր կերպով եւ Գոլիս ուղարկել, որպէսզի այնտեղի ընկերները համոզուեն, Թէ Վռամը զոհ է գնացել Քրիստափորի վրիժառութեան: Նոյն նպատակով նա արձանագրութեան մէջ յատուկ նկարներ է արել, որ ցոյց տայ, Թէ Քրիստափորը միայն պատահմամբ է զոհուել, նրա կրծքի վէրքը մի գնդասեղի դլխի մեծութեան հաղիւ լինի. իսկ Վռամը, — դա իսկական զոհ է եւ ընկերոջ ձեռքով ընկած զոհ: Ահա այդ եղրակացութեանն են բերում Քէ՛ արձանագրութիւնները եւ Թէ Գ. Սաֆոյի վերջին նամակը՝ յանձնաժողովին ուղղուած: Եւ այդպիսի վերաբերմունք դէպի Քրիստափո՛րը, որին մենք բոլորս ճանաչում ենք, որի անուան հետ սերտ կապուած է Հ. Ց. Դաշնակցութեան ամբողջ անցեալը, այն Քրիստափորը, որը իր կեանքի նպատակն էր դարձրել հայկական յեղափոխութեան գործը, որի բիւրեղ հոգու, անբիծ կեանքի համբերը մի կախարդական ուժ էր նոր ընկերներ գրաւելու եւ հներին աւելի ոգեւորելու համար: — Ասացէ՛ք ընկերներ, մի՞Թէ սրբապղծութիւն չէ մի այդպիսի ընկերոջ յիշատակին այդքան անմաքուր մտածումներով մօտենալը: Եւ Գ. Սաֆոն ուզում է, որ մենք չյուզուենք, լռենք այդ սրբապղծութեան առաջ: Ո՛չ, մենք այդ չենք անի, այլ ստոր զրպարտիչներին կը տանք իրանց արդար հատուցումը: Գ. Սաֆոն եւ ընկերները, փոխանակ այստեղ բառաղութեամբ ճչմարտութիւնը ծածկելու, աւելի լաւ կ'անէին, որ անկեղծօրէն վեր կենային եւ ասէին, Թէ մեղաւոր են, յետ են վերցնում իրանց գրածը, եւ զղջալով ներողութիւն խնդրում: Այո՛, սխալը խոստովանելն էր առաքինութիւնը: Բայց Գ. Սաֆոն եւ ընկերները այդ առաքինութիւնից էլ հեռու մնացին, ուստի փողովը պարտաւոր է առանց տատանուելու իր խօսքն ասել:

Ռոստոմ.— Ես էլ մի քանի խօսք կ'ուզեմ ասել, որովհետեւ այստեղ մերթ Բիւրոն է չօշափւում, մերթ ես. տեխնիկական մասին ես չատ բան կարող չէի ասել. ասում էի եւ ասում եմ, որ սկսած ձեռնարկը քիչ չանս ունէր. ամենաչատը Սուլթանը կարող էր վիրաւորուել: Մինչեւ այժմ եղել են չատ ձեռնարկներ, որոնք անյաջող են անցել, բայց մենք պատասխանատուութեան չէինք կանչում: Իսկ ինչո՞ւ ենք այժմ այդ անում. որովհետեւ առաջ ամէն ձեռնարկ լինում էր ընկերական խորհրդակցութեամբ. իսկ Սաֆոն միշտ արհամարհել է ուրիշի կարծիքն եւ իւրն է դրել: Եւ ես արդարացնում եմ յանձնաժողովի վարմունքը՝ հրաւիրել պատասխանատուութեան, որովհետեւ Սաֆոն աշխատում է յանցանքը գցել Դիւֆեակչեւի վրայ, որ նրան է տուել: Ապա Սաֆոն մեղադրում է, որ կարդում են նրա Ջնջած խօսքերը. ի՞նչ իրաւունք ունենք կարդալու: Նայեցէ՛ք (ցոյց է տալիս). Սաֆոն դիտմամբ, կարծես, այնպէս խնամքով է Ջնջել, որ կարդանք, աւելի հետաքրքրուենք: Սաֆոյի՛ն պէտք է պատասխանատուութեան կանչել, ո՛չ մարմնին. Սաֆոն է, որ սխալ բացատրութիւն է տուել Քրիստափորի մասին անդամներին, համոզելով նրանց: Ցիշում եմ Շեկսպիրի դրամաներից մի հոգեբանական կտորը. երբ դաւադրութիւն է կազմւում եւ սպանւում Ցուլիոս Կեսարը, սրա բարեկամ Անտոնիոսը դուրս է գալիս ամբոխի առաջ ճառ խօսում, որի ամէն պարբերութիւնից յետոյ՝ «բայց Բրուտը լաւ մարդ է», եւ այնպէս գրգռում ժողովրդին այն աստիճանի՝ որ սա գնում այրում է Բրուտի տունը, նոյնն է անում եւ Սաֆոն: Նա անուանում է Քրիստափորին «աւազ ընկեր», առաջարկում է նրա ընտանիքն ապահովել, բայց նրա մասին այնպէս է խօսում, որ ամենամիամիտ մարդն անգամ կը դպայ, Թէ նա ամբաստանում է Քրիստափորին: Այս տոկումենտը դրուած է մեր առաջ. մեղադրում են Քէ ինչո՞ւ էք կարդում.— ի՞նչպէս չկարդանք, չէ՞ որ պատմածը մնալու է: Մի րոպէ ենթադրենք, որ այն մարդիկ՝ Ռուբինան, Թորգոմը բռնուեցին, մեռան, եւ պատմութեանը պիտի մնար այս մուԹ Թուղթը: Եւ սրա համար պէտք է կանչենք դատի: Առաջին անգամ երբ կարդացուեց Ցուցականի տեղեկագիրը, այնպէս տպաւորութիւն ստացուեց, որ իբր Քէ Ռուբինան է մեղաւոր, որ ժամանակին չէ սեղմել մեքենան եւն., եւ Սաֆոն հերքեց այդ եւ բարեբախտաբար Ռուբինան երբ եկաւ այստեղ, հերքեց, որ դա սուտ է, որ եւ պարզեց իրողութիւնը: ԵԹէ Քրիստափորն էլ այստեղ լինէր, նա, անշուշտ, նոյնպէս կը հերքէր իւր մասին ասուածը: Մի բան էլ, Սաֆոն ասաց, Թէ երբ ինքը եկաւ, իւր ընկերները լաւ չընդունեցին նրան: Ես էլ եմ Սաֆոյին ընկեր եղել եւ փոխուել եմ: Բայց դրա պատճառը ոչ Քէ անձնականն է, այլ այս Թուղթը:

Ջաւրեան.— *Ես, իրրեւ յանձնաժողովի անդամ դիտմամբ հրաժարուեցի խօսելուց. այժմ իրրեւ հասարակ ժողովական խօսելով, դառնում եմ Սաֆոյին, որ մեղադրում էր ինձ իրրեւ հակառակ վերաբերուողի: Ես պէտք է բոլորին ասեմ, որ մինչեւ վերջին ժամանակ, երբ խնդիրը պարզուեց, ես լաւ էի դէպի նա: երբ Գոլսում էի եւ գիտէի, որ նրանք գնում են մեռնելու, ես պաշտում էի նրանց, մեծ պաշտամունքով էլ բաժանուեցի: Եւ այն ընծան, որ տուեց ինձ Սաֆոն, ես սուրբի պէս էի պահում. բայց այժմ դժբախտաբար, կորցրել եմ, եւ միայն վերջը երբ իմացայ, որ մարդ չմնաց, որին նա չցեխոտէր, ես փոխեցի իմ վերաբերմունքը, մանաւանդ երբ տեսայ նրա ձգած առուերը էլլէնի վրայ. եւ երբ կարդացի արձանագրութեան բնագիրը, երբ աչքովս տեսայ բոլորը, ես զգացի, որ նա անպիտան, կեղտոտ մարդ է: Նա ցեխ է նետում մի ուրիշի հասցէին՝ որ այստեղ չէ եւ չէ կարող իրեն պաշտպանել. դա Անչուկովան է. ես պաշտպանում եմ այդ անձին եւ պնդում, որ նա մաքուր անձ է:*

Սաֆօ.— *Ես ոչինչ չունեմ խօսելու. շատ կարճ կ'ասեմ, այն, որ յայտնում եմ իմ խորը յուզմունքը, որ այստեղ երկու անձինք՝ Ջաւրեան եւ Թոստոմ՝ առում են թէ իմ դէմ ոչինչ չեն ունեցել, մանաւանդ Թոստոմը, որ այն ածականները ինձանից լսելուց յետոյ՝ Գարիզում, դեռ ասում է՝ թէ ոչինչ չունի. ես զարմանում եմ: Ես թողնում եմ ժողովի 5 յարձակուողներին եւ այն, որ Ծուցականը յետ վերցնէ իւր գրուածքը: Այդ պէտք է դեռ ստուգել: Դուք ազատ էք պատմութիւնը սրբագրելու, դուք ազատ էք արեգակի վրայ բծեր տեսնել յանդգնողին պատժելու. դուք ընկուածների մէջ միտումնաւոր բաներ էք տեսնում, որ հիմնովին սխալ է: Ինչո՞ւ չէք կարծում, որ այդ գրողը այնքան քաջ է, որ չէ ուզեցել ծածկել նոյնիսկ իւր սխալները: Ի՞նչ ունէի ես էլլէնի դէմ. ամէնքդ գիտէք, որ միասին էինք ապրում, միեւնոյն սեղանում. երբեմն տաք վիճում էինք եւ հակառակւում: Ի՞նչ կարող էի ունենալ նրա դէմ: Ուզում էք աստուածացնել, ասէ՛ք, բայց նա էլ մարդ էր. ինչո՞ւ չէր կարող սխալուել: Ինչո՞ւ Վիդոչի տրած սխալը չէր կարող անել: Եւ դուք ուզում էք այս ժողովում ամբողջ Ծուցականի դրածը սեւացնել: Ինչո՞ւ չէր կարող Քրիստափորը սխալ անել. մի՞թէ նա մարդ չէր: Նա ցանկացել է փոքր կապսիլ դնել, աւելի փոքր քան Ֆիլիպպէում. բայց որովհետեւ բարկացած էր եղել, — որը ես կ'ապացուցանեմ, — պատահում է այս դէպքը: — 15 անգամ ինձ կախաղան հանէք, ես պնդում եմ, եթէ նա առնասիրտ լինէր, չէր անի այդ բողոքող սխալը: Դիւֆեակչեւը այժմ էլ ասում է, որ եթէ ես լինէի այնտեղ, երբեք չէի թոյլ տայ, ատրճանակը կրծքին կը դնէի եւ թոյլ չէի տայ...: Դուք կարծում էք, թէ նա չէր կարող սխալ անել, բայց կարծում էք թէ մենք կենդանի՝ նրանց ամէն զրպարտութեան ընդունակ ենք, ամէն կեղտոտութիւն կ'անենք. ինչո՞ւ, որովհետեւ Քրիստափո՛րն էր: Արէ՛ք. բայց ես կ'ասեմ դարձեալ՝ որ արեգակի վրայ բծեր կան:*

Նախագահ.— *Արդեօք Գ. Սաֆոն եւ Թորգոմը էլ ասելիք ունե՞ն թէ ոչ:*

Թորգոմ.— *Ոչինչ չունեմ, միայն կ'աւելացնեմ, որ մենք երբեք չենք ըսել թէ նա ոճրագործութիւն է արել. բայց հետեւանքը ոճրագործութիւն է եղել: Ի՞նչ արած: Ամէն գործ դատելու իրաւունք ունի Ընդհանուր Ժողովը, նոյնը եւ Ծուցական Մարմնի որոշումը: Նա չար միտք չէ ունեցել, բայց չամառութիւն է ըրել, որը եւ մեղադրել, դատապարտել ենք մենք: Մենք ասում ենք հիմնուած ուրիշների վկայութիւնների վրայ, ինչպէս Դիւֆեակչեւի:*

Ջաւրեան.— *Թորգոմը եւ Սաֆոն գիտէին, որ Ծուցական Մարմնի պատասխանատուութիւնը տրուած էր էլլէնին. ի՞նչպէս եղաւ, որ Գոլսում նա մնաց մեկուսացած եւ ընկերները մի տեսակ սառած, որի պատճառով վերջին ամիսներին էլլէնը յուզուած էր եւ տրժդոյն:*

Թորգոմ.— *Մեկուսացած չէր. գուցէ այդպէս կ'երեւար, որ մենք քիչ կ'երթայինք նրա մօտ զգուշութեան համար. ես հետը շատ լաւ էի եւ սիրով, եւ տարբերութիւն չէի տեսնում նրա մէջ:*

Ժողովը որոշեց յաջորդ նիստին տալ իւր որոշումը Ծուցական Մարմնի մասին, առանց Ծուցական Մարմնի անդամների ներկայութեան:

Նիստը փակուեց ժամը 10½ին:

109ՐԴ ՆԻՍՏ (28 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Ահարոնեան:

Ներկայ են՝ 26 ժողովական:

Բացակայ են՝ Թոստոմ, Ստեփանեան, Վարդան, Անդրանիկ:

Ըստ օրակարգի, դատական յանձնաժողովի կողմից լսնկ. Զուխուբեան զրաւոր զեկուցում է տալիս վարդոյի գործի մասին, որ տեւում է 40 րոպէ:

Զեկուցումից յետոյ ժողովականները հարցեր են տալիս:

Միհրտատեան.— *Զեկուցման մէջ յիշուած պերճախօս փաստերից յետոյ անկարելի է որեւէ առարկութիւն անել: Այժմ մենք աւելի պիտի ծանրանանք պատճառների եւ դրա յայտարարման վրայ:*

Մուրատ.— *Հետաքրքիր է գիտենալ, թէ առաջին գումարը, որի մասին յիշատակուած է զեկուցագրի մէջ, ե՞րբ է տրուել եւ երկրորդը ե՞րբ է փոխադրուել Արեւելեան Բիւրոյի կողմից:*

Բարսեղեան.— *Առաջին գումարի մասին Արեւելեան Բիւրոն ոչինչ չգիտէր, երբ վերջին գումարը փոխադրեց Վարդոյին՝ մելինիտ [պայծուցիկ նիւթ մը] եւ այլ նիւթեր գնելու համար:*

Ջարդարեան.— *Սխալ է կարծել, թէ Բալկանի Կ. կոմիտէն չէ հոգացել դրամները ստանալու մասին: Մեր ընկերներից Ճակոբ Ադամեանը, որ գանձապահ էր եւ ժամանակին կասկածել էր Վարդոյի վրայ, յաճախ նրան զգուշացրել է: Բայց Վարդոն ականջ չէ կախել: Դեռ 1904ի Շրջանային ժողովում լուրջ կերպով դէմ է կասկածի եւ դրամները նոր գանձապահին տալու այդ հարցը. բայց Վարդոն չատ ճարպիկ կերպով փախուստ է տուել: Մանրամասները չատ հետաքրքրական են. նա սիրով ընդունում է իւր պարտքը, միայն խնդրում է որ մէկը պայ իր հետ Վառնա, դրամը ստանալու համար: Եւ իսկապէս ընկ. Գիոնեանը գնաց այդ նպատակով, բայց Վարդոն խաբեբայելով ձգձգում է եւ վերջ ի վերջոյ յայտնում, որ դրամ չունի: Եւ Գիոնեանը ձեռնունայն վերադառնում է:*

Վռամեան.— *Ախտս որ յանձնաժողովը կանգ չէ առել Վարդոյի արարքների բարոյական կողմի վրայ: Միայն դրամը վճարելը բաւական չէ նրան նորից կազմակերպութեան շարքերում ընդունելու համար: Ոչ մի ընկեր այնպիսի լրբութիւն թոյլ չէ տուել դէպի կազմակերպութիւնը եւ մեռած ընկերները, ինչպէս այդ մարդը: Գիտք է վերջնականապէս արտաքսել նրան կազմակերպական շարքերից:*

Ջոփուրեան.— *Հարկ եմ համարում յանձնաժողովի կողմից յայտնել, որ մեզ յանձնուել է քննելու մի միայն զուտ դրամական գեղծումները. դրա համար էլ չենք չօշափել Վարդոյի անբարոյական ընթացքը առհասարակ:*

Վռամեան.— *Զեկուցման մէջ չէ յիշատակուած եւ այն 2.000 ֆրանքի մասին, որը Վարդոն իւրացրել է 1898ին կազմակերպութեան գումարից, «Շարժում»ի հիմնարկութեան միջոցին: Այդ էլ պիտի աւելացնել:*

Ջարդարեան.— *Արժէ աւելացնել եւ այն, որ Գետրոս Սերեմճեանի գրուածքները հրատարակելու համար Վարդոն հանգանակութիւն բաց արաւ եւ հաւաքեց մօտ 8-900 ֆրանք, բայց մինչեւ այժմ ոչ գիրքն է լոյս ընծայում, ոչ դրամների հաշիւը տալիս:*

Ջաւարեան.— *Մի կէտ մոռացութեան է տրուում: Ըստ կանոնագրութեան, Վարդոյի հարցը պէտք է վաղուց վճռուած լինէր: Դա տեղական մարմնի գործ է եւ չպէտք էր Ընդհանուր Ժողովին հասցնել: Ժողովը կարող է վճիռ կայացնել, բայց վճռի յայտարարումը պիտի լինի Բալկանի Կ. կոմիտէի կողմից եւ նրա անունով էլ իրագործուի:*

Ջարդարեան.— *Մեր ձեռնհասութիւնից դուրս էր այդ, եւ մենք իրաւունք չունէինք վերջնական վճիռ արձակելու: Այս հարցը յանձնուած էր Վարդոյին:*

Տաճատ.— *Որ Վարդոն չէ կարող պարտքը վճարել, դա շատ պարզ է: Սակայն չպէտք է բաւականանալ նրան հեռացնելով կազմակերպութեան շարքերից. նրա միակ պատիժը տեւորն է. այդ մարդը ամբողջ Բալկանի կազմակերպական մթնոլորտը ապականել է:*

Նախագահ.— *Եթէ այդպիսի անձանց տեւորի ենթարկելու լինենք, մենք շատ հեռու կը գնանք, քանի որ կովկասը եւ այլ տեղեր լիքն են այդպիսիներով:*

Վիճաբանութիւնը փակւում է: Ժողովը որոշեց թողնել վճիռը մի այլ նիստի, որպէսզի յանձնաժողովը պատճառաբանուած բանաձեւ ներկայացնի:

Թոփչեան *մանաժողովի կողմից կարդում է կովկասեան, ինչպէս եւ Թուրաստանի յեղափոխական սոցիալիստական կուսակցութիւնների վերաբերեալ համերաշխութեան բանաձեւը, որի մէջ յիշուած էին բոլոր այն կուսակցութիւնները, որոնց հետ գործակցելը մանաժողովը ցանկալի է համարում:*

Կարճ վիճաբանութիւն ծագեց այն կէտի չուրջը, թէ արդեօք պիտի ընդհանուր ձեւով դնել խնդիրը, թէ մի առ մի յիշել կուսակցութիւնների անունները: Կարծիքները բաժանուեցին:

Նախագահը քուէարկութեան դրեց եւ անցաւ առաջինը՝ այն է ընդհանուր ձեւով (18 ձայն ընդդէմ 7ի):

Նախագահ.— *Ընդունելով այդ ընդհանուր բանաձեւը, ժողովը կը կամենա՞ր արդեօք յիշել միայն կովկասում գործող կուսակցութիւնների անունները, ինչպէս նաեւ սոցիալիստ-յեղափոխականներինը:*

Այս առաջարկն էլ ընդունուեց 19 ձայնով ընդդէմ 6ի:

Ի նկատի ունենալով վերեւի դիտողութիւնները, բանաձեւի առաջին մասում արուեցին մի քանի փոփոխութիւններ. այդ մասը քուէարկուեց եւ անցաւ միաձայն: Միւս մասերը չքուէարկուեցին, թողնելով յաջորդ նիստերին:

Առաջարկուեց մանաժողովին աւելի մշակել այդ կէտերը:

Ժողովը փակուեց ժամը 1ը անց 10 րոպէին:

110ՐԴ ՆԻՍՏ (28 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է՝ Համօ Մհերեան:

Ներկայ են ժողովական:

Բացակայ՝

Օրակարգն է

ա) Վարդոյի գործի քանաձեւը, որ քուէարկուելով կ'ընդունուի միաձայնութեամբ:

Ահա այդ բանաձեւը.

«Ընդհանուր ժողովը, լսելով վարդոյի գործին համար կազմուած դատական յանձնաժողովի մանրամասն զեկուցումը, եկաւ հետեւեալ եզրակացութեան·

Նկատելով որ պաշտօնական թէ անպաշտօն բազմաթիւ փաստաթղթեր կը հաստատեն վարդոյի անարդարացուի մեղաւորութիւնը՝ գիտակցաբար իւրացուցած եւ իւր անձնական պէտերուն ծախսած ըլլալուն համար Բալկանի Կ. կոմիտէի 2139 ոսկի լեւ եւ 4673 արծաթ լեւը, ինչպէս նաեւ Արեւելեան Բիւրոյի կողմէ իրեն զրկուած կազմակերպական 2000 ռուբլին, — ընդամէնը՝ 12·539 ֆրանճ.

Նկատելով, որ դրամական այս յայտնի զեղծումներէն զատ Վարդոս շահագործած է նոյնիսկ նահատակուած ընկերոջ մը՝ Պետրոս Սերխմճեանի յիշատակը, հանգանակութիւն բանալով իր թերթին մէջ՝ հրատարակելու համար նոյն ընկերոջ գրութիւնները եւ այդ հանգանակութենէն գոյացած հանրային դրամն եւս իւրացուցած է նոյնպէս, առանց յատկացնելու իսկական ցպատակին·

Վերջապէս նկատելով, որ Վարդոս իւր բոլոր անմամբուր գործերը եւ մանաւանդ իւր զեղծումները չմմեղելու համար հանրային կարծիքին առչեւ, դիմած է ամէն տեսակ անարդարացուի միջոցներու՝ ջանալով արատաւորել Դաշնակցութիւնը, դաշնակցական ամենամամուր գործիչները, նկրտելով կասկածի ստուեր ձգել անոնց գործունէութեան վրայ, անուանարկութեան եւ խեղաթիւրութեան հակառակ ամէն փորձ ի գործ դնելով իր թերթին մէջ·

Որոշեց՝

Հաստատել դատական յանձնաժողովի եզրակացութիւնը եւ Բալկանի Շրջանակային ժողովի որոշումը, յանձնարարելով անոնց գործադրութիւնը պատշաճ մարմիններուն· այն է՝

ա) Արեւմտեան Բիւրոյի միջոցով պահանջել որ Վարդոս իր իւրացուցած 12·539 ֆրանճի գումարը վճարէ յանձնաժողովին՝ 15 օրուայ ընթացքի մէջ·

բ) «Դրօշակ»ի մէջ յայտարարել Վարդոյի վերջնական արտաքսումը Դաշնակցութենէն՝ իբրեւ զեղծարար, յեղափոխութիւնը արատաւորող եւ անբարոյական անձնաւորութիւն·

գ) Չվճարելու պարագային, համաձայն կազմակերպական կանոններու, գործադրել Բալկանեան Շրջանային ժողովի որոշած պատիժը»:

բ) Կազմակերպական կանոններու լրացումը:

Մալումեան յայտարարեց, որ կարդ մը ընկերներ խնդրած են կրկին վերադառնալ Կ. կոմիտէներու ծախսելիք տոկոսին եւ որոշակի կերպով դնել դայն:

Ժողովը յանձնարարեց որ տասը հոգիի կողմէ ստորագրուած գրաւոր առաջարկ ներկայացուի ժողովին:

Ժողովը կը հրաւիրէ Բիւրոներու կողմէ կնիք պատրաստելու իրաւունքը, Մարմիններու կողմէ Դաշնակցութեան դինանշանով կնիք գործածելու իրաւասութիւնը, ինչպէս նաեւ արհեստակցական եւ աշխատաւորական միութեանց գործածելիք կնիքի ձեւը: Վերջինը չպիտի կրէ, ո՛չ Դաշնակցութեան դինանշանը, ոչ «Դաշնակցութիւն» բառը եւ ոչ ալ նմանութի՛ւն՝ Դաշնակցութեան պաշտօնական կնիքներու հետ:

Վռամեան կ'առաջարկէ բարոյական ցենզ սահմանել Ընդհանուր Ժողովի համար պատգամաւոր ընտրուած անձերու:

Ժողովը, ընդունելով մէկ քանի յաւելումներ, կը մերժէ այն՝ որ «ամէն պատգամաւոր անհրաժեշտաբար պէտք է ծանօթ լինի իր ընտրուած վայրի պայմաններուն» (16 ձայն թեր եւ 10 ձայն դէմ): Ժողովը կը մերժէ առաջարկը, նկատի ունենալով թէ ինքնին հասկանալի պայման է անիկա իւրաքանչիւր պատգամաւորի համար:

Ժողովը կը մերժէ նաեւ Վռամեանի հետեւեալ առաջարկը· «Ներկայացուցչական ձայն չտալ երկրի անունով այն ընկերոջ, որ երկու տարիէն աւելի թուականով դուրս եղած է երկրի իր ներկայացուցած վայրէն»:

Ժողովը կը մերժէ Զելալեանի հետեւեալ առաջարկը· «Իբիւրոներու անդամներուն իրաւունք չտալ Ընդհանուր Ժողովի պատգամաւոր ընտրութեան որեւէ վայրի կողմէ»:

գ) «Կարմիր Խաչ»ի կանոնադրութիւն·

Ժողովը կը յանձնարարէ անոր պատրաստութիւնը Ինանի Ցանձնաժողովին:

դ) Ընթերցում ծրագրի եւ վաւերացում·

Ռոստոմ կը կարդայ յանձնաժողովի կողմէ պատրաստուած Ծրագիրը:

Շահխաթունեան ճիշդ չի գտներ Ծրագրի վերջնական խմբագրութիւնը յանձնաժողովի մը յանձնելու պարագան, քանի որ այդ յանձնաժողովը կարող է խմբագրած պահուն՝ կամայ-ակամայ փոփոխութեան ենթարկել նաեւ սկզբունքային կէտերը:

Խաչիկեան·— Սկզբունքները կէտ առ կէտ քննելու համար առնուազն երկու շաբաթ է հարկաւոր ժողովին· Հետեւաբար, նկատի ունենալով ժամանակի սղութիւնը, կը մնայ ընդունիլ ժողովին մէջ այս ու այն առանձնայատկութիւնները եւ վերջնական խմբագրութիւնը թողուլ խմբագրական մարմնին:

Ահարոնեան կը պահանջէ կէտ առ կէտ կարդալ Ռոստոմի ներկայացուցած ծրագրային ուրուագիծը, քննութեան ենթարկել եւ խմբագրական մանրամասնութիւնները թողնել խմբագրական յանձնաժողովին:

Զոփուրեան կ'առաջարկէ Ծրագրի վերջնական խմբագրութիւնը կատարել յանձնաժողովի միջոցով եւ բոլոր պատգամաւորներու կողմէ վաւերացնելէ ետք փակել Ժողովը:

Մալումեան դիտել կու տայ, որ Ծրագրի պատրաստութիւնը 25 օրէ ի վեր յանձնուած է յանձնաժողովին, մինչ գործը տակաւին կը մնայ կիսաւարտ, ուստի կը խնդրէ Ռոստոմէն՝ Ժողովին բերել ծրագրային գլխաւոր հիմունքը, որպէսզի Ժողովը քննելով զանոնք՝ յաւելումներ եւ յապաւումներ կատարէ եւ յանձնէ վերջնական խմբագրութիւնը՝ խմբագրական մարմնին:

Վռամեան դիտել կու տայ, որ յանձնաժողովը այս նիստին պէտք է կա՛մ վերջնական Ծրագիր մը բերէր Ժողովին եւ վաւերացնէր, կամ հիմնական սկզբունքներ՝ որպէսզի անոնց վրայ համաձայնութիւն կայացնելով՝ տրուէր խմբագրական մարմնին, ձեւաւորման համար:

Ժողովը կու գայ այն եզրակացութեան, որ պէտք է կանգ առնել հիմնական սկզբունքներու վրայ, ուստի նախագահը կը հրաւիրէ Ժողովականները խօսիլ ըստ էութեան:

Թոփչեան·— Ռոստոմի ծրագրին մէջ նկատելի է, որ շատ աւելորդ մանրամասնութիւններ կան, որոնք բաւական թիւրիմացութիւններ կը ստեղծեն· կէտեր կան, որ պարզ չեն· կէտեր ալ՝ որ զանց առնուած են· այսպէս՝ ըսուած չէ թէ գիւղացիական հարցին նկատմամբ ի՞նչ է մեր դաւանանքը: Հակադրութիւնն ալ նոյնպէս մարքսիստական տպաւորութիւն կը թողու· մինչ այդպէս պէտք չէր ըլլար: Ռոստոմը խօսելով ճորտութեան եւ այլ պատմական չրջաններու վրայ՝ անհատի մասին ոչ մէկ բառ չ'աւելցներ եւ բուրժուական չրջանին մէջ է միայն որ կը չեշտէ անհատին միջամտութիւնը, մինչդեռ մենք կ'ընդունինք թէ անհատի դերը զգալի է պատմութեան մէջ՝ սկիզբէն մինչեւ վերջը: Այսպէս, ես անհրաժեշտ կը նկատեմ չեշտել հետեւեալ գլխաւոր կէտերուն վրայ·

ա) Հասարակական կեանքի իդէալն է մարդ-անհատի ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը հասարակութեան մէջ·

բ) Կեանքի երեւոյթները զարգանում են տարերային ձեւով, բայց հասարակական կազմակերպուած եւ գիտակից ուժը նրանց նպատակայարմար ընթացք կարող է տալ իր միջամտութեամբ·

գ) Ամէն տեղ հասարակական կեանքը զարգանում է բարեչրջութեան օրէնքով· սակայն իւրաքանչիւր երկիր այդ զարգացման ընդհանուր ուղիից որոշ չեղումներ է անում իր առանձնայատկութիւնների համեմատ (ռէալիստական, պատմափիլիսոփայական)·

դ) Պատչաճ կերպով չեշտել օբիեկտիւ [առարկայական] (Մարքս-Ենգելս) եւ սուպիեկտիւ [ենթակայական] (Լավրով եւ Միխայլովսկի) մեթոդը, այսինքն իւրաքանչիւր չրջանի հասարակական կազմի գերնահատութիւնը տալ՝ ընդհանուր կուլտուրական [մշակութային] յառաջդիմութեան բնորոշման եւ հասարակական ուժերի ներդաշնակութեան տեսակէտից·

ե) Տնտեսապէս յետամնաց երկրներում կապիտալիզմը զարգանում է սոցիալիստական կուսակցութեան ներկայութեան, եւ այդպիսի երկիրներու աշխատաւոր դասակարգը, աւելի զարգացած երկիրների փորձից օգտուելով, կարող է խուսափել շատ խոչընդոտներից ու հարուածներից·

զ) Պէտք է աշխատաւորական սկզբունքը չեշտել, պարզելով որ «աշխատաւոր դասակարգ» ասելով մենք ընդունում ենք այն տարրերին (բանուորութիւն, աշխատաւոր գիւղացիութիւն եւ մանր արհեստաւորութիւն), որոնք ապրում են սեփական աշխատանքով՝ առանց վայելելու ուրիշի աշխատանքի յաւելեալ արժէքը·

է) Առանձնապէս չեչտել ազգային հարցի մասին, պարզելով այդ խնդրում բուրժուազիայի դիրքը, աշխատաւոր դասակարգի դերը եւ հարցի լուծման միջոցը՝ ֆեդերատիւ-տեղական եւ իրրեւ հետեւողական լրացումն դրա՝ համամարդկային-ֆեդերատիւ:

Ահա դրանք են իմ կարծիքով այն գլխաւոր կէտերը, որոնք պէտք է լաւ չեչտուած եւ պարզաբանուած լինեն իրրեւ մեր ծրագրի բնորոշ յատկանիշները: Եթէ այդ կէտերը ընդունուին Ընդհանուր Ժողովի կողմից, այն ժամանակ բաւական կը հեչտանայ ծրագրի խմբագրական մանաւանդ ոգուի գործը:

Ռոստոմ դիտել կու տայ, թէ վերոյիչեալ եօթը կէտերը ամէնքն ալ արտայայտուած են իր ծրագրին մէջ, բայց ցիրուցան եւ տարածուն ձեւով, այնպէս որ աւելի խմբագրական ձեւին մէջ քան թէ հիմնական սկզբունքներու բացակայութեան մէջ պէտք է փնտռել տարբերութիւնը: Կը հաւատայ թէ իր արտայայտութեան մէջ մարքսիստական ո՛չ մէկ չփոթութիւն կայ, այլ ընդհակառակն՝ քննադատութիւն:

Թէ՛ ընկ. Թոփչեան եւ թէ Ռոստոմ կը համաձայնին սա կէտին վրայ, որ խմբագրական ձեւին մէջ պէտք է փոփոխութիւն մտցնել:

Միհաւաեան կ'առաջարկէ ընդհանուր գծերով համագրել միմիայն թէ՛ տնտեսական պայմաններու ներգործութիւնը եւ թէ անհատին բարոյական ֆակտորները [պդտկինները, գործօնները] մարդկային բարեչրջման գործին մէջ, եւ ծրագրի վերջնական խմբագրութիւնը յանձնել յատուկ յանձնաժողովի մը, քանի որ Ժողովը հնարաւորութիւն չունի ինք պատրաստելու:

Զաւարեան դիտել կու տայ, որ սոցիալիստական կուսակցութեանց ծրագրին միակ թերութիւնը այն է, որ մարդկային յառաջդիմութեան գլխաւոր արգելքը խոշոր արդիւնաբերութիւնը միայն ընդունուած է, այնպէս որ սա տպաւորութիւնը կը զգացուի, որ եթէ այդ չարիքը վերցուի, կեանքը կը մտնէ երջանիկ ճանապարհի մէջ: Սակայն, մեզի համար առանձնապէս չահեկան եւ անհրաժեշտ է տարբեր ֆակտորներու վրայ կանգ առնել: Մեզի համար էականն այն է, որ այդպիսի քաղաքական ճնշումները, տգիտութիւնը, անքաղաքակիրթ ցեղերու դրացնութիւնը եւ երկրագործութեան յետադէմ վիճակը՝ մեծ արգելք են մեր կեանքի զարգացման: Ահա այս պակասները են որ զգալի են Ռոստոմի ներկայացուցած ծրագրին մէջ, ուստի անոնց պէտք է առանձնապէս տեղ տալ, մի քանի յաւելումներ ընել եւ յանձնել խմբագրական յանձնաժողովին: Մենք չենք կրնար միայն կանգ առնել կապիտալի ներգործութեան վրայ՝ լուծելու համար հասարակական խնդիրները· կան քաղաքական կազմի, անհատի դերին, անհատի գիտակցութեան ֆակտորները,

որոնք ներդաշնակօրէն կը լուծեն կեանքի յառաջդիմութեան հարցը:

Խահակեան.— Մեր ծրագրին մէջ պէտք է հիմնովին չհպուի, թէ մենք իդէալ ունինք եւ այդ իդէալն է՝ անհատի հասարակական ազատութիւնը. այս տեսակէտով է որ մենք տարբեր ենք սոցիալ-դեմոկրատական վարդապետութենէն. անհատին ազատութիւնը ի հարկէ տարբեր հայեցակէտերով՝ տարբեր կերպով կ'ըմբռնուի. մենք կ'ընդունինք թէ անհատը ճնշուած է հասարակութեան մէջ, քաղաքականապէս, ընկերային եւ իդէոլոգիական [դաղափարաբանական] տեսակէտով: Մարքսիստները կանգ չեն առներ պատմական զանազան ֆակտորներու վրայ. մինչ մենք բարեչրջութեան մէջ կը տեսնենք զանազան գործօններ, որոնք իրարու հետ չաղկապուած եւ համագործակցութեամբ յառաջ կը բերեն բարեչրջութիւնը: Պրոգրէսը [յառաջդիմութիւնը] էվոլիւցիա [բարեչրջում, հոլովոյթ] չէ. պրոգրէսի մէջ կը մտնեն միայն տնտեսական ֆակտորները՝ ընկերային պայմանները եւ անհատի գիտակցական միջամտութիւնը. ուստի մենք պրոգրէսը կը դնենք բարեչրջութեան քով՝ իբրեւ լրացուցիչ անոր բացատրին: Մենք կ'ընդունինք վերլուծական եւ քննադատական դրութիւնը, որ մեղ կը զանազանէ սոցիալ-դեմոկրատներից. սոցիալ-դեմոկրատները կ'ընդունին, որ արդիւնաբերական յառաջդիմութիւնը ամէն տեղ եւ ամէն ճիւղերու մէջ միեւնոյն կերպով կը զարգանայ, մինչ մեր հասկացողութիւնը տարբեր է. ուստի պէտք է չհետե՛լ այս կէտը մեր ծրագրին մէջ: Պէտք է քննադատօրէն վերաբերուինք նաեւ կապիտալիզմի մասին. սոցիալ-դեմոկրատները կ'ընդունին որ կապիտալիզմը յեղափոխացուցիչ ուժ է, մինչ այդպէս եղած չէ. մենք այդ ուժը կ'ընդունինք որոշ չափով եւ դնահատումով. այս կէտն ալ պէտք է հետեւի մեր ծրագրի մէջ:

Ռուստոմը միջամտելով դիտել կու տայ, թէ այդ բոլորը կան ծրագրի մէջ:

Խահակեան.— Կան, այո՛, բայց հետեւած չեն. պէտք է որոշակի կերպով հետեւած ըլլան, որպէսզի մեր ծրագիրը զանազանուի միւս սոցիալիստական կուսակցութիւններու ծրագրէն: Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանց մէջ հետեւած չէ դիտակցական մոմենտի դերը, պէտք է այս տեսակէտն ալ ցայտուն կերպով արտայայտուի մեր ծրագրէն: Ցետոյ ես կը խընդրեմ, որ մեր ծրագրի մէջ խոյս տանք դիտական սոցիալիզմի բացատրութենէն: Այս բոլորը պարզաբանելէ ետք, պէտք է որ մեր ծրագիրը չչփոթուի ռեվիզիոնիստներու ծրագրի հետ, քանի որ սա թիւր գաղափարը տարածուած է առհասարակ, թէ մենք ռեվիզիոնիստներ ենք: Անհրաժեշտաբար մեր ծրագրի մէջ ատանձնայատուկ տեղ պիտի դրուէ նաեւ ազգային խընդիրը, որը կը թողում ես աւելի ձեռնհասներին:

Շահխաթունեան.— Ռուստոմի ծրագիրը բոլորովին կը պատի կապիտալիստական կարգերու չուրջը, մինչ անոր պէտք չէ կենտրոնական տեղ տալ, քանի որ այդ չի համապատասխաներ մեր ընկերային ըմբռնումներուն: [Շահխաթունեան] դիտողութիւն կ'ընէ գիւղացիութեան մասին գործածուած հայեացքին, կը գտնէ, թէ սկզբունքային վերաբերութիւն չկայ դէպի գիւղացիութիւնը. որոշակի չհետեւած չէ նաեւ այն հայեացքը, որով կը բաժնենք մենք աշխատաւորները: Նկատելով որ ատեն չկայ Ռուստոմի նախագիծը կէտ առ կէտ քննելու, կ'առաջարկէ Իսահակեանի հետ պատրաստած իր մի քանի սկզբունքները կարդալ եւ եթէ ընդունուին անոնք ժողովէն, յանձնել խմբագրական մարմնին՝ վերջնականապէս ձեւակերպելու:

Մալումեան նկատելով, որ ընդհանուր գծերով առաջ են բերուած սոցիալիստական ընդհանուր սկզբունքները, կը հետեւի, որ պէտք է խնամքով խմբագրուին հայկական մասին վերաբերող կէտերը եւ Թորդրէնըի խմբագրական մարմնին: Կը նկատէ, թէ մեր Խրականութեան մէջ առաջնակարգ կարեւորութիւն ունի ոչ միայն տնտեսական հարցը, այլ մանաւանդ քաղաքականը, քանի որ մեր եւ օտար ազգերու միջեւ կայ վիճակի անհաւասարութիւն. ուստի անհրաժեշտ կը տեսնէ մասնաւոր ուշադրութիւն տալ մեր քաղաքական կռուին, որ պիտի կազմէ մեր ծրագրին առանձնայատուկ եւ խոշոր տեղը: Եւ եթէ այդ տեղը դրուի վայել չափով ու վայել կերպով՝ ոչ միայն հոս գտնուող տաճկահայ ընկերները, այլ դուրսը մնացող դժգոհ բոլոր մասնաներն ալ դոհ պիտի մնան: Կ'առաջարկէ նաեւ ասկէ ետք մեր ղէլեաւոր նպատակներէն մէկը որոշադրել՝ մեր եւ միւս ազգերու աշխատաւոր մասնաներու համերաշխ ու գործակցական կռիւը, ձեռք բերելու համար քաղաքական ու տնտեսական ապահովութիւն՝ համայնական լայն չափերով: Կ'եզրակացնէ հետեւեալ կերպով, — ընդունիլ առաջարկուած պատմափիլիսոփայական նախաբանը, անոր միացնելով մեր կեանքին վերաբերեալ minimum պահանջները եւ այն քաղաքական-տնտեսական նպատակը, որին պիտի ձգտի կազմակերպութիւնը, յենուելով մեր հարեւան ժողովուրդներու համերաշխութեան վրայ եւս:

Ռուստոմ կ'ընդդիմախօսէ վերջին կէտին, դիտել տալով թէ, այո՛, մեր բաղձանքներէն մէկն է ընդհանուր համերաշխութեան սկզբունքը, բայց պայման դընել, որ ընդհանրացնենք այդ դաղափարը Թուրքիայում եւս, անիրագործելի է, քանի որ նոյնիսկ Ռուսաստանի մէջ այս բաղձանքը յաջողութիւն գտած չէ:

Մալումեան վախ կը յայտնէ, որ եթէ մեր ծրագիրը իսկապէս չձեւակերպուի այնպէս, ինչպէս հարկ է, մենք չենք կը մղունինք Սոցիալիստական Միջազգային Բիւրոյին, որը կարող է մեզ նկատել «մանանեխի սոցիալիստներ»:

Ռուստոմ.— Մեր ծրագրին մէջ կայ այդ նպատակը, որ է ձգտել բոլոր ազգերու աշխատաւոր դասակարգերուն հետ՝ միութեան. բայց առայժմ չկայ Թուրքիոյ մէջ աշխատաւորական ուրիշ որեւէ բանակ՝ հայերէն դուրս, հետեւաբար չենք կրնար մենք այժմ այդ տեսակ միութիւն մը իրագործել. այդ միութեան վրայ եթէ հիմա կանդ առնենք՝ մեր բախտը կապած պիտի ըլլանք [օտար] այդ մասնաներու եւ քար դնենք մեր զարգացման առջեւ:

Շահխաթունեան դիտել կու տայ, որ ազգային, կազմակերպչական տեսակէտը չփոթութեան կ'ենթարկուի հիմնական սկզբունքներու հետ: Կը ճչդէ այն հանգամանքը, որ Դաշնակցութիւնը, իրրեւ կուսակցութիւն՝ միջազգայնական է, մինչ իրրեւ կազմակերպութիւն՝ ազգային:

Վռամեան.— Ես կը կարծեմ, որ Մալումեանի առելիքնել ուզած կէտը չատ վտանգաւոր կէտ մըն է, որը եթէ ընդունինք, մեր ձեռքերը կապած պիտի ըլլանք մեր տակտիկին մէջ: Առայժմ մենք ունինք կարգ մը քաղաքական ուրիշ նպաստաւոր պայմաններ ալ՝ որոնք կ'օժանդակեն մեր հարցի լուծման. եթէ ընդունինք ընկ. Մալումեանի առաջարկը՝ պիտի զրկուինք այդ ազդակներէն եւ պիտի ստիպուինք ընդունիլ միմիայն համաթուրքական կռիւ եւ գործունէութիւն:

Նախագահը, փակելով վիճաբանութիւնը, կ'առաջարկէ վաղուան նիստին բերել յաւելուածական նոր կէտեր, որոնք քննութեան առնուելով՝ յանձնուին խմբագրական յանձնաժողովին:

Նիստը կը փակուի ժամը 8ին:

111ՐԴ ՆԻՍՏ (29 Ապրիլ, առաւօտ)

Նախագահութեամբ՝ Վռամեան:
Ներկայ են 28 ժողովական:
Բացակայ են՝ Վարդան, Անդրանիկ:

Օրակարգն է «Ծրագրի հարցը»:

Ժողովը զբաղուում է Ծրագրի հիմնական կէտերի մշակմամբ, որպէսզի այս կէտերը, իբրեւ հրահանգներ, տրուին խմբագրական-ծրագրային յանձնաժողովին:

Թոփչեան կարդում է իւր բանաձեւած կէտերից առաջինը, որը ձեւակերպում է Հ. Յ. Դաշնակցութեան իդէալ նպատակը՝ «հասարակական կեանքի իդէալն է մարդ ամենատի ազատ եւ բազմակողմնի զարգացումը»:

Ռուստոմ.— «Բազմակողմնի» բառը պէտք է դուրս դնել, քանի որ կարող է թիւրիմացութիւնների պատճառ լինել: Մեզանից ոչ ոք չէ կարող դրականապէս պնդել, որ ազատ զարգացումը ատելու է դէպի միաժամանակ «բազմակողմնի» զարգացում: Նոյնիսկ ինձ համար մի մեծ հարցական է այն, թէ ընդհանրապէս բազմակողմնի զարգացում գոյութիւն ունեցե՞լ է եւ կամ ունենա՞լ է: Ես պնդում եմ նորէն իմ «ազատ-անկաշկանդ» բառի վրայ:

Համոզ ընդդիմախօսում է Ռուստոմին եւ նկատում, որ այդ «բազմակողմնի» բառը մոցնելով մեր ծրագրի մէջ, երբեք մըբաքերի չփոթ եւ վիճաբանութեան առիթ չենք տալիս: Մեր իդէալն է կատարեալ մարդը: Իսկ ի՞նչ է նշանակում կատարեալ մարդ: Այն, որ մարդ անհատի, առանց նրա այս կամ այն կողմը պակասելու-թերանալու, ֆիզիքական եւ մտաւոր բոլոր յատկութիւնները ներդաշնակօրէն զարգանան: Եւ մենք պէտք է վերացնենք հասարակական կեանքի մէջ տիրող այն բոլոր պայմանները եւ կարգերը, որոնք խոչընդոտ են ներկայումս այդ բազմակողմնի զարգացման:

Թոփչեան.— «Ազատ եւ բազմակողմնի» մտքերը հակիմաստ հասկացողութիւններ չեն, այլ ընդհակառակն, իրար լրացնում են եւ ամբողջացնում: Մենք ցանկանում ենք վերջին բառով չհետեւել, որ մարդ անհատի զարգացումը պիտի լինի բազմակողմնի եւ ո՛չ միակողմնի: Մեր կեանքի մօտ անհատի զարգացումը կատարեալ է ազատօրէն, բայց ոչ բազմակողմնի, այլ ընդհակառակն, խիստ միակողմնի: Ես պնդում եմ «բազմակողմնի» եւ հարմարնիկ [ներդաշնակ] զարգացման վրայ եւ դա տանում է դէպի կատարեալ մարդը:

Իսահակեան.— Ես համաձայն եմ Թոփչեանի բանաձեւած կէտին. այդ կարեւոր է եւ մի այլ տեսակէտից: Մենք դրանով բացարարութիւն ենք տալիս թէ՛ մեր արդարութեան զգացումին եւ թէ կուլտուրական [մշակութային] պահանջին: Հասարակական կեանքը այնպէս պէտք է կազմակերպուի, որ անհատը ազատ եւ բազմակողմնի զարգանալ կարողանայ:

Զաւարեան դիտել է տալիս, որ այն քեզը, որը դրել է Թոփչեանը եւ մի քանիսը պաշտպանում են, ոչ թէ միայն մեր կէտ նպատակն է, այլ միեւնոյն ժամանակ ներկայանում է իբրեւ նկէտ եւ միջոց: Մի խօսքով դա ամէն ինչ է:

Համօ, Թոփչեան եւ Շահխաթունեան հակաճառում են այդ ըմբռնումի դէմ, եւ նկատում, որ իդէալ նպատակը չէ կարող միաժամանակ թէ՛ չենակէտ եւ թէ միջոց լինել: Ճիշդ է, ամէն մի միջոց կարող է նախորդ ձեռնարկի համար նպատակ լինել, բայց յաջորդ նպատակների համար նա արդէն միջոց է: Ուրեմն բոլոր մօտակայ նպատակները միաժամանակ եւ՛ միջոցներ են վերջնական նպատակի համար: Իսկ մենք դնում ենք այդ վերջնական իդէալ նպատակը: Գալով «չենակէտ» բառին, կ'ասենք, որ «միջոց» եւ «չենակէտ» այսօր արդէն հոմանիշ են:

Միքայէլեան.— Ներդաշնակ զարգացում», դա ինձ համար խիստ առածգական հասկացողութիւն է: Մարդկութեան ամէն մի անհատը ունի իր առանձնայատուկ կրքերը, իր ձգտումները, եւ քանի որ նա բնութեան օրէնքները չի ճանաչի, նա կը մնայ դրանց կրողը: Եթէ մենք համերաշխ զարգացում կը փափաքենք, պէտք է թոյլնել բնութեանը, կեանքին: Մենք լինելով մեր ազատութեան տէրը, պիտի ուրիշի ազատութիւնն եւս ապահովենք: Մարդկութիւնը չէ կարող կատարելատիպ լինել: Ես առաջարկում եմ «ազատ եւ դիտական զարգացում»:

Գուսան.— Արտայայտուող կարծիքները իսկապէս դիմում են այնտեղ, ինչ իմ խորին համոզմունքն է, բայց անարխիզմի վախից կանդնում են կէս ճանապարհին: Ես ճանաչում եմ հոգու դիտական ուժը, իսկ դուք ուզում էք այդ չդիտակից տիեզերական ուժը, որ մեր հոգու մէջ է, անհատը: Հասարակութիւնը կանգնած է անհատ դէմ: Ես ընդհակառակն, անհատը՝ հասարակութեան: Պէտք է վերացնել հասարակութիւնը: Ես ընդունում եմ անհատ արտելիա [բացարձակ] անսահման զարգացումը: Գերմա՛րդ. ահա իմ իդէալը, իմ նպատակակէտը:

Նախագահը դնում է երկու բանաձեւները քուէարկութեան:

Զաւարեան.— Նախքան քուէարկութեան անցնելը, ես կ'ուզէի չերկարել մի հանգամանքի վրայ: Աչխատանքի բաժանումը, որը հետզհետէ աւելի ու աւելի չհետւում է ներկայ հասարակական կեանքում, տրամաբանօրէն հակասում է բազմակողմնի եւ ներդաշնակ զարգացման: Ես առաջարկում եմ «անսահման» զարգացում:

Ընդունւում է ընկ. Մալումեանի բանաձեւը 19 ձայնով ընդդէմ 5ի։ Ահա նա.

«Մեր նպատակն է ամենատի ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը հասարակութեան մէջ»։

Սեղմւում է ընդդիմադիր մամլոյ մէջ, որ ինքը ձեռնպահ է ծրագրային հարցի վերաբերմամբ, որովհետեւ այդ նրա ուժերից եւ հանգամանքներից բարձր է։

Թոփչեան կարդում է իւր մշակած երկրորդ կէտը. «կեանքի երեւոյթները զարգանում են տարերային ձեւով, բայց հասարակական կազմակերպուած եւ գիտակից ոյժը նրան նպատակայարմար ընթացք կարող է տալ իր միջամտութեամբ»։

Ջաւարեան հակառութիւն է տեսնում այդ կէտի մէջ։ Եթէ չարժումը տարերային է, հետեւապէս մարդ չի կրնար նրան ընթացք տալ եւ ընդհակառակն, եթէ մարդ իր ուզած ընթացքն է տալիս, նշանակում է չարժումը տարերային չէ։ Առաջին միտքը ես գտնում եմ սխալ. եթէ իրօք այդ ճիշդ լինէր, մեզ մնում էր ուղղակի ամէն ինչ թողնել տարերքին։ Անհատը ինչպէս անցեալում առնչուածորդող, ներգործող դեր է խաղացել, նոյնպէս խաղում է եւ խաղալու է ապագայում։

Ահարոնեան.— Ես որեւէ հակառութիւն չեմ գտնում այդ կէտի մէջ։ Շահատոգրային, տարերային ասելով, ընկ. Թոփչեանը հասկանում է այն պատմական օրէնքները, որոնցով ղեկավարւում է բովանդակ կեանքը. իսկ անհատն էլ գիտակցելով այդ, իր ցանկութիւնների, իր տենչերի համաձայն ներգործում է դրա վրայ, ընթացք տալիս։

Համօ.— Մարդկութիւնը զարգանում է մի շարք ուժերի ազդեցութեան տակ, ինչպէս տնտեսական, գաղափարական, աչխարհագրական, ցեղագրական եւն., եւ այդ գործօններից մէկն է կազմակերպուած գիտակից ոյժը։

Խսահակեան առաջարկում է մեղմել «տարերային» խօսքը։

Ռուստամ.— Որ անհատը մարդկային զարգացման պատմութեան մէջ իր որոշ դերն է խաղում, դա պարզ է, բայց դա դեռ ոչինչ չէ նշանակում։ Մենք պէտք է կանգնենք մասսայական դիտակցութեան վրայ եւ ոչ թէ խիստ բացառիկ անհատների վրայ։ Դա խիստ խնդրական հարց է։ Պատմութեան մէջ խոշոր դեր խաղացող անհատները եղել են թէ՛ բացասական եւ թէ դրական տիպեր։ Որքան աչխատանք բուրժուաների մէջ համամարդկային գիտակցութիւն առաջ բերել, անկարող կը լիններ քանի որ նրանց մէջ իրենց դասակարգային չահերից բխած որոշակի եւ չեշտուած գիտակցութիւն է գոյացած։ Նոյնը աչխատաւորական դասակարգի մասն. Նա էլ իւր առանձնայատուկ գիտակցութիւնն ունի։ Ես կ'ասեմ աւելին։ Այն խոշոր գէմքերն ու անձնաւորութիւնները, որոնք յեղափոխիչ դեր են կատարել պատմութեան մէջ, նրանք երբեք պարզ չեն գիտակցել, չեն պատկերացրել անմիջական հետեւանքները։ Այդ եղել է բնականօրէն անդիտակ մի գործունէութիւն։ Քանի կեանքը ղեկավարող գործօնները անծանօթ, գաղտնի են, մարդ արարածը ենթարկուելու է դրանց, եւ քանի այդ գործօնները ուսումնասիրուին, այնքան մարդի գիտակից դերը մարդկային պրոցէսի մէջ կը չեշտուի եւ աւելի նշանակալի կը դառնայ։

Թոփչեան.— Խոշոր գծերով վերցրած, մարդկային կեանքը ղեկավարւում են երկու գործօններ, — տարերային եւ գիտակից մարդ–անհատի ոյժը։ Տարերային տեխնիկական ոյժը խիստ բնորոշուած է սոցիալ–դեմոկրատների մօտ, մասներիալիստական աչխարհահայեացքի մէջ, որ միանգամայն ճչգրիտ եւ ընդունելի է, իսկ վերլում է, ժխտւում է երկրորդը։ Մենք ընդունելով տարերքի ուժը, միեւնոյն ժամանակ ընդունում ենք եւ այն, որ անհատը ազդում է տարերքին եւ նպատակայարմար ուղղութիւն տալիս։ Գետը հոսում է, նա տարերային ոյժ է, բայց մարդը իր ուզածի պէս ընթացք է տալիս նրան։

Քուէարկելով Թոփչեանի բանաձեւը, մերժւում է, ատանալով միայն 8 ձայն Քեր։

21 ձայնով ընդդէմ 4ի, անցաւ Համոյի հետեւեալ բանաձեւը, — «Հասարակութեան զարգացումը կատարւում է զանազան ոյժերի փոխադարձ ազդեցութեան տակ եւ այդ ոյժերի մէջ կազմակերպուած գիտակից ոյժը կատարում է որոշ խոշոր դեր»։

Վիճաբանութիւնների չարունակութիւնը Թողնւում է յաջորդ նիստին։

Ժողովը փակուեց ժամը 1 եւ 25 րոպէին։

112ՐԴ ՆԻՍՏ (29 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է՝ Համօ Մհերեան։

Օրակարգն է «Փոթորիկ»ի հաշիւը եւ նախահաշիւը։

Գազիկ *զեկուցանում է քննիչ յանձնաժողովի կողմից «Փոթորիկ»ի հաշիւների քննութեան արդիւնքը, որից երեւաց հետեւեալը.—*

«Փոթորիկ»ը ունեցել է գործունէութեան երկու չրջան ա) 1903–1904 թուականներին, Դաշնակցութեան Ընդհրդի(46) եւ Պատասխանատու Մարմնի որոշմամբ, յօգուտ Քրքահայկական յեղափոխութեան եւ բ) 1906 թուին վերսկսել է իւր գործունէութիւնը յօգուտ կովկասահայերի ինքնապաչտպանութեան, Կովկասի Ռայոնական Ժողովի (1905 թ. Նոյեմբեր) որոշմամբ։

1) Առաջին չրջանի գործունէութեան մի մասի հաչիւը տրուած է 1904 թուի Գ. Ընդհանուր Ժողովին, որից յետոյ «Փոթորիկ»ը ունեցել է, առ 1 Յունիս 1904, 22·205 ռուբլի 70 կոպէկ։

Յունիսից մինչեւ Դեկտեմբեր 1904, ստացել է ընթ. հոգուց 79·000 ռուբլի. ընդամէնը ուրեմն 101·205 ռուբլի 70 կոպէկ։

1905 թուի ընթացքում ոչինչ չէ ստացուել։

Այդ գումարից «Փոթորիկ»ը ծախսել է ինքը՝ 1904 թուի Յունիս 1ից մինչեւ Դեկտեմբեր

	ռ.	կոպ.
31 եւ 1905 թուի Յունուար 1ից մինչեւ Յունիս 1ը՝	3·533	21
1905 թ. Յունիս 1ից մինչեւ Դեկտ. 31	1·100	00
Տուել է Ոսկանապատի Կ. Կոմիտէին	26·149	29
Տուել է Զիֆոնին	24·000	00
Տուել է «Յառաջ»ի խմբագրութեան	5·000	00
Տուել է Արեւմտեան Բիւրոյին	40·000	00
Գումար	99·782	50
Մնացորդ դրամարկղում առ 1 Յունուար 1907	1·423	20
Բալանս	101·205	70

2) Գործունէութեան Բ. չրջանում, 1906 թ. Փետրուարից սկսած, մուտք եղել է Նալբանդից եւ Նոր Աւանի չրջանից (Ժլատ) 13 հոգուց 315·000 ռ.
Նոյն երկու չրջաններում, Կ. Կոմիտէների դիմումներով 52·000 ռ.
Մնացորդ № 3 դրամարկղում եկեղեցում, տեղական հասարակութիւնից ընտրած մանախմբի հանգանակութիւնից 97·000 ռ.
Մեծ Գազաքում, 6 հոգուց 220·000 ռ.

Գումար 684·000 ռ.

(Համապատասխան տախտակը տեսնել էջ 276)

Եւ՝

Ծախս է եղած	2·890 ռ.
Զիֆոնին (կենտրոնական) տրուած է	186·000 ռ.
Արեւելեան Բիւրոյին տրուած է	310·000 ռ.
Ոսկանապատի Կ. Կոմիտէին տրուած է	20·000 ռ.
Ժլատի Կ. Կոմիտէին տրուած է	14·000 ռ.
Նալբանդի Զիֆոնին	16·410 ռ.
Գումար	549·300 ռ.
Մնացորդ № 1 դրամարկղում Արեւելեան Բիւրոյի	43·000 ռ.
Մնացորդ № 2 դրամարկղում Արեւելեան Բիւրոյի	26·000 ռ.
Մնացորդ № 3 դրամարկղում Արեւելեան Բիւրոյի	15·700 ռ.
Մնացորդ Արեւմտեան Բիւրոյի մօտ	30·000 ռ.
Մնացորդ Ոսկանապատի դրամարկղում	20·000 ռ.
Գումար	134·700 ռ.
Արդէն եղած դիմումներից սպասւում է ստանալիք	85·000 ռ.
Նոյնպէս եղած դիմումներից սպասւում է, ոչ ստոյգ, 3 հոգուց	45·000 ռ.
Ուրեմն միասին հաչուելով ա) Ա. չրջանի մնացորդ	1·423 ռ. 20 կ.
բ) Բ. չրջանի կանխիկ	134·700 ռ. 00 կ.
և գ) սպասելի ստանալիքներ	130·000 ռ. 00 կ.
Ընդամէնը մնում է ազատ տրամադրելի գումար «Փոթորիկ»ից	266·123 ռ. 20 կ.

Ընդհանուր Ժողովը որոշեց այդ գումարը երեք հաւասար մասի բաժանել, մի մասը յատկացնել 1907ի նախահաշուին, միւս մասը՝ 1908ի նախահաշուին, եւ երրորդ մասը՝ դարձնել անձեռնմխելի ֆոնտ, որի տնօրինութիւնը պատկան Ընդհանուր Ժողովին, կամ ծայրայեղ դէպքում՝ Դաչնակցութեան Խորհրդին։

Ի նկատի ունենալով, որ այդ գումարի ⅓ մասը 1907ի նախահաչուին յատկացնելուց յետոյ էլ, չէր լրանում 1907ի նախագծուած ծախսերի պակասը, ուստի Ժողովը յանձնարարեց մանախմբին՝ որոշ տոկոսով կրճատել նախահաչուի ծախսերը եւ համապատասխան միջոցներին։ Այդ անելուց յետոյ նախահաչիւը ստացաւ հետեւեալ կերպարանքը.

«Փոթորիկ»ի հաչիւը ներկայացնելուց յետոյ՝ ժողովականները հարց տուին, թէ արդեօք գոհար չէ՞նք տուել «Փոթորիկ»ի գործունէութիւնը վարելիս։

Գազիկ.— Այո՛, մէկ գոհ տուել ենք, մեր ամենալաւ ընկերներից մէկին, որը ինքնասպանութիւն է գործել, երբ տեղորը կատարելուց յետոյ, բռնուելու վրտանգը անխուսափելի է եղել։ Բացի դրանից, երկու գոհ էլ դրսից են եղել, որոնք մերժելով իրենց եղած դիմումը, ենթարկուել են ահաբեկման։

Վռամեան.— Հետաքրքիր է դիտնալ, արդեօք «Փոթո»յի գործունէութեան գոհ գնացած ընկերոջ ընտանիքին որեւէ օգնութիւն տրուա՞ծ է կազմակերպութիւնից։

Մասնաժողովի անդամները ստոյգ տեղեկութիւն չունէին այդ մասին, բայց ընկ. Զոփուրեանը յայտնեց, որ այդպիսի դէպքերում առհասարակ անուչադիր չեն լինում եւ կարեւոր օգնութիւնը լինում է։

Նախահաչուի հաստատումից յետոյ, ընկ. Վռամեան առաջարկեց, որ Արեւմտեան Բիւրոյի չրջանում, յատուկ մի մասնախմբի միջոցով, խաղաղ հանգանակութիւն կատարուի յօգուտ Դաչնակցութեան։

Առաջարկն ընդունուեց միաձայն եւ գործադրութիւնը յանձնուեց Արեւմտեան Բիւրոյին։

Ժողովը մի քանի ընկերների առաջարկութեամբ որոշեց յատուկ մի խմբի ձեռքով Ռուսաստանում հանդանակութիւն անել յօգուտ Մուշ–Սասունի սովեալներին եւ հաւաքել այդ նպատակով 100·000 ֆրանք։ Գործի կարգադրութիւնը Թողնուեց Իննի Յանձնաժողովին։

ՆԱԽԱՀԱՇԻՒ 1907 ԹՈՒԻ

	մնացորդ 1906 թուից		ստացուած 1907 թուին		տոկոսներ 5% ամեհաձիմնէն		ընդհանուր գումարների ծախսերի համար
	հազար	ֆր.	հազ.	ֆր.	հազ.	ֆր.	ֆր.
Արեւել. Բիւրօ	15		15		–	0·75	29·250
Ռակկանապատ	40		60		30	3	67·000
Մեծ Քաղաք	5		25		12·5	1·25	16·250
Նաւահանգիստ	–		20		10	1	9·000
Մրզաստան	2		30		15	1·5	15·500
Քար	–		20		7	1	12·000
Զրաքերդ	–		20		6	1	13·000
Ապառաժ	10		20		10	1	19·000
Այգեստան	–		20		10	1	9·000
Ֆլատ–Նայլանդ	12·5		20		8	1	23·000
Թուս. Ուսանող.	–		5		1	0·25	3·750
Կարմիր Խաչ	–		20		–	1	19·000
Վրէժ	0·2		20		10	1	9·200
Զիֆոն	150		–		–	–	150·000
Վասպուրական	50		10		5	0·5	54·500
Մուշ–Սասուն	10		10		8	0·5	11·500
Զաւրեանի միսիան	26		–		–	–	26·000
Արեւմտեան Բիւրօ	12		25		–	1·25	35·750
Ամերիկա	50		60		12	3	95·000
Բալկան	–		25		5	1·25	18·750
Արտասահմ. Ուս.	–		1·2		0·2	0·06	940
Եգիպտոս	–		5		1	0·25	3·750
Վիշապ	0·15		5		3	0·25	1·900
Տրապիզոն	18·482		1		0·5	0·05	18·932
Ռակհանք	–		10		5	0·5	4·500
Լեռնավայր	10		4		3	0·2	10·800
Գումար ֆր.	411·332		451·200		162·200	22·566	677·772

Ընդհանուր գումարների եւ ծախսերի բաշխումը	ֆրանկ
Վասպուրականին	172·000
Մուշ–Սասունին	83·000
Ծուցականին	35·000
Տեւորական մարմնին	23·000
Արեւելեան Բիւրոյին	11·000
Արեւմտ. Բիւրօ եւ «Դրօշակ»ին	16·000
«Pro Armenia»ին	15·000
Եւրոպական պրոպագանդ	15·000
Ռազմաղինական մասնախմբին	48·000
Զէնքի փոխադրութեան	37·000
Բանտարկեալների օգնութիւն	23·000
Փոքր Ասիային	8·000
Կիլիկիային	15·000
Կարինին	12·000
Զիֆոնին	105·000
Կովկ. ինքնպաշտ. եւ քաղ. կուսին	53·000
Կովկ. կազմի վերակազմութեան	30·000
Արեւել. շրջանի պրոպագանդ	64·000
Անակնկալներ	66·000
Բուլղարիոյ դպրոցին	46·000
Ընդհ. ժողովի ծախս	31·000
Գումար	913·000 (*)
(*) Մարմիններից կը ստացուի	677·772
«Փոթորիկ»ից պիտի վերցնել	235·228

Բացի վերոյիշեալից, պէտք է յատուկ հանգանակութիւն կատարուի յօդուտ Մշոյ եւ Սասնոյ տուիալներին՝ 100·000 ֆր.։

113ՐԴ ՆԻՍՏ (30 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան։
Ներկայ են 28 ժողովական։
Բացակայ են՝ Վարդան, Անդրանիկ։

Օրակարգն է ընտրութիւնների նախապատրաստութիւնը։ Նախքան օրակարգին անցնելը, Ընդհանուր Ժողովը որոշեց ա) ընտրել Սասունի հանգանակիչ մասնաժողովի անդամները՝ Ընդհանուր Ժողովի կողմից, բ) եւրոպական հանգանակութեան անդամները ընտրել Արեւմտեան Բիւրոյի կողմից եւ գ) Դաշնակցութեան կովկասեան խմբագրական կազմի ընտրութիւնը թողնել Արեւելեան Բիւրոյին։

Առաջարկւում են Մուշ–Սասունի եւ Վասպուրականի գաւառախանատու Մարմնի համար քեկնածուներ՝

1) Գէորգ Զաւուշ
2) Կոմս
3) Սարգիս Վարդանեան
4) Արամ
5) Թոստոմ
6) Տաճատ
7) Վահագն [Տաթեւեան]
8) Վարդան վարդապետ
9) Մուրատ [Սեբաստ.]

Զաւուշի վերաբերմամբ երաշխաւորում է Արամը։

Վռամեան։— Իմ կարծիքով սխալ է Զաւուշին գաւառախանատու Մարմնի անդամ ընտրելը, քանի որ նա ապստամբ է, Բուրք կառավարութիւնը ճանաչում է եւ հետամուտ է լինում։ Հերիք է, որ նա Վանում երեւաց, իսկոյն ազմուկ կը բարձրանայ։ Իմ կարծիքով կարելի է նրան կարճ ժամանակով երկրից դուրս բերել։

Մուրատ։— Եթէ մտադրութիւն չունինք ապստամբական ցոյց անելու եւ քանի որ բիւդճէն էլ չի ներիր այդ, ես էլ համոզուած եմ, որ աւելի լաւ է նրան դուրս բերել. խաղաղ՝ այստեղ որոշուած տակտիկով գործելու համար հարկաւոր են աւելի ինտելիգենտ ուժեր։

Թոստոմ։— Խնդիրը սխալ է դրւում։ Սա տակտիկի հարց է, հետեւապէս պէտք է թողնել երկրի գաւառախանատու Մարմնին։ Քանի որ Զաւուշը երկրումն է, պէտք է ընդունել նրա քեկնածութիւնը։

Արամ։— Ես էլ կանդնած եմ Թոստոմի տեսակէտի վրայ, աւելի լաւ է թողնել այս հարցը երկրի ընկերներին։ Սխալ է կարծել, որ Զաւուշը սարերի վրայ է. ընդհակառակն, նա միշտ դաշտումն է, գիւղերի մէջ։ Ճիշդ չէ ընկ. Մուրատի դիտողութիւնը։ Մեզ ոչ թէ պակասում է դրամը, ոչ թէ բիւդճէն է որ անբաւարար է, այլ կազմակերպուած զօրաւոր ուժն է պակասում։ Այժմ չատ աւելի դրամ կայ, քան երբեւիցէ։

Թոստոմ։— Զաւուշին հեռացնելով, ոչինչ չենք շահի։ Նրա տեղ նոր վախտականներ կը յառաջանան։ Քանի որ նա հեղինակաւոր անձ է, ծանօթ է չրջանին, մի չարք կապեր ունի եւ վատ է պահում գործը, հետեւապէս մինչեւ իսկ անհրաժե՛շտ է նրա ներկայութիւնը այնտեղ։

Նախագահը եզրակացնում է, յայտնելով, որ Զաւուշի քեկնածութիւնը մնում է ցանկի մէջ։

Նոյնը կոմս, Սարգիս Վարդանեանի, Արամի, Մուրատի եւ Տաճատի քեկնածութեան վերաբերմամբ։ Ընկ. Արամը խնդրում է մի քանի անգամ իրեն դուրս հանել ցանկից եւ տեղը թողնել միւս ընկերներին։

Վռամեան։— Ես դնում եմ այս հարցը.— արդեօք վասպուրականի մարմինը դրսի ուժերի կարիք ունի՞, թէ տեղական ուժերը հերիք են։

Իշխան։— Մինչեւ այժմ եղածը բաւարար է համարուել, բայց ներկայումս մեծ կարիք կայ, մանաւանդ, որ երկուսը հեռանում են։

Արամ։— Մենք ընդհանրապէս պատրաստուած ընկերների պահանջ ունենք, կազմը ուժեղացնելու համար, բայց ոչ այս կամ այն դերի համար առանձնապէս։ Կովկասում երկու ուժեր աչքի առաջ ունենք, վերադառնալիս նրանց պէտք է վերցնենք հետներս։

Զոփուրեան։— Ես ուզում էի գիտենալ, թէ կովկասից ղրկուած տղաները ի՞նչ դեր են ստանձնում այնտեղ. արդեօք նրանք հեչտութեամբ տեղ գտնո՞ւմ են կենտրոնական կոմիտէի կազմի մէջ։

Արամ։— Արեւելեան կամ Արեւմտեան Բիւրոների կողմից ուղարկուած եւ յանձնարարուած ընկերները ընտրւում են ընդհանրապէս կենտրոնական կոմիտէի անդամներ։

Արեւելեան Բիւրոյի համար առաջարկւում են հետեւեալ քեկնածուները՝

1) Զաւարեան
2) Համօ
3) Թոստոմ
4) Գարօ
5) Ծովինար
6) Թումչեան
7) Անդրանիկ
8) Սահակեան
9) Վռամեան
10) Ահարոնեան
11) Մինասեան
12) Գիւլխանդանեան
13) Բարսեղեան
14) Զարդարեան
15) Զաւրեան
16) Գագիկ

Արեւմտեան Բիւրոյի համար առաջարկւում են 9 քեկնածուներ, որոնք հետեւեալներն են.

1) Մ. Ծովհաննէսեան
2) Մալումեան
3) Ահարոնեան
4) Զարդարեան
5) Ծովինար
6) Մինասեան
7) Վռամեան
8) Մաք
9) Գագիկ

Ցուցա–տեռորական մարմնի համար առաջարկւում են հետեւեալ թեկնածուները·

1) *Մալումեան*
2) *Անդրանիկ*
3) *Վահագն*
4) *Ռոստոմ*
5) *Իչխան*

Բոլոր թեկնածուների մասին ժողովականները կայցնում են մտքերի մանրամասն փոխանակութիւն։ Ժողովին ներկայ եղողների մասին խօսելիս՝ թեկնածուները հեռանում էին ժողովից։ Ոմանք թեկնածուներից հրաժարուեցին։

Թեկնածուների վերաբերեալ վիճաբանութիւնների չարունակութիւնը մնաց յաջորդ նիստին։

Նիստը փակուեց ժամը 1ին։

114ՐԴ ՆԻՍՏ (30 Ապրիլ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան։
Ներկայ են՝ 29 ժողովական։
Բացակայ է՝ Վարդան։

Նախագահը ժողովի առաջ է դնում Ցուցականի հարցը· այդ առթիւ յիշեցնում է այն երկու կարծիքը, որ կան ժողովականների մէջ Ցուցական Մարմնի մասին· առաջին՝ որ պէտք է Ցուցականին պատասխանատուութեան կոչել ամբողջ կազմով, եւ երկրորդ՝ որ պէտք է պատասխանատուութեան կանչել միայն այն անդամներին, որոնց կարելի է նկատել իրրեւ պատճառ այդ գործի անմխիթար վիճակին։

Շահխաթ-ուլեան·— Պէտք է տարբերել դատի բովանդակութիւնը դատուելիք անձնաւորութիւններից· այսինքն՝ պարզել, թէ ի՛նչ հարցեր են յատկապէս ենթակայ դատի։

Ռոստոմ·— Ես առաջարկում եմ դատի հարցը միանգամայն թողնել· գործի բարոյական կողմը պարզ է բոլորի համար։ Այն թերութիւնները՝ կազմակերպական կամ տեխնիկական, որոնք կան գործի մէջ՝ այնպիսին չեն որ նրանց համար յատկապէս դատ նշանակուի։ Ես առաջարկում եմ միայն բաւականանալ այն բոլորով, ինչ որ գիտէ Ժողովը այդ գործի բարոյական կողմի մասին, եւ իւր եզրակացութիւնը տալ։

Նախագահը հարցը դնում է քուէարկութեան։

19 ձայն մի կողմում են Ռոստոմի առաջարկին, այսինքն ցանկանում են, որ Ժողովը տայ իւր եզրակացութիւնը այդ խնդրի մասին։ 2 հոգի դէմ են, այսինքն յատուկ դատ են ուզում, եւ մի հոգի ձեռնպահ է մնում (Ընդ.— Քննիչ յանձնաժողովի 4 անդամները ակզբունքով համաձայն լինելով Ռոստոմի առաջարկին՝ անյարմար են համարում այս խնդրում ձայն տալու եւ ձեռնպահ են մնում)։

Զաւարեան·— Ես ձեռնպահ եմ մնում այն պատճառով, որ ես Դաշնակցութեան տրատիցիաներին [ատեանի] հակառակ եմ գտնում այդքան բծախնդրութեամբ վերաբերուելը։ Անցեալներում մեր բոլոր ձեռնարկները այս կամ այն թերութիւնն են ունեցել, բայց նրանց վրայ ոչ ոք այդքան ուշադրութիւն չէ դարձրել։ Ինչպէս անցեալ անգամ ասացի, քննիչ յանձնաժողովը դուրս է եկել իրեն համար գըծուած սահմաններից, որովհետեւ զեկուցումը նա դարձրել է մեղադրական ակտ։

Արամ, Թոփչեան եւ Վռամեան (յանձնաժողովի անդամներ) բողոքում են ընդ· Զաւարեանի արտայայտութեան դէմ՝ յանձնաժողովի հասցէին։ Նրանք պնդում են, որ իրենք ղեկավարուել են միմիայն այն հրահանգներով, ինչ որ տուել է Ընդհանուր Ժողովը։ Ժողովի արձանագրութեանց մէջ տրուած են 15–17 հարց, որոնց աշխատել է պատասխանել յանձնաժողովը։ Եթէ այդ պատասխանները մեղադրական բնաւորութիւն են կրում, դրա մեղքը յանձնաժողովինը չէ, այլ Ցուցական Մարմնինը։

Նախագահ·— Կարօտ եմ համարում աւելացնել յատկապէս այն ընկերների համար, որոնք ներկայ չեն եղել, որ Ժողովը սկզբից իսկ չատ անկողմնակալ դիրք է բռնել Քէ' դէպի Ցուցականը, Քէ' դէպի նրա անդամները։ Խօսք լինել չէ կարող որեւէ ճնշման։

Չելալեան բացականչում է, որ ժողովականները այս խնդրում չհամագրգռուած են։

Համօ·— Պահանջում եմ, որ Չելալեանը խօսքը յետ առնէ· այլապէս անհնարին եմ համարում Ժողովում մնալ։

Չելալեան·— Խօսքս յետ եմ առնում, որպէսզի Համոն դուրս չելլէ· եւ խնդրում է արձանագրել այս։

Նախագահ·— Առաջարկում եմ արտայայտուել ըստ էութեան։

Համօ·— Ցուցական Մարմինն յանձնարարուել է կատարել մի յեղափոխական ակտ եւ այդ մարմինը կատարել է այնպէս, ինչպէս նա կարողացել է։ Եթէ այդ Մարմնի գործողութիւնների մէջ կան թերութիւններ, տեխնիկական, կազմակերպական եւ Քէ ընկերական յարաբերութիւնների տեսակէտից, դրանք իրենց հիմքում ունեն մի հիմնական պատճառ, այն՝ որ այդ Մարմնի մէջ ստեղծուած էր այնպիսի անբարոյական մի մթնոլորտ, որ վայել չէ կարելի համարել մի յեղափոխականի մարմնի համար։ Այն անվստահութիւնը դէպի ընկերները, այն հետեւութիւնը, որով նրանք կարողանում են վիրաւորել ընկերների ամենամաքուր, ամենանուիրական զգացումները, այդ բոլորը կարող է որակուել միմիայն «անբարոյական» խօսքով։ Եւ այդ անբարոյականութիւնը մտցնողը եղել է մի անձնաւորութիւն, — դա Սաֆոն է, մի մարդ, որ ճգնում է իւր ամէն մի քայլով ասելու, որ ինքը հերոս է, որ ինքը գնում է մի դաբաւոր նահատակ ժողովուրդի համար զոհուելու։ Եւ այդ հերոսը միայն ինքն է· այն գործողութիւնները, որոնք կատարուած չեն իւր ձեռքով՝ բոլորն էլ ստուերի տակ են առնուած, եւ ամէն տեղ ցցուած անձնաւորութիւնը ինքը՝ Սաֆոն է։ (Քիչատակում է Վիչապում պատրաստած լուսանկարները)։ Եւ այդ բոլորով հանդերձ մենք տեսնում ենք Սաֆոյին մի դերում, որ ամենավատանգաւորն է··· Այն ժամանակ, երբ Մարմնի անդամներից մէկը պնդում է, Քէ այսպիսի գործի մէջ վիճակի հարց չէ կարող լինել եւ իրեն է առաջարկում այդ գործը կատարելու՝ Սաֆոն պնդում է վիճակի վրայ եւ վիճակահանութեան մէջ է քաշում մի մարդու՝ օրինակ Արամին, որ Ընդհ· Ժողովի կողմից չի էլ նշանակուած իրրեւ Ցուցականի անդամ։ Նրա դերը իրրեւ կենտրոնական անձնաւորութիւն Ցուցականի մէջ կայանում է նրանում, որ նա Քոյլ է տալիս Ռուբինային՝ փոխարինել Արամին։ Ցուցականի մէջ դեմորալիզացիա [յուսալքում] մտցնողը եղել է Սաֆոն։ Մինչեւ այն ժամանակ, երբ Քրիստափորի ոգին էր իշխում այդ գործի մէջ, Սաֆոն չէր կարող այդ դերը կատարել· բայց երբ Քրիստափորը անյայտացաւ՝ Սաֆոյի համար դռները բաց էին··· Միակ հակադիր ուժը Սաֆոյին հանդիսանում է Ռուբինան եւ ես համոզուած եմ, որ եթէ այդ հակադիր ուժը չլինէր, գործը մինչեւ այդտեղ էլ չէր հասնի։ Ես գտնում եմ, որ մենք այստեղ չենք կարող լինել ֆորմալիստ [ձեւապաշտ] դատաւորներ, այլ յեղափոխական խղճի դատաւորներ· եւ ես յեղափոխական խղճով պահանջում եմ, որ Սաֆոն, իբրեւ միակ չար ոգին այդ ամբողջ գործի մէջ, հեռացուի մեր միջից։ Մարմնի մնացած անդամներին պատասխանատուութեան ենթարկել մենք չենք կարող։ Նրանց բոլոր գործողութիւնները կրում են Սաֆոյի ազդեցութիւնը։ Եթէ նրանք լինէին Քրիստափորի ազդեցութեան տակ, նրանք կը մնային իրենց կոչման բարձրութեան վրայ։ Ներկայ դէպքում այդ ընկերներին պէտք է նկատել իրրեւ զոհեր մի չար ոգու, մի չար ազդեցութեան, որ աւաւանելիս է եղել ամբողջ Ցուցականի վրայ։

Անդրանիկ·— Սաֆոյին ճանաչում եմ 12 տարուց ի վեր· Քրիստափորին ես չեմ տեսել· 1905ի Նորհուրդի ժամանակ յոյս ունէի նրան տեսնելու, բայց նա Սոֆիայում զբաղուած իւր գործերով, չկարողացաւ գալ Ժընեւ։ Ցուցականի գործունէութեան տեխնիկական մասը մենք քննել չենք կարող եւ ձեռնհասութիւն էլ չունենք։ Սակայն Քրիստափորի մասին նրա գործածած արտայայտութիւնները, ես համարում եմ ոճրագործութիւն։ Նորհրդի ժամանակ ծանօթանալով, հենց Սաֆոյից, գործի դրութեան հետ, ես նկատեցի, որ Ցուցական Մարմնի մէջ չկար ցանկալի անձնազոհութիւնը եւ վստահութիւնը։ Ես նրան այդ բանը արտայայտեցի եւ նա ինձ պատասխանեց վիրաւորուած, — «Եթէ Անդրանիկը չլինէիր, ես քեզ այլ կերպ կը պատասխանէի»։ Եթէ մենք գործի կազմակերպութեան մանրամասնութիւնների մէջ հարց ու փորձ անենք ընկերներին, մենք չատ թերութիւններ կը նկատենք։ Սակայն մենք այդ չենք կարող։ Ես առաջարկում եմ կանգ առնել միմիայն այն դատաճանական ընթացքի վրայ, որ բռնել է Սաֆոն մեր ընկերոջ դէմ։ Ես անձամբ եղել եմ դէպքի տեղը եւ այդ լուրերի ազդեցութեամբ ուսումնասիրել եմ եղելութիւնը· բայց ո՛չ մի հետք դիտաւորեալ որեւէ արարքի՝ Քրիստափորի կողմից։ Շատ չատ կարելի է ասել, որ անփորձութիւն է եղել եւ ոչ Քէ այնպիսի ոճրագործ դիտաւորութիւն, որպիսին վերագրւում է Քրիստափորին։

Տաճատ պնդում է, որ պատիժը Ցուցական Մարմնի բոլոր անդամների համար պէտք է լինի· Քէ' նրա համար, ով անբարոյականացրել է ընկերներին եւ Քէ' նրանց, որոնք Քոյլ են տուել իրենց ենթարկուել նրա ազդեցութեանը։

Վռամեան·— Իրրեւ ժողովական, ես գտնում եմ, որ հարկաւոր է Սաֆոյի համար որոշել ամենածանր բարոյական պատիժը՝ աքսորել Դաշնակցութիւնից։ Գալով մնացած անդամներին, որոնց անգիտութիւնը իրերի ընթացքի վերաբերմամբ պարզ է այդ գործի քննութեամբ պարապողների համար, պէտք է ներողամիտ լինել եւ Քոյլ պատիժ նշանակել։ Գալով Ռուբինային, որի անձնուէր գործունէութիւնը պարզ է, նրան մեղադրելու մասին այստեղ խօսք լինել չէ կարող։

Զաւարեան·— Ես համաձայն չեմ, որ Սաֆոն միակն է եղել իւր կոչման բարձրութեան վրայ չկանգնողը։ Ցուցական Մարմնի մէջ կան այնպիսի անձնաւորութիւններ, ինչպէս Քրիսը(47), որի մասին գալոյ թերթերում այնպիսի լուրեր էին տպուած, որ մարդու մաղերը բիզ-բիզ էին կանգնում։ Այդպիսի մարդկանց մի կազմակերպութեան մէջ պահել, ոչ մի կերպով չէ կարելի։ Դրա համար էլ առաջարկում եմ յանձնաժողովին՝ ճշդօրէն որոշել նաեւ մնացած ընկերների մեղաւորութեան չափը։ Գալով Սաֆոյին՝ պէտք է ասեմ, որ 17 տարի չարունակ այդ մարդը մեր կազմակերպութեան մէջ գործում է եւ չարունակ նրա դերը բացասական է եղել։ Անցեալ Ընդհանուր Ժողովում ես ասացի, որ նրա բոլոր միջոցները անբարոյական են։ Եւ իմ ասածը ճիշդ է։ (Քիչում է մի քանի փաստեր Սաֆոյի անցեալ գործունէութիւնից, Կուկունեանին սպանելու առաջարկը, Սասունի քննիչ յանձնաժողովի անդամներին կոտորելու եւ մեղքը քրտերի վրայ գցելու առաջարկը եւն·)։ Այդ փաստերը, Սաֆոյի անբարոյական ընթացքը բնորոշելով, միեւնոյն ժամանակ չեչտում են եւ այն իրողութիւնը, որ Սաֆոն մի տեսակ հոգեկան հիւանդութեան ենթակայ է։ Դրա համար ապացոյցներ եւս կան· մի քանի անգամ Սաֆոն խելագարութեան նշաններ է ցոյց տուել։ Ես ա-

առաջարկում եմ, մեր եզրակացութեան հիմնաւորման մէջ, այս հոգեկան հիւանդութեան մոմենտը եւս չեչառել:

Նախագահը առաջարկում է պատասխանել այն հարցին, թէ արդեօք Յուդայականի բոլո՞ր անդամները հաւասարապէս պատասխանատուութեան պէտք է ենթարկուեն, թէ ոչ:

Ռոստոմ.— Յուդայականի անդամներին մենք չենք կարող հաւասարապէս մեղադրել: Օրինակ, ով ճանաչում է Թորգոմին՝ նա չէ կարող չպնդել՝ որ եթէ առ Քրիստափորի ազդեցութեան տակ մնար եւ կողմնակի ազդեցութիւնների չենթարկուէր, հիանալի տղայ կը լինէր: Նոյնը կարող եմ ասել եւ Քրիսի մասին, որին ինքս եմ գոլիս ուղարկել եւ անձամբ գիտեմ, թէ ինչպիսի՛ եռանդով էր վերաբերում նա դէպի յեղափոխութիւնը: Ես տեսնում եմ այդ մարդկանց վրայ մի զօրեղ չար աղդեցութիւն: Երբեմն նրանք համոզում են արտայայտել, որ Քրիստափորը իսկապէս վատ մտադրութիւններ ունեցել է. բայց այդ կրում է Սաֆոյի խոր ներշնչումը: Զպէտք է մոռանալ՝ որ բոլոր փաստերը, Էդուարդի(48) եւ Քրիստափորի սպանութեան մասին, հաղորդուած են եղել Սաֆոյի կողմից:

Մուրատ.— Ես պնդում եմ, որ պէտք է պատժել բոլորին, ամէն մէկին իր մեղաւորութեան չափով: Սակայն, եթէ դուք համոզուած էք, որ Սաֆոն մեղաւոր է իսկապէս, նրան պէտք է պատժել աւելի խիստ. նրան պէտք է տեռորի՛ ենթարկել: Իսկ եթէ բաւարար չափով համոզուած չենք այդ բանում, պէտք է հարցը հիմնովին քննել եւ ապա վճիռ տալ:

Վահագն.— Թորգոմի հետ ես անձամբ խօսել եմ. նա ասում է, որ ինքը երբեք մտքով չէ անցկացրել, որ Քրիստափորը կարող է այդպիսի մտադրութիւն ունեցած լինել ընկերոջ նկատմամբ, եւ վճռականօրէն յայտարարում է, որ եթէ արձանագրութիւնը այդ մտքով է հասկացւում, ինքը այդ խօսքերի տէրը չէ: Բացի սրանից, չպէտք է մոռանալ, որ բոլոր տեղեկութիւնները Թորգոմը ստացել է Սաֆոյից:

Անդրանիկ.— Եթէ Թորգոմը եւ միւս ստորագրողները իրենց ստորագրութիւնները պաշտօնապէս յետ չեն վերցնում, նրանք նոյնպէս մեղաւոր են եւ պէտք է պատժուեն:

Գագիկ.— Թորգոմը անցեալ ժողովին ասաց, որ քանի Սաֆոն գոլիս չէր եկել, նա Քրիստափորի մահը համարում էր դժբախտ պատահար. իսկ երբ Սաֆոն եկաւ եւ փաստերը բերաւ, նրանք իրենց համոզմունքը փոխեցին: Այստեղից պարզ է, թէ ո՛վ է այդ լուրերի աղբիւրը:

Միհասեան.— Ես համաձայն չեմ, որ Սաֆոյի անցեալ գործունէութիւնները անբարոյական են, ինչպէս ընկ. Զաւարեանն է ասում. դրանց մենք կարող ենք անուանել միայն յեղափոխական նախաձեռնութիւններ, ուրիշ ոչի՛նչ: Գալով Սաֆոյի վերջի գործին, ես այստեղ գլխաւորապէս նկատում եմ անձնական փառասիրութեան չեչտը. սակայն մեղաւոր են նաեւ ընկերները եւ պատասխանատուութիւնը պէտք է ընդհանուր լինի:

Մաշուր.— Ցեղափոխական դատաստանի մէջ ձեւականութիւնների յետեւից չեն ընկնում. ամբողջ այդ պատմութեան մէջ Սաֆոն նկատում է իրրեւ մի ցըցուած, ակտիւ անձնաւորութիւն, որ չրջապատուած է եղել որոշ չափի թոյլ անձնաւորութիւններով, որոնք ենթարկուած են եղել նրա ազդեցութեանը de facto: Սաֆոյի կամքն է իշխել ամբողջ գործի վրայ եւ նա է ընթացք տուել ամբողջ գործին, այդ միակ կամքը պատժելու հարցը պէտք է դրուի այստեղ:

Նախագահը ժողովի քուէարկութեան է դնում այս հարցը, թէ արդեօք միայն Սաֆո՞ն պէտք է պատասխանատուութեան ենթարկել, թէ բոլորը՝ զանազան չափերով:

Զորս հոգի համաձայն են միմիայն Սաֆոյին պատժելու. 22 հոգի պնդում են, որ պէտք է պատժել բոլոր մեղաւորներին՝ զանազան չափերով, ըստ իրենց յանցանքների: Բացի դրանից 8 հոգի պահանջում են, որ Յուդայական Մարմինը պատժուի, ի նկատի ունենալով գործի անյաջողութեան բոլոր պատճառները. իսկ 21 հոգի գտնում են, որ պատասխանատուութեան պէտք է ենթարկել բարոյական զարտուղութիւնների սահմանում:

Ապա խնդիրը քուէարկւում է վերջնական ձեւով:

Ժողովը 23 ձայնով որոշում է Յուդայական Մարմնի անդամ Սաֆոյին ի պատառ արտաքսել Դաշնակցութիւնից եւ այդ մասին յայտարարել պաշտօնական օրգան «Դրօշակ»ում:

Ձեռնպահ են մնում 4 հոգի (Զաւարեան եւ մանաժողովի անդամներ՝ Թոփչեան, Վռամեան, Արամ):

Նախագահը առաջարկում է որոշել մնացած ընկերների պատասխանատուութեան չափը:

Զաւարեան.— Մնացած անդամների պատասխանատուութեան չափը որոշելու համար, առաջարկում եմ յանձնարարել յանձնաժողովին, որ աւելի իրազեկ է գործին, իւր կարծիքները բերել իւրաքանչիւրի մասին:

Վռամեան առաջարկում է, որ Մարմնի երեք անդամը՝ Թորգոմ, Աչոտ եւ Քրիս հեռացուին կազմակերպութեան գործից, մինչեւ նրանց յանցաւորութեան չափը կը քննուի:

Անդրանիկ պնդում է, որ արձանագրութեան տակ ստորագրող բոլոր անդամները պէտք է պատժուին: Եթէ նրանք իմանալով արձանագրութեան միտքը եւ հետեւանքը, անմիջապէս յետ առնէին իրենց ստորագրութիւնները, հարցը ուրիշ կը լինէր, սակայն եթէ նրանք հիմա միայն իրենց ստորագրութիւնները յետ առնեն, նրանց մեղքը միայն կը մեղմանայ եւ ոչ թէ կը վերանայ:

Թոփչեան (յանձնաժողովի անդամ).— Յուցակի անդամներից մէկը՝ Աչոտը, այդ գործին գնալով, ծանր զոհ է կրել. նրա ընտանիքի մի քանի անդամներ զոհուել են կ. Պոլսում: Ես բարոյական պարտք եմ համարում այս բանը ժողովի առաջ դնելու:

Համօ.— Այստեղ ասում են, թէ Յուդայականի անդամները այժմ եւս իրենց խօսքը յետ չեն առնում: Մենք չենք կարող ղեկավարուել նրանց այժմեան բըռնած ընթացքով. մեր առաջ է Յուդայականի ամբողջ գործունէութիւնը եւ մենք այնտեղից տեսնում ենք, որ այդ մարդիկ ենթարկուած են զօրեղապէս Սաֆոյի չար ազդեցութեան: Վերջին կէտի վրայ պէտք է կենտրոնացընել մեր ուշադրութիւնը:

Անդրանիկ.— Եթէ Թորգոմը այս քանի օրս ժողովին գալով յետ չէ առել իւր խօսքը, նոյնպէս պէտք է պատժուի:

Ահարոնեան.— Եթէ Թորգոմը, Աչոտը եւ Քրիսը գրաւոր կերպով յետ չվերցնեն իրենց ստորագրութիւնը, նրանց այդ մասին յայտարարուելուց 3 օրուայ ընթացքում, նոքա նոյնպէս պիտի արտաքսուին կուսակցութիւնից եւ այդ մասին պիտի յայտարարուի Դրօշակում: Իմ կարծիքով այդ գործի կարգադրութիւնը յանձնուելու է Իննի Ճանճախմբին:

Զաւարեան.— Յետ վերցնելուն կամ չվերցնելուն մենք կարեւորութիւն տալ չենք կարող: Ինձ համար ամենեւին նշանակութիւն չունի թէ Քրիսի պէս մի փըչացած մարդ յետ կ'առնի իւր խօսքը. իսկ միւս կողմից էլ ես չեմ կարող կարեւորութիւն տալ այն հանգամանքին, որ Թորգոմը ընկերական պարտք է համարում Սաֆոյին մենակ չձգել եւ իւր խօսքը յետ չառնել: Մենք պէտք է ղեկավարուենք մեր խղճով եւ եթէ կը տեսնենք, որ մեղաւորները անկեղծ կերպով չեն զղջում, մենք նրանց պէտք է պատժենք:

Ահարոնեան.— Չէ կարելի բաւականանալ մի ձեւական նամակով, թէ ստորագրութիւններս յետ ենք վերցնում. պէտք է ժողովը կամ յանձնաժողովը այն համոզմանը գայ, որ նրանք անկեղծ համոզուած են, որ սխալ են գործել:

Նախագահ.— Իրրեւ արտայայտութիւն ժողովականների տրամադրութեան առաջարկում եմ հետեւեալը.— Յուցակի անդամ՝ Աչոտին, Թորգոմին եւ Քրիսին հեռացուած համարել կազմակերպութիւնից, այդ մասին կազմակերպական ճանապարհով յայտնել մեր բոլոր մարմիններին (ոչ Դրօշակում) եւ տալ նրանց իրաւունք՝ ներկայացնել Դաշնակցութեան խորհրդին մեզմացուցիչ բացատրութիւններ եւ զղջման պատգամներ: Դրա հետ միասին լիազօրութիւն տալ խորհուրդին՝ փոխել այս որոշումը, եթէ հնարաւոր տեսնէ:

Այդ ամբողջ առաջարկը դրուեց քուէարկութեան եւ անցաւ ընդդէմ 3ի, 2ի ձեռնպահութեամբ:

Յուցակների հինգերորդ անդամ Ռուբինային զօրելով, Ընդհանուր ժողովը չգտաւ որեւէ հիմք, նրան պատասխանատուութեան կանչելու համար, քանի որ նա իւր պարտաճանաչութեան բարձրութեան վրայ է դանուել:

Ժողովը հաւանութեամբ Յուցականի օժանդակող ընկ. Զարեհի անձնուէր գործունէութեան մասին [?]:

Ժողովը յանձնեց քննիչ յանձնաժողովին մի պատճառաբանուած վճիռ պատրաստել Յուցական Մարմնի անդամների վերաբերմամբ, ընդունուած որոշումների հիման վրայ:

Ընդհանուր ժողովը դրանով սպառուած է համարում Յուցական Մարմնի խնդիրը:

Երկրի պատասխանատու մարմինը:

Նախագահը ժողովի քննութեան է ենթարկում երկրի պատասխանատու մարմին ընտրելու հարցը: Ժողովականների մի մասը այն կարծիքն է յայտնում, որ Մուշ–Սասուն–Վասպուրական ընդարձակ ոլորտը չէ կարելի մի Պատասխանատու Մարմնով կառավարել, իսկ մեւս մասը գտնում է, որ այդ ընդարձակ ոլորտի միացումը մի Պատասխանատու Մարմնի մէջ՝ անհրաժեշտ է, թէ՛ գործի մէջ ընդհանուր ներդաշնակութիւն պահելու եւ թէ այդ չրջաններում տեղական–նահանգային հայրենասիրութեան եռանդը մեղմելու համար, որ չատ է զարգացած ի վնաս գործին:

Ժողովը թեր ու դէմ կարծիքները լսելուց յետոյ՝ որոշեց Մուշ–Սասունի եւ Վասպուրականի համար կազմել մի Պատասխանատու Մարմին, ուժեղացած կազմով (եօթ հոգի), ընտրելով 5 հոգի Ընդհանուր Ժողովում, իսկ երկուսի ընտրութիւնը թողնել երկրի կենտրոնական կոմիտէներին:

Նախագահը առաջարկում է երկրի պատասխանատու մարմնի համար թեկնածուներ առաջարկել:

Թեկնածուների վերջնական ցանկը թողնում է յաջորդ նիստին:

Այս նիստում Զաւրեան յայտնում է իր պատրաստականութիւնը գնալու Բաղէշի չէյլիին այցելութեան՝ միխայով [առաքելութեամբ]. Տաճատը՝ երկրի որեւէ մարմնի համար եւ Շահխաթունեան՝ էրզրումի համար:

115ՐԴ ՆԻՍՏ (1 Մայիս, առաւօտ)

Նախագահում է Թոփչեան:
Ներկայ են 28 ժողովական:
Բացակայ են՝ Վարդան Անդրանիկ:

Օրակարգն է «Զեկուցում Կիլիկիայի մասին», որ ներկայացրեց Լեռնավայրի Պատասխանատու Մարմնի

անդամ ընկ. Զաւարեան: Ձեկուցումը տեւեց 1 ժամ եւ 45 րոպէ:

Ժողովականներից ոմանք արին մի քանի լրացուցիչ հարցումներ:

Վռամեան.— Ես կ'ուզէի գիտնալ, թէ ովքե՛ր են Եղիպտոսի այն սեկցիայի անդամները, որոնց մօտ կը գտնուի դրամը: Եթէ չեմ սխալւում, այդ դրամը դըրուած է եղել Սարհատի տրամադրութեան տակ: Մեր հաշուետուութեան սխտեմը սխալ է. ես առաջարկում եմ հիմնովին փոխել այդ սխտեմը. հաշիւը ներկայացընելիս, պիտի ներկայացնել միաժամանակ նաեւ մնացած դրամը կամ դրա համար մուրհակ եւ ոչ թէ լոկ յիշելով բաւականանալ: Ակէ զատ կ'ուզէի, որ Զաւարեանը դործնական առաջարկ բերէր Կիլիկիայի վերաբերմամբ:

Վահագն.— Ես չատ լաւ գիտեմ, որ Կիլիկիայում կան չրջաններ, գիւղեր, որոնք իրարից 6–7 օր հեռու են: Այժմ հեռաքդիր է ընկ. Զաւարեանի կարծիքը. եթէ մի կենտրոնական կոմիտէ կազմուի, հնարաւոր կը լինի՞ արդեօք այդ վայրերը միացնել եւ ժամանակին ապատամբութիւն առաջ բերել: Բացի այդ, կ'ուզէի նաեւ իմանալ հայ ազդաբնակութեան մօտաւոր թիւը. թէ անկախութիւն ձեռք բերելու դէպքում, ո՞ր մասը կ'օգտուի:

Զաւարեան.— Ազգաբնակութեան ⅓ը հայեր են, մօտ 120–130·000ի բնակիչ: Ընդհանուր ապատամբութեան վերաբերմամբ որոշ խօսք ասել դժուար է, ինչպէս այլ վայրերի, օրինակ Վասպուրականի մասին. բայց կ'ասեմ դրականապէս, որ դա ապագայում հնարաւոր է, եթէ այժմեանից պատրաստենք, կազմակերպենք: Մեր տուած կանոնադրութեան համաձայն, ոչ միայն ամէն մի դաշնակցական զէնք ունենալու է, այլեւ չրջանները ունենալու են թուուցիկ խմբեր: Լաւ կազմակերպուելուց յետոյ երբ ծագի ապստամբութիւն, հնարաւոր կը լինի մի երկու ամիս դիմանալ. իսկ այդքան ժամանակամիջոցում, նոյնիսկ մի երկու չաբաթուայ ընթացքում, ստիպուած կը լինին եւրոպական պետութիւնները միջամտելու, որովհետեւ ահագին տնտեսական եւ կուլտուրական շահեր ունին: Գալով միւս հարցին, պէտք է ասեմ, որ հենց սկզբից դըժուար թէ հայերի համար անկախութիւն տրուի, որովհետեւ հայերը ցրուած են եւ բռնում են լեռնաչղթան. յամենայն դէպս եւրոպական կոնտրոլի չնորհիւ կը հաստատուի Կիլիկիայում [առանձին] իրաւակարգ: Ապստամբութեան դէպքում, կարելի է այնտեղ ծովի միջով աւելի հեչտութեամբ արշաւախմբեր ուղարկել քան վասպուրականում եւն.: Ես առաջարկում եմ Կիլիկիան Զէյթունի հետ միասին դարձնել մէկը մեր կազմակերպական վայրերից եւ յատկացնել 20·000 ֆրանք, աւելի ուժեղացնելու համար:

Ռոստոմ.— Հիմնական կազմակերպութեան համար, պէտք է վերջացնել մինչեւ այժմ սիրող սխտեմը եւ նոր ձեւով սկսել: Ես առաջարկում եմ մեծ գումար նշանակել, որպէսզի ապագայի համար խոշոր ուժ կարողանանք առաջ բերել:

Մալումեան.— Սխալ սխտեմ է մեր ուժերը ցրուել եւ տարածել բոլոր վայրերում: Այդ պատճառով զըտնում եմ, որ Կիլիկիան այս տարի չպէտք է դարձնել կենտրոնացման վայր, այլ բաւականանալու է կազմակերպական ձեռնարկներով: Այս նպատակի համար բաւական է ընկ. Զաւարեանի առաջարկած 20·000ի գումարը:

Միհրապեան առաջարկում է Կիլիկիան դարձնել պահեստի վայր:

Ռոստոմ առաջարկում է համերաչխ գործել Հընչակեանների հետ, եւ նոյնիսկ աչակցել նրանց, որպէսզի նրանք գործեն Լեռնավայրում:

Վռամեան դիտել է տալիս մի հնչակեանի մասին, որը գաղտուկով Հնչակեան կազմից, առաջարկում եւ դնում է իրան Դաշնակցութեան տրամադրութեան տակ՝ Կիլիկիայում գործելու:

Համօ.— Զաւարեանի տեղեկագրից կարելի է եզրակացնել, որ Կիլիկիան ապագայում խոշոր եւ նշանակալի դեր է խաղալու մեր գործի տեսակէտից: Եթէ այդ այդպէս է, ինչո՞ւ չպէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել, ուժ գործ դնել, կազմակերպել. ինչո՞ւ վանմուշ բաւական մարդիկ ենք ղրկում, հարիւր հազարների բիւդճէ նշանակում, իսկ այդպիսի մի կարեւոր վայր անուշադրութեան մատնում: Այն մարդիկ, որոնք իրենց տրամադրելի են անում Վասպուրականի համար, ինչո՞ւ չպէտք է գնան Կիլիկիա:

Գագիկ.— Ընկերոջ այս լաւատես զեկուցումից յետոյ, գործը լիկուիտացիայի ենթարկելու ոչ մի հիմք չկայ: Անհրաժեշտ է բիւդճէ նշանակել և մարմին ստեղծել, յենակէտ դարձնելով մեր ապագայ գործունէութեան համար: Ես խիստ սկեպտիկ եմ Հնչակեանների վերաբերմամբ:

Սեպուհ միանում է Համօյի կարծիքին, յայտնելով միաժամանակ իր ուրախութիւնը, որ ընկ. Վարդանի յոռետես կարծիքից յետոյ, լսում է Զաւարեանի խիստ լաւատեսութիւնը Կիլիկիայի վերաբերմամբ:

Տաճատ.— Այն ընկերները, որոնք մտել էին Կիլիկիա, կ'ուզէի իմանալ թէ ինչո՞ւ հեռացան. արդեօք անյարմա՞ր էին, թէ մի այլ պատճառ կար:

Նախագահը նկատում է, որ Զաւարեանը արդէն իւր զեկուցման մէջ ծանրացել է այդ հարցի վրայ:

Զաւարեան.— Ինքնըստինքեան հասկանալի է վարդանի վատ կարծիքը, որովհետեւ նա եղել է միմիայն Այնթափի չրջանում: Բացի այդ, նա մնացել է միմիայն 4 ամիս եւ տպաւորութիւնը խիստ պակասաւոր եւ ընդհանուր է եղել. նա իրը զինուորական մարդ, փնտռում էր զինուորական ուժ, իսկ այդ չկար. կազմակերպչական գործն էլ նա չէ սիրում: Կառավարութիւնը չատ լաւ գիտէ հայերի ապստամբական ոգին եւ նա ամէն հնարաւոր միջոցներով ձգտում է խեղդել այդ: Ինչ, ահմանափակում է հայերի իրաւունքները, ճնշումները հետզհետէ խստանում են: Երեւակայեցէք, որ հայերը, առանց կառավարութեան թոյլտուութեան, իրաւունք չունեն փայտ եկեղեցին կամ դպրոցը նորոգելու: Եւ ժողովուրդը խորը կերպով զղում է այդ: Հենց դրա համար է, որ յեղափոխական մարմինները ինքնին բուսնում, կազմակերպւում են: Ես հակառակ եմ այժմեանից հարիւր հազարների բիւդճէ նշանակելու Կիլիկիայի համար: Դրամական օժանդակութիւնը պիտի բարձրանայ աստիճանաբար՝ կազմակերպական գործի հետ: Անկարող ենք նոյնպէս պահեստի վայր դարձնել, մինչեւ մի քանի վստահելի մարմիններ չկազմուին: Գալով ընկ. Տաճատի հարցին, իմ վերաբերմամբ կ'ասեմ, որ ես անյարմար էի հենց այն պատճառով, որ Քրքերէն չգիտեմ: Այդ լեզուն գիտնալ անհրաժեշտ է: Բացի այդ, կան եւ այլ նշանակալից պատճառներ, ինչպէս ռուսական յեղափոխութիւնը, որին հենց մեր Քրքահայ դատի տեսակէտից մեծ նշանակութիւն եմ տալիս, եւ ես աւելի կարեւոր համարեցի վերադառնալ Ռուսաստան, քան մնալ Կիլիկիա, մանաւանդ որ այնտեղ այնքան խիստ պատասխանատու, պատրաստուած ուժի կարիք չէի տեսնում: Իմ տեղը կարող էր կիլիկիայում ամէն մի մաքուր յեղափոխական անհատ փոխարինել, Քէկուզ կրթութեամբ այնքան էլ պատրաստուած չլինէր:

Սրանից յետոյ քուէարկւում է ընկ. Թոփչեանի բանաձեւը Կիլիկիայի վերաբերմամբ եւ անցնում է միաձայն:

Ահա այդ բանաձեւը.

«Լսելով ընկ. Զաւարեանի զեկուցումը Կիլիկիայի մասին, Ընդհանուր ժողովը կարծիքների փոխանակութիւնից յետոյ որոշեց՝ շարունակել ջանքերը Կիլիկիայում եղած դաշնակցական կազմակերպութիւնները ուժեղացնելու եւ նորերը առաջացնելու: Այդ նպատակով ժողովը անհրաժեշտ է համարում տրամադրելի ընկերներից այդ վայրի համար եւս այժմ առայ ուղեղել եւ կազմակերպական ու պրոպագանդայի գործին ծառայելու համար յատկացնել 20·000 ֆրանք»:

Բացի սրանից Ընդհանուր Ժողովը յանձնարարում է ընկ. Զաւարեանին՝ Կիլիկիայի մասին եղած ուսումնասիրութիւնը մշակել եւ յանձնել Հ. Յ. Դաշնակցութեան համապատասխան մարմիններին, լոյս ընծայելու համար:

Ժողովը փակուեց ժամը 1ին:

1 16ՐԴ ՆԻՍ (1 Մայիս, երեկոյ)

Նախագահում է Թոփչեան:

Ներկայ են 16 ժողովական:

Բացակայ են՝ Իսահակեան, Իշխան, Զոփուրեան, Բարսեղեան, Մաշուր, Արամ, Ճուչիկ, Տաճատ, Գուսան, Վարդան, Գրուպինեան, Համօ, Գագիկ, Զաւարեան:

Շահխաթունեան կը կարդայ սոցիալ–դեմոկրատների հանդէպ Դաշնակցութեան դիրքը բնորոշող բանաձեւ մը:

Թոփչեան կը գտնէ, որ Շահխաթունեանի գրածը բանաձեւի մը համար խիստ ընդարձակ է եւ անյարմար, ու յարմարագոյն կը կարծէ իրեւ նիւթ յանձնել Իննի Ճանճնախմբին. կը չեչտէ մասնաւորապէս, թէ անհրաժեշտ է խորութիւն դնել ընդհանրապէս սոցիալ դեմոկրատներու հետ մեր գործակցութեան եւ կովկասեան սոցիալ դեմոկրատներու հանդէպ մեր բռնելիք ընթացքին մէջեւ: Մինչդեռ առաջիններու հետ համերաչխութեան դէպքեր կրնան տեղի ունենալ եւ պէտք չէ առաջուց մերժել, միւս կողմէն անհրաժեշտ է համարակութեան աչքը բանալ, կովկասեան սոցիալ–դեմոկրատիայի մէջ բոյն դրած վրացական չովինիզմը մերկապարանոց պարզելով:

Մալումեան եւ Ռոստոմ կը խօսին նոյն իմաստով:

Ժողովը կ'որոշէ այդ խնդրի առթիւ բերուած երկու բանաձեւերը (Թոփչեանի եւ Շահխաթունեանի) յանձնել Իննի Ճանճնաժողովին՝ իրրեւ նիւթ վերջնական բանաձեւ մը մշակելու համար:

Շահխաթունեան կը կարդայ քաթարներու մէջ մեր գործունէութեան մասին բանաձեւ մը:

Ռոստոմ կը գտնէ, որ փոխանակ Դաշնակցութեան անունով գործելու այլեւայլ ժողովուրդներու մէջ, որ կրնայ դուռ բանալ չատ մը անտեղութիւններու եւ քիւրդիմացութիւններու, մենք ձգտելու ենք Դաշնակցութեան տիպով կազմակերպութիւններ ստեղծել անոնց մէջ: Այդպիսով այդ ժողովուրդներու եւ մեր միջեւ համերաչխութիւն մը հնարաւոր կը դառնայ ինքնին: Այդ միջոցով է, որ պիտի կրնանք նաեւ կասեցնել սոցիալ–դեմոկրատներու առաջխաղացութիւնը այդ տգէտ զանգուածներուն մէջ, ուր սոցիալ–դեմոկրատիան չաջողած է, ոչ անոր համար որ մարքսիստներ են, այլ անոր համար, որ առաջին յեղափոխականներն են, որ մտել են անոնց մէջ գործելու: Թաթարներու համար յեղափոխական եւ սոցիալ–դեմոկրատ՝ համանիշ բառեր են եղած: Մենք, ստեղծելով Դաշնակցութեան դաւանութեամբ անկախ մարմիններ մահմետականներու մէջ, կրնանք իրենց չահերուն գիտակցութեանը բերել

անոնք եւ այդպիսով հեռացնել սոցիալ–դեմոկրատներից։

Թուիչեան կը գտնէ որ Շահխաթունեանի բանաձեւը շատ խոստումներ կու տայ մեր կողմէն, ինչ որ է վիճակի չենք ըլլար իրագործելու։

Վռամեան կը չեչտէ, որ մենք անկարող ենք ամէն միջոցով նպաստելու Թուրք ժողովրդի կուլտուրական զարգացման։ Մեր ուժերէն վեր է այդ եւ մենք այդպիսի յանձնառութիւն մը չենք կարող ստանձնել նոյնիսկ հայ ժողովուրդին հանդէպ, որ այնքան կարօտ է այդ կուլտուրային։

Շահխաթունեան կը պատասխանէ Թէ բանաձեւը նկատի ունի իդէալը· իսկ Թէ որքան կ'իրականանայ, պարապւանները գործն է այդ, հետեւաբար չի կրնար նախատեսել բանաձեւի մէջ։

Ժողովը կ'որոշէ Իննի Ցանձնաժողովին տալ Շահխաթունեանի եւ Թուիչեանի բանաձեւերը իրր նիւթ, զանոնք ամփոփելու եւ մէկ բանաձեւի վերածելու համար։

Մալումեան կը բերէ յառաջիկայ Ընդհանուր Ժողովի դումարման տեղի, վայրի եւ այլ պարագաներու մասին բանաձեւ մը, որ կ'ընդունուի միաձայն։

Ահա այդ բանաձեւը՝

«Ընդհանուր Ժողովը, մտերի փոխանակութիւնից յետոյ, որոշեց՝

1· Ցառաջիկայ հինգերորդ կուսակցաժողովը նշանակել գալ տարուայ վերջը, ոչ ուշ քան 1908 թիւը։

2· Ընդհանուր Ժողովի տեղի որոշումը թողնել երկու Բիւրոներին, հրահանգելով, որ ամէն ջանք գործ դրուի Ժողովը կայացնելու կովկասի սահմաններում, երկրի մտրի։

3· Արտակարգ պարագաների դէպքում՝ թողնել հարիւրդիմ՝ հրաւիրելու արտակարգ Ընդհանուր Ժողով։

Այս Ժողովը հարկաւոր է համարում շեշտել, որ առաջիկայ Ընդհանուր Ժողովի տեւողութիւնը պէտք է սահմանափակել եւ այդ անելու համար անհրաժեշտ է ծախսօրեայ մշակել օրակարգի ձիւթերը, պահանջել տեղեկագրերն ու հաշիւները եւ կազմել մի կանոնագիրք պարապմունքների համար, ամենայն խստութեամբ հետեւելով ձրա ճշգրիտ գործադրութեանը»։

Վռամեան կ'առաջարկէ ընդունել տեղանի վրայ մըտնացած բանաձեւը, ռազմական գործերու մէջ միաձայնութիւն մը ստեղծելու համար։

Ժողովը միաձայն կ'ընդունի այդ բանաձեւը, յանձնելով զայն Արեւելեան Բիւրոյի ուշադրութեան։

Ահա այդ բանաձեւը·

«Դաշնակցութեան ռազմական գործերը ունի կանոնաւորելու, զարգացնելու եւ մեր ռազմական ուժերը ունի օրինական կերպով պաշտպանելու համար Դաշնակցութեան մարտական գործելակերպին,

Ժողովը կ'որոշէ կեդրոնացնել ռազմական գործերու վարչութիւնը Արեւելեան Բիւրոյի մէջ, յանձնարարելով Բիւրոյին՝

ձեռնհաս անձերէ ռազմախորհուրդ մը ստեղծել, իրեն հետ եւ իր պատասխանատուութեան տակ գործող։

Ռազմախորհուրդի պարտականութիւնները են՝

1· Հսկել, որ Թուրքիայէն դուրս գտնուող դաշնակցական շրջաններու մարտական խումբերու զինամարզական կրթութիւնը որոշ եւ միօրինակ ծրագրով մը կատարուի։

2· Պատրաստել ռազմագէտներ ռազմական գործի, զինագործութեան, պայթուցիկ ձիւթերու եւ բոլոր այն ճիւղերու մէջ, որոնց կը պատշաճին մեր կռիւներու բնոյթին։ Այդ նպատակին համապատասխան միջոցները կը գտնուին Ռազմախորհուրդի վարչութեան տակ։

3· Կը վերապահուի բացառիկ իրաւունքը, որոշել արտասահմանի մէջ գնելիք զէնքի որակը, պատասխանատու ըլլալով անոնց փոխադրութեան, պահպանումին, ընդհանուր ժողովի որոշումներուն եւ Պատասխանատու Մարմիններու պահանջին համաձայն։

4· Ուսումնասիրել արտասահմանեան մեր ուժերու զօրաշարժի բոլոր պայմանները այնպէս կէտերէ դէպի սահմանագիծը, պատշաճեցնելով զանոնք ռազմական հատուածականութիւններուն (արշաւանք, կոտորած եւն.)։

5· Նպաստել Պատասխանատու Մարմիններուն՝ զինական գործունէութիւններու յատակագծերը պատրաստելուն մէջ, մասնաւորապէս իմքնապաշտպանութեան գործին համար։

6· Պատրաստել եւ հրատարակել հայկական ռահանգներու ռազմական ձարտէզները։

7· Պատրաստել եւ հրատարակել ռազմական գրականութիւն, իմքնուրոյն կամ թարգմանական։

8· Պատրաստել ընդհանուր կանոնագիր մը Թուրքիոյ եւ արտասահմանի մարտական խումբերուն համար։

117ՐԴ ԵՒ 118ՐԴ ՆԻՍՏԵՐ (2 Մայիս, առաւօտ եւ երեկոյ)

Նախագահում է Ջաւարեան։

Ներկայ են առաւօտը 27 ժողովական։

Բացակայ են՝ Իսահակեան, Արամ, Անդրանիկ։

Ներկայ են երեկոյեան՝ 26 ժողովական։

Բացակայ են՝ Ռոստոմ, Արամ, Սեպուհ, Անդրանիկ (հիւանդ)։

Նիստը բացւում է ընտրական նախապատրաստական գործերով· խօսւում է Արեւելեան Բիւրոյի եւ Ցուցա–տեւորական մարմինների քեկնածուների մասին։

Նկատի ունենալով պատրաստուած ուժերի խիստ պակասը, որոշւում է Ցուցական եւ Տեւորական Մարմինները միացնել եւ 5 հոգուց բաղկացած մի մարմին ընտրել, որը in corpore պատասխանատու լինի Ընդհանուր Ժողովի առաջ՝ երկու գործերի համար։ Այդ մարմինը կազմուած կը լինի երկու սեկցիաներից՝ Ցուցական եւ Տեւորական՝ անկախ ներքին գործերում· իրաքանչիւր սեկցիա առանձնած գործերի համար պատասխանատու է ամբողջ Ցուցա–տեւորական մարմնի առաջ, իսկ վերջինս ամբողջութեամբ պատասխանատու է երկու գործերի համար էլ Ընդհանուր Ժողովի առաջ։

Տասնեւմէկ ընկերների գրաւոր առաջարկութեամբ նորից դրւում է Ընդհանուր Ժողովի առաջ կովկասեան գրաւոր պրոպագանդի, Թերթերի, բրոշիւրների, խմբագրական կազմի հարցը։ Թեթեւ վիճաբանութիւնից յետոյ, քուէարկութեամբ՝ առաջարկը մերժուեց եւ գրաւոր պրոպագանդի ու Թերթի խմբագրական մարմնի ընտրութիւնը Թողնուեց Արեւելեան Բիւրոյին. հետեւաբար խմբագրական մարմինը ընտրելու է Արեւելեան Բիւրոյի կողմից (19 ձայն ընդդէմ 7ի)։

Ապա տեղի ունեցաւ «Իննի Ցանձնաժողովի» անդամների ընտրութիւնը։ Ընտրուեցին՝ Մալումեան, Համօ, Թուիչեան, Ռոստոմ, Ջաւարեան, Վռամեան, Մինասեան, Գագիկ, Շահխաթունեան։ Կանդիդատներ [Քեկնածուներ, փոխ–անդամներ]՝ Ահարոնեան, Զոհրաբեան, Բարսեղեան։

Բուլղարիա գնալու համար ընտրուեցին ընկերներ Ռոստոմ եւ Թուիչեան· իսկ Աքէնքի համար՝ Վարդան կամ Վահագն։

Ատրպատականի կ· կոմիտէի ներկայացուցիչ Ստեփանեանը ներկայացնում է իւր կարծիքը (գրաւոր) Աւարայրի եւ մենաւորի վայրերը Վասպուրականի մարմնին միացնելու խնդրի մասին, եւ առաջարկում է իւր այդ կարծիքը կցել Վասպուրականի ներկայացուցիչների առաջարկին։

Ահա այդ կարծիքը.—

Որովհետեւ մի կենտրոնական կոմիտէի որեւէ վայրի կամ չրջանի այս կամ այն կ· կոմիտէի հսկողութեան յանձնելը կամ նրա տրամադրութեան տակ դնելը մի նորութիւն է մտցնում մեր կազմակերպական սիստեմի մէջ, ուստի այդ պէտք է ենթարկուէր Ժողովի քննութեան, որ անհնար եղաւ իրագործել ժամանակի սղութեան պատճառով· ուստի խնդրում եմ, այդ յանձնել Իննի Ցանձնաժողովին՝ կարգադրելու Ընդհանուր Ժողովի անունից։

Ընկ· Արամի եւ Իչխանի առաջարկը՝ Թողնել Մենաւորը ու Աւարայրը իրենց հսկողութեան, մենք գըտնում ենք անհամապատասխան [անյարմար ?] Քէ՛ ընդհանուր կազմակերպութեան եւ Քէ Վրէժի գործերի օգտի տեսակէտից· ուստի առաջարկում եմ այդ երկու վայրերը միացնել Վասպուրականի հետ, ազատ համարելով Վրէժը պատասխանատուութիւնից, որովհետեւ մի կենտրոնական կոմիտէ չի կարող պատասխանատու լինել մի չրջանի համար, որը գտնուում է ուրիչի հսկողութեան տակ։ Բացի դրանից, աւելորդ եմ համարում աւելացնել, որ այդ երկու վայրերի միացումը՝ Վասպուրականի հետ վնասակար կը լինի հենց Վասպուրականի համար, որովհետեւ ոչ երկրի ընկերները միջոց կ'ունենան հսկելու այդ տեղերի վրայ, ոչ էլ Բիւրոյի սեկցիան· միւս կողմից այդ տեղերը այնքան էլ ապահով չեն իրենց քիչ հայ ազգաբնակութեան պատճառով, մանաւանդ որ Վրէժն այլեւս կարիք չի զգայ, ինչպէս առաջ, համաձայն նախորդ Ընդհանուր Ժողովի որոշման, ազատ գործիչ պահելու Մինարէթում, որ ամենապէտքական չենարանն է երկիր զինք փոխադրելու գործում։ Երկրի ընկերները վտանգի դէպքում անշուշտ նորից կը դիմեն Մինարէթին, բայց արդէն ուշ կը լինի։ Ես առաջարկում եմ, ինչպէս եւ իմ ընկերները, յատուկ կարող գործիչներով ուժեղացնել Ատրպատականի կ· կոմիտէի կազմը, որ աշխատանքի բաժանման սիստեմով կը վարէ այդ վայրերի գործը։ Այս կերպով միայն կարելի էր գործը լաւ հիմքերի վրայ դնել եւ ոչ նշանակովի մարդկանցով, ինչպէս այդ անելու են երկրի ընկերները։ Այդ յատուկ ուժեղացած կազմը մեր չրջանի համար անհրաժեշտ է, մանաւանդ ներկայումս, մեր գործունէութեան նոր առաւօտեան, որպէսզի չկրկնուեն 98–901 Թուերի Մինարէթի տխուր երեւոյթները։

Այս է իմ եզրակացութիւնը.— յանձնելով Մենաւորն ու Աւարայրը Վասպուրականին, Վրէժն ամբողջ պատասխանատուութիւնը ապագայում Թողնում է նրա վրայ։

Սրա հետ միասին ցաւ եմ յայտնում, որ Ընդհանուր Ժողովը՝ ի նկատի ունենալով դրամական ցեղը, չհաստատեց մեր Շրջանային Ժողովի որոշումը՝ Գարսը կաստանում նոր կ· կոմիտէ կազմակերպելու, որ մեր կազմակերպական չահերի տեսակէտից առաջնակարգ կարեւորութիւն ունէր։ Այսուհետեւ անհնար կը լինի, չրջանի ընդարձակութեան պատճառով, ցանկալի կապը պահպանել բոլոր վայրերի միջեւ։

119ՐԴ ԵՒ 120ՐԴ ՆԻՍՏԵՐ (3 Մայիս, առաւօտ եւ երեկոյ)

Նախագահում է Մալումեան։

Ներկայ են առաւօտ՝ 28 ժողովական։

Բացակայ են՝ Անդրանիկ, Արամ։

Ներկայ են երեկոյեան՝ 29 ժողովական։

Բացակայ է՝ Անդրանիկ։

Օրակարգն է՝ ընտրութիւնները·

Նախքան օրակարգին անցնելը, Ժողովում կարդացուեցին երկու գրութիւններ՝

1) *Անդրանիկի եւ Մուրատի առաջարկը, որի վերաբերմամբ Ժողովը որոշեց, մտցնելով այդ առաջարկը արձանագրութեան մէջ, յանձնարարել Սասունի հանգանակիչ յանձնաժողովին կարգադրել այդ գործը:*

2) *Ցուցական Մարմնի երեք անդամների՝ Սաֆոյի, Թորդոմի եւ Քրխի նամակը:*

Ժողովը որոշեց այդ թուղթը կցել Ցուցական Մարմնի տեղեկագրին եւ անցնել հերթական հարցերին, առանց նրա վրայ կանգ առնելու:

Ահա Անդրանիկի եւ Մուրատի առաջարկը.

«Մենք ստորագրեալս կը խնդրենք Ընդհանուր Ժողովէն, որ պարտ դնէ ճաւ Սասունի ազատամարտից յանձնաժողովին վերայ, որ ուշադրութեամբ առնէ Սասունէն եւ Մուշի դաշտէն 60 որբերու տեղին վրայ դաստիարակութեամբ խնդիրը:

Մենք այդ 60 որբերու կրթութեան համար (40 Սասունէն եւ 20՝ Դաշտէն) հաշուած ենք 10·000 ռուբլի, ամբողջ հինգ տարուայ համար, ուրեմն տարեկան 2000 ռուբլի: Իսկ ամենց հոգատար հսկողութիւնը յանձնել Վարդան Վարդապետին:

Այդ որբերը պէտք է կրթուին տեղին վրայ եւ թաժնուին շրջաջին չորս վանքերուն մէջ՝ Առաքելոց, Ս· Յովհաննէսի, Ս· Կարապետի եւ Մատենավանքի:

Մենք այս առաջարկը կ'ընենք, յուսալով որ Ընդհանուր Ժողովը օգտակար կը գտնէ եւ ազատակայարմար՝ յեղափոխական եւ բարոյական տեսակէտով եւ միանգամայն դրական յարգանք մը կ'ընծայէ հերոսական լեռնականներու յիշատակին, ամենց որքերուն ապագան ապահովելով»:

Սրանից յետոյ Ժողովը անցաւ ընտրութիւններին: Բոլոր ընտրութիւնները կատարուեցին գաղտնի քուէարկութեամբ:

Վասպուրական–Տարօնի Գործադիր Մարմնի *անդամ ընտրուեցին՝*

1) *Գէորգ Զաւուշ՝ 27 ձայնով.*
2) *Սարգիս Վարդանեան՝ 27 ձայնով.*
3) *Կոմս՝ 25 ձայնով.*
4) *Տաճատ՝ 22 ձայնով.*
5) *Մուրատ՝ 21 ձայնով:*

Ընտրութեանը մասնակցում էին 26 հոգի 27 ձայնով:

Արեւելեան Բիւրոյի ընտրութիւնը.

Զաւարեան.— *Առաջարկում եմ, նոր ուժեր առաջ քաշելու համար, հին ընկերներին, որոնք տարիներից ի վեր եղել են Արեւելեան Բիւրոյում, դուրս հանել Արեւելեան Բիւրոյի թեկնածուների ցանկից: Հին ընկերները, նոյնիսկ առանց ընտրուելու, միշտ էլ մասնակցել են Արեւելեան Բիւրոյի նիստերին վճռական ձայնով եւ կը մասնակցին: Այս բանը, որ միշտ էլ կեանքի մէջ իրագործուել է, մենք կարող ենք այժմ դարձնել որոշում եւ մտցնել կանոնադրութեան մէջ:*

Զոփուրեան.— *Այդ առաջարկը խիստ անգործնական է եւ սկզբունքով սխալ: Անկարելի է այդպիսի օրէնք մտցնել մեր դործերու մէջ. նրանց աշակցութիւնը, ինչպէս մինչեւ այժմ եղել է, կը լինի միայն ընկերական–բարոյական հողի վրայ դրուած, եւ ոչ թէ պաշտօնական:*

Զաւրեան *միանում է Զաւարեանի կարծիքին, առաջարկելով որ Ժողովը արտօնութիւն տայ՝ ընկերների վճռական ձայնով մասնակցելուն:*

Թոփչեան.— *Ես սկզբունքով միանգամայն հակառակ եմ Զաւարեանի առաջարկին: Մենք անկարող ենք «ցուցակ ծառայութեան» կազմել եւ արտօնութիւններ տալ այս կամ այն անձանց: Սրանով ստեղծում ենք մի խիստ անյարմար դրութիւն: Դրանք, այդ իրաւասէրները կը գան, որոշումներ կը տան եւ կը հեռանան, առանց հետեւելու որոշումների դործադրութեան: Սա ընդունելի չէ: Այժմ պէտք է ընտրել նրանց, որոնք բովանդակ կուսակցութեան վստահութիւնն են վայելում: Ներկայ կրիտիկական պայմաններում պէտք է զգուշութեամբ մօտենալ ընտրութեանը եւ հիմնական փոփոխութիւններ չմտցնել հին կազմի մէջ:*

Զաւարեան.— *Եթէ մեր ընկերներից մի քանիսը վախենում են այդ իրաւասէր անդամներից, այն ժամանակ ես կ'առաջարկեմ որ նրանց մասնակցութիւնը լինի խորհրդակցական եւ ոչ վճռական ձայնով:*

Այս առաջարկները քուէարկութեան դրուեցին եւ մերժուեցին: Փորձուած ընկերների մասնակցութիւնը կը չարունակուի նոյն հողի վրայ, ինչ մինչեւ այժմ եղել է:

Գագիկ *մի քանի փոփոխութիւններ է անում Զաւարեանի առաջարկի մէջ, ասելով, որ ոչ թէ ընդհանրապէս բոլոր հին ընկերներին պիտի ձայնի իրաւունք տալ, այլ մի քանի փորձուած, պատրաստուած ընկերների, որոնց կը մասնանչի Ընդհանուր Ժողովը:*

Այս առաջարկն էլ մերժուեց եւ վճռուեց Արեւելեան Բիւրոյի թեկնածուների ցանկը պահել անփոփոխ:

Արեւելեան Բիւրոյի անդամ ընտրուեցին՝

1) *Համօ 27 ձայնով*
2) *Զաւարեան 24 ձայնով*
3) *Գարօ 28 ձայնով*
(*Կրկնաքուէարկութեամբ*)
4) *Թոփչեան 23 ձայնով*
5) *Վռամեան 19 ձայնով:*

Մասնակցում էին առաջին ընտրութեան միջոցին 27 հոգի՝ 28 ձայնով. իսկ կրկնաքուէարկութեան ժամանակ 23 հոգի՝ 24 ձայնով:

Արեւմտեան Բիւրոյի ընտրութիւնը.

Մալումեան *հրաժարուում էր քուէարկուել Արեւմտեան Բիւրոյի համար. համաձայնեց քուէարկուել այն պայմանով միայն՝ որ Արեւմտեան Բիւրոյի համար 3է փոխարէն 4 անդամ ընտրուէն, որպէսզի ինքը, ցանկացած ժամանակ, կարողանայ իրեն ազատ համարել Արեւմտեան Բիւրոյի աշխատանքներից եւ մտնել այն ձեռնարկի մէջ, որը հաստատուած է Ժողովի կողմից:*

Ժողովը ընդունեց այդ առաջարկը:

Արեւմտեան Բիւրոյի անդամ ընտրուեցին՝

1) *Միքայէլ Ծովհաննիսեան 27 ձայնով*
2) *Խաչատուր Մալումեան 24 ձայնով*
3) *Ծովինար Դաւթեան 22 ձայնով*
4) *Սարգիս Մինասեան 18 ձայնով:*

Վերջին երկուքը ընտրուեցին կրկնաքուէարկութեամբ:

Առաջին քուէարկութեան մասնակցում էին 26 հոգի 27 ձայնով. կրկնաքուէարկութեանը՝ 23 հոգի 24 ձայնով:

Ի նկատի ունենալով, որ երկու ընկերների՝ Ծովհաննիսեանի եւ Դաւթեանի համաձայնութիւնը նախօրօք չէ առնուած, Ժողովը որոշեց, մերժման դէպքում, պակաս անդամների թիւը լրացնեն երկու Բիւրոները. բացի այդ, երկու Բիւրոներին թողնուեց նաեւ այդ երկու ընկերների նիւթական ապահովութեան խնդիրը:

Ցուցա–տեղորական մարմին:

Քուէարկութեամբ Ցուցա–տեղորական Մարմնի անդամ ընտրուեցին՝

1) *Մալումեան* 2) *Անդրանիկ* 3) *Վահագն:*

Այս մարմնի համար նախորոշուած 5 թեկնածուները չունենալու պատճառով, Ժողովը՝ մտքերի փոխանակութիւնից յետոյ, որոշեց բաւականանալ 3 հոգի ընտրելով: Համաձայն ընդունուած բանաձեւի (տես արձանագրութիւն), Ժողովը ընտրեց Ցուցա–տեղորական Մարմին, որը պէտք է տեսնի բոլոր նախապատրաստութիւնները եւ ստեղծէ միջազգային տեղորական գործօն կոմիտէն: Դրա հետ միասին՝ տեղորիստական կազմուած մարմինը պիտի մշակէ ցուցական գործողութիւններին վերաբերեալ մի ծրագիր, եւ ներկայացնէ երկու Բիւրոներին կամ Խորհրդի հաստատութեան:

121ՐԴ ՆԻՍՏ (4 Մայիս, առաւօտ)

Նախագահում է Մալումեան:
Ներկայ են 27 Ժողովական:
Բացակայ են՝ Մուրատ, Զարդարեան, Անդրանիկ:

Վռամեան, Զելալեան, Մինասեան եւ Զարդարեան ստորագրութեամբ առաջարկ կը բերուի Ժողովին վերստուգելու Սարհատի մասին Ապրիլ 22ի երեկոյեան նիստի որոշումը: Այս ընկերները կ'առաջարկեն՝ Ընդհանուր Ժողովի կողմէն բաւականանալ միայն խիստ յանդիմանութիւն կարդալով Սարհատին, առանց մերտնելու Լեռնավարչի Գործադիր Մարմնի վճռին վերաքննութեան մէջ, որպէսզի այդպիսով միջոց տրուի Սարհատին՝ ինքզինքն ուղղելու եւ օգտակար ըլլալու, առանց իր գլխու վրայ կախուած ունենալու Ընդհանուր Ժողովի վճիռը:

Զաւարեան *կը յայտնէ, թէ Սարհատ կազմակերպական դրամներու անբարեխիղճ գործածութեան համար Լեռնավարչի ընկերական Ժողովի մը որոշումով հեռացուած է, եւ մինչեւ իր աւելորդ ծախսած 750 ֆրանքը չհատուցանէ կազմակերպութեան, չի կրնար մտնել շարքերու մէջ:*

Ժողովականներից շատերը բողոքներ կը բարձրացընեն, թէ անտեղի է այլեւս զբաղուիլ Սարհատի գործով, աւելի կարեւոր խնդիրներ կան տեղանի վրայ, թէ վերաքննութեան այդ առաջարկը 10 ընկերներու կողմէ ստորագրուած ներկայացուելու էր Ժողովին:

Նախագահը խնդիրը փակուած կը նկատէ Ժողովականներու մեծամասնութեան պահանջով:

Վռամեան կը բողոքէ Ժողովի այդ հապճեպ որոշման դէմ եւ կը խնդրէ իր բողոքը արձանագրել:

Ժողովը կ'անցնի Ծրագրի ճշգրտութեան.

Զաւարեան *կը կարդայ իր բանաձեւը՝ Դաշնակցութեան նպատակը եւ հիմնական պահանջները ուրուագծող:*

Թոփչեան *կը կարծէ, որ կուսակցութեան ծրագիրը պէտք է որոշապէս երկու մասէ բաղկանայ՝ Քրքհայկական եւ կովկասահայկական. գրեթէ անփոփոխ թողնելով 1892ի ծրագրային հատուածը, պէտք է սպասել մինչեւ որ Թուրքիոյ դաշնակցական ինայնական Ժողով մը գումարուի ու մշակէ իր պահանջները: Այդ բաժանումով անխուսափելի կը դառնան անշուշտ կրկնութիւնները երկու մասերուն մէջ. բայց մոռնալու չէ որ Զաւարեանի նախագծի պահանջներուն մանրամասնութիւնները հետաքրքրութիւն չեն ներկայացներ Թուրքիոյ հայերուն համար:*

Շահխաթունեան կը գտնէ, որ կովկասի համար օրուան խնդիր չեն մեր պահանջներու չատ մը կէտերը. բայց ադոնք տեխնիկական պատճառներ են, որոնց համար կարելի չէ մեր ծրագիրը թերի թողնել: Զաւարեանի առաջարկներուն մէջ կան մանրամասնութիւններ իրականացման միջոցներու մասին, որոնք պէտք չէ մտնեն ծրագրի մէջ. մենք միայն բաւականանալու ենք մեր բաղձանք–իդէաներն արտայայտելով: Իսկ իրականացման մանրամասնութիւնները կարելի է մասնաւոր տետրակով մը հրատարակել իբրեւ մեկնաբանութիւն:

Մալումեան անհրաժեշտ կը դտնէ, որ ծրագրի մէջ չեչտուի այն կէտը, թէ Դաշնակցութիւնը, քաղաքական բեֆորմներու [բարենորոգումներու] իրականացումը չմերժելով հանդերձ, կը մնայ էապէս յեղափոխական կազմակերպութիւն մը:

Վռամեան կարեւոր կը նկատէ, որ նպատակի բանաձեւման մէջ որոշապէս արտայայտուի տերրիտորեալ ինքնավարութեան մեր պահանջը Թուրքիոյ մէջ, ինչպէս նաեւ կովկասի:

Մինասեան կարծիք կը յայտնէ, որ Թուրքիոյ վերաբերեալ մեր պահանջներու մէջ մեր առաջին դիրքը կորսնցնելու չենք, մտնելով այնպիսի մանրամասնութիւններու մէջ՝ ինչպէս Գոլոյ եւ զաւառներու իրաւունքներու հաւասարեցումը եւն.:

Զաւարեան կը կարծէ, որ «ազատ Հայաստան» խօսքը մեծ թիւրիմացութիւններու տեղի տուած է թէ՛ Թուրքերուն եւ թէ մեր հայերուս մէջ: Մենք արդէն ընդուներ ենք, թէ կը ձգտինք ինքնավարութեան եւ ոչ անջատումի: «Վեց վիլայէթներ» աւելի որոշ բացատրութիւնն է, քան «Թուրքաց Հայաստան» բառը: Փոփոխութեան կարօտ են հին ծրագրի պահանջները եւ յատկապէս գիւղացիական հողային հարցը, նկատի ունենալով այդ հարցի դերակշիռ կարեւորութիւնը մեր ժողովուրդին համար: Մինչդեռ նոյնիսկ Կովկասեան Նախագիծը իւր պահանջներուն 9/10ը նուիրած է բանուորական հարցին եւ միայն 4/10ը գիւղացիականին: Մեր ծրագիրը թարգմանուելով կրնայ ուղեցոյց հանդիսանալ թէ՛ Թուրքերուն եւ թէ մեր դրացի միւս փոքր ազգերուն:

Ահարոնեան կը հակառակի «Հայաստան» բառը հանելուն դէմ: Վեց նահանգները զէնք մը եղած են Թուրք կառավարութեան ձեռքը, ձգտելու համար, որ հայերը դադրին մեծամասնութիւն կազմելէ Հայաստանի մէջ: Մենք ոչ միայն պահելու ենք «Հայաստան» բառը, այլեւ մեր պահանջներէն մէկը ընելու ենք՝ վիլայէթները վերակազմել այն ձեւով, որ հայ համայնքները վարչական միութիւններ կազմեն:

Համօ կը յայտնէ նոյն կարծիքը:

Վռամեան կը յիշեցնէ Ժողովին, թէ «Հայաստան» բառը գոյութիւն ունի թէ՛ եւրոպացիներու եւ թէ մեր ժողովրդի համար. պատմական աններելի սխալ մը պղծած կ'ըլլանք այդ բառէն հրաժարելով:

Մալումեան կը յայտնէ թէ «Թուրքաց Հայաստան» խօսքը պիտի պահել մեր ծրագրի մէջ եւ կ'աւելացնէ թէ սոցիալիստական կուսակցութիւնները կ'ընդունին եւ կը գործածեն այդ քաղաքական բառը:

Ռոստոմ նպատակի բանաձեւման մասին կ'առաջարկէ հետեւեալ բանաձեւը, որ կ'ընդունուի միաձայն:

«Դաշնակցութեան նպատակն է ձեռք բերել Թուրքաց Հայաստանի ֆաղաքական եւ տնտեսական ազատութիւնը. իմքնավար Թուրքահայաստանը կապուում է դաշնակցական [դաշնակցային] կապերով Թուրքիայի միւս ռայոնների հետ»:

Մալումեան կը ներկայացնէ իր մշակած կէտերը Ծրագրի վերաբերեալ:

Ժողովը Իննի Ճանճնաժողովին կը յղէ Մալումեանի առաջարկած այդ կէտերը:

Նախագահը քննադատութեան կը դնէ տասը ընկերներու ստորագրութեամբ դիւանին ուղղուած առաջարկը՝ Դաշնակցութեան անունին մէջ սոցիալիստական բառը աւելացնելու մասին, որ հետեւեալն է.—

«Ներքեւ ստորագրող պատգամաւորները առաջարկում են դիւանին, օրակարգի մէջ անցկացնել կուսակցութեան անունի մէջ «սոցիալիստ» բառը մտցնելու հարցը: Պատգամաւորները ցանկանում են մեր կուսակցութիւնը վերակոչել «Հայ Սոցիալիստ Յեղափոխական Դաշնակցութիւն»:

Վռամեան կը բողոքէ այդ առաջարկը վիճաբանութեան եւ քուէարկութեան դնելու դէմ, պատճառաբանելով որ կուսակցութեան անունը փոխել կարելի չէ, առանց այդ մասին կանխաւ իրաւասու մարմիններու կարծիքը առած ըլլալու:

Սեպուհ.— կը ներկայացնէ գրաւոր նոյնիմաստ բողոք մը:

Ժողովը կը մերժէ «սոցիալիստ» բառը աւելցնելու առաջարկը, նկատի առնելով, որ կուսակցութիւնը իր հիմնական սկզբունքները փոխած չէ, անուան մէջ այդպիսի փոփոխութիւն մը արդարացնելու համար, ինչ որ կրնար ենթադրել տալ, թէ մինչեւ այսօր սոցիալիստ եղած չենք:

Համօ վերոյիշեալ առաջարկի մերժումէն յետոյ կը բերէ հետեւեալ առաջարկը, — «Ընդհանուր Ժողովը յանձնարարում է Հ. Յ. Դաշնակցութեան Մորհրդին՝ կուսակցութեան անուան տակ, իրրեւ բացատրութիւն, աւելացնել՝ «միջազգային սոցիալիզմի հայկական բանակ» դարձուածքը եւս, եթէ Սոցիալիստական Միջազգային Բիւրոն կ'ընդունի Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցչութիւնը այդ Բիւրոյում»:

Այս առաջարկութիւնը միայն 12 ձայն ստանալով՝ մերժուեցաւ, Թողնելով անոր քննութիւնը ապագային, եթէ Դաշնակցութիւնը պաշտօնապէս յարած կը լինի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին:

Ժողովը անցաւ Միջազգային Սոցիալիստական

Բիւրոյի նամակի առթիւ ընկ. Մալումեանի բերած բանաձեւին, որն ընդունուեցաւ միաձայն, ձեռնպահութեամբ Զելալեանի: Ահա այդ բանաձեւը.—

«Ընդհանուր Ժողովը, լսելով Բրիւսէլի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի կողմից եղած առաջարկը (տե՛ս «Դրօշակ», 1905, № 6) եւ հիմնուելով մեր ծրագրի հիմնական կէտերի վրայ, որոշեց յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝ բանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրոյի հետ, գրաւոր թէ բանաւոր, յայտնել նրան՝ Դաշնակցութեան յարումը միջազգային սոցիալիստական կոնգրէսների որոշումներին եւ միջոցներ ձեռք առնել ապահովելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սոցիալիստական Բիւրոյում եւ կոնգրէսներում»:

Ծրագրի խմբագրութեան առթիւ Ժողովը միաձայն ընդունեց Թոփչեանի հետեւեալ առաջարկը.—

«Ընդհանուր Ժողովը, լսելով ծրագրային մասնաժողովի, ինչպէս նաեւ առանձին ընկերների զեկուցումներն ու առաջարկները Հ. Յ. Դաշնակցութեան կուսակցական աշխարհահայեցողութեան, ծրագրային հիմնական կէտերի ու առհասարակ սկզբունքային խնդիրների մասին, եւ նրանցից էականները յատուկ բանաձեւերով հաստատած լինելով, յանձնարարում է Իննի Ճանճնաժողովին՝ վերջնականապէս խմբագրել ու մշակել Ծրագիրը, ղեկավար ունենալով Ընդհ. Ժողովի ընդունած որոշումներն եւ օգտուելով ներկայացրած զեկուցումներից ու առաջարկներից եւ այդ Ծրագիրն հրատարակել Ընդհանուր Ժողովի անունից»:

Ծրագրային Ճանճնախմբի անդամներ նշանակուեցին ընկերներ՝ Ռոստոմ, Շահխաթունեան, Մինասեան:

Ժողովը Իննի Ճանճնաժողովին յանձնարարեց Ընդհանուր Ժողովի կողմէն կոչեր ուղղել հայասիրական՝ օրուան հրատապ խնդիրներու մասին (մարմիններու կազմալուծումը, հայ–քաթար ընդհարումներ, կատարուած բռնութիւններ եւ ղեղծումներ, Քրքահայ դատ եւն.):

Ժողովը նկատի առնելով, որ պատգամաւորներէն ոմանք բանաձեւերը արտագրած են նախքան անոնց վերջնականապէս խմբագրուիլը եւ վաւերացուիլը, անվաւեր համարեց բոլորը: Որոշուեցաւ նաեւ, որ պատգամաւորները զգուշանան դուրսը խօսելէ Ժողովի մէջ տեղի ունեցած վիճաբանութիւններու մասին, գաղտնի պահելով ոչ միայն որոշումները, այլեւ մարմիններու համար ընտրուած ընկերներու անունները:

Ժողովը կարծիք յայտնեց, որ Իննի Ճանճնախմբը Ժողովի առենագրութիւններէն պիտի պատրաստէ երեք ամփոփում. ա) հասարակութեան համար. բ) կոմիտէներու համար եւ գ) այն մասնաւոր մարմիններուն համար, որոնց կը վերաբերին դաղտնի մնալու սահմանուած որոշումներ:

Ժողովը նմանապէս քուէարկութեամբ միաձայն ընդունեց բոլոր որոշումներու մասին հետեւեալ բանաձեւը.

«Ընդհանուր Ժողովը ծրագրային հիմնական կէտերը որոշելուց յետոյ՝ վերստին ծանօթանալով Ժողովի սկզբից մինչեւ վերջը ընդունուած բանաձեւերին, հաստատում է նրանց բովանդակութիւնը եւ յանձնարարում է գործադրութիւն, իբրեւ Ժողովի վճիռներ»:

Տասը րոպէ ընդմիջում:

Մալումեան առաջարկում է Ընդհանուր Ժողովի անունից հրատարակել յայտարարութիւն մը, այն ընթացիկ խնդիրների առթիւ, որոնք յուզում են հասարակութեան եւ մեր մարմինների մտքերը, եւ յայտնել, որ Ժողովը մի կողմ Թողնելով այն մեղադրանքները՝ որոնք կուսակցական անմիտ հակառակութիւնների եւ թշնամութիւնների հետեւանք են, ամենախիստ միջոցներ ձեռք պիտի առնէ, մաքրելու մեր շարքերը եւ արմատախիլ անելու հակայեղափոխական երեւոյթները:

Ժողովը ընդունեց այդ առաջարկը:

Արամ առաջարկում է այդ նոյն կոչի մէջ արտայայտել եւ մեր վերաբերմունքը դէպի Թուրքերը:

Ժողովը հաւանութիւն տուեց այդ առաջարկին:

Նախագահը առաջարկում է, որ Ժողովի անդամները ցրուելով ճանապարհին հանդիպին հայաբնակ գիւղերը վայրերը եւ պրոպագանդ անեն ներկայ Ընդհանուր Ժողովի որոշումների չուրջը:

Ժողովը այս առաջարկին ընդունեց միաձայն:

Ժողովը որոշեց չնորհակալութեան նամակ գրել Վիեննայի սոցիալիստական վարչութեան՝ դահլիճին համար:

Թոփչեան առաջարկեց վերոյիշեալ կոչից զատ հրատարակել նաեւ մի Թուրքիկ Ընդհանուր Ժողովի անունից՝ հայ–Քրքական ընդհարումների մասին, որի մէջ արտայայտուին մեր հայեացքը եւ վերաբերմունքը դէպի այդ փաստը:

Այս եւս ընդունուեց Ժողովի կողմից:

Զաւարեան առաջարկում է Ժողովի համակրութիւնը յայտնել Ռուսաստանի յեղափոխական չարժման առթիւ, որը ահագին նշանակութիւն ունի թէ՛ Ռուսաստանի, թէ՛ ամբողջ մարդկութեան եւ թէ մասնաւորապէս մեզ՝ հայերիս համար: Առաջարկում է չնորհաւորանքը ուղղել Ռուսաստանի սոցիալիստական կուսակցութիւններին:

Ժողովը ընդունեց այդ առաջարկը:

Նախագահը յայտարարեց, որ զրազմունքները ա-ւարտուած են։ Ժողովը անցաւ փակման ճառերին։ Մի քանի ընկերներ խօսք խնդրեցին։

Ջաւարեան.— Դաշնակցութիւնը իւր 17 տարուայ գոյութեան ընթացքում աչքի է ընկել իւր կենսունակութեամբ եւ բարոյական բարձրութեամբ, եւ ես կ'ուզէի, որ նա չարունակուէր մնալ այդ բարձրութեան վրայ։ Երբեմն կրիտիկական, երբեմն յաչող պահեր ունենալով, միշտ էլ պարզերես է դուրս եկել կեանքի ալիքների միջից։ Նրա այդ կենսունակութեան եւ բարոյական բարձրութեան հիմքը ես երեք բանի մէջ եմ տեսնում. ա) որ նրա անդամների մեծագոյն մասը նըպատակ է ունեցել հայ աշխատաւոր ժողովուրդի շահերը պաշտպանել, որի վրայ եւ նա յենուել է գլխաւորապէս. բ) որ նա միշտ կարողացել է ըմբռնել մոմենտը [պահը] եւ ժամանակի ու տեղի պայմաններին յարմարուել, եւ գ) մեր բարոյական տիսցիպլինան [կարգ-կանոնը]։ Թէպէտ մեր սիստեմը եղել է ապահենարոնացում, բայց եւ դրա հետ միասին եղել է խիստ տիսցիպլինա, այսինքն, որքան էլ մասնաւոր կարծիքների տարբերութիւններ են եղել անհատների մէջ, բայց ամէնքն էլ պարտաւորութիւն են զգացել ենթարկուել ընդհանուր որոշումներին եւ սկզբունքներին. եւ այդ վերաբերմունքն է, որ ոյժ է տուել մեր կազմակերպութեան եւ ամրապնդել նրան։ Եթէ մինչեւ այժմ եղել է այդպէս, սրանից յետոյ աւելի եւս պիտի լինի, որովհետեւ բացի անցեալ փորձի խրատից, մէջ է դըրուում ղէպի այդպիսի վերաբերմունք՝ եւ մի չարք ընկած ընկերների թանկագին, ու հարիւր հազար անձեղ զոհերի անմոռանալի յիշատակը։ Եթէ այստեղ խընդիրների քննութեան ժամանակ մէկը միւսին հակառակ կարծիք է յայտնել, երբեմն թերեւս սուր կերպով, պէտք է համոզուած լինել, որ այդ բոլորի դրդիչը գործի շահն է եղել եւ գաղափարի նախանձախնդրութիւնը եւ ոչ թէ որեւէ անձնական միտում։ Եւ ես իմ կողմից ներողութիւն եմ խնդրում, եթէ երբեմն որեւէ կերպ թոյլ եմ տուել ինձ՝ սուր կամ վիրաւորիչ արտայայտութիւն, եւ լիայոյս եմ, որ բոլոր ժողովականներն էլ նոյնպիսի վերաբերմունք ունեն դէպի միմեանց։

Ջաւրեան.— Պարտք եմ համարում չեշտել իմ կողմից եւս, որ Ժողովի պարապմունքների ընթացքում, ինչպէս ես, նոյնպէս եւ շատերը, յաճախ յոգնած ջղային դրութեան մէջ, արտայայտուել ենք, ոչ այնքան հանգիստ կերպով, ինչպէս հարկաւոր էր։ Եթէ ես սրա կամ նրա կարծիքի հակառակ եմ պնդել կամ այս կամ այն ընկերոջ թեկնածութեան դէմ եմ եղել, այդ բոլորի մէջ ղեկավարուել եմ միմիայն գործի եւ ծրագրի շահի տեսակէտով եւ ոչ մի այլ բանով։ Ես նոյնպէս ներողութիւն եմ խնդրում, եթէ որեւէ կերպ թիւրիմացութեան առիթ եմ տուել որեւէ ժողովականի՝ վիրաւորանք զգալու։

Ջելալեան.— Ներկայ Ժողովի ընթացքում ես շատ լաւ յիշողութիւնների հետ միասին առաջ են բերում եւ բաւական հիասթափեցնող մտքեր, որոնք կուտոյմ են իմ ոգեւորութիւնը, որոնք փետտեցին իմ թեւերը։ Ուստի ես կը թողնեմ այդ եւ ապագայի մասին միայն կը խօսեմ։ Մենք երկար խորհրդածութիւններից յետոյ ծրագիր կազմեցինք աշխատաւոր ժողովուրդի շահերը պաշտպանելու, յաւելեալ արժէքի դէմ կռուելու։ Սակայն մենք մեր կռուի ասպարէզում ունենք յաւելեալ արժէքից աւելի՛ սոսկալի էլէմենտը [տարրը], դա «յաւելեալ արեան» կռիւն է, որը կապարի պէս ծանրացել է երկրի ժողովրդի գլխին, որի մասին այնքան խօսուել է, այնքան գրուել է, որը կլանել է այնքան ջանքեր, այնքան զոհեր, եւ որը սակայն դեռ իւր լուծմանը չէ մօտեցել։ Պէտք էր սպասել՝ դէպի դատերից ամենասրբազանը մի սրբազա՛ն վերաբերմունք, մի անհուն, խորը հաւատ դէպի դրա յաղթանակը եւ միեւնոյն ժամանակ մի երկիւղած պատկառանք ու հաւատ դէպի այդ գաղափարի նահատակները։ Բաւական չէ այդ։ Պէտք էր հաստատել եւ փոխադրած հաւատ եւ ըմբռնակ նկատուել եմ իբրեւ ծայրայեղ ազգային։ ոմանք ինձ դուցէ չովինիստ են համարել, որովհետեւ ես ամենից աւելի էի դէմ սոցիալիստական ծրագրին եւ իմ հայեացքներս ամենէն աւելի ազգայնական էին։ Սակայն Ձող ամենեւին չկարծուի, թէ ես չեմ ընդունած կամ չեմ դիտակցում սոցիալիզմի լաւութիւնը ըստ էութեան։ Ես ինքս ապրելով մի երկրում, ուր արդիւնաբերութիւնը չափազանց զարգացած է, որտեղ կողք կողքի ապրում են հսկայ կապիտալը եւ կեղեքուող աշխատաւորը, որտեղ անհաշտ կռիւ է մղւում այդ երկուսի մէջ, չեմ կարող անդիտակ լինել այդ անարդարութեան եւ չճանաչել սոցիալիստական վարդապետութեան արդարութիւնը։ Բայց եթէ ես հակառակում էի սոցիալիստական հողի վրայ գործելուն, դա նրա համար էր, որ ի նկատի էի առնում մեր Երկրի քաղաքական-տնտեսական յատուկ պայմանները։ Շատ է պատահել, երբ ընկերների շրջանակում սկսել ենք զրուցել տնտեսական դասակարգային կռուի, յաւելեալ արժէքի մասին եւ յանկարծ ընկերներից մէկը ստանում է մի այնպիսի սրտամխիկ նամակ, այնտեղի հարբատահարութիւնների եւ բռնաբարումների ու բարբարոսութիւնների մասին, մարդկային ամենատարրական իրաւունքների ոտնահարութեան մասին, որ կամայ ակամայ յետ ես մղում քեզանից «յաւելեալ արժէքի» միտքը, եւ սիրտդ ու հոգիդ պատում է մարդկային պատուի ու տարրական իրաւանց պաշտպանութեան զաղափարը։ Ահա թէ ի՛նչ է ստիպել ինձ չարունակ կանգ առնել եւ չեշտել ազգային կռուի, հարստահարուող իրաւունքի եւ պատուի պաշտպանութեան վրայ, նախապատուութիւն տալով անոր եւ ոչ թէ սոցիալիզմին։

Ահարոնեան.— Ես չեմ խօսի Ժողովի նիստերում անցած դարձածի մասին, որովհետեւ դրանք մի չարք լաւ յիշողութիւնների հետ միասին առաջ են բերում եւ բաւական հիասթափեցնող մտքեր, որոնք կուտոյմ են իմ ոգեւորութիւնը, որոնք փետտեցին իմ թեւերը։ Ուստի ես կը թողնեմ այդ եւ ապագայի մասին միայն կը խօսեմ։ Մենք երկար խորհրդածութիւններից յետոյ ծրագիր կազմեցինք աշխատաւոր ժողովուրդի շահերը պաշտպանելու, յաւելեալ արժէքի դէմ կռուելու։ Սակայն մենք մեր կռուի ասպարէզում ունենք յաւելեալ արժէքից աւելի՛ սոսկալի էլէմենտը [տարրը], դա «յաւելեալ արեան» կռիւն է, որը կապարի պէս ծանրացել է երկրի ժողովրդի գլխին, որի մասին այնքան խօսուել է, այնքան գրուել է, որը կլանել է այնքան ջանքեր, այնքան զոհեր, եւ որը սակայն դեռ իւր լուծմանը չէ մօտեցել։ Պէտք էր սպասել՝ դէպի դատերից ամենասրբազանը մի սրբազա՛ն վերաբերմունք, մի անհուն, խորը հաւատ դէպի դրա յաղթանակը եւ միեւնոյն ժամանակ մի երկիւղած պատկառանք ու հաւատ դէպի այդ գաղափարի նահատակները։ Բաւական չէ այդ։ Պէտք էր հաստատել եւ փոխադրած հաւատ եւ

վստահութիւն այն անձանց մէջ, որոնց կապում է սըրբազան գատերից այդ դերագոյնը։ Սակայն դժբախտաբար այդ վստահութիւնը բաւարար չափով չէ նըկատուում.— մի երեւոյթ, որ կարող է չափազանց վընասել նոյն այդ գատին։ Ես յանուն եւ յօդուտ այդ սրբազան գատի՝ մի ցանկութիւն կ'արտայայտէի, այն՝ որ փոխադարձ հաւատն ու վստահութիւնը աւելի խորը լինէր մեր մէջ եւ կապը՝ անխզելի, ինչ որ ամենագըլխաւոր առհաւատչեան է մեր գործի յաջողութեան։

Մալումեան.— Ինձ վիճակուեց Բիւրոների կողմից՝ բաց անել այս Ժողովը, եւ ինչպէս տեսնում էք, ինձ է վիճակուում փակել այն։ Մեր պարապմունքները մի քանի պատճառներով, որ ձեղ լաւ յայտնի են, շատ աւելի երկար տեւեցին, քան ենթադրւում էր եւ ուզում էինք, — 121 նիստ եւ երկու ամիս 10 օրուայ աշխատանք։ Եւ եթէ այդքան երկար աշխատանքի դիմաց՝ կայ մի քանի մխիթարական բան, դոցանից մէկն էլ այն է, որ կարողացանք Ժողովի մէջ եւ նրա չուրջը տիրող անվստահութիւնից եւ պառակտման վտանգից դուրս դալ յաղթական, պարզ երեսով։ Հետեւաբար ապարդիւն չէին այն բոլոր ջանքերը, յաճախ ծանր, անախորժ եւ ճնշող, որոնք դործ դրուեցին յանուն կազմակերպութեան ամրողջութեան։

Մեր բարդ եւ բազմապիսի Օրակարդի մէջ կար երկու կէտ, որ պէտք է համարել ամենափափուկը՝ Զորրորդ Կուսակցաժողովի պարապմունքների չարքում.— մէկը՝ չեշտել մեր Ծրագրի մէջ սոցիալիստական վարդապետութիւնը եւ յարել սոցիալիզմին, եւ միւսը՝ ընդունել եւ միացած պահել կովկասեան եւ Թրքահայկական դատերը՝ Դաշնակցութեան դրօշակի տակ։ Թէ՛ մէկի եւ թէ միւսի համար Ժողովը հանդիպեց անսովոր դժուարութիւնների եւ այդ, ցաւ է ասել, լոկ այն պատճառով, որ մեր ընկերներից չատերը ցոյց տուին յեղափոխականութեան հետ անհաշտելի մի յատկութիւն, — կանգնել անշարժութեան կէտի վրայ, ծրագրային վերափոխութիւն չանել եւ պաշտպանել պահպանողականութեան մի այնպիսի ոդի, որ ինքն իրան արդէն յեղափոխական մտածողութեան ժխտումն է։ Դա մեր Ժողովի ամենահիւանդոտ կողմն էր։ — Մեր նոր Ծրագրով, կազմակերպութեան առջեւ բացւում է գործելու աւելի լայն չրջան։ — Մի տեղ տնտեսական-քաղաքական կռիւ՝ յանուն հասարակական կարգերի վերակազմութեան. միւս տեղ՝ քաղաքական-զինուորական մարտ, յանուն բռնապետական ռեժիմի տապալման։ Եւ չատերի հետ միասին, ես խորապէս համոզուած եմ, որ յաջորդ Ժողովին մեր ընկերները կը դան այստեղ ոչ թէ դառն լուրերով, մեր Երկրի մէջ եւ նրա չուրջը կատարուող քաղաքական եւ տնտեսական ոճիրների մասին, այլ աւետելու յեղափոխական աշխատանքի դրական արդիւնքը, ազատ կարգերի հաստատումը՝ Ռուսաստանում եւ անարգ ռեժիմի տապալումը Օսմանեան պետութեան մէջ։ Ներշնչուե՛նք բոլոր այն խորունկ հաւատքով, եւ կրենք մեր սերնդի վրայ դրուած քաղաքական ծանր, բայց հմայիչ եւ վերկարար լուծը։ Դա պատանեկան սին հաւատ չէ, այլ յեղափոխական կռուի տրամաբանական դուշակութիւնը, աներկբայ հետեւանքը՝ աղատագրուող ժողովուրդների տանջանքին։

Դարձեալ մի քանի խօսք՝ իրրեւ վերջաբան։ Երեք տարի առաջ Ընդհ. Ժողովին ներկայ ընկերներից չորս հոգի չկան այստեղ(49)։ յեղափոխականի ցուլը ձեռք առած՝ նրանք զոհ գնացին իրենց պարտքի գիտակցութեան, իրենց ժողովրդին, իրենց զաղափարին։ Ո՛վ գիտէ, դալ Ժողովին եւս, դուցէ չատերը ներկայ եղողներից չեն լինի, մանաւանդ ա՛յն ընկերները, որոնք գնում են կռուի՝ ոումբի եւ դէնքի փչոտ ճանապարհով։ Բայց Ձող լա՛ւ լիմանան, որ նրանց մահն ու նահատակութիւնը, խորունկ վշտերի հետ միասին, պիտի պատռայ մեր ապագայ աշխատանքների պատուանդանը, աղբիւրը մեր մարտական ոգեւորութեան, սրբազան հնոցը նորագոյն յոյսերի։ Եւ դա Ձող լինի միակ, բայց մեծագոյն մխիթարութիւնը քանակապէս ընկերների համար, որոնք գնում են գործելու, կռուելու, զոհուելու։

Ահա այս դրգռմունքով ու յոյսերով, ընկերներ, յայտարարում եմ Դաշնակցութեան Զորրորդ Ընդհանուր Կուսակցաժողովը՝ փակուած։ Բարի՛ երթ, բեղմնաւո՛ր աշխատանք։

Ժողովը փակուեց։

ՅԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԴԻՒԱՆԻ ԿՈՂՄԷ.—

Զորրորդ Ընդհանուր Ժողովի առյն ստենագրութիւնները կը բաղկանան հարիւր հսած եւ մէկ (121) նիստերէ, որոնց բոլորն ալ գրուած են ընդհանուր բարտուղար ընկ. Մարդպետի ձեռքով, բացառութեամբ մէկին՝ նիստ 93-95-97-98, գրուած ընկ. Ոշտի ձեռքով։ Սոյն ստենագրութիւններուն կցուած է նաեւ «Ինձի ցանձնախոմբի» ստենագրութիւնը, ստորագրուած բոլոր անդամներու կողմէ։

Նախագահներ՝

Ա. ՎՐԱՄԵԱՆ	Ս. ՋԱՒԱՐԵԱՆ
Ե. ԹՈՓՋԵԱՆ	Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ

Վիեննա, Մայիս 20, 1907

---

(1) Աբշակ Ջամալեանն է. չչփոթել Ալեքսանդրապոլի պատգամաւոր Աւետիք Իսահակեանին հետ (Գուսան)։

(2) Կ'օրոշուի ընտրել հօրը «ձայնատուներ», կ'ընտրուի հինգ հոգի միայն։ Անկասկած մնացեալ երկուքը հաշուուած են վաճառականներ եւ Սեպուհը, որոնք ձայնի իրաւունքով ընդունուած էին Ժողովին կողմէ՝ առաջին իսկ նիստին։

(3) Գոլոյ եւ Իսմիրի Անդրանիկն է (տեսնել ՆԻՒԹԵՐ, Բ. հատ., էջ 150-151). չչփոթել Սասնոյ հերոսին հետ՝ որ Դուրանբրաբաւանգակի պատգամաւոր էր, Մուրատի հետ։

(4) Եղիշէ Թոփչեանը, Ար. Խաճակեանը (Զամալեան), Լեւոն Թադէոսեանը (Գազազ կամ Զոփուրեան) եւ Ստեփան Տէր Մկրտչեանը (Գագիկ) կը յիշատակուին պատգամաւորներու ցանկին մէջ: Միւս երկուքը կրնան հրապարակ-հաստատագրերը ըլլալ, թէեւ, իրրեւ այդպիսին, ընկ. Վալադ Վալադեան իր «Հ. Յ. Դ. Զորրորդ Ընդհ. ժողովը» յօդուածաշարքին մէջ (տեսնել ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ամս., Լե. տարի – 1957 – թիւ 4, 5, 6 եւ 7) Մարտիրոս Ցարուբեանեանն ու իմիգիեմ միայն կը յիշատակէ: Ցանատ վ. Մելիքոնեանը ունէլի ուշ կը ստանայ նաեւ վճռական ձայնի իրաւունք:

(5) Բառ մը կամ բառեր կը պակսին արձանագրութեան մէջ (բերեւս անուն մը կամ անուններ):

(6) Մկրտիչ Սեբրմեանը՝ Սգիպտոսի հինգ ուխտակիցներէն մէկը: Տեսնել իր մասին՝ ՆԻՒԹԵՐ, ա. հտր., Ստեփան Տասյեանի եւ Տիգրան Եազուպեանի ճամակները եւ մեր ծանօթագրութիւնները·— էջ 197–256:

(7) Բացի էջ 13էն — տեսնել Ծանօթ. (2) — եւ էջ 33էն, Գիւլխանդանեանի անուան յիշատակութիւնը այլ տեղ չենք գտներ: Անունը գրուած է շատ յստակ, եւ անշուշտ թիւրիմացութեան արդիւնք չի կրնար ըլլալ: Գիւլխանդանեանը, որ հայ-թաթարական հաւասարեցման գործին մէջ գործօն դեր է ունեցած, արդեօ՞ք Այգեստանի (Գանձակ) պատգամաւոր Մաշուրեանն է, կամ Ապառաժի (Ղարաբաղ) Բաթեդեանը:

(8) Ազեքսանդրիոյ վահրամը (Ց. Գալֆայեան), նախապէս՝ անդամ Լեռնավայրի Գատ. Մարմնի: Տեսնել ՆԻՒԹԵՐ, ա. եւ բ. հատորներ, ցուցակ անձնանուններու:

(9) Մար–Շիմօն, Միհայէլ Տէր Մարտիրոսեան: Նոյն:

(10) Այդ յօդուածը հետեւեալն է·— «90) Արեւմտեան Բիւրոյին կը յանձնարարուի դաշնակցական ընկերներ հրաւիրել օժանդակելու իրեն՝ ա) խմբագրական բ) պրոպագանդի գ) տեղական-վարչական գործերու մէջ: Այդ կարգի ընկերներ բիւրոյական ընկերներու հաւասար ձայն կ'ունենան՝ բայց միայն իրենց ստանձնած գործերու մէջ»: Տեսնել ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ (հաստատած Գ.րդ Ընդհ. ժողովի արձանագրութիւններէն), բ. տպագրութիւն, ծրագիր 1906: Միեւնոյն յօդուածը կը գտնենք նաեւ, սակայն իրրեւ թիւ 91, Գ. Ընդհ. ժողովի ստեղծագրութիւններուն մէջ·— տեսնել ՆԻՒԹԵՐ, բ. հտր., էջ 123–124:

(11) Կ'ակնարկուի Ց. Լորիսի կամ Լօռու Մելիքեանին:

(12) Վալադը ընկ. Վ. Վալադեանն է, այն ժամանակ դաշնակցական ուսանող՝ Եւրոպայի մէջ: Տանատ վրդ. Մելիքոնեան յիշատակուած էր արդէն իրրեւ Ընդհ. ժողովի հաստուղաթ, — տեսնել էջ 14 եւ ծանօթագրութիւն թիւ 4: Ալալը արդեօ՞ք Մարտիրոս Ցարուբիւնեանն է (հաւանական չէ որ այստեղ Ալալը վերաբերի Ռուբէն Զարդարեանին, որ Գալֆաի ընտրեալ պատգամաւոր էր):

(13) Սեպուհ բացակայ արձանագրուած է սխալմամբ, համաձայնութեան քննարկման խօսք կ'առնէ:

(14) Տեսնել ՆԻՒԹԵՐ, բ. հտր., էջ 126, «Ընկերներու արտաքսում»: 1906ի ԿԱԶՄ. ԿԱՆՈՆՆԵՐուն մէջ «Ծանր յանցանքի··· բարձր մարմնին» պարբերութիւնը կը կազմէ 127րդ յօդուածը, իսկ «Շրջանական ժողովը··· իմիգիեմ պաշտպանելու» պարբերութիւնը՝ 129րդ յօդուածը:

(15) Էդուարդ կամ Էտվարդ· գործածած է նաեւ Սիսակ ծածկանունը·— Գալոյ, Իզմիրի եւ Լեռնավայրի գործիչներէն: Տեսնել ՆԻՒԹԵՐ, ա· հտր., ցուցակ անձնանուններու, էջ 294:

(16) Դժբախտաբար ցուցական Մարմնի տեղեկագրին ամփոփումը չենք գտներ Ընդհանուր ժողովի ատենագրութեանց մէջ, ինչպէս կան, օրինակ, ամփոփումները Լեռնավայրի, Դուրեան Բարձրաւանդակի, Արեւմտեան Բիւրոյի, Գալֆանեան եւ Ամերիկայի Կ· կոմիտէներու տեղեկագրերուն, տրուած Մնացականեան (հայաստանեան) տառերով:

(17) Ջկայ նաեւ վասպուրականի (Արամի) տեղեկագիրը: Ուրիշ շրջաններու առանձին տեղեկագրեր (Արզրատական, Կովկասեան կեդր· կոմիտէներ, եւն·) — ոչ ամփոփուած ձեւով — կու տանք յաջորդին:

(18) Վրէժստանի (Ատրպատական) տեռորներուն մասին տեսնել նաեւ ՆԻՒԹԵՐ, բ· հտր·, Տեղեկագիր Ատրպատականի Կ· Կ·ի հանգամանք գործունէութեան (ներկայացուած Գ· Ընդհ· ժողովին), — էջ 137–147:

(19) Վարդանը (խանասարի) Սոֆիայի Գ· Ընդհ· ժողովին կողմէ ընտրուած էր անդամ Լեռնավայրի (Կիլիկիա) Գատախտանատու Մարմնին· այդ հանգամանքով ալ մասնակցեցաւ Ս· Զաւարեանի բնական շրջապտոյտին՝ Կիլիկիա, Սուրիա եւ Պէյրութ: Սակայն հայ–թաթարական կռիւները պատճառ դարձան՝ որ 1905ին իսկ անցնի կովկաս՝ ուր, ինչպէս ծանօթ է, վարեց Ղարաբաղի (Ապառաժ) իմիգնապշտպանութիւնը:

(20) Կ'ակնարկուի Հ· Յ· Դ· 1892ի Առաջին Ընդհ· ժողովին, որուն մասնակցած էր Արամ Արամեանցը (Աշոտ–Թաթուլ)՝ իբրեւ կարեւոր պատգամաւոր, եւ այնտեղ պաշտպանած՝ *անհատական տեռոր* տեսակէտը (տեսնել Մ· Վարաժեանեան, — Հ· Յ· Դ· Պատմութիւն, ա· հտր·, էջ 108):

(21) Գեղամ Տէր Կարապետեանը:

(22) Առաւօտ–երեկոյ ընթացիկ բաժանումը չկայ: Կրնայ ըլլալ որ առաւօտեան ընտրը շարունակուած է առանց ընդհատման եւ երեկոյեան ընտրը տեղի ունեցած չէ:

(23) Սիմոն Վրացեանը, որ ուշ հասած էր Ընդհանուր ժողովին: Պատգամաւոր էր Նալբանդի շրջանի (Նոր Նախիջեւան): Կուսակցական ծածկանունն էր Սիգ (Սիմոն Գասուիլեան):

(24) Սարհատը (չշփոթել Գէորգ Զաւուշի կուսակցական ծածկանունին հետ):

(25) Հաւանօրէն՝ Գէյրութի: Տեսնել ՆԻՒԹԵՐ, բ· հտր·, ցուցակ կուսակցական տեղանուններու, էջ 341:

(26) Մարտինը ամենայն հաւանականութեամբ՝ Մարքին Մուրատեանն է: Տեսնել ՆԻՒԹԵՐ, ա· եւ բ· հատորներ, ցուցակ անձնանուններու: Նոյնը եւ Ազատէրի, Առաձորի (Միհամ Գուլումեան) եւ Տահվերի մասին:

(27) Ռոստոմը արձանագրուած է բացակայ: Հաւանական է որ պարզապէս յապաղած ըլլայ:

(28) Ֆրանգեանը, ամենայն հաւանականութեամբ նրուանդ Ֆրանգեանը՝ «Դէպի փեդերացիա» գրքի յետագայ հեղինակը, ուսանող–ընտրելարձերէն մէկը պէտք է ըլլայ: Արդեօ՞ք Մարգպետն է: Ինչպէս ներածական բաժնին մէջ ըսուած է, Մարգպետ ստորագրուած են բոլոր նիստերու արձանագրութիւնները:

(29) Պէտք է ըլլայ «Դաշնակցութեան Խորհուրդ» գլուխի 4րդ յօդուածի (թիւ 95) 6րդ կէտը, որ հետեւեալն է·— «Ռազմական առանձին տեղեկագրեր (Արզրատական, Կովկասեան կեդր· կոմիտէներ, եւն·) — ոչ ամփոփուած ձեւով — կու տանք յաջորդին:

(30) Ծօդ· 119·— Դաշնակցութեան ընդհանուր ժողովի եւ կազմակերպութեան սիստեմի վերաբերեալ որեւէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհանուր ժողովը, եթէ կանխապէս այդ խնդիրը չէ ներկայացուած կեդրոնական կոմիտէներուն: [ԿԱԶՄ. ԿԱՆՈՆՆԵՐ, ծրագիր 1906]:

(31) Տեսնել ՆԻՒԹԵՐ, բ· հտր·, էջ 181–182:

(32) Ռոստոմի նախատեսութիւնը ճիշդ դուրս եկաւ: 1908ին Գոլոյ մէջ կազմուեցաւ պատրաստ–պահպանողական բնոյթի Սահմանադիր–Խորհրդավար կուսակցութիւնը, որուն մէջ մտաւ նախկին արմենականներու կարեւոր մէկ մասը:

(33) Համազասպ Բազէշցեանը, որ Ընդհ· ժողովին հասնելու ճամբուն վրայ՝ կովկաս հիւանդացաւ: Այնտեղ ալ պիտի մահանար, շուտով:

(34) Ծօդ· 115·— «Պատգամաւորը իրաւունք չունի առանց գիտ ընտրող մարմնի համաձայնութեան՝ ձայնը ուրիշին տալուն»: [ԿԱԶՄ· ԿԱՆՈՆՆԵՐ, ծրագիր 1906]:

(35) Միջնդեռ վահագն Տաթեւեան ներկայ է եւ խօսք կ'առնէ:

(36) Նեղիչ Թոփչեանի նախատեսութիւնը եւս իրականացաւ 1908ին, Օսմանեան Սահմանադրութեան յայտարարութեամբ: Գոլիսը դարձաւ ծանրութեան կեդրոն, ու հոն խուժեց նաեւ կովկասեայ դեկավարութիւնը:

(37) (Էջ 173, ա· սիւնակ· սխալմամբ եղած է 27).— Կ'ակնարկուի կովկասի ընկերվարական Դաշնակցութիւնը մայր կուսակցութենէն բաժնելու եւ անջատ կազմակերպութիւն յառաջացնելու մտքին, Թրխանայկական դասը ձգելով երկրի, Գոլոյ եւ գաղութներու Դաշնակցութեան·— միտք մը՝ որ 1905–1906 տարիներուն որոշ չափով հող գտած էր կովկասահայ կարգ մը ընկերներու մօտ: Տեսնել այս մասին Կովկասեան Խայռնական ժողովներու արձանագրութիւնները՝ ՆԻՒԹԵՐու բ· հատորին մէջ:

(38) Ահա եւ երրորդ ճիշդ նախատեսութիւնը (Ստեփանեան): Տարի մը հոմ պիտի հաչակուէր Օսմանեան Սահմանադրութիւնը:

(39) Կ'ակնարկուի անկասկած 1895–96ի ջարդերուն:

(40) Բաժանում չկայ:

(41) Տեսնել ՆԻՒԹԵՐ, բ· հտր·, էջ 322:

(42) Արձանագրութեանց մէջ չկայ որեւէ յիշատակութիւն, թէ Ռուբինեան ե՞րբ եւ ի՞նչ հանգամանքով եկած է ժողովին: Ամենայն հաւանականութեամբ, ան եւ Թորգոմը ցուցականի հարցը բննող յանձնաժողովին կողմէ են կանչուած, վկայութեան համար, իրրեւ անդամ ցուցական Մարմնի: Առաջին անգամ է որ, այստեղ, կը հանդիպինք Ռուբինեանի անուան:

(43) Եղիշէ Թոփչեան կ'ակնարկէ Միհրանականներուն:

(44) Կ'ենթադրենք թէ պէտք է ըլլայ Լեռնապարի:

(45) Երկու կամ աւելի բառեր կը պակսին (գրուած՝ կիտաւոր):

(46) Պէտք է ըլլայ՝ Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմին, որու Ֆիլիպէի ժողովն էր, 1901ի գարնան, Փոքորիկի գործին սկիզբ տուողը: Դաշնակցութեան Խորհուրդը ստեղծուեցաւ 1904ին միայն, Սոֆիայի 3րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ, փոխարինելու համար ԴԿՆՄը:

(47) Ամենայն հաւանականութեամբ, կ'ակնարկուի Քրքս Ֆէնեկրճեանին:

(48) Վռամշապուհ (Վռամ) Քէմտիրճեանը, զոհ գացած Սոֆիայի ռումբի փորձին, Քրիստափորի հետ:

(49) Քրիստափորը, Երկաթը, կայծակ–վաղարշակը եւ Ֆլէնեան Ցովհաննէսեանը (Զաք–ապա): Տեսնել ՆԻՒԹԵՐ, բ· հտր·, էջ 107:

ՄԱՆՕԹ·— (40)ը կը վերաբերի 70–71րդ, ապա նաեւ 87–88–89–90–91–92րդ եւ 93–95–97–98րդ նիստերուն, որոնց արձանագրութիւնները տրուած են հաւաքական ձեւով, առանց նիստ առ նիստ բաժանման: Ծանօթագրութեան թիւը թիւրիմացաբար աւելցուած չէ:

Բ. — ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(1907 Մայիս 20)

Իր 117–118րդ նիստին, Ընդհանուր ժողովը ընտրած է ԻՆՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ մը (տեսնել էջ 285), Ծրագրի, կազմակերպական կանոններու եւ Ընդհ. ժողովի բանաձեւ–որոշումներու վերջնական խմբագրութեան, ինչպէս նաեւ առկախ մնացած կարգ մը հարցերու լուծում տալու պարտականութեամբ: Ընդհանուր ժողովի ատենագրութենց կցուած է ԻՆՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎի ներկայ ամփոփ արձանագրութիւնը, հաւանաբար Ա. Վռամեանի ձեռագրով, եւ ստորագրուած՝ Մ. ԵՐԵՐԵԱՆ (Հ. Օհանջանեան), Ե. ԹՈՓՋԵԱՆ, Ա. ՇԱՀԵՒՈՒՆԵԱՆ, ԳԱԳԻԿ (Ստ. Տէր Մկրտչեան), ՌՈՍՏՈՄ, Ա. Վ. ՌԱՄԵԱՆ, Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ (Ակնունի), Ս. ՕՀԱՆԵԱՆ (Անտոն, Ս. Զաւարեան) եւ Ս. ՄԻՆԱՍԵԱՆ. նաեւ՝ փոխանցում ՌԱՐՍԵՂԵԱՆ: Միեւնոյն ձեռագրով, կցուած է նաեւ ցուցականի մասին տրուած ամբողջական որոշումը:

Ընդհ. ժողովից ընտրուած եւ լիազօրութիւն ստացած կարգաւորելու այն խնդիրները, որոնք յիշատակուած են ժողովի ատենագրութիւններուն մէջ, ինչպէս եւ միւս յարակից խնդիրները, Իննի Ցանձնաժողովը վերջացրեց հետեւեալ աշխատանքները եւ կայացրեց հետեւեալ որոշումները.

1.— Վերջնականապէս խմբագրեց եւ տպագրութեան յանձնեց Դաշնակցութեան «Կանոնագիրը»:

2.— Լրացրեց եւ Դիւանի ստորագրութեամբ վաւերացրեց Ընդհ. ժողովի ատենագրութիւնները, որոնք պիտի մնան Արեւմտեան Բիւրոյի մէջ, եւ որոնց կարեւոր մասերը՝ խմբագրուած յոյս պիտի տեսնեն առանձին գրքոյկով:

3.— Մշակեց եւ լրացրեց Ընդհ. ժողովի որոշումբանաձեւերը, որոնք յոյս պիտի տեսնեն «Դրօշակ»ի մէջ եւ ապա մարմինների համար, զանազան յատկութիւններով:

4.— Որոշեց ձեռնարկել կովկասում հանգանակութիւն Մուշ–Սասունի օգտին, յանձնելով այդ գործը բժիշկ Զաւրեանին, Կ. Խտիսեանին եւ Արեւելեան Բիւրոյի անդամներէն մէկին:

5.— Կազմել Բեդերպուրկի մէջ մի ժամանակաւոր կոմիտէ, բաղկացած Դումայի դաշնակցական պատգամաւորներից, Արեւելեան Բիւրոյի անդամ Անտոնից [Զաւարեան] եւ Զաւրեանից, այնտեղի հետ կապուած գործերը կարգադրելու համար:

6.— Կցել «Կանոնագրին» մի վճռրիկ գլուխ, համաձայն Ընդհ. ժողովի ցանկութեան, վերաբերմամբ արհեստակցական եւ գիւղացիական միութիւններին եւ բաղաքական խմբերին:

7.— Ընդհ. ժողովը դասէի [թղթածրարի] մէջ եղած հարցերու եւ գանգատներու վերաբերմամբ, վրճռեց յայտնել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին, ընթացք տալու համաձայն այն որոշման՝ որ կայացրել է Իննի Ցանձնաժողովը (տես՝ այդ մասին կայացրած որոշումները պարունակող տետրակը: Հարցերը թուով 22 են):

8.— Համաձայն Ընդհ. ժողովի տուած որոշման, Իննի Ցանձնաժողովը մշակեց եւ ընդունեց հետեւեալը.

I.— *Հայ–Թրքական ընդհարումներ*

Քննութեան առնելով կովկասեան մարմինների մանրամասն զեկուցումները հայ–թրքական ընդհարումների մասին, որոնք սպրմկեցին ամբողջ Անդրկովկասը 1905, 1906 թուականներին, Դաշնակցութեան Ընդհ. ժողովը, լեցուած խորագոյն վշտով երկու հարեւան ժողովուրդները կործանող այդ իրողութեան հանդէպ, եւ նկատելով որ՝

1.— Այդ բշնամութիւնը զգալապէս վնասում է ընդհանուր յեղափոխութեան գործին,

2.— Որ ցարական կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ հրաժարուել իր պատակտող բաղաքականութիւնից,

3.— Որ թուրք անգիտակից ամբոխը հարստահարող բէգութիւնն ու հոգեւորականութիւնը, մերթ ընդ մերթ շահերից դրդուած, մերթ արտաքին բաղաքական պրոպագանդի ազդեցութեան տակ, շարունակում է շահագործել մասսաների տգիտութիւնն ու հակահայկական տրամադրութիւնները,

Որոշեց՝

ա) Ցանձնարարել Դաշնակցութեան բոլոր մարմիններին՝ համերաշխութեան ընդհանուր եւ զօրեղ պրոպագանդ մղել, գրաւոր եւ բանաւոր, ոչ միայն հայ այլեւ թուրք ժողովուրդի համար:

բ) Ջանք չխնայել առաջ բերելու, ուղղակի կամ թուրք մտաւորականութեան միջոցով, յեղափոխական կազմակերպութիւններ մեր հարեւան ժողովրդի շարքերում, իրրեւ լաւագոյն միջոց՝ խլելու անգիտակից մասսաները մոլորեցնող թուրք տարրերի ազդեցութիւնից:

գ) Խստօրէն հալածել հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ այն տարրերին, օրգանները ու անհատները, որոնք խօսքով թէ գործով, յանախ անգիտակցաբար, գրգռում են փոխադարձ ատելութիւններ եւ ատիք տալիս բշնամութեան վերսկսման:

դ) Աջակցել այն թուրք կազմակերպութիւններին, հրատարակութիւններին եւ անհատներին, որոնք ծառայում են երկու ժողովուրդների համերաշխութեան եւ մերձեցմանը:

ե) Ցեղափոխական կապեր հաստատել հայ եւ թուրք աշխատաւորների մէջ՝ բաղաքներում, եւ գիւղացիութեան մէջ՝ գիւղերում, միացած ուժով կռիւ մղելու այն բաղաքական եւ տնտեսական գործօնների դէմ, որոնք կասեցնում են երկու ժողովուրդների բաղաքական–տնտեսական ազատագրութիւնը:

Այս յանձնարարման հետ միասին՝ Ընդհանուր ժողովը ջերմ յոյս է տածում, որ հակառակ ընթացիկ դժուարութիւնների եւ լայնատարած յոռետեսութեան, այսօրուայ ատելութիւնն ու պատակտումը կ'ընկճուեն եւ տեղի կը տան միջազգային այն համերաշխութեան, որը պիտի լինի ամենազօրեղ պատուանդանը մեր ապագայ կռուի ու երկու ժողովուրդների յեղափոխական յաղթանակի:

II.— *Գործակցութիւն սոցիալիստ կուսակցութիւնների հետ*

Անհրաժեշտ համարելով, մանաւանդ ներկայ բաղաքական մոմենտում, յեղափոխական տարրերի միութիւնը ընդդէմ բռնակալական կարգերի, ժողովը յանձնարարում է իր կովկասեան մարմիններին՝ աշխատել գործակցութիւն առաջ բերելու սոցիալիստական–յեղափոխական այն կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների միջեւ, որոնք իրանց դառնաճաճով ու գործելակերպով մօտ են Հ. Յ. Դաշնակցութեան, այսինքն,

1.— Ընդունում են աշխատաւորական հայեցակէտը եւ իրրեւ գործունէութեան չեզակէտ՝ իրրեւ այլ աշխատաւորների՝ նաեւ գիւղացիութիւնը:

2.— Զգտում են ազգային հարցը լուծել ամենալայն ֆետերացիայի միջոցով:

Այդ գործակցութեան նշանաբանն է լինելու, պաշտպանել համայն Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի շահերը թէ՛ պետական դումայում եւ թէ ընթացիկ կեանքում:

Այդ տեսակ գործունէութիւնը օր առաջ իրականանալի դարձնելու նպատակով, ժողովը հրաւիրում է իր պատշաճ մարմիններին ձգտել միջկուսակցական մի մճայուն մարմին կազմակերպելու, իրրեւ շաղկապող օղակ յիշեալ աշխատաւորական տարրերի միջեւ:

III.— *Գործակցութիւն վրացիների հետ*

Խորապէս կողմնակից հայերի եւ վրացիների բաղաքական ներդաշնակ գործակցութեան, Դաշնակցութեան Ընդհ. ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին եւ ընկերներին, իրանց յեղափոխական գործողութիւնների, ինչպէս եւ գրաւոր եւ բերանացի պրոպագանդի ընթացքում, երբեք չմոռանալ այն սերտ կապը, որ պիտի լինի վրացի եւ հայ աշխատաւորների միջեւ, հանդէպ բաղաքական եւ տնտեսական կռուի՝ որով բռնկուած է Անդրկովկասը:

Կապուած միմեանց հետ հայրենիքով, բաղաքական եւ տնտեսական շահերով, նոյնի'սկ կռուի տակտիկով, երկու ժողովուրդները պէտք է գործեն ձեռք ձեռքի տուած, ներշնչուած նոյն տեսիլով, եւ հետեւաբար, փոխադարձ անհամաձայնութեան եւ գժտութեան ամենափոքրագոյն նշանն անգամ պիտի նկատուի բաղաքական մեծ սխալ երկու ժողովուրդների համար:

Դրդուած այս տեսակէտներից, Ընդհ. ժողովը բեւեռում է դաշնակցական դեկավար մարմիններին՝ ամենամօտիկ կապեր հաստատել եւ, ի հարկին, ձեռնարկներ անել վրաց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնների հետ, դուրս չգալով, հարկաւ, մեր Ծրագրի եւ տակտիկի սահմաններից:

Շեշտելով իր այդ անվերապահ ցանկութիւնը, Դաշնակցութեան Ընդհ. ժողովը ստիպուած է, անկեղծ ցաւով, մատնանշել ընդ այն փաստը, որ վրաց մէջ գործող կուսակցութիւններից ամենախոշորը, ռուսական սոցիալ–դեմոկրատիայի կովկասեան բաժինը, հակառակ այն վարդապետութեան ոգուն որու դրօշակիրն է ուզում ներկայանալ, իր գործելակերպով, որ հեռու է շիտակութիւնից, եւ իր պրոպագանդի ձեւով, որ յանախ շովինիզմի կնիքն է կրում, փոխանակ ընդպատելու երկու ժողովուրդների բաղաքական համերաշխ գործակցութեան, սերմանում է անօգուտ գրգռումն, անվստահութիւն եւ նոյնիսկ բշնամանք:

Առանց հետեւելու կովկասեան սոցիալ–դեմոկրատների գործելակերպին եւ շեղուելու բաղաքական շիտակ պայմարի շաւղից, Դաշնակցութեան բոլոր մարմինները հրաւիրում են՝ մերկացնելով հանդերձ սոցիալ–դեմոկրատական գործելակերպի սխալ ոգեղութիւնը, անսասան եւ անշողոքոջ առաջ տանել երկու դրկից ժողովուրդների ներդաշնակ գործակցութեան աշխա-

տանիքը, միշտ հաւատարիմ սոցիալիզմի եւ համերաշխութեան հիմնական պահանջներին:

IV.— *Դժգոհութիւններ եւ բողոքներ*

Մանրամասն բննութեան առնելով դժգոհութիւնների եւ բողոքների այն փաստերը, որոնք արձանագրուած են տեղեկագրերի ու անհատական դիմումների մէջ, Ընդհ. ժողովը, ամէն մի կարեւոր դէպքի համար յատուկ կարգադրութիւն անելով, միաժամանակ որոշեց.

1.— Յանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին հաղորդելու ի գիտութիւն իրանց շրջանի համարակութեան, որ ոչ մի զեղծում, բռնութիւն եւ անկանոնութիւն, կատարուած անհատների եւ խմբերի կողմից, չի մնայ առանց անկողմնապահ բննութեան եւ խիստ պատժի:

2.— Դիւրութիւն տալ, որ ամէն ոք, կուսակցական թէ անկուսակցական, հնարաւորութիւն ունենայ կազմակերպութեան ղեկավարող մարմինների գիտութեան հասցնելու ժողովրդի մէջ եղած զանգատներն ու բողոքները:

3.— Յանձնել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին, իւրաքանչիւրին իր Ընդհ. ժողովի որոշումներին ճիշդ գործադրութեան վրայ հսկող օրկաններ, պատասխանատուութեան կանչել այն բոլոր դաշնակցականներին — գինուոր, պրոպագանդիստ, հայդուկ, կազմակերպող — որոնք իրենց ֆայլերով արդար բողոքի առիթ են տալիս, ինչպէս եւ այն մարմիններին որոնք վարագուրում են այդ տեսակ ֆայլերը կամ թերացում են պատժելու նրանց հեղինակներին:

Ընդհ. ժողովը լիայոյս է որ իր այս հրահանգի ճիշդ կիրառութեամբ կարելի պիտի լինի արմատախիլ անել կուսակցութեան անուան հետ, յաճախ անհիմն կերպով, կապուող զեղծումները եւ ներշնչել հայ ժողովրդի բոլոր խաւերին այն գիտակից վստահութիւնը՝ որ միշտ վայելեր էր Դաշնակցութիւնը, ոչ միայն կռռմնակիցների այլեւ ազնիւ հակառակորդների կողմից:

V.— *Գաղութներ*

Ընդհ. ժողովը բննելով Բալքանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Գարսկաստանի եւ հարաւային Ռուսաստանի գաղութների մասին ներկայացրած զեկուցումները, յանձնարարում է իր այնտեղի մարմիններին,

1.— կազմակերպական – դրամական աշխատանքներին կից, հիմնադրել մի լայն պրոպագանդ, գրաւոր եւ բերանացի, նպատակ ունենալով տարածել մեր ծրագրի սկզբունքները եւ սերտիւ կապել գաղութները յեղափոխական գործին հետ:

2.— Ոչ մի ջանք չխնայել՝ յարաբերութեան մէջ դնելու հայ գաղութները տեղական աշխատաւորական շրջանների եւ սոցիալիստական կազմակերպութիւնների հետ, իբրեւ մի ցանկալի մեթոտ՝ փոխադարձ հասկերաշխութիւնը զօրացնելու համար:

3.— Տեղական օտար մամուլի մէջ պրոպագանդ մղել յօգուտ հայ ժողովրդի դատի, ինչպէս եւ այն քաղաքական նպատակի, որին ձգտում է Դաշնակցութիւնը:

1.— Ինքի ցանկաժողովը մշակեց եւ խմբագրեց Դաշնակցութեան Ծրագիրը, համաձայն Ընդհ. ժողովի տուած բանաձեւերի եւ ցուցմունքների, եւ յանձնեց Արեւմտեան Բիւրոյին՝ տպագրելու եւ մարմիններուն տարածելու:

2.— Հաստատեց Ցուցական Մարմնի վերաբերեալ պատճառաբանուած բանաձեւը, որ կցուած է ներկայ արձանագրութեան:

3.— Մնացած մանր խնդիրների կարգադրութիւնը յանձնեց երկու Բիւրոներին, եւ

4.— Որոշեց Ընդհ. ժողովի բոլոր թղթերը յանձնել Արեւմտեան Բիւրոյի արխիւին:

ՌՈՍՏՈՄ
ՄՀԵՐԵԱՆ — Ս. ՕՀ. (ԱՆՏՈՆ)
Ե. ԹՈՓՉԵԱՆ — Ա. ՎՌԱՄԵԱՆ
Ա. ՇԱՀԱԹՈՒՆԵԱՆ — Ս. ՄԻՆԱՍԵԱՆ
ԳԱԳԻԿ — Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
Կանդիդատ՝ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՈՐՈՇՈՒՄԸ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

Ժողովը նկատի առնելով Ցուցական Մարմնի տեղեկագիրը, Քննիչ Յանձնախումբի զեկուցագիրը, իր բոլոր յարակից տոհիւմաններով, ինչպէս նաեւ Սոփոյի պատասխան–զեկուցումը Յանձնախմբի եզրակացութիւններուն, եւ նոյն Մարմնի երեք անդամներու՝ Սոփոյի, Թորգոմի եւ Ռուբինայի բերանացի յայտարարութիւնները, որոշեց.

Չծանրանալով «Զեռնարկին» արհեստագիտական (տեխնիքական) կողմի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, քննութեան առնել Ցուցական Մարմնի գործունէութիւնը՝ կազմակերպական եւ ընկերաքարոյական կրկնակ տեսակէտներով. ուստի

1.— Նկատելով որ Ցուցական Մարմնի անդամները էլլէնի մահէն ետք, «Զեռնարկի» պատրաստութեան վերաբերեալ իրենց բոլոր խորհուրդներու եւ անոնց կիրառութեան մէջ, փոխանակ ամէն հնարաւոր միջոց ձեռք առնելու, «Զեռնարկին» յաջողութեան հաւանականութիւնները բազմապատկելու, — ընդհակառակն, տարաձերժ մտահոգութիւնը ունեցած են, ամէն բանէ առաջ, իրենց անձերու փրկութիւնը ապահովել, խուսափելով իրենց ստանձնած մեծ պատասխանատուութենէն.

2.— Նկատելով որ լոկ իրենց գլուխն ազատելու այդ սեւեռուն գաղափարէն մղուած, Ցուցական Մարմնի անդամները գիտակից անհոգութեամբ մը թերացեր են ուշադրութեան առնելու եւ ըստ այնմ կանխել կամ մեղմել փորձելու այն վտանգները, որոնք կը սպառնային նաեւ նոյն վայրը գործող օժանդակ ընկերութիւնին, ընկերներ, որոնք դատապարտուեցան մահուան ու երկարատեւ բանտարկութեան պատիժներու.

3.— Նկատելով որ Ցուցական Մարմինը իր ընկերական յարաբերութիւններուն մէջ ընդհանրապէս այլանդակ վարմունք մը ցուցադրած է, եւ ինչ որ մասնաւորապէս եզական է դաշնակցական տարեգրութիւններուն մէջ՝ այն վրդովիչ ընթացքն է, որով այդ մարմինը հետամուտ եղած է, թէ գրաւոր կերպով (գոլսի տեսնագրութեան մէջ) եւ թէ բերանացի տարաձայնութիւններով, արատաւորել թանկագին յիշատակը պարտականութեան դաշտին վրայ ինկած մեր անմոռանալի ընկ. էլլէնին, Սոֆիայի դժբախտ արկածը ներկայացընելով իբր դաւ մը նիւթուած էլլէնի կողմէ Շապուհի դէմ.

Այս բոլոր նկատումներուն վրայ, ժողովը լուսաբանուած համարեց Ցուցական Մարմնի ծանր թերացումը ընկերական պարտականութիւններու մէջ եւ անոր պատասխանատուութիւնը «Զեռնարկի» անյաջողութեան մէջ, այն չափով որ այդ արդիւնք էր այդ մարմնի անդամներու անձնուիրութեան պակասին, ու պէտք չտեսաւ անդրագոյն քննութեան եւ դատի:

Միեւնոյն ատեն, ժողովը աներկդիմի կերպով ապացուցուած գտնելով որ Սափոն եղած է ղեկավարը, էլլէնի մահէն ետք, Ցուցական Մարմնի գործերուն, պատրաստողը՝ այդ մարմնի անունով կազմած տոհիւմաններուն, հեղինակը՝ էլլէնի եւ Շապուհի մահուան շուրջը կուտակուած կասկածներուն եւ զրպարտութեանց, եւ գլխաւոր ստեղծիչը այդ մարմնի շուրջը տիրող անբարոյական հեղձուցիչ մթնոլորտին, որոշեց նկատել վերոյիշեալ Սափոն իբր գլխաւոր պատասխանատուն եւ յանցաւորը Ցուցական Մարմնի գործունէութեան մէջ, եւ ըստ այնմ՝

1.— Ցուցական Մարմնի անդամ Սափոն ի սպառ արտաբսել Հ. Յ. Դաշնակցութենէն եւ այդ մասին յայտարարել պաշտօնական օրգանին մէջ:

2.— Ցուցական Մարմնի անդամ Աշոտ, Թորգոմ եւ Գրիս հեռացած նկատել կազմակերպութենէն, յայտնելով այդ մասին կազմակերպական ճամբով դաշնակցականներուն, եւ տալ անոնց իրաւունք ներկայացնել Դաշն. Խորհուրդին մեղմացուցիչ բացատրութիւններ եւ իրենց անկեղծ զղջման ապացոյցները: Խորհուրդին լիազօրութիւն կը տրուի ըստ այնմ փոխել այս որոշումը՝ եթէ հնարաւոր տեսնէ:

3.— Ցուցական Մարմնի անդամ Ռուբինային գալով, ժողովը չգտաւ որեւէ հիմք նոյն պատասխանատուութեան ենթարկելու, առաւել եւս որ Ռուբինան արդէն իսկ իր պարտաճանաչութեան բարձրութեան վրայ գտնուած էր:

Գ. — ՁՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԳՐՔՈՅԿԸ

Ընդհանուր ժողովի եւ Ի-ԿԻ ցանկաժողովի աշխատանքներու ուսումնասիրութեան համար, Ազիւմտեան Բիւրոն հրատարակեց «ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՁՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ (Հաղուածքներ)» գրքոյկը, տրամադրելի դաշնակցական մարմիններուն միայն: Գրքոյկի բովանդակութիւնը կու տանք ստորեւ, քէնէ որոշումներու եւ հուէարկուած բանաձեւերու ամբողջութիւնը, ցրուած, կը գտնենք նաեւ տեղեկագրութեանց մէջ (Ա. եւ Բ. բաժինները): կատարուած յապաւումներու ծանօթացումն իսկ (գրքոյկի կիսուռը մասեր) ունի իր շահեկանութիւնը: Իրքեւ յանելուած, կու տանք նաեւ յուսապատճէնը 1907 տարուան նախահաշուին, առանձին թուղթի վրայ հրատարակուած Ազիւմտեան Բիւրոյին կողմէ, 1907 Ցունիսին (տեսնել նաեւ տեղեկագրութիւնները՝ էջ 276):

Ստորեւ՝ Որոշումներու Գրքոյկի Ա· էջի պատճէնը·

ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՁՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

(Հատուածքներ)

1907
ԺՈՂՈՎ

Դաշնակցութիւն
ՏԳԱՐԱՆ

ՁՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

(1907)

Մոայլ, յոռետես մտքեր ներշնչող պարագաների տակ գումարուեց Դաշնակցութեան կուսակցաժողովը: — Հազիւ անցած արիւնոտ կռուի ճամբան, ռազմադաշտից նոր դարձած զօրագնդի հոգսերը ճակատին, յաղթական՝ բայց տրտում — յաղթուողը իր անգիտակից հարեւանն էր — կանգնած անորոշ ապագայի հանդէպ, կուսակցութեան դերադոյն ժողովը զգում էր իրեն նոր եւ խոշոր պատասխանատուութեան առջեւ, բարդ եւ վտանգաւոր կռիւների հանդէպ — կռիւ արտաքին թշնամիների դէմ, որոնց յաղթահարելը իր տեսնչն էր ու նպատակը, կռիւ ներքին պառակտող տարրերի դէմ, որոնց սանձելը իր վիշտն էր եւ ուժերի վատնումը...

Այդ մի կողմից: Իսկ միւս կողմից՝ մի տարտամ Դուման, «Քերխաչ» ծնունդը յեղափոխական հսկայական երկունքի, քաղաքացիական ներքին ընդհարումներ, թշնամութիւն երէկեան մարտակից բանակների միջեւ, բռնապետութեան նոր գրոհ, անորոշութիւն վաղուան համար. իսկ սահմանի միւս կողմը՝ սովալլուկ հատուածներ արիւնաքամ ժողովրդի, դատարկուող գիւղեր, յեղափոխական մարտիկների հալածանք եւ բանտարկութիւն, եւ կեդրոնում՝ նոյն ոճրագործը, դեռ կենդանի, դեռ յղացող մեծագոյն աղէտների, որոնց սոսկաբեր դառնութիւնը ճաշակեցինք, բայց վախճանը չտեսանք:

Ընդհանուր ժողովի բացումն ու կազմն իսկ կրում էր աղետաւոր վիճակի դրոշմը — շատ ընկերներ, որոնք անցեալ Ընդհանուր ժողովից ճամբայ ելան, յեղափոխականի ցուլը ձեռքին, նուիրուելու սիրած ժողովրդին եւ սիրած գաղափարին, այլեւս յետ չեկան: Զոհուած են նրանք... Միւսները թէեւ կենդանի, բայց կապուած իրենց վայրին ու գործին, անկարող էին յեղափոխական ժամադրավայրին գալու: Տխրաշունչ լուրերն ու նամակները, օրը օրին, նոր բօթեր էին բերում եւ չտապեցնում գործող-ընկերների դարձն ու մեկնումը, ժողովի փակումն եւ վերջաբանը: Մարտական հաւատների ժողով չէր այն, այլ մօտալուտ կռուի համար սպառազինուողների մի գումարտակ, բաժանուած կռուի յատակագծով, տակտիքով, նոյնիսկ ծրագրով...

Ու հակառակ այդ չարագուշակ, ճնշող պարագաների, կազմակերպութիւնը դարձեալ մի անգամ ցոյց տուեց, որ հզօր ստորգ աստղի տակ է ծնուել», գիտէ անարատ պահել 17ամեայ դրօշակը, եւ գաղափարի ուժով յաղթահարել այն բոլոր կրքերը, որոնք չեն ստեղծագործում, այլ միայն աւերում են ու պառակտում...

Ժողովի պարապմունքների արդիւնքն եւ հիմնական որոշումները՝ դրա խոսափուսիչ ապացոյցներն են:

1· *Անջատման ծրագիրը, որ մի քանի ժամանակից ի վեր դարձել էր խլրտումների եւ նոյնիսկ կռիւների պատճառ, կուսակցաժողովը յետ մղեց մի ոգեւորիչ ժեստով, համարեա միաձայն: Նա որոշեց իր անցեալին եւ ուժին վայել վճռականութեամբ՝ երկու դատերն էլ՝ Թիւրքահայ եւ Կովկասեան՝ առաջ մղել Դաշնակցութեան դրօշակի տակ, չաղկապուած եւ միացած:*

2· *Կովկասեան գործունէութեան նախագիծը, որ 1905ի Նոյեմբերից ի վեր, հանդիսանում է իրրեւ մի քաղաքական կուսակցութեան չարքերում եւ այդ չարքերից դուրս, եւ իր պարունակած սկզբունքներով մեր չարքերը ոգեւորելու փոխարէն, մի անըմբռնելի թիւրիմացութեամբ ամենատխուր ընդհարումների եւ պառակտումների պատրուակ եղաւ — ընդունուեց, վաւերացուեց, թէ ըստ իրաւասութեան, եւ թէ ըստ էութեան, եւ դարձաւ այն հիմնաքարերից մէկը, որի վրայ պէտք է յենուի Դաշնակցութեան սոցիալիստական գործունէութիւնը Անդրկովկասեան հայ ժողովրդի մէջ: Այդ հարցի լուծումը, որ պահանջեց ուժերի լարումն, երկար ժամանակ, մեծ աշխատանք եւ մտքերի լայն փոխանակութիւն — ներկայ ժողովի ամենադրական արդիւնքներից մէկն է, արժանի յատուկ յիշատակութեան:*

3· *Սոցիալիստական ծրագրի հիմնական սկզբունքների վաւերացումը, իրրեւ տրամաբանական չարունակութիւն նախորդ որոշման, պիտի համարուի Չորրորդ Ընդհանուր ժողովի մտածողութեան եւ աշխատանքների պսակը: Հիմնուած իր ընդհանուր Ծրագրի վրայ, եւ ուշադիր քաղաքական-տնտեսական կեանքի պահանջներին, որոնք հրապարակ են եկել վերջին 15 տարուայ ընթացքում, կազմակերպութեան ղեկավար մարմինը վճռեց՝ յայտարարել Դաշնակցութիւնը իրրեւ հայ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւն, որ ձգտում է քաղաքականապէս եւ տնտեսապէս կազմակերպել նրան, պաշտպանել նրա տնտեսական-դասակարգային եւ քաղաքական-ազգային իրաւունքները, նպատակ ունենալով՝ միւս աշխատաւորների հետ միասին, ձեռք ձգել կառավարութեան ղեկը, եւ այժմեան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ եւ համայնական կարգերով: Ժողովը ընդունեց եւ վաւերացրեց սոցիալիստական ծրագիրը եւ յեղափոխական տակտիքը: Ահա այդ Ծրագիրը, հիմնաւորուած Ընդհանուր ժողովի մէջ, պիտի լոյս տեսնի մօտակայում եւ պիտի հանդիսանայ իրրեւ ուղեցոյց մեր գործունէութեան, պրոպագանդի եւ ձեռնարկների, իրրեւ յենարան կուսակցութեան աշխատանքների եւ մտածողութեան: — Իր այդ կարեւոր ո-*

բոլման վերջնական ամբողջացումն տալու համար, ժողովը միաձայն որոշեց՝ յարել Միջազգային սոցիալիստական բանակին եւ յարաբերութեան մէջ մտնելով Բրիւքսէլի Սոցիալիստական Բիւրոյի հետ՝ ապահովել Դաշնակցութեան մասնակցութիւնը թէ՛ այդ Բիւրոյի եւ թէ Միջազգային սոցիալիստական կոնգրէսների մէջ։

4· Տակտիքը, *որով պիտի ձգտենք մեր նպատակների իրագործման, գերազանցապէս յեղափոխական է։ Այդ կողմից Դաշնակցութիւնը, թէ՛ Ռուսաստանի բազմաթիւ եւ թէ Թուրքիայի փոքրաթիւ կազմակերպութիւնների շարքում գրաւում է բացառիկ դիրք։ Չխորչելով այն ռեֆորմներից, որոնց ընթացիկ իրագործումը հասարակական-կուլտուրական այլեւայլ ասպարէզներում պահանջւում է աշխատաւոր մասսաների անյետաձգելի շահերի տեսակէտից, կուսակցութիւնը ինչպէս անցեալում, նոյնպէս եւ ապագայում մնալու է յեղափոխական, այս բառի ամենախիստ իմաստով։ Ճեղափոխական տակտիքի արտայայտութիւնները — ընդհանուր ապստամբութիւն, զինուած դիմադրութիւն կառավարութեան ուժերին, քաղաքական լայն տեսոր, ցուցական-յեղափոխական ձեռնարկներ, ժողովրդական զինուած ինքնապաշտպանութիւն, քաղաքական եւ տնտեսական գործադուլներ, գիւղացիական եւ բանուորական շարժումներ — այդ բոլորը մանրամասն մշակուած եւ չաղկապուած պիտի կազմեն գործելակերպի այն ամբողջական սիստեմը, որով կուսակցութիւնը պիտի իրականացնէ իր ծրագիրը կեանքի մէջ։*

5· Համերաշխութեան սկզբունքը, *լայնօրէն եւ համերաշխ ձեռնարկների վերածուած, կազմելու է Դաշնակցութեան գործելակերպի էական եւ առանձնապէս շեշտուած կողմը։ Այն, ինչ այժմ տեղեկանք էր, հիմա պիտի մարմնանայ եւ դառնայ իրականութիւն։ Եւ կազմակերպութեան Ընդհանուր Ժողովը յատկապէս շեշտեց այդ ուղղութեան քաղաքական խոշոր կարեւորութիւնը կովկասում եւ մանաւանդ Թուրքիայում, ուր դրկից ազգերի եւ համայնքների փոխադարձ անտարբերութիւնը կազմում է տիրող ուժերի յաղթողութեան գերազանց հիմնաքարը։ Համերաշխութիւն հակակառավարական ցոյցերի ժամանակ, չաղկապումն ըմբոստացող ուժերի՝ առանց կրօնի եւ ազգի խորութեան, միացած, միջազգային հողի վրայ դրած պահանջներ, գործադուլներ բոլոր ազգերին պատկանող բանուորների, գիւղացիական միութիւններ տարբեր կրօնների պատկանող համայնքների միջեւ եւ ուրիշ չատ ձեռնարկներ — ահա համերաշխ գործակցութեան արտայայտութիւնները, որոնց համար կուսակցութիւնը չի խնայելու ո՛չ կենդանի ոյժեր, ո՛չ դրամ եւ ոչ պրոպագանդ։ Հաւատացած ենք բոլոր ազգերի, միացէք — ահա՛ նշանաբանը։ Սեպարատիստական ոչ մի ձգտումն, ոչ մի դէմ համերաշխութեան դէմ — ահա Ընդհանուր Ժողովի անկեղծ եւ ընդգծուած հայեցակէտը։*

Բարդ ծրագիր, խոշոր աշխատանք, անսովոր եռանդ եւ ղեկավարութիւն պահանջող ձեռնարկներ, եւ այդ՝ այնպիսի երկիրների մէջ, ուր բռնապետութեան անսովոր ամբարտաւանութիւնը եւ չահերի հակոտնեայ դասաւորումը աւելի քան դժուարացնում է կազմակերպութեան անցնելիք ուղին։ Ահա թէ ինչու անհրաժեշտ են դաղափարի եւ կազմակերպութեան նուիրուած մարտիկներ, հերոսների խմբեր, անձնուէր դրօչակակիրներ, որոնք կարող լինեն մի կողմից սրտապնդել լքուող չարքերը, հաւատ ներշնչել քերահաւատ ամբոխին, եւ միւս կողմից՝ անդադրում եւ անհատնում ոյժով չարունակել սկսուած կռիւը, որ գուցէ նոյնքան երկար ապադայ ունի, որքան եւ երկար անցեալ։ Տատանուողների, երկդիմի ուժերի ասպարէզ չէ այդ։ Եւ ոչ էլ վայր՝ զբաղուելու ներքին պատակտումներով, փոխադարձ վարկաբեկման անօգուտ աշխատանքով, յեղափոխութեան անունը մրոտող ներքին կռիւներով։

Զտուած շարքեր, համոզուած զինուորներ, զոհաբերութեան պատրաստ մարտիկներ՝ ներշնչուած նոյն ծրագրով, սրտապնդուած միեւնոյն տակտիքով — ահա կազմակերպութեան պահանջը։ Եւ ներչնչուած այդ գիտակցութեամբ, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը՝ խստագոյն պատասխանատուութեան կանչելով այն բոլորին, դինուոր թէ կազմակերպող, անհատ թէ մարմին, որոնք վարկաբեկեցին կուսակցութիւնը իրենց ղեղծումներով, բռնութեամբ եւ արագ քայլերով, հրահանգում է բոլոր մարմիններին, աւելի քան երբեւիցէ, խիստ լինել, վանել չարքերից այն բոլորին, որոնք իրենց «համոզմունքով ու հաւատով», իրենց բարոյական եւ յեղափոխական հակումներով չեն համապատասխանում այս դժուարին եւ բարդ գործի մեծ պահանջներին, որոնք փոխանակ բարձրացնելու հաւատը, պիտի թուլացնեն այդ, եւ պիտի սպառեն կուսակցութեան բարոյական դրամագլուխը, առանց մի բան տալու։ Ջոման, մաքրագործման, բարձրացման կրկնակի պահանջ է այդ, որի մասին բարձրաձայն յայտարարում է 1907ի Ընդհանուր Ժողովը չեչտակի կերպով, առանց որեւէ վերապահութեան...

Անգործ, պատակտող մարմինները պիտի կազմալուծուին· վարկաբեկ ընկերները պիտի հեռանան, կազմակերպութեան անունը չահագործողները պէտք է խստագոյն պատժի ենթարկուին — այդ է Ընդհանուր Ժողովի կամքն ու որոշումը, նրա բացարձակ հրամանը։

Դաշնակցական ընկերներ,

Ճակատագրական ենք մեզ անկասելի, կազմալուծումի եւ ծրագրային հակամարտութեան ուղու կանչը, Ընդհանուր Ժողովը աւետում է ձեզ մտայղ, յուսաբեկող մտքերի վանմանը եւ ակնթարթորէն մի նոր

չրջանի, որ դրոշմուած է մեր լաւ ոյժերի միութեամբ, ծրագրային համերաշխութեամբ եւ նոր ձեռնարկների որոշ յատակագծով։ Այդ նոր չրջանը պահանջում է նոր եռանդ, նոր թափ, ինչպէս եւ նոր տանջանք։

Ջնահանջենք տանջանքի առջեւ, որ մեր կուռ յատկանիշն է, երկարամեայ աղբիւրը մեր եռանդի եւ ջանքերի, ու արտապնդուած զալիք օրերով, առաջ մղենք յեղափոխական կռիւը, յանուն սոցիալիստական մեծ յաղթանակի։

Դէպի բարձր, դէպի աշխատանք, դէպի կռիւ։

«ԴՐՕՇԱԿ»

ԶՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Համաձայն Ընդհանուր Ժողովի կարգադրութեան՝ Ժողովի որոշումները բաժանուած են երեք կարգի՝

1) *Մի մասը ընդհանրութեան համար, որը հրատարակուեց «Դրօշակի» Մայիսի յատուկ համարում։*

2) *Միւս մասը Դաշնակցական Մարմինների համար, որը եւ ուղարկուում է կեդրոնական կոմիտէներին, տպագրուած առանձին տետրակով։*

3) *Երրորդ մասը յատուկ Մարմինների համար, որոնց եւ կը տեղեկագրուին նրանց վերաբերեալ զեղտների վճիռները, կազմակերպական ճանապարհով։*

Ընդհանուր Ժողովի վերաքննած, լրացրած եւ վերջացրած «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ», արդէն տպագրուեց եւ ուղարկուեց բոլոր Մարմիններին, առաջիկայում դրանով ղեկավարուելու համար։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1907, Մայիս·
ԺՔՆԻՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ (1)

Հ. Յ. Դաշնակցութեան Դ. Ընդհանուր Ժողովը բացուեցաւ Վիեննա, աւստրիական սոցիալիստական ընկերութեան սրահին մէջ, 1907 Թուի Փետրուար 22ին։

Ժողովին մասնակցելու հրաւիրուած էին, ըստ կանոնագրութեան, կազմակերպութեան հեռաւոյ մարմինները։

Դուբան–Բարձրաւանդակ	2	պատգամաւոր
Շամ	1	»
Շամի չրջան	1	»
Լեռնապար	1	»
Լեռնավայր	1	»
Արեւելեան Բիւրօ	1	»
Արեւմտեան Բիւրօ	1	»
Մրգաստանի կեդր· կոմիտէ	1	»
Ապառաժի » »	1	»
Այգեստանի » »	1	»
Քարի » »	1	»
Զրաբերդի » »	1	»
Մեծ Քաղաքի » »	1	»
Նաւահանգստի » »	1	»
Ոսկեձապատի » »	1	»
Թլատի » »	1	»
Նալբանդի » »	1	»
Վրէժի » »	1	»
Ամերիկայի » »	2	»
Բալկաներեան » »	2	»
Ցուցական Մարմին	1	»
Զիֆօն	1	»
Եւրոպայի Դաշն· ուսանողութիւն	1	»
Ռուսաստանի » »	1	»

Բացակայ էին՝

Շամի ներկայացուցիչը՝ հիւանդութեան պատճառով եւ Ոսկեհաճիի ներկայացուցիչը՝ որուն ճայնը, տեղական կոմիտէի որոշումով, տրուեցաւ Բալկանի ներկայացուցչին։

Հրաւիրուած էին՝

Զայնի իրաւունքով	6 հոգի
Խորհրդատու »	5 »

ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ (2)

(Առանց պատճառաբանութեան)

Ընդհանուր Ժողովը լսելով Դաշնակցութիւնը երկու հատուածների — կովկասեան եւ Թրքահայկական — բաժանելու մասին եղած զեկուցումները եւ այդ առթիւ ծագած վիճաբանութիւնները, որոշեց·

1) *Ճետ մղել անջատման առաջարկը·*

2) *Երկու գործունէութիւնն էլ վարել Հ· Յ· Դաշնակցութեան դրօշակի եւ ղեկավարութեան ներքոյ։*

(Պատճառաբանութեամբ)

Ընդհ. Ժողովը լսելով Դաշնակցութիւնը երկու հատուածների — կովկասեան եւ Թրքահայկական — բաժանելու մասին եղած զեկուցումները, ինչպէս նաեւ այդ առիթով ծագած վիճաբանութիւնները եւ նկատի ունենալով,

1) Որ հայ աշխատաւոր ժողովրդի այդ երկու հատուածների քաղաքական–տնտեսական կիւրը հիմնըւած է միեւնոյն Ծրագրի վրայ, վաւերացուած 1892ին եւ լրացուած Գ. Ընդհ. Ժողովի որոշումներով եւ 1905ի «Նախագծով»,

2) Որ Թրքահայկական եւ կովկասեան գործունէութիւնները, ինչպէս այդ չեչտուեց Ժողովի ընթացքում, ոչ միայն չեն վնասում այլեւ նպաստում են երկու երկիրների աշխատաւոր ժողովրդի շահերի յաղթանակին,

3) Որ Թրքահայ ժողովրդի չարժումը — որին կազմակերպութիւնը ծառայում է 17 տարիներից ի վեր, այժմ մանաւանդ, երբ Թրքական ռեժիմից դժգոհ տարրերը սկսել են չարժուել — պահանջում է համերաշխ գործունէութեան համար մեր յեղափոխական ուժերի կրկնակի լարումն ու չաղկապումը,

Որոշեց·

1) Ճետ մղել անջատման առաջարկը, իբրեւ մի տեսակէտ, որ չէ հիմնուած մեր աշխարհահայեացքի եւ գործունէութեան վրայ եւ չէ բխում կազմակերպութեան չրջանների որոշումներից (21 մարմիններից 20ը հակառակ անջատման, միայն մէկն է կողմնակից)։

2) Երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Ճ. Դ. դրօշակի եւ զեկավարութեան ներքոյ։

3) Հաւատարիմ մնալով կուսակցութեան Ծրագրին, վայրերի գործունէութիւնը առաջ տանել տակտիքի ուրոյն եղանակով, յարմարցրած տեղական հանգամանքներին եւ պայմաններին։

ՏԱԿՏԻՔԱՑԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ(3)

Ընդհանուր Ժողովը լսելով զեկուցումները ապստամբական ձեռնարկների մասին եւ մանրամասն քննութեան ենթարկելով չօչափած հարցը՝ կայացրեց հետեւեալ որոշումները·

1) . . . . . .

2) . . . . . .

3) Երկրում համապատասխան կազմակերպութիւններ առաջ բերել, զինել ժողովուրդը, առաջ բերել ռազմական ու կազմակերպիչ ուժեր, մեծ քանակութեամբ ռազմամթերք ու հարկաւոր դրամական օժանդակութիւն ուղարկել։

4) Գործունէութեան գլխաւոր վայրերում . . . . . առաջացնել կազմակերպութիւններ, սրանց չուրջը լայն ժողովրդական խաւեր համախմբելով, եւ յատուկ պատասխանատու մարմին՝ այդ ամբողջ վայրի համար, որ իր չրջանի բոլոր գործերի կարգադրողն ու պատասխանատուն է։

5) Ցանձնարարել նոյն մարմնին երկրի լայն ռազմական ուսումնասիրութիւն անել եւ պատրաստել ռազմական ծրագիրներ, այս կամ այն պատահականութեան համար։

6) Անակնկալ պատահարների դէպքում յիչեալ վայրերում պատասխանատու մարմինը կարող է դիմել ակտիւ ձեռնարկների, նախօրօք ստանալով Դաշնակցութեան Կորհուրդի համաձայնութիւնը։

ՏԵՌՈՐ(4)

Ընդհանուր Ժողովը լսելով տեռորի մասին եղած զեկուցումը եւ այդ առիթով տեղի ունեցած մանրամասն եւ բազմակողմանի վիճաբանութիւնը, որոշեց·

1) կազմակերպել քաղաքական սիստեմատիկ տեռոր՝ ուղղուած կառավարական կարեւոր ներկայացուցիչների . . . ընդունելով ներկայ պայմաններում նրա ունենալիք խոշոր հետեւանքները։

2) . . . . . .

3) Ընդունել գործունէութեան վայր . . . . .

4) Հաստատել «Տեռորական Գործօն Կոմիտէ» . .

5) Ընտրել մի նախապատրաստական կոմիտէ, բաղկացած երեք ընկերներից, այդ գործի բոլոր նախատապրաստութիւնները անելու եւ Գործօն Կոմիտէն ստեղծելու համար·

6) . . . . . .

. . . . . .

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ(5)
Թուրքիոյ հայաբնակ վայրերուն մէջ

Ժողովը լսելով ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման վերաբերեալ զեկուցումը եւ նկատի առնելով ինքնապաշտպանութեան մասնախմբի եզրակացութիւնները, որոշեց՝

Լուրջ հիմքերու վրայ դնել ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումը·· . . . հայաբնակ վայրերու մէջ, առաջնորդ ունենալով հետեւեալ չորս կէտերը·

1) Ինքնապաշտպանութեան խմբերը կը զինուին տեղական նիւթական միջոցներով։

ՅԱՆՕԹ·— Դաշնակցութիւնը կ'ընդունի պանդուխտ համագիւղացիներէ զինմամբ հիմնագումարի համար նուէրներ, որոնք կը գործադրուին երկրի պատկան մարմնի ձեռքով, ոչ բացառապէս նուիրատուներու գիւղին, այլ շրջանի գիւղախմբի համար։

2) Եթէ նոր կազմակերպուած մարմինները վստահութիւն ներչնչեն իրենց գործունէութեամբ եւ կազմի հաստատուն հանդամանքով, Դաշնակցութիւնը կըրնայ, եթէ պէտք տեսնէ, փոխ տալ չրջաբերութեան դրամ մը՝ զէնքի չուկայ ստեղծելու համար։

ՅԱՆՕԹ·— Դաշնակցութեան նախահաշուի մէջ կ'որոշուի այդ նպատակին յատկացեալ առաւելագոյն գումարի հանգէսը։

3) Ինքնապաշտպանութեան խմբերու ձեռք բերած զէնքերը կը համարուին համայնական սեփականութիւն, կը գտնուին Դաշնակցութեան կոնտրոլի տակ եւ կը գործադրուին միմիայն անոր հրահանգներով։

4) Զինման գործը պէտք է կատարուի աստիճանաբար, ինքնապաշտպանութեան խումբերու կազմութեան եւ անոնց զինուորական կրթութեան զարգացման զուգընթաց։

Երկրի կազմակերպուած վայրերէ դուրս եւս ինքնապաշտպանութեան գործի սիստեմ ստեղծելու նպատակով՝ որոշուեցաւ·

1) Ձեռնարկել կազմակերպելու այդ վայրերը· առեւտեան չրջանը Թողնելով Արեւմտեան Բիւրոյի Շրջանային Ժողովին, եւ Արեւելեանը՝ երկրի պատասխանատու մարմիններու եւ Արեւելեան Բիւրոյի համաձայն գործակցութեան։

2) Վերի յօդուածի մէջ յիչուած մարմիններու կը յանձնարարուի մշակել ընդհանուր կանոնագիր մը ինքնապաշտպանութեան խումբերու եւ ժողովրդի զինման մասին, անոր կիրառումը պարտաւորիչ ընելով բոլոր մարմիններուն համար։

ԱՐՇԱԻԱԽՄԲԵՐ(6)

Ժողովը քննելով արշաւախմբերի խնդիրը, յանգաւ հետեւեալ եզրակացութեան·

1) Ապագայում մեր մղելիք կռուի մէջ, այլեւայլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին՝ արշաւախմբերն եւս կարող են օգտակար լինել, երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ այդ խմբերը կը դարձընեն կռիւը աղդու, լայն եւ յարատեւ։

2) Միջոցներ ձեռք առնել՝ միլիցիայի սկզբունքով կամ այլ ձեւով, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբեր մարդել՝ ապագայ այդօրինակ գործողութիւնների համար։

ԿՈՎԿԱՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ(7)

Ընդհանուր Ժողովը, լսելով Կովկասի հայ ազգաբնակութեան ինքնապաշտպանութեան եւ զինման գործի մասին եղած զեկուցումները եւ վիճաբանութիւնները՝ յանգալ հետեւեալ որոշման՝

ա) Ինքնապաշտպանութեան գործը՝ իբրեւ համաժողովրդական գործ՝ պէտք է ամբողջովին Թողնել Ժողովրդին։

բ) Կուսակցութեան անդամները կարող են մասնակցել ինքնապաշտպանութեանը՝ իբրեւ քաղաքացի անհատներ, աչխատելով մտցնել ժողովրդական միլիցիայի սիստեմը եւ կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանութեան մարմիններ։

գ) Անակնկալ դէպքերում, եթէ ժողովուրդը հրաւիրէ Դաշնակցութիւնը՝ զեկավարելու ինքնապաշտպանութեան գործը, իր՝ ժողովրդի պատասխանատուութեամբ, նրա անունից եւ նրա միահամուռ աջակցութեամբ, Ընդհանուր Ժողովը վերապահում է ազատութիւն տեղական մարմիններին՝ վարուելու ըստ իրենց հայեցողութեան։

ՅՈՒՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ(8)

Ժողովը լսելով յուցական գործունէութեան վերաբերեալ զեկուցումներն ու վիճաբանութիւնները եւ նկատելով՝

ա) Այն մեծ նչանակութիւնը, որ ունի յուցական գործունէութիւնը տաճիկ բռնակալ ռեժիմը տապալելու, նրա հեղինակութիւնը կոտրելու տեսակէտից,

բ) Որ յուցական գործունէութիւնն աւելի բացորոչ կերպով է չարժման մէջ դնում Տաճկաստանի խրնամակալ պետութիւնների քաղաքական եւ տնտեսական ընդհանուր եւ հակամարտ չահերը,

գ) Որ նա դիւրութիւններ է ներկայացնում աւելի աղդու կերպով արտայայտելու բողոքող տարրերի ճըգտումները եւ այդպիսով ներկայանում է ագիտատորական մեծ աղդակ ցնցելու համար եւ մահմեդական մասսան,

դ) . . . . . .

Որոշեց՝

1) Ընդունել յուցական գործունէութիւնը չարունակելու անհրաժեչտութիւնը կազմակերպութեան առաջիկայ տակտիքի մէջ,

2) Կեդրոնացնել յուցական գործունէութիւնները···

3) Կախման մէջ չդնել այդ տեսակի ձեռնարկները երկրի ապստամբական չարժումներից եւ օգտուել քաղաքական ներքին կամ արտաքին յարմար մոմենտներից։

4) Զգտել ապահովել Թուրքիայի ոչ-հայ դժգոհ տարրերի գործակցութիւնը,

5) Ցուցական մարմնի կազմը, որ մամադրելի դրամական միջոցների սահմանները եւ իրաւասութեան հիմնական կէտերը որոշել Ընդհանուր ժողովում։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովը ծանօթանալով . . . Դաշնակցութեան կազմի եւ պրոպագանդի այժմեան վիճակին եւ նկատելով՝

ա) *կազմի եւ պրոպագանդի սահմանափակ վիճակը.*

բ) *Այն խոչոր դերը, որ կարող է կատարել յեղափոխական գործունէութիւնը այդ վայրում եւ քէ չըբաւականացում, աչքի առաջ ունենալով վայրի քաղաքական կարեւոր նշանակութիւնը,*

Որոշեց՝

Յանձնարարել կազմակերպական Մարմիններին, յատկապէս Արեւմտեան Բիւրոյին եւ Բ. Կոմիտէին չխնայել ոչ մի ջանք, ուղարկել այդտեղ կարող ընկերներ լայն կազմակերպութիւն առաջ բերելու... եւ չրջակայքում։

ՎԵՐՆԱՇԷՆԻ ՇՐՋԱՆ

. . . . . .

ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ (9)

. . . . . .

ԲԱՍՏԻ ՇՐՋԱՆ (10)

. . . . . .

ՍԻՄԻ ՇՐՋԱՆ (11)

. . . . . .

ՋԻՆԱ-ՊԱՏԹՈՒՏԻԿ (12)

Նկատելով որ անհրաժեշտ է մեր յեղափոխական ձեռնարկներու համար ունենալ ըստ կարելւոյն չատ հմուտ արհեստաւորներ զինագործական-պայթուցիկ եւ այլ յարակից արհեստներու համար, Ընդհանուր Ժողովը որոշեց.

1) . . . . . *զանազան վայրերուն մէջ՝ ինչպէս նաեւ վրէժուժ, հիմնել արհեստանոցներ, ուր ընդունակ եւ տրամադրելի ընկերներ վարժուեն զինական արհեստագիտական այլեւայլ ճիւղերու մէջ, մասնաւորապէս կանոնաւորել . . . արհեստանոցը։*

2) . . . . . .

3) . . . . . .

4) . . . . . .

ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԻՈՑ ԱՁԼԱՏԱՐՐ ՅԵՂԵՐՈՒ ՀԵՏ (13)

Ընդհանուր ժողովը լսելով զեկուցումը Թուրքիոյ յեղափոխական տարրերու հետ համերաշխութիւն կայացնելու մասին, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Ցորին ուրախութեամբ դիտելով Թուրք ժողովրդի մէջ ծայր տուած հակակառավարական դժգոհութեան երեւոյթները, նպաստաւոր վայրկեանը հասած կը նկատուի համերաշխութեան գաղափարի իրականացումը գործնական հողի վրայ դնելու, — ինչ որ, դժբախտաբար, ցարդ չէր յաջողած Դաշնակցութեան՝ հակառակ տարիներէ ի վեր ձեռք առած միջոցներուն, հակառակ իր Ծրագրին եւ նախորդ իր Ընդհանուր ժողովի որոշումներուն։

Ուստի Ժողովը ստիպողաբար կը յանձնարարէ . . . . . մարմիններուն ամէն կերպով աջակցիլ Թուրք ժողովրդի դիմադիր տարրերուն՝ զեկավարելով զանոնք, իրենց կռուին մէջ, այդ ռեժիմի դէմ։ Այդ գործակցութիւնը պէտք է այնպէս կարգաւորել եւ առաջ տանիլ, որ Թուրք բողոքող եւ ըմբոստ տարրը կարենայ կերպով ապարէզ ելլէ, եւ կառավարութիւնը զրկուի ամբոխային կրօնամոլութիւնը հայ ժողովրդի եւ հայ յեղափոխութեան դէմ գրգռելու առիթէն։

Այս տեսակէտներէն առաջնորդուելով՝ Ժողովը կը յանձնարարէ,

1) *Իր . . . . . մարմիններուն, որպէսզի ամէն կերպ աշխատին սկիզբը դնելու համերաշխութեան եւ առաջ բերեն համերաշխութեան մարմիններ։*

2) . . . . . *պատշաճ մարմիններուն՝ որպէսզի նախապատրաստական բանակցութիւններ սկսին — յարմարագոյն եղանակով — յեղափոխական Թուրք եւ այլ տարրերու խմբակցութեանց հետ, որոնց քաղաքական հայեացքները եւ ձգտումները աւելի կը մօտենան Դաշնակցութեան սկզբունքներուն, ինչպէս նաեւ աշխատին անոնց պրոպագանդին ուժ տալ, տարածելով . . . . . Թուրք ժողովրդին մէջ անոնց հրատարակութիւնները, հրահանգելով մխիթարեան . . . . . մարմինները ամէն կերպով աջակցիլ այդ աշխատութեան։*

3) . . . . . .

4) *Նկատելով մանաւանդ որ Թուրքիոյ մէջ առանձին ազգութիւններու ինքնուրոյն ձգտումները, իրենց անջատ գործունէութիւնով, չեն կազմեր միացած ընդհանուր ուժ մը ընդհանուր թշնամւոն դէմ, աշխատիլ ձգտիլ Թուրքիոյ այլ ազգութիւններու յեղափոխական կուսակցութիւններու եւ տարրերու մէջ համերաշխութիւն առաջ բերել եւ կազմել յեղափոխական դաշնակցութիւն մը, ֆեդերատիվ սկզբունքի վրայ հիմնուած քաղաքական ծրագրով, որ ապահովէ բոլոր ազգութիւններու իրաւունքը։ Այս գաղափարի իրականացման համար՝ առաջին պատեհութեամբ իսկ հրաւիրել համաժողով մը վերոյիշեալ տարրերու մասնակցութեամբ։*

Միեւնոյն ատեն Թուրքերու մէջ տարածուած անհիմն թիւրիմացութիւններուն վերջ տալու համար, Ժողովը պարտք կը համարի յայտարարել, որ Դաշնակցութիւնը Թուրքիոյ մէջ ունեցած չէ եւ չունի անջատական ոչ մէկ ձգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարեալ հաւասարութիւն, եւ տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայէթներու մէջ վարչական ինքնավարութեան հաստատումը, ինչ որ չի հակասեր միւս ազգերու իրաւունքին։

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ (14)

Գինութեան առնելով կովկասեան մարմինների մանրամասն զեկուցումները հայ-Թրքական ընդհարումների մասին, որոնք աղմկեցին ամբողջ Անդրկովկասը 1905 եւ 1906 Թուականներին, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը, լցուած խորագոյն վշտով երկու հարեւան ժողովուրդները կոյծանող այդ իրողութեան հանդէպ, եւ նկատելով որ,

1) *Այդ թշնամութիւնը զլայապէս վնասում է ընդհանուր յեղափոխութեան դործին.*

2) *Որ ցարական կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ հրաժարուել իր պատակտող քաղաքականութիւնից.*

3) *Որ Թուրք անդիտակից ամբոխը հարստահարող բէդութիւնն ու հոգեւոլականութիւնը, մերթ իրենց չահերից դրդուած, մերթ արտաքին քաղաքական պրոպագանդի ազդեցութեան տակ, չարունակում են չահագործել մասսաների տգիտութիւնն ու հակահակական տրամադրութիւնները.*

Որոշեց,

ա) *Յանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին՝ համերաշխութեան ընդհանուր եւ դօրեղ պրոպագանդ մղել, դրաւոր եւ բանաւոր, ոչ միայն հայ, այլեւ Թուրք ժողովրդի համար։*

բ) *Ջանք չխնայել առաջ բերելու, ուղղակի կամ Թուրք մտաւորականութեան միջոցով, յեղափոխական կազմակերպութիւններ մեր հարեւան ժողովրդի չարքերում, իրրեւ լաւագոյն միջոց՝ խլելու անգիտակից մասսաները մոլորեցնող Թուրք տարրերի ազդեցութիւնից։*

գ) *Խստօրէն հալածել հայ ժողովրդի բոլոր խաւերի միջից այն տարրերն, օրդանները եւ անհատները, որոնք խօսքով Թէ գործով, յամառ անդիտակցաբար, գրգռում են փոխադարձ ատելութիւն եւ ատիթ տալիս Թշնամութեան վերսկսման։*

դ) *Աջակցիլ այն Թուրք կազմակերպութիւններին, հրատարակութիւններին եւ անհատներին, որոնք ծառայում են երկու ժողովուրդների համերաշխութեանը եւ մերձեցմանը։*

ե) *Ցեղափոխական կապեր հաստատել հայ եւ Թուրք աշխատաւորների միջեւ՝ քաղաքներում եւ գիւղացիութեան մէջ՝ պիւղերում, միացած ուժով կռիւ մղելու քաղաքական եւ տնտեսական այն գործօնների դէմ, որոնք կասեցնում են երկու ժողովուրդների քաղաքական եւ տնտեսական ազատագրութիւնը։*

Այս յանձնարարման հետ միասին՝ Ընդհանուր Ժողովը չերմ յոյս է տածում, որ հակառակ ընթացիկ դժուարութիւնների եւ լայնատարած յոռետեսութեան, այսօրուայ աւելութիւնն ու պառակտումը կ'ընկճուին եւ տեղի կը տան միջազգային այն համերաշխութեան, որը պիտի լինի ամենազօրեղ պատուանդանը մեր ապագայ կռուի ու երկու ժողովուրդների յեղափոխական յաղթանակին։

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՎՐԱՑԻՆԵՐԻ Հ ԵՏ (15)

Յատկապէս կողմնակից հայերի եւ վրացիների քաղաքական ներգաչնակ գործակցութեան, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին եւ ընկերներին, իրենց յեղափոխական գործողութիւնների, ինչպէս եւ դրաւոր ու բերանացի պրոպագանդի ընթացքում՝ երբեք չմոռանալ այն սերտ կապը, որ պիտի լինի վրացի եւ հայ աշխատաւորների միջեւ, հանդէպ քաղաքական եւ տնտեսական այն կռուի, որով բռնկուած է Անդրկովկասը։

Կապուած միմեանց հետ հայրենիքով, քաղաքական եւ տնտեսական չահերով, նոյնիսկ կռուի տակտիքով, երկու ժողովուրդները պէտք է գործեն ձեռք-ձեռքի տուած, ներշնչուած նոյն տենչով, եւ հետեւաբար, փոխադարձ անհամաձայնութեան եւ գժտութեան ամենափոքրագոյն նշանն անդամ պիտի նկատուի քաղաքական մեծ սխալ երկու ժողովուրդների համար։

Դրդուած այս տեսակէտներից՝ Ընդհանուր Ժողովը թելադրում է դաշնակցական զեկավար մարմիններին՝ ամենամօտիկ կապեր հաստատել եւ, ի հարկին, ձեռնարկներ անել վրաց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնների հետ, դուրս չգալով, հարկաւ, մեր Ծրագրի եւ տակտիքի սահմաններից։

Շեչտելով իր այդ անվերապահ ցանկութիւնը,

Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը ուխտուած է, անկեղծ ցաւով, մասնաւոր անել այն փաստը, որ վերջ մէջ գործող կուսակցութիւններից ամենախոշորը, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի կովկասեան բաժինը, հակառակ այն վարդապետութեան ոգուն, որի դրօշակին է ուզում հանդիսանալ, իր գործելակերպով, որ հեռու է չիտակութիւնից, եւ իր պրոպագանդի ճեւով, որ յաճախ չովինիզմի կնիքն է կրում, փոխանակ նպաստելու երկու ժողովուրդների քաղաքական համերաշխ գործակցութեան, սերմանում է անօգուտ զրգռուումն, անվստահութիւն եւ նոյնիսկ թշնամանք։

Առանց հեռեւելու կովկասեան սոցիալ-դեմոկրատների գործելակերպին եւ չեղուելու քաղաքական չիտակ պայքարի չաւղից, Դաշնակցութեան բոլոր մարմինները հրաւիրուում են՝ մերկացնելով հանդերձ սոցիալ-դեմոկրատիական գործելակերպի ամբողջ տգեղութիւնը, անասան եւ անյողդողդ առաջ տանել երկու դրկից ժողովուրդների ներդաշնակ գործակցութեան աշխատանքը, միշտ հաւատարիմ սոցիալիզմի եւ համերաշխութեան հիմնական պահանջներին։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ(16)

Անհրաժեշտ համարելով, մանաւանդ ներկայ քաղաքական մոմենտում, յեղափոխական տարրերի միութիւնը ընդդէմ բռնակալական կարգերի, Ժողովը յանձնարարում է իր կովկասեան մարմիններին, աշխատել՝ գործակցութիւն առաջ բերել սոցիալիստական եւ յեղափոխական այն կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների միջեւ, որոնք իրենց դաւանանքով ու գործելակերպով մօտ են Հ. Յ. Դաշնակցութեան, այսինքն,

1) Ընդունում են աշխատաւորական հայեցակէտը և իբրեւ գործունէութեան յենակէտ, ի թիւս այլ աշխատաւորների, նաեւ գիւղացիութիւնը։

2) Գտնում են ազգային հարցը լուծելու ամենալաւն ֆեդերացիայի միջոցով։

Այդ գործակցութեան նշանաբանն է լինելու՝ պաշտպանել համայն Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի շահերը թէ՛ պետական Դումայում եւ թէ ընթացիկ կեանքում։

Այդ տեսակ գործունէութիւնը օր առաջ իրականանալի դարձնելու նպատակով, Ժողովը հրաւիրում է իր պատշաճ մարմիններին՝ ձգտել միկուսակցական մի մնայուն մարմին կազմակերպել, իբրեւ չաղկապող օղակ յիշեալ աշխատաւորական տարրերի միջեւ։

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՏԵԱՆ(17)

Ընդհ. Ժողովը, բարձր պահելու համար յեղափոխական համայքը եւ վերջ մը դնելու համար վերջերս տեղի ունեցած ցաւալի դէպքերուն, պարտաւորիչ կը դարձընէ միկուսակցական իրաւարար ատեաններ Հ. Յ. Դաշնակցութեան եւ ուրիչ կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու միջեւ, համաձայն հետեւեալ կէտերուն՝

1) Միկուսակցական ատեանները կը կազմուին չհաղորդուող կողմերու ներկայացուցիչներէ, չէզոք ճեռնհաս անձերէ կամ ուրիչ կուսակցութիւններու ներկայացուցիչներէ, ըստ յարմարութեան։

2) Միկուսակցական ատեանները կը կազմուին չրջանի պատասխանատու մարմնի հաւանութեամբ եւ գործակցութեամբ, ընդհանուր տեսակէտ մը պահպանելու համար այդ գործին մէջ։

3) Միկուսակցական իրաւարար ատեան ունենալ այնպիսի կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու հետ, որոնք կը համաձայնին այդ ատեաններու որոշումներուն՝ ամէն պարագայի տակ, եւ խոյս չեն տար այդ ատեաններուն ենթարկուելէ, իրենց աննըպաստ եղող պարագային եւս։

4) Միկուսակցական ատեաններու որոշումներն անբեկանելի են եւ չեն ենթարկուիր Ընդհանուր Ժողովին։

5) Ատեաններու կազմութեան մանրամասնութիւնները մշակելը կը թողնուի ռայոնական ժողովներուն։

ՀՆՋԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԻՄՈՒՄԸ(18)

Լսելով Հնչակեան Կարիզի կեդրոնի վարչութեան պաշտօնական դիմումը, ուղղուած Ընդհ. Ժողովին՝ Հայ յեղ. կուսակցութիւնների կոնգրէսի, միկուսակցական ատեանի և համերաշխութեան մասին, ինչպէս և այդ առիթով ժողովականների յայտնած կարծիքները հնչակեան այլեւայլ հատուածներու բռնած ընթացքի եւ զանազան վայրերում ունեցած գործունէութեան վերաբերմամբ, Ընդհ. Ժողովը,

1) Նկատելով որ Դաշնակցութեան եւ Հնչակեան հատուածների մէջ համերաշխ գործակցութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ հնչակեան տեղական մարմիններն իրենց առօրեայ ընթացքով եւ յեղափոխական գործունէութեամբ վաստակութիւն կը կը ներշնչեն դաշնակցական տեղական մարմիններին,

2) Նկատելով որ կուսակցական հողի վրայ տեղի ունեցած ընդհարումները իրենց ցաւալի հետեւանքներով վնասում են համերաշխութեան գործին եւ պահանջում են խաղաղեցնող միջոցների կիրառութիւն,

3) Ընդունելով որ յեղ. կուսակցութիւնների կոնգրէսի հարցը լուրջ նշանակութիւն եւ գործնական արժէք կարող է ունենալ այն դէպքում միայն, երբ ներկրում, բացի դաշնակցական մարմիններից, գոյութիւն կ'ունենան նաեւ հնչակեան եւ այլ յեղափոխական մարմիններ,

Որոշեց։

ա) Հայ յեղափոխական կուսակցութիւնների կոնգրէսի գումարումը ներկայումս համարել վաղաժամ։

բ) Միկուսակցական ատեանի առաջարկը ընդունել (համաձայն ներկայ Ժողովի նախորդ որոշման)։

Դրա հետ միասին Ժողովը յոյս է յայտնում, որ առաջին կէտում յիշուած պայմանների առաջ գալը՝ ապագայում հնարաւոր կը դարձնեն Դաշնակցութեան համերաշխ գործակցութիւնը հայ յեղափոխական այլ մարմինների հետ։

Ընդհանուր Ժողովը պարտք է համարում դարձեալ մի անգամ կրկնել, որ այլեւայլ յեղափոխական կազմակերպութիւններին պատկանող՝ գործին նուիրուած եւ վստահելի անհատների եւ խմբերի հետ համերաշխորէն կռիւ մղելը ընդհանուր թշնամու դէմ (մանաւանդ երկրի մէջ) եղել է եւ այժմ էլ պէտք է լինի Դաշնակցութեան բաղձանքը եւ ձգտումը։

Նոյն այդ համերաշխութեան գործը պատրաստելու համար, Ընդհ. Ժողովը յանձնարարում է բոլոր իր մարմիններին՝ ամէն կերպ խոյս տալ կուսակցական ընդհարումներից եւ ծագող վէճերն ու թիւրիմացութիւնները լուծել յիշատակուած միկուսակցական ատեանի միջոցով։

զ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ

. . . . . .

դ) ՊՐՈՊԱԳԱՆԴ ԵՐԿՐՈՒՄ

. . . . . .

Համապատասխան մարմիններու յանձնելով թէ՛ գրաւոր թէ բանաւոր պրոպագանդի գործը, որոշած նախահաշուի սահմաններում, Ընդհ. Ժողովը յանձնարարում է ղեկավարուել հետեւեալ որոշումներով։

I

«ԴՐՕՇԱԿ» ԵՒ ԿԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Դրօշակ»ը մնում է կուսակցութեան պաշտօնական կեդրոնական օրգան։

2) . . . . . .

3) Արտօնել խմբագրութեանը, եթէ հարկ տեսնի, «Դրօշակ»ը հրատարակել աւելի մեծ ծաւալով՝ եւ ի հարկին՝ անել յաւելուածներ։

4) Ձգտութեամբ հետեւելով Ընդհ. Ժողովի նախագծած ուղղութեան, ազատութիւն տալ խմբագրութեանը՝ մտնելու ինչպէս ծրագրային, նոյնպէս եւ տրտեսական-քաղաքական հարցերի եւ ուղղութիւնների մանրամասն մեկնաբանութեան եւ քննադատութեան մէջ։ Տեսական խնդիրները նրա մէջ պիտի բռնեն առաջնակարգ տեղերից մէկը։

5) Պարտաւորեցնել բոլոր մարմիններին՝ հաղորդելու պաշտօնական օրգանին կազմակերպական բոլոր ազդերը, որոշումները եւ թուղթիկները։ Պաշտօնական բնոյթ ունեցող ազդերը չտպագրել որեւէ այլ թերթում, առանց հեղինակող մարմնի թոյլտուութեան։

6) . . . . . .

7) . . . . . .

8) Տեսական եւ հիմնական հարցերի մանրամասն ուսումնասիրութեան համար՝ հրատարակել «Դրօշակ»ին կից, տարեկան 2–3 անգամ, հատորի ձեւով, առանձին հանդէս, մասնակցութեամբ մեր եւ օտար գրողների։

9) Նկատի առնելով մամուլի այժմեան՝ համեմատաբար ազատ վիճակը Անդրկովկասում, հայերէն թերթերի հրատարակութիւնը ժամանակ առ ժամանակ ազատ համարել եւ հրատարակել միմիայն այնպիսիները, որոնք կովկասում տպագրուել չեն կարող։

10) Հրատարակել, պրոպագանդային նպատակով, թուրքահայ եւ կովկասեան չարժման եւ յեղափոխութեան նուիրուած գրքոյկներ, եւրոպական զանազան լեզուներով, գրուած ձեռնհաս անձանց ձեռքով։

11) Այժ տալ թուրքերէն, քիւրտերէն, ֆարսերէն եւ այլ լեզուներով բրոշիւրներին, որոնց նպատակը պիտի լինի նպաստել հայերի հետ ապրող այլեւայլ ժողովուրդների համերաշխութեան եւ մերձեցման։

ՊՐՈՊԱԳԱՆԴ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ (19)

Հիմնուած այն տեսակէտի վրայ, որ գրաւոր եւ բանաւոր լայն պրոպագանդը կարեւոր գործօններից մէկը պիտի լինի, կազմակերպական գաղափարները տարածելու և ճեռնարկները յաջողցնելու համար, Ընդհանուր Ժողովը որոշեց առաջիկայում եւս ուժգին կերպով առաջ մղել պրոպագանդի գործը այն հիմունքներով, որոնք մշակուած են նախորդ Ժողովում եւ այն լրացումներով՝ որոնք կատարուեցին ներկայ Ժողովի ընթացքում։

ա) ԵՒՐՈՊԱՑԻ ՊՐՈՊԱԳԱՆԴ

. . . . . .

բ) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊՐՈՊԱԳԱՆԴ

. . . . . .

II

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակել Կովկասում,

1) *Մի օրաթերթ, որ հանդիսանալով օրգան Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան չրջանի, արձագանգ պիտի տայ ընթացիկ տնտեսական–քաղաքական հասարակական բոլոր հարցերին՝ ղեկավար ունենալով մեր աշխարհահայեացքը եւ արծարծելով մեր կուսակցութեան սկզբունքը:*

2) *Մի ամսագիր — հասարակական, գիտական, գրական — որի ծաւալի, բաժինների եւ այլ մանրամասնութիւնների որոշումը թողնել Կովկասեան Բիւրոյին:*

3) *Մի ռուսերէն թերթ (չաբաթաթերթ կամ օրաթերթ), որի բուն նպատակն է լինելու պարզաբանել հայ կեանքն եւ առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան իսկական պատկերը Ռուսաստանի հասարակութեան առջեւ:*

4) *Շարունակել «Ծառայ»ի գրադարանի հրատարակութիւնը (առնուազն 100 տպագրական թերթ — 3000 երես տարեկան), լոյս ընծայել մեր Ծրագրին եւ գործելակերպին համապատասխան ինքնուրոյն եւ թարգմանական գրուածքներ, գիտական–հասարակական ընդհանուր հարցերի չարքերում՝ կարեւոր տեղ տալով նաեւ տաճկահայ դատի եւ երկրի տնտեսական–սոցիալական ուսումնասիրութեան վերաբերեալ աշխատութիւններին (տաճկահայ բարբառով եւս):*

Աչքի առաջ ունենալով Ռուսաստանում առաջ եկած բարեփոխութիւնները, Ժողովը յանձնարարում է պատչամ Մարմիններին՝ ուշադրութիւն դարձնել նաեւ այն պրոպագանդի վրայ, որ կարող է կատարուել Ռուսաստանում՝ դիմադիր տարրերի աջակցութեամբ:

III

ՕՐԳԱՆՆԵՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Ժողովը որոշեց.

1) *Շարունակել Փարիզի «Pro Armenia»ի հրատարակութիւնը՝ ճանաչելով թէ՛ օրգանի եւ թէ խմբագրական մարմնի մատուցած ծառայութիւնները հայոց հարցին:*

2) . . . . . .

3) *Մտցնել «Pro Armenia»ի էջերի մէջ տեղեկութիւններ՝ Դաշնակցութեան գործունէութեան մասին:*

4) . . . . . .

5) *Փակել Լոնդոնի «Pro Armenia»ի հարցը եւ նրա հրատարակութիւնը համարել, ներկայ պայմաններում, անկարեւոր, յանձնելով անգլիական պրոպագանդի գործը . . . .*

6) *Եւրոպական մամուլի մէջ պրոպագանդ անելու համար, բիւդջէի սահմանած չափով, թղթակիցներ պահել:*

7) *Դրամապէս նպաստել . . . . . հրատարակուող թերթին՝ զբաղուելու մեր հարցով:*

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԲՌՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ(20)

Լսելով բռնի հանգանակութեան մասին եղած զեկուցումն ու վիճաբանութիւնները, Ընդհանուր Ժողովը աչքի առաջ ունենալով՝

1) *1904 թուի Ընդհ. Ժողովի որոշումը, ուր այդ ձեւի հանգանակութիւնը նկատուած է իբրեւ բացարձակ չարիք:*

2) *1905 թուի Յորհուրդի վճիռը, որը կարգադրում է՝ «զգաստացնել Դրամի կոմիտէի կողմից նոր դիմումներ անելը»:*

Այլեւ նկատելով՝

1) *Այն բարոյական լճտումը, որ առաջ է բերել բռնի հանգանակութիւնը հասարակական լայն խաւերում՝ Թուլացնելով միաժամանակ մարմինների գործունէութիւնը.*

2) *Դաշնակցութեան եւ այլ մարմինների ունեցած դառն փորձերը, հակայեղափոխական հետեւանքները . . . . . .*

Որոշեց՝

1) *Ի սպառ արգիլել բռնի միջոցների գործածութիւնը՝ հանգանակութեան գործում.*

2) *Ամենախիստ պատասխանատուութեան ենթարկել այն անդամներին եւ մարմիններին, որոնք կը չարունակեն դիմել բռնի միջոցների.*

3) *Աղդու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բռնի հանգանակութիւններին, որ կատարում են այլեւայլ բախտախնդիրներ, կազմակերպութեան անունից, գաղտնի կամ խարդախ միջոցներով.*

4) *Ժողովի այս որոշումը յայտարարել կազմակերպութեան պաշտօնական օրգանի մէջ:*

«ՆԱԽԱԳԻԾԸ» ԵՒ ՅՈՐՀՈՒՐԴԻ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆԸ(21)

Ընդհանուր Ժողովը, լսելով ներկայացուած զեկուցումը՝ «Յորհուրդի իրաւասութեան մասին՝ Նախագծի հրատարակութեան գործում» եւ այս առթիւ

տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնն ու վիճաբանութիւնները՝ հասաւ հետեւեալ եզրակացութեան.

Յորհուրդը՝ հիմնուելով Դաշնակցութեան հիմնական Ծրագրի, Գ. Ընդհանուր Ժողովի կողմից կովկասեան գործունէութեան մասին տրուած որոշումների ոգու, Կովկասեան Շրջանային Ժողովի այս առթիւ տրուած որոշումների, ինչպէս նաեւ կեանքի հրամայողական պահանջների վրայ, պարտաւոր էր հրատարակել «Կովկասեան Նախագիծը» իբրեւ ուղեցոյց կովկասահայ կեանքի քաղաքական եւ տնտեսական գործունէութեան, վերապահելով նրա վերջնական հաստատութիւնը ներկայ Ընդհանուր Ժողովին:

ԵՐԿՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ(22)

Ընդհանուր Ժողովը լսելով՝

Երկիրը ուսումնասիրելու եւ այնտեղ ուսումնասիրողներ ուղարկելու մասին եւ կատարելով այդ առիթով մտքերի փոխանակութիւն՝ յանգեց հետեւեալ եզրակացութեան.

1) *Դնել այդ ուսումնասիրութիւնը՝ գլխաւորապէս վիճակագրական եւ ազգագրական–լեզուփոխական տեսակէտից՝ աւելի լայն եւ գիտական հիմքերի վրայ.*

2) *Պատրաստել մի հարցարան–ծրագիր եւ ուղարկել երկրի մարմիններին եւ ընկերներին՝ վիճակագրական, ազգագրական, տնտեսագիտական եւ քաղաքական ուսումնասիրութիւններ անելու համար:*

3) *Գտնել . . . . ձեռնհաս անձինք՝ յանձնելով նրանց կազմակերպութեան հաչուով երկիր մտնել (մեր ընկերների ուղեկցութեամբ) ազգագրական եւ քաղաքական ուսումնասիրութիւններ անելու նպատակով:*

4) *Բոլոր միջոցներով նպաստել մտաւորական ընկերների . . . . մտնելուն աւելի մեծ թուով՝ նախօրօք պատրաստելով նրանց՝ այդ աշխատանքի համար:*

5) *Անհրաժեշտօրէն պատրաստել հայկական գաւառների մանրամասն եւ մեծադիր քարտէս:*

6) *Կազմել մի յատուկ մարմին «Ուսումնասիրող Մարմին» անունով, այդ ամբողջ դործը կարգադրելու համար, հիմնուած վերի որոշումների վրայ:*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՕ(23)

Ընդհանուր Ժողովը լսելով Բրիւքսէլի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի կողմից եղած առաջարկը (տես «Դրօշակ» 1905 № 6) եւ հիմնուելով մեր Ծրագրի հիմնական կէտերի վրայ, որոշեց՝ յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝ բանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրոյի հետ, յայտնել նրան՝ Դաշնակցութեան յարումը Միջազգային Սոցիալիստական Կոնգրէսների որոշումներին եւ միջոցներ ձեռք առնել կարգաւորելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին եւ կոնգրէսներին:

ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ(24)

Ընդհանուր Ժողովը մտքերի փոխանակութիւնից յետոյ, որոշեց.

1) *Առաջիկայ, Հինգերորդ Ընդհանուր Ժողովը նշանակել պալ տարուայ վերջերը, ոչ ուշ քան 1908ի աշունը:*

2) *Ընդհանուր Ժողովի տեղի որոշումը թողնել երկու Բիւրոներին, հրահանգելով որ ամէն ջանք գործ դրուի Ժողովը կայացնելու . . . . . սահմաններում, երկրին մօտիկ:*

3) *Արտակարգ պարագաների դէպքում թողնել Յորհուրդին՝ հրաւիրելու արտակարգ Ընդհ. Ժողով:*

ԳԱՂՈՒԹՆԵՐ(25)

Ընդհանուր Ժողովը քննելով Բալկանի, Ամերիկայի, Եդիպտոսի, Պարսկաստանի եւ Հարաւային Ռուսաստանի դաղութների մասին ներկայացրած զեկուցումները՝ յանձնարարում է իր այնտեղի մարմիններին.

1) *Կազմակերպական–դրամական աշխատանքներին կից հիմնադրել մի լայն պրոպագանդ, գրաւոր եւ բերանացի, նպատակ ունենալով տարածել մեր Ծրագրի սկզբունքները եւ սերտ կերպով կապել գաղութները յեղափոխական գործի հետ:*

2) *Ոչինչ ջանք չխնայել՝ յարաբերութեան մէջ դնելու հայ դաղութները՝ տեղական աշխատաւորական չրջանների եւ սոցիալիստական կազմակերպութիւնների հետ, իբրեւ մի ցանկալի մեթոդ փոխադարձ համերաշխութիւնը զօրացնելու համար:*

3) *Տեղական եւ օտար մամուլի մէջ պրոպագանդ մղել յօդուտ հայ ժողովրդի դատի, ինչպէս եւ այն քաղաքական նպատակի, որին ձգտում է Դաշնակցութիւնը:*

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ(26)

Նկատելով որ պարսկական ներկայ չարժումը կարող է դառնալ ժողովրդական սրբենացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երեւոյթ՝ թէ՛ Պարսկաս-

տանի, թէ Արեւելքի համար եւ գտնելով դրա տարածուելին ու լայնանալը ցանկալի թէ՛ համամարդկային, թէ հայկական տեսակէտից,

Ընդհանուր ժողովը յանձնարարում է Վարչական դաշնակցական մարմիններին եւ անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ չարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, համկավարական եւ աշխատաւորական ոգին, որը բնում է Դաշնակցութեան Ծրագրից։

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

ԴԻՄԳՈՀՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐ(27)

Մանրամասն քննութեան առնելով դիմգոհութիւնների ու բողոքների այն վաստերը, որոնք արձանագրուած են տեղեկագրերի ու անհատական դիմումների մէջ, Ընդհանուր ժողովը, ամէն մի կարեւոր դէպքի համար յատուկ կարգադրութիւն անելով, միաժամանակ որոշեց·

1) *Ցանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին՝ հաղորդելու ի գիտութիւն իրանց չրջանի հասարակութեան, որ ոչ մի զեղծում, բռնութիւն եւ անկանոնութիւն, կատարուած անհատների եւ խմբերի կողմից, չի մնայ առանց անկողմնապահ քննութեան եւ խիստ պատժի։*

2) *Դիւրութիւն տալ, որ ամէն ոք, կուսակցական թէ անկուսակցական, հնարաւորութիւն ունենայ, կազմակերպութեան ղեկավարող մարմիններին իմաց տալու ժողովրդի մէջ եղած գանգատներն ու բողոքները։*

3) *Ցանձնել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին, իրրեւ Ընդհանուր ժողովի որոշումների ճիշդ գործադրութեան վրայ հսկող օրգաններ, պատասխանատուութեան կանչել այն բոլոր դաշնակցականներին — պինուոր, պրոպագանդիստ, հայդուկ, կազմակերպող — որոնք իրենց քայլերով արդար բողոքի առիթ են տալիս, ինչպէս եւ այն մարմիններին, որոնք վարագուրում են այդ տեսակ քայլերը կամ թերանում պատժելու նրանց հեղինակներին։*

Ընդհանուր ժողովը լիապէս է որ իր այս հրահանգի ճիշդ կիրառութեամբ՝ կարելի պիտի լինի արմատախիլ անել կուսակցութեան անուան հետ, յաճախ անհիմն կերպով, կապուող զեղծումները, եւ ներշնչել հայ ժողովրդի բոլոր խաւերին այն գիտակից վստահութիւնը, որ միշտ վայելել է Դաշնակցութիւնը ոչ միայն կողմնակիցների այլեւ ամենէ հակառակորդների կողմից։

ՈՐՈՇՈՒՄ
ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ(28)

Ընդհանուր ժողովը նկատի առնելով Ցուցական Մարմնի տեղեկագիրը, ինչպէս ծանձնախումբի զեկուցագիրը, իր բոլոր յարակից դոկիւմաններով, ինչպէս նաեւ Ցուցական Մարմնի ներկայացուցիչ Սաֆոյի պատասխան–զեկուցումը ծանձնախումբի եզրակացութիւններուն, եւ նոյն մարմնի անդամներու՝ Սաֆոյի, Թորգոմի եւ Ռուբինայի բերանացի յայտարարութիւնները, որոշեց·

Ջծանրանալ ձեռնարկին տեխնիքական կողմի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, եւ քննութեան առնել Ցուցական Մարմնի գործունէութեան կազմակերպական եւ ընկերական–բարոյական կրկնակ տեսակէտները։ Ուստի,

1) *Նկատելով որ Ցուցական Մարմնի անդամները, էլչէնի մահէն ետք, «ձեռնարկի» պատրաստութեան վերաբերեալ իրենց բոլոր խորհուրդներուն եւ անոնց կիրառութեան մէջ, փոխանակ ամէն հնարաւոր միջոց ձեռք առնելու, ձեռնարկին յաջողութեան հաւանականութիւնները բազմապատկելու, ընդհակառակն՝ տարաբաղդ մտահոգութիւնը ունեցած են, ամէն բանէ առաջ, իրենց անձերու փրկութիւնը ապահովել, խուսափելով իրենց ստանձնած մեծ պատասխանատուութենէն։*

2) *Նկատելով՝ որ լոկ իրենց գլուխն ազատելու այդ սեւեռուն զաղափարէն մղուած, Ցուցական Մարմնի անդամները գիտակից անհոգութեամբ մը թերացեր են ուշադրութեան առնելու եւ ըստ այնմ կանխել կամ մեղմել փորձելու այն վտանգները, որոնք կը սպառնային նաեւ նոյն վայրը գործող օժանդակ ընկերներուն, ընկերներ՝ որոնք դատապարտուեցան մահուան եւ երկարատեւ բանտարկութեան պատիժներու։*

3) *Նկատելով որ Ցուցական Մարմինը իր ընկերական յարաբերութիւններուն մէջ ընդհանրապէս այլանդակ վարմունք մը ցուցադրած է, եւ ինչ որ մասնաւորապէս եզական է Դաշնակցութեան տարեգրութիւններուն մէջ՝ այն վրդովիչ ընթացքն է, որով այդ մարմինը հեռաձուտ եղած է, թէ գրաւոր կերպով (վ...ի տեղեկագրութեան մէջ) եւ թէ բերանացի տարաձայնութիւններով, արատաւորել քանկագին յիշատակը պարտականութեան դաշտին վրայ ինկած մեր անմոռանալի ընկ. էլչէնին, Ս. . . ի դէմքախտ արկածը ներկայացնելով իբր դաւ մը՝ նիւթուած էլչէնի կողմէ Շապուհի դէմ։*

Ժողովը լուսաբանուած համարեց Ցուցական Մարմնի ծանր թերացումը ընկերական պարտականութիւններու մէջ եւ անոր պատասխանատուութիւնը «ձեռնարկի» անյաջողութեան մէջ, այն չափով որ այդ զրկիւնք էր այդ մարմնի անդամներու անձնուիրութեան պակասին, պէտք չտեսաւ անդրադարձի քննութեան եւ դատի։

Միեւնոյն ատեն, աներկդիմի կերպով ապացուցած գտնելով որ Սաֆոն եղած է ղեկավար էլչէնի մահէն ետք Ցուցական Մարմնի գործերուն, պատրաստողը՝ այդ մարմնի դոկիւմաններուն, հեղինակը՝ էլչէնի եւ Շապուհի մահուան չուրջը կուտակուած կասկածներուն եւ զրպարտութեան, եւ գլխաւոր ստեղծիչը այդ մարմնի չուրջը տիրող անբարոյական հեղձուցիչ մթնոլորտին։

Վճռեց,

1) *Ցուցական Մարմնի անդամ Սաֆոն ի սպառ արտաքսել Հ. Ց. Դաշնակցութենէն եւ այդ մասին յայտարարել պաշտօնական օրգանին մէջ։*

2) *Ցուցական մարմնի անդամներ՝ Ա..., Թ... եւ Ռ... հեռացած նկատել կազմակերպութենէն, յայտնելով այդ մասին կազմակերպական ճամբով դաշնակցական բոլոր մարմիններուն, եւ տալ անոնց իրաւունք ներկայացնել Դաշն. Մորհուրդին մեղմացուցիչ բացատրութիւններ եւ իրենց անկեղծ զղջման ապացոյցներ։ Մորհուրդին լիազօրութիւն կը տրուի ըստ այնմ փոխել այս որոշումը եթէ հնարաւոր տեսնէ։*

3) . . . . . .

«ՎԱՐԴՈՑԻ ԽՆԴԻՐԸ»(29)

Ընդհանուր ժողովը, Ապրիլի 28ի նիստին մէջ, լսելով Վարդոյի գործին համար կազմուած Դատական Ծանձնաժողովի մանրամասն զեկուցումը՝ եկաւ հետեւեալ եզրակացութեան·

1) *Նկատելով, որ պաշտօնական թէ անպաշտօն բազմաթիւ փաստաթղթեր կը հաստատեն Վարդոյի անարդարանալի մեղաւորութիւնը՝ գիտակցաբար իւրացուցած եւ իւր անձնական պէտքերուն ծախսած ըլլալուն համար բաւականի կեղր. կոմիտէի 2139 ոսկի լեւ եւ 4673 արծաթ լեւը, ինչպէս նաեւ Արեւելեան Բիւրոյի կողմէն իրեն ղրկուած՝ կազմակերպական 2000 ռուբլին, — ընդամէնը՝ 12,112 ֆրանկ·*

2) *Նկատելով որ դրամական այս յայտնի զեղծումներէն զատ՝ Վարդոն չհաշտգործած է նոյնիսկ նահատակ ընկերոջ մը՝ Պետրոս Սերեմճեանի յիշատակը, հանդգնակութիւն բանալով իւր թերթին մէջ՝ հրատարակելու համար նոյն ընկերոջ գրութիւններուն հաւաքածուն, եւ այդ հանդգնակութենէն գոյացած հանրային դրամն եւս իւրացուցած է առանց յատկացնելու իսկական նպատակին·*

3) *Նկատելով վերջապէս որ Վարդոն իւր բոլոր անմաքուր գործերը եւ, մանաւանդ, իւր զեղծումները չքմեղելու համար հանրային կարծիքին առջեւ՝ դիմած է ամէն տեսակ անորակելի միջոցներու՝ չանալով արատաւորել Դաշնակցութիւնը, դաշնակցական ամենամաքուր գործիչները, նկրտելով կասկածի տուեր ձգել անոնց գործունէութեան վրայ, անուանարկութեան ու խեղաթիւրման հակասական ամէն փորձ ի գործ դնելով իւր թերթին մէջ,*

Որոշեց·

Հաստատել դատական յանձնաժողովի եզրակացութիւնը եւ Բալկանի Շրջանային Ժողովի որոշումը, յանձնարարելով անոնց գործադրութիւնը պաշտամմարմիններուն, այն է՝

ա) *Արեւմտեան Բիւրոյի միջոցով պահանջել, որ Վարդոն իւրացուցած 12,112 ֆր. դումարը վճարէ՝ յայտարարելէն 15 օրուայ ընթացքի մէջ·*

բ) *«Դրօշակ»ի մէջ յայտարարել Վարդոյի վերջնական արտաքսումը Դաշնակցութենէն՝ իբրեւ զեղծարար, յեղափոխութիւնը արատաւորող եւ անբարոյական անձնաւորութիւն։*

գ) . . . . . .

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ»
«Միհրաճական խումբ»(30)

Ինչպէս ծանձնաժողովը, հիմնուած Ընդհ. Ժողովին ներկայացուած պաշտօնական զեկուցումների եւ նոյն Ժողովի դիւանում եղած գրաւոր դոկիւմենտների վրայ, խնդիրը մանրամասն քննելուց յետոյ՝ եկաւ հետեւեալ եզրակացութեան·

1) *«Ժամանակակից Ջինուորական Խորհուրդ» անուն կրող մարմինը Հ. Ց. Դաշնակցութեան մէջ կազմակերպուած է ապօրինի ճանապարհով։*

2) *Այդ ապօրինի մարմինը չինել եւ գործ է ածել կեղծ կնիք Հ. Ց. Դաշնակցութեան անունով։*

3) *Հրատարակել է Հ. Ց. Դաշնակցութեան անունից մի չարք թռուցիկներ եւ յատուկ ամբաստանագրեր, չանալով ամենաստոր զրպարտութիւններով արատաւորել Դաշնակցութեան 1904ի Ընդհ. Ժողովի կողմից ընտրուած մարմինները։*

4) *Տաճկահայ դատի պաշտպանութեան պատրուակով՝ երեւան դալով եւ նրա անունը չհաւգործելով, բուրժուական եւ հակադաշնակցական այլ մութ տարրերի ձեռքը գործիք է եղել կազմակերպութեան դէմ եւ որոշ չափով վարկաբեկել է այդ դատը՝ հայ հասարակութեան առջեւ։*

5) *Կազմակերպելով «Ջինուորական Խորհուրդ», այդ խումբը նպատակ է ունեցել յայտարարել զինուորական դիկտատուրա եւ բռնի միջոցներով իր ձեռքն առնել կուսակցութեան վարչական գործը, դրամը, կայքը, Թիֆլիսի խմբագրութիւնը եւայլն։*

6) *Իրացրել է կազմակերպութեան մի քանի զենքերը։*

7) Թոյլտալ է դարձնել իշխանութեան ձեռքին եւ պահանջում է գաղտնի ոստիկանութեան յատուկ հովանաւորութեան ներքոյ:

8) Ապօրինի այդ մարմնի գործունէութիւնը անպայման աներկդիմի կերպով պարտաւոր է արժանացնել դաշնակցական բոլոր մարմինների եւ գործիչ ընկերների կողմից (երկրի, հովկասի եւ արտասահմանի):

9) «Ժամանակաւոր Ջինուորական Կորհուրդ» անուան տակ միացած ուժերի գործունէութիւնը ոչ միայն խուլիգանական շարժում է, ունենալով նեցուկ բուրժուական հակայեղափոխական մի խմբակ եւ ուս ոստիկանութիւնը, այլեւ մի սաոր դաւաճանութիւն մասնաւորապէս տաճկահայ դատին, որի անունն է չհամագործում:

Այս բոլոր փաստերի հիման վրայ՝ ժողովը վերաքննելով խնդիրը, որոշեց.

1) Համարել Միհրանի եւ «Ջինուորական Կորհրդի» միւս գործակից անդամների վարմունքը ծանր յանցանք կազմակերպութեան եւ նրա պաշտպանած տաճկահայ դատի դէմ, եւ այդ հիման վրայ ճանաչել նրանց ի սպառ արտաքսուած Դաշնակցութեան շարքերից:

2) Հրատարակել այդ որոշումը պաշտօնական օրգանի մէջ:

3) . . . . . .

4) Հրաւիրել դաշնակցական իրաւասու մարմինների ուշադրութիւնն այն հանգամանքի վրայ, որ ապագայում այդ տեսակ անձինք պէտք է անյապաղ ենթարկուեն «Կանոնագրով» նախատեսուած պատասխանատուութեան, առանց սպասելու եւ բերելու այդօրինակ խնդիրները Ընդհանուր Ժողովին:

ՋԵԼՃԱՐԱՐՆԵՐ (31)

Լսելով Ջրաբերդի շրջանի մասին ներկայացուած զեկուցումը եւ գանելով որ այնտեղ տիրող տնտեսական տագնապը եւ զանազան հարստահարութիւնները արդիւնք են կառավարական ընդհանուր անարխէյի, գիւղացու ամէնահողութեան եւ ազգաւորութեան, ինչպէս եւ յեղափոխական նախկին մարտիկների կամ խմբերի մի մասի անբարոյական ամենազարհուրելի գործերի, Ընդհանուր Ժողովը յայտարարում է.

1) Դաշնակցութիւնից հեռացում են ժողովրդի վրայ բռնացող վիճակները, եւ նրանց դէմ կռիւ է յայտարարում կազմակերպական միջոցներով:

2) Աւարառութիւններն, ամէնակոյր խմբերի, ինչպէս եւ անարխէյի առումն առնելու համար, պէտք կազմակերպել եւ իրար չաղկապել գիւղերը:

3) Կազմակերպել գիւղացիութիւնը, նպատակ ունենալ ռուսահպատի յեղափոխական չարժումներին, որոնց յաղթանակը միայն կարող է լուծել հողային ահռելի հարցը՝ ազատելով թէ՛ տեղացուն եւ թէ գաղթականներին տնտեսական ծանր կացութիւնից:

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ
Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին (32)

Ընդհանուր Ժողովը հաճոյքով լսեց կովկասեան Ռայոնական Ժողովի որոշումը եւ երեւանի ընկերների առաջարկը՝ մեր անմոռանալի ընկ. Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքը ապահովելու մասին, ու աչքի առաջ ունենալով, որ այդ հոգսը մինչեւ այժմ ծանրացած է եղել հանգուցեալի անձնական ընկերների վրայ, եւ որ այդ եղանակով դժուար է ապահով պայմաններ մէջ դնել նրա զաւակի կրթութեան գործը, այլեւ այն, որ կազմակերպութեան համար բարոյական պարտաւորութեան խնդիր է՝ օգտուելով այս առիթից՝ արտայայտելու յարգանք մեր ընկերոջ քանկագին յիշատակին, որոշեց՝ կուսակցութեան վրայ առնել այդ գործի կարգադրութիւնը ու պարտաւորեցնել Թիֆլիզի եւ Բագուի մեր մարմիններին՝ անյապաղ գործի գլուխ անցնել եւ ամենաուշը՝ մինչեւ 1907 թուի վերջը, կողմնակի միջոցներով, կազմել մի Ֆոնդ եւ յատկացնել այդ՝ Քրիստափորի ընտանիքի ապահովութեան եւ նրա զաւակի ուսման գործին:

Յանձնարարել Վ...ի եւ Տ...ի մարմիններին, ինչպէս եւ Արեւելեան Բիւրոյին, բարոյական աջակցութիւն ցոյց տալ մեր անմոռանալի ընկերներ Մ.ի եւ Հ.ի ընտանիքներին՝ հոգալով կողմնակի կամ, եթէ այդ անհնար լինի, հնարաւոր միջոցներով, նրանց զաւակների ուսման գործը . . . . . .

ՆԱԽԱՀԱՇԻՒ

(1907)

1) Առժամեայ դրամական միջոցները . . . . .
2) Մարմինների ապահովիչ եկամուտները . . .
3) Բաշխումն . . . . . .

Բաշխման մասը տպագրուած է առաձնի եւ ուղարկուած մարմիններին(33):

ՀԱՇՈՒԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1) Մարմինների հաչիւները . . . . . .
2) Դաշնակցութեան ընդհ. հաչիւները . . . .
3) «Դրամ» կոմիտէի հաչիւները . . . . . .
4) Կազմուն հաչուական յանձնաժողովի, որի պարտաւորութիւնն է՝ քննել, եթէ հարկ լինի նոյնիսկ պատյաններ ընելով, կազմակերպութեան բոլոր մարմինների հաչիւները եւ ներկայացնել իր եզրակացութիւնը հակող օրգանների:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ (34)

1) Արեւելեան Բիւրօ . . . . . .
2) Արեւմտեան Բիւրօ . . . . . .
3) Գաւառախառնաւոր Մարմիններ . . . . . .
4) Ծուցա-ռուսերական Մարմին . . . . . .

ԶԱՆԱԶԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

. . . . . .

ՎՃԻՌՆԵՐ ԱՑԼԵԻԱՑԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Այս վէճերը կը հաղորդուին երկու Բիւրոների միջոցով, կազմակերպական հանապարհով:

(1) Տեսնել էջ 11:
(2) Տեսնել էջ 189–190:
(3) Էջ 121, 122, 123, 138 եւ 140:
(4) Էջ 140:
(5) Էջ 215–216:
(6) Էջ 204:
(7) Էջ 204:
(8) Էջ 140–141:
(9) Կիլիկիա: Տեսնել էջ 283:
(10) Սեբաստիա: Տեսնել էջ 124–125:
(11) Տերսիմ (Դերսիմ): Տեսնել էջ 261:
(12) Տեսնել էջ 214–215:
(13) Տեսնել էջ 250–251:
(14) Տեսնել Իմնի Ցամճամժոդովի արձանագրութիւնները, էջ 294–295:
(15) Նոյն, էջ 295:
(16) Նոյն, էջ 295:
(17) Տեսնել էջ 213:
(18) Էջ 258–259:
(19) Տեսնել էջ 205, 208, 232, 233, 234:
(20) Էջ 262:
(21) Էջ 161:
(22) Էջ 133:
(23) Էջ 289:
(24) Էջ 284:
(25) Իմնի Ցամճամժոդով, — էջ 296:
(26) Էջ 260:
(27) Իմնի Ցամճամժոդով, — էջ 296:
(28) Ամբողջական բանաձեւը տեսնել՝ Իմնի Ցամճամժոդովի արձանագրութեանց կցուած, — էջ 296–297:
(29) Տեսնել էջ 270:
(30) Էջ 243:
(31) Էջ 262:
(32) Էջ 259:
(33) Տեսնել էջ 276, իմչպէս նաեւ էջ 314ի յուսագատնկերը:
(34) Էջ 286–287:

ԽՕՍՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԳԱՂՓՆԻ

ԴՐԱՄԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1907 ԹՒԻ ՀԱՄԱՐ

(ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ Դ.–ՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒԴ)

ՄԱՐՄԻՆՆԵՐ	Մ Ո Ւ Տ Ք (ֆռանկ)					ԲԱՇԽՈՒՄՆ	ԵԼՔ (ֆռանկ)		
	Մնացորդ 1906 թվից	Սպասելիք 1907 թվին	Տիկնայք Նախկ 1907 թվին	Տարեկան 5% կոմիտեից անհատներից	Սպասած տարեկան գումար				
Աբելեանի Բիւրօ	15000	15000	„	750	29250	Ընդամէն	172000	—	
Ոսկեհատոր	40000	60000	30000	3000	67000	Դաւթան—Խաչքաւանդակի *	83000	—	
Մեծ Բաղաք	5000	25000	12500	1250	16250	Յուշարձանին	35000	—	
Նաւահանգիստ	„	20000	10000	1000	9000	Տեւօրական ժողովին	23000	—	
Մշակաւան	2000	30000	15000	1500	15500	Աբելեանի Բիւրոյին	16000	—	
Քար	„	20000	7000	1000	12000	Աբելեանի Բիւրօ—„Դրօշակին“	16000	—	
Ջրաբերդ	„	20000	6000	1000	13000	„Պրօ-Արմենիային“	15000	—	
Ընդամէն	10000	20000	10000	1000	19000	Եւրոպական պրօպագանդին	15000	—	
Այգեհատ	„	20000	10000	1000	9000	Ռուսլագինական-մարմնին	48000	—	
Թլատ-Նալբանդ	12500	20000	8000	1000	23500	Չէնքի փոխադրութեան	37000	—	
Ռուսատ. դաշն. ատեանդ.	„	5000	1000	250	3750	Խանտարկեալների օգնութեան	23000	—	
Կարմիր Խաչ	„	20000	„	1000	19000	Բաստ-Սիմին	10000	—	
Չինիճան	150000	„	„	„	150000	Լեռնավայրին	15000	—	
Վրէժ	200	20000	10000	1000	9200	Վերնաչէնին	12000	—	
Շամ	50000	10000	5000	500	54500	Չինիճանին	105000	—	
Դաւթան-Խաչքաւանդակ	10000	10000	8000	500	11500	Կովկասեան ինքնապաշտպանութեան	53000		
Ջա-Միսխան	26000	„	„	„	26000	Բաղաքական կուսին	30000	—	
Աբելեանի Բիւրօ	12000	25000	„	1250	35750	Կովկաս-կազմակերպական	64000	—	
Ամերիկա	50000	60000	12000	3000	95000	Աբելեան բոլոր պրօպագանդին (գլուխ և բանուոք)	65000	—	
Բալհան	„	25000	5000	1250	18750	Անանկոյների	46000	—	
Եւրոպ. դաշն. ատեանդ.	„	1200	200	60	940	Չինուորական դպրոցին	30000	—	913000
Եգիպտոս	„	5000	1000	250	3750	Ընդհանուր ծողովի ծախքերին			
Վիշապ	150	5000	3000	50	1900				
Ծովափ	18482	1000	500	50	18932				
Ոսկեհանք	„	10000	5000	50	4500				
Լեռնավայր	10000	4000	3000	200	10800				
Փոքրիկ	„	„	„	„	235228				
					913000				913000

* Խոյն յիշեալ գումարէն յատուկ հանգանակութիւն պիտի կատարի յօգուտ Դաւրաժ-Խարձրաւանդակի կուսակցներէն—100,000 ֆր.:

1907. յունիս
ՅԸՆՆԿ.

Հ. Յ. Դ
ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԲԻՒՐՕ

Դ. — ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Հ· Յ· Դաշնակցութեան ամբրանիկ Ծրագիրը տուած ենք Նիւթերու Բ· հատորին մէջ, էջ 11–16:

Յորդորդ Ընդհանուր ժողովը մշակեց նոր Ծրագիր, որու կարգ մը հիմնական գաղափարներն ու պահանջները բանաձեւուած էին արդէն 1905ին, Դաշնակցութեան Երրորդ Բրատարակած Կովկասեան Նախագիծին մէջ: Ընդհանուր ժողովի փակումէն ետք, Ծրագրի վերջնական խմբագրութիւնը կատարեց Ինձի Յանձնաժողովը (տեսնել էջ 296): Հրատարակութեան պատասխանատուութիւնը յանձնուեցաւ Արեւմտեան Բիւրոյին:

Հետաքրքրական են, թէեւ շատ ամփոփ կերպով տրուած, ծրագրային հարցերու շուրջ Ընդհանուր ժողովի ընթացքին տեղի ունեցած զեկուցումները, ներկայացուած բանաձեւերն ու վիճաբանութիւնները (տեսնել էջ 244, 251–253, 270–274, 287–289): Շահեկան է նաեւ Յ· Շահրիկեանի Նախագծային զեկուցագիրը՝ ուղղուած Ընդհանուր ժողովին (տեսնել ԱՋԴԱԿ ՇԱՒԱԹՕՐՆԱԿ-ԴՐՕՇԱԿ, Զ· տարի, թիւ 13, 14 եւ 15):

Հետաքրքրական է նաեւ նկատել՝ որ, մինչ ամբրանիկ Ծրագիրը, իր ներածական բաժնին մէջ, ընկերային–քաղաքական ընդհանուր աշխարհահայեացքի կողքին կարեւոր տեղ կը յատկացնէր տանկահայ իրականութեան եւ թուրք–հայ յարաբերութիւններուն՝ իբրեւ մեկնակէտ մեր պայքարի, մինչ Կովկասեան Նախագիծը կը մեկնէր կովկասահայ իրականութենէն՝ զարգացնելու համար ընկերվարական պատմափիլիսոփայութեան կարգ մը էական կէտերը, մի'շտ փորձելով սակայն պահել կապը կովկասեան պայմաններուն եւ անոնց–մէ բխող մեր գործունէութեան հետ, նոր Ծրագրի ներածական տեսութիւնը բոլորովին ընդհանուր է եւ ամէնքական ազերս չունի Հայ Դատին եւ մեր ազգային–ազատագրական պայքարին հետ: Ազգային դատի հիմնական առաջադրանքները տրուած են Ընդհանուր Տեսութեան հետեւող Բաղաքական Պահանջներու բաժնին մէջ, առանց պատմա–Բաղաքական առանձին հիմնաւորման:

1907ի Ծրագրի Ընդհանուր Տեսութիւնը ցարդ կը մնայ անփոփոխ: Գրեթէ անփոփոխ մնացած են նաեւ Տնտեսական Պահանջները: Բաղաքական Պահանջներն են միայն՝ որ փոփոխութիւններ են կրած պարբերաբար (Օսմանեան Սահմանադրութենէն ետք շատ մասնակի, եւ 1919–1925ին՝ հիմնական):

Գտնելը ամբողջական եւ հարազատ կերպով տուած ըլլալու համար, ստորեւ կը ներկայացնենք, ձախ սիւնակին վրայ, 1907ի Ծրագրի արեւելահայերէն բնագիրը (առնուած 1908ի հրատարակութենէն) եւ, աջ սիւնակին վրայ, արեւմտահայերէն *թեքօքը* (առնուած 1910ի մէկ հրատարակութենէն):

Ծ Ր Ա Գ Ի Ր

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մարդկութեան առաջադիմութիւնը, որ գնալով ազատում է մարդուն բնութեան ուժերի հպատակութենից եւ նրա հլու սպասաւորը դարձնում երբեմնի աստուածներին, չէ կարող կատարեալ նկատուել, քանի դեռ մարդկային մտքի եւ աչխատանքի նուաճումները հաւասարապէս չեն ծառայի հասարակութեան բոլոր անդամների բարօրութեան:

Բոլոր հասարակութիւնների մէջ՝ դեռ անյիչատակ ժամանակներից ի վեր՝ մենք դիտում ենք դասակարգային բաժանումներ — իշխողներ եւ հպատակներ, կեղեքողներ եւ կեղեքուողներ:

Ծ Ր Ա Գ Ի Ր

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մարդկութեան յառաջդիմութիւնը — որ հետզհետէ կ'ազատէ մարդը բնութեան ուժերու հպատակութենէն եւ անոր հլու սպասաւորը կը դարձնէ երբեմնի աստուածները — չի կրնար կատարեալ նկատուիլ, քանի դեռ մարդկային մտքի եւ աչխատանքի նուաճումները հաւասարապէս չեն ծառայեր հասարակութեան բոլոր անդամներու բարօրութեան:

Բոլոր հասարակութիւններու մէջ՝ դեռ անյիչատակ ժամանակներէ ի վեր՝ մենք կը տեսնենք դասակարգային բաժանումներ — իշխողներ եւ հպատակներ, կեղեքողներ եւ կեղեքուողներ:

Հասարակութիւնը ամէն տեղ վերածուած է երկու անհաւասար հատուածների.— շահագործող փոքրամասնութիւնը, իր ձեռքն առած համայնքի, ցեղի հասարակական եւ քաղաքական կեանքի ղեկը, ստեղծում է օրէնքներ ու իրաւակարգեր, որոնց միջոցով խլում է աշխատաւոր մեծամասնութեան ձեռքից նրա արտադրած բարիքները եւ դարձնում նոր զէնք՝ նոյն աշխատաւորներին աւելի եւ աւելի հպատակեցնելու, կեղեքելու համար:

Աշխատանքի կազմակերպուած չհագործման նախնական եւ ամենակոպիտ ձեւն էր հնադարեան ստրկութիւնը, մի սիստեմ՝ որով աշխատաւորների ահագին բանակներ, զուրկ մարդկային ամենատարրական իրաւունքներից, մատնուած էին իրենց տէրերի անսահման քմահաճոյքին:

Նրան յաջորդեց միջնադարեան ճորտութիւնը, համեմատաբար աւելի մեղմ, բայց աւելի լայն չրջան ընդգրկող սիստեմ, ուր աւատականութիւնը (ֆէոդալիզմ) — թագաւոր ու զօրավարներ, վասալներ, աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւններ — կազմակերպուած իրրեւ կեղեքիչների մի հզօր ու համատարած բանակ, ծծում էր բազմամիլիոն գիւղացիութեան վաստակը, հրով ու սրով լռեցնելով նրա ազատագրական ամէն մի ձգտումը:

Փոքր ինչ աղատ չունչ էին քաշում այդ միջնադարեան հասարակութեան մէջ՝ աւեւտրական ու արհեստաւոր դասերը, որոնց ծառայութեանը առանձնապէս պէտք ունէին իշխողները: Արդիւնաբերութեան ու հաղորդակցութեան միջոցների զարգացման հետ՝ բնական տնտեսութիւնը միշտ աւելի եւ աւելի վերածուում էր փողային տնտեսութեան. հնչուն դրամը դառնում էր փոխանակութեան միակ միջոցը, մի ոյժ, որի առջեւ խոնարհւում էին պատերազմասէր, արկածախնդիր հրամանատարները, եւ առեւտրական տարրը, իրրեւ այդ նոր ոյժի ներկայացուցիչ, իրրեւ միջնորդ արժէքների փոխանակութեան մէջ, ստանում էր միշտ աւելի ու աւելի ծանրակչիռ դործօնի նշանակութիւն պետական կեանքում, վայելում էր զանազան առանձնաշնորհումներ եւ յարաբերական ազատութիւն:

Արհեստաւոր տարրերը եւս, չնորհիւ իրենց մէջ վազուժամ առաջացած համքարական կազմակերպութիւնների ու հաւաքական պայքարների, կարողանում էին որոշ չափով մեղմացնել իրենց դրութեան վրայ ծանրացած ճնշումները:

Ահա այդ տեսակ, համեմատաբար նպաստաւոր պայմաններում աճելով, հասարակական երկու դասերը առաջ բերին ժամանակի ընթացքում այն պատմական, հոչակաւոր երրորդ դասակարգը, բուրժուազիան, որին վիճակուած էր՝ գիտակից ուժերի ոչակցութեամբ՝ ահագին յեղաշրջում կատարել հասարակական յարաբերութիւնների մէջ:

Հասնելով զարգացման որոշ աստիճանի՝ նա ըմբռնացաւ աւատական կարգերի դէմ եւ սկսեց կազմակերպուած, երկարատեւ կռիւ: Հրապարակ իջնելով յանուն ազատութեան՝ նա քաշեց իր հետեւից եւ աշխատաւոր մասսաներին: Աւատական ու յարակից կարգերը չդիմացան նրանց միացած գրոհին եւ խորտակուեցին: Այդ կարգերի մնացորդները, այլեւայլ չափերով, յարատեւեցին միայն յետամնաց երկրներում:

Ազատուած աւատականութեան կապանքներից՝ բուրժուազիան մի նոր դարապլուխ բաց արաւ համաշխարհային էւոլիւտիոնի մէջ, հսկայական թռիչք տղորդեց մարդկային աշխատանքին, արդիւնագործութեան ու առեւտրին:

Այն բոլորը բուրժուազիայի պատմական դերի դրական կողմն է: Սակայն խորտակելով աւատական իրաւակարգը՝ նոյն բուրժուազիան հաստատեց իր սեփական իշխանութիւնը: Կեղեքման մեծագործը՝ վարձի բիրտ ուժից անցաւ աւելի քաղաքակիրթ ոյժին — կապիտալին:

Մեծ յեղափոխութեան հոչակաւոր նշանաբանները — ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն — որոնց համար աշխատաւորը չէր ղլացել իր արիւնը թափելու, մնացին իրրեւ պատրանք նրա համար, իսկ բուրժուազիայի ձեռքին՝ իրրեւ միջոց գրաւած դիրքը ամրապնդելու:

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի դեռ անձեռնմխելի էր մնում մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որ հիմնաքարն է հասարակական անհաւասարութեան:

* * *

Որքան աւելի է առաջադիմում տեխնիկան, որքան աւելի է զարգանում խոշոր մեքենային արդիւնագործութիւնը, այնքան աւելի է ուժեղանում ու ծաւալւում բուրժուազիայի տիրապետութիւնը: Մանր արտադրիչները անկարող լինելով դիմանալ մրցման, հետզհետէ կը զրկուին իրենց աշխատութեան միջոցներից եւ կը խտացնեն օրականով բանող ընչազուրկներու (prolétaire) չարքերը: Արդիւնագործութիւնը կը կեդրոնանայ: Դրամագլուխը, հարըստութիւնները կ'ամբարուին չհագործող փոքրամասնութեան ձեռքին մէջ, որ կրնելով իր նիւթական ուժին եւ ձեռքն առած քաղաքական դեկը — յառաջդէմ երկիրներում, — ձգտում է յաւերժացնել իր դիրքը, յարմարցնել ամբողջ հասարակական կազմը իր դասակարգային շահերին, դնել իր յատուկ դրոշմը հասարակական բոլոր երեւոյթների վրայ:

Միլիտարիզմի, կանգուն, մշտական զօրաբանակների միջոցով՝ նա ապահովում է ներսում իր տիրապետութիւնը, իսկ դրսում դրաւում է չուկաներ, իր ապրանքները արտահանելու համար: Ըստ ամէնայնի արհեստական կերպով նա ոյժ է տալիս միլիտարիզմին՝ ազատ մակերպուած երկարատեւ կռիւ մը: Հրապարակ իջնելով յանուն ազատութեան՝ ան իր հետեւէն քաշեց նաեւ աշխատաւորներու զանգուածները: Աւատական եւ յարակից կարգերը չդիմացան անոնց միացած գրոհին եւ խորտակուեցան: Այդ կարգերու մնացորդները, այլեւայլ համեմատութեամբ, յարատեւեցին միայն յետամնաց երկիրներու մէջ:

Աւատականութեան կապանքներէն ազատելով՝ բուրժուազին նոր դարապլուխ մը բացաւ համաշխարհային բնաչրջումին (évolution) մէջ, հսկայական թռիչք մը տուաւ մարդկային աշխատանքին, ճարտարարուեստին եւ առեւտուրին:

Այս ամէնը բուրժուազիին պատմական դերին դրական կողմն է: Սակայն խորտակելով աւատական իրաւակարգը՝ նոյն բուրժուազին հաստատեց իր սեփական իշխանութիւնը: Կեղեքումի մեծագործը վարձի բիրտ ուժէն անցաւ աւելի քաղաքակիրթ ուժին — դրամագլխին (capital):

Մեծ յեղափոխութեան հոչակաւոր նշանաբանները — ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, որոնց համար աշխատաւորը չէր զլացեր թափել իր արիւնը, մնացին իրրեւ պատրանք անոր համար, իսկ բուրժուազիի ձեռքին իրրեւ միջոց՝ գրաւած դիրքը ամրապնդելու:

Այլապէս չէր ալ կրնար ըլլալ, ցորչափ անձեռնմխելի կը մնար մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որ հիմնաքարն է ընկերային անհաւասարութեան:

* * *

Քանի՛ յառաջդիմէ արհեստը, քանի՛ զարգանայ մեքենական խոշոր արդիւնագործութիւնը, այնքան աւելի կ'ուժգնայ եւ կը ծաւալի բուրժուազիի տիրապետութիւնը: Մանր արտադրիչները անկարող ըլլալով մրցումի դիմանալ, հետզհետէ կը զրկուին իրենց աշխատութեան միջոցներէն եւ կը խտացնեն օրականով բանող ընչազուրկներու (prolétaire) չարքերը: Արդիւնագործութիւնը կը կեդրոնանայ: Դրամագլուխը, հարըստութիւնները կ'ամբարուին չհագործող փոքրամասնութեան ձեռքին մէջ, որ կրնելով իր նիւթական ուժին եւ ձեռքն առած քաղաքական դեկը — յառաջդէմ երկիրներու մէջ — կը ձգտի յաւերժացնել իր դիրքը, յարմարցնել ամբողջ հասարակական կազմը իր դասակարգային շահերուն եւ դնել իր յատուկ դրոշմը ընկերային բոլոր երեւոյթներուն վրայ:

Ռազմոյժի (militarisme) կանգուն, մշտական զօրաբանակներու միջոցով՝ ան կ'ապահովէ ներսը իր տիրապետութիւնը, իսկ դրսէն՝ կը դրաւէ չուկաներ, իր ապրանքները արտածելու համար: Շատ անգամ արհեստական կերպով ան ուժ կու տայ ռազմոյժին՝ ազատ դրամագլուխներու գործածութեան նոր ասպարէզ-

կապիտալների գործադրութեանը նոր ասպարէզներ բանալու նպատակով։

Շահագործելով ազգային, կրօնական ու պետական գաղափարները, նա միեւնոյն ժամանակ կանգնում է միջազգային հողի վրայ եւ չահագործում է նաեւ միջազգային յարաբերութիւնները։

Տեխնիկայի հսկայական կատարելագործումները, ըստ երեւոյթին, պիտի թեթեւացնէին աշխատաւոր մարդու բեռը եւ նուազ աշխատանքի հետ համեմատաբար աւելի մեծ բաժին յատկացնէին նորա. բայց նրանք հակառակ հետեւանքներ առաջ բերին, չնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստեմին։ Աշխատանքի մի խոշոր մասը մնում է անվճար, աշխատաւորը ստանում է բաշխման մոմենտում իր արտադրած արժէքների չնչին մասը միայն։ Մեքենաների ներմուծման հետ հետզհետէ նուազից աշխատաւոր ձեռքերի պահանջը, որոնք վաճառքի նիւթ են դարձած, իբրեւ չուկայի ապրանք։ Աշխատաւորի դործօն մասնակցութեան բաժինը՝ արդիւնագործութեան մէջ միշտ աւելի եւ աւելի կրճատուեց։

Կենտրոնացնելով արդիւնագործութիւնը, սեփականատուրկ դարձնելով մեծ արդիւնագործողներին, կապիտալիզմը քայքայման մատնեց աշխատաւորների ընտանիքները, գործարան քաշեց կանանց եւ նոյնիսկ երեխաներին, մի հանգամանք, որ չէր կարող չնպաստել օրավարձի նուազման։

Չնայած անսանձ չահագործումներին ու հարստահարութիւններին, նոյն աշխատաւոր ընդհանրութեան վիճակը բնաւ իրենց աւերիչ ծանրութեամբ՝ հարկերը, մաքսերը, մենավաճառութիւնները, աքցիզները եւ յարաճուն միլիտարիզմի պատուհասը, որի էական նպատակն է ամուր կռել աշխատաւոր ժողովուրդների ստրկութեան չղթաները։

Ոչ պակաս աղէտաբեր է կապիտալիզմը աշխատաւոր դասակարդի համար՝ իր ներքին ճակատագրական հակասութիւններով։

Չնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստեմին եւ գործատէրերի տենդային մրցակցութեան՝ կապիտալիստական արդիւնագործութիւնը անկարող է հաւասարակշռութիւն պահպանել պահանջի եւ առաջարկի միջեւ. դրանից առաջ է գալիս արդիւնագործական անձրեւախիա, որի էական յատկանիշներն են՝ պարբերական տադնապներ, մասսայի անաշխատութիւն, անանկութիւններ, դոյութեան ընդհանուր անապահովութիւն եւայլն։ Ստեղծում է վիճակների մի ցայտուն հակապատկեր. մի կողմից՝ աշխատաւոր մասսաների մերկ, կիսաքաղց գոյութիւն, միւս կողմից՝ ամբարուած առասպելական հարստութիւններ, որոնց մէջ լողում է արտօնաւորուած փոքրամասնութիւնը եւ որոնք սակայն նոյն այդ աշխատաւորների ստեղծագործութիւնն են։ Այդպիսով բուրժուական հասարակութեան մէջ ծայրայեղ թշուառութիւնը առաջանում է հէնց ծայրայեղ առատութիւնից։

Շահագործելով ազգային, կրօնական ու պետական գաղափարները, ան միեւնոյն ատեն կը կանգնի միջազգային հողի վրայ եւ կը չահագործէ նաեւ միջազգային յարաբերութիւնները։

Արուեստի հսկայական կատարելագործումները, ըստ երեւոյթին, պիտի թեթեւցնէին աշխատաւոր մարդուն բեռը եւ քիչ աշխատանքի հետ համեմատաբար աւելի մեծ բաժին յատկացնէին անոր, բայց անոնք հակառակ հետեւանքներ առաջ բերին, չնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստեմին։ Աշխատանքի մէկ կարեւոր մասը կը մնայ անվճար. բաշխումի վայրկեանին աշխատաւորը կը ստանայ իր արտադրած արժէքներուն չնչին մասը միայն։ Մեքենաներու ներմուծման հետ հետզհետէ քիչցաւ աշխատաւոր ձեռքերու խնդրանքը, որոնք վաճառքի նիւթ դարձած են չուկայի ապրանքի պէս։ Աշխատաւորին գործօն մասնակցութեան բաժինը՝ արդիւնագործութեան մէջ՝ միշտ աւելի եւ աւելի կրճատուեցաւ։

Կեդրոնացնելով արդիւնագործութիւնը, ընչազուրկ դարձնելով մանր արտադրիչները, դրամատիրութիւը (capitalisme) քայքայման մատնեց աշխատաւորներու ընտանիքները, դործարան քաշեց կիները եւ նոյնիսկ մանուկները, պարապայ մը, որ չէր կրնար չնպաստել օրավարձի նուազման։

Անսանձ չահագործումներէ ու հարստահարութիւններէ դատ, նոյն աշխատաւոր ընդհանրութեան վրին կը ծանրանան իրենց աւերիչ ժանտութեամբ՝ հարկերը, մաքսերը, մենավաճառները, ըմպելիքի տուրքերը եւ յարաճուն ռազմոյքի պատուհասը, որուն էական նպատակն է ամրապէս կռել սորկութեան չղթաները աշխատաւոր ժողովուրդներուն։

Ոչ նուազ աղէտաբեր է դրամատիրութիւը աշխատաւոր դասակարդին համար՝ իր ներքին ճակատագրական հակասութիւններով։

Չնորհիւ մասնաւոր տնտեսութեան սիստեմին եւ գործարանատէրերու տենդոտ մրցակցութեան՝ դրամատիրական արդիւնագործութիւնը անկարող է հաւասարակշռութիւն պահպանել խնդրանքին եւ առաջարկին միջեւ (offre et demande)։ Ստէպ առաջ կու գայ արդիւնագործական անիշխանութիւն, որուն էական յատկանիշներն են՝ պարբերական տադնապներ, միաժամանակ անգործութիւն, անանկութիւններ, գոյութեան ընդհանուր անապահովութիւն եւայլն։ Կը ստեղծուի վիճակներու ցայտուն հակապատկեր մը. մէկ կողմէ աշխատաւոր դանդուածներու մերկ, կէսանօթի գոյութիւն, միւս կողմէ դիզուած առասպելական հարստութիւններ, որոնց մէջ կը լողայ առանձնաշնորհեալ փոքրամասնութիւնը, եւ որոնք սակայն նոյն այդ աշխատաւորներու ստեղծագործութիւնն են։ Այսպէսով բուրժուական հասարակութեան մէջ ծայրայեղ թշուառութիւնը առաջ կու գայ ծայրայեղ առատութենէն իսկ։

Կապիտալի կենտրոնացումը եւ նրա հետ կապուած աշխատաւոր խաւերի պրոլետարացումը (սեփականատուրկ դառնալը) տարբեր երկրներում կատարւում է տարբեր ոյժով ու չափերով, համաձայն այդ երկրների առանձնայատուկ — բնական, կուլտուրական, քաղաքական — պայմաններին։ Այդ վերջինների չարքում առաջնակարգ տեղ է բռնում հողագործութեան զարգացման ծաւալն ու աստիճանը։

Գիւղական աշխարհում էլոլիւսիոնը տարբեր բնոյթ ունի։ Այնտեղ չի նկատւում հողի կենտրոնացումն։ Սակայն կապիտալիզմի բացասական ներգործութիւնը արտայայտւում է նաեւ այնտեղ՝ գիւղացիական այն տարրերի ճակատագրի վրայ, որոնք ապրում են իրենց սեփական աշխատանքի արդիւնքով, լինեն դրանք գիւղական պրոլետարներ, թէ իրենց մի կտոր հողի վրայ աշխատող գիւղացիներ։

Մինչդեռ արդիւնագործական, ինդուստրիական աշխարհում բանուորութիւնը չահագործւում է կապիտալիստների կողմից ուղղակի, անմիջական կերպով, գիւղում, բացի այն, որ տեղի ունի անուղղակի չահագործումն ապրանքների փոխանակութեան չրջանում, մենք տեսնում ենք նաեւ ուղղակի չահագործում հողատէրերի եւ գիւղական բուրժուազիայի կողմից՝ կապալի, օրավարձի եւ փոխատուութեան ձեւով։

Այդ բոլորի չնորհիւ դասակարգային հակամարտութիւն առաջ է գալիս նաեւ գիւղում, ուր մի կողմը կանգնած է ձրիաձեռ–չահագործողների դասակարգը՝ հողատէրն ու բուրժուան, իսկ միւս կողմը՝ իր քրտինքով ապրող աշխատաւոր գիւղացութիւնը։

Սրելով այդ երկու դասակարգերի յարաբերութիւնները, կապիտալիստական կարգերն անուղղակի ծանրանում եմ ուրեմն նաեւ աշխատաւոր գիւղացիութեան լայն խաւերի վրայ, — ծանրակչիռ հանգամանք մանաւանդ այն երկրներում, ուր գիւղացիութիւնը կազմում է ազգաբնակութեան գերակչռող տարրը։

Այդպիսով ոչ միայն արդիւնագործական պրոլետարիատը, այլեւ աշխատաւոր գիւղացիութիւնը աւելի եւ աւելի դրւում են անհաչտելի հակառակութեան մէջ՝ տիրող բուրժուա–կապիտալիստական կարգերի հետ։

Տարբեր բնոյթ ունի երկու աշխարհներում նաեւ կապիտալիզմի չինարար դերը։ Արդիւնագործութեան, ինդուստրիայի աշխարհում կապիտալիզմը՝ համայնացընելով աշխատանքը, տալով բոլոր գործառնութիւնները վարձու աշխատաւորների ձեռքը, հեռացնելով կապիտալիստներին գործօն մասնակցութիւնից արդիւնագործութեան մէջ, նպաստելով պրոլետարիատի դասակարգային ինքնաճանաչութեան աճման ու կազմակերպման՝ դրանով իսկ նախապատրաստում է ապագայ սոցիալիստական հասարակութեան նիւթական եւ հոգեբանական խարխխները եւ կը հարթէ անոր իրագործումի ճամբան։

Դրամատիրի կեդրոնացումը եւ անոր հետ կապուած աշխատաւոր խաւերուն ընչազուրկ դառնալը տարբեր երկիրներու մէջ տարբեր ուժով եւ տարբեր չափով կը կատարուին, համաձայն այդ երկիրներու առանձնայատուկ՝ բնական, մշակութական (culturel), քաղաքական պայմաններուն։ Այդ վերջիններու չարքին մէջ առաջնակարգ տեղ կը բռնէ հողագործութեան զարգացման ծաւալն ու աստիճանը։

Գիւղական աշխարհին մէջ բնաչրջումը տարբեր բնոյթ ունի։ Հոն հողի կեդրոնացում նկատելի չէ։ Սակայն դրամատիրութեան ժխտական ներգործութիւնը հոն ալ կ'արտայայտուի գիւղացիական այն տարրերու ճակատագրին վրայ, որոնք կ'ապրին իրենց սեփական աշխատանքի արդիւնքով, ըլլան անոնք գիւղական ընչազուրկ աշխատաւորներ՝ կամ իրենց կտոր մը հողին վրայ աշխատող գիւղացիներ։

Մինչդեռ ճարտարարուեստական աշխարհին մէջ բանուորութիւնը ուղղակի անմիջական կերպով կը չահագործուի դրամատէրերու կողմէ, գիւղին մէջ՝ ապրանքներու փոխանակութեան չրջանին ունեցող անուղղակի չահագործումէն զատ, մենք կը տեսնենք նաեւ ուղղակի չահագործում հողատէրերու եւ գիւղական դրամատէրերու կողմէ կապալի, օրավարձի եւ փոխատուութեան ձեւով։

Այս ամէնուն չնորհիւ դասակարգային հակամարտութիւն առաջ կու գայ նաեւ գիւղին մէջ, ուր մէկ կողմը կանգնած է ձրիաձեռ–չահագործողներու դասակարգը՝ հողատէրն ու բուրժուան, իսկ միւս կողմը՝ իր քրտինքով ապրող աշխատաւոր գիւղացիութիւնը։

Սրելով այդ երկու դասակարգերուն յարաբերութիւնները, դրամատիրական կարգերը անուղղակի կը ծանրանան ուրեմն նաեւ աշխատաւոր գիւղացիութեան լայն խաւերուն վրայ, — ծանրակչիռ հանգամանք մանաւանդ այն երկիրներուն մէջ, ուր գիւղացիութիւնը կը կազմէ ազգաբնակութեան գերակչիռ տարրը։

Այդպէսով ոչ միայն արդիւնագործական ընչազուրկ աշխատաւորութիւնը, այլեւ աշխատաւոր գիւղացիութիւնը երթալով անհաչտելի ներհակութեան մը մէջ կը դրուին տիրող բուրժուա դրամատիրական կարգերուն դէմ։

Երկու աշխարհներու մէջ տարբեր բնոյթ ունի նաեւ դրամատիրութեան չինարար դերը։ Ճարտարարուեստի աշխարհին մէջ դրամատիրութիւնը՝ համայնացնելով աշխատանքը, տալով բոլոր գործառնութիւնները վարձու աշխատաւորներուն ձեռքը, հեռացնելով դրամատէրերը արդիւնագործութեան մէջ գործօն մասնակցութենէ, նպաստելով ընչազուրկներու ինքնաճանաչութեան աճման ու կազմակերպման՝ ատով իսկ կը նախապատրաստէ ապագայ ընկերվար հասարակութեան նիւթական եւ հոգեբանական խարխխները եւ կը հարթէ անոր իրագործումի ճամբան։

Այդպէսով, ճարտարարուեստական չրջանին մէջ,

Այդպիսով, ինդուստրիական չրջանում, աշխատանքն արդէն համայնացած լինելով, սոցիալիզմի իրականացումը պահանջում է միայն արդիւնագործութեան միջոցների համայնացումն, մինչդեռ գիւղական աշխարհում, ուր չի նկատւում հողերի կենտրոնացում՝ սոցիալիզմի իրականացման համար անհրաժեշտ է համայնացնել ե՛ւ արդիւնաբերութեան միջոցները — հող, մեքենաներ եւայլն, — ե՛ւ աշխատանքը՝ կօօպերատիւ ձեռնարկների միջոցով։

***

Հասարակական ընդհանուր էւոլիւսիոնի այդ ընթացքը առաջ բերելով՝ մրցում անհատ չհագործողների միջեւ, մրցում առանձին երկիրների չհագործող դասակարգերի միջեւ, կուիւ դրամատէրերի եւ աշխատաւորների միջեւ, կուիւ յաճախ նոյնիսկ աշխատաւորական խմբումների միջեւ — պատճառ է դառնում մարդկային անչափ էներդիայի ապարդիւն վատնումին։ Բաժին տալով մարդկութեան մի մասին մաշող աշխատանքը, միւսին պարապ ու զուարճամոլ կեանքը, մէկին թողնելով քայքայուել թշուառութիւնից, միւսին այլասեռուել հարստութիւնից — նա դրանով իսկ հանդիսանում է զօրեղ խոչընդոտ մարդկային առաջադիմութեան դործում։

Կապիտալիզմի անանկութիւնը ակներեւ է. կուլտուրական յառաջադիմութեան դրօշակը իրօք անցել է արդէն աշխատաւոր դասակարգերի ձեռքը, որոնք հակադրւում են կապիտալիզմին՝ սոցիալիզմը։

Սոցիալիզմի վարդապետութեամբ առաջնորդուելով, աշխատաւոր դասակարգերը ձգտում են վերացընել կապիտալիստական մասնաւոր սեփականութիւնը եւ նրա հետ կապուած անարխիական արդիւնագործութեան սիստեմը, հասարակական ընդհանուր սեփականութիւն դարձնել աշխատանքի, արդիւնագործութեան միջոցները — հողը, հանքերը, գործարանները, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցները եւ այլն — եւ բովանդակ տնտեսութիւնը կազմակերպել ու ղեկավարել համաբաժնօրէն։

Այդ հսկայական յեղաշրջումը կը կատարուի յօգուտ ոչ միայն աշխատաւորների, այլեւ բովանդակ մարդկութեան։ Բայց քանի որ նա հակասում է ունեւոր, իշխող դասակարգերի անմիջական չահերին, ուստի աշխատաւոր ընդհանրութեան ազատագրումը կարող է էապէս կատարուել նոյն աշխատաւորների ճիգերով, նրանց հաւաքական կուռով։ Այդ կուռի մէջ միանում են, ձեռք-ձեռքի տալիս՝ քաղաքային արդիւնաբերական պրոլետարիատը, աշխատաւոր գիւղացութիւնը եւ յեղափոխական ինտելիգենցիան։

Ինչպէս յաճախ դիտուել է պատմութեան ընթացքում, այսօր եւս ամենաառաջադէմ հոսանքի՝ սոցիալիզմի կողմն են անցնում երբեմն նոյնիսկ իշխող դասակարգերից առաւելապէս գիտակից տարրերը, մտաւոր ու բարոյական հեղինակութիւնները, որոնք եւ ուժեղ աջակից են հանդիսանում աշխատաւոր ժողովրդի դատին, նրա վարած կուռին։

Այդ կռիւը մղուել է ամբողջ պատմութեան ընթացքում. հարստահարուած աշխատաւորութիւնը ըմբոստացել է յաճախ տիրող ռեժիմի դէմ, բայց անկազմակերպ, տարտամ վիճակում, առանց նպատակի պարզ դիտակցութեան եւ առաջնորդուելով ուրիշ տարրերից, ծառայելով դլխաւորապէս նրանց չահերին։ Միայն այն ժամանակ, երբ աշխատաւոր դասակարգերը իրենց արեամբ նուաճեցին քաղաքական եւ քաղաքացիական չատ թէ քիչ ընդարձակ իրաւունքներ, երբ նրանք ձեռք բերին հնարաւորութիւն՝ որոչ չափով օգտուելու քաղաքակրթութեան ընդհանուր հոսանքից — այն ժամանակից միայն նրանք սկսեցին իրենց սեփական քաղաքականութիւնն ունենալ. նրանց ձգտումները՝ մինչ այն անկերպարան՝ արտայայտուեցին դասակարգային չահերի ներհակութեան աւելի եւ աւելի յստակ դիտակցութեամբ, նրանց ըմբոստացումները՝ մինչ այն տարերային ու բաժան-բաժան՝ վերածուեցին կազմակերպուած ու սիստեմատիկ պայքարի, աշխատաւորական ուրոյն լողունգներով։

Սոցիալիստական չարժումը իր էութեամբ միջազգային է։ Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրեւ միեւնոյն տնտեսական սիստեմի զոհեր, պիտի միանան եւ արդէն միանում են համաշխարհային մի հզօր եղբայրակցութեան մէջ, ու դիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ իրենց յաղթանակի վրայ, դիմում են կազմակերպուած կուռի ճանապարհով դէպի նոր, սոցիալիստական կարգերը։

Սոցիալիստական չարժումը իր էութեամբ միջազգային է։ Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրեւ միեւնոյն տնտեսական սիստեմի զոհեր, պէտք է միանան եւ արդէն միանում են համաշխարհային հզօր եղբայրակցութեան մէջ, ու դիտակից իրենց բարձր առաքելութեան, վստահ իրենց յաղթանակի վրայ, կը դիմեն կազմակերպուած պայքարի ճամբով դէպի նոր, ընկերվարական կարգերը։

***

Աշխատաւոր ընդհանրութեան կազմակերպուող եւ միշտ աւելի աճող ուժին՝ բուրժուազիան հակադրում է իր յստուկ քաղաքականութիւնը, որը տարբերւում է, համաձայն միջավայրի պայմաններին։ Այն երկրներում, ուր նա գերիշխող է, ուր նրա ձեռքումն է քաղաքական դեկը, նա բացարձակ կուիւ է մղում աշխատաւորական բանակի դէմ, միացնելով իր հետ բեկորները աւատական իշխանութեան, որի դէմ էր հանում նա մի ժամանակ նոյն աշխատաւոր մասսաներին։ Իսկ այն երկրներում, ուր աշխատաւորները սկսել են կապիտալիզմի դեմ մատաղ հասակում եւ սկսել են իրենց կուիւը միաժամանակ չահագործման բոլոր ձեւերի դէմ, բուրժուազիան, լինելով չնչին մի՛ւ միապետական ռեժիմին ե՛ւ աշխատաւորական չարժման՝ մերթ խրախուսում է աշխատաւոր բանակը ընդդէմ միապետութեան, որի գոյութեամբ կաշկանդուած

իր զարդացումը, մերթ թեւ է տալիս նոյն միապետութեան, երբ աշխատաւորների յաջողութիւնները սպառնում են խախտել իր հիմնական դիրքերը։

Դասակարգային կռիւը բարդանում է մանաւորապէս այն երկրներում, ուր գերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական եւ հասարակական բոլոր հաստատութիւնները, ճնշում են թոյլ ազգերին եւ առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւնները։

Զրկուելով հասարակական ու պետական կեանքին ակտիւ մասնակցելու հնարաւորութիւնից, տուժելով ե՛ւ նիւթապէս ե՛ւ կուլտուրապէս, այդ թոյլ միութիւնները յետ են մնում յառաջդիմութեան ճանապարհի վրայ, եւ այդպիսով դանդաղում է համամարդկային կուլտուրայի հետ աշխատաւորի սոցիալական ազատագրութիւնը, քանի որ այդպիսով խոչընդոտ է դրւում մի կողմից՝ դասակարգային հակամարտութեան զարգացմանը ճնշուած ազգութիւնների մէջ, միւս կողմից՝ ճնշող ու ճնշուող ազգերին պատկանող աշխատաւոր դասակարգերի համերաշխութեանը։

Փոքրիկ, նուաճուած կուլտուրական միութիւնների մէջ աշխատաւոր տարրերը, կռուելով հանդերձ իրենց ցեղակից բուրժուազիայի դէմ, միեւնոյն ժամանակ նախանձախնդիր են իրենց ուրոյն ազգային կուլտուրայի, որը ստեղծել է ժողովրդական առանձնայատուկ հոգեբանութիւն։

Ազգային ճնշումների դէմ մղուող կռիւը աւելի յաճառ ու յաղթանակող է դառնում՝ չնորհիւ այն հանգամանքի, որ այժմ այդ կուլտուրայի ներկայացուցիչները միայն ազգի «վերին» խաւերը չեն. ազգային կուլտուրան թափանցում է ժողովրդական լայն մասսաների մէջ ու դառնում նրանց սեփականութիւնը եւ յառաջդիմութեան միջոցը։ Ժողովրդական մասսաները իրենց իներտ դրութիւնից դիտակից կեանքի ասպարէզ նետուելով, երեւան են հանում թաքնուած ուժեր՝ կուլտուրական–հասարակական աշխարհում։

Փափաքելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմանները ու խորութիւնները ազգերի միջեւ, ձգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն, ի տեղի այսօրուայ կորստուած, բաժան–բաժան ու հակամարտ աշխարհի, սոցիալիզմի իրականացումը չի պահանջում այժմեան ուրոյն ազգային միութիւնների ի սպառ ձուլումը. միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր առանձնայատկութիւններով կարող են միայն հարստացնել ապագայ սոցիալիստական մարդկութիւնը։

*
**

Աշխատաւոր դասակարգերի կռիւը յանուն սոցիալիզմի առաջ է տարում բոլոր հնարաւոր միջոցներով, կը տեսնէ իր զարգացումը, մերթ ալ թեւ կու տայ նոյն միապետութեան, երբ աշխատաւորներուն յաջողութիւնները կը սպառնան խախտել իր հիմնական դիրքերը։

Դասակարգային պայքարը կը բարդանայ մանաւանդ այն երկիրներուն մէջ, ուր գերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական եւ ընկերային բոլոր հաստատութիւնները, կը ճնշեն թոյլ ազգերը եւ առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւնները։

Զրկուելով ընկերային եւ պետական կեանքին գործօն մասնակցութեան հնարաւորութենէն, տուժելով թէ՛ նիւթապէս եւ թէ՛ մշակութապէս, այդ թոյլ միութիւնները ետ կը մնան յառաջդիմութեան ճամբուն վրայ, եւ այդպէսով կը դանդաղի համամարդկային զարգացման հետ աշխատաւորին ընկերվարական ազատագրումը, քանի որ այդպէսով խոչընդոտ կը դրուի, մէկ կողմէն՝ դասակարգային հակամարտութեան զարգացումին՝ ճնշուած ազգութիւններու մէջ, միւս կողմէ՝ ճնշող ու ճնշուող ազգերուն պատկանող աշխատաւոր դասակարգերուն համերաշխութեանը։

Փոքրիկ, նուաճուած մշակութային միութիւններու մէջ աշխատաւոր տարրերը պայքարելով հանդերձ իրենց ցեղակից բուրժուազիի դէմ, միեւնոյն ատեն նախանձախնդիր են իրենց ուրոյն ազգային մշակոյթին (culture), որ ստեղծած է ժողովրդական առանձնայատուկ հոգեբանութիւն մը։

Ազգային ճնշումներու դէմ մղուող պայքարը աւելի յամառ ու յաղթանակող կը դառնայ, չնորհիւ այն հանգամանքին, որ հիմա այդ մշակոյթի ներկայացուցիչները միայն ազգին «վերին» խաւերը չեն. ազգային մշակոյթը կը թափանցէ ժողովրդական լայն զանգուածներու մէջ եւ կը դառնայ անոնց սեփականութիւնը եւ անոնց յառաջդիմութեան միջոցը։ Ժողովրդական զանգուածները իրենց անչարժ դրութենէն նետուելով դիտակից կեանքի ասպարէզը, երեւան կը հանեն թաքուն ուժեր՝ մշակութային–ընկերային աշխարհին մէջ։

Փափաքելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմանները ու խորութիւնները ազգերու միջեւ, ձգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն մը, այսօրուան կտոր–կտոր, բաժան–բաժան ու հակամարտ աշխարհին տեղ, — ընկերվարական իրագործումը չի պահանջեր արդի ուրոյն ազգային միութիւններուն ի սպառ ձուլումը. միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր մանաւանդ յատկութիւններով կարող են միայն ճոխացնել ապագայ ընկերվար մարդկութիւնը։

*
**

Աշխատաւոր դասակարգերու պայքարը յանուն ընկերվարութեան առաջ կը տարուի բոլոր հնարաւոր մի-

— տնտեսական եւ քաղաքական հողի վրայ։ Օգտուելով խոշոր տնտեսութեան ներկայացրած առաւելութիւններից, գործարանական բանուորները ձգտում են կազմակերպուել, առաջ տանել տնտեսութեան բոլոր բարդ գործառնութիւնները միմիայն իրենց ուժերով եւ իրականացնել դեռ ներկայ կարգերում, — կոոպերատիւ–ների, արդիւնաբերող ու սպառող ընկերակցութիւնների միջոցով — համայնական սեփականատիրութեան ու տնտեսութեան մի քանի ձեւերը։

Կոոպերատիւ աշխատանքը տարածւում է նաեւ գիւղական աշխարհում, ուր միեւնոյն ժամանակ կատարելագործւում են արդէն վաղուց գոյութիւն ունեցող համայնական սեփականատիրութեան ու աշխատանքի տեսակները։ Կոոպերասիոնները ոչ միայն միջոց են որոշ չափով ապահովելու աշխատաւորների առօրեայ չահերը, այլեւ ճանապարհ՝ գործնականապէս համայնական ոգով դաստիարակելու աշխատաւորներին, պատրաստելու նրանց ապագայ սոցիալական կազմակերպութեան համար։

Աշխատաւորական կուսակցութիւնները միւս կողմից անդադար կռիւ են մղում քաղաքական հողի վրայ, քանի որ տիրող անհաւասարութիւնը պահպանում է գլխաւորապէս բուրժուազիայի քաղաքական գերիշխանութեամբ։

Օգտուելով անցեալի փորձերից եւ իրենց յարաճուն ազդեցութիւնից, նրանք պատրաստւում են ձեռք ձգելու քաղաքական դեկը, որպէսզի ստեղծեն նպաստաւոր պայմաններ իրենց սոցիալական իդէալի իրագործման համար, ռամկավարացնել ամենալայն չափերով քաղաքական կազմակերպութիւնը, վերածել պետութիւնները դաշնակցական–ռամկավար հանրապետութիւնների, ապակենտրոնացման ամենաընդարձակ հիմքերի վրայ եւ իրագործել էքսպրոպրիացիայի (արտագրաւում) միջոցով սոցիալիստական կարգերը։

Սոցիալիզմը կը հաւաքէ իր դրօշակի տակ ամբողջ տառապող մարդկութիւնը, կռուելու համար միջազգայնօրէն կազմակերպուած չահագործման ու բռնակալութեան դէմ։

Նա կը հարթէ ճանապարհը դէպի անհատի եւ հասարակական միութիւնների ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը. նա հրապարակ կը հանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք թաքնուած են մնում այլ եւ այլ ձեւերով արտայայտուող ճնշումների տակ։

Նա կը խորտակէ այն բոլոր անջրպետները, որոնք չերտաւորում են ժամանակակից հասարակութիւնը, բաժանելով նրան հպատակ ու հակամարտ, թշնամացած դասակարգերի։

Նա վերջ կը դնէ չահագործման բոլոր յայտնի ու դիմակաւորուած ձեւերին. կը միացնէ բոլոր ժողովուրդները մի հոյակապ Դաշնակցութեան մէջ, խաղաղ աշխատակցութեան հողի վրայ. նա կ'առաջնորդէ դէպի իսկական թագաւորութիւնը «ազատութեան, հա-

ջոցներով, — տնտեսական եւ քաղաքական հողի վրայ։ Օգտուելով խոշոր տնտեսութեան ներկայացուցած առաւելութիւններէն, գործարանի բանուորները կը ձգտին կազմակերպուիլ, առաջ տանիլ տնտեսութեան բոլոր բարդ գործառնութիւնները միմիայն իրենց ուժերով եւ իրագործել տակաւին ներկայ կարգերուն մէջ — գործակցութիւններու, արդիւնաբերող եւ սպառող ընկերակցութիւններու միջոցով — համայնական սեփականատիրութեան ու տնտեսութեան քանի մը ձեւերը։

Գործակցական աշխատանքը կը տարածուի նաեւ գիւղական աշխարհին մէջ, ուր միեւնոյն ատեն կը կատարելագործուին՝ արդէն չատոնց գոյութիւն ունեցող համայնական սեփատիրութեան ու աշխատանքի տեսակները։ Գործակցութիւնները ոչ միայն միջոց են որոշ չափով ապահովելու աշխատաւորներու առօրեայ չահերը, այլեւ ճամբայ մը՝ գործնականապէս համայնական ուղով դաստիարակելու աշխատաւորները, պատրաստելու զանոնք ապագայ ընկերվար կազմակերպութեան համար։

Աշխատաւորական կուսակցութիւնները միւս կողմէ անդադար պայքար կը մղեն քաղաքական հողի վրայ, քանի որ տիրող անհաւասարութիւնը կը պահպանուի գլխաւորապէս բուրժուազիի քաղաքական գերիշխանութեամբ։

Օգտուելով անցեալի փորձերէն եւ իրենց յարաճուն ազդեցութենէն, անոնք կը պատրաստուին ձեռք ձգել քաղաքական դեկը, որպէսզի ստեղծեն նպաստաւոր պայմաններ իրենց ընկերվարական իդէալին իրագործման համար, — ռամկավարացնել ամենալայն համեմատութեամբ քաղաքական կազմակերպութիւնը, վերածել պետութիւնները դաշնակցական – ռամկավար հանրապետութիւններու, ապակեդրոնացման էն ընդարձակ հիմերու վրայ եւ իրագործել արտասեփոմի (expropriation) միջոցով ընկերվարական կարգերը։

Ընկերվարութիւնը կը հաւաքէ իր դրօշին տակ ամբողջ տառապող մարդկութիւնը, կռուելու համար միջազգայնօրէն կազմակերպուած չահագործումի ու բռնակալութեան դէմ։

Ան կը հարթէ ճամբան անհատին եւ ընկերային միութիւններուն դէպի ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը։ Հրապարակ կը հանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք պահուած կը մնան այլեւայլ ձեւերով արտայայտուող ճնշումներու տակ։

Ան կը խորտակէ այն բոլոր անջրպետները, որոնք կը չերտաւորեն ժամանակակից հասարակութիւնը, բաժնելով զայն հպատակ ու հակամարտ, թշնամացած դասակարգերու։

Ան վերջ կը դնէ չահագործման բոլոր յայտնի ու դիմակաւոր ձեւերուն. կը միացնէ բոլոր ժողովուրդները հոյակապ դաշնակցութեան մը մէջ, խաղաղ աշխատակցութեան հողի վրայ. կ'առաջնորդէ դէպի իս-

ւսաարութեան եւ եղբայրութեան»։

Եւ այդ իդէալը բոլոր տանջուածների ու հալածուածների՝ չի ներկայանում մեզ՝ իբրեւ մի անհող, անխարխափ ցնորք, այլ միանգամայն իրագործելի մի հնարաւորութիւն, որովհետեւ նա ոչ միայն բխում է իրերի օբեկտիւ, տարերային ընթացքից, այլեւ թեւաշրջում է հրամայականօրէն՝ պատմութիւնը առաջ չարժող մասսաների ու անհատների կամքից, խղճից ու բանականութիւնից։

Պատմութեան օբեկտիւ եւ սուբեկտիւ ստեղծագործող ուժերի զուգաւորման մէջն է գրաւականը այն անտարակուսելի յաղթանակի, որ պիտի տանէ աչխատաւոր մարդկութիւնը ընդդէմ թէ՛ բնութեան կոյր ուժերի եւ թէ՛ հասարակութեան մէջ դարերով թագաւորող ստրկութեան ու անարդարութեան։

II

ՆՈՒԱՃԱԳՈՑՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հ. Ց. Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւն, ձգտում է պաշտպանել հայ աչխատաւոր մասսաների բովանդակ շահերը, թէ՛ տնտեսական–դասակարգային, թէ՛ մարդկային–քաղաքական եւ թէ՛ ազգային–կուլտուրական, նպատակ ունենալով ժողովրդի ձեռքը տալ կառավարութեան դեկը եւ այժմեան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ ու արդիւնաբերութեան միջոցների համայնացումով։

Ղեկավար ունենալով սոցիալիստական սկզբունքները եւ կանգնած մեր բնական վայրերի իրական ու հասունացած կարիքների վրայ՝ կուսակցութիւնը առաջադրում է հետեւեալ նուազագոյն – minimum պահանջները.

1) ԹԻՒՐՔԱՑ–ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ քաղաքական–տնտեսական ազատութիւն, հիմնուած տեղական լայն ինքնավարութեան եւ դաշնակցական(1) կապերի վրայ, Օսմանեան պետութեան սահմաններում։

2) Օսմանեան կենդրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ռամկավար(2) ներկայացուցչութեան սիստեմի վրայ, վարում է պետութեան ընդհանուր գործերը — արտաքին քաղաքականութիւն, զօրք, դրամ, մաքս, փոստ–հեռագիր, պետական միւս ֆոնկսիոնները թողնելով տեղական ինքնավար չրջաններին։

3) Թիւրքաց–Հայաստանը, իբրեւ Օսմանեան ֆեդերատիւ պետութեան մի մասը, վայելում է ազատութիւն իր ներքին գործերում։ Նրա բոլոր չրջանները ու համայնքները ներքին խնդիրներում նոյնպէս վայելում են տեղական ինքնավարութիւն։

4) Թիւրքաց–Հայաստանի թէ՛ կենտրոնական եւ թէ առանձին չրջանների օրէնսդրական–վարչական բոլոր մարմինները պէտք է ընտրուին ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեան սկզբունքով, առանց ցեղի, կրօնի եւ սեռի խտրութեան։

II

ՆՈՒԱՃԱԳՈՑՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հ. Ց. Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւն, կը ձգտի պաշտպանել հայ աչխատաւոր զանգուածներուն բովանդակ շահերը, թէ՛ տնտեսական–դասակարգային, թէ՛ մարդկային–քաղաքական եւ թէ ազգային–մշակութային, նպատակ ունենալով ժողովուրդին ձեռքը տալ կառավարութեան դեկը եւ արդի միապետական եւ դրամատիրական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ եւ արդիւնաբերութեան միջոցներու համայնացումով։

Ղեկավար ունենալով ընկերվարական սկզբունքները, եւ նկատի ունենալով մեր բնական վայրերու իրական ու հասունցած պէտքերը՝ կուսակցութիւնը կ'առաջադրէ հետեւեալ նուազագոյն պահանջները.

ԹԻՒՐՔԱ–ՀԱՅԱՍՏԱՆ

1) Թիւրքաց Հայաստանի մէջ՝ քաղաքական–տնտեսական ազատութիւն, հիմնուած տեղական լայն ինքնավարութեան եւ դաշնակցական(1) կապերու վրայ, Օսմանեան պետութեան սահմաններուն մէջ։

2) Օսմանեան կեդրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ռամկավար(2) ներկայացուցչութեան սիստեմի վրայ, կը վարէ պետութեան ընդհանուր գործերը — արտաքին քաղաքականութիւն, զօրք, դրամ, մաքս, փոստ–հեռագիր, պետական միւս ֆոնկսիոնները թողնելով տեղական ինքնավար չրջաններին։

3) Թիւրքաց–Հայաստանը, իբրեւ Օսմանեան դաշնակցական(1) պետութեան մէկ մասը, ազատութիւն կը վայելէ իր ներքին գործերուն մէջ։ — Անոր բոլոր չրջաններն ու համայնքները ներքին խնդիրներու մէջ նոյնպէս կը վայելեն տեղական ինքնավարութիւն։

4) Թիւրքաց–Հայաստանի թէ՛ կեդրոնական եւ թէ՛ առանձին չրջաններու օրէնսդրական–վարչական բոլոր մարմինները պէտք է ընտրուին ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական քուէարկութեան սկզբունքով, առանց ցեղի, կրօնի եւ սեռի խտրութեան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

5) Անդրկովկասի ռամկավար(2) հանրապետութիւնը կը կազմէ Ռուսաստանի դաշնակցական հանրապետութեան անբաժան մասը, կապուած անոր հետ պետական ինքնապաչտպանութեան, դրամական սիստեմի, մաքսի եւ արտաքին քաղաքականութեան խնդիրներով։

6) Ներքին բոլոր գործերուն մէջ Անդրկովկասեան հանրապետութիւնը անկախ է, ունի իր կենտրոնական ԵրեսփՓոդովը, ընտրուած՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական քուէարկութեան դրութեամբ։ Իւրաքանչիւր անդրկովկասցի, որ անցուցած է 20 տարին, իրաւունք ունի, առանց սեռի խտրութեան, ընտրելու։

7) Անդրկովկասը Ռուսաստանի համապետական ԵրեսփՓոդովը կը ղրկէ իր ներկայացուցիչները՝ ընտրուած քուէարկութեան նոյն սիստեմով։

8) Անդրկովկասեան հանրապետութիւնը կը բաժանուի նահանգներու (canton), որոնք կը վայելեն տեղական ամենալայն ինքնավարութիւն։ Համայնքները նոյնպէս կը վայելեն ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներուն մէջ։

9) Նահանգներու սահմանները որոշելիս՝ պէտք է նկատի առնել ազգաբնակութեան տեղագրական եւ կուլտուրական առանձնայատկութիւնները, ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար։

10) Օրէնսդրական, դատաստանական, վարչական բոլոր մարմինները, ինչպէս եւ պաշտօնեաները ընտրուում են, ժողովրդի կողմից, վերեւ յիչուած ընտրողական սիստեմով։

11) Ուղղակի օրէնսդրութիւն, ռեֆերէնդումի եւ նախաձեռնութեան իրաւունք։

զօրք, դրամ, մաքս, փոստ–հեռագիր, պետական միւս ֆոնկսիոնները թողնելով տեղական ինքնավար չրջաններին։

3) Թիւրքաց–Հայաստանը, իբրեւ Օսմանեան դաշնակցական(1) պետութեան մէկ մասը, ազատութիւն կը վայելէ իր ներքին գործերուն մէջ։ — Անոր բոլոր չրջաններն ու համայնքները ներքին խնդիրներու մէջ նոյնպէս կը վայելեն տեղական ինքնավարութիւն։

4) Թիւրքաց–Հայաստանի թէ՛ կեդրոնական եւ թէ՛ առանձին չրջաններու օրէնսդրական–վարչական բոլոր մարմինները պէտք է ընտրուին ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական քուէարկութեան սկզբունքով, առանց ցեղի, կրօնի եւ սեռի խտրութեան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

5) Անդրկովկասի ռամկավար(2) հանրապետութիւնը կը կազմէ Ռուսաստանի դաշնակցական հանրապետութեան անբաժան մասը, կապուած անոր հետ պետական ինքնապաչտպանութեան, դրամական սիստեմի, մաքսի եւ արտաքին քաղաքականութեան խնդիրներով։

6) Ներքին բոլոր գործերուն մէջ Անդրկովկասեան հանրապետութիւնը անկախ է, ունի իր կեդրոնական ԵրեսփՓոդովը, ընտրուած՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական քուէարկութեան դրութեամբ։ Իւրաքանչիւր անդրկովկասցի, որ անցուցած է 20 տարին, առանց սեռի խտրութեան իրաւունք ունի ընտրելու։

7) Անդրկովկասը Ռուսաստանի համապետական ԵրեսփՓոդովը կը ղրկէ իր ներկայացուցիչները՝ ընտրուած քուէարկութեան նոյն դրութեամբ։

8) Անդրկովկասեան հանրապետութիւնը կը բաժանուի նահանգներու (canton), որոնք կը վայելեն տեղական ամենալայն ինքնավարութիւն։ Համայնքները նոյնպէս կը վայելեն ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներու մէջ։

9) Նահանգներու սահմանները որոշած ատեն՝ պէտք է նկատի առնել ազգաբնակութեան տեղագրական եւ մշակութական մասնայատկութիւնները, ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար։

10) Օրէնսդրական, դատաստանական, վարչական բոլոր մարմինները, ինչպէս եւ պաշտօնեաները կ'ընտրուին ժողովրդեան կողմէ, վերեւ յիչուած ընտրական դրութեամբ։

11) Ուղղակի օրէնսդրութիւն, համաժողովրդական քուէարկութեան (référendum) եւ նախաձեռնութեան իրաւունք։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

12) Ազատութիւն խօսքի, մամուլի, խղճի, ժողովների, միութիւնների եւ գործադուլների։

13) Եկեղեցու բաժանումը պետութենէ։ Կրօնը անհատական խղճի գործ է։

14) Ազգերի ինքնորոշման իրաւունք։ Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերի ու կրօնական համայնքների։ Ոչնչացումն դասակարգային բոլոր առանձնաշնորհումների։

15) Անձեռնմխելիութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան։

16) Ազատութիւն տեղափոխութեան։ Վերացումն անցագրերի։

17) Ընդհանուր, պարտադիր եւ ձրի սկզբնական ուսում պետական հաշուով։ Դպրոցների աշխարհականացում։ Դասաւորութիւն մայրենի լեզուով։

18) Ձրի դատավարութիւն։

19) Կուլտուրական նպատակների յատկացրած պետական, կանտոնային եւ չրջանային բիւդջէի բաժանումն առանձին ազգութիւնների միջեւ, համաձայն ազգաբնակութեան քանակի, դրա գործադրութիւնը, ինչպէս եւ իւրաքանչիւր ժողովրդի կուլտուրական գործերի ղեկավարումը յանձնելով ընտրուած ուրոյն մարմինների։

20) Համայնական եւ կանտոնային բոլոր պաշտօնեաների համար պարտաւորական է տեղական երկու գլխաւոր լեզուների իմանալը, իսկ ընդհանուր պաշտօնեաների համար՝ երեք գլխաւոր լեզուները։ Պետական լեզուն պարտաւորական է։

21) Ժողովրդական միլիցիա՝ մշտական զօրքի փոխարէն։ Ամէն մի առողջ քաղաքացի պարտաւոր է որոշ ժամանակով պաշտօնավարել, իբրեւ միլիցիական պաշտօնավարում է իր չրջանի սահմաններում։ Նա ենթարկւում է ընդհանուր զօրահաւաքի միայն այն դէպքում, երբ ընդհանուր պետութեան ազատութեանը եւ ամբողջութեանը վտանգ է սպառնում։

Իւրաքանչիւր միլիցիական՝ ծառայութեան ընթացքում առանում է վարձատրութիւն, աշխատաւորական ընդհանուր օրավարձի չափով։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

1) Հողերի համայնացումն։

2) Հողը դադարում է մասնաւոր սեփականութիւն եւ վաճառքի նիւթ լինելուց։

3) Արդիւնական, կուլտուրտեխնիկական, կրօնական

4) Հողից օգտուելու իրաւունքը պատկանում է աշխատաւորներին, աշխատաւորական սկզբունքով, — իւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի այն չափով հող մշակելու, որ կարողանայ, առանց ուրիշի աշխատանքը չհատգործելու, բաւարարութիւն տալ իր եւ իր ընտանիքի սպառողական պահանջներին։

5) Հողի տնօրինութիւնը եւ նրանից օգտուելու ձեւերի մանրամասն որոշումը պատկանում է գիւղական եւ քաղաքային համայնքներին։

6) Կենտրոնական եւ չրջանային վարչութիւններին վերապահւում է իրաւունք՝ պարբերական հողաբաժանումների միջոցով՝ իրականացնել հողերի միջչրջանային եւ միջհամայնական հաւասարացումը։

7) Համայնքից ընտրուած մարմինների կարգադրութեանն են յանձնւում համայնական ընդհանուր նշանակութիւն ունեցող գետիններն (անտառներ, արօտ) ու ջրերը (չարժոյժ, ձկնորսութիւն) եւ դրանցից ստացուող եկամուտները դործադրւում են համայնքի կուլտուրական ձեռնարկների համար։

8) Հանքերը, ինչպէս եւ արտաքոյ կարգի արժէք ունեցող բնական այլ հարստութիւնները համարւում են պետական սեփականութիւն, եւ նրանց եկամուտները գործադրւում են համաժողովրդական–կուլտուրական նպատակների համար։

9) Վերացումն անուղղակի հարկերի (բացի առանձին պերճանքի առարկաներից)։

10) Պրոգրեսիւ տուրք եկամուտի եւ ժառանգութեան։ Հարկից բոլորովին ազատել որոշ չափից պակաս եկամուտ ունեցողներին։

11) Ոչնչացումն հովանաւորական մաքսի։

12) Պետական ամենամատչելի կրեդիտ։

Անմիջական վերացումն օլամի, էչգարի եւ այլ չվարձատրուող աշխատանքների։

13) Պետական ապահովութիւն երաչտից, կարկտից, մոլեխից, հեղեղից եւ այլ պատահարներից։

14) Համայնական կազմակերպումն հանուր ձեռնարկների՝ ինչպէս ճանապարհներ, լուսաւորութիւն, փուռ, սպանդանոց, հիւրանոց եւայլն, որոնց չհատգործումը ժողովրդական նշանակութիւն ունի։

15) Զարգացումն սպառողական, արդիւնաբերական եւ կոոպերատիւ այլ բնոյթ ունեցող ձեռնարկների։

16) Օրական 8 ժամեայ աշխատանք բանուորների համար, թէ՛ քաղաքներում եւ թէ գիւղերում։ Առողջապահական տեսակէտից առանձնապէս վտանգաւոր ու վնասակար գործերում՝ աւելի պակաս։

17) Սահմանումն նուազագոյն օրավարձի քաղաքներում եւ գիւղերում։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1) Հողերու համայնացում։

2) Հողը կը դադրի մասնաւոր սեփականութիւն եւ վաճառքի նիւթ ըլլալէ։

3) Արդիւնական, կուլտուրտեխնիկական, կրօնական

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

12) Ազատութիւն խօսքի, մամուլի, խղճի, ժողովներու, միութիւններու եւ գործադուլներու։

13) Եկեղեցիի բաժանումը պետութենէն։ Կրօնքը անհատական խղճի գործ է։

14) Ազգերու ինքնորոշման իրաւունք, կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերու եւ կրօնական համայնքներու։ Ոչնչացում դասակարգային բոլոր առանձնաշնորհումներուն։

15) Անձնապարտութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան։

16) Ազատութիւն տեղափոխութեան։ Վերփանում անցագրերու։

17) Ընդհանուր, պարտադիր եւ ձրի սկզբնական ուսում պետական հաշուով։ Դպրոցներու աշխարհականացում։ Դասաւանդութիւն մայրենի լեզուով։

18) Ձրի դատավարութիւն։

19) Մշակութային նպատակներու յատկացուած պետական, նահանգային եւ չրջանային պիւտճէի բաժանում առանձին ազգութիւններու միջեւ, համաձայն ազգաբնակութեան քանակին, անոր գործադրութիւնը, ինչպէս եւ իւրաքանչիւր ժողովուրդի մշակութական գործերու ղեկավարումը յանձնելով ընտրուած ուրոյն մարմիններու։

20) Համայնական եւ նահանգային բոլոր պաշտօնեաներու համար պարտաւորիչ է տեղական երկու գլխաւոր լեզուներու համաութիւնը. իսկ ընդհանուր պաշտօնեաներու համար՝ երեք գլխաւոր լեզուներուն։ Պետական լեզուն պարտաւորիչ է։

21) Քաղաքզօրք՝ միլիս՝ մշտական զօրքի փոխարէն։ Իւրաքանչիւր առողջ քաղաքացի պարտաւոր է որոշ ժամանակով պաշտօնավարել, իբրեւ քաղաքզօրք։ Քաղաքզօրքը կը պաշտօնավարէ իր չրջանի սահմաններուն մէջ։ Ան կ'ենթարկուի ընդհանուր զօրահաւաքի՝ միայն այն պարագային, երբ վտանգ մը կը սպառնայ բովանդակ պետութեան ազատութեանն ու ամբողջութեանը։

Ամէն քաղաքզօրք՝ միլիսիէն, իր ծառայութեան ընթացքին մէջ, հազ (բոշակ) կը ստանայ աշխատաւորական ընդհանուր օրավարձի չափով։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1) Հողերու համայնացում։

2) Հողը կը դադրի մասնաւոր սեփականութիւն եւ վաճառքի նիւթ ըլլալէ։

3) Արդիւնական, կուլտուրտեխնիկական, կրօնական

18) *Աշխատանքի օրէնդրական հովանաւորութիւն, գիտական առողջապահական պահանջների համեմատ։* Վերացումն գիշերային աշխատանքի (բացի այն գործառնութիւններից, որոնց տեխնիկական բնոյթը այդ թոյլ չէ տալիս)։

19) *Վերացնել կանանց եւ երեխաների գիշերային աշխատանքը։* Կանայք ազատ պիտի լինեն աշխատանքից՝ ծննդաբերութիւնից վեց շաբաթ առաջ եւ վեց շաբաթ յետոյ։ Արգիլել երեխաների աշխատանքը մինչեւ 15 տարեկան հասակը. իսկ 15ից մինչեւ 18 տարեկան հասակը՝ սահմանափակել օրական 6 ժամով։ Վերացնել պայմանաժամից դուրս աշխատանքը։ Արգիլել տուգանքի ձեւի տակ օրավարձի նուազեցումը։

20) *Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն։ Մահմեդականների համար՝ իրենց յատուկ օրը։*

21) *Գործարանական վերատեսչութեան ընտրութիւնը՝ բանուորների կողմից։ Բանուորների մասնակցութիւն գործարանների ներքին վարչական գործերում։*

22) *Բանուորների ապահովագրումն՝ դժբախտ պատահարներից, հիւանդութիւնից, պետութեան եւ գործատէրերի հաշուով։*

23) *Զրի բժշկութիւն։ Տեխնիկական ձրի ակնկռթիւն։*

24) *Աշխատանքի բորսաներ։*

Դաշնակցութեան իւրաքանչիւր գործելավայրի (Թուրքիա, կովկաս, Պարսկաստան) հայոցական ժողովները կը մշակեն պայմաններ իրենց ընթացիկ եւ ամփիթեական պահանջներու համար։

---

(1) Ներկայիս կը գործածեմ «դաշնակցական» (fédératif)։
(2) Ներկայիս կը գործածեմ «ժողովրդավար» (démocratique)։

18) *Աշխատանքի օրէնդրական հովանաւորում գիտական, առողջապահիկ պահանջներու համեմատ։* Քսափանում գիշերային աշխատանքի (բացառութեամբ այն աշխատանքներուն, որոնց արուեստական բնոյթը ընդմիջում չի ներեր)։

19) *Քափանել կիներու եւ մանուկներու գիշերային աշխատանքը։* Կիները ազատ պէտք է ըլլան աշխատանքէ՝ ծննդաբերութենէ վեց շաբաթ առաջ եւ վեց շաբաթ ետքը։ Արգիլել մանուկներու աշխատանքը մինչեւ 15 տարի., իսկ 15էն 18 սահմանափակել օրական 6 ժամով։ Վերցնել պայմանաժամէ դուրս աշխատանքը։ Արգիլել տուգանքի ձեւին տակ օրավարձի նուազեցումը։

20) *Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն։ Մահմեդականներուն համար՝ ուրբաթ օրը։*

21) *Գործարանական վերատեսչութեան ընտրութիւնը՝ բանուորներու կողմէ։ Բանուորներու մասնակցութիւն գործարաններու ներքին վարչական գործերուն։*

22) *Բանուորներու ապահովագրում դժբախտ պատահարներու, հիւանդութեան, ծերութեան եւ անգործութեան հանդէպ, պետութեան եւ գործատէրերու հաշուով։*

23) *Զրի դարմանում։ Արհեստային* (technique) *ձրի ակնկռթիւն։*

24) *Աշխատանքի ատկարաններ։*

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երրորդ Ընդհանուր ժողովը, գումարուած ներկայ 1904 Յունի Փետրուար–Մարտ ամիսներուն, ի մէջ այլոց, որոշեր է՝

Հնկատելով, որ Գ.րդ Ընդհանուր ժողովի մէջ ընդունուեցան կարգ մը փոփոխութիւններ նախկին ժողովներու վճիռներու վերաբերմամբ, Ընդհ. ժողովը որոշեց յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝ ա) Ըստ կարելւոյն չուշով ցրուել դաշնակցական մարմիններուն կազմակերպական փոխուած կանոնները եւ բ) Մինչեւ ներկայ տարուան վերջը կարգաւորել նախորդ ու ներկայ ընդհանուր ժողովներու առնչագրութիւնները, ինչպէս նաեւ յարակից բոլոր նիւթերը ու Դաշնակցութեան «Երկրորդի» վերջնական խմբագրութենէ յետոյ հրատարակութեան տալ։

Ցետադէպով, համաձայն այդ որոշման, առնչագրութիւններու եւ յարակից խնդիրներու հրատարակումը մինչեւ տարուան վերջը, կը չտապնդ ներկայ տեսարկով հաղորդել դաշնակցական բոլոր մարմիններուն այն կազմակերպական փոփոխուած կանոնները, որոնք կը վերաբերին անոնց իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն, խնդրելով ճիշդ եւ անշեղ գործադրութիւն։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

1904 Յուլիս
Ժընեւ

Ե. — ԿԱՆՈՆԱԳԻՐ — ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Զորրորդ Ընդհանուր ժողովը վերամշակեց նաեւ Դաշնակցութեան կազմակերպական կանոնները, որոնք, «ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՑ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ (Մարմիններու համար)» խորագրին տակ, 1907ին իսկ առանձին գրքոյկով հրատարակուեցան Ժընեւի մէջ, Ինքն Ցանձնաժողովին կողմէ վերջնական խմբագրութեան ենթարկուելէ ետք (տեսնել էջ 294)։ Հրատարակած քնագիրը արեւմտահայերէն է։

1907ի կանոնագիրը փաստօրէն ի զօրու մնաց մինչեւ 1919ի երեւանի 9րդ Ընդհանուր ժողովը, հակառակ յաջորդական Ընդհանուր ժողովներու կողմէ որոշուած կազմակերպական կառոյցի մասնակի փոփոխութիւններուն։

1907էն առաջ ի զօրու էին երրորդ Ընդհանուր ժողովին մէջ մշակուած կազմակերպական կանոնները։ Անոնք թէեւ տեղ գտած են համապատասխան տեսնագրութիւններուն մէջ (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ. Ց. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, բ. հատոր, էջ 119–126), սակայն առանձին, եւ յօդուածներու վերջնական թուագրումով, վերահրատարակուած չեն ներկայ շարքին մէջ։

Ուստի, փոփոխութիւնները յստակ դարձնելու համար, այս բաժնին մէջ հրատարակութեան կու տանք նախ 1904ին վերամշակուած կանոնագրութիւնը, որու 1906ի բ. տպագրութիւնը ունինք մեր տրամադրութեան տակ (ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ, Թիֆլիս, Դաշնակցութեան տպարան), եւ ապա միայն 1907ի ԿԱՆՈՆԱԳԻՐԸ։

Կիտաւոր կերպով տրուած յօդուածներու բովանդակութեան համար՝ տեսնել երրորդ Ընդհանուր ժողովի տեսնագրութիւնը, ՆԻՒԹԵՐ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, բ. հատոր, — ի մասնաւորի՝ էջ 120–130։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԱՆՀԱՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Անհատ–գործիչները կը բաժնուին երեք կարգի՝ 1) Շրջուն գործիչ (պրոպագանդիստ), 2) Պատուիրակ եւ 3) Ներկայացուցիչ։

Շրջուն գործիչ կը կոչուին այն ընկերները, որոնք կեդրոնական կոմիտէներու ընտրութեամբ բացառապէս կը զբաղին այդ կոմիտէներու շրջաններու կազմակերպական գործերով։

ՍԱՆՕԹ.— Թէ՛ Արեւելեան եւ թէ Արեւմտեան շրջանի մարմիններուն իրաւունք կը տրուի մշտական շրջուն գործիչներ ունենալ։

Պատուիրակ կը կոչուի այն գործիչը, որ դաշնակցական մարմնի կողմէն կ'երթայ որոշ տեղ մը, որոշ առաքելութեամբ եւ որոշ ժամանակամիջոցի մը համար, որ կը ճշդուի անոր վկայագրին մէջ։

Ներկայացուցիչ կը կոչուին Պատասխանատու կեդրոնական կոմիտէներու եւ Բիւրոներու այն պատասխանակները, որոնք այդ մարմիններու կողմէն լիազօրութիւն կը ստանան Թուրքիոյ մէջ անոնց յատկանիշ որոշումները ի գործ դնելու կամ Թուրքիայէն դուրս անոնց ձայնը ներկայացնելու։

ԽՈՒՄԲ, ԵՆԹԱԿՈՄԻՏԷ, ԿՈՄԻՏԷ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ԹՈՒՐՔԻՈՑ ՄԷՋ

Խ Ո Ւ Մ Բ

1.— *Խումբ մը կը կազմուի առնուազն 7 հոգիէ. իսկ առաւելագոյն թիւը եւ պարտականութիւնը կ'որոշուին շրջանի ներքին կանոնագրով։*

2.— *Խումբ չեղած տեղը խումբ կը կազմուի դաշնակական պատուիրակի մը ձեռքով եւ տնօրինութեամբ։*

3.— *Նոր անդամներ կ'ընտրուին խումբի անդամներու փոխադարձ համաձայնութեամբ։*

Ե Ն Թ Ա Կ Ո Մ Ի Տ Է

4.— *Ենթակոմիտէ մը կը կազմուի 5 խումբերէ կամ առնուազն 35 անդամէ։*

5.— *Ենթակոմիտէն կը վարէ խումբերու ընդհանուր գործերը ու միշնորդ կը հանդիսանայ խումբերու եւ աւելի բարձր մարմիններու կամ պատուիրակի միջեւ։*

6.— *Ենթակոմիտէն կը բաղկանայ առնուազն 3 անդամէ։*

Կ Ո Մ Ի Տ Է

7.— *Կոմիտէն կը կազմուի 3 ենթակոմիտէէ կամ առնուազն 15 խումբերէ։*

8.— *Կոմիտէն անկախ է իր տեղական գործերու մէջ։ Իսկ Ընդհանուր ժողովի նախագծած որոշ պարագաներու եւ վճռած ձեռնարկներու գործադրութեան ահաժաններու մէջ՝ կոմիտէն պարտաւոր է գործել կեդրոնական կոմիտէի կամ Գատաստանատու կեդրոնական կոմիտէի եւ կամ ներկայացուցչի համաձայնութեամբ։*

9.— *Կոմիտէն իր դրամական հաւոյքներէն մէկ մասը, համաձայն ներքին կանոնագրութեամբ որոշուած տոկոսի, կը յատկացնէ իր վարչի զինման ու ժողովրդի պաշտպանութեան, մնացածը յանձնելով աւելի բարձր մարմնի չրջանին՝ ընդհանուր պէտքերուն համար։*

10.— *Ոեւէ կոմիտէի կնիք կը տրուի այն պարագային միայն, երբ տասը պէտքն ղեկացուի եւ երբ չրջանին նին կեդր. կոմիտէն ալ յարմար դատէ։*

ՍԱՆՕԹ.— *Կեդրոնական կոմիտէի հաստիքի մէջ գտնուող կոմիտէները կնիք երբեք չեն կարող ունենալ։*

11.— *Կոմիտէն կը կազմուի առնուազն 3 անդամէ։*

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

12.— *Կեդրոնական կոմիտէն կը կազմուի 3 կոմիտէէ կամ առնուազն 45 խումբերէ։*

13.— *Կեդրոնացման վայրերու մէջ Գատաստանատու Մարմինները չրջանի մը կոմիտէներու համաձայնութեամբ անոնցմէ աւելի եռանդուն գործունէութիւն ցոյց տուող եւ պահանջներու նուաղագոյն չափին համապատասխանող կոմիտէն կը յայտարարեն կեդրոնական կոմիտէ՝ յայտնելով այդ մասին Բիւրոյին կամ Դաշնակցութեան Խորհուրդին ի գիտութիւն։ Իսկ պատասխանատու չրջաններէն դուրս՝ կոմիտէներու հաւանութեամբ եւ Դաշնակցութեան Խորհրդի համաձայնութեամբ իրենցմէ ամենէն աւելի գործունէութիւն ցոյց տուող կոմիտէն կը յայտարարուի կեդրոնական կոմիտէ։*

14.— *Կեդրոնական կոմիտէն է արտաքին յարաբերութեան միջնորդը լոյն չրջաններու եւ կոմիտէներու միջեւ։*

ՍԱՆՕԹ.— *Բացառիկ եւ կարեւոր պարագաներու մէջ կոմիտէները կրնան ամսիթաթար հաղորդակցիլ միեւնոյն մարմիններու հետ։*

15.— *Կեդրոնական կոմիտէն՝ պատասխանատու չրջաններէն դուրս՝ կը գործադրէ Ընդհ. Ժողովի որոշումները, որոնք իր չրջանին կը վերաբերին, խորհրդակցելով տեղական կոմիտէներու հետ։*

16.— *Տարին մէկ անգամ կեդրոնական կոմիտէն կը հրաւիրէ չրջանի պատգամաւորական ժողով՝ եթէ դիւրութիւններ կան։*

17.— *Կեդրոնական կոմիտէն հարկ դատած ատեն կարող է ղրկել պատուիրակներ՝ թէ՛ իր չրջանի կոմիտէներու գործին մօտէն ծանօթանալու եւ թէ՛ անոնց դրամական ու ռազմական հաշիւները ստուգելու։*

18.— *Կեդրոնական կոմիտէն պարտաւոր է կոմիտէներու եւ խումբերու աշակցութեամբ պատրաստել իր չրջանի յեղափոխական քարտէսները եւ տեղական հայ ժողովրդի վիճակագրութիւնը ու ղրկել իր Բիւրոյին։*

19.— *Կեդրոնական կոմիտէն տարին մի անգամ Հոկտեմբերին կը ղրկէ իր Բիւրոյին իր չրջանի գործունէութեան տեղեկագիրը։*

20.— *Կեդրոնական կոմիտէն տարին երկու անգամ իր Բիւրոյին կը ներկայացնէ իր չրջանի հաշիւները թէ՛ օրագրական ձեւով եւ թէ այն աղիւսակներու համաձայն, որ ընդունուած է Ընդհանուր ժողովի կողմէն։*

Հաշիւները կրելու են կոմիտէի կնիքը եւ անդամներու ստորագրութիւնները։

21.— *Այն կեդր. կոմիտէն, որ գոնէ տարին մէկ անգամ հաշիւ չէ ներկայացուցած, կը համարուի լուծուած։*

22.— *Կեդրոնական կոմիտէն կը ստանայ իր Բիւրոյէն Դաշնակցութեան անունով պատրաստուած նուիրադրոշմներ, կը բաշխէ կոմիտէներուն եւ հաշուետուութեան պահուն նուիրադրոշմներուն կազմերը իր հաշուին հետ կը ղրկէ իր Բիւրոյին։*

23.— *Կեդրոնական կոմիտէն զէթ 3 ամիսը մի անգամ իր չրջանի կոմիտէներու հասոյթի ցուցակը չրջանի անունով հրատարակութեան կու տայ «Դրօշակի» մէջ։*

ՍԱՆՕԹ.— *Կեդրոնական կոմիտէի չրջանները դուրս գտնուող մարմիններու (կոմիտէ, ենթակոմիտէ եւայլն) ձուիրատուութեան ցանկը կը տպուի «Դրօշակի» մէջ այն ժամանակ միայն, երբ իրենց հաշիւը կամ դրամը կը ղրկուի Բիւրոյին։*

24.— *Կեդրոնական կոմիտէն պարտաւոր է պատրաստել իր չրջանի կոմիտէներու եւ խմբերու մանրամասն ցանկը եւ Արեւմտեան Բիւրոյին ղրկել։*

25.— *Կեդրոնական կոմիտէն իր բոլոր կարեւոր թղթերը, տոքիւմանները եւ յեղափոխական պատմական նշանակութիւն ունեցող իրերը կը ղրկէ Արեւմտեան Բիւրոյին պահելու՝ մնացածը ոչնչացնելով։*

26.— *Կեդրոնական կոմիտէն կը կազմէ իր չրջանի խումբերու, ենթակոմիտէներու, կեդրոնական կոմիտէի քաղաքը գտնուող կոմիտէներու կազմական ներքին կանոնագիրը՝ համաձայն ծրագրի եւ Ընդհանուր Ժողովի վճիռներուն։*

27.— *Կեդրոնական կոմիտէն ունի իր կնիքը։*

28.— *Կեդրոնական կոմիտէն կը բաղկանայ առնուազն 3 անդամէ։*

Կազմակերպութեան միւս մանրամասները կը գծէ Գատաստանատու Կեդրոնական Կոմիտէն (իսկ բացակայութեանը՝ անոր չրջանի կեդրոնական կոմիտէն) ներքին կանոնագրութեամբ, հնար եղածին չափ կիրարկելով ընտրական սկզբունքը։

Վերոյիշեալ ամէն կարգի մարմիններու թուլանալու կամ ուժեղանալու պարագային՝ համապատասխան կերպով պէտք է փոխուին նաեւ անոնց անունները։

ԹՈՒՐՔԻԱՑԵՆ ԴՈՒՐՍ

Խ Ո Ւ Մ Բ

29.— *Եօթը կամ աւելի դաշնակցականներ միասին գալով կը կազմեն խումբ, ինքնաբերաբար կամ պատուիրակի միջոցով։*

30.— *Խումբերը կը բաժնուին երկու տեսակի՝ օժանդակ եւ մարտական։*

31.— *Օժանդակ խումբը կ'օգնէ կազմակերպութեան նիւթական նպաստներով եւ այլ կարգի ծառայութիւններով։*

32.— *Մարտական խումբերը կը զինուին իրենց միջոցներով եւ պատրաստ՝ ըստ պահանջի, գործի գնալու։*

33.— *Նոր անդամներ կ'ընտրուին խումբի անդամներուն փոխադարձ համաձայնութեամբ։*

Ե Ն Թ Ա Կ Ո Մ Ի Տ Է

34.— *Շրջան մը կարող է ունենալ ենթակոմիտէ՝ երբ առնուազն ունի 5 խումբ կամ 35 անդամ։*

35.— *Ենթակոմիտէն կը կազմուի խումբերու առնուազն 5 ներկայացուցիչներու ընտրութեամբ։*

36.— *Ենթակոմիտէն կը վարէ խումբերու ընդհանուր գործերը եւ միշնորդ կը հանդիսանայ խումբերու եւ աւելի բարձր մարմիններու կամ պատուիրակի միջեւ։*

37.— *Ենթակոմիտէն կը բաղկանայ առնուազն 5 անդամէ։*

Կ Ո Մ Ի Տ Է

38.— *Շրջան մը կոմիտէ կ'ունենայ երբ առնուազն 5 ենթակոմիտէ կամ 25 խումբ ունի։*

39.— *Կոմիտէն իր դրամը կը ղրկէ չրջանի կեդրոնական կոմիտէի արկղը, իսկ բացառիկ դէպքերու մէջ իր Բիւրոյին, կանխաւ իմաց տալով այդ մասին կեդրոնական կոմիտէին։*

40.— *Կոմիտէն կնիք չ'ունենար։*

41.— *Կոմիտէն կը կազմուի առնուազն 5 անդամէ։*

42.— *Ծօղուած 8րդը պարտաւորիչ է նաեւ դրսի կոմիտէներուն համար։*

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

43.— *Շրջան մը կեդր. կոմիտէ կ'ունենայ, երբ առնուազն 5 կոմիտէ կամ 25 ենթակոմիտէ ունի։*

44.— *Կեդր. կոմիտէն ամէն տարի կ'ընտրուի իր չրջանի պատգամաւորական ժողովի կողմէն։*

45.— *Գատաստանատու ժողովը կը բաղկանայ իւրաքանչիւր ընտրական չրջանի դաշնակցականներու թուի համապատասխանութեամբ ղրկուած պատգամաւորներէ։*

ՍԱՆՕԹ.— *Իւրաքանչիւր կեդր. կոմիտէի չրջանի պատգամաւորական ժողովին կը բաղկանայ որոշել այդ չրջանի ժայռերու համապատասխանութիւնը։*

46.— *Իւրաքանչիւր կեդր. կոմիտէ իր ունեցած դրամէն զեղչելով տեղական ծախքերու գումարը, որը չպիտի անցնի ընդհանուր մուտքի 10%, մնացածը կը յատկացնէ, իր Բիւրոյի խորհրդակցութեամբ, անոր միջոցով, կամ ուղղակի, Ընդհանուր Ժողովի որոշումներով գծուած ձեռնարկներուն:*

47.— *Հեդրոնական կոմիտէները՝ Թուրքիոյ մէջ բաժնի յօդուածներ 19, 20, 21, 22, 23, 24, 25 եւ 27 պարտաւորիչ են նաեւ դրան հեդրոնական կոմիտէներու համար:*

48.— *Թիւրքիայէն դուրս ոչ մէկ մարմին առանց իր Բիւրոյի խորհրդակցութեան եւ առանց դէնքը ստացող եւ պահող մարմնի համաձայնութեան, իրաւունք չունի զէնք գնելու:*

49.— *Կեդրոնական կոմիտէն պարտաւոր է տարին զէք մէկ անգամ կոնտրոլի ենթարկել իր չրջանի մարմիններու հաչիւները:*

50.— *Վրէժստանի, Բալկանեան Քերակղզիի, Եգիպտոսի եւ Ամերիկայի պատգամաւորական ժողովներուն, ինչպէս նաեւ Սարուստանի Կեդր. Կոմիտէներու պատգամաւորական ժողովին կը վերապահուի Ընդհանուր Ժողովի այս որոշումներէն դուրս մնացած կազմակերպական խնդիրները գծել, իւրաքանչիւրն իր ներքին կանոնադրով, առանց հակասելու Դաշնակցութեան ծրագրին եւ Ընդհանուր Ժողովի վճիռներուն:*

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

51.— *Պատասխանատու կեդր. կոմիտէ կը կոչուի Ընդհանուր Ժողովի կողմէն ընտրուած այն մարմինը, որուն կը յանձնուի վճռուած խոշոր ձեռնարկի մը իրագործման պատասխանատուութիւնը երկրի որոշ չրջանին մէջ:*

52.— *Պատասխանատու կեդր. կոմիտէի վայրեր որոշուեցան . . . . . .*

53.— *Պատասխանատու Մարմինը կը կազմուի առնուազն երեք անդամէ, ընտրուած Ընդհանուր Ժողովի կողմէ, իսկ Կովկաս՝ չրջանական Ժողովէն:*

54.— *Պատասխանատու մարմինները պարտաւոր են ամէն ջանք ի գործ դնել իրենց չրջանի տեղացիներէն եւս կարող ընկերներ միացնելու իրենց:*

55.— *Որեւէ պատճառով պակսող անդամին տեղ՝ նորը կ'ընտրուի մնացած ընկերներու եւ չրջանի Բիւրոյի խորհրդակցութեամբ:*

56.— *Պատասխանատու կեդր. կոմիտէն վարիչ դեր ունի իր գործունէութեան չրջանը կազմող երկրին մէջ:*

57.— *Պատասխանատու կեդր. կոմիտէի խորհրդակցութիւնը պարտաւորիչ է հարեւան կեդր. կոմիտէներու եւ միւս կոմիտէներու համար, ամէն անգամ, երբ վերջիններու կողմէն քիչ–շատ կարեւոր յեղափոխական գործ մը կատարել որոշուի:*

58.— *Պատասխանատու կեդր. կոմիտէն իր ստանձնած խոշոր ձեռնարկին գործադրութեան վայրկեանը որոշելէ առաջ, պարտաւոր է այդ մասին խորհրդակցիլ դրնէ իր չրջանի Բիւրոյին եւ մէկ Պատասխանատու Մարմնի հետ:*

59.— *Պատասխանատու մարմնի անդամը, երբ գըտնուի Դաշնակցութեան ոեւէ մէկ մարմնի մէջ, ունի ձայնի իրաւունք:*

60.— *Պատասխանատու մարմնի անդամները պարտաւոր են երկիր, իրենց գործունէութեան վայրը մըտնել: Առանց ընկերներու համաձայնութեան դուրս մըտնացած անդամը կը համարուի հրաժարուած:*

61.— *Երկրի Պատասխանատու կեդր. կոմիտէն կը համարուի «Դաշնակցութեան Որկրդի» անդամ:*

62.— *Երկրի Պատասխանատու կեդր. կոմիտէները ունին իրենց ներկայացուցիչները պատկանեալ Բիւրոյի կազմին մէջ:*

63.— *Պատասխանատու կեդր. կոմիտէները պարտաւոր են տարին զէք մէկ անգամ կոնտրոլի ենթարկել իրենց չրջանի բոլոր մարմիններու հաչիւները:*

64.— *Պատասխանատու կեդր. կոմիտէները, դրամական տագնապի օրերուն մէջ, իրենց անդամներէն մէկը դուրս կը ղրկեն՝ հարեւան կոմիտէներու եւ Բիւրոյի կողմէ ընտրուած ընկերներու հետ ժողովարարութեամբ զբաղուելու համար:*

ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

65.— *Անցեալ 1903 թ. ի վեր հաստատուած Ինքնապաշտպանութեան կեդր. կոմիտէն կ'ընդունուի ի չարս Պատասխանատու Մարմիններու:*

66.— *Կովկասեան դաւառական բոլոր կոմիտէները, ինքնապաշտպանութեան գործին մէջ, պարտաւոր են գործել Պատասխանատու Մարմնի ղեկավարութեան տակ, որ կը հետեւի Ընդհանուր եւ չրջանական Ժողովներու որոշումներուն:*

67.— . . . . . .

68.— *Ինքնապաշտպանութեան կեդր. կոմիտէի կազմը կ'որոշէ Կովկասի չրջանական Ժողովը:*

69.— *Գաւառական մարմիններու եւ Կովկասեան Պատասխանատու Մարմնի մէջ փոխադարձ յարաբերութիւնները կը պատահին Բիւրոյի եւ ուրիչ դաշնակցական մարմիններու միջոցով:*

Բ Ի Ւ Ր Օ

70.— *Բիւրոն պիտակ կը պահէ իր չրջանի կեդր. կոմիտէները գործի ընթացքի մասին ամիսը անգամ մը եւ կը հաղորդէ անոնց իր բիւրոյական հաչիւը առնազն իւրաքանչիւր 6 ամիս:*

71.— *Ըստ կարիքի Բիւրոն պարտաւոր է տեղացիներու համաձայնութեամբ, հաւատար ձայնի իրաւունքով ընկերներ ղրկելով՝ զօրացնել կեդր. կոմիտէները:*

72.— *Բիւրոն կանոնաւորիչ դեր ունի դրամի բաչխումին մէջ՝ Ընդհանուր Ժողովի որոշած նախահաչուի համաձայն:*

73.— *Բիւրոներուն կը վերապահուի կնիք պատրաստել տալ եւ յանձնել ուր անկ է, այդ մասին արդէն գծուած օրէնքներու համաձայն:*

74.— *Բիւրոները պարտաւոր են տարեկան առնազն մէկ անգամ իր անդամներէն մէկը ղրկել այցելելու իր չրջանի հեդրոնական կոմիտէները կամ իր իրաւասութեանը ենթարկուած մարմինները եւ ստուգել նաեւ անոնց հաչիւները:*

75.— *Բիւրոները պարտաւոր են 3 օրուան մէջ պատասխանել երկրէն եկած նամակներուն:*

76.— *Բիւրոն պարտաւոր է տարուան վերջը ամփոփել բոլոր իր իրաւասութեան տակ գտնուած մարմիններու հաչիւները եւ ցրուել հեդրոնական կոմիտէներուն:*

77.— . . . . . .

78.— *Դաշնակցութիւնը ունի երկու Բիւրօ՝ Արեւելեան եւ Արեւմտեան:*

Ա) ԱՐԵԻԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

79.— *Արեւելեան Բիւրոյի չրջանը կը կազմեն՝ ա) Երկիր՝ Կիրասուն–Խարբերդ–Տիգրանակերտի գծէն արեւելք. բ) Ռուսաստան եւ Պարսկաստան:*

80.— *Արեւելեան Բիւրոն կը բաղկանայ 5 անդամէ, որոնց երեքը կ'ընտրէ Կովկասի չրջանական (Հայոնական) Ժողովը, իսկ միւս երկուքը կը ղրկուին Բարձրաւանդակի եւ Շամխրի կողմէն:*

Շրջանական (Հայոնական) Ժողովի կողմէն ընտրուած անդամները պատասխանատու են ոչ միայն զիրենք ընտրող չրջանական Ժողովի եւ Պատասխանատու Մարմիններու, այլեւ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի առջեւ:

81.— *Երեք ընտրուած անդամներու համար ամէն տարի պիտի կատարուի վերընտրութիւն Հայոնական Ժողովի կողմէն:*

ՄԱՆՕԹ.— *Հին անդամները վերընտրելի են:*

82.— *Արեւելեան Բիւրոյի տեղը (քաղաքը) կ'որոչէ չրջանական Ժողովը:*

83.— *Արեւելեան Բիւրոյի անդամներէն զէթ երկուքը պարտաւոր են զբաղուիլ միմիայն յեղափոխական գործով, ստանալով կազմակերպութենէն իրենց ապրուստի ծախսը:*

84.— *Մանրակչիռ խնդիրներու լուծման համար Արեւելեան Բիւրոն կը հրաւիրէ արտակարգ չրջանական Ժողով:*

Բ) ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

85.— *Արեւմտեան Բիւրոյի չրջանը կը կազմեն՝*

ա) *Փոքր–Ասիա՝ Կիրասուն–Խարբերդ–Տիգրանակերտի գծէն արեւմուտք:*

բ) *Եգիպտոս, Բալկանեան Քերակղզի, Ամերիկա եւ ամբողջ արտասահմանը՝ Ռուսաստանէն եւ Պարսկաստանէն դուրս:*

86.— *Արեւմտեան Բիւրոն կը բաղկանայ հինգ (5) անդամէ, որոնց երեքը կ'ընտրէ Ընդհանուր Ժողովը, իսկ երկուքը կը ղրկուին . . . . . եւ . . . . Պատասխանատու Մարմիններու կողմէն:*

87.— *Եթէ որեւէ պատճառով Արեւմտեան Բիւրոյի անդամներէն մէկը պակսի, նորը կ'ընտրուի Բիւրոյի եւ չրջանի Պատասխանատու Մարմիններու համաձայնութեամբ:*

88.— *Արեւմտեան Բիւրոն իր ընդհանուր կազմակերպական գործերէն դուրս՝*

ա) *Կը հրատարակէ «Դրօշակը — ուղղութեան մասին առաչնորդուելով Ընդհանուր Ժողովի կողմէն մըշակուած ծրագրով մը — եւ Դաշնակցութեան անունով ուրիչ հրատարակութիւններ՝ հայ եւ օտար լեզուներով:*

բ) *Կը հրատարակէ . . . . . .*

. . . . . .

գ) *Կը վարէ արտասահմանեան պրոպագանդը:*

89.— *Բիւրոյական անդամներու մէջ աչխատանքի բաժանում ընդունելով հանդերձ՝ Բիւրոն in corpore պատասխանատու է իր բոլոր գործերուն համար:*

90.— *Արեւմտեան Բիւրոյին կը յանձնարարուի դաչնակցական ընկերներ հրաւիրել օժանդակելու իրեն՝* ա) *Խմբագրական,* բ) *Պրոպագանդի,* գ) *Տեղականվարչական գործերու մէջ: Այդ կարգի ընկերներ բիւրոյական ընկերներու հաւասար ձայն կ'ունենան՝ բայց միայն իրենց ստանձնած գործերու մէջ:*

91.— *Բիւրոն պարտաւոր է ի հարկին իր մէջէն մէկը կամ երկուքը զբաղեցնել իրրեւ չրջան գործիչ՝ իր չրջանի գործերով:*

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

92.— *Պատասխանատու կեդր. կոմիտէներու եւ բիւրոներու ներկայացուցիչները կը կազմեն «Դաշնակցութեան Խորհուրդը»:*

93.— *Դաշնակցութեան Խորհուրդը նիստ կը գումարէ պարբերաբար տարին անդամ մը Դեկտեմբեր ամսուն: Կրնայ արտակարգ կերպով եւս գումարուիլ, երբ բիւրօ մը եւ իր չրջանի Պատասխանատու Մարմիններէն մէկը համաձայնին իրարու:*

94.— *Դաշնակցութեան Խորհուրդը անձեռնհաս կը համարուի, եթէ երկրի Պատասխանատու կեդր. կոմիտէներու ներկայացուցիչներու օրինական թուին 2/3ը բացակայ դտնուի Ժողովէն:*

95.— *Դաշնակցութեան Խորհրդի պարտականութիւնները են՝*

ա) *Քննութեան ենթարկել Պատասխանատու կեդր. կոմիտէներու եւ բիւրոներու գործունէութիւնը Ընդհանուր Ժողովի որոշած ձեռնարկներու իրագործման ահմանին մէջ:*

բ) *Ճեղափոխական ուժերու եւ դրամի նպատակայարմար բաշխումը կարգադրել:*

գ) *Վերահսկել Պատասխանատու կեդր. կոմիտէները եւ բիւրոները:*

դ) *Դրամական միջոցներ գտնել:*

ե) *Վարել արտաքին բոլոր յարաբերութիւնները յանուն Հ. Յ. Դաշնակցութեան ուրիշ կուսակցութիւններու եւ տարրերու հետ:*

զ) *Քաղաքական անակնկալ տագնապի առեն իր պատասխանատուութեան տակ նոր ձեռնարկ սկսիլ, առանց հականալու նախորդ Ընդհանուր Ժողովի որոշումները:*

96.— *Երբ յօդուած 92ի մէջ յիշուած մարմիններէն մէկը լուծուի՝ մնացածները պարտաւոր են անոր ձայնը յանձնել նոյն չրջանի ամենէն ձեռնհաս կոմիտէին՝ այդ կարգադրութիւնը հաղորդելով բոլոր կեդր. կոմիտէներուն:*

97.— *Դաշնակցութեան Խորհրդին կը յատկացուի երկու կնիք՝ հայերէն եւ ֆրանսերէն, վերջինս հետեւեալ ձեւով՝* Conseil de la Fédération révolutionaire arménienne: *Այդ կնիքները կը պահուին Արեւմտեան Բիւրոյի քով:*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

98.— *Ընդհանուր Ժողովի յաջորդական գումարումներու ժամանակը կ'որոշուի Ընդհանուր Ժողովէն, արտակարգ պարագաներու մէջ կը հրաւիրուի «Դաշնակցութեան Խորհրդի» կողմէն:*

99.— *Ճառաջիկայ Ընդհանուր Ժողովը որոշուեցաւ գումարել 1906ի Դեկտեմբեր 1ին:*

100.— *Երկու Բիւրոները կ'որոշեն Ժողովին գումարման վայրը եւ կ'ուղղեն հրաւիրագիրները:*

ՄԱՆՕԹ.— *Եթէ նշանակուած ժամանակէն երեք ամիս առջեւ Սարուստանի կեդր. կոմիտէին, Սարուստանի կեդր. կոմիտէն, կը հրաւիրեն Ժողով՝ իրենք որոշելով նաեւ տեղն ու ժամանակը:*

101.— *Բոլոր ձայնատու մարմինները պարտաւոր են 6 ամիս առաջ Արեւմտեան Բիւրոյին ուղարկել այն հարցերու ցանկը, որ անոնք կը փափաքին Ժողովին քննութեան ենթարկել: Այդ ցանկերէն օգտուելով՝ Արեւմտեան Բիւրօն կը կազմէ խնդիրներու օրակարգը, որ եւ 4 ամիս առաջ կը ղրկէ բոլոր ձայնատու մարմիններուն, որպէսզիասոնց պատգամաւորները Ժողովի եկած ատեն, իրենց հետ բերեն իրենց ներկայացուցած մարմիններու կարծիքները, հարկաւ լիազօրութիւն ունենալով ցուցակէն դուրս նոր խնդիրներ եւս առաջարկելու Ժողովին եւ տեղի ունենալիք մտքերու փոխանակութենէն ետքը՝ ձայն տան իրենց համոզմունքներու համաձայն:*

102.— *Ընդհանուր Ժողովին կը մասնակցին կազմակերպութեան բոլոր կեդր. կոմիտէները, որոնց կազմը եւ գործունէութիւնը նուազագոյն պահանջներուն կը համապատասխանէ:*

103.— *Բիւրոները եւ Պատասխանատու Մարմինները կ'ունենան մի մի ձայն:*

104.— *Դաշնակցական ուսանողութիւնը (Ռուսաստանի եւ արտասահմանի) ձայն կը ստանան Ընդհանուր Ժողովին մէջ, եթէ ունենան որոշեալ ցենզը:*

105.— *Դաշնակցութեան Խորհրդին իրաւունք կը տրուի Ընդհանուր Ժողովին հրաւիրելու նաեւ կեդր. կոմիտէներու չրջաններէն դուրս որոշ գործունէութիւն ցոյց տուող կոմիտէներ:*

106.— *Բիւրօ մը եւ իր չրջանի մէկ Պատասխանատու Կոմիտէն՝ փոխադարձ համաձայնութեամբ՝ կարող են Ընդհանուր Ժողովի հրաւիրել հեռու տեղեր գտնուղ այնպիսի ընկերներ, որոնք իրենց յեղափոխական գործունէութեամբ այդ մարմիններուն որոշ երաչխաւորութիւն կը ներկայացնեն՝ Ընդհանուր Ժողովի որոշումներուն ղդալապէս նպաստելու: Իսկ Ժողովի գումարման վայրը կամ անոր մօտ գտնուղ այդպիսի ընկերներ անպայման Ընդհանուր Ժողովը միայն կարող է հրաւիրել:*

107.— *Նախորդ յօդուածի համաձայն հրաւիրուած ընկերները պատգամաւորի հաւասար ձայնի իրաւունք կ'ունենան Ընդհանուր Ժողովին մէջ:*

108.— *Ընդհանուր Ժողովը որոշ նիստերուն խորհրդակցական ձայնով կը հրաւիրէ նաեւ յօդուած 106ին չհամապատասխանող այնպիսի ընկերներ եւ ուրիշ յեղափոխական կուսակցութիւններու պատկանող կամ չպատկանող անհատներ եւ օտարներ, որոնց մասնակցութիւնը օգտակար կը դատուի այս կամ այն խնդրի*

առթիւ բացուելիք վիճաբանութիւններուն:

109.— *Երկրի ամէն ձայնատու մարմին Ընդհ. Ժողովին տեղեկագիր կամ պատգամաւոր ղրկելէ առաջ, պարտաւոր է (տես կարգ. յօդ. 16) չրջանի պատգամաւորական ժողով գումարել, հակառակ պարագային զոնէ իր չրջանի կոմիտէներու կարծիքներն իմանալ:*

110.— *Երկրէն դուրս պատգամաւորները կ'ընտրուին կեդր. կոմիտէի չրջանական ժողովի կողմէն:*

111.— *Ամէն պատգամաւոր պարտաւոր է իր չրջանի ո՛չ միայն մեծամասնութեան, այլեւ փոքրամասնութեան կարծիքները բերել Ժողովին:*

112.— *102, 103, 104, 105, 106 յօդուածներու տրամադրութեան համաձայն հրաւիրուած պատգամաւորներու եւ գործիչներու 2/3է ներկայութեամբ Ընդհանուր Ժողովը օրինաւորապէս բացուած կը համարուի:*

113.— *Ընդհանուր Ժողովը իր բոլոր վճիռները կու տայ ներկայ եղող բոլոր ձայներու 2/3ի մեծամասնութեամբ:*

114.— *Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ ձայն ունի, բայց կարող է մէկ ձայն եւս ունենալ այն վայրի համար միայն, որուն մօտէն ծանօթ է:*

115.— *Պատգամաւորը իրաւունք չունի առանց զինք ընտրող մարմնի համաձայնութեան՝ ձայնը ուրիշին տալ:*

116.— *Գործիչ մը երբ չրջանի մը ձայնը կը ստանայ՝ կը համարուի պատգամաւոր եւ կը կորնչնէ իր գործիչի ձայնը (յօդուած 107):*

117.— *Ընդհանուր Ժողովի նիստերը բացուած յայտարարելէն ետք՝ պատգամաւորները կը ներկայացնեն ամէն մէկն իր չրջանի համարատուութեան տեղեկագիրը:*

118.— *Ընդհանուր Ժողովի վճիռները վերջնական կը համարուին այն ատեն միայն, երբ բոլոր ատենագրութիւնները կ'արձանագրուին եւ Ժողովը փակուած կը յայտարարուի:*

119.— *Դաշնակցութեան նպատակի եւ կազմակերպութեան սիստեմի վերաբերեալ ոեւէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհանուր Ժողովը, եթէ կանխապէս այդ խնդիրը չէ ներկայացուած կեդրոնական կոմիտէներուն:*

ՆՈՒԱԶԱԳՈՑՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ի նկատի ունենալով կազմակերպութեան ծաւալումը եւ դաշնակցական մարմիններու պարտականութիւններու եւ իրաւասութիւններու աւելի որոշակի կերպով ճշդելու կարիքը, Ընդհանուր Ժողովը՝ բացի դաշնակցական մարմիններու կազմի մասին գծած պարտաւորիչ յօդուածներէ՝ անհրաժեշտ կը սեպէ մասնաւորապէս կեդր. կոմիտէներու, բիւրոներու եւ ուսանողութեան վերաբերմամբ հետեւեալ առանձին պահանջները դնել: Այն մարմինը, որ այս պահանջներուն գոհացում չէ տուած, կը զրկուի Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունքէն:

120.— ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ.— *Իւրաքանչիւր կեդրոնական կոմիտէ պարտաւոր է՝*

ա) *Տարեկան առնուազն 10,000 ֆր. մուտք ունենալ:*

ՄԱՆՕԹ.— *10,000ի մուտքը նշանակուած քլլալով ամենապատկառ երկրի հաշուով, կեդր. կոմիտէի չրջանի պատգամաւորական ժողովը պարտի տեղական հանգամանքներու համաձայն բաժնել այս գումարը:*

բ) *Ամէն տարի կազմակերպութեան համար պատրաստել կամ գտնել կազմակերպող, ռազմագէտ կամ յեղափոխական գործի համար պահանջուած ուրիչ կարդի մասնագէտ ընկերներ, համաձայն իւրաքանչիւր չրջանի ներքին պայմաններուն: Ատոնց քանակը կ'որոշէ չրջանի պատգամաւորական ժողովը:*

ՄԱՆՕԹ.— *Այն կեդրոնական կոմիտէն, որ իր ցենզով կը համապատասխանէ երկու կամ աւելի կեդր. կոմիտէներու եւ իր չրջանական ժողովի որոշումով չ'ուզեր բաժնուիլ երկուքի, պարտաւոր է կազմակերպութեան տրամադրութեան տակ դնել տարեկան զոնէ երեք ինտելիգենտ կազմակերպող ուժեր, որպէսզի իրաւունք ունենայ երկու ձայն ստանալ Ընդհանուր Ժողովին մէջ:*

գ) *Իւրաքանչիւր տարի պատրաստել ամենապակասը 50 դինավարժ ընկերներ, որոնցմէ 10ը պատրաստի՝ երկիր մտնելու իրենց հաշուով, եւ 2 հոգի զինուորական պանազան մասնագիտութիւններու վարժեցնել:*

121.— ԲԻՒՐՈՆԵՐ.— *Երկու Բիւրոները պարտաւոր են՝*

ա) *Տարեկան առնուազն 10,000 ֆրանքի մուտք ունենալ, չհաշուելով հրատարակութիւններու հասոյթը:*

բ) *Պատրաստել կամ գտնել 6 մասնագիտական ուժեր, մէկ մասը ռազմագէտ եւ միւս մասը կազմակերպող:*

Մասնաւորապէս Արեւմտեան Բիւրոն պարտաւոր է՝

գ) *Հրատարակել տարեկան առնուազն 12 թիւ «Դրօշակ»:*

դ) *Տարեկան առնուազն 500 երես գրքոյկներ՝ գոնէ հինգ տարբեր կարգի թեմաներ չօշափող:*

122.— ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ.— *Արտասահմանի եւ Ռուսաստանի դաշնակցական ուսանողութիւնը կը մասնակցի Ընդհ. Ժողովին, երբ անդամներու թիւը պակաս չէ քան 50՝ արտասահմանի մէջ, իսկ 100՝ Ռուսաստանի մէջ:*

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

123.— *Ընդհանուր ժողովը, կրկին չեչտելով Դաշնակցութեան կազմակերպական այն սկզբունքի վրայ, որը կ'ընդունի խմբական և ոչ անհատական ապակեդրոնացում, բոլոր մարմիններու լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրէ այդ պայմանի տրամադրութեան վրայ եւ կը հրահանգէ ամէն դաշնակցականի համակերպիլ իր անձին նկատմամբ եւս իր պատկանած մարմնին ըրած կարգադրութիւններուն: Այս սկզբունքի հիման վրայ, երբ դաշնակցական ոեւէ մարմնի մէկ անդամը կամ փոքրամասնութիւնը չի համակերպիր մեծամասնութեան վճռին, պարտի կա՛մ չէզոքանալ տեղական գործերու մէջ եւ կամ գործունէութեան ուրիշ վայր ընտրել:*

124.— *Դաշնակցական ոեւէ ուրիշ մարմին այս կարգի չհամակերպող անհատի կամ փոքրամասնութեան հետ յարաբերութեան կը մտնէ տեղական մարմնի համաձայնութեամբ միայն:*

ՄԱՆՕԹ.— *Արտատեհմանի շրջանական ժողովներուն կը ձգուի այս յօդուածը ընդունիլ կամ յարմարցնել տեղական պայմաններուն:*

ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ԱՐՏԱԿՈՍՈՒՄ

125.— *Գաւառական բնոյթ ունեցող ամէն վճիռ կը տրուի ձայներու 2/3ի մեծամասնութեամբ:*

126.— *Ամէն դաշնակցական մարմին կարող է կարգապահական պատիժներ տնօրինել իր անդամի նկատմամբ:*

127.— *Մանր յանցանքի եւ զեղծումի պարագային՝ ամէն մարմին իր մէջէն կ'արտաքսէ յանցաւոր կամ զեղծարար անդամը, զգուշութեան համար իսկոյն տեղեկացնելով իր անմիջական բարձր մարմնին:*

128.— *Արտաքսման ամէն դատավճիռ ժամանակաւոր է մինչեւ չրջանական ժողովին վերահաստատումը եւ «Դաշնակցութեան Յորհրդէն» վաւերացումը:*

129.— *Շրջանական ժողովը պարտաւոր է իր ներկայութեանը հրաւիրել մեղադրեալը՝ միջոց տալու համար անոր ինքզինք պաշտպանելու:*

130.— *Շրջանական ժողովէն հաստատուելէ և «Դաշնակցութեան Յորհրդէն» վաւերացուելէ ե՛տքը միայն արձակուած վճիռը վերջնական կը նկատուի եւ դատապարտեալին Դաշնակցութենէ ի սպառ արտաքսումը կը յայտարարուի «Դրօշակի» մէջ:*

ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

131.— *Հաշիւները պիտի ներկայացուին տարեկան երկու անգամ. ա) Հաշուեկշռով (բլանկով). բ) Ջատագած դրոշմանիշերով. գ) Օրատետրով, որուն մէջ մանրամասն յիշուած են բոլոր մուտքերն ու ծախքերը. թէ՛ բլանկը եւ թէ՛ օրատետրը պէտք է կրեն հաշուետու մարմնի կնիքը եւ բոլոր անդամներու ստորագրութիւնը. դ) Փոխադրուած զէնքերու եւ ռազմամթերքի հաշիւներով. ե) Առաձեռն պատրաստ գտնուող զէնքերու եւ ռազմամթերքի հաշիւներով. զ) Կազմակերպական այլ եւ այլ գոյքերու ցուցակով. է) Թուղթերու կամ ենթակոմիտէներու մանրամասն ցանկով. ը) Զինուորներու եւ գործիչներու ցանկով:*

132.— *Արեւմտեան Բիւրոն պարտաւոր է պահել առանձին տոմար, ուր պիտի արձանագրուին իւրաքանչիւր Գաւառախանատու Մարմնի, Արեւելեան Բիւրոյի եւ Գաւառախանատու Մարմիններու չրջաններէն դուրս գտնուած անկախ մարմիններու ելեւմուտքը՝ համաձայն այդ մարմիններէն պարբերաբար ստանալիք հաշիւներուն:*

133.— *Արեւելեան Բիւրոն եւս պարտաւոր է մասնաւոր տոմար մը ունենալ՝ չրջանի մարմիններու ելեւմուտքը արձանագրելու եւ անոր համաձայն Ընդհանուր Ժողովէ ընդունուած նախահաշուով՝ բաչխումի գործը կատարելու համար:*

134.— *Այն մարմինները, որոնք քաղաքական դէպքուրութիւններու պատճառով վտանգաւոր կը համարեն հաշիւները երկար ժամանակ իրենց քովը պահել, պարտաւոր են գաղտնի քանաքով եւ ծածկագրով պարբերաբար (կարելի եղածին չափ յաճախ) իրենց հաշիւները ղրկել Արեւմտեան Բիւրոյին, որ կ'արձանագրէ այդ հաշիւները Մայր–տոմարին մէջ:*

135.— *Անհատներու տրուած դումարներու, զէնքերու եւ իրերու համար մարմինները պարտաւոր են ունենալ կամ բնկալագիր եւ կամ ստացողի ստորագրութիւնը օրատետրին մէջ այս մասին: Միաժամանակ իւրաքանչիւր անհատ գործիչ պարտաւոր է իր ըրած ծախքերու հաչիւը տալ իր պատկանած մարմնին:*

Բիւրոները պարտաւոր են ունենալ հաշուապահ՝ իրենց մէջէն կամ հրաւիրուած դրսէն եւ խստութեամբ պահանջել բոլոր մարմիններու հաշիւները որոշուած ժամանակամիջոցներուն:

136.— *Արեւմտեան Բիւրոյին կը յանձնարարուի բանտափոխել անցեալի մէջ ընդունուած հաշուեկշռի համար բլանկները եւ ցրուել կոմիտէներուն:*

137.— *Արդիլուած է կազմակերպութեան դրամը, իբր փոխատուութիւն կամ ոեւէ չհամգործական ձեռնարկի համար, մասնաւոր անձերու տալ:*

138.— *Արեւմտեան Բիւրոն պարտաւոր է պատրաստել տալ եւ բոլոր մարմիններուն ցրուել ընկալագրեր փոխարինող դրոշմանիչեր: Ամէն տեսակի դրամական դանձում (նուիրատուութիւն, անդամավճար եւն.) պիտի կատարուի անոնց միջոցով:*

ՄԱՆՕԹ.— *Այս դրոշմանիշը կը վերաբերի արտատեհմանեան մարմիններուն. կովկասի եւ երկրի մարմինները կրնան դրամ գանձել ձախ ձեռով:*

139.— *Ընկալագրերը փոխարինող դրոշմանիչերէն՝ իւրաքանչիւր դաշնակցական մարմին պարտաւոր է ըստ իր մուտքի՝ ոչնչացնել (երեկոյթ, վիճակախաղ, ներկայացում եւն., եւն.) կամ պատռած ձեւով նուիրատուին տալ:*

140.— . . . . . .

141.— *Բիւրոները եւ Գաւառախանատու Մարմինները իրար փոխադարձ կոնտրոլի ենթարկելու իրաւունք ունին:*

142.— *Բիւրոները պարտաւոր են հաշուապահութեան եւ կոնտրոլի վերաբերեալ ժողովի կողմէն ընդունուած վճիռները գործադրութեան դնել ժողովի փակուելէն մինչեւ 6 ամսուան ընթացքին մէջ:*

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՏՈՒՐՔ

143.— *Ամէն դաշնակիցական պարտաւոր է իր եկամուտի 2–10%ը դնել Դաշնակցութեան տրամադրութեան տակ:*

ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ

144.— *Դաշնակցական ամէն գործիչ պարտաւոր է իր սեփական աշխատանքով ապրիլ ամէն անգամ ա) Երբ մասնաւոր դրամդունքը չի վճռաեր իր ստանձնած գործը յաջողութեամբ կատարելուն. բ) Երբ իր ստանձնած գործը կատարելէն կամ իր չրջանէն հեռանալէն առաջ, անմիջապէս նոր գործի մը չի կոչուիր:*

145.— *Նախորդ յօդ. բ. պարբերութեան մէջ նախատեսուած պարագային՝ դաշնակցական մարմիններն ու ընկերները պարտաւոր են ընկերոջ համար աշխատանք գտնել, եւ Դաշնակցութեան հաշուով անոր ծախքերը հոգալ առ առաւելն 2 ամիս:*

ՄԱՆՕԹ.— *Այս յօդուածի տրամադրած երկամեայ օժանդակութիւնը պէտք է հաշուել ընկերոջ մը իր գործէն կամ շրջանէն հեռանալու օրէն սկսած (յօդ. 144 բ. պարբերութիւն), եւ ո՛չ թէ ամէն մէկ կոմիտէի շրջանը մտնելու օրէն:*

146.— *Գործի մէջ գտնուող ընկերներու ընտանիքներուն ո՛չ մի նպաստ չի տրուիր կազմակերպութեան միջոցներէն:*

ԿԱՆՈՆԱԴԻՐ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՆԴԱՄՆԵՐ

1.— *Իւրաքանչիւր ոք, որ կ'ուզէ Հ. Ց. Դաշնակցութեան անդամակցիլ, պէտք է ամբողջովին ընդունի կուսակցութեան ծրագիրն ու տակտիքը, ենթարկուի կանոնագրին եւ ամէն ջանք գործ դնէ կեանքին մէջ զանոնք իրականացնելու:*

2.— *Դաշնակցութեան անդամները կը բաժնուին երկու կարգի՝*

ա) Գործօն անդամներ,

բ) Օժանդակ անդամներ:

Գործօն անդամներ են անոնք, որոնք կը մասնակցին Դաշնակցութեան ոեւէ կազմին եւ կը վճարեն իրենց հասոյթին առնուազն 2%ը:

Օժանդակ անդամներ կը համարուին անոնք, որոնք ընդունելով կուսակցութեան ծրագիրը եւ նիւթապէս օժանդակելով՝ չեն ղեկավարուիր սակայն անոր տակտիքով ու կանոններով:

ՄԱՆՕԹ.— Օժանդակ անդամները քուէարկելու եւ քուէարկելու իրաւունք չունին:

ԱՆՀԱՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ

3.— *Անհատ գործիչները կը բաժնուին երկու կարգի՝*

ա) Պրոպագանդիստ,

բ) Ներկայացուցիչ:

Պրոպագանդիստ կը կոչուին այն գործօն ընկերները, որոնք կեդրոնական կոմիտէներու ընտրութեամբ կամ հաւանութեամբ՝ կը զբաղին այդ չրջաններու պրոպագանդական գործերով: Կրնան զբաղիլ նաեւ կազմակերպական գործերով՝ եթէ յատկապէս յանձնարարուած են նոյն մարմնի կողմէն:

Ներկայացուցիչ կը կոչուի այն գործօն ընկերը, որ դաշնակցական մարմնի կողմէն կ'երթայ որոշ տեղ մը, որոշ առաքելութեամբ եւ որոշ ժամանակամիջոցի մը համար, որ կը ճշդուի անոր վկայագրին մէջ:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

4.— *Դաշնակցական կազմ կը համարուին՝*

ա) *Ջոկը,*

բ) *Ենթակոմիտէ,*

գ) *Կոմիտէ,*

դ) *Կեդրոնական Կոմիտէ,*

ե) Պատասխանատու Մարմին,

զ) Բիւրօ։

ԽՈՒՄԲ

5.— Եօթը կամ աւելի դաշնակցականներ միասին գալով՝ կը կազմեն խումբ։

Դաշնակցական խումբերը կը բաժնուին քաղաքական, մարտական, արհեստակցական, գիւղացիական, կարմիր Խաչի կամ այլ տեսակի։ Անոնց ամէն մէկուն համար կը մշակուի յատուկ Ներքին Կանոնագիր։

6.— Նոր անդամներ կ'ընտրուին խմբի անդամներուն փոխադարձ համաձայնութեամբ։

ԵՆԹԱԿՈՄԻՏԷ

7.— Շրջան մը ենթակոմիտէ կ'ունենայ, երբ առնուազն ունի 50 գործօն անդամ։

8.— Ենթակոմիտէն կ'ընտրուի խումբերու անդամներու պարզ մեծամասնութեամբ։

9.— Ենթակոմիտէն կը վարէ խումբերու ընդհանուր գործերը եւ միջնորդ կը հանդիսանայ խումբերու եւ աւելի բարձր մարմիններու կամ ներկայացուցչի միջեւ։

10.— Ենթակոմիտէն կը բաղկանայ 3–5 անդամէ։

ԿՈՄԻՏԷ

11.— Շրջան մը կոմիտէ կ'ունենայ, երբ առնուազն ունի 200 գործօն անդամ։

12.— Կոմիտէի ընտրութիւնը կը կատարուի խումբերու անդամներու կամ անոնց ներկայացուցիչներու ձեռքով։ Թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ պարագային կը պահանջուի առնուազն 2/3ի մասնակցութիւնը։

13.— Կոմիտէն կը կազմուի առնուազն 5 անդամէ։

14.— Կոմիտէն անկախ է իր տեղական գործերուն մէջ։ Իսկ Ընդհանուր Ժողովի նախագծած որոշ պարագաներու եւ վճռած ձեռնարկներու գործադրութեան տահմանները մէջ՝ կոմիտէն պարտաւոր է գործել կեդրոնական Կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի եւ կամ ներկայացուցչի համաձայնութեամբ։

15.— Կոմիտէն իր դրամը կը ղրկէ շրջանի կեդր. Կոմիտէի դրամարկղը. իսկ բացառիկ դէպքերու մէջ՝ իր Բիւրոյին, կանխաւ իմաց տալով այդ մասին կեդր. Կոմիտէին։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

17.— Շրջան մը կեդրոնական Կոմիտէ կ'ունենայ, երբ առնուազն 1000 գործօն անդամ ունի։

18.— Կեդր. Կոմիտէն ամէն տարի կ'ընտրուի իր շրջանի պատգամաւորական ժողովի կողմէն։

19.— Պատգամաւորական ժողովը կը բաղկանայ իւրաքանչիւր ընտրական շրջանի դաշնակցականներու թուի համեմատ ուղարկուած պատգամաւորներէ։

ՄԱՆՕԹ.— Իւրաքանչիւր այսպէս պատգամաւորական ժողովին կը թողնուի որոշել այդ շրջանի ժողովներու համեմատականութիւնը։

20.— Կեդրոնական Կոմիտէն կը բաղկանայ առնուազն 5 անդամէ։

21.— Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէ դահլիճում տալէն յետոյ իր տեղական պէտքերուն, որը պէտք է աշխատիլ հասցնել նուազագոյնի (minimum), աւելորդ ղումարը կը ղրկէ իր Բիւրոյի դրամարկղը, կամ Բիւրոյի ցուցմունքով՝ Ընդհանուր Ժողովի որոշած ձեռնարկներուն, համաձայն նախահաշուի։

ՄԱՆՕԹ.— ա) Այդ նուազագոյն չափը շրջանի բոլոր մարմիններու համար (ենթակոմիտէ եւ կոմիտէ) կ'որոշէ Կեդր. Կոմիտէն։

ՄԱՆՕԹ.— բ) Յատուկ նուէրները կը յատկացուին այն ձեռնարկին, որուն համար ստացուած են։

22.— Կեդրոնական Կոմիտէն, տարին մէկ անգամ, Դեկտեմբերի սկզբին, կը ղրկէ իր Բիւրոյին իր շրջանի գործունէութեան տեղեկագիրը։

23.— Կեդրոնական Կոմիտէն տարին երկու անգամ իր Բիւրոյին կը ներկայացնէ իր շրջանի հաշիւները թէ՛ օպերատիական ձեւով եւ թէ այն աղիւսակներու համաձայն, որ վաւերացուած են Ընդհանուր Ժողովի կողմէն։ Հաշիւները կրնայ կեդր. Կոմիտէի կնիքը եւ առնուազն 3 անդամներու առոյգագրութիւնները։

24.— Այն կեդր. Կոմիտէն, որ գոնէ տարին մէկ անգամ հաշիւ չի ներկայացներ, կը համարուի լուծուած։

25. Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է, դէթ 3 ամիսը մէկ անգամ, իր շրջանի կոմիտէներու հասոյթի ցուցակը շրջանի անունով հրատարակութեան տալ «Դիւօշակ»ի մէջ խմբական ցանկով։

ՆԱՆՕԹ.— Կեդրոնական Կոմիտէի շրջաններէն դուրս գտնուող մարմիններու (կոմիտէ, ենթակոմիտէ եւայլն) ձուլիքատուութեան ցանկը կը տպուի «Դիւօշակ»ի մէջ այն ժամանակ միայն, երբ ամսոյ հաշիւը կամ դրամը կը ղրկուի Բիւրոյին։

26.— Կեդր. Կոմիտէն պարտաւոր է, տարին դէթ մէկ անգամ, կոնտրոլի ենթարկել իր շրջանի մարմիններուն ռազմական եւ դրամական հաշիւները։

27.— Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է, տարին մէկ անգամ, Դեկտեմբերի սկզբին, ղրկել իր շրջանի կոմիտէներու եւ խմբերու մանրամասն ցանկը Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներուն։

28.— Կեդրոնական Կոմիտէն ունի իր կնիքը։

29.— Արտաքին բոլոր յարաբերութիւնները կը կատարուին Կեդրոնական Կոմիտէներու միջոցով կամ անոնց գիտութեամբ։

30.— Կեդրոնական Կոմիտէն իր բոլոր կարեւոր Թուղթերը, դոկիւմաններն եւ յեղափոխական–պատմական նշանակութիւն ունեցող իրերը կը ղրկէ Արեւմտեան Բիւրոյին պահելու՝ մնացածը ոչնչացնելով։

ԹՈՒՐՔԻՈՑ ՄԷՋ

Նկատի ունենալով Թուրքիոյ բազաւորական դժգոհ պայմանները, որոնց յաճախ անհնարին կը դարձնեն Դաշնակցական կեանքի ոտանոգրի» ամբողջական կիրառութիւնը, Ընդհ. Ժողովը անխուսափելի կը գտնէ, պահպանելով մարմիններու սիստեմի ամուսնութիւնը, թոյլատրել հետեւեալ չեղումները.

ա) Սահմանափակել, ըստ առաջնոյն, ընտրական սկզբունքի կիրառումը, իրաւունք տալով, որ բոլոր կազմերը՝ խումբ, ենթակոմիտէ եւ կեդր. կոմիտէ, անուանումի կամ վաւերացումի քարտէր մարմիններէ։

բ) Նուազեցնել մարմիններու անդամներու թիւը, եւ դրամական, ընտրական եւայլ ցեղի չափը։

31.— Խումբ մը կը կազմուի առնուազն 5 հոգիէ։

32.— Ենթակոմիտէ կը կազմուի հոն, ուր 5 խումբ կամ առնուազն 35 անդամ կան։

33.— Ենթակոմիտէն կը բաղկանայ առնուազն 3 անդամէ։

34.— Կոմիտէն կը կազմուի 3 ենթակոմիտէներէ կամ առնուազն 15 խումբերէ։

35.— Կոմիտէն անկախ է իր տեղական գործերուն մէջ։ Իսկ Ընդհ. Ժողովի նախագծած որոշ պարագաներու եւ վճռած ձեռնարկներու գործադրութեան սահմաններու մէջ՝ կոմիտէն պարտաւոր է գործել կեդր. կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի եւ կամ ներկայացուցչի համաձայնութեամբ։

36.— Կոմիտէն իր դրամական հասոյթին մէկ մասը՝ համաձայն ներքին կանոնադրութեամբ որոշուած տոկոսի՝ կը յատկացնէ իր մայրը պահման, մնացածը յանձնելով շրջանի բարձր մարմնին։

37.— Ոեւէ կոմիտէի կնիք կը տրուի այն պարագային միայն, երբ շրջանին Բարձրագոյն Մարմինը յարմար դատէ։

ՆԱՆՕԹ.— Կեդրոնական կոմիտէի հաշիւին մէջ գտնուող կոմիտէները կնիք երբէք չեն կարող ունենալ։

38.— Կոմիտէն կը կազմուի առնուազն 3 անդամէ։

39.— Կեդրոնական Կոմիտէն կը կազմուի 3 կոմիտէներէ կամ առնուազն 45 խումբերէ։

40.— Պատասխանատու Մարմինը իր շրջանի կոմիտէներուն համաձայնութեամբ՝ անոնցմէ ամէնէն դրծունեայ եւ պահանջներու նուազագոյն չափին համապատասխանող կոմիտէն կը յայտարարէ կեդրոնական Կոմիտէ՝ յայտնելով այդ մասին Բիւրոյին կամ Դաշնակցութեան Ցուհուրդին իր գիտութեան։ Պատասխանատու Մարմիններու շրջաններէն դուրս՝ կոմիտէներու հաստատութեամբ՝ եւ Դաշնակցութեան Ցուհուրդի համաձայնութեամբ անոնցմէ ամէնէն գործունեայ կոմիտէն կը յայտարարուի կեդրոնական կոմիտէ։

41.— Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է իր շրջանի հասոյթներէն որոշ տոկոս մը տրամադրելի ընել կայմախերպութեան ընդհանուր ծախքերուն, որ կը մտնուի Դաշնակցութեան նախահաշիւին մէջ։

42.— Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է, տարին դէթ մէկ անգամ, իր շրջանի մարմիններու դրամական ու ռազմական հաշիւները ստուգել։

43.— Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է կոմիտէներու եւ խումբերու աշակցութեամբ պարտաւորել իր շրջանի յեղափոխական քարտէսները եւ տեղական հայ ժողովրդի վիճակագրութիւնը ու ղրկել Բիւրոներուն։

44.— Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է տարին մէկ անգամ իր Բիւրոյին ղրկել իր շրջանի գործունէութեան տեղեկագիրը։

45.— Այն Կեդրոնական Կոմիտէն, որ գոնէ տարին անգամ մը հաշիւ չի ներկայացներ, կը համարուի լուծուած։

46.— Կեդրոնական Կոմիտէն, դէթ 6 ամիսը անգամ մը, իր շրջանի կոմիտէներու հասոյթի ցուցակը շրջանի անունով պիտի ղրկէ «Դիւօշակ»ի մէջ հրատարակելու համար։

47.— Կեդրոնական Կոմիտէն իր բոլոր կարեւոր Թուղթերը, դոկիւմաններն եւ յեղափոխական պատմական նշանակութիւն ունեցող իրերը կը ղրկէ Արեւմտեան Բիւրոյին պահելու՝ մնացածը ոչնչացնելով։

48.— Կեդրոնական Կոմիտէն ունի իր կնիքը։

49.— Կեդրոնական Կոմիտէն կը բաղկանայ առնուազն 3 անդամէ։

50.— Պատասխանատու Մարմիններու շրջանակէն դուրս գտնուող բոլոր կոմիտէները կը դնուին իր շրջանի Բիւրոյին անմիջական կոնտրոլի տակ։

51.— Իւրաքանչիւր կազմ վերհսկելու եւ կոնտրոլի իրաւունք ունի իր առջեւեան մարմնի վրայ եւ փոխադարձաբար կ'ենթարկուի իրմէ անմիջապէս բարձր մարմնի կոնտրոլին։

52.— Իւրաքանչիւր մարմին իր կազմը ուժեղացնելու համար, ընկերներու միաձայն հաւանութիւնով, կրնայ նոր ընկերներ հրաւիրել իրեն անդամակցելու, առանձալով իրմէ բարձր մարմնին հաւանութիւնը։

53.— Երկրի Պատասխանատու Մարմինները եւ Ռայոնական Ժողովները պարտաւոր են մշակել ներքին կանոնագրութիւն մը՝ ճշդելու համար մարմիններու փոխադարձ յարաբերութիւնները եւ այլ մանրամասնները։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

54.— *Պատասխանատու կը կոչուի Ընդհանուր ժողովի կողմէն ընտրուած այն մարմինը, որուն կը յանձնուի որոշ չրջանի մը դործունէութեան ղեկավարութիւնը ու ւճռած խոչոր ձեռնարկներու իրագործման պատասխանատուութիւնը:*

ՄԱՆՕԹ.— Պատասխանատու Մարմինին թաղակը եւ վայրը կ'որոշէ Ընդհանուր ժողովը:

55.— *Պատասխանատու Մարմինը կը կազմուի առնուազն հինգ անդամէ, երեքը Ընդհանուր ժողովէն ընտրուած, իսկ երկուքը չրջանի կեդր. կոմիտէներու կողմէն:*

56.— *Ոեւէ պատճառով պակասող անդամին տեղ՝ նորը կ'ընտրուի մնացած ընկերներու եւ չրջանի բիւրոյի խորհրդակցութեամբ:*

57.— *Պատասխանատու Մարմինը վարիչ դեր ունի իր գործունէութեան չրջանը կազմող երկրին մէջ:*

58.— *Պատասխանատու Մարմնի խորհրդակցութիւնը պարտաւորիչ է հարեւան կեդր. կոմիտէներու եւ մէւս կոմիտէներու համար, ամէն անգամ, երբ վերջիններու կողմէն քիչ–չատ կարեւոր յեղափոխական գործ մը կատարել որոշուի:*

59.— *Պատասխանատու Մարմինն իր ստանձնած խոչոր ձեռնարկին դործադրութեան վայրկեանը որոշելէ առաջ՝ պարտաւոր է այդ մասին խորհրդակցիլ Դաշնակցութեան Խորհուրդի հետ:*

60.— *Պատասխանատու Մարմնի անդամը, երբ դոնուի Դաշնակցութեան ոեւէ մէկ մարմնի վայրը, ուներ ձայնի իրաւունք:*

61.— *Պատասխանատու Մարմնի այն անդամները, որոնք, առանց ընկերներու համաձայնութեան, դուրս կը մնան իրենց չրջանէն, կը համարուին հրաժարուած ու կ'ենթարկուին պատասխանատուութեան Դաշնակցութեան Խորհուրդի կողմէն:*

62.— *Երկրի Պատասխանատու Մարմինը կը համարուի Դաշնակցութեան Խորհուրդի անդամ:*

63.— *Պատասխանատու Մարմինները պարտաւոր են, տարին գէթ մէկ անգամ, կոնտրոլի ենթարկել իրենց չրջանի բոլոր մարմիններու հաչիւները:*

64.— *Պատասխանատու Մարմինները, դրամական տագնապի օրերուն մէջ, իրաւունք ունին իրենց անդամներէն մէկը դուրս ղրկել՝ հարեւան կոմիտէներու կամ Բիւրոյի կողմէն ընտրուած ընկերներու հետ՝ միջոցներ գտնելու:*

Բ Ի Ւ Ր Օ

65.— *Դաշնակցութիւնն ունի երկու Բիւրօ՝*
ա) Արեւելեան,
բ) Արեւմտեան:

66.— *Բիւրոները պարտաւոր են հսկել Ընդհանուր եւ Ռայոնական ժողովներու որոշումներուն եւ կազմակերպական կանոններուն ճիշդ գործադրութեան վրայ:*

67.— *Բիւրոները գիտակ կը պահեն իրենց ռայոնի կեդրոնական կոմիտէները կուսակցական գործերու ընթացքի մասին եւ անոնց կը հաղորդեն բիւրոյական գործերու հաչիւը առնուազն վեց ամիսը մէկ անդամ:*

68.— *Բիւրոները, ըստ կարիքի՝ տեղացիներու համաձայնութեամբ՝ ընկերներ կ'ուղարկեն հաւատար ձայնի իրաւունքով զօրացնելու համար կեդրոնական կոմիտէները:*

69.— *Բիւրոները կանոնաւորիչ դեր ունին դրամի բաչխումին մէջ՝ Ընդհանուր ժողովի որոշած նախահաչուի համաձայն:*

70.— *Բիւրոներուն մէյն կը վերապահուի կնիք պատրաստել տալ եւ յանձնել, ուր որ անկ է, այդ մասին դծուած կանոններու համաձայն:*

ՄԱՆՕԹ.— ա) Կազմակերպական գիմաձղանը գործածելու իրաւունք ունին միմիայն Բիւրոները եւ Կեդր. Կոմիտէները:

բ) Կուսակցական աչխատաւորական միութիւններու կնիքը կը տրուի շրջանի կեդրոնական կոմիտէներու կողմէն: Կնիքի ձեւը, որ տարբեր պիտի ըլլայ կուսակցութեան կնիքի ձեւէն, կ'որոշէ Ռայոնական ժողովը:

71.— *Բիւրոները պարտաւոր են, տարեկան առնուազն մէկ անդամ, իրենց անդամներէն մէկը ղրկել այցելելու ռայոնի կեդրոնական կոմիտէները կամ իրենց իրաւասութեանը ենթակայ մարմինները եւ ստուգել նաեւ անոնց հաչիւները:*

72.— *Դրամական բոլոր հաչիւները կը կեդրոնանան Բիւրոներու մէջ, որոնք եւ կը հսկեն եկամուտներու եւ ծախսերու կանոնաւորման վրայ:*

73.— *Բիւրոները պարտաւոր են տարուան վերջը ամփոփել իրենց իրաւասութեան տակ դտնուած բոլոր մարմիններու հաչիւները եւ հաղորդել Կեդր. Կոմիտէներուն:*

74.— *Բիւրոները պարտաւոր են իրենց կարեւոր որոշումներու մասին արձանագրութիւն պահել:*

75.— *Բիւրոները պարտաւոր են 3 օրուան մէջ պատասխանել երկրէն եկած նամակներուն:*

76.— *Բիւրոյական անդամներու մէջ աչխատանքի բաժանումն ընդունելով հանդերձ՝ Բիւրոն in corpore (խմբովին) պատասխանատու է Ընդհանուր ժողովին առջեւ իր բոլոր դործերուն համար:*

Ա) ԱՐԵԻԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

77.— Արեւելեան Բիւրոյի չրջանը կը կազմեն ա) *Երկիր՝ Կիրասոն–Խարբերդ–Տիգրանակերտի գծէն արեւելք.* բ) *Կովկաս, Ռուսաստան եւ Պարսկաստան:*

78.— *Արեւելեան Բիւրոն կը բաղկանայ առնուազն եօթն անդամէ, որոնցմէ հինգը կ'ընտրէ Ընդհ. ժողովը, մէկը՝ Կովկասեան Ռայոնական ժողովը, իսկ մէւսը կ'ընտրուի Երկրի Պատասխանատու Մարմիններէն:*

ՄԱՆՕԹ.— Ինն անդամ եղած ատեն՝ Ռայոնական ժողովը եւ Երկրի Պատասխանատու Մարմինները կ'ընտրեն երկու–երկու հոգի: Այդ անդամներու համար ամէն տարի կը կատարուի վերընտրութիւն Կովկասեան Ռայոնական ժողովի եւ Պատասխանատու Մարմնի կողմէն: Հին անդամները վերընտրելի են:

79.— *Արեւելեան Բիւրոյի քաղաքը կ'որոշէ Կովկասեան Ռայոնական ժողովը:*

80.— *Արեւելեան Բիւրոյի անդամներէն գէթ երեքը պարտաւոր են դրադուլել միմիայն յեղափոխական դործով, ստանալով կազմակերպութենէն իրենց ապրուստի ծախսը:*

81.— *Մանրակիչ խնդիրներու լուծման համար Արեւելեան Բիւրոն կը հրաւիրէ արտակարդ Ռայոնական Ժողով:*

82.— *Արեւելեան Բիւրոն* in corpore *(խմբովին) կը վարէ իր չրջանի դործերը, յատուկ վերահսկողութիւն կատարելով հետեւեալ ճիւղերուն վրայ, Ընդհ. ժողովի որոշումներու համաձայն:*

83.— *Բիւրոն կ'ունենայ երկու վարչական–գործադրիր հատուած՝ Թրքահայկական եւ Կովկասեան:*

84.— *Թրքահայկական հատուածը յատուկ պատասխանատուութիւն ունի Երկրի Պատասխանատու Մարմիններու պահանջներուն դոհացումն տալու՝ Ընդհանուր ժողովի որոշումներու եւ կանոնադրի սահմանին մէջ: Կովկասեան հատուածը յատուկ պատասխանատուութիւն ունի կովկասեան կեդրոնական կոմիտէներու քաղաքական–անտեսական կուռը դեկավարութեան մէջ:*

ՄԱՆՕԹ.— Երկու հատուածները կը գործեն յաճուն Արեւելեան Բիւրոյի՝ առանց մասնաւոր կնիք կամ պաշտօնաթուղթ (բլանկ) գործածելու:

Բ) ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

85.— *Արեւմտեան Բիւրոյի չրջանը կը կազմեն՝ ա) Փոքր Ասիա՝ Կիրասոն–Խարբերդ–Տիգրանակերտի գծէն արեւմուտք.* բ) *Բալկանեան Թերակղզի, Ամերիկա, Եգիպտոս եւ ամբողջ արտասահմանը՝ Ռուսաստանէն եւ Պարսկաստանէն դուրս:*

86.— *Արեւմտեան Բիւրոն կը բաղկանայ հինգ անդամէ, որոնց երեքը կ'ընտրուին Ընդհանուր ժողովէն, իսկ երկուքը՝ Արեւմտեան Ռայոնի Պատասխանատու Մարմիններու կողմէն:*

87.— *Եթէ որեւէ պատճառով Արեւմտեան Բիւրոյի անդամներէն մէկը պակսի, նորը կ'ընտրուի Խորհուրդի կամ Ռայոնական Ժողովի կողմէն:*

ՄԱՆՕԹ.— Արեւմտեան Ռայոնական Ժողովին համար կը կազմուի ձերքին կանոնագիր:

88.— *Արեւմտեան Բիւրոն իր ընդհանուր կազմակերպական գործերէն դուրս՝*

ա) *Կը հրատարակէ «Դրօշակ»ը — ուղղութեան մասին առանձնապուելով Ընդհանուր ժողովի կողմէն տրուած հրահանգներով — եւ Դաշնակցութեան անունով ուրիչ հրատարակութիւններ՝ հայ եւ օտար լեզուներով:*

բ) *Կը հրատարակէ . . . . . եւ այլ օգնականներ, օտար լեզուներով, նուիրուած հայ դատին:*

գ) *Կը վարէ արտասահմանեան պրոպագանդը:*

89.— *Արեւմտեան Բիւրոյին կը վերապահուի իրաւունք դաչնակցական ընկերներ հրաւիրել օժանդակելու իրեն՝ ա) Ռազմական, բ) Պրոպագանդի, գ) Տեղական–վարչական գործերու մէջ: Այդ կարգի ընկերներ բիւրոյական ընկերներու հաւասար ձայն կ'ունենան, բայց միայն իրենց ստանձնած գործերու մէջ:*

90.— *Բիւրոն պարտաւոր է ի հարկին իր մէջէն մէկ կամ երկուքը զբաղեցնել իրեւ չրջիկ գործիչ՝ իր չրջանի գործերով:*

ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

91.— *Դաշնակցութեան Ռայոնական ժողովներ եղած են. ա) Մեծ Հայաստանի, բ) Կովկասեան (ուր որ կը մտնէ նաեւ Վրաստ.) եւ գ) Արեւմտեան ռայոնի:*

92.— *Ռայոնական ժողովներ կը կազմուին ըստ կարիքի եւ հնարաւորութեան, իսկ Կովկասի մէջ առնուազն տարին մէկ անգամ: Անոնք կը կազմուին ա) Բիւրոյի, բ) Պատասխանատու Մարմիններու, գ) Կեդր. Կոմիտէի չրջանային ժողովի, դ) Կեդրոնական Կոմիտէներու, ե) Ռայոնի պաչտօնական Թերթի խմբագրութեան, զ) Ռայոնի ուսանողութեան ներկայացուցիչներէն ու է) Հրաւիրուած գործող ընկերներէն:*

ՄԱՆՕԹ.— Ժողովը տեղի կ'ունենայ, երբ ներկայ են մասնակցող մարմիններու 2/3ը: Ժողովը կը հրաւիրուի Բիւրոյի միջոցով:

93.— *Ռայոնական ժողովը իրաւասու է տակաւին նոր միջոցներ ընդունել տալ իր ռայոնի գործերու համար՝ դուրս չդալով սակայն Ծրագրի եւ Ընդհ. ժողովի որոշումներու սահմաններէն:*

ՄԱՆՕԹ.— Ռայոնական ժողովը կը մշակէ ձերքին կանոնագիր մը իր կազմի եւ պարապմունքներու համար:

94.— *Ռայոնական ժողովը կը մշակէ ներքին կանոնադիր մը իր ռայոնի բոլոր մարմիններուն համար, համաձայն Ծրագրի եւ Ընդհ. ժողովի վճիռներուն:*

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

95.— *Դաշնակցութեան Խորհուրդը կը կազմուի ա) Երկու Բիւրոներու, բ) Պատասխանատու Մարմիննե-*

րու գ) Արեւելեան եւ Արեւմտեան Թայոնական ժողովներու կողմէն ընտրուած ներկայացուցիչներէ — Արեւելեանէն՝ երկու եւ Արեւմտեանէն՝ մէկ ներկայացուցիչ։

ՄԱՆՕԹ.— Երկրի այն վայրին մէջ, որուն Պատասխանատու Մարմինը լուծուած է կամ հնար չուներ պատգամաւոր ուղարկելու, ամոր կը փոխարինէ համապատասխան կեդր. կոմիտէի ներկայացուցիչը։

96.— *Դաշնակցութեան Ընդհուրդը նիստ կը գումարէ պարբերաբար տարին մէկ անգամ Մեպտեմբեր ամսուն։ Կինայ արտակարգ կերպով եւս գումարուիլ, երբ Բիւրօ մը եւ իր չրջանի Պատասխանատու Մարմիններէն մէկը համաձայնին իրարու։*

97.— *Դաշնակցութեան Ընդհուրդը անձեռնհաս կը համարուի, եթէ Պատասխանատու Մարմիններու ներկայացուցիչներու թուին 2/3ը բացակայ գտնուի ժողովէն։*

ՄԱՆՕԹ.— Նթէ իրաւասու մարմիններու 2/3 մասը անկարող ըլլայ ներկայ լինել Ընդհուրդի ժողովներուն, վերջինիս որոշումները երկրի վերաբերեալ՝ պարտաւորիչ պէտք չէ համարուին երկրի համար։

98— *Դաշնակցութեան Ընդհուրդի պարտականութիւնները են՝*

ա) *Ջննութեան ենթարկել Պատասխանատու Մարմիններու եւ Բիւրոներու գործունէութիւնը Ընդհանուր Ժողովի որոշած սահմանին մէջ։*

բ) *Ջննել եւ դատել Պատասխանատու Մարմիններու կատարած ձեռնարկները եւ արդիւնքը տեղեկագրել Ընդհանուր Ժողովին։*

գ) *Ճեղափոխական ուժերու եւ դրամի նպատակայարմար բաշխումը կարգադրել։*

դ) *Լրացնել Պատասխանատու Մարմիններու եւ Բիւրոներու կազմը։*

ե) *Դրամական միջոցներ գտնել։*

զ) *Կարգադրել արտաքին յարաբերութիւնները՝ յանուն Հ. Յ. Դաշնակցութեան՝ ուրիշ կուսակցութիւններու եւ տարրերու հետ։*

է) *Քաղաքական անակնկալ տագնապի առեն՝ իր պատասխանատուութեան տակ՝ նոր ձեռնարկ սկսիլ առանց հակասելու նախորդ Ընդհանուր Ժողովի որոշումներուն։*

99.— *Ընդհուրդը կը համարուի բարձրագոյնատեան դատական խնդիրներու մէջ։*

100.— *Դաշնակցութեան Ընդհուրդին կը յատկացուի երկու կնիք՝ հայերէն եւ ֆրանսերէն, վերջինս հետեւեալ ձեւով՝* Conseil de la Fédération Révolutionaire Arménienne։ *Այդ կնիքները կը պահուին Բիւրոներէն մէկուն քով։*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

101.— *Ընդհանուր Ժողովի յաջորդական գումարումներու ժամանակը կ'որոշուի Ընդհանուր Ժողովէն. արտակարգ պարագաներու մէջ կը հրաւիրուի Դաշնակցութեան Ընդհուրդի կողմէն։*

102.— *Ընդհանուր Ժողովին կը մասնակցին ա) Բիւրոներէ, բ) Պատասխանատու Մարմիններու, գ) Կեդրոնական Կոմիտէներու չրջանային Ժողովներու եւ դ) Կեդրոնական Կոմիտէներու ներկայացուցիչները։*

ՄԱՆՕԹ.— ա) Կեդր. Կոմիտէներու կազմը եւ գործունէութիւնը պիտի համապատասխանէ նուազագոյն պահանջներուն։

ՄԱՆՕԹ.— բ) Կեդր. Կոմիտէի չրջանը իրաւունք ունի զրկելու Ընդհանուր Ժողովին երկու պատգամաւոր, եթէ ան կը համապատասխանէ երկու կամ աւելի կեդր. կոմիտէներու ցեղին, գործօն անդամներու թուով եւ այլ ցեղզով։

103.— *Երկու Բիւրոներուն միասին իրաւունք կը տրուի Ընդհանուր Ժողովին հրաւիրելու նաեւ կեդրոնական կոմիտէներու չրջաններէն դուրս որոշ գործունէութիւն ցոյց տուող կոմիտէներ։*

104.— *Բիւրօ մը եւ իր ոլորտի մէկ Պատասխանատու Մարմինը՝ փոխադարձ համաձայնութեամբ՝ կարող են Ընդհանուր Ժողովի հրաւիրել հեռու տեղեր գտնուող այնպիսի ընկերներ, որոնք իրենց յեղափոխական գործունէութեամբ այդ մարմիններուն որոշ երաշխաւորութիւն կը ներկայացնեն՝ Ընդհանուր Ժողովի որոշումներուն պատշաճ նպաստելու։ Իսկ Ժողովի գումարման վայրը կամ անոր մօտ գտնուող այդպիսի ընկերներ անպայման Ընդհանուր Ժողովը միայն կարող է հրաւիրել։*

105.— *Նախորդ յօդուածի համաձայն հրաւիրուած ընկերները ձայնի իրաւունք կ'ունենան Ընդհանուր Ժողովին մէջ։*

106.— *Ընդհանուր Ժողովը որոշ նիստերուն խորհրդակցական ձայնով կը հրաւիրէ նաեւ յօդուած 104ին չհամապատասխանող այնպիսի ընկերներ եւ ուրիշ յեղափոխական կուսակցութիւններու պատկանող կամ չպատկանող անհատներ եւ օտարներ, որոնց մասնակցութիւնը օգտակար կը դատուի այս կամ այն խնդրի առթիւ բացուելիք վիճաբանութիւններուն։*

107.— *Դաշնակցական ուսանողութիւնը (Ռուսաստանի եւ արտասահմանի) ձայն կը ստանայ Ընդհանուր Ժողովի մէջ, եթէ ունենայ որոշեալ ցեղը։*

108.— *Երկու Բիւրոները կ'որոշեն Ժողովին գումարման վայրը, ինչպէս նաեւ անոր տեւողութեան ժամանակը եւ կ'ուղղեն հրաւիրագրերը։*

ՄԱՆՕԹ.— Նթէ նշանակուած ժամանակէն նթէ ամիս առաջ եւ ժողով չհրաւիրուի, կովկասի կեդր. կոմիտէներու 2/3ը, համաձայնութեամբ Երկրի ոեւէ Պատասխանատու Մարմնի, կը հրաւիրէ ժողով՝ ինքը որոշելով նաեւ տեղն ու ժամանակը։

109.— *Բոլոր ձայնատու մարմինները պարտաւոր են վեց ամիս առաջ զրկել երկու Բիւրոներուն այն հարցերու ցանկը, որ կը փափաքին Ժողովին ներկայացնել։ Այդ ցանկերէն օգտուելով՝ Բիւրոները կը կազմեն խնդիրներու Օրակարգը, որը չորս ամիս առաջ կը զրկուի բոլոր ձայնատու մարմիններուն, որպէսզի ատոնց պատգամաւորները Ժողովի եկած առեն, իրենց հետ բերեն իրենց ներկայացուցած մարմիններու կարծիքները։*

110.— *Պատգամաւորները իրաւունք ունին ցուցակէն դուրս նոր խնդիրներ եւս առաջարկելու Ժողովին, որոնք կը քննուին պաշտօնական օրակարգը սպառելէ յետոյ։*

111.— *Պատգամաւորները ձայն կու տան իրենց համոզմունքներու համաձայն։*

112.— *Բիւրոները յատուկ մասնախմբի մը ձեռքով պարտաւոր են կանխաւ մշակել Ընդհանուր Ժողովի պարապմունքներու նիւթերը։*

ՄԱՆՕԹ.— Մարմինները պարտաւոր են, Ընդհ. Ժողովի քացումէն առնուազն մէկ ամիս առաջ, զրկել տեղեկագիրը եւ հաշիւները չիշեալ մասնախումբին։

113.— *Բիւրոներու, Պատասխանատու Մարմիններու եւ կեդր. կոմիտէներու կողմէն եկած ամէն մէկ պատգամաւոր պարտաւոր է Ընդհ. Ժողովին ներկայացնել գրաւոր տեղեկագիր եւ գրաւոր ու իր մարմնէն վաւերացուած հաշիւներ։ Այս պահանջը չկատարող մարմիններու պատգամաւորները Ընդհ. Ժողովին մէջ կ'ունենան միմիայն խորհրդակցական ձայն։*

114.— *Ամէն մէկ պատգամաւոր պարտաւոր է իր չրջանի ոչ միայն մեծամասնութեան, այլեւ փոքրամասնութեան կարծիքները բերել Ընդհ. Ժողովին։*

115.— *Ընդհ. Ժողովը օրինաւորապէս բացուած կը համարուի, երբ ներկայ է պատգամաւորներու 2/3 մասը։*

116.— *Ընդհ. Ժողովը իր բոլոր վճիռները կու տայ ներկայ եղող բոլոր ձայներու 2/3ի մեծամասնութեամբ։*

117.— *Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ ձայնէն աւելի չի կրնար ունենալ։*

ՄԱՆՕԹ.— Երկրի պատգամաւորները՝ ի հարկին՝ կրնան ունենալ երկու ձայն։

118.— *Պատգամաւորը իրաւունք չունի՝ առանց զինք ընտրող մարմնի համաձայնութեան՝ ձայնը ուրիշին տալ։*

119.— *Գործիչ մը՝ երբ չրջանի մը ձայնը կը ստանայ՝ կը համարուի պատգամաւոր եւ կը կորսնցնէ իր գործիչի ձայնը։*

120.— *Ընդհանուր Ժողովի վճիռները վերջնական կը համարուին այն առեն միայն, երբ բոլոր առեներագրութիւնները կը ստորագրուին եւ Ժողովը փակուած կը յայտարարուի։*

121.— *Դաշնակցութեան նպատակի եւ կազմակերպութեան սիստեմի վերաբերեալ ունէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհանուր Ժողովը, եթէ կանխապէս այդ խնդիրը չէ ներկայացուած կեդրոնական Կոմիտէներուն։*

ՆՈՒԱՋԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

122.— *Կեդրոնական Կոմիտէ.— Իւրաքանչիւր կեդրոնական Կոմիտէ պարտաւոր է՝*

ա) *Ունենալ 1000 գործօն անդամ։*

բ) *Տարեկան առնուազն 20,000 Ֆր. մուտք։*

ՄԱՆՕԹ.— Երկրի մէջ կեդր. Կոմիտէներու տարեկան մուտքը նուազագոյն պահանջով 10,000 ֆրանք է։

գ) *Ամէն տարի կազմակերպութեան համար պատրաստել կամ դտնել կազմակերպող, ագիտագէտ կամ յեղափոխական գործի համար պահանջուած ուրիշ կարգի մասնագէտ ընկերներ, համաձայն իւրաքանչիւր չրջանի ներքին պայմաններուն։ Ատոնց քանակը կ'որոշէ չրջանի պատգամաւորական ժողովը։*

դ) *Իւրաքանչիւր տարի պատրաստել ամենաքիչը 50 գինուորագիր ընկերներ, որոնցմէ 10ը պատրաստ՝ երկիր մտնելու։*

123.— *Ուսանողութիւն.— Արտասահմանի եւ Ռուսաստանի գաշնակցական ուսանողութիւնը կը մասնակցի Ընդհ. Ժողովին, երբ անդամներու Թիւը պակաս չէ քան 100՝ արտասահմանի մէջ, իսկ 200՝ Ռուսաստանի մէջ։*

124.— *Այս պահանջներուն դոհացում չտուողները կը զրկուին Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունքէն։*

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

125.— *Կազմակերպութեան դրամական միջոցները կը կազմեն՝ ա) անդամավճարներ, (հաստիքի 2–10%), բ) նուէրներ, գ) հանդանակութիւն եւ դ) պատահական դումարներ։*

126.— *Իւրաքանչիւր դաշնակցական պարտաւոր է իր ամսական հաստիքի առնուազն 2%ը մտցնել տեղական դաշնակցական մարմնի դրամարկղը ամիսը մէկ անգամ։*

ՄԱՆՕԹ.— Այն դաշնակցականը, որ նթէ ամիս շարունակ չէ վճարած իր անդամավճարը, ձայնատուութեան եւ քուեարկելու իրաւունքէն կը զրկուի մինչեւ հատուցանելը։

127.— *Հանդանակութիւն ընելու իրաւունքը վերապահուած է միայն դաշնակցական մարմիններուն։*

ՄԱՆՕԹ.— Առանց մարմիններու գիտութեան եւ առանց պաշտօնական վկայագրի՝ հանգանակութիւն ընողները պիտի ենթարկուին իրենց գործարարքներ։

128.— *Բռնի միջոցներու գործածութիւնը հանդամանքեան գործի մէջ խոհ. արգիլուած է։*

ՀԱՇՈՒԱԿԱՆ

129.— *Դաշնակցութեան իւրաքանչիւր մարմին պարտաւոր է իր դրամարկղը մտած ամէն մէկ գումարի համար տալ անպորրագիր կամ առցագրիր գանձապահ ընկերոջ առորագրութեամբ վաւերացուած։*

130.— *Անհատներու տրուած գումարներու, ղէնքերու եւ իրերու համար մարմինները պարտաւոր են ստացողի առորագրութիւնն ունենալ իրենց ծախսագրին մէջ։*

131.— *Բոլոր մարմինները պարտաւոր են, իրենց հաշիւները կանոնաւոր տանելու համար, ունենալ յատուկ մատեաններ (տես «Հաշուական հրահանգները»)։*

ՄԱՆՕԹ.— Հաշուեկշիռները պիտի կազմուին այն ձեւով, որու օրինակը կը գտնուի «Հաշուական Հրահանգներու» մէջ։

132.— *Իւրաքանչիւր մարմին պարտաւոր է ամիսը մէկ անգամ ներկայացնել իր անմիջական բարձր մարմնին ա) իր դրամարկղի մուտքի եւ ելքի ամսական հաշիւը (օրահաշուի մատեանէն արտագրած) եւ բ) ամսական հաշուեկշիռը։*

ՄԱՆՕԹ.— Գատաստանատու մարմինները եւ կեդր. կոմիտէները իրենց հաշիւները կը գրկեն Բիւրոներուն վեց ամիսը մէկ անգամ։

133.— *Բոլոր մարմինները իրենց հաշիւները պիտի փակեն Դեկտեմբերի 31ին եւ տարեկան հաշիւը ներկայացնեն իրենց անմիջական բարձր մարմնին ա) Հաշուեկշիռով, բ) Օրհաշուի մատեանով, որուն մէջ յիշուած են բոլոր մուտքերն ու ծախքերը, գ) Ռազմավարքերքի մատեանով, որուն մէջ մանրամասն յիշուած են ձեռք բերուած եւ փոխադրուած դէնքերու եւ ռազմամթերքի հաշիւները, դ) Ինվենտարի (կայացուցակ) մատեանով, ուր արձանագրուած են կազմակերպական այլեւայլ զոյքերը իրենց արժէքով։*

ՄԱՆՕԹ.— Գանձապահները հաշիւ տուած ատեն պէտք է ներկայացնեն փաստաթուղթերու հետ միասին՝ նաեւ կանխիկ դրամը կամ համարժէք վաւերագիրը։

134.— *Արեւմտեան Բիւրոն պարտաւոր է պահել Մայր տոմար, ուր պիտի արձանագրուին Բիւրոներու, Գատաստանատու Մարմիններու եւ կեդր. կոմիտէներու եկեւմուտքը՝ համաձայն այդ մարմիններէն պարբերարար ստանալիք հաշիւներուն։*

135.— *Արեւելեան Բիւրոն եւս պարտաւոր է մատենաւոր տոմար մը ունենալ՝ չրջանի մարմիններու ելեւմուտքը արձանագրելու եւ անոր համաձայն Ընդհանուր Ժողովէ ընդունուած նախահաշուով՝ բաշխումի գործը կատարելու համար։*

136.— *Այն մարմինները, որոնք քաղաքական դժուարութիւններու պատճառով վտանգաւոր կը համարեն հաշիւները երկար ժամանակ իրենց քովը պահել, պարտաւոր են պաղտնի քանաքով եւ ծածկագրով տարեկան երկու անգամ իրենց հաշիւները ղրկել Արեւմտեան Բիւրոյին, որ կ'արձանագրէ այդ հաշիւները Մայր տոմարին մէջ։*

137.— *Բիւրոները պարտաւոր են ունենալ հաշուապահ՝ իրենց մէջէն կամ հրաւիրուած դրսէն՝ եւ խստութեամբ պահանջել բոլոր մարմիններու հաշիւները որոշուած ժամանակամիջոցներուն։*

138.— *Արգիլուած է կազմակերպութեան դրամը, իբր փոխատուութիւն կամ որեւէ չհամապատասխանող ձեռնարկի համար, մասնաւոր անձերու տալ։*

139.— *Բիւրոները պարտաւոր են պատրաստել տալ եւ բոլոր մարմիններուն գրուելիք անդորրագրերու, առցագրերու եւ ծախսագրերու տետրակներ եւ հաշուեկշռի բլանկներ։ Ամէն տետակի դրամական գանձում եւ ծախսեր պիտի կատարուին այդ փաստաթուղթերով։*

140.— *Բիւրոները եւ Գատաստանատու Մարմինները իրար փոխադարձ կոնտրոլի ենթարկելու իրաւունք ունին։*

ՄԱՆՕԹ.— Հաշուական գործի մէջ բոլոր մարմինները պէտք է զեկավարուին այն հրահանգներու համաձայն, որ կը հրատարակեն Բիւրոնները, համաձայն Ընդհ. Ժողովի որոշման։

141.— *Դրամական փոխատուութիւն ընելու իրաւունքը կը պատկանի Կեդր. Կոմիտէներուն, Գատաստանատու Մարմիններուն եւ Բիւրոններուն։ Կոմիտէները եւ ենթակամիւռները փոխատուութիւն ընելու իրաւունք չունին ստանց Կեդր. Կոմիտէի համաձայնութեան։*

142.— *Որեւէ փոխատուութիւն կը կատարուի մարմնի անդամներու պատասխանատուութեամբ, բայց երբեք կուսակերպութեան անունով կամ կնիքով։*

143.— *Կուսակցութեան ընդհանուր եկամուտներու հինգ տոկոսը պահեստի կը մնայ Բիւրոններու դրամարկղին մէջ յեղափոխական ֆոնդ կազմելու համար։ Այդ դումարի գործադրութեան իրաւունքը կը պատկանի Ընդհանուր Ժողովին։*

ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

144.— *Դաշնակցական ամէն գործիչ պարտաւոր է իր սեփական աշխատանքով ապրիլ ամէն անգամ ա) երբ մասնաւոր պրպտումները չի վնասեր իր ստանձնած գործը յաջողութեամբ կատարելուն. բ) երբ իր ստանձնած գործը կատարելէն կամ իր չրջանէն հեռանալէն առք, անմիջապէս նոր գործի մը չի կոչուիր։*

145.— *Նախորդ յօդուածին բ. պարբերութեան մէջ նախատեսուած պարագային՝ դաշնակցական մարմիններն ու ընկերները պարտաւոր են ընկերոջ համար աշխատանք գտնել եւ Դաշնակցութեան հաշուով անոր ծախքերը հոգալ առ առաւելն 2 ամիս։*

ՄԱՆՕԹ.— Այս յօդուածի տրամադրած երկամեայ օժանդակութիւնը պէտք է հաշուել ընկերոջ մը իր գործէն կամ շրջանէն հեռանալու օրէն սկսած եւ ոչ թէ ամէն մէկ կոմիտէի շրջանը մտնելու օրէն։

146.— *Գործի մէջ գտնուող ընկերներու ընտանիքներուն նպաստ չի տրուիր կազմակերպութեան միջոցներէն։*

ՄԱՆՕԹ.— ա) Դայրայեղ պարագային՝ այդպիսի ընտանիքներուն նպաստ կարող է տրուիլ կարմիր խաչի միջոցներէն։

բ) կարմիր խաչի ձերբին կանոնագիրը կը մշակուի Ռայոնական ժողովներու մէջ։

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

147.— *Կազմակերպութիւնը իր յեղափոխական ձեռնարկներու համար դաշնակցական չրջաբերէն կը կազմէ մարտական խումբեր։*

148.— *Ամէն մէկ խումբ բաղկացած պիտի ըլլայ 10 մարտիկներէ։*

149.— *Իւրաքանչիւր մարտիկ պարտաւորութիւն է ծանօթ ըլլալ Դաշնակցութեան ծրագրին ու պատրաստ՝ ծառայելու անոր իրականացման։*

150.— *Մարտիկ խումբերը կ'ենթարկուին տեղական մարմնին ու Բիւրոններու կողմէ հրատարակուած հրահանգներուն։*

151.— *Իւրաքանչիւր մարտիկ պարտաւոր է ապրիլ սեփական աչխատանքով, ունենալ սեփական զէնք եւ ի հարկին մտնել, երբեւ կռուող, յեղափոխական ձեռնարկներու մէջ։*

ՄԱՆՕԹ.— Ակտիւ գործի մէջ եղած ատեն՝ մարտիկը իր ապրուստը կը ստանայ կազմակերպութենէն։

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

152.— *Միութիւնները կ'ըլլան՝*

ա) արհեստակցական,

բ) գիւղացիական։

153.— *Արհեստակցական միութիւններու նպատակն է՝ համախմբել գործարանական եւ արհեստաւորական աչխատաւորները ըստ արդմունքի եւ պաշտպանել անոնց չահերը։*

154.— *Գիւղացիական միութիւններու նպատակն է՝ գործակցական ձեռնարկներու միջոցով՝ պաչտպանել դիւղացիներու համայնական չահերը, ինչպէս նաեւ ապահովել անոնց վարչատնտեսական, կալուածատիրական եւ այլ տեսակի հարստահարութիւններէ։*

ՄԱՆՕԹ.— Արհեստակցական եւ գիւղացիական միութիւնները կից կամ անոնցմէ անկախ կրնան կազմակերպուիլ նաեւ կանպեռատիւ միութիւններ։

ՏԵՌՈՐ

155.— *Տեռորները երկու տեսակի կրնան ըլլալ· ա) Բաղաքական եւ բ) կազմակերպական։*

156.— *Միմիայն Կեդրոնական Կոմիտէները եւ Գատաստանատու Մարմինները կրնան տեռորի վճիռ արձակել։ Վճիռները պէտք է ըլլան միաձայն։*

157.— *Կազմակերպական ծանր դէպքերու (զէնքի եւ դրամի իւրացման) եւ ոճիրներու (դաւաճանութեան, մատնութեան, ընկերասպանութեան) համար տեռորական պատժի կիրառութիւնը կարելի է միայն այն առեն, երբ առցագիր ուրիշ մարմնի մը համաձայնութիւնը (կեդր. Կոմիտէի համար՝ Գատաստանատու Մարմնի կամ Բիւրոյի համաձայնութիւնը, իսկ Գատաստանատու Մարմնի համար՝ Բիւրոյինը)։*

ՄԱՆՕԹ.— Երկրի մէջ կեդր. կոմիտէն կը ստանայ Գատաստանատու Մարմնի համաձայնութիւնը, իսկ վերջինիս չեղած պահուն՝ հարեւան կեդր. կոմիտէի հաւանութիւնը։ Գատաստանատու Մարմինը Բիւրոյին չի գիմեր։

ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

158.— *Դաշնակցական մամուլը պարտաւոր է նչդութեամբ հետեւիլ կազմակերպութեան Ծրագրին եւ տալ այն գաղափարները, որոնք կը կազմեն Ծրագրին հիմնակէտը։*

159.— *Դաշնակցութեան կեդրոնական պաչտօնական օրգանը — «Դրօչակը» կը դեկտեմբերի Ընդհ. Ժողովէն տրուած հրահանգներով։*

160.— *Ռայոնական ժողովները իրաւունք ունին իրենց չրջաններուն մէջ հիմնել ռայոնական պաչտօնական օրգաններ, տալով անոնց յատուկ հրահանգներ եւ եթէ հարկ ըլլայ՝ նիթական նպաստ, առանց դուրս դալու Ընդհ. Ժողովի որոշած նախահաչուէն։*

161.— *Կեդր. Կոմիտէները կրնան հրատարակել դաչնակցական տեղական թերթեր, բայց առանց որեւէ պաչտօնական կամ կիսապաչտօնական բնոյթի։*

162.— *Դաչնակցութեան Խորհուրդը եւ Ռայոնական Ժողովները կրնան յայտարարել ոչ–դաչնակցական՝ կուսակցական այն թերթերը (առաջինը՝ ընդհանուր, իսկ երկրորդը՝ ռայոնական թերթերու վերաբերմամբ), որոնք կը չեղուին կուսակցութեան Ծրագրին եւ անոր հիմնական տեսակէտներէն։*

ՄԱՆՕԹ.— Թռուցիկ թերթերու եւ գրաւոր պրոպագանդի այլ ձեւերու վերաբերութեամբ Բիւրոները կու տան յատուկ հրահանգներ։

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

163.— *Երբ դաչնակցական ոեւէ մարմնի մէկ անդամը կամ փոքրամասնութիւնը չի համակերպիր մեծամասնութեան վճռին, պարտի կա՛մ չեզոքանալ տեղա–*

կան գործելէն եւ կամ գործունէութեան ուրիշ վայր ընտրել:

164.— Դաշնակցական ոեւէ ուրիշ մարմին այս կարգի չհամակերպող անհատի կամ փոքրամասնութեան հետ յարաբերութեան մէջ կը մտնէ տեղական մարմնի համաձայնութեամբ միայն:

165.— Մարմնի ոեւէ անդամ կրնայ բացակայիլ իր գործունէութեան վայրէն երկար ժամանակով միմիայն ընկերներու մեծամասնութեան հաւանութեամբ:

166.— Մարմին մը իրաւունք չունի որեւէ ձեռնարկ թնել ուրիշ մարմնի շրջանի մէջ առանց վերջինիս պիտութեան եւ հաւանութեան:

167.— Շրջանի մը բարձր մարմինը կրնայ լուծուած յայտարարել իր շրջանի ստորադրեալ ոեւէ մարմին, եթէ անոր անդամներու մեծամասնութիւնը կը պակսի հրաժարման կամ որեւէ այլ պատճառով:

ԴԱՏԱԿԱՆ

168.— Ամէն մէկ պաշնակցական մարմին կարող է կարգապահական պատիժներ տնօրինել իր անդամի նկատմամբ:

169.— Պատժական բնոյթ ունեցող ամէն վճիռ կը տրուի ձայներու 2/3ի մեծամասնութեամբ:

170.— Մանր յանցանքի եւ զեղծումի պարագային՝ ամէն մարմին իր մէջէն ի՛արտաքս յանցաւոր կամ զեղծարար անդամը՝ զգուշութեան համար՝ իսկոյն տեղեկացնելով իր անմիջական բարձր մարմնին:

171.— Արտաքսման ամէն դատավճիռ, որ պէտք է հաստատուի կեդր. Կոմիտէի կողմէն, ժամանակաւոր է մինչեւ Յայոնական Ժողովին վերահաստատութիւնը:

ՆԱՆՕԹ.— Երկրի մէջ վերահաստատելու իրաւունքը թողուած է Պատասխանատու Մարմնին:

172.— Հայոնական Ժողովը պարտաւոր է հրաւիրել մեղադրեալը, մինչեց տալու համար անոր՝ ինքզինք պաշտպանելու:

173.— Հայոնական Ժողովէն, իսկ երկրի մէջ՝ Պատասխանատու Մարմնէն վաւերացուելէ ետքը միայն արձակուած վճիռը վերջնական կը նկատուի եւ դատապարտեալին Դաշնակցութենէն ի սպառ արտաքսումը կը յայտարարուի «Դրօշակ»ի մէջ:

174.— Բիւրոները իրաւունք ունին դադարած յայտարարել ոեւէ կեդր. Կոմիտէ, զեղծումներ կատարած լլլալուն համար, անոր վերջնական կազմալուծումը վերապահելով Հայոնական Ժողովին:

175.— Շրջանի մը մէջ կազմակերպական տեսակէտով կազմալուծած կամ արտաքսուած ընկերոջ մասին պէտք է անմիջապէս նախազգուշացնել շրջակայ Մարմիններն եւ Բիւրոները:

176.— Ոեւէ կեդր. Կոմիտէի շրջանէն հեռացուած անդամը չի կրնար ուրիշ կեդր. Կոմիտէի շրջանի մէջ ընդունուիլ, մինչեւ որ Բիւրոյի կամ Պատասխանատու Մարմնի կողմէն հարցը պարզուի:

ՆԱՆՕԹ.— Արտաքսուած ընկերը — եթէ ուղղութեան գայ — կարելի է վերքննդունել միմիայն արտաքսող մարմնի հաւանութեամբ:

177.— Դաշնակցականի մը եւ ուրիշ յեղափոխական կազմակերպութեան կամ խմբակցութիւններու պատկանող անհատներու միջեւ կուսակցական հոդի վրայ ծագած վէճերու եւ ընդհարումներու խնդիրները կը յանձնուին միջնորդ կամ միջկուսակցական առեանի մը:



ԶՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՅԱՋՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ, ՕՐԱԿԱՐԳԵՐԸ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՆԻՍՏԻ ԹԻՒ	ԷՋ	ՔՆՆՈՒԱԾ ՕՐԱԿԱՐԳ ԿԱՄ ՇՕՇԱՓՈՒԱԾ ՆԻՒԹ
1	11	Անուիներ — բացում — ժամանակաւոր դիւաց — ժողովական ներքին կանոնագրութիւն.
2	12	Սափոյի մասնակցութեան հարց — պատգամաւորներու իրաւասութեան խնդիր.
3	13	Շնորհաւորական գիր՝ Աւստրիոյ Ընկերվարական կուսակցութեան — հրաւիրելի ընկերներ.
4	13	Հրաւիրելի ընկերներու հարց — Ծովափի եւ Ոսկեհաւիի ներկայացուցչութեան խնդիր.
5	13	Նախագահներու եւ քարտուղարներու ընտրութիւն — Օրակարգի քննութիւն — Սափոյի եւ Ցուցականի տեղեկագրի հարց.
6	15	Առաջարկներ օրակարգի կէտերու յաջորդականութեան մասին.
7	16	Դատական յանձնախումբի հարց — Օրակարգի կէտեր — դուրսի ընկերներուն հետ կապի հարց.
8	17	Տեղեկագիր Լեռնապարի (Իշխան) — հարցապնդում.
9	19	Եգիպտոսի ներկայացուցիչի հարց — շար. Լեռնապարի տեղեկագրի քննարկման.
10	21	Նոյն.
10(բ.)	26	Տեղեկագիր Մուշ-Սասունի (Սեպուհ).
11	29	Շար. տեղեկագրի եւ քննարկում.
12	29	Նոյն.
13	30	Պալճանի Զինուորական Դպրոց — շար. Մուշ-Սասունի տեղեկագրի քննարկման.
14	32	Սափոյի հարց — խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ — հաշուական յանձնախումբ.
15	33	Տեղեկագիր Արեւմտեան Բիւրոյի (Ակնունի) — Աւստրիացի Ընկերվարականներու պատասխանը.
16	36	Քննարկում Արեւմտ. Բիւրոյի տեղեկագրի.
17	38	Տաճատի հարց — շար. Բիւրոյի տեղեկագրի քննարկման.
18	41	Նոյն.
19	47	Սափոյի հարց — շար. Բիւրոյի տեղեկագրի քննարկման.
20	51	Տեղեկագիր Պալճանի (Զարդարեան) — հարցապնդում.
21	54	Տեղեկագիր Ամերիկայի (Չելալեան) — հարցապնդում.
22	57	Նոյն.
23	60	Պալճանի Զինուորական Դպրոցի հարց.
24	62	Սեպուհի հարց — ժողովական կարգը — քննարկում Ամերիկայի տեղեկագրի — քարտուղարներու հարց — Ց. Նուսուփեան — Սեպուհի հարց.
25	68	Ամերիկա-Վասպուրական հարց — Ցուցականի տեղեկագիր (Սափօ).
26	68	Քննարկում Ցուցականի տեղեկագրի.

27	70	Նոյն. — ընտրութիւն ցուցականի գործի ճնշիչ յանձնախումբի — Տեղեկագիր Վասպուրականի (Արամ).
28	72	Ժողովական կարգ — Վասպուրականի տեղեկագրի ճնշարկում.
29	75	Նոյն.
30	77	Ժողովական կարգ.
31	77	Տեղեկագիր Թիֆլիսի (Թոփչեան) — ճնշարկում.
32	82	Նոյն. — Տեղեկագիր Ռուսաստանի եւ Եւրոպայի Ուսանող. Միութեանց — ճնշարկում.
33	86	Նոյն.
34	91	Տեղեկագիր Ապառաժի (Բարսեղեան) — ճնշարկում.
35	94	Ժողովական կարգ — Տեղեկագիր Արեւելեան Բիւրոյի (Ռոստոմ) — ընդարկում.
36	96	Տեղեկագիր Գանձակի (Մաշուրեան) — ճնշարկում.
37	97	Տեղեկագիր Ժլատի (Տիկ. Ցուշիկ) — ճնշարկում — Տեղեկագիր Ոսկեճապատի (Զոփուրեան).
38	97	Ոսկեճապատի տեղեկագրի ճնշարկում — Տեղեկագիր Ղարի (Աւ. Խահակեան) — Տեղեկագիր Երեւանի (բժ. Զաւրեան) — ճնշարկում.
39	100	Օրակարգի կէտեր եւ ժողովական կարգ — Զարդարեանի 2րդ ձայնը.
40	101	Զեկուցում Վռամեանի՝ *«Ինքնապաշտպանութիւնը երկրի մէջ»* — ճնշարկում.
41	104	Ճնշարկման շարունակութիւն — Բանաձեւեր — հեռագիր՝ Ղրիստափորի այրիին.
42	109	Զեկուցում Ռոստոմի՝ *«Ազատամարտական ձեռնարկներ»* — ճնշարկում.
43	113	Ճնշարկման շարունակութիւն — Զեկուցում Թոփչեանի՝ նոյն նիւթով — ճնշարկում.
44	116	Շար. *«Ազատամարտական ձեռնարկներ»* հարցի ճնշարման — զեկուցում Մինասեանի — ճնշարկում.
45	118	Ժողովական կարգ — Զեկուցում Վռամեանի — ճնշարկում.
46	120	Ազատամարտական ձեռնարկներու մասին բանաձեւեր.
47	123	Սերբաստիոյ կազմակերպութիւն — *«Թուրքիկ խումբեր»*, զեկուցում Անդրանիկի — բանաձեւեր.
48	125	Ժողովական կարգ.
49	125	Զեկուցում Մալումեանի՝ *«Տեսուչի մասին»* — ճնշարկում.
50	131	Զեկուցում Արամի՝ *«Ուսումնասիրողներ, գործակալներ եւ դրսից եկող մարտուրական ուժեր»* — ճնշարկում — բանաձեւեր — Զեկուցում Մինասեանի՝ *«Ցուցական գործունէութիւն»*.
51–52	134	Ճնշարկում ցուցական գործունէութեան մասին զեկուցման.
53	138	Բանաձեւեր — շար. ապստամբական ձեռնարկներու հարցի ճնշարկման.
54	140	Ճուէարկում բանաձեւերու, — *ա*) ապստամբական ձեռնարկներ *բ*) տեռոր.
55	140	Ճուէարկում բանաձեւերու, *գ*) ցուցական գործունէութիւն — Զեկուցում Բարսեղեանի՝ *«Դաշնակցութեան դիրքը Ռուսաստանի յեղափոխական շարժման մէջ»*.
56	141	Զեկուցում Ռոստոմի՝ Արեւելեան Բիւրոյի գործունէութեան մասին — ընտրութիւն Միհրանական հարցի ճնշիչ յանձնախումբի.
57	142	Սարհատի հարց — Զեկուցում Վարդանի՝ *«Ձինական-ինքնապաշտպանական դործը Կովկասում»* — ճնշարկում.
58	145	Զեկուցում Մալումեանի (Ակնունի)՝ *«Նախագիծի հրատարակութեան մէջ Խորհուրդի իրաւասութեան հարցը»* — ճնշարկում.
59	149	Զեկուցում Վարդանի՝ Լեռնավայրի մասին — ընթերցում տեղեկագրի — հարցապնդում — շար. Խորհուրդի իրաւասութեան հարցի ճնշարկման.
60	155	Նոյն.
61	159	Զեկուցում Շահխաթունիի՝ *«Կովկասեան գործունէութեան մասին»* — Տեղեկագիր Գոլոյ (Զաւարեան) — ճնշարկում — բանաձեւ.
62	161	Բանաձեւ Նախագիծի մասին — Զեկուցում Թոփչեանի՝ *«Դաշնակցութիւնը Կովկասում կամ Նախագիծը ըստ էութեան»* — ճնշարկում.
63	164	Նոյն.
64	169	Սալմանի ճամակը — առաջարկ՝ Մուրատի եւ Վահագնի — շար. կովկասեան գործունէութեան ճնշարկման.
65	172	Նոյն.
66	173	Շրջաններու կարծիքները՝ ապագայ գործունէութեան մասին — շար. կովկասեան գործունէութեան եւ ընկերվարութեան մասին վիճաբանութիւնները.
67	177	Նոյն — բանաձեւեր.
68	180	Զեկուցում Շահխաթունեանի եւ Արշ. Խահակեանի (Զամալեան)՝ *«Բաժանման հարցը»* — ճնշարկում.
69	184	Նոյն.
70–71	187	Նոյն, բանաձեւեր — յաւելեալ ճնշարկում — վերջնական բանաձեւ — Տեղեկագիր Ոսկեհաճի (Զարդարեան) — ճնշարկում — Վարդանի բանաձեւը՝ *«Կովկասի ինքնապաշտպանութեան»* մասին.
72	192	Արեւելեան Բիւրոյի հաշիւը — յանձնաժողովներու ընտրութիւն — կովկասեան թերթերու հարցը.
73	195	Զեկուցում Լորիսի տեղեկագրի մասին — Զեկուցում Արամի՝ *«Աշխատութեան մասին»* — ճնշարկում.
74	198	Ցուցականի ճնշիչ յանձնախումբի զեկուցումը — ճնշարկում.
75	200	Նոյն.
76	201	Դիմում Միջազգ. Սոցիալիստ. Բիւրոյին — ժողովական կարգ.
77	201	Ճնշարկում արշաւախումբերու հարցի — բանաձեւեր — կովկասահայերու ինքնապաշտպանութիւն— դիմում Լա Հէյի ժողովին.
78	205	Նոյն — բանաձեւ — բռնի հանգանակութեան հարց.
79	213	*«Միջկուսակցական ատեան»*, զեկուցում Վռամեանի — ճնշարկում — Զինապայթուցիկ դպրոցի հարց — Տաճկահայէի ինքնապաշտպանութիւն — բանաձեւեր.
80	215	Բանաձեւերու ֆուէյլկութիւն — կովկասեան գեղծումներու հարց.
81	218	Հրատարակութիւններու հարց.
82	221	Նոյն.
83	225	Նոյն — բանաւոր եւ գրաւոր պրոպագանդ.
84	231	Հաշուական սիստեմի հարց — բանաձեւեր հրատարակութիւններու մասին — Միհրանական խնդիր.
85	234	Զեկուցում Միհասեանի՝ *«Ճեղափոխ. ուրիշ կուսակցութիւններու հետ համերաշխութեամբ գործելու հարցը»* — ճնշարկում.
86	240	Կովկասեան գեղծարարներու մասին — բանաձեւ Միհրանականներու մասին — ճնշիչ յանձնախումբի եզրակացութիւնները.
87Է 92	244	Կազմակերպական կանոններ.
93–95–97–98	244	Ծրագրային հարցեր.
94	244	Ցուցականի հակա-զեկուցումը.
96	245	Զիփոնի հաշիւը (Գագիկ) — հարցապնդում.
99	247	Բանաձեւ *«Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու հետ համերաշխութեան»* մասին — ճնշարկում — զեկուցում Նախահաշուի.
100	248	Նոյն — ճնշարկում.
101	250	Բանաձեւեր բռնի հանգանակութեան եւ համերաշխութեան մասին — ֆուէարկութիւն — ծրագրային հարցեր.
102	251	Ծրագրային հարցեր.
103	253	Գալբանի հարց — զանազան մանր հարցեր եւ որոշումներ.
104	255	Ժլատ-Նալբանդի հարց — Էրզրումի շրջան — Արամի եւ Իշխանի առաջարկը՝ Մեծաւորի եւ Աւարայրի մասին.

105 256 Ստացուած գրութիւններ, բողոքներ, մաքր հարցեր — համերաշխութեան հարց՝ հնչակեաններուն հետ — բանաձեւեր.

106 259 Օժանդակութիւն Քրիստափորի ընտանիքին — Դաշնակցութիւնը եւ Գարնակական յեղափոխութիւնը — բանաձեւ.

107 260 Տերսիմի շրջան — բանաձեւ — բռնի հանգանակութեան մասին վերջնական բանաձեւ — Զրաքերդի հարց.

108 262 Ցուցականի գործի քննութիւն.

109 268 Վարդոյի գործը — բանաձեւեր Ռուսաստանի յեղափոխ. կուսակցութեանց հետ գործակցութեան մասին.

110 269 Բանաձեւ Վարդոյի մասին — կազմակերպական կանոններ — Ծրագրային հարցեր.

111 273 Ծրագրային հարցեր.

112 274 Փոքորիկի հաչիւ եւ ճախճաչիւ — օգնութիւն՝ Մուշ-Սասունի.

113 277 Մարմիններու համար թեկնածուներու ճշդում.

114 278 Ցուցականի գործի քննութիւն — բանաձեւեր — Երկրի Գատաստանատու Մարմին.

115 281 Զեկուցում Զաւարեանի՝ կիլիկիոյ մասին — բանաձեւ.

116 283 Զանազան բանաձեւեր — յաջորդ Ընդ. ժողովի թուականը.

117–118 284 Զանազան հարցեր — ընտրութիւն իննի ցանցնաժողովի — Ատրպատականի ներկայացուցչի կարծիքը՝ Արամի եւ Իշխանի առաջարկի մասին.

119–120 285 Անդրանիկի եւ Մուրատի առաջարկը Սասնոյ որբերուն մասին — ընտրութիւն՝ ա) Երկրի Գատ. Մարմնի բ) Արեւելեան Բիւրոյի գ) Արեւմտեան Բիւրոյի դ) Ցուցա-տեղեկական մարմնի.

121 287 Սարհատի հարց — Ծրագրային հարցեր — վերաքննութիւն եւ հաստատում բանաձեւ-որոշումներու — կոչի հարց — Փակում.

294 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԻ ՑԱՆՑՆԱԺՈՂՈՎԻ

295 Հայ-թրքական ընդհարումներ.
Գործակցութիւն սոցիալիստ կուսակցութիւնների հետ.
Գործակցութիւն վրացիների հետ.

296 Դժգոհութիւններ եւ բողոքներ.
Գաղութներ
Որոշումը Ցուցական Մարմնի մասին.

298 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԳՐՔՈՑԿԸ

299 Չորրորդ Ընդհանուր ժողովը (ընդհանուր ակնարկ)

301 Ընդհանուր ժողովի կազմը.
Անջատման խնդիրը (առանց պատճառաբանութեան)

302 Նոյն (պատճառաբանութեամբ)

ՏԱԿՏԻՒԱՑԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ
— Ապստամբական ձեռնարկներ.
— Տեռոր.
— Ինքնապաշտպանութեան գործը Թուրքիոյ մէջ.

303 — Արշաւախումբեր.
— Կովկասի ինքնապաշտպանութիւն.
— Ցուցական գործունէութիւն.

304 — Կազմակերպութիւններ.
— Ձինա-պայքուցիկ.

ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
— Համերաշխութիւն Թուրքիոյ այլատարր ցեղերու հետ.

305 — Հայ-թրքական ընդհարումներ.
— Դործակցութիւն վրացիների հետ.

306 — Սոցիալիստական կուսակցութիւնների հետ գործակցութիւն.
— Միջկուսակցական ատեան.
— Հնչակեան կեդրոնի դիմումը.

307 ԳՐՈՊԱԳԱՆԴ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
— «Փրօշակ» եւ կից հրատարակութիւններ.

308 — Կովկասեան հրատարակութիւններ.
— Օրգաններ եւրոպական լեզուներով.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
— Բռնի հանգանակութիւն.
— «Նախագիծ»ը եւ Խորհուրդի իրաւասութիւնը.

309 — Երկրի ուսումնասիրութիւնը.
— Միջպզպային Սոցիալիստական Բիւրօ.
— Առաջիկայ Ընդհանուր ժողովը.
— Գաղութներ.
— Գարսկաստանի շրջանում.

310 ԿԱՐԳԱԳԱՒԱԿԱՆ
— Դժգոհութիւններ ու բողոքներ.
— Որոշում Ցուցական Մարմնի մասին.

311 — Վարդոյի խնդիրը.
— «Ժամանակաւոր Քինուորական Խորհուրդ».

312 — Զեղծարարներ.
Բարոյական ազակցութիւն Ֆ. Միխայէլեանի յիշատակին.
Նախտհաշիւ

313 Հաշուական խնդիրներ.
Ընտրութիւններ.
Զանազան որոշումներ.
Վճիռներ այլեւայլ դիմումների առիթով.

ՁՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ, ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՒԻՐԵԱԼՆԵՐԸ

ԱՀԱՐՈՆԵԱՆ ԱՒԵՏԻՍ (ՂԱՐԻԲ)·— Պատգամաւոր Ջրաթերզի (Կարս)

11ա, 14ա, 33ա–բ, 37ա, 40բ, 41ա, 45ա, 166ա, 238ա, 283ա, 240ա, 241բ, 244բ, 247բ, 251ա, 255ա, 260բ, 262բ, 268 բ, 269բ, 270բ, 273ա, 274ա, 277բ, 281ա, 285ա, 288ա, 290բ·

ԱՆԴՐԱՆԻԿ·— Պատգամաւոր Դաւրաճ–Բարձրաւանգակի (Մուշ–Սասուն)

11ա, 15բ, 16ա–բ, 17ա, 18բ, 20ա–բ, 23բ, 24ա–բ, 31բ, 32ա–բ, 33ա–բ, 34բ, 38ա–բ, 39ա–բ, 41բ, 43բ, 46բ, 47ա, 48ա, 49ա, 51ա, 54ա, 59ա, 60ա–բ, 62բ, 63ա, 64բ, 67ա, 68բ, 69բ, 70ա–բ, 71բ, 73բ, 83բ, 86ա, 91ա, 92ա–բ, 93ա–բ, 94բ, 97բ, 99բ, 101ա, 102ա, 104ա, 107բ, 111բ, 113ա–բ, 115ա, 117ա–բ, 118ա, 119ա, 120բ, 121ա–բ, 122ա, 123բ, 124բ, 125բ, 127բ, 134ա, 138ա, 140ա–բ, 141բ, 142ա, 145բ, 147ա–բ, 149բ, 154բ, 155բ, 156ա, 159ա, 161ա, 164ա, 169ա, 172ա, 173ա, 177բ, 180բ, 184ա, 187բ, 192ա, 198բ, 200բ, 201ա, 205բ, 213ա, 215բ, 218բ, 221ա, 225ա, 231ա, 234բ, 240բ, 243ա, 244բ, 245ա, 247ա, 253բ, 255ա, 259բ, 260բ, 262բ, 268բ, 273ա, 277ա–բ, 278ա, 279ա–բ, 280ա–բ, 281ա–բ, 284բ, 285բ, 286ա, 287ա–բ·

ԱՐԱՄ (ՄԱՆՈՒԿԵԱՆ)·— Պատգամաւոր Շամի (վաճառական)

11ա, 56ա–բ, 57ա, 61բ, 64բ, 68ա–բ, 69բ, 72ա–բ, 73բ, 74ա–բ, 75ա–բ, 76ա, 77ա–բ, 93ա, 94ա, 102բ, 104բ, 105բ, 108ա–բ, 110ա, 117բ, 118բ, 119ա, 120բ, 126բ, 131բ, 132ա, 133ա–բ, 138ա, 139ա–բ, 140ա, 142ա, 143ա, 160բ, 163բ, 164բ, 178բ, 183բ, 187բ, 192ա–բ, 195ա, 197ա, 198ա–բ, 199ա, 200բ, 201ա, 203ա–բ, 204ա, 205ա, 210բ, 214բ, 218ա–բ, 225ա, 231ա, 232ա, 233բ, 234ա, 239ա, 240բ, 241ա, 243բ, 245ա, 247ա–բ, 249բ, 251ա, 255բ, 257ա, 260ա, 265բ, 277ա–բ, 278բ, 280բ, 283բ, 284բ, 285ա–բ, 289բ·

ԲԱՐՍԵՂԵԱՆ·— Պատգամաւոր Ապահածի (Ղարաղազ)

11ա, 16ա–բ, 22ա, 23ա, 31բ, 42ա, 43ա, 49ա, 54ա, 56ա, 58ա–բ, 67բ, 78բ, 85բ, 91ա, 93ա–բ, 94ա, 99բ, 101ա, 104ա–բ, 138ա, 141բ, 143բ, 157բ, 192բ, 198բ, 245բ, 265բ, 269ա, 277բ, 283բ, 285ա·

ԳՐՈՒԶԻՆԵԱՆ (ՎՐԱՑԵԱՆ) ՍԻՄՈՆ (ՍԻԳ)·— Պատգամաւոր Նալբանդի (Նոր Նախիջեւան)

11ա, 140բ, 141բ, 142բ, 147ա, 157բ, 159բ, 167բ, 189բ, 190ա, 196բ, 206բ, 255ա, 266բ·

ՋԱՐԴԱՐԵԱՆ ՌՈՒԲԻԿ·— Պատգամաւոր Զալֆայի եւ Ներկայացուցիչ Ռակեւանցի (Իզմիր)

11ա–բ, 13բ, 14ա–բ, 15ա, 17ա, 19բ, 20ա, 22ա, 25ա, 30բ, 36բ, 37բ, 39բ, 41ա, 42ա, 44բ, 47բ, 51ա, 52ա–բ, 53ա–բ, 54ա, 60ա–բ, 62բ, 69ա–բ, 70բ, 72ա, 76ա, 77ա, 78ա–բ, 81ա, 83բ, 85բ, 93բ, 96բ, 98ա–բ, 99բ, 100բ, 101բ, 102բ, 111ա–բ, 113ա–բ, 116ա, 117ա, 118բ, 121բ, 128բ, 131ա, 134ա, 138բ, 140ա–բ, 142ա, 146բ, 147ա, 149ա, 151բ, 152բ, 159ա–բ, 161ա, 176ա, 185ա, 190ա, 191ա–բ, 192բ, 194ա–բ, 195ա, 197ա, 198ա, 200բ, 201ա, 205ա, 209բ, 211ա, 213բ, 214ա–բ, 216ա, 220ա, 222ա, 231բ, 233բ, 240ա, 245ա, 247ա–բ, 248բ, 253բ, 255ա–բ, 257ա, 258ա–բ, 259ա, 269ա, 277բ, 287բ·

ՋԱՒԱՐԵԱՆ ՍԻՄՈՆ (ԱՆՑՈՆ, ՍՄԲԱՏ ՕՀԱՆԵԱՆ)·— Ներկայացուցիչ Լեռնավայրի (Կիլիկիա) Պատասխանատու Մարմնի

11ա, 14ա, 38ա, 40ա, 150ա–բ, 151բ, 198բ, 201ա, 202ա–բ, 204ա, 208բ, 209ա–բ, 210ա, 211ա–բ, 212ա, 213բ, 214բ, 215բ, 218բ, 221բ, 223բ, 225ա, 228բ, 229ա–բ, 230ա–բ, 231ա–բ, 232ա, 233բ, 242ա–բ, 244բ, 248բ, 249բ, 250ա, 251ա–բ, 252ա, 253ա, 255ա, 258ա–բ, 259բ, 260ա, 261ա–բ, 262բ, 269ա, 271բ, 273բ, 274ա, 277բ, 278բ, 279բ, 280ա–բ, 282ա–բ, 283ա–բ, 284բ, 285ա, 286ա–բ, 288ա, 289բ, 290ա, 291բ·

ՋԱՒՐԵԱՆ Ե· ՓՓԻՇԿ·— Պատգամաւոր Մրզաւանաձի (Երեւան)

11ա, 14բ, 15ա–բ, 16բ, 21բ, 22ա–բ, 23ա–բ, 24բ, 30ա, 32ա–բ, 37բ, 38ա–բ, 41բ, 47ա, 48բ, 51ա, 54բ, 62ա, 66ա, 68բ, 70ա, 71ա–բ, 72բ, 74ա, 86բ, 87ա, 90ա, 96ա, 97ա–բ, 99բ, 100բ, 101բ, 103բ, 104բ, 113ա, 120ա–բ, 121ա–բ, 122բ, 124ա, 127բ, 132ա, 134ա, 135ա–բ, 137ա, 139ա, 140բ, 146ա, 161բ, 163բ, 173ա, 187բ, 188ա, 192ա, 198բ, 200բ, 201բ, 202բ, 205բ, 206ա, 213բ, 234ա–բ, 238ա, 239ա, 241ա, 242բ, 244բ, 249բ, 250ա, 257ա, 265ա–բ, 268ա–բ, 277բ, 281բ, 286բ, 290ա·

ԹՈՐԳՈՄ·— Ազգամ Ցուցական Մարմին

69ա, 188ա, 262բ, 263ա, 264բ, 265ա–բ, 266ա, 267ա–բ, 268ա, 280ա–բ, 281ա, 286ա·

ԹՈՓՋԵԱՆ ԵՂԻՇԷ·— Պատգամաւոր Մեծ–Գազարի (Թիֆլիս)

11ա, 14ա, 44ա, 49բ, 50ա, 52բ, 53բ, 54ա, 56ա–բ, 60ա–բ, 62ա, 68բ, 69ա, 71բ, 72բ, 77ա, 78բ, 80բ, 81ա–բ, 82բ, 83ա–բ, 84ա–բ, 85ա, 90ա, 91ա, 94ա–բ, 95ա, 96ա, 97ա–բ, 99բ, 100բ, 101ա, 109ա–բ, 113բ, 124ա, 115ա–բ, 116բ, 119ա, 121բ, 122ա, 123բ, 124բ, 129ա, 131ա, 132բ, 134ա, 136ա, 138ա, 139ա, 140ա, 141բ, 142ա, 144ա, 145բ, 146բ, 147ա, 148ա, 149բ, 150ա–բ, 151բ, 152ա–բ, 153ա, 154բ, 156բ, 157բ, 161ա–բ, 162բ, 164բ, 165բ, 166ա, 169բ, 170ա–բ, 172ա, 173ա, 177բ, 179բ, 180ա–բ, 183բ, 187ա–բ, 192բ, 193ա–բ, 194ա, 195ա, 198բ, 199ա, 200բ, 201ա–բ, 203ա, 205բ, 206բ, 209ա–բ, 212բ, 215ա–բ, 218բ, 219ա, 222ա, 229ա, 230բ, 231բ, 233ա, 234ա, 241ա, 244ա–բ, 245ա, 251ա–բ, 252ա, 253ա, 255ա, 259ա–բ, 265ա, 269բ, 271ա–բ, 273ա–բ, 274ա, 277բ, 278բ, 280բ, 281բ, 282բ, 283ա–բ, 284ա, 285ա, 286բ, 287բ, 289ա, 291բ·

ԻՇԽԱՆ (ՎԱՆԱՑ)·— Պատգամաւոր Լեռնապարի

11ա, 14բ, 16բ, 17ա, 19ա–բ, 20ա–բ, 21ա–բ, 22ա–բ, 23ա–բ, 24ա–բ, 25ա–բ, 26ա–բ, 33ա, 41բ, 57բ, 64բ, 66բ, 91ա, 100բ, 112ա, 113բ, 120բ, 129բ, 131ա, 142ա, 192բ, 225ա, 240բ, 244բ, 245ա, 247ա, 255ա–բ, 277բ, 278ա, 283բ, 285ա·

ԻՍԱՀԱԿԵԱՆ (ՋԱՄԱԼԵԱՆ) ԱՐՇԱԿ·— Պատգամաւոր Ս. Ց· Դ· Ուսանողական Միութեան

11բ, 14ա–բ, 15ա–բ, 16բ, 17ա, 19ա, 20ա, 21ա–բ, 26բ, 29բ, 30բ, 32բ, 39ա–բ, 42բ, 43բ, 49ա, 50ա, 54բ, 61բ, 62ա, 68բ, 69ա, 71ա, 72բ, 76ա, 77բ, 78ա, 87ա, 88բ, 89բ, 90ա–բ, 94ա–բ, 96ա, 97ա–բ, 101ա, 103բ, 104բ, 113ա, 115բ, 119բ, 121բ, 125ա, 127բ, 129բ, 131բ, 132բ, 133ա–բ, 135բ, 140բ, 141բ, 143ա–բ, 147բ, 154ա, 157բ, 161բ, 163բ, 164ա–բ, 175բ, 180ա–բ, 186բ, 188ա, 189ա–բ, 190ա, 192բ, 194ա, 195ա, 200բ, 205բ, 207բ, 208բ, 211ա, 213բ, 215ա, 217ա, 218ա, 227բ, 228ա, 234 բ, 240բ, 244բ, 250ա, 252ա, 255ա, 257բ, 259բ, 260ա, 270բ, 272ա, 273բ, 274ա, 283բ, 284բ·

ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱՒԵՏԻՔ (ԳՈՒԼԱՆ)·— Պատգամաւոր Քաղ (Ալեքսանդրապոլ)

11ա, 45ա, 54բ, 68բ, 75բ, 91ա, 94բ, 96ա, 97ա, 99ա, 116բ, 125ա, 132բ, 148ա, 177բ, 197ա–բ, 202բ, 210բ, 213ա, 218բ, 221ա, 240բ, 244բ, 273բ, 283բ·

ՄԱԼՈՒՄՄԵԱՆ ՆԱԶԱՐՈՒԹ (ԱՆՆՈՒՆԻ)·— Ներկայացուցիչ Արեւմտեան Բիւրոյի

11ա–բ, 12բ, 13ա, 14ա–բ, 15ա–բ, 16ա–բ, 17ա, 23բ, 24ա, 29ա, 30ա–բ, 31բ, 32ա–բ, 33ա–բ, 36բ, 37ա–բ, 39ա, 40ա–բ, 41բ, 44բ, 45ա, 47ա–բ, 48ա–բ, 49ա–բ, 50բ, 51ա, 53ա–բ, 54ա–բ, 57բ, 60ա, 61բ, 62բ, 63ա–բ, 65ա, 67ա–բ, 68ա–բ, 69ա, 70բ, 71բ, 72ա–բ, 75ա, 76ա, 77ա–բ, 78ա, 81բ, 82ա–բ, 83ա, 85ա, 86ա–բ, 88ա, 89բ, 91ա, 93բ, 94ա, 101ա–բ, 104բ, 105ա–բ, 107բ, 108ա–բ, 109բ, 113ա, 118ա–բ, 120բ, 121բ, 122ա, 124ա–բ, 125ա, 126բ, 128ա–բ, 130բ, 131բ, 133ա–բ, 134ա, 138ա–բ, 139բ, 140ա–բ, 141բ, 142ա, 145բ, 146բ, 148բ, 149ա–բ, 151ա–բ, 152ա, 153ա, 154ա–բ, 155ա–բ, 158ա–բ, 159ա, 160բ, 161ա, 168ա–բ, 169բ, 170ա, 172ա, 173ա, 185բ, 189ա–բ, 190ա, 191ա, 192ա–բ, 194ա–բ, 195ա, 198ա–բ, 199ա, 200ա–բ, 201ա–բ, 205ա, 206բ, 210ա, 213ա–բ, 214ա, 215ա–բ, 216ա, 218ա–բ, 219ա, 220բ, 221բ, 223ա, 225ա, 228բ, 232ա–բ, 238ա, 241ա, 243բ, 244ա–բ, 245ա, 247ա–բ, 248ա–բ, 249ա–բ, 252բ, 253ա–բ, 255ա–բ, 256ա, 257ա, 258բ, 259բ, 260բ, 261,բ 262բ, 263ա, 270ա–բ, 272բ, 273ա, 274ա, 277ա–բ, 278ա–բ, 280ա–բ, 281ա–բ, 282բ, 283բ, 284ա, 285ա–բ, 287ա–բ, 288ա–բ, 289ա–բ, 291ա–բ·

ՄԱՆՈՒԿ (ԱՐՄԷՆ ?)·— Ներկայացուցիչ Մովսէսի (Տրապիզոն)

38բ, 39ա, 41բ, 49ա, 72ա, 77բ, 82ա, 96ա, 97բ, 113ա, 116բ, 121ա, 124ա, 125ա, 131բ, 151ա, 157բ, 189ա, 191բ, 211ա, 217ա, 248բ·

ՄԱՇՈՒՐԵԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ·— Պատգամաւոր Այգեստանի (Գաճաճակ)

11ա, 14ա–բ, 15բ, 18բ, 26բ, 30ա, 32բ, 36բ, 39բ, 42բ, 43ա–բ, 45ա, 52ա–բ, 60բ, 62ա, 67բ, 71բ, 77ա, 86բ, 85ա, 93բ, 96ա–բ, 101ա, 113ա, 121բ, 124բ, 125ա–բ, 127բ, 131ա–բ, 134բ, 140բ, 141բ, 142բ, 152ա, 157ա–բ, 158ա, 161բ, 180բ, 184ա, 189բ, 191բ, 192ա, 208բ, 211ա, 213բ, 218ա, 225ա, 280բ, 283բ·

ՄԱՐԴԳՈՏ (?)·— Գարտուղար

96բ, 133ա, 200բ, 291բ·

ՄԵԼՔՈՆԵԱՆ ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱԳԵՏ (ԳԱՐՄԷՆ)*·— Հրատիրեալ

38բ, 39ա, 41բ, 43բ, 47ա–բ, 53ա–բ, 54ա, 67բ, 71բ, 72բ, 78բ, 81բ, 83բ, 93ա, 99բ, 100ա–բ, 108ա, 112ա, 113ա, 120ա, 121բ, 129բ, 131ա, 135բ, 142ա, 144ա, 151բ, 154ա–բ, 194բ, 218ա, 231բ, 244ա, 254ա, 265ա, 269ա, 277ա–բ, 279բ, 281բ, 282բ, 283ա–բ·

ՄԻՆԱՍԵԱՆ ՍԱՐԳԻՍ (ԱՐԱՄ–ԱՇՈՏ)·— Պատգամաւոր Զալֆայի

11ա–բ, 13ա, 15ա–բ, 16բ, 17ա, 20ա–բ, 22բ, 23ա, 30ա, 33ա, 37բ, 39ա, 41ա–բ, 42ա, 45բ, 53բ, 56բ, 57ա, 63ա, 64բ, 66ա, 71ա, 74բ, 75ա, 77բ, 83ա–բ, 89բ, 96բ, 97ա, 101ա, 103ա, 109ա, 114ա, 116բ, 117բ, 118բ, 119բ, 121բ, 122ա, 124ա, 125ա, 126ա, 129բ, 130բ, 131բ, 133բ, 134ա, 135բ, 137բ, 138բ, 139բ, 140բ, 141ա–բ, 142ա, 145բ, 153բ, 155ա–բ, 156ա, 161ա, 173բ, 178բ, 182բ, 183բ, 188բ, 191բ, 192բ, 194ա–բ, 195ա, 197բ, 201ա, 203ա, 205բ, 207բ, 209ա, 213բ, 214բ, 227ա, 228ա–բ, 229բ, 235ա, 239ա, 240ա, 241ա, 247ա, 248ա, 251բ, 253ա, 258ա, 260բ, 261բ, 268բ, 271բ, 273բ, 277բ, 280ա, 285ա, 287ա–բ, 288ա, 289ա·

ՄՈՒՐԱՏ (ՍԵՓԱՍՏԱՑԻ)·— Պատգամաւոր Դաւրաճ–Բարձրաւանգակի (Մուշ–Սասուն)

11ա, 17ա, 32ա–բ, 38ա–բ, 39ա, 41բ, 49ա, 50ա, 54ա, 57բ, 60ա, 64ա, 67բ, 69բ, 71ա–բ, 78բ, 80բ, 81ա–բ, 82ա–բ, 83ա–բ, 84բ, 86ա–բ, 87ա, 91ա, 95ա, 96ա, 97ա–բ, 99բ, 102բ, 104բ, 106ա, 120ա, 121ա, 129ա, 131ա, 132ա, 133ա, 134ա, 139բ, 140ա–բ, 141բ, 142ա, 143ա, 146բ, 147բ, 149ա–բ, 152ա, 154բ, 155ա–բ, 156բ, 157ա–բ, 158ա, 159ա, 161ա, 162ա, 163բ, 164բ, 165ա, 166ա, 167ա–բ, 169ա, 170ա–բ, 171ա–բ, 172ա, 173ա, 177բ, 180բ, 184ա, 187բ, 192ա, 198ա–բ, 200բ, 201ա, 208ա, 210ա, 211բ, 214ա, 218ա, 221ա, 222ա–բ, 223բ, 234ա–բ, 239ա, 242բ, 243ա, 245բ, 247բ, 249ա, 251ա, 255ա, 257բ, 261ա, 262բ, 268բ, 277ա–բ, 280ա, 286ա, 287բ·

ՄՈՒՐՏԻՐՈՍ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ·— Գարտուղար

14ա·

ՑՈՒՇԻԿ (Տիկ· ԹԵՆԻԻ ՄԵԼԻՔ–ԳԱԼԱՆԹԱՐԵԱՆ)·— Պատգամաւոր Թլատի (Հիւս· Կովկաս)

11ա, 25բ, 47ա, 97ա–բ, 104բ, 173ա, 283բ·

ՇԱՀԱԶՈՒՆԵԱՆ ԱՒԵՏԻՔ (ԱՐՏՈՒՐ)·— Պատգամաւոր Թուսաստանի Հ· Ց· Դ· Ուսանողական Միութեան

11ա, 14ա, 15ա, 18բ, 20ա, 22ա, 24ա–բ, 30բ, 32բ, 38բ, 39ա, 43ա–բ, 45բ, 47ա, 48բ, 49բ, 62ա, 67բ, 68ա, 69ա, 71բ, 72բ, 74ա–բ, 75ա, 78ա, 81բ, 82ա, 83ա, 85բ, 86ա, 88բ,

90բ, 91բ, 93ա–բ, 96ա, 97ա, 101ա, 114բ, 115բ, 121ա–բ, 125բ, 135ա, 137բ, 143ա, 144ա, 146բ, 155բ, 158ա, 159ա, 162ա–բ, 165բ, 168բ, 169ա, 178ա, 187ա, 188ա–բ, 189ա–բ, 192բ, 205բ, 215ա, 217ա, 225ա, 228ա, 232ա, 233բ, 237բ, 241ա, 244բ, 251բ, 255ա, 259բ, 264բ, 265ա, 270բ, 272ա–բ, 273ա–բ, 278ա, 281բ, 283բ, 284ա, 285ա, 288ա, 289ա·

ՋՈՓՈՒՐԵԱՆ (ԼԻՒՈՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ, ՊԱՊԱՇԱ)·— Գատգամաւոր Ոսկաձագատի (Գահու)

11ա, 14ա, 15ա, 16ա–բ, 21բ, 22ա, 30բ, 32բ, 38ա, 44ա, 47ա, 52բ, 63ա, 74բ, 76ա, 83բ, 91ա–բ, 93ա–բ, 97ա, 98ա, 99ա, 100ա, 112ա, 144ա, 159բ, 164ա, 192ա–բ, 193ա, 194բ, 201բ, 202ա, 268բ, 269ա, 270բ, 277բ, 283բ, 285ա, 286բ·

ՊՈՑԱՃԵԱՆ ՍԻՐԱԿԱՆ, եգիպտոսէն

19բ, 93բ, 149բ, 150ա–բ, 151բ, 159ա·

ՋԵԼԱԼԵԱՆ (ՃԷԼԱԼԵԱՆ ԹՈՎՄԱՍ, ՀԱՑԿ-ԱՐՄԻՆ)·— Գատգամաւոր Ամերիկայի

11ա, 14բ, 15ա, 16ա, 17ա, 22ա, 26ա, 30բ, 31բ, 32բ, 33ա, 36բ, 37ա, 39ա, 43ա–բ, 47ա, 49բ, 54ա–բ, 56ա–բ, 57ա–բ, 58բ, 63ա, 64բ. 67բ, 72ա, 77բ, 78ա–բ, 80բ, 85բ, 86ա, 90բ, 98ա, 99բ, 106ա, 110բ. 115բ, 117ա, 136ա, 143բ, 144ա, 147բ, 148ա, 149ա, 153ա–բ, 154բ, 155բ, 158ա, 179ա, 183ա, 195ա, 200բ, 201ա, 208ա, 211բ, 213բ, 223բ, 241ա, 243բ, 245ա, 248ա, 253բ, 260բ, 278բ, 287բ, 289ա, 290ա·

ՌՈՍՏՈՄ (ԶՕՐԵԱՆ)·— Ներկայացուցիչ Արեւելեան Բիւրոյի

11ա, 12բ, 14ա–բ, 16բ, 17ա, 19ա, 20բ, 29ա–բ, 30ա–բ, 31ա, 32ա–բ, 33ա, 36բ, 37ա–բ, 39ա, 40ա–բ, 41ա–բ, 42ա, 43բ, 45բ. 52ա–բ, 54ա, 56ա, 59բ, 62ա–բ, 63ա–բ, 67բ, 70բ, 71ա–բ, 72ա–բ, 77բ, 82ա, 88բ, 89ա–բ, 90բ, 94ա–բ, 95ա–բ, 96ա–բ, 100բ, 101ա, 102ա, 103բ, 106ա, 107բ, 108բ, 109ա–բ, 110բ, 112ա, 113ա, 116ա–բ, 117բ, 119բ, 120բ, 121բ, 124ա, 127ա, 130ա, 132ա–բ, 133բ. 134ա, 137ա, 138բ, 139բ, 140ա–բ, 141բ, 142ա–բ, 146բ, 147ա, 149ա, 150բ, 152բ. 153բ, 154բ, 155ա, 156ա, 157ա, 158ա, 159ա–բ, 161ա–բ, 163բ, 166ա, 168բ, 179ա, 184ա, 188բ, 189ա–բ, 191ա, 192բ, 194ա, 195ա, 197ա, 201ա, 202բ, 203բ, 204բ, 205ա, 206ա, 208ա, 209բ, 212ա, 213ա, 214ա–բ, 215բ, 221ա, 224ա, 225ա, 229ա, 231ա–բ, 233ա, 234ա–բ, 240բ, 241ա–բ, 242ա–բ, 243ա, 247ա, 248բ, 249ա, 251ա–բ, 252ա, 255ա, 260բ, 267բ, 268ա–բ, 270բ, 271ա–բ, 272ա–բ, 273ա–բ, 274ա, 277ա–բ. 278ա, 280ա, 282ա–բ, 283բ, 284բ, 285ա, 288բ, 289ա·

ՌՈՒԲԻՆԱ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ) ՄԻՒՒԱՑԻ·— Գատգամաւոր Նահանգիստի (Գաթում)

11ա, 33ա–բ, 36բ, 37ա, 40ա–բ, 149բ, 152ա, 153բ, 277բ, 287ա·

ՍԱՖՕ (ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԳԱՐԵԱՆ)·— Ներկայացուցիչ Յունական Մարմնի

11ա, 12բ, 13բ, 14ա–բ, 15ա–բ, 17ա, 19բ, 21ա, 29ա, 33ա, 41բ, 54բ, 62ա, 67բ, 68ա–բ, 69ա–բ, 70ա–բ, 71ա–բ, 72ա, 77ա–բ, 82ա, 91ա, 96ա, 97ա–բ, 100բ, 101բ, 104բ, 109ա, 116բ, 120բ, 198բ, 199ա–բ, 200ա–բ. 201ա, 218բ, 234ա, 244ա–բ, 245ա, 263ա–բ, 264ա, 265ա–բ, 266ա–բ, 267ա–բ, 268ա–բ, 278բ, 279ա–բ, 280ա–բ, 281ա, 286ա·

ՍԵՊՈՒՀ·— Հրաւիրեալ

12ա, 15բ, 16ա–բ. 17ա, 24ա, 25ա, 26ա–բ. 29բ, 30բ, 31բ, 32բ, 38ա–բ. 39բ, 47ա. 50ա, 51ա, 54բ, 57բ, 60ա, 62բ, 68ա–բ, 69ա, 71ա, 72բ, 74ա, 75բ, 76ա, 78բ, 90բ, 91բ, 92բ, 95բ, 96ա, 97բ, 100բ, 101բ, 105ա, 115ա, 120ա, 121ա–բ, 122ա, 127բ, 131ա, 134բ, 135բ, 138ա, 140բ, 142բ, 143ա, 145բ, 151բ. 152ա–բ, 153բ, 155ա, 158բ, 159բ, 162ա, 163ա, 164ա, 167ա. 169բ, 177բ, 180բ, 184ա, 187բ, 192ա, 198ա–բ, 200բ, 201ա. 202ա, 205բ, 215ա, 218ա, 231բ. 243ա. 245ա–բ, 253բ, 254ա. 255ա, 257ա, 261ա, 262ա–բ, 274ա, 282բ, 284բ, 288բ·

ՎԱԼԱԴԵԱՆ ՎԱՀԱՊ·— Գարտուղար

38բ, 39ա, 87ա·

ՎԱՐԱՆԴԵԱՆ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ) ՄԻՒՒԱՑԻ·— Գատգամաւոր Նահանգիստի (Գաթում)

11ա, 33ա–բ, 36բ, 37ա, 40ա–բ, 149բ, 152ա, 153բ, 277բ, 287ա·

ՎԱՐԴԱՆ (ՀԱՆՆԱՍԱՐԻ)·— Հրաւիրեալ

13ա, 71բ, 75բ, 81ա, 83ա–բ, 91բ, 92բ. 93ա–բ. 96ա, 97ա–բ, 98ա, 106ա, 116բ. 120բ, 124բ, 125ա, 131բ. 133բ, 134ա, 139ա, 140բ. 141բ, 142ա–բ, 144ա–բ, 149բ, 150ա–բ, 151ա–բ, 169ա, 173ա, 184ա, 191բ, 292ա–բ, 198բ, 201ա, 204բ, 211ա, 214բ. 215բ, 221ա, 231ա, 238բ. 239ա, 240բ, 244բ, 245ա, 247ա, 255ա, 259բ, 260բ. 262բ, 263բ, 273ա. 277ա, 278ա, 281բ, 282բ, 283բ, 285ա·

ՎԱՄԵՆԱՆ ԱՐՇԱԿ (ՎԱՀԱԳ)·— Հրաւիրեալ

12ա, 13բ, 14ա, 15բ, 17ա, 19բ, 21ա–բ, 22ա–բ, 23ա–բ, 26ա–բ, 29ա, 30ա–բ, 32ա, 33ա, 36ա–բ. 37ա–բ, 38բ. 39բ, 40ա–բ, 41բ, 42ա–բ, 44բ, 46բ, 47ա–բ, 50բ, 56բ, 58ա, 59ա–բ, 62ա, 63ա, 64բ, 65ա, 67ա–բ, 68ա, 70բ, 71բ, 72ա–բ, 75բ, 76ա. 78ա, 83բ. 84բ, 85բ. 89բ, 90բ. 91ա, 92բ, 94ա–բ. 96բ, 97ա–բ. 101բ, 104ա–բ. 105ա, 107ա, 108ա–բ, 112բ, 113ա, 116բ, 118բ, 119բ, 120ա, 121ա–բ, 122ա, 124բ, 125ա–բ, 130ա, 131բ, 133բ, 134ա, 136բ, 137ա, 139ա, 140բ, 142ա, 143բ, 144բ, 148ա–բ, 150բ, 151ա–բ, 153ա–բ, 154ա–բ, 157ա, 158ա, 159ա, 160ա–բ, 161բ, 164բ. 169ա, 176ա, 180ա–բ, 184ա, 185ա, 189ա–բ. 191ա, 192ա–բ, 198ա–բ, 199ա, 201ա–բ. 204ա–բ. 205բ. 206ա. 208բ, 212ա–բ, 213ա, 214բ, 215ա–բ, 220ա, 221ա–բ, 224բ, 227բ, 229բ. 230ա. 231բ, 232ա–բ, 233ա–բ, 240բ. 244ա–բ, 245ա–բ. 247բ. 248ա–բ, 250ա, 251բ. 256ա, 257բ. 260բ, 261բ, 262ա, 265բ, 266ա, 269ա, 270ա–բ, 273ա–բ, 275բ, 277ա–բ, 278բ, 279բ, 280բ, 282ա–բ, 284ա, 285ա, 286բ, 287բ. 288ա–բ. 291բ·

ՎՐԻԺՈՒՆԻ (ՍՏԵՓԱՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ, ԾԵՐՈՒՆԻ, ԲԱԼԱՋԱՆ)·— Գատգամաւոր Վրէժի (Ատրպատական)

11ա. 12ա, 13բ, 16բ, 21ա, 24բ, 25ա. 29բ, 30ա, 33ա, 38ա, 40ա, 46բ, 52ա–բ, 53ա, 54ա, 57ա–բ, 58ա–բ, 59ա–բ, 63ա, 67բ, 68բ, 70բ. 72ա, 75բ, 76ա–բ, 77ա, 82բ. 87ա, 91ա, 94բ. 95ա. 101բ, 104ա, 105բ, 107բ, 110ա, 113ա, 125ա, 131բ. 135ա, 138բ, 140բ, 141բ, 144ա, 153բ, 157ա, 183բ, 192ա, 198բ, 201ա, 213ա, 216ա, 220բ. 228ա–բ. 231բ, 241ա, 254ա, 255բ, 257ա, 258ա, 259բ, 260ա–բ, 262բ, 268բ, 285ա·

ՏԱՔԵՒԵԱՆ ՎԱՀԱԳՆ·— Գատգամաւոր Ամերիկայի

11ա, 12ա, 19բ, 21ա, 25ա–բ, 31բ, 33ա, 40ա, 48ա, 49բ, 53ա. 57ա, 70բ, 72բ, 80բ, 83բ, 85ա, 96ա, 97ա, 101բ, 113ա, 124ա, 135բ, 149ա, 154բ, 163բ, 169ա, 170ա, 180բ, 192բ. 193ա–բ, 194ա, 197բ, 215բ, 243ա, 254ա, 264բ, 277ա, 278ա, 280ա. 282ա, 285ա, 287ա·

ՏԻՐ ՄԿՐՏՉԵԱՆ ՍՏԵՓԱՆ (ԳԱՊԻԿ)·— Ներկայացուցիչ Ջիփանի

11ա. 14ա, 177բ, 185ա, 191բ, 192ա–բ, 198բ, 204ա–բ, 205ա, 211ա, 213ա. 218բ, 225ա, 231ա, 240բ. 245ա–բ. 264բ, 274բ, 275բ. 277բ. 280ա, 282բ, 283բ, 285ա, 286բ·

ՕՀԱՆՆԵՍԵԱՆ ՀԱՄՕ (ՄՀԵՐԵԱՆ)·— Հրաւիրեալ

14ա. 149բ, 151բ, 152ա–բ, 153ա–բ. 154բ, 156ա, 158ա–բ, 159բ. 160բ. 161ա. 162ա, 163բ, 164ա–բ, 169ա, 170ա, 172ա, 173ա, 179բ. 183ա, 187բ, 190ա, 191բ, 192ա–բ, 193ա–բ, 194բ. 195ա, 197բ, 198բ, 199ա, 200բ, 201ա–բ, 203բ, 205ա, 213ա. 215ա, 216բ, 217ա, 218ա, 221ա, 224ա. 231ա, 232ա. 233ա–բ. 234ա–բ, 235ա, 237ա, 238բ, 240բ, 241ա, 244ա–բ, 245ա–բ. 247բ, 248բ, 249ա. 251ա, 252ա. 253բ, 254ա, 256բ, 258ա. 260ա. 265բ, 266ա, 269բ. 273բ, 274ա–բ, 277բ. 278բ. 281ա, 282բ. 283բ, 285ա, 286բ, 288ա–բ·

ՓՐԱՆԳԵԱՆ·— Գարտուղար

143ա·

(*) *Մեկի համար անձնական տուրքն մեղացած էր Տաճատ վրդ. Մելքոնեանը։ Վերջերս մեկին, Բուրլեի յանձնաժողովի հետ հարաբերութեան արդարացնելու համար, երեսուն հեկտար տուրք մեկը չէ եղել ոչ վանքի եւ մեռելի մեղ գործած գործերը, Բուրլեի ուսանողների հետ հարաբերութեան մեջ։*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

էջ

Հ· Յ· ԴԱՀՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՋՈՐԲՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ա·— ՋՈՐԲՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ 11

Բ·— ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԻ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 294

Գ·— ՋՈՐԲՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԳՐՈՒԱԾՔ 298
ԴՐԱՄԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒ (1907) 314

Դ·— ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ 315

Ե·— ԿԱՆՈՆԱԿԻՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 329
ՋՈՐԲՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՑԱՋՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ, ՕՐԱԿԱՐԳԵՐԸ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ՋՈՐԲՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԳԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ. ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՑՑԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՒԻՐԵԱԼՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԻՒԹԵՐ Հ. Ց. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գ. ՀԱՏՈՐ

Հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց ՀՐԱՉ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

կեդրոնատեղի

HAMAZKAYIN LIBRARY
P.O.BOX 80 - 1096
BOURJ HAMMOUD - LEBANON
Tel.: 00961 - 1 - 241263 / 4
Fax: 00961 - 1 - 260329
E-mail: imphamaz@inco.com.lb
www.hamazkayin-bookstore.com

ՀԱՄԱԶԳԱՑԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ